

Հոգեառող գրչութեան



Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու
Քարոզության Կենտրոն – 2006

ՀՐԱՄԱՆԱՒ

Ա. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՐԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՒԹԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տպագրվում է մեկնաստոթյամբ

Անժելա Տարությունյանի

(Մուկլա, Առաջապահի Դաշնություն)

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ
ԵԿԵՂԵՑՈՒ ՏՈՆԵՐԸ
(ՏՈՆԱԽՈՍԱԿԱՆ ԲԱՅԱՏՐՈՒԹՅԱՄԲ)

§ Ե Ր ՈՒ Ն Ա Կ Ա Ն
Ո Ւ Ե Ր

Աշխատասիրությամբ՝ Արամ Դիլանյանի

Էջմիածին
ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ Էջմիածին
2006

ՀՏԴ 23/28

ԳՄԴ 86.37

Հ 247

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՈՆԵՐԸ

Հ 247 (ՏՈՆԱԽՈՍԱԿԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹՅԱՎՄԲ): Տերունական տոներ/Աշխատասիրությամբ՝ Արամ Դիլանյանի. – Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2006. – 608 էջ:

ԳՄԴ 86.37

ISBN 99930-75-36-1

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2006 թ.

© Ա. Դիլանյան, 2006 թ.

**Նվիրվում է
Գրոց գյուղի և թարգմանչաց
1600-ամյակին**

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մայր Աթոռի քարոզական կենտրոնը իր հիմնադրման օրվանից սկսած պատրաստում էր տպագրության հաճանել Յայ Եկեղեցու տոներին ու տոնական համակարգին նվիրված այս գիրքը, որի անհրաժեշտությունը զգացվում էր գրեթե ամեն օր¹: Արևելահայ ընթերցողի համար Եկեղեցական տոներին նվիրված գրականության բացակայության այս փաստը, տոների Եկեղեցական իմաստի ու պատգամի չինացությունը տեղիք է տալիս շատ ավելորդ, անհմաստ ու ինքնահնար սովորությունների ամրապնդմանը մեզանում: Այս էր պատճառը, որ Կենտրոնը կարևորում էր սույն գրքի լույս աշխարհ գալը: Ավելորդ չէ նշել, որ այսօր մեզանում հանատարած գլոբալիզացիոն գործընթացները գնալով դուրս են մղում ազգային երանգ ունեցող արժեքները, ցածրորակ օտար արժեքներ ներմուծելով հայ իրականություն՝ կենցաղից սկսած մինչև «բարձր արվեստներ»: Ուստի մեր ցանկությունն է անցյալի ժառանգության ուկերեր պատգամները նորից ներկայացնել հայ ընթերցողին, որովհետև մենք չենք կարող առաջ գնալ, եթե անտեսներ անցյալը, նրա մեզ քողած ավանդույթները նորովի չվերանայենք ու վերահմաստավորենք:

«Յայ Եկեղեցու տոները» գիրքը Եկեղեցական տոների խորհուրդը և օրացուցային ընթացքը բացատրում և մեկնաբանում է համաձայն մեր Եկեղեցու սրբազն ավանդության և մեր հոգեւկիր ու հոգեշնորհ վարդապետների ուղղափառ ուսուցման: Սա փորձ է ի մի բերելու և միասնական շարադրանքով ներկայացնելու տոնախոսական, դպրանաբանական, ճառախոսական ու ծիսական բնույթի ծեռագրերում և գրքերում ցրված համանուն գործերի ստվար նասք: Եկեղեցական տոներին վերաբերող բացատրությունների նմանօրինակ վերհանումը թելադրել է այս գրքի կազմնան սկզբունքը, այն է՝ թարգմանաբար կատարված ծաղկաքաղ հայրերի երկասիրություններից: Այս տոնախոսական ժողովածուի յուրաքանչյուր գլխի ամբողջականությունն ապահովելու և տոնի մասին ասելիքն ավարտուն դարձնելու նպատակով համադրվել են

¹ ՀՀ-ում միայն վերջերս տպագրվեց Գ. Անտոնյանի «Յայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու, Յայաստանի Յանրապետության պետական տոներ, հիշատակի օրեր» գիրքը (Գուգարաց թեմ, Վանաձոր, 2005), որպես օժանդակ գիրք «Յայ Եկեղեցու պատմություն» դասավանդող ուսուցիչների համար:

տարբեր հեղինակների՝ այս կամ այն տոնին վերաբերող համապատասխան գործերը՝ լրացնելով միմյանց: Դնարավորի սահմանում պահպանվել են բնագրերին հարազատ՝ ճառախոսական, ներքողական ոճը և շարադրանքը: Գոքի վերջում տրվում է այն բոլոր գործերի ցանկը, որոնք աղբյուր են ծառայել այս գրքի գրության համար:

Վստահաբար կարող ենք ասել, որ գիրքը սեղանի գիրք կդառնա բոլոր նրանց համար, ովքեր իրենց կյանքը և կենցաղը ուզում են կապել մեր Տիրոջ՝ Շիսուս Քրիստոսի պատգամների ու մեր Եկեղեցու ավանդույթների հետ:

Մեծապես շնորհակալ ենք մեծահարգ Տիկ. Ա. Հարությունյանից, ով սիրով հանձն առավ հոգալ գոքի տպագրության ծախսերը: Թող մեր Տերը՝ Շիսուս Քրիստոս, իր երկնառաք օրինություններով մշտապես իր հովանու տակ պահի նրան և նրա ընտանիքի անդամներին:

Մեր օրինությունն ենք բերում նաև բոլոր նրանց, ովքեր իրենց աշխատանքով նպաստեցին գոքի հրատարակմանը՝ կազմողին (*Արամ Դիլանյան*, Խմբագիրներին (*Ղևոնդ քիչ Մայիսյան*, *Ավետ Ավետիսյան*, *Վարդան Դերիկյան*) և համակարգչային աշխատանքները կատարողին (*Տիգրան Ապիկյան*):

ՎԱԶԳԵՆ ԵՊՍ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ
Վիրահայոց թեմի առաջնորդ

ՆԱԽԱԲԱՆ

Մոտ երկու հազար տարի է, ինչ Եկեղեցին տոնում է մեր Աստծու՝ Հիսուս Քրիստոսի հաղթանակի տոնը և ի լուր ամենքի պատմում մեր Տիրոջ մասին։ Գրեթե երկու հազար տարի Եկեղեցին իր ծիսակարգում և արարողություններում նույն է ասում. «Քրիստոս հաղթեց աշխարհին» (Յովի. Ժ2 33): Եվ որպեսզի հասու լինենք, թե ինչ է նշանակում հաղթել աշխարհին, Եկեղեցին իր տոների միջոցով ամեն օր մեզ պատմում է մեր Հոգիների փրկության համար մղված այդ մեծ պատերազմի մանրամասները։ Երբ հավատով միանում ենք Եկեղեցու ծեսերին և ապրում Տիրոջ պատվիրաններով ու Եկեղեցու սահմանած կարգով, ինքներս էլ դառնում ենք մարտիկ և մասնակցում այն պատերազմին, որի զորագլուխն է ինքը՝ Քրիստոս։

Քանի դեռ այս մարմնի մեջ ենք, շարունակ սխալվում ու շեղվում ենք ճշմարիտ ճանապարհից և կարիք ունենք ամենօրյա խնամքի, քանզի միանգամից չենք կարող ընկալել այն ամենը, ինչ մեզ տրված է ի վերուստ. դրա համար Եկեղեցին տարվա օրերին տվել է Հոգեոր նկարագիր, որպեսզի դրանք մեզ համար հոգեոր խորհրդածությունների առիթ լինեն։ Եվ դա իրոք այդպես է. յուրաքանչյուր տոն, հայտնելով իր խորհուրդը, գրանով մեր սրտում փրկության հույսն է նորոգում՝ միևնույն ժամանակ մեզ մասնակից դարձնելով այն մեծ հանդիսությանը, որը կատարվում է երկնքում։

Երբ ասում ենք՝ Եկեղեցին կարգ է սահմանել, ապա պետք է հասկանալ, որ Աստված ինքն է սահմանել, իր իսկ կողմից ընտրված առաքյալների ու հայրապետների միջոցով։ Եվ չկա Եկեղեցում կարգված որևէ տոն կամ ծես, որ իր Սուրբագրային ակունքները չունենա, այսինքն՝ հայտնությամբ տրված չլինի Եկեղեցուն։ Այսօր, սրան հակառակ, հայտնվել են օտար ուսմունքներ՝ սուտ ու անհեթեթ տեսություններ, համաձայն որոնց՝ Քրիստոսի Եկեղեցու կարգերն ու տոներն ունեն հեթանոսական ծագում, որով և փորձում են խաթարել մեր հավատը։ Նրանք կեղծ հայրենասիրությամբ մոլորեցնում են ժողովրդին՝ ասելով, որ մենք չպետք է հետեւնք Եկեղեցու սովորույթներին, այլ դառնանք մեր «ազգայինին»։ Այդպիսիներին պետք է պատասխանել, որ մեր հայրապետները կարիք չունեին հեթանոսությունից որևէ բան վերցնելու և այն մեզ քրիստոնեացված ձեռվ մատուցելու, քանի որ ամեն մի խոսք ու գործ Աստծուց է նրանց արվել, ինչպես առաքյալն է ասում. «Իմ սիրելի՛ եղբայրներ, մի՛ խաբվեք, քանի որ ամեն բարի շնորհ և ամեն կատարյալ

պարգև վերեից է՝ իշխած լույսի Հորից, որի մեջ չկա փոփոխում կամ էլ փոփոխման ստվեր» (Յակոբ Ա 16):

Եկեղեցու կարգերը չի կարելի շփոթել նաև նախաքրիստոնեական շրջանի հրեական սովորույթների հետ: Քանզի Տերը հրեաներին միանգամայն հստակ պատասխանեց, երբ նրանք փորձում էին առաջ մղել իրենց ազգային ավանդությունները. «Ինչո՞ւ եք զանց առնում Աստծու պատվիրանը՝ ձեր ավանդության պատճառով» (Մատթ. ԺԵ 3): Ասաց նաև. «Այս ժողովուրդն ինձ շրթներով՝ է մեծարում, բայց նրանց սրտերն ինձնից հեռու են. իզուր են ինձ պաշտում. ուսուցանում են վարդապետություններ, որ մարդկանց պատվիրածներն են: Աստծու պատվիրանը թողած՝ մարդկանց ավանդությունն եք պահում» (Մարկ. Է 6-8):

Հետեաբար՝ Եկեղեցին չէր կարող վերցնել այն, ինչն Աստված մերմեց: Ուստի Եկեղեցու տոներն ու կարգերը զուտ քրիստոնեական են, և կարիք չկա մարդկային սին իմաստ փնտրել այնտեղ, ուր կա աստվածայինը: Համոզվելու համար պետք է կարդալ Աստվածաշունչը, նաև գիտենալ քույր Եկեղեցիների կարգերն ու ծեսերը, որպեսզի հասկանալի դառնա, որ Հայ Եկեղեցու կարգերը Ընդհանրական Եկեղեցու կարգերն են, որոնք կատարվում են բոլոր ուղղափառ Եկեղեցիներում. տարբերությունը միայն ձեւի մեջ է, իսկ բովանդակությունը նույնն է: Անդամ այն տոները, որոնք ընդունված են միայն Հայ Եկեղեցում, ինչպես օրինակ՝ Երկրորդ Ծաղկազարդը, Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնը, Վարագա Սուրբ Խաչի տոնը և այլն, աստվածադիր են: Այս տոների համար պետք է է՛լ ավելի փառք տանք Աստծուն, որ առավել ուշադրության ենք արժանացել նրա կողմից, և մեր աստվածպաշտությամբ արժանին հատուցենք: Արդ՝ Եկեղեց հետեւնք մեր Եկեղեցու հայրերի խոսքերին և տեսնենք, թե ինչպես են նրանք մեկնաբանում Եկեղեցու տոները:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եկեղեցին ամրակառույց և անբեկանելի նավ է մեր ալեկոծ կյանքում, որին հավատով ապավինելով՝ անվնաս հասնում ենք հավիտենության խաղաղ նավահանգիստը։ Եկեղեցին իմանալի Դրախտն է, որը եղավ Ադամի Դրախտի փոխարեն, ինչպես նաև՝ Աստծու անսպառ բարիքների շտեմարանն ու գանձարանը, որը հավատացյալները վայելում են այս կյանքում։ մարմնով՝ երևացողը, իսկ հոգով՝ աներևույթը։ Իսկ հանդերձյալում երկուսն էլ լիապես պիտի վայելենք, ինչպես ասում է Պողոս առաքյալը։ «Այժմ տեսնում ենք աղոտ, ինչպես պատկերը հայելու մեջ։ Իսկ այն ժամանակ պիտի լինի գեմառդեմ» (Ա Կորնթ. Ժ 12):

Երբ Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը, արարեց և ամենայն ինչ, որոնց մի մասը մարդու համար անհրաժեշտություն է, առանց որի մարդը չի կարող ապրել, ինչպես օրինակ՝ տարրերը, լույսը, երկիրը և նրանում գտնվող ամեն ինչ՝ օդը, ջուրը, հացը, հանդերձները, իսկ մյուս մասը վայելքների, գեղեցկության, բարեկեցության և առավել հանգստի համար է, ինչպես մրգերը, ծաղիկները, համեմունքները, գինին, խորտիկները, անուշահոտությունները, պայծառությունը, գույները, հնչյունները, թռչունների քաղցր երգը, հանգիստը ...

Նրանք, որոնք վայելքների համար են, մեծ օգուտ չեն տալիս կատարյալներին, սակայն դրանց օրինակով հայտնի են դառնում երկնայինները, որոնք Աստված պատրաստել է իրեն սիրողների համար, ինչպես և գրված է. «Ինչ որ աչքը չտեսավ, ականջը չլսեց և մարդու սիրտը չընկավ, Աստված այն պատրաստեց իրեն սիրողների համար» (Ա Կորնթ. Բ 9): Այս երեկի արարածներով երևում են աներևույթները, որպեսզի մենք սրանց միջոցով բարձրանանք Աստծու մոտ և թափանցենք իմանալիների ու ծածուկների մեջ։ Ինչպես հնում, երբ հսրայելը դեռևս մանուկ էր, Աստված նրանց դաստիարակում էր խորանի սքանչելի զարդերով, հրաշալի ու գեղեցիկ զարդարված տաճարով, ուկով ու պատվական քարերով, ինչպես և ասում է առաքյալը. «Արդարեւ ի սկզբանե աշխարհի Աստծու աներևույթ հատկությունները, այն է՝ Նրա մշտնջենավորությունը, զորությունը և Աստվածությունը, իմանալի կերպով տեսանելի են Նրա ստեղծածների մեջ» (Յում. Ա 20):

Այսպիսով՝ ինչպես հացն ու ջուրը մարմնի կենդանության համար անհրաժեշտ նվազագույնն են, իսկ խմիչքներն ու զանազան խորտիկները՝ վայելչական, այդպես էլ հոգու անհրաժեշտ կերակուրներն են իմաս-

առությունն ու առաքինությունը, իսկ վայելչականը՝ հոգեոր ուրախություններն ու տոները:

Տոնը համընդհանուր ուրախության օր է, ինչին հազարամյակներ առաջ սպասում էին մարդարեները և կամենում էին տեսնել սրբակյացները, որի համար էլ տոների սուրբ օրերը Եկեղեցու իմաստուններն օրհնյալ անվանեցին: Սակայն քրիստոնեական տոների նպատակը սոսկ հանդես կատարելը չէ, այլ հանդիսավորությունը միջոց է ոգեսորելու հավատացյալներին՝ նրանց անձերն ունակ դարձնելով հոգեոր օգուտի և աստվածային շնորհների՝ աղոթանվեր ինքնամփոփմամբ և սրբերի բարեխոսությամբ: Տոնի ժամանակ Աստծուն հիշատակելով՝ նրան մեզ մոտ ենք հրավիրում և նրան միանում՝ ուրախանալով մեր բազում տրտմություններից հետո, և փառաբանում Տիրոջը՝ նրա շնորհած մեծամեծ բարիքների համար:

Տոն նշանակում է ուրախություն, պայծառություն և Աստծուն նվիրված հանդիսավոր հանդիսաւ՝ առօրյա զբաղմունքներից ու աշխատանքներից: Տոնը հասարակաց պայծառ հանդես է և հանդիսավոր օր, երբ հավաքվում ենք եկեղեցում՝ նվիրվելու այդ օրվա խորհրդին, և պաշտամունքի միջոցով փառաբանում Աստծուն՝ ուրախանալով հոգեոր ու մարմնավոր ուրախությամբ:

Տոները մեզ հայտնում են այն ուրախությունների ու երանությունների մասին, որոնք մեզ սպասվում են հանդերձյալում:

Գրիգոր Աստվածաբանը տոների մասին հետեւյալն է գրում. «Տոնում էին և հրեաները՝ հետևելով Օրենքի տառին, առանց խորամուխ լինելու հոգեոր խորհրդի մեջ, քանզի նրանք գնում էին Օրենքի արդարության ետևից, սակայն այդ Օրենքի արդարությանը չհասան (տե՛ս Հռոմ. Թ 31): Տոներ ունեին նաև հեթանոսները, սակայն դրանք սոսկ մարմնավոր տոն էին՝ մղված իրենց մարմնավոր կրքերից, կատարված իրենց պաշտելիք կուռքերի և դեերի կամքով, ինչի համար էլ նրանց տոները զուտ մարմնավոր կրքերի բավարարում էին: Տոնում ենք և մենք՝ քրիստոնյաներս, սակայն այնպես, ինչպես հաճելի է Աստծուն: Իսկ Աստծուն հաճելի է, որ մենք ասենք և կատարենք այն, ինչը վայելուչ է: Տոնել նշանակում է մեր հոգիների համար մշտամնա և հավիտենական բարիքներ հայթայթել, այլ ոչ թե անցողիկ և ապականվող: Հոգեոր բարիքները քիչ են բորբոքում ցանկությունները, այլ ընդհակառակը՝ ավելի ճնշում են դրանք և դրանց վնասում, որպեսզի կրակի մեջ դյուրավառ նյութեր չավելանան, կամ էլ կրքերի գիշատիչը չստանա սնունդ, որից ցանկություններն ավելի բորբոքվեն և իշխեն բանականությանը»:

Տոների հանդիսությունները սուրբ են և կապված լինելով Եկեղեցու կյանքում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների հետ՝ կատարվում են Աստծու փառքի համար: Սրանք օրհնաբեր են քրիստոնյայի կյանքում նրանով, որ ավելի կենսունակ են դարձնում հավատը, մարդու հոգում մեծացնում սերն ու վստահությունն առ Աստված և լավագույն ձեռվ օգտագործում Տիրոջ շնորհներն ու պարզեները:

Եկեղեցին՝ Քրիստոսի Մարմինը, հավատացյալի կյանքում միշտ կենդանի է, պայծառ ու էական՝ իր միջոցով մարդուն կապելով Աստծու հետ, իսկ տոններին՝ էլ ավելի է պայծառանում: Տոն օրերին ուրախանում ենք խոսքով, երգերով, Սուրբ Գրքի ընթերցմամբ և տոնի խորհրդի գիտությամբ, որով սնվում են տոնողների հոգիները: Այդ օրերին Եկեղեցում կատարվող աստվածապահատությունը՝ ժամերգությունը, պատարագը և մյուս արարողությունները, ավելի հանդիսավոր է դառնում և ուղեկցվում հոգեզմայլ մեղեղիների երգեցողությամբ ու առանձնահատուկ աղոթքներով: Տոներին վեր են առաքվում հավելյալ աղոթքներ ու հնչում հոգեզմայլ շարականներ, և առհասարակ այդ օրվա ամբողջ ծիսակարգը տոնական է ու ավելի վեհ, որպեսզի բարձրացնի մեր հոգիները՝ կատարելու Աստծու փառավոր գործերը: Այդ օրերին Եկեղեցին արտաքնապես է՛լ ավելի է զարդարվում, որը խորհրդանշում է մեր ներքին հոգեոր ուրախությունը և Աստծու սուրբ փառքը:

Տոներին Լույսի սյունը մեզ հովանի է լինում բարձունքներից (տես Ելք ԺԳ 21), քանզի երկնավոր թագավորը սուրբ Եկեղեցում է, և մեզ տոնակից են լինում հրեշտակների բազմությունները: Աստվածությունը զվարճանում է նոր երկիր հաստատելու համար, երկնքում հրճվում են հրեշտակները, և ցնծում առաքյալների ու մարդարեների դասերը՝ փառք ու պատիվ մատուցելով Փրկչին: Եվ մարդասեր Փրկիչը, ողորմելով տոնողներին, բաշխում է երկնավոր պարգեներ և մարմնի ու հոգու բժշկություն: Մենք էլ, նորոգվելով մեղքերի հնությունից, զարդարվելով շնորհներով և լուսավորվելով հրաշափառ ու ընդարձակ խորհրդով՝ բազում ընթերցվածներով, սաղմոսներով ու օրհնության ձայներով, զարդարում ենք սուրբ տոնը և փառավորում Սուրբ երրորդությանը: Այդ օրերին Զինվորյալ Եկեղեցին հրեշտակների վերին զորքերի և երկնքի զվարթունների հետ անդադար օրհնում է Աստծուն:

Տոները սահմանվել են, որպեսզի մի կողմից քրիստոնյաների հիշողության մեջ թարմացվեն Եկեղեցու կյանքի հետ կապված կարևորագույն իրադարձությունները՝ իմանալու Աստծու՝ մեզ համար արած երախտիքների մասին, որով մեր անձերում աշխուժանում ու հաստատվում է սուրբ հավատը, իսկ մյուս կողմից՝ որպեսզի հիշատակելով հոգե-

Հարազատ իրադարձությունները և դրանք ուղեկցելով հանդիսավոր աստվածապաշտությամբ՝ խթանվենք և մղվենք մեր կարողությունների չափով գոհանալու Աստծուց ու փառաբանելու նրան՝ նախանձախնդրութեան հետևելով սրբերի օրինակին: Նաև որպեսզի աշխարհային կյանքի զանազան հոգսերի ու վշտերի մեջ մեր անձերն Աստծով հանգստանան ու միիթարվեն:

Կան տոներ, որոնք մեր մեջ արթնացնում են զղջման ու ապաշխարության զգացում, կան՝ որ արթնացնում են ուրախության զգացում, որոշ տոներ էլ սերմանում են նեղությանն ու վշտին համբերելու կարողություն, մի քանիսն էլ՝ արթնացնում գթության և ողորմածության զգացում մեր ընկերների հանդեպ, ովքեր կարու են մեր բարեգործությանը:

Հնում իսրայելի որդիներն Աստծու հրամանով մեծաշուք հանդիսավորությամբ էին տոնում Մովսեսի միջոցով սահմանված բոլոր տոները՝ սուրբ օրերը, որոնք իրենց խորքում հղացած ունեին մեծամեծ ու զարմանալի խորհուրդներ: Հետևաբար՝ եթե նրանք, որ ստվերի պաշտպաններն էին, այդպես էին տոնում, ապա մենք, որ ճշմարտության վայելողներն ենք, որքան առավել վայելչորեն պետք է պատվենք ու տոնենք: Եվ ամեն ոք, ով չի տոնում, չունի մաս ու բաժին նորոգման խորհրդից, և այդպիսիները կզրկվեն փրկությունից: Ինչպես Հին Ռւխտում տոները տոնվում էին նորի խորհրդով՝ ապագայում կատարվելիք իրադարձությունների դիմաց, այդպես էլ մենք այս տոներով հանդերձյալի հիշատակն ենք տոնում և Հինը խառնելով նորին՝ միասին տոնախմբում:

Պահոց օրերին տոներ չենք կատարում, որովհետև քանի դեռ պահքի մեջ ենք, ապաշխարության մեջ ենք և արժանի չենք տոներ կատարելու, իսկ երբ ապաշխարությամբ քավում ենք մեր մեղքերը, արժանանում ենք տոնելու և' տերունական, և' սրբոց տոները: Որովհետև տոնն ուրախություն է ինչպես հոգու, այնպես էլ մարմնի համար, դրա համար էլ, երբ տոնում ենք, ուրախանում ենք և' հոգով, և' մարմնով: Եվ մինչ կատարվում են հոգեռը խրախճանքները, հոգում ենք նաև մեր մարմնի համար, որովհետև հոգու եղբայրն է, այդ պատճառով վայելում ենք նաև մարմնավոր սեղանից:

Այդ օրերին առավել է պետք հեռու մնալ մեղքերից, քանզի քրիստոնեական տոները կատարվում են հավատացյալների հոգու և մարմնի սրբությամբ ու մաքրությամբ, ինչպես Ոսկեբերանն է ասում. «Ամենամեծ տոնն մաքուր խղճմտանքն է»: Այս պատճառով մեծամեծ տոներից առաջ պետք է ապաշխարել և ապա հաղորդվել Տիրոջ Մարմնին ու Արյանը: Սակայն ժողովրդի մեջ տարածված մի մերժելի սովորություն կա. երբեմն տոնն անց են կացնում գինարբուքով: Այս կապակցությամբ առաքյալն

ասում է. «Մի՛ հարբեք գինով. դրա մեջ զեխություն կա. այլ մանավանդ լցվեցեք Հոգո՛վ, որպեսզի խոսեք միմյանց հետ սաղմոսներով, օրհներգություններով և Հոգեոր երգերով, որպեսզի երգեք և ձեր սրտերում սաղմոս ասեք Տիրոջը: Գոհությո՛ւն հայտնեցեք ամեն ժամ ամեն ինչի համար Հորը և Աստծուն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով» (Եփես. Ե 18-20):

Տուերի Կարգաւելը

Տոները և պահոց օրերը սահմանել են առաքյալները, իսկ հետագայում եկեղեցու սուրբ հայրապետները նոր տոներ ու պահքեր են ավելացրել: Մեր Տիրոջ համբարձումից հետո առաքյալները, Սուրբ Հոգու հրամանով և Պետրոս առաքյալի ձեռքով, Հակոբոս Տյառնեղբորը կարգեցին Երուսաղեմի առաջին եպիսկոպոս ու քահանայապետ: Նա Հովսեփ Աստվածահոր հետ մասնակցել էր աշխարհագրին (տես Ղուկ. Բ 1-5), որի համար էլ գիտեր Տիրոջ ծննդյան օրն ու ամիսը: Վերջինս իր սքանչելի վարքի համար հրեաների կողմից Արդար անունն էր ստացել: Առաջին անգամ Հակոբոս Տյառնեղբայրն է կարգել եկեղեցու տաճարը օրհնելու, սուրբ Սեղան կանգնեցնելու կարգերը և Տիրոջից հետո Վերնատանը առաջինն ինքն է պատարագ մատուցել: Դա եղել է Հոգեգալուստից Հիսուն օր անց՝ Վարդավառի տոնին: Նա է օրինադրել խաչ, աղ և ժամհար օրհնելը: Նա է տոների սկիզբը Աստվածայայտնությունը դրել և տերունական տոների և Քառասնորդաց պահքի համար ընթերցվածներ կարգել. սկսելով Հայտնության ճրագալույցից՝ կարգել է մինչև Հարության ճրագալույցը:

Աստվածպաշտության ընթացքում Սուրբ Գրքից հատվածներ ընթերցելու ավանդույթը գալիս է Հին Ռւխտից (տես Դեսու Ը 34, Եզր. Թ 40, 49), և քրիստոնեական առաջին համայնքները դրան հետևելով (տես Ղուկ. Դ 16-17, Գործք ԺԵ 21), ընդհանրական աղոթքների ժամին կարգում էին Հին Ռւխտի գրքերը (տես Գործք ԺԳ 14-15, 27): Հետագայում դրան ավելացան սուրբ Պողոս առաքյալի թղթերը (տես Կող. Դ 16, Ա Թես. Ե 27) և ավետարանները, ինչով Հին ու Նոր Կտակարանների ընթերցումները աստվածպաշտության անբաժանելի մասը դարձան: Սա հաստատված է Առաքելական կանոնով:

Երբ Երուսաղեմն ավերվեց (70թ.), քրիստոնյա հավատացյալները գնացին Եգիպտոս՝ իրենց հետ տանելով Հակոբոս Տյառնեղբոր կազմած ընթերցվածների մատյանը, որն այնտեղ անցավ Պետրոս հայրապետի ձեռքը: Վերջինիս մահից հետո այդ մատյանն Անտոն Անապատականի միջոցով

անցավ Ալեքսանդր Ալեքսանդրացի Հայրապետին ու Աթանաս սարկավագին, ովքեր էլ այն ներկայացրեցին Նիկիայի մեծ ժողովին (325թ.): Այս ընթերցվածի հիման վրա հաստատվեց աստվածային տոների կարգավորությունը, և ըստ այս ընթերցվածների կարգի՝ բոլոր տոների սկիզբը դրվեց Աստվածայայտնությունը: Ապա Նիկիայի սուրբ ժողովի, հետո նաև սուրբ Կյուրեղ Երուսաղեմացի Հայրապետի և Եկեղեցու մյուս վարդապետների կողմից, աստիճանաբար, կարգվեցին նոր տոներ և ավելացվեցին նոր ընթերցվածներ, որոնցով ընթերցվածների մատյանը ստացավ իր այսօրվա տեսքը՝ Հայ Եկեղեցում անվանվելով Ճաշոց գիրք:

Այնուհետև աշխարհի բոլոր կողմերում, ուր քարոզվեց Ավետարանը, կառուցվեցին նորանոր Եկեղեցիներ, և ամենուր հաստատվեցին առաքյալների ու Հայրապետների կողմից սահմանված տերունական տոները: Այդպես եղավ և Հայաստանում: Երբ սուրբ Գրիգոր Լուսավորիչը դուրս ելավ Վիրապից և կենարար Ավետարանի խոսքով լուսավորեց Հայաստան աշխարհը, դրա հետ միասին հաստատեց նաև տերունական տոները:

Եկեղեցու տոները կարգավորվում և հրահանգավորվում են Տոնացույցի միջոցով, որտեղ կատարման հերթականությամբ ներկայացված են տոները, նրանց կատարման կարգը, հնչող շարականները, սաղմոսները և ընթերցվածները: Տոնացույցը Հայ Եկեղեցի առաջին անգամ ներմուծեցին սուրբ Սահակ Պարթևը (387-436թթ.) և սուրբ Մեսրոպ Մաշտոցը (361-439թթ.): Հետագայում Հայ Եկեղեցու Հայրերն աստիճանաբար այն բարենորոգեցին: Այսպես՝ Գյուտ Արահեղացի (461-478թթ.) և Հովհաննես Մանդակունի (478-490թթ.) Հայրապետները կարգավորել են տոների ծիսակարգը: Սուրբ Հովհաննես Օձնեցի Հայրապետը (717-728թթ.) «Ավագ տոներ»-ը կարգել է որպես Աստվածայայտնության տոնի նախատոնակ: Սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետը (1166-1173թթ.) Հոգեգալստյան տոնի համար 7, իսկ Վերափոխման տոնի համար 9 տոնական օր է հատկացրել: Գեորգ վարդապետ Լամբրոնացին խմբագրել է Տոնացույցը և առանձին մասերն իրար միավորել: Իսկ Սիմեոն Երևանցի Հայրապետը (1763-1780թթ.) Տոնացույցը համալրել է նոր տոներով և վերջնական խմբագրմամբ՝ բերել այսօրվա տեսքին:

Տուերի ուսանարգություն

Եկեղեցին ամեն օր նշում է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Ծննդյան և Հարության մեծապայծառ տոները, քանի որ յուրաքանչյուր օրվա ժամերգություններում կան ծննդյան և Հարության խորհուրդները: Նաև ամեն կիրակի Հայտնապես տոնում ենք մեր Փրկիչի ինքնազոհաբերմամբ՝

մահվան լուծարման և մարդկային բնության փրկության տոնը։ Այս ամենից զատ՝ տարին մեկական անգամ, մեծ հանդիսավորությամբ ու վայելուչ ճոխությամբ, տոնում ենք մեր Տիրոջ Ծնունդն ու Հարությունը։ Եվ որպեսզի Եկեղեցում ամեն ինչ լինի կարգով ու վայելչությամբ, ըստ առաքելական հրամանի (տես Ա Կորնթ. ԺԴ 40), և Եկեղեցու զավակները կարողանան սրբությամբ մասնակցել տոներին, Եկեղեցու սուրբ Հայրերը տարվա օրերը բաժանել են երեք խմբի, դրանք են՝ Տերունի օրեր, Սուրբ մարտիրոսների հիշատակին նվիրված օրեր և Պահոց օրեր։

Տերունի տոներ: Տերունի օրերը մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի տնօրինական հիշատակներին հատկացված օրերն են, ինչպես նաև այն տոները՝ Աստվածամոր, Խաչի և Եկեղեցու, որոնց հիշատակը կապված է Տիրոջ հետ։ Այստեղից էլ՝ Տերունի օրերը կազմվել են տոների չորս խմբից։ Տնօրինական, Աստվածամոր, Խաչի և Եկեղեցու։

Տնօրինական տոները Փրկչի կատարած հայրակամ տնօրինությունները հիշելու համար են, վերաբերում են Սուրբ Երրորդության ու մի Աստվածության խորհրդին և նվիրված են Քրիստոս Աստծու մարդեղությանը։ Դրանք են՝ Ավետումը, Ծնունդը, Մկրտությունը, Անվանակոչությունը, Տյառնընդառաջը, Պայծառակերպությունը, Ծաղկազարդը, Վերջին ընթրիքը, Խաչելությունը, Հարությունը՝ Զատիկը, Համբարձումը և Հոգեգալուստը։

Աստվածամոր տոներն են՝ Սուրբ Կույս Մարիամի հղացվելը (Յուղին սուրբ Աստուածածնի յԱննայէ), Սուրբ Կույսի ծնունդը, Սուրբ Կույսի ընծայումը տաճարին և Աստվածամոր վերափոխումը։

Այս տոներից բացի՝ Հոգեգալուստին հաջորդող հինգերորդ կիրակի օրը տոնվում է Աստվածածնի տուփի գյուտի տոնը։ Սա հիշատակն է այն դեպքի, երբ երկու իշխաններ, ուխտի գնալով Երուսաղեմ, մի հրեա կնոջ մոտ գտնում են Աստվածածնի տուփը և վերցնելով՝ տանում Կոստանդնուպոլիս, որտեղ պատրիարքը հանդիսավոր կերպով այն դնում է Եկեղեցում և տոն սահմանում։

Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնին հաջորդող երրորդ կիրակին սուրբ Աստվածածնի գոտու գյուտի տոնն է։ Սա հիշատակն է այն դեպքի, եռք Արկադիոս կայսեր օրոք (395-408 թթ.) Երուսաղեմում գտնվեց սուրբ Կույսի գոտին և տարվեց Կոստանդնուպոլիս, որտեղ հետագայում այդ առիթով Աստվածածնին նվիրված մի նոր Եկեղեցի կառուցվեց, և գոտին դրվեց այնտեղ։ Այս երկու տոները՝ «Գիւտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի» և «Գիւտ գօտուոյ Սրբուհւոյ Աստուածածնի», 1774 թվա-

կանին Հայ Եկեղեցու տոնացույց է ներմուծել Սիմեոն Երևանցի կաթողիկոսը:

Խաչի տոներն են՝ Սուրբ Խաչի երկումը, Խաչի գյուտը, Խաչվերացը, Վարագա Սուրբ Խաչը:

Եկեղեցու տոներն են՝ Աշխարհամատրան կիրակին, Հոգեգալուստը, Կաթողիկե Սուրբ Էջմիածինը, Սուրբ Տապանակը՝ Վարդավառի նավակատիքը, Շողակաթը՝ Վերափոխման նավակատիքը, Սուրբ Եկեղեցու տոնը՝ Խաչվերացի նավակատիքը, Խաչվերացի տոնին Հաջորդող վեց տոնական օրերից երեքը, որոնք ուղղակի կոչվում են «Եկեղեցու տոն», Տյառնընդառաջը, Ծաղկազարդը և նոր կիրակին:

Հստ Առաքելական կանոնի՝ տերունի տոն է նաև տարվա յուրաքանչյուր կիրակի օրը, որը նվիրված է մեր Տիրոջ Հարությանը, այդ պատճառով պետք է ամեն կիրակի մատուցել սուրբ Պատարագ:

Հոգեգալուստին Հաջորդող կիրակիները, մինչև Բուն բարեկենդան, կոչվում են Հարության կիրակիներ, Բուն բարեկենդանից մինչև Զատիկ՝ Պահոց կիրակիներ, իսկ Զատկից մինչև Հոգեգալուստ՝ Հինանց՝ այսինքն Հիսուն օրերի կիրակիներ:

Սլքոց տոներ: Սուրբ մարտիրոսների հիշատակին նվիրված օրերը սահմանված են տոնելու հալածանքների ժամանակ նահատակված քրիստոնյաների հոգեոր արիության հիշատակը, ովքեր նեղությունների օրերին եղան Քրիստոսի վկաները: Այդ պատճառով առաքյալները կանոն սահմանեցին, որ շաբաթ օրը լինի տոն՝ ի հիշատակ սուրբ մարտիրոսների, մատուցվի սուրբ Պատարագ, և հավատացյալները սրբերի մասունքները պատվի արժանացնելով՝ փառակորեն Քրիստոսին:

Սուրբ մարտիրոսների հիշատակը տոնվում է շաբաթվա չորս օրերին միայն՝ երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Սա վերաբերում է այն շաբաթներին, որոնք տերունի տոների կամ պահքի համար հատկացված չեն: Պահքի շրջանում շաբաթ օրերն են միայն հատկացված սրբերի տոներին, բացի Լուսավորչի, Վարագա Խաչի և Սուրբ Հակոբի պահքի շաբաթներից, որոնց ընթացքում երկուշաբթի, երեքշաբթի և հինգշաբթի օրերին ևս սրբերի տոն է կատարվում:

Եկեղեցական օրացույցում նշված են մինչև 15-րդ դարի սրբերը, իսկ հետագա դարերում ապրած սրբերի հիշատակը նշելու համար Եկեղեցին սահմանել է «Ամենայն սրբոց տոն»-ը, որի ժամանակ հիշատակվում են բոլոր հին ու նոր, հայտնի ու անհայտ սրբերը:

Պահոց օրեր: Եկեղեցին, բացի տոն օրերից, ունի նաև պահոց օրեր, որոնք ապաշխարության համար են, քանի որ մարդուն խորհրդածելու

օրեր էլ են հարկավոր: Հստ Եկեղեցու կանոնի՝ այդպիսի օրեր են տարվա օրերի գըեթե կեսը: Պահքերը լինում են երեք տեսակ՝ օրապահք, շաբաթապահք և հատուկ պահքեր: Օրապահք են շաբաթվա երկու օրերը՝ չորեքշաբթի և ուրբաթ: Իսկ երբ պահում ենք շաբաթվա հինգ օրերը՝ երկուշաբթից մինչև ուրբաթ, ապա դա կոչվում է շաբաթապահք:

Շաբաթապահքերն են՝ Առաջավորաց, Եղիական, Լուսավորչի, Վարդապառի, Վերափոխման, Սուրբ Խաչի, Վարագա Սուրբ Խաչի, Հիսնակի, Սուրբ Հակոբ Մծբնա հայրապետի և Ծննդյան պահքերը:

Պահքին նախորդող ուտիքի օրը կոչվում է բարեկենդան, որը նշանակում է բարի կենդանություն՝ ուրախություն: Բուն բարեկենդան է կոչվում Մեծ բարեկենդանը, որին հաջորդում է Մեծ պահքը: Բարեկենդաններն, ըստ դրանք պայմանավորող տոների կատարման հերթականության, հետեւալներն են՝ Բարեկենդան Առաջավորաց պահոց, Բուն բարեկենդան, Բարեկենդան Եղիական պահոց, Բարեկենդան Լուսավորչի պահոց, Բարեկենդան Վարդապառի պահոց, Բարեկենդան Վերափոխման պահոց, Բարեկենդան Սուրբ Խաչի պահոց, Բարեկենդան Հիսնակի պահոց, Բարեկենդան սուրբ Հակոբի պահոց, Բարեկենդան Ծննդյան պահոց:

Հատուկ պահք է հիսնօրյա պահքը: Տարվա մեջ երեք հիսնյակներ կան: Հիսնյակները հիսուն օրերից կազմված պահոց շրջաններ են, որոնք նախորդում են մեծ տոներին՝ Ծննդյան, Զատկին և Վարդապառին: Սուրբ Ծննդյանը նախորդող հիսնյակը կոչվում է «Հիսնյակ»: Այն սկսվում է նոյեմբերի 18-ից, որը և Հիսնյակի բարեկենդաննն է: Ինչպես Զատկին և Վարդապառին նախորդող հիսնօրյա պահքերի բարեկենդաններն են կիրակի օրը տոնվում, այդպես էլ Հիսնյակի բարեկենդանն է կիրակի օրը տոնվում, որը լինում է նոյեմբերի 15-ից մինչև 21-ը հանդիպող կիրակին: Այս շրջանում աշխարհականներն թելադրվում է պահել հիսնյակի առաջին շաբաթը՝ Հիսնյակի շաբաթապահքը, վերջին շաբաթը՝ Ծննդյան շաբաթապահքը, և այդ միջակայքում գտնվող Սուրբ Հակոբի շաբաթապահքը, իսկ հոգևորականներին՝ ամբողջ հիսնյակը:

Երկրորդ հիսնյակը Զատկին նախորդող Մեծ պահքի շրջանն է և կոչվում է «Աղուհացից»: Այս շրջանում և՝ աշխարհականներին, և՝ հոգևորականներին թելադրվում է պահել ամբողջ հիսնյակը: Իսկ երրորդ հիսնյակը Վարդապառին նախորդող հիսուն օրերն են, որոնցից այժմ միայն երեք շաբաթն ենք պահում՝ առաջին՝ Եղիական, միջին՝ Լուսավորչի, և վերջին՝ Վարդապառի:

Հարժական և լաւագործ տոներ

Տոները ժամանակային առումով բաժանվում են երկու խմբի՝ շարժական և անշարժ։ Անշարժ տոներն իրենց կայուն օրն ունեն օրացույցում, իսկ շարժական տոները, կախված Զատկի տոնից, տեղափոխվում են ետ ու առաջ։ Այսպես՝ տերունի տոներից անշարժ են՝ Ավետումը, Սուրբ Ծնունդը, Մկրտությունը, Անվանակոչությունը, Տյառնընդառաջը և այլն։

Օգոստոսի 15-ի մոտակա կիրակի օրը՝ 12-ից մինչև 18-ն ընկած ժամանակահատվածում, Աստվածածնի Վերափոխման տոնն է։ Այն միշտ կիրակի ենք տոնում, քանի որ տոնախմբում ենք ոչ թե սուրբ Կույսի ննջման օրը, որը եղավ օգոստոսի 15-ին, այլ՝ վերափոխման, որը կիրակի օրը եղավ։

Մեպտեմբերի 14-ի մոտակա կիրակի օրը՝ 11-ից մինչև 17-ն ընկած ժամանակահատվածում, Խաչվերացի տոնն է։ Թեպետ խաչը ուրբաթ օրը ներկվեց Տիրոջ Արյամբ, սակայն խաչի փառքը կիրակի օրը հայտնի դարձավ։ Մինչև Հարության կիրակին խաչը որպես մահվան գործիք էր դիտվում, իսկ այդ օրը որպես Կյանքի ծառ երկրպագվեց։ Այդ պատճառով էլ խաչվերացը կիրակի օրն ենք տոնում։

Իսկ շարժական են՝ Առաջավորաց բարեկենդանը, Բուն բարեկենդանը, Զատիկը, Համբարձումը, Հոգեգալուստը և Վարդավառը։ Նշված շարժական տոները տեղափոխվում են Ծննդյան տոնի նկատմամբ, սակայն անշարժ են Զատկի տոնի նկատմամբ, և որոշելով տվյալ տարում Զատկի տոնի օրը՝ որոշում ենք նաև Զատկին համընթաց տեղափոխող տոների օրերը։

Մինչև Նիկիայի տիեզերական ժողովը քրիստոնյաները Զատիկը տոնում էին հրեաների հետ միասին, նույն օրը, երբ լուսինը լինում էր 14 օրական։ Հետագայում Կոստանդիանոս բարեպաշտ արքան, չկամենալով Զատիկը տոնել տիրասպան ազգիների հետ նույն օրը, խնդրեց սուրբ հայրապետներին, որպեսզի Զատիկը տոնելու համար նոր կարգ սահմանեն, և այն տոնվի միայն կիրակի օրը, երբ Քրիստոս հարություն առավ։ Թեպետև շաբաթվա մեկ այլ օր Զատիկը տոնելը հակառակ չէր աստվածադիր օրենքին, սակայն բարեպաշտ արքայի խնդրանքով Նիկիայի տիեզերական ժողովում սահմանվեց տոնել կիրակի օրը, որով և առանձնացանք Հին Ուխտի հետեւրդներից։

Զատկի օրը որոշելու համար պետք է հաշվի առնել օրվա խորհուրդը և ոչ ամսաթիվը, ինչպես Ծննդյան դեպքում է։ Պետք է իմանալ, որ զատիկները չորսն են. առաջին զատիկը եղավ արարչության օրերին, երկրորդը՝ օրինադրության, երրորդը՝ վերստին նորոգման, իսկ չորրորդը լինելու է համընդհանուր հարության ժամանակ։ Սրանք բոլորն էլ միմյանց օրինակն են ու գաղափարը։ Հետեւաբար՝ Զատիկը տոնելու օրը

պետք է որոշել՝ հաշվի առնելով թվարկված զատիկների առանձնահատկությունները։ Այդ առանձնահատկություններից առաջինը գարնանային գիշերահավասարն է։ Սա այն օրն է, երբ գիշերվա և ցերեկվա ժամերը հավասար են, և այդպես է լինում մարտի 22-ին։ Գիշերահավասարն անհրաժեշտ պայման է Զատկի օրը որոշելու համար, քանի որ արարչության օրերին գիշերահավասար էր, և հրեաների զատիկը եղավ գիշերահավասարից հետո՝ նիսանի 14-ին։ Եկ դարձյալ՝ գիշերահավասարից հետո՝ նիսանի 14-ին, Քրիստոս Վերնատանը ընծայեց իր Մարմինն ու Արյունը (տե՛ս Ղուկ. ԻԲ 17-20):

Երրորդ պայմանն է, որ լինի լիալուսին, այսինքն՝ լուսինը լինի տասնչորս օրական, քանի որ արարչության օրը լուսինը տասնչորս օրական ստեղծվեց։ Թեպետև այդ օրը լուսինը տակավին մեկ օրական էր, սակայն այնպես ամբողջական էր երկում, ինչպես տասնչորս օրական ժամանակ, քանզի լուսնին վայել չէր թերի և կիսակատար լինել իր լինելության օրը։ Եկ բոլոր արարածներն էլ լի ու կատարյալ ստեղծվեցին, ինչպես և բույսերն իրենց արարման օրը ոչ թե ծիլեր էին, այլ կատարելապես հասունացած էին և պտղալից։ Իսկ մարդը երեսնամյա հասակով ստեղծվեց, թեպետ դեռևս մեկ օրական էր։ Լուսինը տասնչորս օրական էր նաև հրեաների զատկի և Տիրոջ չարչարանքների օրը։

Երրորդ պայմանն է, որ Զատիկը կիրակի օրը լինի, քանի որ արարչության սկիզբը կիրակի օրն է։ Այնուհետև այս օրը եղավ Օրենքի տվյալությունը, և Տերը կիրակի օրը հարություն առավ։ Այս պայմաններից ելնելով՝ Զատիկը տոնվում է մարտի 22-ից մինչև ապրիլի 25-ն ընկած ժամանակահատվածում՝ լուսնի լրմանը հաջորդող կիրակի օրը։

Քանի որ Զատիկը շարժվում է երեսունհինգ օրերի միջև (նարտի 22-ից մինչև ապրիլի 25-ը), այդ պատճառով նրանից կախված տոներն էլ են շարժվում, որի պատճառով տեղաշարժվող և անշարժ տոների միջև եղած ժամանակահատվածները, որոնք կոչվում են «միջոց ուտիք»-ներ, կարճանում են կամ երկարում։ Այսպես՝ Ծնունդից մինչև Առաջապրաց բարեկենդան եղած ժամանակահատվածը՝ միջոց ուտիքը, տատանվում է 6-ից մինչև 41 օր, Վարդապատից մինչև Վերափոխում՝ 2-ից մինչև 7 շաբաթ, Վերափոխումից մինչև Խաչվերաց՝ 4-ից 5 շաբաթ, Վարագա Խաչից մինչև Հիսոնակաց բարեկենդան՝ 7-ից 8 շաբաթ, սուլր Հակոբ Մծբնա հայրապետի տոնից մինչև Սուլր Ծնունդ՝ 12-ից 18 օր։

Սրբոց տոները մեծամասամբ խմբերով են կարգված և հիմնականում շարժական են։ Այս խմբերը խիստ որոշակի հերթականությամբ հաջորդում են կամ նախորդում տերունի տոներին և վերջիններիս տեղափոխմանը զուգընթաց՝ իրենք էլ են տեղափոխում։ Տոնական խումբը իրենից ներկայացնում է մեկ օրացուցային շաբաթ, որի տոներն են այդ շաբաթվա-

չորս օրվա՝ երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ, սրբոց տոները, որոնք իրենց խմբում անշարժ են:

Սակայն այս խմբերից մի քանիսը, որոնք միջոց ուստիքների վերջին մասում են բաշխված, տվյալ տարում իրենց միջոց ուստիքի փոքրանալու պատճառով տեղափոխվում են մեկ այլ միջոց ուստիք, որն այդ տարի մեծանում է, և այդտեղ տոնվում, այսինքն՝ տվյալ խումբն այդ տարի հաջորդում է մեկ այլ տերունի տոնի: Այսպիսով՝ սրբոց տոների մի մասը տեղափոխվում է և՛ Ծննդյան տոնի նկատմամբ, և՛ Զատկի: Այդ խմբերն են՝ Աստվածայայտնության տոնին հաջորդող «ապայից» կոչվող տոները, Վարդապառի վերջին երկու շաբաթվա տոները և Վերափոխման չորրորդ շաբաթվա տոները:

Սրբոց տոներից անշարժ են միայն Ավագ տոները, քանի որ սրանք կարգվել են որպես Աստվածայայտնության տոնի նախատոնակ:

Երեքրոյան

Եկեղեցին, երկնային զորքերի օրինակով (տես Եսայի 2 3), ամեն օր երեքսրբյան օրհնություն է մատուցում Տիրոջը, որով պատմվում է Միածին Որդու՝ մարդկանց փրկության համար կատարած տնօրինությունները. մարդանալը, չարչարվելը, խաչվելը, թաղվելը, երրորդ օրը հարություն առնելը, երկինք համբարձվելը և Սուրբ Հոգու գալուստը:

Տարվա յուրաքանչյուր օր ունի իր երեքսրբյանը՝ օրվա խորհրդին համապատասխան, որը երկու մասերից է կազմված: Առաջին մասն ընդհանուր է և ունի հետեւյալ բովանդակությունը՝ «Սուրբ Աստուած, սուրբ և հզոր, սուրբ և անմահ...», իսկ երկրորդ մասը, որը կոչվում է տնօրինական հավելված, կախված օրվա խորհրդից, փոփոխվում է: Տնօրինական հավելվածները թվով տասն են:

Առաջին տնօրինական հավելվածը հետեւյալն է. «... որ ծնար և յայտնեցար վասն մեր, ողորմեա' մեզ»: Սա հայտնում է Ավետման և Աստվածայայտնության տոների և վերջինիս հաջորդող ուժ տոնական օրերի տնօրինական խորհուրդները:

Երկրորդը Տյառնընդառաջի, Ծաղկազարդի, Ավագ երկուշաբթիի, Ավագ երեքշաբթիի, Ավագ չորեքշաբթիի, Ավագ հինգշաբթիի, Հոգեգալստյան տոնի նախօրեի և կիրակնամուտերի տնօրինական հավելվածն է. «... որ եկիր և գալոց ես, ողորմեա' մեզ»:

Երրորդը Ավագ ուրբաթ օրվա Գիշերային ժամի տնօրինական հավելվածն է. «... որ մատնեցար վասն մեր, ողորմեա' մեզ»:

Չորրորդը Ավագ ուրբաթի ձաշու ժամերի, պահոց օրերի, սրբերի հիշատակի, Խաչի և Եկեղեցու տոների, ինչպես նաև Աստվածածնի փոքր տո-

ների տնօրինական հավելվածն է. «... որ խաչեցար վասն մեր, ողորմեա' մեզ»:

Հինգերորդը Ավագ ուրբաթի երեկոյի և Ավագ շաբաթ օրվա Գիշերային ժամի տնօրինական հավելվածն է. «... որ թաղեցար վասն մեր, ողորմեա' մեզ»:

Վեցերորդը Զատկի ճրագալույցի, Զատկի, Հինանց կիրակիների՝ Զատկից մինչև Համբարձում, բացի Երևան սուրբ խաչի տոնից, և բոլոր Հարության կիրակիների տնօրինական հավելվածն է. «... որ յարեար ի մեռելոց, ողորմեա' մեզ»:

Յոթերորդը Հոգեգալստյան շաբաթվա տնօրինական հավելվածն է. «... որ Համբարձար փառօք առ Հայր, ողորմեա' մեզ»:

Ութերորդը Հոգեգալստյան շաբաթվա տնօրինական հավելվածն է. «... որ եկիր և հանգեար յառաքեալսն, ողորմեա' մեզ»:

Իններորդը Վարդավառի երեք տոնական օրերի տնօրինական հավելվածն է. «... որ յայտնեցար ի Թաքոր լերինն, ողորմեա' մեզ»:

Տասներորդը Աստվածածնի Վերափոխման ինը տոնական օրերի տնօրինական հավելվածն է. «... որ եկիր ի փոխումն մօր Քո և Կուսի, ողորմեա' մեզ»:

Տաղակար Տոներ

Այս բոլոր տոներից հինգը՝ Սուրբ Ծնունդը, Զատիկը, Վարդավառը, Վերափոխումը և Խաչվերացը, Եկեղեցու ավագագույն տոներն են և կոչվում են «տաղավար տոներ»: Սրանք ավագագույն տոներ են, քանզի այս տոների խորհրդի միջոցով վերացվեց մահվան հաղթությունը, մարդը ժառանգեց անմահություն և դարձավ տաղավար Ամենասուրբ Երրորդության համար: Եվ մենք սրբությամբ մասնակցելով այս տոնախմբություններին և ապրելով Աստծուն Հաճելի կյանքով՝ դառնում ենք Աստծու տաղավարները, և Աստված բնակվում է մեր մեջ՝ համաձայն իր խոսքի. «Եթե մեկը սիրում է ինձ, իմ խոսքը կպահի, և իմ Հայրը նրան կսիրի. և Մենք նրա մոտ կգանք ու նրա մոտ կօթևանենք» (Յովի. ԺԴ 23):

Ծնորհք արքեպիսկոպոս Գալուստյանի կարծիքով, «տաղավար տոներ» անվանումը հատուկ է միայն Հայ Եկեղեցուն, և այդ տոները Հին Ուխտի Տաղավարահարաց տոնի օրինակով են այդպես կոչվում: Հին Ուխտում այս տոնի օրերին Երուսաղեմում էր Հավաքվում ամբողջ Իսրայելը՝ պատարագներով հանդերձ, և տոնակատարության ամբողջ ընթացքում, որը տևում էր մեկ շաբաթ, ժողովուրդը բնակվում էր ժամանակավոր թեթև շինածքներում՝ տաղավարներում՝ ի հիշատակ նրանց Եղիպատոսից դուրս գալուն, երբ Երկար ժամանակ տաղավարներում էին ապրում՝ մինչև

Ավետյաց երկիր մտնելը (տե՛ս Ղևտ. ԻԳ 41-43): Այս նմանությամբ էլ Հայ Եկեղեցում մեկից ավելի օրեր տեղող տոները կոչվեցին «տաղավարահարաց տոներ», որը հետագայում առաջին բարի մասնակի սղման պատճառով ստացավ «տաղավար տոներ» ձեւը:

Այս տոները հատկանշական են նրանով, որ տոնվում են կիրակի օրը, բացառությամբ Աստվածայայտնության տոնից, ունեն իրենց նախընթաց պահոց շրջանը՝ բարեկենդանով հանդերձ, տոնի նախորդ օրը կատարվում է նավակատիք, իսկ գիշերը՝ հսկում։ Այս հինգ տոներից յուրաքանչյուրի երկրորդ օրը նվիրված է ննջեցյալների հիշատակին։

Տաղավար տոները տեղում են երեք օրից ավելի, որոնք բոլորն էլ Տերունի օրեր են։ Այսպես՝ Աստվածայայտնության տոնին հաջորդում է ութ տոնական օր, Զատկին՝ հիսուն, Վարդավառին՝ երեք տոնական օր, Վերափոխմանը՝ ութ, Խաչվերացին՝ վեց։ Ցուրաքանչյուր տաղավար տոն ունի իրեն հատուկ երեքսրբյանը։ Թեև Հոգեգալուստը տաղավար տոն չէ, սակայն այն ևս ունի իրեն հատուկ երեքսրբյան և հաջորդող վեց տոնական օրեր, որոնք տոնվում են պահքով։

Հատկանշական է, որ Տիրող սուրբ առաքյալների և տիեզերական սուրբ ժողովներին մասնակցած Եկեղեցու սուրբ հայրապետների տոներն առնչվում են տաղավար տոների բարեկենդաններին։ Այսպես՝ Վարդավառի բարեկենդանին նախորդող շաբաթ օրը տոնն է Քրիստոսի տասներկու սուրբ առաքյալների և սուրբ Պողոսի՝ տասներեքերորդ առաքյալի։ Խաչվերացի բարեկենդանին նախորդող շաբաթ օրը տոնն է 325 թվականին գումարված Նիկիայի տիեզերական սուրբ ժողովի 318 հայրապետների։ Բուն բարեկենդանին նախորդող շաբաթ օրը տոնն է 381 թվականին գումարված Կոստանդնուպոլսի տիեզերական սուրբ ժողովի 150 հայրապետների։ Եվ վերջապես՝ Վերափոխման բարեկենդանին նախորդող շաբաթ օրը տոնն է 431 թվականին գումարված Եփեսոսի տիեզերական սուրբ ժողովի 200 հայրապետների։

Նախատնագույն

Տերունական տոներին նախորդող երեկոյին նախատոնակ² ենք կատարում, որը տոնի նախապատրաստությունն է։ Նախ պետք է իմանալ, թե որն է օրվա սկիզբը, քանի որ ոմանք կեսօրն են համարում, ոմանք՝ երեկոն, ոմանք՝ կեսգիշերը, իսկ ոմանք էլ՝ լուսաբացը։

Իմաստասերներն օրվա սկիզբը կեսօրն են համարում, երբ արեգակը ելնում է երկնքի կորնթարդը (zenit)՝ երկնակամարի գմբեթը, և թագա-

² Նախատոնակ – հանդես՝ տոնի առաջընթաց երեկոյին։

վորում, իսկ երբայեցիները երեկոն՝ ըստ Մովսեսի. «Եվ եղավ երեկո, և եղավ առավոտ՝ օր առաջին» (ԾԱՆԴ. Ա 4): Սուլք եկեղեցին ունի օրվա երկու սկիզբ՝ գիշերամեջը և առավոտը: Նախ՝ գիշերամեջը, որովհետև Քրիստոս գիշերամիջին հարություն առավ գերեզմանից, ապա նաև՝ առավոտը, որովհետև լույսն՝ առավոտյան է ծագում, որով պահքը բաժանվում է ուտիքից, ինչպես լույսը՝ գիշերից: Հետևաբար՝ տոների սկիզբը գիշերամիջին է, իսկ պահքի սկիզբը՝ առավոտյան: Սրանցից մեկը հոգեոր է, մյուսը՝ մարմնավոր: Հոգեորը վեց ժամ առաջ է մարմնավորից:

Սրբերի տոները գիշերամիջին ենք սկսում տոնել, որովհետև նրանք խիստ կռապաշտության և անգիտության խավարում նահատակվեցին: Այդ պատճառով, ի պատիվ նրանց, խոր խավարում ենք սկսում տոնել՝ նրանց գովաբանելով, որ թեպետև մեռան, սակայն լի են անմահության հույսով: Սա նաև այն խորհուրդն ունի, որ մենք մինչև մեր մահվան երեկոն դեռևս գտնվում ենք մեղքերի մեջ:

Իսկ տերունական տոները նախորդ օրվա իններորդ ժամին ենք սկսում, որն ինը ժամ առաջ է, քան հասարակաց տոների սկիզբը, և տասնհինգ ժամ առաջ, քան առաջիկա օրը: Նախ՝ որ զանազանվի սրբոց տոներից, և երկրորդ՝ ի հիշատակ շաբաթ երեկոյի, երբ եղավ հարությունը՝ ըստ այս խոսքի. «Շաբաթ օրվա երեկոյան, երբ կիրակին լուսանում էր» (Մատթ. Իւ 1): Այդ ժամին քահանաները մտնում են եկեղեցի, այնտեղ պայծառ հանդերձներով զգեստավորվում և վերցնելով սուրբ նշանները՝ Փառքի Տիրոջը մեզ օգնության կանչում: Այստեղ քահանան Տիրոջ օրինակով է պայծառանում հանդերձներով, որով կցորդ ենք լինում նրա փառքին: Որովհետև այժմ հայելու օրինակով ենք տեսնում Աստվածության էությունը, իսկ երբ Տերը գա, դեմ հանդիման պիտի տեսնենք՝ ըստ առաքյալի խոսքի. «Այժմ տեսնում ենք աղոտ, ինչպես պատկերը հայելու մեջ. իսկ այն ժամանակ պիտի լինի դեմառդեմ» (Ա Կորնթ. ԺԳ 12): Եվ մինչև Հարության առավոտն աննինջ աչքով, ոչինչ չճաշակելով, սպասում ենք Տիրոջ Գալատյանը, ինչպես իմաստուն կույսերը, ապա Պատարագի խորհրդով, Քրիստոսի հետ միասին, Հոր կազմած սեղանի շուրջ բազմում և այնտեղ ճաշակում: Դրա համար էլ Տերն ասում է. «Ես խոստանում եմ ձեզ... որ ուտեք և խմեք իմ սեղանից իմ արքայության մեջ» (Պուկ. ԻԲ 29-30): Այստեղ վառվող մոմերը ցույց են տալիս մեր հավատը, իսկ խունկը՝ բարի վարքը, որը ծխեցնում ենք բոլոր սրբերի առջև:

Նազարետիք

Նավակատիքը³ թարգմանվում է նորոգման և փրկության կամ ուրախության տոն: Ամբողջ տարում երեք տեսակ օրեր կան՝ պահք, ուտիք և սրանց միջինը, որը նավակատիք է կոչվում, քանի որ մարդը երեքից է գոյացել՝ հոգուց, մարմնից և երկուսի միախառնումից՝ անձից: Պահքը հոգու համար է, ուտիքը՝ մարմնի, իսկ նավակատիքը՝ անձի:

Նմանապես և կերակուրն է երեք տեսակ լինում: Առաջինը միսն է, որը կատարյալ կենդանուց է: Կենդանին կատարյալ է կոչվում, եթե շնչավոր է, ունի հինգ զգայարան և շարժվում է: Եվ այս կերակուրը Զատկին ուտելու համար է: Խոտը, ընդեղենը և պտուղները պահքի կերակուր են, քանի որ անզգա են, անշարժ և անշունչ: Իսկ նավակատիքի կերակուրն այս երկուսի, այսինքն՝ կենդանիների ու բույսերի միջինն է, ինչպես ձուկը, ձուն և կաթը, քանի որ ձուն և կաթը կենդանուց են, սակայն կենդանի չեն, իսկ ձուկը կենդանի է՝ կատարյալ զգայարաններով ու շարժմամբ, սակայն օդ չի շնչում:

Նավակատիքի խորհուրդը մեզ Դրախտում ավանդվեց, որովհետեւ Հրամայվեց ուտել բոլոր ծառերից, բացի մեկից: Այդպես և այսօր մեզ Հրամայվեց ուտել բոլոր կերակուրներից, բացի մսից: Քանի դեռ մարդը չէր հասել կատարյալ աստիճանի, չպետք է վայելեր կատարյալ պտղից, քանի որ նա նորելուկ էր և տակավին մանուկ: Նաև Արարիչն իր պատկերի խնամքն էր տանում, որպեսզի մարդն աստիճանաբար հասներ կատարյալ փառքին և բանսարկուի նման հպարտանալով՝ չընդվզեր ու ընկներ: Այսպես և մենք այսօր՝ քանի դեռ չենք ստացել կատարյալ փրկությունը, չենք վայելում կատարյալ կերակուրը:

Աղամին ասվեց, որ բոլոր ծառերից ուտի, բացի մեկից, հետեւաբար, եթե նաև մյուս ծառերից էլ չուտեր, ինչպես այդ մեկից, պատվիրանազանց կլիներ, և եթե այդ մեկից էլ այլոց հետ ուտեր, դարձյալ պատվիրանազանց կլիներ: Այդպես և մենք, եթե այս օրը խստությամբ պահենք, պատվիրանազանց կլինենք: Եվ եթե չարությամբ չափից դուրս ազատություն ստանանք և միս ուտենք, նույն պատվիրանազանցն ենք: Այս պատճառով հարկ կլինի և մեզ, մեր նախնիների նման, արտաքսվել կենդանության Դրախտից և ոչ միայն չհասնել վաղվա կատարյալ չնորհներին ու փրկությանը, այլև օրվա խորհրդից դուրս ընկնելով՝ նորոգման փոխարեն ապականությամբ զգեստավորվել, որովհետեւ նավակատիքը նորոգություն է թարգմանվում: Եվ նախաստեղծները ոչ միայն չհասան կատարելության, այլև ինչ ունեին, դրանից էլ զրկվեցին:

³ Նավակատիք – նոր կամ նորոգված տան կամ հաստատության, շինության բացման հանդես, ինչպես նաև՝ ուրախության հանդես, որ կատարվում է թագաղորության կամ պսակադրության տարեդարձներին:

Նավակատիքի խորհուրդը պատկերվեց նաև տապանում՝ նոյի միջոցով։ Քանի դեռ նոյի ընտանիքը տապանում էր, միս չէր ուտում, իսկ երբ դուրս եկավ, նոյն Աստծուն ողջակեզ մատուցեց և ընդունեց Աստծու ուխտն ու աշխարհի փրկության նշանը, որից հետո ճաշակեց միսը։ Այսպես մարդկության համար փրկության տապան է սուրբ Եկեղեցին, որում բնակվում ենք և մենք։ Այսօր այն օրն է, երբ նոյի ընտանիքը տապանում է, դրա համար էլ չպետք է միս ուտել մինչև արձակում ստանալը և դեպի վաղվա օրը՝ իմանալի Արեգակի Լույսի ելնելը։ Դրա համար նախ պետք է երկնավոր Գառին ողջակեզ մատուցել Աստծուն, ստանալ նոր Ուխտը և արարածների փրկության նշանը, ապա վայելել մարմնավոր կերակուրը՝ կազմված մսից ու բոլոր ուտեստներից։

Նավակատիքի խորհուրդը ներկայացնում էր նաև Հին խորանը, և նրանք, ովքեր ծառայում էին Օրենքին, չին ընդունում կատարյալ կերակուրը, այսինքն՝ երկնավոր Գառին, ինչի պատճառով էլ նրանց չտրվեց կատարյալ փրկությունը, այլ որպես մանուկներ՝ կաթով սնուցվեցին և ոչ հաստատուն կերակուրով, քանի որ չին կարող մարսել։ Այդ պատճառով և մենք, տոնելով այս օրը որպես հիշատակ Հնի, որում պատկերվեց նորը, միս չենք ուտում, որը կատարյալ կերակուր է։ Իսկ երբ Տերը եկավ և մեզ պարգևեց հաստատունը՝ իր Մարմինն ու Արյունը, այնժամ ընդունեցինք կատարյալ շնորհը և այս խորհրդով միս ենք ուտում, որպես թե նորոգվեցինք Հնից, այսինքն՝ մանկությունից, և ստացանք կատարյալը։

Եվ եթե մեկը մեզ բամբասի, թե այդ խորհրդով կերակուրն ի նկատի չեն ունեցել, իրավացի չի լինի, որովհետեւ ամեն իմանալի խորհուրդ նյութականապես պատկերվում է մարդկանց մեջ և ներգործում առարկայի վրա։ Տե՛ս, որ կերակրի միջոցով ընկանք Դրախտից, և դարձյալ կերակրով՝ Կենաց Հացով, անմահացանք ու երկինք բարձրացանք։ Եվ ամենամեծ ու անճառելի խորհուրդներն էլ նյութապես են կապակցվում, ինչպես՝ Հացով, գինով, ջրով, յուղով, նաև՝ Եկեղեցու հանդերձներով ու սպասքով։

Բայց տեսնենք, թե ինչպես և որտեղ սահմանվեց նավակատիքը և ովքեր էին, որ արեցին սա հնում։ Արդ՝ առաջին նախամարդարեն՝ Մովսեսը, երբ կանգնեցրեց Խորանը կտավներից՝ որպես տասկեղկանոց վրան, որն ըստ Աստծու տեսչության ցույց տրվեց նրան լեռան վրա, և նրանում դրեց Տապանակն ու չորս սեղանները, հավաքեց ժողովրդին ու կատարեց Խորանի նավակատիքը։ Դրա համար էլ այդ օրը կարգվեց նավակատիքի ու Խորանի հիշատակի օր, և այնուհետև ամեն տարի կատարվում էր այդ տոնը Երուսաղեմում։ Այլև՝ երբ Սողոմոնը կառուցեց տաճարը և ամբողջապես հարդարեց այն, այնժամ ժողովեց ամբողջ

Իսրայելը և տաճարի համար մեծ շուքով ու ճոխությամբ նավակատիք արեց: Իսկ երրորդ անգամ, երբ Զորոբարելի միջոցով նորոգվեցին Եղուսաղեմի ավերված շինությունները, նրանք ժողովվելով կատարեցին տաճարը նորացնելու մեծ տոնը, որը նավակատիք անվանեցին:

Մեր բնությունն Աստծու տաճար է, որը չար գոռողի պատճառով ընկավ ու կործանվեց, այդ պատճառով հարկ է, որ Տանուտերը գա և վերստին շինի իր տունը: Դրա համար Տերը նախ առաքեց Մովսեսին ու Ահարոնին, ապա՝ Սողոմոնին ու Զորոբարելին և այլ արդարների ու մարգարեների, որպեսզի թերեւս նրանց միջոցով կանգնեցվի այս տունը, այդ պատճառով էլ Աստված մեծաձայն գոչում է՝ ասելով. «Երկինքն իմ աթոռն է, և երկիրը՝ իմ ոտքերի պատվանդանը: Ի՞նչ տուն պիտի շինեք ինձ համար» (Եսայի ԿԶ 1): Իսկ մարգարեն ասում է. «Աստված ձեռագործ տաճարում չի բնակվում» (տե՛ս Գործը Է 48): Հոգով տեսնողները հարցրին Աստծուն, թե ո՞րն է նրա հանգստի տեղը, և լսեցին պատասխանը, թե. «Ես ո՞ւմ եմ նայելու, եթե ոչ՝ հեզերին ու խոնարհներին և նրանց, ովքեր դողում են իմ խոսքից» (Եսայի ԿԶ 1): Ապա տարակուսելով ու անասելի դողով իրենց պարտությունը խոստվանեցին, դրա համար Տերը խոսեց և ասաց, որ կկանգնեցնի Դավիթի ընկած ու կործանված խորանը:

Եվ մեկ այլ մարգարե վկայում է՝ ասելով. «Եվ հանկարծակի իր տաճարը կգա Տերը, որին գուք փնտրում եք, և ուխտի Հրեշտակը, որին կամենում եք դուք» (Մաղաք. Գ 1): Եվ Զաքարիան ասում է. «Խնդա՛ և ուրախացի՛ր, դո՛ւստր Սիոնի, քանի որ աշա Ես կդամ և կբնակվեմ քո մեջ» (Զաքար. Բ 10): Ահա այսպես կանխասելով եկավ նա և Կույսի արգանդում հագնելով մեր բնությունը՝ կանգնեցրեց բանական աղամական տաճարը, որի վրա նրանց ձեռք բարձրացրին ու քանդելով այն՝ ապականեցին, ինչպես ինքն էր առակներով նրանց մասին ասում. «Քանդեցե՛ք այդ տաճարը, և երեք օրվա ընթացքում այն կվերականգնեմ» (Յովի. Բ 19):

Եվ այսպիսով, Տերը երեքօրյա թաղումից հետո հարություն առավ՝ հաղթելով մահվանն ու ապականությանը՝ լստ այս խոսքի. «Ո՞ւր է, մա՛հ, քո հաղթությունը. ո՞ւր է, դժո՛խք, քո խայթոցը» (Ա Կորնթ. ԺԵ 55), և իրենով կանգնեցնելով այս տաճարը՝ Ավագանի միջոցով կանգնեցրեց նաև մարդուն, նորից ծնելով, նորոգելով նրան՝ Սուրբ Երրորդության տաճար գարձրեց, և տալով հարության հույսի առհավատչյան՝ հաստատեց հավատի վեմի վրա, որը դժոխքի դռները չեն կարող հաղթահարել: Եվ այն, որ Աստծու տաճար եղանք, հայտնապես ասում է Գիրքը. «Եթե մեկը կատարում է իմ կամքը, Ես և Հայրը նրա մոտ կգանք և նրա մոտ կօթևանենք» (Յովի. ԺԴ 23): Եվ դարձյալ. «Ուր երկու կամ երեք հոգի հավաքված լինեն՝ իմ անունով, այնտեղ եմ Ես՝ նրանց մեջ» (Սատր. ԺԸ 20): Նաև առաքյալը՝

Հավատարիմ վկան, ավելացնում է. «Զգիտե՞ք, որ Աստծու տաճար եք դուք, և Աստծու Հոգին բնակվում է ձեր մեջ» (Ա Կորնթ. Գ 16):

Արդ՝ Աստված սա պատկերեց Հին տաճարի նավակատիքում, և եթե նրանք, որ ստվերի պաշտպաններն էին, այդպես էին տոնում անշունչ տաճարի նորոգությունը, ապա մենք, որ ճշմարտության վայելողներն ենք, պարտավոր ենք մեծապես տոնել ու պատվել մեր բնության նորոգության տոնը առավել, քան մյուս տոները: Եվ ամեն ոք, ով չի տոնում, չունի մաս ու բաժին նորոգման խորհրդից, և այդպիսիները կզրկվեն փրկությունից Հրեաների՝ ու Հեթանոսների հետ, ովքեր չհնազանդվեցին Ավետարանին:

Այժմ տեսնենք, թե ինչու ենք հինգ օր նավակատիք կատարում տարվա ընթացքում: Նախ՝ որովհետեւ նորոգվեցինք հինգ զգայարաններով: Երկրորդ՝ շնորհներ ընդունեցինք, որոնցից չորս կատարելագույններն այստեղ ընդունեցինք, իսկ հինգերորդը հանդերձյալում ենք ընդունելու:

Նախ տոնում ենք Ծննդյան նավակատիքը, որովհետեւ Տիրոջ ծննդյամբ և Հորդանանում մկրտությամբ՝ Ավազանից վերստին ծնունդ ու նորոգություն ընդունեցինք, որը մեծ ու առաջին շնորհն է, և այս նավակատիքը տոնում ենք որպես հիշատակը մեր նորոգության:

Իսկ սուրբ Զատկի նավակատիքը տոնում ենք, որովհետեւ մեծ հարության օրը մենք՝ մահանացուներս ու ապականացուներս, անմահությամբ ու անապականությամբ պիտի զգեստավորվենք: Նաև՝ որովհետեւ վերացվեց մահվան հաղթությունը և մեր հոգիները սատանայից ազատվեցին ու Հայր Աստծուն ավանդվեցին: Դրա համար այս նավակատիքը մեր մեծ փրկության հիշատակին ենք կատարում:

Աստվածածնի նավակատիքը կատարում ենք, որովհետեւ ինչպես եվայի միջոցով ժառանգեցինք մահն ու գերությունը, այդպես էլ այժմ նրա դստեր միջոցով ժառանգում ենք անմահությունն ու ազատությունը և ընդունում Դրախտային կյանքը:

Սուրբ Խաչի նավակատիքը տոնում ենք, որովհետեւ մեր վայր ընկած բնությունը խաչով վեր ելավ երկինք, մեր մեղքերը նրանով վերացվեցին, և մահվան մեր պարտքը դրանով վճարվեց: Այսպիսի մեծ պարզեների հիշատակի համար են կատարվում այս չորս նավակատիքները:

Իսկ հինգերորդ՝ նավակատիքի տոնը Վարդավառին ենք կատարում, որովհետեւ Այլակերպության օրը Երկրորդ Աղամը հագավ Դրախտում մեր նախահոր կողոպտված պատմուճանն ու դրանով զգեստավորեց մեր բնությունը: Եվ մենք կատարում ենք այն հիշատակը, որ մեր հնացած ձորձերն այսօր դեն գցեցինք և հայրենի լուսեղեն պատմուճանով զգեստավորվեցինք: Եվ սա երևում է «Անառակի» առակից՝ անառակ որդու Հոր

Հրամանից իր ծառաներին. «Անմիջապես հանեցե՛ք նրան նախկին պատմուճանը և հազցրե՛ք նրան» (Ղուկ. ԺԵ 22):

Սա ոչ թե բնության, այլ հանդերձի նորոգության տոնն է, որը, սակայն, այսօր մենք դեռևս չենք ընդունել, այլ թողնված է ապագայի համար, որպեսզի հանդերձյալում սրանով զգեստավորվենք, իսկ այստեղ ստանում ենք դրա հույսի առհավատչյան: Եվ ինչպես Հին Ուխտում տոները նշվում էին նորի խորհրդով՝ ապագայում կատարվելիք իրադարձությունների դիմաց, այնպես էլ մենք հանդերձյալի հիշատակը նշում ենք այս տոնով:

Ահա նավակատիքի հինգ օրերն այսպես կարգվեցին, և այս օրերը կատարելապես սնվելու, այսինքն՝ կատարյալ «ուտիքի» օրեր չեն, և ոչ էլ ամբողջապես պահքի օրեր, այլ գտնվում են այս երկուսի միջակայքում: Պետք է հասկանալ այնպես, որ ոչ ամբողջությամբ հնում ենք, ինչպես հրեաները, և ոչ էլ հրեշտակների նման ամբողջովին կատարելություն ստացած, այլ, դեռևս, ընթացքում ենք: Որոշ մասը կատարված է, իսկ որոշ մասն էլ դեռ պետք է կատարվի: Եվ ինչպես Հինը նորի պատկերն է, այդպես էլ նորը՝ Հանդերձյալի:

ՃՐԱԳԱԼՈՒՅԹ

Սուրբ Ծննդյանը, ինչպես նաև սուրբ Զատկին նախորդող օրը կոչվում է ձրագալույց, որը նշանակում է ճրագ լուցանել, այսինքն՝ վառել: Այդ օրերին, ըստ հատուկ արարողակարգի, վառում են տաճարի ջահերն ու կանթեղները և վառվող մոմեր բաժանում ժողովրդին, որից հետո մատուցվում է սուրբ Պատարագ: Հայ Եկեղեցում տարվա մեջ միայն երկու անգամ է ձրագալույց կատարվում՝ սուրբ Ծննդյան և սուրբ Հարության նախատոնակներին, որովհետեւ այս տոների նավակատիքները մեր բնության նորոգման ու փրկության հիշատակներն են:

Այս օրը Թագավորի կարապետն է, որը նախօրոք դալիս է և ավետում Արքայի վաղվա գալստյան մասին ու հրամայում կահավորել ու զարդարել առագաստը⁴, պատրաստել Թագավորի պալատն ու հարսնության քողը գցել թագուհու՝ Եկեղեցու վրա: Այն ժամանակ և՛ Հարսը, և՛ սպասավորները մի կողմ են թողնում ամբողջ տիրությունը և ամեն ինչ ըստ արժանվույն պատրաստում, որից հետո պատվում են ավետարերին, սակայն կատարյալ հարսանիք չեն անում, որովհետեւ այն Թագավորի գալստյամբ է լինելու:

⁴ Առաջաստ – նորապակների համար նախատեսված սենյակ կամ սենյակի մաս՝ առանձնացված քողով՝ «առաջաստով»:

Սա նաև մարգարեությունների նշանակն է, որոնց ընթերցումները կատարում են նախատոնակի երեկոյան՝ ճրագներ ու կանթեղներ վառելով։ Սա խորհրդանշում է մարգարեների աղոտ ծագումը, Արդարության Արեգակի երեւելի ծագումից առաջ։ Նաև այս մտքով է ճրագալույց ասվում, այսինքն՝ ժամանակավոր, անցավոր, աղոտ, տկար լույս։

Ահա, ըստ այս օրինակի, ճրագալույցի օրը կարապետ է լինում Ծննդյան ու Հարության տոներին։ Եվ դրա համար սկսում ենք հոգեոր պաշտոն կատարել՝ նախ ընթերցելով մարգարեներին՝ որպես կանխասացների, ովքեր վկայում ու ավետում են մեզ գալիքը։ Այսպիսով, Հինը Նորի հետ խառնելով՝ միասին տոնախմբում ենք։ Եվ մինչ կավարտվեն հոգեոր խրախճանքները, վայելում ենք նաև մարմնավոր սեղանից, սակայն առանց միս ուտելու։ Ո՞չ սպի ու ո՞չ էլ պահքի մեջ ենք, ինչպես երեկ ու անցյալ օրը, և ո՞չ էլ կատարյալ խրախճանքի մեջ, ինչպես գալիք, վաղվա օրն է լինելու Արքայի գալստյամբ, այլ մնում ենք պահքի ու կատարյալ խրախճանքի միջև, որը կերակրի միջոցով ենք հայտնապես ցուցադրում։

Եթե ոմանք ասեն, թե տոնը կերակրով չեն պատվում, ապա այդպիսիներին պետք է պատասխանել, թե այդ գեղքում ինչո՞ւ Հարությունը և Ծնունդը՝ որպես կատարյալ տոներ, չի սահմանված պահքով տոնել։

Իսկ կատարյալը չենք անում, որովհետև կիրակին պահքից բաժանում ենք շաբաթով, և դեռևս չենք տեսել Հարուցյալին։ Եվ երբ արեկի ծագումով լույսը բացվի, և Մարիամի հետ գնանք պարտեզ և տեսնենք գերեզմանը, ապա մեզ կերևա նաև Հարուցյալը և կհաստատի ու ցույց կտա իր Հարությունը։ Այդ պատճառով անասելի ինդությամբ լցվելով՝ հնչեցնում ենք հարության երգը՝ նախ հոգով հպվելով հոգեոր սեղանին և ապա մարմնով՝ մարմնավորին, և ուտում ենք գառն ի հիշատակ երկնավոր Գառան, Ով օրհնյալ է հավիտյանս։ Ամեն։

ՆԱԶԵՅՋԱԼԱԿԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒ

Տաղավար տոների երկրորդ օրը նվիրված է հավատով ի Քրիստոս ննջածների հիշատակին, ովքեր այս բոլոր հանդիսավոր օրերին մեզ տոննակից են լինում, բարեխոսում են մեզ համար, և նրանց աղոթքները ելնում են Աստծու առջե (տես Յայտ. Ը 4): Թեպետ արդարների հոգիներն ունեն անմահության հաստատ հույսը և գտնվում են Աստծու ձեռքում, խաղաղության մեջ (տես Ինաստ. Գ 1), սակայն նրանք պսակի դեռևս չեն արժանացել (տես Յայտ. Զ 9-11), ինչպես և մեղավորները՝ տանջանքների (տես Բ Պետ. Բ 4, 9), մինչև որ բոլորս էլ մեր վախճանին հասնենք՝ ըստ առաքյալի խոսքի։ «Մրանք ամենքը հավատի մեջ վկայված լինելով հանդերձ, չընդունեցին խոստումը։ Աստված մեզ համար ավելի լավն էր

նախատեսել, որպեսզի առանց մեզ դրանք չկատարվեն» (Եբո. ԺԱ 39-40): Քանի որ որդեսեր Հայրը սպասում է, մինչև որ իր բոլոր զավակները կհավաքվեն և այնժամ յուրաքանչյուրիս կտա իր հասանելիքը:

Առայժմ ննջեցյալները կարիք ունեն մեր աղոթքների՝ իրենց ներելի և անգիտությամբ գործած մեղքերի թողության համար, և հույսով սպասում են իրենց հոգիների հանգստության համար մեր հիշատակություններին: Ինչպես Հուդա Մակաբեյցին փող հավաքեց և ուղարկեց երուսաղեմ՝ ննջեցյալների մեղքերի համար պատարագ մատուցելու (տես Բ Սակաբ. ԺԲ 43-46), և Բոսսն էր մեռելների և կենդանիների համար ողորմություն անում (տես Յօնութ Բ 20), այդպես էլ ննջեցյալների հարազատները ողորմություն են տալիս կարոտայալներին և պատվիրում քահանաներին իրենց հարազատների անունները հիշատակել սուրբ Պատարագի մեջ:

Սուրբ Պատարագով ոչ միայն ողջերի համար է փրկություն լինում, ովքեր հավատով են հաղորդվում, այլև՝ նրանց, ովքեր հույսով ու հավատով ննջեցին ի Քրիստոս: Որովհետև Քրիստոսի մահը ոչ միայն ողջերի համար փրկություն եղավ, այլև՝ ննջեցյալների, ինչպես ասում է Պետրոսը. «Գնաց ավետարանեց հոգիներին, որոնք դժոխվում էին» (Ա Պետ. Գ 19): Սակայն սուրբ Պատարագը չի փրկում հեթանոսներին, անհավատներին և բոլոր նրանց, ովքեր անզիղ ու անտրտում թափալվում են մեղքերի ու չարիքների մեջ և չեն հիշում դատաստանի օրն ու տանջանքների սարսափը: Այսպիսիների համար օգուտ չէ պատարագ մատուցելը կամ էլ ողորմություն անելը:

Այդ պատճառով, տաղավար տոնների հաջորդ օրը, եկեղեցիներում մատուցվում է սուրբ Պատարագ և Հոգեհանգստյան պաշտոն՝ բոլոր նրանց համար, ովքեր ճշմարիտ և սուրբ հավատով ննջեցին ի Քրիստոս, և պատարագի մեջ, Աստծու առջև, հիշատակվում են նրանց անունները, ինչպես Սողոմոնը հիշատակեց իր հոր՝ Դավիթի անունը (տես Բ Մնաց. Զ 42): Ամեն նման դեպքում ննջեցյալների վրա կենաց ցող է իջնում, որը մեծ ուրախություն է պատճառում երկնային զորքերին, նաև նրանց, ովքեր ուղիղ սրտով, ճշմարիտ հավատով, ողջամիտ հույսով և սուրբ սիրով հիշատակում են սրբերին, քանի որ հանգուցյալների հիշատակությունը մեծ շահ է և կատարյալ օգուտ:

Այդ օրը մարդիկ այցելում են նաև իրենց ննջած հարազատների գերեզմանները և պատվիրում քահանաներին օրհնել այն, որով ավետում ենք ննջեցյալներին Տիրոջ երկրորդ գալստյան և մեռելների հարության հույսը:

ԱՎԱԳ ՏՈՆԵՐ

Աստվածայիշտուայլան Տուան և Խոհորոշության Տուակատարուայլուաները

Ծննդյան տոնից առաջ, սուրբ Յովիաննես Օձնեցի հայրապետի կարգադրությամբ, տոնում ենք չորս տոն, որոնք և կոչվում են Ավագ տոներ: Միանք կատարվում են նախատոնակներով և առանձին հանդեսներով:

Սուրբ Եկեղեցու վարդապետները Սուրբ Հոգու առաջնորդությամբ Ծննդյան և Աստվածայիշտուայլայն տոնից առաջ կարգեցին ևս չորս տոն Եկեղեցու յոթ գլխավոր այրերի համար՝ որպես սուրբ Եկեղեցու հավատի շինության անկյան վեմերի: Նախ կարգեցին Դավիթ Աստվածահոր և Հակոբոս Տյառնեղբոր հիշատակության օրը, ապա՝ սուրբ Ստեփաննոս Նախավկայի, այնուհետև՝ առաքյալներից գլխավորների՝ Պետրոսի ու Պողոսի, և ապա՝ Որոտման որդիների՝ Հակոբոսի ու Հովհաննեսի տոները, ովքեր և յոթ սյուներ եղան, ըստ որի՝ հիմնարկվել են Եկեղեցու չորս անկյուններն ու յոթ սյուները:

Նա, ով կամենում է արքունիք կազմել, այն կառուցում է հաստատուն ու ամուր հիմքի՝ անսասան վեմի վրա, որի մասին Տերն առակով ասաց Ավետարանում. «Պիտի հաստատեմ Եկեղեցին հավատի վեմի վրա» (Իմմտ. Մատթ. Ժ2 18): Քանի որ Եկեղեցին հաստատված է մարգարեական ու առաքելական հիմքի վրա՝ անկյան գլուխ ունենալով Քրիստոսին, դրա համար էլ մարգարեների և առաքյալների հետ միասին ենք տոնում այս տոնը, որովհետև այն, ինչը մարգարեները Հոգով տեսնելով պատմեցին, առաքյալներն ականատես լինելով քարոզեցին:

Եվ գարձյալ՝ նրանց համար, ովքեր դժվարահավատ են, և նրանց հավատարիմ վկաներ են հարկավոր, ինչպես Քրիստոս իր Աստվածության համար Հորն է վկա բերում, ինչպես նաև Մովսեսին ու Եղիային՝ իր չարչարանքներից առաջ Թարոր լեռան վրա բերեց, այսպես և մենք մեր Փրկչի ծննդյան հավատարիմ վկաներ ունենք Դավիթին ու Հակոբոսին: Քանզի Հին Ուխտում չկար ավելի պատվական մեկը, քան Դավիթը, ում հրեաներն ավելի պատվեին, իսկ նոր Ուխտում առաքյալները Հակոբոս Տյառնեղբորը կարգեցին որպես առաջին եպիսկոպոս Երուսաղեմի, ով բոլորի կողմից Արդար կոչվեց:

Մատթեոսը Դավիթին աստվածահայր է կոչում՝ ասելով. «Գիրք ծննդյան Դավիթի որդու» (Մատթ. Ա 1), իսկ Պողոսն իր խոսքում Հակոբոսին

Տիրոջ եղբայր է անվանում. «Առաքյալներից ոչ ոքի չտեսա, բացի Հակոբոսից՝ Տիրոջ եղբորից» (Գալատ. Ա 19): Եվ կա՞ արդյոք ավելի արժանահավատ վկա, քան հայրը կամ եղբայրը: Եվ Քրիստոսի ծնունդով մեկ եղան մարգարեները և առաքյալները:

Ինչպես երկրի թագավորները սովորություն ունեն իրենց խորհուրդները և գանձերը հույս հավատարիմ և վստահելի այրերին ավանդելու, այսպես և երկնային Արքան իր տնօրինության խորհուրդը նրանց վստահեց, մանավանդ Դավթին, ում համար ասաց. «Գտա Հեսսեի որդի Դավթին՝ իմ սրտով մի մարդու» (Գործք Ժ 22), ով էլ Աստծու «սիրտ» և «կամք» կոչվեց: Իսկ Դավթիթն ասաց. «Քո խոսքերը սրտումս թաքցրի, որ չմեղանչեմ Քո դեմ» (Սաղմ. ԹԺԸ 11): Իսկ Հակոբոսին «պարիսպ» են անվանում, որովհետև Տիրոջ գանձն անդրժելիորեն պահեց: Նաև՝ նա մոտ է Տիրոջը եղբայրական համարձակությամբ:

Օրինակ՝ եթե մի անձանոթ մարդ կամենա թագավորի մոտ մտնել, նախ կմոտենա թագավորի մերձավորին, նրանից կիմանա թագավորին պատվելու հանգամանքները և ապա կհամարձակվի մոտենալ թագավորին: Արդ՝ երկնային թագավորի, նրա արքունիքի, գահի, տնօրինական խորհրդի ու մեծ քաղաքի՝ սուրբ Եկեղեցու փառքի առջև գալու համար առավել ևս պարտավոր ենք մի քանի օր առաջ մտնել թագավորական արքունիքի գավիթ՝ սովորելու տերունական հանգամանքները:

Հակոբոս Տյառնեղբայրը, Տիրոջ հետ հիշատակվելով, պատվի է արժանում: Եվ ի՞նչ ավելի մեծ պատիվ կա, քան Աստծու եղբայր կոչվելը: Այն, ինչ Դավթիթը մարգարեական հոգով աստվածաբանեց Քրիստոսի մասին, այդ ամենը՝ տնօրինության սկզբից մինչև ավարտը, Հակոբոսը տեսավ, քանզի Տիրոջ եղբայրը լինելով՝ միշտ շրջում էր նրա հետ: Նաև Հոգսեփին իր մահից առաջ սուրբ Կույսին հանձնել էր Հակոբոսի խնամքին, մինչև որ խաչի վրա Փրկիչը Կույսին հանձնեց Հովհաննեսի խնամակալությանը:

Դավիթ մարգարեի ու Հակոբոս Տյառնեղբոր, Ստեփաննոս Նախավկայի, Պողոսի ու Պետրոսի և Հովհաննես ու Հակոբոս առաքյալների տոները միմյանց հաջորդելով ենք տոնում ո՛չ ըստ նրանց վախճանվելու կարգի, քանզի Դավիթը Քրիստոսի գալուստից հազար տարի առաջ է վախճանվել, Հակոբոս Տյառնեղբայրը՝ Տիրոջ չարչարանքներից երեսուն տարի անց՝ Ներոնի թագավորության յոթերորդ տարում, իսկ Պետրոսն ու Պողոսը Հոռոմում նահատակվել են Ներոն կայսեր թագավորության 13-րդ և Տիրոջ չարչարանքների 36-րդ տարում: Հովհաննեսը, հասնելով խորին ծերության, Տիրոջ չարչարանքներից 72 տարի անց, ենոքի և Եղիայի նման կենդանի, տեղափոխվեց Երկինք: Իսկ Հակոբոսը՝ նրա եղբայրը, Տիրոջ

չարչարանքներից չորս տարի անց սպանվեց Ագրիպպասից, որը Հերովդես կոչվեց (տե՛ս Գործը ԺԲ 12): Հակոբոսը դարձի է բերել Հերմոգինես կախարդին, նրա Փիլողեոս աշակերտին, Օվսիա դպրին և նրանց հետ նաև բազում մարդկանց, մեծամեծ նշաններով ու իմաստությամբ, այդ պատճառով էլ Աբիաթար քահանայապետը և բոլոր հրեաներն աղաչեցին Հերովդեսին գլխատել նրան:

Հույժ խորհրդաբար և իմաստությամբ են ի մի հավաքվել նրանց տուները Քրիստոսի Ծննդյան տոնից առաջ, քանզի Քրիստոսի գալուստը դատաստանի, դատապարտության և իրավունքի համար էր: Սատանայի դատաստանի, դժոխքի դատապարտության, ինչպես նաև մարդկային բնության իրավունքի և ողորմածության համար, ինչպես ինքն ասաց. «Դատաստանի համար եկա այս աշխարհը» (Յովի. Թ 39), և դարձյալ. «Հիմա՝ է այս աշխարհի դատաստանը, հիմա՝ է, որ այս աշխարհի իշխանը դուրս կնետվի» (Յովի. ԺԲ 31): Նաև Դավիթն է ասում. «Գիտեմ՝ Դո՛ւ, Տե՛ր, աղքատի արդար դատաստանն ես անում և տնանկի իրավունքն ես պաշտպանում» (Սաղմ. ՑԼԹ 13): Արդ՝ թեպետ Տերը խոնարհությամբ եկավ աշխարհ՝ ծառայի կերպարանքով, սակայն սիրում է թագավորի իրավունքը և պատիվը: Եվ փոխանակ հրեղեն ու անմերձենալի աթոռի, եկեղեցին պատրաստեց չորեքերպյան աթոռի նմանությամբ, որ տեսավ եղեկիելը մարդու կերպարանքով, առյուծի ձևով, եղի օրինակով և արծվի վերացությամբ (տե՛ս Եզեկ. Ա 5):

Աստվածության այս չորս տոների խորհուրդն ավելի արժանավոր է և զարմանալի, քան վերին աթոռունը, որովհետև մինչ այս աթոռին նստելը՝ նրան միայն երկնայիններն էին փառաբանում, իսկ երբ մարդարեներին ու առաքյալներին իր Աստվածության համար որպես պատրաստեց, ամբողջ երկիրը լցվեց նրանց բարբառով, և վերիններն ու ներքիններն ընդհանրապես լցվեցին գիտությամբ ու նրա փառքով, որովհետև սրանց միջոցով հայտնվեց Աստծու բազմապատիկ իմաստությունը:

Արդ՝ այս տոների խորհրդին են վերաբերում աստվածաբարձ այս կենդանիները: Այսպես, առյուծի նմանությունը պատշաճում է Դավիթին՝ թագավորական պատվի համար, ում Հակոբ նահապետը վկայում է՝ ասելով. «Հուղարկան առյուծի, իմ շառավղից ելար, որդյանկ իմ, ելար, բազմեցիր, ննջեցիր դու որպես առյուծ» (Ծննդ. ԽԹ 9): Այս խոսքերը՝ որպես մարդարեություն, նախ Դավիթի մասին ասվեցին, իսկ այնուհետև՝ Քրիստոսի: Հակոբոս Տյառնելքայրը նույնպես նույն թագավորական ցեղից էր՝ մաքրությամբ առյուծացած ընդդեմ ախտերի:

Իսկ մարդու նմանությունը Ստեփաննոսի համար պետք է իմանալ, որպես այր Քրիստոսի կատարյալ չափի հասակով: Եվ նա տեսավ երկինքը մեծ հանդիսությամբ բացված և մարդացյալ Աստծուն՝ Հոր աջ կողմում:

Եզի կերպարանքը խորհրդանշում է հավատի ամրությունը, որն ունեն Քրիստոսի աներեր աշակերտները, Եկեղեցու հաստատուն սյուները՝ Պետրոսն ու Պողոսը: Սրանք առաքելաջան աշխատությամբ ընթացան տիեզերքի բոլոր ոլորտներում և մեր բնության անդաստանը վարեցին Ավետարանի արորով: Նրանք, քաղհանելով փուշն ու մեղքերի սեզը, հրովարեցին որոմնաբեր արմատը և հոգեոր սերմերով լցրին ամբողջ տիեզերքը՝ սկսած Երուսաղեմից: Նրանց այսպիսի առատարեր ավետարանչության մասին Դավիթը կանխավ երգաբանեց՝ ասելով. «Ողջ Երկիրն է բոնել ձայնը նրանց, և մինչև աշխարհի ծայրն են հասել խոսքերը նրանց» (Սաղմ. ԺԸ 5): Նրանք են Աստծուն հաճելի եղները, որոնք կանդնեցին ազգերի ու թագավորների առջև:

Արծվի ձեռով երևացին երանելի ավետարանիչները՝ Որոտման որդիները, ովքեր բարձրաթռիչ աստվածաբանությամբ հասան Սուրբ Հոգու խորություններին և արծվաթռիչ սլացքով պատուեցին կռապաշտության թանձրամած խավարը և ցրեցին նրա ոհմակը՝ դեերի ժողովն ու սեագունդը, և նրանց աշխարհայլած անելով՝ ազատեցին մարդկային ցեղը, որը նեխել էր զանազան ախտերով լցված լեշի նման, ինչպես գրված է. «Ուր դիակն է, այնտեղ կհավաքվեն արծիվները» (Սատթ. ԻԴ 28): Որովհետև աղվեսների բզկատող և ամենակեր ոհմակների նման, ամենաչար և մեղսասեր դեերը, որոնք կերակրվում են հոտած ու նեխած լեշերով, հեռու փախան մարդկանցից, և մարդկային նեխած բնությունը համեմվեց ճշմարտության աղով՝ լվացվելով Ավագանի միջոցով, և կենդանարար Հոգով վերստին եղան Լույսի որդիներ:

Սրանք են չորս կենդանակերպերի տիպերը, որոնք լծված են Տերունական աթոռին: Նույնը և Դանիելն է ասում. «Նայում էի, մինչև աթոռները դրվեցին, և Հինավուրցը նստեց» (Դան. Է 9), որը շատ դիպուկ է, որովհետև Եկեղեցին սպասում է երկնային թագավորի գալստյանը, Ում համար նախ աթոռն է պատրաստվում, որպեսզի գա և մտնի իր սրբության սենյակը՝ խորհրդի անարատ առագաստը, առաքելաքարող ավանդությունը¹, որը չի սուզվում հերձվածողների պղտորումներում, այլ միշտ

¹ Ավանդությունը չգրված և բերանացի փոխանցվող խոսքն է: Աստծու խոսքը մեզ շնորհվել է և՛ գրավոր ձևով, ինչպես Սատվածաշունչ մատյանը, և՛ բանավոր. նախքան Սովունքը՝ նահապետները բերանացի էին միմյանց ավանդուն Աստծու պատգամները: Աստծու խոսքի այս երկու տեսակներն էլ հավասարապես զրոավոր ու ճշմարիտ են. հետևաբար՝ ինչպես Սուրբ Գիրքը, այնպես էլ Սրբազն Ավանդությունը

աճում է ու գորանում, ինչպես Պետրոսը հավատի հիմքը լսեց Տիրոջից. «Դու վեմ ես, և այդ վեմի վրա պիտի շինեմ իմ Եկեղեցին, ու դժոխքի դռներն այն չպիտի հաղթահարեն» (Մատթ. ԺԶ 18): *Սրա համար էլ երանելի Պողոսը հավելյալ նեղություններ է կրում Եկեղեցու օգուտի համար:*

Արդ՝ գալիս է Հինավուրցն Աստված մանկացած ու բազմում իր աթոռին, և աթոռը դրված է Դավթի տանը:

պետք է ընդունել իրեն անմոլոր ու անսխալական: Ավանդությունը ներառնում է նաև սրբերի վարքը և Եկեղեցու արարողությունները:

**ՄԵՐ ՏԻՐՈՅՇ՝ ՀԻՍՈՒԽ ՔՐԻՍՏՈՍԻ
ԾՆՆԴՅԱՆ ԵՎ
ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԼ**

Աստվածաշայտառայուն

Այսօր Աստվածահայտնության տոնն է, քանզի այսօր՝ հունվարի 6-ին, ծնվեց փառքի Աստված՝ Միածին Որդին, և երեսուն տարի անց՝ դարձյալ հունվարի 6-ին, մկրտվեց: Վայել է Աստծուն, Ով գորացրեց սուրբ Կույսին՝ իրեն ըստ մարմնի ծնելու համար, մկրտվել իր ծննդյան օրը՝ իջնելով ջրի մեջ, այն սրբելով ու զորացնելով և սուրբ Ավագանի արգանդը պտղատու դարձնելով, որպեսզի Սուրբ Հոգու միջոցով մենք վերստին ծնվենք սուրբ Ավագանից և կոչվենք Աստծու որդի:

Սրա համար էլ Հայ եկեղեցին միասին է տոնում Ծննդյան և Մկրտության տոները և այն անվանում «Հայտնության տոն», որով իմանում ենք, որ Նա, Ով ծնվեց սուրբ Կույսից, նույն ինքն այսօր եկավ մկրտվելու Հովհաննեսից, վկայվեց Հորից և դավանվեց որպես Որդի՝ Հոր մշտնջենավոր Ծնունդ, նույն էություննից:

Հայտնության տոն է կոչվում, որովհետեւ այսօր արարածները տեսան իրենց Արարչին: Այսօր Աստված ծննդյամբ հայտնվեց և՛ երկնայիններին, և՛ երկրայիններին՝ հրեշտակներին, հովիվներին ու մոգերին, ինչպես նաև անբաններին՝ քարայրին ու մսուրին: Հետեւապես՝ Տիրոջ ծննդյամբ եղավ նաև Նրա հայտնությունը, և Աստված, սուրբ Կույսից ծնվելով, որպես մարդ երեաց: Այդ պատճառով էլ Պողոսն ասում է. «Աստված իր շնորհը հայտնեց որպես փրկության միջոց բոլոր մարդկանց» (Տիտ. Բ 11): Իսկ Գրիգոր Աստվածաբանը¹ Քրիստոսի ծննդյան ճառում այսպես է ասում. «Այսօր Աստծու հայտնության տոնն է»: Նաև Բարսեղն² է ասում. «Այս տոնի անունը դնենք Հայտնության տոն»:

Նաև Քրիստոսի մկրտությամբ հայտնություն եղավ, քանզի հայտնի դարձավ կուսածին Մարդու՝ Հիսուսի Աստվածությունը, Ում մկրտեց Հովհաննեսը և Քրիստոս անվանեց, և Քրիստոս Աստված է: Այս մասին վկայեցին Հայրը, Սուրբ Հոգին և Հովհաննես Մկրտիչը:

Այսօր Հայտնվեց նաև երրորդության խորհուրդը, որը մինչ այդ պահը ծածկված էր մարդկանցից. Որդու մկրտությամբ, Հոր ձայնով և Սուրբը Հոգու աղավնակերպ իջմամբ:

¹ Գրիգոր Աստվածաբան (Նազիանզացի) 328-389 թթ.:

² Բարսեղ Կեսարացի 329-379 թթ.:

Այսօր մենք արժանանում ենք անկողոպտելի ուրախությամբ տոնելու երկնավոր թագավորի՝ անեղ և մշտնջենավոր Աստծու մեծ ու հրաշափառ ծննդյան օրը, որի պատճառով ցնծում ենք բերկրալից հրճվանքով։ Քանզի նա, Ով Հոր էության նկարագիրն է ու երեսի Լույսը, փառքի ծագումն ու անժամանակ Ծնունդը, և վեր է բոլոր մտքերից, անձառելի՝ մարդկանց համար, ու անծանոթ՝ հրեշտակներին, ժամանակի լրանալով խոնարհվեց հայրական ծոցից և Հոր ու Սուրբ Հոգու կամքով բնակվեց սուրբ Կույսի անարատ արգանդում, նրա մարմնից մաս առնելով՝ մարմնավորվեց և ինն ամիս համբերելով ու հրաշապես մարդանալով՝ ծնվեց կնոջից Բեթղեհեմում՝ Դավթի քաղաքում, և պատվեց խանձարուրով։ Նա, Ով Արուսյակից առաջ է ծնվել և Հոր ու Սուրբ Հոգու հետ ծածկված է անմատույց լույսով։

Մեր Քրիստոս Աստծու Ծննդյան և Հայտնության տոնը բոլոր տոների սկիզբն ու հիմքն է։ Եթե Քրիստոս մարմնով չծնվեր, ապա չէր մկրտվի, ուրեմն չէր լինի Աստվածայայտնության տոնը, և եթե չխաչվեր, չթաղվեր ու հարություն չառներ, չէր լինի Հարության տոնը։ Այսպիսով, Քրիստոսի ծնունդով ծնունդ առան մյուս տոները՝ ինչպես ակունքից բխող բազմաթիվ աղբյուրներ։ Փառավորյալ Սուրբ Երրորդությունը հիմնարկեց մեր փրկության այս տոնը, և Հոր ու Հավիտենական Սուրբ Հոգու կամքով եղավ Միաձնի ծնունդը՝ ամենամաքուր արգանդից։ Սա է Հոգեսոր ուրախության սկիզբը բոլոր հավատացյալների համար և սա է արարածների ազատությունը։ Այս մայր տոնը սուրբ Եկեղեցին համընդհանուր ուրախության օր է հայտարարում, քանի որ եղավ այն, ինչին հազարամյակներ առաջ սպասում էին մարդարեները և կամենում տեսնել սրբակյացները, այսինքն՝ Բանն Աստծու՝ մարմնով հայտնվելը և բնակվելը մարդկանց մեջ։

Ի՞նչ էրև ասում մարգարեները Տիրոջ ԾԱՆՈՅԱՆ ԱՎԱՐԵ

Նախագետ Աստված նախքան իր կուսածին գալուստը բազում օրինակներով պատկերեց իր մարդանալու և չարչարանքների խորհուրդը, որպեսզի երբ ճշմարտապես գա, մարդիկ չտարակուսեն։ Հստ այդմ ասում է առաքյալը. «Աստված բազմապիսի ձեւերով և այլազան օրինակներով նախապես խոսեց մեր Հայրերի հետ մարդարեների միջոցով» (Եբր. Ա 1)։ Տերը նախ երեաց առաջին արդարներին՝ Աբրահամին՝ երկու հրեշտակների ուղեկցությամբ, և նրա վրանում կերակրվեց, ապա՝ Հակոբ նահապետին՝ «սանդուղքի» տեսիլքով, որով Աստված ցույց տվեց օրինակը խաչի ու Խաչալի, այնուհետև Հակոբի հետ գոտեմարտելով ցույց տվեց իր միանալը մարդկային բնությանը։ Նույն Տերը երեաց նաև Մովսեսին՝

«անկեզ մորենու» տեսիլքով, որն այրվում էր, սակայն չէր սպառվում, ինչը խորհրդանշում է կուսական արգանդը, որի մեջ իջավ Աստվածային Հուրը և վառեց մարմնի ճրագը՝ որպես Լույս աշխարհին: Նույնպես և մյուս մարգարեներին հայտնեց իր Մարմնով գալստյան, ինչպես նաև ծննդյան ժամանակի ու տեղի մասին, որի համաձայն՝ Հիսուս Քրիստոս պետք է ծնվեր Դավիթ թագավորի հայրենի Բեթղեհեմ քաղաքում, նույն ցեղից սերող Կույս Մարիամից:

Արդ՝ տեսնենք, թե երբ պետք է գար Տերը: Մովսես մարգարեն ասում է. «Քո եղբայրների միջից քո Տեր Աստվածն ինձ նման մարգարե պիտի մեջտեղ հանի, Նրան կլսեք» (Բ Օրենք Ժ 15): Բայց այստեղ չի ասվում գալստյան ժամանակի և տեղի մասին: Քննարկենք Հակոբ նահապետի մարգարեությունը՝ ասված Հուդայի համար. «Հուդա՛, քեզ կօրհնեն քո եղբայրները», և դարձյալ՝ «Հուդայից իշխան չի պակասելու և ոչ՝ առաջնորդ նրա կողից, մինչև որ գա նա, Ում պատկանում են հանդերձալները, որովհետև նա է հեթանոսների Հույսը» (Ծննդ. Խթ 8, 10): Համաձայն այս մարգարեության՝ Տիրոջ գալստյան ժամանակ պիտի վերանար պետն ու իշխանը Հուդայի տնից: Հստ Հովսեփոս պատմիչի՝ Հրեաստանի Հերովդես արքայի (ով եղոմացի էր հոր կողմից և արար՝ մոր) թագավորության երեսունմեկերորդ տարում ծնվեց Հիսուս: Սրանով նշան տրվեց նաև, որ Տիրոջ գալստյան ժամանակ դադարելու էր հեթանոսների թագավորությունը:

Մեկ այլ նշան ևս գալստյան ժամանակի մասին. «Նրանց կհովվես երկաթյա գավազանով» (Սաղմ. Բ 9): Երկաթյա գավազան է անվանվում Հոռմեական թագավորությունը: Եվ իրոք, այն ժամանակ հսրայելը Հոռմեական կայսրության մեջ էր:

Դարձյալ մեկ այլ մարգարեություն, որտեղ հայտնապես խոսվում է Քրիստոսի գալստյան ժամանակի մասին, որը լինելու էր Երուսաղեմը վերաշինելուց հետո. «Երուսաղեմի շինելուց մինչև առաջին օծումը կա յոթ յոթնյակ և վաթսուներկու յոթնյակ» (Ղան. Թ 26): Արդ՝ վաթսունինը յոթնյակը կազմում է չորս հարյուր ութսուներեք տարի, այսինքն՝ Երուսաղեմի կառուցվելուց չորս հարյուր ութսուներեք տարի անց վերանալու էր իշխանն հսրայելից, և ապա գալու էր այլազգի թագավորը: Եվ այդ տարի ծնվեց Քրիստոսը:

Այժմ՝ տեղի մասին. «Եվ դո՛ւ, Բեթղեհեմ, Եփրաթայի սակավամարդ տուն, կլինես Հուդայի երկրի հազարավորների մեջ, քեզանից պիտի ելնի ինձ համար հսրայելի մի իշխան, և Նրա ծագումն աշխարհի սկզբի օրերից է» (Միքիա Ե 2): Իսկ Դավիթն ասում է. «Ահա Նրա մասին լսեցինք Եփրաթայում, և Այն գտանք մայրիների գաշտերում» (Սաղմ. ՇԼԱ 6): Քանզի

Արքահամը գնեց Սահառի որդի Եփրոնից նրա ագարակի սահմաններում գտնվող քարայրը (տես Ծննդ. ԻԳ 16-20), և հետագայում այնտեղ թաղվեցին ինքը, Սառան, Խսահակը, Ռեբեկան, Լիան, Հակոբը, քանի որ «հեռվեց տեսան» Տիրոջ այնտեղ իշնելը: Այս վայրը Եփրոնի անունով կոչվեց Եփրաթա, որը թարգմանվում է պտղաբերություն, քանզի այնտեղից մեզ տրվեց կյանքի Պատուղը: Այնուհետև այն վերանվանվեց Բեթղեհեմ, որը թարգմանվում է հացի տուն, քանզի երկնավոր հացը՝ Հիսուս Քրիստոս, Բեթղեհեմում ընծայվեց աշխարհին: Այստեղ է նաև նախամոր՝ Եվայի շիրիմը, ում Աստված ասաց. «Տրտմությամբ որդի ծնես» (Ծննդ. Գ 16): Եվ երջանիկ Մարիամն այստեղ՝ նախաստեղծի գերեզմանի վրա, ծնեց Բանն Աստծուն առանց տաժանելի երկունքի ու չարչարանքների և ազատեց նախամորը վտանգավոր երկունքից:

Իսկ թե ինչպես է գալու, այս մասին Եսային է ասում. «Ահա Կույսը պիտի հղիանա և որդի ծնի, և Նրա անունը պիտի լինի Էմմանուել» (Եսայի Է 14): Իսկ թե որ ազգատոհմից է լինելու Կույսը, այդ մասին ասում է սաղմոսերգուն. «Տերը ճշմարտությամբ երդվեց Դավթին և չստեց նրան. քո որովայնի պաղից պիտի նստեցնեմ քո գահին» (Սաղմ. 6ԼԱ 11): Նաև ասում է. «Նրա սերունդը կհաստատեմ հավիտյանս հավիտենից և Նրա գահը, ինչպես օրերը երկնքի», ապա ավելացնում. «Ինչպես լուսին, Նրա աթոռն իմ առջև հավերժ հաստատված կմնա երկնքում» (Սաղմ. ԶԸ 30, 38): Այս խոսքերը Քրիստոսի համար ասվեցին և ոչ թե Սողոմոնի, որովհետև վերջինիս աթոռն իրեւ արեգակ հաստատուն չմնաց և ոչ էլ՝ իրեւ լուսին: Արանից իմանում ենք, որ Դավթի ցեղից է լինելու սուրբ Կույսը: Նաև ասում է. «Դու հանեցիր ինձ արգանդից» (Սաղմ. ԻԱ 9), այսինքն՝ առանց այր մարդու անկողնու, որովհետև «կույս արդանդից կորզված մարմին» է Նա ասվում:

ՀԻՍՈՒՄ ԾԱՌԱՆՔ

Աղամի՝ Դրախտից դուրս ելնելուց 5164 տարի³ անց՝ Օգոստինոս կայսեր թագավորության քառասուներկուերորդ և Հերովդեսի թագավորության երեսունմեկերորդ տարում, կայսրը հրաման տվեց երկրով մեկ մարդահամար կատարել, ըստ որի՝ յուրաքանչյուր հպատակ պարտավոր էր գրանցվել իր հայրենի քաղաքում: Երբ Տերը կամեցավ Աղամին արձանագրել կյանքի գրքում, Օգոստինոս կայսրից հրաման եկավ՝

³ Ըստ Եբրայական ժամանակագրության՝ 4000 տարի է, ըստ Եպիփան Կիպրացու՝ 5500, իսկ ըստ Թրոնիկոնի պատմության՝ 5198 տարի (տես՝ Դաւիթ քահանայ, «Մատեան գիտութեան և հաւատոյ», Երևան, 1997թ.):

մարդկանց արձանագրելու մարդահամարի մեջ: Այդ օրը երկնավոր ու երկրավոր թագավորների հրամանները մեկմեկու հանդիպեցին: Կայսրն արձանագրում էր մարդկանց՝ իրեն հարկ տալու համար, իսկ Աստծու Որդին՝ աղամորդիներին՝ Կյանքի գրքում: Երկրային թագավորը մտածում էր մարդկանց պարտական դարձնել իրեն, իսկ երկնային թագավորը ողորմում էր ու ազատում պարտապաններին պարտքերից: Քանի որ արտաքիններով պատկերվում են քողարկվածները, և երկրավորներով՝ իմացվում երկնավորները, ապա համաձայն այն հրամանի, որ յուրաքանչյուր ոք պետք է արձանագրվի իր բնակավայրում՝ Աղամն արձանագրվեց եղեմում, քանզի դա էր նրա բնակավայրը:

Կայսեր հրամանը հասավ նաև Հովսեփին, որպեսզի նա ևս իր անունն արձանագրեր իր բնակավայրում՝ Դավիթի քաղաքում: Ուստի սուրբ Կույս Մարիամը և Հովսեփը, ովքեր սերում էին Դավիթի ցեղից, թողնելով Գալիլիայի Նազարեթ քաղաքը, գնացին Բեթղեհեմ: Երբ նրանք եկան Եփրաթա (Բեթղեհեմ)՝ Դավիթի քաղաքը, Աստվածամոր երկունքը վրա հասավ: Եվ որովհետև այդ փոքրիկ քաղաքում, մարդկանց նպատակով համատակած հավաքված մարդկանց բազմության պատճառով, նրանց համար իջևանատանը տեղ չգտնվեց, Հովսեփն ու Մարիամը ստիպված գիշերեցին քաղաքից դուրս գտնվող այն քարայրում, որն անձրեային ու ցուրտ եղանակներին որպես նախրատուն էր ծառայում: Եվ այստեղ՝ քարայրում՝ ծղոտի վրա, ձմեռային մի ցուրտ գիշեր Կույսը ծնեց Աստվածորդուն՝ աշխարհի Փրկչին, և բարուրելով մանկանը՝ դրեց մսուրի մեջ:

Ճրհեղեղից հետո Սեմը մարդարեաբար այդ այրում էր թաղել նախամայր Եվային, իսկ Գողգոթայում՝ Աղամին: Այդ պատճառով էլ Աստվածածնով ողջանում է Եվան, իսկ խաչով՝ Աղամը, ու դրանով նախամոր անեծքը փոխվում է օրհնության, իսկ տրտմությունը՝ ուրախության:

Հովհանների այթելություն

Բեթղեհեմյան քարայրի մոտակայքում բացօթյա բնակվող Հովիվներ կային, ովքեր իրենց հոտերի գիշերային պահպանությունն էին անում: Այդտեղ էր Դավիթն իր հոր խաչինքն արածեցրել և այդտեղ էր գալու՝ ըստ մարմնի Դավիթի Որդին՝ քաջ Հովիվը՝ արածեցնելու իր բանական հոտը: Եվ հանկարծ Տիրոջ Հրեշտակը երևաց Հովիվներին, և Տիրոջ փառքը ծագեց նրանց շուրջը, որից նրանք սաստիկ վախեցան: Եվ Հրեշտակն ասաց նրանց. «Մի՛ վախեցեք, որովհետև ահա ձեզ մեծ ուրախություն եմ ավետում, որն ամբողջ ժողովրդինը կլինի, որովհետև այսօր Դավիթի քաղաքում ձեզ համար ծնվեց մի Փրկիչ, որ Օծյալ Տերն է» (տես Ղուկ. Բ 8-11):

Հրեշտակներն ավետեցին հովիվներին, թե եկել է քաջ Հովիվը՝ ժողովելու իր ցրված բանավոր հոտը՝ ասելով նաև. «Նա է այն Փրկիչը, որ պիտի հափշտակի գերությունը բռնակալի ձեռքից ու արձակի կապվածներին խավար բանտից: Նա է Հզորը զորությամբ, Ով իր սպանվելով ետ է բերելու ավարը և չարչարանքներով հաղթելու է թշնամուն ու հալածողին: Ո՞վ մարդիկ, ինչո՞ւ եք լուռ մնացել, ահա եկել է ձեր թագավորը, գնացե՛ք, տեսե՛ք ու երկրպագե՛ք Նրան: Նա հեզ է ու խոնարհ և չունի իշխանական ահարկու զենքեր, սուր ու վահան չկան Նրա ձեռքում, ինչպես պատերազմողի ձեռքում, և Նա չի հեծել զարդարված նժույգ ու ջորի և սրբնթաց երիվար, այլ պատված է խանձարուրով ու դրված է մսուրում: Տեսե՛ք Նրան ու մի՛ երկմտեք Նրա աղքատ տեսքի պատճառով»:

Ցնծացին, ուրախացան ու հավատացին անբիծ հովիվները և ընծաներ վերցնելով՝ գնացին Նրա մոտ: Արդարներն ընտրեցին, ուղիղները տասնորդեցին ու մատուցեցին իրենց պատարագները. նախ գառ՝ իբրև Քահանայի, ապա կաթ՝ իբրև Մանուկի, և փառք՝ իբրև Աստծու: Առաջին ընծաները հովիվները մատուցեցին ու երկրպագեցին Նրան: Մաքու գառնուկը մատուցեցին Աստծու Գառին՝ Նրան, Ով եկել էր զոհվելու՝ Աստծուն պատարագ լինելու, և դադարեցնելու գառների զոհաբերումը: Հովիվները, միաբանվելով հրեշտակների հետ, փառաբանեցին Նրան: Այդ օրն այնտեղ մեծ սքանչելիքներ եղան, քանզի երկնայինների ձայները միավորվեցին երկրայինների ձայներին և անմարմինների երգերը՝ մարմնավորների երգերին, և բոլորի բերաններից միաձայն փառաբանություն ելավ: Երկինքն ու երկիրը միաբանվեցին՝ օրհնաբանելու միակ Միջնորդին, Ով հաշտեցրեց Նրանց իր ծննդյամբ: Այրը փոքր էր, մսուրը՝ աղքատիկ, Հովսեփն՝ ուրախ, Մարիամը՝ զարմացած, իսկ Որդին՝ աղքատացած:

Մարիամը, տեսնելով այս բոլոր սքանչելիքները, քաջալերվեց, և նրանից հեռացան երկունքի ցավերը⁴, տրտմությունը, և ոտքի կանգնելով իր Որդու առջև՝ երկրպագում էր Նրան ու ընկնելով Մանկան առջև՝ ծնողական գութով աղոթում: Այսպես հեզ ու բարեպաշտ հովիվներն առաջինն արժանի համարվեցին խոնարհվելու Նրան:

Սաղմոսերգուն ասում է. «Տերն իմ Հովիվն է» (Սաղմ. ԻԲ 2): Դավիթը մարդարեաբար գիտեր, որ հսրայելի Աստվածը լինելու է Գառ իր հոտում, անվանվելու է քաջ Հովիվ և իր Անձը դնելու է իր ոչխարների համար: Որովհետեւ նրանք, ովքեր նախկինում հովիվ էին, ինչպես Աբելը, Նոյը, ով

⁴ Տիրամոր երկունքի ցավերը նման չէին հասարակ մահկանացուների երկունքի ցավերին, այլ դրանք այնքան մեղմ էին ու աննշան, որ վարդապետներից ոմանք ասում են, որ Աստվածանային առանց երկունքի ցավերի ծմնդաբերեց: Սուրբ Եփրեմ Ասորին ասում է, որ Աստվածածինը նեղվեց երկունքի ցավերով, որպեսզի չկարծեն, թե սուրբ Կույսը միայն հոգի ծնեց:

տապան մտցրեց կենդանիներին, ապա Աբրահամը, Հակոբն ու նրա որդիները, ինչպես նաև Մովսեսն ու Դավիթը, օրինակն էին այս ճշմարիտ Հովիկի: Դրա համար Հրեշտակները նախ հովիվներին երևացին և նրանց ավետիս տվեցին, և առաջին ընծաները հովիվները մատուցեցին: Այսօր մեր հովանոցը եկեղեցին է, ուր հավաքվել են հոգեոր հովիվները՝ Հայրապետներն ու քահանաները: Նրանք հրամաններ են տալիս բանական հոտին և նրանց կերակրում հոգեոր արոտում:

Մոգերի այթելությունը

Երբ Հիսուս ծնվեց Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում, արևելքից երեք մոգեր եկան Երուսաղեմ՝ Նրան երկրպագելու: Դրանք երեք թագավորներ էին, և նրանց ուղեկցում էր տասներկու հազարանոց մի զորախումբ: Տերը լուսավոր աստղի միջոցով «գիր» ուղարկեց մոգերին և կռապաշտության խափարից նրանց հանելով՝ բերեց գեալի իր լույսը: Դրանով նա նաև հեռավորներին կանչեց՝ ուրախանալու մերձավորների հետ իր ծնունդով: Իջնելով հրեաների մեջ՝ կանչեց նաև հեթանոսներին, որպեսզի և՛ հեռավորներին, և՛ մերձավորներին ուրախացնի իր հայտնությամբ: Եվ երկնքում աստղի ծագումով նրանց առաջնորդեց՝ ասելով. «Մինչև Ե՞րբ, ո՞վ մոգեր, արեգակը, երկինքը և աստղերը աստվածներ պիտի անվանեք: Արանք աստվածներ չեն, ո՞վ մարդիկ, այլ արարածներ: Իմացե՛ք, թե Ով է Աստված: Իմ արարածներն իմ պատիվը չունեն, և ծառա լինելով՝ չեն կարող տեր լինել, սրանք ձեր ծառայակիցներն են և ոչ թե իմ անիմանալի պատիվը կիսողները: Եվ ահա որին մոլորվելով աստված եք կոչում, ձեզ անծանոթ մի մղումով առաջնորդում է ինձ երկրպագելու»:

Հարց. – Ինչո՞ւ Տերը կանչեց մոգերին և ոչ թե մի մարգարե ուղարկեց, ինչպես օրինակ՝ Հովինանին՝ Նինվե: Ինչո՞ւ մեկը Եսայու նման չեկավ՝ ասելու. «Ահա Կույսը հղիացավ և ծնեց Արքային առանց ամուսնության» (հմնտ. Եսայի Է 14): Ինչո՞ւ լուսափայլ աստղը եղավ մոգերի ուղեցույցը, որը ծննդյան ավետիսն առանց ձայնի հասցրեց նրանց ականջին, և մոգերի հետ միայն աստղը՝ «անբան առաքյալը խոսեց իր ծագմամբ և լուսատու ընթացքով»:

Պատասխան. – Մոգերը միայն աստղագիտությամբ գիտեին ծնունդը և ոչ՝ մարգարենությամբ: Խորագետը մոգերի ընդունած կարգերում թաքցրեց իր վարդապետությունը և մոգությանը մղեց գնալ ճշմարտության ետևից: Արդ՝ ուրիշ ի՞նչ կերպ պետք էր որսալ մոգերին, եթե ոչ աստղագիտությամբ, որը նրանք սիրում էին: Մոգերն ամենակին չէին ընդունում Եսայու վարդապետությունն ու Հովինանի քարոզությունը և

գիրք էին գրել ընդդեմ Մովսեսի: Եվ եթե մի մարդարե քարոզեր նրանց, ապա նրան կքարկոծեին: Դրա համար էլ ինչի մեջ մոգերը գեղերում էին, Տերը դրանով էլ որսաց նրանց: Աստղով որսաց նրանց, որովհետև եթե մի մարդարե նրանց քարոզեր Կույսի ծնելու մասին, չէին հավատա ու չէին ընդունի, մինչեւ չտեսնեին այդ ամենն աստղերի միջոցով:

Իսկ հայտնված աստղը մեծ էր ու փառավոր՝ իր լույսով, երևելի՝ ծագմամբ, ու հրաշալի՝ տեսքով, զարհուրելի՝ բոցով, ու բորբոքելի՝ հրով, սքանչելի՝ փայլով, ու զարմանալի՝ տեսակով, և չկար մեկ այլ աստղ, որ սրա նման լիներ: Սա միակն էր, ինչպես և իր Միաձին Տերը: Մոգերն աստղի մեջ տեսնում էին սուրբ Կույսին՝ զարմանալի կերպով բազմած, և հրաշալի Մանուկին՝ նրա գրկում՝ հրեղեն թագը գլխին: Այս տեսիլքը հիացրեց նրանց, բայց նրանք իրենց գրքերում չգտան այս խորհրդի մեկնությունը, և քաղդեացիների դպիրներն էլ չկարողացան բացատրել այն: Սակայն նրանք ունեին Բաղամի մարդարենությունը, ուր ասվում է. «Այդ սերնդից պիտի ծնվի մի Մարդ, որ պիտի տիրի բազում ազգերի: Նրա թագավորությունը Գոգի թագավորությունից հզոր պիտի լինի» (Թվեր ԻԴ 7), որից էլ իմացան, որ իրենց ավետվում է ծնունդը Մեծ Արքայի, և լցվեցին մեծ երկյուղով: Եվ այն խոսքից, թե՝ «Ծագելու է Հակոբի աստղը» (Թվեր ԻԴ 17), իմացան, որ Աստված է հայտնվելու: Իսկ այն խոսքից, թե՝ «Նա ննջելու է որպես առյօւծ» (Թվեր ԻԴ 9), իմացան, որ խոսքը նրա թաղվելու մասին է, ինչի համար էլ Արևելքից իրենց հետ բերեցին համապատասխան նվերներ:

Իմացան մոգերը, որ մեծ թագավոր է եկել աշխարհ և ամբողջ աշխարհն իր իշխանությամբ կամենում է գրավել: Իմացան, որ հզոր Մանուկ է ծնվել, և երկրի բոլոր ծագերը հնազանդվում են նրան: Խորհեցին, թե. «Պետք է գնալ նրա սերը շահելու, քանի դեռ մանուկ է, որովհետև երբ նա երիտասարդ դառնա, երկրի բոլոր ազգերին ոտնակոխ կանի: Բոլոր թագավորները նրան պիտի հնազանդվեն, և նա բոլոր գատավորներին իր լծին պիտի կցի: Պետք է կամովի գնալ ու նրան երկրագեղ և ոչ թե հետո՝ հարկադրված: Քանի որ երկրի իշխանները պետք է նրան ծառայեն, ապա պետք է առաջինը լինել և նրան ընծաներ մատուցել: Եվ քանի որ ամբողջ աշխարհին պիտի տիրի և ընդունի երկրագություն հեթանոսներից, դրա համար գովելի է լինել նրա մոտ: Պետք է գնալ ու նրա ձեռքը հանձնել աշխարհը, մինչ նա իր քաջությամբ կհավաքի բոլոր ազգերին: Զպետք է նրան արհամարհել, քանզի ունենք նրա հայտնությունը, այլ պետք է պատվել նրան ծնվելիս, ուր էլ որ լինի, որպեսզի երբ հայտնվի նրա թագավորությունը, մեզ բարիքով հատուցի:

Այսպես խորհելով՝ մոգերը խաղաղությամբ ճանապարհ ելան՝ ամեն գավառում խոսելով Աստծու Որդու ավետիսի մասին։ Մեծ զորքով գնացին տեսնելու Հրեաստանի երկրպագելի թագավորին։ Նրանք իրենց ընթացքով քարոզ եղան և մեծ հայտնությունն ավետեցին բոլոր երկրներում։ Ոչ մի տեղ չէին թաքցնում իրենց գնալու պատճառները և ամեն տեղ երկյուղ էին սփռում՝ պատմելով մեծ թագավորի ծննդյան մասին։ Սակայն երբ հասան Հրեաստան, այն գտան լուռ ու անտեղյակ Արքայի գալուստից, որովհետև Հերովդեսի օրերին հսրայելում վերացել էին մարգարեները։ Տերը մարգարեների փոխարեն հեթանոսներ բերեց՝ հանդիմանելու համար նրանց, ովքեր այդքան ժամանակ կրթվել էին Օրենքով ու մարգարենություններով, սակայն չէին հավատում։ Բաբելոնացիները եկան պախարակելու հրեաների անհավատությունը։ Եվ աստղի ընթացքը ցույց տվեց, որ Սա Նա' է, Ում մասին խոսեցին մարգարեները։

Մոգերը եկան ընծաներով և մարգարեների պես վկայեցին ծնված Մանուկի համար, որպեսզի երբ Նա հայտնվի, Նրան օտար չհամարեն, այլ բոլոր արարածներն իմանան Նրա ծնունդի մասին։ Նրա մասին վկայեցին նաև Զաքարիան՝ իր պապանձվելով, և եղիսաբեթն՝ իր ծնելով, իսկ այն աստղը, որն այնպես չէր «կապված» երկնակամարին, ինչպես սովորական աստղերը, իր ընթացքով՝ բարձրանալով ու խոնարհվելով վկայեց։

Երբ մտան Հրեաստան, աստղը ծածկվեց նրանցից, որպեսզի մոգերն անմիջապես չգնան Բեթղեհեմ, այլ նախ գնան երուսաղեմ և այնտեղի դպիրներին ստիպեն՝ բոլորին պատմել Տիրոջ ծննդյան մասին, և մարգարենություններից ստանան ծշմարիտ վկայությունը, որպեսզի չկարծեն, թե աստղը մի այլ զորությունից է։

Մոգերը բանակ դրեցին երուսաղեմի մերձակայքում, որով մեծ երկյուղ սփռեցին Հերովդեսի ու երուսաղեմի բնակիչների վրա։ Նրանք ասացին. «Ո՞ւր է հրեաների արքան, որ ծնվեց, որովհետև Նրա աստղը տեսանք արևելքում և եկանք Նրան երկրպագելու։» Երբ Հերովդեսը լսեց այս խոսքերը, չարությամբ վարանեց, քանզի նա Դավթի թագավորական ցեղից չէր, այլ այլազգի էր՝ եղումացի։ Նա բռնությամբ էր վերցրել իշխանությունը և իրեն այնպես էր ներկայացնում, իբրև թե Դավթի տանից է։ Իսկ երբ լսեց հրեաների Արքայի ծնունդի մասին, զարհուրեց, և նրա հետ՝ երուսաղեմի ժողովուրդը։ Եվ հավաքելով բոլոր քահանայապետերին ու ժողովրդի օրենսգետներին՝ հարցրեց նրանց. «Որտե՞ղ պիտի ծնվի Քրիստոսը։» Եվ նրանք ասացին. «Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում, որովհետև մարգարեի միջոցով այսպես է գրված. «Եվ դո՛ւ, Բեթղեհեմ, Հուդայի երկիր, Հուդայի քաղաքների մեջ փոքրագույնը չես, քեզանից մի իշխան պիտի ելնի ինձ համար, որ պիտի հովվի իմ

Ժողովրդին՝ Խսրայելին» (տե՛ս Մատթ. Բ 1-6): *Այս մարգարեությամբ լուծարվում է նաև Հերովդեսի թագավորությունը։ Հերովդեսը, տեսնելով այն ընծաները, որ բերել էին մոգերը, դրանից է՛լ ավելի անարգվեց, որովհետև իրեն չմատուցեցին, քանզի ընկել էր արդեն իր թագավորությունը։*

Հարց. – Իսկ ինչո՞ւ խոռվից երուսաղեմի ամբողջ ժողովուրդը, չէ՞ որ նրանց ավետվեց Փրկչի գալուստը, որի համար, ընդհակառակը, պետք է ուրախանային։

Պատասխան. – Երուսաղեմցիների մի մասն այդ անում էր Հերովդեսին հաճելի լինելու համար, ոմանք էլ զարհուրեցին երեք հզոր թագավորների գալստյան պատճառով, իսկ որոշ մասն էլ կարծում էր, թե իրենք հրո ճարակ պիտի լինեն, քանզի եսային այդպես էր մարգարեացել. «Ամեն մի պատմուճանի և հանդերձի համար, որ նենգությամբ էին հավաքել, տուգանքով պիտի հատուցեն, նույնիսկ եթե դրանք այրված լինեին, նրանք պիտի հոժարեին հատուցել, քանզի մեզ համար Մանուկ ծնվեց, մի Որդի տրվեց մեզ, Որի իշխանությունն իր ուսերի վրա պիտի լինի» (Եսայի թ 5-6):

Նոր ավետարան էին սերմանում մոգերը հրեաների մեջ և իրենց խոսքերով հաստատում մարգարեությունները։ Մոգերն իրենց ընծաներով վկայեցին նրա ծագման մասին, իսկ դպիրներն արեցին դրա մեկնությունը։ Աստղի ծագումով ու մարգարեական խոսքերով հայտնվեց ավետիսը, և երկինքն ու երկիրը հայտնեցին նրա Աստվածությունը։ Նրա թագավորության մասին վկայեց երկինքը, և զորությունները պատմեցին նրա տնօրինությունների մասին։ Սրանով հայտնվեց այն գեղեցկությունը, որ թաքցված էր մարգարեությունների խորքերում, որովհետև հասել է ժամանակը, որպեսզի ծածկվածը երեան գա։ Սրանով հաշտվեց թլփառված ժողովուրդն անթլփատների հետ, և սկսեցին մեկնել այն, ինչը հաշտեցրեց նրանց։ Եկան հեռագորները և խառնվեցին մերձավորների հետ, որպեսզի ծշմարիտից ճշմարիտ ուսում ընդունեն։ Եկավ նա, Ով երկուսին մեկ դարձրեց և դրանով վերացրեց խոռվությունը։

Մոգերը հարցնելով Հերովդեսին, իբրև մի զինվորի, թե՝ ո՞ւր է Արքան, դրանով անարգեցին նրա թագը, որից այդ օձը դառնանալով խորհեց թափել իր թույնը Մանուկի վրա։ Նա որոշեց սպանել Թագավորին, կործանել նրա թագը և տիրել նրա աշխարհին։ Եվ փարավոնի նման որոգայթ լարեց Մանուկի դեմ (տե՛ս Ելք Ա 15), որպեսզի նրան սպանի և վերցնի նրա ընծաները։ Հերովդեսը վախեցավ Մանուկից, ինչպես հզորից, և հնար էր փնտրում ազատվել նրանից։ Եվ սկսեց մարտնչել տկարը զորավորի հետ ու տեսնելով, որ հայտնապես չի կարող մարտնչել՝ նենգություն խորհեց նրան սպանելու համար, և գաղտնի կանչեց մոգերին և նրանցից իմացավ աստղի ծագելու ժամանակը։ Այնուհետև նրանց

Բեթղեհեմ ուղարկելով՝ ասաց. «Գնացե՛ք, ստույգ իմացե՛ք Մանկան մասին և երբ գտնեք, տեղեկացրե՛ք ինձ, որպեսզի ես էլ գամ, երկրպագեմ Նրան»։ Եվ երբ նրանք գնացին, աստղը, որ տեսել էին արևելքում, կրկին առաջնորդեց նրանց, մինչև որ եկավ ու կանգնեց այնտեղ, ուր Մանուկն էր (տես Սատթ. Բ 7-10):

Աստղն իր երկրորդ երեսումով ցույց տվեց, որ Մեկ է Տերը և՝ նրանց, և՝ մարգարեների: Մոգերը մինչ այդ չէին տեսել, որ աստղը դուրս գա իր ուղեծրից և մարդկանց առաջնորդի իրենց ճանապարհներում։ Ո՞վ էր այդ աստղին «լծել և ստիպել», որ երկիր իջնի։ Ո՞վ էր երբեկցի տեսել, որ մայրը կույս լինի, կամ մանուկը թագավորներին սարսափեցնի։ Ո՞ւմ կարապետն է երբեկցե եղել լուսատուն, կամ ո՞ւմ ծնունդը քարոզեց, եթե ոչ Նրա։ Տիրոջ բոլոր գործերը վեր են մեր մտքից, և Նրա խորհուրդները չեն քննվում, որովհետեւ անսահման են։ Եթե Նրա ծագման աստղն ապշեցնում է քննողներին, ապա էլ ո՞վ կհամարձակվի քննել դրա Արարչին։

Երբ մոգերն այդ տունն են մտնում, այնտեղ տեսնում են Մանկան իր մոր՝ Մարիամի հետ միասին, և ընկնելով Նրա առջև՝ երկրպագում են Նրան և բանալով իրենց գանձատուփերը՝ Նրան նվերներ մատուցում՝ ոսկի, կնդրուկ և զմուռս (տես Սատթ. Բ 11) – Մոգերը ծշմարտությունից սովորել էին, թե ինչ նվերներ են վայել Նրան, և խորհրդաբար մատուցեցին իրենց ընծաները։ Նախ՝ ոսկի, որովհետեւ մեծ Արքա է, ապա՝ կնդրուկ, որովհետեւ Աստված է, այնուհետեւ զմուռս՝ խորհրդանշելով այն մահը, որն ընդունելու էր մեր փրկության համար։ Դարձյալ՝ խունկն ընծայեցին Աստվածության, զմուռս՝ մարդեղության, իսկ ոսկին՝ իշխանության համար։ Ընծայեցին ոսկի, որպեսզի ոսկյա պատկերներից երկրպագությունն անցնի ոսկու Տիրոջը, և զմուռս՝ իրբև բժշկի, որպեսզի Նա բժշկի Աղամին, ապա նաև՝ կնդրուկ, որ Նրանից բուրած անուշանությամբ լուծարվի մահվան հոտը, որ փչեց Աղամից։

Այդ երեք մոգերից առաջինը պարսից Մելքոն թագավորն էր։ Նա սերում էր Արքահամի Քետուրա հարծից։ Երկրորդը Գասպարն էր՝ Հնդիկների թագավորը, իսկ երրորդը՝ Բաղտասարը՝ արաբների թագավորը։

Գասպարը՝ Հնդիկների թագավորը, Մանկանը կնդրուկ, նարդոս, ստաշխ, կասիան, կինամոն և այլ անուշահոտություններ ընծայեց՝ տեսնելով Նրան որպես Աստծու Որդի՝ մարմնով քազմած փառքի աթոռին, իսկ հրեշտակների զորքերը՝ Նրան սպասավորելիս։

Բաղտասարը՝ արաբների թագավորը, ընծայեց ոսկի, արծաթ, պատշական քարեր և գեղեցիկ ու վայելուչ մարգարիտ և տեսավ Տիրոջը մարմ-

նով՝ որպես Արքայի Որդի, նստած բարձր գահի վրա, և մարդկանց բազում զորքերը՝ Նրա առջև:

Իսկ Մելքոնը՝ պարսից թագավորը, ընծայեց զմուռս, հալվե, ծիրանի ու բեշեզ, նաև պատանքի համար կտավ և տեսավ Նրան որպես Աստծու Որդի՝ չարչարանքներով մեռած, բայց հարություն առած ու կենդանի: Մոգերն ընծաներ մատուցեցին իրենց երկրպագելի թագավորին, Ով եկել էր նրանց մոտ աղքատի կերպարանքով և արհամարհվել իր ազգի կողմից՝ ըստ այս խոսքի. «Յուրայինների մոտ եկավ, բայց յուրայինները նրան չընդունեցին» (Յովի. Ա 11), սակայն օտարներն ընծաներով եկան Նրան պատվելու:

Արդ՝ արևելցիներն աստղով լուսավորվեցին, իսկ հրեաներն արեգակի խավարումով կուրացան: Մրանով այս աստղը, որ առաջնորդում էր նրանց գեղի Արդարության Արեգակը, ավարտեց իր ընթացքը, ինչպես և Հովհաննեսն էր քարոզում Նրա համար՝ ասելով. «Պետք է, որ Նա մեծանա, իսկ ես նվազեմ» (Յովի. Գ 30):

Եվ մոգերը, երազի մեջ Աստծուց հրաման առնելով չվերադառնալ Հերովդեսի մոտ, այլ ճանապարհով գնացին իրենց երկիրը (Մատթ. Բ 12) – Նա, Ով հայտնեց նրանց ելնել ու գնալ երկրպագելու նորածին թագավորին, Նա էլ հայտնեց չդառնալ Հերովդեսի մոտ: Եվ մոգերը, լուսավորված և լցված գիտությամբ, գնացին իրենց երկիրը:

Փախուս Եգրոտու

Տիրոջ հրեշտակը երազի մեջ երևաց Հովսեփին ու ասաց. «Վե՛ր կաց, վերցրո՛ւ այդ Մանկանը և Նրա մորը ու փախի՛ր Եգիպտոս. և այնտեղ մնա՛ մինչև որ քեզ ասեմ. քանի որ Հերովդեսը փնտրում է այդ Մանկանը՝ կորստյան մատնելու համար»: Եվ նա վեր կացավ, առավ Մանկանն ու Նրա մորը գիշերով և գնաց Եգիպտոս ու այնտեղ մնաց մինչև Հերովդեսի մահը (Մատթ. Բ 13-14) – Հովսեփին իր ընտանիքով, այն հրեաների հետ, ովքեր Եգիպտոսից եկել էին Երուսաղեմ Զատիկը տոնելու, մեկնեց Եգիպտոս: Այդ օրերին Մանուկն արդեն մեկ տարեկան և երեք ամսական էր:

Լույսը ծագեց, և խավարն աշխարհի բոլոր կողմերում փարատվեց, և աշխարհն ամենայն լցվեց Նրա իմաստությամբ: Տերը լույսի աստղն Արևելք ուղարկեց՝ մոգերին այնտեղից բերելով իր մոտ, իսկ հնքը գնաց Եգիպտոս՝ այն լուսավորելու: Նա այս ու այն կողմից գցեց իր ուռկանն ամբողջ երկրի վրա, որովհետեւ բոլորին էլ կամենում է կենդանության հարկի տակ պահել: Լույս տալով՝ քաղղեացիների դստերը գեղի իրեն քաշեց, իսկ հնքը գնաց տեսնելու աղանդավոր Եգիպտոսը: Մոգերին ու

աղանդավորներին ի մի հավաքեց, որպեսզի երկու կողմերում էլ արձակի անօրինության բոլոր կապանքները։ Տարվեց եգիպտոս, որպեսզի այնտեղի դառնությունը քաղցրացնի։ Երկրի մի կողմը լուսափայլ աստղով պայծառացրեց, իսկ ինքը մյուս կողմը գնաց, որպեսզի երկուսում էլ սերմանի իր լույսը։ Նա, Ով երկյուղ էր տարածում քերովեների վրա, փախավ մարդկանցից և նստած իր արարածի (ավանակի) վրա՝ կրեց ճանապարհի նեղությունները, որպեսզի արժանին հասուցի իր մարդեղության համար, մինչև որ աճի հասակով և ապա չարչարվի։ Քանի որ Տերը ստուգապես մարդացավ, ապա պետք է մարդկանց նման քաղցեր, ծարավեր ու հագենար, ննջեր ու արթնանար, հոգներ ու հանգստանար, ինչպես նաև երկնչեր։ Փախավ սրից ո՛չ նրա համար, որպեսզի իսպառ ազատվի դրանից, այլ որ կատարի իր մարդեղության բոլոր տնօրինությունները։ Գնաց եգիպտոս, ուր իր ծառա Մովսեսին աստված էին դավանել, ինչը խորհրդով իր օրինակն էր։

Մատուկաների ԿոՏՈՐՁԾ

Արդ՝ սրտմտությամբ նենգեց Հերովդեսը սատանայի հետ միասին՝ կամենալով սրով հատել Արքայի ճանապարհը։ Անօրենը, տեսնելով, որ անարգվեց մոգերից, դառնությամբ խորհեց շատերին սպանել՝ պատերազմելով Հրեաստանի մանուկների դեմ, և կոտորեց նրանց⁵։ Սակայն չիմացավ տկարը, որ Հզորի հետ է մարտնչում, Ով էլ, արհամարհելով նրան, փոխանակ պատերազմելու՝ մի այլ երկիր գնաց։

Այն ժամանակ կատարվեց Երեմիա մարգարեի բերանով ասվածը, թե Ռամայում մի ձայն գուժեց ողբ, լաց ու սաստիկ կոծ։ Ռաքելը լալիս էր իր զավակների վրա և չէր ուզում մխիթարվել, քանի որ նրանք այլևս չկային (Մատթ. Բ 17:18) – Ռաքելը լալիս էր և չէր ուզում մխիթարվել, ինչպես չէր ուզում մխիթարվել Հակոբ նահապետը, երբ նրա որդիներն իրենց եղբորը՝ Հովսեփին, ստրկության վաճառեցին և իրենց հորը լուր տվեցին, թե իր որդի Հովսեփը մահացել է գաղանի ճիրաններում (տես Ծննդ. Լէ 35): Զէր կամենում մխիթարվել նաև ժողովուրդը՝ կարծելով, թե մյուս մանուկների հետ սպանվել է նաև իրենց Թագավորը։

Սովոր է եգիպտոսը պահպանել ժողովրդի փրկիչներին, և որքան էլ նրանք սպանված համարվեն, այնտեղ կենդանի էին։ Կենդանի էր եգիպտոսում Հովսեփը, սակայն մեծ սուգ էր անում նրա համար իր հայրը՝

⁵ Սոգերին աստղի Երևալուց մինչև նրանց Երուսաղեմ ժամանելը Երկու տարի տևեց, այդ պատճառով Յերովդեսը իրամայեց Երկու տարեկան և ավելի փոքր մանուկներին կոտորել։

Հակոբը, ու չէր մխիթարվում: Եվ մեր Տերն էլ գնաց այնտեղ որպես փախստական, և լալիս էր ժողովուրդն ու չէր կամենում մխիթարվել, որովհետև կարծում էր, թե Նրան սպանել են մանուկների հետ: Իսկ մանուկները մարտնչեցին Հերովդեսի դեմ, հաղթեցին նրան և չմատնեցին իրենց Զորապետին ու չասացին թշնամուն իրենց Թագավորի տեղը:

Այսպիսով՝ մանուկները սպանվելով նոր վկաներ դարձան Աստվածորդու համար, որով էլ կանխասացին Նրա փրկագործ սպանությունը: Մանուկներին հրավիրեցին Մեծ Փեսայի հարսանյաց հանդեսին, և նրանք՝ իբրև ողկույզ, իրենց արյունը մատուցեցին՝ դառնալով Նրա փրկական գոհաբերության օրինակը: Մանուկ սրբերը Սրբի փոխարեն սրբությամբ գոհացեցին, որով կանխասացին Նրա սուրբ արյան հեղման խորհուրդը: Մանուկները լուս մարտիրոսացան՝ անխոս լինելով իրենց սպանվելու պահին, որով մեր Փրկչի լուսթյան օրինակը եղան:

Տերը նրանց մահվան գավառն առաքեց՝ ավետելու համար Թագավորի մեծ գալուստը՝ ասելով. «Գնացե՛ք և ասացե՛ք բռնակալին, թե՝ ահա ես գալիս եմ, և պետք չէ՛, որ դու հավաշտապ ինձ կանչես քո գավառը: Ես կդամ և կվերացնեմ քեզ քո հպարտացած իշխանությունից: Փոքր-ինչ ժամանակ է պահանջվում այն գործի համար, որի համար առաքվեցի, իսկ հետո կդամ քեզ մոտ մեծ քաջությամբ: Խիստ շատացել են մարդկանց վրա քո ապստամբությունները, և նույն մարդկությամբ, որին հաղթահարում ես, կհաղթեմ քեզ: Տե՛ղ տուր ողջերին մտնելու քո արգելատեղը, որպեսզի իմ գալստյամբ ելնեն մեռելները քո բանտից: Գնացե՛ք, մանուկներ, և մնացե՛ք դժոխքի մահվան գավառում, մինչև ես գամ և ավերեմ այն՝ իմ իջնելով: Ահա շուտով կհասնեմ ձեզ խավարի գավառում, և այնտեղ կփայլի իմ լույսը ձեզ վրա և կուրախացնի ձեզ: Ահա կդամ ու կկործանեմ զարմանալի ուժով, կքանդեմ նրա պարիսպը և այնտեղից կհանեմ գերիներին: Գնացե՛ք ու համբերելով սպասե՛ք ինձ մահվան քաղաքում ու ննջե՛ք այնտեղ, և ես ձեզ կարթնացնեմ շատերի հետ: Առաջ գնացեք և մի փոքր ժամանակ հանգստացե՛ք, մինչև ես գամ և իմ մահով ձեզ հարություն տամ: Գնացե՛ք շատերի հետ դեպի մահվան գերությունը, և ես կդամ ու կիշրեմ մահվան աղեղը և կազմակերպ ձեզ»:

Երբ զինվորների վերակացուները՝ թվով տասնութ հոգի, մանուկներին կոտորելուց հետո վերադարձան երուսաղեմ և նստեցին Սիլովամի աշտարակի տակ հանգստանալու, աշտարակը փուլ եկավ նրանց գլխին, և բոլորն էլ մահացան: Հետագայում նրանց համար ասաց Տերը. «Կամ նրանք՝ այն տասնութ մարդիկ, որոնց վրա Սիլովամում աշտարակը փուլ եկավ և սպանեց նրանց, կարծում եք, թե ավելի^o մեղապարտ էին, քան երուսաղեմում բնակվող բոլոր մարդիկ» (Ղուկ. ԺԳ 4):

Վերադարձ Եգիպտոսից

Եթե Հերովդեսը վախճանվեց, ահա Տիրոջ Հրեշտակը երազի մեջ երևաց Հովսեփին Եգիպտոսում և ասաց. «Վե՛ր կաց, վերցրո՛ւ այդ Մանկանն ու Իր մորը և վերադարձի՛ր Իսրայելի երկիրը, որովհետև մեռան նրանք, որ այդ Մանկան մահն էին ուզում»։ Եվ Հովսեփը վեր կացավ, առավ Մանկանն ու մորը և եկավ Իսրայելի երկիրը (Սատր. Բ 19-22) – Տերը Եգիպտոսում մնաց երկու տարի, իսկ երբ վերադարձավ, արդեն երեք տարեկան երեք ամսական էր։ Եվ մինչ Եգիպտոսից վերադառնալը՝ Տերն արդեն մխիթարել էր զոհված մանուկների ծնողներին, եղբայրներին, քույրերին ու ազգականներին՝ նրանց նոր որդիներ տալով, Տիրոջ համար զոհված մանուկների փոխարեն, ինչպես որ Սեթը տրվեց Աղամին ու Եվային Արելի փոխարեն։ Ուստի և շատերին այնպես էր թվում, թե սրանք այն մանուկներն են, ովքեր մեռան ամբարիչտների սրից։

Հիսուսի՝ Եգիպտոս գնալը խորհրդանշում է Աղամի ելքը Դրախտից, իսկ վերադարձը՝ Նազարեթ՝ դարձ գետի Դրախտ, որովհետև Նազարեթ նշանակում է մաքրություն, իսկ Եգիպտոս՝ խավար ու մեգ։

Տիրոջ Անձառնելի ԾԱՆՈՒՅԱՆ ՄԱՍԻՆ

Նայելով Աստծու Որդու խոնարհ կերպարանքին՝ Նրան անշուշտ ու տկար չպետք է կարծել, քանի որ նա մեկ այլ ծնունդ ևս ունի՝ անճառելի և արշալույսից առաջ (տե՛ս Սաղմ. Թթ 3): Եվ պետք է իմանալ, որ նա հավիտենական Աստված է, Ով Հովվում է մեզ, և եթե կամենա, կտիրի ծովերին ու գետերին։ Սա է այսօր ծնված թագավորի պատիվը, և նա ոչ միայն այս աշխարհին է իշխում, այլև հանդերձալիքին։ Եվ լսելով Ավետարանի խոսքը՝ «Գիրք ծննդյան Հիսուս Քրիստոսի՝ Դավթի որդու, Աքրածամի որդու» (Սատր. Ա 1), այն պետք է իմանալ ասված միայն Նրա մարմնավոր ծննդյան մասին։ Դավթի Որդին՝ Նա, Ով ուներ մշտնջենական ծնունդ, ժամանակների լրմանը մարմնով ծնվեց՝ մարմին առավ, ինչը մինչ այդ չուներ։ Նա երկու հայր ունի. առաջինը Հայրն է՝ ըստ Աստվածության, մյուսը՝ Դավթիթը՝ ըստ մարմնի։ Եվ այն, որ Դավթից էր, ժամանակի մեջ էր ներփակված, շոշափելի էր և ենթակա տոհմաբանության, իսկ այն, որ ըստ Աստվածության է, ո՛չ ժամանակի մեջ է ներփակված, ո՛չ տեղով է արգելված և ո՛չ էլ ենթակա էր տոհմաբանության՝ ըստ Եսայու։ «Նրա ազգատոհմի մասին ո՞վ պիտի պատմի» (Եսայի ԾԳ 8):

Աստված Հոգի է, և նա, Ով Հոգի է, Հոգեպես և անմարմին է ծնվում, ինչի մասին Որդին ինքն է ասում. «Տերն ասաց Ինձ՝ Դու Իմ Որդին ես, և

Ես այսօր ծնեցի Քեզ» (Սաղմ. Բ 2): «Այսօր» ասելով ոչ թե ժամանակավոր ծնունդը նկատի ունի, այլ մշտնշենավոր: Այստեղ «այսօր»-ն անժամանակ է, առաջ է հավիտյաններից՝ ըստ այն խոսքի, թե՝ «Քեզ արշալույսից առաջ ծնեցի արգանդից» (Սաղմ. Թթ 3): Արդ՝ Նա Աստծու Որդի է բնությամբ:

Աստվածության Ծնունդը չպետք է մարդկային խորհրդով ապականության ծնունդ համարել ու դրանով կործանվել: Աստված Հոգի է, և Հոգի է նաև Նրա Ծնածը: Մարմինը մարմին է ծնում ժամանակի միջնորդությամբ, իսկ Հոր համար չկա միջնորդ ժամանակը՝ Որդուն ծնելու համար: Այստեղ որդիներն անկատար են ծնվում, իսկ Աստծու Որդին կատարյալ է ծնված և ինչպես այժմ է, նույնն էր և սկզբում (տե՛ս Եբր. ԺԳ 8):

Մենք անկատար ենք ծնվում և մանկական անգիտությունից աստիճանաբար ընթանում ենք դեպի կատարելություն, իսկ այս դեպքում այդպես չէ: Աստվածային Ծնողին տկար պետք չէ՝ համարել, որովհետեւ եթե ասենք, թե Որդին անկատար ծնվեց և ապա ժամանակի ընթացքում կատարելության հասավ, ապա դրանով տկարության նախատինք ենք դնում Ծնողի վրա, որովհետեւ ասվածից ենթադրվում է, թե այն, ինչը ժամանակի մեջ չնորհեց, սկզբում չկարողացավ չնորհել:

Այս Ծնունդը նման չէ մարդկային ծնունդին, այնպես, ինչպես Աբրահամը ծնեց հասհակին: Որովհետեւ Աբրահամը ծնեց ոչ այն, ինչ ինքն էր կամենում, այլ ծնեց այն, ինչը ի վերուստ չնորհվեց: Իսկ Հոր՝ Որդուն ծնելը անգիտությամբ չեղավ:

Եվ դարձյալ, ո՞չ այնպես ծնեց, ինչպես վարդապետներն աշակերտներ են ծնում՝ ըստ Պողոսի խոսքի. «Հիսուս Քրիստոսի Ավետարանով Ես ծնեցի Ճեզ» (Ա Կորնթ. Դ 15): Որովհետեւ այս դեպքում աշակերտը բնությամբ որդի չէր վարդապետին, այլ աշակերտությամբ եղավ, իսկ այնտեղ Որդին աստվածությամբ է որդի:

Նաև՝ ո՞չ այնպես եղավ որդի, ինչպես մենք ենք մկրտությամբ որդի դառնում Աստծուն շնորհով պատվաստվելով (տե՛ս Հոգմ. ԺԱ 17), ինչպես և գրված է. «Ովքեր Նրան ընդունեցին, Նրանց իշխանություն տվեց լինել Աստծու որդիներ, Նրանց, ովքեր իր անվանը կհավատան: Նրանք ո՞չ արյունից, ո՞չ մարմնից և ո՞չ էլ մարդու կամքից, այլ Աստծուց ծնվեցին» (Հովի. Ա 13): Այս դեպքում մենք վերստին ծնվում ենք ջրից ու Հոգուց, սակայն Քրիստոս այդպես չծնվեց Հորից, որովհետեւ Հայրն իսկ ասաց. «Սա է իմ Որդին» (Ղուկ. Գ 22) և չասաց. «Այժմ որդի եղավ», այլ մկրտությունից առաջ չէլ իր Որդին էր:

Հայրը Որդուն ծնեց ո՞չ այնպես, ինչպես մարդու միտքը խոսք է ծնում, որովհետեւ միտքը մեր մեջ է բնակվում, իսկ խոսքը դուրս է դալիս մեր բերանից և օդի մեջ լուծվելով (ցրվելով) անհետանում: Գիտենք, որ

Քրիստոս ծնվեց որպես Խոսք, սակայն ո'չ որպես օդում սփռված, այլ հաստատուն ու կենդանի: Ո'չ բերանով խոսված ու ցրված խոսք, այլ Հորից ծնված մշտնջենավորապես, առանց ձայնի զորության, որովհետև՝ «Սկզբից էր Բանը, և Բանն Աստծու մոտ էր, և Բանն Աստված էր» (Յով. Ա 1)՝ նստած Հոր աջ կողմում:

Եվ ոչ միայն մենք չգիտենք, թե Հորից ծնվելն ինչպես եղավ, այլև անգամ բոլոր արարածները, որ երկրի վրա են և երկնքում, և անգամ բոլոր տեսակի հրեշտակները չեն կարող ասել, որովհետև արարածները չեն կարող պատմել իրենց Ստեղծողի մասին: Եվ Ո՞վ է, որ գիտի Աստծու բոլոր խորությունները, եթե ոչ Սուրբ Հոգին՝ Նա, Ով խոսեց Աստվածաշունչ մատյանով, և այն, ինչ չասաց Սուրբ Գրքում՝ Հորից Որդու ծննդյան մասին, մենք ինչպե՞ս կարող ենք քննել:

Մարդեղության ժամանակի մասին

Հարց. — Ինչո՞ւ Հիսուս ավելի շուտ կամ ավելի ուշ չմարդացավ:

Պատասխան. — Ինչպես եթե բժիշկը ժամանակին չտա դեղը, ապա այն շիվանդի համար կլինի անօգուտ ու վնասակար, այդպես էլ եթե Բանն Աստված առաջին դարում⁶ մարմնանար, ինչպես օրինակ՝ Նոյի օրերում, կամ էլ Աբրահամի ու Մովսեսի, կրկնակի անօգուտ կլիներ. Նախ՝ որովհետև այդ ժամանակներում նրան չէին փնտրում ու անգամ չէին ցանկանում, և երկրորդ՝ նրա մասին չէին էլ իմանում ու չէին հավատա:

Իսկ եթե ավելի ուշ լիներ, այսինքն՝ վերջին դարում, ապա կրկնակի պակասություն կլիներ. Նախ՝ շատերը կհուսահատվեին փրկությունից, և երկրորդ՝ հավատացյալների մեծ բազմություններ կկորչեին, որը վայել չէր լինի ամենագետ Աստծուն: Տերը ճիշտ ժամանակին եկավ, երբ ցավը գորացավ, և բժշկի կարուտությունը զգացվեց, մարդացավ մարդասեր Բժիշկն ու բժշկեց վերքերը: Հստ որում՝ Նա ինքն իրեն բժիշկ անվանեց ավագակների ձեռքն ընկած և նրանց կողմից վիրավորված մարդու համար (տե՛ս Ղուկ. Ժ 33): Ինչպես և Եսային է ասում. «Պատեհ ժամանակ քեզ լսեցի և փըրկության օրն օգնեցի» (Եսայի Խթ 8):

Նախ՝ Նոյին ու նրանից առաջ եղողներին տվեց բնական օրենքը, ապա բանականը տվեց Աբրահամին, իսկ գրավորը՝ Մովսեսին: Եվ երբ

⁶ Դար ասելով չպետք է հասկանալ 100 տարի, այլ մի ամբողջ ժամանակաշրջան, որն սկիզբ է առնում մի որևէ նշանակալից իրադարձությամբ և ավարտվում նույնպիսի մեկ այլ իրադարձությամբ: Օրինակ՝ այդպիսի իրադարձություններ են Յանաշխարհային ջրհեղեղը, լեզուների խառնվելը Բաբելոնում կամ Տասնաբանյայի ստանալը, որոնցով հիմնովին փոխվում է մարդկային պատմության ընթացքը:

Օրենքն ամենքին ընկճեց, և նրանք տեսան, որ չեն կարող փրկվել, եկավ ինքը՝ Օրենսդիրը և փրկեց մեզ:

Դարձյալ՝ վեցերորդ օրն արարեց Աղամին՝ տիրական պատկերով, ով էլ հանցանք գործելով՝ կործանվեց ապականության կորստով: Իսկ նոր Աղամը եկավ վեցերորդ դարում՝ փնտրելու իր կորուսյալ պատկերը:

Առաջին դարն Աղամինն էր, երկրորդը՝ ենոքինը, երրորդը՝ նոյինը, չորրորդը՝ Աբրահամինը, հինգերորդը՝ Մովսեսինը, իսկ վեցերորդ դարում ծնվեց մեր Փրկիչը՝ Քրիստոս, և բժշկեց մեզ: Ոմանք նաև այսպես են թվարկում. առաջին դարն Աղամից մինչև նոյն է, երկրորդը՝ նոյից մինչև Աբրահամը, երրորդը՝ Աբրահամից մինչև Դավիթը, չորրորդը՝ Դավիթից մինչև բարելոնյան գերությունը, հինգերորդը՝ գերությունից մինչև Քրիստոս, վեցերորդը՝ մինչև աշխարհի վախճանը, յոթերորդը՝ մեռելների դարն է, իսկ ութերորդը՝ հարուցյալների:

Հարց. – Իսկ ինչո՞ւ արգանդից ծնվեց:

Պատասխան. – Ասենք, որ Կույսի արգանդում հղացումից և ժուժկալությամբ ինն ամիս ու հինգ օր մնալուց հետո ծնվեց Բանն Աստված: Հինգ հավելյալ օրերը նախաստեղծի արարմանը նախորդող օրերի թիվն է: Նախ ծնվեց արգանդից, որպեսզի լինի Որդի՝ ըստ ծնողի բնության: Երկրորդ՝ որովհետև մարդու մարմնում չկա որևէ անարգ անդամ, և բոլոր անդամներն էլ հավասար են: Երրորդ՝ Աստծու ստեղծածների մեջ չկա ոչինչ, որ գարշելի լինի բնակության համար, մանավանդ կուսությամբ զարդարված արգանդը, որովհետև նա բնակվեց այն տանը, որը ստեղծել էր իր ձեռքով: Չորրորդ՝ որպեսզի մեր բնությունը սրբի մեղքերից:

ՀոՒՎԱՐԻ 6-Ր ՈՐՊԵՍ ՔՐԻՍՏՈՒԹ ԾԱԼԵՅԱՆ

ԵՎ ՀԱՅՏԱՌԱՋԱՆ ՏՈՒ

Տոների ու հոգեւոր ուրախությունների սկիզբը բոլոր հավատացյալների համար Ծննդյան և Աստվածայայտնության տոնն է, որը կարգեց Հակոբոս առաքյալը՝ ով, ըստ մարմնի, եղբայրն էր մեր Տիրոջ ու Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի, և ականատեսն էր Նրա տնօրինական գործերի: Նա, քաջատեղյակ լինելով ամեն ինչին, կազմեց ընթերցվածների գիրքը, սահմանեց տերունական տոները և ասաց, որ հունվարի 6-ը Քրիստոսի ծննդյան օրն է, որը Հոգևոր էր ասել Հակոբոս Տյառնեղբորը: Եվ երեսուն տարի անց դարձյալ հունվարի 6-ին եղավ Տիրոջ մկրտությունը, ինչպես վկայում է Երուսաղեմի Կյուրեղ եպիսկոպոսը: Նա Հակոբոս Տյառնեղբոր ընթերցվածների գիրքը համալրեց նաև այլ տոներով ու կարգերով և հաստատեց հունվարի 6-ը որպես մեր Տիրոջ ու Աստծու՝ Հիսուս Քրիստոսի

ծննդյան ու մկրտության տոն, իսկ դեկտեմբերի 25-ը գրեց որպես Դավիթ մարգարել ու Հակոբոս Տյառնեղբոր հիշատակի օր, որն մյուս եկեղեցիները որպես Տիրոջ Ծննդյան տոն են նշում:

Նաև Կղեմես Ալեքսանդրացին է գրում, որ առաքյալներն են սահմանել Տիրոջ Ծննդյան տոնը Հունվարի 6-ին: Երուսաղեմի Հովհաննես Հայրապետը գրում է, որ Ծննդյան տոնից առաջ ժողովրդի համար ութօրյա պահք է սահմանված, իսկ կրոնավորների համար՝ քառասնօրյա:

Նախկինում Հնդհանրական Եկեղեցին Ծննդյան և Մկրտության տոները միասին էր տոնում, Հունվարի 6-ին, իսկ հետո սրանք բաժանվեցին, որպէս Հայրապետ Արտեմոնը, նոր ընթերցված կարգելով, Հակառակ սուրբ Հակոբոս Տյառնեղբոր ընթերցվածների գրքի, դեկտեմբերի 25-ը գրեց որպես Տիրոջ Ծննդյան տոն, իսկ Հունվարի 6-ը՝ Մկրտության: Արտեմոնը Տիրոջ խաչվելուց 34 տարի անց աշակերտել էր Հովհաննեսին, սակայն յոթ ամիս էլ հաստատուն չէր մնացել ուղիղ հավատի մեջ, ինչպես Հովհաննեսն է ասում. «Մեր միջից ելան նրանք, բայց մեզանից չէին» (Ա Յովի. Ա 19): Արտեմոնն առաքյալի մահվանից հետո հայտարարում է, թե առաքյալները ծննդյան օրը նախանձից դրդված չհայտնեցին իրենց, սակայն այն իրեն հայտնվել է: Եվ հակառակվելով գրեց նոր ընթերցված՝ կարգելով երկու տոն՝ դեկտեմբերի 25-ը՝ որպես Ծննդյան, իսկ Հունվարի 6-ը՝ Մկրտության: Ապա Քաղկեդոնի ժողովում (451թ.) որոշվեց Ծննդյան տոնը դեկտեմբերի 25-ին նշել:

Հետագայում Պողոս Սամոսատացին նորոգում է Արտեմոնի գիրը, որից հետո որոշ երկրներում սկսում են Ծննդյան տոնը կատարել դեկտեմբերի 25-ին՝ պատճառաբանելով, որ ըստ երայեցիների օրացույցի՝ թշրինի 10-ին և ըստ հոռմեական օրացույցի՝ սեպտեմբերի 27-ին՝ Քավության օրը, եղավ Զաքարիայի պապանձումը, և ասում են, թե նույն օրը Զաքարիան մերձեցավ իր կնոջը, և նրա կինն այդ օրը հղիացավ: Եվ այդ օրվանից մինչև մարտի 25-ը հաշվում են վեց ամիս՝ 180 օր, և ասում, որ այդ օրը եղավ Գաբրիելի ավետիսը Կույսին: Ապա մարտի 25-ից, ըստ անդրանիկների հղացման տասնամյա օրերի թվի, հաշվում են 276 օր՝ ինն ամիս և հինգ օր՝ որպես սուրբ Աստվածածնի հղիության օրեր, և դեկտեմբերի 25-ին դնում Տիրոջ ծնունդը:

Արդ՝ Զաքարիայի պապանձումն իսկապես թշրինի 10-ին եղավ, քանզի թշրինը յոթերորդ ամիսն է, և այդ օրը Քավության օրն էր, երբ Քահանայապետը մտնում է Սրբություն սրբոց, որը լինում է տարին մի անգամ՝ ըստ Պողոսի վկայության. «Իսկ երկրորդ խորանը տարին մեկ անգամ միայն քահանայապետն էր մտնում և այդ անում էր ո՛չ առանց զոհի արյան, որ մատուցում էր իր և ժողովրդի մեղքերի համար» (Եբր. Թ 7):

Եվ քանի որ Զաքարիան այդ տարվա քահանայապետն էր, և առջեռմ դեռևս Տաղափարահարաց մեծ տոնը կար, ապա նա չէր կարող այդ օրը թողնել ժողովրդին, գնալ իր լեռնակողմի տունը և մերձենալ իր կնոջը, քանզի Երուսաղեմում չէր բնակվում։ Պետք է ասել, որ այդ օրերին Քափության և Տաղափարահարաց տոների կապակցությամբ այնտեղ էր Հավաքվել ամբողջ Իսրայելը՝ նվերներով ու պատարագներով հանդերձ, և Զաքարիան էլ պատարագիչն էր։

Եվ եթե Հասարակ ժողովրդին տոնից երեք օր առաջ հրամայվում է սրբել, ինչպես նաև ամսամուտին, որչափ առավել գլխավոր տոնի համար սրբություն կպահանջվեր քահանայապետից։ Եվ անհավատալի է, որ Զաքարիան, լինելով օրինապահ քահանա, Օրենքով պահանջվածը կատարելուց առաջ՝ երկու գլխավոր տոների միջակայքում, գնար իր կնոջ մոտ։ Դրանով նա, ըստ Օրենքի հրամանի, ամբողջ Իսրայելի արուների վրա ամոթ կսփռեր։ Իսկ աստվածախոս Ղուկաս ավետարանիչն այս կապակցությամբ ասում է. «Եվ երբ պաշտամունքի իր օրերը լրացան, գնաց իր տունը։ Այդ օրերից հետո նրա կինը՝ Եղիսաբեթը, Հղիացավ» (Ղուկ. Ա 23-24)։

Իսկ ըստ Օրենքի՝ պաշտամունքի օրերը տասներկուսն են, և դա Հետեւյալ կերպ է։ Թշրին ամսի տասներորդ օրը Քափության օրն է, և այն նվիրյալ ու սուրբ օր են Կոչում՝ որպես Հիշատակ նրանց քավության, ովքեր հորթը ձուլեցին ու պաշտեցին, նաև որպես յոթերորդ ամսի հիշատակ և Շաբաթների շաբաթ⁷ ամբողջ Իսրայելի համար։ Այս պատճառով ամսի 9-ի երեկոյան հրամայվում է բոլորին սրբել իրենց անձերը։ Եվ այս օրը՝ ամսի 10-ին, եղավ Զաքարիայի մուտքը Սրբություն սրբոց ու պապանձումը, որն ըստ Հոռմեական օրացույցի՝ սեկտեմբերի 27-ին էր։ Իսկ թշրինի 15-ին, որը հոկտեմբերի 2-ն է, Տաղափարահարաց տոնն է՝ Հիշատակը հրեաների՝ քառասուն տարի տաղավարներում բնակվելու։ Եվ քանի որ այդ տարիներին Ամպը նրանց հովանի էր լինում, հրեաները վերցնում էին պատողներ և ծառի գեղեցիկ ոստեր, ինչպես նաև ձիթենու և ուռենու ճյուղեր ու յոթ օր շարունակ նշում այդ տոնը, որ տեսում էր մինչև Հոկտեմբերի 9-ը, որը թշրինի 22-ն է։ Եվ Զաքարիան այդ օրն է գնում իր տունը, և այդ օրերից հետո է, ըստ Ավետարանի, Հղիանում Եղիսաբեթը, այսինքն՝ Հոկտեմբերի 10-ին՝ ուրբաթ։

⁷ Յին Ուխտում իինգ շաբաթներ կային։ Առաջին շաբաթը յոթերորդ օրն է, երկրորդը՝ յոթերորդ շաբաթը, երրորդը՝ յոթերորդ ամիսը, որը թշրին է կոչվում, չորրորդը՝ յոթերորդ տարին և իինգերորդը՝ հորեւսանական հիսուներորդ տարին։ Շաբաթների շաբաթը (տե՛ս Ղետ. Ժ 31) յոթերորդ ամսի (թշրին) տասներորդ օրն է, երբ նշում է Քափության տոնը, քանի որ այդ օրը շաբաթ է, յոթերորդ շաբաթն է (28-րդ շաբաթն է՝ հաշված հրեաների Զատկից) և յոթերորդ ամիսն է։

Այսպիսով, Զաքարիայի պապանձումը եղավ սեպտեմբերի 27-ին, իսկ հոկտեմբերի 10-ին եղավ Եղիսաբեթի հղացումը: Այստեղից հաշվելով 6 ամիս՝ 180 օր՝ հասնում ենք նիսանի 16-ին, որն ապրիլի 6-ն է: Եվ ապրիլի 7-ին լինում է Գաբրիելի ավետումը: Ապա, ըստ անդրանիկների օրենքի, հաշվելով 276 օր՝ ինն ամիս հինգ օր՝ որպես սուրբ Աստվածածնի Հղիության օրեր, հասնում ենք տեբեթի 21-ին, որը հունվարի 6-ն է:

Հունվարը տարվա առաջին ամիսն է՝ սկզբը, իսկ վեցը խորհրդավոր թիվ է, քանզի վեցերորդ օրը ստեղծվեց Ադամը: Վեցը նաև վեցհազարյան դարերի խորհուրդն է հայտնում: Հետևաբար՝ վեցերորդ դարի վեցերորդ օրը ծնվեց Նոր Ադամը՝ արարածների Արարիչը՝ գտնելու և նորոգելու իր վեցօրյա արարածին՝ հին Ադամին, ով մոլորվել էր վեցյակի⁸ հանցանքներով: Եվ այդ օրն է ծնվում Բանն Աստված, և այդ օրը հինգշաբթի էր:

⁸ Նկատի ունի վեց ուղղություններով շարժումները՝ վերև, ներքև, աջ, ձախ, ետ և առաջ, որոնցով հանցավոր եղանք:

ՄԵՐ ՏԻՐՈՂ՝ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Աստվածային Անձինք պատահական, ակամա կամ մարդկանց կողմից չեն շարժվում, այլ իրենց կամքով ու նախատեսությամբ, և ինչպես ամեն ինչում, այնպես էլ՝ մկրտության խորհրդի ժամանակ։ Երբ լրացավ Հիսուսի երեսուն տարին, նազարեթից, ուր ապրում էր, եկավ Հորդանան գետը, որպեսզի ընդունի մկրտությունը Հովհաննեսից։ Տերը մինչև մարմնով կատարյալ հասակին հասնելը ո՛չ նշաններ գործեց և ո՛չ էլ վարդապետեց։ Այդ օրերին Հրեաստանի ողջ շրջակայքից մարդկանց հոծ բազմություն էր գնում Հովհաննեսի մոտ և մկրտվելով նրանից՝ խոստովանում մեղքերը։

Իսրայելում նորություն էր մկրտության քարոզությունը, քանզի մարդարեներից ոչ ոք այդպիսի մկրտություն դեռևս չէր քարոզել։ Եվ այն սքանչելիքների համար, որ տեսան հրեաները Հովհաննեսի վրա և լսելով նրա ծննդյան նշանների մասին՝ այն, որ նա աղոթքի պառող է, ինչպես իսահակն (տե՛ս ԾԱՆԴ. ԺԵ 2) ու Սամվելը (տե՛ս Ա Թագ. Ա 11), և այն, որ նա իր ամբողջ ժամանակը, բազում ճգնությամբ, անց է կացնում անապատում, դյուրությամբ հավատացին նրա քարոզությանը։

Այդ օրերին ժողովուրդը սպասման մեջ էր, և շատերը մինչև իսկ Հովհաննեսին էին համարում Աստծուց խոստացված Մեսիան և իրենց սրտում հարց էին տալիս ու ասում՝ մի՞՞թե սա է Քրիստոս։ Իսկ Հովհաննեսը պատասխանում էր բոլորին ու ասում. «Ես ձեզ մկրտում եմ ջրով, ապաշխարության համար, բայց նա, Ով գալիս է ինձնից հետո, ավելի հզոր է, և ես արժանի չեմ հանելու նրա կոչիկները. Նա ձեզ կմկրտի Սուրբ Հոգով և հրով» (Մատթ. Գ 11):

Երբ Փրկիչը եկավ Հովհաննեսի մոտ մկրտվելու, վերջինս, իրեն անարժան համարելով, ասաց. «Ի՞նձ պետք է, որ Քեզնից մկրտվեմ, և Դու ի՞նձ մոտ ես գալիս» (Մատթ. Գ 14): Այսինքն՝ «Դու՝ սրբերի Սուրբդ, գալիս ես ինձ՝ տուժալիս մոտ՝ մաքրություն ընդունելու»։ «Ի՞նձ մոտ ես գալիս» ասելով՝ նկատի ունի, որ Հիսուս պետք է մեռներ և իջներ դժոխք։ Տիրոջ մարդեղությամբ Սիմեոն Շերունին ու Հովհաննեսը Հոգով ճանաչեցին նրա մեջ Աստծուն. թեպետև նրան մարդու կերպարանքով էին տեսնում, սակայն որպես Աստծու էին դիմում։

Եվ Հիսուս պատասխանեց ու ասաց. «Թո՛ւյլ տուր հիմա, որովհետե այսպես վայել է, որ մենք կատարենք Աստծու ամեն արդարություն» (Մատթ. Գ 15): Այսինքն՝ այս ժամանակը խոնարհության և զղջման

ժամանակն է: Թո՛ւյլ տուր և մի՛ հրաժարվիր տնօրինական խորհրդի կատարումից, որի համար ես առաքվեցի:

«Հիմա» ասելով ցույց է տալիս, որ միշտ չէ, որ խոնարհություն պետք է ցույց տա, այլ միայն այժմ, իսկ հետո պիտի տեսնենք նրա անզուգական փառքը, որովհետև այսպես պետք է կատարվի ամբողջ արդարությունը: Ինչպես այժմ Տերը խոնարհությամբ հանձն է առնում իր ծառայից մկրտվել, այնպես էլ նրա տնօրինական բոլոր գործերը խոնարհությամբ պետք է լինեն, որպեսզի նրա անձը լրացնի ամբողջ արդարությունը, որը կորցրեց նախահայրն իր հպարտության պատճառով:

«Եվ երբ Հիսուս մկրտվեց, իսկույն ըրից դուրս ելավ. և ահա երկինքը բացվեց նրան, և նա տեսավ Աստծու Հոգին, որն իջնում էր ինչպես աղավնի և գալիս էր իր վրա» (Մատթ. Գ 16): Այն, որ առաջին Աղամից հետո փակվել էր, չբացվեց, մինչև երկրորդ Աղամն իր մկրտությամբ չվերցրեց առաջին Աղամի մեղքը: Այստեղ՝ Դրախտում, փակվեց եղեմի դուռը, իսկ այստեղ բացվեց երկնքի Արքայության դուռը: Եվ ոչ թե առհասարակ բացվեց, այլ միայն նրա համար, և ոչ ըստ Աստվածության, որով միշտ բաց էր, այլ ըստ մեր բնության, որը նշանակում է, թե Հայրը նրա միջնորդությամբ հաշտվեց մարդկանց հետ և իր Որդու մկրտությամբ բացեց երկինքը և հրավիրեց ամենքին մտնել և այն ժառանգել:

Հարց. – Իսկ ի՞նչ կարիք կար, որ Հոգին տեսանելի կերպով իջներ նրա վրա, Հոգին, որ միշտ նրա հետ էր, ինչպես և՝ Հոր հետ:

Պատասխան. – Այս եղավ, որովհետև հրեանները Հովհաննեսին մեծ էին կարծում՝ անապատում բնակվելու, քահանայապետի որդի լինելու և ամուլ արդանդից ծնվելու պատճառով, և դեռ բոլորն էլ մկրտվում էին նրանից: Իսկ Քրիստոսի մասին, որ Կույսից է ծնված, դեռևս չգիտեին, մանավանդ որ հանդերձավորված էր ինչպես բոլորը: Եվ այն, որ Հովհաննեսից մկրտվեց, դրանից հրեաններն առավել հաստատվեցին իրենց կարծիքի մեջ: Որովհետև նրանք հետեւյալ կերպ էին խորհում. «Եթե բոլորի նման չէ, ինչո՞ւ ամենքի նման եկավ մկրտվելու»: Եվ որպեսզի այդպես չկարծեին, նրա մկրտությամբ բացվեց երկինքը և Հոգին իջավ, որպեսզի նաև մենք հավատանք, որ մեր մկրտությամբ նույնպես Հոգին իջնում է մեզ վրա, ինչպես և նրա վրա իջավ, թեև ո՛չ այնպես տեսանելի կերպով, սակայն դրանում չպետք է տարակուսել:

Հարց. – Իսկ ինչո՞ւ Հոգին աղավնու կերպարանքով իջավ:

Պատասխան. – Որովհետև աղավնին զգոն և հանդարտ է, ինչպես և Հոգին, նաև հիշեցնում է հին օրինակը, երբ ամբողջ աշխարհը ծածկված էր ջրով: Այնժամ նույն այս թռչունը բերեց ջրերի հանդարտվելու ավետիսը՝ իր բերանին ունենալով կյանքի առհավատչյան՝ ձիթենու տերեւ (տես

Ծննդ. Ը 11): *Ավետարերն ուներ այս աստվածային Աղավնու նմանությունը, Ով, սակայն, փոխանակ ձիթենու տերեկի, սուրբ յուղի օծությամբ մարդկային ցեղին բերեց ազատություն ու որդեգրություն Հորը:*

Եվ ահա երկնքից մի ձայն ասում է. «Դա' Է Իմ սիրելի Որդին, որն ունի Իմ ամբողջ բարեհաճությունը» (Մատթ. Գ 17): *Մարդկային բնության հույսերից ու արժանավորություններից վեր էր այն ժամանակ հայտնված բարությունը, որովհետև երրորդության խորհուրդը, որ հավիտյանս ծածկված էր ամենքից, հայտնվեց Հորդանանի վրա՝ վերեկից Հոր ձայնով, Որդու մկրտությամբ և Սուրբ Հոգու աղավնակերպ իշմամբ: Եվ ի՞նչ է սա, եթե ոչ նոր արարածների սկզբանը առնելը, ոչ թե երևացող արարածների, այլ մարդկանց աներեռույթ հոգիների, և ոչ թե անգոյությունից գոյության բերելով, այլ գոյացածներին և եղածներին մեղքերի ապականությունից վերստին նորոգելով:*

Առաջին արարչության ժամանակ բոլոր արարածները երրորդությամբ գոյացան: Հոր ձայնով գոյացան լույսը և այն ամենը, ինչը եղավ լույսի հետ՝ ըստ այս խոսքի. «Թող լույս լինի» (Ծննդ. Ա 3), իսկ Տիրոջ Խոսքով, ինչպես նաև Հոգով, երկինքը հաստատվեց: Եվ մի Աստվածությունն անէությունից գոյության բերեց բոլոր էություններին, մանավանդ մարդուն, որ երրորդության պատկերով ստեղծվեց:

Նույնպես և այժմ, Հոր ձայնն իմանալի Լույսի ծագմամբ՝ լսողների հոգում դարձյալ պատկերեց իր Աստվածությունը, որը եղծվել էր հին Աղամի մեջ: Սակայն ո՛չ բոլորի մեջ պատկերեց, այլ նրանց, ովքեր, ըստ Հոր ձայնի վկայության, դավանում են Քրիստոսին: Իսկ ովքեր, լսելով Հոր ձայնը, սակայն ո՛չ ներքին ականջով, և տեսնելով Հոգուն՝ ո՛չ մտքի տեսողությամբ, չհավասարցին Աստծու Որդուն, Ով վկայված էր Հորից և Հոգուց, մնացին նախկին եղծված պատկերով և ապականության մեջ:

Հարց. — Եթե Հոր ձայնը բավական էր վկայելու, որ Քրիստոս ճշմարտապես Աստծու Որդին է, ապա ինչո՞ւ երևաց նաև Հոգին:

Պատասխան. — Եթե միայն ձայնը լիներ, մարդիկ կկարծեին, թե դա Հովհաննեսի համար եղավ, որովհետև նա էր մեծը և հայտնին նրանց մեջ: Թեև ձայնը հատուկ Քրիստոսին էր ուղղված, սակայն անորոշ եղավ, այդ պատճառով էլ նախ նրա վրա Հոգին իջավ՝ որպես թե մատնանշելով, և ապա վերեկից Հոր ձայնը եկավ, որպեսզի այլևսյլ կարծիքներ չլինեն, այլ հաստատապես իմանան, որ դա նա է, Ում համար վկայեց Հայրը:

Այս վայրում լռեց հրեական մկրտությունը, և մեր մկրտության սկիզբը դրվեց: Եվ այն, ինչ Քրիստոս կատարեց Զատկին, նույնն այստեղ կատարեց Հոգով, որովհետև ստվերականն ամբողջացրեց և ճշմարտությունը հաստատեց: Այս պատճառով էլ մյուս մկրտվողների վրա չերեաց

այս ամենը, այլ միայն Նրա վրա, Ով պետք է տար Հոգին: Երկնքի բացվելով և Հոգու էջքով Տերը մեզ կանչում է դեպի այն բնակությունը, որտեղից ինքն իջավ, և մկրտությամբ ոչ թե հրեշտակ կամ հրեշտակապետ պետք է լինենք, այլ Աստծու սիրելի որդի:

Իր մկրտությամբ Հիսուս սրբեց մկրտությունը: Իսկ եթե Աստծու Որդին մկրտվեց, ո՞վ կարող է այսուհետեւ արհամարհել մկրտությունը: Նրա մկրտությունը մաքրության կարոտության պատճառով չեղավ, քանզի Նա ամենամաքուրն է, բնությամբ սուրբ ու ամենքի սրբողը: Նա մկրտվեց ոչ այն բանի համար, որ մեղքերի թողություն գտնի, քանի որ անմեղ էր, այլ որպեսզի մեզ տա ապաշխարության շնորհը:

Մկրտվեց, որովհետեւ հանձն առավ բոլոր տնօրինությունները. որպեսզի լվանա մեր մեղքերը, սրբի մկրտչին, սրբի և զորացնի ջրերը՝ մեզ վերստին ծնելու համար: Ապա՝ կատարի և լրացնի Օրենքը՝ լինելով մեզ համար մկրտության գալու օրինակ, այնտեղ հայտնի Երրորդության խորհուրդը և մեր օգուտը մեզ ցույց տա, որովհետեւ մկրտությունն ազատում է մեղքերից:

Մկրտվեց, որովհետեւ ըստ Հոբի խոսքի՝ վիշապը ջրում էր (տես Յոթ Խ 18), և պետք էր խորտակել վիշապի գլուխը: Տերը եկավ, մտավ ջուրը և կապեց վիշապին, որպեսզի մենք իշխանություն ստանանք ոտնակոխ անելու օձերի, կարիճների և թշնամու զորությունները (տես Դուկ. Ժ 19): Եվ այդ գագանը փոքր չէր, այլ մեծ ու ահավոր, և նրա առջևից կորուստն էր գնում (տես Յոթ Խ Ա 13): Տերը, վերացնելով բոլոր պատուհասները, խափանեց ու սանձեց մահը, որից հետո առջևից կյանքը գնաց, որպեսզի ամենքս էլ ապրենք՝ ըստ հետեյալ խոսքի. «Ո՞ւր է, մա՛հ, քո հալթությունը» (Ա Կորնթ. Ժ 15): Մկրտությամբ վերացվեց մահվան խայթոցը:

Հարց. – Ինչո՞ւ Տերը երեսուն տարեկանում եկավ մկրտվելու:

Պատասխան. – Որովհետեւ առաջին Աղամը երեսնամյա ստեղծվեց և ընդունեց Հոգու փչումը, սակայն այն չպահեց և նույն հասակում մեղք գործեց: Այդ պատճառով Երկրորդ Աղամը՝ մեր Տերը, Աղամի բնությամբ, նույն հասակում, Հորդանանում լվաց առաջին Աղամի մեղքը և առնելով Հոգու յոթ շնորհները՝ տվեց նրանց, ովքեր վերստին ծնվեցին Մկրտության ավագանից, որպեսզի ստանան արարչության նույն պատկերը:

Երկրորդ՝ երեսունը վեց անգամ հինգն է կամ՝ հինգ անգամ վեցը: Տերը մարդկային բնության հինգ զգայարանները և վեց շարժումները մաքրեց մկրտությամբ՝ մեր ընթացքն ուղղելով դեպի աստվածայինը:

Երրորդ՝ վարդապետության սկիզբը մկրտությունից հետո էր լինելու, երբ ստանալու էր Հոգին, թեպետև Հոգին միշտ Նրա հետ էր: Երեսունը մարդու կատարյալ հասակն է, և սա է վարդապետության ժամանակը,

որպեսզի, հասակի պակաս լինելու պատճառով, չարհամարհվի վարդապետությունը:

Չորրորդ՝ երեսնամյա մկրտվեց, որովհետև ոչինչ չէր կարող նրան շտապեցնել, քանզի ինքն էր տնօրինում իր ծնունդը, մկրտությունը և չարչարանքները: Իսկ մարդկանց համար մահն ամեն ժամ պատրաստ սպասում է, քանի որ չգիտեն իրենց մահվան օրը:

Հինգերորդ՝ երեսնամյա մկրտվելով՝ մեզ կամեցավ ցույց տալ, թե ինչպես երեսնամյան կատարյալ է հասակով, այնպես էլ մկրտությամբ վերստին ծնվելով՝ մարդը կատարյալ է գառնում իմանալի հասակով: Քրիստոս կամեցավ երկու հասակն էլ՝ ըստ մարմնի և ըստ հոգու, ամբողջությամբ ընդունել:

Այս մեծ խորհուրդների պատճառով Քրիստոս երեսնամյա մկրտվեց, որով մեզ տվեց ջուրը սրբարար և Հոգին կենդանարար: Արանով մարդուն երկու տեսակ մաքրություն տվեց՝ ջրով և Հոգով: Որպեսզի Սուրբ Հոգին մաքրի ու նորոգի մարդկային հոգին, որն Աստծու պատկերն է, իսկ ջուրը Հոգու շնորհներով՝ մաքրի մարմինը մեղքերից և ազատի ապականությունից:

Եվ ինչպես ամեն անգամ Տերը նախ օրինակն է տալիս՝ դրանով վարժելով ու կրթելով՝ մարդկանց միտքը, և ապա՝ ձշմարտությունը՝ ներգործական կատարմամբ, նույնպես և մկրտության խորհրդի գեպքում եղավ: Այսպես՝ Իսրայելի որդիները, անցնելով Հորդանանի ջրերով, մաքրվեցին եղիպտական ախտերից և արժանի եղան ժառանգելու Ավետյաց երկիրը: Արանում նաև եղիան մաքրվեց ու բարձրացավ երկինք, ապա մաքրվեց նեեման ասորին՝ յոթ անգամ լվացվելով (տես՞ Թագ. Ե 14): Նույն ջրում նաև Քրիստոս մկրտվելով մեզ տվեց Հոգու շնորհները, որով մաքրվում ենք եղիպտական և խավարային բոլոր ախտերից, և սրանից թևեր առնելով՝ բարձրանում երկնային խորան:

Հարց. – Իսկ ի՞նչ է նշանակում վիշապի գլուխը Հարդելը Հորդանանում:

Պատասխան. – Նա, ով խաբեց Ադամին, օձ էր, որն այժմ վիշապ էր դարձել: Գլուխը Հորդանանում ջախջախեց, իսկ պոչը՝ գերեզմանում ու դժոխքում: Քրիստոս իր մկրտությամբ սրբեց նյութը և ջուրն արեց կյանքի ու սրբության նյութ: Եվ այժմ մենք մկրտվում ենք ջրով՝ ջախջախելով վիշապի գլուխը, այսինքն՝ սկզբնական մեղքը, և առաքինություններով կոխկոտում ենք խայթոցը, որը ներգործական մեղքն է՝ հոգու մահն ու դժոխքը:

Տերն իր մկրտությամբ ցույց տվեց նաև իր խոնարհությունը՝ ինքը գալով իր ծառայի մոտ: Երկնքի բացումով ցույց տվեց, որ մկրտվողի

Համար բաց է Երկնքի արքայության դուռը, իսկ Սուրբ Հոգու էջքով ցույց տվեց, որ մկրտվելով՝ Աստծու տաճար ենք լինում: Հոր ձայնի հնչումը ցույց է տալիս, որ շնորհով Աստծու որդի ենք լինում:

Արդ՝ երբ մենք՝ մեղքերով բեռնավորվածներս, ջուրն ենք իջնում, շնորհաց Խոսքը կնքում է մեր հոգին և թույլ չի տալիս ահեղ գազանին մեզ կլանել, և մենք՝ մեղքերով մեռած, ջուրն իջնելով, այնտեղից ելնում ենք՝ կենդանացած արդարությամբ: Որովհետև եթե մահվամբ տնկակից եղանք Փրկչին, Նրա հարությանը նույնպես արժանի կլինենք:

Վարդապետներն ասում են, որ մկրտության ուժ եղանակ կա: Առաջինը՝ ջրհեղեղով մկրտությունը, հատելով վերացրեց մեղքն աշխարհից: Երկրորդ մկրտությունը ծովով ու ամպով եղավ, որտեղ ամպը Հոգու օրինակն է, իսկ ծովը՝ ջրի (տես Ելք ԺԴ 21, ԺԴ 22): Երրորդ եղանակ՝ հրեաները լվանում էին իրենց հանգերձները և մարմինը, որից հետո մաքուր էին համարվում (տես Ղատ. ԺԴ 9): Զորբորդը Հովհաննեսի մկրտությունն էր, որն ապաշխարության համար էր, որպեսզի կարողանան ընդունել Հոգով մկրտությունը: Հինգերորդը Տիրոջ մկրտությունն է: Եվ մենք էլ մկրտվում ենք Տիրոջ կատարյալ մկրտությամբ՝ ջրով ու Հոգով: Նաև Տերն ասում է հրով մկրտվելու մասին, որն իրականացավ Սուրբ Հոգու շնորհներով, որոնք որպես հրեղեն լեզուներ սփռվեցին առաքյալների վրա: Վեցերորդ եղանակն ապաշխարության արտասուրով ու Հույժ տաժանակրությամբ է լինում: Յոթերորդը արյամբ մկրտությունն է, որը վկաների մկրտությունն է, որով և ինքը Քրիստոս մեզ համար մկրտվեց. սա հույժ գովելի ու երանելի մկրտությունն է: Ութերորդ մկրտությունն աշխարհի վախճանի ժամանակ է լինելու և ոչ թե փրկության համար, այլ տանջանքներով ամբողջ չարությունը չնշելու, որն անշեղ հուրն է: Եվ այս իմանալի հուրը, որը Քրիստոսի Գալստյան ժամանակ է լինելու, ներում ու մաքրություն է դառնալու նրանց համար, ովքեր ուսկի են, արծաթ և պատվական քարեր. և դրանից նրանք առավել ևս պիտի պայծառանան: Իսկ ովքեր փայտ են, ծղոտ ու եղեգ, պիտի այրվեն անշեղ հրով:

Քրիստոսի և Հովհաննեսի մկրտությունները նմանվում են նրանով, որ նույն նյութով, այսինքն՝ ջրով, և ընկղմումով են կատարվում: Իսկ զանազանվում են նրանով, որ Հովհաննեսի մկրտությունը տրվում է Նրա անունով, Ով գալու էր, իսկ Քրիստոսինը՝ Երրորդության անունով:

Երկրորդ՝ զանազանվում են ներգործությամբ, որովհետև Քրիստոսի մկրտությունն արդարացնում և բացում է արքայության դուռը, իսկ Հովհաննեսինը՝ ոչ:

Երրորդ՝ զանազանվում են վախճանով, որովհետև Հովհաննեսի մկրտությունը կարգված էր Քրիստոսի համար, նաև որպեսզի դրանով սովորեցնի ժողովրդին, թե որն է կատարյալ մկրտությունը:

Հարց. – Ինչո՞ւ ջրի և ո՞չ այլ արարածների միջոցով եղան մկրտությունն ու շնորհների պարզեցումը:

Պատասխան. – Որովհետև, ըստ Սուրբ Գրքի, ջուրը մեծ է մյուս տարրերից: Երկինքը՝ հրեշտակների բնակավայրը, ջրով է միացած երկրին՝ մարդկանց բնակավայրին: Սա մյուս վեցօրյա արարվածներից առաջինն է՝ ըստ հետեւյալ խոսքի. «Ի սկզբանե Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը... եվ Աստծու Հոգին շրջում էր ջրերի վրա» (Ծննդ. Ա 1-2): Աշխարհի սկիզբը ջրով եղավ, իսկ Ավետարանի սկիզբը՝ Հորդանանում: Նաև փարավոնի գերությունից հսրայելի ազատությունը Մովսեսի միջոցով ծովում եղավ: Եվ մեղավորների ազատումն աշխարհից եղավ Ավագանի միջոցով, կենդանի Խոսքով: Եղիան Հորդանանն անցավ, ապա նոր երկինք բարձրացավ: Իսկ Ահարոնը նախ լվացվեց և ապա եղավ քահանայապետ: Տիրոջ մկրտությունը վախճանն է Հին օրենքի և սկիզբը նոր Կտակարանի:

Զրուցանք

Զրորիների արարողության ժամանակ ասվում են սուրբ Բարսեղ Կեսարացու աղոթքը, Յովիաննես Պլուզ Վարդապետի «Յամենայն ժան» քարոզը և «Ով զարմանալի» ու «Այսօր ծայն» տաղերը:

Սուրբ Ծննդյան պատարագից անմիջապես հետո կատարվում է Ջրօրհների արարողությունը, որը Քրիստոսի մկրտության խորհուրդն ունի: Ժողովուրդը քահանայի գլխավորությամբ և սարկավագի քարոզությամբ աղաչում է մարդկաներ Տիրոջը, որպեսզի նա Միածնի շնորհներով այս ջրին տա Հորդանանի օրհնությունը, Սուրբ Հոգին իջնի այս ջրի վրա և սրանում մկրտվողները լինեն ճշմարտության և լույսի որդիներ:

Ապա քահանան ժողովրդի խնդրվածքները ներկայացնում է Տիրոջն ու աղաչում, որ նա օրհնի ու սրբի ջուրը՝ այն օգտակար դարձնելով տների շինության, հիվանդների բժշկության, մարդկանց մաքրության, Հոգիների ու մարմինների փրկության և ամենայն այլ կարիքների համար: Սա դարձնի նաև օրհնության աղբյուր ու անապականության պարգև, և սրանով լինի մեղքերին թողություն, հիվանդներին՝ բժշկություն, ախտածետներին՝ առողջություն, ու գեերին՝ խորտակում: Ապա խնդրում է Տիրոջից, որ այդ ջրով հալածվեն բոլոր վնասները, չար բծերը, ախտերը, սատանայի բոլոր բռնությունները, և ջրի մեջ դնի Սուրբ Հոգու

բժշկության և չար գորությունների դեմ հաղթության շնորհները, որով արժանանանք Տիրոջ օգնությանը, օրհնությանը և սրբությանը:

Այնուհետև քահանան խաչն իջեցնում է ջուրը, որը խորհրդանշում է Տիրոջ մկրտությունը խաչով՝ ըստ այն խոսքի. «Եվ մի մկրտություն ունեմ մկրտվելու և ինչպես եմ շտապում, որ կատարվի» (Ղուկ. ԺԲ 50): Որից հետո պատարագիչը խաչը հանում է ջրից և ջուրն օրհնում սուրբ խաչի նշանով ու մեռոնով, քանզի Տերը ջրի վրա օծվեց Հոգով՝ ըստ խոսքի. «Դրա համար Աստված, քո՛ Աստվածն օծեց քեզ ուրախության յուղով ավելի, քան քո ընկերներին» (Սաղմ. ԽԴ 8): Ապա քահանան ջուրը օրհնում է սուրբ Ավետարանով, քանզի գրված է. «Տիրոջ ձայնը ջրերի վրա է» (Սաղմ. ԽԸ 3), այսինքն՝ Հոր ձայնը: Այս օրհնություններին ավելացնում են նաև օրվա շնորհները՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու անուններով:

Ապա ջուրը բաժանվում է ժողովրդին, և նրանք օրհնված ջուրը տանում են տուն:

ՏՈՆԱԿԱՆ ՕՐԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆ ԵՎ ՊԱՏճԱՌՆԵՐԸ

ՃՐԱԳԱԼՈՒՅԹ

Յունվարի 5-ի Աստվածայայտնության ճրագալույցի գիշերային ժամին քահանաները զգեստավորված գալիս են ատյան, ուր խնկարկելով և «Ուրախացի՛ր, սրբուհի» շարականի երգեցողությամբ սկսում են օրինաբանել Աստվածամայր Կույսին՝ մեզ հայտնելով Քրիստոսի գալուստը: Նույն խորհրդով ընթերցվում է նաև Հիսուսի ծնունդն ավետող Դուկասի ավետարանից (Ղուկ. Ա 26-38):

Իններորդ ժամին բոլորը ժողովվում են եկեղեցում (որի բեմը նախապես վարգույրով ծածկված է) և սկսում Աստվածայայտնության ճրագալույցի արարողությունը: Այս ժամին ընթերցվում են հատվածներ Ղուկասի (Բ 8-20) և Մատթեոսի ավետարաններից (Ա 18-25), որոնցով տրվում է Տիրոջ ծննդյան ավետիսը: Ապա պատարագիչը ելնում է խորան և զգեստավորվում: Այս ընթացքում ատյանում ընթերցվում են Տիրոջ գալուստը վկայող մարգարենությունները, և երբ հասնում են Դամիելի գոթին, հոգևորականներից մեկը բարձրանում է բեմ և այնտեղից ընթերցում այն, որի ավարտին բացվում է վարագույրը և մատուցվում սուրբ պատարագ: ճրագալույցի պատարագի երեսը բարձրանում է: «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և աննահ, որ ծնար և յայտնեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ»:

Ճրագալույցի խորհուրդը հույժ գեղեցիկ է: Այն նախատոնակն է ու կարապետը հետագա ութ օրերի պաշտամունքների, որով և լինում է ինը տոռնական օր: Որովհետև առ նշանակն է այն հավիտենականության, որը կար մինչև աշխարհի լինելը:

Աղամի՝ Դրախտից դուրս ելնելուց շուրջ հինգ հազար տարի անց Աստված երկաց մարմնավորված, այդ պատճառով այսօր նախատոնակ է, որը եկեղեցին սկսում է գիշերը՝ Կույս Մարիամի ավետյաց երգով: Եվ գիշերն ենք սկսում, որն օրինակն է Տիրոջ վերջին գալստյան, որովհետև ասված է, որ այն գիշերն է լինելու: Նաև ըստ մարգարենության՝ լույս ծագեց կուապաշտության և անգիտության խավարում, որի պատճառով էլ այսուհետև խավարը տեղի է տալիս և բազմանում է լույսը՝ ըստ Եսայի մարգարելի խոսքի: «Թագավորները գալու են դեպի Քո լույսը, Հեթանոսները՝ դեպի Քո լույսի փայլը» (Եսայի Կ 3): Նաև Մաղաքիան է ասում. «Արդարության Արեգակը պիտի ծագի» (Մաղաք. Դ 2): Զաքարիան Արևածագ է անվանում Նրան, իսկ Դավիթն ասում է. «Լո՛ւյս տուր, Տե՛ր, իմ աչքերին» (Մաղմ. ԺԲ 4): Եվ աստղի լույսով մոգերն առաջնորդվեցին՝ գալով դեպի ծագած Լույսը՝ ըստ այն խոսքի, թե. «Խավարի մեջ նստած ժողովուրդը մեծ լույս տեսավ. և լույս ծագեց նրանց վրա, որ նստում էին մահվան երկրի և ստվերների մեջ» (Մատթ. Դ 16):

Այս իմանալի և անճառելի Լույսի ծագման համար այսօր մենք վառում ենք լապտերներն ու կանթեղները և անվանում այս օրը մեր Տիրոջ՝

Հիսուս Քրիստոսի ծննդյան և Աստվածայայտնության ճրագալույց, որը խորհրդանշում է լույսի աղոտ ծագումը: Հստ Հովհաննես ավետարանչի՝ Հովհաննես Մկրտիչը ճրագ է կոչվում, իսկ աղոտ ծագումը մարգարեներն են, ովքեր եղան մինչև Հովհաննեսը, որոնցով աղոտ կերպով ծագում էին Տիրոջ գալստյան հանդամանքները, որովհետև Տերը ոչինչ չի անում առանց իր ծառաներին հայտնելու: Եվ այս օրը կարապետն ու նախատոնակն է հաջորդ՝ գալիք օրվա, երբ ծագելու է մեծ Լույսը, ինչպես որ թագավորի գալուստից առաջ նրա սիրելիները խնդությամբ պատրաստություն են տեսնում և ջահերով ընդառաջ ելնում:

Հարց. – Ինչո՞ւ է Եկեղեցին ինն օր անընդհատ նշում այս տոնը:

Պատասխան. – Յոթ օրերը խորհրդանշում են արարչության յոթ օրերը և այս կյանքը, ութերորդը հանդերձյալ կյանքն է, երբ մարդիկ, անքակտ միությամբ խառնվելով հրեշտակների դասերին, նշելու են այս գերաշխարհիկ տոնը, իսկ իններորդն առանձին օր է, որը ցույց է տալիս Սուրբ Երրորդության Անձերի միմյանցից փառավորվելը նախքան ամեն ինչի գոյանալը:

Դարձյալ՝ ինը թիվը հրեշտակների դասերի թիվն է, որովհետև նրանք էլ են մեզ հետ նշում այս տոնը, և մենք էլ նրանց հետ միասին Աստծուն ենք ծառայում: Դարձյալ՝ խորհրդանշում է Աստծու Բանի իննամսյաբնակությունը Կույսի որովայնում:

Պատճեռ պուածին օրվա Տոնակատարության

Աստվածայայտնության գիշերը կատարվում է հսկում, Սրբությունը դնում են սուրբ Սեղանին: Առավոտյան ժամերգությանը եպիսկոպոսը, քահանաները և բոլոր սպասավորները, զգեստավորված, ջահերով ու մոմերով, զալիս են ատյան և երգուն «Խորհուրդ մեծ» օրինությունը: Այս ուրեմն օրերի երեքրյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ ծնար և յայտնեցար վասն մեր, ողորմեա' մեզ»:

Ծննդյան և Հայտնության տոնի առաջին օրը պատկերն է արարչության առաջին օրվա: Այդ օրն Աստված յոթ արարած ստեղծեց, որոնցից երեքը լույս են, իսկ չորսը՝ տարր: Եվ երեք լույսերը սրանք են. առաջին՝ լուսեղեն երկինքը, երկրորդ՝ հրեշտակների դասերը, և երրորդ՝ արեգակի և աստղերի լույսը: Իսկ չորս տարրերն են՝ հողը, ջուրը, օդը և կրակը: Բացի սրանցից ստեղծեց նաև ժամանակը, որով ստացվում է ութ արարած:

Իսկ նոր արարչությունը, որ արեց այսօր, ավելի մեծ է, քան առաջինը, որովհետև Աստված ինքը եկավ ու մարդ եղավ, մեր բնությամբ ու անպական մարմնով ծնվեց Կույսից՝ անարատ, անխափան ու անապական պահելով ծնողի կուսությունը: Աստված երկրորդ արարչությամբ մարդուն հասցրեց աստվածային այն փառքին, որը նախապես որոշել էր:

Առաջին օրը, փոխանակ եղական լույսի, անեղական Լույսն աշխարհ եկավ, և այսօր Հորդանանում Ամենասուրբ Երրորդության հայտնությամբ բոլոր ջրերը սրբվեցին և հզորացան՝ ծնելու համար ոչ թե անբան ու անմիտ անասուններ՝ ձկներ ու թռչուններ, ինչպես առաջին արարչության ժամանակ, այլ Սուրբ Հոգու գալով մի ամբողջ մարդկային ցեղ ծնվեց Հրեշտակների նմանությամբ, և Աղամի որդիները եղան Աստծու որդիներ:

Երկրորդ արարչությունը առաջինի համեմատ ավելի մեծ է, քանզի նա օրինակն էր, իսկ սա՝ ճշմարտությունը: Որովհետև ինչպես զորացրեց Կույսին՝ նրանից ծնվելու համար, այդպես էլ զորացրեց ջրի բնությունը՝ նրանում մկրտվելու համար, և ջրերը կարողացան մեզ վերստին ծնել Հոգուց՝ Աստծուն որդեգրելով:

Տերը, մեզ համար Կույսից ծնվելով, օրինադրեց ծնվել կույս Ավագանից և իր եղբայրները լինել: Եվ ինչպես առաջին օրն արարեց լույսը և փարատեց խավարը, այդպես այսօր երկիրն օրհնեց և զգեստավորեց իմանալի Լույսով: Եվ ինչպես այն օրը Հոգին շրջում էր ջրերի վրա, այդպես էլ այսօր նա շրջում է Հորդանանի վրա՝ աղավնու տեսքով: Այնժամ չորս տարրերն արարվեցին, իսկ այժմ այդ տարրերը Տիրոջով սրբվեցին, որովհետև Աստված օրհնեց Հորդանանի ջուրն իր Որդով և ցողելով բոլոր արարածների վրա՝ վերացրեց նախկին անեծքը: Եվ ուրիշ ինչ զարմանալի բան կա, քան այս, որ Լույսը լուսավորվում է Հորդանանում, և Հուրը՝ մկրտվում ջրում:

Պատճառ Երկրորդ օրվա ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ

Այսօր՝ Յիսուս Քրիստոսի ծննդյան ու հայտնության տոնախմբության Երկրորդ օրը, հիշատակն է սուրբ Ստեփանոսի և բոլոր ննջեցյալների:

Արարչության երկրորդ օրը, Արարչի խոսքով, հաստատություն եղավ ջրերի միջև և վերին ջրերը բաժանվեցին ներքին ջրերից (տես Ծննդ. Ա 6): Սա օրինակն է այն բանի, որ Աղամի հանցանքի պատճառով երկինքը փակվեց, և Աստծու փառքի տեսությունը ծածկվեց Աղամի սերնդի համար: Եվ ահա՝ ողորմության սկիզբը շնորհվեց Ստեփանոսին, ով իր վախճանի ժամին տեսավ երկինքը բացված, և Յիսուսին՝ Աստծու աջ կողմում: Այն, ինչը ծածկվեց Աղամից, Տիրոջ նահատակությամբ աստվածային փառքով երևաց Ստեփանոսին (տես Գործք Է 55):

Քրիստոսի մկրտությամբ բացվեց առաջին երկինքը, որը տեսավ Հովհաննեսը, իսկ խաչելությամբ և հարությամբ՝ երկրորդը, որը տեսավ Ստեփանոսը:

Պատճառ երրորդ օրվա Տոնակատարության

Արարչության երրորդ օրն Աստված ջրերը մեկտեղ հավաքեց, և երևաց ցամաքը: Այդ օրը Տերն իր խոսքով երկիրը զարդարեց բույսերով, տնկիներով, գեղեցիկ բուրաստաններով ու զանազան ծաղկազարդ գույշներով: Իսկ այսօր՝ նույն երրորդ օրը, նոր արարչագործության՝ մեր Աստծու՝ Հիսուս Քրիստոսի ծննդյան ու հայտնության տոնախմբությունն է և հիշատակը Բեթղեհեմի մանկանց, ովքեր Քրիստոսի փոխարեն սպանվեցին Հերովդեսի կողմից, և նրանց արյան հեղմամբ՝ Բեթղեհեմի երկիրն առավել պայծառացավ ու զարդարվեց:

Մատթեոս ավետարանիչը գրում է. «Ձայն գումար Ռամայում. ողբ, լաց ու սաստիկ կոծ» (Մատթ. Բ 17): Ռաման քաղաք է Հորդանանի և Երուսաղեմի միջակայքում: Երբ Նաբուքոպոնոսորը, արշավելով Երուսաղեմի վրա, Ռամայում կոտորեց բոլոր արուներին, ժողովրդի լացի ու ողբի ձայնը մինչև Երուսաղեմ հասավ:

Եվ ևս մեկ անգամ լաց ու կոծ եղավ, երբ Բենիամինի որդիների կողմից զետացու հարճին լլկելու և սպանելու համար Բենիամինի ցեղի մեջ կոտորած եղավ (տես Դատ. Ժթ): Սրանք օրինակն են Հերովդեսի կողմից Բեթղեհեմի մանուկների կոտորածի: Սրա խորհուրդն այն է, որ Ռաքելը՝ Բենիամինի մայրը, լալիս էր իր որդիների վրա, քանի որ Քրիստոսի համար չմեռան, այլ իրենց չարության պատճառով: Այստեղ Ռաքելը Բենիամինին ծննդաբերելիս մեռավ (տես Ծննդ. Լե 16-19), իսկ այստեղ Քրիստոսի ծննդյամբ մանուկները սպանվեցին:

Ոմանք ասում են, թե Բեթղեհեմի մանուկները յոթանասուներկու հոգի էին, իսկ ուրիշներն էլ, թե՝ ութսունչորսը, և դրա համար Տերը նախընտրեց տասներկու աշակերտներ և ապա՝ յոթանասուներկու, որով ստացվեց ութսունչորս:

Հարց. – Իսկ ինչո՞ւ է ասում՝ «Երկու տարեկան ու դրանից ցածր»:

Պատասխան. – Բայտ որոշ աղբյուրների՝ Տիրոջ ծնունդից հետո, Օգոստինոս կայսեր հրամանով, Հերովդեսը կանչվում է Հոռոմ և այնտեղ Հյուրընկալվում երկու տարի: Այնուհետև Երուսաղեմ վերադառնալիս հիշում է մոգերի խոսքերը և հրամայում կոտորել այդ տարիքի մանուկներին, որի պատճառով էլ լացում է Ռաքելը՝ Հակոբ նահապետի կինը:

«Եվ չը ուզում միսիթարվել», որովհետեւ Բեթղեհեմի երկիրը Բենիամինի համար էր որոշված, սակայն նրա ցեղն այնտեղից վերացավ իր չարգործերի պատճառով, և Բենիամինի որդիները իրենց չարության պատճառով կոտորվեցին և ոչ թե Քրիստոսի համար (տես Դատ. Ժթ 25-29): Դրա համար էլ լալիս էր Ռաքելը և չէր ուզում միսիթարվել, որովհետեւ մա-

Նուկները, որ կոտորվեցին Քրիստոսի համար, Հուդայի ցեղից էին և ոչ թե Բենիամինի, և իր որդիները չէին:

Պատճառ ՉՈՐՐՈՐԴ ՕՐՎԱ ՏՈՆԱԿԱՏՎԱՐՈՒԹՅԱՆ

Արարչության չորրորդ օրն աննյութ լույսը միավորվեց արեգակի նյութի հետ, և լույսը նյութով հանդերձ մեկ եղավ, և միավորությունից հետո անհնար էր բաժանել լույսը նյութից: Այսպես էլ Բանն Աստված՝ անեղական Լույսը, հավիտյան անբաժանելիորեն միացավ նյութական մարմնին, ամենամաքուր Կույս Մարիամի արգանդում, և Բանն Աստված եղավ ճշմարիտ մարդ: Եվ մեզ համար ծագեց Արդարության Արեգակը բարձունքից՝ լուսավորելու մեր խավարը՝ մնալով հավիտյան անբաժանելի:

Չորրորդ օրն Աստված արարեց արեգակը, լուսինը, աստղերը և դրանցով զարդարեց երկնակամարը, որից իմանում ենք, որ մեզ անհրաժեշտ է զարդարվել առաքինությամբ, որպեսզի կարող լինենք զգեստավորվելու երկնայինով:

Այս օրն օձը սատանայի ազգմամբ խոսեց առաջին կույսի՝ Եվայի հետ, ով օձի խոսքերը որպես չարության խմոր ընդունելով՝ Եվան ցավով հղիացավ և ծնեց անօրենություն, որից մեր ամբողջ բնությունն ապականվեց: Դրա համար էլ անհրաժեշտ էր, որ երկրորդ Կույսը գերազույն լինի, հաղթի առաջին չարությանը և կամենա, որ Բանն Աստված մարմին առնի իրենից: Որովհետև երկրորդ Կույսի միջոցով մեր բնությունը հասնում է նախկին փառքին: Ուստի այս չորրորդ օրը Գաբրիելն առաքվեց Կույս Մարիամի մոտ՝ տալու նրան ավետիս՝ ծնելու Աստծու Որդուն:

Պատճառ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՕՐՎԱ ՏՈՆԱԿԱՏՎԱՐՈՒԹՅԱՆ

Արարչագործության հինգերորդ օրն Աստված հրամայեց ջրերին գուրս բերել կենդանի շունչ ունեցող զեռուններ և երկրի վրա ու երկնքի տարածության մեջ թռչող թռչուններ: Եվ հինգերորդ դարում Աստված հրամայեց Մովսեսին ավագան պատրաստել և քահանաների մարմնի մաքրության համար՝ լվացարան, սակայն դրանից առաջ ժողովրդին ծովով անցկացրեց՝ որպես օրինակ մկրտության:

Իսկ գալով նոր Կտակարանի պարգևներին՝ Սուրբ Հոգու շնորհներով ու Քրիստոսի մկրտությամբ մարդկանց համար նոր օրենքներ պայծառացվեցին, որպեսզի մարդիկ հարությունից հետո աստվածաստեղծ թերով թռչելով՝ Տիրոջն ընդառաջ ելնեն: Այլև պետք է իմանալ, որ աղավնիների

ու տատրակների հետ սողուններ ևս եղան (առն Ծննդ. Ա 20), ինչպես սուրբ առաքյալների երամում՝ Հուղան:

Ավագանի խորհուրդը հինգշաբթի օրը կատարվեց Զիթենյաց լեռան վրա՝ աշակերտների ոտքերի լվացմամբ, և նրանից դուրս եկան ոչ թե անբան թռչուններ, ինչպես արարչության հինգերորդ օրը, այլ բանական էակներ՝ Սուրբ Հոգով հրեշտակացած ու թեթևացած:

Առաջին կույսի պատճառով մեր բնությունը ոտնակոխ եղավ թշնամիներից, մենք մեր հինգ զգայարաններով մեռանք մեղքերի մեջ, և սատանայի չարությունը բարձրացավ մարդկանց որդիների վրա: Այդ պատճառով մեր Տերը, հակառակը հակառակով մերժելով, սուրբ Կույսի միջոցով զորացրեց մեր բնությունը՝ կոխկոտելու մեզ կոխկոտողներին, ինչպես և ասաց. «Ահա ձեզ իշխանություն տվեցի՝ կոխելու օձերի, կարիճների և թշնամու ամբողջ զորության վրա» (Ղուկ. Ժ 19):

Հինգերորդ օրը Քրիստոս մեր զգայարանները նորոգեց իր մկրտության շնորհով, որովհետև երբ Աստված ջրի մեջ իջավ՝ ջրերը զորացան և ծնեցին ոչ միայն թռչուններ, այլև վերստին ծննդյամբ՝ մտավոր ու բանական մարդու բնություն, որպեսզի նորաբույյա թևերով ու Սուրբ Հոգու շնորհներով բարձրանանք և խառնվենք հրեշտակների գնդերին:

Եվ ինչպես օդը չի արգելում թռչուններին թռչել, այլ ընդհակառակը՝ օժանդակում է նրանց, այդպես էլ օդային չար գերը չեն կարող արգելել հավատացյալներին ելնել և մտնել երկինք՝ Քրիստոսի մոտ:

Պատճառ Վեհերորդ Օրվա Տուակաւարության

Արարչության վեցերորդ օրն Աստված ասաց, և գոյացան ցամաքային բոլոր կենդանիները և ապա՝ մարդը: Աստված մարդուն խոսքով չարարեց, ինչպես այլ արարածներին, որոնց ասաց, և եղան, հրամայեց, և հաստատվեցին, ինչպես երկինքն ու երկիրը և այն ամենը, ինչ կա նրանց մեջ, այլ երկրից հող վերցնելով՝ իր ձեռքով ստեղծեց մարդուն, դրեց Դրախտում և մարդուն կարգեց ամբողջ աշխարհի վրա թագավոր, իսկ Դրախտը՝ որպես թագավորական պալատ:

Տոնախմբության վեցերորդ օրը կարգված է Ղազարոսի հիշատակը, որով ստուգապես իմանում ենք, որ նա, Ով վեցերորդ օրը ստեղծեց Աղամին չորս տարրերից, ինքը ծնվեց սուրբ Կույս Մարիամից և մեռելներից կանչելով չորսօրյա հանգուցյալ Ղազարոսին՝ նրան հարություն տվեց և դրանով կյանքի կոչեց ու խավարից դեպի լույս բերեց Աղամի բնությունը:

Թեև ավանդությամբ այսօր ասվում է Ղազարոսի հարության օր, սակայն սա ստուգապես խորհրդաբար է գրված այստեղ՝ որպես հիշատակ վեցերորդ դարում Աղամի բնության նորոգման։ Քանզի արարչագործության ժամանակ՝ վեցերորդ օրը Աստված ասաց. «Մարդ ստեղծենք մեր պատկերով և նմանությամբ» (Ծննդ. Ա 26), և արարեց մարդուն չորս տարրերից, այդպես և չորս օր տևեց Ղազարոսի ապականությունը։ Որովհետև հասարակաց հարության ժամանակ աշխարհի չորս կողմերից մեկտեղ պիտի հավաքվեն մեռելների մարմինները և հարություն առնեն, ինչպես Ղազարոսը, և մարդու մարմնի նյութը, բաժանվելով աշխարհի տարրերից, վերստին պիտի վերափոխվի անմահ կենդանության, մեր Տեր Հիսուս Քրիստոսի փառքի համար։

Պատճառ յոթերորդ օրվա տոնակատարության

Ինչպես արարչության ժամանակ Աստված մեկական օրով պատվեց յուրաքանչյուր արարածի ստեղծումը, այնպես էլ յոթերորդ օրը պատվեց՝ օրհնության ու հանգստի համար։ Ինչպես Մովսեսն է ասում. «Աստված օրհնեց յոթերորդ օրը և սրբագրծեց այն, որովհետև Աստված այդ օրը հանգստացավ իր բոլոր գործերից» (Ծննդ. Բ 3)։ Եվ հայտնի է, որ յոթերորդ օրը պատկերն է յոթերորդ դարի, որի ժամանակ ընտրվում են սրբերն ու արդարները, որոնց մեջ է Աստծու կամքը։ Հինգ օր Աստված միայն ինուքով արարեց արարածներին, իսկ վեցերորդ օրը ստեղծեց մարդուն և փչմամբ նրան կենդանություն տվեց։

Եվ ողորմությունը, որ Աստված կամենում էր մարդու համար անել, այն ժամանակ խափանվեց Աղամի հանցանքի պատճառով։ Սակայն Աստված ոխ չի պահում, ուստի իր մարդասեր կամքով ու գթությամբ մեր կյանքի ու փրկության սկիզբը դրեց՝ անելով մեկ օրը հազար տարի, և յուրաքանչյուր հազար տարում մեկ գործ արեց՝ առաջին արարչության օրերի օրինակով։

Արդ՝ առաջին հազարամյակում՝ դարում, որպես ամբողջ երկրի և երկնքի Տեր և Աստված, ընտրեց Սեթի հրեշտականման որդիներին և նրանցից ենոքին երկինք փոխադրեց։

Երկրորդ հազարամյակում Աստված ջրհեղեղն արեց, որպեսզի ցույց տա, որ Ով սկզբում ջրերը մեկտեղ հավաքելով ցամաքեցրեց երկիրը, նա էլ երկիրը ջրով ծածկեց նրա բնակիչների անօրենության պատճառով, սակայն գթալով՝ այն կրկին ցամաքեցրեց։

Երրորդ հազարամյակում մարդիկ դարձյալ ամբարշտացան մեղքերով ու անհավատությամբ և վախենալով Աստծուց, թե դարձյալ ջրասույզ են

լինելու, միաբանվելով շինեցին Բաբելոնի աշտարակը: Բայց Առւրք Հոգին ցրեց նրանց չար միաբանությունը՝ բաժանելով նրանց տարբեր լեզուների՝ յոթանասուներկու ազգեր դարձնելով նրանց: Սակայն իր ողորմության գութը ցույց տալով նահապետներին՝ պահեց նրանց նախկին լեզուն:

Այնուհետև չորրորդ հազարամյակում երկրի երեսը ծաղկեց Աբրահամի ծննդյամբ և նրա հավատով:

Հինգերորդ հազարամյակում Աստծու հրամանով և Մովսեսի միջոցով լույս Օրենքը խառնվեց օրինադրության դրին և լուսավորեց մարդկային ցեղը: Նույն դարում հրեաներին ետ դարձնելով Բաբելոնի գերությունից՝ նրանց հրամայեց ապրել, շրջել ու թռչել աստվածապաշտության թևերով:

Իսկ վեցերորդում ոչ թե հրամայեց, այլ ինքն Անձամբ կատարեց՝ անելով ավելին, քան առաջին արարչության ժամանակ, և խաչի վրա մեզ կենդանություն տալով՝ ասաց. «Ամեն ինչ կատարված է» (Ղովհ. ԺԹ 30): Այսինքն՝ կատարվեց այն ամենը, ինչ սկսել էր անել: Այդ պատճառով էլ խաչից մինչև երկրորդ գալուստն ասվում է յոթերորդ հազարամյակ, որն Աստծու հանգիստն է, օրհնությունը և սրբությունը՝ ի փառս Ամենասուրբ երրորդության:

ԱՆՎԱՆԱԿՈԶՈՒԹՅՈՒՆ

Պատճառ ութերորդ օրվա Տուակաւարության

Սուրբ Ծննդյան ութերորդ օրը Յիսուս Քրիստոսի անվանակոչության օրն է: Օրվա երեքսրբյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ ծնար և յայտնեցար վասն մեր, ողորմեա' մեզ»:

Ութերորդ օրվա խորհուրդը հարությունն է, քանի որ Քրիստոսս Հարություն առավ կիրակի օրը: Եվ այս օրը պատկերն է Հանդերձյալ օրվա, երբ մարդկային ցեղը պետք է գերեզմանից կանչվի հարություն առնելու:

Ութերորդ օրը Տերը պետք է լուսեղեն օթևաններում հանգըտացնի բոլոր սրբերին ու իր անունը սիրողներին՝ ըստ թլիփատության օրինակի զատորոշելով Աստծու որդիներին՝ ասելով. «Եկե՛ք, Իմ Հո՛ր օրհնյալներ, ծառանգեցն՛ք աշխարհի սկզբից ձեզ Համար պատրաստված արքայությունը» (Մատթ. 16: 34):

Տերն այն պատճառով սահմանեց ութերորդ օրը թլիփատել, որովհետեւ ութերորդ օրը թլիփատվելու են մեղավորներն արդարներից և անցնելով ձախ կողմը՝ գցվելու են անշեղ հուրը: Հին Ուխտում մանուկներին թլիփատում էին հետեւյալ պատճառներով: Նախ՝ որպեսզի Աբրահամի որդիները զանազանվեն հեթանոսներից: Երկրորդ՝ որպեսզի ավելորդ մորթի հատումով ուսուցանվի հատել և դեն գցել ավելորդ ցանկությունները: Երրորդ՝ ինչպես այդ մորթի հատումը մարդուն ոչնչով չի վնասում, այդպես էլ, եթե մեղքերից ազատվենք, ոչնչով չենք վնասի մեր հոգուն: Չորրորդ՝ քանի որ մարմնի այդ մասն է մեղքի գործիքը, ապա դրանից պետք էր հատել և ոչ թե մարմնի այլ մասերից, որով և մեզ սովորեցնում է մեղքի գործերը հատել և ամենակին դուրս գցել: Հինգերորդ՝ ծածկված մասից հատելով ցույց է տալիս, որ պետք է հատել այն մեղքերը, որոնք Աստված է տեսնում, ինչը սրտի թլիփատության խորհուրդն ունի, որովհետեւ սիրում միայն Աստված է տեսնում:

Հարց. – Ինչո՞ւ թլիփատվեց Քրիստոսը:

Պատասխան. – Նախ՝ մեզ համար թլիփատվեց և ո՛չ թե որ ուներ դրա կարիքը, որովհետեւ նա չուներ ոչ սկզբնական և ոչ ներգործական մեղքերը, և անսերմ հղությամբ Կույսի սրբված արգանդում մարդացավ: Նաև՝ Աբրահամի հետ Աստծու ուխտի ճշմարտությունը հաստատելու Համար, որպեսզի հաստատի հայրերին տված ավետիսը:

Երկրորդ՝ մեր Տերը, սա խոտան չհամարելով, հանձն առավ թլիփատվել, որովհետեւ չգարշեց իր իսկ դրած Օրենքից, քանզի այն մարդկանց

Համար դրեց: «Նաև՝ որպեսզի չբամբասվի որպես օրինազանց, ու չկարծեն, թե հակառակ է Աստծու օրենքներին, ինչպես հրեաներն ու Նրան խաչողներն ասացին. «Այդ մարդն Աստծուց չէ, քանի որ շաբաթ օրը չի պահում» (Յովի. Թ 16):

Երրորդ՝ սրանով ցույց տվեց նաև իր ճշմարիտ մարդանալը կատարյալ մարդեղությամբ, որպեսզի չկարծեն, թե թվացյալ է մարդացել, ինչպես Նրա շնորհից զրկվածներն ասացին:

Չորրորդ՝ պետք էր, որ իր իսկ կարգած օրենքներն ինքն անձամբ կատարեր ու պատվեր, որպեսզի հավատային, որ նա է Օրենքի Սահմանողը և հայրերի Աստվածը:

Հինգերորդ՝ ամենքի սրբության պատճառն ինքն է, դրա համար անհրաժեշտ էր, որ սրբության գործն իր անձում կրի:

Վեցերորդ՝ որպեսզի ցույց տա, որ ինքն Աբրահամի որդին է, ում եղավ թլփատության հրամանն ու օրհնյալ Զավակի խոստումը, որպեսզի այսպիսով ցույց տա, որ Աստծու խոստումն իրենով է կատարվում:

Յոթերորդ՝ որպեսզի ինքը կրելով թլփատությունն ու Օրենքով սահմանված նման այլ կարգերը՝ մեզ ազատի թլփատությունից ու Օրենքի ծանրությունից:

Իւթերորդ՝ որպեսզի թլփատությամբ իրեն ցույց տա որպես հրեաների եղբայր, որպեսզի Նրան չմերժեն որպես օտար՝ ըստ հետևյալ խոսքի. «Քո եղբայրների միջից քո Տեր Աստվածն ինձ նման Մարգարե պիտի մեջտեղ հանի, Նրա՞ն կլսեք» (Բ Օրենք Ժ 15):

Իններորդ՝ որպեսզի Հոր ավետիսը հաստատի, թե անսուտ է Աստծու ավետյաց խոստումը: Եվ ինչպես սա, այդպես էլ մյուսները, ուրախությամբ կատարեց, այսինքն՝ մկրտության ու շնորհի, որպեսզի ինքը լինի Սկիզբն ու Վախճանը (տե՛ս Յայտ. Ա 17) ոչ միայն ըստ Աստվածության, այլև ըստ մարդկության, ինչպես և ասում է. «Երբ ութ օրերը լրացան, Նա թլփատվեց» (Ղուկ. Բ 21):

Սասներորդ՝ առաքյալն ասում է. «Քրիստոսն է Օրենքի վախճանը» (Յոռմ. Ժ 4): Այսպիսով, հինն ամբողջովին կատարեց ու վճարեց և ապա նորի սկիզբը գրեց, այսինքն՝ մկրտության ու շնորհի, որպեսզի ինքը լինի Սկիզբն ու Վախճանը (տե՛ս Յայտ. Ա 17) ոչ միայն ըստ Աստվածության, այլև ըստ մարդկության, ինչպես և ասում է. «Երբ ութ օրերը լրացան, Նա թլփատվեց» (Ղուկ. Բ 21):

Պետք է իմանալ, որ երկու թլփատություն կա՝ հոգեսոր ու մարմնավոր:

Տերը մարմնավոր թլփատությունն ավանդեց Աբրահամին, իսկ հոգեսորը՝

սրտի թլփատությունը, ավանդեց Մովսեսին՝ ասելով. «Թլփատեցե՛ք ձեր խստասրտությունը» (Բ Օրենք Ժ 16):

Եվ Քրիստոս ոչ միայն Օրենքի, այլև հոգկոր թլփատությամբ թլփատվեց. նախ՝ թլփատեց Նրան Հայրը ծննդյան ժամանակ աղքատության սրով, ապա՝ ութերորդ օրը թլփատվեց Օրենքի սրով, այնուհետև՝ ինքն իրեն թլփատեց խոնարհության սրով, և վերջապես՝ Նրան թլփատեցին հրեաները՝ չարչարանքների, իսկ Պիղատոսի զինվորները՝ խաչի սրով:

Դարձյալ՝ Քրիստոս այժմ թլփատում է նաև իր Եկեղեցին չորս կերպով. նախ՝ բամբասողներին, ովքեր վերացնում են բարեկամությունն ու բարի համբավը: Երկրորդ՝ Հափշտակողներին, ովքեր Հափշտակում են ժամանակվոր բարիքները: Երրորդ՝ Հերետիկոսներին, ովքեր սպանում են Հոգիները: Չորրորդ՝ բռնատիրողներին, ովքեր սպանում են մարմինը:

Հարց. – Ո՞վ թլփատեց Հիսուսին:

Պատասխան. – Տիրոջ անվանյալ ծնողները թեպետև մեծամեծ խոսքեր լսեցին Նրա մասին նախ Հրեշտակից, ապա Հովիվներից ու մոգերից, սակայն չարգելեցին Նրա թլփատությունը՝ ըստ Օրենքի կարգի, և Զաքարիան՝ Հովհաննես Կարապետի հայրը, գալով նրանց մոտ, թլփատեց մեր Տիրոջը Հովսեփի բազուկների վրա՝ կոչելով Նրան Հիսուս: Սակայն Հատելով չթլփատեց Նրան, այլ ճեղքելով, ինչպես օրենք է անդրանիկների համար, որովհետև անպատշաճ էր Նրա Մարմնից կամ Արյունից մաս անջատել: Եվ այսպես՝ անդրանիկների օրենքը սահմանվեց Հատուկ Քրիստոսի համար, քանզի չէր կարելի հատել աստվածային Մարմինը:

Եվ մեր Տերը, Ով անդրանիկն էր Հոր, անդրանիկ եղավ նաև մորից: Ինչպես նաև անդրանիկն է մեռելներից հարություն առածների, այդ պատճառով էլ անդրանիկի նման ընդունեց թլփատության օրենքը:

«Հիսուս»-ը եբրայեցիների լեզվով նշանակում է փրկիչ, իսկ Հունարեն՝ բեկված Աղամի բժիշկ: Միենույն ժամանակ նշանակում է նաև փրկիչ անեծքից, մեղքերից, կուռքերից, դժոխքից ու ամեն տեսակ վտանգից, որոնցից էլ մեր Տերը մեզ փրկեց ու սատանայի խոցոտած մեր խոր վերքերը բուժեց:

ՏՆՕՐՀՆԵՔ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ

Տնօրհնեքի արարողությունը գալիս է առաքելական շրջանից: Այդ ժամանակներում առաքյալները շրջում էին տները՝ մարդկանց ավետելով Քրիստոսի ծնունդն ու Հարությունը՝ համաձայն Տիրոջ հրամանի. «Ինչպես Հայրը ինձ ուղարկեց, Ես էլ ձեզ եմ ուղարկում: Գնացե՛ք ուրեմն, աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերին» (Մատթ. 18:19): Եվ այսօր, ըստ սուրբ Եկեղեցու կանոնի, Աստվածայատնության տոնից հետո, Ծննդյան ութօրնեքին՝ հունվարի 6-ից մինչև 13-ը, Հոգևոր հովիվները շրջում են իրենց վիճակված հոտի անդամների տները, այնտեղ կատարում տնօրհնեքի կարգը և իրենց հայրական խոսքով մխիթարում, խրատում ու հոգևոր ուրախություն պատճառում իրենց հոգևոր զավակներին: Սրանով այն մեծ ու սքանչելի խորհուրդը, որն այսօր հայտնվեց, մտնում է մեր բնակավայրերը, և նա, Ում երկինքն ու երկիրը չեն կարողանում պարփակել, մտնում է մեր տուն, ինչպես մտավ Բեթղեհեմի այրը: Մեծ Արքան, մտնելով մեր ընտանիքը, սրբում և օրհնում է մեր տունը, ինչպես իր ծննդյամբ սրբեց այրը: Եվ ինչպես ծննդյան գիշերը հովիվները, Հրեշտակից ավետիս ստանալով, ընծաներով հանդերձ մտան այն այրը, ուր ծնվեց Քրիստոս, այդպես էլ այսօր Եկեղեցու հովիվները մտնում են մեր տները՝ իրենց հետ բերելով Աստծու օրհնությունները:

Քահանան տուն մտնելով տալիս է Ծննդյան ավետիսը, երգում Մովսես Խորենացու «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականը և իր քահանայական իշխանությամբ ու աստվածային հրամանով օրհնում տան ջուրը, հացը և աղը, ինչպես Քրիստոս աշխարհ գալով օրհնեց ջուրը, երկիրը և նրա պտուղները, որոնք նախկինում անեծքի տակ էին Աղամի պատճառով: Ապա քահանան օրհնված ջուրը խաչաձև ցողում է տան պատերին, ինկարկում տունը և մեր խնդրանքներն ի մի հավաքելով՝ մատուցում Աստծուն՝ մեզ համար պահպանություն հայցելով Ամենակալից:

ՏՅԱՌՆԸՆԴՆԴԱՌ

Մեր Քրիստո Աստու քառասնօրյա գալուստը Տաճար

Այս տոնը միշտ նշվում է փետրվարի 14-ին: Քահանաները զգեստավորված, խաչով, Ավետարանով գալիս են դաս «Այսօր անսկզբնական ծնունդ» օրինության երգեցողությամբ: Օրվա երեքրբյանն է: «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ Եկիր և գալոց ես, ողորմեա' մեզ»:

Այսօր կատարվում է նաև «Տյառնընդառաջի մոմի օրինության» կարգը: Քահանան օրինում է մոմերը և բաժանում ժողովրդին: Մարդիկ օրինված մոմերը վառում են ու պահում իրենց ծեռքերում՝ ինաստուն կույսերի վառվող լապտերների օրինակով, որպեսզի Տիրոջ Երկրորդ գալստյանը ինաստուն կույսերի հետ իրենք էլ արժանանան Քրիստոսին ընդառաջ ելնելուն: Արարողությունից հետո ժողովուրդն այս վառվող մոմերը տաճում է տուու¹:

Մեծ թագավորի գալստյամբ ոչ միայն երևելիներն են ուրախանում,
ովքեր մեծամեծ ընծաներով դիմավորում են նրան և նրա հետ նստելով
իրոխա գառնում, այլև աղքատներն ու տառապյալները, ովքեր ակնկա-
լում են տեսնել արքային և միայն դրանով միիթարվում: Եվ ահա՛ Տերն
իր ծնունդից քառասուն օր անց գալիս է երուսաղեմ:

Հին Ուխտում քառասուն թիվը խորհրդավոր ու նախամեծար է եղել,
այդպիսին է և նորում: Մովսեսը լեռան վրա քառասուն օր ու քառասուն
գիշեր մնաց պահեցողությամբ և ապա ստացավ Տիրոջ մատով գրված
քարեղեն տախտակները: Քառասուն տարի փորձվեց Տիրոջ ժողովուրդն
անապատում, իսկ Հեսուն քառասուն ապաստարան քաղաքներ սահմանեց:
Նաև եղիան քառասուն օր պահեց՝ արժանանալու համար Աստծու
տեսությանը:

Այսօր այս թիվը պատվի արժանացավ նաև Տիրոջ կողմից՝ իր
քառասնօրյա գալստյամբ, անապատում քառասնօրյա փորձություններով
և հարությունից հետո քառասուն օր աշակերտներին երևալով:

Այսպիսով՝ քառասուն օր Բեթղեհեմում մնալուց հետո, որով լրացան
նրանց սրբագործման օրերը, Հովսեփին ու Մարիամը, վերցնելով մանուկ
Հիսուսին, եկան երուսաղեմ: Երբ նրանք մոտեցան տաճարին, արդեն մութ
էր, և տաճարի արևելյան դուռը, որ վաղուց ի վեր փակված էր, Տիրոջ
մոտենալու պահին ինքնիրեն բացվեց, որով կատարվեց Եղեկիել մարգարեի
խոսքը. «Այդ դուռը փակ է մնալու ու չի բացվելու, նրանով ոչ ոք չի
անցնելու, որպեսզի իսրայելի Տեր Աստվածը մտնի այնտեղով: Այն փակ է
լինելու, որովհետեւ առաջնորդ իշխանն է ներսում նստելու՝ Տիրոջ առաջ
հաց ուտելու համար: Նա մտնելու է դուան կամարի տակի ճանապարհով և

¹ Զգուշացում: Խարույկի շուրջը պտտվելու՝ ժողովրդի մեջ տարածված սովորությունը, որն անում են այս տոնին, ըստ Եկեղեցական կանոնի խոտելի է՝ անթույլատրելի:

նույն ճանապարհով էլ դուրս է գալու» (Եզեկ. ԽԴ 1-3): *Այսինքն՝ ըստ մարդարեռության՝ տաճարի արևելյան դուռը բացվելու էր միայն իսրայելի Աստծու առջեւ, և այդպես էլ եղավ:*

Եվ դռները բացվելուն պես մեծ դղրդյուն եղավ քաղաքում, որից բնակիչները դուրս վագեցին իրենց տներից, և քանի որ արդեն մութ էր, վառվող ջահեր ու ճրագներ ձեռքներին՝ գնացին տաճար՝ տեսնելու տաճար Եկողին և միմյանց ձայն տալով ասացին. «Տերն անցավ այս դռնով»: Եվ մտնելով տաճար՝ տեսան Հովսեփին ու Մարիամին՝ Հիսուս Մանկանը գրկում:

Այսօր մենք նույն օրինակով ենք կատարում Տյառնընդառաջի նախատոնակը: Երեկոյան վառվող ջահերով ենք սկսում խորհրդի կատարումը, որովհետև մեր Տերը երեկոյան տաճար եկավ, քանի որ ժամանակը (քառասուն օրը) երեկոյան լրացավ, նաև Նրա գալուստը դարի երեկոյին եղավ:

Հարց. – Իսկ ինչո՞ւ ենք ջահեր և խարույկներն վառում:

Պատասխան. – Նախ՝ որովհետև հեթանոսներն Աստծու պատիվը կրակին էին մատուցում, իսկ մենք ճրագներ վառելով՝ կրակը ցույց ենք տալիս որպես Քրիստոսի ծառա և բերում ենք Աստծուն ծառայեցնելու: Ինչպես երբայեցի մանուկները ծառի ոստերը Քրիստոսին ընծայեցին, նույնպես և մենք կրակն ենք ընծայում: Իսկ կրակի վրայից թռչելով այն ոտնատակ ենք տալիս՝ ասելով. «Դու աստված չես, այլ նա է Աստվածը, Ով քառասուն օրական հասակում եկավ տաճար»: Նաև Տերն է ասում. «Երկրի վրա կրակ գցելու եկա» (Ղուկ. ԺԲ 49), որը բորբոքվեց շատերի մեջ Քրիստոսի սիրո համար: Իսկ Երկրորդ գալստյան ժամանակ կրակը պիտի գնա Նրա առջելից:

Քրիստոս Օրենքի ու մարդարեռությունների լրումն է: Առաքյալը վկայում է, որ Օրենքը դաստիարակ է ու սնուցիչ, սակայն այն անկարող էր մարդկանց արդարացնել ու փրկել (տե՛ս Գաղատ. Գ 24), ինչպես նաև ծանր էր, և մարդիկ չէին կարողանում այն կատարել: Եվ երբ մանկությունն անցավ, և եկավ կատարյալ Հոգեոր հասակը, Աստծու Որդին եկավ աշխարհ և մտավ Օրենքի տակ, որպեսզի գնի ու ազատի նրանց, ովքեր Օրենքի տակ էին, և ազատելով տվեց կարող ու կատարյալ հավատ, որպեսզի հավատով արդարանանք, ինչպես ասում է առաքյալը (տե՛ս Գաղատ. Գ 8):

Այսպիսով, Քրիստոս նախ ազատեց մարդկանց Օրենքի ծանրությունից՝ ինքը կատարելով ամբողջ Օրենքը, և ապա վերցրեց մեղքերի բեռը՝ ասելով. «Եկե՛ք ինձ մոտ, բոլոր Հոգնածներդ ու բեռնավորվածներդ, և Ես ձեզ կհանգստացնեմ: Իմ լուծը ձեզ վրա վերցրեք... որովհետև Իմ

լուծը քաղցր է, և իմ բեռը՝ թեթև» (Մատթ. ԺԱ 28-30), որը նոր օրենքն է: Դրա համար Քրիստոս, իր քառասնօրյա գալստյամբ տաճար, պատվում է Օրենքը՝ մտնելով Օրենքի տակ, և նոր օրենքով մեզ ժառանգորդ է դարձնում երկնալոր պարգևներին:

Արդ՝ քանի որ Տերը պետք է կատարեր ամբողջ Օրենքը, իսկ Մովսեսի օրենքի պահանջներից մեկն էլ այն էր, որ քառասուն օրական մանուկը բերվի տաճար, դրա համար էլ մանուկ Հիսուսին երուսաղեմ են տանում՝ Տիրոջը ներկայացնելու, ինչպես գրված էր Օրենքում. «Ամեն արու զավակ, որ արգանդ է բացում, Տիրոջ համար սուրբ պիտի կոչվի: Եվ Օրենքում ասվածի համաձայն՝ ընծա պետք է մատուցել մի զույգ տատրակ կամ աղավնու երկու ձագ» (Ղուկ. Բ 22-24):

Օրենքում ասվում է նաև. «Եթե որևէ կին հղիանա և արու զավակ ծնի, թող նա անմաքուր համարվի յոթ օր: Ութերորդ օրը թող նա թլփատի իր որդուն: Դրանից հետո երեսուներեք օր էլ նա պիտի սպասի, որպեսզի մաքրվի իր արյունը: Նա անմաքուր բանի ձեռք չպիտի տա և սրբարան չպիտի մտնի, մինչև լրանան նրա մաքրվելու օրերը» (Ղատ. ԺԲ 1-5): Եվ ըստ սրա՝ կինն անմաքուր է համարվում քառասուն օր, եթե արու զավակ է ծնում և ուժուուն օր՝ եթե աղջիկ²: Սա բխում է հետեւյալից: Եթե մեկը մեռած մարդու դիակին դիպչի, ապա նա անմաքուր կլինի յոթ օր: Նա պետք է մաքրվի երրորդ և յոթերորդ օրերը, որից հետո մաքուր կհամարվի (տե՛ս Թվեր ԺԹ 11-12):

Սա ասված է բոլոր կանանց համար, սակայն ոչ՝ Մարիամի, քանզի Աստվածածին Կույսն այս օրենքի տակ չէր, նա անախտ էր, բոլոր կրքերից մաքուր և սրբության աղբյուր եղավ՝ ծնելով կուտությամբ: Նա արուի սերմով չհղիացավ, այլ առանց սերմի, և ոչ էլ քառասուն օրում նրա որովայնի Պտուղը ստացավ բանական հոգին, այլ այն նույն պահին եղավ, երբ Բանն Աստված իշակ Կույսի արգանդը և Կույսի արյունից վերցնելով՝ միացրեց իր բնությանը՝ բանական հոգով Մարդ դառնալով, նոր ու սքանչելի միավորումով, մտքով ու կատարյալ անդամներով, ինչպես քառասնօրյա մանուկը: Մարմնի ձևավորվելը, չնչավորվելը, կենդանանալը,

² Ըստ Եկեղեցու հայրերի՝ երբ սերմն ընկնում է կնոջ արգանդը, քառասուն օր անշունչ է մնում, որից հետո սաղմի մեջ տպավորվում է բանական հոգին: Իսկ քանի դեռ բանական հոգին նրանում չէ, կինը մեռելակիր է համարվում: Յետևաբար, զավակի ծնելուց հետո մայրն այնքան օրեր, որ մեռելակիր է եղել, անմաքուր է համարվում, և նույնքան օրեր էլ պետք է մաքրագործվի: Եվ ըստ սրա՝ կինն անմաքուր է համարվում քառասուն օր, եթե արու զավակ է ծնում, և ութսուն օր՝ եթե աղջիկ: Քանի որ արուն կնոջ աջ կողմում է լինում՝ յարդին մոտիկ, ուստի արագ է աճում, իսկ եգը լինում է ծախ կողմում՝ փայծաղին նոտ՝ որի սառը բնության պատճառով դանդաղ է հասունանում՝ ութսուն օր հետո է ստանում բանական հոգին (Գրիգոր Տաթևացի, «Զմերան հատոր», Քարոզ Տյառնընդառաջի):

Հոգի ստանալը և աստվածանալը եղան նույն պահին՝ Սուրբ Հոգով։ Հետեաբար, Նրա մայրը քառասուն օր մեռելակիր չի եղել։ Տերը Կույսի արգանդում մարմնավորվեց հոգու և մարմնի բոլոր զգայարաններով, ինչ պատճառով էլ երկրորդ Աղամ կոչվեց։

Արդ՝ Կույսը կարիք չուներ Օրենքի պահանջով քառասուն օր պահել մաքրագործվելու համար, բայց որպեսզի հենց սկզբից Մովսեսի օրենքին հակառակ ու Օրենքը խախտող չերեար, և քանի որ շատերը չգիտեին Նրա անսերմ հղության ու անարյուն ծնունդի մասին, հանձն առավ կատարելու սրբության օրենքը, այդ պատճառով էլ Բեթղեհեմում մնաց քառասուն օր, ապա եկավ տաճար։

Սա արեց նաև, որ իր խոնարհությամբ օրինակ լինի այլոց։ Քանզի եթե նա, ով ծնեց Աստծու Որդուն, սրբվեց, ապա որքան առավել պետք է սրբվեն նրանք, ովքեր մեղքերի մեջ ծնեցին։ Եվ ինչպես Որդին, կարոտ չլինելով թլիփատության, խոնարհությամբ թլիփատվեց, որպեսզի կատարվի Օրենքը, նույնպես էլ Կույսը, կարոտ չլինելով մաքրագործման, մաքրագործվեց։ Եվ ինչպես Կույսը, սուրբ լինելով, առանց սրբվելու չմտավ տաճար, այդպես էլ ոչ ոք չի կարող մտնել Արքայության վերին տաճարը՝ առանց կատարելապես սրբվելու մեղքերից։

Դարձյալ՝ սա արեց, որպեսզի ծածկվի սատանայից Մանկան Աստվածությունը, և դրա համար էլ, ուր երեսում էր աստվածության նշանը, այնտեղ երեսում էր նաև Նրա մարդկությունը, որպեսզի սատանան տարակուսանքների մեջ լինի։ Ինչպես ծնունդի ժամանակ, երբ հրեշտակներն իջան և «Փառք ի բարձունս» երգեցին՝ որպես Նրա աստվածության նշան, այդպես էլ ութ օր հետո թլիփատվելով՝ իր մարդկությունը ցույց տվեց։ Որպես Նրա աստվածության նշան՝ աստղն առաջնորդեց մոգերին՝ Նրա ծնունդն ավետելով, նույնպես և Նրա սուրբ մայրը քառասուն օր հետո սրբվեց՝ որպես նշան Նրա մարդկության։

Դարձյալ՝ երբ Տերը մկրտությունից հետո անապատում քառասուն օր պահեց, սատանան ենթադրեց, թե նա Աստծու Որդին է, իսկ երբ քաղցեց, մտածեց, թե Որդին չէ։ Նույնպես և մկրտության ժամանակ, երբ սատանան լսեց Զայնը, թե Դա է Հոր սիրելի Որդին, խորհեց, թե նա Աստծու Որդին է, սակայն երբ նա Հովհաննեսից մկրտվեց, մտածեց, որ Աստծու Որդին չէ։ Այս բոլորի համար Կույսը եկավ տաճար սրբվելու։

Օրենքի գրքում գրված է. «Ամեն արու զավակ, որ արգանդ է բացում, Տիրոջ համար սուրբ պիտի կոչվի»։ Այս օրենքը գրվեց, երբ Տերը հարվածեց Եղիպատոսի անդրանիկներին՝ դրանով սրբելով Իսրայելի անդրանիկներին։ Ապա ասաց. «Ինձ նվիրաբերի՛ր բոլոր իսրայելցիների անդրանիկ զավակներին» (Ելք ԺԳ 2), և նրանք սրբվեցին Տիրոջ համար։

Եվ քանի որ մեր Տերը Հոր անդրանիկ ծնունդն է հավիտենականությունից առաջ և անդրանիկ ծնվեց նաև մորից ժամանակի մեջ, դրա համար քառասուն օրականում բերվեց տաճար՝ նախ որպեսզի ինքը կատարի իր իսկ դրած Օրենքը, երեւ Նրա ճշմարիտ մարդեղությունը, և ապա՝ որպեսզի Հոր առջե բերելով Աղամի մեղավոր մարմինը՝ այն սրբի: Տերը լինելով մեր Գլուխը՝ իր թլփատությամբ մեզ հոգով թլփատեց, մկրտությամբ մաքրեց, իսկ ընծայվելով՝ մեզ՝ իր անդամներին, Հորը ընծայեց: Ինքը, մանուկ լինելով, Ընծա եղավ և մեր Գլուխը լինելով՝ եղավ Ընծայող, ինչպես նաև Աստված լինելով՝ Հոր և Սուրբ Հոգու հետ միասին եղավ ընծաներն Ընդունող:

Մենք՝ քրիստոնյաներս, բոլորս էլ որպես անդրանիկ ենք ծնվում սուրբ Ավագանից, քանզի Ավագանը միայն անդրանիկ է ծնում՝ լինելու Աստծու որդի և Քրիստոսի եղբայր, և այսուհետեւ ոչ միայն արգանդ բացող արուն է Աստծու սուրբ Կոչվում, այլև բոլոր մկրտվածները: Որովհետեւ չկա տարբերություն ո'չ հրեայի, ո'չ հեթանոսի, ո'չ ծառայի, ո'չ աղատի, ո'չ էգի միջն, որովհետեւ մենք բոլորս էլ մի ենք Հիսուս Քրիստոսով (տե՛ս Գաղատ. Գ 28):

Եվ քանի որ անդրանիկն Աստծու բաժինն է, հրամայվեց նաև Աստծուն պատարագ մատուցել՝ զույգ տատրակ կամ աղավնու երկու ձագ: Սա անդրանիկների հատուկ պատարագը չէ, այլ այսպես աղքատների համար կարգվեց, իսկ հարուստներին, ըստ կարողության, հրամայվեց մատուցել հորթ, նոխազ կամ խոյ: Մեր Տերն աղքատության պատճառով աղավնի և տատրակ ընծայեց՝ որպես վայելուչ պատարագ մատուցելով անմեղին ու ողջախոհին: Տերն աղքատների համար նախատեսված ընծաներով եկավ տաճար, քանզի ծնվեց գոմում, աղքատ մորից և դրվեց մսուրի մեջ՝ տուն չունենալու պատճառով, ապա խանձարուրով պատվեց, որովհետեւ չունեին թանկագին հանդերձներ: Ինչպես ասում է առաքյալը. «Մեծատունը մեզ համար աղքատացավ» (Բ Կորնթ. Ը 9):

Տատրակը ողջախոհ թռչուն է, որը խորհրդանշում է Քրիստոսին: Այն այնքան ողջախոհ է, որ երբ զույգերից մեկը մահանում է, մյուսն առանց ընկեր է մնում մինչև մահ. սա խորհրդանշում է նաև նրանց, ովքեր մեղքից հեռանալով՝ այլևս մեղք չեն գործում: Աղավնին հանդարտ թռչուն է և արծվի պես գիշատիչ չէ, որը Քրիստոսի հեզությունն է ցույց տալիս: Նաև՝ աղավնին խնամում է ու սնուցանում ոչ միայն իր ձագերին, այլև օտարների, ինչպես և մեր Տերն իր գութը տարածում է ոչ միայն արդարների, այլև մեղավորների վրա: Աղավնիները նաև միամիտ են ու երամով են շրջում, որը խորհրդանշում է հավատացյալների բազմությունը:

ՄԻԱԿՈՒ ԾԵՐՈՒՆԵՐ ՕՐՀԱԿԱՅՈՒՆ

ԹԵՎԵԿԵՄ ՏԵՐՆ ԱՊՔԱՄԱԹԻ ԿԵՐԱՊԱՐԱՆՔՈՎ ԵԿԱՎ, ՍԱԼԿԱՅՆ ՀԺՄԱՔԳՎԵՑ ՆՐԱ ԱՍՏՎԱՃՈՒԹՅՈՒՆԸ, ՔԱՆԳԻ ՍԻՄԵՈՆԸ, ՈՐ ԱՊՀՎԱՃ էր ԵՐԿԱՐ ՄԱՐԻՆԵՐ, ՐՆԴԱՊԱՃ ԳՎԱԼՈՎ ԿՈւՍԱՋԻՆ ՄԱՆԿԱՆԸ, ՎԵՐԾՐԵՑ ՆՐԱՆ ԻՐ ԳԻՒՐԿԸ և ԱՍՏՎԱՃ ԴՎԱՓԱՆԵԼՈՎ՝ օՐՀՆԵց: ՍԻՄԵՈՆԻ ԾՆՈՂՆԵՐԻ և ՆԱԽՆԻԽՆԵՐԻ մասին ԱՎԵՏԱՐԱՆՈՒՄ ոչինչ չի հիշատակվում, ինչպես օրինակ ՄԵԼՔԻՄԵՂԵԼԻ, ՂԱՂԱՐՈՒՄ և այն երիտասարդի, ով մերկացավ հանդերձներից (տե՛ս Մարկ. ԺԴ 51): Ավետարանը ոչինչ չի ասում նաև ԿՈՒՄՍԻ ԾՆՈՂՆԵՐԻ մասին, որովհետեւ գովաբանվում է աստվածազգյաց անձանց առաքինությունը և ո՛չ թե արյունը: ՍԻՄԵՈՆԻ ՄՈՎՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱԳԵՆԵԼՈՒ ՎԻՓԻՄԱՐԵՆ ԱՎԵՏԱՐԱՆԸ ՆՐԱ մասին գրում է որպես ԱՍՏՈՒ ԵՐԿՈՒՊԸՆ ՈՒՆԵՑՈՂ և ՀՈԳՈՎ ԼԵՎԱՃ անձնավորության, որն ավելի փայլուն նկարագիր է, քան այն, թե որ ցեղից է: Որովհետեւ ուր ԱՍՏՈՒ ՀՈԳԻՆ է, այնտեղ կա ազատություն, պայծառություն և մեծամեծ բաների տեսություն: Եվ ՍԻՄԵՈՆԸ պայծառ կերպով տեսնում էր իմանալի Լույսը, ինչպես հայելու մեջ, և ակնկալում երուսաղեմի մխիթարությունը:

Հստ ավանդության՝ նա յոթանասուներկու թարգմանիչներից էր, ովքեր Եղիպտոսի Պաղոմեոս Եղեայրասեր թագավորի հրամանով Հին Կոտակարանի գրքերը երբայեցերենից հունարեն թարգմանեցին: Դա եղավ Եղիազար քահանայապետի օրերին, երբ հրավիրվեցին հսրայելի տասներկու ցեղերից վեցական բանիմաց և ընտիր այրեր, և Սիմեոնն այդ ժամանակ տակավին երիտասարդ էր: Թագավորի հրամանով յուրաքանչյուր թարգմանչի Փառան Կղզում առանձին սենյակի մեջ էին պահում, որպեսզի միմյանց հետ չխորհրդակցեն, և թարգմանությունն անաղարատ լինի: Նրանցից յուրաքանչյուրը Սուրբ Հոգու ներգործությամբ յոթանասուներկու օրում ամբողջ մատյանը թարգմանեց, և բոլորի թարգմանություններն էլ նույնը եղան՝ և՛ մտքով, և՛ խոսքերով, որովհետեւ թարգմանությունը մարդկային իմաստությամբ չեղավ:

Երբ թարգմանելիս Սիմեոնը հանդիպում է Եսայի մարդարեի հետեւյալ խոսքին. «Ա, Կա կույսը պիտի հղիանա ու որդի ծնի» (Եսայի Է 14), տարակուսում է, թե Հնարավոր է, որ Հեթանոսները չհավատան այս խոսքերին, և ջնջում է իր գրածը: Սակայն այնուհետեւ խորհում է, որ իր ընկերներն այնպես կդրեն, իսկ ինքը՝ ոչ, որի պատճառով էլ նրանց միջև տարածայնություններ կառաջանան և հակառակություններ կլինեն մարդարեության հարցում: Ապա Սիմեոնը քուն է մտնում և արթնանալով տեսնում, որ իր ջնջածը նորից գրված է նույն տեղում ոսկյա տառերով: Այս տեսնելով՝ նա արտասվում է ամբողջ օրն ու դրան հաջորդող գիշերը և երանի

տալիս նրանց աչքերին, ովքեր պիտի տեսնեն կուսածին Մանկանը և գլկեն նրան:

Քանի որ Սիմեոնը ոգևորվել էր մանկացյալ Աստծուն տեսնելու իր բաղձանքով, և որովհետև շատ հեռու էր այդ օրն իր ապրած ժամանակներից, Հոգին հաճեց իրականացնել արդարի ցանկությունը և պահեց նրա մահկանացու բնությունը, որպեսզի չմահանա: Նույն Զորությունը, որ սկզբում անմահ ստեղծեց մեր բնությունը և անհնագանդության պատճառով այն մահկանացու դարձրեց, նույն Զորությունն այդ օրը զորացրեց մահկանացուին՝ արձանանալու մահվան դեմ, որպեսզի մնա, սպասի ու տեսնի նրան, Ով վերացնելու էր մահվան թագավորությունը, որովհետև նա էր լինելու հսրայելի և բոլոր նրանց միմիթարությունը, ովքեր հավատով կանչվեցին:

Եվ Հոգին, որ թարգմանիչների վրա էր և կատարում է իր երկյուղածների կամքը, ասում է նրան. «Մահ չես տեսնի, մինչև տեսնես Տիրոջ Օծյալին»: Այս խոսքերը նրան հավասարեցնում են մարդարեների հետ, որովհետև վերջիններս ցանկացան, սակայն չտեսան, իսկ Սիմեոնը տեսավ և առաքյալների հետ երանելի եղավ՝ ըստ Տիրոջ խոսքի. «Երանի է ձեր աչքերին, որ տեսնում են, ու ձեր ականջներին, որ լսում են: Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ շատ մարդարեներ ու արդարներ ցանկացան տեսնել, ինչ որ դուք տեսնում եք, բայց չտեսան» (Մատթ. Ժ4 16-17):

Ծերը շատ նորածինների հետեւեց՝ տեսնելու, թե ով կազատի իրեն իր ծերությունից, և շատ տքնեց փնտրելով Տիրոջն աշխարհի ճանապարհներին: Եվ երեք հարյուր քառասունչորս տարի անց կատարվում է նրա բաղձանքը, երբ քառասունօրյա Օծյալ Հիսուս մտնում է տաճար: Այդ օրը Սուրբ Հոգին կանչում է Սիմեոնին՝ ասելով. «Արի՛, ծեր, գնա՛ տաճար և տե՛ս՝ այն, ինչը ցանկացար. ահա՛ Կույսը և իր Որդին»: Եվ քանի որ Սիմեոնն իր կամքն ու հոժարությունն ամբողջովին հանձնել էր Աստծուն, դրա համար էլ Հոգով եկավ տաճար և նույն Հոգով ճանաչեց կապանքներից Արձակողին և մարմնավորված Աստծուն:

Սիմեոնը, Մանկանը խնդությամբ վերցնելով իր գիրկը, քերովբեական աթոռ եղավ երկրի վրա: Քանի որ Սուրբ Հոգին նրա վրա էր, իսկ Որդին՝ գիրկը, ապա Հայրը նույնպես այնտեղ ներկա էր, քանզի ուր Հոգին ու Որդին են, այնտեղ նրանց հետ է նաև Հայրը: Մանկանը գրկելով՝ Սիմեոնը գրկեց բյուրավոր հրեշտակներից Օրհնվածին և անհամար հրաբուն զորքերի կողմից երկրպագվողին: Նա, Ով լցնում էր երկինքն ու երկիրն իր կամքով, Սիմեոնի գրկում տեղավորվեց:

Գրկելով Մանկանը՝ Սիմեոնը նախ գոհացավ Տիրոջից, որ այդքան ժամանակ իրեն պահեց ու արժանացրեց տեսնելու նրան, Ով անտեսանելի

Էր հրեշտակների համար և Ում ցանկանում էին տեսնել բոլոր մարդարեները, սակայն երկնչում էին: Ապա օրհնեց Աստծուն՝ խոսելով Մանկան հետ ո՛չ իբրև մանուկի, այլ իբրև Աստծու՝ Նրա, Ով իշխում է ամեն ինչի վրա:

Սիմեոնն օրհնեց բարերար Հորը՝ բոլորիս Աստծուն, Ով գթալով իր արարածներին՝ առաքեց մեր Փրկչին ու Բժշկին՝ Բանն Աստծուն՝ գտնելու իր մոլորված հոտն ու կորած պատկերը և փրկելու մարդկային ցեղը մեղքերի մահից: Օրհնեց Նրան, Ով մեծ Լույս ծագեցրեց՝ լուսավորելու մեղքերի մեջ խավարածներիս և մահվան ստվերում նատածներիս: Օրհնեց Աստծուն, որ է և էր և որ երեաց որպես բարերար ու մարդասեր և առնելով ծառայի կերպարանք ու մարդանալով՝ նրա գրկում հայտնվեց որպես քառասնօրյա մանուկ, և այդ գիրկն Աստվածության ընդունարան եղավ: Գոհությամբ օրհնեց նաև Սուրբ Հոգուն, Ով գթացող է և նախախնամող, որ այսքան ժամանակ իրեն պահեց մարմնում, մինչև որ ցույց տվեց բաղձալի Փրկչին:

Եվ ապա խնդրեց իրեն արձակել կապանքներից. «Այժմ, ո՞վ Տեր, խաղաղությամբ արձակիր Քո ծառային ըստ Քո խոսքի» (Ղուկ. Բ 29): Կապանքները երեքն էին, նախ՝ Օրենքը, որից ազատվեցինք Ավետարանի նորոգությամբ, ապա ազատվեցինք մեղքերի կապանքներից՝ արդարությամբ և մահկանացու կյանքից՝ անմահությամբ:

Դարձյալ՝ Սիմեոնը «արձակի՛ր ինձ» ասելով խնդրում էր իրեն ազատել այս դժվարակիր, տաժանելի ու տաղտկացած մարմնից՝ իբրև բանտից: Նա բազում պատճառներով հանդերձալ կյանքը խաղաղություն է կոչում այս կյանքի նկատմամբ. նախ՝ որովհետեւ մենք ցավով ու երկունքով ենք մտնում այս կյանք՝ ըստ հետեյալ խոսքի. «Յավով երեխաներ պիտի ծնես» (ԾԱՅ. Գ 16), իսկ այն կյանքն անցավ է ու առանց ախտի: Երկրորդ՝ այս կյանքը լի է երկյուղով՝ թշնամիների ու գազանների պատճառով, իսկ այնտեղ չկա երկյուղ, այլ փառքի անանց վայելում: Երրորդ՝ այս կյանքում մարդիկ միմյանց խաբում են, և ուժեղը հաղթում է տկարին, իսկ այնտեղ չկա խաբեություն, և արդարից ոչինչ չեն խլում: Չորրորդ՝ այս կյանքում մեկ մեղքերի մեջ ենք լինում, մեկ էլ՝ արդարության, մեկ՝ աղքատության մեջ, մեկ էլ՝ հարստության, իսկ այնտեղ չկան փոփոխություններ, որովհետեւ այն կյանքն անանց է ու հավիտենական:

Հինգերորդ՝ այստեղ կարոտ ենք ամեն ինչի, և ինչ էլ որ տրվի, դարձյալ տրտմում ենք, իսկ այն կյանքում ոչ ոք կարիքի մեջ չի լինելու, բացի մեղավորներից: Վեցերորդ՝ այստեղ հեշտությամբ են կորչում մեծությունն ու ուրախությունը, իսկ երբ հասնենք այն կյանքն թագա-

վորությանը, ապա ոչ մի բարիք չի պակասելու: Յոթերորդ՝ այստեղի բարիքները մենք ենք վաստակում, իսկ այնտեղ Աստված է մեզ բարիք տալու: Ութերորդ՝ այստեղ ուրախությունը մասնակի է լինում, այսինքն՝ կա'մ հոգեոր, կա'մ մտավոր, կա'մ էլ մարմնավոր, իսկ այնտեղ ամբողջական է լինելու՝ և' հոգեոր, և' մտավոր, և' մարմնավոր:

Իններորդ՝ այստեղ մահվամբ ապականվում ենք, իսկ այնտեղ մահն է ապականվում: Տասներորդ՝ այստեղ հակամարտություն կա հոգու և մարմնի միջև. հոգին մարմնի հակառակն է ցանկանում, իսկ մարմինը՝ հոգու (տե՛ս Գաղատ. Ե 17). իսկ այնտեղ վերանում է այս խռովության պատճառը, և խաղաղություն է լինում սրանց միջև: Դրա համար էլ ծերունին աղաչում է, որ Տերը նրան արձակի. «Արձակի՛ր, ամենակա՛լ Աստված, Օրենքի ծառայությունից Քո Որդու հաղթության փառքով և քանդի՛ր դատապարտության կապանքները Քո տնօրինությամբ: Բա՛նն Աստված, մարմնանալով նորոգի՛ր մեր հոգին ու մարմինը: Առ'ւրբ Հոգի, Քո մշտնջենավոր պարգևներով լցրո՛ւ մեր կյանքն Ավագանից ծննդյամբ, որն անշարժ է ու անսասան»:

Նա այդպես էր ասում, որովհետև հոգու աչքով տեսնում էր նորածին Մանկանը՝ աստվածային իմանալի Հուրը: Սիմեոնն այդ օրերին խոր ծերության մեջ էր, ինչ պատճառով էլ տաղտկացած էր թախծալից կյանքից ու արձակում էր խնդրում՝ ասելով. «Որովհետև աչքերս տեսան Քո փրկությունը» (Ղուկ. Բ 30): Սրանով այն մասին է ասում, ինչը պիտի կատարվեր խաչի վրա, ինչը պատրաստված էր աշխարհի սկզբից և հայտնվեց վերջին ժամանակներում՝ բոլոր մարդկանց ազատության համար:

Եվ ապա շարունակում է. «Լույս, որ կլինի հայտնություն հեթանոսների համար» (Ղուկ. Բ 32): Հստ Հովհաննեսի «Այդ լույսն էր ճշմարիտ Լույսը, որ լուսավորում է ամեն մարդու, որ գալու է աշխարհ» (Յովի. Ա 9): Եվ որպեսզի չկարծեն, թե միայն հրեաների համար է եկել, ավելացնում է. «Լույս հեթանոսների համար»՝ հայտնելով, որ խաչից ու հարությունից հետո ծագելու է նաև նրանց վրա: Այս Լույսով վերացավ կռապաշտության գիշերը, փարատվեց մեղքերի խավարը, մարդկանց վարքը դեպի հոգեռը փոխվեց, և մարդիկ անդիտությունից դեպի իմաստության լույսը գնացին: Եվ հեթանոսների անհայտ և ծածուկ հավատն ու ջերմ սերը, որ ունեին առ Աստված, հայտնվեց այս ճշմարիտ Լույսով:

Եվ փառք իսրայելի Քո ժողովրդի համար (Ղուկ. Բ 32) – Որովհետև նրանցն էին որդեգրությունն ու կտակարանները, նաև ավետիսը և ինքը՝ Քրիստոս ըստ մարմնի, Ով հավիտյանս օրհնյալ Աստված է ամենքի համար: Սակայն հրեաները չկամեցան հաղորդվել նրա փառքին, այլ խստարտությամբ նրան արհամարհեցին, և Տերը հայտնեց իր փառքը

Հեթանոսներին, ովքեր Նրան հավատացին և Նրանով ապրելով՝ մնացին Նրա փառքում:

Նրա հայրն ու մայրը զարմացած էին այն խոսքերի համար, որ ասում էին Նրա մասին (Ղուկ. Բ 33) – ինչպես մենք ենք Աստծուն Հայր կոչում ոչ բնությամբ, այլ Նրա գիտության ու խնամակալության համար, նույնպես և Հովսեփը, խնամք տանելով Մանկան ու Կույսի համար, Տիրոջը հայր անվանվեց, որովհետև վկայեց Նրա մարդեղության ու Կույսի մաքրության մասին: Արդ՝ եթե Նրա մայրը, ով ծնեց ու սնուցեց Նրան, զարմանում էր, ապա մարդկանցից էլ ո՞վ կհամարձակվի ինչ-որ բան փորձել իմանալ ու ասել: Եվ ո՞վ գիտի Նրա միտքը, կամ ո՞վ եղավ Նրան խորհրդակից, որովհետև անքննելի է Նրա մարդեղությունը և անհայտ՝ անգամ հրեշտակներին: Նրանք կարծում էին, թե իր հոր՝ Դավիթի նման թագավորելու է Հակոբի տան վրա, և չգիտեին, որ աշխարհի Արարիչն է՝ բովանդակված մարմնի մեջ: Տերը «ծնողներից» իրեն ծածկեց, որպեսզի կարողանային բնակվել իր հետ, որովհետև եթե Մարիամն իմանար, որ նա է ամենակալ Աստվածը, ապա ինչպես կարող էր Նրան իր գիրկն առնել ու կաթով սնել կամ որպես մայր Նրանից ծառայություններ ընդունել: Եվ ոչ միայն նրանցից էր ծածկված, այլև առաքյալներից, ինչպես և գրված է: «Ծածկված էր նրանցից, որ չիմանան» (Ղուկ. Թ 45): Արդ՝ Սիմեոնի, Զաքարիայի ու Հովհաննեսի միջոցով իմացվեց, որ նա է Տերը, սակայն այնքանով, որքանով բավական է արդարների ցանկացածն իրականացնելու համար:

Սիմեոնը նրանց օրհնեց և ասաց Նրա մորը՝ Մարիամին (Ղուկ. Բ 34) – Սիմեոնը նրանց օրհնեց այն օրհնությամբ, որ սահմանել էին Աբրահամն ու Հայրերը, ովքեր չեղան ապերախտ, այլ ընդունեցին Աստծուն, փառավորեցին Նրան և եղան ողջ աշխարհի օրհնության պատճառ: Սիմեոնն օրհնեց Մարիամին, որովհետև ծնեց աշխարհի Փրկչին, իսկ Հովսեփին՝ որովհետև եղավ սպասավոր ու խնամածու անճառ խորհրդին:

Ահա սա նա է, Ով պատճառ է դառնալու Խսրայելի մեջ շատերի անկման ու բարձրացման և նշան՝ Հակառակության (Ղուկ. Բ 34) – «Հակառակության նշանը» Տիրոջ խաչն է, որովհետև, ըստ առաքյալի խոսքի, խաչը հրեաների համար գայթակղություն է և հեթանոսների համար՝ հիմարություն, իսկ մեզ՝ հավատացյալներիս համար՝ Աստծու զորությունը և իմաստությունը (հմնտ. Ա Կորնթ. Ա 22-25):

Դարձյալ՝ ովքեր Նրան պատշաճ հավատ ընծայեցին, կանգնեցին և հաստատուն մնացին վեմի վրա, իսկ ովքեր անհավատությամբ վարակված խոտորվեցին Նրանցից, գլորվելով ծածկվեցին խավարի խորքերում, ինչպես դպիրներն ու փարիսեցիները, և սա հայտնի է մարդարեի խոսքից. «Սիոնի

Հիմքում պատվական ու ազնիվ անկյունաքար եմ դնում, և ով հավատա նրան, չի ամաչի» (Եսայի ԻՇ 16): Նաև՝ «Ահավախիկ դնում եմ Սիոնի մեջ քար գայթակղության և վեմ գլորման, և ամենայն ոք, որ հավատա նրան, չի ամաչելու» (Յօն. Թ 33):

Այստեղ նաև հրեաների անկման մասին է ասում, ովքեր եղան ուրացող ու աստվածամարտ և բախվելով վեմին՝ փշրվեցին: Նրանք, այնքան սքանչելիքներ տեսնելով և ունենալով Օրենքն ու մարգարեռությունները, անհավատ մնացին, իսկ հեթանոսները, առանց տեսնելու այդ սքանչելիքները և առանց մարգարեների, միայն լսելով առաքյալների քարոզները, հավատացին ու դրանով փրկվեցին: Արդ՝ ինչը մարգարեները կանխասացին ծածուկ խորհրդով, նույնը Սիմեոնը հայտնապես ասաց մեր Տիրոջ համար:

Իսկ քո հոգու միջով սուր պիտի անցնի (Ղուկ. Բ 35) – *Սուրը տրտմությունն է: Կույսը ծնեց հրեշտակի ավետիսով, սակայն տկարացավ՝ տեսնելով Հիսուսին խաչի վրա, որովհետև չգիտեր, որ նա վեր է, քան մահը, և հառնելու է մեռելներից: Եթե Տերը նրան նախապես հայտնած լիներ իր չարչարանքների, մահվան ու հարության մասին, ապա Կույսը շատ կտրտմեր, մինչև որ տեսներ նրան հարություն առած: Նաև առաքյալները տկարացան թերահավատությամբ՝ ըստ հետեւյալ խոսքի. «Դուք ամենքդ այս գիշեր իմ պատճառով գայթակղվելու եք» (Մատթ. ԻԶ 31): Որովհետև Տերը բոլորիս համար ճաշակեց մահը, բոլորիս լուսավորեց և արդարացրեց իր պատվական Մարմնով ու Արյամբ: Այս խոսքն ունի նաև հետեւյալ խորհուրդը. Մարիամի անձով պիտի անցնի այն սուրը, որով քերովքեն մեզանից պահում է կենաց ծառի ճանապարհը (տես Ծննդ. Գ 24), և այդ արգելքը վերանալու էր Մարիամի միջոցով:*

Որպեսզի բազում սրտերի խորհուրդները հայտնի դառնան (Ղուկ. Բ 35) – *Հայտնի դարձավ մարդկանց մտքի տկարությունը: Առաքյալները զարմացել էին ավետիսով հղության և կույսից ծնվելու համար, իսկ հրեաները, լավ չիմանալով հարության և հետմահու թագավորության մասին, ասում էին. «Մենք Օրենքի գրքից գիտենք, որ Քրիստոս հավիտյան է լինելու, դու ինչպե՞ս ես ասում, թե Մարդու Որդին պետք է բարձրանա» (տես Յովի. ԺԲ 34): Եվ հարությունից հետո առաքյալները և Կույսը խոստովանեցին այն, ինչ ունեին իրենց սրտում:*

Ծերը, ավարտելով իր խոսքը, վերադարձրեց Մանկանը մորը և հանգստացավ ծերության տառապանքներից՝ տաճարում իսկ ավանդելով իր հոգին Աստծուն:

Եվ այստեղ կար մի մարգարեռէի՝ Անսա անունով՝ Փանուելի դուստրը, Ասերի ազգատոհմից (Ղուկ. Բ 36) – Սիմեոնն Աղամի օրինակն է,

իսկ Աննան՝ Եվայի, ովքեր արձակվեցին կապանքներից: Դարձյալ՝ Սիմեոնն օրինակն է Օրենքի հնության, իսկ Աննան՝ մարգարեության լրման: Նրանք նաև դժոխքում գտնվող բոլոր գերիների օրինակը եղան, որոնց բաղձանքը կատարվեց: Դարձյալ՝ Սիմեոնն այրերին էր քարոզում, իսկ Աննան՝ կանանց, որպեսզի բոլորն էլ իմանան Տիրոջ հայտնությունը և գալուստը տաճար:

«Աննա» նաև շնորհ է նշանակում, քանզի այս կինն արժանացավ այդպիսի տեսության և մարգարեական շնորհի: Իմանալի Արեգակի գալստյամբ շատացավ շնորհը, և կանայք՝ սուրբ Կույսը, Եղիսաբեթը և Աննան, նույնպես մարգարեացան, որպեսզի բազմանան Տիրոջ վկաները: Եվ այսպիսով նրա Աստվածության համար վկայում են և՛ մոգերը, և՛ Հովիվները, և՛ տղամարդիկ, և՛ կանայք:

Ավետարանիչը շատ պատճառներ ուներ գրելու այս կնոջ անունը՝ նշելով նաև նրա հոր անունը, ինչպես նաև նրա մարգարեուհի լինելը: Նախ՝ գրեց, որպեսզի ասվածը հավաստի լինի, և երկրորդ՝ որովհետեւ նրա վրա մարգարեական հոգի կար:

«Սա տարիքով շատ առաջացած էր և ամուսնու հետ միայն յոթ տարի էր ապրել՝ սկսած իր կուսությունից: Նա մոտ ութսունչորս տարեկան մի այրի էր, որ չէր հեռանում տաճարից, այլ ծոմապահությամբ ու աղոթքով գիշեր ու ցերեկ ծառայում էր Աստծուն» (Ղուկ. Բ 36-37): Մարգարեուհին պատվեց յոթ անգամ տասներկու թվով՝ ապրելով ութսունչորս տարի, և նրան հավատացին, որովհետեւ գիշեր-ցերեկ տաճարից չէր հեռանում:

Սա ևս նույն ժամին վեր կացավ եկավ, գոհություն էր մատուցում Տիրոջը և խոսում էր մանկան մասին բոլոր նրանց հետ, ովքեր Երուսաղեմի փրկության էին սպասում (Ղուկ. Բ 38) – Զհեռացավ տաճարից, մինչև չտեսավ աղոթքներն Ընդունողին: Նա գոհանում էր Տիրոջից և՛ իր ունեցած շնորհով, և՛ Հոգու թելադրանքով, խոսում ամենքի հետ, ովքեր ակնկալում էին Երուսաղեմի մխիթարությունը, թե Սա է Ուխտի Հրեշտակը և տաճարի Տերը, Ում մասին գրեց Մաղաքիան (տես Մաղաք. Գ 1-5): Նա հայտնում էր սուրբ Կույսից Բանի մարմանանալը, որի մասին նախապես մարգարեները ձայնեցին: Հայտնում էր, որ Երուսաղեմի փրկությունը չի լինելու մարգարեների կամ Հրեշտակների միջոցով, այլ Տիրոջ: Եվ ինքը՝ Տերը, Ով մեզ որպես մանուկ երևաց, եկավ փրկելու մեղավորներին:

Սիմեոնն ու Աննան, Հոգու ազգեցությամբ, աստվածային մեծ Լույսը տեսան փոքրիկ մարմնում: Նրանք քառասնօրյա Մանկանը տեսան ոչ այնպես, ինչպես երեսում էր, այլ այն փառքով, որ ծագում էր նրանից և լուսավորում տիեզերքը: Նրանք տեսան Անտեսանելին մարմնի մեջ, Բանը՝

ստեղծվածի մեջ, Լույսը՝ նյութով ծածկված, և քարոզեցին փրկական գալուստը:

Եթե ամեն ինչ կատարեցին Տիրոջ Օրենքի համաձայն, վերադարձան Գալիլիա՝ իրենց քաղաքը՝ Նազարեթ (Ղուկ. Բ 39) – «Նազարեթ»-ը եբրայեցերենից թարգմանվում է մաքուր: Այսպես՝ աստվածային Նախախնամությամբ Օրենքի Սրբությունը տարկեց անվանյալ սրբություն՝ նազարեթ, որպեսզի կատարվի մարդարեկի խոսքը, թե Նազովրեցի պիտի կոչվի: Արանից հայտնի է դառնում, որ երուսաղեմից անմիջապես եղիպտոս չգնացին, այլ նախ Նազարեթ, իսկ Բեթղեհեմում բնակվում էին մարդահամարի պատճառով, որպեսզի կատարվի մարդարեռությունը: Եվ այնտեղ մնացին այնքան, որքան պահանջում էր Օրենքը:

Եվ Մանուկն աճում ու զորանում էր՝ լի իմաստությամբ (Ղուկ. Բ 40) – ինչպես ճշմարիտ մարդ եղավ, այնպես էլ մարդու նման աճում էր: Քանի որ Աստվածությունը մարմնի մեջ էր ծածկված, Տերն անսաց մարմնի աճելուն և իմաստության զորանալուն, որպեսզի ճշմարիտ լինի մարդեղությունը՝ ըստ այս խոսքի. «Եվ Բանը մարմին եղավ ու բնակվեց մեր մեջ, և տեսանք Նրա փառքը, նման այն փառքին, որ Հայրն է տպիս Միածնին՝ լի շնորհով ու ճշմարտութամբ» (Յովհ. Ա 14): Աճում էր մանկական մարմինը՝ խառնվելով³ և լցվելով ամենակատար Աստվածությամբ՝ ըստ առաքյալի. «Որովհետև Աստվածության լրիվ ամբողջությունը Նրա՝ մեջ հաճեց բնակվել» (Կողոս. Ա 19): Մանուկը զորանում էր ոչ մարդկային իմաստությամբ, այլ աստվածային կատարյալ իմաստությամբ:

Աստծու շնորհը Նրա վրա էր – Հոգին Նրա հետ էր՝ որպես Արարչակից ու Փառակից: Շնորհ է ասվում Հոգու հեղումը, որով փայլատակում են հավատացյալները, և մաքրվում է նրանց մտքի աչքը: Սակայն Տիրոջ վրա եղող շնորհը ստացական չէր, ինչպես հատուկ է մարդուն, այլ նա դա բնությամբ ուներ և հայտնում էր ըստ պատշաճության: Տերը սկզբից ևեթ ցույց չտվեց աստվածային զորությունը, այլ այն բացահայտում էր աստիճանաբար, աճմանը զուգընթաց:

Քառասաօրյա մատուկների օրշառհայութ

Այս օրինակով «Մաշտոց» ծիսարանում կա քառասանօրյա մանուկների օրհնության կարգ: Մանուկի քառասուն օրը լրանալուն պես, մայրը մանկանը տանում է եկեղեցի և տաճարի դռան առջե, քահանայի առաջ,

³ «Խառնել» արտահայտությունը գալիս է սուրբ Գրիգոր Լուսավորչից «...խառնեաց միացոյց ընկղմեաց զնարմինն յԱստուածութեան Իւրում» (տե՛ս Ազարանգեղոս, «Վարդապետութիւն սուրբ Գրիգորի», համար 378):

ծնրադրում, խոստովանում և մեղքերից արձակում ստանում: Այնուհետեւ քահանան աղոթքով դիմում է Տիրոջը՝ խնդրելով, որ Նա լվանա այս կնոջ մարմնի ախտերը, սրբի հոգու բծերը և արժանացնի մտնել Տիրոջ փառքի սրբությունը՝ վայելելու համար անսպառ բարիքները: Սրանով կինն իրավունք է ստանում մտնել տաճար և հաղորդվել Տիրոջ փրկական Մարմնին ու Արյանը:

Այս ամենից հետո կինը քահանայի հետ մտնում է տաճար և մոտենում խորանին: Այստեղ քահանան օրհնում է մանկանը, ապա գիրկն առնելով, սաղմոսելով մտցնում խորան ու աղոթքով դիմում է Տիրոջը՝ ասելով, որ մանուկը եկել է երկրապատության: Ապա մանկանը երկրապահցնում է սուրբ Խորանին, սուրբ Ավազանին, տաճարի սուրբ Դուանը և սուրբ Սեղանին: Վերջում պահպանիչ աղոթք ասելով՝ արձակում է մորն ու մանկանը:

ՊԱՀՔ

«Երբ ծոմ պահեք, տրտմերես մի՛ լիմեք կեղծավորների նման, որոնք իրենց երեսներն այլանդակում են, որպեսզի նարդկանց այնպես երևան, թե ծոմ են պահում. ճշմարիտ եմ ասում ծեզ, այդ իսկ է նրանց վարձը: Մյլ երբ դու ծոմ պահես, օժի՛ր քո զլուխը և լվա՛ քո երեսը, որպեսզի չերևան մարդկանց որպես ծոմ պահող, այլ քո Շորը՝ գաղտնաբար. և քո Շայրը, որ տեսնում է ինչ որ ծածուկ է, կիատուցի քեզ» (Սատթ. Զ 16-18):

ՊԱՀՔԻ ՕՐԻՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Պահքն Աստծուն սիրողների համար մեծ շնորհ է ու գարդ, որը սնուցանում ու բնակակից է դարձնում սրբերին, նրանց, ովքեր անբիծ հավատով ամենագեղեցիկ ու զարմանալի քրիստոնեական դավանությունն ունեն իրենց անձեռում, և պատվիրանները պահելով ու փրկության կոչին հետևելով՝ մոտենում են Աստծուն: Արդ՝ ովքեր միաբանվում են այս աստվածավանդ կանոնի շուրջը և Քրիստոսի հետ դուրս գալիս հոգեոր պատերազմի ընդդեմ հակառակորդ սատանայի, նրանք, որպես օգնություն, ստանում են պահքի զենքերը:

Ինչպես ասում է սուրբ Բարսեղը. «Պահքը Դրախտում օրինադրվեց, և այն հասակակից է մարդկությանը»: Եվ պահքի պատվիրանը եղավ Աստծու հետեւյալ խոսքը. «Դրախտում ամեն ծառի պտուղներից կարող եք ուտել, բայց բարու և չարի գիտության ծառից մի՛ կերեք, որովհետև այն օրը, երբ ուտեք դրանից, կմահանաք» (Ծննդ. Բ 16):

Աստված պահքը տվեց առաջին մարդուն՝ որպես դաստիարակ, և քանի դեռ մարդն այն պահում էր, հրեշտակներին հավասար էր, ինչպես Դավիթն է ասում. «Քո հրեշտակներից փոքր-ինչ ցածր դրիբ նրան և փառք ու պատվով պսակեցիր» (Սաղմ. Ը 6): Սակայն երբ նախաստեղծները՝ Ադամն ու Եվան, մահաբեր ճաշակմամբ խարվեցին սատանայից և դուրս ելան պահքից, զրկվեցին շնորհներից, լույսից մերկանալով՝ արտաքսվեցին Դրախտից և դրվեցին նզովքի ու մահվան տակ: Եվ տես, թե այս անգամ ինչ է ասում նրանց մասին մարգարեն. «Մարդը պատիվ ուներ ու չհասկացավ, հավասարվեց անբան անասուններին ու նմանվեց նրանց» (Սաղմ. Խ Ը 21), նաև իր կենցաղով եղավ խոտակեր ու բանջարածարակ: Բայց երանի թե միայն այսքանը լիներ պատուհասը:

Հանցանքից ու դառը կերակրից հետո Աստված ասաց Ադամին. «Քանի որ անսացիր քո կնոջ ձայնին և կերար այն ծառի պտղից, որի՛ց միայն քեզ պատվիրեցի չուտել, բայց կերար դրանից, թող անիծյալ լինի

երկիրը քո արածի պատճառով։ Տանջանքով հայթայթես քո սնունդը քո կյանքի բոլոր օրերին։ Փուշ ու տատասկ թող աճեցնի քեզ համար երկիրը, և դու դաշտային բույսով մնվես։ Քո երեսի քրտինքով ուտես հացդ մինչև հող դառնալդ, որից ստեղծվեցիր, որովհետև հող էիր և հող էլ կդառնաս» (Ծննդ. գ 17-19):

Սա՝ այս պահքը, արհամարհողների համար պատժի նախնական օրինակն է։ Այստեղից են տրտմությամբ ու ցավով լի ծնունդն ու կյանքը և մոտակա մահը։ Արդ՝ սա է չար սերմերի առաջին պտուղը, որ եղավ առաջին մարդու՝ պտղի ճաշակման պատճառով։ Այսպես էլ այսօր մեզ է քարոզվում պահքն այն հրամանով, որ պետք է ուտել այն ամեն կերակուրներից, որոնք պահքի ուտելիքներ են, և այլ ուտելիքներ չուտել։ Եվ եթե մենք պահենք պահքը, որը նախաստեղծները չպահեցին և այդ պատճառով արտաքսվեցին, ապա այն մեզ համար դրախտային կյանքի ու անմահության, ինչպես նաև աստվածային շնորհների պատճառ կդառնա։

Այնուհետև նոյի օրերում մարդիկ նորից եղան պատվիրանազանց և նորից ենթարկվեցին պատժի։ Արդար նոյը, իմանալով ցասման պատճառները, մի տարի յուրայինների հետ ապրելով տապանում՝ պահքով ու պաղատանքներով նվազեցրեց Աստծու ցասումը և դրանով աճման մերմը կրկին պահպանեց մարդկային ցեղի համար։

Ապա սողոմացիները կերակրի անարգել օգտագործումով բորբոքեցին ախտերի կրակը, որի պատճառով էլ հուրն իբրև պատուհաս ընդունեցին։ Սա Աստված որակեց որպես որովայնամոլություն, ինչի մասին մարգարեն ասաց. «Քո քրոջ՝ Սողոմի անօրենությունն այս էր՝ ամբարտավանություն, հացով լիացածություն, գինու մեջ հղփացածություն։ Մեղկ կյանք էին վարում ինքն էլ, դուստրեն էլ։ Դրա մեջ էին խրված ինքն էլ, դուստրեն էլ։ Զեռք չէին մեկնում աղքատին ու տնանկին, մեծամտանում էին ու իմ առջև անօրինություններ անում։ Ու երբ դա տեսա, մեջտեղից վերացրի նրանց» (Եզեկ. Ժ 49-50)։ Այսինքն՝ սողոմացիները հացի ու գինու առատությունից հղփացան և միմյանց հետ պոռնկացան։

Իսկ եսավը, որ անոթությունից ուժասպառ էր եղել, մի պատառի պատճառով զրկվեց անդրանկությունից, Աստծու ավետիսից ու հայրերի օրհնությունից (տես Ծննդ. Իւ 21-34) և փոխանակ իսրայելի երանելի անունով կոչվելու՝ պոռնիկ և պիղծ կոչվեց, այդ պատճառով էլ ապաշխարության տեղ չգտավ, թեպետև արտասուքով խնդրեց։ Այդչափ ծանր եղավ Աստծու ցասումը նրա վրա, որն առաջացավ մի աման ապուրի պատճառով։

Հապա իսրայելյան ազդի համար ինչ պետք է ասել, որն անզգամ մոլեգնությամբ նստեց ուտելու և խմելու (տես Ելք ԼԲ 6), որի պատճառով

Աստծու ձեռքով գրված Օրենքի տախտակները կոտրվեցին (տես Ելք ԼԲ 19), և դրա փոխարեն ստացավ ծանր ու դժվարին օրենքներ, ինչպես Աստված ասաց մարդարեին. «Այդ էր պատճառը, որ նրանց տվեցի հրամաններ, որ բարի չէին, և օրենքներ, որոնցով չէին կարող ապրել» (Եզեկ. ի 25):

Իսկ երբ այսքանից հետո միս ցանկացան, Աստված այնչափ բարկացավ, որ ասաց. «Տերը ձեզ միս կտա ուտելու, և դուք միս կուտեք: Կուտեք ոչ թե մեկ, երկու, հինգ օր, ոչ էլ տասը կամ քսան օր, այլ կուտեք ամբողջ ամսվա բոլոր օրերին, մինչև ձեր քթից դուրս գա, մինչև որ զզվեք, որովհետև արհամարհեցիք Տիրոջը, որ միշտ ձեր մեջ է» (Թվեր ԺԱ 18-20): Այդպես էլ եղավ, և մինչ միաը նրանց բերանում էր, Աստծու բարկությունն իջավ նրանց վրա, ինչպես մարդարեն է ասում. «Շուտով մոռացան գործերը նրա, և չանսացին նրա խորհուրդներին» (Սաղմ. նե 13): Եվ մեկ այլ տեղ ասում է. «Արանք անխոհեմ ազգ են, ու նրանց մեջ իմաստություն չկա» (Բ Օրենք ԼԲ 28): Որից հայտնի է դառնում, որ Աստված նրանց համար մեծ գործեր էր նախատեսել, սակայն չկատարեց:

Իսկ Մովսեսը, ով ժումկալության օրինակն էր, անսվաղ բերանով երկու անգամ քառասուն օր պահեց: Առաջին անգամ՝ որպեսզի Աստծուն տեսնի, իսկ երկրորդ անգամ՝ որպեսզի հաշտեցնի Աստծուն ժողովրդի հետ, և կոտրված տախտակների փոխարեն Օրենքը ստանալով՝ իջավ լեռից փառքով ու լուսատեսիլ երեսով (Ելք ԼԴ 29):

Նաև եղիան պահեց Մովսեսի նման և երկինք բարձրացավ հրեղեն կառքով (տես՞ն Դ Թագ. Բ 11): Իսկ սքանչելի եղիսեն, ով արժանացավ եղիայի կրկնակի հոգուն ու շնորհներին, լոկ հացով և բանջարով էր իր կարիքները հոգում՝ սքանչելագործելով ինչպես Փրկիչը: Եվ որովհետև չէր կենցաղավարում մարմնի օրենքով, դրա համար նրա մեռած մարմինը գերեզմանում կենդանացրեց իրեն դիպած մեռելին (տես՞ն Դ Թագ. ԺԳ 21):

Առյուծները Դանիելից պատկառեցին մարմնի պահեցողության պատճառով, և յոթ օր անսվաղ (առանց ջրի) ժումկալեցին՝ կշտամբելու համար ծույլերին, ովքեր անբան անասուններից ավելի վատթար էին:

Անանիային և մյուս մանուկներին հրամայվեց այլազգի մանուկների հետ սնվել թագավորական սեղանից, սակայն նրանք հեթանոսական կերակուրների փոխարեն միայն ընդեղենով կերակրվեցին և հաց անգամ հանձն չառան ուտել, և նշանակված ժամին վերջիններիս երեսը թագավորին ավելի պայծառ ու գեղեցիկ երևաց, քան նրանցը, ովքեր ուտում էին զանազան խորտիկներ (տես՞ն Դան. Ա 5-15): Իսկ երբ չարահնար սատանայի մեքենայություններով նրանց կրակը գցեցին, աստվածային մեծ նախամմությունը նրանց ողջ ու անվնաս պահեց ահավոր կրակից, որովհետև

պահքով էին պաշտպանված, և նրանց մարմիններին չմերձեցավ վեր հառնող բոցը, որը բորբոքողներին միայն այլեց, փոխանակ կապվածների:

Պաշտի ԿԵՐԱԿՈՒՐԱԿՐ

Վարդապետներն ասում են, որ կերակուրները երկու տեսակ են լինում: Մի տեսակը երկրի տարրերից է գոյանում՝ ծառերից ու այլ բույսերից, և դրանք պահքի համար են, ինչպես, օրինակ, ցորենը, իսկ մյուսը գոյանում է կենդանիներից, ինչպես կաթը, կամ էլ ինքը՝ կենդանին է կերակուր դառնում, ինչպես, օրինակ, միսը, և սրանք ուտիքի կերակուրներն են:

Պահքի կերակուրներն ընդհանուր են. դրանք կարելի է ամեն օր ուտել՝ և՛ պահքի, և՛ ուտիքի օրերին: Իսկ ուտիքի կերակուրները կարելի է ուտել միայն ուտիքի օրերին:

Նաև պահքերն են զանազանվում: Դրանք լինում են՝ սովորական պահք, սրբապահք և ծոմ: Սովորական պահքն այն է, երբ ուտիքի կերակուրներից չենք ուտում, այլ միայն բույսերից գոյացածները: Իսկ սրբապահքի գեպքում խարություն է դրվում նաև բուսական կերակուրների միջև: Բուսական ծագում ունեցող այն կերակուրները, որոնք պարարտացնում են մեր մարմինը, այս գեպքում մերժվում են, ինչպես օրինակ՝ ձեթը, գինին և այն ամենը, ինչը սրանց նման է: Որովհետեւ, ըստ Առւրբ Գրքի, ձեթն ու յուղը նույնն են և պարարտացնում են մեր մարմինը, իսկ գինին հարբեցնում է և մեղսալից ցանկություններ բորբոքում: Սրբապահքի գեպքում սրանցից ևս պետք է հրաժարվել:

Ծոմապահության գեպքում հրաժարվում ենք բոլոր տեսակի կերակուրներից, անգամ ցորենից ու ջրից՝ զրկելով մեր բերանը հաճելի ու անուշահամ կերակուրներից: Դրանով տկարացնելով մեր մարմինը՝ անընդունակ ենք դարձնում մեղքեր գործելու համար, և սովով ու ծարավով մաշում ենք մեր անձը՝ զորացնելով հոգին՝ արժանանալու համար Աստծու միրուն:

Պաշտի ԲՆՈՒՅԹԸ

Պահքը երկու բնույթ ունի, մեկը՝ զերծ մնալ, պահել մեղքերից, իսկ մյուսը՝ պահել մարմինը՝ հրաժարվելով որոշ տեսակի կերակուրներից ու ըմպելիքներից: Երկուսն էլ բարի են, սակայն մեղքերից պահելն ավելի կարևոր է երկու պատճառով:

Նախ՝ որովհետև չկա հրաման՝ միշտ պահել մարմինը կերակուրներից, այլ դա լինում է պահոց օրերին, սակայն կա հրաման՝ ամեն օր հեռու մնալ մեղքերից:

Երկրորդ՝ մեղքերից պահելն օգտակար է անգամ առանց մարմնավոր կերակուրներից պահելու, սակայն առանց մեղքերից պահելու մարմնավոր կերակուրներից պահելը ոչ մի օգուտ չի տալիս: Ուստի, վարդապետներն ասում են, որ այն պարագային է մարմնի պահքը գեղեցիկ, երբ հոգին իրեն զերծ է պահում մեղքերից: Եվ ի՞նչ օգուտ մարմինը պահքով նիհարեցնելուց, եթե հոգին գիրանում է մահացու մեղքերով:

Դարձայլ՝ ով պահում է մարմնավոր կերակուրներից, սակայն իր անձը չի պահում մահացու մեղքերից, նրա պահքը նման է սատանայի պահքին, որովհետև սատանան ամենեին չի ուտում, սակայն երբեք չի դադարում մեղանչելուց: Այսպիսի պահքով Աստծուն չեն ընծայվում, ինչպես այդ մասին ասում է Եսային՝ դիմելով Աստծուն ժողովրդի անունից. «Այդ ինչպե՞ս է, որ մենք ծոմ պահեցինք, և Դու չտեսար, զրկանքների ենթարկեցինք մեզ, և Դու չիմացար»: Այս հարցումին Աստված պատասխանում է հետևյալ կերպ. «Ձեր ծոմապահության օրերին ձեր ցանկություններն եք կատարում և կսկիծ պատճառում բոլոր նրանց, ովքեր ենթակա են ձեզ: Հակառակության ու կոփների մեջ եք պահում և բռնցքահարում տկարին: Իսկ իմ ինչի՞ն է պետք այդպիսի ծոմապահությունը: Այդպիսի ծոմապահությունը չէ, որ Ես ընտրեցի: Քանդի՛ր անիրավության հանգույցները և ների՛ր ու արձակի՛ր նեղյալներին» (տե՛ս Եսայի ԾԸ 3-6): Այսինքն՝ պահի՛ր քեզ ամեն մեղքից, և այդպիսի պահքն ընդունելի կլինի:

Ոմանք պահքի օրերին ոչխարի միս չեն ուտում, սակայն մարդու «միս են ուտում», որն առավել ծանր է, քանի որ անխտիր բամբասում են և սուտ վկայում: Պետք է ամեն օր պահվել մեղքերից, առավել ևս՝ տոն և կիրակի օրերին:

Ժողովրդի մեջ տարածված մի անարդ սովորություն կա, որ տոն օրերին ավելի շատ են մեղք գործում, քան մյուս օրերին, որովհետև ամբողջ շաբաթ զբաղված են լինում իրենց գործերով, իսկ կիրակի օրն անց են կացնում հարքեցողության և խեղկատակության մեջ:

Պահք Տեսակները

Պահքը մարմնի «մեռելություն» է, և որքան արտաքին մարդը տկարանա, այնքան ներքինն օրըստօրե կնորոգվի (տե՛ս Բ Կորնթ. Դ 16): Առանց կերակրի մնալով՝ մարդը ցամաքեցնում է իր մարմինը պիղծ ախտերից, որով հաճելի է լինում Աստծուն և դառնում Աստծու տուն: Այս է

պահքի պատվականությունը: Եվ այս պահքը ոմանք ամեն օր են պահում՝ իրենց մեջ ցույց տալով դրախտային կյանքը, ինչպես նրանք, ովքեր անապատում են կամ ճգնության մեջ: Ոմանք էլ պահում են միայն որոշակի օրերի համար հրամայված պահքը, որն ավանդվեց առաքյալներից ու հայրապետներից, ինչպես ասում է առաքյալը. «Մեկը բարձր է դասում օրը օրից, իսկ մյուսը՝ բոլոր օրերը՝ հավասար» (Յոն. ԺԴ 5):

Եվ հրամայված պահքերը երեքն են: Առաջինը քառասնօրյա պահքն է, երկրորդը՝ շաբաթապահքը, և երրորդը՝ օրապահքը:

Տարվա մեջ երեք քառասնօրյա պահք կա: Առաջինը Քրիստոսի Ծննդյան տոնի կապակցությամբ է պահվում, երկրորդը՝ Հարության և կոչվում է Աղուհաց, իսկ երրորդը՝ Այլակերպության: Սա առաքելագիր կանոն է: Աղուհացը տարեկան պահք է, որը տարին մեկ անգամ պահում ենք առհասարակ բոլոր քրիստոնյաներս, թեպետև հոգևորականները երեք քառասնօրքն էլ պահում են, իսկ աշխարհականները միայն մեկը՝ Աղուհացը: Շաբաթապահքն ամսական պահք է, որը հայրապետները կարգեցին պահել ամսական մի շաբաթ: Օրապահքը՝ շաբաթը երկու անգամ ենք պահում՝ չորեքշաբթի և ուրբաթ օրերին:

ՊԱՀՈՅ ԵՒ ՈՒՏԻՔ ՕՐԵՐԻ ՊԱՏճԱՌԱԵՐԸ

Մարդը հոգի է ու մարմին, և ինչպես ուտելիքը մարմնին է հաճելի, նույնպես և պահքը՝ հոգուն: Այս կապակցությամբ տեղին է հետևյալ բացատրությունը: Մարդու կյանքը պատերազմ է երկրի վրա, և քաղաքը, որ կառուցված է երկու թագավորությունների միջև, ամեն օր պատերազմում է: Երբ այն միաբանվում է մեկի հետ, ապա պատերազմում է մյուսի դեմ:

Մեր «քաղաքը»՝ անձը, դրված է երկու թշնամիների միջև, որովհետեւ Աստված ի սկզբանե երկու բնություն է ստեղծել. մեկը՝ իմանալի, մյուսը՝ զգալի: Մեր բնությունը սրանց միջև է գտնվում, որովհետեւ կազմված է հոգուց և մարմնից, և սրանք միմյանց ներհակ են, քանի որ հոգին ցանկանում է մարմնի հակառակը, իսկ մարմնը՝ հոգու, ինչպես ասում է Պողոսը (ՄԵՆ Գաղատ. Ե 17): Հոգին սիրում է առաքինություն, պահեցողություն և աղոթք, իսկ մարմինը՝ ուտել ու հանգստանալ, այդ պատճառով էլ ամեն օր պատերազմի մեջ ենք: Երբ անցնում ենք մարմնի կողմը, տրտնջում է հոգին, իսկ երբ լինում ենք հոգու կողմը, տրտնջում է մարմինը՝ ասելով, թե տկարացել է:

Մարմինն ուժեղ է ու տեսանելի, և նրա ճանապարհներն ընդարձակ են: Մարդկանցից շատերն են հակված մարմնի կողմը: Իսկ հոգին

անտեսանելի է, և նրա ճանապարհը՝ նեղ, և մարդկանցից քչերն են հակված հոգու կողմը:

Արդ՝ ուտիքի օրերը մարմնի օրեր են, որոնք անցնում են ուտելով ու խմելով, իսկ պահոց օրերը՝ հոգու օրեր, ուստի պարտավոր ենք հաշտվել հոգու հետ և պատերազմել ընդդեմ մարմնի ու սատանայի: Եվ այս պատերազմում պետք է զգեստավորվենք հոգեոր զենքերով, ինչպես ասում է առաքյալը կորնթացիներին Հղած երկրորդ թղթում. «Բոլոր դեպքերում դուք ձեզ ներկայացրեք իբրև Աստծու պաշտոնյաներ՝ ցույց տալով մեծ համբերություն նեղությունների, հսկումների ու ծոմապահության մեջ, սրբությամբ, գիտությամբ, համբերությամբ ու արդարության զենքերով՝ հարձակվելու և պաշտպանվելու համար աջից ու ձախից» (հմնտ. Բ Կորնթ. Զ 4-7):

Այդ պատճառով էլ առաքյալները և մեր սուրբ հայրերը որչափ ուտիքի, այնչափ էլ պահոց օրեր կարգեցին ամբողջ տարվա համար: Այստեղից էլ՝ ամբողջ տարում հարյուր ութսուն օր պահք է և նույնքան էլ՝ ուտիք: Վաթսուն օրն ամբողջ տարվա ընթացքում պահոց չորեքշաբթի և ուրբաթ օրերի քանակն է, իսկ մնացած հարյուր քսան օրերը՝ երեք քառասնօրյա պահքերի օրերի քանակը:

ՕՐՎՊԱՀՀՔ

Չորեքշաբթի եւ ոհրբաթ օրերի աւան

Առաքյալները կարգեցին պահել տարեկան երեք քառասունքները, ինչպես նաև չորեքշաբթի և ուրբաթ օրերի պահքերը: Սա գալիս է Հին օրենքից, որը նրանք փոխադրեցին նորի մեջ: Ըստ Հին օրենքի՝ հրեաները պահում էին երկուշաբթի և հինգշաբթի օրերը, ինչպես փարիսեցին էր ասում. «Շաբաթը երկու անգամ ծոմ եմ պահում» (Ղուկ. ԺՇ 12): **Առաքյալներն** այս օրերի փոխարեն կարգեցին չորեքշաբթին և ուրբաթը: Ինչպես որ շաբաթապահքը հինգ զգայարանների սրբության համար է, որոնցով մեղանչում ենք, այդպես էլ երկու օրվա պահքը մեր հոգու և մարմնի սրբության համար է, որով գործում ենք մեղքերը:

Վարդապետներն այս պահքի համար հետևյալ պատճառներն են նշում: Նախ՝ այն, որ Մովսեսը հրամայում է պղծությունից լվանալ մարմինն ու հանդերձները և բանակից դուրս լինել մինչև երեկո (տես ԹՎԵՐ ԺԹ 19):

Երկրորդ՝ չորեքշաբթին եվայի խարվելու օրն էր, երբ օձը նրան համոզեց ուտել պտղից, իսկ ուրբաթը՝ երբ Աղամը կերավ պտղից և ելավ Դրախտից:

Երրորդ՝ չորեքշաբթի օրը մեր Տերը հայտնեց իր մատնության, դատաստանի, չարչարանքների, խաչելության և մահվան կենարար խորհուրդը, որի պատճառով տրտմեցին առաքյալները, իսկ ուրբաթ օրը կատարվեց այս ամենը, նաև՝ շարժվեցին արարածները, խավարեցին երկնքի լուսատուները: Այդ պատճառով պահում ենք այս օրերը, որպեսզի կցորդվենք Տիրոջ խաչին:

Չորրորդ՝ որովհետև երկու առաքինություններ ունենք՝ տեսական և գործնական: Տեսականի համար սրբվում ենք չորեքշաբթի օրը, իսկ գործնականի՝ ուրբաթ, որով սրբաներ դառնալով՝ Աստծու օգնությամբ հասնում ենք ճշմարտությանը և բարուն:

Հինգերորդ՝ որովհետև ընդունում ենք երկու օրենքներն էլ՝ և՝ Հինը, և՝ նորը, դրա համար էլ երկու օր սուրբ ենք պահում:

Հարց. — Ինչո՞ւ Հինանց շրջանում չորեքշաբթին և ուրբաթը չենք պահում:

Պատասխան. — Քանի որ Աղուհացի օրերին պահել ենք շաբաթը և կիրակին, դրա համար Հինանց մեջ ուտում ենք նաև չորեքշաբթի և ուրբաթ օրերին:

Երկրորդ՝ քանի որ հիսուն օր պահեցինք հոգու համար, հիսուն օր էլ ուտում ենք մարմնի համար:

Երրորդ՝ աղուհացն այս կյանքի խորհուրդն ունի, որի ընթացքում սպում ենք մեղքերի համար, իսկ Հինունքը հարության խորհուրդն ունի, քանի որ ո՛չ սուգ է, ո՛չ արտմություն և ո՛չ ցավ:

Չորրորդ՝ քանի որ Հինանց շրջանում առագաստի մանուկներն ենք, և Փեսան մեզ հետ է, դրա համար էլ սուգ չենք անում, մինչև որ Փեսան վերցվի, և ապա կպահենք ըստ Ավետարանի խոսքի (տե՛ս Սատր. Թ 15): Իսկ Համբարձումից հետո պահում ենք չորեքշաբթին և ուրբաթը կամ ինն օր՝ մինչև Հոգեգալուստը:

Եվ այն, որ չորեքշաբթի և ուրբաթ օրերը ճշմարիտ պահոց օրեր են, հայտնի է հետեւյալից: Նախ՝ որ առաքյալներից է ավանդված, ինչը հայտնի է առաքելական և նիկիական կանոններից:

Երկրորդ՝ սուրբ Եվագրոսն ասում է՝ պահիր չորեքշաբթի և ուրբաթ օրերն ամեն շաբաթ:

Երրորդ՝ մեծ ճգնավոր Բենեղիկտոսն ասում է, որ չորեքշաբթի և ուրբաթ օրերն անսվազ պետք է պահել մինչև իններորդ ժամը:

Չորրորդ՝ հայտնի է և հաստատ, որ բոլոր քրիստոնյա ազգերը պահում են չորեքշաբթի և ուրբաթ օրերը. չորեքշաբթին՝ մատնության, իսկ ուրբաթը՝ խաչելության պատճառով, որովհետև սուգ է:

Հինգերորդ՝ Նիկիական ժողովում կանոն է դրված ու սահմանված, նաև հաստատված սուրբ Բարսեղ Մեծի, սուրբ Եպիփանի և այլոց կողմից, որ եթե մի անգետ անձ միս ուտի չորեքշաբթի և ուրբաթ օրերին, երեք շաբաթ թող պահի սրբությամբ՝ տնանկներին ողորմություն բաժանելով, և ապա հաղորդություն ստանա, իսկ եթե արհամարհելով առաքելական կանոնները՝ ուտի այդ օրերին, ապա երեք տարի ապաշխարի:

ՇԱԲԱԹԱՎԱՀՔԸ

Շաբաթավահքը սահմանել է Մեծն Ներսեսը՝ Գրիգոր Լուսավորչի թոռը: Հայրապետները ժողովրդին ձանձրույթից հեռու պահելու համար Ծննդյան և Այլակերպության քառասունքները բաժանեցին մասերի ու տարածեցին ամբողջ տարվա մեջ՝ որպես շաբաթավահքեր, և այժմ կա տասնյոթ շաբաթավահք. դրանք են՝ Առաջավորաց, Եղիական, Լուսավորչի, Վարդավառի, Վերափոխման, Սուրբ Խաչի, Վարագա Սուրբ Խաչի, Հիսոնակի, Սուրբ Հակոբ Մծբնա հայրապետի, Ծննդյան և Մեծ պահքի յոթ շաբաթները:

Շաբաթավահքն ունի բազում նշանակություններ: Նախ՝ խորհրդանշում է արարչության շաբաթը, որը սրբության ու պահքի շաբաթ էր մինչև վեցերորդ օրը՝ Աղամի ստեղծվելը, որից հետո պահքը լուծարվեց: Թեպետև մինչ Աղամը ստեղծվել էին տարբեր կենդանիներ ու գագաններ՝ լողացող ու թռչող, սակայն նրանք դեռևս չէին ստացել ուտելու հրամանը: Այնուհետև Աստված հրամայում է Աղամին. «Ահա ձեզ տվեցի ողջ երկրի վրա տարածված սերմանելի բոլոր բույսերի սերմերը և իրենց մեջ պտուղ սերմանելու սերմպարունակող բոլոր ծառերը: Դրանք թող ձեզ համար սնունդ լինեն, իսկ բոլոր կանաչ խոտերը՝ երկրի բոլոր գագանների, երկնքի բոլոր թռչունների և երկրի վրա սողացող բոլոր սողունների, բոլոր կենդանիների համար թող լինեն կեր» (Ծննդ. Ա 29-30):

Երրորդ՝ Դրախտից դուրս գալուց հետո նախաստեղծները հինգ օր անսվաղ սուգ պահեցին՝ առանց ուտելու և խմելու՝ հայտնվելով մահվան վիճակում, մինչև Տերը գթաց ու մի հրեշտակի հրամայեց միխիթարել նրանց ու խոստացավ իր Միածնին առաքել նրանց փրկության համար՝ հրամայելով ուտել այդ վայրում եղող պտուղներից, և նրանք հուսադրվելով կերակուր ընդունեցին: Այս խոստումն է հիշեցնում Դավիթը՝ ասելով. «Հիշի՛ր քո ծառային տրված խոսքը, որի վրա էլ դրիբ իմ հույսը» (Սաղմ. 6ԺԸ 49):

Երրորդ՝ կենդանիները տապանի դռան շուրջը հինգ օր շարունակ առանց ուտելու և խմելու մնացին մինչև անձրևի տեղալը, ապա մաքուր կենդանիներից յոթական մտան տապան ու փրկվեցին: Սա ցույց է տալիս հնդօրյա պահքի սրբությունը, որով մտնում ենք եկեղեցի ու փրկվում մեղքերի ջրհեղեղից:

Չորրորդ՝ Եգիպտոսից ելնելուց առաջ Աստված հրամայեց յոթ օր բաղարջ ուտել: Սա շաբաթավահքի խորհրդին ունի, որով պահում ենք

մեր հոգին ու մարմինը մեղքերի բոլոր խմորումներից ու ելնում մեղքի եղիպտական ծառայությունից:

Հինգերորդ՝ յոթ օր սահմանվեց բորոտների՝ բանակից դուրս մնալու և սրբվելու համար: Նույնը սահմանվեց նաև պղծություններին մոտեցածների համար: Այդպես և մեր հոգիներն են պղծվում մեղքերից, ինչ պատճառով էլ յոթօրյա պահքով եկեղեցուց դուրս ենք գալիս և սրբվում:

Վեցերորդ՝ Մովսեսը հրամայեց վեց քաղաք կառուցել ապաստանի համար, որպեսզի ակամա սպանողները մտնեն այնտեղ ու ազատվեն վտանգից: Սա խորհրդանշում է վեցօրյա պահքը, որը մեզ համար ապաստանի քաղաք է լինում, և մենք՝ ակամա մեղանչողներս, պետք է մտնենք այս պահքի մեջ ու արդարանանք:

Յոթերորդ՝ Աստված հրամայեց իսրայելի ժողովրդին պահել Շաբաթների շաբաթը, որը խորհրդանշում է մեր շաբաթապահքը:

Ութերորդ՝ հինգ օր է Քավության տոնը, և այնուհետև յոթ օր՝ Տաղավարահարաց տոնը, որը խորհրդանշում է պահքի շաբաթի սրբությունը, որով լինում ենք տաղավար և բնակարան Աստծուն:

Սրանք օրինակներն են, իսկ ճշմարտությունն այն է, որ սրբում ենք մեր հինգ զգայարանները, որոնցով մեղանչում ենք: Նախ սրբվում ենք պահքով, ապա տոնում՝ սրբերին մեզ բարեխոս անելով: Այսպիսի խորհուրդ ունի շաբաթապահքը, որը պահում ենք ամբողջ տարում:

ԱՌԱՋԱՎՈՐԱՅ ԴԱՀՔ

Առաջավորաց պահքի վերաբերյալ երեք հարց կա: Նախ՝ ինչո՞ւ ենք հինգ օր անսվաղ պահում: Երկրորդ՝ ինչո՞ւ ենք առանց ընթերցվածների պահում, և երրորդ՝ ինչո՞ւ է կոչվում Առաջավորաց:

Նախ՝ թե ինչո՞ւ ենք հինգ օր անսվաղ պահում: Դրախտում օրինադրված պահքի փոխարեն մեր հոգեոր առաջնորդների կողմից սահմանվեց Առաջավորաց պահքը: Եվ ինչպես առանց պահելու դուրս ընկանք Դրախտից ու կորցրինք փառքը, այդպես էլ սա պահելով՝ այն ետ պիտի ստանանք: Եվ քանի որ Աղամը հինգ զգայարաններով մեղանչեց, մենք հնգօրյա պահքով ենք սրբում մեր զգայարանները: Նաև՝ երբ Աղամը ելավ Դրախտից, հինգ օր անսվաղ պահեց, ապա կերավ երկրի պտուղներից, որը եղավ առաջին պահքն արտաքսումից հետո:

Դարձյալ՝ մարդու լինելուց առաջ եղան հինգ օրեր, որոնցում ստեղծվեցին բոլոր արարածները, և այդ օրերին ոչինչ չէին ուտում, որովհետեւ դեռևս չկար ուտելու հրամանը, և դրանք սրբության ու պահքի օրեր էին: Այսուհետեւ ստեղծվեց Աղամը և պահքը լուծարվեց:

Աղամի որդիներն էլ նրանից սովորելով՝ պահում էին նրա նման: Պահում էր այս պահքը նաև Աբելը և ապա մատուցում պատարագը: Պահեց և Սեթը՝ հինգ օր, երբ մահացավ Աղամը: Պահեց նաև ենոքը՝ հինգ օր ամսամուտին: Նոյր նույնպես պահեց նախքան տապան մտնելը, ինչպես նաև տապանից ելնելուց հետո պահեց և ապա պատարագ մատուցեց:

Պահեց և Աբրահամը՝ հինգ օր, երբ Աստված նրան խոստացավ տալ իսահակ որդուն: Եվ դարձյալ պահեց, երբ իսահակը փրկվեց զոհաբերվելուց: Վարդապետներից ոմանք ասում են, թե Աբրահամը հինգ օր պահեց նաև Սոդոմի հրկիզումից հետո:

Նաև Հակոբը հինգ օր պահեց, երբ սանդուղքի տեսիլքն իրեն երևաց, և դարձյալ հինգ օր էլ պահեց, երբ իր որդիները՝ Շմավոնն ու Ղեին, կոտորեցին սիկեմացիներին (տես Ծննդ. ԼՂ), և էլի հինգ օր, երբ լսեց Հովսեփի զոհվելու բոթը:

Նաև Հովսեփը, ով Օրենքից առաջ էր օրինավոր և Ավետարանից առաջ՝ ավետարանիչ, երբ մտավ փարավոնի բանտը՝ հինգ օր պահեց, և այս ամենը՝ ծոմով՝ առանց ուտելու և խմելու:

Հինգ օր պահում էին նաև բոլոր անդրանիկները, երբ մահանում էին նրանց հայրերը: Այսպիսով՝ այս պահքը հորից որդի ավանդվելով՝ եկավ Հասավ մեզ, ինչպես ասում է սուրբ Բարսեղը: Եվ այս պահքն առանց

պատարագների էր ու ընթերցվածների, որովհետև նահապետներն այսպես պահեցին ու արդարացան:

Մովսեսը կարգեց քառասնօրյա պահք՝ պատվիրանների տախտակը քառասուն օրում ստանալու պատճառով: Իսկ ժողովուրդը հինգ օր պահելուց հետո տրտնջաց, որի պատճառով բարեկենդան արվեց նրանց համար: Եվ ամեն ամիս հրամայեց հինգ օր պահել՝ հորթապաշտության հանցանքները քավելու համար:

Կան և այլ պատճառներ Առաջավորաց պահքը պահելու համար: Նինվեացիք, որ «անդունդի» եղրին էին, Հովնանի քարոզությամբ՝ երեքօրյա պահքով կործանումից փրկվեցին (տես Դովնան Գ 4): Նրանք պահեցին երեք օր՝ և' մարդիկ, և' անասունները, ինչպես նաև՝ մանուկները առանց ուտելու և խմելու, և երեքօրյա պահքով ապաշխարեցին ու փրկվեցին մահվանից: Նույնպես և այն հավատացյաները, ովքեր մեղքերի պատճառով դժոխքն ունեն իրենց աչքի առջև, պահում են այս պահքը և հոգով փրկվում, ինչպես նինվեացիները՝ մարմնով: Հինգից երեք օրը նինվեացիների օրինակով ենք պահում, իսկ չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ բնական պահքով, որպեսզի այն հանցանքները, որ հինգ զգայարաններով ամբողջ տարում գործեցինք, Աստծու ողորմությամբ ջնջենք հնդօրյա պահքով: Այս մասին վկայում են նաև հարավային աղգերը՝ հաբեշներն ու դպտիները, ովքեր ավելի շատ են պահում, քան մենք՝ ծոմի մեջ թողնելով նաև անասուններին, ինչպես նինվեացիները, որպեսզի շահեն մարդասեր Աստծու գութը:

Ունենք նոր պատճառ: Երբ սուրբ Գրիգոր Լուսավորիչը ելավ փիրապից, վաթսունհինգ օր վարդապետելով քարոզեց թագավորին ու ժողովրդին և ապա հրամայեց հինգ օր սրբությամբ պահել սրբելու համար հինգ զգայարանները, որից հետո բժշկեց ժողովրդին հարվածներից: Նաև սուրբ Սեղբեստրոսը, երբ մկրտեց Կոստանդիանոս կայսրին, հնդօրյա պահք սահմանեց նրա և ժողովրդի համար:

Դարձյալ՝ երեք քառասունքները, որ պահեց Մովսեսը, կազմված էին տասնհինգ ութերից, իսկ տասնհինգը՝ երեք հինգերից, որը հետեւյալ խորհուրդն ունի. հինգը՝ զգայարանների օրինակն է, երեքը՝ մարմնի, հոգու և մտքի, իսկ քառասունը՝ ութ անգամ հինգն է, որտեղ հինգը զգայարաններն են, իսկ ութը՝ գլխավոր մեղքերը՝ ամբարտավանությունը, որը հպարտությունն է, սնափառությունը, որը փառասիրությունն է, ապա բարկությունը, արծաթասիրությունը, ձանձրությունը, որկրամոլությունը, ծուլությունը, բղջախոհությունը:

Երկրորդ հարցը. ինչո՞ւ է այս պահքն առանց Գրքերի ընթերցանության և առանց պատարագի պահքում: Պատճառը հետեւյալն է: Այս

պահքը կարգվեց նահապետների կողմից, ովքեր Գրքերից, Օրենքից ու Ավետարանից առաջ կային և այսպես պահելով արդարացան։ Հետեաբար՝ մեր նախահայրերի հիշատակի համար առանց ընթերցումների ու պատարագների ենք պահում։

Իսկ մյուս բոլոր պահքերը, ինչպես Քառասնորդացը և շաբաթապահքերը, նաև ուրբաթն ու չորեցարթին, պահում ենք Հին ու Նոր Կտակարանների ընթերցումներով, որովհետև կարգվեցին այն ժամանակ, երբ արդեն կային Օրենքը և մարգարեների ու առաքյալների գրվածքները։

Երրորդ հարցը. ինչո՞ւ է այս պահքն Առաջավորաց կոչվում։ Վարդապետները բազում պատճառներ են բերում։ Նախ՝ ինչպես ասվեց, այն կարգվեց մարդու ստեղծվելուց առաջ, և պահցին առաջին նախահայրերը, այլև այն ավանդվեց Գրքերից ու Օրենքից առաջ, այդ պատճառով էլ Առաջավորաց է կոչվում։ Նաև այդպես է կոչվում որպես մեր՝ Լուսավորչի կողմից կարգված առաջին պահք։

Առաջավորաց կոչվելու պատճառ է և այն, որ սա է Մեծ պահքի առաջին շաբաթը, որովհետև ասում են, թե առաքյալները կամեցան յոթանասուն օր սահմանել Մեծ պահքը՝ ըստ նախահայրերի թվի, ինչպես պատմում է Ղուկասը (տես Ղուկ. Գ 23-38), բայց քանի որ նորահավատ քրիստոնյաները տրտնջում էին պահոց օրերի շատությունից, առաքյալները երկու շաբաթը բարեկենդան արեցին և այս շաբաթն ամեն տարի պահել հրամայեցին՝ անվանելով «Ավագ պահքի առաջավորը»։

Ուրիշներն ասում են, թե առաքյալները հիսուն օր կարգեցին պահել, սակայն մեկ շաբաթ պահելուց հետո պարզեցին, որ այս գեղքում Զատկի օրը կհամընկնի հրեական Զատկի հետ, և երկրորդ՝ Տիրոջ չարչարանքների օրը կլինի ավելի վաղ, քան գարնանային գիշերահավասարը։ Այդ պատճառով էլ երկշաբաթյա բարեկենդան սահմանեցին, և այս շաբաթն Առաջավոր անվանեցին։

Այսուհետև Մեծն Կյուրեղ երուսաղեմացին նույնն արեց իր մոտ մկրտության եկողների համար։ Հնգօրյա պահքով նրանց փորձելուց հետո թույլ տվեց հաջորդող երկու շաբաթն ուտել։ Նա սահմանեց նաև երախայցնել¹ նորընծաներին՝ կարգելով նրանց ուսման համար տասնութը ընթերցված՝ որոնք մի գրքում ամբողջացրեց և «Կոչումն ընծայության» անվանեց, որով նոր ընծայվածները կանչվում էին Քրիստոսի հավատին և ապա Ավագ հինգշաբթի օրը մկրտվում։

Հնգօրյա պահքը զգայարանների սրբության համար է, որոնցով մեղքն առաջին անգամ մտավ մարդու մեջ, և հաջորդեց մահը։ Որովհետև Աղամն իր աչքերով՝ տեսողության զգայարանով, տեսավ ծառն ու այն

¹ Երախա ասում են մկրտության պատրաստվող նորադարձին։

ցանկացավ, ականջով լսեց խաբողի ձայնը, որն իրեն հաճելի թվաց, ապա ոտքով գնաց դեպի ծառը, շոշափելիքով հպվեց պտուղին ու քաղեց այն։ Այնուհետև ոռունգներով զգաց անուշահոտությունը, ճաշակելիքով՝ քաղցրությունը, և դատապարտվեց։ Այսպես էլ այժմ մենք ենք հինգ զգայարաններով գործում բոլոր մեղքերը, որոնց համար էլ հնգօրյա պահքով սրբում ենք մեր զգայարանները։

ՀԱԲԱԹԱՊԱՀՔԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԱԿԵՐԻ ՀԱՐՅԾ

Առաջավորաց պահքի առաջին օրը պարսից Շապուհ արքայի կողմից նահատակվեց Սարգիս զորավարը, այդ պատճառով էլ նրա նահատակության տոնը կատարում ենք Առաջավորաց պահքին հաջորդող շաբաթ օրը։ Սակայն այս պահքը նրա անունով չէ, այլ վերևում ասվածների հիման վրա է Առաջավորաց կոչվում, և պահքն էլ նահատակված սրբի համար չենք պահում, այլ Աստծու։ Հերձվածողներից ու տգետներից ոմանք չարախոսում են մեզ, թե մենք մարդ ենք պաշտում և մարդու պահք ենք պահում։ Պետք է ասել, որ ամեն պահք Աստծունն է և ոչ մարդունը։ Այդպես էլ Աղուհացի առաջին շաբաթ օրը նշում ենք սուրբ Թեղողոսի տոնը, որի պատճառով էլ շատերն այդ շաբաթը նրա անունով են կոչվում, իսկ Ծաղկազարդին նախորդող շաբաթը Ղազարոսի անունով է կոչվում։ կան նաև շաբաթներ սուրբ Գրիգորի և սուրբ Հակոբի անուններով։ Այս անվանումները միայն մի շաբաթապահքը մյուսից զանազանելու համար են և գալիս են նրանից, որ տվյալ պահքի ավարտին հիշված սրբի տոնն ենք նշում, որի համար էլ պահքը սրբի անունն է սոտացել։ Նույնպես և այս դեպքում պահքն Աստծու համար ենք պահում՝ մեր մեղքերի թողության և առաջին սրբերի հնգօրյա պահքին մասնակից լինելու համար, իսկ շաբաթ օրը տոնում ենք սուրբ Սարգսի տոնը։

Դարձյալ՝ երբ ավարտում ենք պահքը, սրբերի միջնորդությանն ենք դիմում, որպեսզի նրանց բարեխոսությամբ ընդունվեն մեր պահքն ու աղոթքները։ Եվ այդ օրվա վերակացուները և տոների տերերը նրանք են, ինչպես նաև պահողներին ու հույսով տոնողներին զորավիր եղողները, պահապաններն ու բարեխոսները՝ Քրիստոս Աստծու հրամանով։

Այսպիսով՝ երեք պատճառով են պահքերը կոչվում սրբերի անուններովով։ Առաջին՝ որ նրանց նահատակության օրն այդ պահքի օրերին է պատահել, և դրա համար նրանց մեծարում ենք մեծ տոներով՝ համաձայն Նիկիական ժողովի, որտեղ հրամայվեց մարտիրոսների հիշատակը շաբաթ օրը տոնել ու պատարագ մատուցել։ Երկրորդ՝ նրանց անուններով պահքերն ենք զանազանում։ Եվ երրորդ՝ նրանց բարեխոսությանն ենք

դիմում, որպեսզի ընդունվի մեր պահքը, և ամենաողորմած, բարեգութ և մարդասերն Աստված, նայելով իրեն սիրող սրբերի նահատակությանը, նրանց բարեխոսությամբ ընդունի մեր աղաչանքները և կատարի մեր խնդրվածքները՝ թողություն շնորհելով մեր բոլոր մեղքերին ու հանցանքներին, և իր սրբերին տոնակից դարձնի բոլոր հավատացյալներին՝ Քրիստոսի հավատով, հույսով ու սիրով։ Եվ նրան փառք հավիտյանս. ամեն։

ՄԵԾ ՊԱՀՀՔ

ՊԱՀՔԻ ՕՐԵՐՆ

Փրկչի հարության հրաշափառ խորհրդով, բազում ընթերցվածներով ու սաղմոսներով Եկեղեցին նշում է նախահոր փրկության տոնը: Այն հետեւյալ կերպ է արգում. զատվում է յոթանասունութ օր՝ սկսած Առաջավորաց պահքից մինչև Նոր կիրակին՝ ըստ Ղուկասի ազգաբանության արված նահապետների թվի, որովհետև Աղամից մինչև Քրիստոս յոթանասունութ սերունդ է (տես Ղուկ. Գ 23-38): Եվ ինչպես առաջին մարդու հանցանքից մինչև Երկրորդ Աղամը՝ Նա, Ով Աստված է և մարդու փրկիչը եղավ, յոթանասունութ նահապետներ եղան (որոնցում ամբարված են Աստծու նախախնամության բովանդակ խորհուրդները), այդպես էլ Քրիստոսի Եկեղեցին յոթանասունութ օր է առանձնացնում և դրանցում կատարում մարդու փրկության ամբողջ խորհուրդը: Այսպիսով՝ այս յոթանասունութ օրերը հասցնում են մեզ Աղամի առաջին կերպին և արժանացնում Աստծու տեսությանը:

Այս օրերը Եկեղեցին բաժանում է մի քանի մասի: Առաջին մասն Առաջավորաց պահքի հնգօրյա շրջանն է, որն անցնում է առանց ընթերցումների՝ ըստ այն հինգ նահապետների թվի, ովքեր առանց Օրենքի, միայն հավատով արդարացան: Դրանք են՝ Աբելը, Ենոքը, Նոյը, Աբրահամը և Խսահակը: Ապա հաջորդում է Երկշաբաթյա բարեկենդանը, որը մարմնական բարիքներ և սուրբ Հաղորդություն է պարզեցնելու: Այնուհետև, Եկեղեցու կատարելությամբ և կատարյալ քառասնօրյա պահքով գալիս ու միանում ենք առաջին նահապետների հավատին:

Մեծ պահքի շրջանում խորհրդաբար երկու քառասնօրյա պահք է կատարվում: Առաջինը կատարվում է ըստ Մովսեսի ու Եղիայի, որը սկսվելով պահոց շրջանի առաջին երկուշաբթիկց՝ հասնում է մինչև Ղազարոսի հարության օրը, իսկ երկրորդը՝ ըստ Փրկչի՝ Մեծ պահքի երկրորդ երկուշաբթիկց մինչև Տիրոջ Հարության օրը: Եվ այս երկու քառասնօրյա պահքերը, միմյանց համադրվելով ու միաձուլվելով, ընդհանուր պահքի տևողությունը հասցնում են քառասունութ օրվա՝ սկիզբն ունենալով Բուն բարեկենդանի կիրակին, որի հետ միասին ստացվում է քառասունինն օր, և Զատկի օրվա ավելացումով՝ ընդհանուրն ստացվում է հիսուն:

Առաջավորաց պահքի երկուշաբթիկց մինչև Զատկի յոթանասուն օր է, և Նոր կիրակիի յոթօրյա նախատոնակի կատարմամբ ընդհանուրն ստացվում է յոթանասունութ օր: Ղպտիներն ու հաբեշները պահում են

յոթանասուն օր, այդ պատճառով էլ այս պահքը կոչվում է նաև «Յոթանասնից պահք»: Եվ սա խորհրդավոր թիվ է:

Սա նախ մարդու կյանքի թիվն է, ինչպես ասում է Դավիթ մարդարեն. «Մեր կյանքի օրերի թիվն է յոթանասուն տարի կամ առավելագույնը՝ ութսուն տարի, որոնց մեծ մասն անցնում է ցավով ու հեծությամբ» (Սաղմ. Զթ 10): Եվ այս խորհրդով յոթանասուն օր ենք պահում և ավարտին տոնում Քրիստոսի հարությունը, որպեսզի այս կյանքից հետո Քրիստոսի հարությանն ու փառքին արժանանանք:

Երկրորդ՝ Աստծու ժողովուրդը յոթանասուն տարի մնաց գերության մեջ Բարեկոնում և ապա ազատվեց Զորոարքելի և Հեսու քահանայի միջոցով (տես Ա Եզր). Այդ պատճառով էլ սա խորհրդանշում է մեր պանդխտության ժամանակը. որովհետև թշվառացանք, և գերեց մեզ սատանան Դրախտից ու զանազան մեղքերով տանջեց երկրի վրա: Եվ Հիսուս, Ով Քահանա է ու Թագավոր, վերստին ազատեց մեզ:

Յոթանասունը, ըստ բարեկոնյան գերության տարիների թվի, նաև մաշն է խորհրդանշում, ուր վտարվեցինք ծառայության, որից մեզ ազատեց Քրիստոս Իր հարությամբ՝ վերստին շինելով տաճարն Իր Մարմնով, Ում տաճարը մենք ենք, և Իր տան փառքն ավելի մեծացնելով՝ Նոր կիրակիին կատարում է Իր Եկեղեցու հաստատության նավակատիքը:

Բարեկենդանի կիրակիից մինչև Զատկի կիրակին հիսուն օր է: Եվ սա ունի բազում խորհուրդներ: Նախ՝ որ հիսունը հոբելյանական թիվ է, և Հիսուներորդ տարում թողություն և ազատություն է լինում բոլորին՝ ըստ Մովսեսի օրենքի. Եթե ծառա է, ազատություն է ստանում, իսկ եթե մեկ այլ ոք՝ իր տիրոջն է դառնում: Այս պահքով նաև մենք ենք թողություն գտնում մեղքերի պարտավորությունից ու Օրենքից, որով անեծքի տակ դատապարտված էինք, որովհետև, ըստ Տիրոջ խոսքի, մեղքի ծառա էինք. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, թե ամեն ոք, որ մեղք է գործում, մեղքին ծառա է» (Չովի. Ը 34): Սա ցույց է տալիս նաև, որ սա՛ է ապաշխարության ժամանակը, և Հիսունորյա պահքի միջոցով ժողություն կգտնենք բոլոր մեղքերից ու կազմավենք սատանայի ծառայությունից:

Տարվա մեջ երեք հիսնյակներ կան, որոնցով Եկեղեցին պատվում է երեք մեծամեծ տոններ՝ Ծնունդը, Հարությունը և Վարդավառը: Առաջին Հիսնյակը Սուրբ Ծնունդին նախորդող Հիսնակաց պահքն է, որը խորհրդանշում է նահապետների աստվածապաշտությունը մինչև Մովսես: Երկրորդ հիսնյակը Մեծ պահքի շրջանն է, որը խորհրդանշում է մարդարեների աստվածապաշտությունը մինչև Հովհաննես Մկրտիչ, իսկ երրորդ հիսնյակը Վարդավառին նախորդող հիսուն օրերն են, որը խորհրդանշում

է քրիստոնյաների աստվածապաշտությունը մինչև Տիրոջ Երկրորդ գալուստը:

Դարձյալ՝ առաջին հիսնյակը խորհրդանշում է նահապետների արդարությունը՝ սկսած Աղամից մինչև Հակոբ նահապետ: Երկրորդ հիսնյակը խորհրդանշում է Օրենքը և մարդարեռությունները՝ մինչև Հովհաննես Մկրտիչը, իսկ երրորդ հիսնյակը՝ մեր Տիրոջ Ավետարանի քարոզությունը մինչև աշխարհի վախճանը:

Դարձյալ՝ Ծննդյան հիսնյակը խորհրդանշում է մեր Տիրոջ աշխարհ գալը և մարդկանց մեջ շրջելը, Հարության հիսնյակը՝ Տիրոջ խաչի վրա մահանալը, դժոխք իջնելը, հարություն առնելը և հոգիներին դժոխքից ազատելը, իսկ Վարդապառի հիսնյակը՝ Տիրոջ Երկրորդ գալուստը, մեռելների հարությունը և արդարների երկինք ելնելը:

Ծննդյան հիսնյակը խորհրդանշում է նաև մեր այս կյանքից ելնելը և ծնվելը հոգեսոր աշխարհում, Հարության հիսնյակը՝ մեր հարությունը, իսկ Վարդապառի հիսնյակը՝ պայծառ փառքով հավատացյալների՝ երկինք վերանալը:

Պահքի տեսողությունը, Բուն բարեկենդանի հետ միասին, քառասունինն օր է, որն ունի հետեւյալ խորհուրդը: Երբ Բարելոնում երեք պատանիներին նետեցին հնոցը՝ Նաբուքոդոնոսոր արքայի կանգնեցրած պատկերին չերկրպագելու պատճառով (տե՛ս Դան. Գ 21), այնժամ Բանն Աստված իջավ հնոցի բոցերի մեջ ու փրկեց երեք պատանիներին կրակով այրվելուց (տե՛ս Դան. Գ 49): Եվ այդ հնոցի բոցերը քառասունինը կանգուն բարձրություն ունեին (տե՛ս Դան. Գ 47), որն այս Մեծ պահքի օրինակն է, և որի ժամանակը սպառվում է քառասունիններորդ օրը՝ սուրբ երեկոյին, երբ երգում ենք Նրա օրհնությունը, Ով փրկեց մանուկներին հնոցից, իսկ մեզ՝ դժոխքից:

Արդ՝ նրանք, կրակը քառասունինը կանգուն բարձրացնելով, կռապաշտ ազդի մեղքերն իջեցրին, իսկ մենք քառասունիննօրյա պահքով քավում ենք մեր անօրենությունները, որոնք ավելի վեր են բարձրացել, քան մենք, և մի կողմ դնելով ծանր բեռը՝ նրանց նման արձակվում ենք մեղքերի կապանքներից, Քրիստոսի չարչարանքներով փրկվում պատրաստված հրի սպառնալիքից և հույսով սպասում գերությունից մեր հոգիների դարձին:

Դարձյալ՝ ծոմաջան աշխատությամբ ու շարունակ ընթերցումներով պետք է գգուշավոր լինել Ավագ շաբաթվա օրերին: Մովսեսը դևտացիներին հատկացրած քահանայական քաղաքներից վեցը տվեց որպես ապաստան ակամա սպանողներին (Թվեր ԼԵ 11): Այդ քաղաքները քահանայական են կոչվում, որովհետև ապաշխարողները քահանաների աղոթքի

միջոցով են մեղքերի թողություն ստանում: Իսկ մեզ համար այս չարչարանքի օրերն են հուսո ապաստարան՝ Տիրոջ չարչարանքներով մեզ հավիտենական մահվանից փրկելու համար:

Դահոց շրջանի բուն պահքի օրերի թիվը քառասունութ է՝ ըստ քառասունութ ապաստանի քաղաքների թվի, որովհետև հիսունից երկու կիրակին՝ Բարեկենդանը և Զատիկը, ուտիք է, և քառասունութ օրերը՝ պահք: Հետուն ակամա սպանողներին քառասունութ քահանայական քաղաքներ տվեց (տես Յեսու Իւ 41), որը խորհրդանշում է քառասունութօրյա պահքը, որովհետև թողության շնորհով հույսը շատանալու էր քառասունութ օր պահողների համար՝ ըստ քառասունութ քահանայական քաղաքների, որոնց մենք, մահապարտ լինելով, ապավինում ենք, և հեռանալով կենցաղային բոլոր հեշտություններից՝ կերակրից, անկողնուց, կանանցից ու հանդերձներից, և ժուժկալ պահքով, հսկման աղոթքներով ու խարազանազգեստ՝ սպասում ենք Մեծ Քահանայապետի՝ Քրիստոսի մահվանը, Ում մահով էլ թողություն ենք ստանում ու վերադառնում մեր ստացվածքներին՝ կերակրին, անկողնուն և այլ ամենին, և ոչ ոք այլես չի պատժի մեզ մեր հանցանքների համար:

Ինչպես ասում է Սուրբ Գիրքը. «Եթե սպանվածի մերձավորը նրան գտնի նրա ապաստանած քաղաքից դուրս, ապա սպանվածի արյունակիցը թող սպանի մարդասպանին և մահապարտ չգտնվի» (Թվեր Լե 27): Արդ՝ սպանողն Աղամն էր և նրա սերունդը. այսինքն՝ մենք, որ բռնության ախտից ու դեերի պատրանքներից մղված մեր հոգիների ակամա սպանողը եղանք: Դրա համար պետք է մտնել պահքի քառասունութ «քաղաքները», որպեսզի սպանվածի մերձակա արյունակիցը չսպանի մեզ՝ ապաստանի քաղաքից դուրս հայտնաբերելով: Մեր արյան մերձավորը Քրիստոս է, Ով արյամբ ու մարմնով լծակից է մեզ, որովհետև արյամբ ու մարմնով մեզ հավասարվեց: Եվ եթե նա մեզ հայտնաբերի քառասունութ ապաստանի քաղաքներից, այսինքն՝ քառասունութօրյա պահքից ու աղոթքից դուրս, անարժան վաստակով, ապա իր մյուս անգամ գալստյանը կսպանի մեզ:

Եվ ինչպես որ տարվա քահանայապետի վախճանումով ազատվում էր մարդասպանը և վերադառնում իր տունը (տես Թվեր Լե 28), այդպես և մենք ենք ազատվում մեր մեղքերի պատմից, երբ Աղագ ուրբաթ օրը խաչի վրա խորհրդաբար մահանում է մեր Մեծ Քահանայապետը՝ Քրիստոս, և ապա վերադառնում ենք մեր հայրենին՝ Դրախտ: Քանզի ուրբաթը Քրիստոսի չարչարանքների քառասունութերորդ օրն է՝ հաշված Բուն բարեկենդանից, երբ Մեծ Քահանայապետը՝ Քրիստոս, համբերելով մահվանը, կատարեց մեր փրկությունը երկրի վրա, և մարդկային բնությունը, որը մինչ այդ մահվան էր դատապարտված, ազատեց և վերադարձրեց իր

նախկին ժառանգությանը: Ասվում է, որ սա հավիտենական օրենք է, որը եղավ ճշմարտության օրինակ, որովհետև դա էր այն օրինակը, որը դրվեց մեր փրկության համար:

Ինչպես Մովսեսի միջոցով կարգված հոբելյանական տարում, այս մինքն՝ քառասունինը տարի հետո, ազատություն էր լինում արծաթով գնված ծառաների համար (տես Ղև. ԻԵ 8-11), այդպես էլ պահոց քառասունինը օրերից հետո ազատվում ենք մեղքի ծառայությունից: Եվ դու տե՛ս Աստծու մեծ խորհուրդը. ինչպես ապաստանի քաղաքներից մահապարտները դառնում են դեպի իրենց ժառանգությունը, նույնպես էլ հոբելյանական տարում ժառանգությունը դառնում է ժառանգին: Արժե և մեզ ըստ օրինակի գնալ գեպի ճշմարտությունը և Օրենքով ու մարդարեություններով Աստծու վկայած սուրբ ու խորհրդական այս պահքի օրերին հավատով ու պարկեցտությամբ, առանց նվազեցնելու պահել և սպասել մեր ճշմարիտ Մեծ Քահանայապետի՝ Հիսուս Քրիստոսի մահվանը, Ում շնորհիվ ազատվելով՝ արժանանում ենք Վերին Քաղաքին, որի դուռը պահքն է:

Քառասունինը նաև յոթ անգամ յոթն է, այսինքն՝ յոթշաբաթյա պահքը, որն այս կյանքի յոթնօրյա շրջագայության համար է:

Յոթ անգամ յոթը գրված է նաև այն խորհրդով, որ քավություն լինի յոթ գլխավոր մահացու մեղքերի համար, որոնք են՝ հպարտությունը, նախանձը, բարկությունը, ծուլությունը, ագահությունը, որկրամոլությունը և բղջախոհությունը, և սրանք ներդործում են մեզ վրա մեր հինգ դգայարաններով:

Յոթ տարին ուսման ժամանակն է, և մեզ համար կատարյալ ուսման ժամանակ է յոթշաբաթյա պահքը:

Յոթ թիվը կույս թիվ է ասվում իմաստունների կողմից, այն ոչ ծնում է և ոչ էլ ծնվում: Եվ մեր յոթշաբաթյա պահքով կուսություն է ստանում մեր հոգեսոր մարդը (Իմնո. Յօնն. Է 22, Բ Կորնթ. Դ 16): Արդ՝ չհղանանք չարությամբ և անօրինություն չծնենք, և չլինենք սատանայի որդիներ՝ նրա ցանկությունները կատարելով:

Աստված հանգստացավ յոթերորդ օրն իր բոլոր գործերից, և մենք էլ յոթ շաբաթ՝ մեր չար գործերից:

Յոթերորդ օրը եբրայեցիները դադարեցնում են իրենց բոլոր գործերը, և մենք էլ չար գործեր կատար ենք յոթշաբաթյա պահքի շրջանում:

Իմաստությունն իր տունը յոթ սյուների վրա շինեց (տես Առակ. Թ 1), իսկ մենք հաստատվում ենք յոթ շաբաթվա պահքով:

Քառասնորդած ուշը

Պահքերից առաջինն ու մեծը սուրբ Քառասնորդացն է, որ օրինադրեցին ու պահեցին մարգարեները, որը նաև Քրիստոս պատվեց և մեզ ավանդեց: Պահքը սկսվում է Բարեկենդանին և ավարտվում Զատկին, և այն «Քառասնորդաց» է կոչվում, որովհետեւ պահոց երկրորդ կիրակից մինչև Տիրոջ ընթրիքը կազմում է քառասուն օր: Եվ սա ունի բազում խորհուրդներ:

Նախ՝ որովհետեւ այս քառասունը սատանայի փորձությունների ժամանակն է, որովհետեւ Քրիստոս քառասնօրյա պահքով հաղթեց փորձող սատանային: Նույնպես և մենք քառասնօրյա պահքով հաղթում ենք սատանայի փորձությունները, և նա հեռանում է մեզանից, ինչպես ասում է Ավետարանը. «Այդ տեսակն ուրիշ բանով չի ենի, եթե ոչ ծոմապահությամբ ու աղոթքով» (Սարկ. Թ 28):

Երկրորդ՝ այս քառասունը ժամանակն է մարտերի ու պատերազմների, և չարչարելով ու մեր մարմինը զրկելով՝ պատերազմում ենք ընդդեմ ախտերի ու հաճույքների: Պահքով, ծոմով ու ծարավով չարչարում ենք մեր մարմինը և ողորմություն տալով՝ հաղթում աշխարհին, իսկ խոնարհությամբ հաղթում սատանային, ինչպես սաղմոսն է ասում. «Զարչարվեցի և սաստիկ կորացա, մոնչացի սրտիս հեծությունից» (Սաղմ. Լէ 9):

Երրորդ՝ այս քառասնօրյա պահքն օրհնվեց և սրբվեց Աստծուց ու մարգարեներից, որովհետեւ գրված է. «Եղիան քառասուն օր ու քառասուն գիշեր քայլեց մինչև Աստծու Փորեր լեռը» (Գ Թագ. Ժթ 8): Սա ցույց է տալիս, թե ովքեր սրբությամբ պահում են այս քառասուն օրերը, համարձակապես պիտի ժամանեն Աստծու լեռը՝ երկինք՝ Քրիստոսի մոտ:

Մովսեսը քառասուն ցերեկ ու քառասուն գիշեր պահեց և Տիրոջից Օրենքը ստացավ: Սա նշանակում է, որ նրանք, ովքեր սրբությամբ պահում են այս քառասուն օրերը, Աստծու օրենքներն ու պատվիրաններն են ընդունում:

Իսրայելի ժողովուրդը անապատում քառասուն տարի մնալուց հետո միայն հասավ պարզե ստացված երկիրը: Սա այն է խորհրդանշում, որ եթե քրիստոնյա ժողովուրդը քառասնօրյա պահքով Աստծուն երկրպագի, ապա կհասնի Դրախտ՝ Վերին Երուսաղեմ: Այսպես օրհնված ու սրբված է այս քառասունքն Աստծուց և մարգարեներից:

Հին ու նոր Կտակարաններում այս պահքի օրերի քառասուն թվի վերաբերյալ բազում վկայություններ կան, ինչպես օրինակ՝ տապանի և տաճարի չափերում, նաև Սողոմոնի պալատի չափերում (տե՛ս Գ Թագ. Է 38), ինչպես նաև ջրհեղեղի օրերի, Մովսեսի ու Սամվելի կյանքի, Դավթի ու Աղոթմոնի թագավորության տարիների թվում:

Այս պահքը կոչվում է նաև «Աղուհացից», որովհետև նախկինում այս պահքի կերակուրն աղն ու հացն են եղել: Այսպես պահել են հավատացյալներն առաքյալների ու առաջին հայրապետների ժամանակներում, երբ գեռ ջերմեռանդ էին քրիստոնեական հավատի մեջ, իսկ այնուհետև թուլանալով՝ աստիճանաբար սկսեցին ուտել նաև այլ կերակուրներ: Եվ թեպետ մենք նման չենք մեր նախնիներին ո՛չ պահքով և ո՛չ էլ այլ սրբություններով, սակայն նրանց այս պահքը մեզ զանազան խրատներ է տալիս: Նախ՝ որ ուտում էին ժամանակին ու աղոթքով և տասներորդ ժամից ոչ շուտ, օրական մեկ անգամ և չէին հագեցնում իրենց մարմինը զանազան խորտիկներով, որն ավելորդ է ու միայն մարմինն է պարարտացնում, այլ միայն հաց, ջուր և բանջար էին ուտում, այն էլ՝ չափավոր՝ ո՛չ հագենալու համար, և քաղցով ու ծարավով ճնշում էին իրենց մարմինը:

Այս օրերին եկեղեցին ծածկում է խորանը վարագույրով և արգելում Ավետարանի համբուրումը, որովհետև մենք մի ամբողջ տարի մեղքեր գործեցինք՝ ապրելով սխալական կյանքով ու տկար մարմնով, ինչպես Աղամին մեղքից հետո Տերը զրկեց Դրախտից ու Կենաց ծառից: Աղամին հրամայվեց ուտել բոլոր ծառերից և միայն մի ծառից չուտել, իսկ մեզ համար օրինադրվեց ուտել միայն Բարեկենդանի ու Զատկի օրերին և նրանց միջև եղած օրերին պահք պահել:

Աղամն ուտելով մեղավոր դարձավ ու արտաքսվեց Դրախտից, իսկ մենք մեղավոր եղանք և՝ կերակրի, և՝ մեր գործերի պատճառով, ուստի երկուսի համար էլ պահում ենք: Որպեսզի, ինչպես Քրիստոս իր մահով նախաստեղծներին հանեց դժոխքից և Դրախտ հրավիրեց, նույնպես և մեզ ազատի մեր ծանր խղճմանքից՝ իբրև դժոխքից, մտցնի եկեղեցի և տա Կյանքի կերակուրը՝ իր Մարմինն ու Արյունը:

Մարդը երկակի բնույթ ունի՝ մարմնավոր ու հոգևոր, և մարմնավորը հաճախ է ենթարկվում կերակրի հարկադրանքին, մինչդեռ Մեծ պահքի օրերին բազմանում է հոգևոր կերակուրը, որպեսզի հոգին չմեռնի:

Արդ՝ այս պահքը սուրբ Քառասնորդաց պահք է ասվում նաև, որովհետև Բուն բարեկենդանից մինչև վեցերորդ շաբաթվա ուրբաթ օրը քառասուն օր է, որը Ղազարոսի հարության օրն է: Սա հույժ խորհրդավոր օր է, քանզի, ինչպես ասում են իմաստունները, Տերն Աղամին արարումից քառասուն օր հետո միայն դրեց Դրախտում, և մեզ՝ պահքը պահողներիս, հարություն է տալու Ղազարոսի օրինակով և Ողոգոմյան (Ծաղկագարդի) տոնին ներս է տանելու եկեղեցի:

Քրիստոս քառասնօրյա պահքը տվեց մեր Հոգաթավալ Հոգու և մարմնի համար, և փոխանակ Դրախտի՝ Քրիստոսի խաչելությամբ մտնում ենք Եկեղեցի, որը երկինք է երկրի վրա:

Նոյի օրերին՝ ջրհեղեղի ժամանակ, քառասուն օր անձրև եկավ (տես Ծննդ. Է 17). Եթե մարդիկ ապաշխարեին, ապա չէր լինի քառասնօրյա անձրևը: Ջրերի քառասուն օր Հորդելն օրինակն է քառասնօրյա պահքի: Պահքի «ջրերը» մարում են Հոգու մեղսալից կրակն ու այն մաքրում Հեղձուցիչ ախտերից:

Աբրահամը քառասուն օր ու քառասուն գիշեր պահեց, որովհետեւ ուխտեց ոչինչ չուտել առանց Հյուրերի, քանի որ ողորմած էր, և դրանով եղավ Աստծուն հաճելի և արդարների հայր: Սատանան, այս իմանալով, փակեց ճանապարհները, և քառասուն օր ոչ մի Հյուր չեկավ Աբրահամի մոտ, մինչև Հորից Միածինն առաքվեց Երկու հրեշտակներով հանդերձ, ովքեր փոխանակ հյուրերի՝ տվեցին Որդու ավետիսը (տես Ծննդ. Ժ 1): Եվ եթե մենք էլ պահենք ըստ կարողության, ապա Աստված մեզ մոտ ևս կգա՝ իր Որդով ու Սուրբ Հոգով և բոլոր հրեշտակներով:

Մովսեսը քառասուն օր՝ գիշեր ու ցերեկ, պահեց և արժանացավ Աստծու տեսությանը և երկու քարեղեն տախտակներին:

Քառասնորդական պահքը երեք անգամ պահեց նաև Հեսուն, որոնցից երկուսը՝ Մովսեսի հետ, իսկ մեկը՝ հետո, և աշակերտելով Մովսեսին՝ հասավ Ավետյաց երկիրը: Նույնն անելով՝ մենք ևս Աստծու որդի ենք դառնում և արժանանում Վերին Երուսաղեմին:

Իսրայելի որդիներն անապատում քառասուն տարի շարունակ կերան մանանան, իսկ մենք պահքի օրերին վայելում ենք Աստվածային Գրքերի իմաստությունը, որովհետեւ Քառասնորդացից հետո ստանալու ենք մի երկիր, ուր բխում է կաթ ու մեղք, ինչպես և նրանք ստացան:

Սավուղը, Դավիթն ու Սողոմոնը քառասուն տարի թագավորեցին, և քառասնօրյա պահքով էլ մեր մարմինը, Հոգին ու միտքը կթագավորեն պես-պես ստահակ ցանկությունների վրա, որոնք կործանում են մեր անձերը:

Հստ Օրենքի՝ քառասուն անգամ մահակով հարվածում էին հանցավորին, իսկ մենք, հանցավոր լինելով, Քրիստոսի օրենքով քառասնօրյա պահքով ենք տանջվում և սրբվելով մտնում Եկեղեցի՝ բարի գործերով:

Փրկիչը երեք անգամ, քառասուն օրերի միջոցով, մեզ Աստծու առջեկանգնեցրեց: Եվ այս երեք քառասուններով մեր երեք ծնունդներն են խորհրդանշվում, որոնցից առաջինը մարմնավոր ծնունդն է մորից, երկրորդը՝ Հոգեոր ծնունդը՝ Ավագանից, երրորդը՝ Հարությամբ ծնունդը՝

գերեզմանից: Տերը երեք անգամ մեղ ստեղծեց, որպեսզի լինենք առաջին ստեղծվածի նման:

Գրիգոր Աստվածաբանն ասում է. «Մեր երեք ծնունդներն էլ Քրիստոսի իրենով պատվեց՝ իր ծննդյամբ, մկրտությամբ ու հարությամբ»: Նախ՝ Տերն իր քառասնօրյա հասակում տաճար մտնելով՝ մեզ մաքրեց անեծքից ու ծննդական աղտեղություններից և մտցրեց տաճար՝ ընծայելով Հորը: Եվ մենք քառասնօրյա պահքով սրբվում ենք հոգու պղծություններից, ոչ թե տատրակներով, այլ Հիսուսի քաղցր խոսքով, և ընծայվում Տիրոջը: Տիրոջ՝ քառասնօրյա հասակում տաճար գալստյամբ՝ բոլոր հավատացյալներս ընծայվում ենք Հորը, ինչպես մարմնի անդամները միանում են գլխին՝ ըստ առաքյալի խոսքի. «Ամբողջ մարմինն իրար ամրորեն միացած՝ զանազան հոգերով, գլխին է միացած, որը Քրիստոս է» (հմնտ. Եփես. Դ 15-16): Իսկ մենք քառասնօրյա պահքով մանկանում ենք չարի մեջ և մաքրված կանգնում Աստծու առաջ:

Երկրորդ՝ մկրտությունից հետո Տերը սատանայի գեմ մարտնչեց քառասնօրյա պահքով՝ որպես կցորդություն խաչի վրա կրած իր չարչարանքների, որով ավազակը վերստին Դրախտ մտավ Նրա հետ, և թշնամին կործանվեց: Մենք նույնպիսի պահքով ենք հաղթում թշնամուն՝ նրան, ով կերակրի միջոցով մեզ հեռացըրեց Կենաց ծառից: Հիսուսի մկրտությունից հետո քառասնօրյա պահքը նշանակում է նաև մեր վերստին ծնունդից մինչև մահ՝ տաժանելի կյանքի բոլոր օրերը մեծ սգով և տառապանքով անցկացնելու:

Երբորդ՝ Հարությունից քառասուն օր հետո, առանց պահքի, քառասնօրյա վայելումով Տերը Համբարձվեց, որպեսզի մենք քառասնօրյա պահքով սովորենք մտքով բարձրանալ և Հարություն առնելով իբրև Հարսանքավորներ՝ Նրա հետ նստենք երկնքում, ուր մտավ մեր Կարապետը և մեզ Համար Աստծու առջե կանգնելով՝ մեզ էլ իր հետ Աստծու առջե է տանում: Հարությունից քառասուն օր անց Համբարձումը նշանակում է նաև Հարությունից հետո մեր Համբառնալն ամպերով՝ Տիրոջն ընդառաջ՝ բայ Պողոսի խոսքի (տեսԱթեսաղ. Դ 16):

ԻՆՉՈ՞Ւ ՔՐԻՍՏՈ ՔԱՂՋԱԿԻ ՕՐ ՈՒ ԳԻԵԿԻ ՊԱՀԵՔ

Քրիստոս Իր համար չպահեց, քանի որ անմեղ էր և դրա կարիքը չուներ: Պահեց ցույց տալու համար, որ Հին օրենքն ու մարգարեները և Նոր օրենքն ու ինքը մեկմեկու հակառակ չեն, այլ համաձայն են միմյանց:

Սակայն Քրիստոսի և մարգարեների պահքի միջև զանազանություն կա: Մովսեսը պահեց Աստծու Խոսքի գորությամբ, Ով խոսեց նրա հետ

Սինա լեռան վրա՝ Օրենքը ստանալու համար, Եղիան պահեց Հրեշտակի տված կերակրի զորությամբ, որպեսզի գնա առ Աստված՝ դեպի Քորեք լեռը (տես Գ Թագ. ԺԹ 7-8), իսկ Քրիստոս պահեց իր զորությամբ, և այդ պատճառով էլ սատանան չգնաց փորձելու Մովսեսին ու Եղիային և նրանց համար չսասաց, թե Աստծու որդիներ են, քանզի ստուգապես գիտեր, որ մարդիկ են, իսկ Քրիստոսի պարագայում տարակուսում էր: Եվ Քրիստոս պահքով ցույց տվեց իր Աստվածությունը, իսկ քաղցելով՝ մարդկությունը:

Մեղքով ապականված աշխարհն Աստված մաքրեց քառասնօրյա անձրեսով ու ջրհեղեղով, և քանի որ մարդն էլ մի աշխարհ է, դրա համար քառասնօրյա պահքով ու արտասուքով պիտի մաքրվի մեղքերից:

Քրիստոս քառասուն շաբաթ բնակվեց Կույսի արգանդում, քառասուն ամիս քարոզեց աշխարհի վրա և քառասուն ժամ մնաց մեռածների հետ: Չնայած որ Նրա Մարմինը երեսուն ժամ մնաց գերեզմանում, իսկ հոգին՝ երեսուներեք ժամ դժոխքում, սակայն մինչև հարության օրվա լուսաբացին երեալը նա մեռածների հետ էր համարվում, և դրա համար քառասուն ժամ է ասվում:

Պահքի առևտնաւայտնությունները

Քառասնօրդաց պահքը վեց առանձնահատկություններ ունի: Նախ՝ փակվում են Եկեղեցու դռները¹, երկրորդ՝ պատարագ չի մատուցվում և Ավետարան չի ընթերցվում, բացի շաբաթ և կիրակի օրերից, երրորդ՝ ընթերցվում են հին մարգարեռությունները, չորրորդ՝ Հոգեհանգստյան կարգ չի կատարվում, հինգերորդ՝ տոներ չեն տոնվում, վեցերորդ՝ փոխվում է նաև ժամերգության կարգը:

Քառասնօրդաց պահքի ընթացքում փակվում է Եկեղեցու դռւոր, և դռան առջև ենք աղոթում՝ երեք պատճառներով: Նախ՝ որ Եկեղեցին Դրախտի օրինակն է, և երբ մարդը մեղքի պատճառով արտաքսվեց Դրախտից, Դրախտի դռուրը փակվեց հրեղեն սերովեներով ու բոցեղեն քերովեներով, մինչև Տերը խաչի միջոցով բացեց դռւոն ավագակի համար՝ ասելով. «Ճշմարիտ եմ ասում քեզ, այսօր ինձ հետ Դրախտում կլինես» (Ղուկ. ԻԳ 43): Նույնպես և մենք մեր մեղքերի պատճառով Եկեղեցուց դռւոր ենք մնում մինչև Քրիստոսի խաչվելն ու հարությունը:

Երկրորդ՝ Նոյան տապանը Եկեղեցու օրինակն է. աղոթարահը, որը համապատասխանում է տապանի ներքնատանը, ժողովրդի տեղն է. ատ-

¹ Մեր օրերում փակվում է միայն Եկեղեցու վարագույրը:

յանը, որը համապատասխանում է տապանի միջին մասին՝ սարկավագների ու դպիրների տեղն է. բեմը, որը համապատասխանում է տապանի վերին մասին՝ քահանաների տեղն է, իսկ սուրբ Սեղանը պատարագներ մատուցելու տեղն է: Եվ ինչպես տապանաբնակներն այնտեղ մի տարի կերակրվեցին, այդպես էլ այստեղ Քրիստոսի Մարմնով ու Արյամբ մենք ենք կերակրվում: Եվ ինչպես այնտեղ հավաքված էին բոլոր տեսակի գաղաններից ու անասուններից, այդպես էլ այստեղ հավաքվել են և' գաղանաբարոս մարդիկ, և' գառնուկի նման անմեղներ, և հավաքվածները չեն մեղանչում միմյանց նկատմամբ՝ ըստ հետևյալ խոսքի. «Յուզն ու առյուծը միասին պիտի սնվեն» (Եսայի ԺԱ 6): Նոյր տապանի միջոցով փրկեց կենդանիներին ջրհեղեղից, իսկ Քրիստոսի կառուցած եկեղեցին այս աշխարհի ծովում փրկում է մեր հոգին մեղքերի ջրհեղեղից: Եվ ինչպես այն ժամանակ յոթ օր փակվեց դուռը, և այլևս ոչ ոք ներս չմտավ, և այնուհետեւ անձրեւ սկսվեց, այստեղ նույնպես յոթ շաբաթ փակվում է դուռը, և ոչ ոք ներս չի մտնում, որից հետո կորչելու են մեղավորները հրեղեն անձրեւով, ինչպես Դավիթն է ասում. «Մեղավորների վրա որոգայթ, հուր և ծծումբ կտեղա, փոթորկի շունչն է նրանց բաժակի բաժինը» (Սաղմ. Ժ 7):

Երրորդ՝ բորոտներն ըստ Հին օրենքի յոթ օր բանակից դուրս էին մնում և ապա հանդերձները լվանալով ու արյան պատարագներով քահանայի միջոցով սրբվելով՝ մտնում բանակ: Բորոտ նշանակում է մեղավոր, ով զանազան մեղքերով գարշելի եղավ: Եվ մենք այս օրինակով, փոխանակ նախկին յոթ օրերի, յոթ շաբաթ եկեղեցուց դուրս ենք մնում, ապա քահանայի առջև խոստովանելով՝ լվանում ենք մեր մեղքերը և ճշմարիտ Գառան՝ Քրիստոսի Արյամբ սրբվում ու մտնում եկեղեցի:

Երկրորդ առանձնահատկություն՝ պատարագ չմատուցելու վերաբերյալ:

Սուրբ հայրերը կանոն կարգեցին, որ Քառասնորդաց պահքի օրերին պատարագ չմատուցվի, բայց շաբաթ և կիրակի օրերից, որովհետեւ այս օրերին ապաշխարության մեջ ենք և եկեղեցուց դուրս, հետևաբար՝ չենք կարող Քրիստոսին պատարագել:

Դարձյալ՝ քանի որ Քրիստոս նախ պահեց այս քառասունքը և հետո եկավ Վերնատուն ու պատարագվեց, նույնպես և մենք՝ նախ պահում ենք Քրիստոսի հետ և ապա՝ թշնամուն հաղթելուց հետո, պատարագում Քրիստոսին:

Նաև Ավետարան չի ընթերցվում, որովհետև Քրիստոս մկրտությունից հետո նախ քառասուն օր պահեց և ապա՝ քարոզեց Ավետարանը: Այսպես և մենք. նախ պահում ենք, ապա՝ Զատկից առաջ, ըստ կարգի, սկսում ընթերցել Ավետարանը:

Իսկ երրորդ առանձնահատկությունն այն է, որ ընթերցում ենք հին մարգարեների գրքերից ընթերցվածներ։ Ինչպես Մովսեսը, քառասուն օր պահելով լեռան վրա, Աստծուց Օրենքը վերցրեց և սովորեցրեց ժողովրդին, այդպես էլ մենք քառասնօրյա այս պահքի ընթացքում կարդում ենք Հին օրենքը։

Իսկ ընթերցվածները երկու կարգի են։ Մեկը մեծ կարգն է՝ ապաշխարության համար, որը սահմանեց Հակոբոս Տյառնեղբայրը, մյուսը փոքր կարգն է, որը հետագայում սուրբ Կյուրեղ երուսաղեմացի Հայրապետը սահմանեց որպես խրատ երաեխաներին, ովքեր մկրտվում էին Ավագ հինգչաբթի օրը։ Այսպես և մենք՝ մեծ կարգն ընթերցում ենք մահացու մեղքերի ապաշխարության համար և Ավագ հինգչաբթի օրվա երրորդ ժամին արձակում ստանում, իսկ տասներորդ ժամին լվանալով ոտքերը՝ սրբվում նաև ներելի մեղքերից։

Չորրորդ՝ հոգեհանգստյան կարգ չենք կատարում մինչև Ղազարոսի հարության օրը, հետեւյալ պատճառներով։ Նախ որ մենք՝ ողջերս, ապաշխարության մեջ ենք և Աստծուց արտաքսված՝ չենք կարող մահացածների համար միջնորդել ու բարեկասել։

Դարձյալ՝ վեցշաբաթյա պահքը խորհրդանշում է վեց դարերը, երբ Քրիստոսից առաջ բոլոր ննջեցյալները՝ և' արդարները, և' մեղավորները, դժոխք էին իջնում։ Եվ Ղազարոսի տոնը նշանակն է Քրիստոսի գալստյան, Ով եկավ ու ազատեց հոգիները դժոխքից։ Եվ ինչպես ինքը՝ Քրիստոս, հարություն տվեց Ղազարոսին մեռելներից, այնպես էլ գերեզմանների վրա Ավետարան է ընթերցվում, որպեսզի մեծ հարության ժամանակ Տերը նաև նրանց արժանացնի իր ձայնը լսելուն։

Հինգերորդ առանձնահատկությունն այն է, որ այս պահքի օրերին տոներ չենք կատարում։ Որովհետև տոնն ուրախություն է՝ ինչպես հոգու, այնպես էլ մարմնի, դրա համար էլ, երբ տոնում ենք, ուրախանում ենք և' հոգով, և' մարմնով։ Իսկ պահքը սուր է և ապաշխարություն՝ մեր գործած հանցանքների համար։ Հորեքշաբթի օրը եվայի հանցանքների, ուրբաթը՝ Աղամի, իսկ շաբաթվա մյուս օրերը՝ մեր հոգու, մտքի ու մարմնի մեղքերի համար։ Դարձյալ՝ քանի դեռ պահքի մեջ ենք, ապաշխարության մեջ ենք, արժանի չենք տոներ կատարելու, բայց երբ ապաշխարությամբ քավում ենք մեր մեղքերը, արժանանում ենք տոնելու և՛ տերունական, և' սրբոց տոները։

Իսկ շաբաթ օրը տոնում ենք մարտիրոսների տոները, որովհետև ուրբաթ օրը նրանք չարչարանակից եղան Քրիստոսին, այդ պատճառով էլ շաբաթ օրը հանգստանում են Քրիստոսի հետ։ Կիրակի օրը Քրիստոսի

Հարության տոնն ենք տոնում, և, ըստ սուրբ Հայրերի կանոնի, այս երկու օրը պատարագ է մատուցվում:

Վեցերորդ առանձնահատկությունը ժամակարգության փոփոխությունն է: Ասենք, որ կարգը չի փոխվում, այլ ավելանում են որոշ սաղմոսներ ու երգեր, և որոշ բաներ էլ պակասում են:

Իսկ եթե ասեն, թե ինչո՞ւ է միայն մի քահանա ներսում, և ինչո՞ւ է միայն նա արժանանում պատարագելու Քրիստոսին, ապա ասենք, որ սա կատարվում է երեք պատճառով: Նախ՝ որովհետև երբ մարդը հանցանք գործեց, մարդկային բնությունն այլևս արժանի չեղավ խոսակցելու Աստծու հետ, այնժամ նա իր մեծ խնամակալությամբ ընտրում էր որևէ մեկին և նրա միջոցով խոսում մարդկանց հետ՝ տալով օրենք կամ պատգամ, որպեսզի մարդիկ ամենեին չզրկվեն բարիքներից: Ինչպես օրինակ՝ միայն նոյին պահեց տապանում և խոսեց նրա հետ: Նաև միայն Մելքիսեդեկին ընտրեց քահանա, ինչպես և միայն Աբրահամին ընտրեց և ուխտ գրեց նրա հետ: Եվ միայն Մովսեսին հանեց լեռն ու նրա միջոցով էր խոսում ժողովրդի հետ: Նույնպես և այլ մարդարեների էր ընտրում՝ յուրաքանչյուրին իր ժամանակին: Այսպես և այստեղ մի քահանայի միջոցով է գործում մեր հաշտարար փրկությունը:

Երկրորդ՝ ինչպես հնում միայն քահանայապետն էր մտնում սրբարան ու քավություն գործում, իսկ ժողովուրդը մնում էր դրան, այդպես էլ այժմ մի քահանան է տաճարում քավում մեր բոլորի մեղքերը, որ դրան ենք կանգնած:

Երրորդ՝ որովհետև միայն մեր Քահանայապետը՝ Քրիստոս, մտավ վարագույրի ներքին կողմը՝ մեզ համար Հայր Աստծու առջև կանգնելով, իսկ մեզ խոստացավ այս կյանքից հետո՝ համընդհանուր հարության ժամանակ, արժանացնել դրան: Այսպես և այս քահանան է միայն արժանացել Քրիստոս Քահանայապետի օրինակով մտնելու վարագույրի ներքին կողմը, մինչ մենք բոլորս կարժանանաք մտնելու արքայության եկեղեցին, Քրիստոսի հարությամբ, որը բոլորիս փրկության համար է:

ՊԱՀՔԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Այժմ տեսնենք, թե ինչ պատճառով գարնանը նշանակվեց պահքը: Նախ՝ որովհետև սա վերազարթոնքի ժամանակն է, երբ կենդանանում է երկիրը, որ մեռած էր կարծվում: Սա նշանակում է, որ մենք՝ մեղքերում մեռածներս, ապաշխարության ու պահքի միջոցով վերստին կենդանանում ենք Քրիստոսի շնորհներով, որոնք իջնում են մեզ վրա:

Երկրորդ՝ ծաղկունքի ժամանակն է, որովհետև բույսերն ու ծառերն այս ժամանակ են կանաչում: Նույնպես և մենք այս ժամանակ ենք նորից դալարում և պարկեշտ վարքի կանաչությունը հագնում:

Երրորդ՝ սա նորոգման ժամանակն է, որովհետև երկիրը նորոգվում է բույսերով ու խոտերով, ծաղիկներով, ծառի տերևներով ու նորաբողբոջ ոստերով: Նույնպես և մենք՝ մեղքերով հնացածներս ենք նորոգվում պարկեշտ վարքով ու զարդարվում առաքինության զանազան ծաղիկներով, ինչպես առաքյալն է ասում. «Զեր մտքի նորոգությամբ նորոգվեցեք» (Յոռն. ԺԲ 2):

Չորրորդ՝ սա հղիության ժամանակն է, և ինչպես այս ժամանակ կենդանիները ծննդաբերում են, այդպես էլ մենք ապաշխարության ու պահքի միջոցով հղանում ենք ու ծնում մեր հոգու փրկությունը՝ ըստ այս խոսքի. «Տեր, որ Քո սիրելին ենք, Մենք, Քո երկյուղից հղիցանք երկունքով բռնվեցինք, ծնեցինք ու երկրի վրա ստեղծեցինք փրկության Քո ոգին» (Եսայի ԻՉ 17-18):

Հինգերորդ՝ ժամանակն է բույն շինելու, որովհետև այս ժամանակներում թռչունները բույն են շինում ու շտապում ձագուկներ ունենալ: Նույնպես և մարդկանցից սրբերը՝ բարձրաթռիչ մտքով ու հույսով չարչարվեցին՝ երկնքում բույն և բարության ձագեր ունենալու՝ ըստ Դավթի խոսքի. «Այնտեղ երկնքի թռչունները ձագ կհանեն, և արագիլի բույնը նրանց ապաստարան կլինի» (Սաղմ. 6Գ 17):

Վեցերորդ՝ մաքրության ու սպեղանու ժամանակն է, որովհետև այս ժամանակ է մաղձը սկսում գոյանալ, հետեւաբար և այս ժամանակ է հեշտ այն մաքրել ու դուրս հանել: Նույնպես և մեր մեջ այս ժամանակ է մեղքերի ախտը սկսում գոյանալ՝ մղված աշխարհի ցանկություններից, ինչի պատճառով այժմ այն պետք է լուծարել զղջումով ու խոստովանությամբ և մեղանից իսպառ դուրս վանել:

Յոթերորդ՝ սա ժամանակն է շահի ու առևտրի. ինչպես այս ժամանակ հողի մշակներն ու ծովայիններն առևտրի են գնում, նույնպես և մենք ենք վարվում: Որովհետև ապաշխարության Քառասնորդաց պահքով արդարներն իսկապես առևտուր են անում և գնում ու շահում են երկնքի արքայությունը:

Ութերորդ՝ ժամանակն է ճամփորդությունների և ուխտագնացությունների, որովհետև այս ժամանակ մարդիկ այցելում են եկեղեցիներ ու սրբերի շիրիմներին: Նույնպես և սրբերն այժմ մտքով երկրից երկինք են ելնում ու շտապում Դրախտ հասնել, ինչպես Դավիթն է ասում. «Երանի այն մարդուն, որի օգնությունը Քեզանից է, և որը մտքում դրեց ելնել տրտմության հովտից այն վայրը, ուր ուխտ արեց» (Սաղմ. ԶԳ 6-7):

Իններորդ՝ սա ժամանակն է քաղհան անելու և ծառերն էտելու, այսինքն՝ այգիների ու ծառերի ավելորդը հատելու: Նույնպես և մենք պետք է մեր ավելորդ սովորությունները հատենք և ողորմությամբ մեր ունեցվածքն աղքատներին բաշխենք, ինչպես ասվում է. «Ծաղիկները երեացին մեր երկրում, էտելու ժամանակը հասավ» (Երգ Բ 12):

Տասներորդ՝ սա ժամանակն է լալու և արտասվելու, որովհետեւ այս ժամանակ էտված այգիներն արտասուք են թափում: Ժամանակն է նաև մեր արտասուքի, որովհետեւ ապաշխարության ժամանակ պետք է զղջման արցունքներ թափել՝ որպես արտասվող այգի, ինչպես Դավիթն է ասում. «Ամեն գիշեր հեծեծանքով լվացի մահին իմ և իմ արտասուքով անկողինս թրջեցի» (Սաղմ. Զ 7):

Ժամանակն է սերմեր ցանելու և ոստեր պատվաստելու: Խակապես Քառասնորդաց պահքը ժամանակն է քարոզության ու Կենաց Խոսքի սերմերը ցանելու և բարի, շիտակ խորհուրդներ մարդկանց սրտերում բարի շիտակ խորհուրդներ պատվաստելու, որովհետեւ միայն այսպես կարող ենք բարի գործերի պտուղներ բերել, ինչպես Հակոբոսն է ասում. «Դեն գցելով ամենայն աղտեղություն ու չարիքի ավելցուկ՝ հեզությամբ ընդունեցեք ձեր մեջ սերմանված խոսքը, որը կարող է փրկել ձեր հոգիները» (Յակոբ Ա 21):

Ժամանակն է ցողի և անձրևների, որովհետեւ այս ժամանակ ելնում են տարափեր աստղերը և ոռոգում երկիրն անձրևներով: Ժամանակն է պատգամների ու քարոզության ցողը սիրով ընդունելու մեր սրտի մեջ ու քաղցրապես ոռոգվելու: Ժամանակն է աստղերի անձրևներով, այսինքն՝ սրբերի օրինակով հողը, այսինքն՝ մեզ, մեր խղճմտանքով ոռոգելու՝ ըստ այն խոսքի, թե. «Իմ խոսքը թող ընկալվի իբրև անձրև, իմ պատգամներն իջնեն իբրև ցող, իբրև սեզի վրա տեղացող անձրև ու խոտի վրա տեղացող տեղատարափ» (Բ Օրենք ԼԲ 2):

Դարձյալ՝ ժամանակն է գոհության ու օրհնության, որովհետեւ այս ժամանակ հավքերը, որ ձմռանն ասես մեռած էին, քաղցրածայն երգում են ու դայլայլում: Եվ այժմ վայելչապես ժամանակն է հոգեոր երգերի՝ թողության հույսով, և խղճմտանքի մաքրության համար բերկրելու՝ հավքերի օրինակով երգելով ու դայլայլելով, ինչպես եսային է ասում. «Ուրախանալու է քո առաջ, ինչպես հնձի ժամանակ են ուրախանում և կամ ավար բաժանելիս» (Եսայի Թ 3): Դարձյալ՝ հավքերը, այսինքն՝ հրեշտակները, ուրախ են լինում մեղավորի դարձի համար ու հրձվում, ինչպես ասում է Ղուկասը. «Աստծու հրեշտակների առջև այսպիսի ուրախություն կլինի մեկ մեղավորի համար, որն ապաշխարում է» (Ղուկ. ԺԵ 10):

ՊԼԱՔԻ ՕԳՈՒՏԸ

Կերակրի պահքը բազում օգուտներ ունի, եթե սա սրբությամբ է կատարվում: Նախ՝ պահքով հաղթում ենք սատանային, ինչպես սովորեցնում է Ավետարանը. «Այս տեսակն ուրիշ բանով չի ենի, եթե ոչ ծոմապահությամբ ու աղոթքով» (Մարկ. Թ 28): Երբ դիվահար պատանուն առաքյալների մոտ տարան, նրանք չկարողացան բժշկել: Ապա տարան Քրիստոսի մոտ, և նա հարցրեց պատանու հորը, թե որքա՞ն ժամանակ է անցել այն օրից, երբ այդ նրան պատահեց: Եվ հայրը պատասխանեց, թե մանկությունից շատ անգամ չար ոգին պատանուն գցում էր կրակի ու ջրի մեջ, որպեսզի կործանի:

Սրանից իմանում ենք, որ երբ դեռ նոր է մտնում մարդու մեջ և գործել տալիս մահացու մեղքեր, դեռևս կարելի է բժշկել, բայց երբ դեռ մանկությունից է մարդու մեջ և սովորեցրել է նրան մեղքեր գործել, մարդը դժվարությամբ է բժշկվում, դրա համար էլ առաքյալները չկարողացան հանել դեմին: Միայն աստվածային գորությամբ կարելի է այս դեմին հանել, որը մարդուն գցում է ջուրը, այսինքն՝ խոնավ ցանկությունների մեջ, և կրակը, որը կործանարար բարկությունն է: Իսկ պահքով ու աղոթքով գուրս են ելնում թե՛ հին և թե՛ նոր դեերը: Որովհետեւ երբ անառիկ բերդում սպառվում են կերակուրները, բերդը հեշտությամբ հանձնվում է: Նաև երբ մեծ է հրդեհը, սակայն վառելանյութը քիչ է, կրակը մարում է:

Արդ՝ կարծեք սատանան մարդու սրտում մեղքերից շինված բերդ է, ուր վառվում է ցանկությունների սերը, սակայն երբ պահքով պակասեցնենք կրակը, նրան չուտով կհաղթենք: Վարդապետներն ասում են, որ ինչպես օձի թույնը մարդ է սպանում, այդպես էլ անոթի մարդու թուքն օձ է սպանում: Արդ՝ եթե մարդու թուքը սպանում է զգալի² օձին, ապա որչափ առափել այն կսպանի իմանալի օձին՝ սատանային:

Պահքը նաև ողջախոհության օգնականն է, իսկ որովայնամոլությունը նպաստում է բղջախոհությանը: Բժիշկներն ասում են, որ բնությունը հույժ իմաստուն է, և երբ մարդ կերակուր է ընդունում, դրանով նախ մարմինն է սնվում, ապա ավելորդն ուղղվում է դեպի ծննդական անդամները և դրանք զորացնում: Դրա համար, երբ շատ ենք ուտում, շատանում է ծննդական մասում սնուցողական գորությունը, և այդժամ զորանում է բղջախոհությունը: Իսկ երբ քիչ ենք ուտում և պահեցող ենք, կերակուրը միայն բավականացնում է մարմինը սնելուն, որից բղջախոհությունը նվազում է:

² Զգալի – նյութական: Իմանալի – հոգևոր:

Դրա համար ձմռանը թուշունները ողջախոհ և անծնունդ են, քանի որ կերակուրը քիչ է, իսկ գարնանը, երբ եղանակը տաքանում է, և կերը՝ շատանում, սկսում են բույն շինել ու ձագ հանել և այլևս ողջախոհ չեն: Ինչպես հուրը բորբոքվում է փայտից ու յուղից, այդպես ցանկությունները բորբոքվում են կերակուրներից: Եվ ինչպես այն առարկաներով, որոնցով ավելանում են կրակի բոցերը, կրակ մարելը հիմարություն է, նույնպես և հիմարություն է ցանկությունները որկրամոլությամբ մարելը:

Քանի դեռ Եվան պահքի մեջ էր, կույս էր, իսկ երբ կերավ արգելված պտուղը, կորցրեց իր կուսությունը: Հետեաբար պահեցողությունը նպաստում է կուսությանը, իսկ ուտելը՝ ցանկություններին:

Նաև կերակրից զանազան հիվանդություններ ու ցավեր են լինում: Երբ սկզբում՝ մինչև Նոյը, մարդիկ պահեցող էին, ոչ միս էին ուտում ոչ էլ գինի խմում, այլ միայն պտուղներ, հույժ երկարակյաց էին և ապրում էին մոտ ինը հարյուր տարի, բայց հետո, երբ ավելացան կերակուրները, և հաց ու միս կերան ու գինի խմեցին, կարճ կյանք ունեցան: Մարդն ուտելով ելավ Դրախտից, իսկ պահքով Երկնքի արքայություն կդնա:

Այս ֆորահայուսաւոր մասին, որին Հայություն է մարդը Պահանջություններին

Քրիստոնյաների Թագավորն ու Զորավարը Քրիստոս է, Ով գնաց պատերազմելու սատանայի դեմ և հաղթեց նրան՝ քառասուն օր ու քառասուն գիշեր պահելով: Դրա համար մենք պարտավոր ենք գնալ Քրիստոսի հետ և պահքով հաղթել սատանային՝ հաղթահարելով նրա փորձությունները:

Պետք է իմանալ, որ սատանան առավել փորձում է հավատացյալներին, քան անհավատներին: Սա հաստատում են Հին ու Նոր Կտակարանները: Քանի դեռ հրեաները ծառայության մեջ էին Եգիպտոսում, սակավ էին տանջվում սատանայի կողմից, իսկ երբ դուրս ելան ծառայությունից, բարկացան Եգիպտացիները և որոշեցին նրանց ետ դարձնել դեպի ծառայություն, սակայն չկարողացան այդ անել ու խորտակվեցին Կարմիր ծովում:

Այսպես՝ քանի դեռ անհավատն անհավատության մեջ է, և մեղավորը՝ մեղքերի, սատանան նրանց չի նեղում, քանի որ գերի են իր ձեռքում: Սակայն երբ կամենում են հեռանալ մեղքերից, այնժամ բազում նեղություններ է բերում նրանց: Երբ մեղավորը փախչում է նրա ձեռքից և գնում դեպի ճշմարիտ հավատը, այնժամ սատանան նրան հետապնդելով ավելի է բարկանում, բայց երբ մեղավորն արտասուքով և ապաշխա-

բությամբ քավում է իր մեղքերը, սատանան խեղդվում է արտասուքի ծովում:

Ավետարանը հաստատում է, որ քանի դեռ Քրիստոս չէր մկրտվել, սատանան նրան չէր փորձում, բայց երբ նա մկրտվեց և պահք պահեց, սատանան սկսեց նրան փորձել: Այստեղից հայտնի է դառնում, որ սատանան առավել պատերազմում է հավատացյալների ու առաքինիների գեմ, քան անհավատների ու մեղավորների: Եվ հայտնի է, որ մկրտությամբ, քահանայությամբ և կամ միայնակեցությամբ շնորհներ ստանալուց հետո է, որ փորձիչն առավել է մարտնչում ստացողի հետ:

Աստված թույլ է տալիս այս ամենը, ինչպես և Քրիստոսի համար թույլ տվեց մկրտությունից հետո: Վարդապետներն ասում են, որ դա չորս պատճառով է: Նախ՝ որպեսզի մարդը չենթագրի, թե իր բարի գործերի համար ընդունեց շնորհները, այլ իմանա, որ դրանք Աստծու պարգևն են, և չհպարտանա:

Երկրորդ՝ որպեսզի նրա սերն առավել ջերմանա Քրիստոսի հանդեպ:

Երրորդ՝ որպեսզի սովորի պատերազմել թշնամու դեմ և ոչ միայն Աստծու ողորմությամբ, այլև արդարությամբ ընդունի հաղթական պսակը:

Չորրորդ՝ որպեսզի թշնամին իմանա, որ ինքը պարտվում է ոչ միայն Քրիստոսից, այլև նրա մարմնի անդամներից, որոնք իրեն հաղթում են Քրիստոսի գորությամբ:

Հորդորակ

Արժե և մեղ գնալ դեպի ճշմարտությունը և Օրենքով ու մարդարենություններով Աստծու վկայած սուրբ ու խորհրդական այս պահքի օրերին հավատով ու պարկեշտությամբ, առանց նվազեցնելու պահել և սպասել մեր մեծ ու ճշմարիտ Քահանայապետի՝ Հիսուս Քրիստոսի մահվանը, որով ազատվելով՝ արժանանում ենք Վերին քաղաքին, որի դուռը պահքն է:

Եվ անհնար է ավելի շուտ, քան Քրիստոսի մահն ու նոր Ուխտի իր Արյունը, փրկության հասնել՝ խափանելով պահքը: Այսպես վարվողները Աստծու Որդուն արհամարհում են և նոր Ուխտի Արյունը խառնակ են համարում, իսկ ճշմարիտ պահողները սուրբ երեկոյան պիտի լսեն Քրիստոսից. «Այս է նոր Ուխտի իմ Արյունը, որ ձեզ և շատերի համար է թափվում՝ իրենց մեղքերի թողության համար» (Մատթ. ԻՉ 28), որն ասվեց Խորհրդավոր ընթրիքի երեկոյին: Եվ սա այն նույն Արյունն է, որովհետեւ չասաց «Հեղվեց», այլ «Հեղվում է», այդ պատճառով էլ մարգարեն կանխատես խոսքով կնքում է, թե՝ «Դու արյամբ կնքված ուխտի համար

պիտի արձակես «Քո գերիներին իրենց անջուր գըից» (Զաքար. թ 11): *Մարդարեն վկայում է, որ միայն Քրիստոսի Արյամբ կարձակվեն կապվածները, ովքեր մեղքերի մեջ են, կլուծարվեն անեծքները, կխափանվի մահը, և դրանում է պահքի լրումը:*

Արդ՝ եթե նրանք ունեն այլ քահանայապետ, ում ապավինում են ու նրա մահվանը սպասում, կամ եթե նույնիսկ նկատի ունեն Քրիստոսին և ցույց են տալիս, թե նախապես կամ հետո կրկին պիտի մահանա նրանց համար, ապա պետք է ասել, որ այդպես չէ: Եվ իրոք այդպես չէ: Նաև դաժանություն է կերակրի մի փոքրիկ ցանկության պատճառով զրկվել փրկությունից:

Հսի՛ր թե ինչ է ասում առաքելական խրատը. «Ուտելիքի համար Աստծու գործը մի՛ քանդիր» (Յոռմ. ԺԴ 20): Գրված է Աստծու Օրենքում. «Այն տղամարդը կամ կինը, ով Տիրոջը նվիրվելու մեծ ուխտ է անում, պետք է հրաժարվի գինուց և ոգելից խմիչքից, նա գինուց կամ ոգելից խմիչքից պատրաստված քացախ չպետք է խմի, խաղող ու չամիչ չպետք է ուտի իր ուխտի ամբողջ ընթացքում» (ԹՎԵՐ Զ 2-5), իսկ եթե սիսալվի, ապա նրա ուխտն ընդունելի չի լինի:

Որքա՛ն ավելի գերազանց է նորը, քան Հինը: Հայտնի է, որ եթե որևէ մեկն անզգուշորեն կենցաղավարի սուրբ պահքի օրերին, գինով և ցանկալի կերակուրներով հանդերձ, մինչև Տիրոջ մահվան և հարության օրը, ապա այդպիսին անվարձ կմնա և պատժի տակ կլինի, եթե լիապես չկատարի իր ուխտը՝ ըստ Տիրոջ խոսքի, ինչպես որկրամուները, ովքեր հանդինելով վաճառում են աստվածային շնորհը՝ ինչքերն ավելի պատվելով, քան Աստծուն: Թող ոչ ոք չսխալվի. Աստված չի խաբվում, և հավատն էլ գնով չի վաճառվում:

Կան և այնպիսիները, ինչպես օրինակը՝ հարուստն աղքատ Ղազարոսի առակում, ովքեր ունեն Մովսեսին ու մարդարեներին, սակայն չեն կամենում լսել նրանց (տես Դուկ. ԺՁ 29), որովհետև այդպիսիները մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին չեն ծառայում, այլ իրենց որովայնին: Արդ՝ նրանց միայն ամենակարող Քրիստոս կարող է ուղղել, իսկ մեզ համար այս է զարմանալի, թե ինչպես աստվածատուր Օրենքը պատկերվեց պահքի օրերի թվի չափով, որը պետք է պահել զգուշությամբ՝ առանց պաշտոն ու պատիվ մատուցելու որովայնին և առանց արհամարհելու Աստծու պատիվն ու պատվիրանները, որը զանց առնելու դեպքում, ըստ Օրենքի, Աստծուն ենք արհամարհում: Հետևաբար որկրամուների համար ասվածը նրանց էլ է վերաբերում. «Նրանց աստվածն իրենց որովայնն է, և փառքը՝ իրենց ամոթը» (Փիլիպ. Գ 19), ովքեր չլսեցին Պողոսի խրատները, թե՝ «Լավ է շնորհներով ամրացնել սիրտը և ոչ թե կերակրով» (Եբր. ԺԳ 9): Որոնց համար

ասում է նաև. «Լալով եմ ասում, որ շատերն ընթանում են որպես թշնամիներ Քրիստոսի խաչին» (Փիլիպ. Գ 18), այդպիսիները չեն կարող վերցնել Քրիստոսի խաչը՝ ըստ Փրկչի պայմանի, և հետևել նրան. «Եթե մեկը կամենում է Ինձ հետեւել, թող ուրանա իր անձը, վերցնի իր խաչը և գա Իմ ետեից» (Մատթ. ԺԶ 24), այլ հետեւում են հրեական անաստված վարդապետությանը, որով կորան Հեղիի որդիները, և իսրայելն էլ մատնեցին կործանման, իսկ Տապանակը՝ գերության (տես Ա Թագ. Դ 17): Այդպիսիներն ամեն ինչ ծառայեցնում են որովայնի պետքերին և Սուրբ Գրքից վկայություններ են փնտրում իրենց ծույլ ու մեղկ վարքը արդարացնելու համար և չեն դադարում տարուբերվելուց՝ իրենց ու իրենց հետեւորդների անձերին կորուստ պատճառելով:

Բայց դու, որ Քրիստոսի աշակերտն ես և սիրողը ծմարտության, եկ հիմ նորին փոխվիր և տե՛ս սուրբ առաքյալների և վարդապետների ավանդածը, որոնց կյանքն ամբողջովին պահք է եղել, և որոնց գլխավորը՝ Պետրոսը, լոռով՝ խոնավ տեղերում աճող խոտաքույսով էր հոգում իր կարիքները: Իսկ Պողոսն իր մասին ասում է. «Բազում անգամ եղա առանց մի պատառ հացի» (Բ Կորնթ. ԺԱ 27): Եվ սա ոչ թե ավելորդ կերակրի մասին է ասում, որից ամբողջովին հրաժարվել էր, այլ կարեոր և հարկավոր, որի մասին մեկ այլ դեպքում ես վկայում է. «Այս տասնչորսերորդ օրն է, որ դուք, քաղցած, սպասումով եք անցկացնում և դեռ ոչինչ չեք կերել» (Գործք. ԻԵ 33): Արդ՝ երանելի առաքյալները միաբերան այս պահքը քարոզեցին, որը Մովսեսն ու Եղիան էին սկզբնավորել, և այդ նույն Հոգով նաև Հովհաննեսը պահեց, և այս պահքը պահելը Փրկչով ամբողջացվեց:

Արդ՝ գիտենք մեր փրկությունը և սատանայի պարտությունը, որ հպարտանալով ելավ բարձունքը և գողի չարությամբ մեզ գերեց ու բնակեցրեց երկրի վրա՝ փոխանակ Դրախտի: Արդ՝ քանի գեռ երկրի վրա ենք ու մարմնի մեջ, հալածվում ենք խավարասեր բանսարկուի կողմից և հոգով ու մարմնով վիրավորվում մեղքերի ախտից, պետք է ամեն տարի, նույն ժամանակին, կատարենք պահքի մեր փրկության նույն խորհուրդը:

Պահենք այս քառասնօրյա պահքը, որպեսզի հրեղեն անձրևները մեզ չմաշեն, ինչպես «բարկության անձրևը», որ պիտի ողողի մոլորեցնողներին (տես Եգեկ. ԺԳ 13), ինչպես որ Նոյի ժամանակների քառասնօրյա անձրևները խորտակեցին մեղավորներին:

Չծուլանանք մենք ևս ու պահենք, որպեսզի փորձառություն ու հեղություն ձեռք բերենք և չարժանանանք անասելի բարկությանը: Նաև ծոմաջան աշխատությամբ և շարունակ ընթերցումներով զգուշավոր լինենք Ավագ շաբաթվա օրերին:

ՊԱՀՈՅ ԿԻՐԱԿԻՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Պահոց օրերի երեքսրբյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա' մեզ»:

ՄԵԾ պահքի յոթ շաբաթները արարչական յոթ օրերի և այս կյանքի յոթ դարերի կատարյալ տիպն են: Այս պատճառով, ըստ Հակոբոս Տյառնեղբոր և Կյուրեղ երուսաղեմացու կազմած ընթերցվածների, որոնք ուսկյա շղթայով՝ սքանչելի ու հիանալի համեմատություններով, կապված են միմյանց, Աղուհացի կիրակիներից յուրաքանչյուրն իր խորհրդի շարունակությունն է գտնում հաջորդ կիրակի օրվա ընթերցվածներում:

Այս ընթերցվածները, բացահայտելով արարչական օրերի և այս կյանքի որպիսությունը, մեզ վարդապետում են զղջմամբ հեռանալ չարից ու դառնալ առաջին բարուն, որը կորցրեցինք մեր անհնագանդության պատճառով:

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ Առաջարկ ԿԻՐԱԿԻ

Մեծ պահքի առաջին կիրակին ունի արարչության առաջին օրվա ու այս կյանքի առաջին դարի խորհուրդը և կոչվում է «Բուն բարեկենդան»: Ինչպես Դրախտում, մինչև անհնագանդությունը, «առաջին պատճուճանով» զարդարված նախաստեղծները ճաշակում էին Եղեմի անուշահամ պտուղները և ուրախանում հրեշտակների հետ, այդպես էլ այսօր Եկեղեցու զավակները, զարդարված Աստծու օրենքներով և ճաշակելով Աստծու պատվիրանները, ցնծում են և հոգևոր օրինություններ Վերառաքում:

Բուն բարեկենդանի նախորդ օրը՝ երեկոյան ժամերգությանը, վարագույրով ծածկում են Եկեղեցու բեմը, որը խորհրդանշում է Աղամի արտաքսումը Դրախտից, և այնուհետև՝ մինչև Ծաղկազարդ, Ավետարանը չի համբուրվում և «Յաւատամքի» ու «Կեցոյի» ժամանակ չի բարձրացվում՝ ի տես ժողովրդին:

Եկեղեցու խորհուրդները նման են ծածկված գանձի, և ով փնտրի, նա կգտնի այն ու կհանի հին ու նոր մեկնություններ՝ համաձայն Տիրոջ խոսքի. «Երկնքի արքայությանն աշակերտած ամեն մի օրենսգետ նման է տանուտեր մարդու, որ իր գանձերից հանում է նորն ու հինը» (Մատթ. Ժ 44, 52): Սա ճիշտ է նաև բարեկենդանի խորհրդի համար, որը պահքի սկիզբն է:

Ինչպես մենք այսօր ստանում ենք պահքի պատվիրանը մարգարեներից, առաքյալներից ու ավետարանիչներից, այդպես էլ առաջին մարդը պատվիրան ստացավ Տիրոջից Դրախտում. «Դրախտում ամեն ծառի պտուղներից կարող եք ուտել, բայց բարու և չարի գիտության ծառից մի' կերեք» (Ծննդ. Բ 16-17): Եվ ըստ այդ օրենքի՝ ամեն ծառից ուտելը խորհրդանշում է բարեկենդանը, իսկ մեկից չուտելը, որը Դրախտի մեջտեղում է, խորհրդանշում է պահքը, որը Բուն բարեկենդանի և Զատկի մեջտեղում է:

Սուրբ Հայրելն ավանդում են, որ բարեկենդանը Դրախտի փափկության օրինակն է, իսկ նրանում եղող ծառերն ու բողբոջները՝ Եկեղեցու զավակների օրինակը: Կենաց ծառը, որը Դրախտի մեջտեղում է, Քրիստոսի օրինակն է Եկեղեցում, իսկ պտղաբեր ծառերն ու զանազան երփներանգ, անուշաճոտ բույրով ծաղիկները առաքյալներն են, մարգարեները և ավետարանիչները, ինչպես նաև Եկեղեցու սուրբ վարդապետները, ովքեր փայլում են նոր գգեստներով: Նրանք Քրիստոսի անուշ բուրմունքն են՝ ըստ Պողոսի խոսքի. «Քրիստոսի անուշ բուրմունքն ենք Աստծու առջե» (Բ Կորնք. Բ 15):

Արդ՝ Բուն բարեկենդանի ու Զատկի օրերը պահքի հետ միասին կազմում են Հիսուն օր, իսկ Հիսունը հոբելյանական թիվ է և խորհրդանշում է մեր ազատությունը մեղքերի ծառայությունից ու դարձը դեպի մեր Հայրենին՝ ըստ հոբելյանի օրենքի (տես Ղև. ԻԵ 10): Բուն բարեկենդանը ցույց է տալիս մեր այս կյանքից ելնելը, ինչպես բարեկենդանի օրը ելնում ենք մարմնավոր կերակուրներից, քանզի մինչև Զատիկ այլևս չենք ուտելու, իսկ Զատիկը ցույց է տալիս կյանքի մեջ մտնելը, քանզի այդ օրը ճաշակում ենք երկնային Գառը, որը ցույց է տալիս, որ Քրիստոսի չարչարանքների միջոցով արժանանում ենք վերին խորանին և Նրա անպատում բարիքներին:

Բուն բարեկենդանի օրը փակվում է Եկեղեցու վարագույրը՝ Աղամի Դրախտից ելնելու խորհրդով, և մինչև Զատիկ Ավետարանն այլևս չի համբուրվում, ինչպես Աղամը զրկվեց Կենաց ծառի ճաշակումից: Այսօր վանքերում ամենուր չափավոր վայելքներ են թույլատրվում, քանզի Հաջորդ օրն այլևս հրաման չկա ուտելու: Սա վերցված է Եղիային ուղղված Հրեշտակի խոսքից. «Ելի՛ր, կե՛ր, որովհետեւ երկար ճանապարհ ես գնալու» (Գ Թագ. ԺԹ 7), և այդ երկար ճանապարհը քառասնօրյա պահքի շրջանն է: Այդպես էլ այսօր մեզ համար կան մարմնավոր կերակուրներ, քանզի առջեռում մեզ երկար պահք է սպասվում: Ինչպես օրինակ՝ Հասնելով լեռան ստորոտին՝ գրաստի վրայից վերցնում ենք բեռները՝

թույլ տալով մի որոշ ժամանակ արածել, նույնպես և վարվում ենք բարեկենդանի ժամանակ, քանի որ պահքի լեռն ենք բարձրանալու:

Բարեկենդանն արձակումն է պահքի նեղություններից, որը նշանակում է փոփոխություն՝ ի հակադրություն ծոմի ու ծարավի, այսինքն՝ մատնացուցում է ուտելն ու խմելը՝ իբրև անցում սուզից գեպի ուրախություն, տքնությունից՝ փափկակեցություն, չարչարանքից՝ հանգստություն և այլն: Բարեկենդանը խորհրդանշում է նաև Դրախտի կյանքն առանց որևէ կարոտության, իսկ պահքն այս կյանքի կարոտություններն է խորհրդանշում:

Եվ գարձալ՝ բարեկենդանը խորհրդանշում է հոգու ամբողջովին փարթամացած առաքինությունները, իսկ պահքը՝ չարությունը, որովհետեւ չարությունից հոգին նվազում է ու կարոտում ամեն տեսակ բարիքների, ինչպես որ պահքից մարմինն է նվազում:

ԱՐՏԱՔՍՈՄԱՆ ԿԻՐԱԿԻ Երկրորդ կրուպք

Մեծ պահքի երկրորդ կիրակին ունի արարչության երկրորդ օրվա ու այս կյանքի երկրորդ դարի խորհուրդը և կոչվում է «Արտաքսման կիրակի»: Սա մեզ հիշեցնում է անհնազանդության պատճառով Աղամի՝ Դրախտից արտաքսման, ինչպես նաև մեղքի ու մահվան դառնության ճաշակման մասին, և հայտնում Թրիստոսի միջոցով մարդու՝ Դրախտին կրկին արժանանալու մասին:

Եթե առաջին կիրակի օրը, պահքի մեջ մտնելու պատճառով, ընթերցվածները սպառնալից են, ապա երկրորդ կիրակի օրն ընդհակառակը՝ աղերսական են:

ԱՐՏԱՔՍՈՒՒՄ

Աղամը, իր անձնիշխան կամքով և ինքնահոժար մտքով չպահելով Տիրոջ պատվիրանները, զրկվեց աստվածային վայելուչ փառքից, արտաքսվեց Դրախտից և իջավ այս աշխարհը, որտեղ ենթարկվելով իր թշնամու՝ սատանայի հարձակումներին՝ հայտնվեց թշվառ ու կիսամեռ վիճակում, ինչպես այն առակի հերոսը, ով երուսաղեմից իջնում էր երիքով՝ ըստ այս խոսքի. «Մի մարդ երուսաղեմից երիքով էր իջնում և ընկալ ավագակների ձեռքը» (Ղուկ. Ժ 30):

Այսեղ երուսաղեմը, որ թարգմանվում է խաղաղություն, Դրախտի օրինակն է, և քանի դեռ մարդը Դրախտում էր, խաղաղության մեջ էր, իսկ երբ այստեղից ելավ, խոռվության մեջ ընկալ և մատնվեց մահվան: Իսկ երիքովը, որ թարգմանվում է լուսին, խորհրդանշում է այս աշխարհը, որը լուսնի նման փոփոխական է: Ավագակները դեռքի զորքերն են, իսկ

մարդը՝ մարդկային բնությունը, որն ընկավ սատանայի ձեռքը: Զնայած որ Աղամը որպես ընկեր ուներ Եվային, բայց քանի որ Աստված հեռացել էր նրանից, նա մենակ էր մնացել, այդ պատճառով էլ ասում է «մի մարդ»:

Որոնք նրան մերկացրին, վիրավորեցին (Ղուկ. Ժ 30) – Աղամը նախ մերկացավ Դրախտում իր սկզբնական զարդերից՝ արդարությունից, խոնարհությունից, հնագանդությունից և պահեցողությունից, իսկ այնուհետև աշխարհում մեղքերը նրան մերկացրին հոգու մյուս զարդերից ևս, և այն, ինչ Աստված չասաց Դրախտում, հետագայում այստեղ ասաց. «Իմ Հոգին հավիտյան թող չմնա այդ մարդկանց մեջ, որովհետեւ նրանք մարմնավոր են» (Ծննդ. Չ 3): «Վիրավորեցին» ասելով հայտնում է պիղծ ոգիների գաղանությունը, թե նրանք ինչպիսի թշվառության կարող են հասցնել իրենց հետևորդներին:

Եվ կիսամեռ թողեցին ու գնացին (Ղուկ. Ժ 30) – Երբ սատանան մարդուն խոցում է մեղքի պես-պես ախտերով, դրանից մարդը կիսամեռ է դառնում, քանզի մեղսագործ մարդը մեռած է հոգով և կենդանի է միայն մարմնով: Թեև սատանան ուզում էր մեր ամբողջ բնությունը կործանել, սակայն Աստծու ողորմությամբ ամբողջը չմահացավ, այլ ամեն դարում մի արդար էր ելնում՝ նմանությամբ նոյի, Մելքիսեդեկի ու Աբրահամի:

Պատահեց, որ մի քահանա նույն ճանապարհով իջնի. նրան տեսավ և թողեց անցավ: Նույնպես և մի զետացի նույն տեղով անցնելիս տեսավ և թողեց անցավ (Ղուկ. Ժ 31-32) – Շատ մարդարեներ եկան նույն Աղամի բնությամբ, ունենալով նույն կարիքները, սակայն նրանք մեծ դժվարությամբ իրենց զերծ պահեցին մահաբեր մեղքերից և ընկածին օգնել չկարողացան: Այստեղ քահանան Ահարոնն է, իսկ զետացին՝ Մովսեսը, ովքեր չկարողացան մեր բովանդակ բնությունը բժշկել, թեպետև Օրենքի միջոցով որոշ գործեր արեցին: Դարձյալ՝ քահանան Հին օրենքն է, իսկ զետացին՝ մարդարենությունները, որոնց դեղերը չկարողացան բուժել մարդուն: Եվ մարդը Տիրոջ գալստյամբ միայն ողջացավ:

Մի սամարացի, որ ճանապարհորդում էր, եկավ նույն տեղով նրա մոտ և տեսնելով նրան՝ գթաց (Ղուկ. Ժ 33) – «Սամարացի» նշանակում է պահպանող: Այստեղ սամարացին Քրիստոս է, Ում հրեաները նախատելու համար Սամարացի անվանեցին: Եվ Տերը, Ով մաքրում է ամենքիս, չգարշեց այս անունից: Նա ևս անցավ նույն ճանապարհով՝ ինչից մենք էինք սկսել. որպես մարդ կնոջից ծնվելով՝ եկավ երկիր և այստեղ գտավ մեր կիսամեռ ու զարկված բնությունը: Թեև նա որպես Աստված կարող էր մեզ մեկ այլ կերպ փրկել, սակայն կամեցավ մեզ իրավունքով ապրեցնել, ինչ պատճառով էլ առնելով մեր բնությունը՝ հատուցեց մեր բոլոր պարտքերը:

Եվ մոտենալով՝ կապեց նրա վերքերը, վրան ձեթ ու գինի ածեց (Ղուկ. Ժ 34) – Սամարացին նախ նայեց կիսամեռ մարդուն, գթաց նրան, ապա մոտեցավ և նրա վերքերն օծեց ձեթով ու գինով: Այստեղ ձեթը խորհրդանշում է լույսը, իսկ ձեթով օծելը՝ հավատը, հույսը և սերը: Գինով օծումը խորհրդանշում է աչն ու երկյուղը, քանզի գինին կակծեցնում է վերքը: Վերքերը կապելը խորհրդանշում է Տիրոջ՝ տասը պատվիրաններն ու Եկեղեցու յոթ խորհուրդները տալը: Տերը մեր փրկության համար ընդհանուր գեղ պատրաստեց՝ ձեթը՝ Հոգու մկրտության, իսկ գինին՝ Տիրոջ Արյանը հաղորդվելու համար: Սրանցով մեր հոգու վերքերը բուժվեցին, մեղքերում մեռածներս կենդանացանք, և մեզ համար բացվեցին արքայության դռները:

Դրեց նրան իր գրաստի վրա (Ղուկ. Ժ 34) – «Գրաստը», որի վրա դրեց խոշտանգվածին, Տիրոջ Սարմինն է, որով վերցրեց աշխարհի մեղքերը: Այսինքն՝ Քրիստոս իր վրա վերցրեց մեր պարտքերը և մեզ հանեց այնտեղից, ուր ընկել էինք: Այստեղ «գրաստ» ասելով ի նկատի ունի նաև հույսը:

Տարավ մի իջևան և խնամեց նրան (Ղուկ. Ժ 34) – Տերը ոչ միայն բուժեց հիվանդի վերքերը, այլև տարավ իջևանատուն, այսինքն՝ Եկեղեցի, քանզի երկրի վրա ավելի սուրբ տեղ չկա, քան Եկեղեցին, որը Նրա զինվորյալ արքայությունն է: Տերը, Եկեղեցին հիմնելով, այնտեղ առաքյալներ, մարդարեներ, վարդապետներ և հովիվներ կարգեց, որոնց մոտ է հավաքում բոլոր ընկածներին ու վիրավորներին: Սրանց ևս ինքն է կենդանացրել, մաքրել մեղքերից և օրհնելով կարգել Եկեղեցու առաջնորդ, որպեսզի լինեն մեր վերակացուները, տեսուչներն ու խնամողները, որ մեզ այլևս ավագակները չտիրեն ու իսպառ չոչնչացնեն:

Իջևանատիրոջը երկու դահեկան տվեց (Ղուկ. Ժ 35) – «Իջևանատերը» Եկեղեցու եպիսկոպոսներն են, որոնց Տերը հանձնել է իր հոտը, ինչպես իր սիրելի մոր խնամքը հանձնեց իր աշակերտին (տես Հովի. Ժ 27): Երկու դահեկանները երկու կտակարաններն են՝ Հինն ու Նորը, ինչպես նաև՝ սիրո երկու պատվիրանները՝ ըստ այս խոսքի. «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով ու քո ամբողջ մտքով: Այս է մեծը և առաջին պատվիրանը. և երկրորդը սրա նման է. պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը: Այս երկու պատվիրաններից են կախված ամբողջ Օրենքը և մարդարեները» (տես Սատթ. ԻԲ 37-40):

Եվ ասաց. խնամի՛ր նրան և ինչ որ ծախսես դրա վրա, իմ մյուս անգամ գալուն կհատուցեմ քեզ (Ղուկ. Ժ 35) – Ավելին ծախսելու օրինակը մեզ տվեց Պողոսը, ով ծառայում էր Աստծուն առանց ժողովրդից ինչ որ բան վերցնելու, թեալետև ուներ դրա հրամանը (տես Ա Տիմ. Ե 18): Այսպես անում

Են նաև Եկեղեցու շատ պաշտոնյաներ՝ առանց վարձքի աշխատելով ժողովրդի համար, որից, սակայն, նրանք չեն տրտմում, քանզի վարձքն Աստծուց պիտի ստանան: Սա նաև նրանց է վերաբերվում, ովքեր տասը պատվիրանները պահելուց գատ թողեցին ամեն ինչ ու գնացին Տիրոջ ետևից:

Իսկ սամարացու «մյուս անգամ գալուստը» Քրիստոսի Երկրորդ գալուստն է խորհրդանշում, երբ յուրաքանչյուրին պիտի հատուցի ըստ իրենց գործերի: Արդարեւ, մեծ վարձքի պիտի արժանանան նրանք, ովքեր հավատարմորեն պիտի սպասեն Տիրոջ Երկրորդ գալուստին:

ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻ ԵՐՈՐՈԴ ԿԻՐԱԿԻ

Մեծ պահքի Երորոդ Կիրակին ունի արարչության Երորոդ օրվա ու այս կյանքի Երորոդ դարի խորհուրդը և կոչվում է «Անառակի Կիրակի»: Այս անունը վերցված է այդ օրն ընթերցվող ճաշու Ավետարանից, որտեղ պատմվում է, թե ինչպես անսկիզբ Յայրն իր Սիածին Որդուն առաքեց աշխարհ՝ գտնելու իր կորուսյալ պատկերը՝ մարդկային բնությունը, և մեղքերից ետ դարձնելու անառակ որդուն: Եվ Աստծու Որդին, ավլելով իր տունը՝ մեղսալից աշխարհը, գտավ կորուսյալ դրամը՝ մոլորված ոչխարին, այսինքն՝ մարդուն, և նրան իր ուսերի վրա դնելով, որտեղ խաչ է՝ հանեց Երկինք:

Անցյալ Կիրակիներից հայտնի է, որ առաջին կիրակիի ընթերցումները սպառնալիքներ էին Տիրոջ կողմից՝ ասված Եսայի մարգարեի ու առաջալների միջոցով, իսկ Երկրորդինը՝ համակ հանձնառություն և աղերսանք: Իսկ այս Կիրակի Տիրոջ անունից հայտնություն է տրվում հնագամբվածներին՝ ուշք դարձնելով մեր Տիրոջ հարության մեջ օրվան, թե ինչպես մոր որովայնում, այնպես էլ պահքի արգանդում կարող ենք սրտով աշալուրօ լինել ահավոր Թահանայապետի առջև:

ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒ ՎԵՐԱՇՎԱՋԼ (Ղուկ. ԺԵ 11-32)

Մեր Տերը, հաստատելով լսողների միտքը, որ երկնքում ուրախություն է լինում յուրաքանչյուր ապաշխարողի համար, մեզ հորդորում է ապաշխարել՝ պատմելով այս առակը. «Մի մարդ երկու որդի ուներ» (Ղուկ. ԺԵ 11):

«Մի մարդ» ասելով՝ Աստված Իրեն մարդ է կոչում, ինչպես մեկ այլ առակում Իրեն հովիվ կոչեց, իսկ հրեշտակներին ու մարդկանց՝ ոչխարներ (տես Ղուկ. ԺԵ 3-7), և սրանով ամենակալ Հայրը բարձրությունից դեպի մեզ է խոնարհվում: Ադամն այդ առակում հարյուր ոչխարներից մեկն էր, ում Տերը գտնելով դրեց իր ուսերի վրա, որտեղ և խաչն էր, տարավ ու խառնեց իր հոտին: Իսկ «Տասը դրամների» առակում (տես Ղուկ. ԺԵ 8-10) Իրեն «կին» է կոչում իր արարածների նկատմամբ ունեցած առատ գթության

պատճառով: Այստեղ կորած դրամը մարդկային ցեղն է, իսկ մնացած ինը՝ դրամները՝ հրեշտակների ինը դասերը։ Ասելով, թե «ճրագ վառեց»՝ հայտնում է, որ իր Մարմինը վառեց աստվածային լույսով։ Տունն ավելով՝ մաքրեց ողջ աշխարհը, գտավ իր կորսված պատկերը և ուրախացավ մարդկային ցեղի վերականգնման համար։ Իսկ այս առակում մարդուն առանձնահատուկ պատվի է արժանացնում՝ Աստծու որդի անվանելով։

«Երկու որդի» ասելով՝ ի նկատի ունի հրեշտակներին և մարդկանց, քանզի որդիները կրում են իրենց հոր պատկերը, և էականներից միայն սրանք էին կրում Հոր պատկերը՝ լինելով անձնիչան և իմացական, ինչպես Աստված։ Այս պատճառով էլ Տերը մեզ հրամայեց կանչել. «Հայր մեր, որ երկնքում ես...»։ Աստված մեր Հայրն է. նախ՝ որովհետեւ ստեղծեց մեզ՝ ըստ այս խոսքի. «Մի՞թե Նա այն Հայրը չէ, որ քեզ չահեց, քեզ արարեց ու հաստատեց» (Բ Օրենք ԼԲ 6), ապա՝ որովհետեւ մկրտության շնորհով մեզ իրեն որդի դարձրեց՝ ըստ այս խոսքի. «Եվ որովհետեւ դուք որդիներ եք, Աստված մեր սրտերի մեջ ուղարկեց իր Որդու Հոգին, որ աղաղակում է՝ Աբբա, Հայր» (Գաղատ. Դ 6):

Նրանցից կրտսերը հորն ասաց. – Այստեղ կրտսեր որդին մարդն է։ Նախ՝ ժամանակային առումով, քանզի հրեշտակներն արարչության առաջին օրը լույսի հետ արարվեցին, ինչի համար կոչվում են երեց և ծեր, իսկ մարդիկ՝ միայն վեցերորդ օրը։ Երկրորդ՝ հրեշտակներն ավելի պատվական են բնությամբ, քան մարդիկ՝ ըստ այս խոսքի. «Քո հրեշտակներից փոքրինչ ցածր դրիբ նրան և փառք ու պատվով պատկեցիր» (Սաղմ. Ը 6):

Հայր, տուր քո ունեցվածքից ինձ ընկնող բաժինը. – Կրտսերը ինդրեց իր բաժինը, քանզի կամեցավ իր կամքով ապրել և ոչ թե հոր հրամաններով։

Եվ նա ունեցվածքը բաժանեց նրանց. Ամեն էակ գոյանալով՝ իր բաժինն է ստանում Աստծուց։ Աստված իր բանական որդիների մեջ բաժանեց իր տունը՝ տալով հրեշտակներին վերին երկինքը, քանզի բարձր են բնությամբ և անմարմին լինելով՝ Աստծուն ավելի մոտիկ։ Իսկ մարդուն տվեց Դրախտը, որը երկրի և երկնքի միջև է, քանզի մարդը գտնվում է անմահության և մահվան միջև։ Ապա մարդուն լցրեց Սուրբ Հոգով, զարդարեց մարդարեությամբ, սկզբնական արդարությամբ և վառեց իր սիրով։

Քիչ օրեր հետո կրտսեր որդին, փողի վերածելով ամեն ինչ, գնաց հեռու աշխարհ. – Դժվար է մարդու համար մեղք գործել, երբ միշտ իր աչքի առջև, մտքում ու խորհուրդներում Աստծուն ունի. Իսկ երբ մտքով

Հեռանում է և երես դարձնում նրանից, ապա համարձակորեն մեղքեր է գործում:

Մարդը երկար չմնաց Դրախտում, այլ Աստծու պատվիրաններից անցնելուն պես արտաքսվեց և գնաց անսառունների համար նախատեսված աշխարհը: Զկա Աստծուց հեռու որևէ տեղ, այլ մահացու մեղքն է մարդուն հեռացնում նրանից, քանզի Աստված ամենուր մեզ հետ է՝ ըստ այս խոսքի. «Ես մերձավոր Աստված եմ և ոչ թե հեռավոր» (Երեմ. Իգ 23), և՝ «Զեր մեղքերն են պատնեշ դարձել ձեր և Աստծու միջև» (Եսայի Ծթ 2):

Այնտեղ վատնեց իր ունեցվածքը, որովհետեւ անառակ կյանքով էր ապրում – Ունեցվածքի վատնեն աստվածային շնորհներից զրկվելն է: Ազամը գեռես Դրախտում կորցրեց իր սկզբնական արդարությունը, որն անմեղության պատմուճանն է, ապա՝ Աստծու սերը, օրհնությունը, նրա ներկայությունը, ինչպես նաև՝ իշխանությունը գագանների վրա և վերջապես՝ Դրախտը: Դրախտից ելնելուց հետո էլ գեռես որոշ ժամանակ Սուրբ Հոգու շնորհները մարդու հետ էր, որը պետք է պահեր մաքուր վարքով, ինչպես պահեցին Աբելը, Ենոփար, Ենոքը և Նոյը: Սակայն մարդն անառակությամբ սա էլ վատնեց, դարձավ թշվառական և թափուր գտնվեց Հոգու բոլոր պարգևներից:

Եվ երբ ամեն ինչ սպառեց, այդ երկրում սաստիկ սով եղավ, և նա սկսեց չքավոր դառնալ – «Սաստիկ սով» ասելով պետք է հասկանալ Հոգու սովը, որն աստվածային գիտության և առաքինի վարքի պակասությունն է: Ինչպես մարդարեն է ասում. «Ահա օրեր պիտի գան, – ասում է Տեր Աստվածը, – և Ես սով պիտի ուղարկեմ այդ երկիրը, ոչ թե հացի սով կամ ջրի ծարավ, այլ Տիրոջ խոսքը լսելու սով» (Անու Ը 11): Որքան մեծ է Հոգին մարմնից, այնքան մեծ է Հոգու քաղցը մարմնականից:

Գնաց դիմեց այդ երկրի քաղաքացիներից մեկին: – Աստծուց հեռացողները գեերին են ընկեր դառնում, քանզի այդ աշխարհի քաղաքացիները գեերն էին, իսկ իշխանը՝ սատանան՝ ըստ այս խոսքի. «Գալիս է աշխարհի իշխանը» (Յովի. ԺՌ 30): Եվ գեերը, մարդուն Աստծուց օտարացնելով, նրան լցնում են խավարով, տգիտությամբ ու ախտերով, ապա ծառա դարձնում և Աստծու փոխարեն իրենց են պաշտել տալիս: Դրանից մեղավորը հասնում է մինչև չարության խորքերը ու ավելի սանձարձակ դառնում:

Եվ սա ուղարկեց նրան իր ագարակը՝ խոզեր արածեցնելու – Սատանան, կամենալով անարգել մարդուն, նրան ուղարկեց խոզեր արածեցնելու: Սատանայի ագարակն այն վայրն է, ուր կան ծառեր, որոնք երկնավոր Հայրը չտնկեց, և ուր կան խոզեր, որոնք տրորում են մարդարիտը: Նա խոզեր էր արածեցնում, այսինքն՝ այնպիսիներին, ովքեր մարմնական ցանկություններն են կատարում և թափալվում են մարդկային ախտի

ժանտահոտության մեջ, նաև այնպիսիներին, ովքեր պիղծ հոգով են լցված և պարարտացնում են մարմինը, բայց ոչ՝ հոգին, քանզի խոզը բղջախոհության, որովհետեւ սա մարդկանց մղում են բղջախոհության, որովհետեւ սա մարդկանց սրտերն ամբողջովին շրջում է Աստծու սիրուց: Սա է պատճառը, որ դեերն ավելի շատ բնակվում են բղջախոհների մեջ, քան մյուսների: Եվ այս պատճառով դեերը խնդրեցին Տիրոջից բնակվել խոզերի մեջ (տեսՄատթ. Ը 31):

— Նա ցանկանում էր իր որովայնը լցնել եղջերենու պտղով, որ խոզերն էին ուտում, բայց ոչ ոք այդ նրան չէր տալիս — Բանական հոգին ցանկանում է վարդապետություն, թեկուցե ոչ բարի խոսքից, միայն թե լինի վարդապետական խոսք, այդ պատճառով էլ սատանայի տված կերակուրներով չի հագենում և որքան ուտում, այնքան ավելի է քաղցում և իր ցանկությունների մեջ հալվում ու մաշվում: Եղջերենու պտուղն ունի քաղցր համ և պարարտացնում է մարմինը, սակայն ուտելուց հետո պատճառ է դառնում որովայնի ցավի և աղիների խցանման, որով և այդ պտուղը նմանվում է մեղքին, որը նախ մեղքի նման ծորում է, իսկ հետո դառնանում օշինդրի պես:

— Եվ ոչ ոք այդ նրան չէր տալիս — Հետինները խախտված ուսմունքը չեն ավանդում բարին փնտրողներին, որպեսզի չհանդիմանվեն: Խոզապետը, որը սատանան է, երբ տեսավ, որ անառակը թափուր գտնվեց բոլոր բարիքներից, լքեց նրան:

Ապա խելքի եկավ և ասաց — Երբ դեռ հեռանում է, դիվահարը զգաստանում է ու սկսում խորհել: Անառակը հաց էր ցանկանում, և երբ նրան եղջերենու պտուղ չտվեցին, հիշեց իր հոր տունը, որը լի էր հացով: Այսպես Աստծու նախախնամությամբ խոզապետը զլացավ եղջերենու պտուղ տալ անառակին և լքեց նրան, որից անառակը խելքի եկավ և իմացավ, թե փառքի ինչպիսի աստիճանից անարդության ինչպիսի աստիճան ընկավ. «Դրախտի պահապան էի, իսկ այժմ խոզերի պահապան եմ: Լինելով երկնավոր Հոր որդին՝ այժմ խոզերից վատթար եղա»:

Երեքն են, որ մարդուն շեղում են՝ դեերը, մեղքերը և մարդկանց չարությունները, մանավանդ բղջախոհությունը: Երբ անառակը թևաթափ եղավ, Աստված նրան բանական սիրտ տվեց՝ տեսնելու իր թշվառությունը, և մարդու միտքը դեպի Աստված դարձավ:

Այսպիսով՝ մարդկային բնությունը, կռապաշտությամբ պոռնկանալով սատանայի հետ և զանազան պատիճներից նեղվելով, տեսնում է, որ հանգստություն չկա մեղքերում:

Փանի՛ վարձու աշխատավորներ կան իմ հոր տանը, որ առաս հաց ունեն, և ես այստեղ սովամահ կորչում եմ: — Վարձկանները հրեշտակներն

են, ովքեր որպես վարձ միշտ ունեն Աստծու տեսությունը և իրենց փառքը: Իսկ «առատ հաց ունենալը» նշանակում է, որ առատությամբ լցված են Աստծու շնորհներով:

— Վեր կենամ գնամ իմ հոր մոտ և նրան ասեմ՝ Հայր, մեղանչեցի երկնքի դեմ ու քո առաջ — Սա ևս Աստծու նախախնամությամբ է. չնայած որ դյուրությամբ ենք ընկնում մեղքի մեջ, սակայն առանց ուսանելու գտնում ենք ապաշխարության ճանապարհ:

Այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու: — Մարդը մեղանչելով զրկվում է երկնային Հոր որդեգրությունից և սատանայի որդի դառնում՝ ըստ այս խոսքի. «Դուք հոր կողմից սատանայի զավակներ եք, և ձեր հոր ցանկություններն եք ուզում կատարել» (Ղոփի. Ը 44): Քրիստոս իր ողորմությամբ մեզ հանձնարարեց Արարչին Հայր անվանել, այն դեպքում երբ անգամ ծառա կոչվելու արժանի չենք:

Վեր կացավ եկավ իր հոր մոտ. և մինչդեռ հեռու էր, Հայրը տեսավ նրան և գլխաց — Եղավ մահաբեր քնից և խոր մեղքերի մեջ ընկած տեղից: Հայրը, հեռվից նրան տեսնելով, գլխաց, քանզի տեսավ նրան մերկ, աղքատ ու ամոթահար: Նախ հայրը տեսավ որդուն, ինչը ցույց է տալիս, թե երբ մեղավորն ամբողջ սրտով գառնում է Աստծուն, Աստված իսկույն սկսում է քաղցրությամբ նայել նրան:

Վեր կացավ և վագեց նրան ընդառաջ, ընկավ նրա պարանոցով և համբուրեց նրան: — Երբ զղջմամբ դիմում ենք Աստծուն, նա էլ մեզ է դիմում իր շնորհներով: Որդին տակալին հեռու էր, որովհետեւ հանցանքներից գեռ չէր ձերբազատվել: Եվ քանի որ զղջալով շտապում էր հոր մոտ, Հայրը տեսավ նրան, ընկավ նրա պարանոցով, որովհետեւ նա ազատվել էր սատանայի լծից, և նրան համբույր տվեց՝ խորհրդանշելով իր միավորությունը որդու հետ:

Որդին ասաց նրան. «Հայր, մեղանչեցի երկնքի դեմ և քո առաջ, այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու» — Անառակը խոնարհ մնաց անգամ մեծարանքները տեսնելուց հետո: Որքան մենք խոնարհում ենք մեր անձը, Աստված այնքան այն բարձրացնում է: Թեպես Հայրը հիշաչար չէ և ներում է մեր մեղքերը, սակայն անառակը խոստովանում է իր հանցանքները, քանզի մարդը չպետք է մոռանա իր անիրավությունները:

«Երկինք» ասելով Դրախտը նկատի ունի, որտեղ մարդը գործեց իր առաջին հանցանքը, և որից այսքան ապականություններ հեղվեցին մեր բնության վրա: Ասում է նաև «Աստծու առջե», քանզի մեղքը գործվեց Տիրոջ ամենատես աչքի առջե:

Հայրն իր ծառաներին ասաց. «Անմիջապես հանեցե՛ք նրա նախկին պատմուճանը և հաղցրե՛ք նրան, մատանին նրա մատը դրեք և նրա ոտքե-

ըին՝ կոչիկներ – Նա, ով մերկացավ անհնագանդությամբ, այժմ զգեստավորվում է հնագանդությամբ: Երբ Աղամը Դրախտում մեղանչեց, կորցրեց իր պատմուճանը՝ սկզբնական արդարությունը՝ ըստ այս խոսքի. «Երկուսի աչքերն էլ բացվեցին, և նրանք հասկացան, որ մերկ են» (Ծննդ. Գ 7): Այժմ Տերը մեր նախկին պատմուճանը մեզ է վերադարձնում՝ մկրտության Ավագանի շնորհով: Այստեղ ծառաները հրեշտակներն են, քանզի նրանց միջնորդությամբ է Աստված շնորհները տալիս:

Մատանին սիրո և միավորության նշանն է, ինչպես օրինակ՝ փեսայի միավորության նշանը հարսի հետ: Իսկ այստեղ՝ Աստծու սիրո հետ մարդու միավորության նշանն է: Այսինքն՝ երկնավոր Հայրը Հարսին՝ Եկեղեցուն, մատանի տվեց, ի գեմս Քրիստոս Փեսայի: Իսկ եպիսկոպոսի մատանին եպիսկոպոսի՝ իր թեմի հետ միավորության նշանն է: Բնդ որում մատանին նաև իշխանության նշան է: Հայրը, իր մեծ սիրով որդու մատին մատանի դնելով, նրան իշխան է կարգում ծառաների վրա: Մատանին նշանակն է նաև գործնական առաքինության:

Կոչիկը ոչ միայն պահպանում է ոտքը կամմակոր օձից, այլև իշխանություն է տալիս կոխոտել օձերին, կարիճներին ու թշնամու ողջ զորությունները, ինչպես նաև գեղեցկացնում է կրողին՝ ըստ այս խոսքի. «Որքան գեղեցիկ է քո քայլքը կոչիկներով» (Երգ Է 1): Սա նաև սուրբ Ավետարանի քարոզչության համար է (տես Եփես. Զ 15):

Բերե՛ք պարարտ եզր, մորթեցե՛ք, ուտենք և ուրախ լինենք – Այլաբանորեն եզր Տեր Հիսուս Քրիստոս է, իսկ եզի մորթվելը Տիրոջ խաչվելն է խորհրդանշում: Քանզի եզր հեզ ու սուրբ կենդանի է, ինչպես և մեր Տերը, Ով պարարտ է Աստվածությամբ ու լիուլի՝ Հոգու շնորհներով: Երկնավոր Հայրը հրամայեց մորթել եզր, քանզի Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր Միածին Որդուն տվեց (տես Յովի. Գ 16):

Մորթելուց հետո ասաց. «Ուրախ լինենք, որովհետեւ իմ այս որդին մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց – Մարդը մեռած էր հոգով և կորած գեհենում: Աստված իր անառակ ծառայի փրկության համար իր սիրելի Որդուն որպես հորթ տվեց մորթելու, որը, սակայն, չարեց հարկադրաբար, որևէ մեկից բռնադատված և ոչ էլ տրտմությամբ, այլ ուրախությամբ, ինչ պատճառով էլ ասում է. «Ուտենք և ուրախ լինենք»:

Իսկ նրա ավագ որդին ագարակում էր: – Ավագ որդին հրեշտակն է՝ այն բանական բնությունը, որ մեղք չի գործել, այլ եղել է բարի մշակ՝ պարարտ անդաստանում՝ հակառակ այն անդաստանին, ուր խոզեր կան:

Եվ մինչ գալիս էր և տանը մոտեցավ, լսեց երգերի և պարերի ձայն – Հայրը ցնծում է, քանզի գտավ իր որդուն: Որդին ցնծում է, քանզի գտնվեց, իսկ մարդկային բնությունը ցնծում է, որովհետեւ զգեստավորվեց

Սուլքը Հոգով՝ ըստ այս խոսքի. «Ես պիտի հրճվեմ Տիրոջով, որովհետև Նա ինձ փրկության զգեստ և ուրախության պատմուման հազցրեց, որպես փեսայի՝ պսակ դրեց իմ գլխին, և որպես Հարսի՝ զուգեց ինձ զարդով» (Եսայի ԿԱ 10):

Եվ իր մոտ կանչելով ծառաներից մեկին՝ Հարցրեց, թե այդ ի՞նչ է: – *Ծառաները հրեշտակների ցածր դասերն են: Վերին զվարթունները տեղյակ չեն Տիրոջ մարդեղության խորհրդին, դրա համար ցածր դասերից էին հարցնում: Մարդեղության խորհուրդը բոլոր հրեշտակներն էլ եկեղեցուց սովորեցին, այսինքն՝ Քրիստոսից, Ով գլուխն է եկեղեցու՝ ըստ այս խոսքի. «Այն խորհուրդը, որ ծածկված էր դարերից և սերունդներից և որ այժմ հայտնվեց իր սրբերին» (Կողոս. Ա 26): Դարձյալ՝ «Որպեսզի Եկեղեցու միջոցով հայտնի լինի այժմ երկնային իշխանություններին և պետություններին Աստծու բազմապատիկ իմաստությունը» (Եփես. Գ 10):*

Եվ սա նրան ասաց. «Քո եղբայրը եկել է, և քո Հայրը մորթեց պարարտ եզը, որովհետև ողջ-առողջ ընդունեց նրան – Նա բարկացավ և չէր ուզում ներս մտնել. իսկ Հայրը դուրս ելնելով՝ աղաքում էր նրան»: *Երբ հրեշտակներն իմացան, որ Տերը բոլոր մարդկանց հոգիները հանել է դժոխքից և դեպի երկինք ճանապարհել, բարկացան: Նրանք տեղյակ չեն մարդկային բնության նկատմամբ Աստծու անչափ գիտությանը, Աստծու անոխակալությանը և սիրուն, այդ պատճառով անիրավացի էին համարում, որ այդպիսի անառակը՝ մարդը, միայն մեղա գալով այսպիսի փառքի արժանանա:*

Որդին պատասխանեց և ասաց Հորը. «Այս քանի՛ տարի է, որ ծառայում եմ քեզ և երեք քո Հրամանները զանց չեմ արել. ինձ երեք մի ուլ չտվիր, որ բարեկամներիս հետ ուրախություն անեի» – Հրեշտակները խորհում էին իրենց մտքում, որ եթե սա անառակ լինելով այսպիսի փառքի արժանացավ, ապա որքա՛ն առավել փառքի իրենք են արժանի, քանզի երեք Տիրոջ պատվիրաններից չեն անցել, սակայն մինչև այժմ դրա դիմաց իրենց ունեցած պատիվը գեռևս չի ավելացել, ուստի ասացին. «Ինձ երեք մի ուլ չտվիր»: Սակայն նրանք չիմացան, որ իրենց մեծ պատիվը միշտ Աստծուն մոտ լինելն է:

Հրեշտակների համար կարիք չկար եզ մորթելու, քանզի նրանք անմեղ էին, կենդանի և միշտ Աստծու մոտ, իսկ մարդը մեռած էր մեղքերի մեջ, Աստծուց հեռացած և կարիք ուներ զոհաբերության:

Երբ եկավ քո այս որդին, որ քո ունեցվածքը կերավ պոռնիկների հետ, ընդունեցիր – «Պոռնիկները» նյութական և մարմնական կյանքի զանազան չարություններն են:

Հայրը նրան ասաց. «Որդյա՞կ, դու միշտ ինձ հետ ես» – Հայրը վկայում է, որ ավագ որդին երբեք չհեռացավ բարուց:

Եվ ամեն ինչ, որ իմն է, քոնն է. բայց պետք էր ուրախ լինել և ցնծալ, որովհետև քո այս եղբայրը մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց՝ «Մեռած էր», քանի որ անառակությամբ ապրելով վատնեց կենդանարար գոյացությունը: «Կորած էր», քանի որ կորստյան տանող «Լայն և ընդարձակ ճանապարհով» էր գնում (տես Մատթ. Է 13): Իսկ մտադրվելով հոր մոտ գալ՝ կենդանացավ ու գտնվեց՝ թոթափելով մեռելությունն ու կորուստը:

Հայրն ուրախանում է ամեն մի մեղավորի համար, որն ապաշխարում է, և մեծ տոնախմբություն անում: Եվ այս տոնը ծննդյան տոն է, քանզի մեղավորը, որ սատանայի որդի էր, Աստծու որդի դարձավ՝ վերստին ծնվելով մկրտության Ավագանից: Սա նաև հարության տոն է, քանզի մեղավորը մահացու մեղքերից հարություն առավ և կենդանացավ հոգով: Եվ երրորդ՝ նաև հոգեգալստյան տոն է, քանզի ընդունում է Սուրբ Հոգուն այնպես, ինչպես առաքյալները Վերնատանն ընդունեցին:

ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻ Չորրորդ ԿԻՐԱԿԻ

Մեծ պահքի չորրորդ կիրակին ունի արարչության չորրորդ օրվա ու այս կյանքի չորրորդ դարի խորհուրդը և կոչվում է «Տնտեսի կիրակի»: Այս անունը նոյնպես վերցված է այդ օրն ընթերցվող նաշու Ավետարանից, որտեղ խորհրդավոր կերպով պատճեն է, թե ինչպես իրավեն Յարուստը՝ Աստված, արարեց իմանալի աշխարհը և այնտեղ տնտեսներ կարգեց հրեղեններին, ապա ստեղծեց զգալի աշխարհը և այստեղ տնտես կարգեց մարդուն, իսկ այնուհետև՝ իր կողից բխած սուրբ Արյանք իհմնեց Եկեղեցին և այնտեղ տնտեսներ կարգեց առաջյաներին ու նրանց հետևողներին:

Սքանչելի ու հիանալի համենառությամբ են մինյանց հետ կապված թառասնորդաց պահքի զորությունները, ինչպես ցույց են տալիս և ուսուցանում ընթերցվածները: Իսկ չորրորդ կիրակի խորհուրդը բազմանշանակ է, ինչպես բազմանշանակ են չորս թվի խորհուրդները:

ԱՆԻՐԱՎ ՏՆՏԵՍԻ ԱՌԱԿԼ (Ղուկ. ԺԶ 1-8)

Անցյալ կիրակի օրն Ավետարանից ընթերցվեց, թե նրա մոտ էին հավաքվել մաքսավորներն ու մեղավորները, որպեսզի կորուսյալ ոչխարին փնտրող Հովվից լսեն հարյուր ոչխարների և տասը դրամների առակը: Իսկ այս կիրակի նույն խորհուրդը բուռն կերպով առաջ է մղվում մեծահարուստի՝ Արարչի, ու տնտեսի՝ մեր բնության մասին պատմությամբ:

Այնտեղ մեր բնությունն անառակ որդու միջոցով էր խոսում, իսկ այստեղ պատմվում է, թե ինչ է անում տնտեսը՝ պարտատերերի կողմից ամբաստանվելուց հետո։ Այնտեղ հայրն ընդառաջ է գնում և համբուրում կորած որդուն, իսկ այստեղ տերը գովում է անիրավ տնտեսին։ Այնտեղ հայրն անառակ որդու մատին մատանի, ոտքերին կոչիկ է հազցնում և մորթում պարարտ եղը, իսկ այստեղ Տերն ասում է, որ այս աշխարհի որդիներն ավելի իմաստուն են, քան լույսի որդիները։

Եվ Հիսուս իր աշակերտներին ասաց. «Մի մեծահարուստ մարդ կար, որ մի տնտես ուներ» – Մեծահարուստ մարդն այստեղ մարդացած Աստված է՝ մեր Տեր Հիսուս Քրիստոս։ Եվ իրավ, միայն նա է ճշմարիտ Մարդ։ Մեծահարուստ է կոչվում, քանզի նա առավել հարուստ է, քան ամբողջ աշխարհը, նրա տունը երկինքն է ու երկիրը։

Աստված երեք տուն կառուցեց. նախ՝ երկինքը՝ իմանալի աշխարհը. «Իմաստությունը շինեց իր տունը» (Առակ. Թ 1): Այստեղ տնտես հաստատեց հրեղեններին, որոնց գեմ երբ ամբաստանություն եղավ, նրանց զրկեց տնտեսությունից և խավարի կապանքներով շղթայելով՝ փակեց սանդարամետում՝ ըստ այս խոսքի. «Եվ այն հրեշտակներին, որ չպահեցին իրենց իշխանությունը, այլ լքեցին իրենց բնակության տեղը, հավիտենական կապանքներով խավարի մեջ պահեց Դատաստանի մեծ օրվա համար» (Յուղա Ա 6):

Տուն է կոչվում նաև եղեմի պարտեզը, որտեղ տնտես կարգեց առաջին մարդուն՝ Աղամին։ Եվ երբ նրա հասցեին ամբաստանություն եղավ, նրան էլ դուրս հանեց իր տանից՝ Դրախտից։

Տուն է կոչում նաև եկեղեցին՝ նոր Սիոնը։ Տերը մեր բնությունն արդարացնելուց հետո մեզ համար շինեց եկեղեցին, որտեղ տնտեսներ եղան նախ՝ մարդարեները, ապա՝ առաքյալները, այնուհետև՝ վարդապետները, հայրապետները, հովիվները և առաջնորդները։

Տուն է կոչվում նաև յուրաքանչյուր առանձին մարդ, ում մեջ տնտեսը նրա միտքն է։ Նաև տուն է զգալի աշխարհը, որտեղ տնտեսներ են թագավորները։

Քանի որ տնտեսը չունի իր սեփականությունը, այլ ամեն ինչ տիրոջ կողմից է նրան վստահվել, այդ պատճառով նա բազում հատկություններ պետք է ունենա։ Նախ պետք է իր գործը միշտ ջանասիրությամբ կատարի և երբեք չծովանա, ժամանակին կերակուր պատրաստի և հոգա իր ծառայակիցների մասին։ Իսկ եթե չլինի ջանասեր կամ էլ գող լինի և տիրոջ ունեցվածքը մսխի, լինի չարաբարո, անհնագանդ, անհամբեր, ժլատ և պղծություններ գործի, ապա կարող է զրկվել տնտեսությունից։

Տնտեսի նման՝ մարդն էլ ոչինչ չունի և ամեն ինչ Աստծուց է ստացել՝ ըստ այս խոսքի. «Ի՞նչ բան ունես, որ ստացած չլինես. և եթե ստացել ես, ինչո՞ւ ես պարծենում չստացողի պես» (Ա Կորնթ. Դ 7): Մարդը բոլոր պարգեներն Աստծուց է ստացել՝ և' քահանայությունը, և' մնացած ամեն ինչ, որպեսզի փոքրերի մեջ հավատարիմ լինելով՝ մեծին ու անճառելիին արժանանա: Արդ՝ ամեն ոք, ով Աստծուց շնորհ է ստանում, այդ շնորհի տնտեսն է և պարտավոր է տնտեսին վայել գործել, հակառակ դեպքում կզրկվի ունեցվածքից:

Եվ նրա մասին ամբաստանություն եղավ, որպես թե վատնում է իր տիրոջ ունեցվածքը – Ունեցվածքը երկու տեսակ է լինում՝ հոգեսոր ու մարմնավոր, և սրանք բոլորն էլ Աստծունն են: Երկու կերպ է հնարավոր զրկվել տնտեսությունից, մեկը՝ երբ զրկվում ես պաշտոնից, մյուսը՝ կյանքից:

Թեև Աստված ամենատես է և կարիք չունի ամբաստանություններ լսելու, սակայն մարդիկ, ձանձրանալով տիրող անօրենություններից հաճախ բողոքում են Աստծուն: Նաև հրեշտակները, տեսնելով ամբարիշտների գործերը, նրանց ամբաստանում են Աստծու առջև:

Տերը կանչեց նրան և ասաց. «Այս ի՞նչ եմ լսում քո մասին. տո՛ւր քո տնտեսության հաշիվը, որովհետեւ այլևս տնտես լինել չես կարող» – Այսպես ասաց, որպեսզի մեզ սովորեցնի, որ առանց քննության որևէ մեկին չի դատում: Եվ ով հաստատվում է չարության մեջ, այլևս չի կարողանում բարին գործել:

Տնտեսն իր մտքում ասաց. «Ի՞նչ պետք է անեմ, քանի որ իմ տերը տնտեսությունս ինձնից վերցնում է. Հողի վրա աշխատել չեմ կարող, մուրալ ամաչում եմ» – Պաշտոնից զրկվածն իսկապես այլևս չի կարողանում գործել և ամաչում է մուրալ: Կյանքից զրկվածը նույնպես այլևս չի կարողանում գործել, քանզի գործելու ժամանակն անցել է, և չկա այլևս ապաշխարության ժամանակ, որ քերի իր հոգու ախտերը և չարի փոխարեն բարին անի: Իսկ մահանալուց հետո մուրալն ամոթ է, քանզի հանդերձյալ կյանքում մուրալու տեղ չկա, և ոչ ոք չի տա խնդրվածքը, ինչպես հիմար կույսերն իմաստուններից յուղ խնդրեցին և չստացան (տե՛ս Սատթ. ԻԵ 8-9):

Գիտեմ, թե ինչ պիտի անեմ, որպեսզի, երբ տնտեսությունիցս հեռացվեմ, ընդունեն ինձ իրենց տները – Տնտեսը փորձում է իր տիրոջ ունեցվածքով բարեկամներ շահել: Այն, ինչ ագահությամբ ժողովեց, այժմ փութապես կամենում է տալ աղքատներին և արտասուքով ու խոստովանությամբ ընկնելով Աստծու առջև՝ հառաչանքով նրանից թողություն է ինդրում:

Եվ իր տիրոջ պարտապաններից յուրաքանչյուրին մեկ առ մեկ իր մոտ կանչելով՝ առաջինին ասում է. «Իմ տիրոջը ինչքա՞ն պարտք ունես»: Եվ սա ասում է. «Հարյուր տակառիկ ձեթ»: և տնտեսը նրան ասում է. «Ա՛ռ քո մուրհակը և նստի՛ր ու անմիջապես գրի՛ր՝ Հիսուն»: Ապա դարձյալ մյուսին ասում է. «Դու ինչքա՞ն պարտք ունես». և սա ասաց. «Հարյուր պարկ ցորեն»: Տնտեսը նրան ասաց . «Ա՛ռ քո մուրհակը և նստի՛ր ու գրի՛ր՝ ութուն» – Թեև տնտեսն անիրավ էր, սակայն իր ունեցվածքից բաշխելով աղքատներին՝ դրանով բարեկամներ շահեց: Մուրհակները նրանց ձեռքը տվեց և հրամայեց պարտքը նվազեցնել, որպեսզի նրանք բարեկամանան իր հետ և իրեն ընդունեն իրենց տանը, այսինքն՝ երկնքի արքայությունում, որն աղքատների տունն է՝ ըստ այս խոսքի. «Երանի՛ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը» (Մատթ. Ե 3):

Եվ տերը գովեց անիրավ տնտեսին, որովհետև հնարամտությամբ գործեց – թեև տնտեսը վատնում է Տիրոջ ունեցվածքը, սակայն այս անգամ իմաստությամբ է գործում, որովհետև բարեկամներ է շահում և գովության արժանանում: Քանզի քաջալերեց հոգուն և մարմնին՝ հուսալ Աստծու ողորմությանը, նրանով, որ եթե ինքը կեսը թողեց, ապա եթե նրանք դիմեն Տիրոջը, նա ամբողջը կթողնի: Սա չկարողացան անել չար հրեշտակները, երբ Տերը նրանց զրկեց իրենց տնտեսությունից:

Քանի որ այս աշխարհի որդիներն ավելի հնարամիտ են, քան լույսի որդիներն իրենց սերնդի մեջ – Լույսի որդիները հրեշտակներն են, քանզի լույսից արարվեցին: Մարդկանց ավելի իմաստուն է ասում, քան հրեշտակներին, որովհետև մարդիկ փառքից զրկվելուց և Աստծուց օտարանալուց հետո հնար գտան ապաշխարությամբ փնտրելու Աստծուն ու նրան մոտենալու, իսկ հրեշտակների դասերից շեղվածներն է՛լ ավելի չարացան և չիմացան, որ նա, Ով հանցանքների պատճառով իրենց բարձունքից վայր է գցել, զորություն ունի նաև դատելու: Սրանք այս մասին խորհելու փոխարեն՝ անմտորեն պատերազմեցին Աստծու պատկերի՝ մարդու դեմ և նրան խաբեռությամբ համոզեցին գործակից լինել իրենց անօրինություններին: Սրանով մեր բնությունն ապականեցին, Աստծու Որդուն դեպի խաչը բերեցին, որով պարտական մնացին մեզ համար խաչված Աստծու անմահ մահվանը և մեզ համար հեղված նրա անպարտ Արյանը, և Աստծու վրեժինդրությունը հարուցեցին:

Եթե սրանք հանցանքից անմիջապես հետո ապաշխարեին և Աստծուն հնագանդվեին, ապա մեր բնությունը չէր ապականվի, և ահեղ դատաստանը նրանց չէր սպառնա: Եթե իմաստուն լինեին, ապա երանելի կլինեին, քանզի ունեին անմահ և անապական բնություն, որը նրանցից չվերցվեց նրանց անկման ժամանակ: Սրանք են հրեշտակների անմտությունը և

մարդկանց իմաստությունը, որովհետև մարդը գիտի վտանգի պահին Աստծուն դառնալ, Արարչից խնամք գտնել և թողության հույս ունենալ։ Քանզի ավելի իմաստուն են նրանք, ովքեր գտնում են հնար փրկության, քան նրանք, ովքեր հոգ չեն տանում իրենց փրկության համար։

Եվ ես ձեզ ասում եմ. անիրավ մամոնայից ձեզ համար բարեկամներ արեք, որպեսզի, երբ այն պակասի, հավիտենական հարկերի տակ ընդունեն ձեզ։ – Այստեղ մամոնային անիրավ է ասում ոչ թե նրա համար, որ բնությամբ չար է, այլ որ ունեցվածքի տերն այն անիրավությամբ է ժողովել։ Նաև երբ մեկն իր տիրոջ ունեցվածքն է տալիս աղքատին, դարձյալ անիրավությամբ է դա անում, սակայն քանի որ աղքատին է տալիս, գովության է արժանանում։ Սրա համար Տերը գովեց անիրավ տնտեսին, որ կորստյան մատնված արծաթով աղքատներից իրեն բարեկամներ շահեց, նրանց միջոցով էլ՝ Քրիստոսին։

Խորհրդով տնտեսը մարդու միտքն է, իսկ երկու պարտապաններից մեկը հոգին է, մյուսը՝ մարմինը։ Միտքը, լինելով կառավարիչ, իր ձեռքում է պահում մուրհակները, որոնցով Աստծու առջև մեր հանցավոր լինելն է երեսում։ Քանի դեռ մեր ախտակիր բնությունն աշխարհի սիրով է տոգորված, միտքը չի հոգում Աստծու դատաստանի սպառնալիքների մասին և չի էլ կամենում մուրհակները տալ պարտապանների ձեռքը, որպեսզի նրանք խոստովանությամբ ու ապաշխարությամբ դրանք պատռեն, այլ մեկ այլ առակի տնտեսի նման ձեռում է իր ծառայակիցներին՝ հոգուն և մարմնին, և խնջույք անում անառակների հետ (տե՛ս Ղուկ. ԺԲ 45)։ Իսկ երբ գալիս է պահանջատերը, վերանում են նրա աշխարհիկ ցանկությունները, և նա անմիջապես կանչում է հոգուն ու մարմնին և նրանց տալիս մուրհակները, որպեսզի ազատվի սպառնացող վտանգից։

Նախ հոգուն է հարցնում, թե որքա՞ն մեղք է գործել։ Հոգին «Հարյուր» ասելով հայտնում է, որ լիուլի գործել է բոլոր մեղքերը, քանի որ հարյուրը կատարյալ թիվ է։ Հոգու մեղքերի կեսը կրճատվում է, քանզի հոգին դյուրությամբ է մեղքերի մեջ ընկնում։ Մարդու հոգին պարտք էր հարյուր տակառիկ ձեթ, այսինքն՝ ծայրագույն աստիճանի պարտական էր Սուրբ Հոգուն, որը ձեթով է խորհրդանշվում։

Հարցնում է նաև մարմնին, թե սա որքա՞ն մեղք է գործել։ Մարմինը ևս «Հարյուր» ասելով հայտնում է, որ գործել է բոլոր մարմնական մեղքերը։ Մարմնի մեղքերի միայն հինգերորդ մասն է կրճատում, քանզի այն կարող էր խուսափել մեղքերից, եթե կամենար, սակայն դա անելու փոխարեն՝ օրենքը ոտնատակ է տվել։ Մարմնի մեղքերի հինգերորդ մասը ներփում է զղջմամբ, իսկ մնացածը՝ խոստովանությամբ և աղքատներին ողորմություն տալով։ Մարմինը հարյուր պարկ ցորեն էր պարտք,

այսինքն՝ կատարելապես պարտական էր Տիրոջ Մարմնին, քանզի Տիրոջ Մարմինը ցորենից է փոխակերպվում:

Դարձյալ՝ մարմինը, տկար լինելով, որքան ջանում է լավ պատրաստվել սուրբ Խորհրդին, վերստին անկատար է մնում, ինչ պատճառով մնացած պարտքը մի մեղայով է նրան ներվում: Իսկ հոգին, իմացական լինելով, անձնիշխանաբար Հոգու շնորհների դեմ է մեղանչում, այդ պատճառով մնում է ծանր պարտքերի տակ: Ուստի նրան քաջալերելու համար կեսը ներվում է, որպեսզի նաև մնացածի ներվելու հույսով դիմի Տիրոջ ողորմությանը:

Դարձյալ՝ այն, ինչն ստացանք Ավագանի միջոցով և որի դեմ մեղանչեցինք, դրա կեսը ներվում է, իսկ անամոթությամբ Տիրոջ Մարմնին մոտենալը դժվար ներելի է, այդ պատճառով հինգից միայն մեկն է ներվում՝ ըստ այս խոսքի. «Ով որ ուտի այս Հացը կամ խմի Տիրոջ այս Բաժակն անարժանորեն, պարտական պիտի լինի Տիրոջ Մարմնին և Արյանը... Որովհետև ով ուտում է և խմում անարժանորեն, իր իսկ դաստապարտությունն է ուտում և խմում, քանի որ չի զատորոշում Տիրոջ Մարմինը» (Ա Կորնթ. ԺԱ 27, 29):

Անիրավ տնտեսը խորհրդանշում է այն բոլոր մեղավորներին, ովքեր ներում են իրենց պարտապանների պարտքերը և աղքատներին առատապես բաշխում իրենց սիրելի մամոնան՝ հարստությունն ու ունեցվածքը, կամ էլ, ներելով պարտքերը, իրենց սիրելիներ են դարձնում հրեշտակներին ու արդարներին:

ԴԱՏԱՎՈՐԻ ԿԻՐԱՎԿԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿՐԻԶԱԿԻ

Մեծ պահքի հինգերորդ կիրակին ունի արարչության հինգերորդ օրվա ու այս կյանքի հինգերորդ դարի խորհուրդը և կոշվում է «Դատավորի կիրակի»: Այս ամունը նույնական վերցված է այդ օրն ընթերցվող ճաշու Ավետարանից: Այստեղ խորհրդավոր կերպով պատմվում է, որ Աստված՝ արդար Դատավորը, ամբողջ մարդկային բնության վրա միտքը որպես դատավոր հաստատեց՝ արդարությանը դատելու քրիստոսի օրինակով, սակայն այս դատավորը, լինելով անպատճառ և չունենալով Աստծու սուրբ երկյուղը, չէր տեսնում գրկվածի դատը: Այդ պատճառով մեր այրի հոգիները պաղատում են անմահ Փեսային՝ Աստծուն, Տիրոջ իրավունքն ուսուցանել այս դատավորին՝ արդար դատաստան տեսնելու մեր ոստիի հանդեպ:

Ինչպես որ դարերի ու ժամանակների խորհուրդն է ահավոր ու մեծ, այդպես էլ Աղուհացի (Մեծ պահք) խորհուրդը: Հինգերորդ կիրակին մեր հինգ օգայարաններին կյանքի մաքրության, սրբության ու արդարության դեղն է տալիս՝ հինգ շարահյուսված կիրակիները միմյանց հետ համադրելով:

ԱՆԻՌԱՎԱԿՈՐԻ ԵՎ ԱՅՐԻ ԿՆՈԶ ԱՌԱՎԱԼ (Ղուկ. ԺՀ 1-7)

«Մի առակ էլ ասաց նրանց այն մասին, թե նրանք ամեն ժամ պետք է աղոթեն ու չձանձրանան»: Բարեխնամ և ամենագութ Աստված միշտ կամենում է ապրեցնել մարդկանց հոգիները և ոխ չի պահում մեր անօրինությունների պատճառով: Ուստի՝ այսօր Տերը մեր առջև է դնում դատաստանի ահը և պատմում դալիք արհավիրքների մասին: Նախ ասում է, որ պետք է աղոթել և չձանձրանալ: Ամեն ժամ աղոթելու համար Եկեղեցին սահմանել է ինն ընդհանրական աղոթքի ժամեր, և մնացած ժամանակն էլ մենք Աստծուն միշտ պետք է ունենանք մեր մտքում, գոհանանք նրանից և մեր խնդրվածքները ստանալու համար հարատե աղոթենք:

Մի քաղաքում մի դատավոր կար. Աստծուց չէր վախենում և մարդկանցից չէր ամաչում: – Քաղաքը մարդն է, իսկ դատավորը՝ մարդու միտքը, որպեսզի միշտ քննի չարն ու բարին և չարից խուսափելով՝ ձգտի դեպի բարին, քանզի միտքն ազատ է և ծառա չէ:

Դատավորի գործն է լսել դատախազի խոսքը, քննել լսածը, փնտրել վկաներ, ապա վճիռ կայացնել: Սակայն մարդու միտքը, մանկությունից դաստիարակվելով չարի կողմից, առավել խնամք է տանում մարմնի, քան թե հոգու համար: Գործած մեղքերը հիմարացնում են միտքը, որի պատճառով սկսում է թյուրել դատաստանը, սրան ավելանում են նաև մեղսալից հաճույքները, որոնք կաշառքի նման փակում են նրա բերանը: Թեպետև միտքը գիտի Աստծու արդարության մասին, սակայն մարմնի նկատմամբ սերը նրան թույլ չի տալիս վախենալ Աստծուց և մարդկանցից ամաչել: Աստծուց չի վախենում նաև այն պատճառով, որ Աստված իրեն տեսանելի չէ, իսկ մարդկանցից չի ամաչում, որովհետեւ միտքը մարդկանց անտեսանելի է:

Երկյուղը մտքի սանձն է, որը հեռացնում է չարից, իսկ ամոթն առագաստ է, որով թաքնվում ենք մեղքից: Եթե սրանք չլինեն, ապա միտքը սանձարձակ կերպով կխաղա մեղքերի ոլորտում՝ զրկելով հոգուն և պարարտացնելով մարմինը:

Եվ նույն քաղաքում մի այրի կար, որ գալիս էր նրա մոտ և ասում. «Իմ ոստիի դեմ իմ դատը տես» – Մարդը կազմված է իմանալի հոգուց և գեղեցիկ մարմնից: Այստեղ այրին հոգին է, իսկ նրա ոստիը՝ մարմինը՝ ըստ այս խոսքի. «Քանի որ մարմինը հոգու հակառակն է ցանկանում, իսկ հոգին՝ մարմնի հակառակը» (Գաղատ. Ե 17): Հոգին մարմնի հետ միավորվելու պահից և՝ բազում բարիքներ է վայելում, և՝ բազում վտանգների ենթարկվում մարմնի կողմից: Այդ պատճառով Աստված միտքը իշխան ու դատավոր կանգնեցրեց հոգու և մարմնի վրա, որպեսզի անիրավությամբ

միմյանց չզրկեն. ո՞չ հոգին՝ մարմնին, և ո՞չ էլ մարմինը՝ հոգուն: Այստեղ հոգին այրի է կոչվում, որովհետև մեղքի պատճառով բաժանվել է երկնային Փեսայից՝ Հիսուսից:

Դարձյալ՝ միտքն այր է երկու կանանց միջև՝ հոգու և մարմնի: Երբ մեկի ցանկությունները կատարվում են, մյուսն այրի է մնում: Այրին դալիս է դատավորի մոտ, երբ հոգին, խղճից մղվելով, առարկում է մտքին՝ նրան հիշեցնելով գործած մեղքերն ու անիրավությունները: Մաքի դատելն այն պիտի լինի, որ մարմնին տա միայն նրա բնության կարողության չափով և մարմնի վրա չհեղի կրքերի վայրագ ցանկություններ, իսկ հոգուն տա պատշաճ առաքինություն, որով հոգին և՛ կենդանի կմնա, և՛ մահացու մեղքեր չի կրի:

Եվ դատավորը երկար ժամանակ չէր ուզում դատը տեսնել: – Որովհետեւ միտքը, մարմնական հաճույքներից թմրած, ննջում էր և չէր կամենում զգաստանալ: Բայց քանի որ Արարիչը մարդու մեջ խիղճը դրել է որպես անաչառ և անդուլ կշտամբիչ, որպեսզի դրանով մարդուն միշտ անհանգստացնի, և մարդը, գործած մեղքերի հիշողություններից գիշերցերեկ տանջվելով՝ եթե ոչ Աստծու փառքի համար կամ էլ գութից մղված, ապա գոնե խղճի խայթոցներից ազատվելու համար, որոշի տեսնել հոգու դատը: Այսպես շատ մեղավորներ են ապաշխարում:

Դրանից հետո իր մտքում ասաց. «Թեև Աստծուց չեմ վախենում և մարդկանցից չեմ ամաչում, բայց այն բանի համար, որ այրի կինն ինձ հոգնեցնում է, նրա դատը տեսնեմ, որպեսզի անընդհատ չփա և ինձ չանհանգստացնի» – Սա այն դեպքում է լինում, երբ մարդը, խղճմտանքից տագնապահար, չդիմանալով նեղսրտությանն ու տրտմությանը, որոնք առաջանում են մեղքերը հիշելուց, դիմում է դեպի բարին: Լինում են և այնպիսիներ, ովքեր հուսահատությունից անձնասպան են լինում՝ չդիմանալով խղճի խայթոցներին: Այսպես զորավոր է հոգու թախանձելը:

Լսեցեք, թե ինչ էր ասում անիրավ դատավորը: Իսկ Աստված արդարություն չի^o անի իր այն ծառաներին, որոնք գիշեր և ցերեկ աղաղակում են. և նրանց հանդեպ միայն համբերատա՞ր կլինի: Այո՛, ասում եմ ձեզ, նրանց իսկույն արդարություն կանի: – Այս առակը խրատում է, որ պետք է անձանձրույթ աղոթել Աստծուն: Քանզի եթե անիրավ դատավորը, որ ոչ Աստծուց էր երկնչում և ոչ էլ մարդկանցից ամաչում, այրու տեսապես հաճախելու և թախանձելու պատճառով նրա դատը տեսավ, որչափ ևս առավել Քրիստոս՝ Արդարության Արեգակը և Դատավորը, պիտի լսի նրանց աղաչանքներն ու պաղատանքները, ովքեր ամեն օր աղաչում և պաղատում են իրեն:

ԳԱԼՈՍՅԱՆ ԿԻՐԱԿԻ ՎԵՃԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

Մեծ պահքի վեցերորդ կիրակին ունի արարչության վեցերորդ օրվա ու այս կյանքի վեցերորդ դարի խորհուրդը և կոչվում է «Գալստյան կիրակի»: Այս անունը մեզ պատմում է Քրիստոսի առաջին գալստյան մասին՝ որպես Փրկիչ, ծառայի կերպարներվ, և ապա հայտնում Տիրոջ Երկորորդ գալստյան լուրջ՝ այս անգամ արդեն որպես ահեղ Թագավոր:

Ինչպես նախկին հինգ կիրակիները, այդպես էլ վեցերորդ կիրակին նույն շղթայի մասն է կազմում, որը վեցօրյա արարչության և վեց դարերի կատարյալ տիպն է:

ՏԻՐՈՋ ԳԱԼՈՒՄԱԾԼ

Տիրոջ առաջին գալուստը չնորհի ու ողորմության համար էր, որը եղավ ծածուկ, հեղությամբ ու խոնարհությամբ, առանց ոտնաձայների՝ ինչպես անձրեւ գեղմի վրա, իսկ երկրորդը՝ արդարության ու տանձանքների, որը լինելու է բացահայտ՝ Հոր փառքով, լուսեղեն ամպով, հրեղեն կառքով, չորեքկերպյան աթոռով ու բարկությամբ՝ ըստ այս խոսքի. «Մեր Աստվածը պիտի գա հայտնապես, և մեր Աստվածը պիտի չլոի, նրա առջև հուր պիտի բորբոքվի, և նրա շուրջը՝ սաստիկ մրրիկ» (Մաղմ. Խթ 3): Առաջին գալուստը մեղմ եղավ, ինչպես եղիային մոտեցավ մեղմ օդի ձայնով (տես Գ Թագ. Ժթ 12), իսկ երկրորդը լինելու է խստաշունչ հողմով, որը լեռներ է քանդելու և վեմեր խորտակելու:

Տիրոջ երկրորդ գալստյան օրն անհայտ է մարդկանց՝ ըստ այս խոսքի. «Այն օրվա և ժամի մասին ոչ ոք չգիտի. ո՛չ երկնքի հրեշտակները և ո՛չ էլ Որդին, այլ միայն Հայոթ» (Մատթ. ԻԴ 36): Քրիստոսի առաջին գալստյան ժամանակը հայտնի էր Սուրբ Գրքից՝ ըստ այս խոսքի. «Երուսաղեմի շինվելուց մինչև առաջին օծումը կա յոթ յոթնյակ և վաթսուներկու յոթնյակ, որպեսզի վերաշինվեն հրապարակներն ու պարիսպները և նորոգվեն ժամանակները: Վաթսուներկու յոթնյակից հետո կվերանա օծումը, արդարություն չի լինի նրա մեջ» (Ղան. Թ 25-26): Սակայն մարդիկ ծովության պատճառով չկարողացան դա իմանալ՝ ըստ այս խոսքի. «Քո այցելության ժամանակը չճանաչեցիր» (Ղուկ. Ժթ 44): Եվ երբ Քրիստոս եկավ, նրան չընդունեցին, այլ նախատեցին ու խաչեցին: Այս պատճառով երկրորդ գալստյան ժամանակը թաքցրեց մարդկանցից, որպեսզի հանկարծակի հասնի նրանց վրա:

Մինչ Քրիստոսի երկրորդ գալուստը պիտի գա նեռը, թլփատվելով պիտի պահի Մովսեսի օրենքն ու խաթի մարդկանց՝ ասելով, թե ինքն է Քրիստոս, և հրեաները նրան պիտի հավատան: Իսկ ովքեր նրան

Հավատան, նրանց տանջամահ պիտի անի: Ապա Քրիստոս իր գալստյամբ սատկեցնելու է այդ գազանին:

Տիրոջ գալստյամբ պիտի բացվի երկինքը, որից պիտի սասանվեն ու հալվեն լեռները, ինչպես մոմը կրակից (տես Եսայի ԿԴ 1): «Արեգակը պիտի խավարի, և լուսինն իր լույսը պիտի չտա, և աստղերը երկնքից պիտի ընկնեն» (Մատթ. ԻԴ 29): Երկնքի զորությունները և անմահների բյուրավոր բանակները պիտի շարժվեն, քանզի Թագավորը շարժվեց, և մեծ պիտի լինի Նրա բարկությունը: Երկինքը շառաչյունով պիտի անցնի ու չքանա, հրով կիզած տարրերը պիտի լուծվեն, և երկիրն ու ամեն գործեր, որ կան նրա վրա, հայտնի պիտի դառնան (տես Բ Պետ. Գ 10): Իսկ Եսային ասում է. «Երկինքը մագաղաթի պես պիտի գալարվի, և կլինեն նոր երկինք և նոր երկիր» (Եսայի ԼԴ 4): Ապա պիտի գան հրեղեն կառքերը, որոնց մեջ պիտի լինի Տերը (տես Սաղմ. ԿԵ 18): Նրա շուրջ լինելու են մրրիկ, որոտ ու երկնային զորքերի բարբառ: Նրա առջեկից լափող կրակն է գնալու, իսկ ետևից՝ բորբոքված բոցը (տես Հովել Բ 3):

Ավետարանում ասված է. «Որովհետև ինչպես փայլակը, որ ելնում է արևելքից և երևում է մինչև արևմուտք, Մարդու Որդու գալուստն այդպես կլինի» (Մատթ. ԻԴ 27): Ինչպես փայլակն է աչեղ զորությամբ հայտնվում, այդպես էլ Տերը պիտի գա փողի ձայնով, և ինչպես փայլակի լույսը հալածում է խավարը, այդպես էլ Տիրոջ լույսը պիտի հալածի մեղքերի խավարը: Ինչպես նաև փայլակն ենք տեսնում և ապա լսում նրա ձայնը, այդպես էլ Տիրոջ գալստյամբ՝ նաև խաչը պիտի երևա և ապա Տերը պիտի հայտնվի:

Նախքան Դատաստանը մեծ ու սաստիկ հուր է լինելու, այն սփռվելու է ամբողջ աշխարհի վրա, ջրերի նման տարածվելով՝ ծածկելու է լեռները, ինչպես եղավ ջրհեղեղի ժամանակ, և այրելով մաքրելու է ողջ աշխարհն աղտեղություններից՝ ըստ այս խոսքի. «Նրա առջեկից հուր պիտի ընթան՝ այրելով իր շուրջ եղող թշնամիներին» (Սաղմ. ՂԶ 3):

Աթոռները պիտի դրվեն, և Հինավուրցն այնտեղ պիտի նստի (տես Դան. Է 9-10), Նրա առջեկից հոսելու է կրակե հորդ մի գետ, և Նրան շրջապատելու են բյուրավոր հրեշտակներ: Հինավուրցն անսկիզբ Հայրն է, Ով հնացնում է օրերն ու ժամանակները: Նա պիտի նստի ատյանում, և պիտի բացվեն գրքերը, որտեղ աշխարհի մեղքերն են գրված: Կրակե գետը Հինավուրցի սրտմտությունն է, քանզի կրակով է դատելու աշխարհը: Այս գետը գումարվել է աշխարհի սկզբից մինչև վախճանը կուտակված մեղքերի կաթիլներից: Այսօր Աստծու և Գառան աթոռից ելնում է ողորմության ու շնորհի գետը՝ մեղքերի լվացման, հոգու զվարթության և ուրախության

Համար՝ ըստ այս խոսքի. «Հրեշտակն ինձ ցույց տվեց նաև սառնորակ Կենդանի ջրի մաքուր մի գետ, որ բխում էր Աստծու և Գառան գահից» (Յայտ. ԻԲ 1): Սակայն վերջին օրը ողորմության գետի փոխարեն լինելու է արդարության հրեղեն գետը, որից գժոխքի լիճն է գոյանալու: Ապա երկնքի ամպերի միջից գալու է Մարդու Որդին (տես Դան. Է 13), Ում տրվելու են իշխանություն ու պատիվ: Սա այն է, ինչի մասին ասաց Տերը. «Սակայն Հայրը ոչ մեկին չի դատում, այլ ամեն դատաստան տվել է իր Որդուն, որպեսզի ամենքը պատվեն Որդուն, ինչպես պատվում են Հորը» (Յովի. Ե 22):

Երկրորդ գալստյամբ Քրիստոս նորոգելու է տիեզերքը և պսակելու իր սրբերին: Նա պիտի ուղարկի իր Հրեշտակներին մեծ շեփորով՝ հավաքելու իր ընտրյալներին աշխարհի չորս կողմերից (Մատթ. ԻՂ 31): Ննջածների հոգիները, Նրան նախընթաց լինելով, արծվի նման սլանալով, պիտի հասնեն իրենց մարմիններին և ապա պիտի վեր թռչեն գեղի ամպը՝ ընդառաջ գնալով Քրիստոսին:

Քրիստոսի գալստյամբ բոլոր մարդիկ փողի ձայնով դատաստանի են կանչվելու և հավաքվելու այնտեղ, ուր խաչվեց Տերը: Ապա Քրիստոս Դատավորը նստելու է ատյանում՝ հարցաքննելու յուրաքանչյուրին: Բացվելու են գրքերը, որից բացվելու են մեր աչքերը՝ ճանաչելու չարն ու բարին, և մենք պատասխան պիտի տանք մեր գործերի, խոսքերի ու խորհուրդների համար: Եվ այստեղ պիտի երևա Դատավորի նրբատեսությունը, քանզի նա պետք է ցույց տա անգամ այնպիսիների մեղքերը, որոնց մենք արդար էինք կարծում: Եթե միայն Տիրոջ փառքի ծագումից հովիվները երկյուղեցին (տես Դուկ. Բ 9), իսկ մի Հրեշտակի իջնելը գերեզմանի վրա ահաբեկեց պահապաններին (տես Մատթ. ԻԸ 4), ապա որքան առավել կահաբեկվեն մեղավորները, երբ փառքերի Տերն իր գորքերով մեր աչքի առջև երևա՝ դատելու մեզ:

Քրիստոսի գալուստը դատաստանի համար երկու կերպ է լինում: Առաջինը՝ երբ գալիս է յուրաքանչյուր մարդու մահվան օրը՝ առանձնական դատաստանի համար, իսկ երկրորդը՝ երբ գալիս է վերջին օրը համընդհանուր դատաստանի համար: Առաջինի համար ասում է. «Իմ Հոր տան մեջ բազում օթևաններ կան. թե չէ ես ձեզ կասեի, թե գնում եմ ձեզ համար էլ տեղ պատրաստելու. և եթե գնամ և ձեզ համար էլ տեղ պատրաստեմ, դարձյալ կդամ և ձեզ կվերցնեմ ինձ մոտ, որպեսզի ուր ես լինեմ, դուք ևս այնտեղ լինեք» (Յովի. ԺԴ 2): Իսկ վերջին օրը Քրիստոսի գալուստը նմանեցվում է փայլակի ճայթյունին: «Եվ ապա երկնքի վրա Մարդու Որդու նշանը պիտի երևա, և այդ ժամանակ երկրի բոլոր ազգերը լացուկոծ պիտի անեն և պիտի տեսնեն Մարդու Որդուն, որ գալիս է

երկնքի ամպերի վրայով՝ զորությամբ և բազում փառքով» (Մատթ. ԻԴ 30): Այստեղ Մարդու Որդու նշանը խաչն է: Ինչպես համբարձման ժամանակ ասվեց. «Ամպը Նրան ծածկեց նրանց աչքերից» (Գործ Ա 9), այդպես էլ երկրորդ գալստյան ժամանակ ամպով է գալու Տերը:

Ինչպես այն ամպի սյունը, որը երբ հովանի էր լինում հսրայելի որդիների վրա, խոռվեցնում էր փարավոնի զորքին (տես Ելից ԺԴ 24), այդպես էլ Տիրոջ գալստյան օրն աջակողմյանները պիտի ասեն. «Օքնայալ է Նա, Ով գալիս է Տիրոջ անունով» (Մատթ. ԻԱ 9), իսկ ձախակողմյաններն ասելու են լեռներին. «Ընկե'ք մեզ վրա, և բլուրներին, թե՝ ծածկեցե'ք մեզ» (տես Ղուկ. ԻԳ 30), քանզի եկել է Տիրոջ բարկության օրը, և ո՞վ կարող է կանգնել Նրա առջև: Քրիստոսի աթոռը Բաբելոնի հնոցի նման է լինելու, որում երեք պատանիները, այսինքն՝ աջակողմյանները, Աստծուն են օրհնելու, իսկ կրակի բոցը, գետի նման ծավալվելով, այրելու է ձախակողմյաններին, այսինքն՝ մեղավորներին (տես Ղան. Գ 24):

Տերունական Խաչը երևալով գնալու է ու կանգնելու երուսաղեմում, ուր Տերը խաչվեց, և բոլոր արարածները, Խաչին հետևելով, գնալու են երուսաղեմ: Ապա հնչելու են փողերը, դրվելու են աթոռները, որից հետո գալու են հրեշտակները և Խաչի առջև են ժողովելու Աղամի սերնդին: Գալու են սուրբ մարգարեները՝ հրեղեն կառքերով, ապա՝ առաքյալները և բաժանելու են հավատացյալներին անհավատներից, իսկ հրեշտակները պատրաստելու են մեղավորների տանջանքի տեղը: Սրանից հետո լինելու է Սուրբ Երրորդության գալուստը: Հրեշտակները, մարգարեները և առաքյալները Նրան ընդառաջ են ելնելու, և Սուրբ Երրորդությունն իջնելու է երուսաղեմում, ուր սկսվելու է անաչառ դատաստանը: Հայրն իջնելու է տաճարում, Որդին՝ Գողգոթայի վրա, իսկ Սուրբ Հոգին՝ Վերնատանը:

ՂԱԶԱՐՈՍԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿԸ

Օրվա երեքսրբյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա' մեզ»:

Այսօր հիշատակն է Ղազարոսի՝ Քրիստոսի սիրելի բարեկամի, ում Տերը մահվանից չորս օր հետո գերեզմանից հարություն տվեց: Եկեղեցին այն նշում է «Տիրոջ մուտքը Երուսաղեմ» տոնին նախորդող շաբաթ օրը: Սակայն սա այն օրը չէ, երբ Տերը կանչեց Ղազարոսին մեռելների միջից ու հարություն տվեց: Ղազարոսի հարությունը գրանից տասնհինգ օր առաջ էր եղել՝ այն բանից հետո, երբ Տերը, խույս տալով հրեաներից, գնաց Հորդանանի մյուս կողմը, իսկ այնտեղից էլ՝ Բեթանիա և Ղազարոսին հարություն տվեց, որից հետո գնաց Եփրայիմ, ապա՝ Երիքով, իսկ այնուհետև դարձյալ եկավ Բեթանիա և այնտեղ ընթրեց, և Ղազարոսը ներկա էր այդ ընթրիքին՝ ըստ այս խոսքի. «Իսկ Հիսուս Զատկից վեց օր առաջ եկավ Բեթանիա, ուր ապրում էր մեռած Ղազարոսը, որին մեռելներից վեր էր կացրել: Եվ այնտեղ Նրան ընթրիք տվին. սպասարկում էր Մարթան, իսկ Ղազարոսը Նրա հետ սեղան նստածներից մեկն էր» (Յովհ. ԺԲ 1-2): Սա Նրա վերջին այցն էր Բեթանիա, դեպի կամավոր չարչարանքները գնալուց առաջ: Այդ պատճառով էլ այն տոնում ենք Տիրոջ Երուսաղեմ գալստից առաջ:

Եվ այս մասին կամայականորեն չի գրում ավետարանիչը, այլ որպեսզի ցույց տա, թե որչափ օգուտ է բարեկամանալ Քրիստոսի հետ, և ամենահետին չարությունն է Նրանից օտարանալը. օտարացածներին է ասում. «Ես ձեզ երբեք չեմ ճանաչել, հեռո՛ւ կացեք ինձանից դուք ամենքդ, որ անօրինություն եք գործում» (Մատթ. Է 23): Քանզի բարի գործերի մեջ առաջինը Նրան ճանաչելն է ու աշակողմյան դասում գտնվելը: Տիրոջ բարեկամն ենք լինում, երբ սիրում ենք աղքատներին, հագցնում մերկերին, ընդունում օտարներին, կերակրում քաղցածներին և հագեցնում ծարավներին: Նաև երբ այցելում ենք հիվանդին, մխիթարում տկարին, դարձի բերում մոլորյալին, խրատում տգետին, որբերի ու այրիների խնամքը տանում, միմյանց համար աղոթում, մեղքը ներում, ոխը սրտից հանում, միմյանց հետ հաշտությամբ ու խաղաղությամբ ապրում, և միմյանց նկատմամբ սիրով ու գթասիրտ լինում, այնժամ դառնում ենք Քրիստոսի նման և Նրա բարեկամը, ինչպես ինքն է ասում. «Սիրե՛ք միմյանց, ինչպես որ Ես ձեզ սիրեցի» (Յովհ. ԺԵ 12):

Ղազարոսի հարությունը տոնում ենք պահքի առաջին քառասունքի¹ ավարտին՝ Մեծ պահքի վեցերորդ շաբաթվա շաբաթ օրը, քանզի պահքն ու աղոթքը մեզ չարչարանակից են անում Քրիստոսին և մեր հոգին կենդանացնում պես-պես ախտերից, ինչպես Ղազարոսը հարություն առավ գերեզմանից: Վեցերորդ շաբաթը պատկերն է վեցերորդ դարի, երբ մարդկային բնությունը, երկար ժամանակ ընկղմված լինելով մարմնական հաճույքների մեջ, հիվանդացավ մեղքերի ախտով, իսկ Քրիստոս իր գալստյամբ եղավ մարդկային բնության փրկությունն ու հարությունը: Օրվա կանոնը կատարվում է տասներորդ ժամին: Սա այն ժամն է, երբ Տերը Ղազարոսին հարություն տվեց գերեզմանից և ընթրեց Բեթանիայում: Նաև այս ժամին Աղամը ելավ Դրախտից ու ընկավ սգի ու տրտմության վայրը, և ավազակը մտավ Դրախտ (տե՛ս Ղուկ. ԻԳ 43): Սա նաև այն ժամն է, երբ բոլորի Տերն իջեցվեց խաչից և գերեզման դրվեց:

Բոլոր աստվածային նշանները մեր Տեր Հիսուս Քրիստոսինն են: Դրանց մի մասը կարեոր է, իսկ մյուս մասը՝ առավել կարեոր: Եվ այս ամենով մեզ տրվում է հույս և երկնային մսիթարություն: Նշաններից առաջինով Տերը ջուրը գինի գարձրեց, ապա բուժեց խեղանդամներին, հալածեց դեերին, իսկ երբ հասավ ժամանակը, Ղազարոսին հարություն տալով եղբափակեց նշանագործությունը:

Այս մասնագոր հարությունը խորհրդանշում է. նախ՝ մարդկային բնության նորոգությունը և բժշկությունը մեռելության ախտերից, ապա՝ համընդհանուր հարությունը՝ Տիրոջ մյուս անգամ գալստյամբ: Հավիտենական Կյանքը կամեցավ մեր ապականացու բնությանը հաղորդել իր անմահությունը՝ ոչ միայն հոգով, այլև մարմնով, այդ պատճառով էլ սկզբում բժշկեց մարմնի փոքրագույն անդամները՝ չորացած ձեռքերը, ոտքերը, տեսողությունը, լսողությունը, ապա՝ ամբողջ մարմինը՝ բորոտությունից, անշարժությունից, այնուհետև հարություն տվեց Հայրոսի աղջկան ու նայինցի պատանուն, իսկ վերջում գերեզմանից կանչեց չորսօրյա մեռած Ղազարոսին, որը բոլոր մարմինների հարության առհավատչյան է:

Այստեղից հարց է ծագում. առաջին՝ ինչո՞ւ է Տիրոջ հարությունը ներկայացվում որպես համընդհանուր հարության օրինակ. քանի որ ինչպես Տերը Հայրոսի դստերը, այրու որդուն և Ղազարոսին հարություն տվեց, այնպես էլ աշխարհի վախճանին հարություն կտա բոլորին:

¹ Մեծ պահքի շրջանում խորհրդաբար երկու քառասնօրյա պահք է կատարվում: Առաջինը սկսվում է պահոց շրջանի առաջին երկուշաբթից և հասնում նինջև Ղազարոսի հարության օրը, իսկ երկրորդը սկսվում է Մեծ պահքի երկրորդ երկուշաբթից և հասնում նինջև Տիրոջ Հայրության օրը:

Չնայած որ նրանք հարություն էին առել Տիրոջ հրամանով, սակայն դարձյալ մահանալու էին, այդ պատճառով նրանց որպես հարության օրինակ չըերեց: Իսկ հավատարիմ և մեծագույն վկան առում է. «Գիտենք, որ Քրիստոս, մեռելներից հարություն առած լինելով, այսուհետեւ չի մեռնի, և մահը նրան այլևս չի տիրի» (Յոն. 2:9): Եվ մենք էլ հասարակաց հարության ժամանակ անմահությամբ ենք հարություն առնելու:

Երկրորդ հարց. եթե միշտ և բոլորից էլ զորավոր է հարություն Տվողը, ապա ինչո՞ւ է աշխարհի վախճանին անմահության հարություն տալիս, իսկ այժմ Նրա հրամանով հարություն առածները կրկին մահանում են:

Որովհետեւ գեռես իր մահն ուներ առջևում, դրա համար էլ սրանք պետք է մահանային, իսկ Նրա հարությունից հետո, երբ մահը Նրան այլևս չի տիրում, Նրա հրամանով մահացածներն անմահության հարությամբ պիտի հարություն առնեն: Որպեսզի ինքը լինի ամեն ինչում առաջինը, և մեր հարությունը Նրա հարությունից բխի, որովհետեւ Նա է ննջեցյալների առաջին Պտուղը և Անդրանիկը՝ մեռելներից (ՄԵՆ Ա Կորնթ. ԺԵ 20, Կողոս. Ա 18):

Տերը, Ղազարոսի հարությամբ ցույց տալով իր զորությունը հրեաներին, ցույց տվեց նաև, թե ինչպես իր մյուս անդամ գալստյան ժամանակ բոլոր մեռելներին պիտի կանչի և հարություն տա մի ակնթարթում, առանց ապականության:

ԱՎԵՏԱՐԱԿԻ ՄԵԿԱՌԱՋՈՒԱՅ

(Հոգ. ԺԱ 1:46)

Իսկ թե ինչ խորհուրդ ունեն Ղազարոսի հարությունը կամ Նրա քույրերի աղաչանքները և կամ Տիրոջ՝ Բեթանիա գալը և հարություն տալը, այս մասին Ավետարանը պատասխանում է Հստակ կերպով: Եվ մի հիվանդ կար Ղազարոս անունով, Բեթանիայից՝ Մարիամի և նրա քույր Մարթայի գյուղից: — Մարդկանցից շատերը, երբ տեսնում են, որ Աստծուն հաճելի անձինք ու սրբերը չարչարվում են կամ հիվանդանում կամ էլ չքավորության մեջ ապրում, գայթակղվում են՝ չիմանալով, որ Աստծու բարեկամները, ովքեր այսպիսի փորձությունների մեջ են լինում, առավել պիտի պայծառանան փառքով, ինչպես պայծառացան Հոբն ու առաքյալները և նրանց նմանները: Եվ այս փորձությունների համար հինգ պատճառ կա:

Նախ՝ որպեսզի կատարվի Քրիստոսի այս խոսքը. «Երանի՛ է ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն» (Սատթ. Ե 11): Դարձյալ՝ «Որովհետեւ այս աշխարհից չեք, այլ ես ձեզ ընտրեցի աշխարհից, դրա համար աշխարհը ձեզ

ատում է» (Ղովի. ԺԵ 19): Երկրորդ՝ ինչպես պատերազմն ամուր դղյակի համար է լինում և ոչ թե մի դյուրամատչելի դաշտի, այդպես էլ սատանան միշտ պատերազմում է հավատով ու գործով ավելի արիաբար ամրացածների հետ: Երրորդ՝ որովհետև նա, ով ուրիշներին է քարոզում թողնել աշխարհի հաճույքները, նույնը պետք է անի նաև ինքը: Չորրորդ՝ եթե մարդ ունի թեկուզ փոշետեսակ սխալանքներ, ապա դրանք պիտի մաքրի այնպես, ինչպես արծաթն է մաքրվում կրակի բովում: Հինգերորդ՝ որպեսզի հաստատուն հույս ունենանք, որ ինչպես իր սիրելի Ղազարոսին կյանք պարգեց, այդպես էլ համբերողներին հավիտենական կյանք կպարգեի:

Հիվանդ Ղազարոսը մարդկային բնությունն է խորհրդանշում, որը բազում ժամանակներ ընկղմվելով մարմնական հաճույքների ու մեղքերի մեջ՝ հիվանդացավ: Իսկ հիվանդությունը մարդկային ցեղի մեղքն է խորհրդանշում, մահանալը՝ մեղքերի մահը՝ ըստ հետեւյալ խոսքի. «Մեղավորի մահը չար է» (Սաղմ. ԼԳ 22): Հիվանդի՝ թեթանիայում լինելը հետեւյալ նշանակությունն ունի: Նախ՝ թեթանիան թարգմանվում է չարչարանքների ու սգի տուն, որն ամբողջ աշխարհի օրինակն է, ուր բնակվում են մարդիկ: Այն իսկապես չարչարանքների, հիվանդության ու մահվան տուն է՝ Աղամի հանցանքների պատճառով Աստծու վճռի համաձայն կայացված. «Փուշ ու տատակ թող աճեցնի քեզ համար երկիրը, ցավերով երեխաներ պիտի ծնես, քո երեսի քրտինքով ուտես հացդ մինչև հող դառնալդ» (Ծննդ. Գ 16-19): Դրախտի վայելչությունից ու կենդանությունից Աղամի անկման համար նրան սգակից են բոլոր արարածները, ինչպես ասում է առաքյալը. «Բոլոր ստեղծվածները հեծեծում են և երկունքի ցավի մեջ են մինչև այժմ» (Ղոռն. Ը 22): Եվ կարոտ էր աշխարհն իր Հարազատի սիրուն և օժանդակությանը, այսինքն՝ Քրիստոսի, Ով խափանեց կայացրած վճռու և անեծքը փոխեց օրհնության:

Մարիամի ու Մարթայի գյուղից: – Հատ պատմագիրների ու ավետարանիչների սովորության, որպեսզի բացահայտվեն բոլոր հանդամանքները, նշվում են նաև բնակավայրերը՝ ասված խոսքի հավաստիությունը հաստատելու համար: Իսկ թե ինչո՞ւ գյուղը կոչեց կանանց և ոչ թե Ղազարոսի անունով, ապա պետք է ասել, որ թեպետ բնակավայրն ընդհանուր էր նրանց համար, սակայն Ղազարոսի անունով պետք էր կոչել, բայց այս դեպքում տեղին էր բնակավայրը կենդանի եղողների անունով կոչել, քան մահացածի:

Նրանց եղբայր Ղազարոսը հիվանդ էր – «Ղազարոս» երբայեցերեն նշանակում է օգնել, իսկ «Մարիամ» նշանակում է լուսավորել, ով էլ լուսավորվեց Տիրոջ լույսով և գալստյամբ: Սա այն Մարիամն էր, ով օծեց Տիրոջը յուղով, և ոչ այն մեկը, ում հիշում են մյուս երեք ավե-

տարանիչները (Մատթ. հ2 6-13, Մարկ. ԺԴ 3-9, Ղովհ. ԺԲ 1-8): **Այն մեկը պոռնիկ կին էր, իսկ սա սուրբ էր և պատրաստ ընդունելու Քրիստոսին:** «Մարթա» նշանակում է տերունական, Տիրոջ գալստյամբ բերկրած:

Ղազարոսի քույրերն արդար և օրինավոր էին, որով և հաճելի եղան Աստծուն, ինչպես Աբրահամը, Մովսեսը և մյուս մարդարեները, ովքեր արտասվալից պաղատանքներով ու աղերսական ձայնով իրենց հառաչանքներն էին առաքում առ Աստված ու ասում. «Տե՛ր, նրան, ում սիրեցիր և Քո պատկերով ստեղծեցիր, ահա հիվանդ է և դրված է չարաչար մեղքերի մահճում»: Եվ, հիրավի, Աստված մարդուն ավելի է սիրում, քան իր մյուս արարածներին, որը հայտնի է չորս հանգամանքներից. նախ՝ որ բոլոր արարածներից միայն մարդուն ստեղծեց իր պատկերով ու նմանությամբ, ինչպես վկայում է Գիրքը, և անձնիշխան, տեր ու թագավոր արեց ամբողջ երկրի վրա:

Երկրորդ՝ հայտնի է նրանից, որ Աստված մարդասեր է կոչվում և ոչ աշխարհասեր, և մարդասիրության կոչումը ոչ միայն անվամբ, այլև գործով է ցույց տալիս, որովհետեւ սիրում է արդարներին ու պահում անմեղներին, ընդունում է մեղավորներին ու թողություն տալիս նրանց:

Երրորդ՝ Աստծու սերը հայտնի է նաև նրանից, որ մարդկանց սիրո համար մարդացավ ու մարդկանց մեջ շրջեց, ապա՝ չարչարվեց, մեռավ, դժոխք իջավ, այնուհետեւ հարություն առավ ու ազատեց մարդկային ցեղը տանջանքներից:

Չորրորդ՝ հայտնի է հետեւյալ խոսքից. «Մենք չենք, որ սիրեցինք Աստծուն, այլ նաև սիրեց մեզ և ուղարկեց իր Որդուն մեր մեղքերի քավության համար» (Ա Ղովհ. Դ 10): Եվ դարձյալ ասում է. «Քանի որ Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր Միածին Որդուն տվեց, որպեսզի ով նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը» (Ղովհ. Գ 16):

Փույրերը մարդ ուղարկեցին նրա մոտ – Սա խորհրդանշում է մարդարեների դասերը: Ինչո՞ւ չթողեցին հիվանդին, ինչպես արեցին հարյուրապետն (տես Մատթ. Ը 5) ու թագավորազնը, և իրենք անձամբ չգնացին, այլ պատգամավորի միջոցով դիմեցին Տիրոջը: Որովհետեւ վստահաբար հույս ունեին և անհոգ էին ջերմ բարեկամության պատճառով, նաև տկարկանայք էին և սգում էին: Նրանք մարդ ուղարկեցին՝ հղելով իրենց ջերմ սերը բազում աղաչանքներով, և աղերսեցին մեծ թախանձանքով՝ հավատալով, որ նա է մեռելների Հարությունը, սակայն մարդկորեն խորհելով՝ շտապում էին և ալեկոծվում իրենց մտքում, որպեսզի շտապ հասնի բուժումը, քանի դեռ հիվանդը չի վախճանվել: Նրանք Հիսուսին

իբրև Աստծու հավատացին և որպես ճշմարիտ բժշկի՝ հիվանդի մոռ կանչեցին:

Հիսուս սիրում էր Մարիամին, նրա քրոջը՝ Մարթային, ու Ղազարոսին և բաշխում պարգևներ իր բարեկամներին՝ ըստ առակագրի խոսքի, որ ասվում է Քրիստոսի համար. «Ես սիրում եմ նրանց, ովքեր սիրում են Ինձ» (Առակ. Ը 17): Մինչ Տերը եղիպտոս էր իջնում, սրանք արդեն այնտեղ էին և շատ անգամ սիրով ընդունել և իրենց ձեռքերին կրել էին բոլորիս Կրողին՝ Հոր Միածնին, և վերցրել էին իրենց բազուկների վրա՝ իր խոսքի գորությամբ բոլորիս Վերցնողին: Եղիպտոսից Տիրոջ վերադարձից հետո նրանք ևս վերադարձան Հովսեփի և Կույս Մարիամի ընկերակցությամբ և հաստատվեցին Բեթանիայում:

Տե՛ր, ահավատիկ նա, ում Դու սիրում էիր, Հիվանդացել է – Թեպետ գեռես չունեին հաստատուն հավատ, սակայն սերը հիշատակելով՝ խորհում էին նրան մեջ գութ առաջացնել իրենց եղբոր հանդեպ:

Եթե Հիսուս լսեց, թե Ղազարոսը հիվանդացել է: – Լսեց՝ գթալով Հիվանդին, և թույլ տվեց մահվանն իշխել նրա վրա ու մահացնել: Հիսուս ոչինչ չպատասխանեց. ո՛չ գնալու ու բժշկելու մասին ասաց և ո՛չ էլ չգնալու և չբժշկելու: Լուր բերողները հիվանդի անունը հայտնեցին և որպես պատասխան՝ Աստծու փառքի մասին լսեցին ու տրտմությամբ վերադարձան:

Այդ հիվանդությունը մահաբեր չէ – Այս խոսքը ցույց է տալիս, որ այս հիվանդությունը չունի նրան մահացնելու իշխանություն, այլ միայն մի փոքր ժամանակով, որպեսզի դրանով քարոզվի Աստծու փառքը: Կարծես թե Տերը հեռվից շոշափեց հիվանդի զարկերակը և ստուգապես զննեց այն ամենայն մանրամասնությամբ: Իսկ մարդիկ չարախոսում էին նրան, որ չկարողացավ օգնել իր սիրեցյալին: Եվ ո՞րն է ավելի դյուրին. մեռելին ոտքի կանգնեցնե՞լը, թե՞ կենդանի մարդուն քնից արթնացնելը:

Աստծու փառքի համար է – Թվում է, թե ժխտող հրեաների պատճառով է Հոր կողմը դարձնում խոսքը, ինչպես արեց նաև գերեզմանի վրա աղոթելիս, որովհետև հրեաները Հիսուսին Հորը հակառակ էին կարծում: Եվ ապա հայտնում է, որ աստվածային հրամանով է կանչելու մեռածին՝ դրանով հայտնելով Հոր և իր կամքի միությունը և փառակցությունը:

Այնպիսի խոսք, որ Տերն ասաց կույրի համար. «Ոչ դրա մեղքն է և ոչ էլ իր Հոր ու մոր, այլ որպեսզի դրա վրա Աստծու գործերը հայտնի լինեն» (Յովհ. Թ 3), ճիշտ նման մի խոսք էլ ասաց նաև Ղազարոսի համար. «Այդ հիվանդությունը մահաբեր չէ, այլ Աստծու փառքի համար, որպեսզի դրանով Աստծու Որդին փառավորվի» (Յովհ. ԺԱ 4):

Օրենքներն Ավետարանի քույրերն են՝ որպես Աստծուց՝ նույն Ծնողից ծնված, և Օրենքի բոլոր խոսքերը՝ խրատներն ու աղերսանքները, բուժիչ են մեր հիվանդությունների համար, որոնց լսելով՝ երկնավոր Բժիշկն ասում է. «Այդ հիվանդությունը մահաբեր չէ, այլ Աստծու փառքի համար է, որպեսզի դրանով Աստծու Որդին փառավորվի» (Յովի. ԺԱ 4):

Եվ ի՞նչ է Աստծու փառքը, որն ավելանում է մարդկանց փրկության միջոցով, և կարո՞ւ էր արդյոք Տերն այդ փառքին, նա, Ով հավիտենականությունից առաջ փառավորված է Հոր հետ: Տերը մարդանալով ցույց տվեց մեր փրկությունը և հայտնեց արդարությունը ողջ աշխարհին, և Նրա գալստյամբ բոլոր երկրայինները ճանաչեցին Նրա արդարությունը, որը, մինչ այդ, միայն երկնայինները գիտեին: Սակայն երկնայիններն էլ լիապես չգիտեին մարդեղության ծածուկ խորհուրդը, այլ միայն Հայրը և Սուրբ Հոգին: Եվ Տերն իր մարդեղությամբ, մահով, հարությամբ ու Եկեղեցով ծանոթացրեց երկնայիններին Աստծու բազմապատիկ իմաստությանը: «Դրա համար էլ Աստված Նրան առավել բարձրացրեց և Նրան չնորհեց մի անուն, որ վեր է, քան ամեն անուն, որպեսզի Հիսուս Քրիստոսի անունով խոնարհվի ամեն ծունկ՝ լինի թե՛ երկնավորների, թե՛ երկրավորների և թե՛ սանդարամետականների. և ամեն լեզու խոստովանի, թե Հիսուս Քրիստոս Տե՛ր է՝ ի փառս Հայր Աստծու» (Փիլիպ. Բ 9-11):

Հիսուս, լսելուց հետո, թե Ղազարոսը հիվանդացել է, տակավին երկու օր մնաց այնտեղ, ուր գտնվում էր: – Երկու օր մնաց այնտեղ՝ թույլ տալով ավագակին մտնել իր սիրելիի տունը և այնտեղ խոռվություն ու ապականություն գործել, և մահը գոռողանալով իր կամքը կատարեց: Սա նաև մոլեգնոտ հրեաների հանդինության պատճառով արվեց, որպեսզի հրապարակավ տեսնեն սքանչելիքը Ղազարոսի հարության:

Իսկ ըստ խորհրդի՝ ոչ թե այդ ժամին իմացավ մարդկային բնության կրքերի մասին, երբ մարդարեները և Օրենքն աղաչեցին, այլ նախքան դա գիտեր մարդու տկարությունները, ինչպես և ասաց Նոյին. «Մարդկանց միտքը մանկուց չարի ծառայության մեջ է» (ԾԱՆԴ. Ը 21): Ոչ թե բնությամբ չար են Աստծու ստեղծածները, այլ չարությունը, որպես եկամուտ բնավորվեց ու հաստատվեց նրանցում:

Եվ երկու օր մնաց այնտեղ: – Եվ ինչո՞ւ երկու օր ընդմիջեց և ապա՝ մարմնով երեաց: Որովհետեւ այդ ժամանակներում մարդիկ տակավին մանուկներ էին, ուսման մեջ՝ անկատար ու անկարգ, չէին փնտրում փրկություն ու չունեին հույս, այդ պատճառով էլ հապաղեց, որպեսզի չարի փորձություններից նեղվելով ու մեղքերից չարչարվելով՝ կարոտեն Նրա փրկական գալստյանն ու Օրենքով խրատվելով՝ կարողանան ընդունել կատարյալ գիտությունը: Եվ երբ կարոտեցին, այդժամ էլ երեաց Փրկիչը:

«Երկու օր» ասելով՝ նկատի ունի առաջին օրը Մովսեսից մինչև Դավիթ, իսկ երկրորդ օրը՝ Դավիթից մինչև Հովհաննես: Եվ երբ ժամանակը հասավ իր լրմանը, և հասավ աշխարհի փրկությունը, եկավ Տերն անապատից, այսինքն՝ սուրբ արգանդից, ու գտավ մեզ մեղքերի մեջ մեռած, նեխած ու հոտած ժանտահոտ ախտերով, և ո՛չ թե չորս օր, այլ շատ ժամանակ: Դարձյալ՝ Տերը մահվան ժամին չհասավ Ղազարոսի գյուղը, որպեսզի Հրեաները չասեն, թե նախապես պայմանավորված էին միմյանց հետ:

Ապա գրանից հետո իր աշակերտներին ասաց. «Եկե՛ք վերստին գնանք Հրեաստան: – Մահվան երկյուղը եկավ այնտեղ և չարաչար տագնապեցրեց աշակերտներին՝ առավել, քան Ղազարոսի քույրերին: Եվ աշակերտներն այնչափ զարհուրեցին ու դողացին, կարծես դուրս էին ելնում իրենց մարմիններից, և այդ նրանք էին, ովքեր լսեցին Տիրոջից. «Մի՛ վախեցեք նրանից, որ մարմինն է սպանում, բայց Հոգին սպանել չի կարող» (Մատթ. Ժ 28):

Աշակերտները նրան ասացին. «Խաբեի՛, Հրեաները դեռ նոր էին ուղում Քեզ քարկոծել, և նորից այնտե՞ղ ես գնում» – Աշակերտները տարուբերվում էին այս ու այն կողմ: Տերը չկամեցավ նրանց հայտնել խորհուրդը, որովհետև տեսան հարության հրաշքը և չհավատացին նրան, Ով հոգին ու մարմինն ապրեցնում է և՛ այստեղ, և՛ հանդերձյալում, և կարող է բոլոր ննջեցյալներին հարություն տալ: Տերը նախ տասներկուամյա մի աղջկա՝ Հայրոսի դստերը, հարություն տվեց, ապա նային քաղաքում՝ մի պատանու: Եվ նա, Ով ուրիշների մահը հալածեց, առավել ևս իր աշակերտներինը կհալածի: Աշակերտները թաքրոր լեռան վրա լսեցին. «Դա՛ է իմ սիրելի Որդին, Որին հավանեցի, Դրա՞ն լսեցեք» (Մատթ. Ժ 5), սակայն նրանք, փոխանակ լսելու, դեռ հրամայում էին նրան չգնալ: Եվ եթե նրանց անգամ հայտներ Ղազարոսի խորհուրդը, միենույն է, չէին հավատալու իրենց մտքի տկարության պատճառով:

Փրկիչը չուներ սովորություն նախապես ծանոթանալ այն տեղերին, ուր գնալու էր, այլ գնում էր այնտեղ, ուր կար չարչարանք: Իր քարկոծողների մոտ էր գնում, որպեսզի նրանք, փոխանակ իրեն գահավեժ անելու, լինեն նրա թարգմանները, և այնտեղ շատերը նրան հավատացին:

Հիսուս ասում է. «Տերեկը տասներկու ժամ չունի՞». Եթե մեկը ցերեկն է քայլում, չի սայթաքում, որովհետև այս աշխարհի լույսը տեսնում է, իսկ եթե մեկը գիշերն է քայլում, սայթաքում է, որովհետև հետը լույս չունի»: Ամբողջ օրվա համար է հայտնում, որովհետև Տիրոջ օրով լուծարվում է կուապաշտության խավարը նրանց համար, ովքեր նրանով են ընթանում: «Օր» բառը եբրայեցերեն նաև լույս է նշանակում, և Քրիստոս է աշխարհի լույսը, որ լուսավորում է:

Եթե մեկը ցերեկն է քայլում, չի սայթաքում», ապա որքան առավել նրանք, ովքեր նրա հետ էին՝ աշխարհի Լույսի: Պետք է իմանալ ոչ որպես մարմնավոր աչքի լույս, այլ հոգու աչքի՝ հավատի լույս: Նա, ով հոգու տեսողություն չունի, անգամ եթե միջօրեին քայլի, կսայթաքի, և խավարը միշտ նրա հետ կլինի: Այսպես Տերը խոսքով որոշ չափով կրթեց աշակերտների միտքը, քանի դեռ չէր մեռել խաչի վրա և իջել գերեզման:

Այս խոսքերն ասելուց հետո նորից դիմեց նրանց. «Մեր բարեկամ Ղազարոսը ննջել է, սակայն ես գնում եմ, որ նրան արթնացնեմ»: Տերն արհամարհեց մահն աշակերտների առջե՝ այն նինջ համարելով: Աշակերտներին ասելով, թե Ղազարոսը ննջել է՝ դրանով հայտնեց, որ մահը նինջ է նրանց համար, ովքեր հավատում են:

Տերը կաթով էր սնում աշակերտներին՝ իբրև մանուկների մայրաբար ծնելով ու դայակաբար սնուցանելով, և նրանց տղիտությունը ծածկում իր իմաստությամբ: Արդար գառների նման անմեղ էին առաքյալները. ինչպես տեսնում էին, այնպես էլ իմանում էին, Տիրոջից ինչ լսում էին, հավատում էին, սակայն չէին կարողանում հասու լինել աստվածային խորհրդին:

Աշակերտները կարծեցին, թե առակներով է խոսում, ինչպես շատ անգամ էր արել: Իսկ արթնացնելն այն է, որ զարթնեց Տերը և եկավ մեզ ապրեցնելու: Որովհետև Տերը եկավ ու գտավ մեզ մեղքերում մեռած և ժանտահարությամբ նեխած, և ոչ թե չորս օր, այլ շատ ժամանակներ: Ղազարոսը մահանալուց հետո դժոխք գնաց՝ սատանության ներքո, և մինչև նա՝ դեռ ոչ ոք չէր ելել այդ արգելավայրից, որովհետև ով այդ դռների սեմից ներս էր մտնում, այլևս հնար չէր ունենում այնտեղից դուրս գալու:

Աշակերտները նրան ասացին. «Տե՛ր, եթե ննջել է, ապա կառողանա» – Շատ հիվանդներ են ննջել ու չեն ապրել, և կան, որ ննջել են ու ապրել: Աշակերտներն այսպիսի խոսքերով կամենում էին սփոփել Ծածկատեսին: Նրանք գիտեին, որ Տերը սիրում է Ղազարոսին, և չէին կամենում, որ նրա ընտանիքին որևէ վիշտ հասնի, ննջելն առողջանալու նշան էին կարծում և ասում էին, որ կարիք չկա շտապ գնալու:

Այն ժամանակ Հիսուս նրանց հայտնապես ասաց. «Ղազարոսը մեռավ» – Տերը բացահայտեց ծածուկ խորհուրդը, որպեսզի հանկարծակի գալով չցնցվեն ճչալով կամ կոծելով: Բոլոր բժիշկներն էլ մինչև մարդու մահանալն աշխատում են բոլոր դեղամիջոցներով փրկել հիվանդին, իսկ Ղազարոսի թժիշկը թույլ տվեց նրան մահանալ, որպեսզի նրա մահով ցույց տա իր զորությունը: Տերը չգնաց իբրև բժիշկ՝ հիվանդությունը բուժելու, որովհետև նա՝ որպես Աստված, պետք է ապրեցներ հիվանդին:

«Ես ուրախ եմ ձեզ համար, որ այնտեղ չեմ. որպեսզի դուք ինձ հավատաք»: Եթե ուրախ էր, ապա ինչո՞ւ էր լալիս, երբ գնաց այնտեղ: Բայց պետք է տեսնել, թե մինչ այս պահը Նրա մերձավորները որչափ հեռու էին և՝ Նրանից, և՝ կատարյալ հավատից:

Մրանք այլաբանական խոսքեր էին և չէին կարող հասանելի լինել: Մահվան անունը և ուրախությունը նրանց լսելիքի համար հոչակվեցին, և աշակերտները, զարմացած, չէին կարողանում հասու լինել երկիմաստ խոսքին: Տերը պարծենալու համար չէր նրան հարություն տալիս, այլ աշակերտների հավատի հաստատության, և ուրախ էր, որ տեսնելու են իր զորության չափը: Եվ երկչոս թովմասը մեզ տեղեկացնում է նրանց անմտության մասին:

Թովմասը, որ Երկվորյակ էր կոչվում, աշակերտակիցներին ասաց. «Եկեք մենք է՛լ գնանք, որ Նրա հետ մեռնենք» – Նա գնաց մեռելին հարություն տալու, իսկ կենդանի աշակերտները՝ իրենց մահվան մատնելու, քանզի այս պահի համար տարակուսում էին: Երկրագործ մշակների համար ավելի դյուրին է կոչտացած հողը կաղղեցնել, քան գիտուններին՝ հավանություն գտնել տգետների մոտ: Մշակը քիչ է աշխատում հողի վրա, սակայն բազում պտուղներ է ակնկալում, իսկ կույր մտքով տգետին միայն Աստված կարող է գիտություն տալ: Աշակերտները ստուգվեցին, որ պատրաստ են գնալու և Նրա հետ քարկոծվելու, որի համար Տերը նրանց միիթարեց ու քաջալերեց և վանեց նրանցից երկյուղը:

Հիսուս եկավ, նրան գտավ չորս օրից ի վեր գերեզմանի մեջ – Որովհետև մոտ է Բեթանիան Երուսաղեմին, և սուգն էլ մոտ էր ուրախությանն ու խաղաղությանը:

Հրեաներից շատերը եկել էին Մարթայի և Մարիամի մոտ – Նրանց գալն աստվածային տեսությամբ պետք է իմանալ, որպեսզի տեսնողները զվարճանան աստվածային նշաններով, քանզի նրանցից ոմանք օգուտ ստացան՝ Քրիստոսի վրա խարսխված իրենց հավատը հաստատելով: Իսկ ինչո՞ւ եկան. չէ՞ որ հրեաներն ուխտել էին, որ եթե որևէ մեկը նրան Քրիստոս խոստովանի, ապա ժողովրդի միջից դուրս պիտի մղվի: Միգուցե եկել էին տրտմության տագնապից մղված, կամ էլ մրգուցե Մարիամի ընտանիքն ազնվական էր, և նրանք աչառություն էին անում: Շատերն էլ կարծում էին, թե կարող են միիթարել սգավորներին:

Այդ օրերին ագարակը քաղաք էր դարձել, և քաղաքը՝ ագարակ, որովհետև վշտի պատճառով ողջ քաղաքն այդտեղ էր հավաքվել: Մեր բնության սովորությունն է, և սիրում ենք մտնել սգո տուն՝ լսելով այլոց բոթը, քան թե ուրախության տուն: Ոմանք եկել էին լկտիությունից մղված, ոմանք էլ՝ ոտնահարելու, իսկ շատերն էլ՝ շատախոսելու, և քչերն

էին մասնակից լինում տրտմությանը: Որովհետև բոլոր մխիթարողներն էլ անձամբ լի էին տրտմությամբ, և քանի որ տրտումը տրտմածին չի կարող մխիթարել, ապա և սգավորն էլ սգավորին չի մխիթարի, եթե սգի վրա սուգ չավելացնի: Մեկն ասում էր. «Մի՛ տրտմիր, իմ եղբայրը մանուկ հասակում մահացավ», և այսպես յուրաքանչյուրը մի տարաժամ մահ էր պատմում, որից ավելի է բեկվում սիրտը, իսկ աղիքները՝ գալարվում: Այս ամբոխին թողեց Մարթան և ընդառաջ գնաց Հիսուսին:

Մարթան երբ լսեց, որ Հիսուս գալիս է, նրան ընդառաջ գնաց. իսկ Մարթամը տանը նստած էր – Մարթան ընդառաջ գնաց Օրենքի ու մարդարեների օրինակով, ովքեր կանխասելով ցույց տվեցին Հիսուսին որպես աշխարհի Փրկչի: Մեկը եղավ իբրև բերանի խոսք, իսկ մյուսը՝ սրտի խորհուրդների շտեմարան: Երկուսն էլ գովելի օրհնության մեջ էին: Միրտն իր տեղում հաստատուն մնաց, իսկ խոսքը՝ սրտի խորհուրդների թարգմանը, առաջ գնաց՝ պատմելու զգալի սրտի պաղատանքները նրա լսելիքին, Ով կարող էր վերացնել տիրությունն իր սիրելիների տնից:

Մարթայի սերն առավել էր եռում, քան Մարիամինը, որովհետև մինչ այս ամենը, երբ Հիսուս եկավ նրանց մոտ, Մարթան սպասավորություն էր անում՝ Տիրոջն ասելով. «Տե՛ր, Քեզ փույթ չէ՞», որ քույրս ինձ մենակ է թողել ծառայության գործի մեջ. արդ, ասա՛ դրան, որ օգնի ինձ» (Ղուկ. Ժ 40): Եվ երկրորդ անգամ ևս, երբ Տերը եկավ Ղազարոսին կենդանացնելու, Մարթան առաջինը նրան ընդառաջ գնաց, իսկ Մարիամը մնաց տանը:

Ասում է Մարթան Հիսուսին. «Տե՛ր, եթե Դու այստեղ եղած լինեիր, իմ եղբայրը մեռած չէր լինի» – «Ով մարդարեին ընդունում է իբրև մարդարե, մարդարեի վարձք կստանա» (Մատթ. Ժ 41), իսկ ով Աստծուն է ընդունում, աստվածային փառք կժառանգի: Մարգարեացավ Մարթան, որ ուր կենդանությունն է, այնտեղ մահը չի մտնում: Տերը բազում անգամ մտել էր Մարթայի ու Մարիամի տունը, և մահը գյուղից հալածական էր եղել, որովհետև ուր կա հոգեսոր իմաստություն, այնտեղ կան և աստվածային սեր, ճշմարիտ հավատ և ստույգ մարդարեություն: Քանզի հոգեսոր իմաստությունը, աստվածային սերը, ճշմարիտ հավատը և անսուտ մարդարեությունը չորս հարազատ եղբայրներ են, և մեկն է նրանց շարժողը՝ Աստված: Ինչպես երաժիշտը բերանով փշելով երգեհոնը՝ բազում փողերից տարբեր ձայներ է արձակում՝ մեկը՝ նուրբ, մյուսը՝ թավ, մեկ ուրիշը՝ ավելի թանձը, նմանապես Մարթան, Մարիամը, Ղազարոսը և բոլոր նրանք, ովքեր նրանց տանն էին, նույն հավատն ու նույն սերն ունեին:

Քանզի երբ հրավիրեցին նրան, և նա չկամեցավ գալ, իմացան, որ Տիրոջ կամքն է, որ Ղազարոսը մահանա, որովհետև ոչ ինքը եկավ և ոչ էլ մեկին ուղարկեց, որպեսզի բժշկի, քանզի լսել էին նրա առաքյալներից, որ

երբ Հիսուս նավում ննջեց, ծովի ալիքները քնից արթնացան՝ այնքան ժամանակ, քանի դեռ Տերը ննջում էր (տես Մատթ. Ը 23-26): Եվ ալիքները խոռվելով խոսեցին մարդու նման, թե ուր լույսն է, այնտեղ չի մտնի խավարը, և ուր կյանքն է, այնտեղ մահը չի համարձակվի մտնել:

Գիտեմ, որ ինչ էլ որ Աստծուց ուզես, Աստված Քեզ կտա» – Մարդարեացավ կինը ոչ թե մեկ մեռելի հարության համար, այլ որ Տերը դարեր առաջ մեռածներին էլ կարող է հարություն տալ՝ կամակցությամբ Հոր և Սուրբ Հոգու:

Հիսուս նրան ասաց. «Քո եղբայրը հարություն կառնի» – Տերը հայտնեց նրան եղբոր առաջին և վերջին հարության մասին:

Մարթան նրան ասաց. «Գիտեմ, որ հարության ժամանակ վերջին օրը հարություն կառնի» – Բացվեցին երկնքի գոներն այդ կնոջ համար, և նա տեսավ անստվեր Լույսն իր աչքերով, հասավ անմատչելի տեղերին և հավասարվեց Զեբեղեռոսի որդիներին: Նա չընկավ Քրիստոսի մարմնական լանջով, սակայն զորացավ Աստծու իմաստությամբ, շոշափեց Կենաց Խոսքն ու փոխվեց աստվածային կյանքի: Բացվեցին նրա մտքի աչքերը, և լուսափորվեց ներքին մարդը: Նա եկավ արտասուրով և գնաց խնդությամբ: Բերկրեց վշտացածը, և զվարթացավ նրա երեսի գույնը, երբ լսեց հարության մասին: Մինչև հարուցյալ եղբորը տեսնելը՝ տեսավ մեռել ներին հարություն Տվողին:

Հիսուս նրան ասաց. «Ես իսկ եմ հարություն և կյանք» – Նա է Պարգևատուն, Նրանից են պարգևները, սակայն խնդրել է պետք: Եղիան հարություն տվեց մի մեռելի, որը դարձյալ մահացավ: Եղիսեն երկու հոգու հարություն տվեց, և նրանք նույնպես մահացան: Իսկ համընդհանուր հարության ժամանակ Տերը հարություն է տալու ու հավիտյանս անմահացնելու:

Ով հավատում է ինձ, թեպետ և մեռնի, կապրի» – Ինչպես աչքով տեսածին են հավատում, այդպես էլ նրան հավատացողը հավիտյան չի մեռնի: Իսկ հարության ժամանակ կմեռնեն կենդանի անհավատներն ու ամբարիշտները:

Եվ ով կենդանի է ու ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի – Եվ այժմ, ով կենդանի է ու հավատում է նրան, կենդանի կինի իր մահվան մեջ և հավիտյան կենդանի կմնա: Հավիտյանս մահվան ձեռքը չի տիրի նրա վրա: Բայց ոմանք սա ասում են աշխարհի վախճանի համար, թե նրանք, ովքեր ողջ են և հասնելու են մինչև Տիրոջ գալստյան օրը, չեն մահանալու, ինչպես և առաքյալն է ասում. «Ովքեր կենդանի մնացած պիտի լինեն գալստյան ժամանակ, չպիտի ննջեն» (Ա Թեսաղ. Դ 16):

Հավատո՞ւմ ես այս բանին» – Հույժ դժվարիմաց խոսք ասաց Փրկիչը, և այդ պատճառով լսողները Նրանից բացատրություն խնդրեցին։ Թե պետև երկիմաստ էր խոսքը, սակայն հուսաց Մարթան։

Մարթան ասաց Նրան. «Այս՝ Տե՛ր, ես հավատում եմ, որ Դո՛ւ ես Քրիստոս՝ Աստծու Որդին, որ աշխարհ էիր գալու» – Մարգարեների խոսքերը հավատացրին նրան այնպես, ինչպես սամարացի կնոջը. «Գիտեմ, որ Մեսիան՝ Քրիստոս կոչվածը, կդա. երբ Նա գա, մեզ ամեն ինչ կպատմի» (Յովի. Դ 25): Կուսական Ծնունդն ակնարկեց երկրորդ գալստյան մասին։ Մարթան մեծամեծ խոսքեր լսեց ու ամբողջ տնօրինությանը տեղեկացավ, եկավ տրտմած և գնաց ուրախացած՝ իբրև Աստծու հրեշտակ։

Եվ այս ասելուց հետո գնաց գաղտնաբար կանչեց իր քրոջը՝ Մարիամին, և ասաց. «Վարդապետն է եկել և քեզ է կանչում» – Արդարեւ, ձշմարիտ վարդապետն առանց այր, բեն, գիմի է ուսուցանում և կատարում ուսուցման բոլոր պահանջները, և Մարթան, վարդապետ ասելով, ինքն էլ անցավ աշակերտների կարգը։ Աշակերտեց և Մարիամը նույն վարդապետությանը՝ հեշտակամ ու դյուրությամբ հավատալով, որովհետեւ նույն մաղթանքներն ասաց Տիրոջը՝ գութ հայցելով Քրիստոսից՝ եղբորը կենդանացնելու համար։

Երբ Մարիամը լսեց, իսկույն վեր կացավ և եկավ Նրա մոտ – Նույն տեղում նույն ուրախությունը հայտնվեց նույն Ուսուցչի հանդեպ, մեկը՝ ծածկաբար, իսկ մյուսը՝ հայտնապես։ Տերը ձգեց երկուսին էլ սգավոր աշխարհից դեպի երկնային անտրոտմ ուրախությունը, և Մարիամը գնաց Նրա մոտ, Ում առաջ էլ ճանաչում էր՝ ասելով. «Ով իմ բազում մեղքերը ներեց, կարող է նաև փարատել իմ ծանր սուզը»։

Հիսուս դեռ գյուղ չէր հասել, այլ դեռևս այնտեղում էր, ուր Մարթան Նրան ընդպառաջ էր եկել – իսկ ինչո՞ւ անմիջապես չգնաց գերեզման։ Որովհետեւ Նրա գալստյան լուրը տեղ հասնելուն պես ժողովրդից մի «ատյան» կազմվեց, և բոլորն էլ շտապում էին տեսնել աստվածագործ նշանը։ Հրեաները, ովքեր եկել էին քույրերին միսիթարելու, իրենք էին թափուր մնացել երկնային միսիթարությունից և թաղված սգի ու նույն տրտմության մեջ, արտասուր շաղ տալով՝ նստել էին տանը։

Երբ Հրեաները տեսան Մարիամին, որ իսկույն վեր կացավ ու գնաց, իրենք ևս նրա ետևից գնացին – Հրեաները հարությունը տեսնելու համար չգնացին, այլ դեպի մեռելի գերեզմանը։ Ասված է. «Ով ունի, նրան պիտի տրվի և պիտի ավելացվի, իսկ ով չունի, նրանից պիտի վերցվի ունեցածն էլ» (Մատթ. Ժ 12): Եվ սա ո՛չ թե Տվողի ագահության պատճառով, այլ ընդունողի անարժանության, ինչպես երկաց առաքյալների ու Հուդայի պարագայում։

Կարծում էին, թե գերեզման է գնում, որ այնտեղ լաց լինի – Որովհետեւ նրանք միշտ էլ գերեզմանասեր են եղել, և ոչ միայն մարդկանց, այլև սուստ աստվածների, ինչպես Եղեկիել մարդարեն է ասում. «Ահա այնտեղ նստած էին կանայք ու ողբում էին Թամուզին» (Եզեկ. Ը 14): Արանց միջից ելավ Մարիամը և գնաց Նրա մոտ, Ով ներեց նրա բազում մեղքերը և կարող էր նաև ծանրատաղտուկ տրտմությունը փարատել:

Իսկ Մարիամը, երբ եկավ այնտեղ, ուր Հիսուս կանգնած էր, ու տեսավ Նրան, ընկավ Նրա ոտքերը: – Երբ սգավորները տեսնում են ծանոթներից որևէ մեկին, սկսում են կոծել, իսկ Մարիամը դրա փոխարեն Վարդապետին հավատաց ու փառավորեց, և դրանով ի հայտ եկավ Մարիամի ու Մարթայի հավատը, քանի որ նրանք Տիրոջը երկրպագում էին ու խոստովանում նրանց առջեւ, ովքեր չեին հավատում:

Տե՛ր, եթե այստեղ եղած լինեիր, իմ եղբայրը մեռած չէր լինի» – ինչպես նույն դպրոցի մանուկները միաբանված նույն լեզվով են խոսում, այդպես էլ սրանք, վարդապետի կամքից հորդորված, խոսում էին աստվածային ուսումնամիջ: Եվ երկու քույրերն էլ նույն կենդանի որսը եղան ու նույն սիրով սիրեցին Տիրոջը: Նույն աղբյուրից կենդանի ջուր խմեցին ու տեսան մարմնացած Աստծուն ու հավատացին ամենքիս Տիրոջը: Թվում էր, թե նախապես պայմանավորվել էին Հիսուսից խնդրել, որ իրենց եղբորը կենդանություն տա: Իրենց մերձավոր հանգուցյալի համար երկուսն էլ նույն խոսքերն արտասանեցին՝ կարծես ասելով. «Տե՛ր, եթե անտես չանեիր մարդկային ցեղը, ապա նրանք չեին մահանա մեղքի մահով»: Իսկ մարդարեն ասում է. «Եվ ահա Դու բարկացար, որովհետեւ մենք մեղք գործեցինք» (Եսայի ԿԴ 5):

Երբ Հիսուս տեսավ, որ նա լալիս է, և նրա հետ եղող Հրեաներն էլ են լալիս: – Աշխատելիս մարմնից քրտինք է ծորում, և հուզված սրտից աչքն արտասուք է հեղում, արտասվում ենք նաև մեռելների վրա և հեռուներից եկող սիրելիի համար: Տեսավ Մարիամը Հիսուսին, և եղբոր նկատմամբ ունեցած սերը ստիպեց նրան հիշել մահացածին, սակայն այլևս չճշաց ըստ աշխարհի կարգի, այլ ցածրաձայն արտասվեց Ողորմածի առջեւ, մինչև որ բոլորն էլ բարձրաձայն լացեցին:

Խռովեց Հիսուս իր հոգում, կարծես իր ամբողջ զորությամբ տրտմեց և չկարողացավ պարզ ասել, թե. «Ո՞ւր դրիք նրան», այլ ասես պոռթկալով ասաց, կես խոսքով: Տերը եղավ մասնակից նրանց սգին, որպեսզի մարդիկ լինեն Աստծուց միմիթարված: Կամ էլ մոնչաց սատանայի վրա, ինչպես առյուծը՝ որսի վրա:

Եվ Հիսուս արտասվեց: – Մարմինը ոչ միայն աչքերով է արտասվում, այլև ամբողջովին քրտնում է, ինչպես Տերը շատ անդամ վարվեց,

աշխարհում, որպեսզի իր վշտակցությամբ մեզ հետ իր ազգակցությունը ցույց տա: Եվ սրանով Տերը սահմանեց հավատացյալներին միայն այդքան արտասվել, որովհետև նրանք ունեն հարության հույսը: Տեսնելով մեռելի՝ պետք է արտասվել մարդու վրա ընդհանրապես, որ սկզբից ևեթ մահ ժառանգեց մեր բնության համար: Տերն արտասվեց նաև հրեաների անհավատության պատճառով, ովքեր հեռացել էին աստվածագործ նշաններից ու դարձել էին գեհենի ժառանգներ:

Արդ՝ ելան նրա արտասուբներն իբրև անձրև, և Ղազարոսը եղավ իբրև ցորեն, և գերեզմանը՝ իբրև հող: Տվեց Հիսուս իր ձայնն իբրև որոտ, և խոռվեց մահն այդ ձայնից: Ոտքի ելավ Ղազարոսն իբրև ցորեն, ելավ մեռածը և երկրպագեց իր կենարար Տիրոջը: Արդ՝ խայտառակվեցին մահը և նրա ագահությունը:

Տերը ետ բերեց չորսօրյա մեռածին, որպեսզի իմանան, որ նրա համար, Ում բերանի ձայնը կենդանացրեց չորսօրյա մեռելին, դյուրին է երեք օրից հարություն առնելը, և որ ճշմարիտ է նրա խոստումը, որ ինքը երեք օր անց հարություն առած՝ կելնի մեռելների միջից: Տերն ուրախացրեց Մարիամին ու Մարթային և խայտառակեց դժոխքն ու նրա ագահությունը, որը չէր կարող հաղթել Քրիստոսին: Տերն ասաց. «Երեք օր անց հարություն կառնեմ», և քանի որ դա նրանց դժվար թվաց, հանեցին նրանք չորսօրյա մեռելին հարություն առած:

Ղազարոսի հարությունը մեռնելուց չորս օր հետո եղավ, իրենը երեք օր հետո, որովհետև չորրորդ օրը հողեղեն մասը հող է դառնում, հեղուկ մասը՝ ջուր, հրանյութը՝ հուր, իսկ օդային մասը ցնդում է շրջակա բնության մեջ, և այսպիսով չորս տարրերը չորս օրում լուծարվում են:

Աստվածային բնությունն անախտ է ու անտրտում, իսկ խոռվվելը նշանակում է, որ հրաման տվեց տրտմությանը գալ, և արտասուքը կամավորաբար հեղեց: Սա ցույց է տալիս, որ երբ Տերը կամենում է, իջնում է մարմնի բնական կրքերի մեջ՝ հայտնելով իր ճշմարիտ մարդեղությունը: Որովհետև՝ թեպետև Աստված միացավ մարմնին, սակայն չժողեց մարմնին շարժվել իր բնական կրքերով², այլ երբ թույլ էր տալիս, իջնում էր սնվելու, խմելու և ննջելու, իսկ երբ կամենում էր, իրեն վեր էր պահում աստվածային միությամբ: Տիրոջ մեջ ամփոփված է ամբողջ բնությունը, և կրքերից յուրաքանչյուրը ծագում էր այն ժամանակ, երբ Տերը կամենում էր: Տերը հացի նկատմամբ քաղցը և սիրելիի նկատմամբ արտասուքը

² Քրիստոս կրեց մարդկային բոլոր կրքերը, բացի մեղքից, այսինքն՝ բնության օգտակարը կրեց, իսկ անօգուտը՝ ոչ: Քաղցը, ծարավն ու քունը բնական կրքեր են և նեղանչումներ չեն, քանզի մարդկային բնությունը բարի է ու բարի Արարչից ստեղծված:

ծագեցրեց ճիշտ ժամանակին, որպեսզի հավատարիմ լինի այն խոսքին, թե ինքը ճշմարտապես մարմին առավ:

Տերը, տեսնելով վիշտը, որ պատճառել էր մեզ մահը, ողորմեց մեր ցեղին, որը կործանվել էր երկրի վիճում: Տերը գթությունից արտասվեց մարդկանց վրա, որոնց օձը խորտակել էր դժոխքում: Լացեց մարդկային ցեղի վրա և ոչ թե այն մեռելի համար, որին պետք է հարություն տար:

Արտասուք բերեց, որովհետեւ տեսավ նրանց անհույս լացն ու կոծը, որոնց սրտում չկար կենդանության հիշատակը: Մեզ նման լացեց, որպեսզի ամեն ինչով մեզ նմանվի: Աստծու Որդին արտասուքով նմանվեց մեզ, իսկ հարությամբ կենդանացնելով՝ Հորը:

«Ասայ. «Ո՞ւր դրիք նրան»: Նրան ասացին. «Տե՛ր, արի՛ և տե՛ս»: Նա, Ով հեռվից իմացավ Ղազարոսի մահը և կարող էր մեռածին հարություն տալ, գիտեր նաև նրա տեղը: Սակայն Տերը չգիտենալու պատճառով չհարցրեց, այլ այնպես, ինչպես Հայրը հարցրեց Աղամին. «Ո՞ւր ես» (Ծննդ. Գ 9), նաև Կայենին ասաց. «Ո՞ւր է քո եղբայր Աբելը» (Ծննդ. Դ 9)` տալով նրանց զղալու առիթ: Նաև Մովսեսին հարցրեց. «Այդ ի՞նչ է քո ձեռքին» (Ելք Դ 2): Նույնպես և մեզ է հարցնում՝ մեր մեղավոր հոգիների համար, թե որ մեղքերի խորիսորատը դրեցինք նրան: Որպեսզի մենք մեր կամքով խոստովանենք ու ասենք. «Տե՛ր, արի՛ ու տե՛ս», և ապա Ղազարոսի քույրերի նման ընկնենք նրա ոտքերը և ցույց տանք մեր հոգիների դիակիր գերեզմանը:

Փնտրում էր Արարիչն իր պատկերով ստեղծված մարդուն, ում չարը նախանձից գցեց երանելի կյանքից: Տերը հարցնում է հրեաներին գերեզմանի տեղը, որպեսզի իրենք ցույց տան և վկա լինեն տեղի ու մեռելի համար, որին թաղեցին:

«Ասում են հրեաները. «Տեսե՛ք ինչքան էր սիրում նրան». որովհետեւ արտասվեց նրանց վրա: Մի մասն էլ ասում էր. «Սա, որ կույրի աչքերը բացեց, չէ՞ր կարող նաև այնպես անել, որ սա չմեռներ»: «Դուք սովոր եք հայհոյելու նրան, Ով ծովը բաժանեց և անապատում քառասուն տարի ձեզ կերակրեց մանանայով ու լորամարդերով և բազմաթիվ այլ նշաններ արեց: Դուք հայհոյեցիք ու չգոհացաք Աստծուց և անասունների հետ փոխանակեցիք նրան (տես Ելք ԼԲ 4): Մովսեսին երդումով ուրացաք, նրան, ով ծովը ճանապարհ դարձրեց և ամբողջ ժողովրդին փարավոնից ու սրից փրկեց: Մի՞թե շնորհակալ եղաք այս ամենի համար, որ մի կույրի համար շնորհակալ լինեք»:

Կույրի հոգին ողջ էր ու շարժում էր մարմինը, իսկ աչքը մեռած էր: Հոգին բնակվում է մեռած մարմնում, սակայն արեգակի լույսը մեռած աչքում չի բնակվում: Եթե մեռած աչքը կենդանացրեց և հեռացած լույսն

այնտեղ դարձրեց, ապա Ղազարոսի ամբողջ մարմինը նույնպես կարող է կենդանացնել: Իսկ այն, ինչը հեգնելով ասում էին Նրա Աստվածության դեմ, դրան Տերն իր լացով պատասխանեց: Արդ՝ երբ հրեաները ցույց տվեցին իրենց հեգնանքը ու ծաղրը, նա ելավ ցույց տալու իր աստվածային զորությունը:

Հիսուս դարձյալ խռովվելով ինքն իր մեջ: – Ինչպես ասաց Մատթեոսի Ավետարանում. «Ո՛վ անհավատ և մոլորված սերունդ, մինչև ե՞րբ ձեզ հետ պիտի լինեմ, մինչև ե՞րբ ձեզ պիտի հանդուրժեմ» (Մատթ. Ժt 16): Նաև Զաքարիա մարգարել միջոցով ասաց. «Զանձրացավ իմ անձն այս ազդից, որ փորձում է ինձ» (հմնտ. Զաքար. Ժt 8):

Եկավ գերեզման: Սա մի քարայր էր, որի վրա մի քար էր դրված: – Հնում սովորություն էր ամրացնել գերեզմանը, քանի որ հեռու էր նրանցից հարության հույսը: Սա էին նրանք կյանք համարում, իսկ այն՝ մահվան դառնություն: Մեռածների հիշատակը շիրիմն էին համարում: Մովսեսը թույլ էր տալիս, որ եթե մեկն անզավակ մահանա, ապա նրա եղբայրը վերցնի նրա կնոջը և զավակ հասցնի մահացածի անունով: Սա երկրի ժառանգության համար էր արգում: Քարը կափարիչ է և նշանակում է, որ սատանան դժոխքի ելքը փակել էր և իր ունեցած իշխանությամբ հոգիներին պահում էր այնտեղ:

Եվ Հիսուս ասաց. «Այդ քարը մի կո՛ղմ դրեք» – Ի՞նչ կարիք կար քարը վերցնելու, երբ նրա հրամանով դժոխքը մեռածին դուրսովեց: Այդ փոքր քարի համար իր բերանով նա է օգնություն խնդրում տկար մարդկանցից, Ումից դողում է երկիրը, և հալվում են քարերը: Սակայն նա օգնության համար չի ասում, այլ դրանով նրանց հարության վկա է դարձնում, որպեսզի հրեաները, քարը վերցնելով, իրենց աչքերով նայեն գերեզմանի մեջ, ու գարշահոտությունը հասնի նրանց ոռւնդներին, և նրանց աչքերն ու թիկունքը վկայեն, որ ճանաչեցին այդ վեմը: Սա արվեց ժխտող հրեաների համար, որ եթե անզամ ուրանան հրաշքը, ապա նրանց ձեռքերը հանդիմանեն նրանց թիկունքը: Որովհետև Տերը գիտեր նրանց չարանախանձ բնույթը և դրա համար զգուշանում էր ամեն առումով:

Դարձյալ՝ վեմը ծանրալուծ սատանան է՝ մեղքերի պահակը, ով մահվան իշխանությամբ արգելելով պահում էր բազում մեղավորների: Տերը վերցնում է դեերի բռնակալության վեմը, որպեսզի մարդիկ հեշտությամբ բարձրանան մեղքերից Քրիստոսի գալստից հետո: Նա, Ով հարություն է տալիս մեռածներին և ետ դարձնում նրանց մեջ կենդանության շունչը, կարող էր բացել նաև գերեզմանը և մի կողմ գցել վեմը, մանավանդ որ ասաց աշակերտներին. «Եթե մանանեխի հատիկի չափ հավատ ունենաք, այս լեռանը կասեք՝ տեղափոխվի՛ր այստեղից այնտեղ, և կտեղափոխվի. և

որևէ բան ձեզ համար անհնարին չի լինի» (Սատր. ԺԷ 19): *Մանավանդ որ, խաչի վրա լինելով իր ձայնով պատռեց վեմերը և գերեզմանները: Սրանով Տերը նաև հրամայում է հեթանոսներին թիկունքից մի կողմ գցել անհավատության վեմը:*

Մարթան՝ մեռածի քույրը, Նրան ասաց. «Տե՛ր, հիմա արդեն նեխած կլինի, քանի որ չորս օրվա է» – Նեխած հոտը գալիս է մեռելներից, իսկ Աստծուն հասնում է մեր մեղքերի գարշահոտությունը: *Մարդկային ցեղը մարմնավոր ու հոգեւոր մեղքերի պատճառով ամբողջովին նեխել ու հոտել էր՝ ըստ մարդարեի խոսքի. «Նեխեցին և փտեցին իմ վերքերը» (Սաղմ. ԼԷ 6): Սա դեռ բավական չէր, մի վիմաքար էլ դրվել էր նրանց պարանոցի վրա, իսկ հեթանոսների թիկունքին դրվել էին նաև կոամոլության ծառայությունները, և նրանք ծածկվել էին անգիտության խավարով, որպեսզի չծագի աստվածգիտության լույսը նրանց սրտում: Սակայն Տերը չգարշեց ու երես չդարձրեց մեղանից, այլ իր անուշահոտությամբ համեմեց մարդկանց անհամությունը:*

Չորսօրյա ասելն այն խորհուրդն ունի, որ չորս նյութից գոյացած մարդու մարմինը չարի խարեռությամբ ամբողջովին ապականվել էր, և չկար կենդանության որևէ նշույլ:

Հիսուս նրան ասաց. «Քեզ չասացի՞՝, եթե հավատաս, կտեսնես Աստծու փառքը» – Հավատից էր բուսնելու մարդկային անապական կյանքը, բուրելու կենդանության անուշ հոտը, և հայտնվելու Աստծու փառքը: Հավատն է բոլոր զարկված մարմինների անուշացնող աղը, հավատը նաև թափանցիկ լույս է կուրացած աչքերի ու ձայն՝ խլացած ականջների համար:

Եթե քարը վերցըին: – *Մինչ վեմի վերցվելը Ղազարոսը գերեզմանում արդեն հարություն էր առել:*

Հիսուս աչքերը վեր բարձրացրեց ու ասաց: – Հիսուս մինչ աչքերը վեր բարձրացնելը տեսնում էր Հորը:

Հա՛յր, գոհություն եմ տալիս Քեզ, որ Ինձ լսեցիր: – Հորը կանչելով՝ Ծնողի հետ իր համակամությունը և մեր փրկության կամակից լինելն է ցույց տալիս: Հորից իր բնությամբ էր գոհանում՝ ըստ այս խոսքի. «Գոհություն եմ հայտնում Քեզ, Հա՛յր, Տե՛ր երկնքի և երկրի, որ ծածկեցիր այս բանն իմաստուններից ու գիտուններից և հայտնեցիր մանուկներին» (Սատր. ԺԱ 25): *Մինչ ձայնով կանչելը Հայրը լսեց նրան:*

Ամեն ժամ լսում ես Ինձ: – *Տերը Հայրոսի գստերը հարություն տվեց մեռելներից՝ առանց աղաչելու, Հորը կանչելու ու երկինք նայելու, այլ միայն նայեց մեռածին ու ասաց. «Աղջիկ, դո՛ւ, քե՛զ եմ ասում, վե՛ր կաց» (Մարկ. Ե 41): Նմանապես և նային քաղաքում, ուր մեծ բազմություն իր*

Հավաքված, Նրան ոչ ոք չթախանձեց, և ոչ էլ նա Հորը կանչեց, այլ միայն ձեռքը երկարացրեց դեպի դագաղը, և մեռածը կենդանացավ։ Արանցով Տերը ցույց տվեց իր աստվածային զորությունը, իսկ այստեղ Հորը կանչելով՝ իր սերն ու Հոր հետ միակամությունն է ցույց տալիս։

Սա անում եմ շուրջս կանգնած այս ժողովրդի համար։ – Ինքն է մեկնում բացառում իր խոսքը, որովհետև Աստված այնքան չի նայում իր պատվին, որքան մեր փրկությանը։ Որովհետև երբ իրեն Աստծուն հավասար էր ցույց տալիս և մեղքերը ներում, հրեաները Նրան հայհոյիչ ու դիվահար էին կոչում։ Իսկ ովքեր Նրա շուրջն էին, Նրան որպես Հորը հավասար ու մեռելներին հարություն տվող էին ընդունում։

Որպեսզի հավատան, որ Դո՛ւ Խնձ ուղարկեցիր։ – Հրեաները Հիսուսին Հորը հակառակ եղող ու հայհոյիչ էին համարում։ Այստեղ Տերը Հորը կոչում է գործակցության, հավատացյալներին հաստատելու և անհավատներին հանդիմանելու համար, ցույց տալով, որ Հայրը գործակից չի լինի նրան, ով հակառակ է իրեն։

Երբ Հիսուս այս ասաց, բարձր ձայնով աղաղակեց և ասաց։ – Աղաղակեց, որպեսզի բոլորի ականջներն ու աչքերը դեպի իրեն դարձնի։ Ապա Հեռացավ գերեզմանից տասներկու կանգուն և առանց մեռածին մերձենալու, փոխանակ ձեռքը մեկնելու՝ ձայնը սաստկացրեց։ Տերը ձայնով մտավ գերեզման, բոնեց Ղազարոսի ձեռքից և մեռածի դարշահոտությունը փոխեց անուշահոտության՝ մեռելին կենդանացնելով։

Քրիստոսի ձայնն աստվածային զորությամբ բանսարկուի ձեռքից վերցրեց Ղազարոսի հոգին ու այն կապեց նրա մեռած մարմնին։ Տերն այս անգամ իր ձեռքով մարդ չստեղծեց, ինչպես արարչության օրը, այլ կանչեց սոսկ անունով, և Ղազարոսը փութով դուրս ելավ։ Քանի որ ձայները մեռելի զգայարանների վրա չեն ազդում, դրա համար Տերը աստվածային հրամանի ձայնով ազդեց ներկաների լսողության վրա, որպեսզի հայտնապես երեւ ու Նրա հրամանով մեռելը դուրս եկավ գերեզմանից։

Ղազարո՞ս, վե՛ր կաց, դո՛ւրս արի – Շատ մեռածներ էին դրված գերեզմանում, բայց այստեղ միայն մեկին պետք էր դուրս կանչել։ Եթե Տերն առանց անունը տալու կանչեր, ապա մեռածներից ո՞վ կիմանար, թե որը պետք է դուրս գա։ Շատ Ղազարներ կային այնտեղ, սակայն նա միայն մեկին կանչեց, նրան, ում սիրում էր, Մարիամի ու Մարթայի եղբորը, ովքեր իրենց աղաչանքներով դիմեցին Հիսուսին, և այժմ միայն այս Ղազարոսը դուրս եկավ, որպեսզի նրանով այլոց համար հույս լինի։ Եթե անունով չկանչեր Ղազարոսին, ապա Քրիստոսի ձայնի զորությունը կքանդեր բոլոր գերեզմանները։ Հիսուս ուրիշի անունով չկանչեց մեռածին, այն դեպքում, երբ մարգարեները Տիրոջ անունով էին կանչում, իսկ առաքյալ-

ները՝ Հիսուս Քրիստոսի անունով, որովհետեւ նրանք ծառաներ էին, իսկ Հիսուս Տերն է և իր հզոր ու իշխանական ձայնով է տալիս հրամանը:

Դուրս արի – Տերն իր կենարար ձայնով ազդարարում է մեզ. «Դուրս արի քո արգելավայրից»: Հստ որում նաև Պողոսը՝ Տարսոնյան փողն է գոչում. «Վեր կաց, դու, որ նանջում ես, կանգնի՛ր մեռելների միջից, և Քրիստոս պիտի լուսավորի քեզ» (Եփես. Ե 14):

Այստեղ Տերն աստվածաբար լուծարում է մահվան իշխանությունը և նրանով բռնվածին հոգով ու մարմնով կենդանացնում: Ինչպես ասաց. «Թող ջրերն արտադրեն կենդանի շունչ ունեցող զեռուններ» (Ծննդ. Ա 20), և դրանք ասելուն պես եղան, այդպես էլ գերեզմանին հրամայեց:

Երբ բացիում են գերեզմանի դռները, սատանան ականջ է դնում՝ իմանալու, թե այդ ով է ավելանում իր մեռելներին: Նա բոլոր մեռելներին պահում էր դժոխքում և չէր կարծում, որ որևէ մեռել կարող է դուրս գալ նրա դռնից ու ազատվել կապանքներից: Նա իր ձեռքի տակ ուներ և՝ հեթանոսներ, և' հրեաներ, նաև թագավորներ ու իշխաններ, մեծամեծներ ու զորավարներ, նախահայրեր ու նահապետներ, քահանաներ ու մարդարներ, ազնվականներ ու ռամիկներ: Այդտեղ էին կապված բոլոր գովելիներն ու երևելիները՝ Ադամը, Սեթը, Նոյը, Աբրահամը և ուրիշները:

Սատանան վստահ էր, որ բոլոր նրանք, ովքեր գալիս են այստեղ, այլևս չեն ենելու, և ամենեին չէր կարծում, որ մեռելներից որևէ մեկը կելնի իր բանտից: Իսկ երբ մեր Տերն իր մեծ ձայնով կանչեց մեռելին ու ասաց. «Ղազարո՛ս, վե՛ր կաց, դու՛րս արի», մեռելը զորացավ: Տիրոջ ձայնը Ղազարոսին կենդանություն տվեց, և նա ընդառաջ գնաց Աստծու Որդուն: Մահն այս տեսնելով ապշեց, սկսեց սարսելով դողալ և զարմացած ասաց. «Սա ո՞վ է, որ կամենում է դուրս ենել ու պրծնել իմ բանտից: Ա՛յ քեզ չքնաղ ու զարմանալի նորություն. մեռելը դուրս է գալիս իմ ապարանքից: Միգուցե մեռած չէ, իսկ ես նրան մեռած կարծեցի: Տեսքը կարծես մեռածի է, սակայն ընթացքը՝ կենդանի եղողի: Կապված է երիզներով ու դեմքը ծածկված վարշամակով, սակայն ընթանում է ազատի նման: Սա կարծես Ղազարոսն է, սակայն ընթացքն օտար մեկինն է, և ո՞վ է՝ չգիտեմ: Այդ ո՞վ է լսել ու տեսել, որ մեռելը հոտելուց հետո կենդանանա, և կապվածն ու պատանվածը գնա. ո՞չ ոք: Արան արգելելը մեծ ահ է ինձ համար, գուցե այստեղ մտնի նա, Ով կանչեց սրան: Եթե ես սրան արգելեմ, վախենում եմ, որ այստեղ կդա սրան Կանչողը և առհասարակ մեծ ավար կառնի դժոխքիս բոլոր սենյակներից: Չեմ համարձակվում արգելել, գուցե մեկ անգամ ևս ձայն տա սրան և ամբողջովին քանդելով իմ ամրոցը՝ չիմքից ավերի: Եթե սրան կրկին կանչի իր ձայնով, ո՞վ կկանգնի նրան Հակառակ: Գուցե հաջորդ անգամ լսելով՝ բոլոր նրանք, ովքեր

իմ ապարանքում՝ իմ ձեռքի տակ են, դուրս գան այստեղից, որովհետեւ նրա մեկ ձայնից սարսուաց իմ անձը, և իմ լեզեռնները սասանվեցին: Եթե նա կրկնի իր հրամանը, ապա սարսուով կսասանի դժոխքի բարապաններին ու այն կլործանի հիմքից: Թողնեմ, թող սա դուրս գա, որովհետեւ մեկ մեռելի պակասելով չեմ աղքատանա»:

Այսպես և առավել քան այսպես, սատանան տագնապած վարանելով խոսում էր ինքն իր հետ: Նա ապշել էր հոտած ու որդնած մեռելի կենդանացումից և զարմացել, որ կապվածը գնում է: Մածկված էր մեռելի երեսը, սակայն նա ուղիղ դուրս եկավ գոնից: Նրա ոտքերը կապված էին, սակայն չէր սայլթաքում: Ղազարոսը, կապված ոտքերով և ծածկված երեսով, ուղիղ գնում էր դեպի իրեն կյանքի կոչողը՝ դեպի մեր Տեր Հիսուս Քրիստոսը:

Եվ մեռելն ելավ՝ կապված ոտքերով, ձեռքերը երիզով ամրացված և երեսը վարչամակով պատված – Հրեշտակն Ամբակումի հացով, թանով և բոլոր կերակուրները, կողին տալով, մազերից բռնելով՝ ամբողջ մարմինը տարավ Բաբելոն (տե՛ս Դան. ժԴ 32-35): Եվ քանի որ Աստծու խոսքն առավել հզոր է և ավելի արագ է գործում, քան երկնքի հրեշտակները, Հիսուս միայն ձայնով, մի ակնթարթում, հոգին հեռվից բերեց ու միացրեց լուծարված մարմնին և առանց մի քայլ փոխելու ոտքի կանգնեցրեց մեռածին: Կտավե պատանքն արգելք չեղավ տերունական հրամանի կատարմանը, այլ սա լուծարեց իր կամքը՝ կատարելու համար Արարչի կամքը: Իսկ մահը ծառայաբար ջնազանդվեց Տիրող հրամանին:

Եվ Հիսուս նրանց ասաց. «Արձակեցե՛ք դրան և թողե՛ք, որ գնա» – Ղազարոսին արձակեցին նրանք, ովքեր կապել էին, որպեսզի ճանաչեն իրենց ձեռքերի գործերը և ստույգ իմանան, որ սա այն Ղազարոսն է, ում իրենք պատանել էին: Սրանով Տերը խոսեց նրանց սրտի հետ՝ ասելով. «Մի՛ գարշեք, նրանից գարշահոտություն չի բուրում, մի՛ խորշեք, նա մեռած չէ, այլ կենդանի է: Տեսե՛ք ձեր նշանները, ճանաչեցե՛ք նրան, ում պատանեցիք: Բացե՛ք ձեր փակ բերանները և եղե՛ք նրա մահվան մյուս վկաների հետ: Բոլորդ էլ վայելե՛ք այն հարությունը, որ տեսաք»:

Քանի որ պատանողներն անամոթ էին և միշտ ջանում էին հերքել ճշմարիտ նշանները, դրա համար էլ Տերը նրանց է հրամայում քանդել պատանքը, որպեսզի նրանց ձեռքերը, հոտոտելիքը և աչքերը դառնան իրենց համար միաժամանակ և՝ դատախազ, և՛ վկա:

Հրեաներից շատերը, ովքեր եկել էին Մարիամի ու Մարթայի մոտ, երբ տեսան, թե ինչ արեց Տերը, հավատացին նրան, թեպետեւ մի մասը հետո ուրացավ: Ովքեր եկել էին մխիթարելու սգավորներին, իրենց անձերը մխիթարեցին անտրտում ուրախությամբ և այլոց համար էլ ավետիս

տարան քաղաք: Ոմանք գնացին փարիսեցիների մոտ ու նրանց պատմեցին այն, ինչ Տերն արեց: Իսկ քանի որ նրանցից ոմանք մոլորված էին գևերից, գնացին սադուկեցիների մոտ ու նրանց ասացին. «Շատերը Նրան հավատացին, արդ՝ աճապարե՛նք լռեցնել նորասքանչ նշանների զորության համբավը»:

Ղազարոսն իր հարությունից հետո ապրեց ևս տասնհինգ տարի, սակայն իր կենդանության հետագա օրերին՝ այդ տասնհինգ տարիների ընթացքում, այլևս չծիծաղեց և անգամ չժպտաց հոգեոր ահից:

Հոգեգալուստից հետո Ղազարոսը Պետրոսի ձեռքով եպիսկոպոս օծվեց ու գնաց Կիպրոս՝ քարոզության: Նա դարձավ կղզու Կիտիվան քաղաքի հոգեոր հովիվը և բարվոք հովիվով իր ժողովրդին՝ խաղաղությամբ վախճանվեց ի Քրիստոս իր հարությունից տասնհինգ տարի անց:

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Տիրուա առևտեք Երուաւեա

Գիշերը կատարվում է հսկում, Սրբությունը դնում են սուրբ Սեղանին: Ծաղկագարդի օրը՝ պատարագից առաջ, առաջնորդը կամ ավագ քահանան՝ մյուս հոգևորականների հետ միասին, զախս է սուրբ Սեղանի առջև, օրինում ոստերը և բաժանում ժողովրդին, որպեսզի հավատացյաները դրանցով ընդառաջ ելնեն քրիստոսին: Օրվա երեքսրբյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ եկիր և գալոց ես, ողորմեա' մեզ»:

Արմավենիների սուրբ օրը եկեղեցու իմաստուններն օրհնյալ անվանեցին, և սա Քրիստոսի երկրորդ գալստյան օրինակն է, երբ Նա Հոր փառքով և բոլոր հրեշտակներով իջնելու է երկիր, արևելյան կողմից, և մարդկային ցեղը, գերեզմանից հարություն առնելով և վերջին անգամ նորոգվելով, Նրան ընդառաջ է ելնելու: Երբ Տերը մտավ երուսաղեմ, ամբողջ քաղաքը դղրդաց, և մարդիկ արմավենիների ճյուղեր վերցնելով՝ Հիսուսին ընդառաջ ելան: Այդ օրը քաղաքը Նրան ընդառաջ ելավ Ղազարոսի հարության պատճառով, քանի որ լսել էին, թե Նա ինչպիսի նշաններ արեց: Ամբողջ քաղաքի դղրդալը խորհրդանշում է ննջեցյալների գերեզմանից ելնելը և Տիրոջն ընդառաջ գնալը, նաև՝ տիեզերքի շփոթությունը հարության պատճառով, երբ կասանվեն տարրեղեն արարածները, կգալարվի երկինքն ինչպես մագաղաթ, կնսեմանան լուսատուները, և կթափվեն խավարած աստղերը: Իսկ արմավենիներով ընդառաջ ելնելը՝ խորհրդանշում է բոլոր սրբերի ընդառաջ ելնելը Տիրոջը՝ զանազան առաքինություններով հանդերձ, յուրաքանչյուրն իր բարի գործերն ունենալով իր ձեռքում, և լուսեղեն ամպերով նրանց երկինք բարձրանալը Քրիստոսին ընդառաջ:

Այս տոնը կիրակի ենք տոնում, որը տերունի օր է, որովհետև կիրակի օրն է լինելու համընդհանուր հարությունը, և ասվում է, որ այդ օրը լինելու է առանց երեկոյի: Սաղմոսելը՝ «Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն», առաջին գալստյան բարեբանությունն է, իսկ ասելը՝ «Օրհնեալ, որ գալոց ես», երկրորդ գալուստն է խորհրդանշում, երբ աստվածաբար գալու է Տերը՝ Հոր փառքով, և բոլոր հրեշտակները Նրա հետ՝ հատուցելու յուրաքանչյուրին ըստ իր կատարած գործերի:

Առավոտյան ժամերգությանը «Տէր յերկնից» շարականը երգելիս քահանաները զգեստավորված ելնում են ատյան՝ խաչով, Ավետարանով և բոլոր զարդերով հանդերձ, որը խորհրդանշում է Տիրոջ առաջին գալուս-

տը, իսկ տասներորդ ժամին՝ Դռնբացեքի կարգի ժամանակ, խաչով ու խաչվառով ելնելը Երկրորդ գալստյան խորհուրդն ունի: Բարձրացրած խաչն օրինակն է խաչի նշանի, որը երևալու է ինչպես փայլակը Երկնքից, իսկ ժամհարելը Հրեշտակների փողի գոչումն է: Այսօր ավանակով եկավ, իսկ այն օրը գալու է չորեքկերպյան աթոռով, և ամբողջ մարդկությունը Նրան ընդառաջ է ելնելու՝ հարություն առնելով գերեզմաններից, և գորդալու են մեղավորները:

Եվ ինչպես այն օրը, աստվածային զանազան նշանների պատճառով, քահանաները տարակուսում էին, փարիսեցիները՝ մտահոգվում, իսկ դպիրները՝ հիմարանում, նույնպես և գալիք օրն անհավատներն ու մեղավորները կզգեստավորվեն անմիտիթար սպով՝ գլուխները խոնարհած ու սրտերը տրտմած, ինչպես ամոթահար հիմար կույսերը: Իսկ երբ մեղավորները տեսնեն Քրիստոս Թագավորին, ահեղ կերպարանքով բազմած չորեքկերպյան աթոռի վրա, կասեն լեռներին, թե՝ ընկե'ք մեզ վրա, և բլուրներին, թե՝ ծածկե'ք մեզ Գառի երեսից, որ նստած է աթոռին, քանզի կնայեն Նրան, Ում խոցեցին: Այնժամ անհավատները սրով էին խոցում Տիրոջը, իսկ մեր օրերում՝ հայհոյությամբ, չար խոսքերով ու գործերով:

Արարօնայան լուազրւ օրը

Անդրանիկ միաշաբաթ օրն Աստված բացեց անձառելի և անասելի բարության հունը և սկսեց արարել արարածներին, որովհետեւ անսահման Բարին չկամեցավ միայն ինքը վայելել իր բարիքները, այլ արժանի համարեց այն առատապես տարածել ու բազմացնել, որպեսզի մենք էլ վայելենք Նրա անսպառ պարգևներն ու աննախանձ բարությունը:

Արդ՝ «Արմավենիների օրը» պատկերն է արարչության առաջին օրվա, երբ Աստված ստեղծեց Հրեղեն Երկինքն իր բնակիչներով՝ Հրեղեն դասերով հանդերձ, և Երկիրը: Այս տոնին Եկեղեցում ընթերցվում է Ծննդոց գրքից. «Ի սկզբանէ Աստված ստեղծեց Երկինքն ու Երկիրը» (Ծննդ. Ա 1): Երկինքը կատարելությունների և Հրեշտակների տեղն է, ովքեր Աստծու մերձավորներն են և Նրա անդադար փառաբանողները, իսկ Երկիրը՝ մարմնավորների ու անկատար անասունների, որոնք զուրկ լինելով բանականությունից՝ հեռու էին Աստծուց: Իսկ այս Երկուսի մեջտեղում Դրախտն էր, որը տեղն էր բանական մարդկանց, ովքեր գտնվում էին Հրեշտակների և անասունների միջև: Եվ Տերը այնպես կարգեց, որ եթե մարդը Երկնքի բնակությունը ցանկանա՝ Երկնայիններին նմանվի, իսկ եթե Երկրի բնակությունը ցանկանա՝ անասուններին նմանվի:

Աստված առաջին օրը ստեղծեց նաև չորս տարրերը, այսինքն՝ ջուրը, հողը, օդը և հուրը, որոնցով արարվեց երկիրը, և այն ամենը, ինչ կա նրա մեջ: Սրանք անհաշտ թշնամիներ են և միաժամանակ անքակտելի մտերիմներ: Արարիչն առաջին օրը ստեղծեց նյութերը և դրանք միմյանց խառնելով՝ միավորեց, որոնք միացան առանց իրար վնասելու:

Երկիրն աներևույթ ու անպատրաստ էր (Ծննդ. Ա 2) – Աներևույթ էր, որովհետև ջուրը ծածկել էր երկրի երեսը և անպատրաստ էր, քանի որ, դեռևս, հրաման չէր ստացել աճեցնելու բույսեր ու տունկեր, չկար նաև մարդը, որ տեսներ այդ ամենը, չկային շեներ, գյուղեր ու քաղաքներ: Սա նաև երկրասերների օրինակն է, ովքեր միշտ անպատրաստ են, գտնվում են խավարում և կարծես գիշերվա մեջ շրջելիս լինեն՝ չգիտենալով, թե ուր են գնում:

Եվ խավար էր տիրում անդունդի վրա»: – Խավարն անլույս օդն է ու առարկաների ստվերը: Խավարը ոչ թե երկրի վրա էր, այլ անդունդի՝ ջրերից ու երկրից ներքեւ: Որովհետև ջրերի ստվերները ծածկել էին իմանալի լույսն ու վերին երկինքը, և ջրում պարփակված խավարը հավաքվել էր անդունդում:

Աստծու Հոգին շրջում էր ջրերի վրա: – Որովհետև ջրերն ավելի շատ էին, քան մյուս նյութերը և ծածկել էին հողը, օդը և հուրը, ինչպես Դավիթն է ասում. «Ինչպես մի տիկի մեջ՝ հավաքեց ծովի ջրերը և իր գանձը դրեց անդունդների հատակը» (Սաղմ. ԼԲ 7): Այսինքն՝ ժողովեց բոլոր տարրերը և դրեց ջրի մեջ, ինչպես տիկի: Եվ Աստծու Հոգին, շրջելով ջրերի վրա, կենդանագործում էր բոլոր տարրերը, ինչպես բնի վրա նստած թռչունն է իր ձագերին ջերմացնելով՝ կենդանություն տալիս:

Եվ Աստված ասաց. «Թող լույս լինի: Եվ լույս եղավ (Ծննդ. Ա 3) – Լույսը տարածվելով հալածեց անդունդների խավարը: Եվ համասկյուռ ու վայելուչ լույսը սփռվեց անդունդի խորքերն ու համատարած ջրերի բոլոր շավիզներում: Այս օրինակով՝ անեղ ու անժամանակ լույսը՝ մարմնացած Բանն Աստված, գրոհեց գժոխքի սանդարամետը՝ կամակոր վիշապի վրա, և հալածելով վանեց խավարը գերեց գերեվարողներին ու ազատեց գերիներին:

Աստված լույսի համար տասներկու ժամ սահման դրեց ու նույնքան էլ՝ խավարի, և միասին անվանեց «օր մի», որն օրերի ու ժամանակների սկիզբ եղավ: Եվ դա օրինակն է «Արմավենիների օրվա», որը դարձավ Հիսուսի կենսաբեր չարչարանքների և մեր փրկության սկիզբը:

Աստված առաջին օրն արարեց յոթ արարած: Դրանք են՝ երեք լույսերը և չորս տարրերը, և ժամանակն էլ սրանց հետ միասին կազմում է ութ: Երեք լույսերն են՝ հրեշտակների էությունը, լուսեղեն երկինքը և

աստղերի ու արեգակի լույսը: Աստված լույսը կոչեց ցերեկ, իսկ խավարը կոչեց գիշեր: Մեծամեծ ու գլխավոր արարածներին Աստված հնքն անուններ տվեց, իսկ մասնավոր արարածներին՝ Աղամը:

Մինչև չորրորդ օրը, երբ ստեղծվեցին արեգակն ու աստղերը, ցերեկը լույսը տարածվում էր, իսկ երեկոյան գնդաձև հավաքվում ու կցվում վերին արփիին, որից անջատվել էր առավոտյան:

Արագին դարի դասաւերը

Ավագ շաբաթվա օրերը համապատասխանում են նաև այս կյանքի յոթ դարերին: Դարը հազար¹ տարին է, իսկ դարավլուխները հետեւալն են՝ առաջինն Աբելինն է, երկրորդը՝ Ենոքինը, երրորդը՝ Նոյինը, չորրորդը՝ Աբրահամինը, հինգերորդը՝ Մովսեսինը, վեցերորդը՝ Քրիստոսի, յոթերորդը՝ վախճանը, ութերորդը՝ Երկրորդ գալուստը:

Արդ՝ «Արմավենիների օրը», երբ ծերերն ու մանուկները ոստերով զվարճացան, խորհրդանշում է արարչության առաջին դարը, երբ բույսերով ու ծաղիկներով զարդարվեց երկիրը, և Աղամն ու Եվան ուրախացան Դրախտում: Այս օրը նաև առաջին դարի նախատիպն է: Աղամի՝ Դրախտից դուրս գալուց երեսուն տարի հետո ծնվում են Կայենը և նրա քույրը՝ Կասման: Եվս երեսուն տարի անց ծնվում է Աբելը՝ իր Աբուսաք քրոջ հետ: Դրանից երեսուն տարի հետո՝ Կայենը սպանում է Աբելին: Իսկ հինգ հարյուր տարի հետո՝ Կայենի որդիներն ամբողջովին չարանում են: Արարչագործությունից ինն հարյուր երեսուն տարի հետո Աստված Սեթի ցեղին բնակեցնում է Դրախտի դիմաց, իսկ Կայենի որդիները բնակվում են այն դաշտում, որտեղ նա սպանեց Աբելին:

Եվ ինչպես Կայենը առաջին դարում նախանձից սպանեց եղբորը՝ Աբելին, այսպես էլ հրեաները, չարը խորհելով, սպանեցին Քրիստոսին ու դարձան Կայենի անեծքի ժառանգորդները:

Տիրոջ առւտքը Երուալուա

Տերն այսօր երուսաղեմ գալով՝ դնում է իր փրկագործության սկիզբը, վերստին ներգործելով արարածների վրա, որի մասին մարդարեն ասում է. «Սա է օրն այն, որ Տերն ստեղծեց. Եկե՛ք ցնծանք և ուրախանանք այսօր» (Սաղմ. ճժԵ 24): Նաև՝ «ՄԵ՛Ր ՏԵՐ Աստվածն երևաց մեզ, կատարեցե՛ք տոնն ուրախության մատղաշ ճյուղերով՝ մուտքից մինչև անկյունները սեղանի»

¹ Հազար տարի ասելով նկատի չունի օրացուցային հազար տարին:

(Սաղմ. ճժէ 27): *Իսկ մեկ այլ տեղում ասում է. «Թող այնժամ ցնծան անտառի բոլոր ծառերը Տիրոջ առջև, որ գալիս է»* (Սաղմ. ՂԵ 13):

Նախ տեսնենք, թե ինչո՞ւ Քրիստոս այսօր եկավ երուսաղեմ, իր չարչարանքների վայրը: Վարդապետներն ասում են, որպեսզի ցույց տա, որ ինքն է Աստծու Գառը, Ով կամենում է պատարագվել մարդկանց փրկության համար: Դրա օրինակը բերված է «Ելից» գրքում: Աստված հրամայում է, որ նիսան ամսվա տասներորդ օրը Խարայելի որդիներից յուրաքանչյուրը վերցնի մեկ տարեկան անարատ արու գառ և պահի այն մինչեւ այդ ամսվա տասնչորսերորդ օրը, ապա երեկոյան զոհաբերի (տես Ելք ԺԲ 4-6): Այս օրինակից հայտնի է դառնում, որ հրեաները զատկական գառը՝ Զատկի տոնից հինգ օր առաջ տանում էին տուն: Եվ Հիսուս Քրիստոս՝ Աստծու Որդին՝ Հայր Աստծու Գառը, տոնից հինգ օր առաջ եկավ երուսաղեմ: Հստ Հովհաննեսի վկայության՝ «Հիսուս Զատկից վեց օր առաջ եկավ Բեթանիա, ուր ապրում էր մեռած Հազարոսը, որին մեռներից վեր էր կացրել» (Յովի. ԺԲ 1), և այդ օրը շաբաթ էր: Հաջորդ օրը Հիսուս դնում է երուսաղեմ, որը լուսնի տասներորդ օրն էր: Իսկ հինգշաբթի օրը լուսնի տասնչորսերորդ օրն էր: Քանի որ հրեաները գառնուկին մորթում էին երեկոյան, այդ պատճառով էլ նրան ձերբակալում են գիշերամիջին, մերկացնում ու նախատում, ինչին Հիսուս համբերում է գառան հեղությամբ: Այդ մասին վկայում է Եսային: «Ինչպես ոչխար՝ Նա մորթվելու տարվեց, և ինչպես գառ՝ անմոռնչ կանգնած է խուզողի առաջ և նրա նման Իր բերանը չի բացում» (Եսայի ԾԳ 7):

Պետք է նաև այն իմանալ, որ հրեաները շատ անգամ էին ցանկացել բռնել նրան ու սպանել, սակայն Քրիստոս խույս էր տվել նրանցից, որովհետեւ իր ժամը դեռ չէր հասել: Իսկ այսօր, երբ հասնում է ժամը, իր կամքով գալիս է երուսաղեմ՝ չարչարանքների վայրը, որպեսզի իր մահով փրկի աշխարհը:

Հարց. – Ինչո՞ւ այսօր Տերը մեծ պատիվ ընդունեց հրեաներից:

Պատասխան. – Քրիստոս իր մահվանը մոտենալով, այդ պատիվը նախատինքով հանձն առավ և գործով ցույց տվեց, որ աշխարհի փառքի վախճանը նախատինքն է: Նա այդ օրն ութ պատիվ ընդունեց հրեաներից, իսկ Ավագ ուրբաթ, դրա փոխարեն, ութ նախատինք կրեց:

Առաջին՝ որ այսօր նրան մեծ պատվով դիմավորեցին երուսաղեմում, իսկ Ավագ ուրբաթ օրը, նույն երուսաղեմում, անարդանքով խաչը հանցին: Երկրորդ՝ այսօր նրա աշակերտները հնագանդ էին ու կատարում էին նրա հրամանները, իսկ ուրբաթ օրը թողեցին ու փախան: Երրորդ՝ այսօր հրեաները տարածում էին իրենց հանդերձները Հիսուսի ոտքերի առջև, իսկ ուրբաթ օրը Հիսուսին մերկացրին: Զորբորդ՝ այսօր օրհնում

Հին Նրան ասելով՝ «Օքնյա՛լ է նա, որ գալիս է Տիրոջ անունով», իսկ ուրբաթ օրը՝ անիծում և ասում՝ «Վա՛հ, Դու որ քանդում էիր տաճարը և երեք օրից այն շինում» (Մատթ. Իւ 40): Հինգերորդ՝ այսօր ծառի ոստեր էին մատուցում Նրան, իսկ ուրբաթ օրը, կապելով քարե սյանը, ծեծում: Վեցերորդ՝ այսօր իրենց զգեստները գցում էին ավանակի վրա, իսկ ուրբաթ օրը՝ կոպտությամբ բևեռեցին խաչի վրա: Յոթերորդ՝ այսօր Նրան թագավոր էին ասում. «Օվսաննա՛, օքնեա՛լ լինես Դու, որ գալիս ես Տիրոջ անունով, ո՛վ Թագավոր Խորայելի» (Յովհ. ԺԲ 13), իսկ ուրբաթ օրն ուրացան Նրան ու ասացին. «Չունենք մենք այլ թագավոր, բացի կայսրից» (Յովհ. ԺԹ 15): Ութերորդ՝ այսօր Նրան Փրկիչ էին կոչում՝ ասելով. «Օվսաննա՛», որ թարգմանվում է «փրկի՛ր մեզ», իսկ ուրբաթ օրը Նրան մոլորեցնող էին անվանում ու ասում. «Ուրիշներին փրկեց, ինքն իրեն չի կարողանում փրկել» (Մատթ. Իւ 42):

ԱՎԵՏԱՐԱԿԻ ԱՆԿԱՌԱՅՈՒՆԸ

(Մատթ. Ի 29, ԻԱ 1-17)

Այժմ այս տոնի խորհուրդը քննենք ըստ Ավետարանի: Տերն իր աշակերտներով գնում է երիքով: Իսկ ի՞նչ է նշանակում երիքով գնալը: Ավետարանը պատմում է, որ մի մարդը երուսաղեմից երիքովիջնելիս ընկավ ավազակների ձեռքը, ովքեր էլ նրան մերկացրին ու վերքեր հասցրեցին: Եվ ո՞վ էր արդյոք այդ մարդը, եթե ոչ ինքը՝ Աղամը, ով իր անձնիշնան կամքով և ինքնահոժար մտքով դուրս ելավ Դրախտից, որը վերին երուսաղեմն է, և իջավ դժոխք: Եվ տեղին է համեմատությունը, քանի որ երուսաղեմը իր դիրքով բարձր է, ինչպես երկնային Դրախտավայրը, իսկ երիքով՝ ցածր, ինչպես մահն ու դժոխքը:

Այստեղ կարևոր է իմանալ, թե ո՞վ է կառուցել Երիքովը, որը դժոխքի օրինակն է: Հստ ավանդության, երիքովը կառուցել է Քամի որդիներից մեկը՝ Քվակը, և նրա երեք որդիները՝ Գախն, Գաղան և Երիքովը: Նրանք, սատանայի հետ համագործակցելով, մի քաղաք շինեցին դժոխքի օրինակով և այն լցրեցին չարությամբ: Ինչպես ինքը՝ սատանան, շինեց դժոխքը՝ բազմահնար մեքենաներով, յոթ պարիսպներով ու նիգերով, մուտքը՝ մեղքի նման դյուրամատչելի, իսկ ելքը՝ դժվարին: Այդ պատճառով Երիքով դյուրին էր մտնելը և շատ դժվար՝ ելնելը:

Եվ Տերը գնաց Երիքով, գթաց մարդուն և կամեցավ բժշկել նրա վերքերը: Այս գալստյան օրինակը նախապես պատկերվել է Նավեի որդի Հեսուսի միջոցով, ով նախ լրտեսեց Երիքովը, և ապա Աստծու Տապանակով անցավ Հորդանանը: Հեսուն օրինակն է աշխարհի Փրկչի՝ Հիսուսի, Ով

մկրտվեց Հորդանանում և առաքեց Հովհաննես Մկրտչին՝ լրտեսել դժոխքը:

Հեսուն փողերի ձայնով կործանեց Երիքովի պարիսպները (տես Յեսու Ձ 20), ինչպես և Քրիստոսի խաչելությամբ ու ձայնով կործանվեցին դժոխքի պարիսպները, նիգերն ու դռները, և հոգիներն ազատվեցին: Հեսուն նզովում է Երիքովը և նրան, ով վերստին կկառուցի այն (տես Յեսու Ձ 26), իսկ մեր Տեր Հիսուս Քրիստոս նզովեց նրանց, ովքեր իրենց չար գործերով կձեռնարկեն վերստին շինել դժոխքը: Այդ պատճառով էլ, ովքեր արհամարհում են Տիրոջ հրամանը և վերաշինում դժոխքը, հոգով ու մարմնով հավիտենապես կլինեն գեհենի կրակներում:

Եվ մինչ Նա Երիքովից դուրս էր գալիս Իր աշակերտներով և բազում ժողովրդով (Մարկ. Ժ 46): – Այստեղ հարց է ծագում, թե որտեղից էր հավաքվել այդ մեծ բազմությունը: Դրանք այն գալիլիացիներն էին, ովքեր տեսել էին Նրա աստվածագործ նշանները, երբ Նավակատիքի տոնին ի ծնե կույրին բժշկեց (տես Յովհ. Թ) և Ղազարոսին հարություն տվեց: Այդ պատճառով գալիլիացիները և նրանք, ովքեր եկել էին Երուսաղեմ Հորդանանի մյուս ափից, երբ տեսան նշանները, ժողովվեցին Հիսուսի շուրջը:

Իսկ իսրահրդով՝ այդքան ժողովուրդ Նրա շուրջը հավաքվեց տիեզերքի օրինակով, որովհետեւ Տերը խաչի վրայից մարմնով պիտի իջներ գերեզման, իսկ Աստվածային զորությամբ՝ դժոխք և երրորդ օրը պիտի դուրս բերեր դժոխքից այն բոլոր մարդկանց հոգիները, ովքեր վաղուց էին ննջել: Սա նաև նշանակում է, որ Հիսուսի հարությունից հետո, երբ առաքյալները սկսեցին քարոզել, ամբողջ տիեզերքը գնաց Նրա ետևից:

Տիմեի որդին՝ կույր Բարտիմեոսը, նստել, մուրում էր ճանապարհի եզրին (Մարկ. Ժ 46) – իսկ Մատթեոս ավետարանիչը երկու կույրեր է ասում (տես Մատթ. Ի 30), սակայն սրանք իրար հակառակ չեն, այլ ենթադրվում է, որ նրանցից մեկը՝ Բարտիմեոսը, ամբողջովին կույր էր: Ավետարանիչը նրա մասին ասում է, որ քաջ հավատ ուներ և համարձակախոս էր: Իսկ մյուս կույրը շատ աննշան տեսնում էր լույսը և դրան հուսալով ծույլ էր, անհոգ և թերահավատ:

Մատթեոսի ասած երկու կույրերից մեկը խորհրդանշում է հեթանոսներին, իսկ մյուսը՝ հրեաներին, ովքեր կուրացած ու նսեմացած, Աստծու աներեռությ փառքը տեսնելու հույսով նստել էին մահվան խավարում: Թվում է, թե այն մեկը, ով շատ աննշան տեսնում էր լույսը, առաջնորդում էր մյուսին, ինչն օրինակն է հրեայի: Հրեաները թեպետև ունեին Օրենքի լույսը, սակայն կուրացել էին Աստծու փառքի իմանալի լույսից՝ իրենց կռապաշտության պատճառով, ու կապվել Օրենքի անեծքի ստվերական գրով, քանի որ Օրենքը, որ գիր է, սպանում է, իսկ հոգին՝ կենդանացնում

(տես՞ Բ Կորնթ. Գ 6): Իսկ Հեթանոսները կուրացել էին բազմաստվածության մոլորություններով ու կռապաշտության ճենճից:

Երկու կույրեր նստած էին ճանապարհի եզերքին (Մատթ. Ի 30) – Պարապ, անգործ ու բարությունից թափուր՝ նրանք նստել էին խավար կռապաշտության մեջ՝ չունենալով ո՛չ առաջնորդ, ո՛չ բժիշկ։ Այստեղ ճանապարհն այս աշխարհի օրինակն է, որը մեզ տանում է դեպի հանդերձյալը։

Եթե լսեց, թե անցնողը Հիսուս Նազովեցին է, սկսեց աղաղակել և ասել – Հրեաները մարգարենություններից գիտեին, որ «Հեսսեի արմատից գավազան պիտի ընձյուղվի, ծաղիկ պիտի բուսնի այդ արմատից» (Եսայի ԺԱ 1): Իսկ Հեթանոսները լսել էին, որ Նա է իրենց հույսը՝ ըստ այս խոսքի։ «Հեթանոսներն իրենց հույսը պիտի դնեն Նրա անվան վրա» (Եսայի ԽԲ 4): Նաև սաղմոսներգուն է ասում. «Խնդրի՛ր Ինձնից, և Հեթանոսներին Քեզ կտամ որպես ժառանգություն» (Սալմ. Բ 8): Այդ պատճառով էլ և՛ Հեթանոսները, և՛ Հրեաները միաժամանակ աղաղակում էին՝ ողորմություն հայցելով Բարերար Տիրոջից։

Կույրերը թեպետ չէին կարողանում տեսնել Նրան, սակայն ջանում էին մերձենալ Հիսուսին, քանի որ ստուգապես հավատում էին, որ Նրան մոտենալով կըժշկվեն։

Եվ ինչ էին ասում. «Դավթի՛ Որդի, Հիսո՛ւս, ողորմի՛ր ինձ»։ Ողորմություն էին հայցում, որը ձրի շնորհ է ու պարզե, և ո՛չ վարձք։ Թեև ոչ մի բարի գործ չէին արել, բայց Նրանից ձրի ողորմություն էին խնդրում։ Քանի որ միայն Աստծուն և Նրա արարչական զորությանն է վայելում այս խոսքերով գիմել, Ով տալով չի աղքատանում։ Այս խոսքերը արտասանելով՝ հայտնում էին Նրա Աստվածությունը, Նրա մշտնջենավոր ու ամենակալ իշխանությունը։

Իսկ «Դավթի՛ Որդի» ասելով՝ Նրա մարդեղությունն էին բացահայտում, քանի որ Հիսուս սոսկ մարդ չէր և ոչ էլ՝ միայն Աստված, այլ Աստված մարմնավորված՝ մարդացած, և մարդկանց մեջ ու մարդկանց նման կենցաղավարող։

Եվ ամբոխը հանդիմանեց Նրանց, որ լուն – Թվում է, թե դրանք այն չարաբարո հրեաներն էին, ովքեր մշտապես շրջում էին Նրա հետ և տեսնելով, որ կույրերը փնտրում են Հիսուսին, սաստում էին Նրանց, որպեսզի չմոտենան ու չըժշկվեն։

Իսկ նրանք առավել ևս աղաղակում էին ու ասում. «Ողորմի՛ր մեզ, Տե՛ր, Դավթի՛ Որդի – Կույրերը դարձել էին Նրա Աստվածության ու մարդեղության քարոզիչները։ Քանզի Նրան ոչ միայն որպես մարդ գիտեին և Դավթի որդի, այլև Տեր և Աստված երկնքի ու երկրի, Արարիչ կենդանության և Խափանող մահվան։ Տեր ասելով՝ Նրա Աստվածությունն էին

խոստովանում, իսկ Դավթի որդի ասելով՝ մարդեղությունը: Երբ կույրերին սաստում էին, նրանք ավելի շատ էին աղաղակում, որովհետև այդպիսին է ժուժկալների հոգին, որքան ջանում են նրանց սաստել, նրանք ավելի են քաջալերվում:

Հիսուս կանգնեց և հրամայեց, որ նրանց կանչեն – Այսինքն՝ դադարեցրեց իր ընթացքը և սպասեց, մինչև որ կույրերը մոտենան: Սա նշանակում է, որ Տերը իջավ երկնքից և երեսուն տարի լուռ շրջեց աշխարհում, մինչև որ կանչեց հրեաներին ու հեթանոսներին երկրպագելու իր Աստվածությանը և ասաց. «Ի՞նչ եք կամենում, որ ձեզ անեմ» (Մատթ. Ի 32):

Ի՞նչ ես ուզում, որ քեզ անեմ – ինչո՞ւ հարցրեց: Որպեսզի չկարծեն, թե կույրերն իրենից մի բան էին խնդրում, իսկ ինքը մեկ ուրիշ բան տվեց, և սովոր էր ամենուր նույնը անել. նախ՝ հարցնել և ապա՝ բժշկել:

Նրանք ասացին. «Որ մեր աչքերը բացվեն, Տե՛ր» – Այսինքն՝ որպեսզի լուսավորվի ոչ միայն մարմնի աչքը, այլև հոգու, որը միտքն է:

Եվ գթալով՝ Հիսուս դիպավ նրանց աչքերին, և նրանք իսկույն տեսան ու գնացին Նրա ետևից – Գթաց նրանց, քանի որ գթալով խոնարհվեց արարածների վրա և կամեցավ մեր կուրությունը բժշկել: Եվ մոտենալով բնակվեց ներքին մարդու մեջ, մեր իշխանական մտքում ու բացեց մեր սրտի աչքերն անձեռագործ թլփատությամբ: Եվ կույրերը բժշկվելուց հետո Նրա ետևից գնացին մինչև երուսաղեմ: Այսինքն՝ հրեա և հեթանոս հավատացյալները, զգեստավորվելով Քրիստոսով, Նրա հետ խաչակցվեցին ու մկրտվեցին Նրա աշխարհակեցուցիչ մահով, և Նրա հետ թագավորելով՝ հրավիրվեցին Վերին երուսաղեմ, որտեղ հանդիսակից եղան հրեշտակներին, և միշտ Նրա հետ են, ինչպես և Տերն ասաց. «Ուր ես եմ, այնտեղ կլինի և իմ ծառան» (Յովի. ԺԲ 26):

Երբ մոտեցան Երուսաղեմին – Երուսաղեմը խաղաղություն է թարգմանվում: Տերը եկավ խաղաղության վայրը, որպեսզի այնտեղ՝ խաչ սեղանի վրա, քահանայապետեր ու պատարագեր իր Մարմինը աշխարհի փրկության համար:

Մոտեցան Բեթփագեին ու Բեթանիային, Զիթենյաց լեռան մոտ – Բեթփագե նշանակում է «ծնոտի տուն»: Նախաստեղծ Աղամը, ով բոլոր հողեղենների մեջ միակ բանականն էր, երբ դեռ պահում էր Աստծու պատվիրանները, Դրախտում էր, սակայն երբ հրաժարվեց պատվիրաններից և իր ծնոտով ճաշակեց պտուղը, ապա իր անհնագանդությամբ նմանվեց անբաններին: Այդ պատճառով էլ Տերը՝ Երկրորդ Աղամը, եկավ առաջին Աղամի կորսոյան հետքով նրան կենսագործելու:

Բեթփագեն «ծնոտի տուն» կոչվեց նաև այն պատճառով, որ միամոր և յոթնագիսակ արի ուխտավոր Մամիսոնն այդ վայրում հազարավոր

այլազգիներ կոտորեց էշի ծնոտով և երբ ծարավեց, ծնոտի ընկած տեղում մի աղբյուր բխեց, որից և խմեց (տես Դատ. ԺԵ 18-20): Նույնպես և Հիսուս՝ Հոր Միածինը և Ուխտավորը, Ով ուներ Սուրբ Հոգու յոթնարփյա շնորհները և արի ու հզոր էր պատերազմի մեջ, գալիս է այս նույն տեղը՝ Բեթփագե՝ էշ գտնելու, և նա, Ով կամենում էր ելնել խաչի «կառքը», սատում է էշի վրա և իր մահով պատերազմում սատանայի դեմ՝ տրորելով մահվան իշխանությունը: Նա բյուրավոր դեեր է սատկացնում ու արձակում նրանց գերիներին, իսկ ծարավածներին առատապես հագեցնում իր կողից բխած աղբյուրից: Եվ այս ամենը կատարվեց ըստ մարգարեռության. «Նա ելավ բարձունքներն ու գերեվարեց գերիներին. ավար առավ, պարգևներ բաշխեց ու տվեց մարդկանց որդիներին» (Սաղմ. ԿԵ 19):

Իսկ Բեթանիա թարգմանվում է «սգի տուն», որտեղ մահացավ Հիսուսի բարեկամ Ղազարոսը, ով օրինակն էր Ադամի: Բեթանիա նաև «Հնազանդության տուն» է կոչվում, ուր գալիս է Տերը և մահվանը հնագանդված Ղազարոսին հարություն տալիս, ապա ինքը, Ադամի փոխարեն, մահու չափ հնազանդվում Հորը՝ մեռնելով խաչի վրա:

«Զիթենյաց լեռան մոտ» ասելը բազում խորհուրդներ է հայտնում այդ լեռան մասին: Աստված այստեղ կանչեց Աբրահամին՝ պատարագելու իր միամոր զավակ իսահակին՝ Միածնի օրինակին, այդ պատճառով էլ Աբրահամն ասաց. «Այդ լեռան վրա երևաց Տերը» (Ծննդ. ԻԲ 14): Այստեղ էր իսահակի փրկության խոյը ծառից կախված, որը նույնպես խորհրդանշում էր Միածնին, Ով աշխարհի մեղքը վերցնող Գառ կոչվեց: Այս լեռան վրա եղավ նաև Հակոբի տեսիլքը (տես Ծննդ. ԻԸ 12): Այս լեռան մոտով փախավ Դավիթ մարգարեն (տես Բ Թագ. ԺԵ 30), և նույն այդ լեռան վրա Սողոմոնին իմաստություն տրվեց (տես Գ Թագ. Գ 4): Եվ ինքը՝ Քրիստոս, այդտեղ էր ամեն օր իջևանում և այնտեղից էլ համբարձվելու էր երկինք: Այդ պատճառով գալիս էր դեպի լեռը, քանի որ մոտեցել էին նրա համբարձվելու օրերը, նաև նրանց էր բերում, ովքեր իր հետ էին, որպեսզի հիշեն նախնիների խորհուրդը, որ այդտեղ եղավ, և նրանց ուսուցանում էր երկինք մտնելու ճանապարհը:

Իսկ ինչո՞ւ լեռը կոչվեց Զիթենյաց: Որովհետեւ այդ լեռան ստորոտում ձիթենիներ էին աճում, և ձեթը գիշերվա ու խավարի լուսավորողն է: Մարդկային ցեղը, լինելով խավար կռապաշտության մեջ, կարոտ էր լույսի, այդ պատճառով էլ Աբրահության Աբեգակը՝ Քրիստոս, ծագելով Կույսից, Աստվածային լույսով լուսավորեց մեր մտքի ու հոգու իմանալի աչքերը: Զեթի օրինակով մեզ հայտնում է նաև աստվածային ողորմության մասին, ինչպես և աղավնին տապանում գտնվողներին ձիթենու տերեւով հայտնեց Աստծու ողորմությամբ երկրի ցամաքելու մասին:

Արդ՝ մեզ լեռանը մոտեցնելով ցույց է տալիս, որ պետք է վերանալ բոլոր վայրաքարշ ու սնոտի բարքերից և զարդարվել սպիտակափայլ լույսով, որպեսզի մեր նվաստությունը հաղորդություն ունենա իր Աստվածության հետ: Քանզի Զիթենյաց լեռը նշանակում է բարձրություն և ավետարանական քարոզություն, ինչպես և գըրված է: «Ե՛լ այդ բարձր լեռան վրա, ո՞վ ավետարերդ Սիոնի» (Եսայի Խ 9): Եվ կանչում է մեզ Տերը գեպի այդ բարձր լեռը՝ գեպի սուրբ եկեղեցին:

«Այն ժամանակ Հիսուս իր աշակերտներից երկուսին ուղարկեց ու նրանց ասաց» (Մատթ. ԻԱ 1): Վարդապետներն ասում են, որ Զիթենյաց լեռը բարձր է ու լի ձիթենիներով, ինչը խորհրդանշում է Աստծու ողորմությունը, այդ պատճառով էլ աշակերտներին այնտեղ ուղարկեց՝ էշին կապանքներից արձակելու: Սրանով ցույց է տալիս, որ Աստծու բարձրությունից ուղարկեց առաքյալներին ու ճշմարիտ վարդապետներին, որպեսզի քարոզեն ու արձակեն մարդկանց մեղքերի ու անեծքների կապանքներից: Իսկ երբ Աստված բարկանում է ժողովրդի վրա, այլևս չի ուղարկում ճշմարիտ վարդապետներ նրանց մեջ, ինչից Տիրոջ խոսքը լսելու սովէ լինում: Այդ մասին գրել է Ամոս մարդարեն. «Ահա օրեր պիտի գան, ասում է Տեր Աստվածը, և Ես սով պիտի ուղարկեմ այդ երկիրը, ոչ թե հացի սով կամ ջրի ծարավ, այլ Տիրոջ խոսքը լսելու սով» (Ամոս Ը 11):

Իսկ ովքե՞ր էին այդ երկու աշակերտները: Թվում է, թե Պետրոսն ու Հովհաննեսը, որովհետեւ Տերն ամենուրեք նրանց էր նախապատվություն տալիս: Պետրոսը մեծահասակ էր, ինչը խորհրդանշում է մարդարեների դասերը, ովքեր նախքան Բանի մարդանալը Հոր կողմից առաքվեցին որպես պատգամավորներ հրեաների ու հեթանոսների մեջ, որպեսզի նրանք հավատով պատրաստվեն և ընդունեն Քրիստոսի գալուստը: Հովհաննեսը երիտասարդ էր, ինչը խորհրդանշում է առաքելական գնդերը, ովքեր առաքվեցին Քրիստոսի կողմից՝ ազատելու հրեաներին ու հեթանոսներին մեղքերի ու մաշվան կապանքներից և արձակելու Օրենքի դատապարտությունից: Նաև Հովհաննեսն ամուրի էր, իսկ Պետրոսը՝ ամուսնացած:

Երկու աշակերտները խորհրդանշում են առաքյալներին ու մարդարեներին, քանզի առաքյալները և մարդարեները նույն Տիրոջ մասին խոսեցին, այսինքն՝ Աստծու Որդու անճառելի տնօրինության: Նրանք նաև երկու Կտակարաններն են խորհրդանշում՝ Հնի՝ օրինակի ու Նորի՝ ճշմարտության:

Երկու աշակերտները երկու եկեղեցիներն են, մեկը՝ սուրբ Սիոնը, որ նախնիներից սկսվեց ու ամբողջանալով բովանդակվեց սուրբ Վերնատանը, ուր բազմեց մեր Տերը Տերը՝ ընթրելու իր աշակերտների հետ, և նույն ավանդու-

թյունից բխեց իր սուրբ Մարմինն ու Արյունը: Իսկ երկրորդը Կաթողիկե եկեղեցին է, որը լինելու է մինչև մեր Տիրոջ երկրորդ գալուստը:

Գնացե՛ք այդ գյուղը, որ ձեր դիմացն է – Այստեղ երուսաղեմի մասին է գյուղ ասում, որովհետև Հին Ուխտի ժամանակ Օրենքի քարոզությունը միայն այդտեղ էր լինում, այդտեղ էր աղոթքի տունը, և հրեաները միայն այդտեղ էին ուխտի գնում: Իսկ Ավետարանի քարոզությունից հետո այն քաղաք կոչվեց, ըստ այս խոսքի. «Դուք նստեցե՛ք երուսաղեմ քաղաքում, մինչև որ երկնքից զորությամբ զգեստավորվեք» (Ղուկ. ԻՂ 49):

Դուք գնացե՛ք այդ գյուղը, որ ձեր դիմացն է – Մատթեոսն ասում է «Ձեր առջևն է», որովհետև ամբողջ աշխարհն ինչպես մի գյուղ է Աստծու համար: «Ձեր» ասելով Հիսուս հայտարարում է, որ այսուհետեւ աշակերտները ևս պիտի քարոզեն և ուսուցանեն:

Իսկ Ղուկասն ասում է. «Մեր դիմացն է», և սրանով Հիսուս հիշեցնում է աշակերտներին, որ ինքը նրանց հետ է լինելու: Ինչպես և հարությունից հետո ասաց. «Եվ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչև աշխարհի վախճանը» (Մատթ. ԻԸ 20):

Իսկ ինչո՞ւ է «դիմաց» ասում: Սա ցույց է տալիս անհավատների չարությունը (որոնց նաև գայլեր է կոչում)` ըստ այս խոսքի. «Գնացե՛ք, ահա ուղարկում եմ ձեզ իբրև գայլերի մեջ» (Ղուկ. Ժ 3): Այս խոսքը առավելապես ասված է երուսաղեմի մասին, որ Աստծու քաղաք լինելով՝ ընդդիմանում էր իր Տիրոջը: Տերը նրանցից դեերն էր հանում ու հալածում, նրանց հիվանդներին էր բժշկում ու մեռելներին հարություն տալիս, իսկ նրանք ասում էին, թե Նա Բեհեղզերուղի զորությամբ է դա անում, նաև Նրան Աստծուն հակառակ ու օրինագանց էին կոչում: Եվ որպես գլուխ իրենց բոլոր չար գործերի՝ նրանք Տիրոջը խաչի մահվան մատնեցին երուսաղեմում, ուրացան նրա շնորհները, նրա մարգարեներին ու առաքյալներին քարկոծեցին ու սպանեցին, Աստծու փառքից կողոպտվեցին: Այդ պատճառով Տերը վերցրեց նրանցից այդին (տե՛ս Մատթ. ԻԸ 43), այսինքն՝ թագավորությունը, քահանայությունն ու մարգարենությունը, ու տվեց հեթանոսներին: Եվ երբ փարիսեցիներն ասացին Տիրոջը. «Վե՛ր կաց, գնա՛ այստեղից, որովհետև Հերովդեսն ուզում է քեզ սպանել», Տերն ի պատասխան այդ խոսքերի ասաց. «Երուսաղե՛մ, Երուսաղե՛մ, որ կոտորում էիր մարգարեներին և քարկոծում էիր քեզ մոտ ուղարկվածներին. քանի՛-քանի՛ անգամ կամեցա հավաքել քո որդիներին, ինչպես հավն իր ձագերին՝ թևերի տակ, բայց դու չկամեցար: Ահա ձեր տունը ձեզ պիտի թողնվի ավերակ. բայց ասում եմ ձեզ, որ ինձ այլևս չեք տեսնի, մինչև որ չասեք՝ «Օրհնյա՛լ է Նա, որ գալիս է Տիրոջ անունով» (Ղուկ. Ժ 31-35):

Դուք գնացե՞ք այդ գյուղը, որ ձեր դիմացն է. և հենց որ այնտեղ մտնեք, կգտնեք մի կապված ավանակ, որի վրա ոչ մի մարդ արարած չի նստել. արձակեցե՞ք այն և բերե՞ք: Մատթեոսը երկուսն է ասում՝ էշ և ավանակ: Ինչպես և երկու կույրերը, այնպես էլ այս երկու անմաքուր կենդանիները խորհրդանշում են հրեաներին ու հեթանոսներին:

Այս կենդանին հրեաների անմաքրության օրինակն է: Հրեաները թեզետ ունեին Օրենքը, սակայն սուրբ չէին, որովհետև կուռքերին էին զոհ մատուցում, դեերին խնկարկում և գործում ըստ նրանց կամքի ու հաճույքի: Ինչպես էշը վարժված է թամբին, բեռներին ու սանձին, այնպես էլ առաջին հրեաները, Աստծու կամքով ընթանալով և պատվիրանները կատարելով, վարժվել էին Օրենքին, մարդարեներին ու շաբաթը պահելուն, սակայն սատանան նրանց խարեց ու նվաճեց և իրեն ծառայեցնելով՝ չարության բեռնակիր դարձրեց, և ինչպես կառքի մեջ կրազմեն, այդպես բազմեց մարդկանց վրա, իբրև անմիտ էշերի, և նրանց թիկունքը կորացնելով ու կողերը տրորելով՝ վիրավորեց նրանց հոգին ու մարմինը:

Իսկ ավանակը, որ անվարժ է հեծյալին ու բեռին, խորհրդանշում է հեթանոսներին, ովքեր առանց Օրենքի ու մարդարեների էին ապրում, ըստ իրենց կամքի, և անկիրթ էին սատվածպաշտության մեջ: Նրանք գործում էին ըստ սատանայի կամքի և մոլորվել էին կուսակաշտության մեջ՝ իրենց ցանկությունների պատճառով:

Ասում է «կապված», այսինքն՝ կապված էին մեղքերով, ըստ այս խոսքի. «Իրենց ձեռքերի գործերով կապվում են մեղավորները» (Սաղմ. Թ 17):

Կապված դուսն մոտ, դրսում, փողոցի մեջ – Սա նշանակում է, թե դուրս էին հանված Դրախտից: Նաև՝ հեռու էին Օրենքից ու մարդարեներից, որևէ բարի գործ չունեին և կապված էին կուսակաշտությամբ: Իսկ «Փողոցի մեջ» ասելով՝ ի նկատի ունի անցավոր աշխարհի փոթորկահույզ կյանքը: Որովհետև ինչպես փողոցը շատերի կողմից ունատակ է լինում, այնպես էլ մարդու միտքը տրորվում է սատանայի և նրա կամակատարների կողմից:

Արդ՝ նրանք կապված էին կուսակաշտության կապարե մեղքերով, ինչը Քրիստոս հրամայեց լուծարել առաքելական քարոզությամբ՝ ասելով. «Արձակեցե՞ք այն և բերե՞ք»: Տեղը նրանց արձակեց Օրենքի ծառայությունից և բերեց գեպի Ավետարան, արձակեց թլփատությունից և բերեց գեպի Մկրտության ավազան, արձակեց գրից, որ սպանում էր, և բերեց գեպի հոգու ազատություն, իսկ հեթանոսներին ազատեց կուռքերից, դեերից և բերեց գեպի խաչի երկրպագություն:

Ասաց. «Արձակեցե՞ք այն և բերե՞ք»: Կապողը սատանան էր, ով օձի նման սողաց Եվայի ականջը և նրա միջոցով խարեց Աղամին՝ Դրախտից

դուրս հանելով և կապելով մեղքերի պարաններով։ Տիրոջ հրամանով անբան կենդանուն արձակելը օրինակն է նրա, որ Տերն իր խաչով պիտի ազատեր բանական Աղամին մեղքերի կապանքներից ու անեծքի դատապարտությունից։

«Եթե մեկը ձեզ ասի. «Այդ ավանակին ինչո՞ւ եք արձակում»։ Տերը գիտեր բանսարկուի անամոթությունը, որովհետեւ ինչպես ավանակի տերերն ասացին՝ «Ի՞նչ եք անում, ինչո՞ւ եք այդ ավանակն արձակում», այդպես էլ սատանան պիտի ասեր, թե՝ ինչո՞ւ եք արձակում և՝ «Ի՞նչ կա մեր և Քո միջև, Հիսուս, Որդի՛ Աստծու» (Մատթ. Ը 29):

Բայց երբ աշակերտներն ասացին, թե՝ «Իր տիրոջը պետք է» (Ղուկ. Ժ 34), իսկույն թույլ տվեցին։ Նմանակես և բանսարկուն վարփեց, երբ Տերը պահանջեց։ Եկավ Քաջ Հովիվը՝ փնտրելու իր ոչխարին, և եկավ Տերը՝ փնտրելու իր պատկերը, որը թաղվել էր աղբանցում։

Աշակերտները գնացին և արեցին այնպես, ինչպես Հիսուս իրենց հրամայել էր։ Նրանք գտան ավանակը՝ կապված գուան մոտ, փողոցում և այն արձակեցին։ Եվ մինչ արձակում էին, նրա տերերն ասացին. «Ի՞նչ եք անում, ինչո՞ւ եք այդ ավանակն արձակում»։ Եվ աշակերտները պատասխանեցին, ինչպես Հիսուս ասել էր. «Իր տիրոջը պետք է»։ Ու նրանց թույլ տվեցին։ Էշի տերերը չհակառակեցին, քանի որ Հիսուս այդպես հրամայեց նրանց սրտերին, որ ավելորդ խոսքեր չասեն, քանզի բոլորի սրտերն էլ Աստծու ձեռքում են։

Այս օրինակով Տերը քաջալերում էր առաքյալներին, թե ինչպես նրանց համար դյուրին եղավ ավանակին արձակելը, այդպես էլ իրեն դյուրին է արձակել Աղամին հավիտենական մահից։ Նաև առաքյալների համար դյուրին պիտի լիներ արձակել հրեաներին ու հեթանոսներին մեղքերի ու մահվան կապանքներից և դարձնել դեպի Աստված։

Ավանակը բերեցին Հիսուսի մոտ և դրա վրա զգեստներ գցեցին, և Հիսուս նստեց դրա վրա – Այսինքն՝ մարգարեներն ու առաքյալները հնագանդեցրին հրեաներին ու հեթանոսներին Քրիստոսի Ավետարանով։

Հիսուս նստեց դրա վրա – ինչպես կարելի է նստել միանգամից երկու կենդանիների վրա, եթե դրանք լցված չեն կառքին։ Եվ մի՞թե ստում է ավետարանիչը։ Ո՞չ, ստուգապես երկուսն էին, ինչպես և կույրերն էին երկու։

Տերը նախ նստում է էշի վրա և գնում մինչև Երուսաղեմի դուռը, այսինքն՝ հեթանոսների եկեղեցին, և ավանակը գնում էր նրա ետևից։ Իսկ այնտեղ, իջնելով էշից, նստում է ավանակի վրա ու մտնում քաղաք։ Այս անգամ արդեն էշն է գնում ավանակի ետևից։ Ավանակը հեթանոսների օրինակն է, որը նոր ժողովուրդ անվանվեց, և որոնց վրա հանգեց Բանն

Աստված՝ հրեաներից ու հեթանոսներից կազմելով իր Եկեղեցին՝ առաքյալների ու մարդարեների քարոզությամբ և Ավագանի մկրտությամբ։ Առաքյալներն Օրենքի պատվիրանի վրա առաքելական քարոզությունն են դնում, իսկ Հրեաների ու հեթանոսների վրա՝ Ավագանի մկրտությունն ու Հոգու շնորհները, որպեսզի դրա վրա հանգչի Քրիստոս Թագավորը, որովհետեւ Նա չի հանգչում աղտոտված հոգու վրա, այլ Ավագանով լվացվածի, որով սրբեցին առաքյալները հրեաների ու հեթանոսների անմաքրությունը և դարձրին տաճար Հավիտենական Թագավորի։

Բայց զարմանալի է, թե ինչպե՞ս էր ավանակը, որի վրա դեռևս ոչ մի մարդ չէր նստել, այդպես հանդարտ ու հնագանդ ընթանում։ Տերը սկզբում բոլոր կենդանիներին մարդուն հնագանդ էր արարել, բայց քանի որ մարդը չպահեց Աստծու պատվիրանը, այդ պատճառով շատ կենդանիներ անհնագանդ դարձան, մինչև անգամ նրանց մի մասը խածոտում են ու հոշոտելով սպանում մարդկանց՝ իբրև Աստծու պատվիրաններն անտեսողների։ Եվ որովհետեւ մեր Տերը՝ Երկրորդ Աղամը, անմեղ էր ու Աղամի մարմնով պահում էր Հոր պատվիրանները, այդ պատճառով կենդանիների ու անկենդանների ամբողջ բնությունը հնագանդվում էր Նրան։

Սա նաև հեթանոսների օրինակն է, որոնց չքարոզվեց Աստծու Որդու մարդեղությունը, սակայն երբ Տերը ծնվեց Կույսից, հեթանոս մոգերը, առաջնորդվելով աստղով, եկան նրա մոտ և երկրպագեցին՝ մատուցելով խորհրդավոր ընծաներ ու պատարագներ։ Տերը սրանով հայտնում է առաքյալներին իր ամենակարող զորությունը, որ կարող է բարքերով բիրտ ու հանգուգն հեթանոսներին այդպես դյուրահավան դարձնել, ինչպես տրմուղ² ավանակին և նրա տիրոջը։

Հարցնում են նաև, թե ինչո՞ւ էշ նստեց, որն ամենաանարդ գրաստն է, և ոչ ձի կամ ջորի կամ էլ կառք։ Եթե ոմանք ասեն, թե աղքատ էր, ասենք, որ նաև էշ չուներ, և ինչպես համաձայնեց էշի տիրոջ հետ, այնպես էլ կարող էր հոժարեցնել և' ձիու, և' ջորու տերերին։ Իսկ եթե մեկն ասի, թե խիստ և անվայելուչ է ավանակը, անմիտ ու անասնաբարո, ասենք, որ ձին ու ջորին ևս բավականին անմիտ են։ Իսկ որ կարոտ չէր նստել էշի կամ մեկ այլ գրաստի վրա, հայտնի է բազում հանգամանքներից։

Տերն ամենուր ոտքով էր գնում՝ և' քաղաք, և' գյուղ, ինչպես և Սամարիա գնաց։ Հետեաբար կարիքից դրդված չնստեց էշի վրա, այլ կամեցավ բոլորին խոնարհություն սովորեցնել, մանավանդ նրանց, ովքեր հետագայում քահանաներ ու Եկեղեցու առաջնորդներ էին դառնալու, որպեսզի նրանք ևս չձգտեին ձիու և ջորու, այլ միայն մարմնի տկարության դեպքում օդտվեի գրաստից և այդպես կործանեին ապստամբ

² Տրնուղ – դեռ հեծնելու կամ լծի չվարժեցված, անփորձ կենդանի։

վիշապին, որը հպարտության և անպիտանության պատճառով ընկավ։ Այդ պատճառով Տերն իր վարդապետությունը խոնարհությամբ է սկսում ու խոնարհությունը երանելի համարում (տես Սատր. Ե)։ Նույնպես և այս գեղքում, նստելով դանդաղաշարժ ու ծանրագնաց գրաստի վրա, խափանում է ձիապարծիկ հպարտությունը։

Իսկ էշի վրա հագուստ գցելն Ավագանի մաքրության օրինակն է։ Քանի որ Սուրբ Հոգու չնորհներով Քրիստոս Թագավորը և իր Հայրը պիտի հանդէն մկրտվածի վրա։

Եվ շատերը իրենց զգեստները փոռում էին ճանապարհին – Հովհաննես ավետարանիչը ցույց է տալիս պատճառը, թե ինչու են երուսաղեմացիները Նրան ընդառաջ ելնում։ «Ժողովուրդը, որ նրա հետ էր, վկայում էր, որ Ղազարոսին հենց գերեզմանից կանչեց և նրան մեռելներից կենդանացրեց» (Յովի. ԺԲ 17)։ Այդ պատճառով էլ ժողովուրդը Նրան ընդառաջ էր ելնում, քանի որ լսեցին այն նշանների մասին, որ Հիսուս արեց։ Սուրբ Հոգին շարժեց երուսաղեմ քաղաքի բազմությանը՝ ընդառաջ ելնելու Քրիստոս Թագավորին, ովքեր էլ, ի պատիվ Նրա, իրենց հանդերձները հանում էին և տարածում Նրա ոտքերի տակ, որպեսզի իրենց հանդերձների վրայով անցնեն ավանակի ոտքերը և ոչ՝ երկրի հողի։

Դարձյալ՝ Տիրոջ համար ճանապարհ էին պատրաստում՝ ըստ այս խոսքի. «Անապատում կանչողի ձայնն է. «Պատրաստեցե՛ք Տիրոջ ճանապարհը և հարթեցե՛ք մեր Աստծու շավիդները» (Եսայի Խ 3)։ Սա նաև օրինակն է նրա, որ Հարությունից հետո շատերը հնազանդվեցին Ավետարանին և Տիրոջ առջև սփռեցին իրենց սրտերը՝ ըստ այս խոսքի. «Չերսրտե՛րը պատռեք և ոչ ձեր հանդերձները» (Յովել Բ 13):

Նրանք խորհրդաբար հանում էին այն մաշկեղեն հանդերձները, որոնցով զգեստավորվեց Աղամը, որպեսզի զգեստավորվեն անապական և առաջին զգեստներով։ Քանզի երբ նախաստեղծները զրկվեցին աննկարագրելի փառքից, իրենց ոստերով ծածկեցին, իսկ այսօր, երբ տեսան անմեղ Մարդուն՝ կուսածին Աղամին, ճյուղերը և հանդերձները Նրա առջև տարածեցին, որպեսզի ստանան նախկին անապական հանդերձները։

Դարձյալ՝ նշանակում է խոստովանությամբ մերկանալ մեղքի ծածկոցներից, այսինքն՝ հին մարդուց։

Եվ ուրիշները ծառերից ճյուղեր էին կտրում ու գցում ճանապարհի վրա – Որովհետև գարուն էր, և ծառերը զարդարվել էին ծաղիկներով, այդ պատճառով էլ հատում էին ու Քրիստոսի ոտքերի տակ սփռում։ Դրանով կատարում էին մարդարեի խոսքերը. «Հեսսեի արմատից գավազան պիտի ընձյուղվի, Ծաղիկ պիտի բուսնի այդ արմատից» (Եսայի ԺԱ 1)։ Նաև

Սողոմոնն է ասում. «Ես դաշտերի Ծաղիկ եմ» (Երգ Բ 1), այդ պատճառով էլ զգալի ծաղիկները մատուցում էին իմանալի Ծաղկին:

Երբ Նրան որպես Արարիչ ճանաչեցին, ձիթենու ոստերը, որ մի ժամանակ դևերին ու կուռքերին էին մատուցում, Նրան մատուցեցին, ինչպես որ ծննդյան ժամանակ մոգերը խորհրդավոր ընծաներ մատուցեցին՝ ոսկի, կնդրուկ և զմուռու՝ ըստ այս խոսքի. «Իմն է արծաթը, իմն է ոսկին, – ասում է Ամենակալ Տերը» (Անգե Բ 9):

Դարձյալ՝ Աղամի պատճառով ամբողջ երկիրն անեծքի տակ ընկավ, ու դատապարտվեցին ծառերն ու բույսերը, և երկրի վրա փուշ ու տատասկ բռւսնեց: Իսկ երբ երբայեցիների մանուկներն ու ծերերը հոգով ճանաչեցին Տիրողը, սկսեցին ոստեր տարածել, որպեսզի Տերը երկիրը փշաբերությունից դարձնի իր նախկին պայծառությանը:

Նաև քաջ ըմբիշներին, օլիմպիական խաղերի ժամանակ, ոստերով էին պսակում: Երբ ժողովուրդն իմացավ, որ մեր Տերը Ղազարոսին հարություն տալով հաղթեց մահվանը, իբրև հաղթողի՝ արմավենիների ոստերով ընդառաջ ելավ Նրան:

Իսկ այն, որ ծերերը՝ ձիթենյաց, իսկ մանուկներն արմավենու ոստերով ընդառաջ ելան Քրիստոսին, ցույց է տալիս Նրա Աստվածությունն ու Թագավորությունը, որովհետև ձիթենին ողորմության խորհրդանիշն է, իսկ արմավենին, որը բարձր է հասակով, խորհրդանշում է, որ Քրիստոս երկնքից՝ բարձունքներից եկավ:

Երկրորդ՝ ձիթենին խորհրդանշում է նաև մկրտության օծումը, ինչը պարզեվեց սրբերի եկեղեցուն, իսկ արմավենու պտուղը (քանի որ քաղցր է) ցույց է տալիս Քրիստոսի քաղցր վարդապետությունը՝ ըստ այս խոսքի. «Որքան քաղցր են քո խոսքերն իմ քիմքին՝ ավելի քաղցր, քան մեղրն իմ բերանին» (Սաղմ. ճճԸ 103):

Ձիթենին նաև ծերերի առաքինությունն է խորհրդանշում՝ ըստ այս խոսքի. «Իսկ ծերությունն իմ՝ առատ ձեթով!» (Սաղմ. ՂԱ 11): Եվ դարձյալ. «Դրանք պտղաբեր կլինեն նաև ծերության ժամանակ՝ գիրգ³ ու փափուկ» (Սաղմ. ՂԱ 15): Իսկ արմավենին խորհրդանշում է անապական հարությամբ մանկացածների գործերի արդարությունը՝ ըստ այս խոսքի. «Արդարներն արմավենու պես կծաղկեն» (Սաղմ. ՂԱ 13): Եվ դարձյալ. «Դրանք կտնկվեն Տիրոջ տանը ու կծաղկեն մեր Աստծու գավիթներում» (Սաղմ. ՂԱ 14): Այսինքն՝ մեկն այս կյանքում գործած արդարության պտուղներն է նշանակում, իսկ մյուսը՝ հանդերձյալ կյանքի արդարությունը, վայելչությունը և փառքի նորոգումը: Երկրորդ՝ ձիթենին ծերերի լուսավոր իմաստությունն է խորհրդանշում, որը նրանք մատուցում են Աստծուն,

³ Գիրգ – փափուկ, խնամված, նազանի:

իսկ արմավենին՝ բարեգործությունը՝ նորափթիթ և անապական հարությամբ։ Այսինքն՝ տեսական և գործնական առաքինությունները։

Իսկ ինչո՞ւ է օրինակը ծերերի ու մանուկների միջոցով բերում։ Նախ՝ որովհետև ծերերը և մանուկները խորհրդանշում են նրանց, ովքեր թե՛ Հին և թե՛ Նոր Ուխտում իրենց բարի վարքով հաճելի են եղել Աստծուն։ Երկրորդ՝ ծերերը նրանք են, ովքեր երկար ժամանակ մեղքերի մեջ են եղել, հետո զղացել և ապաշխարությամբ Աստծուն հաճելի են դարձել, իսկ մանուկները նրանք են, ովքեր միշտ անմեղությամբ են ապրել և կուսությամբ. պահքով, աղոթքներով ու հավատի գործերով Աստծուն հաճելի դարձել։

Ոստն իր վրա երեք բան է պարունակում՝ ծաղիկ, տերև ու պտուղ։ Սա նախ նշանակում է Սուրբ Երրորդության երեք Անձերի դավանությունը, որը մենք՝ քրիստոնյաներս, ունենք։ Երկրորդ՝ ծաղիկը խորհրդանշում է մեր հավատը, որով պայծառանում ենք, տերևը հույսն է, որով միշտ ուրախանում ենք անճառ խնդությամբ, իսկ պտուղը սերն է, որը մեր գործերով ունենք Աստծու և ընկերոջ հանդեպ։ Այս խորհրդով ենք մենք այսօր ուռենու ոստերով գուրս գալիս Քրիստոսին ընդառաջ, և սա՝ ուժ պատճառով։ Նախ՝ ուռենին դյուրագյուտ է ամենուրեք՝ և' լեռներում, և' դաշտերում։

Երկրորդ՝ վայրենի և անպտուղ է, ինչը նշանակում է, որ հեթանոսները վայրենի և անպտուղ էին իրենց հավատով ու գործերով և այդ պատճառով գալիս են հնազանդելու Քրիստոսին։ Երրորդ՝ երբ ուռենին տնկում ենք, անմիջապես արմատներ է արձակում ու կանաչում, նմանապես և հեթանոսներն առաքյալների քարոզով անմիջապես հավատի եկան և արմատակալեցին Քրիստոսի վրա։ Չորրորդ՝ երբ հատում են ուռենու կատարը և ջրում, բազմաթիվ ճյուղեր է արձակում, նույնպես և հեթանոսները, ովքեր ոռոգվեցին Ավագանի կենարար ջրով ու Քրիստոսին հավատալու պատճառով գլխատվեցին, բազում պսակներ պիտի կրեն երկնքի արքայությունում։ Հինգերորդ ինչպես թույլ ու կակուղ է ուռենին, նույնպես և Քրիստոսին հետևողները պետք է հեզ ու խոնարհ լինեն հոգով, որպեսզի կանաչ ու զգարթ ճանապարհով բարձրանան Վերին Երուսաղեմ։

Վեցերորդ՝ ուռենին սնամեջ է, ինչը ցույց է տալիս, որ նրանք, ովքեր հետեւում են Քրիստոսին, պետք է դատարկ ու թափուր լինեն այս աշխարհի սիրուց, որովհետև Տերն ասում է. «Երանի՛ Հոգով աղքատներին, որովհետև նրանցն է Երկնքի արքայությունը» (Մատթ. Ե 3): Յոթերորդ՝

ուռենու կեղեր տտիպ⁴ է, ինչը ցույց է տալիս, որ Քրիստոսին հավատացողները պետք է սգան ու տրտմեն այս աշխարհում, որպեսզի Հանդերձյալում ուրախանան՝ ըստ այս խոսքի. «Երանի՛ սգավորներին, որովհետև նրանք պիտի միմիթարվեն» (Սատթ. Ե 4), նաև Սողոմոնն է ասում՝ «Իմաստունի սիրտը սգի տանն է, իսկ Հիմարի սիրտն՝ ուրախության» (Ժող. Ե 5): Ութերորդ՝ ուռենին մյուս ծառերի նման բարձր չէ, նույնպես և նրանք, ովքեր հետեւում են Քրիստոսին, չպետք է կյանքի տևողության մասին խորհեն ու մոռանան արդար վճիռը, որը մահն է, այլ պետք է միշտ սպասեն մահվանը, ինչպես ասում է Դավիթը. «Երանի այն մարդուն, որի օգնությունը Քեզնից է, և որը մտքում դրեց ելնել տրտմության հովտից» (Սաղմ. ԶԳ 6-7):

Եվ նրանք, որ առաջից ու ետեւից էին գնում – Առջեկից Աղամն է գնում իր սերունդով՝ մինչև Քրիստոսի ծնունդը, իսկ ետեկից՝ հետո ծնվածները՝ մինչև Տիրոջ Երկրորդ գալուստը: Առջեկից մարգարեներն էին գնում, ովքեր ընտրվել էին հրեաներից, իսկ ետեկից՝ սուրբ առաքյալները և նրանք, ովքեր հեթանոսներից կանչվեցին:

Դարձյալ՝ առջեկից գնում էին Օրենքն ու մարգարենությունները, քահանայությունն ու թագավորությունը, և սրանց ամբողջացնումն էր Հովհաննես Մկրտիչը: Մեջտեղում Քրիստոսի քաղցր գարդապետությունն է, որն ապրեցրեց առաջիններին և երկրորդների հիմքը դրեց: Իսկ ետեկից գնում էին երանելի սուրբ առաքյալներն ու սուրբ վկաները, հայրապետներն ու վարդապետները և բոլոր նրանք, ովքեր ծնվել են Ավագանից:

Օվսաննա՛ Բարձրյալին, օրհնյա՛լ լինի նա, որ գալիս է Տիրոջ անունով (Մարկ. ԺԱ 11) – Այսինքն՝ փրկություն բարձունքներից, կամ՝ «փրկի՛ր ու ապրեցրո՛ւ»: Հազարոսի հարության համար էին նրան Փրկիչ ու Ապրեցնող անվանում: Քանի որ երկրայիններից ո՞վ ունի այնպիսի արիություն, ինչպիսին նա ունի: Ովքեր անգետ էին նրա արիությանը, ասում էին՝ Ո՞վ է Սա: Իսկ ովքեր գիտեին, պատասխանում էին. «Սա նա է, Ով առաջ քան հավիտյանները ծնվեց Հորից և այժմ եկել է աշխարհ»: Եվ դարձյալ հարցնում էին՝ Ո՞վ է Սա, և պատասխանում էին. «Սա նա է, Ով Մովսեսի խաչանիշ գավազանով պատռեց ծովն ու այնտեղով անցկացրեց հսրայելի ժողովրդին, իսկ փարավոնին իր գորքերով խորտակեց ծովում»:

Դարձյալ ասում էին՝ «Օվսաննա՛», այսինքն՝ Սա նա է, Ով քառասուն տարի երկնքից հաց տեղաց, դրանով կերակրեց մեր հայրերին անապատում, և վեմից աղբյուր բխեցրեց տասներկու վտակներով: Եվ դարձյալ հարցնում էին՝ Ո՞վ է Սա, և պատասխանում էին. «Սա նա է, Ով

⁴ Տտիպ – որոշ բույսեր տտիպ՝ անախորժ հատկություն ունեն, օրինակ՝ սերկահլը, իսակ տանձը:

Հորդանանը սանձեց և երիքովի պարիսպներն իբրև քուրշ (պնդացած ձյուն) փլեց»: Եվ բոլորը միաբան ասում էին. «Օրհնյալ է մեր հոր՝ Դավթի թագավորության Թագավորը»:

Նրան ճանաչեցին որպես մշտնջենավոր Աստված, Ով օրհնաբանվում է հրեշտակներից, և խոստովանում էին Հորը համագո ըստ Աստվածության և անբաժանելի մարդեղությամբ, այդ պատճառով էլ նրան Դավթի որդի ու Տեր դավանեցին՝ ըստ այս խոսքի. «Հեսսեի արմատից գավազան պիտի ընձյուղվի, ծաղիկ պիտի բուսնի այդ արմատից» (Եսայի ԺԱ 1): Դարձյալ՝ «Նա պիտի նստի Դավթի աթոռին, առաջ պիտի տանի նրա թագավորությունը» (Եսայի Թ 7):

Այս գալուստը կանխատեսել էին մարդարեները, այդ մասին քահանաները միշտ ընթերցում էին տաճարում, և բոլորը սպասում էին այդ աստվածային գալստյանը, ինչ պատճառով էլ ասում էին. «Խաղաղություն՝ երկնքում և փա՛ռք՝ բարձունքներում», ինչպես ծննդյան օրը հրեշտակներն էին երգում. «Փա՛ռք Աստծուն՝ բարձունքներում, և երկրի վրա խաղաղություն և հաճություն՝ մարդկանց մեջ» (Ղուկ. Բ 2):

Տերը երկնքից իջնելով խաղաղություն հաստատեց մարդկանց մեջ, իսկ այսօր, երբ մոտ էր նրա երկինք համբառնալը, երկրավորները երկնավորներին փոխադարձաբար խաղաղություն առաքեցին, որովհետեւ Տերը երկրավորների մարմնով գնաց երկինք՝ մեզ խաղաղություն թողնելով՝ ըստ այս խոսքի. «Խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ» (Յովի. ԺԴ 27): Նաև երկնայինների մեջ խաղաղություն հաստատեց՝ ըստ հետևյալ խոսքի. «Խաղաղություն արեց երկրավորների ու երկնավորների մեջ» (Իմմտ. Եփես. Բ 17): Որովհետեւ նրա մարդեղությամբ ոչ միայն մարդկանց օգուտ եղավ, այլև հրեշտակներին: Քանի որ նա է Տերը երկնավորների ու երկրավորների և երկուսի համար էլ Մի Աստված է ու Մի Թագավորություն: Նա հաշտեցրեց Հորն արարածների հետ և այսպիսով խաղաղություն հաստատեց մարդկանց ու հրեշտակների միջև:

Նաև Մատթեոս ավետարանիչն է ավելացնում. «Այս բոլորը եղավ, որպեսզի կատարվի մարդարեի խոսքը, որ ասում է. «Ասացե՛ք Սիոնի դատերը, ահա դեպի քեզ է գալիս քո Թագավորը՝ հեզ և նստած էշի ու էշի քուռակի վրա» (Մատթ. ԻԱ 4-5): Քանզի Զաքարիա մարդարեն նախապես տեսել էր երկնավոր Թագավորի մուտքը երուսաղեմ ու ասել. «Ուրախացի՛ր խնդությամբ, դո՛ւստրող Սիոնի, կանչի՛ր ցնծությամբ, դո՛ւստրդ երուսաղեմի, ահա գալիս է քո Թագավորը քեզ մոտ, քո արդար, փրկագործ ու խոնարհ Թագավորը՝ հեծած էշի, էշի քուռակի վրա» (Զաքար. Թ 9):

Բագում թագավորներ մտան Երուսաղեմ, սակայն այդ թագավորներից և ոչ ոք նստած չէր ավանակի վրա: Հակոբն ասում է Հուղային օրհնելիս. «Հուղայից իշխան չի պակասելու, ոչ էլ առաջնորդ՝ նրա կողերից, մինչև որ գա նա, Ում պատկանում են հանդերձայիները: Նրան են սպասում ժողովուրդները» (Ծննդ. Խթ 10), և դա Քրիստոսով կատարվեց: Ասում է նաև, որ նա է հեթանոսների ակնկալությունը, քանի որ Քրիստոս նաև հեթանոսներին փրկություն բերեց:

Տերն ասում է. «Ես եմ ձշմարիտ որթատունկը, և իմ Հայրը Մշակն է: Ամեն ճյուղ, որ իմ վրա է և պտուղ չի տալիս, նա կտրում է այն. և այն ամենը, որ պտուղ է տալիս, էտում է, որպեսզի առավել ևս պտղաբեր լինի» (Յովի. ԺԵ 1-2): Եվ ինչպես որթն ու ճյուղերը նույն արմատից են բխում և մեկ են, այսպես էլ մեր Տիրոջ Աստվածությունն անճառաբար է միացած մարդկությանը: Ասված է. «Իր ավանակին կկապի որթից, իսկ որթի ոստից՝ էշի քուռակին» (Ծննդ. Խթ 11): Երբ ասում է. «Իր ավանակին կկապի որթից», նշանակում է, որ Հիսուս պիտի ծնվեր հրեաների մեջ, իսկ երբ ասում է՝ «որթի ոստից կկապի էշի քուռակին», հայտնում է, որ հեթանոսները ևս կփրկվեն:

Սոփոնիա մարգարեն ավետիս է տալիս Երուսաղեմին՝ ասելով. «Հրձվի՛ր, դո՛ւստր Սիոնի, բարձրածայն աղաղակի՛ր, Երուսաղե՛մ, ուրախացի՛ր և զվարճացի՛ր քո ամբողջ սրտով, դո՛ւստր Երուսաղեմի» (Սոփ. Գ 14): Սիոնն ամրոց էր Հրեաստանում, որը Հերուս էին կոչում, և դա Երուսաղեմն էր: Եվ երբ Դավիթը կամեցավ այն գրավել, հերուսացիները փորձեցին նրան արգելել, որպեսզի Երուսաղեմը թագավորանիստ չլինի: Սակայն Դավիթը պատերազմով այն գրավեց, դարձրեց թագավորանիստ քաղաք և այնտեղ փոխադրեց Տապանակն ու խորանը: Այնտեղ Սողոմոնը տաճար կառուցեց, քահանայության պաշտոն հաստատեց, և բոլորն այնտեղ էին գալիս Տիրոջը պաշտելու: Այնտեղ էին գոհում զատկական գառը, որը Քրիստոսի օրինակն էր: Եվ բոլոր օրենքները, մարգարեություններն ու Քրիստոսի աշխարհ գալստյան օրինակներն այնտեղ էին լինում՝ ըստ այս խոսքի. «Օրենքները Սիոնից են դուրս գալիս, և Տիրոջ խոսքը՝ Երուսաղեմից» (Եսայի Բ 3):

Այդ պատճառով է մարգարեն նախապես ավետիս տալիս Երուսաղեմին երկնավոր թագավորի գալստյան մասին, որպեսզի քաղաքը պատրաստվի ընդունելու Դավիթի Որդուն: Իսկ Զաքարիա մարգարեն ասում է. «Ուրախացի՛ր և խնդա՛», որովհետև հավիտենական Աստված՝ Հոր Միածինը, խոնարհվելով մարդացավ՝ եղավ Դավիթի Որդի, և խոնարհությամբ եկավ Դավիթի քաղաքը: Եվ ավելացնում է. «Ահա դալիս է քո Թագավորը քեզ մոտ, քո արդար, փրկագործ ու խոնարհ Թագավորը՝ հեծած էշի, էշի

քուռակի վրա» (Զաքար. Թ 9): *Ոչ նրանց նման, ովքեր Դավթից հետո թագավորեցին՝ բռնությամբ, զրկանքներով և սպանությամբ, հպարտությամբ հեծնելով ձի ու ջորի, կառքեր ու երիվարներ, այլ հեղ, խոնարհ և էշի վրա նստած է գալիս վերցնելու թագավորությունը:*

Եվ Տերը երուսաղեմում՝ Սիոնում, կատարում է փրկագործության բոլոր խորհուրդները. նախ՝ իր քառասնօրյա գալստյամբ տաճար, ապա՝ այսօրվա գալստյամբ, այնուհետև՝ խաչվելով, թաղվելով, հարությամբ, համբարձմամբ, Սուրբ Հոգու էջքով, և այն մեծ պարգևով, որ իր սուրբ Մարմինն ու Արյունը տվեց սուրբ եկեղեցուն:

Մարգարեն երուսաղեմը Սիոն Սիոնի դուստր է կոչում, քանի որ երուսաղեմը պտուղն է ի, որովհետև Սիոնից սկիզբ առան նոր եկեղեցու բոլոր կարգերը, այսինքն՝ քահանայությունները, պատարագները և այլն: Նաև Սիոնում դրվեց Ավագանից ծննդյան սկիզբը: Արդարեւ, Փրկիչ է Տերը, որովհետև հաստատեց ճշմարտության խոսքը, կտրեց մեղավորների հույսը, փրկեց արդարին կուռքերին ծառայելուց և դեերի խաբեռությունից: Հեղ է, սակայն ոչնչացրեց կառքերը եփրեմի երկրից, երիվարները՝ երուսաղեմից, և խորտակեց պատերազմողի աղեղը (տե՛ս Զաք. Թ 10): Սրանք բոլորն էլ սատանայի ամբարձած թագավորության բացահայտիչներն են, որոնք խորտակեց Հիսուս՝ մեր թագավորը՝ էշով մտնելով երուսաղեմ: Եվ տեսնելով քաղաքը՝ լացեց նրա վրա և ասաց. «Գոնե այս օրերին գիտենայի՛ր դու քո խաղաղությունը. բայց այժմ ծածկվեց քո տեսողությունից. որովհետև օրեր պիտի գան վրատ, երբ թշնամիներդ քո շուրջը պատնեշ պիտի կանգնեն և պիտի պաշարեն քեզ, պիտի նեղեն քեզ բոլոր կողմերից ու հիմնահատակ պիտի անեն քեզ և սպանեն քո մեջ քո որդիներին. և քարը քարի վրա բնավ չպիտի թողնեն, քանի որ քո այցելության ժամանակը չճանաչեցիր» (Ղուկ. ԺԹ 42-44):

Ամեն ինչ գիտեր Ամենագետը: Լացով հայտնեց, որ չի ցանկանում նրա կորուստն ու ցավում է երուսաղեմի համար: Բայց պետք է կատարվեին մարգարեռությունները, որ Տիրոջ և երուսաղեմի համար ասվեցին, որ պիտի թափած լինեին երուսաղեմացիների դիակները՝ ինչպես ճանապարհի աղք, և Կեդրոնի ձորը պիտի լցվեր անթաղ մեռելներով: Արդ՝ իմանալով այս ամենը՝ շարժվեց Արարչի գութը և Հիսուս սկսեց արտասվել ախտավորների թշվառության համար:

Եվ Հիսուս մտնում է տաճար – Տերը, մտնելով տաճար, վրեժիսնդիր է լինում Օրենքի անունից, քանի որ Հրեաները կարծում էին, թե պահում են Օրենքը, և բամբասում էին Հիսուսի մասին՝ ասելով, թե նա Օրենքը լուծարող է, սակայն իրենք էին ոտնահարում Օրենքը: Տաճարը, ուր ոչ մի անսուրբ իր չպետք է գտնվեր, նրանք, հակառակ Օրենքի, ավագակաբար,

առևտրի տեղ էին դարձրել: Այդ պատճառով էլ Տերը, ցասումով լցված, հանեց վաճառականներին տաճարից և նրանց խարազանով սաստելով՝ ասաց. «Գրված է՝ իմ տունը բոլոր ազգերի համար աղոթքի տուն է կոչվելու, իսկ դուք այն դարձրել եք ավազակների որջեր» (Սարկ. ԺԱ 17): Եվ կատարվեց մարգարեական խոսքը, թե. «Քո Տան նկատմամբ իմ նախանձախնդրությունն ինձ պիտի ուտի» (Յովի. Բ 17):

Տաճարից առևտրականներին վտարելը ցույց է տալիս նաև, որ Տերը մաքրում է մեր միջի անասնական ախտերը, որպեսզի բժշկի մեր մաքի կուրությունը, կաղությունը և մեր բնության խորաններում տուն կառուցի իր Հոր համար: Իսկ այն որ սեղանները կործանեց, կանխասում էր Հին օրենքի զոհի ու պատարագների խափանումը:

Տաճարի մեջ կույրեր և կաղեր Հիսուսին մոտեցան, և Նա բժշկեց նրանց – երբ քահանաները սա տեսան, ապշեցին ու հիմարացան, քանզի երբ Դավիթը մտավ երուսաղեմ թագավորելու, հերուսացիները նրան ասացին. «Դու այստեղ չես մտնի, քանզի կույրերն ու կաղերը քեզ դեմ են կանգնել»: Սակայն Դավիթն իր զորքով գնաց երուսաղեմի վրա, գրավեց Արոնն ու նրա ամրոցը: Եվ այդ օրը Դավիթն ասաց. «Ով որ ուզում է կոտորել հերուսացիներին, թող սրով հարձակվի կաղերի, կույրերի և Դավիթի անձն ատողների վրա»: Այդ պատճառով են ասում, թե. «Կույրերն ու կաղերը չպետք է մտնեն Տիրոջ տունը» (տես Բ Թագ. Ե): Դավիթը հրամայեց սպանել կույրերին, իսկ Հիսուս աստվածաբար բժշկեց բոլորին:

Արանով պիտի ճանաչեին նրան, բայց քահանաները չանսացին, այլ ավելի էին ընդդիմանում: Նրանց հակառակ՝ մանուկները, որ տաճարի մեջ էին, աղաղակում էին ու ասում՝ «Օքնություն Դավիթի Որդուն» (Սատր. ԻԱ 15): Դրանից քահանայապետերն ու դպիրները բարկացան ու ասացին Հիսուսին. «Լսո՞ւմ ես՝ դրանք ինչ են ասում» (Սատր. ԻԱ 16): Որովհետև տեսնելով սքանչելիքները՝ զարմանքից հիմարացել էին ու սաստիկ նախանձից կործանվել:

Քահանայապետերը չէին համարձակվում հակառակ գնալ նրա հրամանին ժողովրդի պատճառով, ովքեր օրհնում էին նրա եկած թագավորությունը: Նույնիսկ ծծկեր մանուկներն իրենց մայրերի գրկից աղաղակում էին ու ասում. «Օքսաննա՛ Բարձրյալին, օրհնյա՛ լինի Նա, որ գալիս է Տիրոջ անունով. օրհնյա՛ լինի մեր Հոր՝ Դավիթի թագավորությունը, որ գալիս է: Խաղաղություն՝ երկնքում, և փա՛ռք՝ բարձունքներում» (Սարկ. ԺԱ 9, 10): Այդ պատճառով Տերն ասաց. «Ասում եմ ձեզ, որ եթե դրանք լոեն էլ, այդ քարերը կաղաղակեն» (Ղուկ. ԺԹ 40): Եվ իսկապես, աշակերտները լոեցին, և բացիցին անխոս մանուկների բերանները, և նրանք հրեղեն գորքերի հետ օրհնություններ էին երգում: Ասաց՝ «քարերը կաղաղակեն»,

որովհետև մանուկներն անխոս էին ինչպես քարերը, սակայն սա մարգարեռություն էր հեթանոսների դարձի վերաբերյալ, ովքեր անհավատությունից կարկամել էին ինչպես քարը, բայց Ավագանով ոռոգվելուց հետո դարձան Աստծու փառաբանիչներ: Իսկ գործով սա կատարվեց Քրիստոսի հարությամբ, որովհետև աշակերտների փախուստից հետո բացվեցին կնքված գերեզմանները, և երկրաշարժից պատովեցին վեմերը, որոնք մեծածայն աղաղակեցին՝ Աստված դավանելով մեռելներից հարություն Առածին, ինչն այսօր մանուկները Տիրոջն օրհնաբանելով կատարեցին: Այդ պատճառով էին չարացած քահանայապետերն ասում. «Լսո՞ւմ ես՝ դրանք ինչ են ասում» (Մատթ. ԻԱ 16):

Եթե Տերը հարցներ, թե ի՞նչ են ասում, ապա նրանք կպատասխանեին. «Դու Քո Անձն Աստված և Աստծու Որդի ես համարում, իսկ դրանք, որ Աստծու զորությամբ խոսեցին, այժմ Քեզ մարդ և մարդու որդի են համբավում՝ ասելով. «Օրհնություն Դավիթի Որդուն», քանի որ Դավիթն էլ մարդ էր»: Եվ Տերն իմանալով նրանց միտքը, որ պատրաստ էին չարախոսելու մանուկներին, Դավիթի մարդարեռությամբ պատասխանեց նրանց. «Դուք չե՞ք կարդացել, թե՝ երեխաների ու ծծկերների բերանով օրհնություն կատարեցիր»: Այս լսելով՝ բոլորն էլ պապանձվեցին:

Մանուկները, ովքեր տաճարում օրհնում էին Քրիստոսին, այն քառասուն օրական անդրանիկներն էին, որ ըստ Մովսիսական օրենքի բերվել էին տաճար՝ Տիրոջը ներկայանալու: Եվ երբ տեսան Հիսուսին տաճար մտնելիս, ճանաչեցին, որ նա է Տերը տաճարի և Օրենքը Տվողը բոլոր արարածներին, և իմացան, որ այսուհետև դադարելու է անդրանիկ արարածների ընծայումը տաճարին, քանզի ճշմարիտ Անդրանիկը մտավ տաճար:

Մանուկներն աստվածաբանում էին ու քարոզում Անժամանակ Աստծու՝ բարձունքներից գալը: Սրանով նաև ցույց տրվեց Աստծու զորությունը, Ով սկզբում ոչնչից մարդկանց գոյացըց, իսկ այժմ նրանց անխոս լեզուներն արձակեց: Սա նաև կատարվում էր առաքյալների հավատը զորացնելու և քաջալերելու համար, որոնց ապագայում սպասում էին բազում հոգսեր, թե ինչպես պիտի առանց ուսման արժանանան իմաստունների, դպիրների, կամ էլ բիրտ ու հանդուգն բարեզով հեթանոսների հավանությանը: Եվ առաքյալները հասկացան, որ եթե Հիսուս արժանացավ ավանակի տերերի հավանությանը, դյուրությամբ նստեց դեռևս չհեծած ավանակի վրա և բացեց նորածին մանուկների բերանները՝ իրեն օրհնաբանելու, նույն զորությամբ կարող է բացել նաև իրենց բերանները՝ քարոզելու, ուսուցանելու և պապանձեցնելու հեթանոսների կարծեցյալ իմաստուններին:

Դարձյալ՝ առաքյալներին հուսագրելու համար ասաց. «Իսկ երբ ձեզ տանեն ժողովարանների, կառավարիչների և իշխանավորների առաջ, մի՛ մտահոգվեք, թե ինչպես կամ ինչ պատասխան պիտի տաք և կամ ինչ պիտի ասեք, որովհետև Սուրբ Հոգին նույն ժամին կսովորեցնի ձեզ, թե ինչ պետք է խոսել» (Սատթ. ԺԲ 11-12), այսինքն՝ ինչպես այսօր մանուկները խոսեցին:

Սրանով նաև հրեաներին էր հանդիմանում, ովքեր գիտեին օրենքներն ու մարդարեռությունները, սակայն չէին հավատում: Սա նաև հեթանոսների օրինակն էր, ովքեր անգետ էին Քրիստոսից ու քարացած, սակայն Հոգու գորությամբ ծանոթացան Քրիստոսի հավատին ու եղան Նրա օրհնաբանիչները:

Հարց. – Իսկ ի՞նչ է նշանակում՝ «Դղրդաց ամբողջ քաղաքը»:

Պատասխան. – Ինչպես Տիրոջ ծննդյան ժամանակ խռովվեց Երուսաղեմի ողջ ժողովուրդը, այդպես էլ Նրա՝ գեպի մահը գնալիս եղավ: Երբ տեսան Նրան, մանավանդ, մանուկների կողմից փառավորված ու բարեբանված, քաղաքը՝ քահանայապետերի, դպիրների ու փարիսեցիների հետ միասին, չարությամբ դղրդաց: Հավատացյալներն ու բարքով բարիները «դղրդում» էին փառաբանելով, իսկ անհավատ փարիսեցիները, ովքեր բռնվել էին նախանձով, «դղրդում» էին չարությունից: Այդ պատճառով էլ Հիսուս թողնելով նրանց՝ հեռացավ, որպիսզի խռովերով առավել ևս չբորբոքի նրանց նախանձն ու զայրությը: Իսկ երեկոյան կողմ գնաց Բեթանիա՝ իր հանգստյան տունը, որտեղ Աստվածաբար կործանել էր մահը և թագավորեցրել կյանքը:

Դռնբացեք

Դռնբացեքի կարգը ունի Տիրոջ Երկրորդ գալստյան, աշխարհի վախճանի և Ահեղ դատաստանի խորհուրդը: Ծաղկագարդի օրը, իններորդ ժամին՝ օրվա և ժամար սահմանված կարգը կատարելուց հետո, ժողովուրդը հավաքվում է գավթում, եկեղեցու փակ դռան⁵ առջև, և ավագագույն քահանաներից մեկը, մոտենալով եկեղեցու դռանը, բախում է այն ու բարձրածայն սաղմոսելով ասում. «Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն...», որի փոխն է. «Խոստովան եղերութ Տեառն, զի բարի է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա», մինչև այն պահը, երբ ասվում է. «Բացէք ինձ զդրունս արդարութեան» (Սաղմ. ճժէ):

⁵ Այժմ, որոշ տեղերում, միայն եկեղեցու խորանի վարագույրն է փակվում, և արարողությունը կատարվում է վարագույրի առջև:

Քանի որ կարգը ունի երկրորդ գալստյան խորհուրդը, դպիրները երգում են «Ծնորհեա մեզ, Տէ՛ր» շարականը, որով Տիրոջից խնդրում ենք, որ բացի մեր առջև ողորմության դուռը, չնորհի մեզ արթնություն, պայծառացնի մեր Հոգիների լապտերները և արժանացնի դատաստանի օրը կանգնել իր աջ կողմում, որպեսզի իմաստուն կույսերի հետ մենք ևս մտնենք Երկնային Փեսայի առաջաստը ու դրսում չմնաք, ինչպես հիմար կույսերը։ Ապա քահանան ասում է. «Բա՛ց մեզ Տեր. բա՛ց մեզ Տեր. բա՛ց մեզ Տեր ողորմության դուռը, որի համար ողբալով կանչում ենք քեզ»։

Ներսից մի քահանա հարցնում է. «Ո՞վ են սրանք, որ բացեմ, Տիրոջ դուռն է սա, և արդարները միայն այս դուռով պիտի մտնեն»։ Դուռը Տիրոջն է, իսկ բախողները՝ Տիրոջ ծառաները։ Այս խոսքի առաջին մասը՝ «Ո՞վ են սրանք, որ բացեմ», ըստ Ավետարանի հետեյալ խոսքի է. «Այն բանից հետո, երբ Տանտերը մտնի և դուռը փակի, դուք, դրսում կանգնած, կսկսեք դուռը բախել և ասել. «Տէ՛ր, Տէ՛ր, բա՛ց մեզ համար»։ իսկ նա պատասխանելով՝ կասի ձեզ. «Զգիտեմ, թե որտեղից եք»։ Այն ժամանակ կսկսեք ասել. «Մենք Քո առաջ կերանք և խմեցինք, և Դու հրապարակներում ուսուցանեցիր»։ Եվ Տանտերը կասի. «Ասում եմ՝ ձեզ չգիտեմ, թե որտեղից եք. հեռացե՛ք Ինձնից դուք՝ բոլոր անիրավ մշակներդ» (Ղուկ. ԺԳ 25-27)։ Իսկ Մատթեոսի ավետարանում հետեյալ կերպ է ասված՝ «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզ չեմ ճանաչում։ Ես ձեզ երբեք չեմ ճանաչել, հեռո՛ւ կացեք Ինձանից դուք ամենքդ, որ անօրինություն եք գործում» (Մատթ. ԻԵ 12, Է 23)։ Եվ այն ժամին, երբ այս խոսքերը Տիրոջից կլսենք, մեծ թշվառություն կպատի մեզ։

Հարց. – Իսկ ինչո՞ւ Տերը դուռը չի բացում իր ծառաների առջև, մասնավանդ որ խոստացել է. «Բախսեցե՛ք, և կըացվի ձեզ համար» (Ղուկ. ԺԱ 9):

Պատասխան. – Որովհետեւ դուռը փակվել է մեր անուղղելի վարքի պատճառով՝ ըստ այս խոսքի. «Ինչո՞ւ ինձ «Տէ՛ր, Տէ՛ր» եք կոչում, իսկ ինչ ասում եմ՝ չեք անում» (Ղուկ. Զ 46)։ Եվ քանի դեռ մենք չենք ընթանում Տիրոջ պատվիրանների համաձայն, մեզ համար փակ է Երկնքի արքայության դուռը։

Այս դուռը խորհրդանշում է նաև մեր սրտի դուռը, որը պետք է բացել Քրիստոսի առջև, Ով միշտ բախում է այն՝ համաձայն իր խոսքի. «Ահավասի՛կ Ես դուան առաջ եմ և բախում եմ. եթե մեկն ականջ դնի իմ ձայնին և բաց անի դուռը, կմտնեմ նրա մոտ և կընթրեմ նրա հետ, և նա՝ ինձ հետ» (Յայտ. Գ 20)։ Տերը, մտնելով մեր սրտերը, մաքրում է այն և սուրբ օթևան պատրաստում Ամենասուրբ Երրորդության համար։ Քանի դեռ մեր սրտերը բաց չեն նրա առջև, չի բացվի և արքայության դուռը մեր առջև։

Եվ դատաստանի օրը Տերը իրավամբ կասի մեղ. «Ես ձեզ երբեք չեմ ճանաչել, հեռո՛ւ կացեք Ինձանսից»:

Իսկ խոսքի երկրորդ մասը Դավիթ մարգարեինն է. «Տիրոջ դուռն է սա, և արդարներն այս դռնո՛վ պիտի մտնեն» (Սաղմ. ճժէ 20): Եվ ո՞վ է մարգանցից արդար ու անմեղ: Շատ քչերը՝ երեմիան, Հովհաննես Մկրտիչը և սուրբ Կույս Մարիամը, ովքեր գեռ իրենց մոր որովայնում մաքրվեցին և արդար ու սուրբ ծնվեցին: Իսկ մեզանից ոչ ոք չի կարող պարծենալ, թե սուրբ սիրտ ունի: Հովհաննես ավետարանիչն ասում է. «Եթե ասենք՝ մենք ոչ մի մեղք չունենք, մենք մեզ ենք խարում, և ճշմարտություն չկա մեր մեջ... Եթե ասենք՝ չենք մեղանչել, սուտ ենք հանում Նրան, և Նրա խոսքը մեր մեջ չէ» (Ա Յով. Ա 8, 10): Այսօր մենք Մկրտության ավազանով մաքրվում ենք սկզբնական մեղքից, հետևաբար՝ կարող ենք մտնել այս դռնից ներս, բայց քանի որ մկրտությունից հետո աղտոտվել ենք ներդործական մեղքերով, գուռը փակվել է մեր առջեւ:

Այս պատճառով դրսի քահանան ասում է. «Ոչ միայն արդարներն են մտնում, այլև մեղավորները՝ խոստովանությամբ ու ապաշխարությամբ արդարացած»: Այսինքն՝ նրանք, ովքեր ապաշխարությամբ թողություն են ստացել մկրտությունից հետո գործած մեղքերից: Եթե այսօր բախելով՝ արտավալից թախանձենք, եթե ոչ բարեկամության, ապա գոնե թախանձանքի համար Տերը կտա մեզ հարկավորը (Մեն Դուկ. ԺԱ 8), ինչպես և Ինքն է ասում. «Խնդրեցե՛ք, և Աստծուց կտրվի ձեզ, փնտրեցե՛ք, և կգտնեք, բախեցե՛ք, և կբացվի ձեզ համար» (Դուկ. ԺԱ 9-10):

Այնուհետև ներսի քահանան ասում է. «Սա է երկնքի դուռն ու տրտմության հովիտը, արդարների հանգիստը և մեղավորների քավարանը, նաև Քրիստոսի արքայությունը, հրեշտակների բնակարանը, սրբերի ժողովարանը, ապավինության տեղը և Աստծու տունը»:

Սրան դրսի քահանան պատասխանում է. «Այդ բոլոր խոսքերը ճշմարիտ են սուրբ Եկեղեցու համար, որը մեր անարատ մայրն է, քանզի Եկեղեցու Ավազանից ենք ծնվել որպես Լույսի և Ճշմարտության որդիներ, և սա է մեր կյանքի հույսը: Սրանով ենք գտնում փրկություն մեր հոգիների համար, սա է մեր արդարության ճանապարհը և սրանով ենք ելնելու Քրիստոսի մոտ»: Ապա խնդրում է, որպեսզի Տերը բացի ողորմության դուռը նրանց առջև, ովքեր ողբալով կանչում են իրեն:

Դրան ներսից պատասխանում են, որ աչա տեսնում են Քրիստոսին՝ բազմած սուրբ Սեղանին, Ով գեպի իրեն է կանչում իր կամքը կատարողներին՝ համաձայն իր խոսքի. «Ուր Ես եմ, այնտեղ կլինի և Իմ ծառան» (Յովի. ԺԲ 26):

Դրսինները ասում են, որ իրենք գնվել են Աստծու Որդու անապական Արյամբ, և ապա փառաբանում են Տիրոջ սոսկալի գալուստը:

Ներսից ասում են նաև, որ Աստծու ահավոր փողը գոչելով կանչում է. «Ահա՛, Փեսան գալիս է, Նրան դիմավորելո՞ւ ելեք» (Մատթ. ԻԵ 6):

Ինչին դրսի քահանան երկյուղած պատասխանում է. «Ահա՛ ես և իմ մանուկները, որ Աստված ինձ պարզեց (Եսայի Ը 18), բոլորս կանք և ակնկալում ենք տեսնել Քրիստոսին և լսել Նրա երանավետ խոսքը»: Եկեղեցականից արժանապես և վայելչաբար «ահա՛ ես» ասելու համար պահանջվում է սրբություն և Աստծու հետ միավորություն: Քահանան մանուկներ ասելով հայտնում է, որ իր հետ սպասողները մանուկների նման անբիծ են ու անարատ, ինչպես Տերն ասաց՝ եթե մանուկների նման չլինենք, արքայություն չենք մտնի (տես Սարկ. Ժ 15):

Ապա ներսից ազդարարում են, որ Արարիչը կանչում է՝ ասելով. «Եկե՛ք, իմ Հոր օրհնյալնե՛ր, ժառանգեցնե՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը» (Մատթ. ԻԵ 34):

Իսկ դրսի քահանան դարձյալ խնդրում է բացել արդարության դուռը, որպեսզի ներս մտնի և խոստովանի Տիրոջը: Այս խոսքերն արտասանելուն պես բացվում է եկեղեցու դուռը, և ժողովուրդը հոգեսոր ուրախությամբ և շարականի երգեցողությամբ ներս է մտնում՝ խնդրելով Տիրոջը, որ իրենց ևս արժանացնի իր սրբերի համար պատրաստված լուսեղեն հարկին: Սա խորհրդանշում է Քրիստոսի հետ արդարների արքայություն մտնելը: Ապա բեմից ընթերցվում է Հովհաննեսի ավետարանը, ուր ասվում է. «Ես որպես լույս եկա աշխարհ, որպեսզի ամեն ոք, ով ինձ հավատում է, խավարում չմնա» (Յովի. ԺԲ 46): Ավետարանի ընթերցումը խորհրդանշում է Տիրոջ վարդապետելը, նաև՝ սրբերի աստվածախոսությունը և մեր սովորելը:

Հավատացյալը, ապրելով Դոնքացեքի խորհուրդը և ականատես լինելով ներսի ու դրսի քահանաների երկխոսությանը, առավել իրական է պատկերացնում Տիրոջ երկրորդ գալստյան և Ահեղ դատաստանի գալիք օրը և առավել ևս է ձգտում ապաշխարությամբ ու խոնարհությամբ ապրել իրեն տրված կյանքի մնացած օրերը:

ԱՎԱԳ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

Օրվա երեքսրբյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ Եկիր և զալոց ես, ողորմեա' մեզ»:

Ավագ Շաբաթի խորհրդաբանությունը տարբերվում է սուրբ քառասնորդաց պահքի խորհրդաբանությունից։ Սուրբ քառասնորդաց պահքն ավարտվում է Ղազարոսի հարությամբ, իսկ դրան հաջորդող զատկական շաբաթի ուժի օրերը համապատասխանում են արարչության յոթ օրերին և ուժերորդ անվախճան դարին։

Այս շաբաթը կոչվում է մեծ կամ ավագ, քանի որ պարունակում է չորս մեծ խորհուրդ։ Նախ աշխարհի արարման առաջին շաբաթի խորհուրդը, ապա՝ այս կյանքի յոթ դարերի խորհուրդը, այնուհետև՝ Քրիստոսի չարչարանքների շաբաթի խորհուրդը, և վերջապես՝ վերջին օրվա ու աշխարհի վախճանի խորհուրդը։

Այս պատճառով էլ Ծննդոց գրքի առաջին գլուխները տարին երեք անգամ ենք ընթերցում. առաջին անգամ՝ Տիրոջ Ծննդյան օրը, քանի որ Նա, Ով սկզբում նախամայր Եվային դատապարտեց՝ ասելով. «Յավերով երեխաներ պիտի ծնես», եկավ ու ծնվեց սուրբ Կույս Մարիամից ու վերացրեց անեծքի դատակնիքը, երկրորդ անգամ՝ այսօր, քանի որ այս շաբաթն Աստծու արարչության օրերի առաջին շաբաթն է, իսկ երրորդ անգամ՝ Զատկի ճրագալույցին, քանի որ այդ օրն իր պատկերով Աղամին ստեղծող Արարիչը վերստին նորոգում է մարդուն ու առաջնորդում Դրախտ։

Արարօնական երկրորդ օրը

Նախ տեսնենք, թե ինչպես է, որ այս շաբաթն ունի արարչության առաջին շաբաթվա խորհուրդը, որի ընթացքում գոյացան բոլոր արարածները։ Արդ՝ «Արմավեներին օրը» խորհրդանշում է արարչության առաջին օրը, երբ Աստված արարեց երկինքն ու երկիրը։ Իսկ Ավագ երկուշաբթի օրը խորհրդանշում է արարչության երկրորդ օրը, երբ Աստված արարեց հաստատությունը, ինչն իմաստունները զատելով մյուս չորս տարրերից՝ հինգերորդ տարրը և եթեր անվանեցին։ Հաստատությունը գոյացավ արարչության երկրորդ օրը, երբ ջրերը բաժանվեցին միմյանցից՝ ըստ Աստծու խոսքի. «Թող հաստատություն առաջանա ջրերի միջև, և ջրերը թող բաժանվեն ջրերից։ Եվ եղավ այդպես» (Ծննդ. Ա 6): Եվ ջրերը, որ սփռվել էին երկրի վրա, Աստծու հրամանով, միջից պատովելով բաժանվեցին ու իրարից հեռացան, սակայն եղրերում չբաժանվեցին միմյանցից, այլ մեկմեկու

միահյուսված, շրջան կազմելով՝ անբաժան մնացին, ինչպես տիկը, որ փչվելիս ուռչում է, և կողերը հեռանում են միմյանցից՝ առանց իրարից բաժանվելու: Երկրից ջրի հեռանալով, խավարը, որ անդունդի վրա էր, տարածվեց ջրերի միջև, և լույսն իր սահմաններում վանեց խավարը, և հաստատությունը, որը ջրերի միջև էր, Արարչի կողմից երկինք անվանվեց: Եկ որպեսզի այս գգալի ու նյութական աշխարհը չայրվի աննյութ երկնքի արփիափայլ ճառագայթներից, որը բնակավայրն է անմարմին անմահների՝ սուրբ հրեշտակների, վերևի ջրահարկը գմբեթաձև կամարակապ խորան դառնալի աշխարհի վրա՝ հովանի լինելով երկրին և առանց ծանրանալու հաստատության վրա: Ջրային կամարը մի տեղ նոսր և կամ մեկ այլ տեղում խիտ չէ, այլ ամբողջովին համասեռ է, միատեսակ, և' վերեռում, և' ներքեռում, իսկ հրեղեն երկինքը, որն առաջին օրն արարվեց, դարձավ կամար ջրերի վրա: Կամար դարձավ նաև հաստատությունը, ինչը գտնվում է այս երկու կամարներից ցած, և այս կամարները միմյանցից հեռու են: Իսկ հրեշտակների կայաններն այս ջրերի վերեռում են: Նրանցից շատերն իջնում են ջրերից ներքեւ՝ մարդկանց պահպանության համար, և դարձյալ վեր բարձրանում՝ Աստծուն պաշտելու ու երկրպագելու, և պատմում են Տիրոջը մարդկանց գործերի մասին:

Աստված երկինքը կատարյալ կազմեց, և նրա բնակիչները՝ հրեղեն զորությունները, ստեղծվեցին երկնքի ստեղծումով, և երկնքի կատարելությունը ցույց է տալիս Աստծու անբավ զորությունը: Իսկ երկիրը Տերն աստիճանաբար բերեց կատարելության, և այդպես արեց, որպեսզի մեզ ցույց տա իր հայրական խնամքը, որ տածում է մեր հանդեպ:

Երկրորդ դարի Խորչուրդը

Ավագ երկուշաբթին խորհրդանշում է երկրորդ դարը, երբ ապականվեցին բոլոր մարմինները՝ ըստ այս խոսքի. «Մեկ մարդու անհնապանությամբ շատ մեղավորներ եղան» (Յոն. Ե 19): Ապականությունը ընդգրկեց ամբողջ տիեզերքը, և միայն ենոքը հաճելի եղավ Աստծուն ու Աղամի փոխարեն երկինք տեղափոխվեց: Աղամն ուտելով պտուղը՝ վտարվեց Դրախտից, իսկ ենոքը չուտելով երկրի պտուղը՝ մտավ Դրախտ ու անմահություն: Երկրորդ դարը ավարտվում է նոյի կյանքի երեք հարյուր հիսունութերորդ տարում:

Այս օրերը նաև Քրիստոսի չարչարանքների օրերն են, երբ Տերը գալով երուսաղեմ՝ ճանապարհին անիծեց թղենին, և մտնելով տաճար՝ ամոթով թողեց դպիրներին ու փարիսեցիներին, և շատ բաներ ասաց իր մասին:

Տեսնենք նաև, թե ինչպես է Ավագ շաբաթը համապատասխանում վերջին օրվա և վախճանի խորհրդին: Երբ Տերը եկավ Բեթանիա՝ «սգի ու չարչարանքների տուն», դա Նրա առաջին գալուստն էր, իսկ Ծաղկազարդի կիրակին խորհրդանշում է Նրա Երկրորդ գալուստը, երբ աշխարհը դղրդալով սասանվելու է և մեռելները գուրս են գալու գերեզմաններից ու կանգնելու են Քրիստոսի առջև: Նրանցից ոմանք ուրախանալու են Քրիստոսի պատվով ու փառքով, ինչպես ծերերն ու մանուկները, իսկ ոմանք էլ տիրելու են, ինչպես քահանաներն ու դպիրները: Ավագ Երկուշաբթի օրը Տերն անիծեց անպտուղ թզենին, ինչը մեղավորների օրինակն է, ովքեր անիծվելու են վերջին օրը Աստվածային Հրամանով. «Անիծյալնե՛ր, գնացե՛ք Ինձնից Հավիտենական կրակը, որ պատրաստված է սատանայի և իր հրեշտակների համար» (Մատթ. Իւ 41):

Կատու Ավագ Երկուշաբթի (Մատթ. Իւ 17-27)

Արդ՝ երեկ տոնեցինք մեր Տիրոջ Հրաշափառ գալստյան օրը: Իսկ այսօր Նրա հետ տաճար եւնենք Կեդրոնի ձորի այն կողմից, որը Զիթենյաց լեռան ստորոտն է, ուր Տերը հանգրվանում էր իր սուրբ աշակերտների հետ, իսկ ցերեկը ժողովրդին ուսուցանում տաճարում, որպեսզի մեզ սովորեցնի, թե երբ ժողովուրդը խաղաղվի աշխարհածուփ զբաղմունքներից և միջօրեին մոտենա ու խնդրի աստվածային լուսազարդ պայծառություն, ապա պետք է գնալ նրանց մեջ ու վարդապետել օգտակար խրատներով: Իսկ երբ գիշերային ու աշխարհական գետնաքարշ հոգսերը նրանց պաշարեն, ապա պետք է առանձնանալով փախչել Զիթենյաց լեռան ստորոտը և այնտեղ օթեանել, որը նշանակում է վեր բարձրանալ Երկրաքարշ հոգսերից և հոգեսոր երգերով հայածել մեր մտքի խավարը և աստվածավանդ ձեխով օծել մեր գլուխները, որպեսզի մենք ևս չբռնվենք աշխարհական ծփանքներով, ինչը խավարեցնում է մեր խորհուրդները:

Մատթեոսը գրում է. «Եվ նրանց թողնելով՝ ելավ քաղաքից դուրս, դեպի Բեթանիա. և այնտեղ գիշերեց» (Մատթ. Իւ 17) – Բեթանիա գնալը խորհրդանշում է Համբարձման օրը, երբ Հիսուս իր աշակերտների հետ գնաց Բեթանիա, նրանց օրհնեց ու Երկինք Համբարձվեց: Իսկ առավոտյան քաղաք վերադառնալը խորհրդանշում է Նրա Երկրորդ գալուստը և մարդկանցից բարի գործեր պահանջելը: Եվ եթե որևէ մեկը բարի գործեր չունենա, նրան անիծելով ձախ կողմ է ուղարկելու:

Եվ առավոտյան երբ քաղաք վերադարձավ, քաղց զգաց – Փրկագործի համար մեր կրքերն անհրաժեշտություն չէին: Տերը դրանք կրում էր

կամավոր, որպեսզի մեզ կյանք տա: Քանզի երբ կամենում էր, այնժամ հրաման էր տալիս քաղցին ու ծարավին, և կրքերը մոտենում էին իր Աստվածախառն մարմնին: Այդպես էլ երբ կամեցավ, այն ժամանակ մահացավ և հարություն առավ: Սա է տարածամ ու անսովոր ժամին քաղց գգալու բացատրությունը:

Եվ ճանապարհի վրա մի թղենի տեսնելով՝ եկավ դեպի այն և նրա վրա ոչինչ չդտավ, այլ միայն՝ տերև – Բոլորը գիտեն, որ մարտ ամսին թղենու վրա պտուղ չի լինում: Սակայն Քրիստոս՝ մեր ամենատես ու հոգատար Քավչապետը, իր գորությամբ «անգիտանում» է, ինչպես մի ժամանակ Դրախտում ասաց. «Ո՞ւր ես, Ադամ»: Նաև առաջին սպանողին ասաց. «Ո՞ւր է Աբելը՝ Քո եղբայրը»: Անգիտությամբ է վարվում, որպեսզի կատարվեն աստվածային նշանները, քանի որ թղենին հրեաների օրինակն է, ինչպես և «Զար մշակների» առակում նրանց այդի է անվանում (տե՛ս Մատթ. Իւ 34:39): Իսկ առաքյալը, հռոմեացիներին իր ուղերձում (տե՛ս Հոռմ. ԺԱ 17), նրանց ընտանի ձիթենի է անվանում:

Այսեղ հրեաներին առակով թղենի է անվանում, որոնց նախապես Օրենքով ու մարդարեներով ամրացրել էր: Իսկ այժմ, ժամանակների վախճանին, եկել էր ստանալու նրանցից բարի գործերի պտուղները, սակայն չգտնելով՝ հարվածեց ու գոսացրեց նրանց դալարությունը: Իսկ երբ ծառն առանց չորանալու գոսանում է, ապա հրո ճարակ է դառնում: Նույնպես և հրեաները՝ այրվելով կործանվեցին հռոմեացիների կողմից, ովքեր էլ որպես ավար վերցրին նրանց սրբությունը, նրանց սուրբ քաղքը հիմնահատակ քանդեցին և նրանց պոկելով արմատներից՝ գերության մատնեցին:

Եվ թղենուն ասաց. «Այսուհետև քեզնից հավիտյան պտուղ թող չլինի – Քանի որ, իջնելով երկնքից ու գալով հրեաների մոտ, Հիսուս նրանցից պահանջեց Աբրահամի հավատն ու գործերը, բայց գտավ միայն որդեգորության անունը, որը տերևն է, և ո՛չ՝ պտուղը: Այդ պատճառով վերցրեց նրանցից նաև «հրեա» անունը:

Տերը նախապես հրեաներին ընտրեց որպես իր ժողովուրդ և նրանց միջոցով կամեցավ հավատ փնտրել նաև հեթանոսների մեջ, սակայն հրեաները հակառակվեցին նրա Աստվածությանը: Եվ Տերն անիծեց թղենին՝ ասելով. «Այսուհետև քեզնից հավիտյան պտուղ թող չլինի»: Այսինքն՝ չլինի ո՛չ մարդարե ու աստվածախոս և ո՛չ զոհ, պատարագ ու ընծած: Կատարվեց Դանիելի մարդարենությունը, թե վաթսուներկու յոթնյակից հետո պիտի վերցվի օծությունը:

Եվ նույն պահին թղենին չորացավ – Թղենին նույն պահին չորացավ, որպեսզի ճանաչենք նրան, Ով սկզբում օրհնեց զեռուններին ու ասաց, որ

աճեն ու բազմանան և լցնեն երկիրը, և այդ հրամանն անմիջապես կատարվեց: Անմիջապես կատարվեց նաև այն խոսքը, որ ասաց Տերը մեր նախահորը. «Թող անիծյալ լինի երկիրը քո արածի պատճառով: Փուշ ու տատասկ թող աճեցնի քեզ համար երկիրը» (Ծննդ. Գ 17):

Գոսացած թզենին օրինակն է նաև այն թզենու, որից Աղամն ու Եփան տերևներ պոկեցին՝ ծածկելու համար իրենց մերկությունը: Արդ՝ այսօր Տերը գոսացնում է թզենին, քանի որ, այսուհետեւ, մարդկային ցեղն այլևս կարիք չունի տերևով ծածկելու իր ամոթը, որովհետեւ սուրբ Ավագանի միջոցով զգեստավորվեց Տիրոջ պատմուճանով՝ ըստ այս խոսքի. «Դուք բոլորդ, որ ի Քրիստոս մկրտվեցիք, Քրիստոսով զգեստավորվեցիք» (Գաղատ. Գ 27):

Եվ դարձյալ՝ քանի որ սաստիկ փորձություններ էին սպասվում երանելի առաքյալներին՝ Քրիստոսի մատնվելը քահանաների ձեռքը և Նրա ձաղկումն ու մահը, այդ պատճառով, մինչ տագնապի այդ հանդեսը, Տերը չորացրեց թզենին, որպեսզի երբ տեսնեն այդ ամենը, հիշեն Վարդապետի աստվածային զորությունները, քաջալերվեն և վեր մնան փորձություններից:

Դարձյալ՝ մեր Տեր Հիսուս Քրիստոս այլ «խոռվություն» չգործեց երկրի վրա բացի թզենու տիրոջը և գերգեսացի խոզատերերին տրտմեցնելուց, որոնց խոզերին դևերը ծովում խեղդեցին (տես Մատթ. Ը 32): Քանզի ծովեղերքի բոլոր կողմերից ու այլ շրջաններից բոլոր հրեաներն ու հեթանոսները գալիս էին Նրան լսելու, տեսնելու Նրա սխրալից նշաններն ու բժշկությունները, սակայն գերգեսացիները, ովքեր հարուստ էին, շահի հետեղ, խոզապահ, ու անարվեստ ու տվայտող, չեկան տեսության՝ անտեսելով Հիսուսին վերաբերվող այդ զարմանալի լուրերը: Տերն էլ, մարդասիրաբար կամենալով կարճել նրանց ագահությունը, ամբողջապես ջնջեց նրանց սնոտի հույսը: Իսկ ծառի տերն անտեսել էր Օրենքը, որ ասում է. «Երբ քաղես քո այդին, քաղից հետո ճռաքաղ չանես. դա թող պատկանի եկվորին, որբին ու այրուն» (Բ Օրենք Ի՛ 18): Այդ պատճառով բոլորիս Տերն ամբողջ ծառը տուգանքի ենթարկեց, որպեսզի ծառի տերը երկյուղ ունենա Օրենքից:

Երբ աշակերտներն այս տեսան, զարմացան ու ասացին. «Ինչպե՞ս թզենին իսկույն չորացավ – Քանի որ տունկը, երբ հատում են արմատից, անմիջապես չի չորանում. այլ նախ՝ մի քանի օր թառամում է, հետո՝ կամաց-կամաց չորանում և մերկանում կեղեցից: Իսկ այդ թզենին Տիրոջ հրամանով անմիջապես արմատից չորացավ: Այդ պատճառով էլ աշակերտները զարմացել էին:

Չորացրած թգենու պատմությունը այլ խորհուրդներ ևս ունի: Այն ցույց է տալիս, որ Տերը միշտ չէ, որ գործում էր ողորմելով, այլ նաև պատժում էր, և դա հայտնի է հետեւյալից. նախ՝ խոզերին ծովում խեղդելուց, երկրորդ՝ խաչելության ժամանակ վեմերը պատռելուց ու երկրը շարժելուց, և վերջապես՝ թգենին չորացնելուց:

Սրանով Տերը ցույց տվեց, որ ինքն իր կամքով տվեց իր Անձը չարչարվելու ու մահանալու՝ մեր փրկության համար, ապա թե ոչ՝ ինչպես չորացրեց թգենին, այնպես էլ խաչողներին կարող էր սպանել։ Նաև հայտնում է, որ ինքն իշխան է ու Տեր և իր մի խոսքով կարող է տնկել ու պոկել։

Անպտուղ թգենին նրանց օրինակն է, ովքեր առաքինության միայն արտաքին տեսքն ունեն և ո՛չ՝ պտուղը։ Այդպիսիների համար ասում է. «Նրան կսպանի և կեղծավորների վախճանին կարժանացնի. այնտեղ կլինի լաց ու ատամների կրծտում» (Մատթ. 17. 51):

«Հիսուս պատասխանեց և ասաց նրանց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե հավատ ունենաք և չերկմտեք, ոչ միայն կանեք այդ թգենուն պատահածը, այլ թեկուզ և այդ լեռանն ասեք՝ ելի՞ր ու ծովն ընկիր, այն կկատարվի»։ Ասելով, թե այն ամենը, ինչ կխնդրեք հավատով, կստանաք, նրանց թելադրում է աղոթել։ Տերն ուսուցանում էր ոչ այնպես, ինչպես դպիրներն էին սովորեցնում, և ո՛չ էլ՝ ինչպես մարդարեները, ովքեր խոսում էին ժողովրդի հետ ինչպես Աստծու պատգամավորներ, այլ իրենից էր սովորեցնում ժողովրդին՝ իշխանությամբ ու տիրաբար, և Սուրբ Հոգին բացում էր ունկնդրողների լսողությունը, ամենուր տարածելով աստվածային վարդապետության խոսքերը, և հանգրվանում բոլորի լսողության մեջ՝ և' խուլերի, և' մանուկների, և' անդեսների։

ԱՎԱԳ ԵՐԵՔՆԱԹԻ

Օրվա երեքսրբյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ եկիր և գալոց ես, ողորմեա' մեզ»: Այսօր, Երեկոյան ժամերգությանը, երբ կարդացվում է տասը կույսերի առակը, տասը նանուկներ՝ խորհրդանշելով տասը կույսերին, վառվող մոմերով կանգնում են Ավետարանի առջև: Ապա նրանց թերթիկներ է տրվում: Այդ թերթիկներից հինգում խաչի նշան կա, իսկ հինգում՝ ոչինչ: Նրանք, ովքեր վերցրել են դատարկ թերթիկները, մարում են իրենց ձեռքերի մոմերը՝ ի նշան հիմար կույսերի հանգած լապտերների: Ավագ երեքաբրին հայտնապես խորհրդանշում է Քրիստոս Դատավորի Երկրորդ գալուստը և Վերջին դատաստանը:

Արարօնայան երրորդ օրը

Ավագ երեքաբրին պատկերն է արարչության երրորդ օրվա և երրորդ դարի: «Աստված ասաց. «Թող երկիրն իր տեսակի ու իր նմանության սերմը պարունակող դալար բույս և իր տեսակի ու իր նմանության սերմը պարունակող, իր տեսակի միրգ տվող պտղաբեր ծառ աճեցնի երկրի վրա»: Եվ եղավ այդպես» (Ծննդ. Ա 11): Զգալի ծառերի հետ միասին Աստված տնկեց նաև իմանալի ծառեր, այսինքն՝ արդարների ու մարգարեների դասերը, ինչպես վկայում է Պողոսը. «Աստված ընտրեց մեզ Քրիստոսի միջոցով նախքան աշխարհի արարումը» (Եփես. Ա 4): Եվ ինչպես սուրբ առաքյալների ընտրությունը հինգերորդ օրը կատարվեց, ջրային և օդային կենդանիների ստեղծման հետ միասին, այդպես էլ սուրբ մարգարեների ընտրությունը կատարվեց երրորդ օրը՝ բույսերի և տնկիների հետ:

Առաջին երեք օրերում լույսն աննյութ էր ու անմարմին, և օրվա տասներկու ժամը տարածվում էր ամբողջ երկրում, իսկ երեկոյան հավաքվում մի տեղում: Ոմանք ասում են, որ այդ տեղն արեւելյալն կողմն էր, իսկ ոմանք էլ, թե՝ լույսը երկինք էր վերանում և ծածկվում աստվածային խորհրդով, ուր ծրարված էր անձառելի Լույսը, ըստ այն խոսքի, որ ասաց Աստված Հոքին. «Ո՞րն է այն երկիրը, ուր լույսն է օթևանում» (Յոթ ԼՇ 19):

Այսօր ծառերի հետ միասին ստեղծվեց նաև Դրախտը, որտեղ տնկվեցին կենաց և Գիտության ծառերը: Դրախտը թանձր ու թավ վայր է՝ անթառամ տերեւներով ու անսպառ պտուղներով, ինչպես և վայել է աստվածատունկ ծաղկանոցին, որտեղ չկա ամառ, աշուն, ձմեռ ու գարուն, այլ բարեխառն է, անուշաբույր, արեգակնախայլ գույներով, պայծառ գեղեցկությամբ և երկնավայելուչ փառքի շուքով, որը թեպետ երկրի վրա է արմատացած և հողեղեն է, սակայն ասում են, որ իր բարձրությամբ հավասար է արեգակին, և ամենալին կարոտ չէ լույսի, քանի որ Աստված է նրա Լույսը:

Եվ ինչպես բույսերն ու տնկիները նախապես անասունների համար պատրաստվեցին, նույնպես և Դրախտը մարդու վայելքների համար պատրաստվեց ու լցվեց բարությամբ, որպեսզի մարդն աղքատ չլինի:

Երրորդ դարի Պատմություն

Ավագ Երեքշաբթին նաև երրորդ դարի խորհուրդն ունի: Երրորդ դարն սկսվում է Նոյի երեք հարյուր հիսունհինգերորդ տարում, երբ կառուցվեց տապանը, և ջրհեղեղի ջրերը ջնջեցին բոլոր երկրածիններին, նաև՝ երբ կառուցվեց Բաբելոնի աշտարակը, Աստված մարդկանց լեզուները բաժանեց, և նրանք տարածվեցին աշխարհով մեկ:

Մինչ Նոյի ծնվելը Սեթի զավակներից հինգ հարյուր հոգի, լսելով Դրախտի կյանքի մասին, ելնում են Ահերմոն կոչվող լեռը և այնտեղ կուսությամբ ապրում, և այդ պատճառով կոչվում Աստծու որդիներ, ի տարբերություն Կայենի սերնդի, ովքեր կոչվում են մարդկանց որդիներ: Այնուհետև՝ Հարեղի 41-րդ տարում՝ արարչությունից 960 տարի անց, Սեթի որդիները, ձանձրանալով կուսությամբ ապրելուց, իջնում են լեռներից և գալով իրենց ազգակիցների մոտ՝ խնդրում են կնության համար իրենց աղջիկներ տալ: Վերջիններս բարկանում են նրանց վրա՝ Աստծու ուխտը դրելու համար, և իրենց գուստերին նրանց չեն տալիս: Նրանք էլ գնում ու Կայենի որդիներից են խնդրում՝ իրենց գուստերից կնության տալ իրենց: Կայենի որդիները չարախնդությամբ իրենց գուստերին նրանց աչքի առջև դիվահար են անում ու տալիս: Այս խառնակությունից ծնվում են հսկաներ (տես Ծննդ. Զ 4), ովքեր, իրենց հաղթանգամ մարմիններին վստահելով, իրենց անմահ էին կարծում: Եվ այսպես՝ Աստծու որդիները հինգ հարյուր տարի կուսությամբ ապրելուց հետո խառնվում են մարդկանց գուստերի հետ (տես Ծննդ. Զ 2):

Իսկ Նոյը, ով կատարյալ ու արդար մարդ էր, տեսնելով, որ իր ցեղը խառնվում է Կայենի անիծյալ ցեղի հետ, որոշում է չամուսնանալ և որդի չունենալ, որպեսզի անեծքի տակ չընկնի, և հինգ հարյուր տարի կուսությամբ է ապրում: Աստված, տեսնելով նրա սիրտը, կամենում է, որ մարդկային ցեղի երկրորդ խմորը նրանից լինի և բազմանալով լցնի աշխարհը, քանզի նա խորհում էր վերացնել մարդկանց իրենց անօրինությունների ու մեղքերի պատճառով:

Երբ Նոյը հինգ հարյուր տարեկան էր, Աստված խոսեց նրա հետ ու հանձնարարեց մի տապան կառուցել՝ ջրհեղեղից փրկվելու համար: Երբ Նոյը լսեց սպասվելիք ջրհեղեղի մասին, Աստծու հրամանով ամուսնացավ, իրեն կին առնելով Սեթի դուստրերից, և այնքան պարկեշտ եղավ

ամուսնական կյանքում, որ հարյուր տարում ծնեց ընդամենն երեք որդի, բոլորն էլ իր նման առաքինի: Այդ պատճառով նրանց կոչեց Սեմ, այսինքն՝ կատարյալ, Քամ՝ իշխան, և Հաբեթ՝ գեղեցկություն: Նոյը արգելեց իր որդիներին ամուսնանալ Կայենի դուստրերի հետ, և միայն տապան մտնելուց առաջ ամուսնացրեց նրանց Սեթի դուստրերի հետ, որպեսզի իր սերունդը չապականվի: Եվ նոյից է սկսվում երկրորդ աշխարհը, քանզի նա ապականված դարում իր անարատությունը անբժությամբ պահեց:

Ճրհեղեղի պատմության մեջ ծովը խորհրդանշում է աշխարհը, նոյի ութհոգանոց ընտանիքի փրկվելը տապանով խորհրդանշում է նրանց, ովքեր այժմ եկեղեցու միջոցով փրկվում են մեղքերի ծփուն ծովը ընկղմվելուց, իսկ ութերորդ օրը պիտի փրկվեն գեհենի կրակներից:

Եկեղեցում կան բազմաբարո մարդիկ՝ ըստ տապանում գտնվող բազում կենդանիների օրինակների: Այս մարդկանցից ոմանք սուրբ են, իսկ ոմանք՝ անմաքուր: Տերը նրանց վարքերի փոփոխություն է կատարում. խորամանկին դարձնում պարզամիտ, վայրենամտին՝ զգոն, բարկացողին՝ հեղ, իսկ անսուրբին՝ մաքուր:

Քառասուն օր հորդող անձրեւ խորհրդանշում է քառասնօրյա պահը, որով մաքրվում է հոգու մեղսալից կրակը, իսկ ովքեր չմաքրվեցին, իրենց մեղքերի հեղեղում խեղդվեցին: Ճրերի տասնհինգ կանգուն բարձրանալը օրինակն է նրա, որ ցանկությունները սկսում են մարդկանց վրա տիրել տասնհինգ տարեկանից: Ագռավի արձակելը խորհրդանշում է եկեղեցուց սատանային վտարելը, քանի որ ագռավացած հոգիները սնվում են ժանտահոտ դիակներով: Եվ ինչպես ագռավը ջրի մեջ ընկղմվեց, այդպես էլ՝ սատանան մեղքերի մեջ:

Աղավնու արձակելը և ետ դառնալը խորհրդանշում է եկեղեցուց դուրս ելածների ապաշխարությունը և դարձը: Եվ եկեղեցին նոյի նման տարածելով ձեռքերը՝ իր գիրկն է ընդունում նրանց: Ճրի ցամաքելուց հետո նոյն Աստծուն հաճելի պատարագ մատուցեց, իսկ մենք, մեր մեղքերի ցամաքելուց հետո, առաքինությունների անուշահոտությամբ, Աստծու սեղանն ենք լինում, որի վրա Քրիստոս ուխտում է մեզ հետ հավիտենական խաղաղություն:

Իսկ իր երկրորդ գալստյան մասին Տերը հայտնում է Ավետարանի միջոցով՝ ըստ այս խոսքի. «Եվ ինչպես նոյի օրերն էին, այնպես պիտի լինի Մարգու Որդու գալստյանը. որովհետեւ, ինչպես որ Ճրհեղեղից առաջ եղած օրերն էին, երբ ուտում էին և խմում, կին էին առնում ու մարդու էին գնում, մինչև այն օրը, երբ նոյը տապանը մտավ, ու նրանք բան չիմացան, մինչև որ Ճրհեղեղը եկավ ու վերցրեց տարավ բոլորին, այնպես

պիտի լինի Մարդու Որդու գալստյանն էլ» (Մատթ. ԻԴ 37): *Եվ ինչպես նրանք, ովքեր չհավատացին նոյի քարոզին՝ կործանվեցին, այդպես էլ կորչելու են Աստծու Որդուն չհավատացողները:*

ՕրՎա ՌԱԹԵՐՁՎԱԾԱԿԵՐԻ ՄԵԿԱՌԻՋՈՒԱԾ

(Առաջ Ձ-1-9)

Այսօր ընթերցվող առակով ներկայացվում է Փրկչի մարդասիրական գալուստը. «Հոր Խմաստությունը՝ [Հիսուս], շինեց իր տունը և կանգնեցրեց յոթ սյուները»: Իսկ ըստ Պողոսի՝ Նրա տունը մարդկային բնությունն է. «Նրա տունը մենք իսկ ենք» (Եբր. Գ 6), և յոթ սյուները Սուրբ Հոգու շնորհներն են, որի վրա կառուցված է ամբողջ շինությունը:

Մորթեց իր եզր, խառնեց, պատրաստեց գինին, պատրաստեց նաև իր սեղանը – Զվարակը մորթվեց խաչի վրա, ինչպես անառակի դարձի համար բարեգութ հայրը մորթեց եզր: Իսկ գինին «խառնեց ու պատրաստեց», որպեսզի զրանով արբեցնի ծարաված անձերին: Նաև Տիրոջ Արյունն է խառնում նահատակների արյան հետ:

Նա ուղարկեց իր ծառաներին, որ բարձր ձայնով հրավիրեն իր հացկերույթին, և ասաց. «Ով անզգամ է, թող գա Խնձ մոտ – Տերն ուղարկում է իր ծառաներին և նրանց ասում, որ գնան և բարձրաձայն քարոզով իր, այսինքն՝ Խմաստության Սեղանի մոտ կանչեն հեթանոսներին, ովքեր անզգամացել էին կռապաշտությունից: Հրավիրում է նաև պակասամիտներին, այսինքն՝ մեղավորներին, որովհետև շնացողները, հիրավի, պակասամիտ են:

Եկեք կերե՛ք Իմ հացից և խմեցե՛ք Իմ գինուց, որ պատրաստել եմ ձեզ համար – Այսինքն՝ իր ապրեցնող Մարմնից ու Արյունից: Բայց ասում է, որ թողնենք անզգամությունն ու սնոտիապաշտությունը և խոստովանությամբ փնտրենք իմաստություն և ապաշխարությամբ՝ հանճար, որպեսզի փրկվենք գեհենի կրակներից:

Ով խրատ է տալիս չարերին, նա անարդանք է ստանում, և ով հանդիմանում է ամբարիշտներին, նա ատելություն է վաստակում – Մեր Տերը հրեաներին հանդիմանելով խրատեց և անարգվեց նրանց կողմից:

Հանդիմանի՛ր իմաստունին, և նա կսիրի քեզ, խրատի՛ր հիմարին, և նա ավելի շատ կատի քեզ – Տերը հանդիմանեց իմաստուն Պետրոսին և սիրվեց նրանից, խրատեց անմիտ Հուդային և ավելի ատվեց նրանից:

Իմաստունին բացատրի՛ր պատճառը, և նա ավելի՛ իմաստուն կլինի – Տերը Պողոսին խրատեց, և նա դարձավ ավելի իմաստուն:

(Եսայի Խ 10-12)

Եսային ասում է. «Ահավասիկ ձեր Աստվածը. ահա Տերը, որ գալիս է զորությամբ և իր բազկի իշխանությամբ. ահավասիկ իր վարձն իր հետ է, ու գործերն էլ իր աչքի առաջ են: Հովկի նման հովկելու է իր հոտերը, իր բազկով հավաքելու է գառներին, կրելու է նրանց իր ծոցում, մխիթարիչ է լինելու հղիներին»: Այս խոսքով Եսայի մարդարեն հորդորում է քահանաներին՝ ինչպես ավետարանիչներ քարոզել բարձր լեռան վրա առաքելական հավատով, ավետարանել Սիոնի սգավորներին՝ խաչի փրկությունն ու համընդհանուր հարության հույսը՝ ասելով. «Ահա Տերը՝ մարմնացած իոսոքը, գալիս է երկրորդ անգամ իր զորությամբ: Եվ իր վարձքը իր հետ է, որն ազատությունն է մեղքերի ծառայությունից ու որդեգրությունը: Եվ պիտի պսակի ուրախությամբ իր ընտրյալներին և յուրաքանչյուրն իր գործերը պիտի խոստովանի նրա առջև, և ոչինչ չի վրիպելու նրա աչքից»:

Եվ իբրև հովկիվ հովկելու է իր հոտը – Այս գալստյամբ Տերը իր անձը դրեց իր հոտի համար և իր բազուկով հավաքեց իր գառներին: Այժմ Տերը եկեղեցին ժողովում է իր փրկական գործերով, իսկ հանդերձյալում արքայությունում պիտի ժողովի: Եվ պիտի մխիթարի հղիներին, քանի որ ասաց. «Եկե՛ք ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, և Ես ձեզ կհանգստացնեմ» (Մատթ. ԺԱ 28): Այսինքն՝ նրանց, ովքեր հղացել են հույսով:

Ո՞վ կարողացավ իր ափով չափել ջրերը, թզով՝ երկինքը և քլով՝ համայն երկիրը – Զափեց ջուրը, այսինքն՝ բոլոր ազգերին. թզով՝ երկինքը, այսինքն՝ բոլոր արդարներին, և քլով՝ ամբողջ երկիրը, այսինքն՝ երկրագրշներին ու նրանց, ովքեր երկրավորն են խորհում:

Ո՞վ կարողացավ լեռները կշռել կշեռքով և դաշտերը՝ նժարով – Ով կշռեց լեռները կշեռքով, այսինքն՝ թագավորների գործերը: Կշռք ասելով ի նկատի ունի Աստծու անվրեպ գիտությունը: Իսկ ով չունեցավ արդարություն, ասաց, որ նրանք ոչինչ են և ոչինչ համարվեցին:

Այս ամենն իմանալով՝ եկեղեցու ավանդապահները պաղատանքներով երգում են Դավթի երգերն՝ ասելով. «Դեպի Քեզ, Տե՛ր, բարձրացրի հոգիս... Իմ մանկության և տհասության մեղքերը մի՛ հիշիր, այլ հիշի՛ր ինձ, Տե՛ր, Քո ողորմությամբ՝ ըստ Քո բարության, քանզի Դու քաղցր և ուղիղ ես, Տե՛ր» (Սաղմ. ԻԴ 2, 7-8): Խնդրում են, որ Տերն իրենց մեղքերին թողություն տա:

**ՄԵԿԱՌԱՋՈՒՆ ՄԱՏԹԵՈՒՄ ՎԿԵՏՎՐԱՆԻ
(ՄԱՏ. ԻԴ 3-46)**

Այսօր՝ Ավագ երեքշաբթի օրը, արարածների Արարիչը, մարդու կերպարանքով զգեստավորված, հողեղեն ծառայի նմանությամբ, նստում է Զիթենյաց լեռան վրա, որն օրինակն է վերին արքայության, և պատմում իր աշակերտներին մեծամեծ խորհուրդների մասին՝ տաճարի ավերվելու, աշխարհի վախճանի, ապա՝ սուտ քրիստոների գալստյան, իսկ ավարտին՝ նաև իր չարչարանքների մասին:

Աշակերտները տիսրում են, երբ Տիրոջից լսում են տաճարի քանդվելու մասին: Եվ մինչ նա նստած էր Զիթենյաց լեռան վրա, աշակերտներն առանձին մոտենում են նրան ու հարցնում: «Ասա՛ մեզ, այդ ե՞րբ կլինի, և կամ Քո գալստյան ու այս աշխարհի վախճանի նշանն ի՞նչ կլինի»: Արդ՝ աշակերտները երկու հարց են տալիս, մեկը տաճարի քանդվելու, Երուսաղեմի ավերվելու և Հրեաների կործանվելու, իսկ մյուսը՝ աշխարհի վախճանի, ժամանակի սպառվելու և Տիրոջ Երկրորդ գալստյան մասին: Եվ Տերը երկուսին էլ պատասխան է տալիս (դրանք միմյանց հետ կապելով): Նախ՝ Երուսաղեմի ու Հրեաների համար է ասում, որ Հռոմեացիներից պետք է նրանց վրա չարիք գա, ապա՝ իր սոսկալի ու ահավոր գալստյան և աշխարհի վախճանի մասին:

Հիսուս նրանց ասում է. «Զգո՛ւյշ եղեք, գուցե մեկը ձեզ խաբի. որովհետեւ շատերը կդան իմ անունով ու կասեն, թե՝ ես եմ Քրիստոսը. և շատերին կմոլորեցնեն» – եվ քանի որ բանականներիս համար ամենապլիսավորը հավատն է, այդ պատճառով էլ նախ զգուշացնում է հավատը շեշտելով, ապա ակնարկում Սիմոն կախարդի և մյուս մոգերի մասին, ովքեր կախարդության հնարքներով շատերին խաբելով՝ հեռացրեցին ճշմարտությունից, ստիպելով իրենց պիղծ ու զազրագործ մարմինը քրիստոս անվանել: Եվ կանխապես ասում է այն պատերազմի մասին, որ նեռը վարելու է եկեղեցու սրբերի դեմ:

Լսելու եք պատերազմների ձայներ և պատերազմների լուրեր – Սա առաքյալների համար է ասում, որովհետեւ առաքյալներից շատերը կենդանի էին, երբ Տիտոսը պաշարեց Երուսաղեմը (70թ.): Այդ պատճառով էլ Մատթեոսը¹, Մարկոսը² և Ղուկասը³, ովքեր մինչ քաղաքի պաշարումը գրեցին իրենց ավետարանները, գրեցին պատերազմի մասին: Իսկ

¹ Մատթեոսն ավետարանը գրել է 39 թվականին Երուսաղեմում:

² Մարկոսն ավետարանը գրել է 49 թվականին Ալեքսանդրիայում:

³ Ղուկասն ավետարանը սկսեց գրել Յոհոնում և ավարտեց Անտիոքում 56 թվականին:

Հովհաննեսը, որ պատերազմից հետո գրեց իր ավետարանը⁴, պատերազմի մասին քիչ գրեց:

Չխռովվե՛ք, որովհետև պետք է, որ այդ ամենը լինի, բայց դա դեռ վախճանը չէ – Այն ամենը, ինչ ասվեց, տաճարի ու հրեաների գերության մասին, դեռ վախճանը չէ: Քանի որ Տիրոջ հրեշտակը, երուսաղեմի պաշարումից առաջ գալով, քաղաքից դուրս պիտի հաներ բոլոր հավատացյալներին, այդ պատճառով ասում է. «Չխռովվե՛ք»: Կամ թե՝ երբ տեսնեք ձեր ազգի վրա եկած նեղությունները, մի՛ վհատվեք, որովհետև պետք է, որ այդ ամենը լինի:

Ազգ ազգի դեմ պիտի ելնի, և թագավորություն՝ թագավորության դեմ – Մի հրեա, Քոքարքոք անունով, որ թարգմանվում է աստղորդի, պարծենում էր, թե ինքը երկնքից հրեաների համար որպես փրկիչ է ծագել: Նա շատերին ապստամբության մղեց, խաբեությամբ ժողովրդին տարավ անապատ, որը պատճառ եղավ, որ ազգերն ու թագավորները շարժվեն հրեաների վրա: Նա իրեն մեծ մարգարե էր համարում, ինչպես մի ժամանակ թեղաս Գալիլիացին և Հուդաս Եղիպատացին, որոնց մասին Տերն ասում է. «Բոլոր նրանք, որ ինձնից առաջ եկան, գողեր էին ու ավագակներ» (Յովհ. Ժ 8):

Եվ պիտի լինեն սով, համաճարակ ու տեղ-տեղ՝ երկրաշարժներ: Սակայն այս ամենը սկիզբն է երկանց – երբ Քոքարքոքեն ապստամբեցրեց ժողովրդին և հարձակվեց կուսակալների ու հոռմեացի գործավարների վրա, Պաղեստինի բնակիչների մեջ մեծ խոռվություն եղավ, և թշնամական բանակներն ու ավագակախմբերը հարձակվեցին ու շատ տեղերում խափանեցին երկրագործությունը: Այդ պատճառով սովն ու համաճարակը տարածվեցին երկրով մեկ:

Այն ժամանակ ձեզ նեղության պիտի մատնեն և պիտի սպանեն ձեզ. և իմ անվան պատճառով բոլոր ազգերի կողմից ատելի պիտի լինեք – Տիրերիս կայսրն իր իշխանության օրոք օգնեց սուրբ առաքյալներին՝ գրով դիմելով իր կայսրության բոլոր կողմերը, որ եթե որևէ մեկը չարախոսի Քրիստոսին, ապա նա պիտի սպանվի, և նրա ունեցվածքը պիտի բռնագրավի: Այդ պատճառով էլ առաքյալները համարձակապես քարոզում էին Ավետարանն ամբողջ Հրեաստանում և աշխարհի բոլոր կողմերում: Այդպես Հակոբոս Տյառնեղբայրը երեսուն տարի մնաց երուսաղեմում, իսկ երբ հրեաները ապստամբեցին կայսեր դեմ, Տիրոջ եղբորը սպանեցին, իսկ Տիրոջ աշակերտներին և բոլոր հավատացյալներին հալածեցին ու խոշտանգեցին:

⁴ Յովհաննեսն ավետարանն սկսեց գրել Պատմոսում և ավարտեց Եփեսոսում 96 թվականին:

Այն ժամանակ շատերը պիտի գայթակղվեն և միմյանց պիտի մատնեն ու միմյանց պիտի ատեն – Քանի որ հրեաների հալածանքների պատճառով Հավատացյալներից ոմանք շեղվեցին Հավատից ու կործանվեցին:

«Եվ բազում սուտ մարդարեներ պիտի ելնեն ու շատերին պիտի մոլորեցնեն: Եվ անօրինության շատանալուց՝ շատերի սերը պիտի ցամաքի: Բայց ով մինչև վերջ համբերեց, նա պիտի փրկվի»: Այստեղ Տերը, Երուսաղեմի ավերվածության մասին խոսքը եղբափակելով, անցնում է աշխարհի վախճանին և մեզ հրամայում սուրբ Հավատի հիմքի վրա մնալ անշարժ ու անդրդվելի, ոչ մեկին չհետեւել, չհավատալ պատրանքների, ինչպես որ հրեաները Հավատացին սուտ մարդարե Քոբարքոբեին և զրկվեցին կյանքից: Այսինքն՝ եթե մենք Հավատանք սուտ մարդարեներին, ապա կզրկվենք կենդանության երկրից, ինչպես հրեաները տարագրվեցին Երուսաղեմից:

Եվ արքայության այս Ավետարանը պիտի քարոզվի ամբողջ աշխարհում՝ ի վկայություն բոլոր հեթանոսների. և ապա պիտի գա վախճանը – Այսօր արքայության Ավետարանը տարածվել է ամբողջ աշխարհում, և չկա որևէ ազգ, որի մեջ քրիստոնյա չլինի, կամ նրանք լսած չլինեն Քրիստոսի գալստյան մասին: Քանի որ բոլորիս Աստվածը նախ մարդարեներով ու օրենքներով հայտնեց Խարայելի որդիներին իր գալստյան մասին, ապա՝ ժամանակների լրանալուն պես, եկավ և բոլոր հեթանոսների մեջ տարածեց Ավետարանի քարոզությունը, և նրանք, ովքեր չհավատացին, վերջին օրը պատասխան են տալու՝ ըստ այս խոսքի. «Եթե Ես եկած և նրանց հետ խոսած չլինեի, նրանք որևէ մեղք ունեցած չէին լինի» (Յովի. ԺԵ 22):

«Արդ՝ երբ տեսնեք սարսափելի սրբապղծությունը, որի մասին ասված է Դանիել մարդարեի միջոցով, ով հաստատված է սուրբ վայրում, ով ընթերցում է, թող հասկանա»: Դանիելը նախապես տեսավ, որ Անտիռքոս թագավորը մտնելու է Երուսաղեմ և իր պիղծ կուռքը կանգնեցնելու է Սրբության սրբոցում (ՄԵՆԱ Սակաբ. Ա 21-24, 39): Նաև Սուրբ Հոգով տեսավ, թե ինչպես Տիտոսը պաշարեց Երուսաղեմը, և այն պղծությունները, որ գործեցին Երուսաղեմում: Սակայն Տիտոսը միայն գործիք էր Աստծու ձեռքում, քանի որ հրեաները անամոթությամբ հանդգնեցին Տիրոջ դեմ, և Տերը նրանց խորտակեց Երկաթյա գավազանով, որը հռոմեական թագավորությունն էր: Այդ օրերին պաշարված մողովուրդը մարդու միս էր ուտում, աղավնու և չորքոտանի անսառւների աղբ, և ամբողջ Երկիրը լցված էր դիակներով: Արդյունքում՝ 1.200.000 մարդ սովից մահացան և 90.000 մարդ գերության վաճառվեցին:

Այս խոսքը վերաբերում է նաև նեռին, այդ պատճառով էլ մարդարեն ասում է. «Ահա մի ուրիշ փոքրիկ եղջյուր էր դուրս գալիս դրանց միջից.

նախկիններից երեք եղջյուրներ թափվում էին նրա առաջ. և ահա մարդու աչքերի պես աչքեր կային այդ եղջյուրի վրա, նաև մի բերան, որ մեծ-մեծ բաններ էր խոսում» (Դան. Է 8), ինչն օրինակն է Անտիռքոսի: Իսկ առաքյալն ասում է. «Թող ոչ ոք ձեզ չխարի և ոչ մի ձեռվ. որովհետեւ այն օրը չի գալու, եթե նախ ապստամբությունը չգա, և չհայտնվի անօրինության մարդը՝ կորսոյան որդին՝ հակառակորդը, որ գոռոզանում է այն ամենի վրա, որ կոչվում է Աստված կամ պաշտամունքի առարկա, մինչեւ այն աստիճան, որ նա նստի Աստծու տաճարում և ինքն իրեն ցույց տա, թե աստված է» (Բ Թես. Բ 3-4):

Քանի որ Աստված նախքան երկիր գալը նախ մարդարեներին առաքեց՝ բազմաթիվ նշաններով և զանազան հրաշափառ գործերով ազդելու աշխարհի վրա և քարոզելու անժամանակ յոթնարփյալ Լույսի ժամանակի մեջ գալու մասին, այս օրինակով՝ անօրեն ու կարծեցյալ իշխանը՝ սատակման որդին, ազդում է մարդկանց վրա իր մոլորության ոգով և նախքան իր աշխարհակործան հայտնությունը, հեղեղում է իր գառնության մաղձը՝ կորսայան թույնը, կախարդների ու վհուկների միջոցով, որոնք նրա մոլորեցնող կարապետներն են: Այս բոլորից հետո ինքն է մտնելու տաճար՝ վտանգի ենթարկելով աշխարհը, և սուտ նշաններով ու աչքի խարկանքներով խարելու է հրեաներին: Այս գաղանին Տեր Հիսուս պիտի սատկացնի իր բերանի շնչով ու ոչնչացնի իր հայտնությամբ՝ իր գալստյան ժամանակ (տես Բ Թես. Բ 8):

Այս ժամանակ, ովքեր Հրեաստանում կլինեն, թող փախչեն լեռները. և ով տանիքի վրա կլինի, իր տանից բան վերցնելու համար թող ցած չի ջնի. և ով հանդում կլինի, իր վերնազգեստը վերցնելու համար թող ետ չդառնա – Նեղության տագնապը հանկարծակի պիտի ժամանի երկիր և շփոթված մարդիկ, սաստիկ բարկության պատճառով, ոչինչ չեն կարողանալու խորհել, այլ տարակուսելով պիտի շտապեն փախչել: Անտիռքոս թագավորի և Տիտոսի որդու՝ Վեսպասիանոսի օրերին սաստիկ նեղություններ են եղել, սակայն դրանք նման չեն սպասվելիք նեղություններին ու տարակուսանքներին:

Բայց վայ այդ օրերին հղիներին ու ստնտուներին – Հղիներն ու ստնտուները ծանրաշարժ են փախչելու համար. մանուկների մայրերն այդ տագնապի մեջ ո՛չ կարող են գցել մանուկներին ու գնալ և ո՛չ՝ հապշտապ փախչել: Դարձյալ՝ հղիները նրանք են, ովքեր բարի գործեր են հղացել, սակայն չեն կատարել: Նաև նրանք, ովքեր հղացել են մեղքեր և անօրինություններ և այդ ամենը միշտ կրում են իրենց սրտում: Արանք չեն ցանկանում զղջումով և արտասուքով չարության սերմը վիժեցնել իրենց սրտից, այլ միշտ սնուցանում են այն, որպեսզի առիթի գեպքում

ծնեն: Իսկ ստնտուները նրանք են, ովքեր ոչ միայն հղացան մեղքեր, այլև ծնեցին և այժմ էլ աճեցնում են:

Այդպես՝ Քրիստոսի գալստյամբ, սաստիկ տագնապի մեջ տարակումելով, վարանելու են անօրինությամբ ծանրաբեռնված բոլոր մեղավորները, իսկ արդարները, թեթևացած ու թեր առած, պիտի թռչեն դեպի վեր՝ Տիրոջն ընդառաջ:

Աղոթեցե՛ք, որ ձեր փախուստը չլինի ձմռանը և ոչ էլ շաբաթ օրը. որովհետև այդ ժամանակ մեծ նեղություն պիտի լինի, որպիսին չի եղել աշխարհի արարչագործության սկզբից մինչև այժմ և այլեւ չի էլ լինի – Այսինքն՝ աղոթեցե՛ք, որպեսզի չելնեք այս աշխարհից առանց բարի պտուղների, ինչպես անպտուղ են ծառերը ձմռանը, և զուրկ բարի գործերից, ինչպես հրեաներն են շաբաթ օրն անգործ:

Դարձյալ՝ հալածանքների պատճառով փախչողն ամեն ժամ կարող է վտանգվել, մանավանդ ձմռան օրերին՝ սառնամանիքի ու ցրտի պատճառով, իսկ Օրենքը հրեաներին թույլ չի տալիս շաբաթ օրը գործել, այդ պատճառով՝ Տերն ամեն անդամ մեզ ուսուցանում է աղոթել, քանի որ զորավոր է աղոթքն ընդդեմ փորձության: Սակայն մեզ համար շաբաթը մշտնջենավոր երկնային հանգստի կերպարանքն ունի, իսկ ձմեռը՝ դժոխքի դժողակ դառնության օրինակն է: Արդ՝ մեր Փրկագործի գալուստը չի կարող մեզ համար փախուստի պատճառ լինել երանավետ հանգստից, որը մեծ ու անվախճան շաբաթն է, և մենք չենք բռնվի դժոխքի անսպառ ձմռան կողմից, ինչը վախճան չունի:

Եվ եթե այդ օրերը չկարծեցվեին, ոչ մի մարմին չէր ազատվի. բայց ընտրյալների պատճառով այդ օրերը պիտի կարծեցվեն – Անտիռքոս թագավորի անօրինությունները երեք տարի տեսցին, որից հետո Հուդա Մակաբայեցին ազատագրեց Երուսաղեմը, քանի որ հրեաները օրինապահ գտնվեցին: Տիտոսն ինն ամիս պաշարեց Երուսաղեմը, քանի որ քրիստոնյաների պատճառով, ովքեր փախան ու ամրացան Փաղեղ գյուղում, նեղության օրերը կրծատվեցին, որպեսզի ասպատակությունները չհասնեն նրանց: Իսկ կորսոյան որդին երեք ու կես տարի պիտի իշխի երկրի վրա, և այդ օրերին Տիրոջ հրամանով լուսատուները արագ պիտի շարժվեն, և օրերը պիտի արագ սպառվեն:

«Այն ժամանակ եթե մեկը ձեզ ասի՝ ահա՛ Քրիստոս այստեղ է կամ այնտեղ, չհավատաք նրան. որովհետև սուտ քրիստոներ և սուտ մարդարեներ պիտի ենեն և մեծամեծ նշաններ ու զարմանալի գործեր պիտի ցույց տան՝ Աստծու ընտրյալներին անդամ մոլորեցնելու աստիճան, եթե հնար լինի»: Ժամանակին մոգեր ու կախարդներ են եղել, ինչպես օրինակ՝ Բարեհետուն և Սիմոն Գեթացին, ովքեր ապշեցրել են մարդկանց,

ինչպես և այժմ վհուկները խաբկանքով տարբեր տեսիլքներ են ցույց տալիս, որից թերահավատներն անմիջապես խաբվում են, իսկ նրանք ջանում են նաև ողջախոհներին գցել իրենց կորսոյան խորխորատը։ Սուտ մարդարեներից ոմանք իրենց աստված են հայտարարելու, ոմանք՝ սուրբ Հոգի, ոմանք էլ՝ աստվածային զորություն։ Քանի որ երբ նեռը գա, բոլոր սուտ մարդարեները պիտի «վարդապետեն» ու կեղծ հրաշքներ գործեն՝ լեռներ պիտի տեղափոխեն, լուսատուներ պիտի ցույց տան, մարդկանց կերակուր ու ըմպելիք պիտի տան, սակայն դրանք ուտողը ոչ մի օգուտ չի ստանալու։ Իսկ մենք ճշմարիտ Քրիստոսին երկրում այլևս չենք սպասում, այլ սպասում ենք երկնքից՝ արեկլքից ամպերով եկած։

Ապա եթե ձեզ ասեն՝ ահա՛ անապատի մեջ է, չելնեք, կամ թե՛ ահա՛ մառանում է, չհավատաք – Քանի որ շատերն անապատում կրոնավորի կերպարանքով ու զգեստով խաբում են մարդկանց։ Պետք չէ դրանց հավատալ, որովհետեւ շատ մոլորեցնողներ անապատում երևացին և շատերն էլ՝ քաղաքում։

Իսկ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, ո՛չ անապատից և ո՛չ էլ քաղաքից է գալու, այլ ինչպես փայլակ՝ արփիական ճառագայթներով փայլելով ցոլելու է մինչև արևմուտք և ինչպես հրաշափառ Լույս՝ գերազանցելով ծածկելու է արեգակի ոսկեճաճանչ ճառագայթները։ Եվ այս գալուստը նման չի լինելու առաջին լույսայն գալստյանը, այլ՝ ըստ այս խոսքի։ «Ինչպես փայլակը, որ ելնում է արևելքից և երևում է մինչև արևմուտք, Մարդու Որդու գալուստն այնպես կլինի»։

Ուր որ դիակն է, այնտե՛ղ կհավաքվեն արծիվները – Այնտեղ պիտի հավաքվեն մարդկային ցեղի բոլոր մեռածները, և մի ակնթարթում սուրբ հրեշտակները պիտի հավաքեն նրանց հոգիները՝ զգեստավորելու անմահ մարմնով։

«Այդ օրերի նեղությունից անմիջապես հետո արեգակը պիտի խավարի, և լուսինն իր լույսը չպիտի տա, և աստղերը երկնքից պիտի ընկնեն, ու երկնքի զորությունները պիտի շարժվեն»։ Ինչպես երբ ծագում է արեգակը, լուսինը և երկնքի աստղերը չեն երևում, այդպես էլ, երբ ծագում է սուրբ Խաչը, արեգակն ու լուսինը չեն երևալու։

Եվ աստղերը երկնքից պիտի ընկնեն – Սրբերը հափշտակվելով պիտի երկինք բարձրանան ու ժառանգեն ընկած հրեշտակների տեղը, որոնց հիշատակն առհավետ պիտի ջնջվի երկնքից։

Երկնքի զորությունները պիտի շարժվեն – երկնքի անհուն զորքերը և անմահների բյուրավոր բանակները, գալով Տիրոջ հետ, պիտի վայր իջնեն երկնքից։

Եվ ապա երկնքի վրա Մարդու Որդու նշանը պիտի երևա - *Այսինքն՝ պիտի ծագի սուրբ Խաչը*:

Այդ ժամանակ երկրի բոլոր ազգերը լացուկոծ պիտի անեն - Հրեաները պիտի ողբան, քանի որ չճանաչեցին Խսրայելի փրկությունը, այլ, փառքի Տիրոջը խաչը հանելով, աստվածամարտ եղան: Հագարի որդիները պիտի ողբան, քանզի պարսավելով Հոր Անձառելի Ծնունդին՝ սոսկ Մարիամի որդի անվանեցին, ուրացան Նրա Աստվածությունը և քրիստոնյաներին տանջելով և Եկեղեցին հալածելով՝ աստվածամարտ եղան: Պիտի ողբան և Հեթանոսները, քանզի չերկրպագեցին Խաչյալին:

Եվ պիտի տեսնեն Մարդու Որդուն, որ գալիս է երկնքի ամպերի վրայով՝ զորությամբ և բազում փառքով - Քանզի Տերը երևալու է արևելքից՝ նստած լուսավոր ամպի վրա, և Նրա շուրջը լինելու են անմահ հրեղենների զորքերը, և Նրա փառքի արեգակնակերպ ճառագայթները լցնելու են տիեզերքը:

Եվ Նա պիտի ուղարկի իր Հրեշտակներին մեծ շեփորով, ու պիտի հավաքեն Նրա ընտրյաններին չորս կողմերից՝ երկնքի ծագերից մինչև մյուս ծագերը - Հնչելու է փողը, գալու են Հրեշտակների զորությունները և Հավաքելու են մարդկանց մարմինները: Մի անսպասելի ժամի, մի ակնթարթում, հրեշտակներն ամբողջ աշխարհից ժողովելու են մարդկանց ամբողջ ցեղը, և երևալու է արհավիրքն արևելքից, և կրակը գոչելու է ինչպես փոթորկվող ծովը:

Թղենո՛ւց սովորեցեք առակը. որովհետև երբ Նրա ոստերը կակղեն, և տերևը ցցվի, կիմանաք, որ ամառը մոտ է: Նույնպես և դուք՝ երբ այս բուլորը տեսնեք, իմացե՛ք, թե մոտ է Նա, դռների առաջ - *Այստեղ թղենին նշանակն է բոլոր ծառերի, և գարնան գալն իմացվում է ծառերի ոստերից: Թղենին նաև խորհրդանշում է Խսրայելի տունը, իսկ Հրեաների անհավատությունը խորհրդանշում է ցուրտ ձմեռով: Իսկ երբ Հրեաները դարձի գան՝ Հավատան Քրիստոսին ու մկրտչեն, ապա դա կնշանակի, որ մոտ է վախճանը, ինչպես ասում է Երանելի առաքյալը. «Կտևի, մինչև մյուս ժողովուրդների ամբողջությունը փրկվի, և ապա ամբողջ Խսրայելը կփրկվի»* (Յոհոմ. ԺԱ 25):

Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այս սերունդը չպիտի անցնի, մինչև որ այս ամենը կատարվի: Երկինք և երկիր պիտի անցնեն, բայց Իմ խոսքերը չպիտի անցնեն - Տիրոջ վարդապետությունը կա, պիտի մնա, և նրանից Հավիտյան ոչինչ չի պակասելու:

Բայց այդ օրվա և ժամվա մասին ոչ ոք չգիտե. ո՛չ երկնքի Հրեշտակները և ո՛չ էլ Որդին, այլ միայն Հայրը - Նույնն է Հոր և Որդու էությունը, և անբաժանելի է Նրանց գիտությունը: Արդ՝ եթե Հայրն ու

Որդին մի բնություն են, հետևաբար՝ նույն գիտությունն ունեն, բայց քանի որ Որդին զգեստավորվեց մեր բնությամբ և մեզ համար անեծք ու մեղք կոչվեց, ուստի և մեզ համար ամոթ չհամարեց իր չիմանալը:

Եվ ինչպես Նոյի օրերն էին, այնպես պիտի լինի Մարդու Որդու գալստյանը. որովհետև ինչպես որ ջրհեղեղից առաջ եղած օրերն էին, երբ ուտում էին և խմում, կին էին առնում ու մարդու էին գնում, մինչև այն օրը, երբ Նոյը տապանը մտավ, ու նրանք բան չիմացան, մինչև որ ջրհեղեղն եկավ ու վերցրեց տարավ բոլորին, այնպես պիտի լինի Մարդու Որդու գալստյանն էլ – Նոյը հրաման ստացավ կառուցել տապանը՝ իր տան վրկության համար, և հարյուր տարում շինեց այն: Փայտի տաշելուց առաջեկած աղմուկը սպասվող ջրհեղեղի լուրն էր հայտնում լսողներին, սակայն նրանք չէին հավատում, այլ քամահրելով ուտում էին ու խմում, այդ պատճառով էլ առհասարակ բնաջնջվեցին: Իսկ Նոյը հավատաց ու փրկվեց իր ողջ ընտանիքով: Նույնը և հիմա է լինում՝ Քրիստոսի հրաշափառ գալուստը քարոզվում է շատերին. ով հավատա՝ կփրկվի, իսկ ով չի հավատում՝ հրով կիզվելու է:

Ասում եմ ձեզ, այն գիշերը, եթե երկու հոգի լինեն մի մահճի մեջ, մեկը պիտի վերցվի, իսկ մյուսը թողնվի: Եվ եթե երկու կին միասին աղալիս լինեն, մեկը պիտի վերցվի, իսկ մյուսը թողնվի: Եվ եթե հանդում երկու հոգի լինեն, մեկը պիտի վերցվի, իսկ մյուսը թողնվի (Ղուկ. ժԷ 34-35) – Սրանք մարդկանց երկու տեսակներն են՝ մի տեսակը մարմնավոր հաճույքների մեջ է ապրում, մյուսը՝ տաժանելի կյանքով: Իսկ ոմանց վերցվելը և ոմանց թողնվելը լինելու է հանդերձյալում. ովքեր այստեղ թեթևացել են մեղքերի ծանրությունից, նրանց պիտի վերցնեն հրեշտակները և տանեն երկինք, իսկ ովքեր ծանրացել են մահացու մեղքերով՝ դեպի մահ են գնալու: Այդպիսիները հարության օրը դուրս են գալու գերեզմանից, սակայն քանի որ չեն ստացել առաքինության թեր, պիտի տանջանքների մատնվեն:

Աշխարհն այս երեքով է բնութագրվում. մահճով խորհրդանշվում են հարուստները՝ ճոխացածներն ու հաճելի կյանքով ապրողները, հանդում գտնվողները աշխատավորներն ու երկրագործներն են, իսկ երկանքով խորհրդանշվում են աղքատներն ու չքավորները: Հետևապես՝ ոմանք հարուստներից, ոմանք երկրագործներից և ոմանք էլ աղքատներից պիտի մտնեն երկնքի արքայություն:

Արթո՛ւն կացեք, որովհետև չգիտեք, թե ո՞ր ժամին կգա ձեր Տերը: Ա՛յս իմացեք. եթե տանտերը գիտենար, թե ո՞ր ժամին գող կգա, կհսկեր և չէր թողնի, որ իր տունը ծակեն: Դրա համար դուք էլ պատրաստ եղեք, որովհետև այն ժամին, երբ չեք սպասում, Մարդու Որդին կգա – Սա քննելով

իմանում ենք, որ եթե տանտերն իմանար գողի գալստյան օրը, ապա թույլ չէր տա, որ իր տանը գողություն լինի, այդ պատճառով էլ և մենք պետք է պատրաստ լինենք, քանի որ Մարդու Որդին կգա այն ժամին, երբ չենք սպասում։ Տերն իր գալստյան օրը մեզ համար անհայտ թողեց, որպեսզի ամեն ժամ արթուն լինենք և հավատով սպասենք Տիրոջ գալստյանը։

Իսկ ո՞վ է այն հավատարիմ և իմաստուն ծառան, որին իր տերն իր ծառաների վրա կարգեց՝ իր ժամին կերակուր տալու համար նրանց – Ոչ միայն զգալի կերակրի համար է պահանջում հավատարմություն, այլ, առավել ևս, ուղղափառ հավատի վարդապետության համար, ինչը պետք է միշտ ուսուցանել իր ժամանակին։

Երանի՛ է այն ծառային, որին տերը գալով կգտնի այդպես արած – Նա, ով կատարում է ու սովորեցնում, երկնքի արքայությունում մեծ է կոչ-վելու և Տիրոջ ճշմարիտ մշակների հետ ստանալու է իր վարձքը։

Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ նրան կկարգի իր ամբողջ ունեցվածքի վրա – Արժանի կանի մտնել, տեսնել ու ժառանգել անվախճան ուրախությունը, որը մեր մտքից ու խոսքերից վեր է։

Իսկ եթե չար ծառան իր մտքում ասի՝ իմ տերն ուշանում է գալ, և սկսի իր ծառայակիցներին հարվածել և հարբեցողների հետ ուտի և խմի, և այդ ծառայի տերը գա այն օրը, երբ չէր սպասում, և այն ժամին, երբ չէր իմանում, նրան կսպանի և կեղծավորների վախճանին կարժանացնի. այնտեղ կլինի լաց ու ատամների կրճտում – երբ եգիպտացիները չլսեցին Տիրոջ ձայնը, Տիրոջ կողմից հարվածների ենթարկվեցին ու ծովահեղձ եղան (տես Ելք ԺԴ 27): Այսօր էլ, ով չի զարհուրում ահեղ դատաստանից, այլ ապրում է հափշտակությամբ, հարբեցողությամբ և պոռնկությամբ, պիտի նետվի անշեղ հուրը՝ անքուն ու անմեռ որդերի մոտ։

«Եվ դուրս կգան. ովքեր բարի գործեր են արել՝ կյանքի հարության համար, իսկ ովքեր չար գործեր են արել՝ դատաստանի հարության համար» (Յովհ. Ե 29):

Տասը Կոյսեարի առաւել (Մատթ. ԻԵ 1-13)

Տերը գիշերամիջին ծագելու է Հայրական փառքով՝ ինչպես Փեսա՝ ըստ այս խոսքի. «Ինքն ասես Փեսա լինի, որ ելնում է իր առագաստից» (Սաղմ. ԺԸ 6), և պատրաստներին ներս է մտցնելու, իսկ ծույլերի համար փակելու է արքայության դուռը։ Այն, ինչ լինելու է այն ժամանակ, այժմ պվետարանվում է մեզ, որ զգաստ ու արթուն լինենք, այդ պատճառով էլ

գրված է. «Այն ժամանակ Երկնքի արքայությունը պիտի նմանեցվի տասը կույսերի» (Մատթ. ԻԵ 1):

Նախ տեսնենք, թե ինչո՞ւ է առակներով խոսում: Ասենք, որ չորս պատճառով: Նախ, որ կատարվի մարդարեությունը. «Առակով պիտի բացեմ բերանն Իմ, սկզբից ևեթ առակներով պիտի խոսեմ» (Սաղմ. ՀԵ 2): Երկրորդ՝ առակով ասված խոսքը հաստատվում է մարդու սրտում: Երրորդ՝ քանի որ տկար է մեր լսողությունը, և ինչպես տեսնելով գիրը՝ նրանում թաքնված խորհուրդն ենք ճանաչում, այդպես էլ առակներով խոսելիս ճանաչում ենք իմաստությունը: Չորրորդ՝ այս կյանքն օրինակն է, իսկ հանդերձալը՝ ճշմարտությունը, և օրինակի միջոցով ճշմարտությունն ենք հասկանում, ինչպես ասում է առաքյալը. «Արդարեւ, ի սկզբանե աշխարհի Աստծու աներեւյթ հատկությունները, այն է՝ Նրա մշտնջենավորությունը, զորությունը և Աստվածություննը, իմանալի կերպով տեսանելի են Նրա ստեղծածների մեջ» (Յօհն. Ա 20): Այդ պատճառով էլ մեր Տերը երկրի վրա առակներով և օրինակներով խոսեց, իսկ ճշմարտությունը ցույց կտա հանդերձալում:

Այժմ տեսնենք, թե ինչո՞ւ են կույսերը տասը: Կուսությունն այդ ժամանակներում մեծ ու պատվական էր մյուս բոլոր առաքինություններից, ինչը հայտնի է երեք հանգամանքից: Նախ որ՝ քչերն ընտրվեցին և սրբվեցին կուսությամբ, ինչպես եղիան ու եղիսեն Հին Ռւխտում, և Հովհաննես Մկրտիչը՝ նոր Ռւխտում, իսկ այլ առաքինություններ մարդարեներից ու առաքյալներից շատերն ունեին:

Երկրորդ՝ Ավետարանն ասում է. «Ներքինիներ էլ կան, որոնք Երկնքի արքայության համար իրենք իրենց ներքինիներ են դարձել. ով կարող է տանել, թող տանի» (Մատթ. ԺԹ 12): Նաև Պողոս առաքյալն է ասում. «Դսկ կույսերի մասին Տիրոջից հրաման չունեմ. բայց խրատ եմ տալիս, որպես Տիրոջից ողորմություն գտած մեկի, որ վստահելի է» (Ա Կորնթ. Է 25), կամ՝ «Աղաչում եմ ձեզ, նմանվեցեք ինձ» (Ա Կորնթ. Դ 16):

Տասը կույսեր ասելով նկատի ունի բոլոր հավատացյալներին, նաև՝ ամբողջ մարդկային ցեղը, ինչպես նաև՝ չարն ու բարին: Ինչպես մեկ այլ առակում տասը դրամների մասին պատմեց, որից մեկը կորած էր, այսինքն՝ մարդկային ցեղը: Նաև՝ տասը մնասների և տասը քանքարների առակները պատմեց, դրանցով մարդկանց բոլոր շնորհները ցույց տալով: Քանի որ տասը կատարյալ թիվ է և ցույց է տալիս, որ նրանք, ովքեր Աստծուն են նվիրում իրենց անձերը, կատարելապես ունենալով բոլոր առաքինությունները, արժանի են երկնքի արքայությանը:

Երկրորդ՝ աշխարհի մասերը տասն են, և տասներորդը երկինքն է, այսինքն՝ յոթը գոտիները, ապա՝ հաստատությունը, այնուհետև՝ ջրեղեն

ու հրեղեն երկինքը, ինչը վեր է բոլոր երկինքներից: Դա ցույց է տալիս, որ աշխարհի բոլոր մասերից կույսերի համար որպես տեղ պատրաստված է հրեղեն երկինքը, ինչը վեր է, քան ամբողջ աշխարհը:

Երրորդ՝ հրեշտակների դասերն ինն են, և մարդը տասներորդն է նրանց թվում, ինչը ցույց է տալիս, որ միայն կույսերն են խառնվելու հրեշտակների դասերին և լրացնելու ընկած հրեշտակների տեղերը, քանի որ կուսության գործը հրեշտակներինն է:

Չորրորդ՝ մարդը ունի տասը զգայարան, որից հինգը հոգունն են, հինգը՝ մարմնինը, դրանով են մեր մեջ գործում բարին ու չարը: Եվ ովքեր կույս են և սուրբ տասը զգայարաններով, այսինքն՝ մտքով, հոգով ու մարմնով, նրանք արժանանալու են վերին առագաստին: Այդ պատճառով է հինգին հիմար և հինգին իմաստուն անվանում: Իմաստունները հոգու զգայարաններն են, իսկ հիմարները՝ մարմնինը: Տասը կույսերը նաև խորհրդանշում են արդարներին ու անիրավներին:

Իսկ ի՞նչ են խորհրդանշում լապտերն ու յուղը: Վարդապետներն ասում են, որ լապտերը կուսության շնորհն է: Նախ՝ լապտերը (յույսը) սուրբ է և հստակ, իսկ կուսությունը սրբում է և հստակեցնում մարդու հոգին ու մարմինը: Երկրորդ՝ լապտերը պայծառ է և լուսատու, նաև կուսությունն է պայծառ և լուսավոր դարձնում մարդու միտքը: Երրորդ՝ լապտերը փարատում է խավարը, նաև կուսությունն է փարատում մեղքերի ու անգիտության խավարը: Չորրորդ՝ լապտերը ճանապարհն է ցույց տալիս, իսկ կուսության սրբությունը ցույց է տալիս երկնքի արքայության ճանապարհը, այդ պատճառով էլ կուսության շնորհը լապտեր է կոչվում:

Յուղը խորհրդանշում է ողորմությունն ու մարդասիրությունը: Նախ՝ յուղը լույսի նյութ է, իսկ ողորմությունը նյութ է մշտնշենավոր կյանքի լույսի: Երկրորդ՝ յուղը բոլոր իրերից վեր է բարձրանում, իսկ «Ողորմածությունը բարձրագլուխ պարծենում է դատաստանի դիմաց» (Ղակ. Բ 13): Երրորդ՝ յուղը պարարտ է ու զգարթուն, նաև ողորմությունը պարարտացնում է և զգարթացնում հոգին: Չորրորդ՝ յուղն ամենուր անարգել մտնում է, իսկ իր մեջ ոչինչ չի մտնում, այսպես էլ՝ ողորմությունն առանց արգելքների մտնում է Աստծու, սրբերի ու հրեշտակների մոտ և ծածկում ու քավում է բոլոր մեղքերը, իսկ ինքը մեղքերից չի ծածկվում ու պարտանմ, ինչպես ասում է Դանիելը. «Քո մեղքերը քավի՛ր ողորմությամբ, և քո անօրինությունները՝ աղքատներին գթալով, թերևս Աստված Համբերատար լինի քո հանցանքների նկատմամբ» (Ղան. Դ 24):

Դարձյալ՝ լապտերը կազմված է երեք մասերից՝ յուղից, պատրույգից և լույսից, և եթե դրանցից մեկը պակասի, ապա լապտերը կմարի: Այսպես

և հոգու լապտերն է կազմված երեք բաղադրիչներից՝ կուսությունից, ողորմությունից և դիտավորությունից: Կուսությունը լույսն է, մարդասիրությունը՝ յուղը, իսկ ճշմարիտ դիտավորությունը՝ պատրույգը, և երբ կուսությունը, ողորմությունը և արքայության դիտավորությունն ի սեր Քրիստոսի է արված, ապա դրանցով վառվում է հոգու լապտերը:

Դարձյալ՝ ձեթը ողորմություն է աղքատի նկատմամբ, պատրույգը՝ պահքը, ինչով ցամաքում է մարմնի գիծությունը, և հուրը՝ ջերմեռանդ սերն առ Աստված և առ ընկերը, ինչով վառվում է հոգու լապտերը:

Իսկ ինչու՞ է երկնքի արքայությունը փեսայի ու հարսի առակով ցույց տալիս: Հայտնի է, որ Ավետարանում երկնքի արքայությունը, իր անասելի բարիքների ու վայելքների պատճառով, երբեմն ընթրիք է կոչվում, սակայն Արքայությունը մարմնավոր ուտելիքի և ըմպելիքի տեղ չէ, այլ՝ հոգեսոր ու աստվածային: Այդպես է հրեշտակների համար, ովքեր միշտ կերակրվում են Աստծու իմաստությամբ:

Երկնքի արքայությունը նաև Դրախտ է կոչվում, ինչպես ասաց Տերն ավագակին. «Այսօր Ինձ հետ Դրախտում կլինես» (Ղուկ. ԻԳ 43), այսինքն՝ արքայությունում: Երբեմն էլ Արքահամի գոգ է կոչվում, քանի որ Ղազարոսը հանգստացավ Արքահամի գոգում (Ղուկ. ԺԶ 23), իսկ Արքահամը հավատացյալների հայրն է, և իր որդիները իր հետ են հանգստանում: Իսկ այս դեպքում երկնքի արքայությունը փեսա ու հարսանիք է անվանում:

Հարսանիք է կոչվում երկու պատճառով. նախ՝ Արքայությունը անտրասում ուրախություն է, և երկրորդ՝ քանի որ Աստված իր ծառաների հետ սիրով է միավորվելու: Եվ գերազանց է Քրիստոսի միավորությունը եկեղեցու հետ, քան մարմնավոր հարսանիքի դեպքում, ինչպես գերազանց է լույսը խավարից:

Քրիստոսի միությունը եկեղեցու հետ գերազանց է, քան Նրա միությունը հրեշտակների հետ երեք պատճառով: Նախ՝ Քրիստոս նրանց հետ միավորված է այնպես, ինչպես Տերը ծառայի հետ, իսկ եկեղեցու հետ Քրիստոս միավորվում է, ինչպես փեսան հարսի հետ և ինչպես՝ գլուխն անդամների հետ:

Երկրորդ՝ հրեշտակների հետ միավորված է, ինչպես այլն այլի հետ՝ ինչպես բնութենակից ու գոյակից:

Երրորդ՝ Քրիստոսի միջնորդությամբ եկեղեցին միավորվում է Հայր Աստծու և Սուրբ Հոգու հետ՝ ըստ այս խոսքի. «Որպեսզի ամենքը մի լինեն. ինչպես Դու, Հայր, Իմ մեջ, և Ես՝ Քո մեջ, որպեսզի նրանք էլ Մեր մեջ լինեն... Եվ Ես տվեցի Նրանց այն փառքը, որ Դու Ինձ տվեցիր, որպեսզի մի լինեն, ինչպես և Մենք մի ենք: Ես՝ Նրանց մեջ, և Դու՝ Իմ մեջ, որպեսզի կատարյալ լինեն միության մեջ» (Յովհ. ԺԵ 21-22): Այսպիսի

գերազանց միության համար է երկնքի արքայությունը փեսա ու հարս անվանվում:

Իսկ այժմ տեսնենք, թե երբ կույսերը դուրս եկան փեսային ընդառաջ՝ թվում է, թե երբ մահացան կամ երբ հարություն առան գերեզմանից: Սակայն Ոսկեբերանն առում է, թե երբ հրաժարվեցին այս աշխարհի կյանքից ու գնացին երկնավոր ճանապարհով, երբ ընտրեցին նեղ ու անձուկ ճանապարհը: Երբ աշխարհիկ փափուկ հաճույքներն աղտեղի համարեցին և ցանկացան երկնքի արքայությունը, երբ ցանկացան Սուրբ Փեսային՝ Քրիստոսին, այդժամ էլ դուրս եկան Փեսային ընդառաջ:

Ովքեր իրենց լապտերներն առած՝ փեսային և հարսին դիմավորելու ելան – Յուրաքանչյուր մարդ, իր կատարած գործերով, պիտի կանգնի Քրիստոսի ահավոր ատյանի առջե:

Նրանցից հինգը հիմար էին, իսկ հինգը՝ իմաստուն –

Իմաստունները հինգն էին, ինչպես իմաստուն են հոգու հինգ զգայարանները, քանի որ բանական են և ցանկանում են հոգեորը, իսկ մարմնի զգայարանները հիմար են, քանի որ ցանկանում են մարմնավորը: Նաև նրանք են իմաստուն, ովքեր հոգեոր և աստվածային կյանքն են ցանկանում ու հասնում են դրան, և հիմար են նրանք, ովքեր մարմնավորն են ցանկանում ու զրկվում հոգեորից:

Երկրորդ՝ իմաստուն են նրանք, ովքեր անձի կուսությանն ու սրբությանը ողորմածությունը խառնեցին, քանի որ ոչ միայն պահքով ու աղոթքներով է մարդն իրեն սրբում, այլև աղքատներին ողորմություն տալով՝ ըստ այս խոսքի. «Ողորմությամբ ու հավատով մաքրվում է մեղքը» (Առակ. ժԵ 27), նաև՝ «Քո մեղքերը քավի՛ր ողորմությամբ» (Դան. Դ 24):

Երրորդ՝ իմաստուն են նրանք, ովքեր բարի գործերը հավատի հետ են խառնում, քանի որ. «Մեռած է հավատն առանց գործերի» (Յակ. Բ 26): Քանզի՝ ինչպես արծիվը երկու թևերով է թռչում, նույնպես և մարդը հավատով և գործով է երկինք բարձրանում:

Չորրորդ՝ իմաստուն են նրանք, ովքեր լսում են Փեսայի ձայնը և մտապահում նրա ասածը. «Ողորմություն եմ ցանկանում և ոչ թե զոհ» (Օվսե Զ 6): Այսինքն՝ Աստծուն առավել հաճելի է ողորմությունը, որ անում ենք աղքատների համար, քան զոհերը, պատարագները և աղոթքը՝ ըստ այս խոսքի. «Ողորմածությունը բարձրագլուխ պարծենում է դատաստանի դիմաց» (Յակ. Բ 13):

Հինգերորդ՝ իմաստուն են նրանք, ովքեր նախապես պատրաստեցին լապտերների յուղը, ինչպես մարդարեն է ասում. «Պատրաստեցի և չխռովեցի». սա քաղցածին կերակրելն է, մերկին հագցնելը և այլն: Իսկ հիմար կույսերին այս բոլոր խոսքերը դեմ են, քանզի հիմարություն է

սիրել մարմինը, որն անցավոր է, և ատել հոգին, որն անանց է: Երկրորդ՝ Հիմարություն է, որ պահեցին կուսության մեծ գործը, սակայն իրենց ընչասիրության պատճառով՝ պոռնիկների հետ գուրս մնացին: Երրորդ՝ գարձալ հիմար են նրանք, ովքեր իրենց ընկերոջն այստեղ չեն ողորմում, իսկ այնտեղ ընկերոջից ողորմություն են խնդրում: Չորրորդ՝ Հիմար են նրանք, ովքեր այստեղ իրենց ինչքերը շատացնում են և այնտեղ մերկ մնում: Հինգերորդ՝ Հիմար են նրանք, ովքեր այն ժամին կամեցան ստանալ յուղն ու ողորմությունը, երբ բարություն գտնելու ժամանակը անցել էր, քանի որ այն ժամանակ այլևս ոչ ողորմություն կլինի, ոչ՝ գնել ու վաճառել և ոչ էլ՝ գողանալ: Եվ այդ պատճառով ասում է առաքյալը. «Ահա Հիմա է ընդունելի ժամանակը, ահա Հիմա է փրկության օրը» (Բ Կորնթ. Զ 2):

Հիմարները լապտերներն առան, բայց իրենց հետ պահեստի ձեթ չվերցրին: Իսկ իմաստուններն իրենց լապտերների հետ միասին ամանաներով ձեթ վերցրին – Անխոհեմները վերցրին ամանները, սակայն ձեթի համար հոգ չտարան, ինչը խորհրդանշում է մարդու մարմինն առանց բարի գործերի: Իսկ խոհեմներն իրենց ամաններով ձեթ վերցրեցին, դրանով իրենց հողանյութ մարմինը կրթեցին արդարության գործերով:

Եվ երբ փեսան ուշացավ, ամենքն էլ նիրհեցին և քուն մտան – Բոլոր մարմինները գերեզման գնացին: Այս խոսքը նաև ցույց է տալիս, որ մինչ Քրիստոսի գալուստը գեռ ժամանակ կա: Երկրորդ՝ աշակերտների համար է ասում, որպեսզի չակնկալեն, թե Քրիստոսի արքայությունը փութով է գալու: Երրորդ՝ իմաստասերներն ասում են, թե մահը հավիտենական քուն է, իսկ քունը՝ առժամանակյա մահ, քանի որ երկու դեպքում էլ թե՛ ննջածների և թե՛ մեռածների զգայարանները խափանվում են: Երկրորդ՝ հոգին առանձնանում է և ինքնըստինքյան ներգործում ինչպես քնի, այնպես էլ մեռած ժամանակ: Երրորդ՝ ինչպես ձայնը հեշտությամբ է արթնացնում քնից, այնպես էլ դյուրին է Քրիստոսի համար միայն ձայնով արթնացնել բոլոր մեռածներին: Ինչպես Ղազարոսին միայն ձայնով կանչեց գերեզմանից և հարություն տվեց, այդպես էլ բոլոր մեռածներին հարություն պիտի տա՝ ըստ այս խոսքի. «Կգա ժամանակ, երբ բոլոր նրանք, որ գերեզմաններում են, կլսեն նրա ձայնը և դուրս կդան» (Յովի. Ե 28-29):

Եվ կեսպիշերին ձայն լսվեց՝ ահա՝ փեսան գալիս է, նրան դիմավորելո՛ւ ելեք – Մինչ մարմինները գերեզմանում են, պիտի հնչի հարության փողը և բոլորը պիտի արթնանան: Ասում է «կեսպիշերին», քանի որ այն ժամին, երբ հարություն առավ Քրիստոս, նույն ժամին էլ հարություն են առնելու բոլոր մարդիկ, այսինքն՝ կիրակի օրը՝ գիշերամիջին:

Եվ ինչպես Մինա լեռան վրա Աստված իջակ փողի որոտմամբ, հրով ու մեգով, այդպես էլ աշխարհի վախճանին կերևա՝ հրեշտակների փողերով,

խոսքերով և որոտումներով, ինչպես ասում է Պողոսը. «Որովհետեւ Տերն ինքը, ազդաբարության նշանով, հրեշտակապետի ձայնով և Աստծու շեփուրով պիտի իջնի երկնքից, և Քրիստոսով մեռածներն առաջինը Հարություն պիտի առնեն» (Ա Թես. Դ 15): Առաջին փողերը մարդարեներն էին, միջին փողերը՝ առաքյալներն ու վարդապետները, ովքեր քարոզեցին ամբողջ աշխարհում, իսկ վերջին փողերը հրեշտակների բարբառն է լինելու:

Ահա՛ փեսան գալիս է, նրան դիմավորելու ելեք: Այն ժամանակ բոլոր կույսերը վեր կացան և իրենց լապտերները կարգի բերեցին – Քնից արթնացան և լապտերները գործի դրեցին: Իմաստունների լապտերներն այրվում էին, քանի որ յուղ ունեին, իսկ Հիմարներինը՝ մարում:

Հիմարները իմաստուններին ասացին. «Զեր այդ յուղից տվե՛ք մեզ, որովհետեւ ահա մեր լապտերները հանգչում են – Այն ժամանակ էին խնդրվում, երբ ոչ ոք չէր կարող կատարել:

Իմաստունները պատախաննեցին. «Գուցե թե՛ մեզ և թե՛ ձեզ չբավականացնի, ուստի գնացե՛ք վաճառողների մոտ և ձեզ համար գնեցե՛ք – Թե՛պետ իմաստուն կույսերը մարդասեր էին, սակայն չկատարեցին խնդրանքը ու չողորմեցին: Թեպետ Հիմարները թախանձագին խնդրեցին, սակայն չստացան յուղը: Սա ցույց է տալիս, որ ժամանակը չէ ողորմելու, ոչ թե չկամության պատճառով, այլ որովհետեւ ձեռնահաս չեն տալ այն, ինչ խնդրվում է իրենցից: Սա նաև Աբրահամն է ասում մեծահարուստին. «Եվ այս բոլորից բացի, մեծ վիճ կա մեր և ձեր միջև. եթե ուզենան այստեղից ձեզ մոտ անցնել, չեն կարողանա. ոչ էլ այդտեղից մեկը կարող է մեզ մոտ անցնել» (Ղուկ. ԺԶ 26): Այդ պատճառով էլ ասացին. «Գնացե՛ք վաճառողների մոտ և ձեզ համար գնեցե՛ք»: Իսկ ովքե՞ր են յուղ վաճառողները. աղքատները, մուրացկանները, որբերն ու այրիները, հիվանդները, քաղցածները, ծարավները, կաղերն ու կույրերը: Նրանք են, որ վաճառում են մեզ լապտերի յուղը: Նրանք են մեր հոգիներին գարուն բերում: Նրանք են միջնորդն ու բարեխոսը Տիրոջ առջև դատաստանի օրը:

Եթե նրանք գնացին, որ գնեն, փեսան եկավ Այսինքն՝ եկավ արդարների խնդրությունն ու պարծանքը՝ Քրիստոս:

Ովքեր պատրաստ էին, նրա հետ հարսանիքի սրահը մտան, ու դուռը փակվեց – Հիմարները ցանկանալով տեսնել երկնավոր Առագաստը՝ արհամարհեցին հաճույքները, հրաժարվեցին աշխարհից, պատերազմեցին ցանկությունների դեմ, բայց քանի որ յուղ չունեին, այսինքն՝ ողորմած չէին, երկնքի արքայության դուռը փակվեց նրանց առջև:

Հետո եկան մյուս կույսերն էլ ու ասացին. «Տե՛ր, տե՛ր, բա՛ց արա»: Նա պատախան տվեց ու ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզ չեմ ճանաչում» – Վերջին վշտերի ու անխուսափելի աղետի ժամանակ Տերը

Հրեշտակների միջոցով չի խոսում, այլ ինքն է պատասխան տալիս, որովհետև չի լինելու միջնորդ ու բարեխոս: Եվ կույսերը մեծագույն տանջանք կրեցին, քանի որ Տիրոջ ձայնը լսեցին, բայց դեմքը չտեսան:

Ճշմարիտ եմ ասում ձեզ – Այսինքն՝ «Ստույգ ճշմարտությունն եմ ասում ձեզ, թե ձեզ չեմ ճանաչում»: Պետք է իմանալ, որ մարդը չորս պատճառով չի ճանաչվում: Նախ՝ երբ փոխված է լինում երեսի գույնը, որն առաջ սպիտակ էր, իսկ հետո՝ սև: Այսինքն՝ նրա հոգին առաջ սպիտակ էր, իսկ հետո մեղքերից սեացավ, և Քրիստոս նրան չճանաչեց:

Երկրորդ՝ եթե մեկը ծածկի իր երեսը, ոչ ոք նրան չի ճանաչի: Այսինքն՝ եթե մեկը ծածկի իր երեսը և չխոստովանի, Քրիստոս նրան չի ճանաչի, քանի որ մեղքը նման է ածուխի, որը հողի տակ չի ապականվում, իսկ հողի վրա քայլքայվում է արեից ու անձրեկից: Այդպես էլ՝ եթե մեր մեղքերը ծածկենք ու չխոստովանենք, այն ամեններն չի քայլքայվի, իսկ եթե հայտնենք՝ անմիջապես կջնջվի:

Երրորդ՝ եթե նախկին նշանը փոխվի, նրան ոչ ոք չի ճանաչի: Այդպես էլ՝ եթե մեկը փոխի հավատը և ուրանա Քրիստոսին, ո՛չ Քրիստոս նրան կճանաչի, ո՛չ էլ՝ հրեշտակները:

Չորրորդ՝ երբ մեկը մանուկ հասակում գնա օտար երկիր և մինչև ծերություն մնա այնտեղ, նրան ոչ ոք չի կարող ճանաչել: Այսպես էլ՝ եթե մեկն օտարանա Աստծու պատվիրաններից, իր մանկության օրերից մինչև ծերություն, Աստված նրան չի ճանաչի:

Արդ՝ հիմար կույսերը մանկությունից ի վեր պահեցին կուսությունը, սակայն մարած լապտերներով, ամոթալից երեսներով և մթնած աչքերով գլխիկոր գնացին, քանի որ իրենց ընկերոջ նկատմամբ ողորմած չեղան:

Երեք Ծառաւերի առաւելացություն (Մատթ. ԻԵ 14-30)

Նույնպես, մի մարդ, հեռու երկիր գնալիս – Հեռու երկիր ասելով նկատի ունի երկինքը, իսկ ասելով «Կանչեց իր ծառաներին» նկատի ունի արարածներին:

Եվ իր ունեցվածքը նրանց տվեց. մեկին տվեց հինգ քանքար, մյուսին՝ երկու, և մի ուրիշին՝ մեկ – երեք ծառաներն են՝ հոգին, միտքը և մարմինը, որոնց Տերը ավանդեց քանքարները: Առաքյալը սովորեցնում է, որ յուրաքանչյուրն իր ունեցվածքն ավանդ է ստացել գործ անելու համար:

Առաջինին հինգ քանքար տվեց, այսինքն՝ երկնային քարոզություն, մյուսին՝ երկու, այսինքն՝ հոգեկոր խրատ կամ որևէ օգտակար երկրավոր գործի շնորհ: Իսկ մեկ քանքարը հոգեկոր կամ մարմնավոր շնորհն է: Նա,

ով հինգ շնորհ ստացավ, հինգ հոգու ևս սովորեցրեց. աճեցրեց խոսքը շատերի մեջ տարածելով և մեծ արդյունք ստացավ: Նույնպես նա, ով երկու շնորհ ստացավ, ևս երկու հոգու սովորեցրեց: Իսկ նա, ով մեկը ստացավ, չար նախանձով թաղեց աստվածային պարգևն իր հողացած սրտում՝ լուռ ու փակ բերանով, ոչ մեկին չսովորեցրեց և իր խոսքով որևէ մեկին օգուտ չտվեց: Մեկ քանքարը նաև հավատն է, և եթե մեկն այն ունի առանց գործերի, պիտի դատվի:

Երբ Տերը գա, հաշիվ կպահանջի իր արարածներից: Եվ նա, ով քանքարները ճիշտ է օգտագործել, երկնքի արքայությունում մեծ կկոչվի, իսկ նա, ով չի սերմանել աստվածային պարգևը, դուրս կհանվի արտաքին խավարը, ուր կա անվերջ լաց ու ատամների կրծտում:

Վերջին Դատաստան (Մատթ. ԻԵ 31-46)

Արդ՝ երբ որ Մարդու Որդին գա իր փառքով – «Մարդու Որդի» անվանումը ցանկալի է Հիսուսին և շատ անդամ է նա իրեն այդպես կոչում, քանի որ «Աստծու Որդի» անունը իր սեփականն է, իսկ Մարդու Որդի մեզ համար է դարձել: Եվ ասում է, որ բոլոր հրեշտակներն իր հետ պիտի գան, քանի որ իր ծառաներն են:

Այն ժամանակ նա պիտի նստի իր փառքի գահի վրա, ու նրա առաջ պիտի հավաքվեն բոլոր ազգերը, և նա նրանց միմյանցից պիտի զատի, ինչպես մի հովիվ, որ զատում է ոչխարները այծերից – Արդարներին ու մեղավորներին համեմատում է այծերի ու ոչխարների հետ, քանի որ նրանց համար ավելի հարմար համեմատություն չկա: Եվ ինչպես լույսի ու խավարի, այնպես էլ նրանց միջև անջրպես դրեց: Ոչխարներին կանգնեցնում է իր աջ կողմում, իսկ այծերին՝ ձախ, և դրանով զատում միմյանցից արդարներին ու մեղավորներին:

Այն ժամանակ Թագավորը պիտի ասի նրանց, որ իր աջին են. «Եկե՛ք, իմ Հոր օրՀնյալնե՛ր, ժառանգեցե՛ք աշխարհի սկզբեց ձեզ համար պատրաստված արքայությունը. որովհետեւ քաղցած էի, և ինձ ուտելիք տվիք, ծարավ էի, և ինձ ջուր տվիք՝ խմելու. օտար էի, և ինձ ձեր մեջ առաք, մերկ էի, և ինձ հագցրիք, հիվանդ էի, և ինձ տեսնելու եկաք, բանտում էի, և ինձ այցի եկաք – Քանի որ ողորմածությունն ու մարդասիրությունը պատճառ դարձան նրանց փառքի:

Երանելիները պիտի ասեն Տիրոջը. «Դո՛ւ բոլորիս Աստվածն ես և բոլորիցս էլ վեր ես, և մենք Քեզ երեւէ չենք տեսել իբրև կարոտյալ, այլ Դո՛ւ Քո ողորմությամբ ու անմահ գործերով մեզ փրկեցիր»: Իսկ Տերը

պիտի պատասխանի. «Զեզանից խնդրողներին բարիք անելով, ինձ արեցիք»:

Այն ժամանակ նա պիտի ասի նրանց, ովքեր իր ձախ կողմում են. «Անիծյալնե՛ր, գնացե՛ք ինձնից հավիտենական կրակը, որ պատրաստված է սատանայի և իր հրեշտակների համար. որովհետև քաղցած էի, և ինձ ուտելիք չտվիք, ծարավ էի, և ինձ ջուր չտվիք, օտար էի, և ինձ ձեր մեջ չառաք, մերկ էի, և ինձ չհագցրիք, հիվանդ էի ու բանտի մեջ, և ինձ տեսնելու չեկաք – Այդ ժամանակ թշվառները պիտի զարհուրած ասեն. «Տե՛ր, ե՞րբ տեսանք Քեզ այդպես աղքատ ու չայցելեցինք»: Իսկ ամենակալ Տերը նրանց պիտի պատասխանի. «Քանի որ բոլորի հետ մարդատյացությամբ վարկեցիք, այդ պատճառով էլ իմ հանդեպ բարիք չգործեցիք»: Եվ նրանք պիտի գնան դժոխք, իսկ արդարները՝ դեպի հավիտենական կյանք, ինչին նաև մենք հասնենք՝ մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի շնորհներով ու մարդասիրությամբ:

ԱՎԱԳ ԶՈՐԵՔԾԱԲԹԻ

Օրվա երեքսրբյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ Եկիր և գալոց ես, ողորմեա' մեզ»:

Այսօր հիշատակն է արարչության չորրորդ օրվա, երբ Աստված ասաց.

Թող լուսատուներ լինեն երկնքի տարածության մեջ, որպեսզի լուսավորեն երկիրը և իրարից բաժանեն ցերեկն ու գիշերը: Դրանք թող լինեն, որպեսզի ցույց տան տարվա եղանակները, տոնական օրերն ու տարիները, թող լինեն, ծագեն երկնքի տարածության մեջ՝ երկիրը լուսավորելու համար (Ծննդ. Ա 14-15) – եվ եղավ այդպես: Եվ արարեց Աստված երկու մեծ լուսատուներն ու աստղերը և դրեց երկնքի հաստատությունում:

Արարչության օրերին ժամանակը գարնանային էր, և ցերեկն ու գիշերն իրար հավասար էին: Առաջին օրը լույսը լուսեղեն երկնքից տասներկու ժամ շարունակ տարածվում էր ջրերի վրա, ապա երեկոյան վերադառնում այնտեղ, որտեղից ծագել էր առավոտյան, և այդպես մնում տասներկու ժամ արփիին կից: Երկրորդ օրը լույսը դարձյալ տարածվում էր ջրերի վրա տասներկու ժամ և գիշերը հավաքվելով՝ մնում էր Հյուսիսային կողմում՝ ծածկվելով անհալ ամպով, և լինում էր գիշերը: Իսկ երրորդ օրը՝ երեկոյան, գնդացյալ լույսը հավաքվեց Դրախտի վրա:

Այդ երեք օրերին լույսն աննյութ ու անմարմին էր Երեքանձնյա Աստվածության Լույսի նմանությամբ: Չորրորդ օրն Աստված արարեց արեգակը, լուսինը և աստղերը և վերցնելով պարզ, վճիտ, պայծառ ու հրաշատ լույսը՝ դրեց լուսատուների մեջ և դրանով գարդարեց երկինքը, ինչպես երկիրը՝ բույսերով ու տնկիներով:

Այդպիսով՝ Տերն այսօր լույսը դնում է հաստատության ներսում, որպեսզի լուսավորի երկիրը, և որպեսզի երբ աչքով տեսնենք, մտքով վերինը խորհենք, ուր Աստու աջ կողմում նստած է Քրիստոս: Նաև որպեսզի իմանանք, որ Եթե երկնքի արտաքին սրահն այսպես է զարդարված, ապա որքան առավել՝ իմանալի դասերի սրբության ներքին կողմը: Որպեսզի մտածենք նաև մեր առաջին փառքի մասին ու ցանկանանք այն:

Արեգակը ցերեկը լուսավորում է երկիրը, իսկ լուսինը գիշերը միսիթարում ստվերների տիրությունը: Պետք է իմանալ, որ արեգակի հետ նաև աստղերն արարվեցին, իսկ Քրիստոսի ծնվելով՝ արդարների ու սրբերի դասերը՝ աստղերի նմանությամբ, հավատով որդիանալով Աբրահամին, և բազմացան Քրիստոսի՝ Արդարության Արեգակի փառքի համար: Եվ ցերեկա սպառումով և գիշերվա ամբողջացումով լինում է չորրորդ օրը:

Չորրորդ դարի Պատմերը

Ավագ չորեքշաբթին նաև պատկերն է չորրորդ դարի, որը սկիզբ է առել Սերուքի իննսունվեցերորդ տարում¹ և հասել մինչև Մամվել մարդարեի տասներորդ տարին։ Չորրորդ դարում եղավ Աբրահամի ավետիսը, Հրեաների՝ Եգիպտոսից գուրս գալը, Վկայության խորանի պատրաստումը և Խորայելի որդիների՝ Ավետյաց երկրի ժառանգումը։ Այն, ինչ Աբրահամին չորրորդ դարում Աստված խոստացավ մասնավորապես, ամբողջապես կատարվեց Քրիստոսով։

Եվ Աստված Աբրահամին երեաց Մամբրեի կաղնու մոտ, երբ նա կեսօրին դեռ նստած էր իր վրանի դռան մոտ (տես Ծննդ. Ժ 1-8)։ Աբրահամը բարձրացրեց աչքերը և իր դիմաց տեսավ երեք տղամարդկանց։ Այս պատմությունը ևս ունի առաջին և երկրորդ գալուստների խորհուրդը։ Երեք եկվորները խորհրդանշում են Սուրբ Երրորդությունը։ Աբրահամի ընդառաջ գնալը խորհրդանշում է բոլորին հավատն առ Քրիստոս։ Իսկ անստվեր Լույսի ծագումը միջօրեին խորհրդանշում է արդարության ճառագայթները և արդարների լուսավոր խորհուրդը, ովքեր մաս ու առնչություն չունեն խավար աշխարհի հետ։

Աբրահամը նրանց ասաց. «Տե՛ր, եթե չնորհ գտա Ք.ո առաջ, Ք.ո ծառային անտես մի՛ արա, թող մի քիչ ջուր բերեն, լվան ձեր ոտքերը, ապա հովացե՛ք ծառի տակ։ Հայ բերեմ, կերե՛ք»։ Նրանք պատասխանեցին. «Արա՛ այնպես, ինչպես ասացիր»։ Աբրահամն շտապեց գեպի վրանը՝ Սառայի մոտ, և ասաց նրան. «Շտապի՛ր, երեք գրիվ ընտիր հունցի՛ր ու նկանակ պատրաստի՛ր»։ Ապա գնաց գեպի նախիրը, ընտրեց մի մատղաշ, լափ հորթ, տվեց ծառային ու հրամայեց, որ կերակուր պատրաստի։ Նա վերցրեց կարագ, կաթ, հորթի մսից պատրաստված կերակուրը և դրեց Հյուրերի առաջ։ Նրանք կերան, իսկ ինքը կանգնած մնաց նրանց առջև՝ ծառի տակ։

Կաղնու տակ նստելն ակնարկում է մարդու ակնկալությունը կուռքերից և տերեւազարդ ծառերից։ Կաղնու անօգուտ պտուղը հեթանոսների հույսն է, ինչպես ասում է Պողոսը. «Իսկ արդ, ի՞նչ պտուղ ունեիք այն ժամանակ» (Յոհ. Զ 21):

Երեք գրիվ ալյուրը և երեք բաղարջները խորհրդանշում են Սուրբ Երրորդության խոստովանությունը, որով Աբրահամն արժանի եղավ սեղանը սպասավորելուն։ Կարագը Սուրբ Հոգու շնորհն է խորհրդանշում՝

¹ Սերուքը ծնվել է Ադամից հետո՝ 3029 թվականին, և նրա 96 տարին լրանում է 3125 թվականին։ Սա ջրհեղեղից հետո 883 թվականն է, Բաբելոնի աշտարակաշինությունից ու լեզուների բաժանումից 358 տարի անց (տես՝ Դաւիթ քահանայ, «Սատեան գիտութեան և հաւատոյ»):

ըստ առակողի. «Օծման յուղը չպակասի քո գլխից» (Ժող. Թ 8): Կաթը մանուկների վարդապետությունն է՝ ըստ Պողոսի. «Դերև մանուկներ ի Քրիստոս կաթ տվեցի ձեզ» (Ա Կորնթ. Գ 2): Հորթն օրինակն է այն զվարակի, որ հայրը մորթեց անառակ որդու դարձի կապակցությամբ: Նկանակների խարույկի մեջ դնելը՝ թիսելը, Տիրոջ երեքօրյա թաղումն է խորհրդանշում, իսկ Խաչակի ծննդյան ավետիսը՝ նոր Սառայից, այսինքն՝ սուրբ Կույսից, Տիրոջ ծնվելու ավետումը:

Իսկ այս խոսքը՝ «Մի՞թե ես իմ ծառա Աբրահամից գաղտնի պիտի պահեմ այն, ինչ անելու եմ» (Ծննդ. Ժ 17), Հայտնում է, որ Տերը խորհրդակցում է արդարների հետ: Եվ ինչպես թագավորներն իրենք են պարզեներ շնորհում իրենց ծառաներին, իսկ դահիճներին հրամայում պատմել, այդպես էլ Տերը Աբրահամին պատվեց ավետիսով, իսկ ծառաներին հրամայեց պատմել Սոդոմին (Մեն Ծննդ. Ժ Թ):

Հրեշտակների երեկոյան Սոդոմ գնալը խորհրդանշում է Տիրոջ երկրորդ գալուստը և ամբարիշտների պատիժը: Ղովտի փրկությունը խորհրդանշում է արդարների փրկությունը, իսկ Ղովտի կնոջ աղե արձան դառնալը խորհրդանշում է չարությունից հրաժարվածների դարձյալ դեպի չարը վերադառնելը և դրա հատուցումը՝ չարաչար պատիժը: Արեգակի ծագելը Ղովտի Սեպոր մտնելու պահին խորհրդանշում է Արդարության Արեգակի ծագմամբ մեր Եկեղեցի մտնելը, որտեղ պատվիրանները պահելով՝ փրկվելու ենք գեհենի կրակից: Ղովտի՝ լեռան վրա, քարայրում բնակվելը անձեռագործ խորանն է խորհրդանշում, ուր և մեզ է Տերը խոստացել տանել: Եվ ինչպես Տերն այդ օրը Աբրահամին խնդություն ավետեց և այրեց չարասեր Սոդոմը, այդպես էլ այսօր բերկրում են Քրիստոսի բարեկամները, իսկ Հուդայի և չարանախանձ հրեաների համար այսօր պատիժ է և տիսրություն: Այսպես և աշխարհի վախճանին՝ ոմանք օրհնություն պիտի ժառանգեն, մյուսները պիտի կրակով այրվեն:

ԱՎԱԳ ՉՈՐԵՔԱՐԱԹԻ ՕՐՎԱ ԽՈՐՀՈՒԹՅ

Զորեքշաբթի օրը նաև կամակոր ու կարծեցյալ իշխանի խորհուրդն ունի, ով օձին միջնորդ կարգելով Եվայի և իր միջև, կնոջը տվեց չար խրատը՝ կորսայան խոսքերը՝ կործանելու համար նախաստեղծներին: Ինչպես չորրորդ օրը օձը կատարեց չարի խորհուրդը և դավեց Եվային, այդպես էլ չորեքշաբթի օրը Գաբրիել Հրեշտակապետը խոսեց սուրբ Կույս Մարիամի հետ և տվեց նրան Քրիստոսով Հղանալու ավետիսը:

Այսօր՝ Ավագ չորեքշաբթի օրը, նույն կամակոր ու կարծեցյալ իշխանը՝ սատանան, օձի փոխարեն Հուդային է ընտրում որպես միջնորդ, կնոջ

փոխարեն՝ քահանայապետերին, խարեռության պտղի փոխարեն՝ արծաթը, և անամոթությամբ մարտնչում է Երկրորդ Աղամի՝ մեր մշտնջենավոր Աստծու դեմ, ինչպես մի ժամանակ՝ շնչավոր Աղամի: Սակայն այս անգամ պարտվում է Երկրորդ Աղամից ու խայտառակվում իր խավարաբնակ զորքով հանդերձ: Նախամայրն ազատվում է օձապատիր ու դառնաճաշակ պտղից, և փոխվում է դատապարտության վիշապաշունչ կերակուրը:

Ավագ չորեքաբթի օրը, երբ աշակերտը մատնեց Վարդապետին, խորհրդանշում է մեղավորների մատնությունը վերջին օրը, երբ յուրաքանչյուրը պետք է իրեն մատնի ու հանդիմանի:

Դավադրություն Հրապար դեմ (Մատթ. ԻՉ 1-3)

Երանելի Մատթեոսն իր Ավետարանում գրում է. «Երբ Հիսուս այս բոլոր խոսքերն ասաց Ժողովրդին» (Մատթ. ԻՉ 1): Այն խոսքերը, որոնք Ձիթենյաց լեռան վրա անցյալ օրն ասաց աշակերտներին՝ տաճարի ավերման և աշխարհի վախճանի մասին:

Իր աշակերտներին ասաց. «Գիտեք, որ երկու օր հետո Զատիկ է, և Մարդու Որդին պիտի մատնվի խաչը ելնելու համար» (Մատթ. ԻՉ 2) – Մյուս աշակերտների հետ այդտեղ էր նաև Հուդա Խսկարիովտացին, ով լսելով իրենից ու շատերից ծածկված խորհուրդը՝ Տիրոջ կամավոր ու աշխարհակեցուցիչ չարչարանքների մասին, խորհեց, թե ի՞նչ կտան իրեն քահանայապետերը, երբ այդ «ավետիսը» հնչեցնի նրանց ականջին, և գիտակցաբար առիթ էր փնտրում իր գործը կատարելու համար, որպեսզի ճիշտ պահին հանդիպի քահանաներին և նրանց տեղյակ պահի:

Հուդային խոսքի իմաստը հասու չեղավ, քանզի հաջորդ օրը, որը հինգշաբթի էր, հրեաների Զատիկն էր և բաղարջակերաց օր, սակայն Տերը այդ օրը նկատի չուներ, այլ ասաց, որ երկու օր հետո Զատիկ պիտի լինի և Մարդու Որդին պիտի մատնվի՝ խաչը ելնելու: Այդ պատճառով Հուդան միշտ պտտվում էր Տիրոջ շուրջ, որպեսզի ստուգապես իմանա նրա չարչարանքների օրն ու ժամը, հայտնի քահանաներին և ստանա իր վարձքը: Հինգշաբթի օրը՝ հրեաների նիսան ամսվա տասնչորսին, երբ Եգիպտոսում երեկոյան գառը մորթեցին և գիշերը Եգիպտացիների անդրանիկները սպանվեցին, իսրայելցիների բազարը ուտելու ավանդության սկիզբ դրվեց: Դրա հաջորդ ուրբաթ օրը՝ նիսանի տասնհինգին, երբ լիալուսին էր, հրեաները դուրս եկան Եգիպտոսից: Իսկ շաբաթը հանգստի մեծ օրն է: Եվ երբ Հուդան լսեց Տիրոջից, թե երկու օր հետո Զատիկ է լինելու, չհասկացավ, թե այս երեք մեծ օրերից ո՞ր օրվա մասին է խոսքը,

քանի որ հրեաները և' քաղաքակերաց տոնին էին զատիկ ասում, և' պասերի լրումին, և' Շաբաթների շաբաթին էին պասեր անվանում: Առաքյալները մինչ այդ կարծում էին, թե նա պիտի նստի Դավիթի աթոռին ու թագավորի երուսաղեմի վրա, և երբ լսեցին Տիրոջից, թե երկու օր հետո Զատիկ է լինելու և Մարդու Որդին մատնվելու է խաչի մահվանը, տագնապեցին: Աշակերտները գիտեին, որ Տերն իր կամավոր հոժարությամբ է գնում դեպի չարչարանքները, և որ ինքը հաստատապես գիտի դրա օրն ու ժամը:

Այն ժամանակ քահանայապետերը և օրենսգետներն ու ժողովրդի ծերերը հավաքվեցին Կայիշափա անունով քահանայապետի դահլիճում և խորհուրդ արեցին, որպեսզի նենգությամբ բռնեն Հիսուսին ու սպանեն: Բայց ասում էին. «Ո՛չ այս տոնին, որպեսզի ժողովրդի մեջ խռովություն չլինի» (Մատթ. ԻՉ 3) – Հրեաները շատ անգամ ցանկացան սպանել Հիսուսին, սակայն հնար չէին գտնում: Իրենց նպատակին հասնելու համար նրանք ժողովրդին խաբելով ասացին, թե Հիսուս իրենց կորստյան ու կործանման պատճառն է, ինչպես մի ժամանակ եղավ Հուդայի Սեղեկիա արքան: Ասում էին նաև՝ եթե այն ժամանակ իսրայելի որդիները սպանեին Սեղեկիային և կամ հանձնեին քաղդեացիների ձեռքը, ապա չէին տարվի գերության Բաբելացիների երկիրը, և երուսաղեմը չէր ավերվի, և չէր քանդվի Աստծու փառավոր տաճարը (տես Դ Թագ. ԻԵ): Նաև ասում էին, որ եթե Հիսուս մնա, ապա կգան հռոմեացիները, կքանդեն երուսաղեմը և հրեաներին գերության կտանեն: Դրանով նրանք կամենում էին գրգռել ամբոխին մեր Տեր Հիսուս Քրիստոսի դեմ:

Հավաքվեցին Կայիշափա անունով քահանայապետի դահլիճում – Այդ տարի քահանայապետը Կայիշափան էր, և ինչպես Բաղաամն ակամա մարդարեացավ Քրիստոսի ծննդյան մասին (տես Թվեր ԻԴ 7), այնպես էլ նա՝ ակամա մարդարեանում է Քրիստոսի կենարար չարչարանքների մասին՝ ասելով. «Դուք ոչինչ չգիտեք, ոչ իսկ խորհել եք, թե մեզ համար ավելի լավ է, որ մեկ մարդ մեռնի ժողովրդի համար, քան թե ամբողջ ազգը կորչի» (Յովի. ԺԱ 50): Այս ասելով մարդարեանում է այն փրկագործ մահվան մասին, որ պիտի լիներ ամբողջ աշխարհի համար, կարծելով որ դրանով կարող է ամբոխին գրգռել Քրիստոսի դեմ: Զնայած քահանայապետերը շատ ջանացին, սակայն չկարողացան ժողովրդին հանել Տիրոջ դեմ: Նրանք վախենում էին ժողովրդից և այդ պատճառով խորհեցին տոների ընթացքում ոչինչ չձեռնարկել, մինչև որ ամեն մարդ գառնա իր տունը, և իրենք Հիսուսին մենակ գտնելով՝ ձերբակալեն: Իսկ ժողովուրդը միշտ խմբվում էր նրա շուրջը և սպասում լսելու շնորհաց վարդապետությունը:

ՕԾՈՒԱ ԲՆԱՅԱԿԱՎՈՒՄ
(Մատ. ԻՉ 6:13)

Մարիամը՝ Ղազարոսի քույրը, թանկարժեք յուղով օծեց Տիրոջ ոտները, ի նշան իր երախտագիտության եղբորը հարություն տալու։ Այդ մասին լսեց մի պոռնիկ կին ու շտապեց նույնն անել։ Նա յուղ պատրաստեց և հարմար առիթ էր փնտրում, որ օծի Տիրոջը։ Եվ երբ Տերը մտավ բորոտ Սիմոնի տունը, այս կինը խորհեց, որ եթե նա չի գարշում բորոտից, ապա չի խորշի նաև իր նման մեղավորից։

Եվ այս մասին ավետարանիչը հետեւյան է պատմում. «Երբ Հիսուս եկավ Բեթանիա, բորոտ Սիմոնի տունը, Նրան մոտեցավ մի կին, որ մի շիշ թանկարժեք յուղ ուներ, և թափեց այն Նրա գլխին – Վարդապետներն ասում են, որ մարդը երեք կերպով է գնում ուրիշի տուն. առաջինը՝ մեծարվելով, ինչպես Տերը գնաց Սիմոնի տուն, երկրորդ՝ ինչպես աղքատ, քանզի «Հայտնության» գրքում ասված է. «Ահավասի՛կ, Ես դուան առաջ եմ և բախում եմ. եթե մեկն ականջ դնի Իմ ձայնին և բաց անի դուռը, կմտնեմ Նրա մոտ և կընթրեմ նրա հետ, և նա՝ Ինձ հետ» (Հայտ. Գ 20)։ Եվ Քրիստոս հույժ սիրում է գալ, բնակվել մարդկանց մեջ և նրանց ընկերանալ։

Հստ Օրենքի՝ բորոտը պիղծ է, և նա պետք է համայնքից դուրս ապրի, մինչև որ սրբի։ Արդ՝ երբ Սիմոնը լսում է, որ Հիսուս մտնում է մեղավորների ու մաքսավորների մոտ, և որ տեռատես կինը հավելով Նրա զգեստներին բժշկվեց, համարձակվում է և ինքը Տիրոջն իր տուն հրավիրել, սակայն Տերը չի բժշկում նրա խաթարված մարմինը, քանի որ նա Տիրոջից բժշկություն չհայցեց, և Տերն էլ փոխարենը կանչեց ու հորդորեց մի կնոջ, ով իր ձեռքում ուներ նարդոսի ազնիվ, մեծարժեք յուղի մի շիշ, իսկ բորոտ Սիմոնին կշտամբեց (տե՛ս Ղուկ. Է 44)։ Մատթեոսը, Մարկոսը և Ղուկասը այս կնոջը հիշատակում են այս դեպքի առնչությամբ։ Հովհաննեսը գրում է, որ Մարիամը՝ Ղազարոսի քույրը, օծեց Տիրոջը (տե՛ս Ղովի. ԺԲ 3), իսկ Ղուկասը գրում է, որ օծող կինը պոռնիկ էր (տե՛ս Ղուկ. Է 37), ինչ պատճառով էլ բորոտ Սիմոնը գայթակղվեց. որովհետև Տերը թույլ տվեց մեղավորին իրեն մոտենալ։ Իսկ կինը համարձակվեց մոտենալ, քանի որ տեսավ Տիրոջը՝ իշխանած բորոտի տանը։

Սիմոնը հրեաների օրինակն է, քանի որ, երբ Տերը եկավ նրանց մոտ, նրանք Տիրոջը չհավատացին և մնացին անեծքի տակ, ինչպես և Սիմոնը մնաց իր բորոտության մեջ։ Իսկ կինը հեթանոսների օրինակն է, ովքեր պոռնկացել էին բազմաստվածության մեջ, սակայն Տիրոջ գալստյամբ՝ մկրտվելով զգեստավորվեցին Քրիստոսով։

Սկսեց արտասուքներով թրջել Նրա ոտքերը և իր գլխի մազերով սրբում էր (Ղուկ. է 38) – Մազերն աշխարհի մեծության խորհրդանիշն է, ինչն ամբողջովին պետք է դնել Քրիստոսի ոտքերի տակ: Երբ կինն օծում է Տիրոջ ոտքերը և տեսնում, որ այն բարությամբ է ընկալվում Տիրոջ կողմից, յուղով օծում է նաև Նրա գլուխը: Որովհետև նրանք, ովքեր հավատում են Նրա Մարմնին, հավատում են նաև Նրա Աստվածությանը, որը խորհրդանշվում է գլխով, իսկ ովքեր հպվում են Նրա Մարմնին, շոշափում են Կենաց Խոսքը:

Այստեղ Տերն ընկերանում է Մարիամ Մագդաղենացու հետ, քանի որ նա երեք տեսակի դառը կերակուր բերեց և դրեց Քրիստոսի առջև, իսկ Քրիստոս երեք տեսակի քաղցրություն խառնեց դրանց: Առաջին կերակուրը Մարիամի կատարյալ զղջումն էր, այդ պատճառով Քրիստոս ողորմեց նրան, երկրորդը՝ նրա խոստովանությունը, և Քրիստոս թողեց նրա մեղքերը, և երրորդը՝ նրա ապաշխարությունը, և Քրիստոս տվեց նրան երկնքի արքայությունը:

Իսկ Սիմոնն անիրավորեն դատեց Քրիստոսին՝ կնոջը աղտեղի համարելով և իր մտքում ասելով. «Եթե Սա մարգարե լիներ, ապա կիմանար, թե ով կամ ինչպիսի մի կին է մոտենում իրեն, որովհետև նա մեղավոր է» (Ղուկ. է 39): Այդ պատճառով Քրիստոս նրան ասաց. «Սիմոն, քեզ ասելու բան ունեմ»: Սիմոնն ասաց. «Ասա՛, Վարդապե՛տ»: Եվ Հիսուս ասաց. «Մի փոխատու երկու պարտապաններ ուներ. մեկը հինգ հարյուր դահեկան պարտք ուներ, իսկ մյոււսը՝ հիսուն: Եվ քանի որ նրանք հատուցելու ոչինչ չունեին, երկուսին էլ պարտքը շնորհեց. հիմա ասա՛, ո՞վ ավելի շատ կսիրի նրան» (Ղուկ. է 40-42) – Մարիամը պարտական էր հինգ հարյուր դահեկան, քանի որ իր հինգ զգայարաններով բոլոր մեղքերը կատարելապես գործել էր, իսկ հիսունը պարտական էր Սիմոնը, ով իր հինգ զգայարաններով մեղավոր էր տասը պատվիրանների առջև: Եվ երկուսին էլ շնորհեց, որովհետև բոլոր նրանք, ովքեր մեղանչել են, առանց Աստծու ողորմության չեն կարող հատուցել իրենց պարտքերը:

Այս Մարիամը մեզ բազում բարություններ է սովորեցնում, քանի որ մեղավորներ կան, ովքեր հապաղում են խոստովանել իրենց մեղքերը, իսկ նաև, երբ լսեց Քրիստոսի խոսքը, անմիջապես խոստովանեց: Ոմանք մեծ մեղքերը թաքցնում են, ինչից գարշելի հոտ է գալիս, իսկ նա ամեն ինչ հայտնում է, այսինքն՝ հեղում է ամբողջ յուղը: Ոմանք խոստովանությունից հետո դառնում են իրենց նախկին մեղքերին, իսկ նա մնաց Քրիստոսի ոտքերի մոտ: Ոմանք մարդկանց առջև լրբությամբ պարծենում են իրենց մեղքերով, իսկ նա ամաչում էր և չէր կամենում վեր նայել: Ոմանք էլ ծիծաղելով են խոստովանում, իսկ նա լալով խոստովանեց:

Ոմանք տանջանքով և տրտմությամբ են ապաշխարում, իսկ նա՝ ուրախությամբ:

Երբ աշակերտներն այս տեսան, բարկացան ու ասացին. «Ի՞նչի՞ համար է անուշահոտ յուղի այդ վատնումը, քանի որ կարելի էր մեծ գնով վաճառել այդ և տալ աղքատներին – Հուդան սա նենգությամբ ասաց, որովհետեւ գող էր ու արծաթասեր, իսկ մյուսները բարի մտքով ասացին, քանի որ լսել էին Քրիստոսից, թե՝ «Ուզրմություն եմ կամենում և ոչ թե զոհ» (Օվան Զ 6): Նաև մարգարեն է ասում. «Բայց մեղավորի յուղը թող զլուխս չօծի» (Սաղմ. 6Խ 5): Քրիստոս մի քանի պատճառով թույլ տվեց թափել յուղն իր գլխին:

Նախ, որ տեսավ կնոջ զղջումը և երկյուղով, ջերմ սիրով, մեծ հավատով ու հույսով դեպի իրեն գալը:

Երկրորդ՝ ինչպես չհրաժարվեց արգանդում մարդանալուց և կաթով մնվելուց, այդպես էլ հոժարեց կնոջից օձվել:

Երրորդ՝ ինչպես Հայրն էր ընդունում պատարագի մատուցած յուղը (տեսնելք Իթ 13), այդպես էլ Աստծու Որդին ընդունեց:

Չորրորդ՝ Հակոբն արձանը յուղով օձեց (տեսն Ծննդ. ԽԶ 18), և քահանաներն ու թագավորները յուղով էին օծվում Քրիստոսի օրինակով, այդ պատճառով Տերն ընդունեց յուղով օձվելը, որպեսզի կատարվեն մարդարեռությունները:

Հինգերորդ՝ յուղով օձվելը Տիրոջ թաղման և գերեզմանի խորհուրդն է, քանի որ յուղաբեր կանայք չեին կարող օծել Նրա Մարմինը, այդ պատճառով օծումը հիմա ընդունեց, ինչպես և ասաց. «Իմ Մարմնի վրա այդ յուղը թափելով՝ նա իմ թաղվելը կանխանչեց» (Մատթ. ԽԶ 12):

Վեցերորդ՝ Քրիստոս մեզ հուսագրելու համար թույլ տվեց. քանի որ, եթե պոռնիկ կնոջից, ով սրտանց զղջաց, ընդունեց յուղը, ուստի և մեղավորներիս աղոթքներն ու նվերները ևս կընդունի, եթե զղջանք մեր մեղքերի համար:

Իսկ այն, որ մարգարեն ասում է, թե՝ «Մեղավորի յուղը թող զլուխս չօծի» (Սաղմ. 6Խ 5), նշանակում է, որ անզեղ մեղավորի պատարագը չի ընդունվում և աղոթքը չի լսվում:

Մարկոսը գրում է. «Կարելի էր այդ անուշահոտ յուղը վաճառել ավելի քան երեք հարյուր դահեկանի և տալ աղքատներին» (Մարկ. ԺԴ 5) – Ղազարոսի քույր Մարիամը վաճառել էր իր ամբողջ ունեցվածքը և թանկարժեք յուղ գնել, որպեսզի դրանով օծի Տիրոջ գարշապարը՝ իր եղբորը հարություն տալու համար: Այդ օրը բոլոր ներկաները լսել էին Տիրոջ խոստումը. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ամբողջ աշխարհում, ուր էլ այս Ավետարանը քարոզվի, պիտի պատմվի դրա հիշատակին, նաև ինչ որ դա

արեց» (Մատթ. ԻԶ 13), և Մարիամ Մագդաղենացին այդ լսելով նույնն արեց: Իսկ Հուդան, ով Տիրոջ գանձապահն էր, և այն ամենը, ինչ որ ընկնում էր, ինքն էր վերցնում ու գողանում, տեսնելով որ մեծագին յուղի հեղմամբ իր օգուտը խափանվեց, հույժ տրտմեց և բացահայտելով իր ներսի ախտը՝ հրապարակավ վատաքանեց կողջ արարքը:

Քրիստոս սակայն, իր աստվածային ամենատես զորությամբ իմանալով մատնիչի գող լինելը, ասաց. «Ինչո՞ւ եք նեղություն տալիս այդ կնոջը. նա Իմ հանդեպ մի բարի գործ կատարեց – Այս խոսքը երկու իմաստ ունի, նախ որպեսզի այդ կինը խնդությամբ գնա ու չհուսահատվի աշակերտների խոսքերի պատճառով, իսկ երկրորդը Ոսկեբերանն է մեկնաբանում. «Եթե մեկը գա և իր ունեցվածքից եկեղեցուն նվեր բերի կամ էլ եկեղեցի կառուցի և դրանով ցանկանա արդարանալ իր մեղքերից, պետք չէ նրան արգելել, որպեսզի մեղքերի թողություն գտնի»:

Աղքատներին ամեն ժամ ձեզ հետ ունեք – Անժամանակն Աստված միշտ չէր մարմնով մնալու առաջալների հետ: Եվ քանի որ Հուդան այդշափ «աղքատասեր» էր, այդ պատճառով Տերն ամեն տեղ աղքատներ է կարգել, որպեսզի երբեք չկորչի մարդասերների ու ողորմածների բարեգործություն անելու հնարավորությունը:

Իմ Մարմնի վրա այդ յուղը թափելով՝ նա Իմ թաղվելը կանխանշեց – Նաև Մարկոսն է ասում. «Դա, ինչ որ կարող էր, արեց. նախապես խնկավետեց Իմ Մարմինն ի նշան պատանվելու» (Մարկ. ԺԴ 8): Այս խոսքը վերաբերում է զմուռսին ու Հալվեին, որը Տիրոջ թաղման օրը բերեցին Հովսեփին ու Նիկոդեմոսը: Նաև յուղաբեր կանանց մասին է խոսքը, ովքեր խունկերով ու անուշ յուղերով եկան սուրբ գերեզմանը: Նաև՝ այն ձեթի ու գինու մասին է, որով Բարի Սամարացին բուժեց ավազակների ձեռքն ընկած մարդու վերքերը: Սրանով գնում է նաև Ավազանի յուղի օրինակը, որը հեղեց հեթանոսների վրա, ովքեր նրա մահվանը մկրտվեցին՝ նրա հետ ջրում թաղվելով:

Բայց ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ամբողջ աշխարհում, ուր էլ այս Ավետարանը քարոզվի, պիտի պատմվի դրա հիշատակին, նաև ինչ որ դա արեց – Այս խոսքը վերաբերում է Ավետարանի քարոզությանը, որը տարածվելու էր ամբողջ տիեզերքով, և շատերը պիտի ցանկանան լինել այդ երջանիկ կնոջ փոխարեն, ով արժանի եղավ հանդիպելու և մերձենալու մարմնացած Բանն Աստծուն:

ՄԱՏԱԿԱՅԱՆ ԳԻՒՆ

Քրիստոսին մատնեցին չորեքշաբթի օրը: Այդ օրն իբրև գժոխք բացվում է մատնության բերանը ստացվածքի համար, որովհետև հիրավի գժոխքի բնակիչներ են նրանք, ովքեր Քրիստոսի վրա հարձակվեցին, ծառաներին չարչարեցին ու ժառանգին՝ կորզելու համար ժառանգությունը (տե՛ս Սատր. ԻԱ 38):

Ամբարիշտ Հուղան և քահանաները շեղվեցին Տիրոջ շավիղներից և իրենց անձերի համար գժնդակ չարություն գանձեցին, և չար է լինելու անօրենների կործանումը, ինչպես Հուղայի ինքնասպանությունը և Երուսաղեմի կործանումը:

Զաքարիա մարգարեն Հուղային քանանացի է անվանում. «Այն օրը Զորությունների Տիրոջ տանն այլևս չի լինի ոչ մի քանանացի» (Զաքար. ԺԴ 21): Քանանացի եբրայեցերենից թարգմանվում է գնորդ, քանի որ Հուղան անպարտ արյուն վաճառեց, նաև հրեաներին է քանանացի անվանում՝ գնելու համար, որովհետև ցանկանում էին Նրա մահը: Իսկ Դանիելը քանանացու զավակ անվանեց Շուշանին ցանկացող վավաշոտ ծերունուն (տե՛ս Դան. ԺԳ 56):

Դավիթը հրեաների չարախսությունը ցույց է տալիս հետեւյալ խոսքով. «Թշնամիներս չարությամբ ասացին իմ մասին. «Ե՞րբ պիտի մեռնի նա, և Նրա անունը ջնջվի» (Սաղմ. Խ 5-6): Ապա շարունակում է. «Բոլոր թշնամիներս քըթմնջացին իմ մասին և չարիք նյութեցին իմ դեմ» (Սաղմ. Խ 8): Սա ասված է Հուղայի և քահանաների մասին: «Եվ որն ուտում էր հացն իմ, հաճախակի իմ դեմ խաբեռություն գործեց» (Սաղմ. Խ 10): Իսկ այստեղ այն հացի պատառի մասին է ասում, որը Հուղան չփախեցակ վերցնել Տիրոջից:

Մարգարենների խոսքերը հաստատում է Ավետարանը. «Այն ժամանակ Տասներկուսից մեկը՝ Հուղա իսկարիովտացի կոչվածը, գնաց քահանայապետերի մոտ ու ասաց. «Ի՞նչ կկամենաք ինձ տալ, որ ես Նրան ձեզ մատնեմ»: Եվ նրանք երեսուն արծաթ դրամ խոստացան նրան: Դրանից հետո նա առիթ էր որոնում, որ Նրան մատնի նրանց» (Սատր. ԻԶ 14-16): Հուղան բազում անգամ լսել էր Տիրոջից հետեւյալ խոսքը. «Ահավասիկ, Երուսաղեմ ենք բարձրանում, և Մարդու Որդին պիտի մատնվի քահանայապետերին ու օրենսգետներին. և Նրան մահվան պիտի դատապարտեն» (Սատր. Ի 18), նաև՝ «Մարդու Որդին պիտի մատնվի խաչը ելնելու համար» (Սատր. ԻԶ 2), սակայն թշվառականը չէր կարողացել հասկանալ այս խոսքերի իմաստը: Իսկ այս անգամ, երբ լսում է պատանվելու և թաղվելու մասին, հասկանում է, որ այն ինչը հրեաները ցանկանում էին, հնարավոր է: Եվ մտածում է գնալ հրեաների մոտ և նրանցից դրամ ստանալ:

Եվ Հուղարքական հայության գնաց փնտրելու քահանայապետերին, ժողովրդի իշխաններին, օրենսգետներին ու փարիսեցիներին, ովքեր տխուր ու տրտում ժողովվել ու խորհում էին, թե ինչպես, ինչ հնարով ազատվեն Հիսուսից, քանի որ ամենքը նրա կողմն են՝ և' հրեաները, և' հեթանոսները, և' սամարացիները, և' Հյուսիսի կողմից եկածները, մինչև անգամ Հայոց արքան՝ Աբգարը, ով բնակվում էր Եղեսիա քաղաքում², Հիսուսին Աստծու Որդի էր խոստովանում:

Հրեաները մտածում էին. «Եթե Նրան չսպանենք, ապա կկորչի մեր ամբողջ ազգը, իսկ եթե Նրա վրա ձեռք բարձրացնենք, ապա Նրան ուղեկցող ժողովուրդը մեզ կը քարկոծի ու կապանի, ինչպես չարագործների ու ավագակների: Իսկ եթե նույնիսկ, մի հնարով, Նրան միայնակ գտնենք, հնարավոր է որ չկարողանանք Նրա վրա ձեռք բարձրացնել, ինչպես մի ժամանակ ամբոխը չկարողացավ Նրան լեռան վրայից գահավեժ անել, ինչպես և երուսաղեմում չկարողացան Նրան քարկոծել, որովհետև ծովի վրայով ճանապարհ բացեց ու գնաց, մրրկածին ալիքներին սաստեց, իսկ մեռելին միայն խոսքով հարություն տվեց: Հնարավոր է նաև, որ Նա չմահանա, իսկ մենք դրանով ցույց տանք աշխարհին, որ Հիսուս անմահ է: Իսկ եթե հեթանոսներն իմանան, որ չենք կարողանում Նրան սպանել, ապա կգան նրանց իշխանները և կերկրապետն Նրան՝ որպես անմահ Աստծու, և մեզ որպես աստվածամարտի կհալածեն»:

Արդ՝ չիմանալով, թե ինչպիսի հնար գտնեն Նրա դեմ, տարակուսում էին ամեն կողմից, քանի որ Տերը մեծամեծ, սքանչելի ու հրաշափառ նշաններ գործեց, որը մարդկանցից և ոչ ոք չի կարողացել անել: Ապա ասում էին. «Մովսեսը աստվածային նշաններով հսրայելի մեջ փառավորվեց և եգիպտացիների մեջ ատելի դարձավ, իսկ Սա ամբողջ տիեզերքին է սիրելի: Եվ ինչո՞ւմ է այդ մեծ փորձության իմաստը, որ հասավ մեր վրա, մեր ժամանակներում, և որպես մահվան երկյուղ պաշարեց մեզ»:

Եվ մինչ քահանաները խորհում էին ու վրդովկում, եկավ Հուղան և կանգնեց նրանց մեջ: Երբ նրանք տեսան Հուղային, շտապեցին նրանից գաղտնիքներ կորզել, և Հուղան նրանց պատասխանեց. «Ինչո՞ւ եք վախենում նրանից, ահա ես եկել եմ միաբանվելու ձեզ հետ, որպեսզի ձեզ օգնեմ ու զորավիր լինեմ»:

Քահանաները պատասխանեցին Հուղային. «Արի ու կանգնիր մեր մեջ և ասա, ո՞վ սիրելի, թե ինչպես են իրականանալու մեր սրտի խորհուրդ-

² Տիրոջ երկրային կյանքի օրերին, երբ Յոռմին տիրում էր Օգոստոս կայսը, Ուտիայում (Եղեսիայում) թագավորում էր Արգարը՝ Մանուի որդին, ով իր թխության պատճառով կոչվում էր Ութամա: Նա թագավորեց 13-ից մինչև 50 թվականը: Նա և իր սերունդները 380 տարի տիրեցին Ութիային ու Միջագետքին: Նրանցից շատերը, առաջին թագավորի անունով, կոչվեցին Աբգար:

ները»: Հուդան նրանց ասաց. «Նրա խոսքերից ամեն ինչ ստուգապես իմացա, քանի որ նա մի գաղտնիք հայտնեց իր աշակերտներին»:

Քահանաները նրան պատասխանեցին. «Քո խոսքերից թեթևացած՝ զվարճանում են մեր իշխանական սրտերը»: Ապա, որպես գարշահոտ գերեզման, ամբարիշտ Հուդան բացեց իր անսուրբ բերանը և անօրեն խոսքեր ասաց անօրեն քահանաների լսելիքին՝ վաճառելով բոլորիս Աստծուն, Ով նստում է քերովբեների վրա և գնում իր արարածներին իր սուրբ ու պատվական Արյունով: Նա ասաց. «Երբ գնացինք Փիլիպայան Կեսարիայի³ կողմերը, Հիսուս ասաց, որ ինքը պետք է գնա Երուսաղեմ և բազում չարչարանքներ կրի: Եվ մինչ Գալիլիայում էինք, Նա ասաց, որ մատնվելու է մարդկանց ձեռքը և իրեն չարչարելու են, իսկ երբ Երիքովով բարձրացանք Երուսաղեմ, Հիսուս մեզ առանձին ասաց. «Ահավասիկ, Երուսաղեմ ենք բարձրանում, և Մարդու Որդին պիտի մատնվի քահանայապետերին ու օրենսգետներին. և Նրան մահվան պիտի դատապարտեն»: Եվ այսօր, երբ Սիմոն բորոտի տանը ճաշում էինք, մի կին եկավ և ազնիվ ու թանկարժեք յուղ լցրեց Նրա գլխին, և այդ յուղի կորուստը մեզ հաճելի չժժվաց: Մենք կշտամբելով հանդիմանեցինք այդ կնոջը՝ յուղը թափելու համար, իսկ Հիսուս մեզ ասաց, թե իր Մարմնի վրա այդ յուղի թափումը իր թաղումն է խորհրդանշում: Արդ՝ խրախուսվելով քաջալերվեք, քանզի ճշմարտապես դա այդպես է»:

Քահանաները նրան ասացին. «Մենք քեզ երեսուն արծաթ կտանք, իսկ դու ամեն կերպ ջանք թափիր, որպեսզի Նրան մեր ձեռքը հանձնես, բայց ոչ այս տոնին, որպեսզի ժողովրդի մեջ խռովություն չծագի, և մեզ չքարկոծեն ու սպանեն»:

Հուդան պատասխանեց. «Հիսուս ասել է, թե երկու օր հետո Զատիկ է, և Նա պիտի մատնվի ու խաչը բարձրացվի: Արդ՝ այն օրն ու ժամը, որ Նա սահմանեց իր մահվան համար, անխախտ է, և այդ ժամին էլ կատարվելու է, քանի որ Նրա խոսքերը ճշմարիտ են, այդ պատճառով էլ պետք է այդ ժամին գործել»: Քահանաները հարցրեցին, թե իրենք ինչպես կարող են այդքան ժողովրդի մեջ Նրան բռնել:

Հուդան պատասխանեց. «Նա սովորություն ունի ցերեկը ժողովրդին ուսուցանել տաճարում, իսկ երեկոյից մինչև առավոտ առանձնանալ իր

³ Փիլիպոս. Յեռութեան. Ալոեղայոսը և Լյուսինեան Յերովդեսի որդիներն էին: Յերովդ 16 – Տերունական տոները յա Պապիսոն զորավարը չցանկանալով, որ Յրեաստանը ուսասա պրատասա լշասասություն, այն չորս մասի բաժանեց՝ Յերովդեսի չորս որոդիների միջև: Արքեղայոսին տվեց Երուսաղեմը, Յերովդեսին՝ Գալիլիան, Լյուսինեային աբիլինացիների կողմերը, իսկ Փիլիպոսին՝ Պենադան, ինչ պատճառով էլ ավետարանիչն այն Փիլիպայան կոչեց:

աշակերտների հետ»: Նաև ասաց, որ ինքը հաստատապես գիտի Նրա տեղը և կարող է հարմար պահին Նրան մատնել քահանաների ձեռքը:

Քահանայապետերը զգուշացացան, որ եթե Հուդան գիշերը Նրան մատնի իրենց ձեռքը, ապա Նրան ձերբակալելիս Նրա աշակերտները կարող են փախչել քաղաք և լուր տալ ժողովրդին, ինչը կարող է խանգարել իրենց ծրագրի իրականացմանը: Հուդան ասաց, որ պետք է Պիղատոսին դատավոր կարգել իրենց վրա, և զորքերից, որոնց կայսրը նշանակել է քաղաքը պահպանելու, իբրև օգնություն մի դասակ խնդրել՝ իր հրամանատարով հանդերձ, ովքեր ջահերով ու գենքերով առջևից կդնան, իսկ ինքը՝ Հուդան, կդնա քահանաների ու դպիրների հետ: Եվ երբ բազմությունը լսի, որ զորքն ու կուսակալը քահանաների հետ են, կերկյուղի և չի համարձակվի նրանց հակառակվել:

Քահանաները կասկած հայտնեցին, որ հնարավոր է՝ գիշերը Հիսուսին չկարողանան ճանաչել, և նա խույս տա ու փախչի, մանավանդ երբ հեռվից երևա ջահերի լույսը և բացահայտվի իրենց անելիքը: Հուդան այս կասկածը նույնպես փարատեց՝ ասելով, որ ինքն ու քահանաներն առջևից կդնան, և երբ մոտենան, ինքը կհամբուրի և կխոսի Հիսուսի հետ և այդ պահին իրենք կձերբակալեն: Եվ Հուդայի խոսքերը հաճելի թվացին քահանաներին:

Այս ամենից հետո Հուդան վերադարձավ Վարդապետի մոտ և հարմար պահ էր փնտրում, որպեսզի երեսուն արծաթով մատնի տերերի Տիրոջը և աստվածների Աստծուն: Եվ աշխարհի կյանքի Տերը վաճառվում է Աղամի որդիների փրկության համար, որպեսզի իր սուրբ և պատվական Արյամբ գնի մարդկանց, աշխարհը լուսավորի մեղքի խավարից ու նորոգի տիեզերքի հնությունը:

Այդ պատճառով առաքյալները կարգեցին, որ ամեն չորեքշաբթի պահք լինի, քանի որ մեծ ու մշտնջենավոր, անժամանակ ու աներեսույթ Աստծու Միածին Որդու Արյան գինն ենք, Ով մեր պատճառով վաճառվեց, որպեսզի փրկի մեզ այս նանիր աշխարհից, որպեսզի Հուդայի հետ չկորչենք հավիտենական գեհենում:

**ՄԵԿԱՌԱՅԻ ԶԱՐԱՐԻ ՄԱՐԳԱՐԵՒԹՅԱՆ
(Զարար. ԺԱ 7-17)**

Ինձ համար երկու գավազան պիտի վերցնեմ, մեկը պիտի կոչեմ Գեղեցկություն, իսկ երկրորդը՝ Վիճակ – Մեր Տերը՝ Աստծու խոսքը, երկիր եկավ և երկու գավազան վերցրեց, դրանք են՝ մարմինը և խաչը: Նրա Մարմինը կոչվեց գեղեցկություն՝ ըստ այս խոսքի. «Տեսքով գեղեցիկ ես բոլոր մարդկանց որդիներից» (Սաղմ. ԽԴ 3), քանի որ չուներ մեղքերի տգեղությունը, որը մեր բնության վրա բերեց Աղամը: Իսկ երկրորդ գավազանը կոչվեց վիճակ, քանի որ նա խաչին ո՛չ պարտական էր և ո՛չ էլ արժանի, և փոխարեն այն ուրախության, որ նա ուներ, Հոր կամքին հնագանդվելով՝ իրեն մահվան մատնեց աշխարհի փոխարեն:

Եվ պիտի արածեցնեմ Հոտերը: Մեկ ամսում ես վերացրի երեք հոգիվներին – Արածեցրեց հսրայելի Հոտը գեղեցիկ գավազանով՝ իր Մարմնով՝ նրանց մեջ հրաշագործելով ու վարդապետելով՝ երկնքի թագավորության մասին, ապա վերացրեց մոլորեցնող հովիվների՝ թեղասի և Հուդա գալիւհացու գայթակղությունը, ինչպես և ասաց. «Ովքեր ինձանից առաջ եկան, գողեր էին ու ավազակներ, ուստի ոչխարները նրանց չլսեցին» (Յովի. Ժ 6):

Որովհետև իմ հոգին զզվել էր նրանցից, նրանց հոգիներն էլ զզվել էին ինձանից – Քանի որ հրեաները Պիղատոսի առջև աղաղակում էին և ասում. «Խա՛ը հանիր Դրան» (Մարկ. Ժ 13):

Ես, ահա, ասում եմ. «Զեզ չեմ հովվելու. ով մեռնելու է, թող մեռնի, ով սատկելու է, թող սատկի: Մնացածներից ամեն մեկն էլ թող ուտի իր ընկերոջ մարմինը: Ես պիտի վերցնեմ իմ գավազանը՝ Գեղեցկությունը պիտի նետեմ ցած՝ խզելու համար այն ուխտը, որ դրել եմ բոլոր ծողովուրդների հետ: Այդ ուխտը պիտի խզվի այն օրը – Տերը վերցրեց իր գեղեցիկ Մարմինը, տվեց նրանց ձեռքը, չարչարվեց ու մեռավ: Մահվան մատնվելով՝ նա թողեց հսրայելը հովվելը, ինչպես և ասաց. «Զեզնից կվերցվի Աստծու արքայությունը և կտրվի այն ազգին, որ պաղաբեր կղարձնի այն» (Մատթ. ԻԱ 43):

Եվ քանանացիները պիտի ճանաչեն իմ պահպանած Հոտերը, քանզի սա Տիրոջ խոսքն է – Նրանց քանանացիներ է կոչում իրենց կատարած գործերի պատճառով՝ ըստ այս խոսքի. «Քանանի զավակ և ոչ Հուդայի» (Դան. Ժ 56), քանի որ քանանացի նշանակում է գնող: Իսկ՝ «Քանանացիները պիտի ճանաչեն» ասելով, նկատի ունի քահանայապետերին ու դպիրներին, ովքեր կամեցան գնել նրան: Նրանք պիտի ճանաչեն, թե որն է նրա Մարմինը իրենց ձեռքը գցելու խորհուրդը:

Քանզի սա Տիրոջ խոսքն է – Սա նաև Աստծու կամքն է, և Հորը հնագանդվելու համար է նա մատնվում հրեաների ձեռքը:

Ես նրանց ասացի. «Եթե ձեր աչքին հաճելի է թվում, ապա տվե՛ք իմ վարձը, իսկ եթե ոչ, ասացե՛ք – Ապականիչ Հուդան առանձնալով գառների հոտից՝ առաքյալներից, քահանայապետերին ասաց. «Եթե ձեզ հաճե-

լի է սպանել իմ Վարդապետին, ապա տվեք ինձ իմ մատնության վարձքը, իսկ եթե ոչ, ապա քննեցեք՝ արդյոք արժանի է նա մահվան, թե ոչ»: Իսկ նրանք ոչ քննեցին և ոչ էլ դատեցին, այլ ծաղրեցին մատնիչին, և այդ պատճառով է մարգարեն ասում. «Եվ նրանք կշռեցին իմ վարձը՝ երեսուն արծաթ»: Մարգարեն մատնիչի անունից է խոսում, քանի որ նա Քրիստոսի աշակերտներից էր և սրբերի գնդից: Երբ Հուդան ստացավ երեսուն արծաթը, այս մարգարենությունը իրականացավ:

Տերն ինձ ասաց. «Դու բովի մեջ գցիր դա, քննի՛ր, թե այն փորձվա՞ծ է արդյոք այնպես, ինչպես ես, որ փորձվեցի նրանց կողմից իրենց համար – Այս մարգարենության կատարման մասին սուրբ Ավետարանը պատմում է. «Այն ժամանակ Հուդան, որ Հիսուսին մատնել էր, տեսնելով, որ Հիսուս դատապարտվեց, զղաց» (Մատթ. ԻԵ 3): Իսկ Հետեւյալ խոսքը՝ «Տերն ինձ ասաց. «Դու բովի մեջ գցիր դա», հայտնում է, որ Հուդան խորհեց աստվածային ազգեցությամբ, թե արդյո՞ք իրավացի եղավ այդ ամենը: «Ո՛վ Հուդա, այդ արծաթը, որն առար, գցի՛ր քո սրտի բովի մեջ և քննիր, թե արդյոք՝ դրան էր արժանի քո Տերը, Ում դու վաճառեցիր, և հրեաները գնեցին»:

Ես վերցրի երեսուն արծաթը և Տիրոջ Տանը գցեցի բովի մեջ – Նրան չասաց, թե Տիրոջ տան մեջ գցիր, այլ՝ բովի մեջ, այսինքն՝ մտքի բովի մեջ: Երբ Հուդան իր մտքում քննեց Քրիստոսի փորձությունները, զղաց, ապա վերցրեց արծաթը և այն գցեց Տիրոջ տան բովի մեջ, այսինքն՝ քահանայապետերի մտքի մեջ՝ քննության համար, և ասաց. «Մեղանչեցի, որովհետև արդար արյուն մատնեցի» (Մատթ. ԻԵ 4): Իսկ նրանք ո՛չ քննեցին և ո՛չ էլ փորձեցին: Հուդան իր մտքի բովում տեսնելով, որ Քրիստոս փորձված է և ընտիր, գնաց ու ինքնասպան եղավ, իսկ նրանք ավելացրին Տիրոջ վրա նաև խաչը:

Ես դեն գցեցի իմ երկրորդ գավազանը՝ Վիճակը, քանդելու համար այն ուխտը, որ դըել էի Հուդայի երկրի և նսրայելի միջև – Նրանք կանգնեցրին խաչը, և Տերը պրկվեց դրա վրա, ինչպես և ասում էր. «Ես իմ կյանքն եմ տալիս, որպեսզի վերստին այն առնեմ... Իշխանություն ունեմ այն տալու և իշխանություն ունեմ վերստին այն առնելու» (Յովի. Ժ 17-18): Արդ՝ երբ Տերը դեն գցեց երկրորդ գավազանը, այդ ժամանակ լուծարվեց Աստծու խաղաղության ուխտը հսրայելի հետ: Այդ պատճառով էր Քրիստոս նրանց ասում. «Երուսաղեմի՛ դուստրեր, ինձ վրա լաց մի՛ եղեք, այլ լա՛ց եղեք ձեր և ձեր որդիների վրա, որովհետև օրեր պիտի դան, երբ մարդիկ պիտի ասեն. «Երանի՛ չբեր կանանց և նրանց, որոնք բնավ չծնեցին և ստիսքներին, որ չկերակրեցին»: Այն ժամանակ մարդիկ պիտի սկսեն ասել լեռներին, թե՝

ընկե'ք մեր վրա, և բլուրներին, թե՝ ծածկեցն'ք մեզ, որովհետեւ, երբ դալա'ր փայտին այսպես անեն, չորին ի՞նչ կպատահի» (Ղուկ. Իգ 28-31):

Տերը դարձյալ ինձ ասաց. «Դու հովվություն անելու համար վերցրո՛ւ մի տգետ հովվի գործիքներ, որովհետեւ ահա Ես մի տգետ հովիվ եմ դնելու այս երկրի վրա: Նա չի հոգալու նիհար ոչխարների համար, ցրվածին չի փնտրելու, վիրավորվածին չի բուժելու, առողջին չի խնամելու, այլ ուտելու է ընտիր ոչխարների միսը և փշրելու նրանց ոտքերի ոսկորները – Այսպես եղավ Անտիռքոսի օրոք, ով դարձավ նրանց համար խիստ ու չարչարող հովիվ, կերավ նրանց մարմինը՝ տառապեցնելով ու սպանելով (տես Ա Մակաբ. Ա 11-12): Դա վերաբերվում է նաև քահանայապետերին, ովքեր Տիրոջ մահվանից հետո չարչարեցին ժողովրդին: Իսկ տգետ հովիվ ասելով նկատի ունի նեռին, ով գալու է Քրիստոսից հետո, ինչպես ինքը Տերը վկայեց. «Ես եկա Իմ Հոր անունով, և ինձ չեք ընդունում: Եթե ուրիշ մեկը գա իր անունով, նրան կընդունեք» (Յովի. Ե 43): Արդ՝ երբ նեռը գա, այնպիսի չարություններ պիտի անի, որի մասին ասված է. «Այդ ժամանակ մեծ նեղություն պիտի լինի, որպիսին չի եղել աշխարհի արարչագործության սկզբից մինչև այժմ և այլևս չի էլ լինի: Եվ եթե այդ օրերը չկարծեցվեն, ոչ մի մարմին չէր ապատվի. բայց ընտրյալների պատճառով այդ օրերը պիտի կարծեցվեն: Այն ժամանակ եթե մեկը ձեզ ասի՝ ահա՝ Քրիստոս այստեղ է կամ այնտեղ, չհավատաք նրան. որովհետեւ սուտ քրիստոներ և սուտ մարդարեներ պիտի ելնեն և մեծամեծ նշաններ ու զարմանալի գործեր պիտի ցույց տան՝ Աստծու ընտրյալներին անգամ մոլորեցնելու աստիճան, եթե հնար լինի» (Սատր. ԻԴ 21-24), և Տեր Հիսուս պիտի սատկացնի նեռին իր երկրորդ գալստյամբ:

Վայ քեզ, ո'կ անարժան հովիվ, որ աչքաթող ես անում քո հոտը: Թող սուրը կտրի նրա բազուկը, թող հանի նրա աջ աչքը: Թող անպատճառ չորանա նրա բազուկը, թող անպայման կուրանա նրա աջ աչքը – Սա ասում է չարին և սուտ քահանայապետերին, ովքեր թողեցին հարայելի հոտը՝ կտրելով նրանց Քրիստոսի հավատից, փակեցին իրենց ականջները և քարկոծեցին ճշմարտության վկային՝ Ստեփաննոսին: Այդ պատճառով է մարդարեն ասում. «Թող սուրը կտրի նրանց բազուկը», քանի որ այն բարի գործ չարեց: Նաև ասում է՝ «Թող հանի նրա աջ աչքը», այսինքն՝ խափարեցնի միտքը, որ հոգեսոր օրենքը չտեսնեն, քանի որ ձախ աչքով տեսնում են միայն մարմնավոր օրենքը:

ԱՎԱԳ ՀԻՆԳՉԱԲԹԻ

ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՒ ՎԵՐՋԻՆ ՌԱԹՐԻԹ ՀԻՇԱՏՎԱԾ

Օրվա երեքսրբյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ եկիր և գալոց ես, ողորմեա՛ մեզ»: Այսօր՝ երրորդ ժամին, ապաշխարողները խմբվում են եկեղեցու դրան առջև, և կատարվում է թողության կարգը:

Ավագ հինգչաբթին պատկերն է արարչության հինգերորդ օրվա: Այդ օրը Արարիչը թռչուններով ու ձկներով լցրեց օդն ու ջուրը: Դրանով է հայտնի դառնում, որ արարչության երկրորդ օրն Աստծու Հոգին պատահական չէր շրջում ջրերի վրայով, այլ տալիս էր նրան զորություն և ծնողական բնություն:

Աստված ասաց. «Թող ջրերն արտադրեն կենդանության շունչ ունեցող զեռուններ, և երկրի վրա ու երկնքի տարածության մեջ թող թևավոր թռչուններ լինեն»: Եվ եղավ այդպես» (Ծննդ. Ա 20):

Ջրերն Աստծու հրամանով տվեցին կենդանի շունչ ունեցող զանազան զեռուններ՝ տարբեր տեսակի ձկներից մինչև մեծ ու ահագին լեիաթաններ, որի մասին Աստված հայտնեց իր համբերատար նահատակին՝ Հորին (տե՛ս Հոբ Խ 20-28, ԽՍ 1-25):

Ջրերը տվեցին նաև տարբեր տեսակի թևավոր թռչուններ, որպեսզի օդը նրանցով նույնպես զարդարվի: Աստված թռչունների օրինակով հույս է տալիս մարդկանց, որ մի օր էլ նրանք են օդ բարձրանալու՝ Աստծուն հանդիպելու համար: Ե'կ ձկները, որ ջրում են խայտում, և' թռչունները, որ օդում են թռչում, ազգակից են միմյանց, քանի որ ջրից գուրս եկան: Եվ Աստված օրհնեց նրանց ու ասաց. «Աճեցե՛ք, բազմացե՛ք և լցրե՛ք ծովերի ջրերը, իսկ թռչունները թող բազմանան երկրի վրա» (Ծննդ. Ա 22): Այս խոսքից պարզ է դառնում, որ կենդանիները բազմանում են Աստծու օրհնությամբ: Եվ ցերեկվա ամբողջանալով ու գիշերվա սպառումով եղավ հինգերորդ օրը:

Հայտնի է, որ առաջին արարչությունը երկրորդի օրինակն է, քանի որ ինչպես հինգերորդ օրը թռչունները ջրից օդ բարձրացան, այդպես և սուրբ առաքյալները իրենց հողանյութ մարմնից և աշխարհի ծով զբաղմունքներից երկինք՝ դեպի կյանք բարձրացան: Եվ ինչպես հինգերորդ դարում Մովսեսն իսրայելին ամպի և ծովի մեջ մկրտեց և առաջնորդեց անապատում, այդպես էլ Քրիստոս, Ավագ հինգչաբթի օրը, առաքյալների ոտքերը ջրով լվանալով՝ ճանապարհ բացեց դեպի երկինք:

Տերը երրորդ օրը զգալի ծառերի հետ նաև իմանալիները տնկեց, դրանով սուրբ մարգարեների ընտրությունը կանխասելով, չորրորդ օրն արե-

գակի նմանությամբ տվեց Արդարության Արեգակի՝ Քրիստոսի ծննդյան ավետիսը, իսկ աստղերի նմանությամբ բոլոր սրբերի ընտրությունը կանխատեսեց։ Այսպես և սուրբ առաքյալները հինգչափթի օրն ընտրվեցին իրենց ոտքերի լվացումով։ Նաև Քրիստոս հինգչափթի օրը համբարձվեց։

Հինգերորդ օրը պատկերն է նաև հինգերորդ դարի, որն սկսվում է Սամվել մարգարեի տասներորդ տարում և ավարտվում այն օրերին, երբ իսրայելի որդիները դարձան Բաբելոնի գերությունից¹ և տաճարը կրկին կառուցեցին։

Ավագ հինգչափթի օրն ունի նաև Մովսեսի հինգերորդ դարի խորհուրդը, երբ ժողովուրդը կերավ զատկական գառը, անցավ Կարմիր ծովով ու մկրտվեց, ապա անապատում կերավ երկնքից իջած մանանան ու ըմպեց վիմաբուխ աղբյուրից, ինչի մասին առաքյալն ասում է. «Եվ այն Վեմն Խնքը՝ Քրիստոս էր» (ԱԿորնթ. Ժ 4):

Տերն Ավագ հինգչափթի օրը գալիս է Վերնատուն և այնտեղ ուտում զատկական գառը, լվանում է իր աշակերտների ոտքերն ու նրանց հաղորդ դարձնում իր Մարմնին ու Արյանը, իսկ գիշերը ելնում է Զիթենյաց լեռը, աղոթում Հորը և ձերբակալվում հրեաների կողմից։

Ավագ հինգչափթի օրը, երբ Տերը Վերնատանը նստեց իր աշակերտների հետ, խորհրդանշում է տասներկու աշակերտների հետ Քրիստոսի նստելը իր փառքի աթոռին, և այդ օրը պիտի կատարվի իր խոսքը, որ ասաց. «Այն օրը, երբ ձեզ հետ կխմեմ նորը Իմ Հոր արքայության մեջ» (Մատթ. ԻԶ 29):

Ընթացածի մեկնիմայունը (ԾԱԱԴ. ԻԲ)

Օրվա ընթերցվածը Ծննդոց գրքից է և վերաբերում է իսահակի գոհաբերմանը, ով օրինակն էր Քրիստոսի։ Հայրն այսօր Միոնում հատուցում է Աբրահամի պարաքը՝ տալով իր Միածնին, քանի որ Աբրահամը, որպես իր սիրո գրավական, իր միածնին՝ իսահակին, հոժարությամբ Աստծուն ընծայեց։

Աստված փորձեց Աբրահամին ու ասաց նրան. «Ա՛ռ քո միակ որդուն՝ քո սիրելի իսահակին, գնա՛ մի բարձրագիր տեղ և այնտեղ՝ լեռան վրա, որ ցույց կտամ քեզ, ողջակիզի՛ր նրան։» Աբրահամն առավոտյան վեր կացավ, համետը դրեց իր էշի վրա, հետը վերցրեց երկու ստրուկ ծառաներ, իր որդի իսահակին, ողջակիզության համար փայտ կոտրեց և ճանապարհ ընկավ,

¹ Բաբելոնյան գերության սկիզբը եղավ 606 թ. նախքան Քրիստոս, իսկ ավարտը՝ 536թ. նախքան Քրիստոս։

եկավ այն տեղը, որ Աստված ասել էր նրան – *Աբրահամը կնոջը ոչինչ չասաց որդու պատարագման մասին, որպեսզի պատարագը չարատավորի և ուխտի խորհուրդը չխափանի:*

Երբորդ օրն Աբրահամը բարձրացրեց իր աչքերը և հեռվից տեսավ այդ տեղը: Աբրահամն ասաց իր ծառաներին. «Նստեցե՛ք այստեղ՝ Էշի մոտ, իսկ ես ու այս պատանին գնանք այնտեղ, երկրպագություն անենք ու վերադառնանք ձեզ մոտ»: Աբրահամը վերցրեց ողջակիզության փայտը, դրեց այն իր որդի Խսահակի մեջքին, իր ձեռքն առավ կրակն ու դանակը, և երկուսով գնացին – *Այստեղ ծառաները խորհրդանշում են մեղքը, քանի որ նա, ով մեղք է գործում, մեղքին է ծառայում, և ծառան հավիտյան տան մեջ չի մնում, իսկ որդին հավիտյան մնում է (տես Հովի. Ը 35): Իսկ էշը խորհրդանշում է հրեաների և հեթանոսների անմաքրությունը, քանի որ էշը դանդաղաշարժ է, աննվիրական ու տարտամ², ինչպես և նրանք՝ բարեպաշտության մեջ: Աբրահամն Խսահակի մեջքին դրեց ողջակեղի փայտը, ինչպես և Քրիստոս իր ուսերին տարավ խաչափայտը կառափատեղի, որը նույն տեղն էր:*

Խսահակը դիմեց իր Հոռը՝ Աբրահամին. «Հա՛յր»: Նա ասաց. «Ի՞նչ է, որդի՛ս»: Նա հարցրեց. «Ահա կրակը, և ահա փայտը, հապա ո՞ւր է ողջակիւզելու ոչխարը»: Նա պատասխանեց. «Աստված կհոգա իր ողջակիզելու ոչխարի մասին, որդյա՛կ» – Խսահակն ասելով՝ «Ո՞ւր է ողջակիզելու ոչխարը», Հոգով մարդարեանում է անարատ Գառի գոհվելու մասին:

Նրանք երկուսով գնացին և հասան այն տեղը, որ նրան ցույց էր տվել Աստված: Աբրահամն այնտեղ զոհասեղան շինեց, վրան դրեց փայտը, իր որդի Խսահակին կապեց և դրեց զոհասեղանի փայտի վրա: Աբրահամը երկարեց ձեռքը, որ վերցնի դանակն ու մորթի իր որդուն: Տիրոջ հրեշտակը երկնքից ձայն տվեց նրան ու ասաց. «Աբրահա՛մ, Աբրահա՛մ»: Սա պատասխանեց նրան. «Այստեղ եմ»: Նա ասաց. «Ձեռք մի՛ տուր պատանուն, նրան որեւէ վնաս մի՛ պատճառիր, որովհետև այժմ համոզվեցի, որ դու երկյուղ ունես Աստծուն նկատմամբ և ինձ համար չես խնայի քո որդուն –

Աբրահամը բարձրացրեց իր աչքերը և տեսավ, որ մացառուտ թիֆի մեջ եղջուրներից մի խոյ է կախված: Նա գնաց, առավ խոյն ու իր որդի Խսահակի փոխարեն այն ողջակիզեց: Դրանով Աբրահամը պարտական է անում Աստծուն, որպեսզի Հայրը հոժարակամ տա իր Միածնին, ինչի մասին Հիսուս ասաց. «Աբրահամը՝ ձեր հայրը, ցանկացավ իմ աշխարհ գալու օրը տեսնել. տեսավ և ուրախացավ» (Հովի. Ը 56):

² Տարտամ-դանդաղ, ծանրաշարժ, անվճռական, տատանվող:

Աբրահամի տեսած խոյը, որ եղջուրներից կախված էր ծառի ոստերից, խորհրդանշում է Քրիստոսի խաչելությունը, ինչի մասին Մովսեսն ասաց. «Քո աչքերի առաջ քո կյանքը կախված կլինի» (Բ Օրենք Ի՛ 66):

Աստված ասում է Աբրահամին. «Անչափ պիտի օրհնեմ քեզ և երկնքի աստղերի, ծովեզերքի ավազի չափ պիտի բազմացնեմ քո սերունդը: Քո սերունդը պիտի տիրանա իր թշնամիների քաղաքներին, քո սերնդի չնորհիվ պիտի օրհնվեն աշխարհի բոլոր ազգերը»: Մերունդը Քրիստոս է, Ով օրհնեց մեզ հոգեսոր օրհնությամբ:

Վերջին ուժություն

Ավագ իինգշաբթի օրը, Վեցերորդ ժամին, ի հիշատակ սուրբ Յաղորդության խորհրդի հաստատման, պատարագ է մատուցվում:

Եգիպտոսում Տերը հրամայեց Մովսեսին, որպեսզի նիսան ամսվա տասին, որը գարնան առաջին ամիսն է, ամեն մարդ իր ընտանիքի համար մի անարատ, արու և միամյա գառ առնի, այն պահի մինչև նույն ամսվա տասնչորսերորդ օրը և երեկոյան մորթի հսրայելի մարմնավոր փրկության համար: Ապա ասաց, որ գառան արյունը քսեն տան դռան սեմին՝ երկու տեղ, և դռան շրջանակի վերևը: Ասաց նաև, որ միսը խորովեն կրակի վրա և ուտեն գիշերը, բաղարջ հացով ու գառը բույսերով: Եվ այդ գիշեր Տիրոջ հրեշտակը հարվածեց ու սպանեց եգիպտացիների անդրանիկներին, փոխարեն նրա, որ սատանան մահացու վիրավորեց մարդկային ցեղի անդրանիկին՝ նախաստեղծ Ադամին:

Իսկ այսօր Վերնատանը Տերը պատժի պարտական է դարձնում դեերի անդրանիկին ու առաջնորդին՝ ասելով աշակերտներին. «Հիմա՝ է այս աշխարհի դատաստանը, հիմա՝ է, որ այս աշխարհի իշխանը դուրս կնետվի» (Յովի. ԺԲ 31): Սա այն գիշերն է, որն Աստված խոստացավ Աբրահամին քանանացիների երկրում (տես Ծննդ. ԺԵ 12-13), և որի օրինակը կատարվեց չորս հարյուր տարի անց, երբ Տերը Մովսեսի միջոցով հսրայելի որդիներին ազատելով մարմնավոր փարավոնից՝ հանեց եգիպտոսից ու տարավ խոստացված երկիրը:

Հոգեսոր իմաստով հսրայելի որդիները հավատացյալ ժողովուրդն է, ովքեր հավատով դարձան Հայր Աստծու որդիներ: Իսկ չորս հարյուր տարիների փոխարեն դնում է միմյանց հաջորդող չորս սերունդ. առաջինը՝ Ադամից մինչև Նոյ, ապա՝ Նոյից մինչև Աբրահամ, այնուհետեւ՝ Աբրահամից մինչև Դավիթ, և վերջապես՝ Դավթից մինչև Տիրոջ աշխարհակեցուցիչ գալուստը: Տերը գալիս է դատապարտելու դեերի բանակը և մարդկանց փրկելու անմարմին փարավոնի ձեռքից:

Արդ՝ նիսան ամսի տասնչորսին, Բաղարջակերաց տոնի առաջին օրը՝ երեկոյան, պիտի լիներ գառան արյան հեղումը և Խորայելի փրկության սկիզբը: Եվ այդ օրը Հիսուս գալիս է Բեթանիայից երուսաղեմ, և աշակերտները մոտենում են նրան ու ասում. «Ո՞ւր ես կամենում՝ պատրաստենք Քեզ Համար զատկական ընթրիքը, որ ուտես» (Սատր. ԻՉ 17):

«Եվ նա ուղարկում է Պետրոսին ու Հովհաննեսին» (Ղուկ. ԻԲ 8):

Այստեղ Պետրոսն ու Հովհաննեսը խորհրդանշում են առաքյալներին ու մարդարեներին, ինչպես նաև Հին ու Նոր Կոտակարանները:

Տերը նրանց ասում է. «Գնացե՛ք քաղաք» (Սատր. ԻՉ 18), այսինքն՝ աշխարհ, ուր հետագայում պետք է փրկության խոսքն ավետարանեին:

Երբ այն քաղաքը մտնեք, կպատահի ձեզ մի մարդ, որ ուսին ջրի սափոր ունի (Մարկ. ԺԴ 13) – Սրանով ցույց է տալիս աշակերտներին իր ամենագետ լինելը, ինչպես Սամվել մարդարեն Սափուղին Խորայելի վրա թագավոր օծելուց հետո մարդարեանում էր ապագայի մասին (տեսԱ Թագ. Ժ 2):

Սափորով մարդը Հովսեփ Արիմաթացու սպասավորն էր: Այստեղ նա օրինակն է առաքյալների ու քահանաների, սափորը նշանակն է Մկրտության ավագանի, իսկ ջուրը՝ մկրտության և ապաշխարության արտասուքով լվացման, քանզի ինչպես մեղքը գործում է ներսից և մինչև գլուխ ապականում, այնպես էլ արտասուքը իջնում է գլխից ու մաքրում հանցավորին:

Սափորը կավե աման է և ջուր է պարունակում: Ինչպես անապատում սակե սափորը պարունակում էր երկնքից իջած հացը՝ մանանան (տես Ելք ԺԶ 33), իսկ եղիսեեի սափորը՝ Հորդանանի ակունքների ու երիքով քաղաքի առողջությունը (տեսԴ Թագ. Բ 19), այդպես էլ մեր նյութական և հողեղեն մարմինը պարունակում է Կենդանի ջուրը՝ Քրիստոսին, Ով հավատով բնակված է մեր սրտերում՝ ըստ այս խոսքի. «Այս գանձերն ունենք կավե ամանների մեջ» (Բ Կորնթ. Դ 7):

«Եվ նա ո՛ր տունը որ մտնի, տանտիրոջը կասեք. «Վարդապետն ասում է՝ ո՞ւր է այն իջևանը, ուր իմ աշակերտների հետ զատկական ընթրիքը պիտի ուտեմ» (Մարկ. ԺԴ 14) – Տանտերը Արիմաթացին էր, ով արժանացավ Տիրոջը սպասավորելու այդ մեծ գիշերը:

Եվ նա ձեզ ցույց կտա զարդարված մի վերնատուն. այնտե՛ղ պատրաստեցեք մեզ Համար (Մարկ. ԺԴ 15) – Քանի որ ամեն ոք, ով բարձրացնում է իր անձը այս գետնաքարը կյանքից, զարդարվում է առաքինության գործերով և դառնում է Աստծու Խոսքի ընդունող: Վերնատունը եկեղեցու օրինակն է, որը բարձրացնում է երկրաքարը անձերին ու նրանց զարդարում առաքինությամբ: Եվ այսօր՝ Բաղարջակերաց տոնի առաջին օրը, Աստված իր աշակերտների հետ գալիս է Վերնատուն՝ դնելով Նոր Ուխտի

սկիզբը, որով մեզ հրավիրում է վայելչական Դրախտից էլ ավելի վայել-չորեն զարդարված երկնքի արքայությունը, որն աչքը չի տեսել, ականջը չի լսել և մարդու սիրտը չի ընկել (տե՛սԱԿորնք. Բ 9):

Եվ երբ երեկո եղավ, տասներկու աշակերտների հետ սեղան էր նստել (Մատթ. ԻՉ 20) – Արեգակի մայր մտնելու պահին, երբ մորթում են պասեքը, Տերը տասներկու աշակերտների հետ սեղան է նստում: Մեծ, սքանչելի, հրաշափառ ու զարմանալի է այս խորհուրդը, քանզի նա, Ով բազմում է քառակերպ աթոռին, այսօր մեզ փրկելու համար բազմեց աշակերտների հետ:

Եվ մինչ նրանք դեռ ուտում էին, նա ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզանից մեկն ինձ մատնելու է» (Մատթ. ԻՉ 21) – նա, Ով խոսքով կերակրում և լիացնում է բոլոր եղական բնություններին, Ում վրա հառնված են բոլորի աչքերը, այսօր կերակրվում է իր աշակերտների հետ, որպեսզի մեզ պարզեցի երկնքից իջած Հացը՝ անմահության կերակրը (տե՛սՍաղմ. ճիշդ 15, Սաղմ. ճիշդ 9): Տերը, տեսնելով Հուդայի անամոթ բարքը և երկայնամտությամբ կամենալով խոնարհաբար ուղղության բերել նրան, ով գերի գարձավ երեսուն արծաթին, կշտամբեց նրան, որպեսզի նա ճանաչի այն ախտը, որը կրում էր իրենում և որով միաբանվեց քահանայապետերի հետ, քանի որ վարդապետը պետք է երկայնամտությամբ ու հեղությամբ խրատի ու հանդիմանի մեղավորին: Հուդան իմացավ, որ Ծածկագետը ամեն ինչ ստուգապես գիտի, սակայն արծաթասիրությունը էլ ավելի կուրացրեց ու խավարեցրեց նրա սրտի ու մտքի աչքերը:

Իսկ երանելի աշակերտները երբ լսեցին, որ իրենցից մեկը պիտի մատնի Տիրոջը, այրվեցին ինչպես կրակում, բորբոքվեցին նրանց սրտի խորհուրդները, քանի որ թեպետև անարատ ու սուրբ էին նրանց սրտերը, սակայն չգիտեին գալիքը, բայց գիտեին, որ Տիրոջ խոսքը ամեն ինչում ճշմարիտ ու անսուր է, և այդ պատճառով նրանցից յուրաքանչյուրը վարանելով հարցրեց. «Միթե ե՞ս եմ»: Իսկ մարդասեր և ողորմած Տերը, տեսնելով նրանց սրտի տարակուսանքը, ասաց. «Ով իր ձեռքն ինձ հետ պնակի մեջ մտցրեց, նա՝ է ինձ մատնելու» (Մատթ. ԻՉ 23): Հուդան ձգվելով իր ձեռքը մտցրեց պնակի մեջ, սակայն աշակերտները չնկատեցին, փոխարենը յուրաքանչյուրը մորմոքելով զարհուրում էր այդ սոսկալի խոսքերի պատճառով: Այնուհետև Տերն առակով դիմեց մատնիչին՝ ասելով.

Մարդու Որդին կդնա այս աշխարհից, ինչպես նրա մասին գրված է, բայց վայ այն մարդուն, ում ձեռքով կմատնվի Մարդու Որդին: Ավելի լավ կլիներ նրա համար, եթե այդ մարդը ծնված չլիներ» (Մատթ. ԻՉ 24)

Իսկ Մարկոսն ասում է.

Նրա համար ավելի լավ կլիներ, եթե նրա պարանոցից կախված լիներ էշի մի երկանաքար և ծով գցվեր (Սարկ. Թ 41) – Քանի որ եթե այդ մարդը ծնված չլիներ, ապա այս աշխարհում աստվածամարտ ու տիրավաճառ չէր լինի և պարտական չէր լինի անշեղ հրին ու անքուն որդերին (տես Սարկ. Թ 47), իսկ եթե խեղդվեր ծովի խորքերում, համընդհանուր հարության ժամանակ կվերանորոգվեր ամբողջ տիեզերքի հետ:

Երբ մատնիչն անամոթությամբ հարցրեց. «Միթե ե՞ս եմ, Վարդապե՛տ», Տերը նրան պատասխանեց. «Դո՛ւ ասացիր» (Մատթ. ԻՉ 25): Քանզի Աստված երեք չատեց մեղավորին ավելի, քան անամոթին: Եղբայրասպան Կայենն անամոթաբար ստեց Տիրոջն՝ ասելով. «Զգիտեմ, մի՞թե ես իմ եղբոր պահակն եմ» (Ծննդ. Դ 9), իսկ այստեղ Հուդա աստվածավաճառն անամոթաբար հարցնում է. «Միթե ե՞ս եմ, Վարդապե՛տ»: Այնտեղ Աստված Կայենին ասում է. «Եթե պահապան չէիր, ապա ինչո՞ւ սպանեցիր», իսկ այստեղ Հուդային ասում է. «Դո՛ւ ասացիր»: Այնտեղ Տերը Կայենի վրա նշան դրեց, որպեսզի երերալով ու դողալով շրջի երկրի վրա, իսկ այստեղ զրկեց Հուդային աստվածային օգնականությունից և մատնեց սատանայի ձեռքը:

ՈՏԱԼՎԱ (Հովհ. ԺԳ 1-11)

Ավագ հինգշաբթի օրը՝ երեկոյան տասներորդ ժամին, կատարվում է Ոտնլվայի կարգը: Նախապես պատրաստվում է այս խորհրդավոր արարողության սպասքը, ապա եախսկոպոսը կամ ավագագույն քահանաներից մեկը, վերցնելով սրբիչը, ծունկի է գալիս և լվանում իր հոտի անդամներից տասներկու հոգու ոսքերը: Մյուսները շրջան կազմելով երգում են «Վերաձգողն երկնից» շարականը: Լվացվածները համբուրում են Ավետարանը, սուրբ խաչը և քահանայի աջը:

Ոտնլվայի արարողությունից հետո ժողովրդին բաժանվում է օրինված յուղ՝ տուն տանելու համար: Սա հիշատակն է Բեթամիայում՝ բորոտ Սիմոնի տանը, թանկարժեք ու ազնիվ յուղով մեր Տիրոջ օծվելու (Մատթ. ԻՉ 6-13):

Նոյի օրերին մարդիկ գնացին դեպի չարը և ջրով կործանվեցին, այդ պատճառով բարեգությն Աստված նույն ջուրը դարձեց փրկության նյութ: Քանի որ ինչպես ջրհեղեղի ջուրը կործանեց չարը և սրբեց աշխարհը, այդպես էլ մկրտության ջուրը կործանում է մեղքերն ու մաքրում բանական աշխարհը՝ մեր հոգին ու մարմինը:

Ծննդոց գրքում գրված է. Երբ Աստված Աբրահամին երևաց Մամբրեի կաղնու մոտ, Աբրահամը Տիրոջն ընդառաջ գնաց և գլուխը խոնարհելով մինչև գետին՝ ասաց. «Տե՛ր, եթե շնորհ գտա Քո առաջ, Քո ծառային անտես մի՛ արա, թող մի քիչ ջուր բերեն, լվան ձեր ոտքերը» (տես Ծննդ. ԺԸ 1-8): Այդ օրը հինգշաբթի էր, և այդ գիշեր Սոդոմն այրվեց: Իսկ այսօր՝ Մամբրեի կաղնու մոտ գտնվող Աբրահամի վրանի փոխարեն, ուր Տերն

իջավ երկնային գորությունների հետ, Տերը Վերնատանը հավաքեց Աբրահամի որդիներին, և ինչպես Աբրահամը լվաց Տիրոջ և հրեշտակների ոտքերը, այդպես էլ Տերը լվաց աշակերտների ոտքերը: Ինչպես Աբրահամը լվացումից հետո նրանց առջև պատարագը դրեց և նրանք կերան, այդպես էլ Տերը, աշակերտների ոտքերը լվանալուց հետո, բաշխեց իր սուրբ Մարմինն ու Արյունը: Այսօր Մամբրեի կաղնուն փոխարինեց խաչը, հորթի մորթիվելու փոխարեն՝ Տերը խաչվեց, բաղարջ հացի ու կաթի փոխարեն Տերն իր սուրբ Մարմինն ու Արյունը տվեց, իսկ յուղի փոխարեն՝ Սուրբ Հոգու օծման շնորհը: Այսպես Տերը վճարեց նախահոր՝ Աբրահամի պարտքը:

Երբ Մովսես մարգարեն անապատում խորան կանգնեցրեց, ջրի ավազան պատրաստեց, որպեսզի քահանաները լվանան իրենց ոտքերն ու ձեռքերը և հետո մտնեն սրբություն: Իսկ այսօր մեր Տերը լվաց աշակերտների ոտքերը և հրամայեց մտնել Սրբության սրբոց՝ նոր օրենքի քարոզության և քահանայագործության համար:

Երբ Սողոմոնը տաճարը կառուցեց, մի պղնձյա ավազան կանգնեցրեց, որպեսզի քահանաներն ու տաճարի պաշտոնյաները նախ սրբեն ոտքերն ու ձեռքերը, հետո ուտեն սրբության հացն ու գառը և խմեն գինին: Նմանապես և մեր Տերը. նախ՝ լվաց աշակերտների ոտքերը, ապա՝ բաշխեց իր սուրբ Մարմինն ու Արյունը, և գառան փոխարեն երկնավոր Գառը նվիրեց Աստծուն: Այս խորհրդով այժմ մենք մկրտվում ենք, խոստովանում և ապա հաղորդվում:

Ինչպես Տերը մկրտվեց Հորդանանում, և Հոգին աղավնակերպ իջավ նրա վրա, նույն խորհրդով և այժմ Տերը լվանում է աշակերտների ոտքերը, և հետո, ինչպես կրակ, Վերնատուն է իջնում Սուրբ Հոգին, որպեսզի նրանց մկրտության խորհրդով կատարյալ լինի:

Առաջալն ասում է. «Քրիստոսն է Օրենքի վախճանը» (տես Յոնմ. Ժ 4), այդ պատճառով Տերը նախ հինը կատարեց և ապա նորի սկիզբը դրեց: Տերը բաղարջ կերավ գառը խոտերի հետ, ինչը խորհրդանշում է Հին Ուխտը, որից հետո լվաց աշակերտների ոտքերը մեղքի հնությունից ու Հին օրենքից և ապա, բաշխելով իր սուրբ Մարմինը, հաստատեց նոր օրենքը:

Ինչպես Աստված խոնարհվեց, մարդացավ և շրջեց որպես աղքատ, այդպես այսօր խոնարհություն սովորեցրեց՝ լվանալով մարդկանց ոտքերը, որպեսզի և մենք նույնը անենք՝ ըստ այս խոսքի. «Եթե ես՝ Տերս և Վարդապետս, լվացի ձեր ոտքերը, գուք էլ պարտավոր եք միմյանց ոտքերը լվանալ» (Յովի. Ժ 4 14): Արանով Տերը ցույց է տալիս, որ երկինք բարձրացնողը խոնարհությունն է, իսկ երկնքից դցողը՝ հպարտությունը:

Սատանան հպարտանալու պատճառով ընկավ երկնքից, որից հետո նույն հպարտության ախտով վարակեց նախահայր Աղամին և գցեց երկիր:

Նա վեր կացավ ընթրիքի սեղանից, մի կողմ դրեց զգեստները և մի սրբիչ վերցնելով՝ մեջքին կապեց: Եվ ապա ջուր վերցնելով՝ ածեց կոնքի մեջ և սկսեց իր աշակերտների ոտքերը լվանալ և սրբել մեջքին կապած սրբիչով (Յովի. ԺԳ 4-5) – Երբ իսրայելի որդիները դուրս էին գալիս եղիպատոսից, կերան զատկական գառը և անցան Կարմիր ծովը, իսկ այսօր, երբ աշակերտները կերան զատկական գառը, Տերը լվաց նրանց գարշապարները, որպեսզի նրանց համար ճանապարհ հարթի գեպի Վերին երուսաղեմ և շավիդ բացի գեպի Կենաց ծառը: Ինչպես Տերը Մովսեսին հրամայեց հանել կոշիկները, երբ վերջինս տեսավ Աստվածության հուրը մորենու մեջ, այնպես էլ այսօր աշակերտները հանեցին իրենց կոշիկները, քանի որ անպարագրելի Աստծուն տեսան մարմնի մեջ: Եվ ինչպես Մովսեսը պետք է առաքվեր՝ քարոզելու իսրայելի որդիներին, այդպես էլ աշակերտները պետք է առաքվեին՝ քարոզելու ամբողջ աշխարհին:

Եվ Տերը, մի կողմ դնելով զգեստները, մի սրբիչ է կապում մեջքին – Որպեսզի զրանով պատոի նախահոր մաշկեղեն հանդերձը և արփիափայլ պատմուճանով ծածկի ու զարդարի մերկացածին:

Ապա կոնքում ջուր է լցնում – Սա խորհրդանշում է Մկրտության ավագանի արգանգը, որով հեթանոսները վերստին ծնվեցին որդեգրությամբ, իսկ ջուրը լցնելը մկրտելու հրամանն է առաքյալներին:

Ապա սկսում է լվանալ աշակերտների ոտքերը – Քանի որ նեղ դռնով և անձուկ ճանապարհով պիտի գնային: Լվանում է այն, ինչն օձը խայթեց, ինչպես և ասաց. «Օձը պիտի խայթի քո գարշապարը» (ՄԵՒ ԾԱՆԴ. Գ 15): Տերը նրանց գարշապարը լվանում է Ավետարանի քարոզության համար, ըստ մարգարեի խոսքի. «Ի՞նչ գեղեցիկ են ոտքերը նրա, ով խաղաղության լուրն է ավետում» (Եսայի ԾԲ 7): Իսկ սրբիչով մաքրելը նշանակում է, որ մարմնի քրտինքով և չարչարանքներով մաքրելով՝ նորոգում է ներքին մարդուն, որպեսզի արյուն թափելու աստիճան հակառակվեն մարմնական հաճույքներին և թեեն գեպի կենդանության աշխարհը (ՄԵՒ ԵԲՌ. ԺԲ 4), ինչպես իսրայելը Կարմիր ծովով անցնելով՝ ուղևորվեց խոստացված երկիրը:

Տերը նախ Հուղայի ոտքերը լվաց, սակայն նա, ագահության ախտից կուրացած, դրանից չզարհուրեց: Ապա, երբ հերթը հասավ Պետրոսին, և Տերը մոտեցավ նրան, Պետրոսն ասաց. «Տե՛ր, Դո՞ւ ես իմ ոտքերը լվանում», այսինքն՝ Արարիչը լվանում է արարածի ոտքերը, Հրեղենը՝ Հողեղենի, Վարդապետը՝ աշակերտի:

Տերը նրան պատասխանեց. «Ինչ որ ես անում եմ, դու Հիմա չես իմանում, բայց հետո կիմանաս»: Պետրոսը նրան ասաց. «Իմ ոտքերը հավիտյան չես լվանա» (Յովի. ԺԳ 6-8) – Քանզի ինչպես մի ժամանակ Փիլիպպյան Կեսարիայի կողմերում նրան Աստծու Որդի գավանեց և երանելի եղավ, քանի որ հավաստի և ստուգապես գիտեր նրան որպես Աստված ու Արարիչ, խորհեց, թե ինչպես է հնարավոր, որ այն ձեռքերը, որոնք ստեղծել են երկինքն ու երկիրը, իր ոտքերը լվանան, և կամ ինչպես կիսոնարհվի արարչական Գլուխը գեպի նրա ոտքերը:

Բայց բոլորիս Տերը, կամենալով կտրել ու կարճել նրա դիմադրությունը, ասաց. «Եթե քեզ չլվանամ, ինձ հետ մաս չես ունենա» – Այսինքն՝ եթե հակառակ ես իմ խորհրդին, ապա ինձնից մաս չունես և եթե չսրբվես, ինձ հետ չես կարող հաղորդվել: Այդ խոսքից Պետրոսը զարհուրելով ասաց. «Տե՛ր, ոչ թե միայն իմ ոտքերը, այլև իմ ձեռքերն ու գլուխն էլ լվա՛» – Այսինքն՝ լվացվելով մաս կազմի ոչ միայն մեկ մասով, այլ երեք՝ հոգով, մտքով և մարմնով, կամ էլ՝ խորհրդով, խոսքով ու գործով, որպեսզի նրա հաղորդությունը Տիրոջ հետ սահմանափակ չլինի, այլ՝ անսահման ու ամբողջովին:

Տերը պատասխանեց, որ մեր Գլուխն ինքն է, և կարիք չունի սրբվելու, քանի որ մաքուր ու սուրբ է՝ և' բնությամբ, և' Հորդանանում մկրտությամբ, նաև օծմամբ այն պոռնիկ կնոջից, ով հեղեց յուղը նրա գլխին: Իսկ աշակերտները ոտքերն են, և այդ պատճառով պետք է սրբվեն, որպեսզի սրբությամբ Տիրոջը միանան և հոգավորվեն նրա հետ՝ լինելու անդամ Գլխին ու աշակերտ՝ Վարդապետին: Եվ այսպես անժամանակն Աստված խոնարհվում է գեպի իր հողեղեն ծառաների գարշապարը:

Տերն ասաց. «Լվացվածին ուրիշ բան պետք չէ, քանի որ դուք բաց երեսով տեսնում եք իմ անձառելի փառքը և հայտնապես շոշափում Կենաց Խոսքը: Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ շատ մարդարեներ ու արդարներ ցանկացան տեսնել, ինչ որ դուք տեսնում եք, բայց չտեսան, և լսել՝ ինչ որ դուք լսում եք, բայց չլսեցին, և արդ երանի ձեր աչքերին ու ականջներին: Դուք սուրբ եք այն կենաց խոսքերի համար, որ ձեզ ասացի՝ «Մաքուր եք, բայց ոչ բոլորդ» (Մենա Սատթ. ԺԳ 17) – Սրանով գարձյալ հիշատակում է մատնիչին և ապա աշակերտներին ասում, որ նրանց ոտքերը լվաց, որպեսզի գեղեցիկ երևան լեռան վրա ավետարանիչների ոտքերը (Մենա Եսայի ԾԲ 7), երբ բոլորը գնան քարոզելու փրկության Ավետարանը:

Երբ աշակերտների ոտքերը լվաց, զգեստավորվեց իր հանդերձներով և նորից բազմեց: Սա նշանակում է, որ Տերը խոնարհվեց անձառ փառքից, զգեստավորվեց հողանյութ բնությամբ և մեզ ազատեց Աղամի անեծքից, որից հետո վերստին նստեց փառքի աթոռին: Եվ ապա ասում է. «Եթե ես՝

Տերս և Վարդապետս, լվացի ձեր ոտքերը, դուք էլ պարտավոր եք միմյանց ոտքերը լվանալ. որովհետև մի օրինակ տվի ձեզ, որ ինչպես ես ձեզ արեցի, դուք էլ նույն ձեռվ անեք»: Քանի որ անկարելի է առանց խոնարհության բարձրանալ և ընկած հրեշտակների տեղը ժառանգել:

Դարձյալ՝ սրանով հիշում է մատնիչին և մարդարեռությամբ հանդիմանում նրան. «Մարդը, որին ես վստահում էի, և որն ուտում էր հացն իմ, Հաճախակի իմ դեմ խաբեռություն գործեց» (Սաղմ. Խ 10):

Հարց. – Ի՞նչո՞ւ նախ լվաց աշակերտների ոտքերը և հետո տվեց իր Մարմինն ու Արյունը աշակերտներին:

Պատասխան. – Կամեցավ նախ սրբել նրանց ադամական մեղքից և հետո տալ սուրբ խորհուրդը: Դրանով Տերը օրինադրեց, որպեսզի նախ մկրտվենք ու սրբվենք սուրբ Ավագանով, ապա հաղորդվենք:

Տերը աշակերտներին խոնարհություն սովորեցրեց՝ լվանալով նրանց ոտքերը, և մենք նույնպես նախ պետք է խոնարհվենք ընկերոջ առջև և ապա արժանանանք սուրբ խորհրդին, որպեսզի մեր մեջ բնակվի Քրիստոս՝ ըստ այս խոսքի. «Ես ո՞ւմ եմ նայելու, եթե ոչ հեզերին ու խոնարհներին և նրանց, ովքեր դողում են իմ խոսքից» (Եսայի ԿԶ 2): Եվ սրանով մեր Տերը երեք խորհուրդներ կատարեց Վերնատանը, այդ պատճառով էլ մենք այս օրը երեք խորհուրդներ ենք կատարում: Նախ աղն ենք օրհնում հին պատարագի խորհրդով, ապա ոտքերն ենք լվանում, և հետո կատարվում է մեր Տիրոջ սուրբ Մարմնի ու Արյան հաղորդության խորհրդի հաստատման պատարագը:

Հարց. – Ի՞նչ խորհուրդ ունի աշակերտների ոտքերը լվանալը:

Պատասխան. – Ուրբաթ օրը նախաստեղծներն իրենց ոտքով գնացին դեպի արգելված պտղի ծառը, որի համար էլ Աստված դատապարտեց նրանց գարշապարը՝ ասելով օձին. «Դու պիտի խայթես նրա գարշապարը» (Ծննդ. Գ 15): Այդ պատճառով էլ լվաց աշակերտների ոտքերը և նրանց ազատեց նախաստեղծների դատապարտությունից:

Դրանից հետո մարդկային ցեղն ապականվեց մեղքերով, և Աստված ջրհեղեղով սրբեց աշխարհն ու կործանեց մեղսասերներին: Իսկ այսօր մեր Տերը լվաց աշակերտների ոտքերը և շտկեց նրանց մեղավոր ընթացքից, որպեսզի նրանք սրբությամբ ծնող լինեն բոլոր հավատացյալների համար:

Հետուն Հորդանանի ջրերը ետ դարձրեց, երբ քահանաներն իրենց ոտքերը մտցրեցին դետի մեջ (տես Յեսու Գ 15-17), որից հետո ժողովուրդը ցամաքով գնաց դեպի Ավետյաց երկիր: Նույնպես և Հիսուս՝ մեր Փրկիչը, աշակերտների ոտքերը մտցնելով ջրի մեջ, ետ դարձրեց մեղքերի այն գետը, որ սկիզբ էր առնում Աղամից, և տարավ ժողովրդին Վերին երուսաղեմ:

ՄԱՏԱԿԱՋՈՒՆ
(Հովհ. ԺԳ 21-30)

«Երբ Հիսուս այս բաներն ասաց, խռովվեց իր հոգում, վկայեց ու ասաց.
«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզնից մեկն ինձ մատնելու է»:

Սրանով կշտամբում է մատնիչին. թեպետև մինչ այդ, հարցուփորձի ժամանակ հանդիմանեց՝ ասելով. «Դո՛ւ ասացիր», և դեռ առաջինը մատնիչի ոտքերը լվաց, սակայն այս թշվառականն անգամ չպատկառեց և դեռ անամոթաբար իր ձեռքը Տիրոջ հետ միաժամանակ մտցրեց նույն պնակի մեջ: Բայց երբ Տերը տեսավ նրա անուղղելի ու անհավատ միտքը, նրան առհավետ մերժեց: Այս խոսքերով հանդիմանում է նաև այն ամբարիշտներին, ովքեր ասում են, թե մարմնացած Խոսքը մարդկային հոգի չուներ, քանզի ինչպես անկարելի է չարչարվել առանց մարմնի, նույնպես և անհնար է խռովվել առանց հոգու:

Երբ աշակերտները լսեցին Տիրոջից այս սոսկալի խոսքը, տարակուսելով իրար նայեցին, թե ո՞ւմ են վերաբերվում այդ ահավոր խոսքերը: Պետրոսը նշան արեց Զեբեղեսոսի որդի Հովհաննեսին, որպեսզի նա հարցնի, թե ո՞վ է իրենցից այդ անելու: Եվ քանի որ նա Տիրոջ սիրելին էր և համապատիվ էր աշակերտների գլխավոր Պետրոսին, ավելի մոտ էր բազմել Հիսուսին, քան մյուսները: Նա ընկնելով Տիրոջ կրծքին՝ ասաց. «Տե՛ր, ո՞վ է»: Եվ Տերը նրան պատասխանեց. «Նա ի, որի համար ես այս պատառը կթաթախեմ և կտամ իրեն: Եվ թաթախելով պատառը՝ տալիս է Իսկարիովտացի Հուղային»: Մատնիչը, անամոթ դեմքով շտապում էր իր ձեռքը մտցնել պնակի մեջ, Վարդապետի հետ միասին, և Տերն իր ձեռքի պատառը տվեց նրան: Պատառը ջրով թրջելով՝ լվաց օրհնությունից և դրանով զրկեց նրան իր պահպանիչ օգնությունից, ինչպես մի ժամանակ կայենին, Սավուղին ու եսավին:

Երբ նա պատառն առավ, սատանան մտավ նրա մեջ – ինչպես և այն ժամանակ, երբ Հոգին վերացավ Սավուղի վրայից, չար դեր սկսեց խեղդել նրան (տե՛ս Ա Թագ. ԺԶ 15): Մինչ այդ սատանան հաճախ էր մոտենում Հուղային, քանի որ նրանում տեսնում էր անհագ արծաթասիրության ախտը, սակայն Տիրոջ պատճառով չէր համարձակվում անմիջապես բնակվել Հուղայի մեջ, քանի որ Տերը շատ պոռնիկներից ու մաքսավորներից հանել էր նրան: Բայց երբ տեսավ, որ Տերը զրկեց Հուղային իր պահպանությունից, գնաց և բնակվեց նրա սրտում:

Հիսուս նրան ասաց. «Հիմա ինչ որ անելու ես, իսկույն արա՛» – Այսինքն՝ «Հուղա՛, քեզ տասներկու առաքյալների հետ կարգեցի և խոստացա նստեցնել իսրայելի տասներկու ցեղերի դատաստանի աթոռներին, դեերին քեզ հնագանդ արեցի, գանձանակը վստահեցի և խոստացա

երկնքում գրել քո անունը, իսկ դու ամեն ինչ արհամարհեցիր և երեսուն արծաթն ընտրեցիր՝ որպես քո Տեր Արարչի գին: Արդ՝ այս ամենը վերցնում եմ քեզնից և երեսուն արծաթը տալիս քո ձեռքը, ինչպես Եղիսեեի ծառա Գեեզին առավ արծաթը Նեեմիայից և փոխարենը զգեստավորվեց բորոտությամբ (տես Դ Թագ. Ե 20-27), կամ ինչպես Եսավը տվեց իր անդրանիկությունը և փոխարենը ստացավ ոսպով ապուրը» (տես ԾԱՆԴ. ԻԵ 29-34):

Իսկ նա պատառը վերցնելով՝ իսկույն դուրս ելավ: Եվ գիշեր էր... – Քանի որ այս իր կամքով չէր գնում, այլ սատանան էր տանում նրան և ճանապարհին մտրակում էր ինչպես ձիու, որպեսզի դեպի չարը գնա: Հուդան շտապում էր տագնապով, իր սրտում տպավորելով շահած արծաթը և չարությամբ նախանձում Պետրոսին ու Հովհաննեսին, քանի որ նրանք իրենից ավելի գլխավոր էին:

Հարց. – Ինչո՞ւ է առաքյալն ասում. «Տեր Հիսուս, այն գիշերը, երբ մատնվեց» (Ա Կորնթ. ԺԱ 23):

Պատասխան. – Քանի որ Ադամը երեկոյան վտարվեց Դրախտից, այդ պատճառով մեր Տերն այդ նույն ժամին մատնվեց, որովհետև կամենում էր բացել մեր բնության համար փակված Դրախտի դուռը: Երկրորդ՝ քանի որ Նոյի աղավնին երեկոյան վերադարձավ տապան և տապանաբնակներին հայտնեց փրկության ավետիսը: Այդպես և այս երեկոյան եղավ մարդկային բնության փրկությունը: Երրորդ՝ երեկոյան դուրս եկավ հսրայելի ժողովուրդը եգիպտոսից և ազատվեց, այդ պատճառով, ժամանակի լրանալուն պես, Աստված առաքեց իր Որդուն, Ով կնոջից ծնվելով՝ գիշերով եկավ Վերնատուն, ավանդեց Հաղորդության խորհուրդը և մեզ ազատեց մեղքի ու սատանայի եգիպտական ծառայությունից:

Չորրորդ՝ սա նշանակում է նաև, որ օրերի վախճանին՝ վերջին դարում, Աստված առաքեց իր Որդուն և մեղքերի գիշերն ու անգիտությունը հալածեց մեզանից: Հինգերորդ՝ երեկոն ու գիշերն այս կյանքն են ցույց տալիս, իսկ լույսն ու առավոտը՝ հանդերձալը: Դա նշանակում է, որ մենք պետք է այս կյանքում չարչարվենք Քրիստոսի հետ, որպեսզի հանդերձալում պսակի արժանանանք՝ ըստ այս խոսքի. «Եթե իր չարչարանքներին կցորդ ենք, հաղորդակից ենք լինելու և փառքին» (Յոն. Ը 17):

Դարձյալ՝ նա, Ով կատարեց այդ խորհուրդը, մեզ սովորեցրեց, որ սրբությունները շներին չտանք, այդ պատճառով ծածուկ և փակ տեղում մատուցեց խորհուրդը:

Հարց. – Իսկ ո՞վ մատնեց Հիսուսին, որովհետև երբեմն ասվում է, որ Հայրը նրան մահվան մատնեց, երբեմն էլ՝ Տերն ինքն իրեն մատնեց մեր փրկության համար:

Պատասխան. – Ասվում է, թե Հայրը Նրան մատնեց մահվան, ցույց տալու համար Նրանց կամակցությունը, քանզի Նրանք, Ովքեր նույն բնությունն ունեն, ունեն նաև նույն կամքը։ Ասվում է նաև, որ Տերն ինքն իրեն մատնեց՝ ըստ այս խոսքի. «Ո՞ւմ եք փնտրում... Զեզ ասացի, թե՝ Ես եմ. արդ, եթե Ինձ եք փնտրում, Նրանց թույլ տվեք գնալ» (Յովհ. ԺՇ 4,8), որպեսզի Հայտնի լինի, որ ինքնակամ էր գալիս չարչարվելու։ Այս ամենից պետք է իմանալ, որ մեր փրկությունը ոչ միայն Որդով եղավ, այլև Հորով և Սուրբ Հոգով։

Հաղորդություն

Եվ մինչ Նրանք դեռ ուտում էին, Հիսուս Հաց վերցրեց, օրհնեց, կտրեց և տվեց աշակերտներին ու ասաց. «Առե՛ք, կերե՛ք, այս է Իմ Մարմինը» (Մատթ. ԻՉ 26) – Տերը Զատկի օրինակը կատարելուց հետո դնում է ճշմարիտ Զատկի սկիզբը։ Հին Ուխտում Խրայելի տասներկու ցեղերը ճաշակեցին գառան միսը, իսկ այստեղ տասներկու աշակերտներով ամբողջ տիեզերքը վերակոչեց։ Այստեղ բազում անբան գառներ զոհվեցին, իսկ այստեղ մի հոգեոր Գառ, որը որպես մշտնջենավոր և անսպառ պատարագ՝ բավական եղավ բոլորիս, որպեսզի ճաշակենք և ազատվենք բարու և չարի գիտության ծառի ճաշակումից։

Հաց վերցրեց, գոհություն մատուցեց (ԱԿորնթ. ԺԱ 23) – Քանի որ Աղամը կերակրի միջոցով մեղանչեց, այդ պատճառով էլ Տերը Հաց վերցրեց։ Հացը բաղարջ էր, քանի որ Բաղարջակերաց տոնն էր, և ըստ Օրենքի՝ տանը, այդ օրերին, խմորված Հաց չպետք է լիներ (տես Ելք ԺԲ 15): Ինչպես Հացը կազմված է աղացած, կրակով փորձված ու միմյանց միացած բազում Հատիկներից, այդպես էլ մենք բոլորս մի Հաց ու մի մարմին ենք Մկրտության ափազանով և Հոգու կրակով։

Հարց. – Ինչո՞ւ գոհացավ Քրիստոս, քանի որ այն ամենը, ինչ Հայրն ուներ, իրենն էր, քանի որ Ինքն էր մատուցվում, Ինքն էր ընդունում և Ինքն է մեզ պարգևեներ տալիս։

Պատասխան. – Գոհությունը մեզ համար էր։ Երբ մեկը կամենում է խնդրել, նախ խորհում է մինչ այդ ստացած պարզեների մասին, գոհանում է դրանց համար և ապա նորը խնդրում։

Հին Աղամը Աստծուց բազում պարզեներ ստացավ, սակայն չգոհացավ, քանի որ վեր չնայեց և ապերախտ ու անշնորհակալ եղավ, իսկ մեր Տերը՝ Նոր Աղամը, վեր նայեց, գոհացավ և վճարեց հին Աղամի պարտքը։

Երկրորդ՝ գոհացավ, որպեսզի մեզ սովորեցնի, որ աստվածային պարզեները վայելելիս ապերախտ չլինենք, այլ գոհանանք դրանց համար։

Երրորդ՝ քանի որ ասաց. «Հույժ ցանկացա այս պասեքի ընթրիքն ուտել ձեզ հետ» (Ղուկ. ԻԲ 15), այսինքն՝ կարծես թե ասում է. «Գոհանում եմ, Աստված, որ տվեցիր ինձ ուտել այսօր Իմ սիրելիների հետ»:

Չորրորդ՝ գոհացավ Հորից, ինչպես մեզնից մեկը, և մեր անունից շնորհակալ եղավ Հորը, որ իր Որդուն մեզ տվեց աշխարհի փրկության համար:

Հինգերորդ՝ ցույց տալու, որ ակամա չի գալիս չարչարվելու և մահանալու, այլ՝ կամավոր, որով և խրատում է մեզ, թե ինչպիսի մարմնավոր վիշտ էլ որ ունենանք, այն գոհությամբ պետք է տանել: Տերը գոհանում է նաև մեզ համար մեռնելու պատճառով:

Բեկանեց – Բեկանումը միայն հացի համար է ասված, իսկ խաչելության ժամանակ՝ ո՛չ, քանի որ գրված է. «Պահպանում է նրանց բոլոր ոսկորները, և դրանցից ոչ մեկը չի փշրվելու» (Սաղմ. ԼԳ 21): Այն ամենը, ինչ Տերը չկրեց խաչի վրա, այսօր կրում է պատարագի ժամին մեզ համար, որպեսզի Տերոջ սերը ունենանք և բեկյալ սրտով սիրենք և' նրան, և' միմյանց:

Բեկանելով Տերն իր մահը հայտնեց աշխարհի համար, որ ինչպես հացը կոտրեց, այնպես էլ իր Մարմինը պիտի սպանվի՝ մեզ կենդանություն տալու համար: Տերը հացը կոտրելով տալիս է աշակերտներին, իսկ նրանց հետ՝ նաև ամբողջ աշխարհին: Նա հացը չորս մասի բաժանեց, ինչպես և այժմ Եկեղեցին է անում: Դա նշանակում է նաև, որ Ավետարանն աշխարհի չորս կողմերում պիտի քարոզվի, և Տերն ամենուր պիտի պատարագվի՝ ամբողջ աշխարհի փրկության համար:

Եվ բաժակ վերցնելով՝ գոհություն հայտնեց, տվեց նրանց ու ասաց. «Խմեցե՛ք դրանից բոլորդ, որովհետեւ այդ է նոր Ուխտի Իմ Արյունը, որ թափվում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողության համար» (Սատթ. ԻԶ 27-28) – Եղիպտոսում գառան արյունը դրոշմվեց տան դռան սեմերին՝ պահպանելու ժողովրդի անդրանիկներին կոտորածից, անապատում վեմից ջուր հոսեց հսրայելի ծարաված ազգի համար (տե՛ս Ելք ԺԷ 7), իսկ այսօր պատվական սուրբ Արյունը բաշխվում է տիեզերքի փրկության համար, որը տեղով խոցված կողից աղբյուրի նման բխեց մեզ համար:

Նույն ձևով էլ ընթրիքից հետո վերցրեց բաժակը և ասաց. «Այս բաժակը նոր Ուխտ է Իմ Արյունով. արե՛ք այս Իմ հիշատակի համար, քանի անդամ էլ որ խմեք» (Ա Կորնթ. ԺԱ 25) – Հին Ուխտում անասունին մորթելուց հետո վերցնում էին բաժակով արյունը և ընծայում, իսկ Տերն այդ արյան փոխարեն իր Արյունը տվեց:

Ինչպես գինին պնդացնում ու ջերմացնում է մարմինը, իսկ հացը հաստատում է մարդու սիրտը, այդպես էլ Տերոջ խորհուրդը հաստատում է

մարդկային բնությունը։ Այդ պատճառով Տերն իր հրաշքների սկզբում ջուրը գինի դարձրեց։

Ասաց՝ «Նոր Ուխտի արյուն», քանզի Հինը, որն օրինակ էր և Նորի սովերը, անցավ, և ահա աշխարհի փրկության համար Նորն է տրվում։ Քանի որ Աղամի հետ հաստատված ուխտը հնացավ օձի խրատով, Նոյի հետ հաստատվածը՝ աշտարակի շինությամբ, իսկ Մովսեսի հետ հաստատվածը՝ Քրիստոսի Արյունով։ Տերը նախ ինքը խմեց և ապա տվեց աշակերտներին, քանզի երբ ասաց, որ հավիտենական կյանք ունենալու համար պետք է ուտել իր Մարմինը և ըմպել Արյունը, ոմանք գայթակղվեցին ու հեռացան՝ այն հում միս կարծելով, այդ պատճառով էլ նախ ինքը խմեց։

«Արե՛ք այս Իմ հիշատակի համար»։

Դրանից հետո իրեն մեռած է համարում, ինչպես Աղամը պտուղն ուտելուց հետո, թեպետև ապրեց ինը հարյուր երեսուն տարի, սակայն մեռած էր համարվում։ Այդպես կատարվեց Տիրոջ երեքօրյա թաղումը Հովնանի օրինակով (տես Յովնան Բ 1)։

Քանի անգամ որ այս հայն ուտեք և այս բաժակը խմեք, պատմեցե՛ք Տիրոջ մահը, մինչև որ նա գա (Ա Կորնթ. ԺԱ 26) – Ցույց է տալիս, որ մինչև աշխարհի վախճանը այդպես է լինելու։ Վարդապետներն ասում են, որ հաղորդության խորհուրդը սիրո խորհուրդ է, ինչպես որ մկրտության խորհուրդը հավատի խորհուրդ է, որով քրիստոնյա ենք դառնում, իսկ ապաշխարությունը՝ հույսի նշանն է, որով մեղքերի թողություն է տրվում։

Այսպես, հաղորդությունը սիրո նշան է, այսինքն՝ Աստծու սերը մարդկանց հանդեպ և մարդկանցը՝ Աստծու, քանի որ Աստված այս խորհրդով սիրո բազում ու մեծամեծ նշաններ ցույց տվեց մեզ։ Եվ այս խորհրդի կատարման համար չորս բան է հարկավոր, և եթե դրանցից մեկը պակաս լինի, ապա խորհուրդը չի կատարվի։ Նախ՝ խորհուրդը օրհնողը քահանան պետք է լինի, երկրորդ՝ պետք է լինի ցորենի բաղարջ հաց ու անապական գինի, երրորդ՝ օրհնողի դիտավորությունը, չորրորդ՝ Քրիստոսի խոսքերը։ «Սա է Իմ Մարմինը» և «Սա է Իմ Արյունը»։

Բայց ասում եմ ձեզ, այսուհետեւ ես այլևս որթատունկի բերքից չեմ խմի մինչև այն օրը, երբ ձեզ հետ կիմեմ նորն Իմ Հոր արքայության մեջ (Մատթ. ԻՉ 29) – Արքայություն է անվանում երրորդ օրը գերեզմանից փառքով հարություն առնելը, մահը ոտնատակ տալը, դժոխքն ավերելը, սատանային կապելը, գերվածներին ազատելը և իր աստվածազարդ ու հրաշափայլ գալուստը։ Երբ Տերը Փիլիպպյան Կեսարիայի կողմերում էր, ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այստեղ գտնվողների մեջ կան ոմանք, որոնք մահը չեն ճաշակի, մինչև որ չտեսնեն Մարդու Որդուն՝ եկած իր

արքայությամբ» (Սատր. Ժ 28): *Սա այն դեպքում նշանակում էր Տիրոջ այլակերպությունը Թաքոր լեռան վրա, իսկ այս դեպքում՝ հարությունը:*

Իսկ այժմ՝ ով որ քսակ ունի, թող վերցնի այն, նույնպես և՝ մախաղ. իսկ ով որ չունի, թող վաճառի իր վերարկուն և իր համար սուր գնի (Ղուկ. ԻԲ 36) – Նախկինում չհրամայեց, իսկ այժմ հրամայում է՝ վերցրել: *Սա նշանակում է, որ գիշերը նրանց փորձություններ էին սպասվում:*

Եվ նրանք ասացին. «Տե՛ր, ահավասիկ այստեղ երկու սուր կա» (Ղուկ. ԻԲ 38) – Զատկական գառը, համաձայն Օրենքի, սրով էին կարատում: Հիսուս նրանց ասաց. «Բավական են»: Քանի որ նա, ում հոգին սրված է ծամարիտ և ուղիղ հավատով, ով առաքինի է մարմնով և սուրբ՝ վարքով, կարող է հետեւ Քրիստոսին:

Հարց. – Ինչո՞ւ Տերը Հին զատկին՝ գառան մորթելու օրը, կատարեց նոր զատիկը:

Պատասխան. – Երեք պատճառով. նախ որ պետք էր Հին օրենքը կատարել և ապա նորի սկիզբը դնել: Սա ցույց է տալիս, որ և' Հին, և' նոր օրենքների Տվողը ինքն է:

Երկրորդ՝ սա հաղորդության խորհուրդն է Աստծու հետ, և քանի դեռ աշակերտները Քրիստոսի հետ էին, չէին կարողանում նրա հետ շաղկապվել, իսկ այժմ, երբ Տերը կամեցավ չարչարվել և երկինք ելնել, տվեց նրանց միության շաղկապը, որպեսզի նրա հետ հոգակցվենք՝ իր սուրբ Մարմնի և Արյան ճաշակումով:

Երրորդ՝ Նա կամենում էր իր Մարմնի և Արյան պատարագման հիշատակն անմոռաց պահել աշակերտների սրտում, այդ պատճառով էլ ավանդեց Զատկին, ինչպես և ասաց. «Այս է իմ Մարմինը, որ շատերի համար է տրված. այս արե՛ք իմ Հիշատակի համար» (Ղուկ. ԻԲ 19):

Հարց. – Ինչո՞ւ երկու նյութով՝ հացով ու գինով ավանդեց կատարել խորհուրդը:

Պատասխան. – Այս խորհուրդը հիշատակն է Քրիստոսի չարչարանքների, մահվան և տեղով կողի խոցվելու, որի հարվածից բաժանվեցին Մարմինն ու Արյունը: Այդ պատճառով էլ պետք է Մարմնի փոխարեն հացը ճաշակել և Արյան փոխարեն՝ գինին:

Երկրորդ՝ մարդու բնությունը երկուսից է բաղկացած՝ հոգուց ու մարմնից, իսկ այս խորհուրդը մարդու փրկության համար է կատարվում. հացը ցույց է տալիս մարմնի փրկությունը, իսկ գինին՝ հոգու:

Երրորդ՝ ինչպես առանց ուտելու և խմելու չենք կարող ապրել, այդպես էլ հավիտենական կյանք չենք կարող ունենալ առանց հոգեորդ կերակրի, որը Տիրոջ Մարմինն ու Արյունն է:

Չորրորդ՝ հացն ու գինին դյուրին է գտնել:

Հինգերորդ՝ գինին փարատում է մեր տրտմությունը, որ ունենք մեր մեղքերի պատճառով՝ ըստ այս խոսքի. «Գինին ուրախացնում է մարդուն, և հայն ամրացնում է մարդու սիրտը» (Սաղմ. 64 15): Իսկ Քրիստոսի փրկարկան Մարմինն ու Արյունը հաստատում է մեր սիրտն ու հոգին, որի համար առաքյալն ասում է. «Որչա՞վ ևս առավել Քրիստոսի Արյունը կմաքրի ձեր խղճմտանքը մեռած գործերից» (Եբր. թ 14):

Վեցերորդ՝ քանի որ նոր Ուխտի պատարագի նյութն այլ պետք է լիներ, քան հին պատարագինը, և դա խորհրդանշում է հնի գաղարումը: Նաև Մելքիսեդեկը հաց ու գինի պատարագեց, ինչպես Քրիստոսի ճշմարիտ պատարագի օրինակ (տես Ծննդ. ժԴ 18), իսկ Դավիթը Քրիստոսի մասին ասում է. «Դու հավիտենական քահանա ես ըստ Մելքիսեդեկի կարգի» (Սաղմ. 6թ 4):

Հարց. – Ինչպե՞ս է փոխվում հացը Քրիստոսի Մարմնի, և գինին՝ Արյան:

Պատասխան. – Երբ հացն ու գինին դնում ենք սեղանին, այն միայն հաց ու գինի է, քանի որ իր մեջ չունի աստվածաբետական զորություն: Իսկ երբ Տիրոջ խոսքով ավանդվում է. «Այս է իմ Մարմինը և այդ է նոր Ուխտի իմ Արյունը», այդժամ կատարվում է Քրիստոսի մահվան հիշատակը, և հացը ճշմարտապես դառնում է Քրիստոսի Մարմինը, իսկ գինին՝ Արյունը: Օրինակ՝ ինչպես մարդու մարմինն առանց հոգու սոսկ նրա մարմինն է և ոչ թե ամբողջ մարդը, սակայն երբ, Աստծու կամքով, մեռած մարմնին բանական հոգի է խառնվում, ապա նա ամբողջական կենդանի մարդ է դառնում: Մարմնին միացած հոգին մեր աչքին զգալի կերպով չի երեսում, սակայն դրանով մարմինը կենդանի ենք տեսնում:

Այդպես և Քրիստոսի Մարմնի ու Արյան նշանակները մինչ սրբագործման պահը սոսկ հաց ու գինի են, սակայն դրանց վրա Տիրոջ հրամանը կատարելուց հետո կենդանարար Հոգին միանում է հացին՝ այն ճշմարտապես դարձնելով Քրիստոսի Մարմինը, և միանալով գինուն՝ այն դարձնում է Քրիստոսի Արյունը: Երբ Աստծու Հոգին միանում է հացին ու գինուն և դրանք դարձնում Քրիստոսի Մարմին ու Արյուն, նյութը չի փոփոխվում, այլ ընդունում է իմանալի զորությունը և ճաշակողներին տալիս կենդանի ներգործություն:

Հարց. – Ո՞րն է այդ ներգործությունը:

Պատասխան. – Մեղքերի քավությունն ու թողությունը, հույսով անմահանալը և Աստծու հետ միանալը՝ ըստ Տիրոջ խոսքի. «Այս է երկնքից իջած հացը, որպեսզի ով որ Սրանից ուտի, չմեռնի: Ես եմ Կենդանի հացը, որ երկնքից է իջած. թե մեկն այս հացից ուտի, հավիտենապես կապրի»

(Յովի. Զ 50-52), «Ով ուտում է Իմ Մարմինը և ըմպում Իմ Արյունը, կընակվի Իմ մեջ, և Ես՝ Նրա մեջ» (Յովի. Զ 57):

Եվ դարձյալ՝ ինչպես մարդեղության ժամանակ ինքը միացրեց իր Մարմինն Աստվածության հետ, այդպես էլ այսօր օրհնելով այդ հացն իր գորությամբ՝ Աստվածային խոսքով, այն դարձրեց իր ճշմարիտ Մարմինը:

Հացը, միավորվելով Աստվածության հետ, փոխակերպվում է Քրիստոսի անապական Մարմնի, սակայն սա սովորական փոխակերպում չէ, քանի որ այս խորհրդում հացը չի ավելանում Քրիստոսի Մարմնին: Այսպիսով՝ հացը դառնում է Քրիստոսի Մարմին՝ առանց ավելանալու և պակասելու, նույնպես և գինին:

Հարց. – Իսկ ինչպե՞ս հավատալ, որ սա ճշմարիտ Մարմինն է, որին հաղորդվում ենք, և ոչ թե Մարմնի օրինակը:

Պատասխան. – Բազում վկայություններ կան Տիրոջից և Նրա առաքյալներից: Նաև՝ ինքը՝ Քրիստոս, Ով ճշմարտությունն է, բարձրածայն ասաց ժողովրդին. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չուտեք Մարդու Որդու Մարմինը և չըմպեք Նրա Արյունը, ձեր մեջ կյանք չեք ունենա» (Յովի. Զ 54): Տե՛ս, որ ասաց իր Մարմինը և ոչ թե մարմնի օրինակը: Նաև առաքյալն է ասում. «Որովհետեւ, ով ուտում է և խմում անարժանորեն, իր իսկ դատապարտությունն է ուտում և խմում, քանի որ չի զատորոշում Տիրոջ Մարմինը» (Ա Կորնթ. ԺԹ 29), ոչ թե օրինակը, այլ Տիրոջ Մարմինը:

Եվ դարձյալ՝ օրհնված հացը Քրիստոսի Մարմինն է և ո՛չ օրինակը, այդ պատճառով էլ մեղքերը սրբելու գորություն ունի: Նաև՝ հավատում ենք, որ Քրիստոս ճշմարիտ Աստված է, ինչպես և կա, և Աստծու խոսքը կատարյալ գործ է: Եվ ինչպես ասաց. «Թող լինեն երկինքն ու երկիրը», և այդպես եղավ, նույնպես երբ ասաց. «Այս է Իմ Մարմինը, և այդ է Նոր Ուխտի Իմ Արյունը», այդպես եղավ:

Հարց. – Ինչո՞ւ ճաշակմամբ հրամայեց ընդունել Մարմինն ու Արյունը և ոչ թե այլ զգայարանով:

Պատասխան. – Ինչպես Աղամն ու Եվան արգելված պտուղը ճաշակելով մահցան, այդպես և մեր Տերն անմահության կերակուրը ճաշակելով ավանդեց, որպեսզի ինչպես ճաշակելով մահցանք, այնպես էլ ճաշակելով կենդանանանք:

Քրիստոսի Մարմնին երկու ձեռվ կարելի է հաղորդվել. մեկը՝ զգալի, մյուսը՝ հոգեսր: Հոգով նրանք են ճաշակում, ովքեր խոստովանում են իրենց մեղքերը, ապաշխարում և հավատով ու հույսով ճաշակում՝ ստանալով մեղքերի քավություն և հավիտենական կյանք: Իսկ զգալի ճաշակում են նրանք, ովքեր առանց զղջման ու խոստովանության, անամոթաբար, ճաշակում են Քրիստոսի Մարմինն ու Արյունը: Այդպիսինն իր

անձի դատաստանն ու դատապարտությունն է ուտում և խմում (տե՛ս Ակորնթ. ԺԱ 29), ինչպես Հուդան, ով Տիրոջն անարգեց, և ինչպես խաչհանողները, ովքեր արհամարհանքով խաչեցին Քրիստոսին:

**Աղոթք Գետականի Պարտեզում
(Մատ. ԻՂ 30:56)**

Եվ օրհներգեցին ու ելան Զիթենյաց լեռը – Որպեսզի սովորենք գուշանալ Տիրոջից հոգերոր սեղանից ճաշակելուց հետո և մեր գետնաքարշ վարքից բարձրանանք դեպի աստվածային խորհուրդները:

Տերն ասաց աշակերտներին. «Դուք ամենքդ այս գիշեր իմ պատճառով գայթակղվելու եք», և մարգարեի խոսքը մեջ բերեց. «Հովվին պիտի հարվածեմ, և հոտի ոչսարները պիտի ցրվեն» (Ձաք. ԺԳ 7). Ապա որպեսզի աշակերտները չտրտմեն, նրանց քաջալերեց հարության ավետիսով. «Իմ հարություն առնելուց հետո ձեզնից առաջ պիտի գնամ Գալիլիա»: Այսպիսով Տերը հայտնում է, որ ինքն ամեն ինչ կանխապես դիտի:

Պետրոսը պատասխանեց և ասաց Նրան. «Թեպետև ամենքը Քո պատճառով գայթակղվեն, սակայն ես չեմ գայթակղվի – Բարի է Պետրոսի ջերմեռանդ սերն իր Վարդապետի հանդեպ, սակայն նրա անձնիշխանությունը գովելի չէ, այդ պատճառով էլ Տերը հանդիմանելով ասաց. «Ճշմարիտ եմ ասում քեզ, որ այս գիշեր, դեռ աքաղաղը չկանչած, երեք անգամ ինձ պիտի ուրանա»: Իսկ Պետրոսը պատասխանեց. «Թե Քեզ հետ մեռնել իսկ ինձ հասնի, Քեզ չեմ ուրանա»: Նրա հետ համաձայն էին նաև մյուս աշակերտները, քանի որ սատանան մինչ այդ, դեռևս, չէր համարձակվում մարտնչել նրանց հետ, բայց երբ որսաց Հուդային ու բաժանեց աշակերտներից, սկսեց իր ատամները կրծտացնել նաև Պետրոսի վրա՝ նրան սասանելու համար, այդ պատճառով էլ Տերը նրան ասաց. «Սիմոն, Սիմոն, ահա սատանան ուզեց ձեզ ցորենի նման մաղել: Բայց ես աղոթեցի քեզ համար, որպեսզի քո հավատը չպակասի» (Ղուկ. ԻԲ 31): Տերը Պետրոսի անձնահաճությանը մի փոքր ժամանակ տվեց, որ փորձությունների մեջ ընկնի, որպեսզի մենք խրատվենք և ապավինենք ոչ թե մեր անձերին, այլ Աստծուն:

Այն ժամանակ Հիսուս նրանց հետ եկավ մի տեղ, որի անունը Գեթսեմանի էր – Հուդան գիտեր տեղը, ուր ամեն օր Տերն առանձնանում էր ամբոխից, և Տերն էլ չխուսափեց իր սովորական տեղից, քանի որ կամավոր էր գալիս դեպի իր աշխարհակեցուցիչ չարչարանքները: «Գեթսեմանի» թարգմանվում է լապտերների ձոր: Այդտեղով Դավիթը մարգարեաբար անցավ ոտաքորիկ, երբ փախչում էր Աքեսաղոմից, և անվանեց այն «Ղամբարների ձոր»՝ երբայեցերեն՝ Գեթսեմանի (տե՛ս Բ Թագ. ԺԵ 30-31), մարգա-

բեանալով, որ այնտեղ ջահերով ու լապտերներով պիտի հարձակվեն Տիրոջ վրա:

Հիսուս աշակերտներին ասաց. «Նստեցե՛ք այդտեղ, մինչև որ գնամ աղոթեմ» – Սրանով Տերը մեզ սովորեցնում է փորձությունների ժամանակ առանձնանալ և աղոթքով հաղթահարել նեղությունները:

Իր հետ վերցնելով Պետրոսին և Զեբեղեոսի երկու որդիներին – Տերն ընտրեց նրանց, ովքեր իր հետ էին թարոր լեռան վրա և այն ժամանակ, երբ հարություն տվեց Հայրոսի դստերը:

Սկսեց տրտմել և տագնապել: Այն ժամանակ նրանց ասաց. «Հոգիս տիսուր է մահու չափ» – Թարոր լեռան վրա իր պայծառակերպվելով և Հոր վկայությամբ՝ ցույց տվեց իր Աստվածությունը, իսկ հիմա, տրտմելով ու հոգալով, ցույց է տալիս իր մարդկությունը:

Եվ ասում է. «Հոգիս տիսուր է մահու չափ»: Քանզի կատարյալ մարդ եղավ հոգով ու մարմնով: Քանի որ Աստված ասաց Աղամին. «Տանջանքով հայթայթես քո սնունդը քո կյանքի բոլոր օրերին» (Ծննդ. Գ 17), և եվային թե՝ «Յավերով երեխաներ պիտի ծնեն» (Ծննդ. Գ 16), ուստի Փրկիչն ո'չ թե իր, այլ մեզ համար է տրտմում, և իր տրտմությամբ հեռացնում է մեր տրտմությունը:

Այստե՛ղ մնացեք և ինձ հետ հսկեցե՛ք: Եվ մի փոքր առաջ գնալով՝ ընկափ իր երեսի վրա – Տերն իր աստվածային գլուխը գետին խոնարհելով կանգնում է աղոթքի, որպեսզի երկնավոր Հորից մարդկանց համար ողորմություն հայցի: Ապա բարձրացնում է երկրից իր արարչական գլուխը, որպեսզի մարդկանց վեր բարձրացնի հրեշտակների մոտ:

Հա՛յր Իմ, եթե կարելի է, այս բաժակը թող ինձնից հեռու անցնի, բայց ոչ ինչպես Ես եմ կամենում, այլ ինչպես Դու – Տերը հրաժարվում է իր կամքից և հոժարությամբ կատարում Հոր կամքը, քանի որ մի է և նույնն է Աստվածության էությունը՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու: Եվ քանի որ էությունը մի է, ուստի և կամքն էլ անբաժան է և անքակտելի: Քանի որ մարդը Դրախտում խափանեց Արարչի կամքը, կատարեց թշնամու կամքը և մեղանչելուց հետո չընկավ Արարչի առաջ ու թողություն չխնդրեց, այլ փորձեց արդարանալ, այդ պատճառով Աստծու Որդին խոնարհվեց հայրական ծոցից, հագավ մեր բնությունը, մեր պատճառով կոչվեց մեղք ու նզովք (Մեն Գաղատ. Գ 13) և մեր փոխարեն խափանեց մարմնի կամքը, որպեսզի կատարի մարմնի Արարչի կամքը և մարդուն կրկին հնազանդեցնի Հորը: Արդ՝ մարդասեր Տերն իր համար չէ, որ տրտմեց ու հոգս քաշեց, այլ՝ մարդու, որպեսզի բժշկի մեր վերքերը:

Նա տագնապի մեջ էր և ամբողջ հոգով էր աղոթում: Եվ Նրանից քրտինքը հոսում էր արյան կաթիլների նման՝ շիթ-շիթ գետին թափվելով

(Պոլկ. ԻԲ 43-44) – Ոչ թե արյուն, այլ ինչպես արյուն, որպեսզի փակի նրանց բերանը, ովքեր ասում են, թե Նրա մարդեղությունը թվացյալ է եղել և ուրանում են Նրա Մարմնի կրքերը, իսկ Տերը քրտինքով ցույց տվեց իր Մարմնի ծշմարիտ երկյուղը: Եվ քանի որ Տերն Աղամին ասաց. «Քո երեսի քրտինքով ուտես հայդ» (ԾԱՆԴ. Գ 19), այդ պատճառով իր քրտինքով վերացրեց այդ պատուհասը՝ ազատելով երկյուղից՝ ըստ այս խոսքի. «Եվ ապատի նրանց, որ մահվան երկյուղով միշտ գերության վիճակում էին» (ԵԲՐ. Բ 15):

Եվ Նրան երկնքից երեաց մի հրեշտակ և ուժ էր տալիս Նրան-Տերը կարոտ չէր ծառայի այցելության կամ օգնության, այլ որպեսզի մեզ սովորեցնի, որ առաքում է իր հրեշտակներին և նրանք պահում են իր երկյուղածներին:

Նա եկավ աշակերտների մոտ և նրանց քնի մեջ գտավ – ինքը թույլ տվեց, որպեսզի քունը պաշարի նրանց, որպեսզի հիշեն իրենց խոստումները. «Քեզ Հետ մեռնել իսկ ինձ հասնի, քեզ չեմ ուրանա» (Մարկ. ԺԴ 31): Ապա կրկին գնաց աղոթելու և երբ վերադարձավ, դարձյալ նրանց քնի մեջ գտավ և նույն խոսքերն ասաց, որպեսզի մեզ սովորեցնի, որ երբ ինչոր բան ենք խնդրում Աստծուց և չենք ստանում, չվհատվենք, այլ անդադար աղոթենք ու թախանձենք, ինչպես և գրված է. «Խնդրեցե՛ք Աստծուց, և նա կտա ձեզ, փնտրեցե՛ք և կգտնենք, բախեցե՛ք, և կբացվի ձեր առաջ» (Մատթ. Է 7):

Այս ժամանակ եկավ աշակերտների մոտ ու նրանց ասաց. «Ննջեցե՛ք այսուհետև ու հանգստացե՛ք, քանի որ ահա ժամը հասել է, և Մարդու Որդին մեղավորների ձեռքն է մատնվում» – Մատնվում է Աստծու Խոսքը մեղավորների ձեռքը, որպեսզի մեզ՝ մեղավորներիս, ազատի Աղամի անեծքից:

Վե՛ր կացեք գնանք այստեղից. որովհետև ահա հասավ նա, ով ինձ մատնելու է – Ահավասիկ, կամովին է գնում դեպի չարչարանքները, որովհետև եթե իր տեղում մնար, ապա Հուդան չէր գտնի Նրան: Եվ քանի դեռ այդ էր ասում, եկավ Հուդան, նրա հետ՝ սրերով ու մահակներով զինված ամբոխը: Հուդան իսկույն մոտեցավ Հիսուսին ու ասաց. «Ողջույն, Վարդապե՛տ»: ու համբուրեց Նրան: Հուդայի համբույրը լի էր սատանայի թույնով, ինչպես Կայենի մատուցած ընծան: Իսկ Տերը նրան ասաց. «Ընկե՛ր, սրա՞ համար դու եկար: Հուդա՛, համբուրելո՞վ ես մատնում Մարդու Որդուն»:

Աղամը ոչնչով չէր մեղանչել օձի ու սատանայի հանդեպ, երբ նրանք դավաճանելով խաբեցին նրան: Տերը նույնպես Հուդայի նկատմամբ ոչինչով չէր մեղանչել և ոչ էլ հրեաների, ովքեր առանց պատճառի

բռնեցին Նրան: *Այսպես կատարվեց մարդարեի խոսքը. «Սիրուս փոխարեն մեղադրեցին Ինձ, բայց Ես աղոթքի կանգնեցի» (Սաղմ. 6Ը 4):*

Իսկ Հիսուս, իր վրա եկող այս ամենը տեսնելով, դուրս ելավ ու նրանց ասաց. «Ո՞ւմ եք փնտրում»: Նրան պատասխանեցին՝ Հիսուս Նազովրեցուն: Հիսուս նրանց ասաց՝ Ես եմ: Երբ Հիսուս ասաց՝ Ես եմ, ետ-ետ գնացին և գետին ընկան (Յովհ. ԺԸ 4-6) – Եվ Հիշեցին աշակերտները, թե ինչպես Տերը չորացրեց թղենուն և հասկացան, որ այժմ կարող է նաև սրանց կործանել, և տեսնելով, որ ձերբակալողները գետին ընկան՝ քաջալերվեցին ու ասացին. «Ճե՛ր, եթե կամենաս սրով նրանց հարվածենք»: Եվ Պետրոսը, Վարդապետի հանդեպ իր ջերմեռանդ սիրուց դրդված, սրով զարկեց քաշանայապետի Մալքոս անունով ծառային ու կտրեց նրա աջ ականջը: Իսկ Փրկիչը հրամայեց անմիջապես դադարեցնել կռիվը, ապա դիպչելով Մալքոսի ականջին՝ այն բժշկեց:

Քո սուրը ետ դիր իր տեղը, որովհետև ովքեր սուր են վերցնում, սրով կընկնեն – Քրիստոս Օրենքի վախճանն է և Շնորհի սկիզբը: Այդ պատճառով Տերն ամփոփեց Օրենքի սուրը և ողորմությամբ բժշկեց զղջացողին: Պետրոսը կամենում էր Մալքոսի պարանոցը կտրել, սակայն Աստծու տնօրինությամբ միայն ականջը կտրեց: Սա հրեաների ականջի խորհուրդն ունի, որին աղաղակով դիմում էին մարդարեները՝ հայտնելով Քրիստոսի մասին, սակայն հրեաները փակում էին ականջները և չէին լսում:

Կարծում ես, թե չե՞մ կարող իմ Հորն աղաչել, որ Նա Հիմա Ինձ համար այստեղ հասցնի հրեշտակների ավելի քան տասներկու գնդեր – Դավիթի ժամանակ հրեշտակը եկավ երուսաղեմ և օրվա երրորդ ժամին յոթանասուն հազար մարդ սպանեց (տես Բ Թագ. ԻՂ): Հուդայի Հոսափատ արքայի ժամանակ հրեշտակը հարվածեց եթովպացիների զորքին և երկու հարյուր հազար հոգու սպանեց (տես Բ Սնաց. ԺՂ 12): Իսկ եզեկիայի ժամանակ հրեշտակը հարվածեց Սենեքերիմ արքայի հարյուր ութսունհինդ հազարանոց զորքին (տես Դ Թագ. ԺԹ 35):

Դարձյալ նրանց հարցըց՝ ո՞ւմ եք փնտրում: Նրանք ասացին՝ Հիսուս Նազովրեցուն: Հիսուս նրանց պատասխանեց. «Ձեզ ասացի, թե՝ Ես եմ. արդ, եթե Ինձ եք փնտրում, նրանց թո՛ւյլ տվեք գնալ» (Յովհ. ԺԸ 7-8) – Այս ասաց, որ կատարվի մարդարեի խոսքը. «Հովվին պիտի հարվածեմ, և հոտի ոչսարները պիտի ցրվեն» (Մատթ. ԻԶ 31):

Միշտ ձեզ մոտ, տաճարում նստում էի և ուսուցանում, ու Ինձ չբռնեցիք. սակայն ա՛յս է ձեր ժամը և խավարի իշխանության զորությունը (Ղուկ. ԻԲ 53) – Եվ մոտենալով բռնեցին ու կալանեցին Նրան: Այդ ժամանակ, երբ աշակերտները հասկացան, որ իր կամքով է մատնվում, թողեցին

Նրան ու փախան: Իսկ ամբոխը, բռնելով Հիսուսին, տարավ Կայիշափաքահանայապետի մոտ:

Պետրոսի ոհրածութանը

(Մատթ. ԻՉ 69:75, Մարկ. ԺԴ 66:72, Ղուկ. ԻԲ 56:62, Հովհ. ԺԸ 15:18, 25:27)

Պետրոսն ու Հովհաննեսը հեռվից հետևում էին Նրան, որպեսզի տեսնեն այդ ամենի վախճանը: Երբ Տիրոջը ներս տարան քահանայապետի գավիթը, ներս մտավ նաև Հովհաննեսը, որովհետև նա ծանոթ էր քահանայապետին: Այնուհետև նա Պետրոսին էլ ներս մտցրեց, սակայն դռնապահ աղախինը վախեցավ Պետրոսին ներս թողնել, քանի որ գիտեր, որ նա Հիսուսի աշակերտներից է: Պետրոսն ուրացավ ու ասաց. «Ես Նրան չեմ ճանաչում» ու ներս մտավ: Գավիթում այդ ժամանակ կրակ էր գառվում, և Պետրոսը Հովհաննեսի և մյուս սպասավորների հետ նստեց կրակի մոտ տաքանալու, քանի որ ցուրտ էր:

Պետրոսը երբ սկսեց խոսել Հովհաննեսի հետ, սպասավորները նրա առողջանությունից նկատեցին, որ նա գալիլիացի է ու ասացին. «Ճիշտ որ սա էլ Նրա հետ էր, որովհետև գալիլիացի է»: Պետրոսը դարձյալ ուրացավ: Այդ պահին այնտեղ էր նաև Մաղքոսի ազգականը, ում ականջը կտրել էր Պետրոսը, ով էլ ասաց. «Իրոք, զու էլ Հիսուսի հետ էիր: Զէ՞ որ ես ինքս տեսա քեզ Նրա հետ պարտեզում»: Այդ ժամանակ Պետրոսը սկսեց նզովել ու երդվեց, թե չի ճանաչում այն Մարդուն, Ում մասին նրանք խոսում են:

Տերն այդ պահին կանգնած էր սրահում, և գավիթի կրակի լույսով նրանք տեսնում էին մեկմեկու: Քահանայապետը Տիրոջը հարցեր էր տալիս իր աշակերտների և վարդապետության մասին: Երբ Պետրոսը երեք անգամ ուրացավ, նույն պահին աքաղաղը կանչեց, և Տերը դարձավ և ամբոխի միջից նայեց Պետրոսին: Պետրոսը հիշեց Տիրոջ խոսքը, որ ասել էր իրեն, թե՝ «Աքաղաղը դեռ երկու անգամ չկանչած՝ դու երեք անգամ ինձ պիտի ուրանաս»: Մտաքերեց նաև իր համառությունն ու հակառակ խոսելը և այլևս չկարողանալով մնալ գավիթում, դուրս եկավ՝ խույս տալով Տիրոջ հայացքից, ու գառնորեն լաց եղավ:

ԱՎԱԳ ՈՒՐԲԱԹ
ՄԵՐ ՏԻՐՈՅ ՀԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՒ ԶԱՐՈՎՐԱԾԱՅԱՐԻ
ԵՒ ԽՎԶԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏՁՎԱՅԻ

Հիշատձկ Վեծերորդ օրվա Արարօնհայան

Ավագ ուրբաթը խորհրդանշում է արարչության վեցերորդ օրը, երբ Աստված արարեց ցամաքային շնչավոր արարածներին:

«Թող երկիրն արտադրի չորքոտանի կենդանիներ իրենց տեսակներով, սողուններ և գազաններ իրենց տեսակներով»։ Եվ եղավ այդպիս: Աստված ստեղծեց երկրի գազաններին՝ իրենց տեսակներով, անասուններին՝ իրենց տեսակներով, և երկրի բոլոր սողուններին՝ իրենց տեսակներով: Աստված տեսավ, որ դրանք բարի են (Ծննդ. Ա 24-25) – Դրանից հետո Աստված արարեց մարդուն: Տերը, արարչությունն սկսելով նվաստագույն արարածներից, ավարտեց մեծագույնով:

Աստված ասաց. «Մարդ ստեղծենք Մեր պատկերով ու նմանությամբ, նա թող իշխի ծովի ձկների, երկնքի թուչունների, ողջ երկրի անասունների և երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա» (Ծննդ. Ա 26) – Աստված մարդուն արարեց հողից, իր պատկերով ու նմանությամբ, իսկ հետո նրա կողից ստեղծեց կնոջը և նրանց դրեց Դրախտում: Աստված մարդուն մյուս եղականների հետ չստեղծեց, և մարդուն ստեղծելուց իրեն խորհրդակից արեց ոչ թե եղականներին, այլ իր անեղ Խոսքին և Սուրբ Հոգուն: Աստված արարածներին արարեց ոչ թե իր համար, քանի որ ինքը ոչ մի քանի կարոտ չէ, այլ մարդու, ում դեռ պետք է ստեղծեր: Իսկ մարդուն նախապես չարարեց, որպեսզի նրան դատարկ և ունայն վայրում չբնակեցնի ու տրտմեցնի:

Աստված մարդուն իր պատկերով ու նմանությամբ ստեղծեց և բոլոր արարածների օրինակը մարդու մեջ ցույց տվեց. Աղամի հոգով իմանալի է ություններին, իսկ մարմնով՝ զգալի: Մարդը հոգով Աստծու պատկերն է, քանի որ հոգին անմարմին է, անմահ, անվայր, անիմանալի, մտավոր, անձնիշխան, անուրեք, ամենուր և ոչ ուրեք, նաև՝ բանական, անտեսանելի, անմեղ: Մարդը նաև մարմնով է Աստծու պատկերը, քանի որ ուղիղ է մարդու ձեւը, մարդը տեսնող է ու լսող, բոլոր զգալի արարածների տերն է ու իշխանը, և հոգին ամենուր է նրա մարմնում:

Աստված ստեղծեց մարդուն իմանալի (հոգեւոր) և զգալի (մարմնավոր) բնություններից: Այդ երկուսն էլ Աստծու պատկերով են ստեղծվել և հորինվել երկու աշխարհների կատարյալ ձևերով, այդ պատճառով էլ մարդը

երկու օրհնություն է ընդունում. որպես մարմնավոր արարած ընդունում է որդեմնության օրհնությունը, ինչպես մյուս զգալի արարածները՝ ըստ այս խոսքի. «Աճեցե՛ք և բազմացե՛ք», և որպես իմանալի արարած՝ հոգեոր օրհնությունը՝ արժանանալով պատվիրանապահության պատվին:

Արու և էգ ստեղծեց նրանց» (Ծննդ. Ա 27) – Տերը մարդուն արու և էգ արարեց: Մեռը օտար է Աստծուն, հրեշտակներին և մեր հոգուն: Աստված կանխատես է և գիտեր, որ մարդը կորցնելով իր նմանությունը՝ ընկնելու է և հավասարվելու անասուններին, այդ պատճառով արու և էգ արարեց նրանց, որպեսզի կարողանան բազմանալ:

Աստված օրհնեց նրանց ու ասաց. «Աճեցե՛ք, բազմացե՛ք, լցրե՛ք երկիրը, տիրեցե՛ք դրան, իշխեցե՛ք ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի բոլոր անասունների ու երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա» (Ծննդ. Ա 28):

Զասաց Դրախտը, այլ երկիրը, քանի որ գիտեր, որ մարդը Դրախտից շուտով դուրս է գալու: Թեպետ Աստված Եվային դեռ չէր ստեղծել, բայց օրհնեց ապագայում կատարվելիքները ևս. գլխի՝ Աղամի համար այս խոսքերն ասելով՝ անդամների՝ Եվայի համար ևս ասաց:

Աղամը ուրբաթ առավոտյան Արարչի ձեռքով ստեղծվեց հողից, և նույն օրվա երրորդ ժամին Աստված Աղամի կողից ստեղծեց կնոջը: Արարումից քառասուն օր հետո¹, ուրբաթ օրը, Աղամն ու Եվան բնակվեցին Դրախտում, և դարձյալ ուրբաթ օրը՝ երրորդ ժամին, Եվան խաբվեց օձից, հրաժարվեց Աստծու պատվիրանից ու կերակ պտուղը: Նույն օրն Աղամը, տեսնելով կնոջը մերկացած լուսագարդ փառքից, հանուն նրա սիրո ինքն էլ կերակ պտուղը, և երկուսն էլ մերկացան փառքից: Երբ նախաստեղծները լսեցին Աստծու ոտնաձայները, փախան, թաքնվեցին թղենու թփի ետևում ու ծածկվեցին տերևներով:

Իններորդ ժամին Տերը գալով Դրախտ ասաց. «Աղամ, ո՞ւր ես»: Այդպես ասելով՝ նրանց հարավորություն տվեց ապաշխարելու: Բայց ապաշխարություն չգտնելով՝ Աղամին պատմեց անեծքով, Դրախտից արտաքսեց, ուղարկեց այն երկիրը, որտեղից նրան վերցրել էր, և ասաց. «Հող էիր և հող էլ կդառնաս» (Ծննդ. Գ 19): Հետո Աստված փակեց կենաց ծառի ճանապարհը՝ Դրախտի դռանը պահապան կարգելով սերովբեներին: Այդ պատճառով էլ վեցերորդ օրվա անունը «Ուրբաթ» դրվեց, որը նշանակում է մարդու կազմություն, նաև՝ բոլթ և գույժ:

¹ Ըստ Եկեղեցու որոշ հայրերի կարծիքի:

Վեճերորդ դարում Դեղնական պատկերն է՝

Վեցերորդ դարում, որը արարչության վեցերորդ օրվա պատկերն է, Աստված սուրբ Կույսի անարատ արգանդում դարձավ կատարյալ Մարդ՝ հոգով, մտքով ու մարմնով, որպեսզի կատարի տնօրինական գործերը: Արարչության օրերին մարդու ստեղծումով ավարտվեցին արարչության գործերը, իսկ Տիրոջ գալստյամբ՝ տնօրինական գործերի պսակը դարձավ իսչը, և Տիրոջ անպարտ մահվամբ ջնջվեցին հանցանքների պարտքերը:

Ավագ ուրբաթ օրը մեր Տեր Հիսուս Քրիստոս՝ Երկրորդ Ադամը, խաչի վրա մեռնելով՝ բացեց իր կողն ու հիմնեց իր եկեղեցին և իր վրա վերցնելով Ադամի անեծքն ու գատապարտության փուշ՝ ազատեց նրան: Տերը փոխանակ ծառին՝ խաչը կանգնեցրեց, և փոխանակ պտղին՝ լեղին ծաշակեց, և այն ժամին, երբ Ադամը գուրս եկավ Դրախտից, Տերն ավագակին մտցրեց Դրախտ, իսկ ինքը հանգստացավ գերեզմանում:

Այն օրը, երբ նախաստեղծը մերկանալով լուսազարդ փառքից՝ տարագրվեց Դրախտից, իսրայելը ազատվեց փարավոնի ձեռքից, որը և դարձավ հրեաների ամիսների սկիզբը: Իսրայելի ժողովուրդը գիշերը գուրս եկավ Եգիպտոսից, և այդ գիշերվա օրինակն էր այն գիշերը, երբ Տերը հրամայեց Աբրահամին վերցնել երեքամյա երինջ, երեք տարեկան նոխազ, երեք տարեկան խոյ, տատրակ ու աղավնի և դրանք մեջտեղից կտրելով իրար դիմաց դնել, իսկ թուչուններին՝ չկտրել (տես Ծննդ. ժե 9): Եվ արևի մայր մտնելու ժամանակ Աբրահամը թմբիրի մեջ ընկավ, ինչը խորհրդանշում է նրա Որդու չարչարանքներն ու մահը, և Եգիպտոսը հարվածելը: Քանի որ Ադամը հանցանքի պատճառով խավարով նսեմացավ, Տերը Եգիպտոսին խավարով տանջեց, և ինքն էլ գիշերը մատնվեց՝ ազատելու համար մարդկային ցեղը:

Տիրոջ Կենարար Զարօնաբաները Խավարության առաջարկությունը

Ավագ ուրբաթ օրը՝ Գիշերային ժամերգությամ² ժամանակ, կատարվում է հսկում. թեմի վրա մոնթեր են վառում ու շարում՝ վեցական մոն աջից և վեցական՝ ձախից, մի մեծ մոն էլ դնում են կենտրոնում: Այս տասներկու մոնթերը խորհրդանշում են Տիրոջ տասներկու աշակերտներին, իսկ մեծ մոնը՝ Քրիստոսին: Այնուհետև քահանաները վեց անգամ ավետարան են ընթեցում ու պատմում Ավագ ուրբաթ օրը կատարված դեպքերի մանրամասները: Դրանք են՝ Վերջին ընթրիքը, Հիսուսի աղոթքը Գերսեմանիի պարտեզում, Յուդայի մատնությունը, Հիսուսի ծերբակալվելը, քահանայապետի մոտ

² Նախկինում այս կարգը կատարվել է ուրբաթ օրը՝ գիշերամիջին: Այսօր այն կատարվում է գիշերամիջից մի քանի ժամ շուտ՝ հինգշաբթի օրը, ոտնվայի արարողությունից որոշ ժամանակ անց:

տարվելը, Կայիշափայի ատյանի առջև կանգնելը, անարգվելը, հարցաքննվելը, Պետրոսի ուրացումներն ու արտասկելը:

Յուրաքանչյուր ավետարանի ընթերցումից առաջ սաղմոսում են, երգում սուրբ Ներսես Շնորհալի հայրապետի «Այսօր անճառ» շարականից նի հատվածը, իսկ ընթերցումից հետո մոմերից երկուսը հանգընում, մեկն աջից, մյուսը՝ ձախից, ապա ծնրադրելով՝ աղոթում: Այս կարգը վեց անգամ կրկնելով ընթերցում են Ավագ ուրբարին վերաբերող բոլոր ավետարանները և մարում տասներկու մոմերը: Սոմերի հանգընելը խորհրդանշում է առաջյաների փախուստը, իսկ կենտրոնի մեջ մոմի վառված մնալը՝ Տիրոջ նիայնակ մնալը:

Այս ամենից հետո ասվում է մաղթանք, քարոզ և աղոթք հանգուցյաների հոգիների համար, ապա ողբածայն երգվում է կանոնագույն՝ «Իշխանը հալածեցին զիս» և «Արծարասիրութեամբն» շարականը: Երբ երգում են «Տէր յերկնից» շարականը, վերցնում են վաշվող մեծ մոմը ու մարում եկեղեցու բոլոր լույսերը: Որից հետո, երբ ավարտին է հասնում «Փառք ի բարձունս»-ը, մեծ մոմը դուրս են բերում, վառում եկեղեցու լույսերը և համապատասխան աղոթքներից ու սաղմոսներից հետո ասում «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ մատուցար վասն մեր, ողորմեա՞նեզ» երեսրբյանը:

Այնուհետև ընթերցվում է Հովհաննեսի ավետարանը, որտեղ պատմվում է Տիրոջ տարվելը Պիղատոսի մոտ, հարցաքննվելը, գանակոնցվելը, ամբոխի առջև դուրս բերվելը և ամբոխի կողմից ևս մահվան դատապարտվելը: Ապա գրակալի վրա են դրվում սուրբ Խաչը ու Ավետարանը, և քահանաները շրջան են կազմում: Եպիսկոպոսը կամ ավագ քահանաներից մեկը խնկարկում է, իսկ մյուսներն ասում են՝ «Խաչի քո Քրիստոս երկիր պագանեն», «Սուրբ Աստուած, որ խաչեցար», «Փառք սուրբ խաչիր» և այլն ըստ կարգի: Վերջում ընթերցվում է «Ավագ ուրբարի կտակ» կոչվող ծառը:

Այսօր թեպետ ուրախություն է Հոգիների համար, քանի որ Քրիստոսի չարչանքներով մեր Հոգիներն ազատվեցին դժոխքից, սակայն մարմնապես սուրգ է ու տրտմություն, ինչ պատճառով լուսատուները խավարեցին երկնքում, երկիրը շարժվեց, քարերը պատռվեցին, տաճարի վարագույրը կիսվեց և ջաճերը մարեցին: Այդ պատճառով էլ այսօր մենք պետք է սպանք և ողբանք մյուս արարածների հետ և չարչանակից լինենք Քրիստոսին:

Այսօր եկեղեցին կատարում է մեծ Զվարակի մորթվելու հիշատակը: Այս մեծ խորհուրդը, որ սկզբնավորվել էր Հավիտենականությունից առաջ, որը և կատարվեց ժամանակի լրմանը, Տերը նախօրոք հայտնել էր իր մարգարեներին: Ըստ որում, տեսանողներից մեծը՝ Ամոսի որդի Եսային, մյուս բարձրագույն խորհուրդների հետ նաև այս անբավելի խորհրդի խորհրդագույցը եղավ՝ ասելով. «Ո՞վ հավատաց Տիրոջ մասին մեր տված լուրին» (Եսայի ԾԳ 1): Նրան Հոգով հայտնվեց ծածկված խորհուրդը և անձառ խորհրդի մեծությունը: Իսկ ովքեր չէին ընդունել Հոգին, նրա միջոցով տեղեկացան, սակայն լսողները դյուրությամբ չհավանեցին, քանի որ նրանց ներքին ունկը մաքրված չէր:

Այս լուրը Հոգով զորացած մեկ ուրիշը ևս լսեց և իր մեծ հիացմունքը երկյուղի հետ խառնելով՝ ասաց. «Տե՛ր, Քո լուրը լսեցի և վախեցա, նայեցի

քո գործերին և զարհութեցի. Դու կճանաչվես երկու գաղանների միջև, երբ տարիները մոտենան, կհայտնվես, երբ ժամանակը հասնի, կերևաս, երբ իմ անձը բարկությունից խռովվի, ողորմությունս կհիշես» (Անրակ. Գ 2): Եվ ի՞նչ լուր է սա, որին այդպես դժվար է հավատալ: Սա լուրն է Անեղի եղանակու, Խոսքի՝ թանձրանալու, Անբովանդակի՝ բովանդակվելու, Անսահմանելիի՝ սահմանվելու, Անսկզբի՝ սկզբնավորվելու, Անժամանակի՝ սկսվելու, Անտեսանելիի՝ տեսանելի դառնալու, Անըմբոնելիի՝ ըմբռնվելու, Անչարչարելիի՝ չարչարվելու, Անմահի՝ մեռնելու:

ՀԻԱՌԻ ԿՎՅԻՆՓՈՅԻ ՂՈՎԶ

Հոգեղենների ու հրեղենների Արքան կանգնեց ատյանում: Աստվածային Քահանայապետը, Ով իջել էր երկնքից աշխարհի մեղքը վերցնելու, իրեն մատնեց քահանաների ձեռքը: Անօրեն հրեաները սուս վկաներ էին փնտրում նրա դեմ, ինչպես և գրված է. «Իմ դեմ մեղսագործ վկաներ ելան և չարախոսեցին ինձ իրենց անիրավությամբ» (Սաղմ. ԻՉ 12), սակայն որևէ մեղք չէին գտնում, որ նա գործած լիներ, քանզի նա մեղք չգործեց, և նրա բերանում նենգությունը տեղ չգտավ (տեսԱ Պետ. Բ 22):

Երկու վկա առաջ գալով ասում են. «Մենք լսեցինք Դրանից, երբ ասում էր. «Ես կքանդեմ այս ձեռակերտ տաճարը և երեք օրում կշինեմ մեկ ուրիշը՝ անձեռակերտ» (Սարկ. ԺԴ 58) – Իսկ Հիսուս լուռ էր: Քահանայապետը, կամենալով Տիրոջը խոսքով որսալ, ասաց.

Երդվեցնում եմ Քեզ կենդանի Աստծով, որ մեզ ասես, թե Դո՞ւ ես Քրիստոս՝ Աստծու Որդին (Սատթ. ԻՉ 63) – Այսինքն՝ Հոր անճառելի Ծնունդը: Նա լսողների օգտի համար չհարցրեց, այլ իր չարությունից մղված, որպեսզի ամբոխին նրա դեմ գրգռի: Եվ Տերը բարի դավանությամբ պատասխանեց.

«Դո՞ւ ասացիր: Բայց ասում եմ ձեզ. այսուհետև Մարդու Որդուն կտեսնեք նստած ամենազոր Աստծու աջ կողմում և եկած երկնքի ամպերի վրայով» (Սատթ. ԻՉ 64) – Սկզբում Տերը ճառում էր իր չարչարանքների, մահվան ու հարության մասին, իսկ այս խոսքով բացահայտում է իր նստելը Հոր աջ կողմում և աշխարհի վախճանին Հայրական իշխանությամբ իր Երկրորդ գալուստը:

Այն ժամանակ քահանայապետը պատռեց իր զգեստներն ու ասաց. «ՀայՀոյեց» (Սատթ. ԻՉ 65) – Այդ թշվառականն այդպես արեց, քանզի այդպես պատռվելու էր նրա քահանայությունը, ինչպես Սավուղի թագավորությունը, երբ նա պատռեց Սամվելի հանդերձը (տեսԱ Թագ. ԺԵ 27):

Այն ժամանակ թքեցին Նրա երեսին, բոլոնցքով հարվածեցին Նրան» (Սատր. ԻԶ 67) – Ամբոխը, համարձակություն ստանալով, քահանայապետի Հետ թքեց մեր Տիրոջ դեմքին. Նրա դեմքին, Ումից սարսելով դողում են Հրեշտակները, և Ում փառքի ահից վեցթևյան սերովքեները զարհուրելով ծածկում են իրենց դեմքերը: Մեծն Մովսեսը վեր էր նայում, որ տեսնի Աստծու ահավոր դեմքը, իսկ այսօր Հրեաները թքում էին Արարչի դեմքին:

Քանի որ նախահայրն ամաչեց փառքից մերկանալու պատճառով, Տերը թուրքն ընդունեց, որպեսզի վերացնի Ադամի նախատինքը:

Ոմանք էլ ապտակում էին Նրան ու ասում. «Մարգարեացի'ր մեզ, Դո՛ւ, Քրիստո՛ս, ո՞վ է, որ Քեզ Հարվածեց» (Սատր. ԻԶ 68) – Շատ թագավորներ ու մարգարեներ ցանկացան տեսնել Իսրայելի Աստծու դեմքը, բայց չկարողացան, իսկ Հրեաները տեսնելով՝ աստվածամարտ դարձան, և այդ պատճառով Հրեաների փոխարեն հեթանոսները դարձան Աբրահամի որդի:

Երբ առավոտ եղավ, բոլոր քահանայապետերն ու ժողովրդի ծերերը խորհուրդ արեցին Հիսուսի դեմ՝ Նրան սպանելու համար: Նրան կապեցին, առան-գնացին և հանձնեցին պոնտացի Պիղատոս Կուսակալի ձեռքը (Սատր. ԻԵ 1-2) – Կապվեց փառքերի թագավորը, որպեսզի մեզ՝ բազմամեղներիս, ազատի մահվան կապանքներից և հավիտենական կյանք պարգևի: Կենդանիների ու մեռելների Դատավորին, Ով դատում է աշխարհն արդարությամբ և ժողովուրդներին՝ ուղղությամբ, մատնեցին դատավորի ձեռքը:

ՀՈՒՂԱՅԻ ԻՆՔՆԱՄՊԱՆԻԹԱՅՈՒԱԾ

Այն ժամանակ Հուղան, որ Հիսուսին մատնել էր, տեսնելով, որ Հիսուս դատապարտվեց, զղաց, արծաթ դրամները վերադարձրեց քահանայապետերին և ժողովրդի ծերերին ու ասաց. «Մեղանչեցի, որովհետեւ արդար արյուն մատնեցի» (Սատր. ԻԵ 3-4) – Հուղան ընդամենն արդար արյուն է ասում Նրան, Ում Պետրոսն Աստծու Որդի դավանեց, իսկ Հովհաննես Մկրտիչը՝ Աստծու Գառ և բոլորի մեղքերը Վերցնող: Ասում է «արդար արյուն», ինչպես կամեր մարդկանցից մեկի համար, և ոչինչ չի շահում իր անօգուտ զղումից: Այլ նա պետք է աղաղակեր, թե՝ «Մեղավոր եմ, քանի որ Իսրայելի Աստծուն և երկնքի ու երկրի Տիրոջը մատնեցի»:

Հուղան արծաթը գցեց տաճարում, որպեսզի դրանով գնեն բրուտի ագարակը՝ որպես գերեզման օտարների համար, և որպեսզի կատարվեն մարգարեի խոսքերը. «Եթե ձեր աչքին հաճելի է թվում, ապա տվե՛ք իմ վարձը, իսկ եթե՝ ոչ, ասացե՛ք: Եվ նրանք կշռեցին իմ վարձը երեսուն արծաթ... Ես վերցրեցի երեսուն արծաթը և Տիրոջ տանը գցեցի բովի մեջ» (Զաքար. ԺԱ 12-13), այսինքն՝ քուրայի, ինչը բրուտի ագարակն էր՝ կավե

անոթներ թրծելու տեղը: Եվ թշվառական Հուդան կախվեց ծառից ու խեղզվեց, ինչպես իր ժամանակին Աքիտոփելը՝ Դավիթի բարեկամը, ով մատնիչ էր (տեսք Թագ. մէ 23):

Այսպիսով Հուդայի վրա կատարվեց հարյուրութերորդ սաղմոսի անեծքը. «Նրա գեմ մի չարագործ հանի՛ր, և սատանան թող կանգնի նրա աջ կողմում: Իր գատաստանից թող նա հանցապարտ դուրս գա, և նրա աղոթքը մեղք թող համարվի: Թող նվազեն օրերը նրա, և նրա պաշտոնը թող ուրիշն առնի: Նրա որդիները թող որք դառնան, իսկ նրա կինն՝ այրի: Նրա որդիները թող թափառական շրջեն ու մուրացիկ լինեն, և թող նրանք հեռանան իրենց բնակավայրից: Պարտատերը թող խուզարկի ողջ ունեցվածքը նրա, օտարները թող հափշտակեն վաստակը նրա: Թող ոչ ոք աջակից չկինի նրան, և նրա որբերին ոչ ոք չգթա: Թող նրա որդիները կոտորվեն, և նրա անունը թող ջնջվի սերնդի միջից: Թող Տիրոջ առջև հիշվեն նրա հոր մեղքերը, և նրա մոր մեղքերը չսրբվեն: Թող նրանք ամեն ժամ Տիրոջ առջև լինեն, և նրանց հիշատակը թող վերանա երկրից, քանզի նա ողորմություն անելը չհիշեց, հալածեց աղքատ ու տնանկ մարդուն, որ կործանի նրան, ով խոնարհ է սրտով: Նա, որ անեծք սիրեց, թող այն իրեն դիպչի, նա, որ չուզեց օրհնություն, թող այն հեռու լինի նրանից: Անեծքը, որ նա հագավ ինչպես հանդերձ, թող ըրի պես լցվի նրա որովայնը և ձեթի պես՝ նրա ոսկորների մեջ: Թող նրա համար հագնելու զգեստ լինի այն և մեջքին կապելու մշտական գոտի: Այս է վարձը նրանց, ովքեր բամբասում էին ինձ Տիրոջ առջև, և ովքեր չարախոսում էին իմ մասին» (Սաղմ. 6C 6-20):

Հուդան դարձավ մատնիչը մարմնացած անժամանակ Խոսքի, ատելի դարձավ Տիրոջ աշակերտներին, իսկ հրեաների աչքին՝ ստախոս, դավաճան ու խոսքը փոխող: Եվ նա, իր չար տրտմությունից նեղսրտելով, կախվեց:

Հիսուս Պետական առաջ

«Եվ Հիսուս կանգնեց կուսակալի առաջ. կուսակալը հարցրեց Նրան ու ասաց. «Դո՞ւ ես հրեաների թագավորը» (Մատթ. հէ 11):

Քահանայապետերը ժողովրդին խաբում էին, թե Հիսուս հակառակ է Աստծուն և Մովսեսի օրենքներին, իսկ կուսակալին խաբում էին, թե Նա կամենում է թագավորել հարայելի վրա, ժողովրդին զրգուում է կայսեր գեմ և ուզում է հռոմեական զորքերին արտաքսել երկրից: Ակզբում Պիղատոսը հավատաց և տագնապեց իր անձի համար, իսկ երբ տեսավ, որ Հիսուս ավելի նման է վարդապետի, քան թե զինվորի, հրեաների խոսքերը ցնորական համարեց:

Պիղատոսը նրանց ասաց. «Դուք ասում եք ինձ, թե այս Մարդը կամենում է թագավորել, արդ՝ ո՞ւր են Նրա կառքերն ու զորքը և կամ դրա արքայական զգեստները»: Հրեաները պատասխանեցին. «Հազիվ դրան հափշտակեցինք իր զորքերի միջից»: Պիղատոսը հակառակվեց. «Հնարավոր չէ առանց արյունահեղության հափշտակել զորքերի հրամանատարին»: Հրեաները ասացին, թե նա ըմբոստության է մզում ժողովրդին, քարոզում է ամբողջ Հրեաստանում՝ սկսած Գալիլիայից մինչև Երուսաղեմ: Պիղատոսը, երբ լսեց Գալիլիայի մասին և պարզեց, որ այդ Մարդը գալիլիացի է (իսկ Գալիլիան Հերովդեսի իշխանության տակ էր), կարգադրեց, որ Նրան տանեն Հերովդեսի մոտ, քանի որ այդ օրերին նա Երուսաղեմում էր (տես Ղուկ. Իգ 5-7):

Երբ Հերովդեսը տեսավ Հիսուսին, ուրախացավ, քանի որ վաղուց ցանկանում էր տեսնել Նրան, Նրա մասին շատ էր լսել և ակնկալում էր Նրա ձեռքով կատարված որևէ հրաշք տեսնել: Հերովդեսը Նրան հարցաքննեց, սակայն Հիսուս նրան ոչ մի պատասխան չտվեց, որպեսզի մեզ սովորեցնի, որ չապավինենք հարստությանը և ընչափետ աշխարհին: Եվ Հերովդեսը, ոչ մի պատասխան չստանալով, իր զորականներով հանդերձ Նրան ծաղրեց և սպիտակ զգեստներ հագցնելով՝ վերադարձրեց Պիղատոսին:

Պիղատոսն ու Հերովդեսը, որ նախկինում թշնամիներ էին, այդ օրերին բարեկամացան: Թշնամության պատճառը Հովհաննես Մկրտչի սպանությունն էր Հերովդեսի կողմից: Հովհաննեսը երուսաղեմացի էր՝ Պիղատոսի իշխանությունից, և Հերովդեսը իրավունք չուներ Նրան սպանելու: Որպես պատասխան՝ Պիղատոսը ձերբակալեց այն գալիլիացիներին, ովքեր եկել էին Երուսաղեմի տաճար՝ Տիրոջը երկրպագելու, սրախողող արեց նրանց իրենց մատուցվելիք զոհերի հետ միասին, և զոհերի արյունը խառնեց մարդկանց արյանը՝ դրանով առնելով Հովհաննեսի արյան վրեժը (տես Ղուկ. ԺԳ 1):

Պիղատոսը դիմեց հրեաներին. «Այս Մարդուն ներկայացրիք ինձ որպես ժողովրդին մոլորեցնողի. ահավասիկ՝ ես ձեր առաջ դատաքննություն արեցի և այս Մարդու մեջ չգտա անդամ մեկն այն հանցանքներից, որոնցով դուք ամբաստանում էիք Նրան: Եվ ոչ էլ՝ Հերովդեսը, որի մոտ հրամայեցի, որ տանեն Հիսուսին»:

Եվ մինչ նա նստած էր ատյանում, իր կինը նրան լուր է ուղարկում ու ասում. «Քո և այդ Արդարի միջև ոչինչ չկա, որովհետեւ այսօր երազումս Նրա պատճառով գլխովս շատ բաներ անցան» (Մատթ. Իւ 19): Քանի որ ամեն ինչում ողորմած ու մարդասեր է Տերը և չի կամենում, որ մարդն իր անդիտության պատճառով կորսույան մատնվի, այլ կամենում է, որ ամեն

մարդ ապրի և հասնի ճշմարտության գիտությանը: Եվ ինչպես Հրեաներին ճանաչեցրեց իր Աստվածությունը օրինակներով ու մարգարեռություններով, այնպես էլ սրանց՝ ըստ Հեթանոսական սովորության, քանի որ նրանք միշտ հետևում էին երազներին և հմայություններին: Տերը երազի միջոցով հայտնեց Պիղատոսի կնոջը, որպեսզի նա անպարտ լինի Պիղատոսի համառությունից: Ինչպես երեկ Տերը մատնիչին էր կշտամբում, այդպես էլ այսօր՝ դատավորին: Տերը մոգերին աստղերի միջոցով հայտնեց, ազովացիներին՝ երինջների (տե՛ս Աթագ. Զ 9), իսկ Պիղատոսի կնոջը՝ երազի:

Այդ ժամանակ Պիղատոսը մոտեցավ Հիսուսին ու ասաց. «Դո՞ւ ես Հրեաների թագավորը, որ խորհում ես վերացնել կայսեր իշխանությունը Քո ազգի վրայից»: Հիսուս պատասխանեց. «Դու քեզնի՞ց ես այդ ասում, թե ուրիշներն իմ մասին քեզ ասացին»: Պիղատոսը պատասխանեց. «Մի՞թե ես էլ Հրեա եմ: Քո ազգը և քահանայապետերը մատնեցին Քեզ իմ ձեռքը, և ես կամենում եմ իմանալ, թե Դու ի՞նչ ես արել» (տե՛ս Յովի. Ժ 33-35): Տերը պատասխանեց. «Իմ թագավորությունն այս աշխարհից չէ. եթե իմ թագավորությունն այս աշխարհից լիներ, իմ հետևորդները կմարտնչեին արդեն, որպեսզի Հրեաների ձեռքը չմատնվեմ» (տե՛ս Յովի. Ժ 36): Դրանից Պիղատոսը գարհուրեց ու ասաց. «Թե որ այդպես է, ուրեմն Դու թագավո՞ր ես»: Տերը նրան պատասխանեց. «Դու ես ասում, որ թագավոր եմ, բայց ես դրա համար իսկ ծնվել եմ և դրա համար իսկ եկել եմ աշխարհ, որպեսզի ճշմարտության համար վկայեմ: Ամեն մարդ, որ ճշմարտությունից է, իմ ձայնը լսում է» (տե՛ս Յովի. Ժ 37):

Այս մասին է գրում առաքյալը Տիմոֆեոսին. «Պատվիրում եմ քեզ Աստծու ներկայությամբ, Ով կյանք է տալիս ամեն ինչի, և Հիսուս Քրիստոսի առաջ, Ով Պոնտացի Պիղատոսի առաջ վկայեց բարի դավանությունը» (Ա Տիմ. Զ 12-13): Տերն իրեն ոչ թե երկրավոր թագավոր դավանեց, այլ թագավորների թագավոր և ասաց, որ դրա համար է ծնվել և կարոտ չէ հոռմեական մասնավոր թագավորությանը, որ տիրում է մեռելաշունչ մարդկանց վրա, քանի որ ինքը բոլորի թագավորն է, վերին իշխանությունների և երկնային անմահ զորքերի Արքան:

Պիղատոսը նրան հարցրեց. «Ի՞նչ է ճշմարտությունը», ապա գուրս եկավ ու դիմեց քահանաներին. «Ես նրա մեջ ոչ մի հանցանք չեմ գտնում: Բայց դուք սովորություն ունեք, որ Զատկին ձեզ համար մի բանտարկյալ արձակեմ» (տե՛ս Յովի. Ժ 38-39): «Ուզո՞ւմ եք, որ ձեզ համար արձակեմ Հրեաների թագավորին» (տե՛ս Յովի. Ժ 39):

Երբ լսեց Տիրոջից, որ թագավոր է, և որ թագավորությունն էլ այս աշխարհից չէ, նրան ճշմարիտ թագավոր ճանաչեց և խորհեց արձակել:

Իսկ հրեաները միաբան աղաղակում էին ու ասում. «Ո՛չ դրան, այլ՝ Բարաբեային» (տես Յովի. ԺՇ 40): Ամբարիշտ հրեաները չէին մտնում Պիղատոսի ապարանքը, որպեսզի չպղծվեն մինչև զատկական գառն ուտելը. նրանք Օրենքից վախենում էին, սակայն Օրենսդիրին՝ արհամարհում:

Այս ժամանակ Պիղատոսը նրանց համար արձակեց Բարաբեային, իսկ Հիսուսի համար հրամայեց, որ Նրան վերցնեն և գանակոծեն (Սատթ. ԻԵ 26, Յովի. ԺԹ 1) – Այս մասին եսային ասում է. «Նա խոցվեց մեր մեղքերի համար և մեր անօրինությունների համար դատապարտվեց. մեր խաղաղության համար Նա՛ պատիժ կրեց, և Նրա՛ վերքերով մենք բժշկվեցինք» (Եսայի ԾԳ 5):

Կուսակալի զինվորները Հիսուսին տարան ապարանք, մերկացրին, ծիրանի զգեստ հագցրին և փշե պսակ դրեցին գլխին: Սա եղավ, որպեսզի դրանով վերացնի փշաբերության անեծքը. «Փուշ ու տատասկ թող աճեցնի քեզ համար երկիրը» (ԾԱՆԴ. Գ 18), ինչպես և իր քրտինքով վերացրեց Աղամի երեսի քրտինքը. «Քո երեսի քրտինքով ուտես հացդ մինչև հող դառնալդ» (ԾԱՆԴ. Գ 19): Տերը կարմիր զգեստ հագավ (տես Սատթ. ԻԵ 28), որպեսզի հանի նախաստեղծների մաշկեղեն զգեստները, և ծիրանի հագնելով (տես Մարկ. ԺԵ 17), մեզ զարդարում է թագավորական զգեստներով: Ծիրանին թագավորության ու պետականության խորհրդանիշ է:

Դարձյալ՝ Տերը, ծիրանիով զգեստավորվելով, փրկում է նախահորը՝ հակառակորդի սնոտի ու սուտ խոսքերից, որ ասաց. «Երբ դրանից ուտեք, կրացվեն ձեր աչքերը, և դուք կլինեք աստվածների նման, կիմանաք բարին ու չարը» (ԾԱՆԴ. Գ 4): Առաջին Աղամը ցանկացավ աստվածանալ, ինչ պատճառով երկրորդ Աղամը ծիրանիով զգեստավորվելով՝ մեզ ազատեց հակառակորդից և խոստացավ աստված դարձնել, երբ գա իր հրաշափառ երկրորդ գալստյամբ:

Նրա երեսը ծածկում էին և տանջում, հարցնում էին Նրան և ասում. «Մարգարեացի՛ր, ո՞վ է, որ Քեզ խփեց» (Ղուկ. ԻԲ 64) – Որպեսզի Աղամին ազատի անտառախիտ ու մացառուտ տեղում թաքնվելուց:

Ապա Նրա ձեռքը որպես գավազան մի եղեգ տվեցին (տես Սատթ. ԻԵ 29) – Որպեսզի դրանով ազատի մարդկային ցեղը բանսարկուի անհաստատ խրատից և Սուրբ Հոգու շնորհներով, ինչպես եղեգով, մեր անունները գրի կենաց Գրքում:

Նրա առաջ ծնկի գալով՝ ծաղրում էին (Սատթ. ԻԵ 29) – Նա, Ում երկրպագում էին անմահների գնդերը, անօրենների կողմից պարսավանքի ենթարկվեց, որպեսզի վերացնի մարդկային ցեղից սնոտի կուռքերի երկրպագությունը և մեզ պատրաստի երկրպագելու Սուրբ Երրորդությանը:

Պիղատոսը դարձյալ դուրս ելավ ու ասաց նրանց. «Ահա ձեր թագավորը՝ ձեզ, քանի որ ես Դրա մեջ որևէ հանցանք չեմ գտնում» (տես Յովի. ԺԹ 4) – Պիղատոսը Տիրոջից լսելով, որ երկնքից է նրա թագավորությունը, և իմանալով, որ հրեաները երկնքի Աստծուն են պաշտում, ասաց. «Ձեր թագավորը»:

Իսկ հրեաները Պիղատոսին ասացին. «Մենք Օրենք ունենք, և ըստ մեր Օրենքի պետք է նա մեռնի, որովհետեւ իրեն Աստծու Որդի համարեց» (տես Յովի. ԺԹ 7):

Հրեաներն այդպես ասացին, քանի որ չկարողացան որևէ պատճառ գտնել նրան մահվան դատապարտելու համար, ոչ էլ կարողացան ապացուցել, որ նա վտանգավոր է կայսեր համար և ոչ էլ կարողացան մարդկանց առաջ Օրենքին պարտական դարձնել:

Երբ Պիղատոսն այս լսեց, հիշեց Տիրոջ խոսքը, որ ասաց. «Իմ թագավորությունն այս աշխարհից չէ», ինչից զարհուրեց և հնար էր փնտրում նրան ազատելու: Իսկ հրեաները տեսնելով, որ դատավորն իրենց չի լսում, կաշուքը չի ընդունում, իրենց աղաչանքներն ու ամբոխի աղաղակները արհամարհում է, ասացին. «Եթե Դրան արձակես, կայսրին բարեկամ չես: Ամենայն ոք, որ ինքն իրեն թագավոր է կոչում, հակառակ է կայսեր» (Յովի. ԺԹ 12):

Պիղատոսն ասաց. «Դուք ասում եք, որ երկնքի Աստծուն եք պաշտում, իսկ նա երկնքի Աստծու Որդին է, հետևաբար՝ ձեր թագավորը: Ես ինչպես ձեր թագավորին խաչը հանեմ: Ասում եք, որ դուք օրենք ունեք և համաձայն այդ օրենքի՝ նա պետք է մեռնի: Եթե չկամենայիք նրան սպանել, ապա ինձ մոտ չէիք բերի, իսկ ես Աստծու Որդի չեմ կարող սպանել և աստվածամարտ լինել: Ահա ձեր թագավորը՝ ձեզ»:

Քահանայապետերը պատասխանեցին. «Զունենք մենք այլ թագավոր, բացի կայսրից» (տես Յովի. ԺԹ 14-15) – Հրեաների նախկին սերունդը ուրացավ Տիրոջը Սինա անապատում՝ իրենց համար ձուլածո աստված հորինելով (տես Ելք ԼԲ 4), իսկ այժմ սրանք են ուրանում Փրկչին, կայսրին իրենց թագավոր հայտարարելով: Եվ ինչպես այն ժամանակ Մովսեսն իջնելով Սինա լեռից՝ կործանեց նրանց կուռքը և դրան պաշտողներին, այդպես էլ Բարձյալը նրանց վրա ուղարկեց հռոմեացիների բանակը (70 թ.), նրանց կոտորեց և մնացորդը դուրս բերեց Ավետյաց երկրից, քանի որ չճանաչեցին Խորայելի փրկությունը:

Այս խոսքերից Պիղատոսը զարհուրելով դողաց և խավարը պատեց նրան, քանի որ ստուգապես հասկացավ, որ հրեաները ստում են, մանավանդ որ լսել էր Փրկչից. «Ով ինձ քո ձեռքը մատնեց, նրա մեղքն ավելի մեծ է» (Յովի. ԺԹ 11): Այնուամենայնիվ, նա ակամա մատնում է Տիրոջը

Հրեաների ձեռքը, և ինքն արժանապես կրում իր պատիմը: Հայոց Աբգար թագավորը, ստանալով Հիսուսի մահվան լուրը, ամբաստանում է Պիղատոսին Տիբերիոս կայսեր առաջ, որ առանց կայսերական հրամանի, այսպիսի հրաշափառ Մարդուն մահվան մատնեց: Տիբերիոսը բարկությամբ հրամայում է ձերբակալել Պիղատոսին ու Հռոմ բերել: Պիղատոսն էլ, զարհուրելով թագավորի ցասումից, անձնասպան է լինում՝ ծովում ջրահեղձ լինելով: Իսկ նրա կինը, հավատալով Հիսուսին, հարում է առաքյալներին:

ՀԻՍՈՒՍԻ ԽԱԶԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Այսօր մինչև երեկո չեն ծնրադրում: Խաչելության կարգը կատարվում է վեցերորդ ժամին եկեղեցու դռան առջև: Ըստ կարգի՝ ութ անգամ սաղմոս է ասվում, յուրաքանչյուր սաղմոսից հետո, համաձայն օրվա խորհրդի, ընթերցվում է մարգարեական գիրք, առաքելական ուղերձ և ավետարան: Օրվա այս ժամի երեքսրբյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա' մեզ»:

Նրանք առան Հիսուսին և տարան (Յովի. ԺԹ 17) – Զինվորները Հիսուսին տարան խաչելու՝ ըստ իր խոսքի. «Ինչպես որ Մովսեսն անապատում բարձրացրեց օձը, այնպես էլ Մարդու Որդին պետք է բարձրանա» (Յովի. Գ 14): Դրանով կատարվում է մարգարեեռթյունը. «Քո աչքերի առաջ քո կյանքը կախված կլինի» (Բ Օրենք Ի՛ 66): Նաև երեմիան է ասում. «Եկեք ոչնչացնենք ծառն իր հացով և նրան ջնջենք ողջերի երկրից, թող նրա անունն այլևս չհիշվի» (Երեն. ԺԱ 19): Սա վերաբերվում է Տիբոջ Մարմնին, որ Հաց է՝ երկնքից իջած: Հրեաներն ուզում էին ջնջել նրան կենդանության երկրից, քանի որ նրան Աստծուն հակառակ էին կարծում:

Եվ խաչափայտը նա ինքն էր վերցրել» (Յովի. ԺԹ 17) – Այդպես նաև իսահակն էր տանում իր ողջակեղի փայտը (տեսն ԾԱՆԴ. ԻԲ 6): Դրանով կատարվեց եսայու մարգարեռթյունը. «Մեզ համար Մանուկ ծնվեց, մի Որդի արվեց մեզ, որի իշխանությունն իր ուսերի վրա պիտի լինի» (Եսայի Թ 6): Տերը խաչափայտը վերցրել էր ինչպես հաղթության նշան, ցույց տալու համար, որ բռնադատված չի գնում դեպի մահ՝ ըստ այս խոսքի. «Ես իմ կյանքն եմ տալիս, որպեսզի վերստին այն առնեմ: Այն ինձնից ոչ ոք չի վերցնի, այլ ես ինքս եմ այն տալիս. իշխանություն ունեմ այն տալու և իշխանություն ունեմ վերստին այն առնելու» (Յովի. Ժ 17-18):

Եվ դուրս ելնելով՝ գտան կյուրենացի մի մարդ՝ Սիմոն անունով, ու նրան ստիպեցին, որ նա խաչը կրի (Մատթ. ԻԵ 32) – Քանի որ նրան կառափնատեղի ուղեկցողների մի մասը քահանաներ էին ու դպիրներ, իսկ մյուսները՝ զինվորներ, այդ պատճառով էլ նրանցից ոչ ոք չէր կամենում իսաչը վերցնել, մինչեւ որ գտան Սիմոնին, ով յոթանասուներկու աշա-

կերտներից երկուսի՝ Ալեքսանդրի և Ռուփայի հայրն էր։ Երբ Սիմոնը տեսավ Փրկչին խաչափայտը տանելիս, մոտեցավ Նրան և վերցրեց խաչափայտը։ Այն, որ ճանապարհի կեսից ուրիշը տարավ խաչափայտը, ցույց է տալիս, որ մարդկանց պարտքերը վճարելու համար եղավ խաչելությունը։

Եվ բարձրացնում էր այն տեղը, որի անունն էր Գագաթ, իսկ եբրայեցերեն կոչվում էր Գողգոթա, որտեղ և խաչը հանեցին Նրան (Հովհ. Ժ 17-18) – Տիրոջը խաչ հանեցին այն տեղում, ուր Աբրահամը տեսավ սաբեկա ծառից կախված խոյին (տես Ծննդ. ԻԲ 13)։ Գողգոթայում էր գտնվում նաև Աղամի շիրիմը։ Նոյը ջրհեղեղի օրերին տապանում էր պահում Աղամի ու Եվայի ոսկորները, իսկ ջրերի ետ քաշվելուց հետո, Սուրբ Հոգու ազդեցությամբ, Աղամի ոսկորները թաղեց Գողգոթայում, իսկ Եվայինը՝ Բեթղեհեմում։

Գողգոթան երկրի սիրտն է՝ ըստ Փրկչի խոսքի. «Ինչպես Հովնանը երեք օր ու երեք գիշեր կետի փորի մեջ էր, նույնպես և Մարդու Որդին՝ երկրի սրտում՝ երեք օր ու երեք գիշեր» (Մատթ. ԺԲ 40)։ Այնտեղ, ուր մահը հաղթեց մարդուն, այնտեղ էլ Տերը հաղթեց մահին։ Որտեղ տիրեց ապականությունը, այնտեղ ծաղկեց անապականությունը, և ուր մեղքերից պարտված՝ ընկճվել էր մարդկային բնությունը, այնտեղ եղավ ազատությունը։

Հիսուսին լեղի ու [զմուռս] խառնած գինի տվեցին խմելու, և երբ համտեսեց, չկամեցավ խմել (Մատթ. ԻԵ 34) – Քանի որ գինին հալածում է տրտմությունը և ուրախացնում, զմուռսը կաշկանդում է մարմնի անդամները, իսկ ջրախառն լեղին մարմնի մասերը խռովեցնում։ Այդպես եղավ Դրախտում. կամակոր վիշապը պտղին խառնելով իր մահաբեր թույնը և հրապուրելով նախաստեղծներին, մղեց նրանց ճաշակելու արգելված պտղից, որով կապեց նրանց մեղքերով ու դառնացրեց նրանց մարմնի անդամները։ Իսկ այսօր, մեր Տերն ու Արարիչը, ճաշակելով լեղի ու զմուռս խառնած գինին, վերացրեց նրանցից պատուհան ու դատակնիքը։

Իսկ զինվորները, երբ Հիսուսին խաչը հանեցին, վերցրին Նրա զգեստները և չորս մաս արեցին. յուրաքանչյուր զինվորի՝ մեկ մաս։ Իսկ քանի որ պատմուճանն առանց կարի էր, վերևսից ներքև ամբողջովին Հյուսած շուրջանակի, ուստի միմյանց ասացին. «Այդ չպատուտենք, այլ դրա վրա վիճակ գցենք, ում որ ենի», որպեսզի կատարվի գրվածը, որ ասում է. «Իմ զգեստները բաժանեցին իրար մեջ և Իմ պատմուճանի վրա վիճակ գցեցին» (Հովհ. ԺԹ 23-24) – Մարդարեն կանխապես տեսնելով Փրկչին խաչի վրա՝ աղաղակեց Նրա փոխարեն. «Ծակեցին ձեռքերն ու ոտքերն Իմ, Հաշվեցին բոլոր ոսկորներս, նրանք նայեցին ու տեսան Ինձ։ Հագուստներս բաժանեցին իրար մեջ և պատմուճանիս վրա վիճակ գցեցին» (Մաղմ. ԻԱ 18-

19): Երբ բանսարկուն զրկեց նախահորը իր արփիափայլ փառքից, հափշտակեց նրա լուսեղեն պատմուճանը և բաժանեց իր լեզեռնի մեջ՝ կամենալով գրավել նրա տեղը ու ժառանգել վայելչական Դրախտը: Իսկ այսօր Տիրոջ զգեստներն են բաժանվում զինվորների մեջ՝ ըստ մարդարեռության. «Քո տան գեղեցկությունը մատնվեց ավարի» (Սաղմ. Կէ 13): Աս եղավ, որպեսզի փառքից հեռացածին կրկին զարդարի գերահրաշ պատմուճանով:

Պատմուճանի վերկեց ներքեւ ամբողջովին հյուսված լինելը ցույց է տալիս, որ Աստվածությունը, որով զգեստավորվել էր Տիրոջ Մարմինը, ի վերուստ էր՝ երկնքից, իսկ այն, որ առանց կարի էր, ցույց է տալիս, որ արարած չէր: Եվ այն, որ պատմուճանը չպատռվեց, ցույց է տալիս, որ երկնքից իջածին չի կարելի բաժանել երկու որդու, երկու դեմքի կամ երկու բնության, քանզի նրա Աստվածության խորհուրդը չի բաժանվում, որովհետեւ այն զոդվելով չի միացել Մարմին: Իսկ հանդերձի չորս մասի բաժանվելը ցույց է տալիս, որ նրա Մարմինը մեր մեջ բաժանվեց: Նաև նրա Ավետարանն աշխարհի չորս կողմերում է քարոզվում:

Ու նատած՝ Նրան պահպանում էին (Սատթ. Իէ 36) – Տակավին երկնչում էին նրանից, թե հանկարծ չիջնի խաչից, ինչպես իր ժամանակին չկարողացան նրան լեռից գահավեժ անել և քարկոծել: Երկնչում էին նաև ամբոխից. միգուցե կդան ու կազմտեն:

Պիղատոսը մի տախտակ էլ գրեց և գրեց խաչի վրա. և գրված էր. «Հիսուս Նազովրեցի՝ Հրեաների Թագավոր»: Այդ տախտակը Հրեաներից շատերը կարդացին, որովհետեւ այն տեղը, ուր Հիսուս խաչվեց, քաղաքին մոտ էր, և գրված էր եբրայեցերեն, լատիներեն և հունարեն (Յովհ. Ժթ 19-20) – Երբ Պիղատոսը լսեց Տիրոջից, թե ինքը երկնքից եկած թագավոր է, իսկ Հրեաներից՝ թե Աստծու Որդի է, գրեց, որ Նա Հրեաների թագավորն է: Հունարեն գրեցին, քանի որ զորքը և Հրամանատարը Հունաստանից էր՝ Պինտոսից, ապա նաև լատիներեն, քանի որ իշխանությունը հռոմեացիներինն էր, իսկ եբրայեցերեն, որովհետեւ Հիսուս նրանց աշխարհից ու ազգից եկավ չարչարվելու: Որպեսզի բոլորը ճանաչեն ու իմանան, որ Նա, Ով պարտական չէր մահվան և անմեղ էր ու անարատ, եկավ կամավոր չարչարանքների: Երեք լեզուներով գրեց, որպեսզի ամեն անցնող իմանա, թե ինչ պատճառով խաչեցին Հիսուսին:

Այս գրությունը անարգում ու ծաղրում էր Հրեաներին: Հրեաներն էլ, գրվածից չարացած, ինչը հայտնապես հայտնում էր, որ իրենք հռոմեական գերիշխանության ներքո են, ասացին Պիղատոսին. «Մի՛ գրիր՝ Հրեաների թագավոր, այլ ինչ Նա ասաց՝ Թագավոր եմ Հրեաների» (Յովհ. Ժթ 21): Այսինքն՝ սպանել են այդպես ասողին և ոչ թե Թագավորին: Նրանք փոր-

ձում էին քողարկել այն, որ իրենք մասնակցել են հրեաների թագավորի սպանությանը:

Պիղատոսը պատասխանեց. «Ինչ գրեցի, գրեցի» (Յովի. ԺԹ 22) – Դա ցույց է տալիս, որ Պիղատոսը նախապես չէր խորհել այդ խոսքերի շուրջ, այլ դա Նախախնամության թելադրանքով է գրել:

Միևնույն ժամանակ Նրա հետ խաչը հանեցին երկու ավագակների. մեկը՝ Նրա աջից և մյուսը՝ ձախից (Մատթ. ԻԵ 38) – Հրեաները կամենում էին եղծել Նրա անունը, քանզի Այն տարածվում էր ամբողջ տիեզերքով: Եվ քանի որ Օրենքում գրված է. «Աստծուց անիծված է նա, ով կախված է ծառից» (Բ Օրենք ԻԱ 22), այդ պատճառով էլ Նրան փայտից կախեցին, որպեսզի ժողովուրդը, Օրենքի անեծքից երկյուղերով, չհիշի Նրա անունը, և ոչ ոք Խաչյալին չերկրապահի: Իսկ նա փայտից կախվելով՝ մեզ համար անեծք դարձավ, որպեսզի մեզ գնի Օրենքի անեծքից (տես Գաղատ. Գ 13), և հրեաների չարությունը մեզ համար բարության շրջեց:

Նրան սպանեցին ավագակների հետ, որպեսզի Նրանցից մեկը կարծվի և լուր տարածվի, որ Նա անիրավների ու անօրենների հետ մեռավ, սակայն դրանով կատարվեց Եսայու մարդարեռությունը. «Նա հանցավորներին հավասար համարվեց» (Եսայի ԾԳ 12):

Եսային գրում է. «Նայեցինք մենք Նրան, բայց Նա ո՛չ տեսք ուներ և ո՛չ էլ գեղեցկություն» (Եսայի ԾԳ 2): Տեսք ասելով նկատի չունի գեմքը, քանի որ Դավիթը Նրա գեղեցկության մասին ասել է. «Տեսքով գեղեցիկ ես բոլոր մարդկանց որդիներից» (Սաղմ. ԽԴ 3), այլ նկատի ունի մեծությունը, փարթամությունը, իշխանությունը և դատաստանի իրավունքը: Դա են մարդիկ համարում գովության արժանի տեսք ու փառք: Իսկ քանի որ Նա մարդկանց կարծիքով զուրկ էր այս ամենից, ուստի՝ ասվում է, որ չուներ տեսք ու փառք:

Դարձյալ՝ ավագակներին Նրա հետ խաչեցին, որպեսզի ցույց տան, թե ինչպես են մարդիկ մահանում, և թե ինչպես է Աստված իր կամքով և ո՛չ ակամա՝ հեռանում:

Քրիստոս խաչի վրա յոթը խոսք ասաց, և այդ խոսքերից յոթը հրաշք եղավ: Նախ ասաց. «Հա՛յր, ների՛ր գրանց, որովհետեւ չգիտեն, թե ինչ են անում» (Ղուկ. ԻԳ 34): Արանով սովորում ենք աղոթել մեր թշնամիների համար: Եվ այս խոսքերից պատռվում են վեմերը:

Իսկ քահանայապետերը ամբոխի հետ ծաղրում էին Նրան ու ասում. «Եթե Աստծու Որդի ես, իջի՛ր այդ խաչից. եթե Խորայելի թագավոր է, հիմա թող այդ խաչից իջնի. և դրան կհավատանք» (Մատթ. ԻԵ 39,42): Հրեաները նախատում էին Նրան, Ով նստած է Հոր աջ կողմում և փառաբանվում է բյուրավոր անմահների կողմից: Իսկ ո՞րն է ավելի մեծ սքանչելիք՝ խաչից

իջնե՞լը, ի ծնե կույրի աչքերը բուժե՞լը, մեռածին գերեզմանից հարություն տա՞լը, թե՞ հեռվից հիվանդներին միայն հրամանով բուժելը:

Կախված չարագործներից մեկը հայՀոյում էր Նրան ու ասում. «Դու չե՞ս Քրիստոսը. փրկի՛ր Ինքդ Քեզ և մեզ», իսկ Նրա ընկերը Նրան սաստելով պատասխանում էր. «Աստծուց չե՞ս վախենում, դու, որ նույն պատիժն ես կրում: Եվ մենք իրավացիորեն արժանի հատուցումն ենք ստանում այն գործերի համար, որ կատարեցինք, իսկ Սա որևէ վատ բան չի արել» (Ղուկ. ԻԳ 39-41) – Ավագակը նախ հայտնում է, որ ինքն արժանի պատիժ է կրում, ապա պաշպան կանգնելով Հիսուսին՝ Նրան Քրիստոս է դավանում և Նրանից ողորմություն խնդրում. «Հիշի՛ր ինձ, Տե՛ր, երբ գաս Քո թագավորությամբ» (Ղուկ. ԻԳ 42):

Այդ պահին կատարվում է Նրա խնդրանքը, քանի որ Տերը Նրան պատասխանում է. «Ճշմարիտ եմ ասում քեզ, այսօր Ինձ հետ Դրախտում կլինես» (Ղուկ. ԻԳ 43) – Այս խոսքերը ցույց են տալիս, որ Քրիստոս արքայությունը միայն Նրան է տալիս, ով իր հետ չարչարվում է՝ կամ ապաշխարությամբ, կամ մեկ այլ կերպ: Եվ դա ճշմարիտ դատաստան է, որովհետեւ Նրանք, ովքեր տանջանքների մեջ Քրիստոսին ընկեր դարձան, Նրա հետ էլ պետք է փառքը վայելեն: Եվ այս խոսքից հետո դժոխաբնակները մարդկանց հոգիները են վերադարձեցին:

Հիսուսի խաչի մոտ կանգնած էին Նրա մայրը և Նրա մորաքույրը՝ Կղեռպասի Մարիամը, և Մարիամ Մագդաղենացին: Երբ Հիսուս տեսավ մորը և այն աշակերտին, որ մոտ էր կանգնած և որին նա սիրում էր, մորն ասաց. «Ո՛վ կին, ահա՛ քո որդին»: Ապա աշակերտին ասաց. «Ահա՛ քո մայրը» (Յովի. ԺԹ 25-27) – Տերը դրանով հայտնում է իր մեծ սերը, որ անգամ չարչարանքների մեջ չի մոռանում իր մորը: Այդ խոսքից մեռելները հարություն են առնում գերեզմանից:

Եվ վեցերորդ ժամից խավար եղավ ամբողջ երկրի վրա մինչև իններորդ ժամը (Ղուկ. ԻԳ 44) – Արեգակը, տեսնելով Տիրոջը խաչի վրա և չկարողանալով նայել իր Արարչին՝ երկու անօրենների միջև չարչարվելիս, խավար սիռեց ամբոխի վրա, որպեսզի չտեսնեն Արարչի մերկությունը, քանի որ գրված է. «Այդ օրն այնպես պիտի լինի, որ արեգակը մայր պիտի մտնի միջօրեին, և երկրում լույսը պիտի խավարի ցերեկով» (Անոս Ը 9): Նսեմանում է նաև աստղերի պայծառությունը, և լուսինը լույս չի տալիս:

Խավարը տեսեց մինչև իններորդ ժամը, որպեսզի ոչ ոք չասի, թե դա արեգակի սովորական խավարում էր: Քանզի այն օրը, երբ առաջին Աղամը երկարեց իր ձեռքը դեպի արգելված ծառը և Նրանից մարդկային ցեղի համար մահ «քաղեց», նույն օրն էլ երկրորդ Աղամը տարածեց իր ձեռքերը կենդանաբարմատ ծառի վրա և անմահության կտակը տվեց

մարդկային ցեղին։ Այն ժամին, երբ առաջին Աղամը մոտեցավ արգելված ծառին, նույն ժամին էլ մեր Տիրոջ ոտքերը բևեռվեցին խաչի վրա։ Եվ քանի որ Աղամն ուրբաթ օրը՝ վեցերորդ ժամին, ճաշակեց արգելված պտղից ու մերկացավ փառքից, այդ պատճառով էլ արեգակը վեցերորդ ժամին խավարեց։

Նախաստեղծներն իրենց գլուխը հպարտությամբ բարձրացրին դեպի ծառը, իսկ Տերը խոնարհեցրեց իր գլուխը՝ արարածներին հորդորելով երկրպագել իր Աստվածությանը։ Եվ այն ժամին, երբ նրանք ճաշակեցին մահաբեր պտուղը, մեր Տերը ճաշակեց դառը լեղին։ Նախաստեղծները որովայնի ցանկությամբ ճաշակեցին, իսկ Տերը՝ մեր մարմնական ախտերը սպանելու համար։ Այնտեղ մահվան դատավճիռ կատարվեց, իսկ այստեղ՝ անանցանելի կյանքի հրավեր։

Այնտեղ կերակուր ճաշակելու պատճառով մերկացավ լուսեղեն պատմուճանից, իսկ այստեղ մեր Տերը մերկացավ պատմուճանից, որպեսզի Մկրտության ավազանով մեզ պարզեի անապական անմեղության գգեստ։ Առաջին Աղամը ծածկվեց թզենու տերեներով, իսկ երկրորդ Աղամը քողարկվեց արեգակի ճառագայթներով, որպեսզի արարածները չտեսնեն երկնային փառքով Զգեստավորողի մերկությանը։ Այնտեղ հողից ստեղծված մարդուն հրամայվեց կրկին հող դառնալ, իսկ այստեղ Տերը հողանյութ մարմինը՝ մեր բնությունը, իր մահվամբ հողն իջեցրեց, որպեսզի հավիտյան ննջածներին կյանք տա։

Այնտեղ մահացու պտղի ճաշակումից հետո մերժվեցինք կենաց ծառից, որպեսզի չարությամբ չապրենք, իսկ այստեղ Տերը խաչի վրա մեր պարտքերը գամելով և պատռելով դատապարտության գիրը, նույն կենաց ծառը մատչելի դարձրեց հավատացյալներին։ Քանի որ Կյանքի ծառը նրանց համար է, ովքեր հավատով ապավինում են Քրիստոսին, և նրա աստվածախառն Մարմինն³ անմահարար պտուղ է նրանց համար, ովքեր ճաշակում են այն։

Եվ քանի որ իններորդ ժամին Աղամը Աստծուց թաքնվեց Դրախտի ծառերի մեջ, փոխանակ ընկնելու նրա առջև և թողություն խնդրելու իր հանցանքների համար, այդ պատճառով Տերն այսօր նրա անունից և նրա փոխարեն խոսեց Հոր հետ՝ գոչելով. «Ելի՛, Է՛լի՛, լա՞մա սաբաքթանի», այսինքն՝ «Աստված Իմ, Աստված Իմ, ինչո՞ւ թողեցիր Ինձ» (Մարկ. ԺԵ 34):

Քանզի Հիսուս լինելով մարդացած Աստված՝ միջնորդ է Աստծու և մարդկանց միջև։ Եվ քանի որ միջնորդը պետք է խոսի երկու կողմերի

³ «Աստվածախառն մարմին» արտահայտությունը օգտագործում է սուրբ Գրիգոր Լուսավորչը (տե՛ս Ազաթանգեղոս, «Վարդապետություն սուրբ Գրիգորի», համարներ 372 և 387):

անունից էլ, ուստի Փրկիչը երբեմն աստվածայինն էր խոսում ու ներգործում, քանզի հակից է Հոր և Սուրբ Հոգու, երբեմն էլ մարդկայինը, քանզի մարդացավ: Այդ պատճառով էլ այստեղ մարդկանց անունից է ձայնում Հորը՝ ասելով. «Աստված Իմ, ինչո՞ւ թողեցիր մարդկային ցեղը, որ հանցանքների պատճառով զրկվեց Դրախտից»: Եվ միջնորդելով՝ մեզ վերստին մոտեցնում է Հորը:

Ասում է՝ Հայր ինչո՞ւ ինձ թողեցիր մեղավորների ու մահապարտների չարչարանքների մեջ: Սա նախ մեզ սովորեցնում է խոնարհ լինել և վշտերի ու նեղությունների մեջ Աստծուն աղոթել: Նաև այն ասում, որ եթե Աստծու Որդին, Ով Հոր սիրելին է, չարչարանքների մատնվեց, ապա զարմանալի չպետք է լինի այն, որ Աստված Իր սրբերին ու սիրելիներին թողնում է աշխարհի վշտերի մեջ:

Այս խոսքերից արեգակը խավարեց: Արեգակն աշխարհի փառքն է ցույց տալիս, իսկ խավարումը նախատինքը, ինչից իմանում ենք, որ աշխարհի փառքը վերջում նախատինքի է փոխվելու, և ուրախությունը՝ տրտմության: Ինչպես վեց օր առաջ՝ Ծաղկազարդի օրը, երբ Տերն ավանակի վրա նստած եկավ տաճար, Նրան ուրախությամբ ընդունեցին ու փառավորեցին, իսկ այսօր՝ անարգելով խաչ հանեցին:

Հրեաները տեսնում էին սքանչելիքները, սակայն կարծում էին, թե եղիային է կանչում, չիմանալով որ Նա, Ով փարավոնին խորտակեց Կարմիր ծովում և ամբողջ երկիրը ջրհեղեղով ողողեց, այժմ խավարեցնում է արեգակը, և եղիայի կարիքը բնավ չունի և կարող է նաև նրանց, ինչպես թզենուն, արմատից չորացնել:

Այնուհետև Հիսուս, գիտենալով, թե ահա ամեն ինչ կատարված է, որպեսզի կատարվի գրվածը, ասաց՝ ծարավ եմ (Յովի. ԺԹ 28) – Նա, Ով ջրահարկ երկինքը որպես խորան ձգեց և լայնանիստ ծովը երկրով մեկ տարածեց, ասաց. «Ծարավ եմ», որպեսզի կատարվի մարդարեռությունը. «Կերպրի տեղ ինձ լեղի տվին, և ծարավելիս քացախ խմեցրին» (Սաղմ. Կէ 22):

Թեպետ Քրիստոս շատ չարչարվեց, սակայն ծարավ էր մարդկանց փրկությանը և հոժար էր էլի չարչարվել:

Այնուեղ քացախով լի մի աման կար. զինվորները լեղախառն քացախով մի սպունգ թրջեցին և այն դրին եղեգի ծայրին ու մոտեցրին Նրա բերանին (Յովի. ԺԹ 29) – երբ լեղախառն քացախ տվեցին, չկամեցավ խմել: Դրանք սատանայի երկու փորձություններն են. քացախը մարմնավոր վիշտն է, իսկ լեղին՝ մեղքերի փորձությունը: Ինչպես սպունգը աման է խոնավության, այդպես էլ օձը սպունգի նման սուտ խոսքի աման դարձավ և դրանով ախտացրեց նախաստեղծներին: Այստեղ երկում է նաև խաչը

Հանողների դաժանությունը, քանզի ծարավողի համար գինի կամ ջուր չէին պատրաստել, այլ լեզու և զմուռսի հետ խառնված քացախ:

Եթե Հիսուս լեղախառն քացախը բերանն առավ, ասաց. «Ամեն ինչ կատարված է» (Յովի. ԺԹ 30) – Դա նշանակում է, որ Տերն իր բոլոր անդամներով կրեց չարչարանքները, և կատարվեցին մարդարեների բոլոր գրվածքները: Մարդը պարտական էր, և Քրիստոս վճարեց մարդու բոլոր պարտքերը և ավազակին ասաց՝ գնա՛ Դրախտ: Այս խոսքերից շարժվում է երկիրը:

Հիսուսի Մարմնի պատարագվելով լռում են բոլոր զոհերն ու պատարագները, իսկ նրա մահով՝ մեղքն ու անեծքը: Նրա թաղումով վերանում են դժոխքի ու մահվան հաղթության խայթոցները և ապականությունը: Անեծքի փուշը վերանում է նրա փշե պսակով, տգիտությունը՝ եղեգով, պտղի դառնությունը՝ լեղիով, արյունը և սպանությունը՝ ծիրանիով, իսկ հայհոյությունն ու հպարտությունը՝ Պիդատոսի և Հերովդեսի առջե նրա լոելով:

Եվ Հիսուս բարձրածայն աղաղակում է ու ասում. «Հա՛յր, Քո ձեռքն եմ ավանդում Իմ հոգին» (Ղուկ. ԻԳ 46) – Սովորություն է պատվական իրը պահպանության համար հանձնել առավել սիրելիին, արդ՝ Քրիստոս իր պատվական հոգին հանձնեց Հորը, Ով առավել սիրելի է: Քանզի մարդիկ մարմինը մեծ շուքով են թաղում, իսկ հոգու համար հոգ չեն տանում, թողնելով այն դժոխքում: Այս խոսքերից պատովեց տաճարի վարագույրը: Ասելով «Հա՛յր, Քո ձեռքն եմ ավանդում Իմ հոգին», նկատի ունի բոլոր մարդկանց հոգիները՝ ազատելով նրանց դեերի իշխանությունից:

Եվ գլուխը կափելով՝ հոգին ավանդեց (Յովի. ԺԹ 30) – Տերը խոնարհում է գլուխը և ավանդում հոգին, ինչը ցույց է տալիս նրա կամավոր մահը: Նախ աղաղակում է, ապա խոնարհում: Այդ երկուսն էլ օտար են մեր բնությանը, քանզի մահվան պահին մեր բերանները կապվում են, և զգաստություն ու կարողություն չենք ունենում մեր գլուխը խոնարհելու համար: Տերն իր գլուխը խոնարհելով՝ խոնարհում է ողջ մարդկության մարմինը, որով քակում է կուռքերի երկրպագությունը և Ավետարանի քարոզությամբ միայն Սուրբ Երրորդությունն անում երկրպագելի:

Քանի որ Տերը նախաստեղծներին Դրախտից արտաքսելով՝ նրանց հեռացրեց հավերժական բարությունից, այդ պատճառով էլ խաչի վրա աղաղակում է՝ ասելով. «Հա՛յր, Քո ձեռքն եմ ավանդում Իմ հոգին», որպեսզի Աղամին կրկին Դրախտ փոխադրի, ու կատարի մարդարեների ասածը. «Տերը Սիոնից կկանչի, Երուսաղեմից ձայն կտա» (Յովել Գ 16): Նաև սաղմոսերգուն է ասում՝ «Ահա նա ձայն պիտի տա, ձայնն իր զորության» (Սաղմ. Կէ 34): Քանի որ Աստծու Խոսքը ոչ միայն մարդկային մարմին

Հագավ, այլև մարդկային հոգի ու միտք, ուստի՝ ինչպես մարմնով դրվեց գերեզման, այնպես էլ հոգով հարձակվեց դժոխքի վրա:

Եվ ահա երկիրը շարժվում է. ոչ միայն երկրի մի մասը, այլ ամբողջ տիեզերքը, և մեծ ու անշարժ վեմերը պատռվում են: Երկրաշարժից երուսաղեմի տները չեն քանդվում, և տաճարն էլ անշարժ է մնում, սակայն տաճարի վարագույրը պատռվում է, ինչը խորհրդանշում էր հրեաների կործանումը, ինչպես նաև նրանց, ովքեր բաժանվեցին Աստծուց և տարագրվեցին Կենաց գրքից: Գերեզմանները բացվում են, և շատերը գուրս են գալիս, որն օրինակ է համընդհանուր հարության, որպեսզի իմանանք, որ Նրա ձայնով հարություն ենք առնելու գերեզմանից:

Իսկ քանի որ ուրբաթ էր, որպեսզի մարմինները չմնան խաչի վրա մինչև շաբաթ օրը, որովհետև այն շաբաթը տոնական մեծ օր էր (Յովի. ԺԹ 31):

Քանի որ Տերն ուրբաթ օրն ստեղծեց Աղամին, և Աղամն ուրբաթ օրը վտարվեց Դրախտից, այդ պատճառով էլ Տերն ուրբաթ օրը խաչվեց, որպեսզի այդ օրը մարդկային ցեղը Դրախտ վերադարձնի:

Հրեա առաջնորդները Պիղատոսին աղաչում են, որ կոտրեն նրանց սրունքները, որպեսզի շուտ մահանան, և վերցնեն նրանց մարմինները (Յովի. ԺԹ 31) – Զինվորները նախ կոտրեցին առաջին ափազակի սրունքները և ապա՝ մյուսինը, որպեսզի նրանք շուտ մեռնեն և իրենք հասցնեն մինչև երեկո իջեցնել նրանց խաչից: Իսկ երբ մոտեցան Տիրոջը, նրան մեռած գտան, և նրա սրունքները չկոտրեցին: Դա այդպես եղավ, որպեսզի կատարվի գրվածը. «Պահպանում է նրանց բոլոր ոսկորները, և դրանցից ոչ մեկը չի փշրվելու» (Սաղմ. ԼԳ 21): Նաև՝ «Նայեցին Նրան, Ում խոցեցին» (Մտեն Յովի. ԺԹ 37): Եվ ինչպես զատկական գառան մասին ասվեց. «Դրա ոսկորները չպետք է ջարդվեն» (Թվեր Թ 12), այդպես էլ Աստծու Գառան սրունքները չփշրվեցին: Այստեղ ոսկորն Աստվածության նմանությունը ունի և հայտնում է, որ թեպետ խաչվեց, սակայն Աստված էր, անարդվեց՝ հզոր էր, մեռավ՝ անմահ էր:

Երբ եկան Հիսուսի մոտ և տեսան, որ Նա արդեն մեռած էր, Նրա սրունքները չկոտրեցին, այլ զինվորներից մեկը տեսով խոցեց Նրա կողը, և իսկույն արյուն և ջուր ելավ (Յովի. ԺԹ 33-34) – Գիտենալով, որ մարդ չի կարող իր կամքով հոգին ավանդել, և չկարողանալով հավատալ, որ արդեն մեռած է՝ հարյուրապետի հրամանով զինվորներից մեկը գեղարդով խոցեց Տիրոջ կողը, որտեղից իսկույն արյուն և ջուր գուրս եկավ: Մեռած մարդու կողից ջուր է ելնում, իսկ կենդանի մարդու կողից՝ արյուն: Զուրը վկայեց Նրա՝ մարմնով մեռնելու մասին, իսկ արյունը, որ Նա կենդանի է Աստվածությամբ:

Այն օրը Կենդանի ջուր է բխելու Երուսաղեմում: Նրա մի կեսը պիտի հոսի դեպի առջևի ծովը, նրա մյուս կեսը՝ դեպի հետևի ծովը (Զաքար. ԺԴ 8) – «Առջեկի ծովը» հին ժողովուրդն է՝ օրենսդիրները, մարգարեները և հայրապետները, ովքեր Երուսաղեմի մխիթարությանն էին սպասում, իսկ «Հետևի ծովը»՝ Քրիստոսի հեղված Արյամբ փրկված նոր ժողովուրդը, ովքեր առաքելական քարոզչությամբ լուսավորվեցին կենաց ջրով, որ բխում է Երկնային Երուսաղեմից՝ հավիտենական կյանքից, և նոր ժողովուրդ ու նոր Եկեղեցի դարձան:

Այն հուրը, որ վառվեց Ադամի մեջ, վառվել սկսեց նրա կողից՝ եվայից, այդ պատճառով էլ Երկրորդ Ադամի կողից ջուր բխեց՝ հանգնելու համար առաջին Ադամի կրակը: Տերը արյամբ գնեց մեզ չարի ծառայությունից, և որպեսզի Տիրոջ Արյունին ամեն մոտեցող լվացվի չարից, Տիրոջ կողից նաև ջուր բխեց: Եվ ինչպես Ադամի կողից ստեղծվեց նրա կինը՝ Եվան, այդպես էլ Տիրոջ կողից եղավ նրա հարսը՝ Եկեղեցին:

«Հարյուրապետը, տեսնելով ինչ որ պատահեց, փառավորեց Աստծուն և ասաց. «Իսկապես այս Մարդն արդար էր» (Ղուկ. ԻԳ 47):

«Եվ նրանք, ովքեր պահպանում էին Հիսուսին, երբ տեսան երկրաշարժը և պատահածները, սաստիկ վախեցան ու ասացին. «Արդարե, Աստծու Որդի էր Սա» (Սատր. ԻԵ 54) – Երեք նշանակություն ունեն արյունն ու ջուրը, որոնք ելան Քրիստոսի կողից: Արյունը կյանքի նշանն է, և հայտնում էր, որ Տերը կենդանի էր Աստվածությամբ, իսկ ջուրը՝ որ Հիսուս մեռած է, այսինքն՝ հոգին բաժանվել է մարմնից:

Երկրորդ՝ սա այն Արյունն է, որով Տերը գնեց մեզ, իսկ ջուրն այն ջուրն է, որով հանգցրեց Ադամի մեղքերի հուրը:

Երրորդ՝ Արյունը պատարագի խորհուրդն ունի, իսկ ջուրը՝ մկրտության: Այսպես Տերն իր կողի երկու վտակներով հիմնեց սուրբ Եկեղեցին:

Հարց. – Ինչո՞ւ Տիրոջ սիրտը կամ մարմնի մեկ այլ մաս չխոցեցին գեղարդով:

Պատասխան. – Քանի որ Աստված Եվային Ադամի կողից ստեղծեց, և օձն էլ իր ժանիքով Ադամի կողը խայթեց, այսինքն՝ Եվային: Հետևաբար՝ Ադամի կողի փոխարեն պետք է Տիրոջ կողը խոցվեր, որպեսզի Տիրոջ վերքով օձի թույնից բժշկություն լիներ: Նաև՝ որպեսզի ճշմարիտ լինի խոսքը, թե՝ «Ամեն ինչ կատարված է»:

Ապրանքության մարդարանուհայություն

Տե՛ր, Քո լուրը լսեցի և վախեցա, նայեցի Քո գործերին և զարհուրեցի. Դու կճանաչվես երկու կենդանիների միջև, երբ տարիները մոտենան, կհայտնվես, երբ ժամանակը հասնի, կերևաս, երբ իմ անձը բարկությունից խռովվի, ողորմությունս կհիշես (Ամբակ. Գ 2) – Ասելով՝ «Երկու կենդանիների միջև», նկատի ունի Հոգը և Սուրբ Հոգուն, քանզի Որդին Հոր աջ կողմում է, իսկ Սուրբ Հոգին՝ Որդու աջ կողմում: Սուրբ Երրորդության Անձերից մեկը ճանաչվեց՝ մարմնով հայտնվելով աշխարհին, և մարդիկ կարողացան տեսնել Անտեսաներին: Իսկ Հայրն ու Սուրբ Հոգին թեպետ Նրա հետ էին կամքով, սակայն չէին երևում անմարմին լինելու պատճառով:

Դարձյալ՝ Տերը ճանաչվեց հրեշտակների և մարդկանց միջև, երկուսից էլ պաշտպելով և երկրպագվելով: Նաև մարդարեների ու առաքյալների միջև. մարդարեները Հոգուց տպավորվելով ճանաչեցին, իսկ առաքյալներն իրենց մարմնավոր աչքերով տեսան և ականջներով լսեցին:

Դարձյալ՝ ճանաչվեց Օրենքի և Ավետարանի միջև, և երկուսից էլ Մի Աստված քարոզվեց և փառավորվեց:

Դարձյալ՝ Եգիպտոսի և Բաբելոնի միջև. քանզի Տերը հանեց հրեաներին Եգիպտոսից՝ Աբրահամի առաքինության շնորհիվ, և մատնեց բարելոնացիների ձեռքը՝ իրենց մեղքերի պատճառով:

Դարձյալ՝ Հին ու նոր քահանայությունների միջև: Հինը ստվերով և օրինակներով էր պաշտում Նրան, իսկ նորը՝ ծշմարտությամբ և կատարելությամբ:

Դարձյալ՝ Հրեաների ու Հեթանոսների միջև, ինչպես անկյան գլուխ դրված ընտիր Վեմ (տես. Ա. Պետ. Բ 6):

Դարձյալ՝ մահվան ու դժոխքի միջև, կամ՝ միջնորդ Աստծու և մարդկանց:

Մարդարեն նկատի ունի նաև Ավագ ուրբաթի երկյուղալի և զարմանալի օրը, երբ երկնքի ու երկրի առջև Արարչին դատելով՝ երկու չարագործների միջև փայտից կախեցին: Սակայն Նրա Աստվածությունը ավագակների մեջ չծածկվեց, քանզի Նրա համար խավարեցին արեգակը, լուսինն ու աստղերը, շարժվեց ու դողաց երկիրը, և լեռների հիմքերը սասանվեցին: Այդ պատճառով էլ մարդարեն ասում է, թե երկու կենդանիների միջև ճանաչվեց:

Իսկ մեկ այլ թարգմանությամբ ասվում է՝ «Կճանաչվես երկու գաղանների միջև», քանզի ավագակները գաղանների նման շրջում էին լեռներում ու պատառոտում անցորդներին: Ասում են, որ աջ կողմի

ավագակը, ով Հիսուսին արքայության Տեր դավանեց և աղաչեց հիշել իրեն, երբ նա դա իր արքայությամբ, հեթանոս էր, և նրա անունը Դեմաս էր, իսկ մյուսի անունը Կեստաս էր, և նա հրեա էր:

Զաքարիայի ազրարեռությունը
(Զաքար. ԺԴ 6-7)

«Այն օրը լույս չի լինելու, այլ լինելու է ցուրտ ու պարզ օր: Դա պիտի լինի միայն Տիրոջը հայտնի օր. ո՛չ ցերեկ պիտի լինի և ո՛չ էլ գիշեր, այլ լույս պիտի լինի միայն երեկոյան»:

«Այն օրը լույս չի լինելու» – Այն օրը լույսը խափանվեց Ստեղծողի իշխանությամբ, որպեսզի խավարի քողով ծածկի Արարչի մերկությունը:

«Այլ լինելու է ցուրտ ու պարզ օր»: Այնպիսի ցուրտ եղավ, որ Պետրոսը, ցրտից նեղված, նստեց խարույկի մոտ (տես Հովհ. ԺԸ 18):

Դա պիտի լինի միայն Տիրոջը հայտնի օր» – Քանզի երբեք երկինքը չէր տեսել իր Արարչին թշնամիների կողմից անարգված, իսկ այդ օրը տեսան նրան մերկ և խաչին դամված: Այդ պատճառով էլ այդ օրը նշանավոր եղավ բոլոր օրերի մեջ:

Ո՛չ ցերեկ պիտի լինի և ո՛չ էլ գիշեր – Ցերեկ չէր, քանզի խավար էր, և գիշեր էլ չէր, քանզի արեգակն իր տեղում էր:

Լույս պիտի լինի միայն երեկոյան – Դա եղավ իններորդ ժամին, երբ Տերը կանչեց Հորը, ավանդեց Հոգին և փրկագործությունն իր լրմանը հասցրեց: Ապա երկրի վրա կրկին ծագեց արեգակի լույսը, որպեսզի մեկ օրում լինի երկու ցերեկ, որոնք միմյանցից անջրպետվեցին գիշերով:

Եվ դրանից իմացանք, թե Ով է նա, Ում մասին ասաց Հորը. «Նա է, որ հրամայում է արեգակին, ու սա չի ծագում, փակում է աստղերի դեմը» (Յոթ թ 7):

ԴԻՌԱՆԵԱԽՈՍԻ ԴԱՐՁԸ

Այդ օրը Նրան ճանաչեց նաև աթենացիների իմաստասեր Դիոնեսիոսը – նա Աթենքի մեծահարուստ իշխան Սոկրատի որդին էր: Ծնողները նրան դեռևս մոր որովայնից ընծայել էին դեերի իշխանին, և երբ լրացավ նրա յոթ տարին, ծնողները նրան զոհ մատուցեցին չաստվածների իշխանի տաճարին: Սակայն տաճարի քրմերը, տեսնելով մանկան վայելուչ տեսքը, համեստությունը, ուշիմությունը և լռելու կարողությունը, համոզեցին ծնողներին չսպանել մանկանը, այլ փոխարենը նրան ծառայության հանձնել չաստվածներին, որպեսզի իր ծառայությամբ կուռքերին զոհաբերվի: Ծնողները համաձայնում են և մանկանը թողնում տաճարում:

Սկզբում քրմերը իրենք են ստանձնում նրա ուսման գործը և սովորեցնում նրան հելենական բոլոր իմաստությունները, իսկ հետո հանձնում ժամանակի ամենաիմաստուն մարդուն՝ Դիմոկրատեսին։ Նրա մոտ Դիոնեսիոսը սովորում է իր ժամանակի բոլոր գիտությունները և դառնում հույժի մաստուն։ Դրանից հետո կարգվում է դատավոր, իսկ այնուհետեւ, դեկրի իշխանի հրամանով, բոլոր դատավորների գլխավոր, և նրան է հանձնվում Աթենքի իշխանությունը։ Նա նստում է Արիսպագոսի աթոռին՝ դառնալով աթենացիների գլխավորը և առաջնորդը։

Որոշ ժամանակ անց Բալաք քաղաքում, որը թարգմանվում է արևի քաղաք, տոն եղավ, և մեծ քազմություն հավաքվեց։ Հրմշտոցի պատճառով քրմերից մեկը հենվեց Սափուղ կոչող կուռքի արձանին, որն էլ ընկավ ու փշրվեց՝ մեծ շփոթություն առաջնելով ժողովրդի մեջ։ Այս տեսնելով՝ իշխանավորները կալանեցին քրմին և նրան տիրասպան հայտարարելով՝ որոշեցին սպանել, քանզի երկնչում էին, որ նրա պատճառով չաստվածները կպատժեն իրենց։ Նրանք զոհ մատուցեցին դեկրի իշխանին և նրա կամքը հարցրեցին։ Դեկրի իշխանը պատասխանեց, որ պետք է Դիոնեսիոսին կանչել իրենց քաղաքը և քրմին հանձնել նրա դատին։ Այդ օրերին, աթենացիների օրենքով, ինը դատավոր պիտի նստեին ատյանում, քննեին գործը և հիսունմեկ իշխանների առջեւ դատապարտեին մեղավորին։

Դիոնեսիոսը Բալաք եկավ իր պատվական աշակերտի՝ Ասղիփոսի հետ։ Այդ օրն Աստծու նախախնամությամբ այնտեղ հավաքվեց քաղաքի ողջ ժողովուրդը՝ իշխաններով, քրմերով և դատավորներով հանդերձ։ Դիոնեսիոսը նրանց ասաց, թե ինչպես պետք է վարվել այն քրմի հետ, ով սպանել էր իր աստծուն, այսինքն՝ փշրել այն կուռքը, որին պաշտում էր։ Եվ այդ օրը ուրբաթ էր, և այդ պահը՝ վեցերորդ ժամը։

Հանկարծ ահավոր գորությամբ շարժվեց երկիրը, և բոլոր կուռքերն ընկան ու փշրվեցին, արեգակը խավարեց, լուսինը մթնեց, իսկ աստղերն աներեսույթ դարձան։ Ապա թանձր մեզ իշավ մարդկանց վրա, այնպես որ մեկը մյուսին չէին կարողանում տեսնել, և սարսափից բոլորն ընկնում էին գետնաթավալ։ Լեռները սասանվում էին, վեմերը՝ պատովում, կոատները՝ փլվում, և լսվում էին ահավոր ձայներ, կարծես թե մեկը լալիս էր իր որդու վրա։ Խավարը տեսեց մինչեւ իններորդ ժամը, որից հետո երկիրը դարձյալ պայծառացավ և մարդիկ աստիճանաբար ոտքի կանգնեցին։

Այդ ամենի մասին Դիոնեսիոսն այսպես է գրել. «Այդ օրը լուսինը տասնչորս օրական էր, և նա երկրի և անդունդի միջև էր և արեգակին մոտենալու համար պետք էր, որ այն արևելքից ելներ։ Եվ սքանչելիքը եղավ մի վայրկյանում. լուսինը կեսօրին հասավ արեգակին, և նրանք

խավարեցին աստղերով հանդերձ, ապա երեք ժամ միասին գնացին դեպի արևմուտք: Երկիրը դղբդաց, լեռները սասանվեցին, վեմերը պատռվեցին և տարտարոսից աղաղակի աղիողորմ ձայներ լսվեցին, ինչպես այն մարդկանց ձայները, ովքեր տեսնում են իրենց որդիներին սպանված: Այդպես հավիտյանս երեք չէր եղել: Դրանից հետո, մի ակնթարթում, լուսինը ետ դարձավ իր տեղը»:

Այդժամ քրմերը և իշխանները ընկան Դիոնեսիոսի առջև և նրանից հարցրեցին կատարվածի պատճառը: Դիոնեսիոսը իր աշակերտի հետ քննեց կատարվածը աստղագիտության բոլոր օրենքներով և համոզվեց, որ սա արեգակի սովորական խավարում չէր, սակայն պատճառը չգտավ: Ապա հանկարծակի բացվեցին Դիոնեսիոսի հոգու աչքերը, նրա մեջ ծագեց շնորհի լույսը, և նա տեսավ Անծանոթ Աստծուն՝ իր ողորմությամբ մարմին առած և երկիր իջած: Տեսավ նաև, որ այդ օրն ամբարիշտ մարդիկ նրան կախում են փայտից, նախատում և անարգում: Այդժամ Դիոնեսիոսը պատռեց իր հանդերձները, որից իշխանները և քրմերը սարսուցին և նրա առջև երեսնիվայր ընկան: Դիոնեսիոսը նրանց ասաց. «Իմացե՛ք, որ այսօր մեծ ու աշակոր գործ կատարվեց երկրի վրա: Քանզի Անծանոթ Աստվածն իր ողորմությամբ իջավ երկիր և մարդակերպ մարմնով զգեստավորվեց՝ աշխարհի փրկության համար, իսկ ամբարիշտները, իրենց երկրում, նրան բռնեցին, ծաղրեցին և փայտի վրա պրկելով սպանեցին՝ կորստյան դատապարտելով իրենց անձերը»:

Դիոնեսիոսը ապա հրամայում է իր պատվական աշակերտին՝ Ասղիփումին, որ մի թուղթ բերի և վրան գրի կատարվածը՝ նշելով տարին, ամիսը, օրը, ժամը: Դրանից հետո Դիոնեսիոսը վերադառնում է Աթենք՝ այդ գիրը պահելով որպես հիշատակ, որպեսզի իր մահից հետո էլ մարդկանց հայտնի լինի կատարվածը: Այդ դեպքերից հետո Աթենքում մի բագին են կանգնեցնում և վրան գրում. «Անծանոթ Աստծուն» (տե՛ս Գործք ԺԵ 23):

Այնուհետև՝ տասներկու տարի անց, Պողոս առաքյալը գնաց Աթենք՝ քարոզելու Աստծու Որդու Ավետարանը, և քաղաքը գտավ լցված կուռքերով: Այդ պատճառով քարոզեց և՛ հրեաներին, և՛ հույներին, ում որ հանդիպեց: Աթենացիները Պողոսի մասին հայտնեցին Դիոնեսիոսին՝ ասելով, որ Պողոսն իրենց օտար ուսմունք է քարոզում և արգելում պաշտել իրենց աստվածներին: Դիոնեսիոսը, լսելով Պողոսի գործերի մասին, հրամայեց բոլորին ժողովվել Արիսպագոսում, որը նրանց դատաստանի տեղն էր, ապա կանչեց նաև Պողոսին և հրամայեց խոսել: Պողոսը, հրաման ստանալով, առանց երկյուղի ասաց. «Ո՛վ աթենացինե՛ր, ես ձեզ գտա կռապաշտության մեջ, ուրախ և գոհ ձեր անձերի կորստյան համար»: Այս խոսքից քրմերն ահով բռնվեցին, և եթե Դիոնեսիոսը չարգելեր, ապա

նրան անմիջապես կքարկոծեին: Այնուհետև Պողոսն ավելացրեց. «Տեսնում եմ, որ դուք ըստ ամենայնի ջերմեռանդ հավատասեր եք, քանի որ շրջելով և տեսնելով ձեր պաշտածները՝ գտա նաև մի բագին, որի վրա գրված էր՝ «Անծանոթ Աստծուն». Ում դուք առանց ճանաչելու եք պաշտում, ես նույնն եմ քարոզում ձեզ» (Գործք ԺԵ 22-23):

Իսկ երբ Պողոսը պատմեց Քրիստոսի գործած սքանչելիքների, չարչարանքների, խաչելության, մահվան, արեգակի խավարման, երկրաշարժի, վեմերի պատովելու, կուռքերի կործանման, օրվա և ժամի, Տիրոջ թաղման և հարության մասին, այդժամ Դիոնեսիոսը հրամայեց Պողոսին լոել և իր պատվական աշակերտ Ասղիփոսին առաքեց բերելու այն գիրը, որ նա գրել էր Բալաքում, և այն բարձրածայն ընթերցել: Ապա համոզվելով Պողոսի խոսքերի ճշմարտացիության մեջ, նույն ժամին հավատաց, որ Անծանոթ Աստվածը Քրիստոսն է: Այնուհետև ինքը և իր կինը՝ Դամարիսը, մկրտվեցին Պողոսի կողմից, մկրտվեց նաև նրա աշակերտը՝ Ասղիփոսը, և արտաքին գիտությունների նրա վարդապետը՝ Հոեթեոսը, և էլի շատ աթենացիներ (տես Գործք ԺԵ 34): Դրանից հետո Պողոսը Դիոնեսիոսին ձեռնադրեց Աթենքի եպիսկոպոս, և նա հետևեց Պողոս առաքյալին և այլևս նրանից չբաժանվեց, մինչև Պողոսի ելնելն այս աշխարհից:

Դիոնեսիոսը գրել է տասը գիրք և իր երկրային կյանքն ավարտել խարույկի վրա՝ արժանանալով մարտիրոսական պսակին: Կոապաշտները նրա հետ այրեցին նաև նրա գրքերի մեծ մասը, այդ պատճառով էլ նրա գրքերից միայն երեքն են մեզ հասել:

ՀԻԱՌԱԽ ԹՁՐՈՒԽԸ

(Մատթ. ԻԵ 57-61, Մարկ. ԺԵ 42-47, Ղուկ. ԻԳ 50-56, Հովհ. ԺԹ 38-42)

Տասներորդ ժամին կատարվում է թաղման կարգը, որի համար նախապես պատրաստվում է գերեզմանի նշանակը: Տննացույցուն նկարագրված կարգը կատարելուց հետո սուրբ Խաչը դնում են սեղանի վրա, ծածկում սպիտակ դաստառակով՝ քրիստոսի պատանքների խորհրդով, և շրջան կազմելով ասում՝ «Խաչի Յո Քրիստոս Երկիր պատանենք»: Օրվա այդ ժամի երեքսրբյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ թաղեցար վասն ներ, ողորմեա' մեզ»: Այնուհետև ասվում է քարոզ և «Պահպանից» աղորքը:

Հովսեփ Արիմաթիացին մի արդար, պարկեշտ, բարեգործ ու մեծահարուստ մարդ էր: Նա հրեաների խորհրդի անդամ էր և միաժամանակ Հիսուսի ծածուկ աշակերտը: Նա չէր մասնակցել Հրեաների գործերին և սպասում էր Աստծու թագավորությանը: Եվ ուրբաթ երեկոյան, երբ շաբաթամուտն էր սկսվում, նա, արհամարհելով երկյուղը, համարձակվեց մտնել Պիղատոսի մոտ ու աղաչել նրան, որ վերցնի Հիսուսի Մարմինը: Հովսեփը

նախորդ օրն իր հարկի տակ, մեծ պատվով, ընդունել էր Քրիստոսին, իսկ այսօր խնդրում էր Պիղատոսից նրա մարմինը: Քանի որ Տիրոջ հայտնի աշակերտները փախել էին, այդ պատճառով ծածուկ աշակերտն էր գործում:

Պիղատոսը, լսելով Հիսուսի մահվան լուրը, զարմացավ, որ այդչափ շուտ է մահացել, և իր մոտ կանչելով հարյուրապետին՝ հարցրեց նրան. «Իրոք այդչափ շուտ մեռավ»: Հարյուրապետը վկայեց, որ Հիսուս իրոք որ Աստծու Որդի էր, քանզի իր կամեցած պահին հոգին ավանդեց: Դա լսելով՝ Պիղատոսը զարհուրած հրամայեց, որ Հիսուսի Մարմինը տան Հովսեփին: Սա ցույց է տալիս, որ Հրեաները զուրկ էին որևէ իշխանությունից և իշխանություն չունեին անդամ մեռած մարմնի վրա:

Հովսեփը մաքուր կտավներ գնեց, իսկ նիկողեմոսը՝ «գիշերային հավատացյալը» (տես Յովի. Գ 2), բերեց մոտ հարյուր լիտր զմուռս՝ հալվեի հետ խառնված, մոգերի խորհրդավոր ընծան: Զմուռսը նշանակն է անապական Մարմնի, հալվեն՝ անուշահոտ Աստվածության: Զմուռսը նաև թաղումն է խորհրդանշում, իսկ հալվեն՝ հարությունը:

Երբ Հովսեփը Տիրոջը խաչից իջեցնելու համար փորձեց ունելիով բեկոները դուրս քաշել, Տիրոջ Մարմնի խոցված տեղերը սկսեցին փայլատակել, ինչից նա աշարեկվեց ու ետ-ետ գնաց: Տեսնելով, որ անկարելի է Տիրոջ Մարմինը խաչից իջեցնել, նա ձեռքերը վեր բարձրացրեց և խաչանման տարածելով, ահով ու դողով սկսեց աղոթել. «Սուրբ Աստուած, սուրբ և Հզօր, սուրբ և Անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ»: Նրան միացան նաև նիկողեմոսը, Տիրամայրը, Հովհաննեսը և այն կանայք, ովքեր այդտեղ էին: Երբ աղոթեցին, բոլոր բեկոները ընկան, և սուրբ Մարմինը իջավ Հովսեփի բազուկների վրա: Դրանից հետո Հովսեփն ու նիկողեմոսը Տիրոջ Մարմինը փաթաթեցին պատանքով՝ ըստ Օրենքի: Նախորդ օրը Հովսեփը Տիրոջ համար Վերնատունն էր զարդարել, իսկ այսօր ջանում էր զարդարել նրա Մարմինը: Հովսեփն ու նիկողեմոսը Օրենքի Կատարողին պատվում էին նրա իսկ սահմանած օրենքներով:

Հնում, ըստ Օրենքի, փակում էին մեռածի աչքերը, քանզի Ադամն այդ աչքերով տեսավ արգելված ծառը, ապա կապում ոտքերը, քանզի նա այդ ոտքերով մոտեցավ ծառին: Կապում էին նաև ձեռքերը, որովհետեւ Ադամն այդ ձեռքերով քաղեց արգելված պտուղը: Այնուհետև՝ ծածկում էին երեսը, Ադամի տված հանդուգն պատասխանի պատճառով: Իսկ ըստ քրիստոնեական ավանդության՝ փակում են միայն հանդուցյալի բերանը, ամփոփելու համար փրկական խոստովանությունը, և ձեռքերը դնում կրծքին՝ պահելով հավատի արդարությունը՝ ինչպես գանձ:

Այն տեղում, ուր Տերը խաչվեց, մի պարտեզ կար, և այդ պարտեզում՝ մի նոր վիմափոր գերեզման, որի մեջ երբեք որևէ մեկը չէր դրվել: Դա էլ դարձավ Տիրոջ գերեզմանը՝ ըստ Երգ երգոցի. «Իմ սիրեցյան իջավ իր պարտեզ» (Երգ 2 1): Ինչպես Տիրոջ խաչելության ուրբաթը եղավ Ադամի Դրախտից արտաքսման ուրբաթի փոխարեն, այնպես էլ այն պարտեզը, ուր թաղվեց Տիրոջ Մարմինը, եղավ Դրախտի փոխարեն, որպեսզի այս ամենով ամբողջովին լուծարվի մահվան դատապարտությունը:

Այդ գերեզմանը փորել էր եղեկիա թագավորի Սոմնաս հանդերձապետը, սակայն այդտեղ ոչ մեկին չէին դրել, քանզի Տիրոջ հրամանով եսայի մարդարեն նրան նզովեց, քանի որ այդ տեղը Տիրոջ համար էր նախատեսված (տես Եսայի Իբ 15-16): Ապա՝ Բաբելոնի գերության ժամանակ, գերեզմանը լցվում է հեղեղատի խճով, իսկ վերջին շրջանում այդ տեղը գնում է Հովսեփի Արիմաթացին և այն իր համար պարտեզ դարձնում: Հովսեփը պեղելով գտնում է Սոմնասի փորած գերեզմանը, այն մաքրում ու պահում իր համար, որպեսզի երբ մահանա, իր մարմինը այնտեղ դնեն:

Երբ Տիրոջն իջեցրին խաչից, արդեն երեկո էր. օրը ուրբաթ էր, ու լուսանում էր շաբաթը, իսկ շաբաթ օրը, ըստ Օրենքի, իրավունք չկար աշխատելու: Հովսեփը այդ գերեզմանում դրեց Տիրոջ Մարմինը, և թաղողները մի մեծ քար, որպես կափարիչ, գերեզմանի դռան առաջ գլուրեցին ու գնացին: Այս կապակցությամբ Երեմիան ասում է. «Իմ կյանքը գրի մեջ խեղդեցին, քար գրին ինձ վրա» (Ողբ Գ 53), իսկ Հոբը ավելացնում՝ «Ի՞նքը դեպի գերեզման ուղղվեց. անքուն անցկացրեց-մնաց տապանում. ձորի խիճերը քաղցր թվացին» (Յոբ ԻԱ 32): Խիճը Քրիստոսի կրած տաժանելի չարչարանքներն էին՝ փշե պսակը, սարսուազդու բևեռները, անարգանքը, թուրքը, լեղու և քացախի ճաշակումը, որոնք մարդասիրաբար կրեց մեզ համար:

Ըստ Օրենքի՝ մահապարտ սպանվածներին երեկոյան էին թաղում, քանզի անիծված էին: Իսկ հրեաները շտապեցնում էին Արիմաթացուն. կամ թաղել, կամ էլ՝ մի կողմ գցել Տիրոջ Մարմինը, ինչպես իրենք էին վարվել ավազակների մարմինների հետ, քանզի շաբաթամուտ էր, և այդ պահին ոչ ոք չամարձակվում նոր գերեզման փորել: Այս պատճառով Հովսեփին իր գերեզմանում դրեց Տիրոջ Մարմինը:

Այդ գերեզմանում ոչ ոք երբեք չէր թաղվել, որպեսզի երբ Տերը հարություն առնի, չասեն, թե մեկ ուրիշը հարություն առավ, կամ թե՝ Տերն արդար մեկի ոսկորներին դիպչելով հարություն առավ, ինչպես մովաբացին հարություն առավ՝ դիպչելով եղիսեեի ոսկորներին (տես Դ Թագ. ԺԳ 21):

Ասենք նաև, որ Տիրոջ կույս գերեզմանի և Աստվածածին կույսի խորհուրդներում ընդհանրություն կա: Ինչպես սուրբ Կույսը նշանված էր Հովսեփ Աստվածահոր հետ, սակայն ընծայվեց Տիրոջը, այնպես էլ կույս գերեզմանը գնեց Հովսեփ Արիմաթացին իր համար, բայց ընծայեց Տիրոջը: Կույս էր Մարիամը, ով ընդունեց Բանին, և կույս էր գերեզմանը, որ ընդունեց Տիրոջը:

Սուրբ Կույսից Տերն անապական մարմնով ծնվեց, կույս գերեզմանից՝ անապական մարմնով հարություն առավ: Այնտեղ խանձարուրով պատվեց, այստեղ՝ պատանքներով: Այնտեղ մոր արգանդում էր և Հոր աթոռին բազմած, այստեղ՝ գերեզմանում էր և անքուն աչքով հովվում էր իսրայելին: Այնտեղ գիշերամիջին ծնվեց, այստեղ՝ գիշերամիջին հարություն առավ: Այնտեղ կուսությունն անխափար մնաց, այստեղ անխախտ մնա գերեզմանի կնիքը: Այնտեղ զմուռս և խունկ ընծայեցին, այստեղ՝ զմուռսով և խնկով պատանեցին: Այնտեղ մոգերը երկրպագեցին, այստեղ զինվորները վկայեցին: Այնտեղ աստղը լուսավորվեց, այստեղ հրեշտակները փայլեցին: Այնտեղ հրեշտակները և հովիվները միաձայն երգեցին, այստեղ հրեշտակները և կանայք հարությունը երգաբանեցին: Այնտեղ Տերը քառասուն շաբաթ արգանդում ժուժկալեց, այստեղ քառասուն ժամ գերեզմանում մնաց:

Այստեղ՝ Տիրոջ գերեզմանի համար նախատեսված տեղում, մացառուտ թփերի մեջ, Աբրահամը տեսավ եղջյուրներից կախված խոյը (տես Ծննդ. ԻԲ 13), իսկ Հակոբը սանդուղքի տեսիլքը այստեղ տեսավ (տես Ծննդ. ԻԸ 12): Այն վեմը, որի վրա կանգնեց Աբրահամը՝ իջեցնելու համար խոյին, եղավ Տիրոջ գերեզմանի կափարիչը: Եվ այդ վեմը Հակոբը որպես կոթող կանգնեցրեց ու օծեց: Հակոբի քնով Տիրոջ մահը, և արթնությամբ՝ հարությունն է խորհրդանշվում, կոթողով՝ եկեղեցին, իսկ օծմամբ՝ Սուրբ Հոգու շնորհների ներգործությունը: Այս վեմը պահապան եղավ անարատ Գառան համար, Ով անքուն աչքով պահում է ամենքին: Նա վերևում օրհնաբանվում էր Հոր և Սուրբ Հոգու հետ, իսկ ներքեւում՝ Աղամի հետ մտնում գերեզման:

Ասում են այնտեղ՝ Աղամի գերեզմանի մոտ էր բնակվում Մելքիսեդեկը, և նա այդտեղ Աբրահամին տվեց հացն ու գինին, օրհնեց նրան և նրանից տասանորդ վերցրեց: Այդտեղ էր Աբրահամը կամենում պատարագել իսահակին, և այդ տեղի մասին ասաց Մովսեսը. «Քո ուխտած բաները վերցնելով՝ կդաս այն վայրը, որը քո Տեր Աստվածը կընտրի իր համար, որպեսզի իր անունը հայտնվի այնտեղ» (Բ Օրենք ԺԲ 26): Այդ տեղի մասին նաև Դավիթն ասաց. «Այս է հանգստավայրն իմ հավիտյանս հավիտենից, այստեղ պիտի բնակվեմ, քանզի հավանեցի սա» (Սաղմ. 6ԼԱ 14): Իսկ եսային

ասում է. «Վերջին օրերին պիտի հայտնվի Տիրոջ լեռը, Աստծու տունը՝ լեռների գագաթներին» (Եսայի Բ 2):

Այն ամենի համար, որ արեց Արիմաթացին, հրեաները նրան բանտարկեցին, սակայն Տիրոջ հրեշտակը նրան ազատեց, և նա հարեց առաքյալներին:

Հովսեփի հետ կային նաև կանայք, ովքեր եկել էին Գալիլիայից: Այդտեղ էին նաև Մարիամ Մագդաղենացին և Հակոբոսի ու Հովսեփի մայր Մարիամը: Նրանք տեսան, թե ինչպես Տիրոջ Մարմինը դրվեց գերեզման, ապա վերադարձան իրենց կացարանները, խնկեր ու յուղեր պատրաստեցին և շաբաթ օրը, Օրենքի համաձայն, հանդիսա արեցին:

ԱՎԱԳ ՇԱԲԱՁ

Ավագ շաբաթվա գիշերային ժամերգության ժամանակ միայն ավագ խորանում են լուս վառում: Օրվա այս ժամի երեքըրբյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ քաղեցար վասն մեր, ողորմեա' մեզ»:

Իններորդ ժամին կատարվում է սուրբ Զատկի ճրագալույցը: Բեմն այդ պահին ծածկված է լինում: Նախքան պատարագի սկսվելն առաջնորդը կամ ավագ քահանան սարկավագների ու դպիրների ուղեկցությամբ (որոնց ծեռքերում կան չվառվող մոմեր) գալիս են բեմի առջև: Լուսարարը, ծեռքում ունենալով այրվող ածուխներով լցված մի թաս¹, կանգնում է քահանայի աջ կողմում: Վառում են երեք կանքեղ և ըստ օրվա կարգի սաղմոսելով ու շարականներ երգելով՝ Յին կտակարանից ընթերցում են Տիրոջ հարությունը վկայող մարգարեական գրքերը: Յուրաքանչյուր ընթերցվածից հետո ծնրադրում են և աղոթում: Երբ ըստ կարգի ընթերցելով հասնում են Մարիամ մարգարեի երգին (Ելից գրքից): «Օրինեսցուք զՏէր, զի փառօք է փառաւորեալ», քահանան օրինում է հուրը և դրանից մի մոմ վառում: Սարկավագը մի մեծ մոմի վրա խաչածն ամրացնում է խունկի հինգ հատիկ, որը խորհրդանշում է խաչի վրա Տիրոջ ստացած հինգ վերքերը, և այն վառում այրվող մոմից: Այդ մոմը դրվում է եկեղեցու ավագ խորանում, որն այնտեղ վառվում է մինչև Յամբարձում: Դիմանից հետո վառում են մնացած ջահերն ու կանքեղները, վառվող մոմեր բաժանում ժողովրդին՝ միաբան երգելով «Լուսաւորեա Երուսաղեն» շարականը, և ծնրադրելով՝ աղոթում: Այդ պահին պատարագիչը բարձրանում է բեմ՝ զգեստավորվելու: Խսկ երբ ըստ կարգի ընթերցելով հասնում են Դանիելի գրքին, հոգևորականներից մեկը բարձրանում է բեմ և այնտեղից ընթերցում Դանիելի մարգարեությունը, որի ավարտին բացվում է վարագույրը և մատուցվում հանդիսավոր սուրբ Պատարագ: Օրվա այս ժամի երեքըրբյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ յարեար ի մեռելոց, ողորմեա' մեզ»: Ժողովուրդը արարողությունից հետո վառվող մոմները տուն է տանում:

Շաբաթ օրը պատկերն է ու օրինակը արարչության յոթերորդ օրվա, երբ Աստված Հանգստացավ իր բոլոր գործերից: Աստված վեց օրում արարեց ժամանակավոր ու ապականության ենթակա աշխարհը, իսկ յոթերորդ օրը՝ իմանալի աշխարհը՝ սրբերի հանգիստը: Տերը սահմանեց աշխարհի կյանքի յոթ դարերը, որոնք խորհրդանշվում են արարչության յոթ օրերով: Այս յոթ դարերի ընթացքում մարդու որդիները տաժանելի չարչարանքների են ենթարկվում՝ ծնունդից մինչև մահ աշխատելով իրենց կարիքների համար: Խսկ յոթերորդ դարի լրանալուն պես պիտի լինի արդարների հանգիստը երկնքի արքայությունում ու այս աշխարհածուփ կյանքի դադարը:

Աստված վեցերորդ օրն ավարտեց արարչագործությունը և իր կատարած բոլոր գործերից հետո՝ յոթերորդ օրը, հանգստացավ: Աստված օրհնեց յոթերորդ օրը և սրբագործեց այն, որովհետեւ այդ օրն Աստված Հանգստացավ իր այն բոլոր գործերից, որ սկսել էր անել» (Ծննդ. Բ 2-3) – Աստված տեսավ, որ այն ամենը, ինչ արել է, բարի է, և օրհնեց ու սրբեց յոթերորդ

¹ Այսօր ածուխով թասի փոխարեն լուսարարը վառվող մոմ է բռնում:

օրը: Անցած օրերն Աստված պատվեց արարչությամբ, իսկ այս օրը՝ օրհնությամբ ու սրբությամբ: Այնուհետև օրենք տվեց երրայական տոհմին՝ վեց օր գործել իրենց մարմնական կարիքների համար և յոթերորդ օրը հանգստանալ: Պատվիրեց նաև քննել անցած վեց օրերում իրենց կատարած գործերը և գործած սխալները խոստովանելով ու ողորմություն տալով՝ քավություն գտնել:

Իսկ քրիստոնյաների համար սուրբ առաքյալների կողմից օրինադրվեց շաբաթ օրերն աշխատել, իսկ կիրակի օրը հանգստանալ բոլոր գործերից: Եվ ինչպես հրեաները շաբաթ օրն էին ընթերցում Օրենքն ու մարդարեությունները, այդպես էլ քրիստոնյաներս կիրակի օրը եկեղեցի ենք գնում, լսում Աստվածային Գրքերի խոսքերը, խոստովանում, հաղորդվում և սպասում Քրիստոսի գալստյանը:

Շաբաթը հանգիստ է թարգմանվում, սակայն դա չի նշանակում, որ առաջին արարչության ժամանակ Աստված Իր գործերից հոգնեց և կարիք ուներ հանգստանալու, այլ դա նշանակում է, որ յոթերորդ օրը դադարեց գործելուց: Աստված Իր բոլոր գործերը խոսքով կատարեց. Նա ասաց, և եղավ, հրամայեց, և հաստատվեց՝ ըստ այս խոսքի. «Տիրոջ խոսքով ստեղծվեց երկինքը, և Իր բերանի շնչով՝ նրա բոլոր գորությունները» (Սաղմ. ԼԲ 6): Տերը միայն Աղամին Իր ճեռքերով ստեղծեց և չի գրված, թե հոգնեց արարելիս: Դավիթն ասում է. «Զի ննջում և քուն չի մտնում Պահապանն Խորայելի» (Սաղմ. ճի 4), իսկ նա, Ով չի ննջում և քուն չի մտնում, չի էլ հոգնում: Նաև Եսային է ասում. «Հավիտենական Աստվածը, երկրի սահմանները հաստատող Աստվածը ո՛չ քաղց է զգում և ո՛չ էլ հոգնում» (Եսայի Խ 28):

Որպեսզի Աստված նորոգեր մեղքերից հնացած մարդկային բնությունը և երկրի անեծքն օրհնության փոխեր հինգշաբթի օրը ծնվեց սուրբ Կույսից, ուրբաթ օրը մեռավ ու մարմնով իջավ գերեզման և շաբաթ օրը հանգստացավ: Ինչպես Առաջին արարչության շաբաթ օրը Աստված հանգստացավ իր բոլոր գործերից, այդպես էլ այս մեծախորհուրդ շաբաթ օրը հանգստացավ երկրորդ արարչության գործերից, որն Իր փրկական տնօրինությամբ կատարեց մեր նորոգության համար: Եվ այդ օրը մարդկանց հոգիների չարչարանքների տունը՝ գծոխքը, ավերեց և բացեց հանգստան տունը՝ Դրախտը:

Մենք թեպետ հրեաների նման չենք պահում շաբաթը, սակայն, համաձայն Նիկիական կանոնի, շաբաթ օրը կատարելով սուրբ մարտիրոսների հիշատակը՝ յուրովի պատվում ենք: Եվ ինչպես Աստված հանգստացավ իր գործերը կատարելուց հետո, այդպես էլ սրբերն իրենց գործերը կատարելուց հետո պիտի հանգստանան: Եվ ինչպես Աստված հանգստանում

է բարության մեջ, նույնպես և մեր բարի գործերը հանգիստ են Աստծու և մեզ համար:

Դարձյալ՝ Աստված յոթերորդ օրը պատրաստեց հավիտենական հանգիստը՝ ըստ այս խոսքի. «Եկե՛ք, իմ Հոր օրհնյալնե՛ր, ժառանգեցե՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը» (Մատթ. 16 34): Եվ հանգստանալու են արդարները Երկնքի արքայությունում:

Երբ Աղամն ուրբաթ երեկոյան դուրս եկավ Դրախտից, գիշերվա մութը պատեց նրան, և նա ամբողջ գիշեր մեծ տագնապ ապրեց: Եվ միայն շաբաթ օրը նա հանգստացավ, երբ ծագեց տեսանելի լույսը:

Ինչպես Քրիստոս շաբաթ օրը հանգստացավ գերեզմանում, այդպես էլ իր արարածներին հանգստացրեց մահվան մեջ՝ ըստ այս խոսքի. «Մահը մարդու համար հանգիստ է» (Յոթ 4 22): Քանի որ մահանալով՝ մարդը դադարում է չարչարվելուց և հոգին էլ հանգչում է իր բարի գործերում: Եվ վերջին կիրակիին՝ հարության օրը, հարություն է առնելու և պիտի պսակվի հոգով ու մարմնով անճառելի փառքում: Այս պատճառով է սուրբ Եկեղին շաբաթ օրը մեծամեծ տոներ կատարում ի պատիվ սրբերի:

Իսկ Ավագ շաբաթ օրը խորհրդանշում է Նոր օրենքի հանգիստը հին ու մարմնավոր օրենքի չարչարանքներից հետո: Նաև արդարների հանգիստն է խորհրդանշում, ովքեր մահվանից հետո հանգստանում են իրենց բարի գործերից:

Վեցերորդ դարում Փրկիչը եկավ դեպի կամավոր ու աշխարհակեցուցիչ չարչարանքները, իսկ յոթերորդ դարի հասնելուն պես կրկին պիտի գա՝ այս անգամ Հայրական իշխանությամբ ու հրաշալի փառքով:

ԳԵՐԵԶԱԿԱՆԻ ՊԱՀՊԱԼՈՒՄ

Աստվածամարտ հրեաները ժողովվեցին Պիղատոսի մոտ ու ասացին, որ երեք օրով պահապան զինվորներ կարգեն գերեզմանի վրա, որպեսզի հանկարծ Հիսուսի աշակերտները չգան ու գողանան նրա Մարմինը և ասեն, թե հարություն է առել: Պիղատոսը նրանց ասաց. «Գնացե՛ք և պահպանե՛ք գերեզմանն այնպես, ինչպես գիտեք: Եթե այդպես վախենում եք այդ «Անօրենից» և «Աստծուն հակառակից», ապա զինվորներով պաշտպանվեք այդ սոսկալի Մեռելից, և եթե հարկ կա, կնքեցեք գերեզմանը կնիքով, և եթե անհրաժեշտ եք գտնում, երկաթյա շղթաներով ամրացրեք, որպեսզի հետո չասեք, թե դատավորը մեզ թույլ չտվեց պահպանել գերեզմանը և այդ պատճառով մենք կորցրեցինք Մեռելին»: Եվ նրանք պահակազոր կարգեցին և երկաթյա կնիք դրեցին գերեզմանի վրա:

Մահն էլ իր հերթին կամենում էր իր ապականեցնող ատամներով ծամել Տիրող Մարմինը, սակայն չէր կարողանում: Դրանից նա զարմացած

խորհում էր՝ ինքնիրեն ասելով. «Ո՞վ է Սա, որ Օրենքով մեռել է, սակայն վեր է քան Օրենքը և անապական է մնում: Աստված չէ՛, քանզի եթե Աստված լիներ, ապա չէր մահանա: Հրեշտակ չէ, քանզի մարդկային կերպարանք ունի: Աղամի նման ենթակա է ինձ, սակայն Աղամի նման ապականությամբ ինձ չի հանձնվում: Ինչպես մարդ համբերեց մահվան, սակայն մարդու նման, մահվանից հետո, չի կրում մահկանացուի կրքերը»:

Իր մահանալու և թաղվելու մասին Տերը նախապես էր ասել. «Ինչպես Հովնանը երեք օր ու երեք գիշեր կետի փորի մեջ էր, նույնպես և Մարդու Որդին երկրի սրտում՝ երեք օր ու երեք գիշեր» (Մատթ. ԺԲ 40): Հայտնի է, որ Հովնանը Քրիստոսի օրինակն է: Ինչպես Տերը հրամայեց Հովնանին քարոզել Նինվեում, այնպես էլ Հայր Աստված առաքեց իր խոսքը՝ աշխարհին փրկություն քարոզելու: Հովնանի՝ նավում ննջելը խորհրդանշում է Քրիստոսի ննջելը խաչի վրա, Հովնանի ծովն ընկնելը՝ Քրիստոսի թաղումը, իսկ կետին կու գնալը՝ Քրիստոսի՝ հոգով դժոխք իջնելը: Կետի փորում կենդանի և անապական էր Հովնանը, իսկ գերեզմանում ու դժոխքում անմահ ու անապական էր Քրիստոս՝ Հոգով ու մարմնով: Կետի՝ Հովնանին ցամաք գուրս նետելը խորհրդանշում է Քրիստոսի հարությունը:

Իսկ այն խոսքը, թե Մարդու Որդին երկրի սրտում պետք է լինի երեք օր ու երեք գիշեր, նշանակում է Քրիստոսի թաղումը: Երկրի սիրաը երուսաղեմն է: Ինչպես Աբելի սպանվելու տեղը երկրի բերան կոչվեց, այդպես էլ Քրիստոսի գերեզմանը՝ երկրի սիրտ: Այս խոսքը նաև նշանակում է, որ Քրիստոս խորհրդաբար թաղվեց առաքյալների սրտում:

Հարց. — Ինչո՞ւ է երեք օր ու երեք գիշեր ասվում:

Պատասխան. — Որովհետև հինգչաքթի օրը՝ երեկոյան, Տերը Հաղորդության խորհրդի միջոցով թաղվեց առաքյալների սրտում և կիրակի օրը՝ երեկոյան, հարություն առած երեաց առաքյալներին: Այսպիսով՝ ստացվում է երեք օր ու երեք գիշեր:

Երկրորդ՝ Տերը ուրբաթ գիշերը բռնվեց, և շաբաթ երեկոյան, երբ լուսանում է միաշաբաթը, եղավ Քրիստոսի հարությունը, ըստ Մատթեոսի: Ուրբաթ օրը՝ վեցերորդ ժամից մինչև իններորդ ժամը, խավար եղավ, հետո դարձյալ լույս եղավ մինչև երեկո՝ ըստ մարգարեների խոսքի. «Այդ օրն այնպես պիտի լինի, որ արեգակը մայր պիտի մտնի միջօրեին» (Անոս Ը 9), դարձյալ՝ «Այն օրը ո՛չ ցերեկ պիտի լինի և ո՛չ գիշեր, այլ լույս պիտի լինի միայն երեկոյան» (Զաքար. ԺԴ 7): Այսինքն՝ վեցերորդ ժամից մինչև իններորդ ժամը գիշեր է լինում: Հետևաբար՝ ուրբաթ օրն ունենում է երկու գիշեր և երկու ցերեկ, և շաբաթ օրն էլ իր գիշերով ու ցերեկով ստացվում է երեք օր ու երեք գիշեր:

Երրորդ՝ ուրբաթն իր գիշերով, շաբաթն իր գիշերով և կիրակին իր գիշերով, ստացվում է երեք օր:

Հարց. — Ինչո՞ւ Տերը թաղվեց:

Պատասխան. — Նախ ինչպես երկիր իջավ և մեզ երկինք հանեց, այդպես էլ իջավ գերեզման, որպեսզի կանգնեցնի գլորվածներին: Ինչպես իր մահվամբ մահը մեռցրեց, նույնպես և թաղմամբ ապականությունը լուծարեց: Քանի որ մահը հոգու բաժանումն է մարմնից, իսկ ապականությունը՝ մարմնի տարրերի բաժանումը միմյանցից: Այս երկուսն էին տիրել մարդու բնության վրա, ինչը և վերցրեց Քրիստոս: Մահը մահվամբ վերցրեց խաչի վրա՝ ըստ այս խոսքի. «Ո՞ւր է, մա'հ, քո հաղթությունը» (ԱԿորնթ. ԺԵ 55), իսկ ապականությունը վերցրեց անապական Մարմնով գերեզման իջնելով:

Երրորդ՝ քանի որ երկիրը անիծվել էր նախահոր գործերով, ապա այն կարող էր օրհնվել միայն Քրիստոսի գործերով: Եվ ինչպես Տերը մկրտվելիս սուզվեց ջրի մեջ, որպեսզի այն սրբի, նույնպես և հողի մեջ թաղվեց, որպեսզի այն օրհնվեց վերացնի անեծքը: Այդպես և հարությունից հետո քառասուն օր օդում² գտնվեց, որպեսզի այն սրբի դևերին մատուցած զոհերի ճենճերից: Իսկ Սուրբ Հոգին, հրեղեն լեզուներով երևալով, սրբեց հուրը, և այդպիսով բոլոր տարրերը սրբվեցին ու օրհնվեցին:

Չորրորդ՝ Աստված Աղամին ասաց. «Հող էիր և հող էլ կդառնաս» (Ծննդ. Գ 19): Այդ պատճառով Բանն Աստված վերցրեց մեր հողեղեն բնությունը և մտավ հողի մեջ, որպեսզի մեր պարտքերը վճարի: Հայտնի է, որ այլ էր Աղամի մահը, այլ՝ Քրիստոսի մահը, և այլ՝ մերը: Աղամի մահը եղավ իր ներգործությամբ, քանի որ եթե մեղք չգործեր, չէր մահանա: Քրիստոսի մահը եղավ իր կամքով, քանի որ եթե չկամենար, չէր մահանա: Իսկ մեր մահը բնությամբ է՝ և' կամեցողների համար, և' չկամեցողների, և' մեղք գործողների, և' չգործողների: Հետևաբար՝ Քրիստոսի մահն իր համար չէր, այլ՝ մեզ համար:

Հարց. — Ինչպե՞ս է Տերը վերացրել մահը, երբ այժմ էլ մարդիկ մահանում են ու ապականվում:

Պատասխան. — Ինչպես երկու մահ կա՝ հոգու և մարմնի, նույնպես և երկու անգամ է գալիս Քրիստոս: Քանի որ հոգին մարմնից պատվական է, ապա առաջին գալստյամբ Տերը հոգու մահը վերացրեց, որը մեղքն է ու դժոխքը, իսկ երկրորդ գալստյամբ մարմնի մահը պիտի վերացնի և շնորհի համընդհանուր հարություն ու կյանք:

Երկրորդ՝ Աղամը պտուղն ուտելու օրը զորությամբ մեռավ, թեպետև հետո ինը հարյուր երեսուն տարի ապրեց, սակայն ինչպես մահվան գերի,

² Եկեղեցու հայրերը օդ ասելով նկատի ունեն աստղալից երկինքը:

իսկ հետո մեռավ ներգործությամբ: Այդպես և մենք՝ սկզբում զորությամբ գնվում ենք անմահության կողմից, իսկ հետո՝ ներգործությամբ անմահություն ենք ստանալու: Մեր գրավականը Քրիստոսի հարությունն է, Ով եղավ ննջեցյալների Պտուղը և Անդրանիկը մեռելների (տես Կողոս. Ա 18): Եվ ինչպես Նա մեր բնությամբ հարություն առավ առանց ապականության, այդպես էլ բոլորս հարություն ենք առնելու անմահ ու անապական մարմնով:

Երրորդ՝ երկու հայր և երկու սկիզբ ունենք. առաջինը Աղամն է՝ մարմնով ու մեղքերով, իսկ երկրորդը՝ Քրիստոսը՝ հոգով ու շնորհներով: Հետեաբար՝ անհրաժեշտ է նախ առաջին Աղամի պարտքերը վճարել, ապա՝ երկրորդ Աղամի հարության ու կյանքի շնորհներին միանալ:

Չորրորդ՝ հնարավոր չէ անմահ ու անապական մարմնով ապականացու տեղում բնակվել, քանի որ այդ դեպքում Քրիստոսին հարկ կլիներ կրկին մեզ համար մեռնել ու մեզ ազատել: Այդ պատճառով Ամենաիմաստունը մեզ մահ տվեց, որպեսզի երբ բոլոր արարածներն ապականությունից փոխվեն անապականության, դրա հետ միասին մեր մարմինները նույնպես անմահություն ստանան:

Հինգերորդ՝ մենք մեռնելով կցորդվում ենք Քրիստոսի մահվանը, որպեսզի Նրա հարությանը հաղորդվենք: Քանի որ անհնար է առանց մահվան հարություն առնել, ինչպես և Տերը նախ մեռավ և հետո հարություն առավ, այդպես էլ մենք: Այդ պատճառով այժմ մեր վրա տիրում է ժամանակավոր մահը, որպեսզի հանդերձյալում արժանանանք հավիտենական կյանքին:

Հարց. – Ինչո՞ւ Տերը հոգով իջավ դժոխք:

Պատասխան. – Նախ՝ ցույց տալու համար, թե ինչ պատճառով մարդացավ ու մեռավ, այսինքն՝ որպեսզի ազատի հոգիներին:

Երկրորդ՝ Աղամը միջին կշռով ստեղծվեց, այսինքն՝ անձնիշխանությամբ: Հետո մեղքերով ծանրանալով՝ իջավ դժոխքին ներքին տեղը և այնտեղից այլևս չէր կարողանում բարձրանալ, մինչև որ վերին կետից Բանն Աստված իջավ ներքին կետը և հանեց Աղամին երկնքի վերին կետը:

Երրորդ՝ ինչպես Հիսուս Մարմնով որպես լույս ծագեց մեզ համար ու փրկություն քարոզեց, նույնպես և հոգով որպես լույս ծագեց դժոխքում գտնվող հոգիների համար և հավատ քարոզեց՝ ըստ այս խոսքի. «Նա թեպետև Մարմնով մեռավ, բայց կենդանի է Հոգով, որով և գնաց քարոզեց բանտում եղած այն Հոգիներին, որոնք մի ժամանակ ապստամբել էին» (ԱՊԵՏ. Գ 18-20):

Չորրորդ՝ սատանան անիրավությամբ կապեց մարդկանց հոգիները, 20 – Տերունական տոներ լրությամբ ազատեց:

Հինգերորդ՝ Տերն իր աղամաստեղծ ձեռքերը տարածելով խաչի վրա՝ հաղթեց չար իշխանին և մարդկանց կորպեց նրա իշխանությունից՝ ըստ այս խոսքի. «Հիմա' է այս աշխարհի դատաստանը, հիմա' է, որ այս աշխարհի իշխանը դուրս կնետվի: Եվ երբ ես բարձրանամ երկրից, ամենքին դեպի ինձ կձգեմ» (Յովի. ԺԲ 31:32):

ՏԻՐՈՉ ԷԶՐԸ ԴԺՈԽՔ

Տիրոջ թաղման օրը սատանան, ինչպես ապստամբ ծառա, փախավ իր որջը՝ դժոխք, կարծելով, թե այնտեղ կարող է ամրանալ և պահել հոգին: Սակայն Տերը դժոխք իջնելով կապեց նրան, ավերեց կարծեցյալ ամրոցը և այնտեղից դուրս բերեց մարդկանց հոգիները:

Քրիստոսի չարչարանքները երկու ներգործություն ունեցան. նախ՝ մարզեցին մեղքերի պարտքերը, երկրորդ՝ բացեցին երկնքի դռները: Տերը նույն ներգործությամբ ազդեց նաև դժոխքի վրա: Առաջին՝ քանդեց դժոխքի կապանքները, ինչպես ասում է Դավիթը. «Նա Փշրեց դռները, պղնձյա և երկաթյա նիգերը խորտակեց» (Սաղմ. 62:16): Այսինքն՝ քանդեց սկզբնական և ներգործական մեղքերը կամ՝ մեղքերը և հուսահատությունը: Երկրորդ՝ բացեց երկնքի դռները և բանար լուսավորեց՝ ըստ Եսայու մարգարեռության. «Շղթայվածներին առելու, թե՝ ելե՛ք, իսկ խավարի մեջ գտնվողներին, թե՝ հայտնվեցե՛ք» (Եսայի Խթ 9):

Իսկ դժոխքի ինչ լինելու մասին տարբեր մեկնություններ կան: Նախ՝ դժոխք է կոչվում տանջանքն ու պատիժը: Նաև տանջանքների տեղն է դժոխք կոչվում: Դժոխք է կոչվում նաև սատանան, ով իր մեջ միշտ կրում է տանջանքները: Դժոխք է նաև արտաքին պատիժը, ինչը հուր է ու խավար, իսկ ներսից՝ խղճմտանքից առաջացած տանջանք:

Դժոխքը, որը տանջանքների վայրն է, երկրի ներքին կետն է, նեղ ու դժվարին մի տեղ: Սատանան այնտեղ էր բռնությամբ տանում բոլոր մարդկանց հոգիները:

Վարդապետներից ոմանք ասում են, թե դժոխքը մի տեղում է, սակայն տանջանքները զանազան են՝ մեծ, միջակ ու փոքր, ինչպես և մեկ է երկնքի արքայությունը, սակայն զանազան է փառքը՝ համարժեք երեսունին, վաթսունին և հարյուրին (տես Սարկ. Դ 8): Իսկ ոմանք ասում են, թե չորս դժոխք կա. ներքին, որը չար մեղավորների տեղն է, միջին՝ որը անթլփատ մանուկների տեղն է, վերին՝ որն արդարների տեղն է, և չորրորդ՝ որին քավարան են ասում: Նաև ասում են, որ Քրիստոս վերին դժոխքը գնաց ու ավերեց, իսկ մյուսները մնացին: Պետք է ասել, որ ճիշտ առաջին կարծիքը, և մենք դրան ենք հետևում, այսինքն՝ դժոխքը մեկն է և Քրիստոս այն ամբողջովին ավերեց: Իսկ եթե մեկը մեջբերի Դավիթի

Հետեւյալ խոսքը՝ «Մեծ եղամ քո ողորմությունն իմ հանդեպ, հոգիս փրկեցիր խոր դժոխվից» (Սաղմ. ԶԵ 13), և ասի, թե, համաձայն այդ խոսքի, գոյություն ունի նաև վերին դժոխվը, ասենք, որ վերին և ներքին դժոխվը ներն են կոչվում ծանր և համեմատաբար թեթև տանջանքները:

Եթե ներքին դժոխվը հոգու տանջանքներն է, ապա վերին դժոխվը՝ մարմնի գերեզմանը, ինչպես ասում է Դավիթը. «Մահը նրանց վրա կհասնի, և նրանք ողջ-ողջ դժոխվ կիշնեն» (Սաղմ. ԾԴ 16), այսինքն՝ գերեզման: Սուտ է, թե բազում դժոխվներ կան, և Քրիստոս ներքին դժոխվը չմտավ, որը մեղավորների տեղն է, քանի որ Աղամն էր մեղավորների գլուխն ու արմատը և ներքին դժոխվում էր, և Քրիստոս ազատեց Աղամին՝ ներքին դժոխվը իջնելով:

Երկրորդ՝ Դավիթն ասում է. «Տերը երկնքից երկիր նայեց՝ բանտարկ-յալների հառաջանքը լսելու և մահապարտների որդիներին ազատ արձակելու համար» (Սաղմ. ՑԱ 20):

Երրորդ՝ Մովսեսը Տիրոջ անունից ասում է. «Իմ բարկությունից հուր է բորբոքվել: Դա կայրի մինչև դժոխվի խորքերը» (Բ Օրենք ԼԲ 22): Եվ Բանն Աստված հրով ու բարկությամբ իջավ ներքին դժոխվը:

Չորրորդ՝ Եսային ասում է. «Տերը շղթայվածներին ասելու է, ելե՛ք, իսկ խավարի մեջ գտնվողներին՝ հայտնվեցե՛ք» (հմնտ. Եսայի ԽԹ 9): Արդար-ները խավարի մեջ չէին, քանի որ ունեին շնորհի լույսը, իսկ մեղավորները արտաքին ու ներքին խավարում էին և կապանքներում:

Հինգերորդ՝ Պետրոսն ասում է. «Գնաց քարոզեց բանտում եղած այն հոգիներին, որոնք մի ժամանակ ապստամբել էին» (Ա Պետ. Գ 19-20): Արդար-ներն ապստամբ չէին, ապստամբ էին մեղավորները և չարերը, որոնց քարոզեց բանական հոգով:

Այսեղ վարդապետները երկու կարծիք են հայտնում: Ոմանք ասում են, թե նրանք, ովքեր հավատացին, դուրս եկան, իսկ անհավատները մնացին դժոխվում: Իսկ մյուսներն ասում են, թե բոլորի կապանքներն էլ լուծարվեցին, մինչև անգամ Հուդայի. Նրանցից ոմանք դուրս եկան դժոխ-վից, ոմանք էլ այնտեղ մնացին՝ ինչպես բանտում: Իսկ սուրբ Եպիփանը, մեջբերելով սաղմոսերգուի հետեւյալ խոսքերը՝ «Մեղավորները կրկին դժոխվ կընկնեն, նաև բոլոր հեթանոսները, որոնք մոռացան Աստծուն» (Սաղմ. Թ 18), ասում է. «Նրանք, ովքեր չհավատացին ու դուրս եկան, աշխարհի վախճանին կրկին դառնալու են այդ նոույն տեղը կամ էլ մեկ այլ տանջանքի վայր»:

Հետեւաբար՝ երբ մարդկային բնության պարտքը վճարվեց, և սա-տանան խաչով կապվեց, դժոխվի դռները փշրվեցին, և բոլոր հոգիներն ազատվեցին: Ոմանք հավիտյան ազատվեցին, իսկ ոմանք՝ ժամանակավո-

բապես: Քանի որ աշխարհի վախճանին կրկին դառնալու են դժոխք, քանզի ասված է. «Ուստի ամբարիչտները չեն դիմանա դատաստանին, ոչ Էլ մեղավորները կլինեն արդարների հավաքի մեջ» (Սաղմ. Ա 5):

Չոր և հարսկայի սովորության

Ավանդությունից հայտնի է, որ Մարիամ Մագդաղենացին Զատկի տոնին Հռոմում ներկած ձու է նվիրել Տիբերիոս կայսրին և ասել. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Չորն օրինակն է ամբողջ աշխարհի. վերին կեղևն օրինակն է երկնքի, թաղանթը՝ օդի, սպիտակուցը՝ ջրի, իսկ գեղնուցը՝ երկրի: Չորն կարմիր ներկելով՝ հայտնում ենք, որ ամբողջ աշխարհը Քրիստոսի Արյամբ գնվեց, և դրանով քարոզում մեր փրկությունը:

Չորն նաև հույսն է խորհրդանշում, քանզի տակավին ձու է, դեռևս ձագ չէ: Իսկ զատկական ձուն խորհրդանշում է մեր հարության հույսը:

Չորն երկու անգամ է ծնվում. առաջին անգամ՝ երբ հավն է ածում, իսկ երկրորդ անգամ՝ երբ ձվից ճուտ է դուրս գալիս: Մարդն էլ է երկու անգամ ծնվում. առաջին անգամ՝ մորից, իսկ երկրորդ անգամ՝ Մկրտության ավագանից: Մարդու առաջին ծնունդը մահվան պատճառով անկերպարանք է, ինչպես ձուն, սակայն երբ Քրիստոս մեզ վրա է ցողում իր կենդանարար Արյունը, մեզ հարություն է տալիս իբրև կենդանի ձագուկների: Այդ պատճառով էլ Հարության մեծ օրը ձուն ներկում ենք արյան գույնի՝ դրանով ասելով Տիբողը. «Տե՛ր, Քո հարության գորությամբ հավաքի՛ր մեզ իբրև ձագուկների Քո ամենաընդգրկուն թևերի տակ»:

ՄԵՐ ՏԻՐՈՅ՝ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՒ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ

Գիշերը կատարվում է հսկում, Սրբությունը դնում են սուրբ Սեղանին: Երբ ասվում է «Տեր յերկնից» շարականի վերջին տունը՝ բոլորը համբուրում են միմյանց ու ասում. «Ձեզ և մեզ աւետիս. Քրիստոս յարեաւ ի մեռելոց»: Օրվա երեսրբյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հօգօր, սուրբ և անմահ, որ յարեար ի մեռելոց, ողորմեա' մեզ»: Եպիսկոպոսը, քահանաները և բոլոր պաշտոնյաները, թափոր կազմած, զգեստավորված, շահերով ու մոմերով, գալիս են ատյան և երգում «Այսօր յարեաւ» շարականը:

ԶԼՏԻԿ

ՄԵՐ ՏԻՐՈՅ՝ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՄՈՆԸ ԿՈՉՎՈՒՄ Է ԶԱՄԻԿ:
ԶԱՄԻԿԻՆ ՀՈւՆԱՐԵՆ «ՓԻՍԱԿԱ» ԵՆ ԱՍՈւՄ, ՈՐԸ ՆՀԱՆԱԿՈՒՄ Է ԳԱՂՋ:
ՎԱՐԴԱՎԱՐԻԿԱՆՆԵՐՆ ԱՅՍ ԲԱռԻ «ՓԻ» ՄԱՊԸ ՓՈԽԱՐԻՒՆԵԼ ԵՆ «ԱՂ»-ՈՎ, «Լ»-Ն՝
«Ք»-ՈՎ և «ՊԱՍՔՐԱ» ՎԵՐԱՆՎԱՆԵԼ:

«Զամիկ» նշանակում է անցում չարչարանքներից: Նկատի ունի իսրայելի որդիների չարչարանքները փարավոնից, հորթին երկրպագելուց (տես Ելք ԼԲ 19-20), փորձության ջրից (տես Ելք ԺԵ 6-7), օձերի խայթոցներից (տես՝ Թվեր ԻԱ 6), կորիսի ապստամբությունից (տես Թվեր ԺԶ 33-35) և զանազան պատերազմներից: Չարչարանք էր նաև Գաղգաղայում թլփատվելը (տես Հետու Ե 2) և մանանայի պակասելը (տես Հետու Ե 12), քանզի այնուհետև նրանք պետք է իրենց ճակատի քրտինքով հացը վաստակեին: Այդ պատճառով էլ հրեաները Զամիկի տոնակատարության ժամանակ յոթ օր դառնահամ բույսեր և բաղարջ՝ չարչարանաց հաց են ուտում՝ որպես շիշատակ իրենց կրած չարչարանքների (տես Բ Օրենք ԺԶ 3):

Զամիկ նաև անցարան է նշանակում, որպես հիշատակ հրեաների՝ Եփիպտոսից դուրս գալու և Կարմիր ծովով անցնելու: Սա խորհրդանշում է անցումը չարից գեպի բարուն, պակասությունից գեպի լիություն, անպիտանությունից և չար գործերից՝ գեպի պիտանություն ու առաքինի վարք:

Զամիկ նշանակում է նաև զատկել, հեռանալ զազիր, անմաքուր ու դմնդակ խորհուրդներից և դառնալ բարու գործակից:

Զամիկները չորսն են, և բոլորն էլ Աստված է սահմանել: Առաջինը՝ կոչվում է Արարչական զատիկ, երկրորդը՝ Օրինադրական, երրորդը՝ Փրկական, իսկ չորրորդը՝ Նորոգման:

Արարչական զատիկն այն է, որ Աստված գարնանային գիշերահաւասարից երկու օր անց՝ ուրբաթ օրը, արարեց Աղամին և նրան, որպես

եռակի պարգև, տվեց զատկական հանդերձները. քահանայությունը, մարդարեսությունը և թագավորությունը: Եվ որպեսզի զատկական ուրախությունը կատարյալ լինի, տվեց նաև երկինքը՝ իր լուսատուներով, Դրախտը՝ իմանալի տնկիներով, օդը՝ քաղցրանվագ թռչուններով, երկիրը՝ զանազան կենդանիներով, և ծովի ջրերը՝ իրենց բնակիչներով:

Այս Զատիկը ուներ չորս առանձնահատկություն: Նախ որ գիշերահավասարից հետո էր, երկրորդ՝ արեգակը գտնվում է Խոյի համաստեղությունում, որը կենդանակերպերից առաջինն է, երրորդ՝ ամիսը նիսան էր, որն ամիսների ու տարվա սկիզբն է, և չորրորդ՝ լիալուսին էր:

Աստված այդ մշտնջենավոր Զատիկը տվեց Ադամին, որպեսզի նրա ուրախությունը վախճան չունենա, ինչպես հրեշտակների ուրախությունն է անվախճան: Սակայն Ադամն այն իսկույն կորցրեց, այդ պատճառով էլ Աստված չուրախացավ առաջին Զատկով:

Երկրորդը Օրինադրական զատիկն է: Աա եղավ այն ժամանակ, երբ Աստված Իսրայելի որդիներին, Մովսեսի առաջնորդությամբ, մարմնավոր ու ժամանակավոր գերությունից ազատեց և առաջնորդեց դեպի Ավետյաց երկիր:

Օրինադրական զատիկն ուներ Արարչական զատկի չորս առանձնահատկությունները, քանի որ կատարվեց գիշերահավասարից հետո, երբ արեգակը գտնվում էր Խոյի համաստեղությունում, նիսան ամսին, լիալուսնի օրը: Այս զատկով Աստված Իսրայելի որդիներին ազատեց չորս արհավիրքներից. նախ՝ փարավոնի գերությունից, երկրորդ՝ ծովից, քանզի նրանք չխորտակվեցին ծովում, իսկ փարավոնն իր զորքերով խորտակվեց, երրորդ՝ անապատի ահագնությունից, ուր օձերն ու կարիճները խայթում ու կծոտում էին նրանց, և չորրորդ՝ յոթ հզոր ազգերից, որոնց հրեաները հաղթեցին և տիրացան նրանց ժառանգությանը:

Եգիպտական գերությունից Իսրայելի մարմնավոր ազատությունը խորհրդանշում է ամբողջ մարդկության հոգևոր ազատությունը, ինչը կատարվեց Քրիստոսով՝ Փրկական զատկին: Այստեղ Մովսեսը խորհրդանշում է Քրիստոսին, նրա գավազանը՝ Քրիստոսի խաչը, Կարմիր ծովը՝ դժոխքը, ծովի ճեղքվելը՝ դժոխքի ավերվելը, ծովից Իսրայելի որդիների դուրս ելնելը՝ մարդկանց հոգիների՝ դժոխքից դուրս ելնելը, փարավոնի՝ ծովում ընկղմվելը՝ սատանայի կործանումը, իսկ Իսրայելի որդիների գնաւը դեպի Քորեթ լեռը՝ հոգիների երկինքը բարձրանալը:

Երրորդը մեր Փրկչի Փրկական զատիկն է, երբ Տերը կամովին մատնեց իր Անձը չարչարանքների, բեեռվեց խաչին և իր մահվամբ ու հրաշափառ հարությամբ ազատեց մեզ: Փրկական զատիկը ևս ունի Արարչական զատկի չորս առանձնահատկությունները, քանի որ Տիրոջ չարչարանք-

ները եղան գիշերահավասարից հետո, երբ արեգակը գտնվում էր Խոյի համաստեղությունում, ամիսը նիսան էր, և լուսինը հասել էր իր լրմանը:

Այս զատկով Քրիստոս Աղամի որդիներին ազատեց չորս արհավիրք-ներից. նախ՝ իր մահվամբ ու հրաշափառ հարությամբ՝ մեղքերի մահից, ինչը թագավորել էր մեր բնության վրա Աղամից մինչև Մովսես (տես Հոռմ. Ե 14): Երրորդ՝ հոգիներին ազատեց դժոխքից ու սատանայի իշխանությունից, իսկ արժանավորներին բարձրացրեց դեպի արքայության լույսը: Երրորդ՝ մեզ ազատեց Օրենքի անեծքից և տվեց Շնորհի օրենքը: Չորրորդ՝ ազատեց անդիտության խավարից ու անհուսությունից և տվեց աստվածաշտության լույսը:

Քանի որ Քրիստոսի Վերջին ընթրիքը, մատնությունը, խաչելությունը, թաղումը և հարությունը տեղի ունեցան հրեական, այսինքն՝ Օրինադրական զատկի տոնին, այդ պատճառով էլ Քրիստոնեական, այսինքն՝ Փրկական զատիկը փոխարինեց նախորդին:

Չորրորդը Նորոգության զատիկն է, որը լինելու է աշխարհի վախճանին: Նորոգության զատկին, ըստ առաքյալի խոսքի, Տերը նորոգելու է մեր խոնարհ մարմինը, որպեսզի այն կերպարանակից լինի իր փառավոր Մարմնին (տես Փիլիպ. Գ 21): Ապա մեր հոգին ազատվելու է տգիտությունից ու ատելությունից և անխղելիորեն կապվելու է իր սիրույն. ինչպես մարմնի անդամներն են սիրով միացած մարմնին, այդպես էլ մենք սիրով միանալու ենք Քրիստոսին: Ազատելու է մեզ մարմնի բազմաթիվ կրքերից և հանգչեցնելու է անհոգս հանգստում՝ ըստ այս խոսքի. «Եկե՛ք Ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, և ես ձեզ կհանգստացնեմ» (Մատթ. ԺԱ 28):

Ազատելու է արտմությունից և ուրախացնելու է երկնային փառքում՝ ըստ այս խոսքի. «Ձեր ուրախությունը ոչ ոք ձեզնից չպիտի խլի» (Յովի. ԺԶ 23): Մեր մարմնին տալու է ազատություն ու զորություն՝ ազատելով թանձր ծանրությունից և գարձնելով նուրբ ու թեթե: Ազատելու է խավար մարմնից և տալու է լուսավոր մարմին: Ազատելու է ապականությունից և տալու է անապակ մարմին, ինչպես ասում է առաքյալը. «Այսպես է նաև մեռելների հարությունը. սերմաննվում է ապականությամբ և հարություն է առնում առանց ապականության. սերմաննվում է անարգությամբ և հարություն է առնում փառքով. սերմաննվում է տկարությամբ և հարություն է առնում գորությամբ. սերմաննվում է չնչավոր մարմին և հարություն է առնում հոգեւոր մարմին» (Ա Կորնթ. ԺԵ 42-44):

Հարց. — Բոլոր զատիկներում երեաց ազատությունը, քանզի Զատիկն ազատություն է և ուրախություն, իսկ Արարչական զատկում ո՞րն է ազատությունը:

Պատասխան. – Արարչությունից առաջ բոլոր արարածներն անգոյության և անէության մեջ էին, որով նմանվում էին կալանվածների: Իսկ արարչությամբ՝ արարածները ոչ էից եկան դեպի էություն, անգոյությունից՝ դեպի գոյություն, ինչն էլ նրանց համար ազատություն համարվեց: Այդ պատճառով Տերը Զատիկ արեց և տվեց կյանքի վայելչությունը, քանզի անգոյությունից ազատվեցին և էացան:

Չորս զատիկներից առաջին երկուսն արդեն գտել են իրենց վախճանը, երրորդը գնում է դեպի վախճան, իսկ չորրորդը սկիզբ է առնելու ապագայում և հավիտյան անվախճան է լինելու, քանզի լինելու է անեղը ազատություն, անվախճան կյանք և հավիտենական խնդություն:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Հարության խորհուրդը մեծապատիվ է ու հրաշալի, քանզի գլուխն է բոլոր տնօրինական խորհուրդների:

Անժամանակ Որդին, փառքերի Լույսը և Հոր Էության նկարագիրը, անձառելի ու անհասանելի Բանն Աստված, Ով իր անսկիզբ Էությամբ ի սկզբանե Հոր մոտ էր և Համագոյն է Սուրբ Հոգուն, կամեցավ գտնել կորսվածներին, ժողովել ցրվածներին, դարձի բերել մոլորյալներին, կանգնեցնել գլորվածներին և օտարացածներին վերընծայել Փառքերի Հորը: Այդ պատճառով Քաջ Հովիվն իր մոլորված ոչխարների համար իր անձը տվեց:

Եվ այսօր Քրիստոս հարություն առնելով մեռելներից՝ իր հետ հարություն տվեց նաև մեր մեղքերի ու մահվան մեջ ընկած բնությանը: Այսօր երկիրը երկինք դարձավ: Ներքին աշխարհի բնակիչները դարձան երգակից վերին հոգեղեններին: Այսօր վերին հրաբուն զորքերն ավետիս են տալիս երկրավորներին, որ Հիսուսի հարությամբ լուծարվեց մահկանացուների մահը: Այսօր Հարսին՝ եկեղեցուն, որ նստել էր սղի մեջ, լուսեղենների լուսազգեստ հույլերը ավետիս են տալիս, որ նրա Փեսան հարություն է առել և գալիս է եկեղեցուն իր փառքին պսակելու:

Այսօր զվարթունների դասերը խնդությամբ երկում են տրտմազգեստներին՝ առաքելով նրանց քարոզելու աշխարհին, որ հարություն առավ միշտ կենդանի եղողը՝ ըստ իր անսուտ խոսքի:

Սա օր է նոր Արարչության, որը ոչնչով չի զիջում այն օրվան, երբ երկիրը արարչագործվեց: Եթե այն օրն աշխարհը ոչնչից ստեղծվեց, ապա այսօր մեղքերով եղծվածը վերստին արարվեց՝ առավել հրաշափառ քան նախորդ անգամ: Քանզի այս հրաշալի օրը իրենում ունի պատկերն այն Մեծ Միաշաբաթի, երբ Տերը երկինքն ու երկիրը հաստատեց: Այն աշխար-

Հաստեղծ միաշաբաթին հալածվեց զգալի խավարը, և ծագեց մեծապայծառ լույսը, իսկ այս միաշաբաթին հալածվեց անդիտության աղջամուղջը, որ ծավալվել էր երկրի վրա, և ամենուր սփռվեց ճշմարիտ աստվածդիտության լույսը: Քանզի ճշմարիտ լույսը ծագեց խավար գերեզմանում և լուսավորեց խավարում նստածներիս:

Եթե ուրբաթ օրը միջօրեն նսեմացավ և զգալի խավարն ամենուր սփռվեց, ապա այսօր՝ գիշերամիջին, Արդարության Արեգակը գերեզմանից ծագելով՝ անդիտության խավարը հալածեց և աստվածդիտության ճառագայթներն ամենուր ծագալեց:

Անցյալ օրը Հարսը, տիբելով իր Փեսայի մահվան պատճառով, նստել էր անմիտիթար, և նրան սգակից էին բոլոր արարածները. լուսատուները՝ խավարումով, երկրը՝ շարժվելով, վեմերը՝ պատռվելով, վարագույրը՝ կիսվելով, օդը՝ խավարելով: Իսկ այսօր Հարսը զարդարված պայծառ վայելչությամբ՝ զվարճալի գեմքով դիմավորում է գերեզմանից ելնող Փեսային, Նրա հետ ուրախությամբ նստելով հարսանեկան առագաստում՝ օրիորդներով¹ հանդերձ, ինչպես հարսնության օրը (տես Երգ Ա 1-3): Եվ բոլոր նրանք, ովքեր կցորդ եղան տիբությանը, այսօր հաղորդվում են ուրախությանն ու ցնծում: Քանզի այժմ երկինքն ավելի պայծառ է, արեգակը՝ ավելի բարձր, օդը՝ ավելի մաքուր, հրեշտակներն ու կանայք՝ ավետաբեր, գերեզմանները բացված են, մեռելները՝ հարություն առած, իսկ առաքյալները՝ լցված հանդիպման անասաելի խնդությամբ, և գրեթե բոլորը՝ երկրավորներն ու երկնավորները, բանականներն ու անբանները, իմանալիներն ու զգալիները, զվարճանում են և ուրախության տոն են տոնում, ինչին և մենք ենք հանդիսակից՝ վայելով անճառելի շնորհները: Եվ փառքերի Տերը՝ անժամանակն Աստված, մահը ոտնատակ տալով, դժոխքն ավերելով և նախաստեղծներին էլ ավելի հարաշափառ լույսերով զարդարելով՝ կատարեց աշխարհակեցուցիչ տնօրինության խորհուրդը, ինչի համար առաքվել էր Հոր ծոցից:

Եվ միաշաբաթի մոտենալով սկիզբ է առնում հրաշալի ու աշխարհակեցուցիչ հարությունը, ինչպես վկայակոչում է մարգարեն. «Երկու օր հետո Նա կկենդանացնի մեզ, և երրորդ օրը կենենք կկանգնենք Նրա առաջ» (ՕԿԱ Զ 3): Եվ ասում է երջանիկ առաքյալը. «Գիտենք, թե Քիստոս մեռելներից հարություն առած լինելով՝ այսուհետեւ չի մեռնի, և մահը Նրան այլեւ չի տիրի» (ՅՈՒ. Զ 9), քանի որ Նրա հոգին դժոխքում չթողնվեց և ոչ էլ Մարմինն ապականություն տեսավ: Եվ ինչպես շիկացած երկաթը չի ժանգուավում և հրով բորբոքված մորենու մեջ միջատներ չեն կարող բնակվել, այդպես էլ աստվածային ճառագայթներով և անհա-

¹ Օրիորդներ ասելով նկատի ունի հրեշտակներին:

սանելի Աստվածության հրով հրացած Տիրոջ Մարմնում ու Հոգում ո՛չ մեղքը, ո՛չ մահը և ո՛չ էլ դժոխքը չկարողացան բնակություն հաստատել:

Այսօր Տերն ինքն իրեն աստվածաբար հարություն տվեց՝ ըստ այս խոսքի. «Քանդեցե՛ք այդ տաճարը, և երեք օրվա ընթացքում այն կվերականգնեմ» (Յովի. Բ 19): Եզ մարգարեն է ասում. «Այժմ ելնելու եմ ես, այժմ փառավորվելու եմ, այժմ բարձրանալու եմ» (Եսայի ԼԳ 10): Իսկ Դավիթն ասում է. «Թող ելնի Աստված, Նրա բոլոր թշնամիները թող ցրվեն, ու Նրան ատողները փախչեն Իր առջեկց» (Սաղմ. Կէ 2): Ապա շարունակում է. «Ելի՛ր, Տե՛ր իմ Աստված, թող բարձրանա Քո ձեռքը, և մի՛ մոռացիր տնանկներին» (Սաղմ. Թ 12բ):

Տերը դուրս եկավ մատանիով կնքված սուրբ գերեզմանից՝ առանց խախտելու գերեզմանի կնիքը: Քանզի ինչպես Տերը ծնվեց սուրբ Կույսից, առանց խախտելու նրա կուսությունը, այդպես էլ երրորդ օրը փառքով ու անապական մարմնով հարություն առավ կույս գերեզմանից՝ հաղթելով մահվանն ու խափանելով ապականությունը՝ ըստ գրվածքների. «Ո՞ւր է, մա՛կ, քո հաղթությունը, ո՞ւր է, դժո՛խք, քո խայթոցը» (Ա Կորնք. ԺԵ 55): Եզ Քրիստոս մահանալով ու հարություն առնելով՝ դարձավ ննջեցյալների առաջին Պտուղը:

ԶԻՆՎՈՐԱԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Զինվորներից ոմանք գնացին քաղաք և քահանաներին ասացին, որ այն Այրը, Ում գերեզմանը նրանք պահպանում էին, հարություն առավ, և նրանք չկարողացան անդամ նայել նրա ահավոր տեսքին և լսել հրեշտակների ձայնը, քանի որ թմրեցին այդ սքանչելի լույսից ու սաստիկ շարժումից:

Քահանայապետերը ծերերի հետ միասին խորհուրդ արեցին և շատ դրամ տալով զինվորներին՝ ասացին. «Կասեք, թե նրա աշակերտները գիշերով եկան ու գողացան մարմինը, մինչ մենք քնի մեջ էինք: Եզ եթե այդ լուրը կուսակալին հասնի, մենք նրան կգոհացնենք և ձեզ կազատենք վտանգից»: Զինվորները համաձայնելով իրենք իրենց համար մատնիչ եղան և իրենք իրենց արծաթով ծախեցին:

Հարց. – Հայտնի է, որ քահանայապետերը բարի մարդիկ չեն, քանի որ նրան, Ով իրենց համար բյուրապատիկ բարեգործություններ արեց, նախանձից մահվան մատնեցին, սակայն ինչո՞ւ մահվան արժանի զինվորներին փրկելու համար վատնեցին իրենց ունեցվածքը:

Պատասխան. – Որովհետև զինվորները մեր Տիրոջ հարության վկաներն էին: Նրանք այժմ համբավում էին Տիրոջ հարությունը, որը հնա-

բավոր չէր սուտ հայտարարել, քանզի այս գեպքում հակառակորդի վկայությունն առավել ընդունելի է, քան բարեկամինը:

Այդ օրը զինվորները երկու անգամ գնացին քահանայապետերի մոտ: Առաջին անգամ գնացին, երբ Տերը հարություն առավ: Թեպետ նրանք չտեսան Հարուցյալին, սակայն տեսան հրեշտակների փայլատակումն ու շարժումը և հասկացան, որ հարություն է առել Նա, Ով գերեզմանում էր: Զարհուրած զինվորները վառվող ջահերով մոտեցան գերեզմանին և անցքից ներս նայելով տեսան, որ Մարմինը տեղում չէ, իսկ մատանու կնիքը չի խախտվել: Նրանք անմիջապես գնացին քահանայապետերի մոտ և ստուգությամբ պատմեցին ամեն ինչ՝ ասելով. «Ձեր մատանու կնիքը վեմի վրա անխափան է, եկե՛ք և տեսե՛ք»: Այդ ասելով զինվորներն իրենց արդարացրին: Քահանայապետերը շտապ եկան և տեսան, որ իսկապես վեմի կնիքն անխափան է, որ Մարմինը գերեզմանում չէ, և հասկացան, որ Հիսուս հարություն է առել: Նրանք ահով համակվեցին, քանի որ ինչպես կասկածում էին, այդպես էլ եղավ: Այդ պատճառով էլ առանց խնայելու վատնեցին տաճարի արձաթը՝ կաշառելու համար պահապաններին, և մեղքը դցեցին աշակերտների վրա՝ նրանց գող անվանելով:

Այս ամենը եղավ նախքան կանանց գերեզման գալը, և գերեզմանի քարը մի կողմ գցվելը: Իսկ երբ հրեշտակը քարը գլորեց և կանանց տվեց հարության ավետիսը, պահապանները կրկին գնացին քահանայապետերի մոտ և նրանց պատմեցին իրենց տեսածը: Ավետարանիչը զինվորների առաջին և երկրորդ այցելությունները մի պատմության մեջ է զետեղում և ասում, որ զինվորներն արձաթն առնելով արեցին այնպես, ինչպես իրենց պատվիրել էին քահանայապետերը: Եվ այս զրույցը տարածված է հրեաների մեջ մինչև այսօր: Այդ պատճառով սաղմոսերգուն պահապանների ու հրեաների համար է ասում. «Զհասկացան, չըմբոնեցին, խարիսխեցին խավարի մեջ, և երկրի բոլոր հիմքերը ցնցվեցին» (Սաղմ. ԶԱ 5):

Տերը պահապաններին հաղորդ դարձրեց ճշմարիտ հարությանը, որպեսզի հավատան, որ իր Մարմինը չի գողացվել, և վեմն ու կնիքը արգելք չեն իր համար: Տերը թույլ տվեց պահապաններին, որ հրեշտակից լսեն հարության ավետիսը, և դրանից հետո ահ ու սարսափ սփռեց նրանց վրա, որպեսզի խրատվեն: Եվ ասված է. «Նրա ահից պահապանները խռովվեցին և մեռելների պես եղան» (Մատթ. ԻԸ 4): Դրա մասին է ասում մարգարեն. «Հեթանոսները պիտի խռովվեն, և երկրի բնակիչները պիտի սարսափեն քո նշաններից, այգաբացին ու երեկոյան պիտի զվարճանան» (Սաղմ. ԿԴ 9), ասում է նաև՝ «Անձամբ տեսնելով այդ բանը՝ նրանք զարմացան, խռովվեցին ու սասանվեցին» (Սաղմ. ԻԸ 6):

Տերն իր հարությունը զինվորներին հայտնի դարձրեց, որպեսզի նրանք պատմեն հրեաներին, քանի որ պատշաճ չէր իր սիրելիներին ուղարկել թշնամիների մոտ: Կայիափան երբեք Պետրոսին չէր լսի, և ոչ էլ Աննան կանսար Հովհաննեսին: Պահակները Քրիստոսի հարության ավետարանիչները դարձան, և հրեաները նրանց ընդունեցին, քանի որ Հիսուսին խաչողների ընկերներն էին և ոչ թե նրա սիրելիները: Հիսուսի թշնամիները զինվորներին ասում էին. «Ի՞նչ տեսաք Սպանվածի գերեզմանի մոտ, ասեք մեզ գաղտնապես»: Եվ երբ զինվորները նրանց ճշմարտությունն էին ասում, նրանք թախանձանքով պատվիրում էին, որպեսզի գրսիններից ոչ մեկն այդ մասին չիմանա: Այսպիսով Տիրոջ Հարության լուրը հայտնի դարձավ թե՛ իր սիրելիներին և թե՛ ատելիներին:

Ամեն ժամ զինվորներն այս խորհուրդն իրենց մեջ պատմելիս՝ Տիրոջ հարությունն էին քարոզում սպանողների առաջ: Եվ այս պատմվում էր ոչ թե Պետրոսից կամ Հովհաննեսից, ովքեր Տիրոջ սիրելիներն էին, այլ զինվորներից, ովքեր հանիրավի դատապարտեցին առաքյալներին՝ ասելով, թե նրանք գողացան Հիսուսի մարմինը:

Յուղաբեր Կանայք

Այդ սուրբ կանայք եկել էին Գալիլիայից և ամենուր հետևում էին Փրկչին՝ մեծ սիրով ծառայելով Նրան: Նրանք այդ գիշեր ո՛չ քննցին, և ո՛չ էլ հրեաների ու զինվորների սպառնալիքները նրանց վախեցրեցին, այլ բորբոքված Քրիստոսի սիրուց՝ խնկեր ու յուղեր պատրաստեցին և շաբաթօրը, Օրենքի համաձայն, հանգիստ արեցին: Իսկ շաբաթն անցնելուն պես, լույսը գեռ չքացված, գիշերով գնացին գերեզման:

Նախ ասենք, որ Մարիամ անունով հինգ հոգի կային, որոնցից առաջինն ամենաօրհնյալ Տիրուհին է՝ մեր Տիրոջ Կույս մայրը: Երկրորդը՝ Մարիամ Մագդաղենացին է, երրորդը՝ Հակոբոսի և Հովսեի մայր Մարիամը, չորրորդը՝ Կղեռվապասի Մարիամը և հինգերորդը՝ Հազարոսի քույրը:

Ավետարանիչներն այս Մարիամներից միայն երկուսին են հիշատակում գերեզման գնացողների մեջ՝ Մարիամ Մագդաղենացուն և Հակոբոսի ու Հովսեի մորը: Մագդաղենացու մասին ասում են, թե Տերը նրա միջից յոթ դե էր հանել, իսկ Կղեռվապասի Մարիամը նա է, ով Տիրամոր հետ կանգնել էր խաչի մոտ: Կղեռվապասը Հովսեփի եղբայրն էր, ում Աստվածահայր կոչեցին և ով հայրն էր Հակոբոսի, Հովսեի, Սիմոնի ու Հուդայի:

Յուղաբեր կանանց թվին Մարկոսն ավելացնում է նաև Սաղոմեին, իսկ Ղուկասը՝ Հովհաննային: Սաղոմեն դուստրն էր Հովսեփի, քույրը՝ Հակոբոսի ու Հովհաննեսի: Նա, մտերիմ ու ազգական լինելով Հիսուսին, Նրանից գահերեցություն խնդրեց իր որդիների համար, որպեսզի որդիներից մեկը նստի արքայության աջ կողմում, իսկ մյուսը՝ ձախ (տե՛ս Սատր. Ի 21): Իսկ Հովհաննան Հերովդեսի Քաջա հազարապետի կինն էր: Սրանցից բացի կային նաև ուրիշները, որոնց անունները չեն հիշատակվում:

Այժմ քննենք ժամանակի հարցը, թե ե՞րբ յուղաբերները գերեզման գնացին: Մատթեոսն ասում է.

«Նաբարթ օրվա երեկոյան, երբ կիրակին լուսանում էր, Մարիամ Մագդաղենացին և մյուս Մարիամը եկան գերեզմանը տեսնելու: Եվ ահա մեծ երկրաշարժ եղավ, որովհետև Տիրոջ հրեշտակը երկնքից իջնելով՝ մոտեցավ, դունից վեմը մի կողմ գլորեց ու նստեց նրա վրա: Նրա տեսքը փայլակի նման էր, ու նրա զգեստը՝ սպիտակ, ինչպես ձյունը: Նրա ահից պահապանները խռովվեցին և մեռելների պես եղան: Հրեշտակը խռուեց ու կանանց ասաց. «Դուք մի՛ վախեցեք, գիտեմ, որ վնասում եք Հիսուսին, որ խաչվեց. այստեղ չէ նա, քանի որ հարություն առավ, ինչպես ինքն ասել էր. եկե՛ք, տեսե՛ք այն տեղը, ուր պառկած էր: Եվ իսկույն գնացե՛ք, ասացե՛ք նրա

աշակերտներին, թե Հարություն առավ. և ահա Նա ձեզնից առաջ գնում է Գալիլիա. այստեղ Նրան կտեսնեք: Եվ իսկույն, ահով և մեծ ուրախությամբ, գերեզմանից դուրս ելնելով՝ վազեցին աշակերտներին պատմելու: Եվ Հանկարծ Հիսուս Նրանց դիմացը ելավ ու ասաց՝ ողջո՞ւյն ձեզ. և նրանք մտենալով՝ Նրա ոտքերին փարվեցին ու երկրպագեցին Նրան: Այն ժամանակ Հիսուս Նրանց ասաց. «Մի՛ վախեցեք. գնացե՛ք ասացե՛ք Իմ եղբայրներին, որ գնան Գալիլիա և այնտեղ Խնձ տեսնեն» (Մատթ. հԸ 1-10):

Իսկ Մարկոսը պատմում է.

«Եվ երբ շաբաթն անցավ, Մարիամ Մագդաղենացին, Հակոբոսի մայր Մարիամը և Սաղոմեն գնացին խնկի պատրաստություն տեսան, որպեսզի գան և օծեն Նրա Մարմինը: Եվ կիրակի օրը, առավոտյան, արևածագին եկան գերեզման: Եվ ասում էին միմյանց. «Քարը գերեզմանի դռնից մեզ համար ո՞վ պիտի գլորի»: Եվ նայեցին ու տեսան, որ գերեզմանից քարը գլորված էր. և այն շատ մեծ էր: Եվ ներս, գերեզման մտնելով՝ տեսան մի երիտասարդի, որ նստած էր աջ կողմը՝ սպիտակ պատմուճան հագած. և զարհութեցին: Եվ նա ասաց Նրանց. «Մի՛ վախեցեք, դուք Հիսուսին եք փնտրում՝ խաչված Նազովեցուն. Նա Հարություն առավ, այստեղ չէ: Ահավասիկ այն տեղը, ուր Նրան դրել էին: Բայց գնացե՛ք ասացե՛ք Նրա աշակերտներին և Պետրոսին, թե ահա Նա ձեզնից առաջ գնում է Գալիլիա. այնտեղ կտեսնեք Նրան, ինչպես ձեզ ասել էր: Եվ երբ այս լսեցին, ելան ու փախան գերեզմանից, քանի որ սարսափահար էին եղել. և ոչ ոքի բան չասացին, որովհետև վախենում էին» (Մարկ. ԺԶ 1-8):

Հուկասն ասում է.

«Եվ Հովսեփի հետևից գնում էին կանայք, որոնք Գալիլիայից էին եկել Հիսուսի հետ. Նրանք տեսան գերեզմանը, և թե ինչպես Նրա մարմինն այնտեղ դրվեց: Վերադարձան, խնկեր և յուղեր պատրաստեցին ու շաբաթ օրը, Օրենքի համաձայն, հանգիստ արեցին: Եվ կիրակի օրը, առավոտյան շատ վաղ, կանայք գերեզման են գնում՝ տանելով իրենց հետ պատրաստած խնկերը: Եվ քարը գերեզմանից գլորված գտան ու ներս մտնելով՝ Տեր Հիսուսի Մարմինը չգտան: Եվ մինչ նրանք զարմացած էին այդ բանի վրա, ահա լուսավոր զգեստներով երկու մարդիկ հասան նրանց մոտ: Եվ երբ կանայք զարհութեցին ու իրենց երեսը գետին խոնարհեցրին, մարդիկ ասացին. «Ինչո՞ւ Ողջին մեռելների մեջ եք փնտրում: Այստեղ չէ, այլ հարյավ: Հիշեցե՛ք՝ ինչպես խոսեց Նա ձեզ հետ, երբ Գալիլիայում էր. ասում էր, թե պետք է, որ Մարդու Որդին մեղավոր մարդկանց ձեռքը մատնվի, խաչվի և երրորդ օրը Հարություն առնի»: Եվ նրանք Հիշեցին Նրա խոսքերը: Եվ վերադարձան ու պատմեցին այս ամենը տասնմեկին և բոլոր մյոււներին» (Ղուկ. ԻԳ 55, 56, ԻԴ 1-9):

Իսկ Հովհաննեսը հայտնում է հետևյալը.

«Կիրակի օրը Մարիամ Մագդաղենացին առավոտյան արշալույսին գերեզման է գալիս և տեսնում է, որ քարը գերեզմանի դռնից վերցված է։ Ապա վազում է և գալիս Սիմոն Պետրոսի և այն մյուս աշակերտի մոտ, որին Հիսուս սիրում էր, ու նրանց ասում է. «Տիրոջը վերցրել են գերեզմանից, և չգիտենք, թե ո՞ւր են դրել նրան» (Յովհ. Ի 1-2):

Հովհաննեսն այլ կանանց չի հիշատակում Մարիամի հետ։ Այստեղ թվում է, թե անհամաձայնություն կա ավետարանիչների խոսքերում, քանի որ Մարկոսն ասում է, թե երբ կանայք մտան գերեզման, այնտեղ աջ կողմում սպիտակազգեստ երիտասարդ տեսան, իսկ Ղուկասն ասում է, որ երկու լուսազգեստ այրեր եկան դրսից, քանի դեռ նրանք գերեզմանում էին։ Իսկ Մատթեոսն ու Հովհաննեսն ասում են, թե կանայք հրեշտակներ են տեսնում, ըստ որում Մատթեոսը մի հրեշտակ է ասում և այն էլ՝ երկնքից իջած, իսկ Հովհաննեսը՝ երկու հրեշտակ՝ գերեզմանում նստած, և հրեշտակների մի մասը մարդու կերպարանքով էին, իսկ մյուսները՝ ոգեղեն։ Թեեւ կանայք այլ կայլ կերպարանքներով նկարագրեցին հրեշտակներին, սակայն նրանց խոսքերը նույնն էին, քանի որ բոլորն էլ հայտնեցին, որ Տերը հարություն է առել, և իրենք եկել են առաքյալներին հայտնելու, որ գնան Գալիլիա և այնտեղ տեսնեն Տիրոջը։

Արդ՝ փորձենք լուծել ծագած խնդիրը։ Իրականում կանայք չորս տարբեր խմբերով, չորս անդամ գնացին գերեզման, և յուրաքանչյուր խումբը մի տեսարան տեսավ, և Հոգին այնպես տնօրինեց, որ ավետարանիչներից յուրաքանչյուրը կանանց մի այցելության՝ հրեշտակների տեսության և ասված խոսքերի մասին գրի։ Մատթեոսը գրեց առաջին այցելության մասին, և դա հայտնի է այն խոսքից, որ ասաց. «Նաբաթ օրվա երեկոյան, երբ կիրակին լուսանում էր»։ Սա նշանակում է երեկոյի և առավոտի միջին պահը։ Այդ պահին վեմը տակավին գերեզմանի վրա էր, և հրեշտակը նրանց աչքի առջև այն գլորեց։ Այդ պատճառով էլ մյուս կանայք վեմը արդեն գլորված տեսան։

Կանանց երկրորդ այցելության մասին պատմում է Ղուկասը. «Կիրակի օրը, առավոտյան շատ վաղ, կանայք գերեզման եկան»։ Իսկ երրորդ այցելության մասին Մարկոսն է պատմում, ինչը ավելի ուշ կատարվեց, քան Ղուկասի պատմածը, քանի որ ասում է. «Կիրակի օրը, առավոտյան, արևածագին եկան գերեզման»։ Ղուկասն ասաց առավոտյան շատ վաղ, իսկ Մարկոսը՝ արևածագի մոտ։

Հարց. – Իսկ ինչո՞ւ է Մարկոսն ասում, որ կանայք անհանգստանում էին, թե գերեզմանը ծածկող քարը ով է տեղից շարժելու, եթե առաջին այցելության ժամանակ, ըստ Մատթեոսի, քարը նրանց աչքի առջև

գլորվեց, իսկ երկրորդ անգամ, ըստ Ղուկասի, կանայք քարը արդեն գլորված գտան:

Պատասխան. – Դա պետք է այսպես հասկանալ. յուղաբերները ոչ միայն նրանք էին, որոնց անունները գրվեցին Ավետարանում, այլ բացի նրանցից, կային նաև ուրիշները: Ուստի հայտնի է, որ այդպես ասողները նրանք չէին, ովքեր եկել էին առաջին և երկրորդ անգամները:

Չորրորդ այցելության մասին պատմում է Հովհաննեսը՝ հիշատակելով միայն Մարիամ Մագդաղենացուն: Մարկոսն ասում է, որ յուղաբերները գերեզման եկան արևածագին, իսկ Հովհաննեսն ասում է, թե՝ արշալույսին, որն ավելի ուշ է լինում, քան արևածագը:

Հրեշտակները կանանց բոլոր խմբերին էլ տվեցին Տիրոջ հարության ավետիսը: Կանանցից մի քանիսը ետղարձի ճանապարհին Տիրոջը հանդիպեցին, Նրան ողջունեցին, երկրպագեցին և գնացին ու հայտնեցին առաքյալներին, ովքեր, սակայն, կանանց խոսքերը ցնորամտություն համարեցին: Կանանց մի մասը նրանց ասում էր, թե Տիրոջը տեսել են ու երկրպագել, իսկ մի մասն էլ, թե հրեշտակներից լսել են, որ Տերը հարություն է առել: Խմբերից մեկն էլ, որոնց մասին Մարկոսն է գրում, ոչ մեկին ոչինչ չասաց, քանզի երբ հրեշտակից լսեցին հարության լուրը, փախան, որովհետև սարսափահար էին եղել: Քանի որ կանայք տարբեր բան էին ասում, այդ պատճառով էլ նրանց լսողները չէին հավատում:

Չորրորդ անգամ գերեզման այցելողը Մարիամ Մագդաղենացին էր, ով տեսնելով բաց և թափուր գերեզմանը՝ ենթադրեց, որ ինչ-որ մեկը վերցրել է Տիրոջ Մարմինն ու տարել մեկ այլ տեղ: Այդ պատճառով էլ եկավ խոհեմ ու մեծ մարդու՝ առաքյալների գլխավորի՝ Պետրոսի, և Տիրոջ միելի աշակերտի՝ Հովհաննեսի մոտ, նրանցից իմանալու կատարվածի մասին:

Բայց այստեղ պետք է պարզել հետեյալ հարցը: Մատթեոսը գրում է, որ Մարիամ Մագդաղենացին և մյուս Մարիամը, ով Հակոբի մայրն էր, եկան գերեզման, ուր հրեշտակը նրանց աչքի առջև գլորեց գերեզմանը ծածկող քարը և ասաց, որ նա, Ում փնտրում են, այդտեղ չէ, այլ հարություն է առել: Ապա հրեշտակը կանանց հանձնարարեց, որպեսզի նրանք գնան ու պատմեն աշակերտներին, որ Տերը հարություն է առել և գնում է Գալիլիա, և որ աշակերտները պետք է այնտեղ գնան և հանդիպեն Տիրոջը: Մատթեոսը ասում է, որ կանայք մեծ ահով և ուրախությամբ գերեզմանից դուրս գալով՝ վազում են աշակերտներին պատմելու հարության լուրը, երբ հանկարծ ճանապարհին նրանց ընդառաջ է ելնում Հիսուս ու ասում՝ «Ողջո՞ւյն ձեզ». և կանայք մոտենալով՝ փարփում են նրա ոտքերին ու երկրպագում: Այդ ժամանակ Հիսուս նրանց ասում է. «Մի՛ վախեցեք.

գնացե՛ք, ասացե՛ք իմ եղբայրներին, որ գնան Գալիլիա և այնտեղ ինձ տեսնեն»:

Հարց. — Արդ՝ եթե, ըստ Մատթեոսի, Մագդաղենացին այդ ժամանակ տեսավ Տիրոջը և խոսեց նրա հետ, և դա առաջին այցելությունն էր գերեզման, ապա ինչո՞ւ է այժմ Հովհաննեսը կրկին պատմում նրա մասին, այն էլ չորրորդ այցելության ժամանակ: Քանզի ըստ Հովհաննեսի՝ Մագդաղենացին կարծես առաջին անգամ է գալիս գերեզման և բանից անտեղյակ կարծում է, թե Տիրոջ Մարմինը վերցրել են:

Պատասխան. — Սա այսպես պետք է հասկանալ: Ավետարանիչը միայն Մարիամ Մագդաղենացու և Հակոբի մայր Մարիամի անունները հիշատակեց, սակայն նրանց հետ ուրիշներն էլ կային: Երբ նրանք հրեշտակից հրաման ստացան գնալ ու պատմել աշակերտներին եղելությունը, նրանց մի մասը գնաց, իսկ Մագդաղենացին, ում սերն առավել ջերմ էր Հիսուսի հանդեպ, չգնաց մյուս կանանց հետ, այլ մնաց տեղում ու շրջում էր գերեզմանի մոտ,՝ նոր խոսքեր լսելու կամ Հարուցյալին տեսնելու հույսով: Իսկ մյուսները ճանապարհին տեսնում են Տիրոջը և երկրպագում, և Մարիամը նրանց հետ չի լինում, սակայն ո՛չ որպես անարժան մեկը, ով տեսության չարժանացավ, այլ որպեսզի արժանանա բարձրագույն տեսությանը:

Թափորի գերեաւանը

Պետրոսն ու Հովհաննեսը գնացին գերեզման: Դուկասը գրում է.

«Պետրոսը վեր կացավ և վազեց դեպի գերեզման, նայեց ու տեսավ, որ կտավները միայն կային: Եվ գնաց՝ մտքում զարմացած, թե ի՞նչ էր եղել» (Ղուկ. ԻԴ 12):

Իսկ Հովհաննեսը գրում է, որ ինքը Պետրոսից առաջ անցավ ու առաջինը գերեզման հասավ: Հովհաննեսի առաջ անցնելը և Պետրոսի ետ ընկնելը պատճառներ ունեն: Նախ՝ Հովհաննեսը երիտասարդ էր և ուժեղ, իսկ Պետրոսը՝ մեծահասակ: Դարձյալ՝ Պետրոսն իր ուրացության պատճառով երկյուղած՝ դանդաղ էր գնում, իսկ Հովհաննեսն իր աներկբա սիրով՝ արագ: Եվ թեպետ Հովհաննեսը չուտ է հասնում գերեզման, սակայն ներս չի մտնում, թույլ տալով որ առաքյալների գլխավորն առաջինը մտնի: Պետրոսը ներս մտնելով տեսնում է, որ այնտեղ կտավներ կան, և վարշամակը, որ Հիսուսի գլխին էր, մյուս կտավների հետ չէ, այլ առանձին ծալված՝ մի կողմ է դրված: Դա հետեւյալ խորհուրդն ունի: Աստվածությունը գլխի մասն է համարվում, իսկ մարդկությունը՝ մարմնի, դրա համար էլ գլուխը ծածկող վարշամակը ծալված էր՝ խորհրդանշելով Աստծու անտեսանելիությունը և անհասությունը, այսինքն՝ նրա

Աստվածությունն ամբողջովին ծածկված և զատված է եղականներից՝ հրեշտակներից և մարդկանցից: Իսկ Մարմնի պատանքը, որ ծալված չէր և պարզված էլ չէր, խորհրդանշում է նրա մարդկային տնօրինությունը, որը չնայած մարմնով երևում էր, սակայն դրա խորհուրդն անիմանալի է մնում բոլոր արարածների համար:

Պատանքը նաև Եկեղեցու օրինակն է, քանի որ մարմնի գգեստ է, իսկ Եկեղեցին Քրիստոսի Մարմինն է: Իսկ վարշամակը, որ գլխի ծածկոց է, օրինակն է Քրիստոսի, քանզի Քրիստոս Եկեղեցու գլուխն է՝ ծածկված Հոր աջ կողմում՝ ինչպես ծալված վարշամակը: Եվ իր երկրորդ գալստյամբ Տերը միանալու է իր անդամների հետ, այսինքն՝ Եկեղեցու:

Հովհաննեսը գերեզման մտնելով տեսնում է նույնը, ինչ որ Պետրոսը տեսավ, ու հասկանում, որ Տերը հարություն է առել, և երկուսն էլ հավատում են Տիրոջ ճշմարիտ հարությանը: Հովհաննեսը հասկանում է, որ զմռաված կտավները առանց պատովելու չեն բաժանվում մարմնից, և եթե մեկը գողանար Մարմինը, ապա կտավը այդպես խնամքով չէր ծալի: Այդ պատճառով էլ աշակերտները կատարվածը բացատրեցին հարության զորությամբ ու աներկբայորեն հավատացին:

Հիսուս երեහու և Մարիամ Մագդաղենաթուն

(Հովհ. Ի 11-18)

Աշակերտները հարության լուրը Մարիամին չհայտնեցին, կարծելով որ նա չի հասկանա հարության մեծ խորհուրդը, այլ գնացին մյուս աշակերտների մոտ, որպեսզի նրանց հայտնեն իրենց տեսածը և միասին խորհեն դրա շուրջ:

Իսկ Մագդաղենացին կանգնում է գերեզմանից դուրս ու անմիտիթար լացում՝ ոչ մեկից սփոփանք չգտնելով: Եվ մինչ լալիս էր՝ խոնարհվելով նայում է գերեզմանի մեջ և այնտեղ տեսնում երկու սպիտակագլեստ հրեշտակների, որոնցից մեկը նստած էր գերեզմանի սնարին, իսկ մյուսը՝ ոտքերի մոտ, այնտեղ, ուր Հիսուսի Մարմինն է եղել: Անմարմին զինվորները՝ հրեշտակները, մինչև այսօր պահպանում են Տիրոջ գերեզմանը, երբեք չեն հեռանում սուրբ գերեզմանից, և այդպես պիտի լինի մինչև աշխարհի վախճանը:

Հրեշտակները անխոս, միայն իրենց տեսքով, Մարիամին հայտնում էին Տիրոջ հարության մասին՝ կարծես ասելով. «Ո՛վ կին, ինչո՞ւ ես տրտմել և անմիտիթար լալիս՝ տեսնելով մեզ ուրախության զգեստներով պայծառացած»: Նրանք մտերմաբար դիմում են Մարիամին՝ ասելով. «Ո՛վ կին, ինչո՞ւ ես լալիս»:

Մարիամը համարձակություն ստանալով՝ արտասվալից հայտնում է պատճառը. «Որովհետև իմ Տիրոջը գերեզմանից վերցրել են, և չփառեմ՝ Նրան ուր են դրել»: Այս ասելով նրանցից սփոփանք է ակնկալում: Եվ մինչ պատասխան է սպասում, հանկարծ տեսնում է, որ Հրեշտակները, որոնց հետ խոսում էր, արագորեն ու մեծ ահով ոտքի կանգնեցին, ինչպես ծառաներն են կանգնում իրենց թագավորի առջև: Մարիամը հասկանում է, որ Հրեշտակները մի մեծ ու զարմանահրաշ իրադարձության ականատեսն են դարձել, և ետ է նայում, տեսնելու համար, թե ինչ է դա, որից երկնավորները գարհուրում են: Բայց ետ նայելով՝ ոչ մի սքանչելի բան չտեսավ. չնայած որ տեսավ Նրան, Ում փափագում էր տեսնել, սակայն չճանաչեց և կարծեց, թե պարտիզանն է:

Հիսուս նրան ասաց. «Ո՞վ կին, ինչո՞ւ ես լալիս, ո՞ւմ ես փնտրում»: Եվ Մարիամը հարցրեց նրան. «Տե՛ր, եթե դու ես նրան վերցրել և չես կամենում, որ այստեղ գերեզման լինի, ասա՛ ինձ՝ ո՞ւր ես դրել Նրան, որպեսզի ես վերցնեմ և մեկ այլ տեղ Նրան տեղափոխեմ, որպեսզի դու անհոգ լինես քո պարտեզի համար»:

Ինչո՞ւ Մարիամը չճանաչեց Տիրոջը: Որովհետև Տերը խոսեց նրա հետ անսովոր և օտար բարբառով, բացի այդ՝ նրա միտքը զբաղված էր այն հարցով, թե ո՞վ է վերցրել Տիրող Մարմինը:

Ապա Տերը խոսում է Մարիամի համար հասկանալի բարբառով և ասում. «Մարիամ», ինչով և հայտնում է իրեն: Եվ Մարիամը Նրան պատասխանում է երրայեցերեն. «Ուաբբունի!», որ թարգմանվում է՝ վարդապետ:

Մարիամն իր անչափ սիրուց մղված՝ կամենում էր մոտենալ Տիրոջը, գրկել ու համբուրել, սակայն Տերը նրան արգելում է՝ ասելով. «Ինձ մի՛ մոտեցիր»: Արգելելու պատճառը, ըստ որոշ վարդապետների, կայանում է հետեւյալում. երբ կինը լսեց Հրեշտակներից, թե Տերը հարություն է առել, չհավատաց, իսկ նրա ընկերուհիները հավատացին ու ետղարձի ճանապարհին տեսնելով Տիրոջը՝ արժանացան Նրան երկրպագելուն և ոտքերը համբուրելուն: Ասում են նաև, որ Տերը Մագդեղենացուն արգելեց իրեն մոտենալ նրա թերահավատության պատճառով, քանի որ մինչ այժմ անշունչ մեռել էր փնտրում:

Ոմանք էլ ասում են, թե Մարիամը մարդկորեն էր ցանկանում հարցնել և իմանալ խաչի, դժոխքի ու հարության խորհրդի մասին, իսկ դա հասկանալու համար կատարյալ միտք էր պետք: Եթե Տերը նրան պատմեր, ապա նա անկարող կլիներ ընդունել անհաս խորհուրդը: Քանի որ առաքյալներին ասաց. «Ինչ որ ես անում եմ, դու հիմա չես իմանում, բայց հետո կիմանաս» (Յովհ. ԺԳ 7): Ասաց նաև՝ «Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին,

Որին Հայրը կուղարկի Իմ անունով, Նա ձեզ ամեն բան կուսուցանի և ձեզ կհիշեցնի այն ամենը, ինչ Ես ասացի ձեզ» (Յովի. ԺԴ 26): Տերը դա նկատի ունենալով՝ ասաց. «Ինձ մի՛ մոտեցիր, քանի որ դեռ Հորս մոտ չեմ բարձրացել»: Այսինքն՝ թեպետ անմեկնելի եմ Հորից ըստ բնության, արարչության և զորության, բայց չարչարված Մարմնովս դեռևս դեպի Նա չեմ ելել, և երբ ելնեմ՝ համագոր, համագոր և անճառելի Հոգին պիտի պարգևեմ աշակերտներիս, Որով զորանալով՝ նրանք ընդունակ կլինեն անճառելի խորհուրդներ քննելու:

Ոմանք էլ ասում են, որ Մարիամը դեռ չէր մկրտվել, ուստի և չէր կարող մոտենալ Նրան: Տիրոջ Մարմինը դժոխքի առաջին Պառզեն էր, և մեր Տերն իբրև նոր Քահանա զգուշությամբ պահում էր այն ամեն հպումներից, որպեսզի հանձնի այն ձեռքերին, որոնք կարող են ընդունել այդպիսի Պատարագը:

Դարձյալ՝ Մարիամը խոնարհությամբ չէր մոտենում Նրան, ինչպես մյուս կանայք, ովքեր Նրա ոտքերը համբուրեցին, այլ ցանկացավ համբուրել Նրա դեմքը, և Տերը, կամենալով Նրան խոնարհություն ուսուցանել, արգելեց:

«Գնա՛ դու Իմ եղբայրների մոտ ու նրանց ասա՛, որ Ես բարձրանում եմ դեպի Իմ Հայրը և ձեր Հայրը, դեպի Իմ Աստվածը և ձեր Աստվածը» (Յովի. Ի 19):

Նախկինում Տերն իր ընտրյալներին ծառա էր կոչում՝ ասելով. «Մի՞թե Ես Իմ ծառա Աբրահամից գաղտնի պիտի պահեմ այն, ինչ անելու եմ» (Ծննդ. ԺԸ 17), նաև՝ «Իմ ծառա Մովսեսը վախճանվեց» (Յեսու Ա 2), կամ՝ «Իմ ծառա ճշմարիտ բան չասացիք, ինչպես Իմ ծառա Հոբը» (Յոթ ԽԲ 7), իսկ ճիմա իր աշակերտներին եղբայրներ է անվանում:

Իսկ ինչո՞ւ է աշակերտներին եղբայր կոչում: Որովհետև աշակերտները իր ձերբակալության ժամին փախան, և Պետրոսն էլ ուրացավ իրեն, այդ պատճառով էլ այդպիս է անվանում, որպեսզի չկարծեն, թե ով ունի իրենց նկատմամբ:

Իսկ ասելով՝ «Դեպի Իմ Հայրը և ձեր Հայրը, դեպի Իմ Աստվածը և ձեր Աստվածը», հայտնում է Հայրության և Աստվածության զանազանությունը իր և իր աշակերտների միջև: Քանի որ, եթե ասեր՝ Իմ և ձեր Հոր մոտ, և՝ Իմ և ձեր Աստծու մոտ, դրանով կհավասարեցներ իրեն աշակերտների հետ: Իսկ քանի որ ասաց՝ Իմ Հայրը և ձեր Հայրը, դրանով հայտնեց, որ այլ է Հայրն իր համար և այլ՝ նրանց, և այլ օրինակով է Աստված իր համար և այլ՝ նրանց: Քանի որ իր համար բնությամբ է Հայր, և ինքը Նրա էությունից անեղապես է ծնված, իսկ նրանց համար՝ չնորհով, ըստ երկրորդ արարչագործության՝ Մկրտության ավագանից Հոգով վերստին

ծնվելով և Աստծուն որդեգրվելով։ Այդպես և նրանց Աստվածն է բնությամբ, ըստ արարչության, քանի որ Աստված արարչական կոչում է, իսկ իր համար՝ շնորհով, մարդանալու պատճառով։ Քանզի ըստ Աստվածության բնության՝ Հայրը նրա Աստվածը չէ, քանի որ ինքն արարած չէ։ Դրա համար ասաց՝ իմ Հայրը և ձեր Հայրը, իմ Աստվածը և ձեր Աստվածը։

Դարձյալ՝ Քրիստոսի համար Հայր է բնությամբ և Աստված՝ հավասարությամբ, իսկ մեզ համար՝ Հայր՝ կոչմամբ և Աստված՝ բնությամբ։

Հարց. — Ինչո՞ւ հրեշտակներն այսօր երևացին գերեզմանի մոտ, իսկ նախորդ օրը չերևացին Գողգոթայում։

Պատասխան. — Քանի որ Հայրն արգելեց հրեշտակներին տեսնել իրենց Տիրոջն անարգված, որպեսզի իրենց թևերի շարժումով կրակ չտեղան ու չայրեն խաչողներին և դրանով խափանեն խաչելությունը։

Քանզի, եթե Ղովտի անարգանքի պատճառով հուր իջեցրին Սոդոմի վրա և այրեցին այն (տես Ծննդ. ԺԹ 23), ապա որչափ ավելի կայրեին տիրասպան երուսաղեմը, եթե տեսնեին Տիրոջն անարգված։ Այդ պատճառով էլ Հայրը հարության օրը միայն հրամայեց հրեշտակներին՝ իջնել և մեծարել Տիրոջը։

ՀԱՅԻՒԹՈՒԹ ՀԱՐՈՒՅՎԱԼ ՏԻՐՈԶ ՀԵՏ

Աշակերտները գնում են Գալիլիա դեպի այն լեռը, ուր Հիսուս իրենց հետ ժամադրվել էր: Գալիլիա ասելով պետք է հասկանալ ոչ թե այն գավառը, որը հեռու էր Երուսաղեմից Երկու-Երեք օրվա ճանապարհով, այլ Զիթենյաց լեռան վրա գտնվող այն վայրը, որտեղից Տերը Երկինք¹ Համբարձվեց: Իսկ «ժամադրվել» ասելով այն է հայտնում, ինչ Հինգչարթի Երեկոյան Տերն ասաց աշակերտներին. «Բայց Իմ հարությունից հետո ձեզնից առաջ Գալիլիա պիտի գնամ» (Մարկ. ԺԴ 28): Այդ մասին նաև Հրեշտակները յուղաբերների միջոցով հայտնեցին առաքյալներին, որպեսզի այնտեղ գնան և տեսնեն Տիրոջը: Աշակերտների հանդիպումը Տիրոջ հետ եղավ նույն կիրակի օրը՝ Երեկոյան, երբ Տերը հարություն առավ:

Նույն օրը աշակերտներից Երկուսը գնացին մի գյուղ, որի անունն է մմավուս էր (տես Ղուկ. ԻԴ 13), և ճանապարհին նրանց հանդիպեց Հիսուս ու շատ բան պատմեց նրանց Իր չարչարանքների մասին: Եվ երբ սեղան նստեցին, Տերը վերցրեց հացը, օրհնեց, բեկանեց և տվեց նրանց, և նրանք կարծես քնից արթնանալով՝ ճանաչեցին նրան, իսկ նա աներևութացավ: Եվ նրանք անմիջապես վերադարձան Երուսաղեմ և տասնմեկ աշակերտներին գտան «Գալիլիայում»: Նրանք եկան պատմելու տասնմեկին, որ Տերը հարություն է առել, և իրենք տեսել են նրան, և նա շատ բաներ է խոսել իրենց հետ, և հացը բեկանելու ժամանակ ճանաչել են Տիրոջը: Իսկ աշակերտները հաստատեցին, որ Տերը ճշմարտապես հարություն է առել և երևացել Պետրոսին:

Հարց. – Իսկ երբ և որտե՞ղ Տերը երևաց Պետրոսին:

Պատասխան. – Երբ Պետրոսն ու Հովհաննեսը վերադառնում էին գերեզմանից: Ինչպես գերեզման գնալիս Հովհաննեսն առաջ էր անցնել Պետրոսից, այդպես էլ վերադարձի ճանապարհին եղավ: Եվ Տերը, ճանապարհին երևալով Պետրոսին, սիրով ողջույն տվեց նրան, որպեսզի վերացնի այն տրամությունը, որը նրան պատել էր ուրացության պատճառով:

ՀԻՍՈՒ ԵՐԵՒԹՈՒԹ Է ԱՇՎԱԵՐՏԱԵՐԻՆ

«Նույն կիրակի օրվա Երեկոյան աշակերտները հավաքված էին մի տան մեջ, որի դռները փակված էին հրեաների վախի պատճառով: Հիսուս եկավ,

¹ Վարդապետների մի մասն այսպես չեն ասում, այլ այս դեպքում նկատի ունեն Գալիլիայում գտնվող թաքոր լեռը: Իսկ Գրիգոր Վարդապետն ասում է, որ դա հնարավոր չէ հեռավորության պատճառով, քանի որ Երեք օրվա ճանապարհ է մինչև այդ լեռը, և աշակերտները մինչև Երեկո չեն կարող այնտեղ հասնել:

կանգնեց նրանց մեջտեղն ու նրանց ասաց. «Խաղաղություն ձեզ»: Այս ասելով՝ նրանց ցույց տվեց իր ձեռքերը և կողը. և աշակերտներն ուրախացան, երբ տեսան Տիրոջը» (Յովհ. ի 19:20):

«Երբ նրան տեսան, երկրպագեցին նրան, իսկ ոմանք երկմտեցին» (Մատթ. ի 2 17):

Երբ Տերը երևում է աշակերտներին արփիափայլ կերպարանքով, ճաշաշողներն իսկույն երկրպագում են, իսկ ովքեր չեն ճանաչում, երկմտում են: Պետրոսն ու Գերեղեռսի որդիները, ովքեր Նրա հետ Թաքոր լեռան վրա էին եղել և տեսել նրան պայծառակերպված, իսկույն ճանաչում են նրա Աստվածության անճառելի փառքը, երկրպագում և դրանով երկմտածների կասկածը փարատում՝ ըստ այն խոսքի, որ Տերն ասաց Պետրոսին. «Բայց Ես աղոթեցի քեզ համար, որպեսզի քո հալատը չպակասի, և դու, երբ վերադառնաս ինձ, հաստատես քո եղբայրներին» (Ղուկ. ի Բ 32): Երբ իջնում էին Թաքոր լեռից, Տերը նրանց պատվիրեց ու ասաց. «Այդ տեսիլքը մարդու չասեք, մինչև որ Մարդու Որդին մեռելներից հարություն առնի» (Մատթ. ժ 9), ինչն այսօր տեսան կատարված և հիշեցին Տիրոջ ասածը:

Դուկասն ասում է, որ երկմտողները կարծում էին, թե ոգի է իրենց տեսածը, այդ պատճառով էլ Տերը նրանց ասաց.

«Ինչո՞ւ եք խոռվված, և ինչո՞ւ ձեր սրտերում կասկածներ են ծագում. տեսե՞ք իմ ձեռքերն ու ոտքերը, որովհետև նույն ինքը Ես եմ. շոշափեցի՞ք ինձ և տեսե՞ք, որովհետև ոգին մարմին և ոսկորներ չունի. ինչպես տեսնում եք, Ես ունեմ» (Ղուկ. ի Դ 38-39):

Այս ասելով՝ նրանց ցույց է տալիս տեղից և բևեռներից խոցված իր Մարմնի մասերը, որպեսզի իր փոխարեն մի այլ մարմին չկարծեն խաչի վրա չարչարված և մեռած:

«Եվ Հիսուս մոտենալով՝ խոսեց նրանց հետ ու ասաց. «Ինձ է տրված ամեն իշխանություն երկնքում և երկրի վրա» (Մատթ. ի Ա 18):

Ինչո՞ւ է իշխանություն ստանալու մասին ասում Նա, Ով փառքերի թագավորն է, զորության Տերը և երկնքի ու երկրի Աստվածը:

Որովհետև ճշմարտապես մարդացավ և Աստվածությամբ ու մարդկությամբ թագավորելու է բոլորիս վրա: Քանզի մարմնով զգեստավորվելով՝ կատարեց ամբողջ արդարությունը և մեղանչական մարմինների փոխարեն իր անմեղ Մարմինը տվեց մահվան: Արդարն անարդարների համար մահացավ՝ նրանց ազատելով մահվան պարտքից: Եվ այս բոլորի համար Հորից տնօրինաբար նրան իշխանություն է արվում երկնքի ու երկրի վրա՝ նաև ըստ մարդկության: Այսինքն՝ ճշմարտապես ճանաչեցրեց երկրավորներին ու երկնավորներին, որ չարը զրկվեց իշխանությունից: Հայտնի է, որ չարը երկնքում իշխանություն չուներ, և կարծիք կար, թե երկրի վրա

իշխանություն ունի: Իսկ Տիրոջ երկնավոր թագավորության մասին հայտնի էր: Եվ այժմ, երբ չարը զրկվեց իր իշխանությունից, Տիրոջ իշխանությունը հայտնվում է նաև երկրում՝ իրավամբ ու արդարությամբ:

Այժմ Տերը ապստամբ բռնավորին հաղթելուց հետո, ինչպես հզոր թագավոր, առաքում է իր զորքերին՝ ավար վերցնելու պարտվածի ամբողջ ունեցվածքը և ասում. «Ինչպես Հայրն ինձ առաքեց պատերազմելու չարի գեմ, և ես կատարեցի Նրա կամքը՝ հաղթելով ապստամբ հսկային, այդպես և ես եմ Իմ զորավարներին խրախուսում ու քաջալերում, քանի որ բռնավորը պարտվեց: Գնացե՛ք, այսուհետեւ, ավար առեք նրա ամբողջ ստացվածքը (տե՛ս Սաղմ. Կէ 19), աշակերտ դարձրե՛ք բոլոր հեթանոսներին, որոնց վրա չարը տիրել էր բռնությամբ և դրոշմով կնքել իբրև իր սեփականություն՝ դնելով նրանց իր իշխանության տակ: Եվ Ավետարանի վարդապետությամբ ու Մկրտության ավագանով լվացեք նրանց վրայից չարի զարքելի կնիքը և դրոշմեցեք նրանց վրա Հոր, Որդու և Սուրբ Հոգու ձմարիտ դավանությունը»:

Արդարեւ այս մեծ տերությունն ու իշխանությունը, որ միշտ ուներ ըստ Աստվածության, այժմ ստուգապես ունի նաև ըստ մարդկության, այդ պատճառով էլ ասաց. «Գնացե՛ք ուրեմն, աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցե՛ք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով» (Սատթ. ԻԸ 19):

Այս մասին նաև Հովհաննեսն է ասում.

«Խաղաղություն ձեզ. ինչպես Իմ Հայրն ինձ ուղարկեց, Ես էլ ուղարկում եմ ձեզ»: Երբ այս ասաց, նրանց վրա փչեց և ասաց. «Առե՛ք Սուրբ Հոգին: Եթե մեկի մեղքերը ներեք, նրանց ներված կլինի. Եթե մեկի մեղքերը չներեք, ներված չի լինի» (Յովհ. Ի 21:23):

Դա այն փչումն էր, որի օրինակը կատարվեց արարչության օրերին՝ ըստ այս խոսքի. «Տեր Աստված մարդուն ստեղծեց երկրի հողից, նրա դեմքին կենդանության շունչ փչեց, և մարդը եղավ կենդանի հոգի» (Ծննդ. Բ 7): Որը հետո Աստված ետ վերցրեց մարդկանց մեղքերի պատճառով՝ ասելով. «Իմ Հոգին հավիտյան թող չմնա այդ մարդկանց մեջ, որովհետև նրանք մարմնավոր են» (Ծննդ. Զ 3): Եվ այն, ինչը հանցանքների պատճառով վերցվեց, այժմ դարձալ ետ չնորհվեց՝ արդարանալու պատճառով:

Արդարանալ ասելով պետք չէ այնպես հասկանալ, թե մարդիկ իրենց հանցանքների պատճառով չնորհներից մերկանալուց հետո իրենց արդարությամբ զգեստավորվեցին, այլ՝ մարդիկ զգեստավորվեցին Քրիստոսի արդարությամբ: Քանզի Արդարն ու Անմեղը, Ով մեղք չգործեց, և նենդություն չգտնվեց նրա բերանում, իր արդար Մարմինը տվեց մահվան՝

**պարտականներիս համար, ինչով էլ, ըստ առաքյալի (տես Հօռմ. Գ 21-30), մեզ
եղավ Աստծու արդարությունը:**

Այն ժամանակ բացեց նրանց մտքերը, որ հասկանան Գրքերը (Ղուկ. Ի՛
45) – Քանզի սա Հոգու շնորհն է՝ ըստ այս խոսքի. «Իսկ Միսիթարիչը՝
Սուրբ Հոգին, որին Հայրը կուղարկի Խմ անունով, Նա ձեզ ամեն բան կու-
սուցանի և ձեզ կհիշեցնի այն ամենը, ինչ Ես ասացի ձեզ» (Հովի. ԺԴ 26):

Եվ ոչ միայն դա, այլ նաև հույժ բարձրագույն պատիվ և իշխանու-
թյուն շնորհեց նրանց, որը հատուկ է Աստծուն, քանի որ ասաց. «Եթե
մեկի մեղքերը ներեք, նրանց ներված կլինի. Եթե մեկի մեղքերը չներեք,
ներված չի լինի» (Հովի. Ի 21-23): Եվ ո՞վ կարող է Աստծուց բացի մեղքերը
թողնել: Հարմար է այստեղ ասել այն խոսքը, թե. «Ճշմարիտ եմ
ասում ձեզ, թե ով հավատում է Ինձ, ինքն էլ կանի այն գործերը, որ Ես եմ
անում. և դրանցից ավելի մեծերը կանի, որովհետեւ Ես գնում եմ Հոր մոտ:
Եվ ինչ որ ուզեք Իմ անունով, այն կանեմ, որպեսզի Հայրը փառավորվի
Որդու միջոցով» (Հովի. ԺԴ 12-13): Ինչը շնորհեց Պետրոսին դավանության
համար (տես Սատթ. ԺՁ 19), նույն այժմ բոլոր առաքյալներին է շնորհում,
այսինքն՝ ներելն ու չներելը, կապելն ու արձակելը:

Ուսուցանեցե՛ք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատվիրեցի
(Սատթ. Ի՛ 20) – Երբ առաքյալներին ասաց, որ մկրտությամբ դրոշմեն աշա-
կերտածներին Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով, հետո մեկ խոսք էլ
ավելացրեց զորավոր պահպանության մասին, որպեսզի չարը, ըստ իր
սովորության, մեզ վերստին դեպի իրեն ձգելով՝ չկործանի: Զկա ավելի
զորավոր զենք ընդդեմ չարի, քան պահպանության պատվիրանը: Եվ
ինչպես չարի սկիզբն ու արմատն անհնագանդությունն է պատվիրանի
նկատմամբ, այդպես էլ բարու պատճառը պատվիրանի պահելն է:

Տերն իր բոլոր պատվիրանների պահպանության սկիզբը սերը համա-
րեց, քանզի ասաց, որ նրանից են կախված բոլոր օրենքներն ու մարգա-
րեռությունները: Իսկ սիրո պտուղը համարեց պատվիրանի պահումը՝
ասելով. «Եթե Ինձ սիրում եք, կպահեք Իմ պատվիրանները» (Հովի. ԺԴ 15),
նաև՝ «Եթե մեկը սիրում է Ինձ, Իմ խոսքը կպահի, և Իմ Հայրը նրան կսի-
րի. և Մենք նրա մոտ կգանք ու նրա մոտ կօթևանենք» (Հովի. ԺԴ 23), դարձ-
յալ՝ «Ես ո՞ւմ եմ նայելու, եթե ոչ հեղերին ու խոնարհներին և նրանց,
ովքեր դողում են Իմ խոսքից» (Եսայի ԿՁ 2): Հետևաբար՝ պատվիրանները
պահողը ոչ միայն սիրում է Աստծուն, այլև սիրվում է նրա կողմից, և
դառնում է նրա տունը, տեղը, հանգիստը և փառքի սրբության տաճարը:

«Եվ ահա Ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչև աշխարհի վախճանը»
(Սատթ. Ի՛ 20):

Նրանց, ում կենսաբեր պատվիրանների պահպանությունն ավանդեց, իրատեց նաև քաջ լինել հակառակորդի գեմ մղվող հոգեսոր պատերազմում: Առաքյալները ոչ միայն զորություն ստացան պատերազմելու հակառակորդի գեմ, այլև այն լուրը, որ Տերն իր ամբողջ զորությամբ նրանց հետ է լինելու: Հիսուս ոչ թե մարմնով է նրանց հետ լինելու, այլ՝ Հոգու միջոցով ներգործելով: Քանի որ Ինքն արդեն ամբողջացրել էր բոլոր տնօրինությունները, և այժմ փրկվածների հոգաբարձությունը փոխանցում է Փառակցին՝ Սուրբ Հոգուն, ըստ այս խոսքի. «Ես պիտի աղաչեմ Հորը, և Նա մի այլ Մխիթարիչ պիտի տա ձեզ, որպեսզի հավիտյան ձեզ հետ բնակվի ծշմարտության Հոգին» (Յովհ. ԺԴ 16-17):

Հարց. – Իսկ եթե մեկը տարակուսի, թե առաքյալները մահացան, սակայն ներկա հավիտականության վերջը գեռ չի եկել, այդ դեպքում որքանո՞վ է ճշմարիտ, թե Նա առաքյալների հետ է ամեն օր մինչեւ աշխարհի վախճանը:

Պատասխան. – Մեկ է Տերը, և մեկ՝ Նրա Եկեղեցին: Տերն ասաց Պետրոսին. «Դու վեմ ես, և այդ վեմի վրա պիտի շինեմ Իմ Եկեղեցին» (Մատթ. ԺԶ 18), իսկ Քրիստոս Գլուխն է Եկեղեցու (տես Եփես. Ե 23): Ինչպես և մարմինը մեկ է, իսկ անդամները՝ բազում, այդպես էլ բազում հավատացյալները մեկ են Քրիստոսով: Արդ՝ ինչ այն ժամանակ Տերն ասում էր առաքյալներին, նույնն այսօր նրանց միջոցով ասում է և բոլոր հավատացյալներին, որոնց գլուխն Ինքն է՝ ըստ այս խոսքի. «Սակայն միայն նրանց համար չէ, որ աղաչում եմ, այլև նրանց խոսքի միջոցով բոլոր Ինձ հավատացողների համար, որպեսզի ամենքը մի լինեն» (Յովհ. ԺԵ 20-21): Եպ, ճշմարտապես, Նա մեզ հետ է ամեն օր, և մենք չբաժանվենք Նրանից:

Քրիստոս Հարության մասին

Մարմնավոր հարությունը երկու կերպ է լինում՝ անկատար և կատարյալ: Անկատար է, երբ հարությունից հետո դարձյալ մահանում են, ինչպես այն վեց հոգին, ովքեր հարություն առան մինչեւ Քրիստոսի հարությունը: Եղիան մի հոգու հարություն տվեց, Եղիսեեն՝ երկու հոգու, և երեք հոգու էլ Քրիստոս հարություն տվեց, բայց դրանք բոլորն էլ մահան:

Իսկ եթե մեկը մի անգամ հարություն առնի և այլես չմահանա, ապա դա կատարյալ հարություն է: Այդպիսին է Քրիստոսի հարությունը, և այդպիսին է լինելու համընդհանուր հարությունը: Հարությունն այն է, երբ մեկը մահանում է մարմնով և ապա վերստին անմահություն է ստանում հավիտենական կյանքում:

Քրիստոսի հարությունը հաստատվում է վկայություններով: Նախ մարգարեներն են վկայում. «Երկրի վրա վերջ տվին Նրա կյանքին. Տերը կամենում է մաքրել Նրան վերքերից, ցույց տալ Նրան լույս» (Եսայի ԾԳ 9-11), սա հարության մասին է ասում: Նաև Դավիթն է ասում. «Մարմինն իմ կհանգստանա հույսով. քանզի դժոխքում չես թողնի Դու ինձ, և Քո Սրբին ապականություն տեսնել չես տա» (Սաղմ. ԺԵ 9-10):

Երկրորդ՝ օրինակներով է հաստատվում. ինչպես Հովնանը կետի փորում երեք օր ու գիշեր մնաց և գուրս եկավ, այդպես էլ Քրիստոս մեռավ և երեք օր հետո հարություն առավ: Դարձյալ՝ Մովսեսը տեսավ, որ մորենին այրվում է ու չի սպառվում, և դա խորհրդանշում է Քրիստոսի Մարմինը, որը մեռած էր գերեզմանում, սակայն կենդանի էր, ինչը ցույց տվեցին Նրա կողից բխած երկու վտակները՝ ջուրը և արյունը:

Երրորդ՝ Տերն ինքը վկայեց իր մասին՝ ասելով. «Պետք է, որ ինքը երուսաղեմ գնա, բազում չարչարանքներ կրի և անարդի քահանայապետերից, օրենսգետներից, ժողովրդի ծերերից, սպանվի և երրորդ օրը հարություն առնի» (Մատթ. ԺԶ 21):

Չորրորդ՝ հաստատվում է հրեշտակների խոսքերով, երբ նրանք յուղաքեր կանանց ասացին. «Դուք Հիսուսին եք փնտրում՝ խաչված նազով բեցուն. Նա հարություն առավ, այստեղ չէ» (Մարկ. ԺԶ 6):

Հինգերորդ՝ հաստատվում է հրեշտակների խոսքերով, ովքեր միաբան հարության լուրը տվեցին առաքյալներին:

Վեցերորդ՝ հաստատվում է գերեզմանը պահպանող զինվորների վկայությամբ: Քահանաները զինվորներին արծաթ տալով՝ իրենք էլ հաստատեցին հարությունը:

Յոթերորդ՝ Հաստատվում է այն սուրբ մեռեների կողմից, ովքեր Քրիստոսի հետ հարություն առան գերեզմաններից և մտան սուրբ քաղը (տե՛ս Մատթ. Իւ 52-53):

Ութերորդ՝ Հաստատվում է կնքված գերեզմանով և պատանքներով:

Իններորդ՝ Հաստատվում է ականատեսների վկայությամբ, ովքեր տեսան հարուցյալ Քրիստոսին մարմնավոր աչքերով:

Տերը հարության օրը հինգ անգամ երևաց յուրայիններին: Նախ երևաց կանանց, երբ նրանք վերադառնում էին գերեզմանից: Երկրորդ՝ Մարիամ Մագդաղենացուն: Տերը նախ կանանց երևաց, քանի որ մահաբեր գույժը կնոջ ձեռքով մտավ բնության մեջ, դրա համար էլ պետք էր, որ մարդկանց կյանքի փրկության ավետիսը նրանցով լիներ: Երրորդ՝ երևաց Պետրոսին, ինչպես Ղուկասն է պատմում: Եվ այս եղավ երկու պատճառով, մեկը՝ որպեսզի Պետրոսը չհուսահատվի ուրացության պատճառով, և երկրորդ՝ հայտնելու համար Աստվածային ողորմությունը մեղավորներին: Չորրորդ՝ երևաց երկու աշակերտներին, ովքեր գնում էին էմմավուս, ինչպես պատմում է Ղուկասը (տե՛ս Ղուկ. Իւ 13): Հինգերորդ՝ նույն երեկոյան փակ դռներով անցնելով՝ երևաց բոլոր աշակերտներին, բացի Թովմասից, և դա կատարվեց կամ «Գալիլիայում»՝ իրենց հավաքատեղիում, կամ Վերնատանը:

Տասներորդ՝ Հաստատում է հենց ինքը՝ Քրիստոս, քանի որ հարությունից հետո նա կերավ ու խմեց աշակերտների հետ, խոսեց նրանց հետ, առաքեց նրանց մկրտելու, օրհնեց նրանց ու նրանց առջև երկինք համբարձվեց:

Հարց. — Ո՞ր ժամին հարություն առավ Քրիստոս:

Պատասխան. — Քրիստոս հարություն առավ կիրակի օրը գիշերամիջին, որը Հաստատվում է բազում վկայություններով: Նախ Մատթեոսն է ասում. «Ծաբաթ օրվա երեկոյան, երբ կիրակին լուսանում էր» (տե՛ս Մատթ. Իւ 1), այսինքն՝ գիշերվա սկզբի ու վախճանի միջնամասում:

Երկրորդ՝ Դավիթը Տիրոջ անունից ասում է. «Կեսպիշերին ելնում էի գոհություն մատուցելու քեզ» (Սահմ. ճշԸ 62):

Երրորդ՝ Տերը գիշերամիջին ծնվեց կուսական արգանդից և նույն ժամին էլ հարություն առավ կույս գերեզմանից:

Չորրորդ՝ Տերը գիշերամիջին ծերբակալվեց ու կապվեց և նույն ժամին էլ արձակվեց մահվան կապանքներից ու հարություն առավ:

Հինգերորդ՝ Քրիստոսի հարությունը պատճառն է մեր հարության: Արդ՝ մեր հարությունը վերջին կիրակի օրն է լինելու՝ գիշերամիջին՝ ըստ այս խոսքի. «Եվ կեսպիշերին ձայն լսվեց՝ ահա՛ Փեսան դպիս է, նրան գիմավորելո՛ւ ելեք» (Մատթ. Իւ 6): Հետեաբար՝ Քրիստոսի հարությունը եղավ գիշերամիջին, կիրակի օրը: Այդ պատճառով էլ Ավագ շաբաթ օրը՝

երեկոյան՝ գիշերին մոտ, Զատկի ճրագալույցն ենք անում և պատարագ մատուցում:

Վեցերորդ՝ գիշերամիջին հրեշտակը հարվածեց եղիպտոսին, և գիշերամիջին Մովսեսը հսրայելի որդիներին հանեց եղիպտոսից, որն օրինակն է դժոխքի ավերման և հոգիների ազատության: Նույնպես և Քրիստոս գիշերամիջին հարվածեց ու կապեց սատանային, և այն ժամին, երբ Մովսեսը եղիպտոսից հանեց ժողովրդին, նույն ժամին Քրիստոս հարություն առավ մեռելներից, ազատեց հոգիներին չարության հրահլոց դժոխքից և իմանալի փարավոնի բռնությունից:

Քրիստոսի հարությունից հետո օրվա սկիզբը համարվեց կեսդիշերը, քանի որ հարությունից հետո խավարից գեպի լույս ենք գնում:

Հարց. – Քանի՞ ժամ մեռած մնաց Քրիստոս:

Պատասխան. – Վարդապետներն ասում են, որ Տերը երեսուներեք ու կես ժամ մնաց դժոխքում: Քանի որ ուրբաթ օրն իններորդ ժամին մեռավ և հոգով իջավ դժոխք, իսկ երեկոյան՝ արևամուտին, Մարմինն իջավ գերեզման: Արդ՝ չաբաթ գիշերը ցերեկվա հետ լինում է քսանչորս ժամ, վեց ժամ էլ կիրակի օրը՝ մինչև գիշերվա կեսը, ստացվում է երեսուն ժամ, և երեք ու կես ժամ էլ ուրբաթ օրը՝ ստացվում է երեսուներեք ու կես: Այսինքն՝ երեսուներեք ու կես տարի Տերը Մարմնով քարոզեց մարմնավորներին և նույնքան ժամ էլ հոգով քարոզեց հոգիներին: Իսկ Մարմինը երեսուն ժամ մնաց գերեզմանում: Քանի որ ինչպես երեսուն տարեկանում մկրտվեց և դուրս ելավ ջրից, նույնպես և Մարմինը՝ թաղումից երեսուն ժամ հետո հարություն առավ և դուրս ելավ գերեզմանից: Եվ ինչպես Աղամը երեսուն տարեկան ստեղծվեց, այդպես էլ մենք համընդհանուր հարության ժամանակ երեսնամյա ենք հարություն առնելու:

ՍԱԱՓՈՒԱ ՕՐԻՆԱԿ ՔՐՈՒՏՈՒԻ

Քրիստոսի հարության մասին գրված է նաև «Դատավորաց» գրքում՝ քաջարի Սամփսոնի օրինակով: Սամփսոնը գնաց այլազգիների քաղաքը, որը կոչվում էր Գազա, և գիշերը օթևանեց պոռնկատանը (տե՛ս Դատ. Ժ 1-3): Այլազգիները այդ մասին իմանալով՝ քաղաքի դռանը պահապան կանգնեցրին, որպեսզի Սամփսոնին ձերբակալեն: Իսկ Սամփսոնը գիշերամիջին վեր կացավ, քաղաքի դռների երկու փեղկերը տեղահան արեց ու տարավ լեռան գագաթը, ինչից քաղաքաբնակները հույժ ամոթահար եղան: Սամփսոնը, իսրայելացիների առաջնորդը լինելով, խորհրդանշում է Քրիստոսին, Ով հավատացյալների Առաջնորդն է, իսկ այլազգիները խորհրդանշում են դեերին ու Քրիստոսի թշնամիներին: Գազա թարգ-

մանվում է ուժ և օրինակն է աշխարհի, իսկ պոռնկատունը, որտեղ Սամփառն օթևանեց, դժոխքի օրինակն է:

Ավագ ուրբաթ օրը մեր Զորավարը՝ Քրիստոս, գնաց դժոխք՝ պատերազմելու դեերի հետ, և երբ դեերը կամենում էին բռնել Նրան, նա գիշերամիջին խորտակեց դժոխքի դռները և հարություն առավ մեռելներից, ինչպես ասում է սաղմոսերգուն. «Նա փշրեց դռները, պղնձյա և երկաթյանիգերը խորտակեց» (Սաղմ. ճԶ 16): Քրիստոս կապեց Սաղայելին՝ դեերի զորավարին, ավար վերցրեց դժոխքը և հոգիներին ազատեց տանջանքներից:

Պետք է իմանալ, որ Սամփառն թարգմանվում է արեգակ, իսկ Քրիստոս Արդարության Արեգակն է: Երբ ամպը ծածկում է արեգակը, մենք այն չենք տեսնում, այդպես էլ Աստծու Որդին, Ով Իմանալի Արեգակն է, մինչ իր հարությունը ծածկել էր իր Աստվածությունը յոթ ամպերով՝ ըստ այս խոսքի. «Նա իրեն խավարով պատեց, խավարով ծածկեց իր վրանը ու ջրի խավարով թանձրացրեց ամպերը» (Բ Թագ. ԻԲ 12): Յոթ ամպերից յուրաքանչյուրն իր խորհուրդն ունի. առաջին ամպը Կույս Մարիամի նշանվելն էր Հովսեփի հետ, երկրորդը՝ Տիրոջ թլխատությունն էր, երրորդը՝ Քրիստոսի մանկությունը, չորրորդը՝ փախուստը Եգիպտոս, հինգերորդը՝ քաղցելն ու ծարավելը, վեցերորդը՝ ցավագին չարչարանքները խաչի վրա և յոթերորդը՝ նրա թաղումը և գերեզմանի կնքվելը:

Այս յոթ ամպերը ծածկել էին Քրիստոսի Աստվածությունը, այդ պատճառով էլ հրեաներն ասում էին, թե ինչպե՞ս կարող է Նա Աստված լինել, երբ ծնվել է նշանված կնոջից, թլխատվել, փախել Եգիպտոս, քաղցել ու ծարավել: Իսկ երբ Քրիստոս չարչարվեց, խաչվեց, մեռավ և դրվեց գերեզման, ապա այս ամպերն ամբողջովին ծածկեցին Նրա Աստվածությունը: Եվ ոչ միայն հրեաները, այլև առաքյալները երկրայնականին, թողեցին Նրան ու փախան: Այդ մասին գրված է. «Փայլածուն ամպերի մեջ է, ինչպես որ լույսը՝ ամպերի վերևում» (Յոթ 2 Լէ 1): Հայտնի է, որ Քրիստոսի մարդեղանալուց առաջ ոչ ոք չէր մտնում Երկնքի արքայություն, քանի որ չկար դուռը, բայց Աստված ողորմեց և Քրիստոսի ծննդյամբ տվեց դուռը՝ ըստ այս խոսքի. «Ճշմարիտ ճշմարիտ եմ ասում ձեզ, որ Ես եմ ոչխարների դուռը» (Յովի. Ծ 7): Եվ այդ Դուռը երկփեղկանի է, այսինքն՝ Քրիստոսի Հոգին ու Մարմինը, և Աստվածությունը երկուսի հետ էլ միավորված է: Հրեաները նախանձից կոտրեցին այդ դուռը և փեղկերը բաժանեցին միմյանցից, քանի որ Քրիստոսի մահվամբ Հոգին ու Մարմինը բաժանվեցին միմյանցից: Դուան մի փեղկը, որը Հիսուսի Մարմինն է, գերեզման դրեցին, գերեզմանը մատանիով կնքեցին ու վրան գինվորներ կարգեցին: Իսկ դուան մյուս փեղկը, որը Հիսուսի Հոգին է, իջավ դժոխք, և այդպես բաժանվեցին միմյանցից Քրիստոսի Հոգին ու Մարմինը: Սակայն Աստվածությունը բնավ չբաժանվեց՝ ո՛չ Հոգուց և ո՛չ Մարմնից:

Եվ ինչպես Սամփսոնը գիշերն արթնացավ և ցույց տալով իր արիւթյունը՝ հանեց դռան երկու փեղկերը և բարձրացրեց լեռան գագաթը, այդպես էլ Քրիստոս ցույց տվեց իր մեծ զորությունը՝ ամբողջ պահելով երկու փեղկերը. քանի որ Հոգին, որ իջավ դժոխք, այնտեղ չայրվեց, այլ ընդհակառակը՝ մյուս հոգիներին զովություն ու փրկություն տվեց, իսկ Մարմինը գերեզմանում չապականվեց:

Եվ այսօր այն փեղկը՝ Հոգին, որ իջավ դժոխք, միավորվեց մյուս փեղկին՝ Մարմնին, որ գերեզմանում էր, և Տերն առանց ապականության հարություն առավ Հոգով ու Մարմնով՝ անխափան պահելով գերեզմանի կնիքը: Ինչպես Դավիթն է ասում. «Քանզի դժոխքում չես թողնի Դու ինձ, և Քո Սրբին ապականություն տեսնել չես տա» (Սաղմ. ԺԵ 9-10): Եվ Տերը, ինչպես Սամփսոնը, դռան երկու փեղկերը՝ Հոգին ու Մարմինը, միավորելով տարավ լեռան գագաթը, այսինքն՝ երկինք, նստեց Հոր աջ կողմում, և հայտարարեց, որ բոլոր ընտրյալներն այդ դռնով պետք է մտնեն արքայություն (տե՛ս Յովի. Ժ 7-9): Հայտնի է նաև, որ Սամփսոնը կապված և անզեն պատերազմեց այլազգիների զորքերի դեմ և էշի ծնոտով սպանեց հազարավորների (տե՛ս Դատ. ԺԵ 15): Իսկ իր մահվան օրը էլ ավելի շատ այլազգիների կոտորեց (տե՛ս Դատ. ԺԶ 30): Այդպես և Հիսուս Քրիստոս՝ մեր Զորավարը, իր վրա հարձակված դեերի ու հրեաների զորքերի դեմ չկամեցավ զենքերով պատերազմել՝ ինչպես և ինքն սասց. «Կարծում ես, թե չե՞մ կարող իմ Հորն աղաչել, որ Նա հիմա ինձ համար այստեղ հասցնի հրեշտակների ավելի քան տասներկու գնդեր» (Սատր. ԻԶ 53), այլ՝ խաչին բեեռված պատերազմեց ու Հաղթեց սատանային: Եվ իր սպանվելով՝ ավելի շատ կոտորեց, քանի որ մահից առաջ քչերը նրան հավատացին, իսկ մահվանից ու հարությունից հետո ամբողջ աշխարհը հավատաց, և կորավ սատանայի իշխանությունը:

Դասելին՝ օրինակ Քրիստոս

Դանիել մարգարեն չորս օրինակով է խորհրդանշում Քրիստոսին: Նախ՝ ինչպես Դանիելը հույժ սուրբ էր ու խափանում էր կուպաշտությունը, նույնպես և Քրիստոս՝ սուրբ վարքով էր ապրում երկրի վրա, խափանում էր կուպաշտությունը և ուսուցանում ճշմարիտ հավատ ու առաքինություն:

Երկրորդ՝ ինչպես Դանիելին նախանձից գցեցին առյուծների գուրք, այդպես էլ Քրիստոս հրեաների նախանձի պատճառով մահվան մատնվեց, դատապարտվեց ու գնաց դժոխքի գուրք, ուր կային յոթ հոշոտող առյուծներ, այսինքն՝ դեերի յոթ պետերը, որոնք յոթ մահացու մեղքերի առաջնորդներն են: Դեերը ոչնչով չվնասեցին Քրիստոսին, այլ ամոթահարեղան և կապվեցին կապանքներով:

Երրորդ՝ ինչպես Դանիելը նախատինքներով ընկավ գուբի մեջ և հետո մեծ ուրախությամբ ու փառքով բերվեց թագավորի առջև, այդպես էլ Քրիստոս՝ բազում նախատինքներով սպանվեց, իջավ դժոխք և այսօր մեծ պատվով ու փառքով դուրս եկավ դժոխքից, հարություն առավ մեռելներից և հույժ բարձրացվեց Հայր Աստծու կողմից՝ ինչպես ասում է Ավետարանը. «Ինձ է տրված ամեն իշխանություն երկնքում և երկրի վրա» (Մատթ. ԽԸ 18):

Չորրորդ՝ ինչպես Դանիելի կորուստը կամեցողները կործանվեցին, այդպես էլ նրանք, ովքեր կամակից ու պատճառ դարձան Քրիստոսի խաչվելուն, ինչպես Հուդան, Պիղատոսն ու Հերովդեսը, նաև քահանայապետերն ու դպիրները, բոլորն էլ կործանվեցին դժոխքում:

ՏԱՕՐՀԱՅԻ ՍՈՒՐԲ ԶԱՏԿԻ

Հարության օրը՝ երեկոյան, տասնմեկ աշակերտները հավաքվել էին մի տան մեջ: Եվ մինչ նրանք սեղան էին նստել, գալիս է Հիսուս, կանգնում նրանց մեջ ու ասում. «Խաղաղությո՞ւն ձեզ», ապա ավելացնում. «Ինչպես Հայրը ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում... Գնացե՛ք ուրեմն, աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցե՛ք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով... Եվ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչև աշխարհի վախճանը» (Մատթ. ԽԸ 20):

Այսօր, այս հրամանի համաձայն, եկեղեցու հովիվները, հետևելով առաքյալների օրինակին, սուրբ Հարության օրվան հաջորդող տոնական օրերին այցելում են եկեղեցու զավակների տները, տալիս Քրիստոսի հարության ավետիսը և հոգեսոր խոսքով նրանց ուրախություն պատճառում: Եվ «Այսօր յարեաւ» շարականի երգեցողությամբ, Հարության ավետարանի ընթերցմամբ, Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով, Հարության տոնի շնորհներով, սուրբ Խաչով և սուրբ Ավետարանով օրհնում տունը, տան բնակիչներին, տան հացը, աղը, ջուրը և ամենակալ Տիրոջից խնդրում պահպանություն այդ տան համար՝ երևացող ու աներևույթ թշնամիներից:

Այսպիսով՝ սուրբ Հարության տնօրհնեքով մեր տները խորհրդավոր կերպով վեր են ածվում Վերնատան, ուր մտավ ինքը՝ Հիսուս: Եվ ինչպես այն ժամանակ Տերը հայտնվելով իր աշակերտների մեջ, ովքեր հրեաների ահից թաքնվել էին, վերացրեց նրանց տարակուսանքները, այդպես էլ այսօր Տերը մեր հոգսերն է վերցնում իր վրա և մեր մեջ նորոգում Հարության հույսը:

ԱՎԵՏՈՒՄ

Սուրբ Աստվածածնի Ավետման տոնը կատարվում է ապրիլի 7-ին: Ապրիլի 6-ի երեկոյան, ինչ օր էլ որ պատահի, նախատոնակ է արվում: Ապրիլի 7-ի գիշերը քահանաները զգեստավորված գալիս են ատյան և սկսում «Խորհուրդ անձառ» օրինությունը: Օրվա երեքսրբյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անձահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա' մեզ»:

Աստվածամայր

Նախաստեղծ Ադամը պատվիեց նրանով, որ Աստծու ձեռքով ստեղծվեց, իսկ Աբրահամը երանելի դարձավ, քանի որ Աստծու բարեկամ կոչվեց: Հակոբը գովաբանվեց, քանի որ ժուժկալությամբ Աստծու հետ գոտեմարտեց: Մովսեսը բարեբանվեց, քանի որ Աստծուն տեսավ: Մարդարեներն արժանացան Աստծու բարեհաճությանը, քանի որ Սուրբ Հոգով լցված՝ քարոզեցին Աստծու գալուստը: Երջանկացան առաքյալները, քանի որ մարմնացած Բանն Աստծուն երկրի վրա տեսան և շոշափեցին Կենաց Խոսքը: Իսկ Տիրուհին՝ Մարիամը, առավել գերազանց և հրաշափառ երանությունների արժանացավ, քանի որ Բանն Աստված, Ով վեր է, քան միտքը, հրեշտակների ու մարդկանց խոսքերը, նրանից ծնվեց: Նա, Ով նախքան ժամանակները Հորից է ծնվել, և Ում ծնունդը միայն Հայրը գիտի, Ով արշալույսից առաջ արգանդից ծնված Որդին է Հոր Էռլիթյունից և փառքով աթոռակից է Նրան, Ով անստվեր Լույսն է և անմատույց Լույսի Հոր Ճառագայթը, նաև Ծնողի Էռլիթյան Կերպարանքն է, Նկարագիրը և աներեռյթ Աստծու փառքի Ծագումը, Անսկիզբ Բանն՝ անսկզբնական Հորից, Աստված՝ Աստծուց, Տեր՝ Տիրոջից, Ում փառքը ցանկալի էր անմահների դասերին և բաղձալի՝ աստվածասեր մարգարեներին, Ում արդարները, թագավորներն ու նահապետները ցանկանում էին գոնե աղոտ կերպով տեսնել, բայց չկարողացան:

Ամենաօրհնյալ Սրբուհին անբովանդակելի Աստվածության Հուրն առանց այրվելու իր որովայնում կրեց, քանի որ Հորից անբաժանելի Որդին, ինչպես անձրև, երկնքից իջավ Կույսի մաքրափայլ որովայնը: Ինչպես Ադամից ոչինչ չպակասեց, երբ Աստված նրանից վերցնելով կողոսկը ստեղծեց Եվային, որպես կատարյալ մարդ՝ բնությամբ ու գոյությամբ, այդպես էլ Բանն Աստված վերցնելով սուրբ Կույսի արյունից՝ միավորեց իր Աստվածությանը, և Կույսից ոչինչ չպակասեց: Սուրբ Աստվածամոր մեջ մարդկային բնությունը միացավ Աստվածային բնության հետ, առանց երկրավոր հոր միջամտության, քանզի Նրան, Ում Հայրը նախքան Համետաննեռո Ոռոհ ծնեղ, և Ում հետ Հայրը խոսեց, թե՝ «Քեզանով է

սկսվում գորացումն իմ օրերի» (Սաղմ. ճթ 3), Նույնին, ժամանակի մեջ, անձառաբար ծնեց Կույս Մարիամը: Սուրբ Կույսն սկիզբն է Անսկզբնականի, ժամանակը՝ Անժամանակի և մարդկանց հանդեպ իր ունեցած գութով մոտենում է Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն: Նա, Ով իր խոսքով պահում է բոլոր արարածներին, կառավարում երկնային ու երկրային բոլոր էություններին, ելավ Կույսի գիրկը, և Անժամանակ Որդին մանկացավ: Նա, Ով կերակուր է տալիս բոլոր ողջերին, Սուրբ Կույսի անապական կաթով սնվեց: Կույսն ավելի վեր է, քան մարդարեները, առաքյալները, նախահայրերը, մարտիրոսներն ու վարդապետները, և վեր, քան իշխանություններն ու Պետությունները, Սերովեներն ու Քերովեները, և ավելի վեր է բարձրացել, քան երկնային բոլոր գորքերը: Զիջում է նա միայն Արարչին՝ Անեղ Բնությանը՝ գերազանց և աներևույթ Աստվածությանը:

Արդ՝ Սրբուհու միջոցով Խաչը ծագեց աշխարհի մեջ՝ որպես զորության գավազան և կնիք ամենքի համար՝ պահպանելու մեր ելն ու մուտք: Աստվածածնի միջոցով մահը մեռավ, դժոխքը կործանվեց, սատանան պարտվեց, և նրա զորությունները սանդարամետում փակվեցին: Նրա միջոցով բացվեց Կենաց ծառի ճանապարհը՝ վերցվեց բոցեղեն սուրբ, և Հաստատվեց Մկրտության ավազանը:

Նա եղավ եղեմական Շնչավոր դրախտ, որտեղից բխեց մեր Տեր Հիւսուս Քրիստոս՝ Կենաց Աղբյուրը՝ չորս գետերի բաժանված, ինչն ավետարանիչների քարոզությունն է աշխարհի չորս կողմերում՝ լցված հավատով ու Սուրբ Հոգով: Սրբուհին եղավ Նոյյան տապան, և եթե այն տապանը միայն մի ընտանիք ազատեց ջրհեղեղից, ապա Կույսի միջոցով ողջ աշխարհը փրկվեց:

Նա եղավ Անկեղ մորենի, քանզի աստվածության Հուրը բնակվեց նրա Սուրբ որովայնում և չայրեց: Եվ ոչ թե մեկ Մովսես առաքվեց Եգիպտոս՝ փարավոնին պատճելու և Իսրայելն ազատելու, այլ տասներկու առաքյալներ՝ ուսուցանելու ամբողջ աշխարհին, ովքեր կործանեցին անմարմին փարավոնին՝ իր զորքերով հանդերձ, և հեթանոսներին փրկելով՝ անմահ կյանքի կոչեցին:

Նա եղավ Ուխտի տապանակ, որն իր մեջ կրեց անպարագրելի Բանն Աստծուն, Ով ոչ միայն Իսրայելի որդիներին Սինայի անապատից դեպի Ավետյաց երկիրն առաջնորդեց, այլև ամբողջ մարդկային ցեղը՝ դեպի Երկնային Երուսաղեմ:

Նա եղավ Ոսկյա սափոր, և իր մեջ կրեց Հոր անժամանակ Խոսքը՝ Կենաց Մանանան, որով ոչ միայն ապերախտ Իսրայելին կերակրեց, այլև ամբողջ աշխարհին:

Նա եղավ Ծաղկած գավազան Հեսսեի արմատից. ըստ Հակոբ նահապետի մարգարեռւթյան՝ «Շառավդից որդի ելավ» (տես Ծննդ. Խթ 9), և մեզ ինչպես կյանքի ողկույզ ընծայվեց, և լի բարությամբ ու իմաստությամբ՝ տարածվեց ամբողջ աշխարհում:

Նա եղավ Ոսկեձույլ աշտանակ, որն իր վրա, ինչպես վառվող ճրագ, կրեց մարգացած Բանն Աստծուն (հմնտ. Դայտ. Ա 13): Աշտանակի ճրագի յոթլեզուները Սուրբ Հոգու յոթնարփյան չնորհներն են, իսկ երկու ձիթենիները՝ մեկն աջից և մյուսը ձախից, Հին ու Նոր Կտակարանները (հմնտ. Զաքար. Դ 2-3):

Նա եղավ Արևելք, որտեղից ծագեց Արդարության Արեգակը, ու հաւածեց մեր հոգիներից խավարը և անստվեր Լույսն առաքեց «մահվան ստվերներում նստածներիս» (Սատր. Դ 16):

Նա եղավ Օգնական լեռ, որից «առանց ձեռքի դիպչելու հատվեց Վեմը»՝ անձառելի Բանն Աստված (Դան. Բ 34), և առանց սերմի մարմնին միանալով՝ խորտակեց կուռքերի մոլորությունները ու հիմնեց Կաթուղիկե Սուրբ Եկեղեցին (Սաղմ. Կէ 16):

Նա եղավ իմանալի գեղմ, որի վրա անպարագրելի Բանն Աստված իջավ ինչպես ցող, և միշտ հոսելով՝ Կենդանի ջրով լցրեց տիեզերքը՝ հագեցնելու համար տոչորվածների ծարավը:

Նրան տեսավ Եսային՝ ինչպես Թեթև ամապ (տես Եսայի Ժթ 1), որի վրա նստած Բանն Աստված իջավ Եգիպտոս ու կործանեց բազմաստվածության մոլորությունը և վեր հանեց սուրբ, ճգնազգյաց, հրեշտականման և սքանչելագործ կրոնավորների երջանիկ խմբերը, որոնցից են Անտոն Մեծը, Պողը, Մակարը և մյուս քրիստոսազգյաց կրոնավորները:

Նրանով վերցվեց Արամի անեծքը, և փարատվեց Եվայի տաժանելի երկունքը: Եվ կոչեցին ամենասուրբ Աստվածամորն այգի վայելուչ, վեմ ջրածին, աղբյուր կնքած, բույս բարի, տեղ շափյուղայի, քաղաք Աստծու, բլուր կնդրուկի, հովիտ շուշանի, անապատ անկոխ, գիր անընթեռնելի, երկիր բանավոր, առավոտ խաղաղության:

ՀԻՍՈՒԱԻ ԾԱՆՐՅԱՆ ՂՎԵՏՈՒՄԸ (Ղուկ. Ա 26-38)

Կույսը չորս ամիս Հովսեփի տանն ապրելուց հետո հրեշտակից ընդունեց Հղության ավետիսը:

«Վեցերորդ ամսին Գաբրիել հրեշտակն Աստծու կողմից ուղարկվեց Գալիլիայի մի քաղաքը, որի անունը Նազարեթ էր, մի կույսի մոտ, որ նշանված էր Հովսեփի անունով մի մարդու հետ՝ Դավթի տնից: Եվ այդ կույսի անունը Մարիամ էր» (Ղուկ. Ա 26-27):

Վեցերորդ ամիսը նիսան է կոչվում, բայց դա տարվա ոչ թե վեցերորդ, այլ առաջին ամիսն է՝ ըստ այս խոսքի. «Այս ամիսը թող ձեզ համար ամիսների սկիզբը լինի. այն թող տարվա առաջին ամիսը լինի» (Ելք ԺԲ 2): Այստեղ, վեցերորդ ասելով, պետք է իմանալ Զաքարիայի ավետումից վեց ամիս անց, քանզի թշրին ամսին՝ Քափության տոնին, տրվեց ավետիսը Զաքարիային, որից վեց ամիս հետո հրեշտակն առաքվեց ավետելու Կույսին:

Այդ ամիսը սկիզբն է հրեաների բոլոր ամիսների, և այդ ամսին էր սկիզբը բոլոր արարչագործությունների: Զրհեղեղի օրերին այդ ամսին իշավ ջրի մակարդակը, և այդ ամսին կանգնեցվեց Վկայության խորանը: Հրեաները այդ ամսին դուրս եկան Եղիպտոսից ու ազատվեցին ծառայությունից, նաև Հեթանոսներն այդ ամսին կենարարի մահվամբ ազատություն ստացան: Այդ ամսին Հանգստացան չարչարվածները, ովքեր աշխատում էին առանց վարձք ստանալու, և այդ ամսին արարածներն ազատվեցին սատանայից: Այդ ամսին գերիները մտան Հանգստի մեջ, և մերկերը գգեստավորվեցին փառքով: Այդ ամսին Խրայելի որդիները ճանապարհվեցին դեպի անապատ: Այդ ամսին մորթվեց խորհրդի գառը, և այդ ամսին Հղացվեց Աստծու Գառը Կույսի արգանդում: Այդ ամսին լույսը հաղթեց խավարին, և ծագեց մեր Լույսը՝ Քրիստոս: Այդ ամսին կանգնեցվեց կենարար խաչը, և այդ ամսին Տերը թաղվեց ու Հարություն առավ:

Ավետարանիչը նախ հայտնում է երկրի մասին և ապա՝ գյուղի ու տան, որտեղ բնակվում էր Կույսը: Ամենասրբուհին Դավթի տնից էր, որից և նրա նշանածը՝ Հովսեփին էր սերում, քանզի ըստ Օրենքի՝ ամուսինները նույն ցեղից պետք է լինեին: Դրանով կատարվեց մարգարեությունը, ըստ որի՝ Քրիստոս Դավթի տնից պիտի ծնվեր: Եվ որպեսզի իմանանք, որ Հովսեփից չէր Մանուկը, Մատթեոս ավետարանիչն ասում է. «Հիսուս Քրիստոսի ծնունդն այսպես եղավ. Նրա մայրը՝ Մարիամը, որ Հովսեփի նշանածն էր, նախքան նրանց՝ իրար մոտենալը, Սուրբ Հոգուց հղիացած գտնվեց» (Մատթ. Ա 18):

Մարիամի՝ Հովսեփի տուն գալուց չորս ամիս անց Աստված Հիշում է իր ուխտը և ողորմությունն առաջին արդարներին, և Գաբրիել հրեշտակապետը ծերի կերպարանքով ջրհորի մոտ խոսում է Մարիամի հետ, ինչպես Հակոբն ու Մովսեսն աղբյուրի մոտ խոսեցին. մեկը՝ Ռաքելի (տես Ծննդ. ԻԲ 10-12), իսկ մյուսը՝ Սեփորայի հետ (տես Ելք Բ 16-22):

Հարց. – Ինչո՞ւ Մարիամը նշանվեց Հովսեփի հետ:

Պատասխան. – Ասենք, որ դա Աստվածային նախախնամությամբ եղավ: Հրեաների մեջ կինն առանց ամուսնանալու զավակ չէր կարող ունենալ, իսկ եթե ունենար, ըստ Օրենքի, պիտի քարկոծվեր (տես Որենք ԻԲ 21):

Իսկ երբ կինն ամուսնացած էր, ապա այդ դեպքում ոչ ոք իրավունք չուներ քննելու նրա գործերը, բացի նրա ամուսնուց: Բացի այդ՝ պետք է կատարվեին մարդարեռությունները, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի ծնունդը Բեթղեհեմում, քառասնօրյա գալուստը տաճար, փախուստը Եգիպտոս և վերադարձը Նազարեթ: Այդ ամենը սուրբ Կույսը չէր կարող միայնակ կատարել:

Հարց. – Ինչո՞ւ Տերն իրենից առաջ հրեշտակին ուղարկեց՝ ողջունելու և ավետարանելու սուրբ Կույսին իր գալուստը:

Պատասխան. – Թերեւս, որպեսզի չգարհուրի Օրիորդ Մայրը, երբ որովայնում տեսնի Մանկանը առանց սերմի, և որպեսզի իմանա, թե Ում է կրում իր կուսությամբ, և Ով է բնակվում իր մեջ: Նաև՝ Մովսեսը նախ ժողովրդին լուր բերեց, թե իջնում է Բարձրյալը, և երբ ժողովրդի ծերերն ու Մովսեսը սրբվեցին, այնժամ Բարձրյալն իջավ Սինա լեռան վրա (տես Ելք ԺԹ 9-20): Ճիշտ այդպես էլ Գաբրիելն ավետեց, և սուրբ Կույսը մաքրվեց Սուրբ Հոգով և աստվածաբնակ տաճար դարձավ:

«Եվ հրեշտակը, գալով նրա մոտ, ասաց. «Ուրախացի՛ր, ո՛վ շնորհընկալ, Տերը քեզ հետ է» (Դուկ. Ա 28) – Ասելով՝ «Ուրախացի՛ր, ո՛վ շնորհընկալ», վերացնում է Եվայի՝ տրտմությամբ ծնելու դատապարտությունը: Ասում է. «Տերը քեզ հետ է», որովհետեւ Տերը հեռացել էր նախաստեղծներից: Մարիամն այս խոսքերից խոռվվում է և իր մտքում խորհում, թե ի՞նչ կարող են նշանակել այդ խոսքերը, և սափորն առնելով՝ շտապ դառնում է տուն: Տանը հրեշտակի խոսքերից զարհուրած շարունակում է ինքնիրեն խորհել, թե ինչպե՞ս է ինքը շնորհընկալ, և ինչպե՞ս է Տերն իր հետ:

Եվ մինչ նա խորհում էր, Գաբրիելը, երիտասարդի կերպարանքով, հանկարծակի գալիս է տուն՝ Կույսի մոտ ու ասում.

«Ողջույն քեզ, Մարիամ, ո՛վ շնորհընկալ: Ուրախացի՛ր բերկրյալ, Տերը քեզ հետ է» – Սուրբ Կույսը դարձյալ խոռվվում է իր մտքում, և դրան որպես պատասխան հրեշտակը կարծես ասում է. «Մի՛ երկնչիր, Մարիամ, քանզի չեկա քեզ խաբելու, ինչպես օձը Եվային, իմ խոսքերը պատրանք չեն, այլ ավետիս: Զեմ խոսում քեզ խաբելու համար, այլ ավետիս եմ տալիս»:

Նա այս խոսքերի վրա խռովվեց և մտքում խորհում էր, թե ինչ բան էր այս ողջույնը – Մարիամը զարհուրել էր հրեշտակի հայտնվելուց ու տագնապել ողջույնի խոսքից: Իսկ երբ լսեց Տիրոջ անունը, կարծես սարսուռ անցավ նրա հոգերի միջով: Այդ պատճառով է ավետարանիչը գրում, թե նա մտքում խորհում էր, թե ինչ է նշանակում այս ողջույնը:

Հրեշտակը, տեսնելով նրա երկյուղը, ասաց.

Մի' վախեցիր, Մարիամ, որովհետև Աստծուց դու շնորհ գտար – Հեզու հանգիստ խոսքերով հրեշտակը նախ հանդարտեցնում է Կույսի խոռված միտքը, որպեսզի հնարավոր լինի պատգամը ամբողջովին հաղորդել նրան, և կարծես ասում է. «Ահավասիկ շնորհ գտար ոչ բարի գործերիդ համար և ոչ էլ արդարության, այլ սա բարերար Աստծու պարգևն է: Թե՛ս պետք ունես բարի գործեր և արժանավոր ես, սակայն դա չի կարող համեմատվել այն պարգևի հետ, որն առաքվեց բեզե երկնքից: Եթե Աստծուց շնորհ ես գտել, ուրեմն նրանն է ողջույնը: Հիրավի, սա շնորհ է, քանզի պարգևը պարտքի դիմաց չի տրվում և ոչ էլ մարդկային արժանիքների չափով, այլ եղածներից առավել մեծությամբ ու սքանչելիքներով»:

Եվ ահա՝ դու կհղանաս և կծնես մի որդի ու նրա անունը Հիսուս կղնես՝ Սովորական հղության մասին չի ասում, ինչն օրենք էր բոլոր կանանց համար, այլ վեր այդ օրենքից և Աստվածային:

Այս խոսքով փակում է նրանց բերանները, ովքեր համարձակվում են ասել, թե Տերը մարմին չառավ կույսից, այլ միայն նրանով անցավ: Ասեւով թե՝ պիտի հղանաս, ցույց է տալիս, որ հղությունը նրա բնությունից է լինելու, քանզի միայն «անցնելու» գեպքում հղություն չէր ասի, և ծնունդն իրական չէր լինի:

Հարց. – Իսկ ինչո՞ւ եսային նրան անվանեց էմմանուել (տես Եսայի է 14), մարգարեները անվանեցին Քրիստոս, իսկ հրեշտակը նրան Հիսուս է կոչում:

Պատասխան. – Որպեսզի հանկարծ Տերը չամբաստանվի, թե իրեն չպատկանող անուն է վերցնում մարգարենություններից: Այդ պատճառով էլ միառժամանակ ծածկում է մարգարենությունը՝ պարսավողներից թաքցնելով իր անունը:

Հիսուս անունը մարգարեացվել էր գեռես Մովսեսի կողմից, երբ նա, որպես իրեն փոխարինող՝ ժողովրդի առաջնորդ ու վերակացու, նշանակեց Օսեսին և նրան Հեսու անվանեց (տես Թվեր ծգ 17)` այս անունով նշանակելով աշխարհի ճշմարիտ Փրկչին:

Երբ Մարիամը լսում է հրեշտակից, որ ինքը պիտի հղանա կուսությամբ, տարակուսում է: Կույսը երբեք չէր լսել, որ առանց այր մարդու կինը ծնի:

Գաբրիելն ասաց Մարիամին. «Այն Հոգին, Ով Եգիպտոսում փոխեց բնությունը, նա էլ Քո կուսությունը կդարձնի հղության, և առանց սերմի կծնես մարդկային բնության Արարչին: Նա Աբրահամի զավակ կկոչվի, սակայն նրա որդին չի լինի: Հնազանդվեց Հուդայի թագավորությունը Հռոմեացիների առյուծի կորյունին, սակայն քո Որդուն տրվելու է ոչ թե Հուդայի ազգը և ոչ էլ իսրայելի զավակները, այլ Դավիթի աթոռը, որն

Աստված Հակոբին խոստացավ: Եվ ոչ երուաղեմի մեկ սերունդ միայն, և ոչ էլ այնպես, ինչպես Դավթին տվեց, այլ անվախճան ու հավիտյան»:

Նա մեծ կլինի – «Մեծը» չափի համար չի ասում: Քանի որ Տիրոջ մեծության չափը չէր կարող խոսքով հայտնել, այդ պատճառով էլ այդպես ասաց: Այդպես նաև մարգարեներն են ասում. «Մեծ է մեր Տերը, և մեծ է Նրա զորությունը» (Սաղմ. 61ս2 5), նաև. «Մեծ է Տերը, և Տերը մեծ է բոլոր կուռքերից» (Սաղմ. 61Դ 5):

Աստծու Որդու մեծությունն ի հայտ էր գալու Նրա ճանաչվելուց հետո, որը հավիտենականությունից առաջ ուներ՝ ըստ այս խոսքի. «Քեզ զանից ինձ իշխան է ելնելու, Ում ելքն աշխարհի սկզբից է» (Սիրիա Ե 2): Այսինքն՝ ժամանակին՝ երբ հավատան, Նրան մեծ են խոստովանելու:

Բարձրյալի Որդի կկոչվի – Սրանով հայտնում է Հիսուսի վերին փառքի Տեր և աստվածային Ծնունդ լինելը, քանզի Բարձրյալի Որդի ասելով հայտնեց, որ Հոր հետ նույն բնությունից է: Այդ պատճառով էլ Հովհաննեսը վկայում է. «Սկզբից էր Բանը, և Բանն Աստծու մոտ էր, և Բանն Աստված էր» (Յովհ. Ա 1):

Տեր Աստված նրան կտա Նրա հոր՝ Դավթի աթոռը, և Նա հավիտյան պիտի թագավորի Հակոբի տան վրա, ու Նրա թագավորությունը վախճան չի ունենա – Սա Մարիամի մեջ տարակուսելու առիթ է տալիս, քանզի մի խոսքը երկնքից է ասում, իսկ մյուսը՝ երկրից: Մեկ ասում է Դավթի Որդի, մեկ էլ թե՝ Նրա թագավորությունն անվախճան է լինելու: Թագավորներից ո՞վ անվախճան մնաց երկրի վրա: Բոլորն էլ մահացան և դժոխք գնացին, իսկ նրանց մարմինները որդերը մաշեցրին: Եվ ինչպե՞ս է Դավթի լինելու Մարիամի Որդու հայրը, չէ՞ որ նա մահացավ ու թաղվեց: Եվ ինչպե՞ս է, որ միայն նրա Որդին է թագավորելու հավիտյան:

Հրեշտակն Ում մասին ասաց «Բարձրյալի Որդի»՝ հայտնելով Աստվածությունը, նույնի մասին ասում է նաև «Դավթի Որդի»՝ հաստատելով մարդկությունը: Սրանով հայտնում է, որ Նա ոչ լոկ Աստված է և ոչ էլ սոսկ մարդ:

Դրանից պարզում է, որ Տիրոջ խոստացածը Դավթին պիտի կատարվեր կուսական Ծնունդի միջոցով՝ ըստ այս խոսքի. «Քո որովայնի պտղից պիտի նստեցնեմ քո գահին» (Սաղմ. 61Ա 11): Եվ որպեսզի ոչ ոք չկարծի, թե Նա Դավթի որդի է ըստ բնության, ասվում է նաև. «Նրա սերունդը հավիտյան կմնա, և ինչպես արև, ինչպես լուսին, Նրա աթոռն իմ առջե հավերժ հաստատված կմնա երկնքում, որպես հավատարիմ վկա» (Սաղմ. 7Շ 37-38): Այսինքն՝ այդ թագավորությունը ժամանակավոր չպիտի լինի, այլ մշտնջենավոր: Ուրեմն՝ այն թագավորությունը, որի մասին ասաց Հրեշտակը, մարմնավոր չէ, այլ միավորությամբ Բանին: Եվ ասելով, թե Տեր

Աստված Նրան տալու է իր հոր՝ Դավիթի աթոռը, հայտնում է, որ Տերը իջնելու է երկնքից, իսկ Դավիթի Որդի ասելով հայտնում, որ Նա նորոգելու է Դավիթի կործանված թագավորությունը:

Քանի որ Մարիամը չէր կարողանում ընկալել այս բարձրագույն ավետարանչությունը, այդ պատճառով հրեշտակը պարզեցնում է իր խոսքը, նախ խաղաղության ողջույն տալով, և ապա աստիճանաբար դեպի վեր, դեպի բարձրագույն խորհուրդը նրա միտքը ձգելով։ Ասում է, որ Ծնվածը Բարձրյալի Որդի պետք է կոչվի, քանի որ Հորից անմայր Ծնվածը Մարիամից անհայր պիտի ծնվի։

Մարիամը հրեշտակին ասաց. «Ինչպե՞ս այդ կպատահի ինձ, քանի որ ես տղամարդ չեմ ճանաչում – Այս խոսքն է, որ հաստատում է կուսությամբ հղությունը։ Մարիամը գիտեր կանանց բնության կարգը, որ առանց այր մարդու ոչ ոք չի ծնել, և տեսնում էր, որ ասված խոսքերը մեծամեծ ու զարմանալի են։ Կամենում էր իմանալ, թե այն ըստ համընդհանուր կարգի՝ էլինելու, թե դա մեկ այլ հիմանալի ծնունդ է, բնական կրքերից դուրս։ Հրեշտակը տեսնելով նրա միտքը՝ ասում է Մարիամին, որ նրա հղությունը Սուրբ Հոգով և Բարձրյալի գորությամբ է լինելու, ինչն իր համար նույնպես անիմանալի է։

Սուրբ Հոգին կփա քո վրա, և Բարձրյալի գորությունը հովանի կլինի քեզ— Հրեշտակը հայտնում է, որ հղությունը լինելու է առանց մարմնական ցանկությունների և ամենայն մաքրությամբ։

Հետագայում հրեշտակը նաև Հովսեփին է ասում, որ Մարիամից Ծնվածը Սուրբ Հոգուց է։ Ամենուր սովորում ենք, որ ոչինչ չի բաժանված Հոր, Որդու և Սուրբ Հոգու միջև։ Քանի որ ինչպես սկզբում Հոգին Գործակից էր արարածներին ստեղծելիս՝ շրջում էր արարածների վրա (տես ԾԱՅ. Ա 1), գուրգուրում և տալիս զորություն երկնելու և ծնելու, նույնպես և այս դեպքում է Գործակից Որդու աստվածային Մարմնի արարչագործության մեջ, այդ պատճառով հովանի է լինում Կույսի վրա և սրբում նրա բոլոր մարմնական ցանկությունները։ Թեև մաքուր էր Մարիամը ամեն ինչից, սակայն մարդ էր՝ ախտի ծնունդ, և նրանում ես կային ցանկություններ։ Ուստի Հոգին նախ գալիս և մաքրում է նրան։

Տերը նախ մարդ չստեղծեց և հետո Աստվածությունը մտավ ու բնակվեց այդ մարդու մեջ, այլ՝ Աստվածությունը մաս վերցնելով Կույսի արյունից՝ գոյացավ մարմնում, ըստ այս խոսքի՝ «Բանը մարմին եղավ բնակվեց մեր մեջ» (Յովի. Ա 14)։ Քանի որ Կենդանի Աստվածությունն իջավ Կույսի արգանդը և մեր բնությունից մաս վերցնելով, հրացած Աստվածությամբ ձեւավորեց իր Մարմինը՝ ըստ իր բնության։ Եվ ինչպես մարմինը Բանին խառնվելով չդադարեց մարմին լինելուց, այլ եղավ

անշփոթելի մարմին, նույնպես և Աստվածությունը միանալով մարմնին՝ եղավ մարդ, առանց ապականության կրքերի և պահեց իր իմանալի Բնությունն անպարագրելի ու անփոփոխ: Եվ այս ամենը եղավ Հոգու գործակցությամբ:

Նա, Ով քեզնից է ծնվելու, Սուրբ է և Աստծու Որդի կկոչվի» – Ասելով, թե Նա, Ով ծնվելու է քեզանից, Սուրբ է, դրանով հակադրվում է անվայելուչ կարծիքներին: Ինչպես Հոգին Սուրբ է և չունի կարիք մաքրվելու, այնպես էլ Որդին չունի կարիք, որովհետեւ բնությամբ է սուրբ, ըստ անեղական Աստվածության:

Գաբրիելն այս խոսքերի հետ կարծես թե ասում է նաև. «Անհավատալի մի՛ համարիր ասածներս, որպեսզի չընդունես Զաքարիայի պատիժը, քանզի նա ինձ չհավատաց և պապանձվեց: Իսկ դու խելամիտ եղիր և հաստատիր իմ խոսքերը քո սրտում, քանզի ես քո Որդու ծառան եմ: Նա, Ով քեզանից է ծնվելու, Նա է ինձ առաքել քեզ մոտ: Թողնելու է Նա երկինքը, Հոր աջ կողմում նստելը և իջնելու է քո արգանդը: Մի՛ երկնչիր, Մարիամ, քանզի մատուցում եմ քեզ միխթարության ավետիս և ոչ թե՝ տրտմության բոթ: Ավետիս բերկրանքների և ոչ թե՝ նենգություն, ինչպես նախաչարը՝ Եվային: Քանզի նրանից մահը դուրս եկավ, իսկ քեզանից Կյանքն է ընճուղվելու: Եվ վկա է Եղիսաբեթը, քո ազգականը, ով հղի է իր ծերության օրերում, և արդեն վեցերորդ ամիսն է, որ նա՝ ամուլ կոչվածը, հղի է, քանի որ Աստծու համար անկարելի բան չկա»:

Մարիամը նույն ժամին երկու ավետիս ստացավ: Հրեշտակը Կույսին ավետարանեց կուսական հղության և կուսական ծննդյան մասին, հայտնելով նաև Եղիսաբեթի հղության մասին: Եվ ինչպես չտկարացավ ծերի ամլությունը, նույնպես և չի տկարանա կուսությունը՝ անարատապես կրելու հղությունը և ծնունդը: Այս խոսքերով Գաբրիելը բացում է Կույսի միտքը և հայտնում, որ եթե ծերացածը և ամուլը զորանում է այդ խորհրդի համար, ապա որչափ ևս առավել կզորանա նա, ում վերաբերվում է այդ խորհրդը: Հրեշտակը հաստատում է Մարիամի միտքն՝ ասելով, որ Աստծու համար անկարելի բան չկա, քանզի ոչ ոք չի կարող նրան հակառակել, քանի որ բնության Արարիչ է:

Ահավասիկ ես մնում եմ Տիրոջ աղախինը, թող քո խոսքի համաձայն լինի ինձ – Մարիամը մարմնական հաճույք չէր խնդրում, այլ միայն այն, ինչ ավետարանվեց, և աղոթում է, որպեսզի դա անվրեպորեն հաստատվի: Կույսը հնագանդության խոսք ասաց և իր անձը պատրաստեց հավատի համար:

Նա հավանություն է տալիս հրեշտակի խոսքերին և լսողությամբ ընդունում բանն Աստծուն իր որովայնում: Սուրբ Կույսի համաձայ-

նությունը ստանալուն պես՝ Բանն Աստված իջնում է նրա արգանդը և առնելով նրա մաքուր արյունից՝ թանձրանում է նրանում, նույն ժամին անճառելիորեն կազմելով իր Մարմինը կատարյալ անդամներով, հոգով ու մտքով և արգանդում նկարում կերպարանքը հին Աղամի՝ առանց պակասության, ամբողջովին հար ու նման նախաստեղծին:

Այսպիսով՝ Մարիամի մեջ ծագեց լուսափայլ ձառագայթը՝ առանց բաժանվելու Հոր Էռությունից: Սուրբ իջավ ու բնակվեց անարատ սրբունու մեջ, շարունակելով փառափորվել Հոր աջ կողմում: Բարձրյալը մտավ Հողեղեն արգանդի մեջ, բայց երկինքը լի մնաց նրա փառքով: Նա, Ումից զարհուրում են երկնային դասերը, բնակվեց Կույսի որովայնում, որին հոժարեց երկրորդ երկինք դարձնել երկրի վրա: Նա, Ով իր ձեռքով կառավարում է աշխարհը, Մանուկ եղավ Կույսի մարմնեղեն արգանդում: Նա, Ով ամբողջ երկիրը չափում է իր քլով¹, տեղափորվեց Մարիամի փոքրիկ ծոցում: Նրա իշխանությունը սփռված է երկնքում և երկրում, իսկ ինքը բազմել է իր աղախնի արգանդում: Մարդկանց պատկերը կանանց որովայնում Արարողը Կույսի որովայնում նկարեց իր մարդեղության պատկերը: Բանական էակների անձերն էգերի որովայնում Զուլողը նյութագործեց իր Մարմինը Մարիամի մեջ և այն իրեն միավորեց: Բոլոր մարմինների մեջ կենդանություն Փչողը մարդկային ցեղից չնչավոր մարմին դարձավ:

Ինչպես առաջին Աղամին ստեղծեց օրհնված ու անապական երկրի կավից, առանց ամուսնական գործակցության, այդպես էլ երկրորդ Աղամը, առանց ամուսնական գործակցության, ստեղծվեց օրհնյալ Կույսից: Հրեշտակի ողջույնով վերցվեց տրտմությամբ ծնելու անեծքը, ինչը եվայի անհնագանդության պատճառով էր, որպեսզի սուրբ Կույսը «իմանալի» օրհնված երկիր լինի երկրորդ Աղամի համար: Քանի որ Տերը եկել էր բժշկելու առաջին Աղամին, այդ պատճառով իր Մարմինը չստեղծեց երկրի կավից, ինչպես Աղամինը, քանզի դրանով մեկ այլ Աղամ կլիներ և մեկ այլ Փրկիչ, այլ նույն զանգվածից ստեղծեց իր Մարմինը, որպեսզի երկրորդ Աղամը նույնպես նույն արմատից լինի:

Ավետիսը տալուց հետո հրեշտակը հեռացավ, սակայն ոչ այնպես, ինչպես մարդիկ են հեռանում, այլ անտեսանելի դարձավ, որպեսզի Կույսն իմանա, որ իր մոտ եկողը հրեշտակ էր և ոչ թե մարդ:

¹ Չիլ – չափի միավոր:

Մարիամը այտելությունը Եղիսաբեթին

Մարիամը հրեշտակի մասին չպատմեց Հովսեփին ու նրա զավակներին, այլ թույլտվություն խնդրեց Հրեաստան՝ Եղիսաբեթի մոտ գնալու։ Հովսեփին էլ իր որդիներից ու դուստրերից մի երկուսի ուղեկցությամբ ճանապարհեց Մարիամին։

Երբ Մարիամը ողջունեց Եղիսաբեթին, վերջինիս մանուկը խաղաց որովայնում, ինչպես Դավիթը պարեց Տիրոջ Տապանակի առջև (տե՛ս Բ Թագ. 2 16): Երբ Եղիսաբեթը տեսավ Կույսին, ընկավ նրա առջև և օրհնեց նրան եվայի բոլոր դուստրերի մեջ, (ինչպես և նրա Որդին է օրհնյալ Աղամի բոլոր որդիների մեջ)։ Եվ Ահարոնի դուստրը սկսեց մեծաձայն երգել Հանդերձյալի մասին՝ ասելով. «Որտեղից ինձ այս ուրախությունը, որ իմ Տիրոջ մայրն ինձ մոտ գա»։

Իսկ Զաքարիան՝ նրա ամուսինը, դեռևս չէր կարողանում խոսել։ Ամուսինները Կույսին մեծարանքով՝ երեք ամիս իրենց մոտ պահեցին, և Զաքարիան նրան պատվով կարգեց կույսերի տեղում։ Իսկ երբ մոտեցավ Եղիսաբեթի ծննդաբերելու օրերը, Մարիամը վերադարձավ իր տուն։

Նրա ուղեկիցներն այս ամենից զարմանում են և ամեն ինչ պատմում Հովսեփին, որից նա հիանում է, քանի որ տեսնում էր նրա երեսը՝ Սուրբ Հոգով լի, պատկառելի ու տեսնողներին բաղձալի։ Հովսեփը սքանչանում էր նրա պարկեշտ վարքով, քանզի սուրբ Կույսը մանուկ լինելով՝ ծերերից ու կատարյալներից անցել էր իր առաքինությամբ։

Վեցերորդ ամսին Հայտնապես երեաց Մարիամի հրաշափառ Հղությունը, սակայն նա պատկառանքից չհամարձակվեց Հովսեփին ասել Հրեշտակի ավետիսի մասին, այլ ծածուկ աղոթում էր իր Որդուն՝ Աստծուն, որպեսզի Հովսեփին չզրկի նրա հայրն անվանվելուց և իրեն սպասավորելուց։ Հովսեփը նայելով նրա հեզությանն ու ամոթիսածությանը զարմանում էր Հղության վրա։ Մտածում էր չհանդիմանել սրբուհուն, սակայն տեսնում էր, որ շատերն են մատնացույց անում նրան։ Եվ Հովսեփը խորհում էր նրան գաղտնի արձակել՝ երկու պատճառով։ Եթե նա հանցավոր է, ապա իր տանը չպիտի մնա, իսկ եթե Պտուղը Սուրբ Հոգուց է, ապա ինքն արժանի չէ նրա հետ բնակվել։ Այդ պատճառով էլ ասաց Մարիամին. «Երդվեցնում եմ քեզ Իսրայելի Տեր Աստծով. պատմի՛ր ինձ քեզ հետ պատահածը»։

Երբ Կույսը Հովսեփին պատմեց Հրեշտակապետի ավետիսը, վերջինս ասաց. «Ո՞վ կարող է հավատալ այդպիսի խոսքերի, քանզի դրան նմանվող օրինակ չկա։ Ո՞վ է տեսել կուսությունն ու մանկանը նույն որովայնում, հավիտենությունից ի վեր այդ չի եղել կանանց մեջ, որ կույսը հղանա

առանց տղամարդու: Ինձ դժվար է հավատալ այդ նոր և օտար գործին, որի մասին ո՛չ բնությունն է վկայում և ո՛չ Գրքերը»:

Կույսը պատասխանեց. «Իմ խոսքերի վկայությունը դյուրությամբ կիմանաս և՝ Գրքերից, և՝ բնությունից: Ո՞վ ամուսնացավ կույս հողի հետ, որ ծնեց Աղամին: Եվ ինքը՝ Աղամը, ո՞ւմ մերձափորությամբ ծնեց Եվային: Ո՞վ ամուսնացավ ծառի հետ, որ ծնեց խոյին (տես Ծննդ. ԻԲ 13), և կամ ո՞վ մերձեցավ ժայռին, որից ջուր բխեց (տես Ելք ԺԵ 6): Ո՞ր հողը հղացրեց գավազանը խորանում (տես Թմբեր ԺԵ 8), և կամ ո՞ւմ զորությամբ ջուր բխեց Էշի ծնոտից (տես Դատ. ԺԵ 19): Եվ եթե բնությանը չես հավատում, որ ճշմարիտ է, լսիր սուրբ Գրքերին և հոգեշունչ մարդարեներին. «Ահա կույսը պիտի հղանա ու Որդի ծնի, և նրա անունը պիտի լինի Էմմանուել» (Եսայի Ե 14):

Հովսեփը հավատաց Մարիամին ու փառավորեց Հրաշագործ Աստծուն, և ինչպես Պետրոսը Հիսուսի ծնկների առջև ընկավ ու ասաց. «Ինձանից Հեռու գնա, Տե՛ր, որովհետև ես մեղավոր մարդ եմ» (Ղուկ. Ե 8), այդպես էլ Հովսեփին էր խորհում. «Երբ Օզիան մոտեցավ Աստծու Տապանակին՝ ուղղելու համար, իսկույն մեռավ (տես Բ Թագ. Զ 6), և երբ Ահարոնի որդիներն օտար կրակ բերեցին խորան, բոցակեզ եղան (տես Ղատ. ԺԶ 16): Արդ՝ եթե Մարիամը մնա իմ տան մեջ, ես և իմ որդիները կմեռնենք, իսկ եթե պատմեմ հրեաներին, չեն հավատա, քանի որ մարդարեներին էլ չհավատացին, այլ նրանց չարչարեցին և Աստծու բարկությունը բերեցին իսրայելի վրա: Ավելի լավ է լուռ արձակեմ նրան և Սուրբ Հոգին, որ նրա վրա հովանի է, կպահի նրան»:

Եվ մինչ նա այդպես էր մտածում, Տիրոջ հրեշտակը երազի մեջ երևաց նրան և ասաց.

«Հովսե՛փ, Դավթի՛ որդի, մի՛ վախեցիր քեզ մոտ առնելու Մարիամին՝ քո կնոջը, որովհետև նրա մեջ ծնվածը Սուրբ Հոգուց է» (Սատր. Ա 20):

Խոսքի սկզբում միմիթարում է Հովսեփին՝ նրան Դավթի որդի ասելով: Հրեշտակը որոշ նշանակությամբ է Մարիամին «Հովսեփի կին» ասում: Ինչպես և Քրիստոս խաչի վրա ասաց Մարիամին. «Ո՛վ կին, ահա՛ քո որդին», ապա դառնալով Հովհաննեսին՝ շարունակեց. «Ահա՛ քո մայրը» (Յովի. ԺԹ 26-27): Հովհաննեսն ու Մարիամը ո՛չ թե բնությամբ էին մայր ու որդի, այլ դրության բերումով: Նույնն էր և այս դեպքում: Եվ քանի որ Հովսեփը զարհուրել էր այդ սքանչելիքներից, դրա համար էլ ասաց «քո կինը» այն իմաստով, թե ինչպես որևէ այր առանց երկյուղի բնակվում է իր կնոջ հետ, նույն հարկի տակ, այնպես էլ դու նրա հետ բնակվի՛ր:

Երբ Հովսեփը իմացավ, որ չի կարելի արձակել Մարիամին, սկսեց նրան սպասավորել մեծ երկյուղածությամբ, ինչպես աստվածաբնակ

տաճարի, և հակառակում էր բամբասող հրեաներին, վկայելով Մարիամի սրբությունը: Երբ Կույսի հղության լուրը հասավ քահանաներին, Հովսեփին ու Մարիամին տաճար կանչեցին՝ որպեսզի Հովսեփին հրապարակավ խոշտանգեն: Բայց նա արդարացրեց իր անձը և պատմեց Տիրոջ հրաշալիքների մասին: Քահանաները նույնը լսեցին նաև Մարիամի բերանից, սակայն չհավատացին, այլ տվեցին նրան ըմպելով՝ հանդիմանության ջուրը², որն ատյանի առջև ըմպելով՝ անարատ գտնվեց, և ողջ երուսաղեմը հիացավ:

Եվ համբերեց Կույսն ինն ամիս և հինգ օր, ըստ անդրանիկների հղացման տասնամյա օրերի թվի: Քանզի Սողոմոնը մարդարեացել էր. «Ես մարմին եմ առել մոր որովայնում տասնամյա ժամանակի մեջ» (Իմաստ. Է 2): Քանի որ Սողոմոնն անդրանիկ չէր, հետևաբար այդ խոսքը Քրիստոսի մասին էր ասել:

Հովհաննեսի ծննդյան օրը բացվեց Զաքարիայի բերանը և նա Տիրոջ անձառելի ծնունդից հետո Մարիամին տարավ տաճար ու կարգեց կույսերի տեղում, քանի որ ձշմարտապես անխախտելի պահվեց Մարիամի կուսությունը:

Դա առաջացրեց հրեաների ատելությունը: Բայցի դրանից Զաքարիան վաստակեց նաև Հերովդեսի թշնամությունը, քանզի չկամեցավ Սրբության սրբոց մտնելու համար կաշառք տալ նրան: Հերովդեսն անօրինությամբ թագավորությունը վերցնելուց հետո տիրեց սրբությունների վրա և Օրենքը ոտնահարելով՝ ամեն տարի նոր քահանայապետ էր նշանակում և առանց կաշառքի թույլ չէր տալիս նրանց Սրբության սրբոց մտնել: Իսկ ըստ Օրենքի՝ մինչև քահանայապետի վախճանվելը՝ ոչ ոք իրավունք չուներ նրա տեղը գրավել:

Բեթղեհեմի մանուկներին կոտորելուց հետո Հերովդեսը կամեցավ սպանել նաև Զաքարիայի որդուն՝ Հովհաննեսին, սակայն Զաքարիան նրան չհայտնեց մանկան տեղը և սպանվեց տաճարում՝ սուրբ Սեղանի առջև: Դրանից հետո տաճարում այլևս տեսիլքներ և հայտնություններ չէին լինում, և ժողովուրդն այլևս չէր ստանում իր հարցերի պատասխանները: Եվ այդ մասին է ասում Տերը. «Ես ձեզ մոտ ուղարկում եմ մարդարեներ, իմաստուններ ու օրենսգետներ. Նրանցից ոմանց դուք պիտի սպանեք և խաչը պիտի հանեք. Նրանցից ոմանց էլ պիտի տանջեք ձեր ժողովարաններում ու քաղաքից քաղաք պիտի հալածեք, որպեսզի ձեր վրա

² Դին օրենքով, երբ կինը կասկածվում էր անհավատարմության մեջ, քահանան Տիրոջ առջև երդվեցնում էր նրան և տալիս խմելու «հանդիսանության ջուրը»: Եթե կինն իրոք մեղավոր էր, ապա ջուրը պետք է ուռեցներ կնոջ որովայնն ու մեջքը և հյուծեր նրա զիստերը (ԹՎԵՐ Ե 27):

ընկնի մեղքը երկրի վրա թափված ամեն արդար արյան՝ արդար Աբելի արյունից մինչև արյունը Բարաքիայի որդի Զաքարիայի, որին սպանեցիք տաճարի և զոհասեղանի միջև» (Սատր. ԻԳ 34-35):

Սուրբ Հոգու հօնելը Մարիամի առաջ

Սուրբ Հոգին երկու անգամ է իջնում սուրբ Աստվածածնի վրա և երկու անգամ մաքրում նրան: Առաջին անգամ, երբ նա դեռ իր մոր որովայնում էր, և երկրորդ անգամ, երբ նա տասնչորս տարեկան էր: Այն բոլոր պարգևները, որ Աստված տվել էր իր սիրելիներին, առավել փարթամորեն տվեց նաև իր մորը: Սուրբ Գրքից հայտնի է, որ երկու մարգարեներ մաքրվեցին իրենց մոր որովայնում, նախ երեմիան՝ ըստ այս խոսքի. «Դեռ քեզ որովայնում չստեղծած՝ ես ընտրեցի քեզ, և դեռ արգանդից դուրս չեկած՝ սրբացրի քեզ» (Երեմ. Ա 5), և ապա Հովհաննես Մկրտիչը՝ ըստ այս խոսքի. «Երբ Եղիսաբեթը Մարիամի ողջույնը լսեց, մանուկը խաղաց նրա որովայնում, և Եղիսաբեթը լցվեց Սուրբ Հոգով» (Պուկ. Ա 41): Հետեւաբար՝ սուրբ Աստվածածինը, ում միջոցով աշխարհ պիտի գար Քրիստոս, առավել ևս պիտի սրբվեր, քան Քրիստոսի մասին վկայող մարգարեները:

Երբ Հիսուս Քրիստոս հղացավ սուրբ Կույսի որովայնում, վերջինս գերծ էր Աղամի սկզբնական մեղքից, քանզի հղությունը Սուրբ Հոգով էր: Եվ Կույսի անդամներում տեղ չգտավ այն օրենքը, ինչի մասին ասում է Պողոսը. «Բայց իմ մարմնի անդամների մեջ տեսնում եմ այլ օրենք, որ պայքարում է իմ մտքի օրենքին հակառակ և ինձ գերի է դարձրել մեղքի օրենքին» (Ղօն. Է 23): Մարդիկ հղիանում են սկզբնական մեղքերով և երբ մկրտվում են, սրբվում են Աղամի մեղքերից, սակայն անդամների օրենքը նրանց մեջ մնում է մինչ մահ: Մկրտությամբ անդամների օրենքը նրանց մեջ տկարանում է, իսկ ովքեր չեն մկրտվում, նրանց մեջ զորացած է մնում և՝ աղամական մեղքը, և՝ անդամների օրենքը: Իսկ սուրբ Կույսը երբ բանական հոգին ստացավ մոր որովայնում, գերծ էր սկզբնական մեղքից, քանզի եթե սկզբնական մեղքի տակ լիներ, ապա նա ամենակին չէր լինի գեղեցիկ և ընտրյալ հազարներից, այլ կլիներ արատավոր, ինչը կհակառակեր Սողոմոնի խոսքին. «Դու բոլորովին գեղեցիկ ես, ո՛վ իմ սիրելի, և ոչ մի արատ չկա քո մեջ» (Երգ. Դ 7): Չնայած որ Կույսն ազատ էր մեղքերից, սակայն կարոտ էր Քրիստոսի փրկությանը, և Քրիստոս եղավ Փրկիչ նաև իր մոր համար:

Սուրբ Հոգին մաքրում է Կույսին նաև անդամների օրենքից, և նա այնպիսին էր, ինչպիսին Աղամը՝ նախքան մեղանչելը Դրախտում: Իսկ տասնչորս տարեկանում, երբ կրկին լցվեց Սուրբ Հոգով և Աստծու Որդու

գորությամբ, Ով հղացավ նրա մեջ, Կույսն ամբողջովին մաքրվեց անդամների օրենքներից: Եվ բարին այնպես հաստատվեց նրա մեջ, որ նա այլևս չէր կարող մեղանչել ո՛չ մահացու և ո՛չ էլ ներելի մեղքերով:

Սուրբ Աստվածամայրը մայրն է բոլոր քրիստոնյաների և ծնողը Հնդկանրական Սուրբ Եկեղեցու, քանզի սկիզբն է սուրբ ծննդյան Ավազանի: Քանի որ ինչպես Կույսից և Սուրբ Հոգուց ծնվեց Քրիստոս, նույնպես Ծրից և Սուրբ Հոգուց ծնվում են բոլոր քրիստոնյաները: Եվ ինչպես անհնար էր կնոջ համար առանց այր մարդու մանուկ ծնել, սակայն Կույսը ծնեց Հոգով, այդպես էլ անհնար էր ջրի համար մարդիկ ծնել, և ջուրը ծնեց Հոգով:

Դարձյալ՝ ինչպես զորացավ սուրբ Կույսը և ծնեց Աստծու Որդուն, այդպես էլ զորացավ Ավազանի արգանդը և ծնեց մեզ՝ դարձնելով Աստծու որդիներ: Հայտնի է, որ Կույսը եղավ սկիզբը և բացողը հոգեոր ծննդյան Ավազանի, քանզի նա ծնեց Աստծուն բնությամբ և մեր Եղբորը՝ մարմնով: Երբ մենք ծնվում ենք Ավազանից, ապա Տերն այլևս ամոթ չի համարում կոչվել մեր Եղբայրը:

Արդ՝ ինչպես Քրիստոս կոչվում է մեր Եղբայրը, այդպես էլ նրա Հայրը՝ Աստված, մեր Հայրն է կոչվում, և նրա մայրը՝ Աստվածածինը՝ մեր մայրը: Եվ նա՝ որպես մայր, սիրով կապված է բոլոր հավատացյալներին և անդադար բարեխոսում է մեզ համար՝ իբրև իր կրտսեր որդիների, և ինքը՝ Միածին Որդին, հնագանդությամբ լսում է իր մոր աղաչանքները իր անվանական Եղբայրների համար:

ՀԻՆՈՒՆՔ

Յինունքը Զատկից մինչև Յոգեգալուստ հիսուն օրվա միջոցն է: Զատկից մինչև Յամբարձում երեքսրբյանը սա է. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ յարեար ի մեռելոց, ողորմեա' մեզ»:

Թագավորների համար օրենք է հիսուն օր հարսանիք անել: Այդպես փարզեց նաև երկնավոր Արքան՝ հիսուն օր ուրախություն պարգևելով քրիստոնյաներին՝ ասելով. «Մի՞թե կարելի է, որ հարսանքավորները ծոմ պահեն, երբ Փեսան նրանց հետ է. այնքան ժամանակ, որ Փեսան իրենց հետ է, պետք չէ, որ ծոմ պահեն: Բայց կդան օրեր, երբ Փեսան նրանցից կվերցվի, և ապա այն օրը նրանք էլ ծոմ կպահեն» (Սարկ. Բ 19-20):

Ովքեր պատրաստվում են պատանի թագավորին ամուսնացնել, մեծ ծախսեր են անում և բազում պատրաստություններ տեսնում: Եվ քանի որ փեսայի ծախսերը հայրն է հոգում, այդ պատճառով էլ այս օրերին այլ մարդարեություններ չեն ընթերցվում եկեղեցում, այլ միայն Դավիթի սաղմոսները, ով մեր Տիրոջ հայրն է ըստ մարմնի: Արդ՝ մենք էլ այլ տեղից գարդեր չվերցրինք այս օրերի պաշտամունքի համար, այլ Փեսայի ամենափարթամ տնից՝ եկեղեցուց:

Բացի այդ Քրիստոսի հարությունից մինչև Սուրբ Հոգու գալուստը Նոր արքայության նշանակն է, և կարիք չկա քարոզել Հին Կոտակարանը, քանի որ կատարվեցին սուրբ մարդարեների բոլոր գրվածքները: Այդ պատճառով այս օրերին Հին Կոտակարանից ընթերցվում են միայն Դավիթի սաղմոսները: Այս օրերին զինվորակ եկեղեցին հրեշտակների վերին զորքերի և երկնքի զվարթունների հետ անդադար օրհնում է Աստծուն և ասում. «Փա՛ռք Քո հարությանը, Տե՛ր»:

Ինչպես Մեծ պահքի ժամանակ՝ հիսուն օր շարունակ, շաբաթ ու կիրակի օրերն ինչպես չորեքշաբթի և ուրբաթ պահեցինք, այդպես էլ Զատկից հետո՝ մինչև Համբարձում, չորեքշաբթի և ուրբաթ օրերին պետք է այնպես ուտել, ինչպես սովորական շաբաթ և կիրակի օրերին: Քանզի ինչպես Բարեկենդանից մինչև Զատկի ուրբաթ է կոչվում, այպես էլ Զատկից մինչև Տիրոջ Համբարձում՝ կիրակի է կոչվում: Սա նաև Ավետարանի հրամանով է, որ ասում է. «Մի՞թե կարելի բան է, որ հարսանքավորները սուգ պահեն, քանի Փեսան նրանց հետ է»: Քանզի ուրբաթը բոլթ և գույժ է թարգմանվում, այսինքն՝ սուգ: Խսկ համբարձումից հետո սկսում ենք պահել, ըստ Ավետարանի այս խոսքի. «Կդան օրեր, երբ Փեսան նրանցից կվերցվի, և ապա ծոմ կպահեն» (Սարք. Թ 15):

Հիսուն օրերի այս շրջանը կոչվում է «Հինունք», և այդ բոլոր օրերը նվիրված են Քրիստոսի հարությանը: Այս հիսուն օրերին Զատիկ է, և Զատիկն ազատություն և ուրախություն է նշանակում: Ինչպես պահքն արտասուքի և լացի համար է, այդպես էլ հինունքը՝ ցնծության և ուրախության: Պահքը միջնորդ է ապաշխարության, իսկ հինունքը՝ երաշխավոր թողության: Պահքը հանցանքների քավություն է, իսկ հինունքը՝ մեղքերի թողություն: Պահքին սերմանում ենք ցավով և տրտմությամբ, իսկ հինունքին՝ հավաքում փառքով և գոհությամբ: Պահքին եղավ չարչարանքների քացախն ու լեղին, իսկ հինունքին՝ մեղքախորիսին և խորոված ձուկ (տես Դուկ. ԻԴ 42): Պահքին զինվորները կնքելով պահում էին գերեզմանը, իսկ հինունքին՝ հրեշտակներն ավետիս տվեցին յուղաբերներին:

Դուկասն ասում է, որ այս քառասուն օրերին Հիսուս երևաց իր աշակերտներին, թեպետ Հովհաննեսը միայն երեք հանդիպումների մասին պատմեց՝ ըստ այս խոսքի. «Երբորդ անգամն էր, որ Հիսուս երևաց իր աշակերտներին՝ մեռելներից հարություն առնելուց հետո» (Յովի. ԻԱ 14): Հովհաննեսը միայն այն երեսումների մասին է ասում, որոնք սքանչելի էին, և դրանցից երկուսը եղան Վերնատանը, և մեկը՝ ծովեղերքին, իսկ Դուկասն ասում է այն մասին, որ Տերը մինչև համբարձվելը յուրաքանչյուր կիրակնամուտի երեսում էր իր աշակերտներին ու քաջալերում նրանց, միմիթարում և կրթում՝ պատմելով Աստծու արքայության մասին:

Վարդապետներն ասում են, թե Տերը հարությունից հետո տասն անգամ երևաց իր աշակերտներին. առաջին հինգ անգամը՝ նույն օրը, երբ հարություն առավ մեռելներից, իսկ մյուս հինգը՝ հաջորդող կիրակնամուտերին: Այս խորհրդով ամեն կիրակնամուտի գալստյան սրբասացությունն ենք երգում՝ ասելով. «Սուրբ Աստուած, Սուրբ և Հզօր, Սուրբ և Անմահ, որ եկիր և գալոց ես. ողորմեա' մեզ»:

Ինչպես պահոց յոթ կիրակիները, այդպես էլ հինունքի յոթ կիրակիներն իրենց առանձին անուններն ունեն. դրանք են՝ Զատիկ, Նոր կիրակի կամ Կրկնազատիկ, Աշխարհամատրան կամ Կանաչ կիրակի, Կարմիր կիրակի, Երևման խաչ, Երկրորդ Ծաղկազարդ, Հոգեգալուստ:

ԿԵՐԱԿԻ ՕՐՎԱ ՊԱՏԿԱՐԻ

Աշխարհի ստեղծումից մինչև Քրիստոսի հարությունը, ըստ Մովսեսի ավանդության, շաբաթ օրն էր որպես կիրակի պատվվում, իսկ Քրիստոս միաշաբաթին հարություն առնելով՝ միաշաբաթը կիրակիի վերափոխեց:

Կիրակի օրը եղավ օրերի սկիզբը, և ինչպես առաջին լույսն այդ օրը ծագեց, այնպես էլ Տիրոջ Հարության լույսը միաշաբաթի մեջ ծագեց, և ապա Անշեղ ձառագայթը՝ Սուրբ Հոգին, այդ օրը եղավ, նաև՝ արդարների

լույսն է այսօրվա մեջ ծագելու: Եվ բարի է, որ սա կիրակի է կոչվում, որը նշանակում է «տերունի», քանի որ Տիրոջը միշտ ունի իրենում: Եվ հանդերձյալում՝ ամեն ինչի ավարտին, այդ օրը, փոխանակ այս զգալի արեգակի, Սուրբ Երրորդությունն է ունենալու իր մեջ՝ ինչպես Արեգակ:

Կիրակին զարմանալի ու մեծ պատիվ ունի, քան շաբաթվա մյուս օրերը: Նախ որ կիրակին է սկիզբը և անդրանիկը բոլոր օրերի, քանզի նա է «օր մի», ինչպես ասում է Մովսեսը. «Եվ եղավ երեկո, և եղավ առավոտ՝ օր մի» (Ծննդ. Ա 5): Սրա կրկնվելով են լինում մյուս օրերը՝ երկրորդը, երրորդը և այլն, մինչև աշխարհի վախճանը: Անդրանիկ միաշաբաթ օրն Աստված բացեց իր անձառելի և անսաելի բարության հունը և սկսեց արարել արարածներին, և այդ օրը ստեղծվեցին երկինքը, երկիրը, Հրեշտակները, լույսը և տարրերը, որոնք Աստծու յոթ գործերն են: Անսահման Բարին չկամեցավ միայն ինքը վայելել իր բարիքները, այլ արժանի համարեց այն տարածել ու բազմացնել աշխարհի շինության համար, որպեսզի իր արարածները ևս վայելեն նրա անսպառ պարգևները և աննախանձ բարությունը: Հնում այդ օրը բազում այլ գործեր ևս եղան՝ նոյն՝ տապան մտնելը, Աստծու՝ Աբրահամի հետ խոսելը, նաև՝ Մովսեսի հետ խոսելը Աինա լեռան վրա և Օրենքի տվյալները:

Այդ օրը պատվում է նաև Քրիստոսի հարությամբ և Սուրբ Հոգու իջմամբ առաքյալների դասերի վրա: Սա նաև մարդկային ցեղի համընդհանուր հարության և Քրիստոսի գալստյան օրն է, երբ յուրաքանչյուրը պիտի հատուցում ստանա ըստ իր գործերի, և արդարների լույսը սրա մեջ է ծագելու, քանզի սա է վերջին օրը և վախճանը:

Կիրակի թարգմանվում է տերունի, քանզի այսօր թողնում ենք բոլոր մարմնավոր գործերը և հետևում միայն տերունական գործերին: Եվ դրանով կիրակին խորհրդանշում է վերջին օրը, որովհետև ինչպես կիրակի օրը խափանվում է ամեն մարմնական գործ և միայն աստվածայինը գործում, նույնպես և վերջին օրը խափանվելու են բոլոր մարմնական գործերը: Եվ ինչպես կիրակի օրը լինում է մեղքերի խոստովանություն, որոնք գործվեցին ամբողջ շաբաթվա ընթացքում, նույնպես և այն օրը պետք է հայտնի դառնան բոլորի մեղքերը: Սա նաև հանդերձյալ ատյանի պատկերն է ու կերպարանքը:

Երեք տեսակի օրեր կան. առաջին՝ ստեղծման օրը, երկրորդ՝ միջին օրը, որը հասնում է մինչև աշխարհի վախճանը, և երրորդ՝ համընդհանուր հարության օրը, որը վերջինն է: Եվ դրանք զանազանվում են հետեյալով. առաջին օրն առանց առավոտի էր, իսկ վերջինն առանց երեկոյի է լինելու: Միջին օրերն ունեն և՛ առավոտ, և՛ երեկո: Այսպիսով՝ կիրակին ավելի պատվելի է բոլոր օրերից, քանզի ինքն է օրերի սկիզբը՝ ստեղծվելով, ինքն է միջին օրը՝ շաբաթվելով, և վերջին օրը՝ դադարելով:

ՆՈՐ ԿԻՐԱՎԿԻ ԿԱՄ ԿՐԿՆԱՋԱՏԻԿ

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՐԱՎԿԻ

Այս օրը երբեմն կոչվում է «Նոր կիրակի», երբեմն էլ՝ «Կրկնացատիկ», քանզի նոր և չքնաղ է այդ տոնի խորհուրդը։ Նոր է, որովհետեւ սկիզբն է նոր արարածների։ Նոր է կոչվում և գարունը, քանզի հաջորդելով՝ ձմռանը՝ սկսում է արարածների նորոգությունը, և մեռած կերպարանքով ծառերը վերստին ծլարձակում են։ Բնությունն ամեն տարի նորոգվում է չորս եղանակներով. գարնանը ծնվում է, ամռանն աճում և հասնում կատարելության, աշնանը ծերանում և ձմռանը մահանում՝ հաջորդ գարնանը վերստին նորոգվելու համար։ Դրանով նկարագրվում է մեր հարության խորհուրդը։ Եթե գարնանը բնությունը նորոգվում է հնությունից, ապա եկեղեցին առանց հնանալու է նորոգվում, քանզի եկեղեցին չի հնանում ու ծերանում, այլ Քրիստոսով կատարյալ է մնում։

Այսօր Տերը սկիզբն է դնում նոր արարածների, որոնք գերծ են փոփոխություններից, այդ պատճառով էլ այս օրը կոչվում է Նոր կիրակի։ Առաջին օրենքի քահանայությունը փոփոխվում էր, և մարդը քահանայությունը մարդուց էր ստանում, քանի որ մահն արգելք էր հանդիսանում, որ նրանք տևապես մնան քահանա։ Եվ սրանք Քրիստոսի հավիտենական քահանայության օրինակներն էին, Ով երկնքում՝ Հոր աջ կողմում, հավերժ նստած է առանց հնանալու։ Քանզի Տերը չի մահանում, և մահը նրան չի տիրում, այդ պատճառով էլ այլ քահանայապետի կարոտ չենք։

Դարձյալ՝ այս օրը նոր է կոչվում, քանզի ժամանակը սրան չի հնացնում, և դրանով է սկսվում նոր արարչությունը։

Այս օրը ութերորդն է նոր Աղամի հարությունից հետո և ութերորդ դարի պատկերն է՝ հին Աղամի ստեղծումից հետո, և դրանով է ցույց տրվում հանդերձյալ ատյանը։ Սրա մասին է ասում Սողոմոնը. «Բաժի՞ն տուր յոթին էլ, ութին էլ» (Ժող. ԺԱ 2): Այսօր նոր կիրակի է կոչվում, քանզի լինելու է նոր երկիր ու նոր երկինք, և լինելու է «մի օր» (Մես. Ծննդ. Ա 5)՝ առանց երեկոյի, որին մեկ այլ օր չի հաջորդելու։

Գիշերը ճրագի կարիք ենք ունենում, և առավոտը գիշերն ընդհատելով դառնում է արեգակի կարապետը, իսկ առավոտյան աքլորականչը, որը մեզ արթնացնում է, զգաստության միջնորդն է։ Այդպես և առաջին ժամանակներում տիրում էր կռապաշտության խավարը, ինչին մարգարեները գիշեր էին անվանում, և Աստված այդ գիշերը լուսավորելու համար տվեց Օրենքը՝ որպես ճրագ։ Իսկ Քրիստոսի՝ հավիտենական Արդարության գալստյամբ, Հովհաննեսը, մարդկանց արթնացնելով՝ ու զգաստության բերելով, եղագ ինչպես առավոտյան աքլորականչը՝ ըստ այս

իսոսքի. «Ես անապատում կանչողի ձայնն եմ, հարթեցե՛ք Տիրոջ ճանապարհը» (Յովի. Ա 23): Արդ՝ Տիրոջ գալստյամբ վերացավ կռապաշտության գիշերը, և ծագեց խաղաղության առավոտը, որով Լույսը իսպաթագավորեց՝ հալածելով խավարը, և Տերը մեծամեծ նշաններով գործեց միջօրյա փրկությունը և փրկվածներին օրհնության հրավիրեց՝ ասելով.

«Օրհնեցե՛ք Տիրոջը նոր օրհնությամբ» (Սաղմ. ԼԲ 3):

Հստ Ղուկասի ազգաբանության, որով նկարագրվում է մեր փրկության խորհուրդը, Աղամից մինչև Քրիստոս սերունդների թիվը յոթանասունութ է, և Առաջավորաց պահքից մինչև նոր կիրակին ևս յոթանասունութ օր է: Եվ այս օրը, կիրակի լինելով, նաև նոր արարածների սկզբնավորման օր է ասվում, քանի որ աշխարհի սկիզբը կիրակի օրը եղավ, այդ պատճառով էլ հրամայված է այսօր նավակատիք անել, որը նշանակում է ուրախանալ հոգեոր խնդությամբ, ինչպես սաղմոսերգուն է թելադրում: «Կատարեցե՛ք տոնն ուրախության մատղաշ ճյուղերով՝ մուտքից մինչև անկյունները սեղանի» (Սաղմ. ճԺԵ 27):

Արդ՝ նոր ասելով նոր կյանքն ի նկատի ունի, քանզի Քրիստոսով ամեն ինչ վերստին նորոգվեց, հինն անցավ և ամեն ինչ նոր եղավ (տեսն Կորնթ. Ե 17): Նոր եղավ նաև եկեղեցու խորհուրդը, որը հավիտյան ծածկված էր Աստծու մոտ, և այժմ հայտնվեց իր սրբերին, և եկեղեցու միջոցով երկնային իշխանություններին ու պետություններին (տեսն Կողոս. Ա 26, Եփես. Գ 9-10): Նոր է և եկեղեցու պատիվը, որի մասին առաքյալն ասում է, որ ուրախ է այն չարչարանքների ու նեղությունների համար, որ կրում է իր մարմնով (Կողոս. Ա 24): Նոր է նաև եկեղեցու պաշտոնը, քանզի ճշմարիտ երկրպագությունն այն է, երբ Հորը երկրպագում են հոգով ու ճշմարտությամբ, քանզի Հայրն այդպիսի երկրպագություն է փնտրում (տեսն Յովի. Դ 23): Նոր է և՛ եկեղեցու հոգեոր և՛ վերստին ծնունդը, որը մարդարեն նախապես տեսնելով ասաց. «Ո՞վ է լսել, ո՞վ է տեսել այսպիսի բան, որ երկիրը մեկ օրում ծննդաբերի, և միանգամից մի ամբողջ ազգ ծնվի. քանզի Սիոնը երկունքի ցավով բռնվեց և ծնեց իր մանուկներին» (Եսայի ԿԶ 8): Նոր է և՛ եկեղեցու սուրբ Սեղանի խորհուրդը և՛ փառքը, քանզի այլևս չի ներկվում նոխազների արյամբ, այլ ամբողջովին ներկված է Աստծու Օծյալ Որդու կենարար Արյամբ: Նոր է և եկեղեցու «պետության» կարգը՝ ըստ այս իսոսքի. «Զեզնից կվերցվի Աստծու արքայությունը և կտրվի այն ազգին, որ պատղաբեր կդարձնի այն» (Մատթ. ԻԱ 43): Նոր է նաև եկեղեցու «քրիստոնյա» անունը, ինչն Աստված նախ մարդարեն խոստացավ. «Իմ ծառաներին նոր անուն պիտի տրվի, որը պիտի օրհնաբանվի երկրի վրա» (Եսայի ԿԵ 15): Նոր է եկեղեցու հավատացյալների ու ժառանգների հույսը, ինչի մասին ասում է առաքյալը. «Ուստի ծառա

չես, այլ որդի, և եթե որդի ես, ապա և՝ ժառանգ Աստծու» (Գաղատ. Դ 7): Նոր է նաև Եկեղեցու արքայության ավետիսը. «Նրա հետ հարություն տվեց մեզ և Նրա հետ նստեցրեց երկնքում Քրիստոս Հիսուսով» (Եփես. Բ 6), ինչի մասին նաև Տերն է ասում. «Եթե մեկն ինձ ծառայի, իմ ետևից կգա. և ուր ես եմ, այնտեղ կլինի և իմ ծառան» (Յովի. ԺԲ 26): Նոր է նաև Եկեղեցու՝ մեռելների հարության խորհուրդը. «Արդ՝ մի խորհուրդ եմ հայտնում ձեզ. բոլորս էլ պիտի ննջենք, բայց ոչ թե իսկապես բոլորս. պիտի նորոգվենք հանկարծակի, մի ակնթարթում, վերջին փողի ժամանակ, քանզի փողը պիտի հնչի, և մեռելները հարություն պիտի առնեն առանց ապականության, և մենք պիտի նորոգվենք» (Ա Կորնթ. ԺԵ 51):

Արդ՝ տեսնում ենք, թե Քրիստոս ինչպիսի առատությամբ մեզ այսքան բարիքներ շնորհեց, ինչ մասին առաքյալն ասում է, թե ամեն ինչ նոր եղավ: Եվ այս բոլոր բարիքների պատճառն ու աղբյուրն այս օրն է, այդ պատճառով էլ այն նոր է կոչվում:

Բացի դրանից, այս օրը նաև պատկերն է հանդերձյալ աշխարհի. սա օրինակն է, իսկ հանդերձյալը՝ ճշմարտությունը: Սա անցնելու է, իսկ հանդերձյալը հավիտյան պիտի լինի: Այստեղ քիչը գիտենք և քչի մասին ենք մարդարեանում, իսկ այնտեղ կատարյալին ենք հասնելու բարու գիտությամբ՝ ըստ այս խոսքի. «Քանզի շատից քիչը գիտենք և շատից քիչն ենք մարդարեանում: Իսկ երբ գա կատարյալը, շատից քիչը կանչետանա» (Ա Կորնթ. ԺԳ 9-10): Այստեղ վայելում ենք Հոգու պտուղները, իսկ այնտեղ Հոգին բնակվելու է մեր մեջ: Այստեղ առաքինության տունկը տնկելով աճեցնում ենք, իսկ այնտեղ քաղելով պտուղը՝ պիտի վայելենք: Այստեղ նահատակվում ենք, իսկ այնտեղ փառքի պսակի պիտի արժանանք: Այստեղ քաղցում ենք, իսկ այնտեղ պիտի հագենանք Տիրոջ սեղանի լիությունից: Այստեղ հոգով աղքատանում ենք, իսկ այնտեղ արքայության ծոցն է մեզ ընդունելու: Այստեղ հեղությամբ ու խոնարհությամբ ենք գնում, ինչպես սովորեցինք Տիրոջից, իսկ այնտեղ ժառանգելու ենք երկնքի արքայությունը: Այստեղ ողորմություն ենք տալիս կարոտյալներին, ովքեր նայում են մեր ձեռքերին, իսկ այնտեղ երկնքի բարձունքներում հանդիպելու ենք ողորմած Քրիստոսին: Այստեղ սրբությամբ դաստիարակում ենք մեր սրտերը, իսկ այնտեղ տեսնելու ենք Աստծուն: Այստեղ իսաղաղարար ենք, իսկ այնտեղ լինելու ենք Աստծու որդիներ և Քրիստոսի ժառանգակիցներ: Այստեղ փոքրիշատե հալածվում ենք արդարության համար, իսկ այնտեղ մշտապես երկնքի արքայությունում ենք հանգչելու: Այստեղ սուր ենք անում ու լալիս մեր մեղքերի համար, իսկ այնտեղ խնդալու ենք և ուրախանալու: Այստեղ պատերազմում արիանում ենք իբրև քաջեր, իսկ այնտեղ պսակվելու ենք իբրև հաղթող:

Այս օրը Նոր կիրակի է կոչվում նաև խորհրդապես: Թեպետ առաջին միաշաբաթին՝ Հարության Կիրակիին նորոգվեց մեր բնությունը՝ հանձին Փեսայի, սակայն ոչ հանձին Հարսի՝ Եկեղեցու, քանզի Եկեղեցու իշխանները տակալին հնության մեջ էին. ոմանք երկմտում էին, ոմանք էլ չէին հավատում: Այդպիսիներին այս միաշաբաթում Տերը նորոգեց ու հաստատեց հավատի մեջ և նրանց միջոցով՝ Եկեղեցին: Նորոգեց, որպեսզի նոր գինին նոր տիկերի մեջ հեղի, քանզի չի կարելի նոր գինին լցնել հին տիկերի մեջ (տես Սատր. Թ 17):

Այս կիրակին ունի հետևյալ հատկությունները: Նախ՝ ինչպես կիրակին բոլոր օրերի սկիզբն է ու վախճանը, այնպես էլ այս կիրակին վախճանն է ժամանակի և սկիզբը՝ մշտնշենավոր հավիտենականության: Երկրորդ՝ աներեկո է, քանզի երեկոն սրան չի այցելելու: Երրորդ՝ չունի գիշեր, միշտ ցերեկ է, և սրան այլ օրեր չեն հաջորդելու: Չորրորդ՝ անշարժ է ժամերի, բողեների ու վայրկյանների համար, այսինքն՝ անժամանակ է:

ԿՐԿԱԶՎԱՏԻԿ

Այս օրը նաև Կրկնազատիկ է կոչվում երեք պատճառներով: Դրանք են՝ ազատությունը, հարությունը և փրկությունը: Նախ քննենք ազատության հարցը: Զատիկն ազատություն է նշանակում, և այս օրը կրկնակի ազատության օր է, հետևյալ պատճառով. թեպետ և Քրիստոս մեզ ազատեց մեր մեղքերից իր առաջին գալստյամբ, սակայն մեր մարմինը դեռ գտնվում է կրքերի ազգեցության ներքո, այսինքն՝ քաղցի, ծարավի, երկյուղի, տրտմության և այլն, ինչպես ասում է առաքյալը. «Մենք իսկ, որ Հոգու առաջին պտուղն ունենք, մենք ևս մեր մեջ հեծեծում ենք՝ սպասելով որդեգրությանը՝ մեր մարմնի փրկությանը» (Յոհ. Ը 23): Իսկ երբ Աստված ամեն ինչ նոր է անում և բոլոր կարիքներից մեզ ազատում, այնժամ դա կոչվում է Կրկնազատիկ:

Երկրորդ՝ Կրկնազատիկ է կոչվում մեր կրկնակի հարության պատճառով: Առաջին կիրակի օրը Քրիստոս մեզ հարություն տվեց իր Հոգով ու զորությամբ, ինչպես ասում է առաքյալը. «Նրա հետ հարություն տվեց մեզ և Նրա հետ նստեցրեց երկնքում Քրիստոս Հիսուսով» (Եփես. Բ 6): Իսկ երկրորդ կիրակի օրը մեզ հարություն է տալու ըստ մարմնի, և մեռելներից հարություն առնելով՝ պիտի անմահանանք: Այդ պատճառով էլ այս օրը կոչվում է Կրկնազատիկ, և մեր կրկնակի հարության օրվա պատկերն է:

Երրորդ՝ Կրկնազատիկ է կոչվում մեր փրկության պատճառով: Տերն առաջին կիրակի օրը երևաց աշակերտներին և նրանց հաստատեց հարության հավատի մեջ, իսկ երկրորդ կիրակի օրը երևաց, որպեսզի փրկի

Թովմասին թերահավատությունից ու հաստատի հավատի մեջ՝ ասելով. «Բե՛ր քո մատները և դի՛ր այստեղ ու տե՛ս իմ ձեռքերը. և բե՛ր քո ձեռքն ու մտցրո՛ւ իմ կողի մեջ. անհավատ մի՛ եղիր, այլ հավատացյալ»: Եվ Թովմասը նրան պատասխանեց. «Տե՛ր իմ և Աստված իմ» (Յովի. Ի 27-28): Եվ դա օրինակն է երկու տեսակի հավատացյալների: Աշակերտների մի մասն այն հավատացյալներն էին, ովքեր լսելով և հավատի աչքով տեսնելով՝ հաստատվեցին ի Քրիստոս, իսկ Թովմասն օրինակն է երկրորդ տեսակի հավատացյալների, ովքեր երկրորդ գալստյան ժամանակ սքանչելիքներից և երկյուղից հարկադրված պիտի հավատան՝ ըստ այս խոսքի. «Որպեսզի Հիսուս Քրիստոսի անունով խոնարհվի ամեն ծունկ՝ լինի թե՛ երկնավորների, թե՛ երկրավորների և թե՛ սանդարամետականների. և ամեն լեզու խոստովանի, թե Հիսուս Քրիստոս Տե՛ր է՝ ի փառս Հայր Աստծու» (Փիլիպ. Բ 10-11), ինչպես և այսօր Թովմասը, շոշափելով Տիրոջը, նրան Աստված դավանեց:

Դարձյալ՝ նոր կիրակի և կրկնազատիկ է կոչվում, քանզի նորովի ենք տոնում մեր Հոգու փրկության նավակատիքը՝ Հոգեոր ուրախությամբ և տոնախմբությամբ, և ոչ ինչպես հինը, քանզի Հնում նավակատիքը միայն մարմնավոր ուրախության համար էր:

Թովմասի Հաստատում

Երբ Տերը մեծ գորությամբ և սքանչելի նշաններով մեռելներից հարություն առավ, այցելեց սուրբ առաքյալներին և հաստատեց նրանց հավատի մեջ (տե՛ս Յովի. Ի 19): Տերը փակ դռներով մտավ Վերնատուն՝ աշակերտների մոտ, որպեսզի նրանց ցույց տա, որ ծնվելիս չխախտեց իր մոր կուսությունը, և որպեսզի աշակերտները չքննեն, թե նա ինչպես ծնվեց, քանզի ծննդյան մանրամասներին անտեղյակ էին: Տերը դուրս եկավ Կույսի արգանդից սքանչելի կերպով, որը հնարավոր չէ քննել, և մտավ Վերնատուն զարմանալի կերպով, որը հնարավոր չէ մեկնել: Մարդկային մարմնով դուրս եկավ Կույսի արգանդից՝ առանց կուսությունը խախտելու, նույն մարմնով մտավ գերեզմանից՝ առանց կնիքը խախտելու, այնուհետև նույն մարմնով մտավ Վերնատուն փակ դռներով՝ առանց դռները բացելու: Եվ ինչոր ոգի չմտավ փակ դռներով, այլ թանձր մարմին: Տերը տվեց իր ձեռքերն առաքյալներին՝ շոշափելու, որպեսզի չերկմտեն խաչելության հարցում և նրանցում հաստատվի աստվածգիտության հավատը:

Իսկ Թովմասը՝ Տասներկուսից մեկը՝ Երկվորյակ կոչվածը, նրանց հետ չէր, երբ Հիսուս եկավ (Յովի. Ի 24) – Թովմասն այդ օրն այնտեղ չէր, որը եղավ Աստծու նախախնամությամբ: Երբ Թովմասը եկավ, աշակերտները

նրան ասացին, որ տեսան Տիրոջը, իսկ Թովմասն ասաց. «Եթե չտեսնեմ Նրա ձեռքերի վրա մեխերի նշանը և իմ մատները մեխերի տեղերը չդնեմ ու իմ ձեռքը Նրա կողի մեջ չխրեմ, չեմ հավատա» (Յովի. Ի 25): Եվ հաջորդ կիրակի օրը, երբ առաքյալները ժողովվել էին Վերնատանը, և Թովմասն էլ նրանց հետ էր, եկավ Տերը, կատարեց իր սիրելիների խնդրանքները և հաստատեց Եկեղեցու հավատը: Տերը կանչեց Թովմասին և ասաց. «Բե՛ր քո մատները և դի՛ր այստեղ ու տե՛ս Իմ ձեռքերը. և բե՛ր քո ձեռքն ու մտցրո՛ւ Իմ կողի մեջ. անհավատ մի՛ եղիր, այլ հավատացյալ»: Եվ Թովմասը պատասխանեց. «Տե՛ր իմ և Աստված իմ», ինչին Քրիստոս պատասխանեց. «Որովհետեւ դու Ինձ տեսար, հավատացիր. երանի՛ նրանց, որոնք չեն տեսել և սակայն կհավատան» (Յովի. Ի 29):

Այսօր Տերը երկրորդ անգամ է որսում Թովմասին ուռկանով, որպեսզի նա առաքյալների թվում լինի, որով ուրախացնում է տրտմածներին, զորացնում երկչոտներին ու հաստատում մոլորվածներին: Ինչպես Հակոբ նահապետը Հովսեփի երկու որդիներին կարգեց իր որդիների թվում և գրանով իր որդիների թիվը դարձրեց տասներկու, նույնպես և Տերը, կամենալով առաքյալների թիվը դարձնել տասներկու, իր Եկեղեցու ուռկանով որսաց Թովմասին ու Մատաթիային (տե՛ս Գործ Ա 26), որոնց համար օրինակ եղան եղիմի տասներկու ալբրյուները (տե՛ս Ելք ԺԵ 27) և տասներկու անմշակ քարերից կառուցված Մովսեսի սեղանը (տե՛ս Ելք ԻՇ 4): Տերը երկնային իմաստությամբ աշխարհի հիմարներին ընտրեց՝ ամաչեցնելով աշխարհի իմաստուններին՝ դպիրներին, փարիսեցիներին և հեթանոս իմաստասերներին:

Եվ ինչպես ութերորդ օրը, ըստ օրենքի, թլիֆատում են մանուկներին, Քրիստոս ութերորդ օրը, իր հարությունից հետո, թլիֆատեց Թովմասի թերհավատությունը՝ ասելով. «Անհավատ մի՛ եղիր, այլ հավատացյալ»:

ԱՃԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԱՄ ԿԱՆԱՉ ԿԻՐԱԿԻ

ԵՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

Այս կիրակին կոչվում է Աշխարհամատրան կամ Կանաչ կիրակի: «Աշխարհամատուո» նշանակում է բոլոր քրիստոնյաների մատուռը, որը Երուսաղեմի առաջին Եկեղեցին է՝ հիմնված առաքյալների կողմից: Իսկ «Կանաչ» ասելով՝ նկատի ունենք ծաղկած ու կանաչած Եկեղեցին: Կանաչը խորհրդանշում է նաև Եկեղեցու հարատեսությունը և անմահությունը:

Ինչպես Մեծ պահքի կիրակիներն իրենց կարգն ունեին, այդպես էլ Հինանց կիրակիները: Աշխարհամատրան կիրակին տոնն է Ընդհանրական

Եկեղեցու, քանզի այս կիրակի օրը հիմնարկվեց, հաստատվեց ու տարածվեց Քրիստոսի Եկեղեցին ողջ աշխարհում:

Սա տոնն է աշխարհի Եկեղեցու և ոչ թե աշխարհի Եկեղեցիների, քանզի Եկեղեցին մեկ է՝ թեև բազում մասերի բաժանված լինի, ինչի մասին ասում է Սոլոմոնը. «Թող վաթսուն թագուհի և ութսուն հարճ լինեն, թող աղնիվ օրիորդներ ունենա արքան, մինչդեռ մե՛կն է իմ աղավնին, իմ կատարյալը» (Երգ Զ 7-8):

Այսօր նաև Եկեղեցու նավակատիքն է, որն ավելի պայծառ է, քան Եկեղեցու մյուս նավակատիքները, քանզի սա անմիջապես հաջորդում է Նոր կիրակիին, որում մեր Տերը նորոգեց Եկեղեցին, քանզի նավակատիքը տաճարի նորոգման տոնահանդեսն է:

Եկեղեցին, լինելով մեկ, խորհրդով երկու մաս ունի՝ Հին ու Նոր: Հինը ձևավորվել է Դրախտում՝ վերցվելով Աղամի կողից, և աճել մինչև Քրիստոս, իսկ Նորը շինվեց Գողգոթայի վրա՝ Քրիստոսի կողից, և աճելու է մինչև աշխարհի վախճանը: Ինչպես Հին Եկեղեցին Աղամի գորությամբ էր, այդպես էլ Նորը՝ Քրիստոսի: Հին Եկեղեցու մասին ասված է. «Աներևույթ էր ու անպատճառ» (Ծննդ. Ա 2), իսկ Նորի համար ասված է. «Աստված ասաց Լույս լինի, և եղավ» (Ծննդ. Ա 3): Հնում Եկեղեցին անտեսանելի էր ու գուրկ գեղեցկությունից և միայն Հրեաստանում էր երեելի, իսկ Նորը Սուրբ Հոգու իջմամբ գեղեցկացավ, Քրիստոսի հավատով լուսավորվեց և եղավ երեելի բոլոր ազգերի մեջ:

Եկեղեցին, հնի ու նորի բաժանվելով, չի կորցնում իր միությունը, քանզի Հին Եկեղեցում կատարվող կարգերը ստվերներն էին Նոր Եկեղեցու կարգերի՝ ըստ այս խոսքի. «Արդարեւ, Օքենքը հանդերձյալ բարիքների ստվերն էր, և ոչ թե իրողությունների բուն կերպարանքը» (Եբր. Ժ 1): Անմահ Գառան մորթվելով՝ ստվերական օրենքներն ինքըստինքյան վերացան, ինչպես արեգակի ծագումով չքանում են ստվերները:

Եկեղեցին նաև նյութական բաժանումներ ունի, որոնց մեջ առաջինը կոչվում է Աշխարհամատրան, այսինքն՝ մայր բոլոր Եկեղեցիների, և կարգված է բոլոր հավատացյալների համար: Ժամանակային առումով առաջինը կառուցվել է Սուրբ Էջմիածինը՝ Տրդատ արքայի կողմից, ապա Երուսաղեմի Սուրբ Հարության տաճարը՝ Հեղինե թագուհու կողմից: Այնուհետև Կոստանդիանոս կայսրը Հռոմում կառուցում է Սուրբ Պետրոս Եկեղեցին: Չնայած որ Սուրբ Հարության տաճարն առաջինը չի կառուցվել, սակայն Խաչյալի գորությամբ այն գերազանց է մյուս Եկեղեցիներից: Քանի որ Սոլոմոնի տաճարի փոխարեն կառուցվեց, ինչպես և Սիոնը՝ Մինա լեռան փոխարեն եղավ: Եվ որ ավելի կարեռ է, կառուցվել է Գողոթայի վրա և սրբվել Տիրոջ Արյամբ: Սա ևս կոչվում է Աշխարհամատուու,

ինչպես Նոյյան տապանը, քանի որ այն ընդհանուր է բոլոր քրիստոնյաների համար:

Երուսաղեմի տաճարը կառուցելուց հետո Հայրապետները հաստատեցին Կաթողիկե Եկեղեցու տոները՝ մեկն այս գարնանային ժամանակներում և մեկն էլ՝ աշնանը:

ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ

ՉՈՐԾՈՐԴ ԿԻՐԱԿԻ

Այս կիրակին կոչվում է Կարմիր, քանզի Եկեղեցին ոռոգվում է ու ծաղկում Քրիստոսի Արյամբ: Կարմիրը նաև մարտիրոսների հեղված արյունն է խորհրդանշում: Հստ Հինանց կիրակիների կարգի, երրորդ կիրակի օրը, աշակերտների միջոցով, հաստատվում է Քրիստոսի Եկեղեցին, և զղացողներն ընդունվում են Եկեղեցու մեջ, ինչը խորհրդով համապատասխանում է Պահոց «Անառակի կիրակիին», իսկ Հինանց չորրորդ կիրակի օրը ընդունվում են Եկեղեցու կարգերը, ինչը խորհրդով համապատասխանում է Պահոց «Տնտեսի կիրակիին»: Եվ այսօրվա ընթերցվածում Պետրոսը՝ որպես Եկեղեցու տնտես, երեցներին պատվիրում է, որ յուրաքանչյուրն ըստ իր չնորհների, բարությամբ հովվի իրեն վստահված հոտը:

Պողոս առաքյալը, ըստ արժանվույն գնահատելով վարդապետների ու Հոգեւոր հովիվների անհրաժեշտությունը Եկեղեցու կյանքում, նրանց իրեն պատվակից է անում՝ ասելով. «Եվ ում որ Աստված կարգեց Եկեղեցու մեջ, սրանք են. նախ՝ առաքյալներ, երկրորդ՝ մարգարեներ, երրորդ՝ վարդապետներ, ապա՝ զորավոր գործեր կատարելու չնորհներ, ապա՝ բժշկելու չնորհներ, օգնելու, կառավարելու չնորհներ, տեսակ-տեսակ լեզուներ խոսելու չնորհներ, լեզուների թարգմանության չնորհներ» (Ա Կորնթ. ԺԲ 28): Նաև պատճառաբանում է՝ ասելով. «Հաստատելու համար սրբերին իրենց պաշտոնի կատարման մեջ, ի շինություն Քրիստոսի Մարմնի» (Եփես. Դ 12):

Քանզի ինչպես քարերի մի շարքով տաճար չի կառուցվում, և մի ծաղկով գարուն չի գալիս, այդպես էլ մի խումբ հովիվներով Եկեղեցին անխախտ չի պահպում: Տիրոջ միայն մի երեսումը բավարար չեղագ՝ հաստատելու նրա հարությունը, այդ պատճառով էլ մինչև համբարձումը հաճախակի գալիս էր աշակերտների մոտ, որպեսզի աստիճանաբար հաստատի նրանց, քանզի Տիրոջ մարդեղության ամբողջ նպատակը կայանում էր իր Եկեղեցին հաստատելու մեջ: Այդ պատճառով Տերը, Տիբերական ծովեղերքին երևալով իր աշակերտներին, երեք անգամ ասաց Պետրոսին. «Արածեցրո՛ւ իմ ոչխարներին» (Յովի. ԻԱ 15): Եվ ինչպես Նոր

կիրակի օրը Տերը, ձեռնարկելով Եկեղեցու հաստատումը, հաստատեց առաքյալներին, նույնպես և այսօր հովիվներին հաստատելով՝ Եկեղեցին հաստատված համարեց:

Աստված Եկեղեցու մեջ կարգեց նախ առաքյալներին, ապա՝ մարդարեներին, այնուհետեւ՝ վարդապետներին, հետո՝ հովիվներին, որոնց Պետրոսը երիցակիցներ է կոչում: Տերը Եկեղեցին հաստատուն պահելու համար նրանում միշտ վարդապետներ ու հովիվներ է կարգում: Եվ Պետրոսն էլ իմանալով, որ Ճշմարիտ դավանության վեմի վրա է շինվում Եկեղեցին, նախանձախնդրությամբ վառվելով հոտի փրկության համար, այս կիրակի օրն աղաչում է բանական հոտի հովիվներին. «Ուրեմն՝ աղաչում եմ երեցներին, ես էլ նույնպես լինելով երեց ու վկա Քրիստոսի չարչարանքների և մասնակից գալիք փառքի հայտնության» (Ա. Պետ. Ե. 1): Եվ դիմելով Աստծու կողմից հոտի վրա հաստատված եպիսկոպոսներին՝ ավելացնում է. «Զգո՛ւյշ եղեք ինքներդ ձեր և ամբողջ հոտի համար, որի վրա Սուրբ Հոգին տեսուչներ կարգեց ձեզ՝ հովվելու համար Տիրոջ ժողովրդին, որին նա փրկեց իր Արյունով» (Գործք Ի 28):

Պետրոսը նույնպիսի հավատարմություն է պահանջում նաև եպիսկոպոսներից՝ իբրև երիցակիցներից և Քրիստոսի չարչարանքների վկաներից: Քանի որ եպիսկոպոսները հաղորդ են առաքյալների աստիճանին ու վառքին, ուստի Եկեղեցու հաստատության համար հարկավոր են ինչպես առաքյալներ, այնպես էլ՝ եպիսկոպոսներ: Այդ պատճառով առաքյալը պատվիրում է Տիրովեռութիւնն, որպեսզի նա օրինակ լինի հավատացյալներին՝ ասելով. «Օրինակ եղիր հավատացյալներին խոսքով, վարմունքով, սիրով, հավատով, մաքրությամբ» (Ա. Տիմ. Դ. 12): Քանի որ ինչպես աղբյուրն է պարտեզի համար, և ամպը՝ անջրդի հանդերի, նույնն է և առաջնորդը հոտի համար:

Աղբյուրի ու ամպի պակասությունը Աստծու մեծ ցասումն է ցույց տալիս, ինչի մասին ասում է Եսային. «Կլքեմ Իմ այգին, թող չէտվի ու չփորվի, թող նրա մեջ փուշ բուսնի, ինչպես խոպան տեղում, և կպատվիրեմ Իմ ամպերին, որ չանձրեն Իմ այգում» (Եսայի Ե. 6): Դրան հակառակ Աստծու մեծ բարեհաճության նշան է աղբյուրների առատությունը՝ իմաստունների բազմությունը և հանճարեղ թագավորները, քանզի եպիսկոպոսները հոգեոր թագավորներ են: Երբ ժողովուրդը հաճելի է Աստծուն, Աստված նրանց մեջ բարի ու հանճարեղ մարդիկ է կարգում, իսկ երբ ոչ՝ իմաստուններին վերցնում է ժողովրդի միջից:

Երբ Մովսեսը մի փոքր հապաղեց լեռան վրա, հրեաները մեծ փութով ընկան կռապաշտության գիրկը (տես Ելք ԼԲ. 1): Այդ պատճառով Զաքարիան ասում է. «Արթնացի՛ր, ո՛վ սուր, Իմ հովվի վրա և նրա ընկեր տղա-

մարդու վրա, Ես պիտի հարվածեմ իմ Հովվին, և իմ Հոտերը պիտի ցրվեն, Ես իմ ձեռքը պիտի դնեմ իմ Հովիվների վրա» (Զաքար. ԺԳ 7): Այսինքն՝ Հովվին հարվածելով՝ Հոտը ցրվում է, ինչպես և՝ երբ վերցնում են առաջնորդին, ժողովուրդն իսկույն ցրվում է: Այդպես Հեսուի ու Եղիազար քահանայի մահանալուց հետո ժողովուրդն ընկավ կռապաշտության մեջ (տե՛ս Յեսու ԻՂ 30-33) մինչև Սամվել մարգարեի գալուստը, ով նրանց դարձի բերեց (տե՛ս Ա Թագ. Է 3):

Ինչպես քանոնի ծովելով ծովում է գիծը, այնպես էլ քահանայապետի վարքի կամ դավանության ծովելով ծովում է և ժողովուրդը: Այսպես՝ Ահարոնի ծովելով ժողովրդի մեծ մասը տրվեց կռապաշտության, և եթե Մովսեսը մի փոքր էլ հապաղեր, ապա ամբողջ Եկեղեցին «կծովեր»: Այդ պատճառով էլ Պետրոսն ասում է երեցներին. «Արածեցրե՛ք Աստծու այդ Հոտը, որ ձեզ է հանձնված՝ վերակացու լինելով ոչ թե հակառակ ձեր կամքին, այլ հոժարակամ, ըստ Աստծու. ոչ թե շահախնդրությամբ, այլ հոժարությամբ. ոչ թե տիրելով նրանց, որ բաժին են ընկած ձեզ, այլ օրինակ լինելով Հոտին, որպեսզի երբ Հովվապետը երևա, փառքի անթառամ պսակն ընդունեք» (Ա Պետ. Ե 2-4):

Եվ ինչպես մեծ է քահանայապետի պատիվը, նույնպես և մեծ է գործած մեղքը և հավասար՝ ողջ ժողովրդի գործած մեղքին: Քանի որ Աստված պատիվեց քահանայի գործած մեղքերի համար մատուցել նույն պատարագը, ինչ ամբողջ ժողովրդի գործած մեղքերի համար (տե՛ս Ղետ. Դ 4, 13):

ՏՈՆ ԵՐԵՎՄԱՆ ՍՈՒՐԲ ԽԱԶԻ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

Օրվա երեքսրբյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա' մեզ»:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին տարին չորս անգամ է տոնում մեր Աստծու փրկագործ Խաչի՝ քրիստոնյաների պարծանքի և Եկեղեցու պսակի տոնը: Սուրբ Խաչի մեծ և առաջին տոնը կատարվում է սեպտեմբերի 14-ի մոտակա կիրակի օրը և կոչվում է «Խաչվերաց»: Երկրորդ տոնը կոչվում է «Գյուտ Խաչի», երրորդն այս տոնն է և կոչվում է «Երեման սրբոյ Խաչին», իսկ չորրորդը կոչվում է «Վարագա Սուրբ Խաչ»:

Այս տոնը կոչվում է «Սուրբ խաչի երեման տոն», քանզի Քրիստոսի խաչելությունից հետո՝ 351 թ. մայիսի 7-ին, երբ Երուսաղեմում Հայրապետ էր սուրբ Կյուրեղը և Հռոմում կայսր էր Կոստանդինը՝ որդին Մեծն Կոստանդիանոսի, օրը ցերեկով՝ երրորդ ժամին, Երուսաղեմի երկնքում երեաց սուրբ խաչի նշանը, որը լուսաձև և ճառագայթարձակ փայլմամբ տարածվեց Գողգոթայից մինչև Զիթենյաց լեռը։ Տիրոջ նշանն իր բոցաճաճանչ փայլով հաղթեց արեգակի ճառագայթներին և արձակած լույսով ծածկեց արեգակը։ Սա ցույց է տալիս, որ Քրիստոնեությունն ամենաբարեպաշտն է բոլոր կրոններից, ոչ միայն խոսքի իմաստությամբ, այլև Հոգու հայտնությամբ, քանզի պատմվում է ոչ միայն մարդկանց կողմից, այլև վկայվում է նաև երկնքից՝ Աստծուց։

Երբ քաղաքի ողջ բնակչությունը տեսավ այդ նշանը, որը երկար ժամանակ հայտնապես երևում էր երկնքում, մեծ երկյուղով և ուրախությամբ շտապեց եկեղեցի։ Բոլորը՝ և՛ հրեաները, և՛ հեթանոսները, հիացած, միաբան փառք տվեցին Խաչյալին և փառաբանեցին ամենազոր Խաչը։ Այդ օրը շատերը հավատացին Քրիստոսին ու մկրտվեցին սուրբ Կյուրեղի ձեռքով՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով։ Դրանով կատարվեց այն խոսքը, որ ասել էր Տերը Մատթեոս ավետարանչի միջոցով. «Եվ ապա երկնքի վրա Մարդու Որդու նշանը պիտի երևա» (Մատթ. Ի՛ 30):

Այդ առիթով սուրբ Կյուրեղը նամակ է գրում Կոստանդին կայսրին, ով ձգտում էր վերականգնել արդեն դատապարտված արիոսականությունը՝ դրանով մեծապես վտանգելով եկեղեցին։ Եվ ինչպես Կոստանդինի հայրը՝ Կոստանդիանոսը, խաչի նշանով հավատաց, այդպես էլ Տերը կամեցավ նրա որդու խաթարված հավատը ևս այդ նշանով վերականգնել։ Տերը նաև Թովմասի համար այդ արեց (տես. Յովի. Ի 25-29), ով կարոտ էր լուսավոր նշանի, քանզի այն վերքերը, որ Տերը ցույց տվեց նրան իր փառավոր Մարմնի վրա, ոչ այլ ինչ էր, եթե ոչ Քրիստոսի խաչի լուսավոր նշանը։ Նույնպես և Խորայելի որդիները, երբ ելնում էին Եղիպատոսից, թեպետ ունեին Մովսեսին իբրև իբրենց առաջնորդ, սակայն տակավին կարոտ էին Սինա լեռան վրա լուսեղեն ամպի տեսիլքին (տես. Ելք ԺԹ 16), որն օրինակը եղավ Քրիստոսի լուսապայծառ խաչի։ Նաև Երուսաղեմացիները կարիք ունեին երկնային նշանով հորդորվելու, չնայած որ ունեին Մովսեսի նման մի անաչառ քարոզիչ ու մեծ առաջնորդ՝ սուրբ Կյուրեղ Երուսաղեմացուն։

Լուսավոր խաչը, ցոլակով Գողգոթայից մինչև Զիթենյաց լեռը, ցույց տվեց, որ դա նշանն է նրա, Ով խաչվեց Գողգոթայի վրա և համբարձվեց Զիթենյաց լեռան վրայից։ Եվ այդ նշանն է առաջնորդում մարդկանց դեպի Խաչյալի հավատը, ինչպես լուսեղեն ամպը, հրեաներին դուրս բերելով

եգիպտական անհավատությունից, առաջնորդեց դեպի Ավետյաց երկիր։ Եթե Տերը կամենար, ապա այդ նշանն ամբողջ աշխարհին ցույց կտար, սակայն առայժմ ցույց տվեց միայն երուսաղեմացիներին, ովքեր այն տեսնելով ապաշխարեցին։ Հիրավի, մեծ էր երկնային նշանը, քանզի եթե խաչելության ժամին արեգակի խավարումը շարժեց հարյուրապետի սիրտը, և նա հավատաց Քրիստոսին, ապա որքան առավել տեսնողների սիրտը կշարժեր խաչի լուսավոր տեսիլքը։

Մատթեոսը վերջին օրերի մասին գրում է. «Այդ օրերի նեղությունից անմիջապես հետո արեգակը պիտի խավարի, և լուսինը իր լույսը չպիտի տա, և աստղերը երկնքից պիտի ընկնեն, ու երկնքի գորությունները պիտի շարժվեն։ Եվ ապա երկնքի վրա Մարդու Որդու նշանը պիտի երևա, ու այդ ժամանակ երկրի բոլոր ազգերը լացուկոծ պիտի անեն և պիտի տեսնեն Մարդու Որդուն, որ գալիս է երկնքի ամպերի վրայով՝ զորությամբ և բազում փառքով» (Մատթ. 29-30): Դա պետք է լինի համենդհանուր հարությունից առաջ, և այդ օրը հրեաների տասներկու ազգերը և բոլոր նրանք, ովքեր մոլորությամբ նեռին էին հարել, դարձի պիտի գան։ Քանզի անհնար է, որ մարդկան Աստված լքի իր արարածներին՝ նրանց առանց նշանների թողնելով, և թույլ տա, որ նեռը, բազում նշաններ հրամցնելով, մոլորեցնի մարդկանց, մինչև անգամ՝ ընտրյալներին։ Քանզի եթե խաչելության ժամին խաչի վրա բևեռված Տերը չմոռացավ խաչ հանողներին, այլ նրանց համար աղաչեց Հորը, ապա որքան առավել այն ժամին, երբ սատանան ու նեռն իրենց ամբողջ ճիգերով ու հնարավորություններով կփորձեն խավարեցնել եկեղեցին, կհիշի իր ժողովրդին։ Այդ օրը Տերը, ամբողջ աշխարհին ցույց տալով խաչի մեծ նշանը, կդադարեցնի սատանայի փորձությունները և մոլորվածներին ուղղության կբերի։

Իսկ այսօր ամենահաղթ նշանի երկմամբ Տերը վերահաստատում է եկեղեցին և մեր մեջ հաստատության կնիք տպավորում, որով ինչպես ինքը հաղթեց մահվանն ու դժոխքին, այդպես էլ մենք հաղթենք աշխարհին ու սատանային։

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Քահանաները զգեստավորված գալիս են ատյան և սկսում «Համբարձաւ» օրհնությունը: Օրվա երեքսրբյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ համբարձար փառօք առ Հայր, ողորմեա' մեզ»:

Անճառելի Բանն Աստված՝ Աստծու Որդին, Ով Հոր էության նկարագիրն է և փառքի Լույսը և Ում ծագումը նախքան արուսյակն է, հաճեց փրկել գերության մեջ գտնվող մարդկային ցեղը մահվան ձեռքերից և իր Կաթողիկե Սուրբ Եկեղեցին իրեն Հարս դարձնել: Եվ Հարսնախոսներ առաքեց իր երջանիկ ու սուրբ մարդարեներին, ովքեր կանխասացին Աստծու Որդու՝ երկնքից երկիր իջնելու տեղն ու ժամանակը: Նրանք նախապես պես-պես խոսքեր ասացին և օրինակներ թողեցին, որոնք ժամանակների վախճանին իր չարչարանքներով, խաչի մահվամբ, երեքօրյա հարությամբ և քառասուն օր իր երջանիկ ու սուրբ առաքյալներին երեալով կատարեց Տերը: Այս, ինչն առակներով և օրինակներով դրվագվեց մարդարեների կողմից, կատարվեց Աստծու Խոսքի մարդեղացմամբ: Իսկ այսօր Տերն իր ընտրած տասնմեկ առաքյալներով և բազում աշակերտներով գալիս է Զիթենյաց սուրբ լեռը, որը Երուսաղեմի դիմացն է՝ արևելյան կողմում:

Մեր Տեր Հիսուս Քրիստոս՝ Աստծու Որդին, եկավ աշխարհ, որպեսզի սովորեցնի իր վարդապետությունը մարդկանց: Նա նախ «նստեց»՝ բնակվեց, ամենաօրհնյալ սուրբ Կույսի արգանդում և այնտեղ մեզ կուսության դաս տվեց: Եվ ինչպես ծաղիկը ծառից է լինում, այդպես էլ Սուրբ Կույսը՝ Հիսուս Քրիստոս, ծնվեց կույս մորից: Ապա «նստեց» մսուրի աթոռին և մեզ աղքատության դաս տվեց, քանի որ ինչպես աղքատ մանուկ՝ պատվեց խանձարուրով: Այնուհետև նստեց աշխարհի աթոռին և ճշմարիտ հավատ, բարի գործ և սեր սովորեցրեց մարդկանց: Ապա նստեց խաչի աթոռին և իր չարչարանքներով մեզ սովորեցրեց խոնարհություն ու համբերություն: Իսկ այսօր իր դատաստանի աթոռը փոխադրում է երկինք, քանի որ այսօր համբարձվեց:

Աստծու Որդու տնօրինության բոլոր տոները, որոնք կարգվեցին երկրի վրա և որոնք կատարում է Եկեղեցին, սքանչելի են ու փառավոր: Դրանք մեր փրկության համար են, և հայտնում են Աստծու Երախտիքներն ու մեծագործ սքանչելիքները, որոնք ծածկված էին Աստծու իմաստության խորքերում: Իսկ այսօրվա տոնախմբությունը՝ Համբարձման տոնը, բոլոր տոների ու տնօրինական խորհուրդների ամբողջացումն է, որոնք ծնունդից

սկսվելով՝ կարգով գալիս են դեպի խաչելություն, մահ և հարություն։ Եվ անբովանդակելի Տերը, իր գերազանց մարդասիրությունից ելնելով, այս ամենը կատարեց ժամանակի մեջ՝ սկզբով ու ավարտով, որը վայելում էր միայն եղականներիս¹, որովհետև սկիզբ և վախճան ունենալը հատուկ է միայն եղական բնությանը։

Այս տոնը մարդարեների ավետիսով ու առաքյալների տեսությամբ մեզ հայտնում է կատարյալ փրկության մասին։ Քանի որ երկնավոր Հովիվը եկավ փնտրելու մոլորյալ ոչխարին՝ Աղամին՝ իր ստեղծածին ու պատկերին, Դրախտի և երկնավոր առագաստի ժառանգորդին, և գտնելով նրան կորստյան վիճում՝ դրեց իր ուսերի վրա, ուր և խաչն էր, և հանելով վեր՝ տարավ երկնային կայան։

Եվ այս օրը հրաշալի է ու պատվարժան, որովհետև մեր բնությունը, միավորվելով Աստծու Խոսքին, անզուգական փառքով ելնում է ավելի վեր, քան բոլոր իշխանություններն ու պետությունները, և մեզ էլ նույնն է խոստանում՝ ըստ այս խոսքի. «Ուր ես եմ, այնտեղ կլինի և իմ ծառան» (Յովի. ԺԲ 26): Եվ դարձյալ. «Եթե գնամ և ձեզ համար էլ տեղ պատրաստեմ, դարձյալ կդամ և ձեզ կվերցնեմ Ինձ մոտ» (Յովի. ԺԴ 3): Նաև առաքյալն է ասում. «Նրա հետ հարություն տվեց մեզ և Նրա հետ նստեցրեց երկնքում Քրիստոս Հիսուսով» (Եփես. Բ 6): Եվ որտեղ գլուխն է, այնտեղ էլ պիտի հավաքվեն անդամները, և ուր Փեսան է, այնտեղ էլ պիտի հրավիրվի Հարսը՝ սուրբ Եկեղեցին։

Դարձյալ՝ մեզ համար մեծ ուրախություն է այսօր, քանի որ ցորենի հատիկը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոս, ընկնելով երկիր, մահացավ և այնտեղից ելավ բազում արդյունքներով, և անապական ողկույզը, խաչի վրա ճմլվելով, հավաքվեց երկնային հնձանում, որը վարագույրի ներքին կողմում է՝ մեզ հույսով հաստատելու և մեր սրտերի ուրախության համար։

Մեզ համար պայծառ ու հրաշալի է նաև այսօրվա պատիվը, քանի որ Տերը, մեր անպատիվ բնությանը իր հետ հարություն տալով, տարավ դեպի անզուգական փառքը՝ իր հետ նստեցնելով երկնքում՝ ամեն իշխանության, պետության, գորության ու տերության վրա (տե՛ս Եփես. Ա 20):

Ինչպես Սողոմոնն է ասում. «Արեգակը ծագում, արեգակը մայր է մտնում և վերագառնում է իր տեղը, որտեղից ծագել է» (Ժող. Ա 5), այդպես էլ մեր Տերը՝ իմանալի Արեգակը, ելավ Հոր ծոցից և մտավ Կույսի արգան-

¹ Եղական են կոչվում բոլոր երևացող և աներևույթ բնությունները՝ արարածները, որոնք չկային և Աստծու հրամանով եղան։ Իսկ աստվածային բնությունը Անեղ է, և Նրա համար չկա սկիզբ ու վախճան, այսինքն՝ ժամանակը Նրա վրա իշխանություն չունի, քանի որ ժամանակը նույնպես Աստծու արարածն է։

դը, ապա շրջելով երկրի վրա՝ մահվամբ մտավ գերեզման, այնուհետև ելավ գերեզմանից և մեր բնությամբ գնաց իր տեղը՝ Հոր աջ կողմը:

Այս տոնը սքանչելի է բազում պատճառներով: Նախ այս տոնը նրան հայտնապես որպես Աստված է ցույց տալիս:

Երկրորդ՝ մինչ այս պահը տրտում էին առաքյալները, թեպետ ամեն տեսակի սքանչելիքների ականատես եղան, իսկ այսօր ուրախացած երուսաղեմ վերադարձան:

Երրորդ՝ մինչև այս պահը եկեղեցին չուներ կատարյալ իշխանություն, սակայն Տերն իր համբարձմամբ առաքյալներին՝ կաթողիկոսներ դարձրեց և մեզ անզուգական անուն պարգևեց:

Չորրորդ՝ մինչև այս պահը մեզ չէր տրվել օրենք՝ մաքրվելու համար սկզբնական մեղքերից, իսկ այսօր հրամայեց աշակերտ դարձնել բոլոր հեթանոսներին, որով և մենք արժանացանք աստվածային շնորհին:

Հինգերորդ՝ մինչև այս պահը մեզ չէր տրվել օրենք՝ մաքրվելու համար սկզբնական մեղքերից, իսկ այսօր առաքյալներին հրաման տրվեց մկրտել՝ Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով, որով փրկվում ենք բոլոր աղտեղի մեղքերից:

Վեցերորդ՝ Աղամից հետո մինչև այս օրը մարդու բնությունն անեծքի տակ էր՝ ըստ հետելյալ խոսքի. «Անիծյալ լինի երկիրը քո արածի պատճառով» (Ծննդ. Գ 17), իսկ այսօր, նույն Աստվածը, բարձրացնելով իր ձեռքերը, օրհնեց նրանց, և անեծքը օրհնության փոխեց:

Յոթերորդ՝ Երկնայինների դասերը թերի էին ու պակաս սատանայի անկման պատճառով, իսկ այսօր այդ պակասությունը լրացնելու սկիզբը դրվեց: Այսօր Տերը, գտնելով կորուսյալ մարդկային բնությունը և այն իր ուսերի վրա դնելով, երկինք բարձրացրեց ու դասակից դարձրեց հրեշտակներին:

Ութերորդ՝ թեպետև Տերը բազում գործեր կատարեց, սակայն վերին դասերն անտեղյակ էին նրա տնօրինական խորհուրդներին, իսկ այսօր վերիններին հայտնվեց անճառ խորհուրդը:

Իններորդ՝ մինչև այսօր միայն հրեշտակներն էին երկրպագում ու փառաբանում Տիրոջը՝ ըստ հետելյալ խոսքի. «Հազար-հազարավորներ պաշտում էին նրան, և բյուր-բյուրավորներ կային նրա առջև» (Դան. Է 10), իսկ այսօր մարդկային ցեղը գերազանցել է հրեշտակներին, քանի որ եթե հրեշտակները չէին համարձակվում նայել անդամ նրա աստվածային փառքին, ապա մարդիկ հրաման ստացան մոտենալ և ճաշակել նրա Մարմինը:

Տասներորդ՝ եթե եկեղեցու մյուս տոները հալածում են սատանային, ապա համբարձման տոնն ամբողջովին գլխիկոր է անում նրան: Քանի որ

Հղության ժամանակ սատանան հրեաներին կարծել տվեց, թե սուրբ Կույսն անառակությամբ է հղացել, Ծննդյան ժամանակ, թե՝ Հովսեփից է Մանուկը և ո՛չ Կուսածին, ծնունդից հետո վրդովեցրեց Հերովդեսին և կոտորել տվեց մանուկներին, մկրտության ժամանակ հրեաներին կարծել տվեց, թե Տերը կարու էր մաքրության, խաչելության ժամանակ ավագակների հետ դասեց, թաղելիս վեմը կնքեց, իսկ Հարության ժամանակ հայտարարեց, թե գողացել են Մարմինը: Նմանապես առաքյալների ու սրբերի մասին էր զանազան չարախոսություններ տարածում: Իսկ Համբարձման վերաբերյալ ոչինչ չկարողացավ հնարել և ամբողջովին ամոթահար եղավ, քանզի իր աչքով տեսավ հոգիների՝ դժոխքից ազատումը և Քրիստոսի Համբարձումը:

Տասնմեկերորդ՝ սա է Նրա մարդեղության բոլոր տնօրինությունների ավարտը, այդ պատճառով էլ մարդարեն ասում է. «Ճարվա պսակը պիտի օրհնվի քո քաղցրությամբ» (Սաղմ. ԿԴ 12): Որի համար պետք է երկրպագել Նրա անճառ Աստվածությանը:

**Հարությունիթ Հետո որտե՞ղ էր լիսուհ Քրիստոս
միւնքեւ երկինք Հարաբերությունը**

Շատերը տարակուսում են այս հարցում, թե Հարությունից հետո մինչև Համբարձում որտե՞ղ էր Փրկիչը: Հոգեկիր իմաստուններն ասում են, որ նա շրջեց վերին օդում և կիրակի օրերին երևում էր իր աշակերտներին: Եվ սա ասում են հետեւյալ պատճառներով:

Նախ՝ երկիրն անեծքի տակ էր Աղամի մեղքի պատճառով, իսկ Քրիստոս իր գալստյամբ սրբեց և օրհնեց բոլոր արարածներին, որոնք անեծքի տակ էին: Տերն առնելով մեր բնությունն ու շրջելով երկրի վրա, ջրում մկրտվելով և գերեզմանում թաղվելով՝ սրբեց հողն ու ջուրը, իսկ մեռելներից Հարություն առնելով և քառասուն օդ օդում լինելով՝ սրբեց օդն ու հուրը:

Երկրորդ՝ հեթանոսներից ոմանք երկիրն էին պաշտում՝ այն Դեմետրա կոչելով, ոմանք էլ՝ ջուրը՝ Պոսեյդոն կոչելով, ոմանք էլ՝ օդն ու կրակը՝ գրանց Աղոնիս և Հեփեստոս անվանելով, և տղիտությամբ գրանց աստվածներ էին կարծում: Իսկ երբ Աստված Ինքը եկավ և երևաց մարդկանց, իր տնօրինությամբ դեպի իրեն դարձրեց երկրպագողներին՝ ասելով, որ Ինքն է այն ծշմարիտ Աստվածը, Ում պետք է երկրպագել, իսկ գրանք բոլորն էլ արարածներ են: Եվ քանի որ տարրերը պղծվել էին կուռքերին մատուցած զոհերի պատճառով, որովհետև արարածները ոչ միայն Աղամի Հանցանքի պատճառով մտան անեծքի տակ, այլև մարդկային ցեղի կողմից

բնության տարրերին ու կուռքերին մատուցած զոհերի, այդ պատճառով էլ Տերը սրբեց դրանք նաև կռապաշտության ճենձից:

Վարդապետներից ոմանք էլ ասում են, որ հարությունից հետո, այս քառասուն օրերին, մինչև երկինք համբարձվելը, Քրիստոս մնաց Աղամի համար նախատեսված երկրավոր Դրախտում՝ իր հետ հարություն առած բոլոր սրբերի հոգիներով հանդերձ, և այնտեղ միմիթարեց ենոքին ու Եղիային:

Ինքո՞ւ Գրրատու Հարոհայումնեած Հետո Անժիջաղուս Երկրոք Զայտըրազւեած

Նախ՝ որպեսզի հաստատի իր հարությունը բազում ձևերով, ինչպես և ասված է. «Նա Իր չարչարանքներից հետո Իրեն կենդանի ներկայացրեց նրանց առաջ շատ ապացույցներով՝ քառասուն օրերի ընթացքում երեւալով նրանց և խոսելով Աստծու արքայության մասին» (Գործ Ա 3):

Հարության օրն առաքյալները, տեսնելով հարուցյալ Տիրոջը, իրենց մեծ բաղձանքից երկմտեցին, խաթարվեց նրանց բնական հոգեոր վիճակը, և թվում է, թե դրա մասին ասաց Մատթեոսը՝ «ոմանք երկմտեցին» (տես Մատթ. ԻԸ 17): Իսկ Հովհաննեսն ասաց, որ աշակերտները խնդացին, երբ տեսան Տիրոջը, և զարմացան, երբ նրա թանձր Մարմինն անարգել անցավ փակ դռներով (տես Հովհ. Ի 20): Եվ Տերը, գիտենալով մեր բնության կարողությունները, չթողեց ու հեռացավ, մինչև աշակերտների սրտերից չհանց կասկածները, այդ պատճառով էլ ասաց նրանց. «Այստեղ ուտելու բան ունե՞ք» (Պուկ. ԻԴ 41):

Տերը հարությունից հետո կերավ և խմեց իր ծառաների հետ, ինչպես Վարդապետը՝ իր աշակերտների հետ, և Առաքողը՝ առաքյալների հետ: Տերը կարիք չուներ ուտելու, սակայն կերավ, որպեսզի առավել ևս հաստատի, որ իր հարությունը ստույգ է՝ հայտարարելով, որ այն Մարմնով, որով կրեց ամեն տեսակ անարգանք և խաչի մահ, նույնով էլ հարություն առավ: Մանավանդ, որպեսզի չկարծեն, թե սա մի կերպարանք է կամ ստվեր, քանզի կերպարանքը չի ուտում, և ստվերը չի խմում: Եվ այդպես քառասուն օր նրանց կրթեց ու առաջնորդեց:

Դարձյալ՝ ինչպես Քրիստոս ստուգապես հաստատեց, որ մեռել է, այնպես էլ պետք է հաստատեր, որ ստուգապես հարություն է առել: Քանի որ հարությունից հետո, եթե մի անգամ երեար աշակերտներին և ապա համբարձվեր, նրանց մեջ կասկած կառաջանար, թե ճշմարտապես հարություն չի առել, այլ՝ թվացյալ: Այդ պատճառով էլ հարությունից հետո նրանց հետ քառասուն օր մնաց. շատ անգամ խոսեց ու կերավ նրանց հետ և նրանց սրտից վերացրեց բոլոր կասկածները:

ԻւԶՈ՞Ւ ՔՐԻՍՏՈՒ ԲԱՌԱՍԻՒ ՕՐ ՀԵՏԾ ՀԱՄԲԱՐՁՎԱՅ

Տեսնենք, թե ի՞նչ խորհուրդ ունի քառասուն թիվը, որտեղի՞ց է սկիզբ առել այն, և ինչո՞ւ մեր Տերը քառասուն օր հետո համբարձվեց երկինք: Նախ՝ իմաստունները քառասունը կատարյալ թիվ են կոչում, որը բաղկացած է չորս տասերից: Տասը կատարյալ թիվ է, իսկ չորսը խորհրդանշում է, որ աշխարհը բաղկացած է չորս տարրերից: Դա նշանակում է, որ Քրիստոս Իր գալստյամբ վերստին նորոգեց տարրերը, դրանք բերեց իրենց նախկին կատարելությանը, ապա համբարձվեց երկինք:

Երկրորդ՝ քառասունը պատվելի թիվ էր նախկին սրբերի համար. Աբրահամը, Մովսեսը և Հեսուն քառասուն օր պահք պահեցին: Այդ պատճառով էլ Տերը քառասուն օր մնաց օդում, որպեսզի սրբի այն դեերին մատուցված զոհերի ճենճերից և իրեն ծառայեցնի:

Երրորդ՝ արու մանուկը՝ իր բոլոր անդամներով ու զորությամբ, առաջին քառասուն օրերի ընթացքում է գոյանում մոր որովայնում, որից հետո ստանում է հոգին: Աստծու Որդին այդ օրինակով իր առաքյալների հետ վարվեց, ինչպես մանկան հետ է վարվում մայրական որովայնում՝ այս քառասուն օրերի ընթացքում նրանց հավատով ու գիտությամբ հաստատելով ու արիացնելով, իսկ հոգու փոխարեն Սուրբ Հոգին փչեց նրանց վրա:

Չորրորդ՝ իմաստուններից ոմանք ասում են, որ Աղամը, Հողից ստեղծվելուց հետո, միայն քառասուն օր անց դրվեց Դրախտում, և այդ պատճառով էլ Տերը քառասուն օր շրջեց երկրում մինչև համբարձվելը:

Հինգերորդ՝ վարդապետներից ոմանք էլ ասում են, որ Տերը քառասուն օր անց պիտի թույլ տար Աղամին և Եփային ուտել «Գիտության ծառից», որից հետո նրանք կարող էին ուտել նաև «Կենաց ծառից» և ապա պիտի փոխադրվեին երկնքի արքայություն:

Վեցերորդ՝ որպեսզի միսիթարի աշակերտներին: Աշակերտները Հիսուսի մահվան պատճառով քառասուն ժամ տրտմեցին: Թեպետ Տերը գիշերը հարություն առավ, սակայն աշակերտներին միայն արշալույսին երևաց, որի համար էլ ստացվում է քառասուն ժամ: Եկ զրա փոխարեն պետք է քառասուն օր ուրախանային: Սա ցույց է տալիս, թե այն փոքր տրտմության դիմաց, որ Քրիստոսի սիրույն կրում ենք այստեղ, հանդերձյալում մեծ միսիթարության ենք արժանանալու:

Յոթերորդ՝ ինչպես մկրտությունից հետո Տերը քառասուն օր անապատում էր, այդպես էլ հիմա քառասուն օր նյութական աշխարհում գտնվեց, որպեսզի ցույց տա, թե նույնն է, ինչ որ չարչարանքներից առաջ:

Ութերորդ՝ մեր Տերը քառասուն օր մնաց և մեզ համար դեպի երկինք ճանապարհ բացեց, որպեսզի դյուրությամբ այնտեղ գնանք, քանի որ ճանապարհը երկար է:

Իններորդ՝ առաքյալն ասում է, երկնքի տակ գտնվող դեերը պատերազմում են մեզ հետ. «Մեր պատերազմը մարմնի և արյան հետ չէ, այլ իշխանությունների, պետությունների, այս խավար աշխարհի տիրակալների և երկնքի տակ եղող չար ոգիների հետ» (Եփես. Զ 12): Դևերը բազում հնարքներով ջանում են կործանել մեր հոգիները, այդ պատճառով էլ Տերը նախ ինքը անցավ երկրից դեպի երկինք տանող ճանապարհով՝ կործանելով չար ոգիների բազում ամրությունները, և երկնքից՝ վարագույրի ներքին կողմից, մեզ ձայն է տալիս, որպեսզի հետևենք իրեն:

Տասներորդ՝ մինչև Սուրբ Հոգու գալը Տերը նյութական աշխարհում եղավ և շրջեց «նորաստեղծների»² վրա, ինչպես արարչության առաջին օրն Աստծու Հոգին շրջում էր ջրերի վրա:

Մեր Տեր Հիսուս Քրիստոս երեք անգամ «քառասունք» պահեց: Առաջինը՝ երբ անձառելիորեն ծնվեց սուրբ Կույսից և քառասնօրյա հասակում տաճար գալով՝ մեզ ընծայեց Հորը և Սիմեոն ծերունուն արձակեց մարմնի կապանքներից:

Երկրորդ՝ Հորդանանում մկրտվելուց հետո Հոգով անապատ տարվեց, և քառասուն օր ու գիշեր պահելով՝ հաղթեց փորձողների առաջնորդին և դրանով մեզ զորացրեց՝ արիաբար մարտնչելու ընդդեմ ախոյանի՝ ասելով. «Քաջալերվեցե՛ք, որովհետև Ես հաղթեցի աշխարհին» (Յովի. Ժ 33), նաև՝ «Ահա ձեզ իշխանություն տվի կովելու օճերի, կարիճների և թշնամու ամբողջ զորության վրա» (Ղուկ. Ժ 19): Ապա անապատից վերդառնալով՝ կանչեց աշակերտներին ձկնորսությունից, որպեսզի նրանք դառնան մարդկանց որսորդներ՝ հավիտենական կյանքի համար:

Երրորդ՝ հարությունից հետո պահեց այս քառասունքը և ապա համբարձվեց երկինք՝ իր հետ վեր տանելով նաև մեր բնությունը, որպեսզի նստեցնի երկնային ամեն իշխանության, պետության, զորության ու տերության վրա (տես Եփես. Ա 20):

Մեր Տերը երեք քառասունքներ պահեց, քանի որ ծնունդները երեքն են. առաջինը մարմնից է լինում, երկրորդը՝ ջրից ու Հոգուց՝ շնորհով Աստծուն որդեգրվելով, և երրորդը՝ Հարությամբ, որը մի ակնթարթում հավաքելու և Ստեղծողի մոտ է կանգնեցնելու մեզ՝ պատասխան տալու մեր խոսքերի ու գործերի համար: Այս երեք ծնունդներն էլ մեզ համար հանձն առնելով կրեց Քրիստոս:

² Նորաստեղծները Տիրոջ աշակերտներն էին, ովքեր Սուրբ Յոգին ստանալով՝ պիտի կազմեին Եկեղեցին:

Դարձյալ՝ Տերը պատվեց քառասուն թիվը՝ սուրբ Կույսի արգանդում գոյանալով ինչպես քառասնօրյա մանուկ և բնակվելով սուրբ Կույսի որովայնում քառասուն շաբաթ, ապա՝ քառասուն ամիս աշխարհում քարոզելով և քառասուն ժամ էլ մեռելների մեջ գտնվելով։ Այդպես էլ հարությունից հետո Տերը քառասուն օր եղավ օդում և երկաց իր աշակերտներին, ապա ամպեղեն կառքով վերացավ երկինք և նստեց Հոր աջ կողմում։

Ի՞նչ են ԱՇԽԱՎՈՒԹ՝ ԱԼՎԱՋ, ՓՈԽՎԵԼ, ՀԱՄԲԱՐԱԿ ՈՒ ԹԵՇԵԼ

Ալանալը հատուկ է մեծ թոշուններին, ինչպես օրինակ՝ արծվին, իսկ թոչելը՝ փոքր թոշուններին, որոնք դժվարությամբ են առաջ գնում, և դա վերաբերվում է սրբերին, ովքեր հրեշտակների օգնությամբ են թոշում։

Փոխվելն այն է, երբ մեկը ուրիշի միջոցով է տեղափոխվում, ինչպես սուրբ Կույսն այս ապականությունից փոխվեց անապական կյանք իր Որդու միջոցով։

Համբառանալը վերաբերվում է միայն Քրիստոսին, Ով իր հատուկ զորությամբ համբարձվեց երկինք և կարոտ չեղավ որևէ օգնության։

Դարձյալ՝ թոչելով գնում ենք դեպի ընտրյալների դասերը, իսկ Քրիստոսի համբարձման տեղը միտքը չի կարող ցույց տալ, քանի որ բնակվում է անմատույց լույսի և վարագույրի ներքին կողմում։ Համբարձում նշանակում է ավելի բարձր, քան իմանալիների բոլոր դասերը, որովհետեւ Նրան երկրպագում են բոլոր երկնայինները։ Իսկ «բարձրացավ անտանելի բարձրություն» արտահայտությունը նշանակում է, որ մեր Տերը մտավ վարագույրի ներքին կողմը։

Տիրոջ մասին մարգարեն ասում է. «Թռավ, ալացավ Հողմի թևերով», որը մարգեղությունն է ցույց տալիս և հայտնում Նրա Մարմնով ելնելու մասին։ Նմանապես և փոխվելը՝ ըստ ավետարաննչի. «Որ պիտի փոխվի այս աշխարհից Հոր մոտ»։ Տիրոջ վերացումը չպետք է այնպես իմանալ, ինչպես Եղիայինը, քանի որ Հիսուս Աստված լինելով՝ ամենուր է և ոչ միայն երկնքում, սակայն մարմնի հետ միավորվելու պատճառով է «մեր միջից վերանալ» ասվում։

ԻՆՉՈ՞Ւ ՀԱՄԲԱՐՁՎԱԿՅԱ ՔՐԻՍՏՈՒ

Քրիստոս համբարձվեց, որպեսզի Սուրբ Հոգին մեզ առաքի. «Եթե ես չգնամ, Միսիթարիչը ձեզ մոտ չի գա. իսկ եթե գնամ, Նրան կուղարկեմ ձեզ մոտ» (Յովի. ԺԶ 7):

Համբարձվեց, որպեսզի բարեխոսի հավատացյալ մարդկանց համար՝ ըստ այս խոսքի. «Քրիստոս Հիսուս է, որ մեռավ, մանավանդ որ հարու-

թյուն էլ առավ. և Աստծու աջում է և Բարեխոս է մեզ համար» (Յոհմ. Ը 34): Քանի որ Հորը ցույց է տալիս իր անպարտ Արյունը և խոցված Մարմինը, որը մեզ համար գոհաբերեց: Ինչպես Հին Ուխտի քահանայապետը, մտնելով Սրբության սրբոց և այնտեղ կանգնելով Աստծու առջև, աղաչում էր իր ժողովրդի համար, այդպես էլ Հիսուս Քրիստոս՝ քրիստոնյաներիս մեծ քահանայապետը, մտավ Սրբության սրբոց, այսինքն՝ երկինք, որպեսզի լինի Հոր առջեռում և աղաչի հավատացյալներիս համար: Այդ պատճառով է Պողոսը ասում. «Քրիստոս ոչ թե ճշմարտության օրինակ եղող ձեռակերտ սրբարանը մտավ, այլ բուն իսկ երկինքը, որպեսզի մեզ համար ներկայանա Աստծու առաջ» (Եթր. Թ 24):

Քրիստոս համբարձվեց, որպեսզի մենք իրեն հավատալով առավել վարձք ունենանք, քանի որ եթե այս աշխարհում մեզ հետ մնար, և մենք Նրան տեսնելով հավատայինք, ապա մեր հավատը մեծ չէր լինի, ինչպես այժմ, երբ Նրան հավատում ենք առանց տեսնելու: Այդ մասին Փրկիչն ասաց Թովմասին. «Որովհետև դու ինձ տեսար, հավատացիր. երանի նրանց, ովքեր չեն տեսել, սակայն հավատում են» (Յովի. Ի 29):

Դարձյալ՝ որպեսզի մեզ համար տեղ պատրաստի՝ ըստ այս խոսքի. «Գնամ և ձեզ համար տեղ պատրաստեմ» (Յովի. ԺԴ 2):

Դարձյալ՝ որպեսզի մեր հույսը մեծանա, քանի որ ասաց. «Եթե գնամ և ձեզ համար էլ տեղ պատրաստեմ, դարձյալ կդամ և ձեզ կվերցնեմ ինձ մոտ, որպեսզի ուր ես լինեմ, դուք ևս այնտեղ լինեք» (Յովի. ԺԴ 3): Քրիստոս մեր բնությունը մեզանից առաջ տարավ իր հետ ավելի վեր, քան բոլոր երկինքները, և մեզ հույս տվեց, որ մենք նույնպես այդտեղ ենք գնալու, ինչպես ասում է Մատթեոսը. «Ուր որ դիակն է, այնտեղ՝ կհավաքվեն արծիվները» (Մատթ. ԻԴ 28): Այսինքն՝ ուր լինի Քրիստոսի Մարմինը, այնտեղ էլ կհավաքվենք մենք:

Դարձյալ՝ որպեսզի մեզ ցույց տա երկնքի ճանապարհը, ինչպես Միքրիա մարգարեն է ասում. «Եկե՛ք բարձրանանք Տիրոջ լեռը և Հակոբի Աստծու տունը. մեզ ցույց կտան Նրա ճանապարհը, և մենք կգնանք Նրա շավիղով» (Միքիա Դ 2):

Նաև՝ մեզ համարձակություն տալու համար, որպեսզի հուսանք նույնին, այսինքն՝ հավիտենական ժառանգություն մարմնով մտնելուն:

Դարձյալ՝ որպեսզի մեր ցանկություններն իր հետ տանի, ինչպես և առաքյալն է ասում. «Փնտրեցե՛ք վերին բաներն այնտեղ, ուր Քրիստոս նստած է Աստծու աջ կողմը: Վերին բաների մասին խորհեցե՛ք» (Կողոս. Գ 34):

Որպեսզի մեր սիրտը և սերը երկնքում լինեն՝ ըստ այս խոսքի. «Որովհետև ուր որ ձեր գանձն է, այնտեղ և ձեր սրտերը կլինեն» (Ղուկ. ԺԲ 34):

Քանի որ Քրիստոս է մեր գանձը, և եթե Նա երկրում լիներ, ապա մեր սրտերը ևս երկրում կլինեին, և քանի որ Նա երկինք համբարձվեց, ապա պետք է, որ մեր սրտերը ևս երկնքում լինեն:

Նաև որպեսզի հանգստանա այն հոգնություններից, որ երեսուներեք տարի կրեց երկրի վրա:

Արդ՝ եռակի է Քրիստոսի համբարձումը՝ երկրի մեջ, երկրի վրա և երկրից վեր: Երկրի մեջ համբարձումը եղավ Նրա արդարությամբ և բարի վարքով, երկրի վրա՝ խաչը բարձրանալով, իսկ երկրից վեր՝ հրաշալի համբարձմամբ:

Մինչև ամպերը Տերն այն տեսքով համբարձվեց, ինչ տեսքով երեսում էր աշակերտներին, իսկ ամպերից այն կողմում այն տեսքով, ինչ տեսքով լեռան վրա պայծառակերպվեց:

ՆԱՏԵՅ ՀՈՐ ԱԶ ԿՈԴԱՅ

Իսկ այժմ տեսնենք, թե ի՞նչ է նշանակում Հոր աջ կողմում նստելը, ինչպես ասում է Մարկոս ավետարանիչը. «Երկինք վերացավ և նստեց Հոր աջ կողմը» (Արք. ԺԶ 19): Նաև Դավիթն է ասում. «Տերն Իմ Տիրոջն ասաց. «Նստի՛ր Իմ աջ կողմում» (Արդ. ԹԹ 1):

Նախ, պարզենք թե ո՞րն է Հոր աջ կողմը: Վարդապետներն ասում են, որ Աստծու աջ և ձախ կողմերը զգալի չեն, ինչպես մերը, որովհետեւ թափուր չէ, քանի որ Աստված երկինքն ու երկիրն է լցնում, իսկ աջ ու ձախ կողմերը վերաբերում են որոշակի ձեւ ունեցող պարունակելի մարմիններին միայն: Եվ քանի որ Հայրը մարմին չի առել, ինչպես Որդին, որպեսզի մարմնավոր անդամներ ունենա, այլ հոգի է, ապա այստեղ աջ ասելով նախ և առաջ նկատի է առնվել Աստծու անեղական փառքը, ըստ որում բոլոր եղականները Նրանից ձախ են:

Երկրորդ՝ եթե Հայրն աջ ձեռք ունենար, պետք է որ նաև ձախը ունենար, սակայն Աստծու մեջ ոչինչ ձախ չէ, այլ ամբողջովին աջ է: Այդ պատճառով էլ Հայր Աստծու մարմնավոր աջ կողմի մասին չի ասում, այլ իմանալի ու հոգևոր:

Երրորդ՝ մինչև այն տեղը Բանն Աստված Մարմնով չարչարանքների մեջ էր, այդ պատճառով էլ չարչարանքներից հանգստի փոխվելուն աջ անցնել է կոչում:

Չորրորդ՝ երկիր գալ ու մարդ լինելը ձախ է կոչվում, այդ պատճառով էլ մարմնով երկրից համբառնալը և անմարմին ներգործելը աջ է կոչում:

Հինգերորդ՝ մեր Տերը մինչև համբարձվելը մեղավորների մեջ էր գործում, այդ պատճառով էլ համբարձվելը և Աստծու արդարության մեջ նստելն աջ է ասվում:

Վեցերորդ՝ մեր Տերը կատարեց Հոր կամքը, որն է մարդկանց փրկությունը, և դա Սուլը Գրքում աջ է ասվում. «Զորացրի քեզ, օգնեցի քեզ ու պահպանեցի քեզ իմ արդար աջով» (Եսայի ԽԱ 10), նաև՝ «Տիրոջ աջը զորություն գործեց»: Իսկ նրանք, ովքեր դժոխքն են շինում, ձախ են կոչվում:

Դարձյալ՝ Քրիստոս աշխարհում ձախ կողմում էր, քանի որ աշխարհում Նրան անիծում էին ու նախատում, այդ պատճառով էլ երբ այս կյանքի չարչարանքներից ելավ դեպի բարություն ու հանգիստ, դա աջ կողմում նստել կոչվեց: Նաև՝ մարդու աջ կողմը ավելի պատվական է, քան թե ձախը:

Իսկ ի՞նչ է նշանակում նստելը: Նախ որ նա աթոռակիցն է Հոր և Սուլը Հոգու, և փառքով հավասար է Հոր Աստվածությանը, թագավորում է ինչպես Հայրը և ունի գատաստանի զորությունը: Նաև՝ աստվածային փառքը Նրանում է հանգուցված ու հաստատված: Եվ Հիսուս Քրիստոս նստած է Հոր աջ կողմում ոչ միայն Աստվածությամբ, այլև Մարմնով:

Իսկ ի՞նչո՞ւ է Պողոսն ասում. «Բնակվում է անմատույց լույսերի մեջ» (Ա Տիմ. Զ 16): Մեկ այլ դեպքում էլ ասում է. «Վարագույրից այն կողմ, ուր մեր Նախակարապետը՝ Հիսուս, մտավ» (Եբր. Զ 19-20): Մարգարեն ասում է. «Խավարն իր համար ծածկույթ դարձրեց» (Սաղմ. ԺԷ 12): Իսկ ավետարանիչները, թե. «Ամպը Նրան ծածկեց նրանց աչքերից» (Գործք Ա 9), և՝ «Նա նստեց Հոր աջ կողմը» (Սարկ. ԺԶ 19): Այդ մասին ասաց նաև Ստեփաննոսը (տե՛ս Գործք Է 55): Ինչպե՞ս պետք է հասկանալ այս ամենը:

Արանք բոլորն էլ Աստծու անհաս բարձրությունն են ցույց տալիս, և ինչպես լույսը չի թողնում մոտենալ Նրան, այդպես էլ խավարը չի թողնում տեսնել: Վարագույրն ու ամպը խորհրդանշում են Աստծու անհայտությունը, քանի որ Աստվածության փառքը հեռու է եղականներից:

Երկրորդ՝ ցույց է տալիս, թե նա, ով մեղքերով հանգերձ ցանկանում է մոտենալ Աստծուն, նրա համար ամպը, մեղն ու խավարը վարագույր են դառնալու և նա Աստծուն տեսնել չի կարողանալու, իսկ արդարների համար անմատույց լույս է լինելու, և նրանք Հոր աջ կողմում են լինելու, ինչպես առակում ոչխարներին իր աջ կողմում կանգնեցրեց:

Երրորդ՝ գրանցից յուրաքանչյուրն իր հատկությունն է հայտնում: «Անմատույց լույս» Աստվածության անձառ փառքի մասին է ասվում, որն անմատչելի է եղականներիս՝ հրեշտակների ու մարդկանց համար, իսկ վարագույրը լուսեղեն երկինքն է խորհրդանշում, որով բաժանվում է այս աշխարհը երկնքից: «Խավար ծածկույթ» զորության մասին է ասվում, որովհետեւ Նրա ահեղ լույսից կուրանում են բոլորը, ինչպես եթե մեկը մի որոշ ժամանակ նայի արեգակին, ապա կկուրանա: Ամպը նշանն է Երկրորդ գալստյան՝ ըստ այս խոսքի. «Այն ժամանակ պիտի տեսնեն Մարդու

Որդուն եկած՝ ամպերի վրա, զորությամբ և մեծ փառքով» (Ղուկ. Ի՛ 27): Հոր աջ կողմը Հիսուսի սեփական տեղն է, որտեղ նա գտնվում էր մինչև մարմնավորվելը, և նույն տեղում է նաև հիմա, բայց արդեն Մարմնով, այսինքն՝ Հոր ծոցում՝ ըստ այս խոսքի. «Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել, բացի միայն Միածին Որդուց, որ Հոր ծոցում է» (Յովի. Ա 18):

Իսկ սուրբ Ստեփաննոսն ասում է. «Ահա տեսնում եմ երկինքը բացված և Մարդու Որդուն, որ կա Աստծու աջ կողմը» (Գործք Է 55): Այստեղ «կա» նշանակում է, որ պատերազմակից է և օգնության է գալիս նրանց, ովքեր նահատակվում են իր անվան համար:

ՏԻՐՈՉ ՀԱՃՐԱՐՁԱԿԱՆ ՀԱՃԱՎԱՏՈՒԹՅՈՒՆ Եղիշյի երկրաք ՎԵՐԱՎԱԼՈՒ ՀԵՏ

Ինչպես Եղիան մինչև երկինք վերանալը երեք տեղ գնաց՝ Բեթել, Երիքով և Հորդանան, նույնպես և Քրիստոս գնաց Բեթել, որը թարգմանվում է Աստծու տուն, այսինքն՝ մտավ սուրբ Աստվածածնի մեջ, ով Աստծու համար տուն եղավ: Հետո գնաց Երիքով, որը թարգմանվում է պակասությունների համար չարչարվեց, տանջվեց ու մեռավ: Այնուհետև՝ գնաց Հորդանան, որը թարգմանվում է դատաստանի գետ, այսինքն՝ գնաց դժոխք և այնտեղ դատաստան արեց, որպեսզի փրկի մարդկանց հոգիները դժոխքից ու սատանայի կապանքներից, և ապա գնաց երկինք:

Պետք է իմանալ, որ երեք անձինք գնացին երկինք՝ Ենոքը, Եղիան և Քրիստոս: Ենոքը հափշտակվելով փոխվեց երկինք, իսկ Եղիան՝ հրեղեն կառքերով: Նրանք իրենց սեփական զորություններով չվերացան երկինք, այլ բարձրացան մինչև օդեղեն երկինքը և դրվեցին Դրախտում: Իսկ մեր Տեր Հիսուս Քրիստոս համբարձվեց երկինք իր սեփական զորությամբ, և ոչ օդային երկինքը, այլ՝ վերեն ու հրեղեն, և ոչ թե երկրային Դրախտ, այլ երկնքի արքայություն, և նստեց Հոր աջ կողմում:

Երբ Եղիան վերացավ երկինք, կրկնակի հոգին հանդեց նրա աշակերտի՝ Եղիսեեի վրա, իսկ երբ մեր Տերը երկինք համբարձվեց, կրկնակի հոգին հանդեց առաքյալների վրա:

Եղիսեեի կրկնակի հոգիներից մեկը մարգարեության հոգին էր, իսկ մյուսը՝ սքանչելագործության, նույնպես և առաքյալները ունեին և' մարգարեության հոգի, և' բժշկության: Եվ ինչպես Եղիան Եղիսեեին թողեց իր վերարկուն, որով նա գետը երկու մասի բաժանեց և գետի ցամաքած հատակով անցավ, նույնպես և Քրիստոս թողեց իր վերարկուն առաքյալները, որը նրա սերն է ու խաղաղությունը, և դրանով առաքյալները,

բաժանելով աշխարհի նեղությունների խորը գետը, անցան դեպի Երկնքի արքայություն:

Ինչպես Եղիսեն վկա եղավ Եղիայի դեպի Երկինք վերանալուն, որպեսզի Հրեաները չասեն, թե Հեղաբելն է սպանել նրան, նույնպես և աշակերտները տեսան Տիրոջ վերանալը և վկայեցին, որպեսզի Հրեաները չասեն, թե Նա հարություն չի առել մեռելներից:

Դարձյալ՝ ինչպես Եղիսեն ձեռքի նշանները վկայեցին, որ Եղիան Երկինք է վերացել, նույնպես էլ առաքյալների միջոցով նշաններ էին կատարվում, ինչը ցույց էր տալիս, որ Տերը ճշմարտապես համբարձվել է:

Եղիան բազմաթիվ զորքով, Հրեղեն կառքերով ու երիվարներով վերացավ Երկինք, քանի որ Նա սոսկ մարդ էր և իր զորությամբ վերանալ չէր կարող, նաև նրան պատերազմ էր սպասվում օդի վերին շերտերում դեերի հետ, ինչպես և Մովսեսի մարմնի համար պատերազմ եղավ (տե՛ս Հուդա Ա 9): Իսկ Հիսուս Աստված լինելով՝ կարոտ չէր զորքերի, այլ իր զորությամբ և իշխանությամբ համբարձվեց Երկինք:

Դարձյալ՝ Եղիան Հրեղեն կառքով Երկինք վերացավ, իսկ փարավոնն իր կառքերով գժոխիք իջավ:

Եվ այսօր, սատանային և նրա զորավոր լեգենդին զարկելուց հետո, Եղիայի Տերն ու Արարիչը գալիս է Զիթենյաց լեռ և մեծ փառքով Երկինք համբարձվում՝ արփիափայլ ամպերով, դեպի իր Աստվածության անձառնի փառքը, և քահանայության շնորհ պարզեցում սուրբ առաքյալներին՝ Հորդանանի հորձանքներում բացելով Մկրտության ավազանի արգանդը՝ վերածնելու բոլոր հեթանոսներին որդեգրության շնորհով:

ՀԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

(Ղուկ. Ի՞Դ 50-53, Գործը Ա 9-11)

«Ապա նրանց տարավ հանեց մինչև Բեթանիա և բարձրացնելով իր ձեռքերը՝ օրհնեց նրանց: Եվ մինչ Նա օրհնում էր նրանց, բաժանվեց նրանցից և դեպի Երկինք էր վերանում: Իսկ նրանք Երկրպագեցին Հիսուսին և մեծ ուրախությամբ վերադարձան Երուսալեմ» (Ղուկ. ԻԴ 50-52):

Տերը նրանց Երուսաղեմից տարավ Բեթանիա և այնտեղից նրանց բարձրացրեց Զիթենյաց լեռան գագաթը, որը Երուսաղեմի դիմաց էր՝ արևելյան կողմում: Իսկ Բեթանիան լեռան մյուս կողմում էր:

«Բեթանիա» սպի ու չարչարանքների տուն է թարգմանվում: Աս խորհրդանշում է սպի ու չարչարանքների այն Երկիրը, ուր ընկավ մեր բնությունը՝ Դրախտի վայելչությունից, ուր և մահացանք՝ ինչպես Ղազարոսը: Եվ ինքը՝ Բանն Աստված, գալով մեզ մոտ և կցուրդ լինելով մեր տրտմությանը, չարչարանքներին ու մահվանը, արտասպեց մեզ վրա,

ինչպես Ղազարոսի գերեզմանի վրա, և իր չարչարանքներով մեզ մխիթարեց ոչ միայն խոսքով, այլև Ղազարոսին հարություն տալով։ Եվ ցույց տվեց, որ հանցանքից հետո արժանի ենք ողբի ու արտասուքի, և որ միայն Նա ունի կարողություն իր անմեղությամբ ու Աստվածությամբ ազատելու մեզ չարչարանքներից, միխթարելու տրտմությունից և հարություն տալու մեղքերի մահից։ Եվ Տերը երրորդ օրը գերեզմանից հարություն առնելով՝ նաև մեզ հարություն տվեց, ինչպես Ղազարոսին, ու ազատեց սգից ու մահից և վերցնելով մեր բնությունը՝ վերացավ երկինք և խոստացավ մեզ էլ նույն տեղը տանել։

Բեթանիայից՝ Զիթենյաց լեռան վրայից համբարձվելը ցույց է տալիս, որ Աղամի սգի տունը երկնքում ուրախության փոխվեց։

Երկրորդ՝ ինչպես Բեթանիան է մոտ ներքին երուսաղեմին, այդպես էլ ներքին աշխարհը, ուր մենք ենք բնակված, մոտ է Վերին երուսաղեմին, և եթե կամենանք, փութով կբարձրանանք։

Երրորդ՝ որտեղ հարություն տվեց չորսօրյա մեռելին, այնտեղից էլ համբարձվեց, ինչը ցույց է տալիս, որ Աղամի չորեքնյութ բնությունը երկինք է հանում։

Չորրորդ՝ ցույց է տալիս, որ մինչև իր Երկրորդ գալուստը սգի մեջ է թողնում մեզ՝ ըստ առաքյալի խոսքի։ «Եվ բոլոր նրանք, որ ուզում են աստվածպաշտությամբ ապեկ Քրիստոս Հիսուսով, հալածանքների մեջ պիտի լինեն» և այս աշխարհում նեղություններ պիտի կրեն (Բ Տիմ. Գ 12)։

Հինգերորդ՝ իր սիրելիներին Զիթենյաց լեռան վրա մխիթարում է իր համբարձումով։

Վեցերորդ՝ Տերը նախքան խաչելությունը միշտ այդտեղ էր նստում և ուսուցանում աշակերտներին, այդ պատճառով էլ հարությունից հետո այդտեղից համբարձվեց, որպեսզի ցույց տա, որ նույն Տերն է։

Յոթերորդ՝ լեռան օրինակով ցույց տվեց, որ պետք է լեռան պես հեռու լինել աշխարհական գործերից, որպեսզի կարողանանք փոխվել դեպի պարարտության իմանալի լեռը։ Եվ լեռան պարարտությունը ցույց է տալիս Աստվածային գիտության պարարտ ողորմությունը, իսկ այդտեղից համբարձվելով ցույց տվեց, որ միշտ բաշխում է իր ողորմությունը։

Իններորդ՝ ձիթենին նյութ է լույսի համար, որով մեզ ցույց տվեց, թե այն նյութերը, որոնք պատրաստված են բարեգործության համար, այնտեղից են իջնում մեր մեջ։

Տասներորդ՝ ձիթենին մշտագարդ է, ինչից սովորում ենք, որ պետք է մշտագես բարին կատարել։

Եվ այսօր՝ հարությունից քառասուն օր անց, Տերն իր աշակերտների հետ ելնում է Զիթենյաց լեռը, որովհետեւ հին ժամանակներում դեպի լեռը

կանչեց Աբրահամին՝ զոհաբերելու իր հսահակ որդուն, և Մովսեսին դեպի լեռ կանչեց, որտեղ նա աստվածային փառքը տեսավ։ Նաև Եղիային կանչեց դեպի Քորեր լեռ և հողմով ու երկրաշարժով ցույց տվեց նրան, թե մարդ որչափ կարողություն ունի Աստծուն տեսնելու։ Տերը Զիթենյաց լեռից մեծ փառքով երկինք համբարձվեց, և լուսեղեն ամպով պարուրվելով՝ ծածկեց իր երթի շավիղը իր երջանիկ աշակերտներից՝ ըստ Եսայի մարգարեի խոսքի. «Վերջին օրերին պիտի հայտնվի Տիրոջ լեռը, Աստծու տունը՝ լեռների գագաթներին, պիտի բարձրանա բլուրների վրա, և բոլոր հեթանոսները պիտի շարժվեն դեպի նա։ Գալու են բազում ժողովուրդներ՝ ասելով. «Եկե՛ք ելնենք Տիրոջ լեռն ու Հակոբի Աստծու տունը։ Նա մեզ կուփորեցնի իր ճանապարհները, որոնցով և կգնանք» (Եսայի Բ 23):

Ինչպես մի ժամանակ Սինա լեռան վրա գրեց օրենքների տվյալների միջոց և այդտեղ հրեաներին պարզեց Գրավոր օրենքը ու բնակեցրեց նրանց երուսաղեմում, այդպես էլ այսօր Զիթենյաց լեռան վրա տվեց Ավետարանն իր սուրբ աշակերտների ձեռքը և փչելով նրանց վրա՝ բացահայտեց ծածկված խորհուրդները՝ ճանաչելու համար Գրքերի գժվարըմբոնելի դարձվածքների խոր, առակապատ խոսքերը, հրամայեց նրանց սփոել ու տարածել փրկության Ավետարանն ամբողջ աշխարհով մեկ և կանչել մարդկանց դեպի Վերին երուսաղեմ, որն անմահության մայրն է։ Եվ այսօր բոլոր ազգերը հավաքվում են այս սուրբ լեռան գագաթին և երկրապատճեմ մարմնացյալ Աստծուն, Ով երևաց աշխարհում, ապրեց հավատարմությամբ և փառքով համբարձվեց դեպի իր անձառելի Աստվածությունը։

Զիթենյաց սուրբ լեռն է բարձրյալ Աստծու ճշմարիտ տունը, որը բարձրացել է վեր, քան բոլոր լեռներն ու բլուրները՝ ոչ թե մեծությամբ, այլ իր փառքով։ Եվ ինչպես նորափոր վեմից Փրկագործի հարությունը գրավական դարձավ ամբողջ աշխարհի հարության, նույնպես և Զիթենյաց լեռից Տիրոջ փառքով համբարձվելը սրբերի համար հաստատուն հույս եղավ, որ նրանք ևս նույն ձեռք՝ արփիափայլ ամպով, սավառնելու են դեպ Վերին երուսաղեմ։

Զաքարիա սուրբ և երջանիկ մարգարեն, այս օրվա զորության մասին երգելով, գոչում է և հայտնում մարդկանց Կենսագործողի գալուստը Զիթենյաց լեռան սուրբ գագաթը՝ իր սրբված աշակերտների հետ. «Այն օրը Նրա ոտքերը պիտի կանգնեն Զիթենյաց լեռան վրա՝ Երուսաղեմի դիմաց, արևելյան կողմը» (Չաքար. ԺԴ 4): Եվ ավելացնում է. «Զիթենյաց լեռը պիտի պատռվի, նրա մի կեսը՝ դեպի արևելք, նրա մյուս կեսը՝ դեպի ծով։ Նրանց միջև շատ մեծ վիճ պիտի լինի, և լեռան մի կեսը պիտի սահի դեպի հյուսիս, մյուս կեսը՝ դեպի հարավ» (Չաքար. ԺԴ 4):

Արդ՝ հոգեկիր մարդարեն տեսնում է Հիսուսին՝ եկած Զիթենյաց լեռան վրա՝ իր աշակերտներով հանդերձ, քանի որ լեռը Երուսաղեմի արևելքում է: Իսկ լեռան պատռվելը խորհրդանշում է Ավետարանի տարածումը ամբողջ աշխարհով՝ մեկ, իր երկու մասերով՝ Հին ու Նոր Կտակարաններով հանդերձ:

Նրա մի կեսը՝ դեպի արևելք, նրա մյուս կեսը՝ դեպի ծով – Ծովը խորհրդանշում է Մկրտության ավազանը, արևելքը Ավազանից վերստին ծնվածներն են, ովքեր աղոթքի են կանգնում դեմքով դեպի արևելք: Իսկ լեռան չորս բաժանումները՝ դեպի արևելք ու դեպի ծով, դեպի Հյուսիս ու Հարավ, խորհրդանշում է չորս Ավետարանները՝ ավանդված մի Տիրոջից՝ աշխարհի չորս կողմերում ավետարանելու համար:

Իսկ այն, որ Տերը լեռան գագաթ բարձրացրեց իր աշակերտներին, երեք պատճառ ունի: Նախ՝ ինչպես Եղիսաբետ աչքի առջև լեռան գագաթից երկինք վերացավ, նույնպես և Քրիստոս լեռան գագաթից բարձրացավ, որպեսզի տեսնեն աշակերտները և իմանան, որ դեպի երկինք համբարձվեց:

Յույց տվեց նաև, թե ով կամենում է Քրիստոսի ետևից երկինք գնալ, պետք է թողնի աշխարհի հաճույքները և մարմնով առաքինության լեռը բարձրանա, իսկ մտքով միշտ վերինը խորհի, ուր Քրիստոս է նստած՝ Հոր աջ կողմում:

Ինչպես Մովսեսը լեռան գագաթին հին Իսրայելի օրենսդիրը դարձավ, նույնպես և աշակերտները լեռան գագաթին օրենսդիր դարձան ամբողջ աշխարհի՝ նոր Իսրայելի համար:

Եվ բարձրացնելով իր ձեռքերը՝ օրհնեց նրանց – Տերը բարձրացնելով օրհնեց նրանց այն ձեռքերով, որոնցով ստեղծեց առաջին մարդուն, որպեսզի վերցնի առաջին անեծքի դատակնիքը, անեցնի ու բազմացնի փրկության Ավետարանը: Նաև երկնաստեղծ ձեռքերով առաքյալներին ձեռնադրեց և այդ օրը նրանց կաթողիկոսներ դարձրեց:

Առաքյալները դպիր դարձան ժողովրդին սպասավորելով (տես Սատթ. Ժ 5): Զահընկալ դարձան այն ժամանակ, երբ Տերը նրանց ասաց. «Դուք եք աշխարհի լույսը» (Սատթ. Ե 14): Տերը նրանց սարկավագներ կարգեց, երբ պատվիրեց Հիվանդներին օծել (տես Սարկ. Զ 13): Իսկ քահանա կարգեց, երբ թույլ տվեց արտի առաջին պտղից ուտել (տես Սատթ. ԺԲ 1), որը միայն քահանաներն էին ուտում: Ապա իր հարությունից հետո Սուրբ Հոգին փչելով նրանց վրա՝ նրանց եպիսկոպոսներ դարձրեց: Այնուհետև տանելով Զիթենյաց լեռ և ամեն ինչ լիապես շնորհելով՝ նրանց դարձրեց՝ կաթողիկոսներ ու պատրիարքներ: Այն պատճառով, որ Հիսուս աշակերտներին Զիթենյաց լեռան վրա կաթողիկոս՝ դարձրեց, Եկեղեցում կարգ հաստատ-

վեց, որ քահանայապետը չպետք է օրհնի մեկ այլ քահանայապետի՝ իրենից հետո իրեն փոխարինելու համար, ինչպես Հին Ուխտում էր, այլ իր այս աշխարհից փոխվելուց հետո եպիսկոպոսները օրհնեն նոր քահանայապետին։ Տերն օրհնելով առաքյալներին իր աջով՝ նրանց աջը ևս հաստատեց օրհնության համար, որպեսզի նույն օրհնությունն ու աստիճանը միմյանց փոխանցեն։

Սակայն խորհրդական ավանդության կատարումը ի հայտ չեկավ մինչև Պենտեկոստեն, քանի որ նրանք տակավին թերի էին մինչև Սուրբ Հոգու ընդունելը։ Այդ պատճառով էլ Տերը նրանց պատվիրում է՝ ասելով.

Նստեցե՛ք Երուսաղեմ քաղաքում, մինչև որ երկնքից զորությամբ զգեստավորվեք (Ղուկ. ԻԴ 49) – Այդ պատճառով, այսօր, Հոգեորականին նախ աստիճանն են տալիս և հետո միայն օծում Սուրբ Մյուռռունով։ Նույնպես և մեր Տերը նախ ձեռքերը բարձրացնելով օրհնեց նրանց՝ տալով իշխանություն, և հետո առաքեց Սուրբ Հոգուն Վերնատուն և օծեց նրանց։

Տեսնենք նաև, թե ինչո՞ւ Տերը բարձրացրած ձեռքերով երկինք համբարձվեց՝ ըստ այս խոսքի. «Բարձրացնելով իր ձեռքերը, օրհնեց նրանց»։ Տերը դրանով ոչ միայն աշակերտներին օրհնեց, այլև նրանց հետևողներին և նրանցից հետո եկողներին։ Երկրորդ՝ սովորեցրեց, որ աղոթելիս այդպես բարձրացնենք մեր ձեռքերը դեպի նա։ Երրորդ՝ երկու ձեռքերը վեր բարձրացնելը ցույց է տալիս, որ Տերը կապել է սատանայի ձեռքերը, որոնցից մեկը բռնությունն է, իսկ մյուսը՝ խաբեռությունը, որպեսզի նա մեզ այլևս կորսայան չմատնի։ Չորրորդ՝ ցույց է տալիս, որ արդարների ու մեղավորների հոգիները, որ հանեց գժոխքից, իր վեր բարձրացրած բազուկներով հանում է երկինք, և այլևս գժոխքը չի լինելու հոգիների բնակության տեղ։

Եվ մինչ նա օրհնում էր նրանց, բաժանվեց նրանցից – Բաժանվեց, այսինքն՝ հեռացավ, որպեսզի աշակերտները մանուկների նման չկախվեն իր պարանոցից ու հանդերձներից, ինչպես եղիսեն բռնեց Եղիայի վերակության տեղ։

Եվ դեպի երկինք էր վերանում – Ըստ այն խոսքի, թե. «Համբարձվեց Աստված օրհնությամբ» (Սաղմ. ԽԶ 6): Եվ «Գործք առաքելոցում» էլ նույնն է ասում. «Եվ երբ այս խոսքերն ասաց, մինչ նրանք դեռ նայում էին, երկինք վերացավ» (Գործք Ա 9): Տերն այդպես արեց, որպեսզի աշակերտները պարզորոշ տեսնեն իր համբարձվելը, քանի որ հարության ավարտը տեսան նշաններով, բայց հարության սկիզբը չտեսան, իսկ համբարձվելիս սկիզբը տեսան, իսկ ավարտը՝ ոչ, և չիտուսի երկինք գնալու մասին հրեշտակներից իմացան. «Այս Հիսուս, որ ձեր միջից երկինք վերացավ, պիտի գա նույն ձևով, ինչպես տեսաք նրա երկինք գնալը» (Գործք Ա 11):

Եվ ամպը նրան ծածկեց նրանց աչքերից (Գործը Ա 9) – Ամպը եկավ, որպեսզի Տիրոջ համբարձումը ծածկի առաքյալների աչքերից: Նաև որպեսզի կատարվի Դավթի մարգարեռությունը. «Երթեւեկում է նա ամպերի մեջ և շրջում հողմերի թևերին» (Սաղմ. ճԳ 3):

Դարձյալ՝ Աստված միշտ ամպով էր երեսում, ինչպես Սինա լեռան վրա և Հորի հետ խոսելիս: Թարգոր լեռան վրա ևս ամպով երեաց: Նաև՝ լուսեղեն ամպով գալու է դատաստան անելու՝ ըստ հրեշտակների խոսքի. «Պիտի տի գա նույն ձեռվ, ինչպես տեսաք Նրա երկինք գնալը» (Գործը Ա 11):

Վերջին օրը նաև արդարները պիտի ամպով վերանան երկինք, ինչպես ասում է առաքյալը. «Ապա և մենք, որ կենդանի մնացած պիտի լինենք, նրանց հետ միասին պիտի հափշտակվենք, տարվենք ամպերի վրայից Տիրոջ առաջ օդում և այդպես մշտապես Տիրոջ հետ պիտի լինենք» (Ա Թես. Դ 16):

Եվ մինչ նա պատվերներ էր տալիս աշակերտներին, բաժանվեց նրանց և դեպի երկինք էր վերանում (հմնտ. Ղուկ. ԻԴ 51) – Դրանով կատարվեց Դավթի մարգարեռությունը. «Աստված բարձրացավ օրհնությամբ, և մեր Տերը՝ շեփորի ձայնով: Սաղմոն երգեցնք մեր Աստծուն, սաղմոն երգեցնք մեր Թագավորին» (Սաղմ. ԽԶ 6-8):

Եվ հնքը՝ Տերն է ասում. «Արդ՝ ոչ ոք երկինք չի ելել, եթե ոչ նա, որ իշավ երկնքից՝ Մարդու Որդին, որ երկնքից էր» (Յովի. Գ 13), կամ՝ «Իսկ արդ, եթե տեսնեք Մարդու Որդուն բարձրանալիս այնտեղ, ուր առաջ էր» (Յովի. Զ 63), նաև. «Ելա Հորից և եկա աշխարհ. դարձյալ թողնում եմ աշխարհը և գնում Հոր մոտ» (Յովի. ԺԶ 28): Եվ ինչպես Հովնանը եղավ օրինակը Փրկչի թաղման ու հարության, այդպես էլ ենոքն ու եղիան եղան օրինակը Նրա համբարձման:

Երբ անճառելի և մարմնացած Լույսը վերանում էր երկինք, և երջանիկ սուրբ առաքյալները գարմացած նայում էին, ամպը ծածկեց փառքերի Տիրոջը նրանց աչքից, ինչպես Սինա լեռան վրա երայեցիների բանակի հետ խոսելիս ամպը, մեզն ու մառախուղը շրջապատելով ծածկել էին լեռը (տես Ելք ԺԹ 16): Կամ՝ երբ Տերը իշնում էր Վկայության խորանի վրա, ամպը ծածկում էր այն, իսկ Հորի հետ ամպի ու մրրիկի միջից էր խոսում: Մարգարեն ասում է. «Ճածրացրեց նա երկինքն ու իշավ, և նրա ոտքերի տակ մառախուղ էր» (Սաղմ. ԺԷ 10), նաև՝ «Ամպ և մեզ է շուրջը Նրա» (Սաղմ. ՂԶ 2), կամ՝ «Երթեւեկում է նա ամպերի մեջ և շրջում հողմերի թևերին» (Սաղմ. ճԳ 3):

Աշակերտները վեր նայելով զարմանում էին արփիահրաշ ու գերազանց երեսութիւնից վրա, որ համատարած անհպելի Լույսը շրջապատելով պարուրել էր Զիթենյաց լեռան սուրբ գագաթը և արփիահրաշ, անշիջանելի

Լույսը ծածկվելով թաքնվում էր ոսկեճաճանչ արեգակի ճառագայթներից, քանի որ երրորդ ժամն էր: Եվ երանելի առաքյալները զարմացել էին այս նորասքանչ ու հրաշալի տեսիլքի վրա, քանզի այդ լույսն ավելի գերազանց էր, քան այն լույսը, որ տեսել էին Թաքոր լեռան վրա, և էլ ավելի արփիագեղ, քան այն, որ երևացել էր մի ժամանակ Մովսեսին Սինա լեռան վրա, և առավել քան այն, որ երևացել էր Եղիային Քորեք լեռան վրա:

Ահա նրանց երևացին սպիտակ զգեստների մեջ երկու մարդիկ (Գործը Ա 10) – Սրանք երկու զորագարներ են անմարմինների զորքերից. Միքայելը, ով հնում միջնորդ ու սպասավոր էր, և Գաբրիելը, ով նորում էր կարգավորող ու սպասավոր: Նրանք մի ժամանակ երևացին Արքահամին Աստծու անժամանակ Խոսքի հետ միասին, իսկ հետո՝ նաև յուղաբեր կանանց, սուրբ գերեզմանի մոտ: Իսկ այսօր այստեղ գալով հայտնեցին աշակերտներին օրվա խորհրդի և զորության մասին, քանի որ սուրբ զորությունները Տիրոջ անբավելի տերության սպասավոր են՝ ըստ գրքերի. «Օքնեցնեցնե՛ք Նրան, Նրա բոլո՛ր Հրեշտակներ, օքնեցնե՛ք Նրան, Նրա բոլո՛ր զորություններ» (Սաղմ. ճԽԸ 2), կամ՝ «Հուր և կարկուտ, ձյուն և սառնամանիք, հողմ ու մըրիկ, դուք, որ Նրա խոսքն եք կատարում» (Սաղմ. ճԽԸ 8), նաև՝ «Ով իր Հրեշտակներին Հոգիներ արեց և իր պաշտոնյաներին՝ կիզիչ Հուր» (Սաղմ. ճԳ 4): «Նրա փառքը ծածկեց երկինքը, Նրա օքնությամբ լցվեց երկիրը» (Ամբակ. Գ 3):

Փրկագործին սպասավորներ և պաշտոնյա էին սուրբ Հրեշտակները: Ավելի երջանիկ կանանց ավետարաննեցին Փրկչի Հարությունը, այսօր ավետիս են տալիս բոլոր աշակերտներին՝ ասելով. «Այս Հիսուս, որ ձեր միջից երկինք վերացավ, պիտի գա նույն ձեռվ, ինչպես տեսաք Նրա երկինք գնալը» (Գործը Ա 11), այսինքն՝ Աստվածությամբ միացած մարմնով:

Իսկ նրանք երկրպագեցին Հիսուսին և մեծ ուրախությամբ վերադարձան երուսաղեմ – Սուրբ առաքյալները, մեծ ուրախությամբ երկրպագելով, վերադարձան երուսաղեմ՝ միաբան ու միակրոն, ակնկալելով խոստացված ավետիսը և սպասելով Սուրբ Հոգու գալստյանը:

Հարց. – Եղիսեն տրտում էր իր վարդապետի վերանալու պատճառով և իր հագուստները պատռելով երկու կես արեց (տե՛ս Դ Թագ. Բ 12), իսկ սրանք ինչո՞ւ ուրախությամբ վերադարձան:

Պատասխան. – Եղիսան մարդ էր և վերանալուց հետո այլևս իր աշակերտների հետ լինել չէր կարող, իսկ Հիսուս Աստված է անվայրափակ և ամփոփած չէ միայն մի տեղում. թեպետ վերացավ, սակայն միշտ աշակերտների հետ է՝ համաձայն իր խոստման. «Ահա Ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչև աշխարհի վախճանը» (Սատթ. ԻԸ 20), այդ պատճառով էլ նրանք ուրախ էին:

Ուրախացան, քանզի Ում հրեաները նախատելով խաչեցին ու սպանեցին, Նրան տեսան այդպիսի փառքով վերանալիս: Ուրախ էին, քանի որ Տերն ասաց. «Եթե գնամ և ձեզ համար էլ տեղ պատրաստեմ, դարձյալ կդամ և ձեզ կվերցնեմ ինձ մոտ, որպեսզի ուր ես լինեմ, դուք ևս այնտեղ լինեք» (Ղովի. Ժ 2-3): Ուրախ էին, քանի որ ակնկալում էին Սուրբ Հոգու գալուստը՝ ըստ այս խոսքի. «Եթե ես չգնամ, Մխիթարիչը ձեզ մոտ չի գա. իսկ եթե գնամ, Նրան կուղարկեմ ձեզ մոտ» (Ղովի. Ժ 7):

Եվ միշտ տաճարում էին, գովաբանում և օրհնաբանում էին Աստծուն (Պուկ. Ի 53) – Ասված է. «Եվ երբ քաղաք մտան, բարձրացան վերնատունը, որտեղ և բնակվում էին» (Գործ Ա 13): Առաջյալները սնվելու և քնելու համար էին Վերնատուն գնում, իսկ աղոթքի և վարդապետելու ժամերին տաճարում էին լինում և գովաբանում տնօրինության ամբողջ խորհուրդը՝ սկսած ծնունդից մինչև խաչը, հարությունը և համբարձումը, և օրհնում էին Հայր Աստծուն՝ Որդու Առաքողին, և Ամենասուրբ Հոգուն՝ ակնկալելով Նրա գալուստը:

ՏԻՐՈՉ ԱՌԵՑՔԸ ԵՐԿԻՒՔ

Եվ մինչ նա օրհնում էր նրանց, բաժանվեց նրանցից և դեպի երկինք էր վերանում – Հիսուս, դառնալով իր աշակերտներին, ասում է. «Խաղաղությունն ընդ ձեզ, Ի՞մ եղբայրներ!»: Երբ այս ասաց, երկնային զորքերի բազմությունները Նրա շուրջը խմբվեցին և գոչեցին. «Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ Տեր զորությունների, լի է երկինքն ու երկիրը Քո փառքով» (Մեն Եսայի Զ 3): Եվ աշա լուսավոր ամպը ծածկում է լեռը, և բացվում է երկինքը, ուր ժողովվում են հրեշտակների, մարդկանց և սուրբ մարդարեների գնդերը: Այդ բոլորի մեջ դասապետ էր Դավիթ սաղմոսերգուն, ով քնարով հոգեսոր երգեր էր երգում և հրավիրում Որդուն Հոր մոտ բարձրանալ: Մինչ աշակերտներն ապշել էին այդ ամենից, Տերը բաժանվեց նրանցից և դեպի երկինք վերացավ:

Տերը երկինք վերացավ հրեշտակների բանակներով ու սրբերի գնդերով: Սրբերը իր հետ հարություն էին առել գերեզմանից և իր հետ էին քառասուն օր: Վերանալով երկինք, Տերը նրանց հետ անցավ անմարմինների բոլոր գերաշխարհիկ դասերով: Ինչպես Հակոբ նահապետը, Հեռանալով իր Հոր տնից, օտար երկրներում պանդուխտ եղավ ու շատ նեղություններ կրեց և ապա դարձավ իր Հոր մոտ մեծ հարստությամբ՝ ըստ իր իսկ խոսքի. «Ճուպը ձեռքիս անցա Հորդանանի այս կողմը, իսկ Հիմա բաժանվել եմ երկու մասի» (Ծննդ. ԼԲ 10): Այդպես էլ Հիսուս Քրիստոս ելավ Հոր մոտից, պանդուխտ եղավ աշխարհում, չարչարանքներով ու աղքատությամբ անցավ աշխարհի ու մահվան նեղության գետը՝ խաչը

ինչպես ցուազ կրելով, և այսօր մեծ հարստությամբ համբարձվում է երկինք՝ իր հետ տանելով երկու բանակներ. սրբերի հոգիները, որոնց ազատեց դժոխքից, և հրեշտակների դասերը։ Տեր Հիսուս Քրիստոս այսօր համբարձվեց ցնծությամբ և ուրախությամբ, ինչպես Դավիթն է ասում. «Համբարձվեց Աստված օրհնությամբ, և մեր Տերը՝ շեփորի ձայնով» (Սաղմ. ԽԶ 6), ինչպես պատերազմից հաղթանակով վերադարձած թագավոր։

Այժմ տեսնենք, թե ինչպե՞ս Նրան ընդունեցին վերին զորությունները։ Երբ Մարմնացած Խոսքը ճշմարիտ մարդեղությամբ ժամանեց վերին երկինք և անցնելով հաստատության միջով ու ճանապարհ բացելով մոտեցավ թանձրամած նյութական ջրահարկ կամարին, որը վեր է հաստատությունից, ապա կամարը չկարողացավ արգելել, որ Տիրոջ աստվածախառն Մարմինն անցնի իր միջով։ Եվ Տերն ինչպես Կույսից ծնվեց՝ անխախտ թողնելով կուսությունը, հարություն առավ կնքված գերեզմանից՝ անխախտ պահելով նրա կնիքները՝ և փակված դռներով ներս մտավ աշակերտների մոտ, այդպես էլ անցավ թանձրամած ջրահարկը ու բոլոր երկինքները, ինչպես ասում է առաքյալը. «Նա, որ իջավ, նույն ինքն է, որ բարձրացավ երկինքներից ավելի վեր, որպեսզի լցնի ամբողջ տիեզերքը» (Եփես. Դ 10):

Անձահների զորքերը՝ ուղեկցող հրեշտակները, ովքեր տնօրինության խորհրդածուներն էին և Նրա առջևից էին ընթանում, սկսեցին ձայնել վերին դասերին՝ երկնքի իշխանություններին ու պետություններին, ասելով. «Վե՛ր քաշեցեք, իշխաննե՛ր, դռները ձեր, թող բացվեն հավիտենական դռները, և փառքի Արքան թող ներս մտնի» (Սաղմ. ԻԳ 7): Իսկ երկնքի բարապանները, տեսնելով Աստծու անպարագրելի Խոսքը մարմնում պարփակված և չհասկանալով նոր ու հրաշալի խորհուրդը, վարանում էին ու տարակուսելով հարցնում Տիրոջն ուղեկցող հրեղեն զորքերին. «Ո՞վ է Այս փառքի Արքան»։

Տեսնենք, թե ինչու վերին դասերը չճանաչեցին Տիրոջը։ Երբ թագավորը պատերազմ է գնում, իր զորքերի մի մասը իր հետ է տանում, իսկ մյուսը՝ թողնում քաղաքում։ Մեր Տերն էլ սատանայի դեմ պատերազմ գնալիս իր հրեշտակների դասերից շատ քչերին իր հետ տարավ, ովքեր էլ ծառայեցին Նրան և տեղյակ եղան Նրա տնօրինություններին, ինչպես և ասվում է. «Ապա սատանան Նրան թողեց. և ահա հրեշտակներ մոտեցան ու ծառայում էին Նրան» (Սատթ. Դ 11):

Երկրորդ՝ արքան իր խորհուրդները չի հայտնում ոչ մեկին, մինչև գործը չափարտի, ինչպես ասում է Տոբիթը. «Լավ է արքայի գաղտնիքները թաքցնել» (Տոբ. ԺԲ 11): Այդպես և մեր Տերը վերին դասերից ոչ մեկին

Հայտնեց մարդեղության խորհուրդը, այդ պատճառով էլ Հրեղեններն անգիտանալով հարցնում էին մեկմեկու, թե՝ «Ո՞վ է Սա»:

Երրորդ՝ թագավորները ծածուկ են գնում պատերազմ, որպեսզի թշնամին նրանց չնկատի: Այդպես էլ մեր Տերը, մինչ խաչելության ժամը, իր մարմնական ընթացքով՝ ուտելով, ըմպելով և ննջելով, ծածկեց իր Աստվածությունը: Այդ տեսնելով՝ սատանան կարծեց, թե Նա սոսկ մարդ է: Այդ պատճառով է առաջալն ասում. «Այս աշխարհի իշխաններից ոչ մեկը չձանաչեց Նրան. որովհետև եթե ճանաչված լիներ, արդարեւ փառքի Տիրոջը չէին խաչի» (ԱԿորնը. Բ 8):

Չորրորդ՝ երբ թագավորը հաղթում է թշնամուն, ապա թշնամու գերած գերիներին ազատում է: Իսկ մեր Տերը խորտակեց դժոխքի գոները, որը սատանայի բռնապետությունն էր, և ազատեց այնտեղ գտնվող գերիներին՝ և' արդարներին, և' մեղավորներին, ըստ այս խոսքի. «Նա ելավ բարձունքներն ու գերեվարեց գերիներին. ավար առավ, պարգևներ բաշխեց ու տվեց մարդկանց որդիներին, որ թերահավատներն անգամ բնակվեն այնտեղ» (Սաղմ. Կէ 19):

Հինգերորդ՝ երբ թագավորը հաղթությամբ դառնում է պատերազմից, ավետիս բերողներն առջեկց են գնում: Մեր Տիրոջ հարության ժամանակ Հրեշտակները կանանց համար ավետավոր եղան:

Վեցերորդ՝ երբ արքան հաղթանակով վերադառնում է, նրան ընդառաջ են ելնում ծառաները և ուրախանում նրա հաղթանակով: Այդպես և հարության ժամանակ՝ աշակերտները Տիրոջն ընդառաջ ելան խնդությամբ, ինչպես նաև հազար-հազարավոր հրեշտակներ, երբ տեսան նրան հարություն առած և փառքով վերացած:

Յոթերորդ՝ երբ հասնում են պալատին, սպասավորները բախում են դուռը և գովում արքայի քաջությունը: Նույնպես և մեր Տերը երբ հասավ իմանալի բնակարանին, դրսիններն ասացին ներսիններին. «Վե՛ր քաշեցեք, իշխաննե՛ր, դռները ձեր, թող բացեն հավիտենական դռները, և փառքի Արքան թող ներս մտնի»: Իսկ ներսիններն ասում էին. «Ո՞վ է Այս փառքի Արքան»: Եվ նրա ուղեկցողները պատասխանում էին. «Կարողությամբ հզոր Տերն է Նա, պատերազմում զորեղ Տերը» (Սաղմ. ԻԳ 8):

Ինչպես մի հզոր թագավոր, ով պատերազմում է անամոթ թշնամու գեմ, հաղթում նրան, գերիներին ազատում, ավետիսով ամբողջ աշխարհը լցնում և մեծ ցնծությամբ վերադառնում իր թագավորանիստ քաղաքը, որտեղ, սակայն, քաղաքի բնակիչների կողմից չի ճանաչվում մարտական զգեստի պատճառով, այսպես էլ Փառքի թագավորը խոնարհվելով զգեստավորում է այս պատերազմական Մարմինը և սրանով հարձակվելով կամակոր վիշապի վրա, ով գերելով կործանել էր մարդկային ցեղը, բռնում

ու կործանում է նրան, այնուհետև նույն կերպարանքով համբարձվում երկինք և հրեշտակներին ցույց տալիս իր ճշմարիտ մարդեղությունը: Իսկ հրեղեն զորքերը, տեսնելով անմարմին Աստծուն ծառայի կերպարանքով, զարհուրած հարցնում են:

«Ո՞վ է Սա, որ ելել գալիս է Եղոմից. Նրա հագուստների կարմիրը Բոսորայից է, Նա գեղեցիկ պատմուճանով է և հուժկու զորությամբ» (Եսայի ԿԳ 1) – Եղոմը և Բոսորն աշխարհն է: «Եղոմ» թարգմանվում է կարմիր երկիր, իսկ «բոսոր»՝ նեղություն, քանի որ երկիրը շաղախվել էր մեղքերով, արյամբ և ընկել նեղությունների մեջ: Իսկ պատմուճանը գեղեցիկ էր, որովհետև մաքուրէր մեղքերից:

Հրեշտակները Քրիստոսին հույժ փառավոր էին տեսնում և չէին համարձակվում Նրանից հարցնել իր փառավոր տեսքի մասին, այդ պատճառով էլ միմյանց էին հարցնում: Եվ որովհետև հրեշտակների ներքին գասերը չէին համարձակվում ուսուցանել վերիններին, ինքը՝ Տերը ցրեց վերինների տարակուսանքը՝ պատասխանելով. «Ես խսում եմ արդարության և փրկության իրավունքի մասին» (Եսայի ԿԳ 1): Քանի որ Քրիստոսի ամբողջ երկրային կյանքն արդարությամբ էր անցել և Նրա խոսքերը մարդկանց փրկության մասին էին:

Հրեշտակները թեպետ և Տիրոջ պատասխանից վստահություն էին ձեռք բերել, սակայն կրկնապատկված զարմանքով դարձյալ հարցնում էին. «Քո հագուստներն ինչո՞ւ են կարմիր, Քո հագուստներն ասես հնձանահարի հագուստներ լինեն, որ տրորում է լեցուն հնձանը» (Եսայի ԿԳ 2):

Քրիստոսի հանդերձը իր Մարմինն էր, որը ծածկում էր Նրա Աստվածությունը, և այդ հանդերձը կարմիր էր այն յոթ հարվածների պատճառով, որ ստացավ չարչարանքների օրը: Քրիստոս այդպես էլ համբարձվեց՝ իր մարմնի վրա որպես հաղթության նշան կրելով յոթ վերքերը: Այդ վերքերը Նրա համար նախատինք չէին, այլ Նրա Մարմնի զարդը՝ ինչպես մի թփի վրա յոթ բացված վարդեր:

Կրկին Հիսուս պատասխանում է հրեշտակներին.

«Ես մենակ ճմլեցի հնձանը, հեթանոսներից ոչ ոք ինձ հետ չէր. զայրութով տրորեցի նրանց, բարկությամբ ճմլեցի նրանց և գետնին հավասարեցրի ու Իմ բոլոր զգեստներն արյունաթաթախ արի» (Եսայի ԿԳ 3) – Արյունը Նրա կողից ցած էր հոսում, ինչպես Հակոբ նահապետն է ասում. «Իր պատմուճանը կլվա գինով և իր հագուստը՝ խաղողի արյամբ» (Ծննդ. Խթ 11): Հնձանը խաչն է, որտեղ Քրիստոս տրորեց մարդկանց մեղքերն ինչպես խաղող, երբ չարչարվեց մեզ համար, և Նրա Մարմինը, մեր մեղքերի պատճառով խոցվելով, թաթախվեց արյամբ:

Հնձանը նաև աշխարհն է, որը Քրիստոսի գալուստից առաջ սատանայինն էր, որովհետեւ սատանան կոխուսում էր մարդկանց իբրև խաղող, նրանցից քամում բարեհամ գինին, այսինքն՝ առաքինությունները, և մարդկանց թողնում միայն կպեճն ու մնացորդ կնձեռը (չանչը), այսինքն՝ բոլոր չար գործերը՝ ագահությունը, պղծությունը և այլն: Քրիստոս այս հնձանը կոխեց, քանի որ դատապարտեց աշխարհի բոլոր մեղքերը: Իսկ այն, որ ասաց, թե՝ «մարդկանցից ոչ ոք ինձ հետ չէր», զուտ ճշմարտություն է, քանի որ չարչարանքների ժամկին մարդկանցից ոչ ոք նրա կողքին չէր. բարեկամներն ու մերձավորները օտարացան, իսկ աշակերտները փախան:

Որպես չարչարանքի նշան՝ առկա էին նրա ոտքերի և ձեռքերի վերքերը, ինչպես նաև տիգահար կողի վերքը, որպեսզի իր երկրորդ գալստյան ժամանակ ցույց տա, որ նույն Մարմինն է, որով երկինք համբարձվեց, որպեսզի կատարվի մարդարեռությունը, ըստ որի հրեաները պիտի նայեն նրան, Ում խոցեցին. «Ահավասի'կ նա, որ գալու է ամպերի հետ, և նրան պիտի տեսնեն բոլոր աչքերը, նաև նրանք, որ խոցեցին նրան, և երկրի բոլոր ազգերը պիտի ողբան նրա վրա» (Յայտ. Ա 7): Իսկ մարդարեն հարցնում է. «Այդ ի՞նչ վերքեր են Քո ձեռքերի մեջ», ինչին Քրիստոս պատասխանում է. «Դրանք այն վերքերն են, որ Ես ստացել եմ իմ սիրելի ազգի տանը» (Զաքար. ԺԳ 6):

Ինչպես քաջին վայել է վերքեր ստանալ պատերազմում, այդպես և մեր Տերը վերքեր ստացավ խաչի վրա: Եվ ինչպես արքան հաղթանակից հետո թագով է պսակվում և կարմիր հանդերձներով զգեստավորվում, այդպես էլ մեր Տերը փշե պսակ կրեց իր գլխին և փոխարենը լուսե պսակ շնորհեց մարդկային բնությանը, ինչպես ասվում է երգ երգոցում. «Ելե՛ք, ո՛վ Սիոնի գուստը եր, և նայեցե՛ք Սողոմոն արքային ու նրա պսակին, որով մայրը նրա հարսանիքի օրը՝ իր Որդու սրտի ուրախության օրը, պսակեց նրան» (Երգ. Գ 11): Ահա այդ պատճառով էին հրեշտակների վերին դասերը հարցնում, թե ինչո՞ւ են կարմիր նրա զգեստները:

«Քանզի հասել էր նրանց հատուցման օրը, փրկության տարին եկել հասել էր: Նայեցի, բայց օգնող չկար, մտածեցի, թե ինչու ոչ ոք չկար, որ թիկունք դառնար ինձ: Իմ բազուկը փրկեց նրանց, և միայն իմ բարկությունն ինձ զորավիր եղավ: Իմ բարկությամբ տրորեցի և իմ զայրույթով մորթեցի նրանց, գետնին հավասարեցրի նրանց» (Մեն Եսայի ԿԳ 36) – Անմահների վերին զորքերը տեսնում էին Փառքի թագավորին ինչպես մի այր մարդու, ով գալիս էր երկրից, արնագույն և կարմիր զգեստներով, և տարակուսում էին: Այդ պատճառով Տիրոջ առջեկից ընթացողները՝ սուրբ հրեշտակապետերը, ովքեր Աստծու Անժամանակ Խոսքի

անձառելի տնօրինությունների խորհրդածուներն են, նկատելով վերին գորքերի տարակուսանքը՝ ասացին. «Սա Հոր և Սուրբ Հոգու Փառակիցն է, Ով արուսյակից առաջ է ծնվել Հորից և ժամանակի մեջ Մարդ եղել սուրբ Կույսից և համբարձվելով գալիս է Հոր մոտ: Սա ինքն է՝ Փառքի Թագավորը, Աստծու Անձառելի Խոսքը, Ով ծածկված է անմատույց լույսերով, սակայն իր մարդեղությամբ խանձարուրով պատվեց: Ինքն է սերովբեների թագավորը, Ով խաչի վրա մեղքը սպանեց և լուծարեց դժոխքի բռնությունը: Նա ինքն է, Ով նստում է քերովբեների վրա և գերեզմանից անապական հարություն առավ»:

Եվ գալով երկրպագում են Նրան հրեշտակների գորքերը՝ տասնմեկ գնդերը: Իսկ երբ լսեցին, թե այդտեղ են հրավիրվել նաև փրկված ու ազատված մարդիկ, որպեսզի լրացնեն տասներկուերորդ գնդի թափուր տեղերը, մեծ ուրախություն ծագեց հրեշտակների առաջին դասի լուսեղեն բանակում, և նրանք օրհնության երգեր վերառաքեցին հավիտենական Արարչին ու անհաղթելի թագավորին:

Ապա Տերը մտավ հրեշտակապետների դասը և երկրպագվելով՝ փառավորվեց նրանցից: Այնուհետև անցնում է երրորդ դասը, ուր տերություններն են և միսիթարում է նրանց ու դարձյալ երկրպագվում: Ապա համբառնում է չորրորդ դասը, որը կոչվում է զորություն՝ սփոփելով նրանց և բարեբանվելով նրանց կողմից: Իսկ հետո համբառնում է հինգերորդ դասը, որ կոչվում է պետություն, և երգաբանվում նրանց կողմից: Ապա վերթևում է դեպի յոթերորդ դասը՝ դեպի հրճվալից աթոռները, որոնց բերկրացնում է և նրանց կողմից բարեհամբավվում: Ապա փոխադրվում ութերորդ դասը՝ քերովբեների պարսերը, և ուրախացնում նրանց՝ փառավորվելով նրանցից: Եվ վերջապես վեր է բարձրանում դեպի իններորդ դասը՝ դեպի սերովբեների հույլը, և խնդությամբ լցնում նրանց՝ սրբաբանվելով նրանցից:

Այդպիսով անցնելով ինը դասերով և իր մարդկային կերպարանքով բոլորին երևալով՝ բոլորին էլ մատուցում է մարդկային ցեղի բարձրացման ավետիսը, ըստ որի՝ մարդիկ ելնելու են և միշտ լինելու են համընթաց երանելի զորություններին, որով Տերն ուրախացնում է բոլոր պետություններին, զորություններին ու վերին իշխանություններին և բոլորին սովորեցնելով ու բոլորից երկրպագվելով ու փառավորվելով՝ մտնում վարագույրի ներքին կողմը՝ Սրբության սրբոց՝ արարածների բնությունից այն կողմ, և մոտենում անմատչելի աթոռին, քանզի Սուրբ երրորդությունը միայնակ է Սրբության սրբոցում:

Այդ ժամանակ Ամենակալ Հայրը՝ թագավորների թագավորը, ասում է բոլորիս Տիրոջը. «Նստի՛ր իմ աջ կողմում, մինչև որ քո թշնամիներին ոտքերիդ պատվանդան դարձնեմ» (Սաղմ. 6թ 1), որովհետև «Քեզնով է սկսվում զորացումն իմ օրերի, Քեզ արշալույսից առաջ ծնեցի արգանդից» (Սաղմ. 6թ 3), և՝ «Եվ Տերը, որ Քո աջ կողմում է» (Սաղմ. 6թ 5), այսինքն՝ Սուրբ Հոգին: Որդին նստում է Հոր աջ կողմում, և Սուրբ Հոգին նստում է Որդու աջ կողմում, ինչպես մարգարեն է ասում: Որդին իր Մարմնով հանդերձ, որը մեզնից առավ, աթոռակից է Հորը:

Գրված է. «Քո գահը հավիտյանս հավիտենից է, Աստվա՛ծ. Քո արքայական գավազանն արդարության գավազան է» (Սաղմ. ԽԴ 7), և «Տերն իր սուրբ տաճարում է, Տերը երկնքում է՝ իր գահի վրա» (Սաղմ. Ժ 5): Այսինքն՝ Միածին Խոսքը և՝ Հոր աջ կողմում է, և՝ սուրբ եկեղեցու կառքում: Նա ազատեց Հեթանոսներին թշնամիներից ու նստեց Հոր աջ կողմում՝ ըստ մարգարեի խոսքի. «Աստված թագավորեց Հեթանոսների վրա, Աստված բազմեց իր սրբության գահին» (Սաղմ. ԽԶ 9):

Միածնի՝ Հոր աջ կողմում նստելու և կամակոր վիշապին սաստելու մասին սաղմոսերգուն ասում է. «Բազմեցիր աթոռին, Ո՛վ Դատավոր արդար: Սաստեցիր Հեթանոսներին, և ամբարիշտն անհետացավ» (Սաղմ. Թ 56): Նաև՝ «Ակզբից է պատրաստված գահը Քո, և հավերժ ես Դու» (Սաղմ. ՂԲ 2): Եվ այսուհետև հրեշտակներն ու երկնքի բոլոր զորքերը տեսնում են անմատույց հուրը և անիմանալի Աստվածությունը:

ՀՐԵՇՏԱԿԱՆԵՐԸ ԸԼՏ ԲՎԱՆ ԱՊՎՈՐԵՖԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՅ

Մինչ Աստծու Խոսքի մարմնանալը, երկնքում Աստծուն պաշտում էին հրեշտակները, իսկ երկրի վրա՝ հրեաները: Սակայն նրանց հավատն անկատար էր, քանզի հրեաները մի Աստված միայն գիտեին և երրորդության մասին տեղյակ չէին, իսկ հրեշտակները չնայած որ գիտեին երրորդության մասին և պաշտում էին, սակայն ոչինչ չգիտեին Աստծու Խոսքի մարդեղության մասին: Իսկ կատարյալ հավատը հետեւյալն է. Հավատալ Սուրբ Երրորդությանը և Աստծու Խոսքի մարդեղությանը:

Երբ Քրիստոս աշխարհում էր, թեպետ բազում անգամ պատմեց աշակերտներին իր մարդեղության խորհրդի մասին՝ ըստ այս խոսքի. «Առանց առակի նրանց հետ ոչինչ չէր խոսում, բայց իր աշակերտների համար առանձին ամեն ինչ մեկնում էր» (Սարկ. Դ 34), սակայն աշակերտները, հուսահատվելով Տիրոջ խաչելությունից ու մահից, երկբայում էին: Նրանք տրտմությունից կարծես թե մոռացել էին Տիրոջ խոսքերը, ինչ պատճառով էլ Տերն իր հարությունից հետո անմիջապես չհամբարձվեց, այլ քառասուն օր, ամեն կիրակի՝ երեկոյան, երեսում էր աշակերտներին ու հաստատում

նրանց կատարյալ հավատի մեջ, այսինքն՝ Սուրբ Երրորդության և իր մարդեղության:

Ժամանակի լրմանը Աստծու Խոսքը՝ Հոր ծոցածին Որդին, աշխարհ եկավ, զգեստավորվեց մարմնով, մարդացավ և ընդունեց նոր անուն՝ Հիսուս, և կատարելով տնօրինական խորհուրդները՝ ճանաչեցրեց առաքյալներին Ամենասուրբ Երրորդությանը և իր մարդեղությանը՝ ըստ այս խոսքի. «Ձեզ բարեկամներ կոչեցի, որովհետև այն բոլորը, ինչ իմ Հորից լսեցի, հայտնեցի ձեզ» (Յովհ. ԺԵ 15): Դրանից առաքյալների հավատը կատարյալ եղավ, և հետագայում բոլոր քրիստոնյաները նրանցից ուսանեցին պաշտել Սուրբ Երրորդությունը և Աստծու մարդեղությունը: Դրանով քրիստոնյաների հավատն ավելի կատարյալ դարձավ, քան հրեշտակներինն ու հրեաներինը, ինչ պատճառով Պողոսն ասում է. «Այսպես, մարդիկ թող համարեն մեզ իբրև սպասավորներ Քրիստոսի և տնտեսներ՝ Աստծու խորհուրդների» (Եփես. Դ 1):

Հարց. — Ինչպես է^o, որ երկնային գորությունները չէին իմանում այդ ամենը, չէ^o որ նրանք էին սպասավորները Տիրոջ տնօրինական խորհուրդների: Օրինակ՝ Գաբրիելն ավետիս տվեց Կույսին, իսկ հրեշտակների խմբերը Տիրոջ ծննդյան օրը ավետիս տվեցին հովիվներին և ներկա էին Նրա մկրտության, հարության և համբարձման ժամանակ: Իսկ վերին դասերը՝ սերովբեները, քերովբեները և աթոռները, բավականին մոտ են Աստվածությանը:

Պատասխան. — Երբ Տերը Կույսի որովայնում էր, իսաչի վրա կամ գերեզմանում, ինչպես նաև բոլոր մյուս տնօրինությունների ժամանակ երկրում էր, նա նաև Հոր հետ էր անբաժանելիորեն, և վերին դասերը տեսնում էին Որդուն Հոր հետ՝ բազմած փառքի աթոռին: Իսկ հրեշտակները թեպետ իմանալիներ են ըստ բնության, սակայն արարածներ են և այդ պատճառով ամեն ինչ լիապես չգիտեն:

Կա նաև մեկ այլ պատճառ նրանց անգիտության: Հնում Աստվածային բոլոր ազգեցությունները մարդկանց վրա հրեշտակների միջոցով էին լինում, և Աստված կամեցավ, որ մարդիկ նույնպես պատվի արժանանան և մարդկանց ու հրեշտակների միջև հավասարություն լինի: Այդ պատճառով Տիրոջ մարդեղության անճառելի խորհուրդը երկնայինները մարդկանցից իմացան, ինչպես և Պողոսն է ասում. «Որպեսզի Եկեղեցու միջոցով հայտնի այժմ երկնային իշխանություններին և պետություններին Աստծու բազմապատիկ իմաստությունը» (Եփես. Գ 10):

Հարց. — Ինչո՞ւ վերին դասերն անպատշաճ չէին համարում ցածր դասերից սովորելը:

Պատասխան. – Որովհետև Որդու մարդանալով և երկրի վրա Աստծու խոսքի երեալով՝ երկիրը երկինք դարձավ։ Նախկինում իմաստությունը Աստծուց ելնելով անցնում էր հրեշտակների վերին դասերից միջիններին, ապա՝ ցածր դասերին, իսկ նրանցից՝ մարդկանց։ Իսկ այժմ հակառակը կատարվեց։ Աստծու բազմապատիկ իմաստությունները Եկեղեցուց ելան՝ ըստ առաքյալի վերը նշված խոսքի, քանի որ Տերը մեր բնությունն անչափելի պատվով բարձրացրեց։

Դարձյալ՝ հրեշտակները թեպետ Քրիստոսի սպասավորներն են, սակայն շատ բան Եկեղեցուց սովորեցին։ Ինչպես որ Աստծու մարդեղությունն էր ծածկված նրանցից, և հրեշտակները այդ մասին մեր փրկության միջոցով իմացան։

Նրանք չգիտեին նաև, որ ընկած հրեշտակների տեղերը մարդիկ են լրացնելու։

Զգիտեին, որ մահը մահվամբ է մեռնում, օրհնությունն անեծքով է հաստատվում և անարդանքով՝ պատիվը, և այդ ամենը Քրիստոսից ու Եկեղեցուց սովորեցին։

Զգիտեին մարդացյալ Աստծու կերպը, այդ պատճառով հարցնում էին. «Ինչո՞վ է առավել քո Սիրելին մյուս տղաներից, ո՞վ գեղեցիկ կանաց մեջ, ինչո՞վ է նա առավել, որ այդպես երդվեցնում ես մեզ» (Երգ Ե 9): Եվ սուրբ Եկեղեցին ասաց նրանց. «Իմ Սիրեցյալը սպիտակ է և կարմիր, ընտրյալ է տասը հազարից» (Երգ Ե 10):

Զգիտեին ծննդյան, խաչելության, թաղման տնօրինությունները, մինչև որ Եկեղեցուց իմացան։

Զգիտեին, որ մեր բնությունը պիտի աստվածանար և նստեր Հոր աջ կողմում, և հրեշտակներն ու բոլոր զորությունները Նրան պիտի երկրպագեին, ինչպես առաքյալն է ասում. «Որպեսզի Հիսուս Քրիստոսի անունով խոնարհվի ամեն ծունկ՝ լինի թե՛ երկնավորների, թե՛ երկրավորների և թե՛ սանդարձամետականների. և ամեն լեզու խոստովանի, թե Հիսուս Քրիստոս Տե՛ր է՝ ի փառս Հայր Աստծու» (Փիլիպ. Բ 10-11):

Ծածկված էր նրանցից, որ Աստված իր Մարմինը տալու է մեզ՝ որպես կերպակուր։

Զգիտեին հեթանոսների կանչվելու մասին։

Զգիտեին, որ մարդն Ավագանի մկրտությամբ Աստծու որդի է լինելու։

Զգիտեին, որ ինչպես Տերը հրեշտակների հետ երկիր եկավ, այդպես էլ երկինք է գնալու ընտրյալների հոգիների հետ և դնելու է սկիզբը Վերին Սիոնի։

Զգիտեին նաև Քրիստոսի տնօրինությունների հետ կապված տոների մասին, որովհետև նրանց համար չկա ցերեկ ու գիշեր, այլ Եկեղեցուց սովորեցին բոլոր տոները և այժմ մեզ տոնակից են լինում:

Այն բոլոր խորհուրդները, որոնք Աստված Հայտնել էր Հրեշտակ-ներին, մարդիկ Հրեշտակներից էին սովորում, իսկ այս խորհուրդները, որ ծածկված էին մինչ Տիրոջ մարդանալը, Հրեշտակները Եկեղեցուց սովորեցին, քանի որ մինչ գործի սկսելը վախճանը միայն Աստծուն է Հայտնի, իսկ Հրեշտակներին՝ ոչ: Ահա թե ինչու է Պողոսը ասում. «Այն խորհուրդը, որ ծածկված էր գարերից և սերունդներից և որ այժմ Հայտնվեց իր սրբերին» (Կողոս. Ա 26):

ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴ

ՅՈԹԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

Օրվա երեքսրբյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ համբարձար փառօք առ Յայր, ողորմեա' մեզ»: Այսօր Խաչով և Ավետարանով թափոր է կազմվում՝ ասելով «Թագաւոր գոլով» շարականը:

Այս տոնն ըստ ավանդության կարգված է սուրբ Գրիգոր Լուսավորչի կողմից, և այն միայն Հայաստանյայց Եկեղեցին է տոնում՝ Համբարձման չորրորդ օրը: Երբ Լուսավորիչը տասներեք տարի շարունակ գտնվում էր վիրապում, այնտեղ նրան Աստված մխիթարում էր չորրորդ դասի զվարժունների միջոցով: Եվ երբ մոտենում էր Աստծուն երկրպագելու պահը, հրեշտակները սրբից հեռանում էին Տիրողը երկրպագելու և անմիջապես վերադառնում նրա մոտ: Սակայն Համբարձման չորրորդ օրվա նախօրյակին, երբ նրանք սովորականի պես գնացին Աստծուն երկրպագելու, վերադարձան միայն Հաջորդ օրը և իրենց ուշանալու պատճառը բացատրեցին Հետևյալով: Երբ Քրիստոս կատարեց իր բոլոր տնօրինությունները և Համբարձվեց, ապա Հաջորդող ինն օրերին հրեշտակների ինը դասերում եղավ և յուրաքանչյուր դաս ցնծությամբ և ուրախությամբ ընդառաջ էր ելնում Տիրողն ու նրա պատվին տոն կատարում, և Տերը նրանց հաստատում էր ու հայտնում իր մարդեղության խորհուրդը: Իսկ չորրորդ օրն իրենց դասում Հանդստացավ և այդ պատճառով ամեն տարի այդ օրն իրենց դասը տոն է կատարում: Եվ սուրբ Լուսավորիչը, ելնելով վիրապից, այդ ամենը հայտնեց Հայաստանյայց Եկեղեցուն:

Հրեշտակների Համար այդ օրը մեծ ցնծության օր էր, որովհետեւ նրանք մարմնով տեսնում էին նրան, Ում չէին կարող տեսնել Աստվածությամբ, նաև ուրախ էին մարդկային բնության դարձի Համար: Ինչպես նաև այդ օրը վերցվեց նրանց վրայից այն ամոթը, որը կրում էին իրենց ազգակից սատանայի պատճառով մարդկային ցեղին մոլորեցնելու Համար: Իսկ վարդապետներն ասում են, թե նրանք երկյուղի մեջ էին, որ Հանկարծ իրենք նույնպես չընկնեն մյուս հրեշտակների նման, մինչև որ Տերը եկավ և վերացրեց նրանց երկյուղը:

Այս տոնը երկրորդ Ծաղկազարդ է կոչվում, և մենք մտքով ու օրվա խորհրդական պաշտամունքով մասնակցում ենք հրեշտակների տոնին, մանավանդ իշխանությունների վեհ դասի ուրախությանը, ովքեր մեր ազգի երախտավորները եղան, քանի որ պահպանեցին մեզ Համար մեր

Հուսավորչին: Այս օրը շատ նմանություններ ունի առաջին Ծաղկազարդին, քանի որ նույն պաշտամունքն ենք մատուցում և ընթերցում ենք առաջին Ծաղկազարդի Ավետարանները: Եվ ինչպես առաջին Ծաղկազարդը «Աղուհացի» յոթերորդ կիրակի օրն էր, այդպես էլ երկրորդ Ծաղկազարդը՝ «Հինանց» յոթերորդ կիրակի օրն է:

Եթե այն ժամանակ հիշատակում էր Տիրոջ գալուստը մեզ մոտ՝ երկրային երուսաղեմ, ապա այսօր՝ Նրա գնալը հրեշտակների մոտ՝ Վերին երուսաղեմ: Այն օրը Տերը փառաբանվում էր ինչպես Դավիթի Որդի, իսկ այսօր՝ ինչպես Աստծու Որդի: Այն օրը Տերը բազում ժողովրդի ուղեկցությամբ մտավ ներքին երուսաղեմ, իսկ այսօր հրեշտակների բյուրավոր բանակներով ու մարդկանց հոգիներով մտավ Վերին երուսաղեմ: Այսպիսի շատ ուրիշ համեմատություններ ևս կարելի է անել այս երկու Ծաղկազարդների միջև:

Հայտնի է, որ ինչպես հարությունից հետո Քրիստոս մնաց օդում քառասուն օր, որպեսզի մարդկանց մեջ հաստատի իր հարության հավատը, այդպես էլ համբարձումից հետո ինն օր մնաց հրեշտակների դասերում, որպեսզի նրանց հայտնի մարդկանց փրկության խորհուրդը, որովհետեւ նրանք նույնպես մեր փրկությանը կցուրդ եղան:

Հայտնի է նաև, որ հրեշտակների մեջ ամեն ինչ կարգով է կատարվում: Երբ Աստծուց գիտություն ու շնորհ է իջնում, այն նախ տրվում է առաջին դասերին, այնուհետեւ՝ միջին դասերին, հետո՝ վերջին դասերին, իսկ նրանցից էլ անցնում է մարդկանց: Նույնպես և մեզնից ամեն աղոթք ու բարեգործություն կարգով ելնում է նախ հրեշտակներին, ապա՝ միջին դասերին, այնուհետեւ՝ վերին դասերին և նրանցից էլ հասնում Աստծուն: Այդպես էլ մեր Տերը պահեց այս կարգը. նախ մարմնով ելավ հրեշտակների դասը, ապա՝ միջին դասը, այնուհետեւ՝ վերին դասը, իսկ այնտեղից էլ գնաց ու նստեց Հոր աջ կողմում:

Տերը համբարձման տասներորդ օրը, որը շաբաթ էր, նստեց Հոր աջ կողմում՝ հանգստանալով Աստվածության փառքում, քանի որ շաբաթը հանգիստ է նշանակում: Ինչպես Աստված շաբաթ օրը հանգստացավ իր գործերից, նաև՝ շաբաթ օրը հանգստացավ գերեզմանում իր չարչարանքներից, այդպես էլ շաբաթ օրը հանգստացավ տնօրինական գործերից ու նստեց Հոր աջ կողմում:

Ինչպես պատերազմից հաղթանակով վերաբարձած թագավորը մտնելով պալատ բազմում է իր գահին և հրամայում պարգևներ բաշխել կարոտյալներին իր հաղթանակի առիթով, այդպես էլ մեր Տերն այսօր նստեց բարձունքում՝ Մեծության աջ կողմում, և առաքյալներին ու բոլոր հավատացյալներին պարգևներ բաշխեց՝ ուղարկելով Սուրբ Հոգուն, Ում

մասին ասել էր. «Ահա ես ուղարկում եմ Ձեզ իմ Հոր խոստումը, իսկ դուք նստեցե՛ք Երուսաղեմ քաղաքում, մինչև որ Երկնքից զորությամբ զգեստավորվեք» (Ղուկ. ԻԴ 49):

Կիրակի օրը՝ երրորդ ժամին, Տերը պարգևի փոխարեն Սուրբ Հոգուն առաքեց առաքյալների դասերի վրա և նրանց լցրեց շնորհներով: Մենք ևս ակնկալում ենք ստանալ Սուրբ Հոգու բազմաբաշխ պարգևներն ու առատաձիր շնորհները, որպեսզի միմիթարվենք այս կյանքի բազմապատիկ տրտմությունների մեջ, և մեր հոգին, մարմինն ու միտքը լցվեն Տիրոջ ողորմությունների շնորհներով, և Սուրբ Հոգով առաջնորդվենք դեպի հավիտենական կյանքի բարի և ուղիղ նավահանգիստը:

ՀՈԳԵԳԱԼՈՒՏ

Գիշերը կատարվում է հսկում, Սրբությունը դնում են սուրբ Սեղանին: Օրվա երեք-սրբյանն է: «Սուրբ Աստուած, սուրբ և հօգոր, սուրբ և անմահ, որ եկիր և հանգեար յառաքեալսն, ողորմեա' մեզ»: Ապա Խաչով ու Ավետարանով թափոր է կազմվում «Առաքելոյ աղաւանոյ» շարականի երգեցողությամբ: Այսօր ընթերցվում են «Եւթաղի աղերսը», Յովիան Ոսկեբերանի «Ի Սուրբ Երրորդութիւն» աղորքը և Ներսես Լամբրոնացու Սուրբ Յոգու գալստյան ներբողը:

Սուրբ Հոգու աստվածային գալուստը քարողվել է բոլոր մարդարեների կողմից, բայց կատարելապես նրա գալստյան մասին առաքյալներին պատմեց Փրկիչը, մինչ իր տնօրինական փրկարար չարչարանքները, որպեսզի ճանաչեցնի Հոգու էությանը և միմիթարի նրանց: Իսկ երբ մոտենում էին գրավոր Օրենքի հնանալու և նոր Ուխտի հաստատվելու ժամերը, ասաց. «Եթե ինձ սիրում եք, կպահեք իմ պատվիրանները. և Ես պիտի աղաչեմ Հորը, և նա մի այլ Միմիթարիչ պիտի տա ձեզ, որպեսզի հավիտյան ձեզ հետ բնակվի ձշմարտության Հոգին» (Յովի. ԺԴ 15-17): Եվ դարձյալ՝ «Միմիթարիչը՝ Սուրբ Հոգին, որին Հայրը կուղարկի իմ անունով, նա ձեզ ամեն բան կուսուցանի և ձեզ կհիշեցնի այն ամենը, ինչ Ես ասացի ձեզ» (Յովի. ԺԴ 26): Արանով հայտնում է, որ Սուրբ Հոգին Հորից գալու:

Տերն ասաց. «Լավ է ձեզ համար, որ Ես գնամ. որովհետեւ եթե Ես չգնամ, Միմիթարիչը ձեզ մոտ չի գա. իսկ եթե գնամ, Նրան կուղարկեմ ձեզ մոտ» (Յովի. ԺԴ 5-7): Ասաց նաև՝ «Դեռ շատ բաներ ունեմ ձեզ ասելու, բայց այժմ չեք կարող տանել: Երբ որ գա նա՝ ձշմարտության Հոգին, ամենայն ծշմարտութեամբ կառաջնորդի ձեզ» (Յովի. ԺԴ 12-13): Մանավանդ զգուշացրեց. «Ամեն մեղք և հայհոյանք կներվեն մարդկանց, բայց Հոգու դեմ հայհոյանքը չպիտի ներվի: Եվ ով որ Մարդու Որդու դեմ խոսք ասի, նրան պիտի ներվի, բայց ով ասի Սուրբ Հոգու դեմ, նրան չպիտի ներվի ո՛չ այս աշխարհում և ո՛չ էլ հանդերձալում» (Սատր. ԺԲ 31-32): Հարությունից հետո Որդին փչմամբ նախաճառեց Սուրբ Հոգու մասին՝ ասելով. «Առե՛ք Սուրբ Հոգին...» (Յովի. Ի 22), իսկ համբարձումից առաջ պատվիրեց նստել երուսաղեմում, մինչև երկնքից զորություն ստանալը:

Տերն իր հրաշափառ Հարությունից քառասուն օր անց համբարձվեց և ինն օր հրեշտակների ինը դասերում պաշտվելուց հետո տասներորդ օրը նստեց Հոր աջ կողմում և առաքյալների դասերի վրա առաքեց խոստացած Պարգևել՝ Սուրբ Հոգին, որպեսզի առաքյալները, Սուրբ Հոգին կարուտով ու զգուշությամբ ընդունելով, նրանով առաջնորդվեն դեպի Ավետյաց երկիր, ինչպես ասում է Դավիթը. «Քո բարի Հոգին ինձ պիտի առաջնորդի դեպի արդար երկիր» (Սաղմ. ճԽԲ 10):

Թեպետ մինչ այդ առաքյալները տիեզերքի Փրկչից ստացան քահանայապետությունը, սակայն առանց Սուրբ Հոգու ընդունելության տակավին անկատար էին, չնայած այն նշանները, որ նրանք գործում էին, քանի դեռ իրենց հետ էր Քրիստոս, առանց Սուրբ Հոգու չէին լինում: Առաքյալներն այսօր կատարելապես ընդունեցին Սուրբ Հոգուն, Ով ոչ թե ազդմամբ, ինչպես մարդարեներին, այլ անբաժանելիորեն նրանց միացավ: Հոգին չեկավ ծածուկ և աներեւոյթ, այլ իբրև սաստիկ հողմ և լցրեց ամենքին: Սուրբ Հոգին իր էջքով նոր սքանչելիք գործեց՝ կյանքի հոտ ու անմահության բույր հեղեղով երուսաղեմի վրա և լիացնելով քաղաքը: Եվ առաքյալների միջոցով Սուրբ Հոգու անուշահոսությունը լցվեց ամբողջ տիեզերքը, ինչպես և Պողոսն է ասում. «Քանի որ Քրիստոսի բուրմունքն ենք Աստծու առաջ՝ և՝ Գրկվածների մեջ, և՝ կորսույան մատնվածների մեջ» (Բ Կորնթ. Բ 15):

Այս տոնը լրումն է տերունական տոների: Ինչպես տնօրինության սկզբում Սուրբ Հոգին եկավ Կույս Մարիամի մոտ, այդպես էլ այսօր Հոգին եկավ Վերնատուն և Հրով գինեց առաքյալներին:

Այս տոնն ազատարար է և պարզեիչ, քանզի մեզ ազատեց ապականության ծառայությունից և վերադարձրեց մեր հայրենի ժառանգությունը՝ Դրախտը: Մենք Սուրբ Հոգու գալուստը տոնում ենք ութ օր շարունակ (ինչպես Ծննդյան ու Հարության տոները) սակայն տոնում ենք պահքով, քանի որ երբ Տերը մկրտվեց, Հոգին նրան տարավ անապատ, և այնտեղ Տերը քառասուն օր ու քառասուն գիշեր պահքի մեջ էր, այդ պատճառով էլ մենք Հոգեգալուստը պահքով ենք տոնում:

Քանի դեռ Հոգին չէր իջել, գուգապատիվ երրորդության մեր խոստավանությունը թերի էր, որովհետեւ իսրայելացիները միայն Հորը գիտեին Աստված, ինչպես և ասում էին, թե մեկ է մեր Հայր Աստվածը՝ ըստ Մովսեսի խոսքի. «Լսի՛ր, Խսրայե՛լ, մեր Տեր Աստվածը մեկ Տեր է» (Բ Օրենք 2 4): Մովսեսը ժողովրդին բաղմաստվածությունից ետ պահելու պատճառով այդպես ասաց, որպեսզի մեկ իշխանությամբ գրավի նրանց, թեպետև անգետ չէր երրորդության խորհրդին, քանզի գրեց. «Աստված ասաց. «Մարդ ստեղծենք Մեր Կերպարանքով ու նմանությամբ» (Ծննդ. Ա 26): Դրանով հայտնեց, որ Հայրը Որդու և Սուրբ Հոգու մասին խոսեց:

Աստծու Հոգին բանական է, մտավոր, կենդանի և կենդանացնող, որով զարդարվում և կառավարվում են բոլոր բանականները, երկնավորներն ու երկրավորները: Նա «Սուրբ Հոգի» է կոչվում, որպեսզի խոսքի մեջ զանազանվի հրեշտակների և մարդկանց հոգիներից: Թեպետ հրեշտակները սրբություն ունեն, ինչպես և մեր Հոգիները, որ Արարչից բարի ստեղծվեցին և բարի Աստծու պատկերն են, սակայն զանազանվում է արարածների

սրբությունը Սուրբ Հոգու սրբությունից: Քանզի Աստծու Հոգին բնությամբ է սուրբ, իսկ հրեշտակները և մեր հոգիները՝ դրությամբ: Հստորում Սուրբ Հոգին անեղ է ու ամենակին սուրբ, և հստակ ու պարզ է նրա էությունը, իսկ մեր հոգին եղական է, ստեղծված և կապված է մարմնին:

Մի է անուշաբույր Արարիչ Սուրբ Հոգին, Ով արարչության օրերին շրջում էր ջրերի վրա, և նրանով բացվեցին ու փակվեցին երկնքի սահմանները, և բաժանվեցին լեզուներն աշտարակաշինության ժամանակ: Նա հանեց իսրայելին եղիպտոսից և առաջնորդեց Ավետյաց երկիր, լցրեց Մովսեսին և տարածվեց յոթանասուներկու ծերերի վրա (տես ԹՎԵՐ ԺԱ 25-29): Նա հովիվներին մարգարեներ դարձրեց, տգեսներին՝ ավետարանիչներ, ձկնորսներին՝ քարոզիչներ, իսկ հեթանոսներին՝ վարդապետներ ու նրանց առաքեց աշխարհով մեկ: Նա բաժանված լեզուները կրկին միավորեց ու վերստին նորոգեց: Նա է խուլերին լսել տալիս և համրերին՝ խոսել, անմիտներին իմաստուն է դարձնում և մանուկներին հավատի մեջ հաստատում: Նա է վերստին հոգեոր ծնունդ Տվողը՝ իր գութը սփռելով ծնվածների վրա, օրստօրե մարդասիրաբար մաքրելով նրանց հնության տկարությունից: Նրանով է լինելու նաև համընդհանուր հարությունը, և նա է արդարների ու մեղավորների համար արժանի տեղեր պատրաստում:

Եվ ինչպես Աստված փակեց Դրախտը բոցեղեն սրով և պահեց Կենաց ծառի ճանապարհը, այդպես էլ այսօր առաքեց Սուրբ Հոգին կրակի նմանությամբ՝ պահելու և պարսպապատելու համար սուրբ Եկեղեցին, որպեսզի սատանան այնտեղ չմտնի և ավերածություն չգործի, քանզի սատանան Սուրբ Հոգու կրակից հույժ սարսափում է:

Տուր Պատճենաւոր

Այժմ տեսնենք, թե երբ և որտեղից սկսվեց տոնվել Պենտեկոստեն: Մովսեսի գրքերում¹ գրված է, որ հրեաների՝ եղիպտոսից ելնելուց հիսուն օր հետո Սինա լեռան վրա Աստված երեաց ժողովրդին ու Մովսեսի միջոցով տվեց գրավոր Օրենքը, ապա ուխտ հաստատեց իսրայելի ժողովրդի հետ և կարգ սահմանեց այդ օրը տոնել: Սա տոնն է նաև Նոր Եկեղեցու, որովհետև այսօր նոր ժողովուրդն արժանացավ Սուրբ Հոգու տեսությանը, քանզի նա, Ով բոլորիս Աստվածն է, իջավ առաքյալների վրա և առաքյալներին գանագան շնորհներ պարզեց՝ դրանով լուծարելով նախկինում կայացված վճիռը, ըստ որի՝ Տեր Աստված ասաց. «Իմ Հոգին հավիտյան թող չմնա այդ մարդկանց մեջ» (Ծննդ. Զ 3):

¹ Այսինքն՝ Հնգամատյանում:

Այսօր մեզ տրվեց նաև Նոր օրենքը, որն Ավետարանի քարոզությունն է, և դրանով հաստատվեց, որ Նույն Արարիչն է տալիս հինն ու նորը, ինչի մասին ասում է. «Իմ օրենքները պիտի դնեմ նրանց մտքի մեջ և նրանց սրտում պիտի գրեմ դրանք», փոխանակ քարեղեն տախտակների (Եբր. Ը 10): Եվ առաքյալների սրտերն Աստծով սրբվեցին ու գրվեցին: Ինչպես այնտեղ՝ Սինա լեռան վրա, Աստված որոտմամբ, հրով և փայլատակումներով երևաց, նույնպես և այստեղ՝ Սիոն լեռան վրա՝ Վերնատանը, երևաց որոտով, փայլատակումով, հրով, հողմով ու անուշահոտությամբ: Այդ օրն օրինակն է նաև այն օրերի, երբ հաստատվեց երկիրը, ինչպես նաև այն օրվա, որ հանդերձյալում է լինելու, երբ ապականությունն այլևս տեղ չի ունենալու:

Այն օրը, երբ Սինա լեռան վրա Մովսեսի միջոցով տրվեց Օրենքը, նույն օրն էլ Սուրբ Հոգին իջավ առաքյալների վրա: Եթե այն ժամանակ Տերը մարգարեներին ծածկապես հայտնեց երեքանձնյա Աստվածության և Մի Տերության մասին, ապա այժմ երրորդության դավանությունը հայտնապես հրամայվեց քարոզել՝ մկրտելով հեթանոսներին Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով: Եթե այն ժամանակ մարդիկ մտքի տկարության և անկարության պատճառով չէին կարողանում արդարանալ, ապա այժմ, ամեն ոք, ով հավատա, կարդարանա ձրի թողությամբ:

Այս օրը հնում նշանավոր էր նաև նրանով, որ Աստծու երևումով Մովսեսի դեմքը լուսավորվեց, և նա Աստծու մատով գրված քարեղեն մատյանն ընդունեց իր գրկում: Իսկ նորում այսօր էլ ավելի մեծ սքանչելիք եղավ, քանզի Տերը լուսավորեց ոչ միայն առաքյալների մարմնավոր դեմքերը, այլև ամբողջ Հոգին, մարմինն ու միտքը, և բովանդակ Սուրբ Հոգին առաքեց նրանց վրա, որպեսզի Հոգին նրանց հետ բնակվի և մշտապես նրանց հետ լինի: Առաքեց նրանց քարոզության ոչ թե մեկ ազգի մեջ միայն, ինչպես Մովսեսին, այլ նրանք բոլոր ազգերի համար դարձան աստվածային շնորհների բաշխողներ, ուսուցիչներ ու վարդապետներ:

Հնում Օրենքը երկու անշունչ և անմիտ քարեղեն տախտակների վրա գրվեց, իսկ այսօր Սուրբ Հոգին միացավ առաքյալների մարմիններին, սրբեց նրանց հոգիները, և Աստծու խոսքը գրվեց ոչ թե քարեղեն տախտակների վրա, այլ սրտի մարմնեղեն տախտակների, և ոչ թե թանաքով, այլ Սուրբ Հոգով, քանզի գիրը սպանում է, իսկ Հոգին կենդանացնում, ինչպես ասում է առաքյալը (տեսք Կորնթ. Գ 3,6):

Զանազանվում է Հին օրենքը նորից նրանով, որ Հին օրենքում երկրուղ կար: Քանզի հրեաները երկրուղեցին ու ասացին Մովսեսին. «Դու խոսիր մեզ հետ, և մենք կհնազանդվենք: Աստված թող չխոսի մեզ հետ,

թե չէ կարող ենք մեռնել» (Ելք Ի 19): Իսկ երբ Սուրբ Հոգին իջավ առաքյալների վրա, ովքեր մինչ այդ երկչոտ էին ու տկար, ապա նրանք զորացան ու արիացան առյօւծի նման և այլևս չերկնչեցին թագավորներից ու բռնավորներից: Քանի որ առաջինը երկյուղի օրենք էր, իսկ երկրորդը՝ սիրո, ինչպես Պողոսն է հռոմեացիներին գրում. «Քանի որ չստացաք ծառայության Հոգին վերստին երկյուղի մեջ ընկնելու համար, այլ ստացաք որդեգրության Հոգին, Որով աղաղակում ենք՝ Աբբա Հայր» (Յոհոմ. Ը 15), «Ուստի ծառա չես, այլ որդի» (Գաղատ. Դ 7):

Հինը ծառայության օրենք է, իսկ նորը՝ ազատության, այդ պատճառով էլ Հին օրենքը տրվեց Սինա լեռան վրա, որը օտար երկրում էր, երբ Հրեաները պանդխատության մեջ էին, իսկ Քրիստոսի օրենքը՝ Սիոն լեռան վրա՝ երուսաղեմում, որը Դավթի քաղաքն է և նրանց հայրենի երկիրը, և իրենք այստեղ ազատ էին: Հին օրենքի ժամանակ մութ էր, քանզի լեռը պատված էր ծխով, իսկ նոր օրենքի ժամանակ՝ պարզ ու լուսավոր, քանզի Հոգին իջավ կրակի նմանությամբ՝ առանց ծխի:

Սա Մովսեսի կողմից օրինադրված տոններից երրորդն է: Առաջինը Շաբաթվա տոնն էր, ըստ որի պետք էր վեց օր աշխատել և յոթերորդ օրը հանգստանալ: Երկրորդը Զատիկն էր, երբ մորթում են գառը, իսկ երրորդը սա էր, որը կարգված է Շաբաթների շաբաթին, այսինքն՝ Հրեաների տարվա սկզբից² յոթ շաբաթ անց: Այդպիսի տոն կարգեց նաև սուրբ Եկեղեցին՝ նոր Շաբաթների շաբաթին, այսինքն՝ նոր զատկից յոթ շաբաթ անց, Որդու՝ խաչի վրա զոհվելուց հիսուն օր հետո, երբ Սուրբ Հոգին հայտնվեց առաքյալներին:

Հնում տոնում էին նաև յուրաքանչյուր հիսուներորդ տարին՝ Տարիների շաբաթը: Հիսունը հոբելյանական թիվ է, և հիսուներորդ տարում բոլորին թողություն ու ազատություն էր տրվում, ըստ Մովսեսի օրենքի (տես Ղև. ԻԵ 8-17): Այդպես և այսօր տոնվեց, քանի որ Սուրբ Հոգին եկավ և թողություն տվեց մարդկային բնության բոլոր պարտքերին և ուրախացրեց աղքատներին, այսինքն՝ առաքյալներին և մանավանդ՝ հեթանոսներին:

Հնում տոն կարգվեց նաև հունձքի ժամանակ, և ժողովուրդը քահանաներին էր տալիս հանդերի պտուղների երախայրիքը, որովհետև հրամայվեց, որ առաջին պտուղը քահանաները վերցնեն: Այդպես և հունձքի ժամանակ՝ Պենտեկոստեի տոնին եկավ Աստծու Մանդաղը՝ Սուրբ Հոգին, առավ բնության երախայրիքը՝ առաքյալներին, և նրանց ինչպես պատարագ տվեց երկնավոր Հորը: Առաքյալներին Քրիստոս նախքան Խոսքի Մանդաղի գալը հավաքեց, ինչպես հավատի առաջին պտուղ, ովքեր իր

² Յրեական տարվա սկիզբը մարտի 22-ն է:

իսուքի քարոզության սերմերը դարձան: Ինչպես այն օրը հրեաները մանգաղները ձեռքներին ելնում էին հունձքի, այդպես և այսօր առաքյալները, իսուքի մանգաղը հոգում միված ու զորացած Սուրբ Հոգով, ելան մշակելու տիեզերքը՝ համաձայն Տիրոջ հրամանի. «Հունձն առատ է, իսկ մշակները՝ սակավ: Արդ՝ աղաչեցի՞ք հնձի Տիրոջը, որ մշակներ հանի իր հնձի համար» (Մատթ. Թ 37:38): Այսօր Տերը ուղարկում է Սուրբ Հոգուն՝ սրելով առաքյալների լեզուները, որով նրանք բանական խորձեր են հավաքում այն արտերից, որոնց մասին Քրիստոս ասում էր. «Արտերը սպիտակել են և հասել հնձի համար» (Յովի. Դ 35):

Հնում այս տոնին ամբողջ ժողովուրդն էր հավաքվում, քանի որ, ըստ Օրենքի, տարին երեք անգամ պետք էր երեալ Աստծուն. մեկը՝ Զատկին, մյուսը՝ այս տոնին և մեկն էլ՝ Քալության տոնին՝ աշնանը: Արդ՝ ինչպես Զատկին Տերը խաչվեց, և Նրան տեսավ ողջ ժողովուրդը, այդպես և այսօր երեաց Սուրբ Հոգին, որպեսզի ժողովուրդը տեսնի, և ամոթ լինի նրանց, ովքեր հակառակվեցին Քրիստոսին: Քանի որ Տիրոջ խաչելության պատճառով շատերը գայթակղվեցին, մանավանդ աշակերտները, այդ պատճառով էլ այսօր երեաց Սուրբ Հոգին, որպեսզի հաստատի գայթակղվածներին:

ՊԵՆՏԵԿՈՏԵ

Հայտնի է, որ պենտեկոստեն հունարենից հինգերորդ է թարգմանվում: Ոմանք էլ ասում են, որ «պենտ» նշանակում է հինգ, իսկ «կոստե»՝ գլուխ, որը խորհրդանշում է հսրայելի հինգ գլխավոր տոները: Այդպես և մեզանում կան հինգ գլխավոր տոներ՝ Աստվածայայտնությունը, Տյառնընդառաջը, Զատիկը, Համբարձումը և Հոգեգալուստը: Իսկ ոմանք էլ հետեւյալ կերպ են թվարկում քրիստոնեական հինգ տոները՝ ձրագալույց, Զատիկի, նոր կիրակի, Համբարձում և Հոգեգալուստ:

Ստույգ նշանակությամբ «պենտան» հունարենից թարգմանվում է հինգ, իսկ «կոստեն»՝ տասնյակ: Հինգ տասը հիսունն է, այսինքն՝ հիսնյակ: Եվ Քրիստոսի Հարությունից մինչև Սուրբ Հոգու գալուստը հիսուն օր է:

Այս օրը նաև կիրակի է, որը սուրբ օր է և Քրիստոսի հարության պատվիչը: Եվ փառքը փառքերի վրա ավելանալով՝ այս օրը դարձավ նաև պատվիչը Սուրբ Հոգու գալուստան:

Հիսուն օրը յոթ շաբաթ ունի, իսկ յոթը բոլոր գործերի ավարտն ու Հոգեոր հանգիստն է ցույց տալիս: Հնում հրեաները տոնում էին յոթն անգամ յոթը, իսկ մենք կատարյալ հիսունն ենք տոնում՝ պատվելով և ութերորդը յոթի հետ, այսինքն՝ հանգերձյալը: Յոթն այս կյանքի յոթ

դարերն են, իսկ ութերորդը հանդերձյալի աներեկո օրն է, ինչը միասին ությակ է կազմում: Եվ յոթնյակից անցանք ությակին շնորհիվ այն առատ պարգևի, որ հեղվեց հիսնյակի վրա: Հրեաներն ութերորդին չարժանացան, քանզի մարմնով ընթացան և հոգեորին չհասան:

Սուրբ Հոգին Տիրոջ հարությունից յոթ շաբաթ հետո իջավ առաքյալների վրա, ինչը ակնարկում է Սուրբ Հոգու յոթնարվիյա շնորհները, որոնք տրվեցին առաքյալներին: Դրանք են՝ իմաստությունը, գիտությունը, հանճարը, ինչպես նաև՝ Հոգին խորհրդի, երկյուղի և աստվածաշտության:

Յոթ շաբաթը ցույց է տալիս նաև, որ Սուրբ Հոգին է քահանայի միջոցով եկեղեցու յոթ խորհուրդների Կատարողը, ինչպես մի ժամանակ առաքյալների միջոցով էր լինում: Դրանք են՝ մկրտությունը, դրոշմը, հաղորդությունը, խոստովանությունը, օծումը, քահանայության կարգը և պսակը: Սրանք բոլորն էլ Սուրբ Հոգով են ներգործում եկեղեցում:

Ասենք, որ հիսունը հինգ տասնյակ է. տասը ցույց է տալիս տասը պատվիրանները, իսկ հինգը՝ մարդու հինգ զգայարանները: Քանզի մենք Սուրբ Հոգու շնորհներով ենք կատարում տասը պատվիրաններն ու մեր հինգ զգայարանները զերծ պահում մեղքերից:

Հիսունը նաև հոբելյանական թիվ է, որը Հին Ռւխտում ազատության տարի էր կոչվում: Հոբելյանական տարում լինում էին հինգ տեսակի թողություններ. մահապարտները փրկվում էին, պարտապանները՝ պարտքերից ազատվում, աքսորվածները դառնում էին իրենց քաղաքները, վաճառված անդամատաններն անցնում էին իրենց նախկին տերերին, և գերության մեջ եղողներն՝ ազատվում:

Այդպես՝ հիսուներորդ օրը, երբ Հոգին իջավ, նրանք, ովքեր մահապարտ էին, փրկվեցին, ովքեր մեղապարտ էին, ազատվեցին, ովքեր աքսորված էին Դրախտից, վերադարձան իրենց հայրենի երկնային արքայությունը, ովքեր զրկվել էին արքայության փառքից, այն ետ ստացան, և ովքեր սատանայի ծառայության մեջ էին՝ ազատվեցին: Այդ պատճառով էլ առաքյալն ասում է. «Քանի որ չստացա ծառայության հոգին վերստին երկյուղի մեջ ընկնելու համար, այլ ստացա որդեգրության հոգին, որով աղաղակում ենք՝ Աբբա Հայր» (Յօն. Ը 15): Այսպես Սուրբ Հոգին մեզ ազատեց Օրենքի ծառայությունից ու վերացրեց մեր միջից Օրենքի լուծը:

Հիսունը հինգ անգամ տասն է, որն ակնարկում է հինգ զատիկները: Առաջին զատիկը հին Բաղարջակերաց տոնն է, որը կատարեց Տերը հինգշաբթի օրը Վերնատանը, երբ լվաց աշակերտների ոտքերը և հաստատեց իր Մարմնի ու Արյան խորհուրդը: Երկրորդ զատիկը Քրիստոսի Հարությունն է, երբ նա հարություն առավ մեռելներից: Երրորդ զատիկը նոր

կիրակին է, որը կոչում ենք Կրկնազատիկ, երբ Տերը երեաց աշակերտներին և նրանց ուրախացրեց: Չորրորդ գատիկը Տիրոջ համբարձումն է առ Հայր՝ ցնծությամբ ու փողի ձայնով, ինչով ուրախացան երկնային դասերը: Հինգերորդ գատիկը Սուրբ Հոգու էջքն է Վերնատուն, ինչով ուրախացան և զմայլվեցին առաքյալները:

Հին օրենքը Մովսեսի միջոցով Հին գատկից ու գառան մորթելուց հիսուն օր հետո տրվեց: Այդպես էլ նոր օրենքը՝ Քրիստոսի՝ ծշմարիտ Գառի գոհաբերումից հիսուն օր հետո տրվեց Սուրբ Հոգով: Բայց այստեղ մի տարբերություն կա: Հին օրենքը գառան գոհաբերությունից հիսուն օր հետո տրվեց, իսկ նոր օրենքը՝ Քրիստոսի Հարությունից հիսուն օր հետո՝ Սուրբ Հոգու գալստյամբ: Որովհետև Հին օրենքը մահվան օրենքն էր, այդ պատճառով էլ սկզբում մահն ուներ, իսկ նոր օրենքը կյանքի օրենքն է, հետեւաբար՝ սկզբում Քրիստոսի Հարությունը պիտի լիներ: Դարձյալ՝ Հին օրենքը չկարողացավ մարդկանց ազատել մահացու մեղքերից ու տանջանքներից, իսկ նոր օրենքը մեզ կատարելապես ազատում է երկուսից էլ՝ և' մահացու մեղքերից, և' տանջանքներից, ինչպես Պողոսը հռոմեացիներին է գրում. «Որովհետև Քրիստոս Հիսուսով կյանք տվող Հոգու օրենքն ինձ փրկեց մեղքի և մահվան օրենքից» (Յոն. Ը 2-3):

Սուրբ Հոգու Հրաշափառ էջքն առաջալաւրի ՎՐԱ (Գործք Բ 1-22)

Երբ Պետեկոստեի օրերը լրացան, բոլորը միասիրտ, միատեղ էին – Առաքյալները, կատարելով Տիրոջ հրամանը, այդ օրերին Երուսաղեմում էին գտնվում՝ ըստ այս խոսքի. «Նստեցե՛ք Երուսաղեմ քաղաքում, մինչև որ Երկնաքից զորությամբ զգեստավորվեք» (Ղուկ. Ի՛ 49): Ըստ Օրենքի՝ այդ օրը մեծ տոն էր, այդ պատճառով էլ Երուսաղեմում էին ժողովներ հրեաները, այդ թվում նաև նրանք, ովքեր այնտեղ էին եղել Քրիստոսի խաչելության օրը, որպեսզի նրա անարգանքը տեսնողները տեսնեին նաև Նրա փառքը:

Բոլորը միասիրտ, միատեղ էին – Այսինքն՝ տասներկու և յոթանասուներկու աշակերտները, նաև Աստվածածին Կույսը՝ Գալիլիայից եկած կանանց հետ, ովքեր Տիրոջ հարության վկաները եղան: Նրանց հետ էր նաև հավատացյալների մի բազմություն: Նրանք ոչ միայն մի վայրում էին հավաքված, այլև մի էին կամքով, խոսքով ու սրտով և մի Հույսով սպասում էին Հոր Ավետիսին:

Եվ հանկարծակի Երկնաքից հնչեց մի ձայն – Զայնը Երկնաքից եկավ, ուր գնաց Տերը: Քանզի Հոգին Աստված է, այդ պատճառով էլ վերեկց եկավ՝ որոտալով ու տալով իր զորության ձայնը բարձունքներից: Փառքերի

Աստվածը երկնքից եկավ, քանզի երկինքների երկնքում՝ արևելյան կողմում է նստում: Եկավ ըստ Տիրոջ խոստման. «Դուք նստեցե՛ք Երուսաղեմ քաղաքում, մինչև որ երկնքից զորութեամբ զգեստավորվեք» (Ղուկ. Ի՛ 49):

Սաստիկ հողմից եկած ձայնի նման – ինչո՞ւ զգալի օրինակով եղավ Սուրբ Հոգու գալուստը: Որպեսզի հրեաները չկարողանան սուտ համարել որոտման բարբառը: Սաստիկ ձայնի արձակումը նշանակում է նաև, որ Սուրբ Հոգին քարոզության միջոցով լսելի է դարձնում առաքյալների ձայներն ամբողջ տիեզերքում, ինչպես ասում է Դավիթը. «Ողջ երկիրն է բոնել ձայնը նրանց, և մինչև աշխարհի ծայրն են հասել խոսքերը նրանց» (Մաղն. Ժ՛ 5): Սուրբ Հոգին Աստված է և Թագավոր ամբողջ տիեզերքի, այդ պատճառով գաղտնի ու ծածկաբար չի իջնում, այլ՝ ինքնիշխանաբար, հզոր ձայնով ու որոտմամբ՝ հայտնելով իր Աստվածությունը, այնպես, ինչպես թագավորներն են քաղաք մտնում: Զայնը նաև խոսքի հայտնիչն է: Զայնով իջավ, որպեսզի ամբողջ աշխարհին հայտնի Աստծու Խոսքի՝ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Աստվածությունը և արթնացնի թմրած մարդկանց:

Ասում է հողմի և հրի նմանությամբ, որպեսզի Հոգին լոկ զգալի հողմ և հուր չկարծենք: Այդ պատճառով էլ զանազան կերպերով երևաց, քանզի ո՛չ հողմ է, ո՛չ հոս և ո՛չ լույս: Ինչպես հողմը Հոգու ուժգնությունն է ցույց տալիս, այդպես էլ հուրը՝ առատությունը, քանզի հրից որքան կամենանք, այնքան ճրագներ կվառենք: Դա ցույց է տալիս, թե առաքյալները ինչ ճոխությամբ ընդունեցին Հոգին:

Սաստիկ հողմի ձայնի նման եկավ, որպեսզի արթնացնի հրեաներին անհավատությունից և առաքյալների դեմ մարտնչողներին ցնդեցնի ինչպես փոշի, ինչպես և ցրեց հրեաներին բոլոր ազգերի մեջ և լցրեց բոլոր առաքյալներին, քանզի Նրա ձայնը զորության ձայն է: Ասում են, որ ձայնի հնչման ժամանակ լուսեղեն խաչ է երևացել Գողգոթայի վրա, և անուշ հոս է բուրել Հոգու բնությունից: Զայնը լսվել է ամբողջ քաղաքում, որոտումը ցնցել է բոլորին, և այդ վայրում ավելի շատ լույս է կուտակվել, քան արեգակի ճառագայթները կլցնեին:

Եվ լցրեց ամբողջ այն տունը, ուր նստած էին – Այն Հոգին, Ով արարչության առաջին օրը շրջում էր ջրերի վրա (տես Ծննդ. Ա 2), այսօր, այստեղ, ամբողջ տունը լցրեց իմանալի զորությամբ: Տան լցվելն օրինակն է Հոգու՝ ողջ աշխարհը լցնելը: Վերնատունն այնպես լցվեց, ինչպես Ավագանը կլցվեր ջրով՝ մկրտելով ներսում գտնվողներին: Դրանով կատարվեց Տիրոջ այն խոսքը, որ նրանք մկրտվելու են Սուրբ Հոգով, քանզի ջրով արդեն մկրտված էին Հովհաննեսից: Այսօր մեր մկրտությունը լինում է և՛ ջրով, և՛ Հոգով, և Սուրբ Հոգին առանց պակասության կատարում է ամեն ինչ:

Դա ցույց է տալիս նաև Եկեղեցու պատիվը, որի Ավագանի վրա իջնում է Սուրբ Հոգին և մկրտչողներին վերստին ծնում իր շնորհներով, որպես Աստծու որդիներ, որով ասում ենք՝ «Հայր մեր, որ երկնքում ես»:

Եվ նրանց երեացին բաժանված լեզուներ, նման բոցեղեն լեզուների – Լեզվի ձևով երեաց, որպեսզի պերճացնի առաքյալների լեզուները՝ դրանք ընտիր ու անսայթաք դարձնելով: Լեզուները բաժանված երեացին ինչպես ծառի սստեր, քանզի նույն արմատից էին, այսինքն՝ Սուրբ Հոգուց, Ով շնորհներ է տալիս և բաժանում՝ ում երբ, որքան և ինչպես կամենում է: Լեզուները հրեղեն էին, որպեսզի հրով մաքրեին ու ոչնչացնեին անհավատությունը, քանզի մեր Աստվածը մաշող կրակ է (հմնտ. Բ Օրենք Դ 24):

Նստեցին նրանցից յուրաքանչյուրի վրա – Հոգին տունը հրով չլցրեց, որովհետև չեկավ նրանց զարհուրեցնելու, ինչպես ծույլերին ու հարբեցողներին, այլ միսիթարելու՝ իբրև զգաստների և հսկողների: Հոգին ազդմամբ չեկավ նրանց վրա, ինչպես մարգարեների, այլ եկավ, որպեսզի միշտ նրանց հետ մնա և այլևս վիճակով ու հոգս քաշելով չընտրեն, ինչպես Մատաթիային ընտրեցին տասներկուսի միջից (տես Գործը Ա 26):

Առաքյալների վրա նստելը Հոգու արքայական պատիվն է հայտնում: Քանզի նստելը հաստատուն լինելու, կենալու և մնալու նշանակն է: Սուրբ Հոգին նստեց ոչ միայն տասներկուսի, այլ հարյուր քսանի վրա, ինչպես Պետրոսը վկայեց մարգարեական գրքերից. «Եվ կլինի այնպես, որ սրանից հետո իմ Հոգուց կհեղեմ ամեն մարմնի վրա» (Յովել Բ 27):

Այսօր, փոխանակ քերովբեական աթոռին, Հոգին նստեց առաքյալների վրա և նրանց թագով զարդարեց, ըստ Դավթի խոսքի. «Երբ երկնավորը թագավորներին հավաքի այնտեղ, նրանք ձյան պես կթափվեն Սաղմոնի լեռան վրա» (Սաղմ. Կէ 15): Այստեղ Սուրբ Հոգու էջքն առաքյալների վրա մարգարեն ձյան հետ է համեմատում: Սաղեմի (Երուսաղեմի) լեռներն ասելով՝ նա նկատի ունի ամբողջ աշխարհը, իսկ թագավորներ (առաքյալներ) ասելով՝ նկատի ունի, որ Հոգին բոլոր հավատացյալների հետ պիտի բնակվի, քանզի Տերն ասաց. «Ես պիտի աղաչեմ Հորը, և նա մի այլ Միսիթարիչ պիտի տա ձեզ, որպեսզի հավիտյան ձեզ հետ բնակվի» (Յովի. ԺԴ 16): Առաքյալները հավիտյան չմնացին, հետեւբար այս խոսքը բոլոր հավատացյալներին ասաց:

Թագավորն աթոռի վրա է նստում: Սուրբ Հոգին թագավոր է ու Աստված, իսկ առաքյալներն աթոռ ու կառք են նրա համար, ինչպես Եղեկին տեսավ Աստծու աթոռն ու կառքը (տես Եգեկ. Ա): Սուրբ Հոգին չի նստում անշունչ և անզգա աթոռի վրա, այլ կենդանի ու բանական աթոռի, որն առաքյալներն են: Եղեկին տեսած կենդանիները չորս կերպարանք ունեին՝ մարդու, առյուծի, եղի ու արծվի, և սրանք բոլորն էլ թագավորներ

են: Մարդն ամբողջ աշխարհի թագավորն է, առյուծը՝ գազանների, եզր՝ անսառնների, իսկ արծիվը՝ թռչունների: Դա նշանակում է, որ Սուրբ Հոգին թագավորն է թագավորների, Ով նստում է և հանգչում առաքյալների վրա, որովհետև առաքյալները թագավոր են ամբողջ երկրի վրա՝ ըստ այս խոսքի. «Երբ երկնավորը թագավորներին հավաքի այնտեղ» (Սաղմ. Կէ 15): Նաև մարդարեն է ասում. «Նրանց իշխան պիտի կարգես ողջ երկրի վրա» (հմնտ. Սաղմ. ԽԴ 17): Քանզի նրանք Քրիստոս թագավորից թագավորներ ու իշխաններ կարգվեցին ամբողջ աշխարհում:

Նրանց թագավորությունը ճանաչվում է չորս եղանակով: Նախ՝ երկրի վրա բոլոր ազգերին քարոզելով և խրատելով՝ նրանց առաջնորդները դարձան:

Երկրորդ՝ իշխեցին թագավորների ու իշխանների վրա, ուղղեցին նրանց հավատը և հաստատեցին նրանց բարի գործերի մեջ, ինչը չկարողացան անել աշխարհի մեծամեծ թագավորները:

Երրորդ՝ թագավորեցին ու իշխեցին մարդկանց հոգիների ու մարմինների վրա, ինչպես նաև կյանքի ու մահվան, իսկ աշխարհի թագավորները միայն մարմնի վրա են իշխում և ո՛չ հոգու, և կարող են միայն սպանել, սակայն հարություն տալ չեն կարող: Իսկ առաքյալները և' սպանում էին, և' ապրեցնում, ինչպես Պետրոսն Անանիային ու Սափիրային սպանեց (տես Գործք Ե 10), իսկ Տաբիթային միայն խոսքով հարություն տվեց (տես Գործք Թ 40): Նույնպես և բոլոր առաքյալներն էին այդպես անում: Նրանք իշխանություն ունեին կապելու և արձակելու երկրի վրա և երկնքում, ինչպես Քրիստոս ասաց. «Ինչ որ մի անգամ կապես երկրի վրա, կապված պիտի լինի երկնքում» (Սատթ. ԺԶ 19):

Չորրորդ՝ նրանք Քրիստոսի հետ նստելու են տասներկու աթոռների վրա ու գատելու են իսրայելի տասներկու ցեղերն ու քննելու բոլոր ազգերին ու անձերին, ինչը չեն կարող անել երկրի թագավորները: Առաքյալները թագավորելու են Քրիստոսի հետ անվախճան հավիտենականությունում:

Սա ցույց է տալիս նաև, որ առաքյալները թափուր էին մեղքերից և պատրաստված որպես Սուրբ Հոգու հանգստի տեղ: Հոգին եկավ ախտերից սրբածների և աղոթքներով ժրացածների վրա, ինչպես մի ժամանակ՝ մարդարեների, ովքեր օտարացան աշխարհից, ինչպես Մովսեսը՝ արքունիքից: Նաև Դավիթն ու Եղիսեեն Հոգին ստացան ամեն ինչ թողնելուց հետո: Իսկ առաքյալներն աշխարհը մերժելուց հետո լցվեցին Հոգով, առավելքան մարդարեները: Մովսեսը նվազում էր, երբ ծերերին Հոգեկիր էր անում, իսկ առաքյալները ձեռնադրելով առատությամբ տալիս էին Հոգին:

Եվ բոլորը լցվեցին Սուրբ Հոգով – Ոչ թե մասնավոր առան Հոգին, այլ անթերի լցվեցին։ Իսկ «բոլորը» ասելով նկատի ունի ոչ միայն տասներկուսին, այլև՝ յոթանասուներկուսին, հարյուր քսանին (տես Գործք Ա 15), Հինգ հարյուրին (տես Ա Կորնթ. ժԵ 6):

«Ու սկսեցին խոսել ուրիշ լեզուներով»։

Աշտարակաշինության ժամանակ մի ընդհանուր լեզուն յոթանասուներկուսի բաժանվեց, որով քանդվեց չար միաբանությունը, իսկ այստեղ կանգնեցվեց խոնարհության աշտարակը, որպեսզի նրանով մարդիկ երկինք ելնեն և ցրվածները սիրո միաբանությամբ ժողովվեն։ Առաքյալները Հոգին ստանալով՝ այդ նշանը ցույց տվեցին։ Ոչ թե՝ այդ նշանը մեծ էր մյուս նշաններից, այլ այն նոր էր ու անծանոթ, և բացի այդ մյուս նշանների հոչակելու կարիքը դեռևս չկար։ Քանի որ նրանք պետք է բոլոր ազգերին աշակերտ դարձնեին, Աստված ճոխացրեց նրանց լեզուները, որպեսզի համարձակությամբ քարոզեն և աշտարակաշինությունից հետո բաժանվածներին ու բազմաստվածությամբ ցրվածներին սիրով մի աստվածպաշտության մեջ ժողովվեն։ Ինչպես այն ժամանակ մի լեզուն բազում լեզուների բաժանվեց, այդպես և այժմ բազում լեզուները մեկ մարդու մեջ հավաքվեցին, քանզի այս ամենը նույն Հոգու գործերն են՝ և՝ այստեղ, և՝ այնտեղ։

Ինչպես որ Սուրբ Հոգին նրանց խոսել էր տալիս – իսկ ի՞նչ է նշանակում «խոսել տալը»։ Այն, որ առաքյալները միայն իրենց մեջ խորհրդավոր կերպով չխոսեն, այլ պարզ խոսքերով և բացահայտ։ Առաքյալները յոթանասուներկու լեզուներից որով կամենում էին՝ խոսում էին, և բոլոր լսողները լսում էին նրանց իրենց մայրենի լեզվով։ Հոգին օդում տպավորում էր բառերը, և աստվածային խոսքերը նրանց մեջ բառեր էին սքանչելագործում բոլոր լեզուներով։

Եվ կային Երուսաղեմում բնակվող հրեաներ, երկյուղած մարդիկ, եկած երկնքի տակ ապրող բոլոր ազգերից – Երուսաղեմում բնակվելն Աստծուց երկյուղ ունենալու նշանակն է։ Քանզի նրանք տարբեր ազգերից ու տոհմերից հրեության դարձած հեթանոսներ էին և իրենց հայրենիքը թողած՝ այդտեղ էին բնակվում։ Այդտեղ էին նաև գերությունից դարձած այն հրեաները, ովքեր հեթանոս թագավորների կողմից սփռվել էին ամբողջ աշխարհով մեկ։ Հստ Օրենքի՝ նրանք տարին երեք անգամ պետք է գային տաճար։

Եվ երբ այս ձայնը լսվեց, բազմությունը հավաքվեց ու խոնվեց, որովհետև լսում էին, որ նրանք խոսում էին իրենցից յուրաքանչյուրի լեզվով – Երկնքից եկող ձայնը լսելի եղավ բոլոր քաղաքացիներին, և Հոտը, որ բուրեց, շատերին այդտեղ ժողովեց։ Քանի որ ձայնը Վերնատան

վրա լսվեց, ուր իջավ Հոգին, այդ պատճառով էլ բազմությունն այդտեղ խմբվեց: Սրանցից շատերը երկյուղած մարդիկ էին և կարծում էին, թե իրենց վրա երկնքից պատուհաս է եկել այն անարդարության պատճառով, որ արեցին Քրիստոսի հանդեպ:

Իսկ հնչումից, հոտի բուրումից ու լույսերից զատ լուսեղեն խաչը նաև ծագեց Վերնատան վրա, և յուրաքանչյուրը խոսքեր էր լսում իր մայրենի լեզվով:

Բոլորը սքանչանում էին, զարմանում ու ասում միմյանց. «ԶԷ՞ որ սրանք բոլորը, որ խոսում են, գալիլիացիներ են. բայց ինչպե՞ս է, որ մենք նրանց լսում ենք մեր յուրաքանչյուրի բարբառով, որ ծնված օրից խոսում ենք... Եվ լսում ենք, որ նրանք խոսում են մեր լեզուներով՝ Աստծու մեծագործությունների մասին»:

Մա հայտնում է, որ աստվածաբանում էին Անձառելիի մասին: Ոչ թե լոկ բառեր էին արտասանում, այլ մարդարեանալով Աստծու մեծամեծ գործերն էին պատճում և մարդարեներից Քրիստոսի մասին վկայություններ բերում:

«Բոլորը զարմանում էին և միմյանց ասում. «Ի՞նչ կարող է լինել սա»:

Դա հայտնում է նրանց բարեմտությունը, քանզի զարհուրել էին եղածից և այս ամենում գալիքի նշանն էին տեսնում և չգիտեին, թե այդ ամենը բարո՞ւց է, թե՞ չարից:

Իսկ ուրիշները ծաղրելով ասում էին. «Նոր գինուց հարեած են» – Այդպես ասում էին նրանք, ովքեր անհավատ էին ու տխմար: Զարմանալի չէ, քանզի սրանք անգամ Տիրողը դիվահար անվանեցին (տե՛ս Հովհ. Ե 20), տեսնելով, որ նա գեեր է հանում, և շարունակ ամենուր թյուրում էին կատարված հրաշքները: Երուսաղեմը խավարել էր անհավատությունից և ձանձրացել ժանտահոտությունից, որը բուրում էր սատկած Հուղայի դիակից, իսկ հեթանոսների միտքն ու զգայությունները պղծվել էին կուրքերին մատուցած զոհերի գարշահոտությունից և զանազան մեղքերից: Եվ Սուրբ Հոգով էջքով երուսաղեմը մաքրվեց գարշահոտությունից, իսկ հեթանոսները՝ դիցապաշտությունից և մեղքերի պղծությունից: Եվ ինչպես այն օրը Սուրբ Հոգին առաքյալներին մաքրեց, այնպես էլ այսօր մեզ է սրբում և մեր մարմինները մաքրում չար ցանկություններից՝ բնակավայր ու տաճար դարձնելով Ամենասուրբ Երրորդության համար: Այդ պատճառով Տերը պատվիրեց առաքյալներին մկրտել Հոր, Որդու և Սուրբ Հոգու անուններով:

«Պետրոսը, տասնմեկի հետ վեր կենալով, բարձրացրեց իր ձայնը և ասաց»:

Քանի որ անպատշաճ կլիներ, որ բոլոր առաքյալները միաժամանակ խոսեին, այդ պատճառով էլ միայն Պետրոսը խոսեց: Նա էր բոլորի բերանը, իսկ տասնմեկը վկայում էին: Այստեղ երևաց Պետրոսի զորությունը, ով առանց վախենալու զարհուրած ամբոխից, համարձակվեց ու ձայնը բարձրացրեց՝ դիմելով թե՛ յուրայիններին և թե՛ սպանողներին: Պետրոսը դրանով հայտնեց նաև, որ իրենք գինով հարբած չեն և ոչ էլ՝ ապշած:

Դրանով երևաց նաև Սուրբ Հոգու զորությունը, քանզի Պետրոսը, ով ժամանակին երկյուղեց մի աղախնից (տես Սատթ. ԻԶ 69), այսօր համարձակվեց դիմել ամբոխին: Սա աներկբայորեն Քրիստոսի հարության և Հոգու զորության նշանն է, Ով կարող է արժանիներին կավից ոսկու փոխել, ինչպես Պետրոսին, ով սկզբում երկշուր էր ու անճար, իսկ այսօր ատենաբանում է, նաև նրա ընկերներին, ովքեր մի ժամանակ նախանձու էին:

Ո՛վ հրեաստանցիներ և դո՛ւք ամենքդ, որ Երուսաղեմում եք բնակվում, այս ձեզ հայտնի թող լինի, և իմ խոսքերին ականջ դրեք – Պետրոսը խոսքն ուղղեց ոչ թե երկյուղածներին, այլ կատակողներին, որպեսզի ուղղի նրանց թյուր կարծիքը: Ամբոխի ծաղրանքը Պետրոսի խոսելու պատճառը եղավ, սակայն Պետրոսը կատակողներին չընդդիմացավ, այլ դիմեց հարգանքով՝ նրանց անվանելով հրեաստանցիներ և երուսաղեմի բնակիչներ, քանզի մեծ պատիվ էր երուսաղեմում բնակվելը և հրեաստանցի լինելը:

Սրանք հարբած չեն, ինչպես դուք եք կարծում – Այստեղ երևում է Պետրոսի վեհանձնությունը, քանզի ամբոխի ուշադրությունը իր կողմը գրավելով չչփացավ, այլ հեղությամբ խոսեց: Եվ ասողներին, թե պետրոսյանները մեր լեզվով Աստծու մեծամեծ գործերն են պատմում, չգովեց, այլ հեգնողներին մեղմեց և սքանչելիքները ծաղրողներին երկյուղեցրեց: Ապա հեռու մնալով ավելորդաբանություններից և խոսքով իշխելուց՝ ցրեց նրանց անպատշաճ կարծիքները և ճշմարիտը հաստատեց:

Փանի որ դեռ երրորդ ժամն է – Հստ Օրենքի՝ հրեաներն այդ ժամին գինի չէին խմում, մանավանդ որ Պենտեկոստեի տոնն էր: Հոգին երրորդ ժամին իշխավ, քանի որ այդ ժամին Աղամը ստեղծվեց և աստվածային փշմամբ՝ Սուրբ Հոգով զգեստավորվեց: Այդ ժամին կինը չարից խարվեց և Հոգուց թափուր մնաց: Այդ ժամին Տերը խաչին դամվեց, և Սուրբ Հոգին էլ այդ ժամին պարգևեց:

Այլ՝ այս ա՛յն է, որ ասվեց Հոգել մարդարեի բերանով – Դրանով Պետրոսը ցույց տվեց, որ այսօր կատարվեց Հոգելի մարդարեությունը, և մարդարեի ասածով ուղղեց նրանց թյուր կարծիքը և առանց կանգ առնելու՝ շարունակեց մարդարեի խոսքը մինչև վերջ, որպեսզի ծաղրողները երկյուղեն:

Զնայած որ ծաղրողները կատակով էին ասում, թե հարբած են, սակայն նրանց ասածը ճշմարտություն էր: Իսկ «Նոր գիւնի» էին ասում, որովհետև չնորհը նոր կտակարանից էր բխում: Այդ գիւնին հոգեոր այգուց էր, որ բազում անգամ պտղաբերել էր երկնքում ու Հին Կտակարանում, իսկ այժմ բխում էր նոր ժողովրդի մեջ: Ինչպես նույն այգին միշտ նոր պտուղներ է տալիս, այդպես էլ նույն Սուրբ Հոգին է միշտ պտղաբերում՝ հայրերի ու մարգարեների մեջ:

Դարձյալ՝ Պետրոսն ասաց, որ դա այն չէ, ինչ իրենք են կարծում, այլ իրենք արբած են այնպես, ինչպես գրված է. «Արքեցին նրանք Քո տան պարարտությունից» (Սաղմ. ԼԵ 9): Սա զգարթ ու զգաստ արքեցում է, որը մոռացում չի դորձում, այլ անգետին իմաստուն է դարձնում:

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ ՀՈՎԵԼԻ ՃԱՐԳԱՐԵՇՆԱՅԱՆ (Հովել Բ 29-31)

Եվ պիտի լինի սրանից հետո, վերջին օրերին, – ասում է Աստված, – որ իմ Հոգուց պիտի թափեմ ամեն մարդու վրա – Այս խոսքը ցույց է տալիս, որ մոտ է աշխարհի վախճանը: Իսկ՝ «Ամեն մարդու վրա Հոգու հեղվելը» ասելով նկատի ունի հավատացյալներին՝ ոչ միայն հրեաներին, այլև՝ հեթանոսներին:

Զեր որդիներն ու ձեր դուստրերը պիտի մարգարեանան – Ոչ թե հայրերի, այլ որդիների վրա պիտի հեղվի Հոգին, ովքեր էլ պիտի մարգարեանան՝ խոսելով բոլոր լեզուներով, վերստին առնելով այն չնորհը, որ կորցրեց Ադամը: Նախ որդիներին է ասում, քանզի հայրերի փոխարեն որդիները մարգարեացան, այսինքն՝ առաքյալները, ինչպես նաև՝ Ադաբուը (տես Գործք ԺԱ 28), Շիղան (տես Գործք ԺԵ 32) և մյուսները, և ապա դուստրերին, ինչպես Փիլիպպոսի չորս կույս աղջիկները, ովքեր մարգարեուհիներ էին (տես Գործք ԻԱ 9): Սուրբ Հոգու գալստյամբ այնքան բազմացան նոր մարգարեները, որ Պողոսը նրանց ասում է. «Թող երկու կամ երեք մարգարեներ խոսեն մեկ-մեկ, իսկ մյուսները թող քննեն» (Ա Կորնթ. ԺԴ 29): Ոչ միայն այրերն էին մարգարեանում, այլև կանայք: Որովհետև Տերն առաքինիներին ու երկյուղածներին է կանչում ծառայության՝ նրանց ազատելով մեղքերից և նրանց վրա առատապես չնորհներ հեղելով:

Ինչպես Քրիստոսին հրեաներն ասացին, թե Բեեղեքուղի միջոցով է շանում դեերին (տես Սատթ. ԺԲ 24), իսկ նա պատասխանեց, որ ինքն Աստծու Հոգով է դա անում, այդպես էլ այժմ Պետրոսն ասում է, որ իրենք գինուց չեն հարբած, այլ իրենց՝ զանազան լեզուներով խոսելը Սուրբ Հոգուց է՝ հաստատելով իր խոսքերը Հովելի մարգարեությամբ, ինչին նրանք չեին կարող ընդդիմանալ: Ինչպես և Քրիստոս էր հաճախ

մարդարեների խոսքերով՝ իր խոսքերը հաստատում, ինչին հրեաները ոչինչ չէին կարողանում պատասխանել:

Զեր երիտասարդները տեսիլներ պիտի տեսնեն – Երիտասարդները առաքինությամբ հզորներն են, որոնց մասին ասում է Հովհաննեսը. «Երիտասարդներ, գրում եմ ձեզ, որովհետև դուք հաղթեցիք չարին» (Ա Յովի. Բ 13):

Եվ ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն – Ծերերն աստվածային հանձարով մեծացածներն են, ովքեր արդեն արժանացել են շնորհին, ինչպես այդ օրը իրենք՝ առաքյալները, որոնց վրա նստեց Սուրբ Հոգին: Օրինակ՝ Պողոս առաքյալին երազում մի մակեդոնացի մարդ երևաց, ով աղաչում էր նրան ու ասում. «Մակեդոնիա անցի՛ր և օգնի՛ր մեզ» (ՄԵՆ Գործք ԺԶ 9): Նաև Դամասկոսում Անանիային տեսիլքի մեջ Տերն ասաց. «Ոտքի՛ կանգնիր ու գնա՛ այն փողոցով, որ Ուղիղ է կոչվում, և Հուղայի տանը կփնտրես Սողոս անունով Տարսոնացուն, որ դեռ աղոթքի մեջ է» (ՄԵՆ Գործք Թ 10-11):

Եվ վերը, երկնքում զարմանալի գործեր պիտի ցույց տամ, իսկ ներքեւում, երկրի վրա՝ նշաններ. արյուն և հուր և ծիսի մըրիկ – Շատերը նշաններ էին փնտրում, այդ պատճառով էլ խոսվեց նշանների մասին: Այս խոսքերը նախ և առաջ ասվել են այն նշանների մասին, որոնք եղան Քրիստոսի խաչելության ժամին, քանզի խաչի ժամին երկինքը խավարեց, երկիրը շարժվեց, լուսինն արյան գույն ստացավ, հրախառն արյուն ելավ Տիրոջ կողից, և ծիսի մըրիկներ գոյացան վեմերի փլուզումից, երբ փոշին օդի մեջ կանգնեց:

Պետրոսը նախ ցույց տվեց, որ Հոգուց է իրենց տարբեր լեզուներով խոսելու կարողությունը, Ում էջքին նախորդեցին խաչելության ժամի այդ ահավոր նշանները: Դրանով ասաց նաև, որ Սուրբ Հոգին պիտի գար միայն Քրիստոսի չարչարանքներից հետո, ինչն այդպես էլ եղավ, ինչպես Հորից մեզ հղված պարգև: Իսկ արյուն ասելով նկատի ունի Քրիստոսի Արյունը, որով մենք փրկվեցինք, որը, սակայն, հրեաներն իրենց անձերի և իրենց որդիների վրա առան որպես դատապարտություն՝ ըստ այս խոսքի. «Դրա արյունը՝ մեր վրա և մեր որդիների վրա» (Սատթ. ԻԵ 25): Իսկ հուրն Աստծու Խոսքն է, Ում կողահոս աղբյուրով մարեց Աղամի մեղքի հուրը, և որը երկրի վրա գցվեց՝ ըստ այս խոսքի. «Երկրի վրա կրակ գցելու եկա. և ինչքա՞ն եմ կամենում, որ արդեն իսկ բորբոքված լինի» (Ղուկ. ԺԲ 49), նաև՝ այսօր հրեղեն լեզուներ երևացին:

Դարձյալ՝ կրակն աստվածացած Մարմինն է երկնքում, արյունը մարմնացած Խոսքն է խաչի վրա, իսկ ծուխը տիրասպանների նախատինքն է: Սա նաև վկայություն էր այն աղետի, որը եկավ Երուսաղեմի վրա Հռոմեացիների կողմից (70 թ.): Այս գեպքում արյունը սպանված պատժա-

պարտների արյունն է, հուրը՝ քաղաքի հրդեհվելը, և այդ հրդեհից ելավ ծխի մրրիկը:

Այնուհետև Պետրոսը սարսափեցրեց ծաղրողներին՝ ակնարկելով այն մեծ հուրը, որ գալու է Տիրոջ գալստյան օրը Նրա առջեկից: Այդ օրը մեծ և աներեկո է լինելու, որում երեալու են մեր ծածուկ գործերը և Արարչի փառքը, որը լույս է պարզեցելու հավատացյալներին և ծխի մրրիկ՝ տիրասպաններին՝ վրեժ լուծելով նրանցից Քրիստոսի և արդարների թափած արյան համար: Նրանց վրա խավարելու է արեգակը, մինչև որ կդցվեն կրակի լիճը:

Արեգակը խավար պիտի դառնա, և լուսինը՝ կարմիր, ինչպես արյուն – Այս նշանները կատարվել էին մինչև Սուրբ Հոգու գալուստը: Արեգակը խավարեց՝ քողով ծածկելով իր երեսը, երբ տեսավ Արարչի կրած նախատինքները, իսկ լուսինն արյան գույն ընդունեց՝ արտացոլելով Ստեղծողի կերպարանքը:

«Քանի դեռ չի եկել Տիրոջ մեծ ու երեւելի օրը»: Այդ օրը մեծ ու երեւելի է կոչում Հոգու հեղման պատճառով: Ինչպես առավոտը նշանն է արեգակի ծագման, այդպես էլ Քրիստոսի խաչելության նշանները եղան նշաններ Աստծու Հոգու հեղման:

Պետրոսը նրանց ծիծաղը տագնապի փոխելուց հետո ասաց. «Եվ պիտի լինի այնպես, որ ամեն ոք, որ Տիրոջ անունը կանչի, պիտի փրկվի»:

Ամեն ոք, առանց խորության, ով կանչի, կփրկվի: Սա մարգարեն Քրիստոսի անվան մասին ասաց, քանզի նա է Տերը, Ում անունը խոստովանելով ապրում ենք: Սակայն Պետրոսը դա հայտնապես չասաց, այլ պարզապես մարգարեի խոսքը մեջբերեց՝ առանց հավելումների: Նաև չավելացրեց, թե բավական չէ սոսկ Տե՛ր, Տե՛ր ասելը, այլ պետք է պահել նաև պատվիրանները, քանզի հայտնի է, որ հավատով ու գործերով պետք է կանչել: Բայց քանի դեռ սկիզբն էր, Պետրոսն այն հավատն էր նրանց մեջ դնում, որ միայն Տիրոջ անունով է լինում փրկությունը:

Հարթեր Սուրբ Հոգու գալստյան Վերաբերյալ

Հարց. – Ինչո՞ւ Սուրբ Հոգին երրորդ ժամին իջավ առաքյալների վրա:

Պատասխան. – Նախ՝ որ Աստված Աղամին երրորդ ժամին ստեղծեց, և ինչպես այդ ժամին է արեգակը բարձրանում, լուսավորում ու ջերմացնում, նույնպես և Տերն այդ ժամին Աղամին փառքով բարձրացրեց, իմաստությամբ լուսավորեց և շնորհներով ու սիրով ջերմացրեց: Սուրբ Հոգին, երրորդ ժամին իջնելով Վերնատուն, մեզ տվեց առաջին փառքը, ապա իմաստությամբ ու շնորհներով լուսավորեց և առաջինից առավել սիրով ջերմացրեց:

Երկրորդ՝ քանզի այս ժամին էր Աղամից ու Եվայից վերցրել այն շնորհները, որոնք նրանց վրա փչել էր ինչպես կենդանության շունչ, Հետևապես՝ հարկ էր այդ նույն ժամին շնորհները վերադարձներ առաքյալներին:

Երրորդ՝ այս ժամին կանգնեցվեց Քրիստոսի խաչը, իսկ Սուրբ Հոգին խաչի պարգևն է, ինչպես ասում է Հովհաննեսը. «Քանի որ Հոգին դեռևս չկար, որովհետև Հիսուս դեռ փառավորված չէր» (Յով. Է 39): Այստեղ խաչն է փառք կոչվում: Հետևաբար՝ հարկ էր, որ այն ժամին, երբ կանգնեցվեց խաչը, և Քրիստոս փառավորվեց, նույն ժամին էլ տրվեր խաչի պարգևը, որ Սուրբ Հոգին է: Դրա մասին սուրբ Գրիգորն ասում է. «Ժամանակի որակը գործի վախճանն է ցույց տալիս»:

Սողոմոնն Աստծուց գիշերն իմաստություն ստացավ, երազային տեսմիլքով: Դա ցույց է տալիս, որ նրա իմաստությունը մինչև վերջ չէր մնալու: Եվ որովհետև Սողոմոնը ցանկանում էր մեղքեր գործել, այդ պատճառով էլ կորցրեց իմաստությունը: Գիշեր էր նաև, երբ Հուղան կամենում էր Քրիստոսին մատնել: Բայց Աստված կեսօրին՝ տոթ ժամին երևաց Աբրահամին, որ ցույց է տալիս, թե Աստծու սիրո ջերմությունը մինչև վերջ մնալու է:

Այդպիսով՝ առաքյալները Սուրբ Հոգին ցերեկն ընդունեցին, իմաստնացան և Աստծու սիրով ու բարությամբ լուսավորվեցին, ջերմացան և հաստատվեցին, որից հետո մինչև իրենց վախճանը այլևս չէին կարող մեղանչել մահացու մեղքերով: Ինչպես Պողոսն է թեսաղոնիկեցիներին ասում. «Դուք բոլորդ լուսո որդիներ եք և ցերեկվա որդիներ» (Ա Թես. Ե 5):

Հարց. – Սուրբ Հոգին որտե՞ղ ընդունեցին առաքյալները:

Պատասխան. – Առաքյալները Սուրբ Հոգին ընդունեցին Երուսաղեմում՝ Վերնատանը: Նախ, որովհետև Սուրբ Հոգին խաղաղեցնում է հավատացյալներին այս աշխարհի խոռվությունից, իսկ Երուսաղեմ խաղաղություն է թարգմանվում: Երկրորդ՝ տան մեջ, որովհետև Տերը բոլորին կամենում էր բերել գեպի քրիստոնեական հավատի միաբանությանը: Իսկ Վերնատունը ցույց է տալիս, որ Սուրբ Հոգին մեզ այս աշխարհի սիրուց տանում է գեպի Աստվածային սերը:

Դարձյալ՝ Քրիստոս Վերնատանը տվեց իր Մարմինը մեզ որպես կերակուր, որը ցույց է տալիս, թե Սուրբ Հոգին այն տեղում է պարգևներ տալիս, ուր Հոգեոր կերակուր կա:

Սակայն այստեղ հարց է ծագում, թե քանի՞սն էին Վերնատանը, երբ Սուրբ Հոգին իջավ: Վարդապետներն ասում են, որ հարյուր քսան Հոգի էին, երբ Մատաթիային էին ընտրում՝ ըստ այս խոսքի. «Եվ այնտեղ հարյուր քսան Հոգու չափու չափ հավատացյալների բազմություն կար» (Գործք

Ա 15): Իսկ ոմանք էլ ասում են, թեև Մատաթիայի ընտրությանը հարյուր քսանն էին, բայց Սուրբ Հոգին ընդունելու օրը՝ բազում էին, քանի որ Պողոսը կորնթացիներին գրում է. «Ապա երևաց միանգամից ավելի քան հինգ հարյուր եղբայրների» (Ա Կորնթ. ԺԵ 6), իսկ Գործքում ասված է. «Եթե Պենտեկոստեի օրերը լրացան, բոլորը միասիրտ, միատեղ էին» (Գործք Բ 2): Հետևաբար՝ եթե բոլորն էլ Վերնատանն էին, ապա ստացվում է, որ հինգ հարյուրից ավելի էին: Այնպես, ինչպես հնում, երբ Սինա լեռան վրա Օրենքը տրվեց, իսրայելի ամբողջ ժողովուրդն այդտեղ էր հավաքված:

Բայց Հին և Նոր օրենքի մեջ տարբերություն կա, որովհետև երբ Հին օրենքն ընդունեցին, անապատում էին ու չէին համարձակվում լեռանը մոտենալ, իսկ Նոր օրենքն ընդունեցին ոչ թե անապատում կամ բաց տեղում, այլ քաղաքում: Հնում անապատում լինելը ցույց էր տալիս, որ չնորհներից ունայն էին, իսկ լեռից հեռու լինելը՝ որ հեռու էին արքայությունից, որովհետև նրանց հոգեոր ոչինչ չասվեց, այլ միայն՝ մարմնավոր, իսկ Նոր օրենքը լի է ամենայն չնորհներով, ինչպես ասվում է. «Լցը ամբողջ այն տունը, ուր նստած էին» (Գործք Բ 2): Այս արտաքին լիությունը Սուրբ Հոգու շնորհների ներքին լիությունն է ցույց տալիս: Իսկ այն, որ առաքյալները հեռու չէին արքայությունից, ցույց է տալիս հետեւյալ խոսքը. «Եվ նստեցին նրանցից յուրաքանչյուրի վրա» (Գործք Բ 3):

Հարց. – Սուրբ Հոգին ինչպիսի՞ նշաններով իջավ:

Պատասխան. – Վարդապետներն ասում են, թե երկու տեսակի: Նախ՝ լսելի, ինչպես ասված է. «Հանկարծակի երկնքից հնչեց մի ձայն՝ սաստիկ հողմից եկած ձայնի նման» (Գործք Բ 2), և երկրորդ՝ տեսանելի. «Նրանց երեացին բաժանված լեզուներ՝ նման բոցեղն լեզուների» (Գործք Բ 3): Եվ չորս պատճառ կա երկու տեսակի նշաններով երեալու համար:

Նախ՝ ներքուստ լցված էին նրանց հոգու երկու զորությունները՝ իմացությունն ու կամքը, և արտաքին երկու զգայարանները՝ տեսողությունն ու լսողությունը, վկայություն տվեցին ներքիններին. տեսողությունը՝ իմացականին, իսկ լսողությունը՝ կամքին:

Երկրորդ՝ Հոգին կամեցավ եկեղեցու սկիզբը հայտնապես ցույց տալ ու սահմանել եկեղեցու խորհուրդները, որ երկու ձեռք է կատարվում՝ ձայնով ու տարրերով, որովհետև մեկն առանց մյուսի չի լինում: Ինչպես մկրտության պահին ջրի տարրն առանց խոսքի անկատար է, և հակառակ:

Երրորդ, երբ որևէ մեկը կամենում է արթնացնել մեկ ուրիշին ու նրան մի իր ցույց տալ, նախ քնածին ձայն է տալիս և հետո նրան ցույց տալիս իրը: Նույնպես Սուրբ Հոգին նախ արթնացրեց նրանց ծուլությունից, երբ

սաստիկ հողմի ձայն հնչեցրեց, ապա բոցեղեն լեզուների երևումով նրանց շնորհներ տվեց ու լուսավորեց:

Չորրորդ՝ Հին օրենքի նմանությամբ, երբ Աստված Սինա լեռան վրա իջավ, ժողովուրդը որոտի ձայն լսեց ու կայծակ տեսավ:

Հարց. – Ինչո՞ւ Հոգին կրակի նմանությամբ երևաց:

Պատասխան. – Որովհետև հուրն այրում է կարծր իրերը և թույլերը՝ պնդացնում: Այսինքն՝ որպեսզի հալեցնի անհավատների կարծր սրտերը և սատանայի զորությունը, որն իբրև ջուր հեղվեց ու տկարացավ, իսկ առաքյալներին թրծի: Եվ առաքյալներն այնպես թրծվեցին, որ հաստատուն մնացին բոլոր տանջանքների մեջ, որոնք եղան անհավատների կողմից:

Սուրբ Հոգին վառեց առաքյալներին և նրանց միջոցով նաև նրանց աշակերտներին, և նրանք էլ, մեկը մյուսին վառելով, տարածվեցին ամբողջ տիեզերքում, ինչպես մի մոմից մյուս մոմերն են վառվում:

Նաև իր լույսով խափարը հալածելու համար, և ուր Սուրբ Հոգին է, այնտեղ մեր Հոգիներից հալածվում է անգիտության, անհավատության ու մեղքերի խափարը:

Առաքվեց Սուրբ Հոգին հրի նմանությամբ, որպեսզի ցույց տա, որ նոր օրենքը միաբան է Հնին և ինչպես Հին օրենքը հրով արվեց Սինա լեռան վրա՝ Եգիպտոսից դուրս գալուց հիսուն օր հետո, այդպես էլ Նոր օրենքը արվեց Սիոն լեռան վրա՝ Երուսաղեմում, Տիրոջ Հարությունից հիսուն օր հետո:

Հարց. – Ինչո՞ւ Հոգին լեզվի նմանությամբ երևաց:

Պատասխան. – Որպեսզի ցույց տա, որ Սա այն Հոգին է, որ մարդկանց յոթանասուներկու լեզուների բաժանեց աշտարակաշինության ժամանակ, իսկ այժմ առաքյալներին պարզեցն պարզեցն է այդ յոթանասուներկու լեզուները, գիտությունը: Եվ երբ առաքյալներն իմացան այլ ազգերի լեզուները, այլևս պատճառ չմնաց՝ չգնալու և նրանց քրիստոնեության չդարձնելու:

Նաև՝ լեզուն խոսքի սպասավորն ու գրիչն է, այդպես և առաքյալները ծառա ու գրիչ եղան Աստծու խոսքին և ամեն խոսք գրեցին լսողների սրտում:

Դարձյալ՝ լեզվի ձեր սուր է, և Սուրբ Հոգին, առաքյալների սրտերը մտնելով, սրեց նրանց մտքերն Աստծու ամենայն խորագիտությամբ:

Երկրորդ՝ նրանց տվեց ողջ Հոգեոր գիտության համն ու ճաշակը, ինչպես Դավիթն է ասում. «Ճաշակեցե՛ք և տեսե՛ք, թե որքան քաղցր է Տերը» (Սաղմ. ԼԳ 9):

Երրորդ՝ ինչպես զգալի խոսքը սրտից է գալիս, լեզվով ու բերանով դուրս ելնում, այդպես էլ Սուրբ Հոգին միայն Հորից է բխում՝ ըստ այս խոսքի. «Ճշմարտության Հոգին, որ ելնում է Հորից» (Հովհ. ԺԵ 26), և

Որդով մեզ է գալիս՝ ըստ այս խոսքի. «Եթե գնամ, Նրան կուղարկեմ ձեզ մոտ» (Հովհ. ԺԶ 7):

Իսկ այն, որ հուրը մեկ էր, իսկ լեզուները բաժանված, ցույց է տալիս, որ Սուրբ Հոգին մի է, իսկ բխած շնորհները՝ զանազան, ինչպես Պողոսն է կորնթացիներին ասում. «Թեև կան շնորհների զանազանություններ, բայց պարգևող Հոգին նույնն է» (ԱԿորնթ. 4):

Հայտնի է, որ ոմանք բառերը գիտեն, բայց խոսքի իմաստը հասկանալու մեջ տկար են: Ոմանք էլ թեև հասկանում են խոսքի իմաստը, բայց կարգով չեն կարողանում խոսել: Առաքյալներն այս երեք գիտությունները Սուրբ Հոգուց վերցրեցին. նախ՝ ամեն լեզվի ստույգ իմանալը, ապա՝ ամեն խոսքի իմաստը ճշմարտապես հասկանալը և կարգով ու գեղեցիկ խոսելը:

Հարց. – Ինչպե՞ս էին առաքյալները խոսում այլեւայլ լեզուներով:

Պատասխան. – Գրիգոր Նյուսացին ասում է, որ առաքյալները խոսում էին մի լեզվով, սակայն լսողներից յուրաքանչյուրը լսում էր իր լեզվով: Եվ այդ հրաշքները ժողովրդի համար էին լինում, ոչ թե առաքյալների: Իսկ Գրիգոր Աստվածաբանն ասում է, որ երբ հարկ էր լինում որևէ լեզվով խոսել, խոսում էին և յուրաքանչյուր ազգի իրենց իսկ լեզվով էին քառողում, որպեսզի շնորհը լինի խոսողինը և ոչ թե լսողինը: Իսկ երբ Պետրոսը երուսաղեմում Սուրբ Հոգու իջման օրը հրեաներին քարոզեց, ուր բոլոր ազգերից էլ հավաքվել էին, երրայեցերեն քարոզեց, որովհետեւ բոլորն էլ հրեաներ էին, ինչպես Գործքն է ասում. «Եվ կային Երուսաղեմում բնակվող հրեաներ, երկյուղած մարդիկ, եկած երկնքի տակ ապրող բոլոր ազգերից» (Գործք Բ 5): Եվ բոլոր ժողովուրդները լսեցին օրհնություն ու փառաբանություն նրանցից, ովքեր Վերնատանն էին հավաքվել, ու բոլոր լեզուներով Աստված էր օրհնվում:

Հարց. – Ի՞նչ պարգևների արժանացան առաքյալները Սուրբ Հոգու գալստյամբ:

Պատասխան. – Նախ մաքրվեցին մահացու մեղքերից: Երկրորդ՝ ստացան սքանչելագործության կարողություն, երրորդ՝ քարոզության համարձակություն, չորրորդ՝ ստացան կատարյալ իմաստություն և բոլոր մարդարենությունների և Կտակարանների գիտության: Հինգերորդ՝ անբաժանելիորեն միացան Քրիստոսի սիրուն, քանզի խաչելության ժամին թողեցին ու փախան, իսկ Սուրբ Հոգու գալուստից հետո բոլորն էլ նրա անվան համար չարչարվեցին ու մեռան:

Հարց. – Սուրբ Հոգին որքա՞ն պարգևներ տվեց:

Պատասխան. – Հայտնի է, որ ամեն առաքինություն ու զորություն, որ ունենք, Սուրբ Հոգուց է, բայց դրանցից բացի կան նաև հատուկ ու

եզակի յոթ պարգևներ: Դրանք Եսայի մարգարեն այսպես է թվարկում. «Հեսսեի արմատից գավազան պիտի ընձյուղվի, ծաղիկ պիտի բուսնի այդ արմատից: Նրա վրա պիտի իջնի Աստծու Հոգին, իմ աստության և հանճարի Հոգին, խորհրդի ու զորության Հոգին, գիտության և աստվածաշաշտության Հոգին. Աստծու երկյուղի Հոգին պիտի լցնի այն» (Եսայի ԺԱ 1-3):

Այստեղ Քրիստոս Գավազան է կոչվում այն իշխանության համար, որ ունի բոլոր արարածների վրա, իսկ Շաղիկ կոչվում է կուսության, սրբության և բոլոր առաքինությունների պատճառով, որ մեզ սովորեցրեց: Եվ Քրիստոս կատարելապես բնակարան է Սուրբ Հոգու, ինչպես և ասված է. «Աստծու Հոգին նրա վրա պիտի հանդի»:

Հարց. – Իսկ ինչո՞ւ են Սուրբ Հոգու պարգևները յոթը:

Պատասխան. – Երկու պատճառով: Նախ՝ քանի որ յոթն են մահացու մեղքերը, ապա պետք է որ պարգևները ևս յոթը լինեն, քանզի Սուրբ Հոգու շնորհներով ենք մեղքի դեմ պատերազմում ու հաղթում:

Առաջին մեղքը հպարտությունն է, որովհետև սա է սկիզբը բոլոր մեղքերի, և սրան հակառակ է Աստծու երկյուղը, ինչպես Սողոմոնն է ասում. «Իմ աստության սկիզբը Տիրոջ երկյուղն է» (Առակ. Ա 7): Այստեղ մի հարց է ծագում. ինչո՞ւ Եսայի մարգարեն բոլոր պարգևների սկիզբն իմ աստությունն է համարում, իսկ Սողոմոնը՝ երկյուղը: Վարդապետներն ասում են, թե Եսային առաջինը իմ աստությունն է համարում, որովհետև թվարկում է այն պարգևները, որոնք Աստծուց իջնում են մեզ վրա, և որոնց գլուխն իմ աստությունն է: Իսկ Սողոմոնը առաջին պարգևը երկյուղն է համարում, որը բոլոր պարգևների հիմքն է, որովհետև դրանով ենք բարձրանում առ Աստված:

Երկրորդ մեղքը նախանձն է, և դրան հակառակ է աստվածապաշտությունը, որովհետև նախանձի միջոցով սատանան փորձեց Եվային՝ ընդդեմ սատվածապաշտության ասելով. «Կլինեք աստվածների նման» (Ծննդ. Գ 5):

Երրորդ մեղքը բարկությունն է, որը մտքի կուրությունն է, և ընդդեմ դրա գիտության պարգևն է:

Չորրորդ մեղքը ծուլությունն է, և ընդդեմ դրա զորությունն է:

Հինգերորդ մեղքն ագահությունն է, և ընդդեմ դրա խորհրդի կամ խրատի հոգին է: Քանզի ագահ մարդը թողնում է երկնավորը և չար խրատի պատճառով խորհում երկրավորը:

Վեցերորդ մեղքը որկրամոլությունն է, և ընդդեմ դրա իմացությունը կամ հանճարն է:

Յոթերորդ պոռնկությունն է, և ընդդեմ դրա իմաստությունն է: Քանի որ պոռնիկ մարդն անասունի նման միշտ կամենում է իր ցան-

կությունը կատարել, ինչպես Դավիթն է ասում. «Մի' եղեք ձիերի և ջորիների պես, որոնք գիտակցություն չունեն» (Սաղմ. ԼԱ 9):

Երկրորդ պատճառը: Սուրբ Հոգու պարգևները յոթն են, որովհետև յոթ կերպով են մեզ օգնության գալիս: Մեր հոգին երեք զորություն ունի. բանական, ցասումնական ու ցանկական: Ցասումնական զորությունը ուշախության ժամանակ ավելի է մեծանում և մարդուն չափից ավելի հաճույքների մեջ ընկղմում: Սրան սանձելու համար երկյուղն է պետք, որպեսզի պահի ցասումնականին իր սահմանում: Իսկ նեղության ժամանակ ցասումնական զորությունը չափից ավելի է տրտմեցնում, և այս գեպքում մարդուն օգնության է գալիս Հոգու զորությունը, որպեսզի չափից ավելի չտրտմենք:

Երկրորդը ցանկական զորությունն է, և դրա սանձողն իմաստությունն է, որովհետև երբ իմաստությամբ ենք Աստծուն ցանկանում, ճաշակում ենք Նրա քաղցրությունը: Իսկ ընկերոջ նկատմամբ ցանկությունների դեպքում սանձող է լինում կա՛մ աստվածաշտությունը, կա՛մ գթությունը: Քանի որ, երբ չարը կամ բարին ենք ցանկանում մեր ընկերոջը, գութը օգնում է, որպեսզի չափից առավել չցանկանանք:

Երրորդը բանական զորությունն է: Բանականությամբ ենք ճանաչում ճշմարտությունը, ընտրում և գործում: Ճշմարտության ճանաչման համար հանճարն է մեր օգնականը, իսկ ընտրության համար գիտություն է պետք, որովհետև առանց գիտության ճշմարիտը չենք կարող կատարել:

Բայց հարկ է իմանալ նաև այն օգնության մասին, որ մեզ տալիս են Հոգու յոթ պարգևները, և որոնց մասին գրված է «Դատավորների գրքում»՝ հետեւյալ պատմության միջոցով (տե՛ս Դատ. ԺԶ): Այլազգիները գալիս են Սամփսոնի ապօրինի կնոջ՝ Դալիլայի մոտ ու առաջարկում, որպեսզի նա իմանա Սամփսոնի գաղտնիքը և հայտնի իրենց, որի դիմաց արծաթ են խոստանում: Եվ Դալիլան, իմանալով Սամփսոնի գաղտնիքը, ածիլել է տալիս նրա յոթ գիսակները: Դրանից հետո այլազգիները կարողանում են բռնել Սամփսոնին, հանել նրա աչքերը, կապել երկաթե կապանքներով և բանտարկել: Նմանապես՝ եթե մեկը Հոգու յոթ շնորհները, որ մեր հոգու օգնականներն ու զորություններն են, մերժում է իրենից, այդպիսին ընկնում է սատանայի ձեռքը, ով էլ կուրացնելով նրան՝ դժոխքի բանտն է տանում:

Հարց. – Ինչո՞ւ առաքյալները ստացան բոլոր լեզուների գիտությունը:

Պատասխան. – Վարդապետներն ասում են հետեւյալ պատճառները: Նախ՝ Ավետարանի քարոզության համար, որի համար բոլոր լեզուների գիտենալն անհրաժեշտություն էր, որպեսզի Քրիստոսի հավատին դարձնեին

բոլոր ազգերին: Դետք էր, որ ամեն ազգ Աստծուն պաշտելու և ծառայելու դար, և բոլոր ազգերից Եկեղեցի կառուցվեր:

Երկրորդ՝ Սուրբ Հոգու իշխանությունն ու կարողությունը սովորեցնելու համար, քանի որ երբ հեթանոսները նշանները տեսան, շատ զարմացան, ինչպես Պողոսն է կորնթացիներին ասում. «Լեզուները նշան են, բայց ոչ հավատացյալների, այլ անհավատների համար» (Ա Կորնթ. ԺԴ 22):

Երրորդ՝ ցույց տալու համար Քրիստոսի և Նրա անդամների խոնարհությունը, ինչպես որ սատանայի և նրա անդամների հպարտության պատճառով լեզուները բաժանվեցին Բաբելոնի աշտարակաշինության ժամանակ, այդպես էլ Քրիստոսի խոնարհության շնորհիվ միաբանվեցին լեզուները՝ Եկեղեցու շինության համար:

Չորրորդ՝ բոլոր լեզուների իմացությունը կատարյալ և ճշմարիտ գիտության արտաքին նշանն է, ինչը Սուրբ Հոգուց ընդունեցին, ինչպես Քրիստոս ասաց. «Սուրբ Հոգին, Որին Հայրը կուղարկի Իմ անունով, Նա ձեզ ամեն բան ճշմարտությամբ կուսուցանի» (Իմնու. Յովի. ԺԴ 26):

Հարց. – Ինչպե՞ս է Սուրբ Հոգին կնքում:

Պատասխան. – Սուրբ Հոգին արվեց հավատացյալներին որպես կնիք, որպես գրավական և որպես օծություն: Սուրբ Հոգու կնիքը բաժանում է Աստծու որդիներին սատանայի որդիներից, քանզի ով կնքված է Սուրբ Հոգով, Աստծու որդի է և Քրիստոսի հոսից: Աստված Սուրբ Հոգին մեզ որպես գրավ տվեց, և երբ պահում ենք այդ գրավը, Երկնքի արքայությունն ենք ժառանգում:

Հարց. – Ինչո՞ւ Քրիստոսի մկրտության ժամանակ Հոգին աղավնակերպ իջավ, իսկ առաքյալների վրա՝ հրակերպ:

Պատասխան. – Դետք է ասել, որ Սուրբ Հոգին երեք կերպով երևաց. նախ՝ աղավնակերպ, ինչպես Քրիստոսի մկրտության ժամանակ, երկրորդ՝ փչմամբ, ինչպես Վերնատանը Հարությունից հետո, և երրորդ՝ հրիտեսքով, ինչպես այսօր:

Քրիստոսի վրա աղավնակերպ երևալը հայտնում է, թե Սուրբ Հոգին Ում մոտ է կատարելապես բնակվում, ինչպես Պողոսն է ասում. «Աստվածության լրիվ ամբողջությունը Նրա մեջ հաճեց բնակվել» (Կողոս. Ա 19): Դրանով նաև երեսում է Սուրբ Հոգու և Քրիստոսի հեզությունը:

Աղավնակերպ երևալը ակնարկում է նաև մեր Հոգեսոր ծնունդը Ավագանի արգանդից՝ Սուրբ Հոգու շնորհներով:

Դարձյալ՝ Քրիստոսի մկրտության ժամանակ խռովություն կարմարդկանց և Աստծու միջև, այդ պատճառով Սուրբ Հոգին աղավնակերպ երևաց, որպեսզի ցույց տա Աստծու հաշտարարությունն ու քաղցրությունը, քանզի աղավնին դառնության լեզի ամեներին չունի:

Երկրորդ՝ առաքյալները փչմամբ Հոգին ընդունեցին՝ մեղքերին թողություն տալու համար՝ ըստ այս խոսքի. «Առե՛ք Սուրբ Հոգին: Եթե մեկի մեղքերը ներեք, նրանց ներված կլինի. եթե մեկի մեղքերը չներեք, ներված չի լինի» (Յովի. Ի 22-23): Այս խոսքը մեզ սովորեցնում է, որ երբ մեղքերը թողնում ենք ու կատարելապես ապաշխարում, ապա միանում ենք Քրիստոսին: Փչմամբ երևալը մեզ սովորեցնում է նաև, թե Ումից է ուղարկվում Հոգին, այսինքն՝ Քրիստոսից, ինչպես որ փչումը սրտից է գալիս, բայց փչելը բերանով է լինում, այդպես էլ Սուրբ Հոգին գալիս է Հորից, բայց Քրիստոսով է ամբողջ աշխարհի վրա շնորհները սփռում:

Իսկ հրով երևալը նրա իշխանությունն ու կարողությունն է հայտնում, որ ստացավ եկեղեցին ու սիրով ջերմացավ Աստծուն ծառայելու համար: Դարձյալ՝ հրով եկավ, քանզի առջեռում դատաստանը և երկնային տանջող ու տաժանելի հուրը կա պահված անհավատների համար: Ըստ որում, Հովհաննես Մկրտիչն ասում է. «Նա կմկրտի ձեզ Սուրբ Հոգով և հրով» (Սատթ. Գ 11): Հուրը նաև լույս է հավատացյալների համար, իսկ անհավատների համար՝ պատժող ու դատապարտող գործիք: Քանի որ Հոգին հրով երևալով բնակվեց առաքյալների մեջ, ուստի մենք պետք է առաքյալների նման լինենք, որպեսզի մեր մեջ էլ բնակվի:

Առաքյալները երեք անգամ ընդունեցին Սուրբ Հոգին: Առաջին անգամ ընդունեցին Ավագանի մկրտությամբ ու Աստծու որդիներ դարձան, ինչպես Քրիստոս ասաց Վերնատանը. «Լվացվածին ուրիշ բան պետք չէ» (Յովի. Ժ Գ 10), ինչից հայտնի է դառնում, որ այն ժամանակ առաքյալներն արդեն մկրտված էին: Երբ Տերը նրանց առաքեց քարոզելու, նաև իշխանություն տվեց բժշկելու բոլոր հիվանդներին, և այդ օրերին բոլոր սքանչելիքները Սուրբ Հոգու գորությամբ էին կատարվում:

Երկրորդ անգամ առաքյալներն ընդունեցին Սուրբ Հոգին Տիրող Հարությունից հետո՝ մեղքերի թողության համար, երբ նա փչեց նրանց վրա ու ասաց. «Առե՛ք Սուրբ Հոգին ...» (Յովի. Ի 22):

Իսկ երրորդ անգամ այսօր ընդունեցին՝ ստանալով ճշմարիտ վարդապետությունը, որպեսզի բոլոր ազգերին քարոզեն և մարդկանց սրտերը հաստատեն:

Հարց. – Ինչո՞ւ մինչև խաչվելը ու համբարձումը Տերը չպարգևեց Սուրբ Հոգին երևելի նշաններով:

Պատասխան. – Նախ՝ որ Քրիստոսի չարչարանքները պատճառ եղան Սուրբ Հոգին պարզելու համար, և պետք էր, որ սկզբում չարչարանքները լինեին, ինչպես ամեն մի պատճառ նախքան հետևանքն է լինում:

Երկրորդ՝ եթե Քրիստոս խաչը ելնելուց առաջ այնպես փառավորվեր, ինչպես խաչից հետո, ապա կարգելվեին և կխափանվեին նրա բոլոր չարչարանքները և աշխարհի ու մարդկանց վրկությունը:

Երրորդ՝ Քրիստոս պետք է Հովկեր պարզամիտ աշակերտներին, և եթե սկզբից ևեթ Հոգին ընդունեին, ապա Հովկելու կարիք չէր լինի:

Չորրորդ՝ որպեսզի աշակերտներն իրենց տկարությունը փորձով ձանաչեին և իմանալին, որ իրենց արժանիքների համար չէ, որ ընտրվեցին:

Հինգերորդ՝ որպեսզի իմանան, որ Քրիստոսով պարզեց, և եթե նախապես ընտրված լինեին, ապա կկարծեին, թե Հոգու տվյալները Հայր Աստծուց է և ոչ թե Քրիստոսից:

Վեցերորդ՝ ինչպես նախ սերմանում են, ապա պտուղները քաղում, այդպես էլ պետք էր հավատի սերմն ընդունել Քրիստոսից և ապա աստիճանաբար աճելով հասնել Հոգու պարզեցին ու պտղաբերել: Նաև որպեսզի մեծ համարվի ոչ միայն Քրիստոսի Աստվածությունը, այլև նրա աղքատությունը, անարգանքը, մահը:

Ինչպես թագավորը նախ հաշտվում է մահապարտի հետ և հետո նրան պարզեներ տալիս, այդպես էլ Քրիստոս իր խաչի մահով նախ հաշտեցրեց Հորը մարդկանց հետ, և հետո միայն Հայրը պարզեց Սուրբ Հոգին:

Թեպետ Երրորդությունում ամեն ինչ ընդհանուր է՝ տերությունը, իշխանությունը, զորությունը, Աստվածությունը, սակայն Եկեղեցու վարդապետները ստեղծելը Հորն են պատշաճում, վրկելը՝ Որդուն, իսկ զարդարելը՝ Սուրբ Հոգուն: Այդ պատճառով էլ հարկ էր, որ նախ Հայրը հայտնի լինի, ապա՝ Որդին, իսկ այնուհետեւ՝ Սուրբ Հոգին:

Սուրբ Հոգին ապօպարեւերի եւ լռաբյալների վրա

Տեսնենք, թե ինչ էր Այն, որ իջավ Վերնատանը, և ինչ՝ Այն, որ մարդարեների վրա էր: Նո՞ւյնն են արդյոք, թե՝ տարբեր: Եսայի մարդարեն ասում է, որ Հոգին յոթ շնորհներ է տալիս և յոթն էլ հանգեցին Միածին Բանի վրա՝ ըստ այս խոսքի. «Նրա վրա պիտի իջնի Աստծու Հոգին, իմաստության և հանճարի Հոգին, խորհրդի ու զորության Հոգին, գիտության և աստվածաշտության Հոգին. Աստծու Երկյուղի Հոգին պիտի լցնի այն» (Եսայի ԺԱ 1-3): Իսկ Գրքերից հայտնի է, որ մարդարեները չառան անձնավոր Հոգին, այլ մեկական շնորհ ստացան վերը նշվածից:

Եսայուն տրվեց խորհրդի շնորհը, քանզի Քրիստոսի ծածուկ խորհուրդները նա հայտնեց: Նախ ասաց. «Ահա կույսը պիտի հղանա ու Որդի ծնի, և նրա անունը պիտի լինի Եմմանուել» (Եսայի Է 14), ապա հայտնեց նրա վրա Հոգու հանգչելու մասին: Հայտնեց նաև չարչարանքների խորհրդի և համբարձման մասին: Այն, որ Եսայու վրա խորհրդի

Հոգին էր իջել, իմանում ենք հետեւյալ խոսքից. «Թող այս բոլոր պատգամները ձեզ համար լինեն ինչպես կնքված նամակի խոսքեր» (Եսայի Իթ 11):

Եղեկելի ու Հովհաննեսի վրա հեղության հոգին էր իջել, որը հայտնի է նրանց խոսքերից: Նաև նրանից, որ Տերը նրանց ուտել էր տալիս այն ամենը, ինչ որ տեսնում էին, և դա հնարավոր էր կատարել միայն հեղության դեպքում (տես Եգեկ. Դ 12-15): Նաև, որ ասաց եղեկելին. «Մարդու որդի, Ես քեզ դեռ կարգեցի իսրայելի այդ տանը. դու ինձնից պատգամներ ես լսելու և Իմ անունից սպառնալու ես նրանց» (Եգեկ. Գ 17):

Նման ձևով և Հովհաննեսն ասաց. «Ի՞նձ պետք է, որ Քեզնից մկրտվեմ, և Դու ի՞նձ մոտ ես գալիս» (Սատր. Գ 14): Իսկ ժողովրդին ասում էր. «Ես ձեզ ջրով եմ մկրտում ապաշխարության համար, բայց Ով գալիս է ինձնից հետո, ինձնից ավելի հզոր է, և ես արժանի չեմ հանելու Նրա կոչիկները» (Սատր. Գ 11): Այս ամենից երեսում է, որ Հովհաննեսի ու Եղեկելի վրա հեղության հոգին էր իջել:

Երեմիային զորության հոգին տվեց, քանզի զորավոր էր լեզվով՝ ըստ այս խոսքի. «Տերը, ձեռքն ինձ երկարելով, հաեց բերանիս ու ասաց. «Ահա Իմ խոսքը քո բերանը դրեցի: Ահա քեզ այսօր իշխանություն տվի ազգերի ու թագավորությունների վրա, որպեսզի դրանք քանդես ու խորտակես, կործանես ու ավերես, կառուցես ու հաստատես» (Երեմ. Ա 9-10):

Տասներկու մարդարեների վրա հանգչում էր երկյուղի հոգին, քանզի նրանք բոլորն էլ սուգ ու կոծ էին անում և իրենց վայ տալիս ու աղաղակում: Իսկ Եղիան միշտ սաստում էր ու անիծում, կապում էր երկինքն ու կոտորում սուտ մարդարեներին:

Եղիսեեին ու Սամվելին տրվեց գիտության հոգին: Նրանք գիտեին Հոգու բաղում գործերը, սակայն քիչ խոսեցին: Այդպես և առաքյալներից շատերի վրա էր գործում այդ հոգին:

Դավթին ու Սողոմոնին տրվեց իմաստության հոգին, որը հայտնի է նրանց խոսքերից, քանզի ամբողջ Աստվածաշունչ մատյանում չկան նրանց խոսքերի նման իմաստուն խոսքեր: Բայց նրանց գործերը սակավ էին, քանզի հրաշքներ չգործեցին: Նմանապես և մյուս իմաստուններից ու վարդապետներից չէր հեռանում իմաստության հոգին, թեպետև նրանք գործում տկարանում էին:

Մովսեսին տրվեց աստվածպաշտության հոգին՝ կրակի միջոցով, քանզի Աստված մաշող Կրակ է (Բ Օրենք Դ 24): Եվ Մովսեսն աստվածապաշտություն է քարոզում իր բոլոր գրքերում և օրենքներ հաստատում հավատի կատարելության համար: Այդպիսի հոգի ստացողի համար առաջնահերթը խոսքերն ու գործերն են, և հայտնի է, որ Մովսեսը սքանչելիքներ էր գործում և Օրենքից խոսում:

Իսկ Վերնատանը առաքյալների վրա իջավ Հորը և Որդուն համապատիվ անձնավոր Սուրբ Հոգին՝ իր բոլոր շնորհներով:

Դարձյալ՝ մարդարեներին առատությամբ չտրվեց Հոգին, քանզի Դափիթը յուղով առավ շնորհը (տես Ա Թագ. ԺԶ 13), Եղիսեեն՝ վերարկուի միջոցով (տես Գ Թագ. ԺԹ 19), Եղեկիելը՝ մագաղաթն ուտելով (տես Եզեկ. Բ 8-9), իսկ Երեմիան՝ իր բերանին Տիրոջ ձեռքի հպումով (տես Երեմ. Ա 9), քանզի գեռևս նրանք Օրենքի կարու էին, իսկ այստեղ Հոգին ինքն առաքյալների մեջ բնակվեց, ինչպես ասաց Քրիստոս. «Որպեսզի հավիտյան ձեզ հետքնակվի ձշմարտության Հոգին» (Յովի. ԺԴ 16):

Թեպետ Աստված Մովսեսին հրով երևաց մորենու միջից (տես Ելք Գ 2-3), սակայն այստեղ մորենու մեջ չվառվեց, այլ առաքյալների մեջ ինչպես Հուր մտավ, որպեսզի նրանց, ինչպես ոսկու, ձուլի ու մաքրի, ինչպես կավեղեն անոթների՝ թրծի, դարձնի ամուր ու անբեկանելի և ջերմացնի սառնությունից՝ Հոգով եռալու բարության մեջ: Նաև որպեսզի այրելով ոչնչացնի նրանցում աշխարհի չարությունները, ինչպես կրակն է այրում եղեգը:

Առաքյալները մարդարեների նման միայն յուրայինների և մի ազգի համար չեղան առաջնորդ, այլ բոլորի՝ և' ծանոթների, և' անծանոթների: Եվ ոչ թե փարավոնի հետ մրցեցին և Հեղարելին սպառնացին (տես Դ Թագ. Թ 10), այլ պատերազմեցին դաժան ու չար գևերի գեմ: Առաքյալներն իրենց մանուկ և ծանրախոս չէին ներկայացնում, ինչպես Մովսեսն ասաց. «Ես պերճախոս չեմ եղել... անվարժ եմ խոսում, ծանրախոս եմ» (Ելք Դ 10), իսկ Երեմիան ասում է. «Ահա ես նույնիսկ խոսել չգիտեմ, քանզի մանուկ եմ» (Երեմ. Ա 6), այլ պատրաստաբար իսկույն գործում էին: Դրանով են զանազան վում առաքյալներն ու մարդարեները:

Հարց. — Ինչո՞ւ է զանազան կերպերով և զանազան շնորհներով երեւմ Սուրբ Հոգին:

Պատախան. — Որովհետեւ երբ Աստծու ժողովուրդն անհոգ էր աստվածապատության մեջ, Մովսեսին աստվածապատության Հոգին տրվեց, քանզի այն ժամանակ վայել չէր մեկ այլը ստանալ: Երբ հասան աստվածապատությանը, հարկ եղավ իմաստություն տալ, այդ պատճառով էլ իմաստության Հոգին Դավթին տրվեց: Իսկ երբ հասունացան և իմաստուն դարձան, պետք եղավ գիտակ լինել Աստծու խորհուրդներին, որը տրվեց Եսայու միջոցով: Իսկ երբ իմացան Աստծու խորհուրդները, ապա հարկ էր զորություն ստանալ, որը տրվեց Երեմիային: Իսկ երբ զորացան, հպարտացան ու մեղանչեցին, հարկ եղավ երկյուղի Հոգին տալ, որպեսզի իսպառ չկործանվեն, որը ստացան տասներկու մարդարեներն ու Եղիան:

Երբ ժողովուրդը տկարացավ հավատից, նրանց տրվեց գիտության հոգին Եղիսեեի միջոցով, որպեսզի սքանչելիքների միջոցով ոտքի ելնեն իրենց տկարություններից: Իսկ երբ զղացին, տրվեց հեղության հոգին Եղեկելիի միջոցով, որպեսզի մեղքերից դառնան ու փրկվեն:

Եվ երբ այս ամենը կատարվեց, եկավ անձնավոր Սուրբ Հոգին և նստեց առաքյալների վրա՝ իր բոլոր շնորհներով: Իսկ Քրիստոսի վրա Հայտնվեց էակից, բնութենակից ու փառակից Սուրբ Հոգին, և սա է Սուրբ Հոգու էջքի զանազանությունն առաքյալների և Քրիստոսի վրա:

Սուրբ Հոգու աերգործություն

Մեծ է աստվածապաշտության խորհուրդը, քանզի մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, երևաց մարմնով, արդարացավ Հոգով, հայտնվեց Հրեշտակներին, քարոզվեց Հեթանոսների մեջ, հավատալի եղավ աշխարհում, իր ինքնիշխան զորությամբ ու մեծ փառքով երկրից երկինք համբարձվեց (տես Ա. Տիմ. Գ. 16), անճառելի հիացմամբ մտավ վարագույրի ներքին կողմը, ինչպես Մեծ Քահանայապետ՝ Հորը պատարագ ընծայեց իր պատվական Արյունը և բարեխոսեց՝ Հաշտվել մարդկանց հետ: Իսկ Բարի Հայրը, հաճելով իր սիրելի Որդու սքանչելի գործերին և լուծարելով նախկինում իր կողմից դրված դատապարտության կնիքը, Նրան տվեց Սուրբ Հոգին՝ սփռելու իր Արյամբ գնված հոսի վրա: Եվ Քրիստոսի մահվան փոխարեն արված ձրի շնորհը հավասարապես տարածեց արժանավորների և անարժանների վրա, և Սուրբ Հոգին գալով բնակվեց մեր սրտերում, որից հիացած՝ Պետրոսի մի խոսքով երեք հազար հոգի այդ օրն աշակերտ դարձան:

Առաքյալները, ովքեր գեռ երեկ ու ամիկ էին ու շինական, այդ օրը պերճախոսում էին իբրև Հելլենացի իմաստուններ: Պետրոսը, ով ծնվել էր Կաֆառնայումում, սկսեց հոռմեացիների լեզվով խրոխա արշավել: Փիլիպպոսը, ով Բեթսայիդայից էր, արաբների բաղրառով էր խոսում, նազարեթցի Հովհաննեսը՝ Կիլիկեցիների լեզվով, Թովմասը՝ եթովպացիների, իսկ Թաղեռոսը վայելուչ հայերենով էր Հնչեցնում իր խոսքերը: Նրանք, առանց լինելու այդ երկրներում լինելու, խոսում էին տեղի լեզուներով:

Սուրբ Հոգին այսօր իջնելով առաքյալների դասերի վրա՝ զորացրեց նրանց բազուկները, և նրանք միայն իրենց ստվերով հիվանդներ բժշկեցին (տես Գործք Ե. 15), թաշկինակներով ցավեր փարատեցին (տես Գործք ԺԱ. 19), ձեռքի հաղումով մեռելներին հարություն տվեցին, կաղերին քայլեցրին, կույրերին լուսավորեցին՝ առավելապես բացելով նրանց հոգերը աչքերը, քան թե մարմնավոր, և վերջապես՝ մարդկանց երկինք հրավիրեցին ու ժառանգորդը դարձրին անվախճան փառքի: Անգամ անշունչ տարբերը

Նրանով զորացան, ինչպես Հոգին նախ տունը լցրեց և ապա հանգեց տանը գտնվողների վրա:

Դա երկնայինների և երկրայինների շահի մեծ տուրեառություն է: Քանզի երկրայինները տվեցին մարմին և ստացան Հոգին: Ադամի տունն ընծայեց Քրիստոսին և Աստծու Տունը փոխարենը հատուցեց Միկթարիչ Սուրբ Հոգով: Մարդիկ Մարդուն տվեցին Աստծուն, և փոխարենն Աստված Աստծուն տվեց մարդկությանը: Ծառաները հնագանդության պատարագ տվեցին, և Տիրոջից որպես պարգև ստացան խաղաղություն:

Ամենակարող զորությունը՝ անձնավոր Սուրբ Հոգին, այսօր սլանալով իջավ առաքյալների վրա, ինչպես Միածինը՝ սուրբ Կույսի արդանդը, և այլես չհեռացավ Քրիստոսի Եկեղեցուց՝ զորացնելով առաքյալներին և նրանց միջոցով՝ ամբողջ տիեզերքը: Ուստի և Պետրոսը, իր մեջ կրելով Սուրբ Հոգին, իրեն ուղղված Անանիայի սուտ խոսքերը ոչ թե մարդկանց հասցեագրեց, այլ Աստծուն՝ ըստ այս խոսքի. «Ինչպե՞ս եղավ, որ քո սրտի մեջ այս բաները դրեցիր. մարդկանց չստեցիր, այլ Աստծուն» (Գործք Ե 4): Եվ Պետրոսը, Սուրբ Հոգու չնորհներով ձեռքը դնելով Ստեփաննոսի վրա, զորացրեց նրան՝ մեծամեծ նշաններ անելու (տե՛ս Գործք Զ 5):

Հոգին, ինչպես Եկեղեցու Թագավոր, ոմանց առաքյալներ ընտրեց, ոմանց՝ մարդարեներ, ոմանց՝ հովիվներ և վարդապետներ: Նա արձակեց մարդկանց նյութեղեն լեզուները՝ Աստծուն համարձակապես Հայր Կոչելու, և վկայեց մեր Հոգիներին, որ մենք Աստծու որդիներ ենք (տե՛ս Յոն. Ը 16): Նա ոմանց տալիս է իմաստություն, մյուսներին՝ գիտություն, ոմանց՝ հավատ՝ լեռները փոխադրելու, ոմանց էլ՝ զորություն՝ սքանչելիքներ գործելու, մեկին՝ մարդարեռություն, մյուսին՝ Հոգիները զանազանելու շնորհ, մեկին՝ տեսակ-տեսակ լեզուներով խոսելու շնորհ, մյուսին՝ լեզուների թարգմանության շնորհ: Այդ ամենը նույն Հոգին է տալիս և բաժանում յուրաքանչյուրին, ինչպես որ կամենում է (տե՛ս Ա Կորնթ. ԺԲ 7-11):

Նա օծում է մեզ և դարձնում քրիստոսընկալ և քրիստոնյա՝ մեզ զորացնելով այդ օծությամբ ամեն բան իմանալու, ըստ Հովհաննեսի խոսքի. «Այն օծումը, որը դուք ընդունեցիք Նրանից, թող բնակվի ձեր մեջ. և կարիք չկա, որ մեկը ձեզ ուսուցանի: Այլ եղեք այնպես, ինչպես որ Նրա օծումն ուսուցանում է ձեզ ամեն ինչի մասին, որ ճշմարիտ է և ոչ սուտ» (Ա Յովի. Բ 27): Նա լուսավորում է մեր սրտերի աչքերը՝ իմանալու մեր կոչման հույսը, ժառանգության փառքի մեծությունը և Քրիստոսի սիրո խորությունն ու մեծությունն, այդ պատճառով էլ արհամարհում ենք երեխները և փափագում աներեռույթները:

Քրիստոս Հոգով մեր մեջ բնակվելով՝ սպանեց մեր մարմնական հաճույքների՝ մեղքերի զգայարանները և կենդանացրեց մեր բանական

Հոգիները արդարության խորհուրդների հույսով, որով զորացած մարդիկ ոտնատակ տվեցին նեղություններն ու անձկությունը, հալածանքներն ու սուրը, սովոր ու մերկությունը՝ հոգով պայծառանալով Քրիստոսի սիրո գիտությամբ:

Հոգին, Ով քննում է Աստծու խորությունները, քննում է նաև մարդկանց սրտերը և տեսնելով մեր բնության տկարությունները՝ մեզ թիկունք է կանգնում նեղությունների պահին և Աստծու առջև անմռունչ հեծությամբ բարեխոսում եկեղեցու սրբերի համար: Հոգին խորություն չի դնում ո՛չ հրեաների և ո՛չ էլ հեթանոսների միջև և ամենքին հավասարապես ձիրքեր է շնորհում: Նյութ ունենալով միայն սրտի հոժար հավատը՝ Հոգին զանազան շնորհների ջահն է ճառագում եկեղեցու մանուկների մեջ և նրանց ջերմացնում՝ ձգելով աշխարհի հաճույքներից գեպի երկնային Հոր սերը:

Մանուկներին որպես կաթ տալիս է լեզու խոսելու, նշաններ անելու և բժշկության շնորհներ, իսկ կատարյալներին՝ հաստատուն կերակուր, որն Աստծու սերն է, ինչպես և հայտարարում է ճաշակողը. «Եթե խոսեմ մարդկանց լեզուները և հրեշտակներինը, բայց սեր չունենամ, կնմանվեմ մի պղնձի, որ հնչում է, կամ ծնծղաների, որ զողանջում են: Եվ եթե մարդարենություն անելու շնորհ ունենամ և հասկանամ բոլոր խորհուրդներն ու ամբողջ գիտությունը, և եթե ունենամ ամբողջ հավատը՝ մինչև իսկ լեռները տեղափոխելու չափ, բայց սեր չունենամ, ոչինչ եմ: Եվ եթե իմ ամբողջ ունեցվածքը տամ աղքատներին և իմ այս մարմինը մատնեմ այրվելու, բայց սեր չունենամ, ոչ մի օգուտ չեմ ունենա» (ԱԿորնթ. ԺԳ 1-3): Այդ պատճառով էլ հետագայում նշաններն անօգուտ լինելով վերացան, իսկ իմաստությունը և հանճարը միշտ ներգործում են եկեղեցում, և Քրիստոսի սերը պայծառացնում է մեր հոգիները:

Ոչ ոք Հիսուսին Տեր չի կարող անվանել, եթե Սուրբ Հոգուց չազդվի, իսկ եթե մեկը Սիմոն կախարդի նման Սուրբ Հոգուն փորձի, ապա նա Տիրոջ եկեղեցուց կվերացվի (տես Գործ Ը 18-21):

Սուրբ Հոգին ամուր կնիք է Քրիստոսի սուրբ եկեղեցու յուրաքանչյուր անդամի վրա՝ պահպանելու համար նրանց: Նա Վարդապետ է՝ ուսուցանելու և հիշեցնելու մեզ Քրիստոսի ասածները, ինչպես Տերը խոստացավ. «Նա ձեզ ամեն բան կուսուցանի և ձեզ կհիշեցնի այն ամենը, ինչ ես ասացի ձեզ» (Յովհ. ԺԴ 26): Նա իմաստուն Ճարտարապետ է և ի շինություն Քրիստոսի Մարմնի՝ օտարներին ու պանդուխտներին կանգնեցնում է առաքյալների և մարդարեների հիմքի վրա, որի անկյունաքարը Քրիստոս Հիսուս է, հասցնելով նրանց հավատի կատարյալ միությանն ու Աստծու Որդու ճանաչմանը՝ Քրիստոսի հասակի չափին (տես Եփես. Դ 13):

Սուրբ Հոգին Եկեղեցու կարգերի Վերակացուն է ու Հրահանգողը և Ինքն է որոշում յուրաքանչյուրի աստիճանն ու պատիվը: Նա շնորհ տվեց ոմանց լինելու առաքյալներ, ոմանց՝ մարգարեներ, ոմանց՝ ավետարանիչներ, ոմանց՝ հովիվներ և ուսուցիչներ՝ հաստատելու համար սրբերին իրենց պաշտոնի կատարման մեջ՝ ի շինություն Քրիստոսի Մարմնի (Ակորնթ. Դ 11-12):

Հոգին հորինեց տաճարի աստիճանների դասակարգությունը՝ երկնային դասերի նմանությանը բերելով, Հոգեոր երգերով միշտ Աստծու հետ խոսելու համար: Հոգին է սուրբ Ավազանի արգանդից ծնում Քրիստոսի Եկեղեցու մանուկներին՝ Հորը որդեգրելով:

Հոգին զորացնում է քահանայապետի ձեռքը շնորհաբաշխության համար, քահանաներին՝ նվիրագործության, և սարկավագներին՝ սուրբ Եկեղեցու սպասավորության համար: Նրանով են զորանում վկաները, զինվորմ՝ նահատակները, քաջանում՝ այրերը, արիանում՝ կանայք: Նրա զորությամբ են խաչաձև փայտից սքանչելիքներ և սրբերի մասունքներից բժշկություն բխում բոլոր ախտերի դեմ: Ամբողջ երկիրը լի է Նրա ողորմությամբ, և օդը մաքրվեց Նրա իջնելով: Նա մեզ հետ է ամեն օր, և մեր ունեցած ամեն ինչը Նրա պարգևն է:

ՏՈՆ ԿԱԹՈՂԻԿԵ ՍՈՒՐԲ ԷՇՄԻԱԾՆԻ

ԵԿԵՂԵՑՈՒ ՏՈՆԵՐԸ

Օրվա երեսորբյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա' մեզ»: Այսօր Խաչով և Ավետարանով թափոր է կազմվում՝ ասելով «Եջմիածինի Յօրէ» շարականը: Սուրբ Պատարագից հետո կատարվում է Սուրբ Եջմիածինի մաղթանքը:

Առաջին նախամարգարեն՝ Մովսեսը, երբ կանգնեցրեց Աստծու խորանը, այն օծելուց ու սրբագործելուց հետո հավաքեց ժողովրդին ու կատարեց խորանի նավակատիքը: Այդ առիթով Խորայելի իշխանները՝ նահապետական ընտանիքների տասներկու՝ հրամանատարները, նվերներ մատուցեցին Տիրոջը: Տիրոջ հրամանով օրական միայն մի իշխան էր նվեր մատուցում զոհասեղանի նավակատիքին, և այդ օրը միայն այդ իշխանի ցեղն էր տոնում (տես ԹՎԵր 7): **Այդախով Խորայելի ամեն մի ցեղ միայն մեկ օր էր տոնում, և նավակատիքի տոնը տևում էր տասներկու օր:**

Մենք ևս ամբողջ տարվա ընթացքում սուրբ Եկեղեցուն նվիրված տասներկու տոն ենք կատարում: Դրանք են՝ «Աշխարհամատրան» կիրակին, Սուրբ Հոգու գալուստը, «Էջ Միածնի» տոնը, սուրբ Տապանակի տոնը, որը Վարդավառի նավակատիքն է, «Շողակաթը», որն Աստվածածնի վերափոխման տոնի նավակատիքն է, Սուրբ Եկեղեցու տոնը, որը Խաչվերացի նավակատիքն է, Խաչվերացի տոնին հաջորդող վեց տոնական օրերից երեքը, որոնք կոչվում են «Եկեղեցու տոն», «Տյառնընդառաջը», «Ծաղկագարդը» և «Նոր կիրակին»: Դրանց մի մասը այլևայլ տոներ լինելուց բացի միաժամանակ նաև սուրբ Եկեղեցու տոներն են:

ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՎԱԿԱՏԻՔԸ

Նավակատիքը տաճարի խորանի կանգնեցման, տաճարի և Եկեղեցու օրհնության տոնն է: Հնում երեք անգամ եղավ տաճարի նավակատիքը: Նախ՝ երբ Սոլոմոնը կառուցեց տաճարը, ժողովեց ողջ Խորայելը և, սեպտեմբեր ամսին, մեծ շուրջով ու ճոխությամբ կատարեց տաճարի նավակատիքը: Երկրորդ անգամ, երբ Զորոբաբելը նորոգեց ավերված Երուսաղեմը և վերստին կառուցեց տաճարը, մարտ ամսին կատարեց տաճարը նորացնելու մեծ տոնը: Երրորդ անգամ Հուդա Մակաբեայեցու ժամանակ կատարվեց տաճարի նավակատիքը, երբ Անտիռքոսի կողմից պղծված տաճարը վերստին սրբվեց: Դա եղավ դեկտեմբեր ամսին:

Սրանք են հնում կատարված տաճարի շինության և նորոգության տոները, որոնք մեծամեծ ու զարմանալի խորհուրդներ ունեն: Իսկ նորում առաքելավանդ կանոնով սահմանվեց, որ եթե որևէ մեկը եկեղեցի կառուցի և սեղան կանգնեցնի, ութ օր նավակատիք կատարի Աստծու փառքի համար: Երբ սուրբ Կոստանդիանոսի մայրը՝ Հեղինեն, Երուսաղեմում կառուցեց Սուրբ Հարության տաճարը և բոլոր Աստվածակոխ տեղերը զարդարեց, կայսրը կատարեց տաճարի նավակատիքը և կարգ սահմանեց՝ ամբողջ աշխարհում ամեն տարի տոնել եկեղեցու նավակատիքը: Իսկ երբ սուրբ Գրիգորը կանգնեցրեց Վաղարշապատի Սուրբ Կաթողիկեն, Տրդատ թագավորը մեծ նավակատիք արեց Հայոց եկեղեցու հաստատության համար և սահմանեց ամեն տարի անխափան կատարել այդ տոնը:

Նավակատիքը մարդկային ցեղի հնացած բնության նորոգությունն է ակնարկում, քանզի Ավազանի մկրտությամբ մերկացանք ապականության հնությունից և արժանանալով որդեգրության շնորհին, Հոգու նորոգությամբ զգեստավորվեցինք նոր պատմուճանով՝ Քրիստոսով, ըստ առաքյալի խոսքի. «Դուք բոլորդ, որ ի Քրիստոս մկրտվեցիք, Քրիստոսով զգեստավորվեցիք» (Գաղատ. Գ 27): Եվ նորոգված մարդկային ցեղը՝ աստվածագոյաց մարդիկ, դառնալով Քրիստոսի Մարմնի անդամները անվանվում են Սուրբ Եկեղեցի, Երկնային Փեսայի Հարս, ինչպես նաև՝ Սիոն ու Թագուհի:

Բանական Եկեղեցու նորոգությունն ավելի մեծ ուախություն է պատճառում և նավակատիքն էլ ավելի ճոխ է տոնվում, քանզի բանական հոգիների՝ կոսպաշտությունից ու մեղքերից առ Աստված դարձը և նորոգությունն ավելի մեծ տոն է, քան նյութական տաճարի նորոգությունը: Քանի որ մկրտությամբ ու ապաշխարությամբ նորոգվում է մեղքի պատճառով հնացած ու ապականված մարդու սիրտը, ինչի մասին Դավիթն ասում է. «Իմ մեջ մաքուր սիրտ հաստատի՛ր, Աստվա՛ծ, և արդար հոգի նորոգի՛ր իմ որովայնում» (Սաղմ. Ծ 12): Եկեղեցու նորոգմամբ Երկիրը երկինք է դառնում, և Քրիստոս՝ Երկնային Թագավորը, բնակվում է Եկեղեցում, այսինքն՝ մեր մեջ:

Եսային ասում է. «Նորոգվեցնք իմ առաջ, ո'վ կղզիներ» (Եսայի ԽԱ 1): Կղզիներ ասելով՝ Տերը դիմում է Հեթանոսներին: Եվ Հեթանոս հայերի հոգիների նորոգությունը նկատի ունենալով, մեր սուրբ Լուսավորիչը, ամռան առաջին ամսին, սահմանեց տոնել Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնը:

Արդարեւ, նավակատիք է Սուրբ Կաթողիկե Եկեղեցու տոնը, որը ոչ թե մարդիկ հաստատեցին, այլ Աստված: Տերը, լինելով Սուրբ Եկեղեցու անկյան Վեմը, Հիմքում դրեց մարդարեներին ու առաքյալներին: Իսկ բյուրավոր հրեշտակների ու սրբերի լուսազգյաց գնդերին, ինչպես զորավոր պարիսպ, Եկեղեցու շուրջը կանգնեցրեց: Այդ պատճառով է մարդարեն

Նոր Սիոնի որդիներին հրավիրում խոստովանությամբ ու սրբությամբ մտնել Եկեղեցու դռներից ներս, երկրպագել Տեր Աստծուն և ցնծությամբ և ուրախությամբ, սաղմուներով ու օրհնություններով տոնել մեր փրկության տոնը (տե՛ս Սաղմ. ՂԹ 4), որով պարակցվում ենք Հրեշտակներին: Քանզի այսօր Արդարության Արեգակը պայծառ լույսով իր Աստվածության փառքն է փայլեցնում մեր շուրջը, և մենք հրաշագործվելով ճանաչում ենք պատիվը և անվանագրությունն այս սրբարանի:

ՍՈՒՐԲ ԷՇՄԻԱԾՆԻ ՏՈՆԸ

Հոգեգալստյան երկրորդ շաբաթը կոչվում է «Արարատյան դաշտի տոն», որովհետև այս շաբաթ են տոնվում Հայոց նվիրական տոներից մի քանիսը. երկուշաբթի տոնվում է Հոփիսիմյանց կույսերի տոնը, երեքշաբթի՝ Գայանյանց կույսերի, Հինգշաբթի՝ Հովհաննես Կարապետի և Աթանագինե եպիսկոպոսի տոնը, որոնց նշխարները սուրբ Գրիգոր Լուսավորիչը գետեղեց Տարոն գավառի Մուշ գյուղաքաղաքում իր կառուցած եկեղեցում: Շաբաթ օրը սուրբ Գրիգոր Լուսավորչի Վիրապից ելնելու տոնն է, իսկ կիրակի՝ Սուրբ Էջմիածնի տոնը: Արանք այն սրբերն են, որոնց ճգնությամբ, հեղած արյամբ և սուրբ նշխարների վրա հաստատվեց Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին: Այդ պատճառով նրանց տոները նախորդում են Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնին, որը կարգել է հոգեկիր և առաքելաշնորհ սուրբ Գրիգոր Լուսավորիչը՝ Վիրապից ելնելուց, մեզ կենարար Ավետարանի ճշմարտության խոսքով լուսավորելուց, բագինները կործանելուց, դիվական տոները խափանելուց և տաճարը շինելուց հետո: Այդ պատճառով այն միայն Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին է տոնում, Պենտեկոստեին հաջորդող երկրորդ կիրակի օրը:

Արդ՝ երուսաղեմում և աշխարհի բոլոր կողմերում, ուր քարոզվեց Ավետարանը, կառուցվեցին եկեղեցիներ և հաստատվեցին տերունական տոներ: Հստ այդմ և մեր սուրբ Գրիգոր Լուսավորիչը, Հայաստան երկրի բոլոր կողմերում, հաստատեց եկեղեցիներ ու կարգեց տերունական տոներ, որից հետո Աստվածային հանճարով որոշեց կարգել և այս տոնը,՝ որպես նավակատիք Ընդհանրական Սուրբ Եկեղեցու՝ խորհրդի օրինակ ունենալով հետեւյալը: Երբ մի աշխարհակալ թագավոր պատերազմում է ու հաղթում հակառակորդին, վերջինիս գերում է և իր զինվորների համար խաղալիք դարձնում: Ապա թշնամու կողմից գերված իր հպատակներին ազատում է գերությունից (որոնց սիրույն պատերազմելով վերքեր էր ստացել) և թշնամու ունեցվածքն ավար վերցնելով՝ նրանց մեջ բաշխում: Երբ նա արդարիս գորավոր հաղթանակով վերադառնում է իր երկիրը, նրա

սպասավորները սեղան են կազմում և ամեն տեսակի համեղ խորտիկներով, անուշահամ գինիներով նրան զմայլեցնում: Ապա արքային տանելով նստեցնում են իր գահին, որից հետո խրախճանք են կազմակերպում:

Այդպես էլ մեր երկնավոր թագավորը մարդացավ, եկավ աշխարհ, կամավոր ընդունեց չարչարանքները, պատերազմեց մահվան իշխանի հետ, հաղթեց մեր ախոյանին և ընդունեց իր մտերիմ սպասավորների հրավերը: Իսկ սպասավորները, քաջալերված իրենց փրկությամբ, ավետարանում են Քրիստոս Արքայի բոլոր երախտիքները՝ սկսած ծնունդից ու մեր մեջ անձառելի խոնարհությամբ հայտնվելուց, պատմելով նաև Հայրենի տաճարին քառասնօրյա ընծայման, Հորդանանում մկրտության, կենարար չարչարանքների, Աստվածասքանչ Հարության, Համբարձման, Հոր աջ կողմում նստելու և Ամենասուրբ Հոգու էջքի մասին: Դրանով Տերն ինքն էլ է ուրախանում և մեզ հետ տոնում մեր նորոգման ու փրկության տոնը, որին մասնակցում են նաև երկնային հրեշտակները, ովքեր փառաբանում են Բարեգութ Հորը, Նրա Միածին Որդուն և կենսապարգև Սուրբ Հոգուն:

Այս տոնը նաև սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքի համաձայն կառուցված Սուրբ Էջմիածնի տաճարի նավակատիքի տոնակատարությունն է և տեսիլքի հիշատակը: Ըստ այդ տեսիլքի՝ երկինքը բացվում է, և Աստծու Միածին Որդին իր հրաթե ու լուսեղեն զորքերի ուղեկցությամբ իջնում է Վաղարշապատ քաղաքի շեն տեղը, մուրճով հարվածում է սանդարամետի մեհյանին և այն ջախջախելով խորտակում: Ապա սուրբը տեսնում է նախկին մեհյանի տեղում կանգնած ամպեղեն ու լուսեղեն մի տաճար՝ սյուներով ու կամարներով կառուցված: Արդյունքում՝ հայոց մեջ վերջնականապես ջնջում է կուապաշտությունը և փոխարենը կանգնեցվում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին և Եկեղեցու հայրապետական իշխանությունը, որով մարմնավորվում է Հայաստանում երեք դար շարունակ առաքելական քարոզությամբ ձևավորված հավատը:

ԿԱՁՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ

ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՈՒԱԾ

Եկեղեցին հավատացյալների սուրբ ժողովն է, և Եկեղեցի անունն ավելի վերաբերվում է Աստծու ժողովրդին, քան տաճարին, սակայն Եկեղեցի է կոչվում և՝ քարեղեն շինությունը՝ տաճարը, և՝ հավատացյալների բազմությունը՝ ներառյալ հանգուցյալ հոգիների սուրբ ժողովը (տես Եթր. ԺԲ 23):

«Եկեղեցի» անունն առաջին անգամ հիշատակվում է Ղետացիների գրքում, ըստ որի, երբ Տերը հաստատում էր Ահարոնի քահանայապետու-

լիունը, ասում է. «Ամբողջ ժողովրդին եկեղեցացրո՛ւ (Հավաքի՛ր) Վկայության խորանի դռան մոտ» (Պատ. Ը 3): Ապա հիշատակվում է երկրորդ Օրինաց գրքում, երբ Տերը հաղորդում էր իր Ուխտը. «Քո մարդկանց եկեղեցացրո՛ւ (Հավաքի՛ր) ինձ մոտ, որ նրանք լսեն իմ այն պատգամները, որ սովորեցնելու եմ նրանց, որպեսզի երկնչեն ինձանից ու դրանք սովորեցնեն իրենց որդիներին» (հմմտ. Բ Օրենք Դ 10): Այնուհետև՝ սաղմոսերգուն է եկեղեցու մասին ասում. «Գոհություն պիտի մատուցեմ Քեզ, Տե՛ր, մեծ Եկեղեցում և ժողովրդի բազմության մեջ պիտի օրհներգեմ Քեզ» (Սաղմ. ԼԴ 18): Դավիթը նախ օրհնում է Աստծուն՝ ասելով. «Եկեղեցի օրհնեցե՛ք Աստծուն» (Սաղմ. ԿԵ 27), ապա մարդարեանում Հրեաստանում կազմված առաջին եկեղեցու խոտորվելու մասին՝ Փրկչի հանդեպ նրանց գործած հանցանքի պատճառով. «Զարագործների ամբոխը ես ատեցի և ամբարիչների կողքին չեմ բազմի» (Սաղմ. ԻԵ 5): Նաև Մաղաքիան է ասում. «Զեր առջև դռները կփակվեն, և դուք զուր տեղը մի մոտեցեք իմ սեղանին, որովհետև հոժարակամ չեմ ձեր նկատմամբ, և զոհ չեմ ընդունի ձեր ձեռքից» (Սաղաք. Ա 10):

Երբ հրեաները հեռացան շնորհներից, Տերը հեթանոսներից երկրորդ Եկեղեցին ստեղծեց՝ քրիստոնեականը, ըստ այն խոսքի, որ ասաց Պետրոսին. «Վեմի վրա պիտի շինեմ իմ Եկեղեցին, ու դժոխի դռներն այն չպիտի հաղթահարեն» (Սատր. ԺԶ 18): Այդ մասին նաև Դավիթն է մարդարեացել. «Տե՛ր, սիրեցի Քո տան վայելչությունը և Քո փառքի ընակության վայը» (Սաղմ. ԻԵ 8): Ասում է նաև. «Մեծ Եկեղեցում Քեզ պիտի օրհնեմ» (Սաղմ. ԻԵ 12): Ապա՝ «Օրհնեցե՛ք Տիրոջը նոր օրհնությամբ, սրբերի ժողովում է օրհնությունը Նրա» (Սաղմ. ճԽԹ 1): Ապա եղրափակում է՝ ասելով. «Արևելքից մինչև արևմուտք օրհնյալ լինի անունը Տիրոջ» (Սաղմ. ճԺԲ 3): Իսկ Պողոս առաքյալը երկրորդ՝ քրիստոնեական Եկեղեցու մասին գրում է Տիմոթեոսին. «Աստծու տունը կենդանի Աստծու Եկեղեցին է, սյունը և հաստատությունը ճշմարտության» (հմմտ. Ա Տիմ. Գ 15):

Հարց. – Ինչո՞ւ անշունչ քարից ու փայտից կառուցված տաճարը և հավատացյալների ժողովը նույն անունով են կոչվում:

Պատասխան. – Քանի որ նույն Հոգին ունեն: Դա հայտնի է հետեւյալից. Երբ Պենտեկոստեի օրերը լրացան, երկնքից հանկարծակի մի ձայն հնչեց և լցրեց այն տունը, ուր նստած էին Տիրոջ աշակերտները, ապա երեացին բաժանված լեզուներ, որոնք նստեցին նրանցից յուրաքանչյուրի վրա, և բոլորը լցվեցին Սուրբ Հոգով (տես Գործ Բ 2-4): Ակզբում Վերնատունը լցվեց Հոգով, ապա՝ առաքյալները: Հետևաբար՝ Եկեղեցիները նախ իրենք են ընդունում Աստծու Հոգին, ապա՝ Ավագանի արգանդից Հոգով ծնում Աստծու զավակներ, ովքեր էլ դառնալով Քրիստոսի Մարմնի ան-

դամները՝ կազմում են Եկեղեցին, ըստ Պողոս առաքյալի խոսքի. «Եկեղեցին Հիսուսի Մարմինն է, լրումը Նրա, Ով ամեն ինչ լցնում է ամեն բանի մեջ» (տե՛ս Եփես. Ա 22, 23):

Ինչպես անշունչ փայտից ու քարից պատրաստված տաճարում ամենակարող Աստծու անունն ենք կանչում, Աստծու անունով օծում և Աստծու տուն անվանում, այդպես և հավատացյալները, ովքեր մկրտվում են Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով և օծվում օրհնության յուղով Աստծու անունով կոչվում են քրիստոնյա և Աստծու տաճար: Ինչպես տաճարի օծությամբ զգալի Եկեղեցին ընդունում է Սուրբ Հոգին, այդպես և մարդն է ընդունում Դրոշմի խորհրդով: Եվ ինչպես զգալի Եկեղեցին քահանայի միջոցով իր մեջ ընդունում է Քրիստոսի Մարմինն ու Արյունը, այդպես էլ մարդը՝ ճաշակմամբ: Այդ պատճառով երկուսն էլ կոչվում են Աստծու սուրբ բնակարան և տաճար, քանզի ստուգապես Աստված այդտեղ է բնակվում:

Եկեղեցին Հոգեոր է ու մարմնավոր, ինչպես Եղեմի պարտեզն է Հոգեոր ու մարմնավոր, քանզի այնտեղ Աստված զգալի (մարմնավոր) ծառերի և տունկերի հետ միասին տնկեց նաև իմանալի (Հոգեոր) ծառեր՝ Կենաց և Գիտության ծառերը. Հոգեորը հավատացյալ ժողովուրդն է, իսկ մարմնավորը՝ քարեղեն տաճարը: Եթե տաճարը նյութեղեն չլիներ, ապա մարդու համար բնակավայր չէր լինի, իսկ եթե սրբված և օծված չլիներ՝ Աստված այդտեղ չէր բնակվի, քանզի Աստված սուրբ է, և տաճարը ևս սուրբ պիտի լինի: Այդ պատճառով Եկեղեցին կառուցելուց հետո պետք է սրբել և օծել: Նախ սրբել, որովհետև մարդու հանցանքների պատճառով անիծվցին բոլոր տարրերը՝ Հողը, քարը, փայտը, ջուրը, և այն ամենը, ինչով կառուցվում է Եկեղեցին, ապա օծել, որպեսզի Սուրբ Հոգու շնորհները իջնեն Եկեղեցու վրա, ինչպես Պենտեկոստեի օրը իջան Վերնատան վրա:

Եկեղեցին կոչվում է Աստծու տուն, Տիրոջ տաճար, Սիոնի գուսար, Սուրբ Թագուհի, Մայր, Երկնային Փեսայի Հարս ու Առագաստ, ինչպես նաև Սուրբ Կաթողիկե և Առաքելական: Եկեղեցին Աստծու տուն է կոչվում, քանզի Աստծու Խոսքն այդտեղ բնակվեց ըստ մարգարեռության. «Այս է Հանգստավայրն Իմ Հավիտյանս Հավիտենից, այստեղ պիտի բնակվեմ, քանզի Հավանեցի սա» (Սաղմ. ՑԼՍ 13, 14):

Եկեղեցին Աստծու փառքի տաճար է կոչվում, սակայն այն հրեական տաճարի նման միայն մի տեղում չշինվեց, այլ գերագույն հրաշագործությամբ կամար կազմեց տիեզերքի բոլոր անկյուններում, որտեղ ոչ միայն փառքերի լույսն է երևում, այլև ինքը՝ փառքերի Տերն է Հայտնվում՝ ըստ այս խոսքի. «Աստված Հայտնվում է իր տաճարում» (Սաղմ. ԽԵ 4): Աստծու

տաճար է կոչվում նաև մարդը՝ համաձայն այս խոսքի. «Աստծու տաճար եք դուք, և Աստծու Հոգին է բնակվում ձեր մեջ» (Ա Կորնթ. Գ 16):

Սուրբ Գրքում Եկեղեցին կոչվում է Երկնային Փեսայի սուրբ Հարս (ՄԵՆ Սարկ. Բ 21, Դայտ. ԺԹ 2): Հարսը նախ պետք է անապական լինի, և Եկեղեցին կույս է հոգու և մարմնի սրբությամբ ու անապականությամբ:

Երկրորդ՝ ինչպես փեսայի կողմից միջնորդներ են գնում հարսի մոտ ու պատմում փեսայի մասին, այդպես էլ մարդարեները գնացին հրեաների մոտ ու զանազան օրինակներով պատմեցին Երկնային Փեսայի մասին՝ հայտնելով Աստծու Որդու՝ Երկնքից Երկիր գալու տեղն ու ժամանակը, ապա նաև՝ Նրա կենարար չարչարանքների, խաչի մահվան, հրաշափառ հարության և Երկինք համբարձման մասին: Իսկ Երբ այդ ամենը կատարվեց, առաքյալներն ի լուր ամբողջ աշխարհի պատմեցին կատարվածը՝ ըստ այս խոսքի. «Դու սատր, լսի՞ր ու տե՛ս, մոտեցրո՞ւ ականջը քո, մոռացի՞ր քո ժողովրդին և քո հոր տունը, քանզի Թագավորը ցանկացավ քո գեղեցկությունը» (Սաղմ. ԽԴ 11):

Երրորդ՝ ինչպես հարսը զարդարվում է ու պատրաստվում փեսայի գալստյանը, այդպես էլ հավատացյալներն են զարդարում իրենց Հոգին զանազան առաքինություններով. գլուխը՝ հավատով, հույսով ու սիրով, իսկ անձը՝ խոհեմությամբ, արիությամբ, ողջախոհությամբ ու արդարությամբ, որպեսզի հաճելի լինեն Երկնային Փեսային:

Եկեղեցուն Հարս կոչելով՝ Աստված ցույց է տալիս իր գերազանց սերը հավատացյալների նկատմամբ՝ ըստ այս խոսքի. «Մարդիկ, սիրեցեք ձեր կանանց, ինչպես որ Քրիստոս սիրեց Եկեղեցին և իր անձը մատնեց նրա համար» (Եփես. Ե 25): Դա նաև հայտնում է այն կատարյալ միավորությունը, որ կա Քրիստոսի և Եկեղեցու միջև, քանզի Քրիստոս Եկեղեցու գլուխն է, իսկ Եկեղեցին Նրա Մարմինը:

Քրիստոս կոչվում է Փեսա, քանզի փեսայի նման թողեց իր Հորն ու մորը և գնաց Հարսի ետևից՝ ըստ այս խոսքի. «Տղամարդը թունելով իր Հորն ու մորը՝ պետք է միանա իր կնոջը» (Ծննդ. Բ 24): Դա կատարելու համար մեր Տերը Հոր մոտից իջնելով մարմնացավ սուրբ Կույսից, ապա՝ իր մորը Երկրի վրա թողնելով՝ խաչ բարձրացավ:

Ինչպես Քրիստոս, թողնելով իր Հորն ու մորը, խաչը բարձրացավ Եկեղեցու համար, այդպես էլ ազգերը՝ գերված Քրիստոսի սիրուց, թողնում են իրենց հայրենի տները, նախնիների ավանդույթները և հեթանոսական կուռքերը ու գնում Քրիստոսի ետևից՝ ըստ այս խոսքի. «Ով իր Հորը և կամ մորը Ինձնից ավելի է սիրում, Ինձ արժանի չէ. ով իր որդուն կամ զստերը ինձնից ավելի է սիրում, Ինձ արժանի չէ: Եվ ով իր խաչը չի վերցնում ու իմ ետևից չի գալիս, Ինձ արժանի չէ» (Սատթ. Ժ 37-38):

Ինչպես հարսը նախ նշանվում է, ապա՝ պսակվում, այդպես էլ հավատացյալները, տիեզերակոչ Ավետարանով լուսագարգվելով, նախ սրբվում են Ավագանի մկրտությամբ՝ որպես նշան ստանալով անապական հավատի դաշտանությունը, ըստ Պողոս առաքյալի խոսքի. «Զեզ նշանեցի մի մարդու՝ որպես մի անբիծ կույս Քրիստոսին ներկայացնելու համար» (Բ Կորնթ. ԺԱ 2): Այնուհետև՝ համընդհանուր հարությունից հետո, երբ Փեսան գա Հոր փառքով և վերցնելով իր հավատացյալներին՝ մտնի Լույսի առագաստը, կլինի հարսանիքը և եկեղեցին պսակով կմիավորվի Քրիստոսին:

Պսակի խորհրդով երկուսը մի մարմին են դառնում, ինչպես Աղամն ասաց. «Այժմ սա ոսկոր է իմ ոսկորներից և մարմին՝ իմ մարմնից» (Ծննդ. Բ 23): Մենք էլ մկրտությամբ դառնում ենք ոսկոր Քրիստոսի ոսկորներից, և մարմին նրա Մարմնից, և Սուրբ Հոգով հոգակապվելով՝ միավորվում միմյանց հետ: Հարսանիքը ուրախություն է, և Քրիստոսի գալստյամբ մարդկանց սուգն ու տրտմությունը ուրախության է փոխվելու:

Եկեղեցին կոչվում է նաև Սիոնի դուստր, քանի որ Սիոնից սկզբնավորվեց նրա խորհուրդը: Սակայն եկեղեցին Հին Կտակարանի նման չի օրինագրում, այլ մարդկանց Ավետարանով որդեգրելով՝ Աստծու հետ է միավորում: Եթե Սիոնում կառուցված տաճարն ամրոց էր ու ժողովարան, ապա Քրիստոսի Մարմնով կառուցված տիեզերական եկեղեցին ամուր ապաստան եղավ ազգերին ու ժողովուրդներին:

Եկեղեցին Սուրբ Թագուհի է անվանվում, քանի որ Բանն Աստված այդտեղ թագավորելով՝ իր անապական Արյամբ այն ինչպես ծիրանիով շքեղաշուք զարդարեց, ապա պանծալի խաչը, ինչպես թագազարդ պսակ, դրեց եկեղեցու գլխին և իր աջում կանգնեցրեց, ըստ առաքյալի խոսքի. «Թագուհին կանգնած է Քո աշից՝ զարդարված ու պաճուճված ոսկեհուզով» (Սաղմ. ԽԴ 10): Կամ՝ «Նրա հետ հարություն տվեց մեզ և Նրա հետ նստեցրեց երկնքում Քրիստոս Հիսուսով» (Եփես. Բ 6):

Եկեղեցին Մայր է կոչվում, քանզի բազում հոգեոր զավակներ է ծնում: Ինչպես փեսան է հարսին զավակներով բեղմնավորում, այդպես Քրիստոս դրել է իր վարդապետությունը եկեղեցու մտքի արգանդում, որով Աստծուն հարսնացյալ եկեղեցին, տարբեր ազգերից մեկտեղ գումարելով հավատացյալներին, երկնում ու ծնում է մի ամեռողջ ժողովուրդ, ըստ այս խոսքի. «Սիոնը պիտի մայր կոչվի, որտեղ մարդը ծնվեց, և նրա հիմքերը Բարձրյալն անձամբ գցեց» (Սաղմ. ԶԶ 5): Կամ. «Ուրախացի'ր, ո՛վ ամուլ, որ չձնեցիր, կանչի'ր ու աղաղա'կ բարձրացըրու, որ երկունքի ցալով չբռնվեցիր, քանզի բազում են ամուսնուց լքվածիդ որդիները» (Եսայի ԾԴ 1): Եվ ինչպես մայրը ծննդաբերելուց հետո իր որդիներին սնում է մինչև կատարյալ հասակին հասնելը, այդպես էլ եկեղեցին կերակրում է իր

գավակներին մինչև նրանց Քրիստոսի կատարյալ հասակին հասնելը (տես Եփես. Դ 13):

Հայտնության գրքում եկեղեցին նաև կին է կոչվում. «Երկնքում մեծ նշան երևաց. մի կին՝ արեգակն իր վրա առած, լուսինն իր ոտքերի տակ» (Յայտ. ԺԲ 1): Այդ կինը եկեղեցին է, քանզի Աստծու Դուստրն է, Քրիստոսի Հարսը և բազմազավակ Մայր: Ոտքերի տակի լուսինը խորհրդանշում է Հին օրենքը՝ ստվերական լույսը, իսկ արեգակը, որով զգեստավորվել է, խորհրդանշում է Քրիստոսին:

Փառքերի Հայրն այնքան սիրեց սուրբ եկեղեցուն, որ մինչև իսկ իր Միածին Որդուն տվեց պատարագվելու եկեղեցու սուրբ Խորանում (տես Ղովի. Գ 16): Եվ ասաց Հայրը սուրբ եկեղեցուն. «Մի՞թե կինը կմոռանա իր մանկանը կամ չի գթա իր որովայնի ծնունդներին, և եթե կինը մոռանալու էլ լինի այդ, Ես, սակայն, քեզ չեմ մոռանա: Ահա Իմ ձեռքերի ափերի մեջ գծագրեցի քո պարիսպը, և ամեն ժամ դու Իմ առաջ ես» (Եսայի Խթ 15-16):

Եկեղեցին կոչվում է նաև Կաթողիկե համաժողով, քանի որ Սրբարար Հոգին լուսարար մկրտությամբ՝ Ավագանից երկնեց Աստծուն ժառանգներ և նրանց հնագանդությամբ մի տեղում ժողովեց:

Եկեղեցին նաև Առաքելական ենք անվանում, ըստ հավատի կանոնի, քանզի եկեղեցու մանուկներն առաջալների միջոցով ընդունեցին Կենաց Հոգու հրավերը և գումարվեցին հոգեոր ծառայության՝ դառնալով անդրանիկները երկնային քաղաքի:

Եկեղեցին երկինք է երկրի վրա, որովհետեւ Աստված մարդացավ, Երկնավորը դարձավ երկրավոր, և մենք, որ մի ժամանակ հեռացած էինք Աստծուց, Քրիստոսի Արյան միջոցով դարձանք մերձավորներ: Քանի որ մարդուն Աստծուց մեղքն էր բաժանում, Տերն իր խաչով քանդեց Աստծու և մարդկանց միջև կանգնած միջնորմը, վերացրեց թշնամությունը, մարդուն Աստծու հետ հաշտեցնելով՝ խաղաղություն հաստատեց և մեզ արտոնություն տվեց Աստծուն Հայր կոչել: Եվ Քրիստոս եկեղեցում ծագեցնելով իր Աստվածային Լույսը, այն լցնում է շնորհներով ու լուսավորում եկեղեցու մանուկներին: Իսկ հրեշտակների դասերը, երկնքից իջնելով, անդադար փառաբանությամբ օրհնության երգեր են երգում և մեզ տոնակից լինում, քանզի երկնային Թագավորը եկավ սուրբ եկեղեցի: Հետեաբար՝ մարդն այլևս օտար և պանդուխտ չէ, այլ՝ համաքաղաքացի սրբերին և ընտանի՝ Աստծուն (տես Եփես. Բ 13-22):

ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՐՀՈՒԹՅՈՒՆ

Արդ՝ Եկեղեցու անունը հայտնապես իմանալուց հետո քննենք Սուրբ Գրքի խորհրդական խոսքերը և նրանցում ծովացած իմաստություններից վեր բերենք հավատի մարգարիտը և իմաստի Աստվածային գանձը։ Նախ տեսնենք, թե ինչպես և ինչ պատճառով շինվեց Եկեղեցին։ Պետք է ասել, որ Եկեղեցու խորհուրդը դեռևս աշխարհի լինելուց առաջ կար Աստծու մոտ, ինչպես առաքյալն է ասում. «Այն խորհուրդը, որ ծածկված էր դարերից և սերունդներից, և որ այժմ հայտնվեց իր սրբերին» (Կողոս. Ա 26)։ Նաև Եկեղեցու կարգերը ժամանակավոր չեն, այլ հավիտենական և հոգեսոր։ Դրանք մարդկանցից չեն հնարված, այլ Հոգու հայտնությամբ են տրված։

Եկեղեցին շինվեց Հոր Խոսքով, ժամանակների լրմանը՝ որպես Աստվածության փառքի տեղ և Տիրոջ բանավոր հոտի ապավինության տուն։ Աստծու իմաստությունը ոչ թե նոր տուն շինեց (տես Առակ. Թ 1), այլ սկզբից՝ Աղամի ժամանակից ընկածն ու կործանվածը կառուցեց։ Տերը հավաքեց նրանց, ովքեր ցրվել էին ու օտարացել կորստաքեր ամբարշտությամբ՝ ճանաչել տալով Խորհրդական Երրորդության միասնական ու միադաշտական խոստովանությունը՝ երկրպագելու համար մեծ ու ահավոր Տերությանը։

Այդ պատճառով Դավիթի Որդին, մեր կերպարանքը վերցնելով, դարձավ հայրենի թագավորության ժառանգորդն ու կանգնեցնողը՝ ըստ Գաբրիելի ավետման (տես Ղուկ. Ա 32)։ Քանզի Խոսքը, Ով Հորից որպես Լույս ծագեց, Հայր Աստծու իմաստությունն ու Զորությունն է, Ով անգոյությունից գոյության բերեց արարածներին. Երկինքը և երկնային աննյութական ու անտեսանելի զորքերը, ինչպես նաև նյութական ու տեսանելի աշխարհը, որի վրա Տերը մարդուն թագավոր կարգեց։ Եվ ինչպես երկնային հրեղեններով, ովքեր Աստվածության անմատուցյ Լույսի մոտակա փառաբանիչներն են, ծածկեց խորանը, այդպես էլ վարագույրով Եկեղեցու խորանն են ծածկում քահանայական դասերը, ովքեր սպասավորում են Տիրոջ Մարմնի ու Արյան սոսկալի խորհրդին։

Մարմնացյալ Խոսքն, անցնելով վերին ջրերից և ավելի վեր ելնելով իշխանություններից ու պետություններից, նստում է քերովքեական աթոռնին՝ Հոր աջում, և երկրպագվում Հրեշտակների բյուրավոր զորքերից՝ ըստ այս խոսքի. «Օքննեցե՛ք Նրան, երկինքների՛ երկինքներ և ջրե՛ր, որ վեր եք երկնքից» (Սաղմ. ճԽԸ 4), միաժամանակ պատարագվելով Եկեղեցու քառաթե սեղանին ու օթևանելով հավատացյալների հոգիներում։

Երկնքում երկնային էությունների գնդերը, յոթնապարյան խմբերով, ի փառս համարուն Տերության, երեքսրբյան օրհնություններ են քաղցրանվագ երգում։ Իսկ Եկեղեցում Սուրբ Հոգին, ծավալվելով Ավագանի վրա,

կենդանակերպում է մեր բնությունը՝ երկնելով նորափետուր զարդարված նոր լուսակերպ ծնունդներ, ովքեր երկնայինների նմանությամբ երամներ կազմած, նույնանման օրհնություններ են վերառաքում դեպի բարձունքներ՝ ինքնիշխան Լույսին:

Համառոտ ասենք, որ Եկեղեցին կառուցված է լուսեղեն երկնքի օրինակով, և նրանում ամեն ինչ երկնայինի օրինակն է: Եկեղեցու ամենօրյա լապտերները երկնքի սրբերի մշտնջենալույս պայծառությունն են հայտնում, իսկ անուշահոտ խունկերի բխումը Սուրբ Հոգու անուշահոտության բուրումն է՝ ուղղված մեր հոգիներին: Քահանայապետը, ով բաշխում է ծամարիտ շնորհները, օրինակն է ծամարիտ Քահանայապետի՝ Քրիստոսի, Ումից անմահության Վտակը՝ Սուրբ Հոգին կյանք ու անապականությունն է բաշխում բոլորին: Եկեղեցու պաշտոնյաների դասերը երկնային զանազան դասերին համապատասխան զորություններ ունեն: Իսկ Եկեղեցու տոները Աստծուն տեսնելու հույսի, ուրախության առհավատչյան են: Ուստի պետք է իմանալ, որ արդարեւ՝ երկինքների երկնքի և սրբությունների սրբության երևումն է այստեղ:

Նախկինում Դրախտը Եկեղեցու օրինակն ուներ, սակայն Տիրոջ ոտնաձայները լսվելուն պես այն անապատ դարձավ, քանզի նախաստեղծները չարի միջամտությամբ այդտեղից դուրս վտարվեցին (տե՛ս Ծննդ. Գ 8): Եկեղեցին չարի համար անմատչելի աստվածագործ Դրախտ է, որը Տերը մեզ պարգևեց փոխարեն աստվածատունկ Դրախտի, և Եկեղեցին ավելի պայծառ է, քան Եղեմի պարտեզը: Ինչպես Դրախտը տրվեց կենդանություն ունեցողներին, և մեղքերով մեռածներն այդտեղ չեն մտնում, այդպես էլ Եկեղեցուց գուրս են հանվում ամբարիշտներն ու մեղավորները:

Դրախտում Աստված Կենաց ծառը տնկեց, որից զրկվեցին նախաստեղծները, իսկ Եկեղեցում, փոխանակ Կենաց ծառի, Լույսի Խաչը կանգնեցրեց, որը Աստվածորդու կենսաբեր Արյամբ արմատներ արձակելով ծաղկեց, և բոլոր հավատացյալներին տվեց անմահության Պտուղը՝ Քրիստոսի Մարմինն ու Արյունը:

Դրախտում բարու և չարի գիտության ծառն էր, իսկ Եկեղեցում իսպով ճանաչեցինք ծամարիտ Բարին՝ Աստծուն, և իսույս տվեցինք չարի իսպեպատիր ծառայությունից: Ինչպես և ինքը՝ Փրկիչն ասաց. «Երբ Մարդու Որդուն բարձրացնեք, այն ժամանակ պիտի իմանաք, թե Ես եմ» (Յովի. Ը 28):

Դրախտում կային տերևազարդ ծառեր, որոնց փոխարեն Եկեղեցում առաքյալների ու մարգարեների դասերը դրվեցին՝ զարդարված լուսաբեր իմաստությամբ, ծաղկազարդ առաքինություններով ու մարտիրոսական պսակներով, և նրանք Եղբորդության հավատն են ուսուցանում վայելչածաղիկ վարդապետությամբ:

Դրախտում գետ էր բխում և չորս մասի բաժանվելով՝ ոռոգում փայելչավայր բուրաստանը, իսկ Եկեղեցում ծշմարտության Խոսքը, բխելով Հորից, չորս ավետարաններով քարոզվում է տիեզերքի չորս ծագերում: Դրախտի գետը նաև Եկեղեցու Ավագանի օրինակն է. ինչպես գետերը ոռոգում էին Դրախտը, այդպես էլ Ավագանը նորոգում է Եկեղեցին և պայծառացնում նրա մանուկներին: Եվ ինչպես Աղամն Աստծու պատկերով ստեղծվեց, այդպես էլ քրիստոնյաներս ենք Աստծու պատկերով ծնվում Եկեղեցու Ավագանից՝ դառնալով Աստծու որդիներ:

Ինչպես սերովեն պահպանում է Դրախտը Հրեղեն սրով, այդպես Սուրբ Հոգին հրի նմանությամբ գալով՝ պարսպապատեց Եկեղեցին տերունական Խաչի նշանով, որպեսզի սատանան ներս չմտնի ու ավերածություններ չգործի, ինչպես վարվեց Դրախտում: Որի համար Տերն ասում է. «Աչա Իմ ձեռքերի ափերի մեջ գծադրեցի քո պարիսպը» (Եսայի Խթ 16):

Ինչպես Աղամը Դրախտում պատվիրան ստացավ մշակել և պահպանել պարտեզը, այնպես էլ մենք Եկեղեցում պատվեր ունենք անսխալապես պահել Կենաց Հոգու օրենքը:

Առաջին Աղամի կողից արարվեց կինը՝ Եվան, և տրվեց Աղամին որպես օգնական, իսկ Երկրորդ Աղամի կողից ջուր ու արյուն բխեց, որպեսզի դրանցով կառուցվի Սուրբ Եկեղեցին: Այդ մասին առաքյալն ասում է. «Այս խորհուրդը մեծ է. բայց ես ասում եմ Քրիստոսի և Եկեղեցու վերաբերյալ» (Եփես. Ե 32):

Անգեղջ մեղավորները Դրախտում չմնացին, այլ վտարվեցին դատաստանով ու հանդիմանությամբ, իսկ Եկեղեցին ընդունում է մեղավորներին, ովքեր զղջալով խոստովանում են ու հավատով արդարանում:

Օձը Դրախտ սողոսկեց և իմաստուն Երևաց Եվայի աչքին, սակայն նա Եկեղեցի չի կարող մտնել, քանզի Տիրոջ անեծքով զրկվել է ոտքերից ու թևերից (տես Ծննդ. Գ 14), իսկ Տիրոջ խաչով՝ նաև տեսողությունից: Այնուհետև՝ Եկեղեցու արգանդից ծնվածներին Տերը իշխանություն տվեց ոտնատակ տալու գեերի կամակոր զորությունը:

Եկեղեցու կերպարանքն ուներ նաև Նոյյան տապանը, որը ջրերի ետքաշվելուց հետո թափուր մնաց: Իսկ սուրբ Եկեղեցին քրիստոսաշեն տապան է և աստվածաբնակ խորան, որը գերագույն ու պատվական է իր նախորդից: Արդար Նոյի կառուցած տապանը մարդու համար ապաստարան եղավ Ջրհեղեղից, իսկ Տիրոջ կառուցած Եկեղեցին ապավինության հարկ է մեղավորներիս համար՝ գեհենի հրեղեն հեղեղից: Նոյյան տապանը ներսից ու դրսից ձյութով պատվեց՝ ջրերից պաշտպանվելու համար, իսկ Եկեղեցին ներսից ու դրսից պատված է Սուրբ Հոգու շնորհներով՝ պաշտպանելու մեջ չարի բոլոր զորություններից:

Տապան բազմատեսակ կենդանիներ մտան ու փրկվեցին ջրհեղեղի պատուհասից, սակայն նրանց բարքն ու վարքը չփոխվեց, իսկ Եկեղեցի հավատացյալների բազմությունն է մտնում՝ շնչահեղձ չլինելու մեղքերի ծովում: Եկեղեցին վերցնելով իր մեջ գազանամիտ մարդկանց, ովքեր ժամանակամբ էին զանազան մեղքերով, Սուրբ Հոգու շնորհներով՝ Ավագանի մկրտությամբ և սուրբ Պատարագի խորհրդով, նրանց դարձնում է զգոն ու հանդարտ, լուսատեսիլ ու մաքրափայլ՝ մարդկանց որդիներին դարձնելով Հույսի որդիներ:

Աստված Նոյին հանձնարարեց տապանը եռահարկ կառուցել՝ ներքնահարկով, միջնահարկով և վերնահարկով: Այդ երեք կարգերը նաև Եկեղեցում ենք տեսնում՝ սրբության խորանը, տաճարը և գավիթը:

Տապանի վերնահարկը, ուր թռչունները հավաքվեցին, Աստվածընկալ խորանն է, որը վերին երկնքի օրինակն է, ուր Աստվածությունն է հանգչում: Խորանում է սուրբ Սեղանը, որտեղից Տիրոջ Մարմինն է բաշխվում: Վերնահարկից խոռվաբեր ագռավը թռավ և այլևս չվերադարձավ, քանզի խնդակից եղավ անիրավությանը, իսկ Եկեղեցուց Քրիստոս դուրս հանեց սեացած սատանային և լուսավորեց մեղքերով սեացածներին: Ագռավը ընկղմվեց ջրերում, սատանան՝ մեղավորների հոգիներից դուրս վանվեց, իսկ Եկեղեցում մարդիկ սեաթույր ու դժնագույն մեղքերի խոստովանությունից հետո այլևս իրենց չար գործերին չեն դառնում:

Հնում աղավնին, բերելով ձիթենու շյուղը, տվեց գարնան ավետիսը: Իսկ Եկեղեցում Ավագանից Հոգով ծնվածները երկնքում երամներ են կազմում, ինչպես արարչության օրերին Սուրբ Հոգու՝ ջրերի վրա շրջելուց գոյացած զանազան երփնանկար ու գույնզգույն թռչունները, որոնք լցըցին երկինքը: Աղավնին ձիթենու շյուղ բերեց տապան, քանզի ձեթը նյութն է լույսի, իսկ Եկեղեցում ապաշխարողները թողության հույսով միմիթարվում են և ապաշխարությամբ լուսավորվում:

Տապանի միջնահարկը տաճարի օրինակն է, ուր Նոյը բնակվեց յուրայիններով հանդերձ: Տաճարն իր մաքրությամբ, ձևով ու հարմարությամբ վերին երկնքի հրեշտակների կայանի օրինակն է՝ լի սուրբ բնակիչներով: Մարդիկ նախկինում գիշակեր էին ու գազան, սակայն Ավագանի մկրտությամբ դարձան լուսակեզ, անմեղ ու հանդարտ գառներ, ինչպես եսային է մարդարեացել. «Այն ժամանակ գայլերն ու գառները միասին պիտի արածեն» (Եսայի Կե 25):

Տապանի ներքնահարկը, որը գազանների ու անասունների տեղն էր, գավիթի օրինակն է: Դա երկրի խորհուրդն է, որպեսզի Դրախտից արտաքսված և հոգեոր ու մարմնավոր հիվանդություններով բեռնավորված մարդն այստեղ հանգրվանի: Այսօր գազանաբարո և անասնաբարո մար-

դիկ, մտնելով Եկեղեցի, Աստծու որդիներ են դառնում: Գազանները տապանից դուրս գալուն պես մոռացան համակեցության բարքերը և շարունակեցին վարվել այնպես, ինչպես վարվում էին մինչև տապան մտնելը, իսկ գազանաբարո մարդիկ Եկեղեցի մտնելով մեղմում են իրենց վարքը և դառնում քրիստոնյա:

Նոյյան տապանը կանգնեց Արարատ լեռան վրա և ծածկվեց մարդկանցից, իսկ Եկեղեցին, Հիմնվելով առաքյալների և մարդարեների վրա, օրըստօրե գնում է առաջ և նորոգվում: Տապանի դուռը փակվեց և արգելվեց մարդկանց ներս մտնել, իսկ Եկեղեցու դուռը բաց է ամեն օր՝ գիշեր ու ցերեկ:

Ջրհեղեղից հետո Նոյ նահապետը՝ աշխարհի երկրորդ հայրը, տապանից ելնելով, շինեց սեղան և փրկության ողջակեզ մատուցեց Աստծուն, որի անուշ բույրը հասավ Տիրոջը (տե՛ս Ծննդ. Ը 21): Իսկ կուպաշտության հեղեղը նվազելուց հետո, արարածների Անդրանիկը Եկեղեցում կանգնեցրեց խաչը՝ որպես հաստատուն ու անշարժ արձան, և շինեց սեղան, որի վրա որպես պատարագ մատուցեց մեղքերից ազատող ու աշխարհի մեղքերը վերցնող իր կուսածին Մարմինը: Եվ երկնավոր Հայրը խոնարհվելով հոտոտեց պատարագի անուշահոտությունը:

Նոյի մատուցած պատարագի վրա Աստված ուխտ արեց այլևս չպատուհասել երկիրը՝ մարդկանց չար գործերի պատճառով: Իսկ այս պատարագով հաշտվեցին մեզ հետ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին, և Տերը խաղաղության ուխտ արեց՝ ասելով, որ մեզ հետ է լինելու մինչև աշխարհի վախճանը (տե՛ս Մատթ. Ի Ը 20):

Սուրբ Եկեղեցին հզոր ու բարձր աշտարակ է: Բարեկոնի աշտարակն առանց Աստծու շինվեց, այդ պատճառով էլ անմիջապես կործանվեց (տե՛ս Ծննդ. Ժ 4-8): Իսկ երկրորդ աշտարակը՝ Եկեղեցին, Տերը կառուցեց, ըստ իր խոստման, որ տվեց Պետրոսին. «Ես քեզ ասում եմ, որ դու վեմ ես, և այդ վեմի վրա պիտի շինեմ իմ Եկեղեցին, ու դժոխքի դռներն այն չպիտի հաղթահարեն» (Մատթ. Ժ 18):

Առաջին աշտարակը հպարտների ու սանձարձակների կողմից շինվեց, իսկ երկրորդը՝ Աստծու Խոսքով: Առաջին աշտարակը նահապետների ազգը յոթանասուներկու մասի բաժանեց, իսկ երկրորդ աշտարակով յոթանասուներկու առաքյալներն ամբողջ տիեզերքը հավաքեցին և սուրբ Ավագանով լուսավորեցին: Տերը առաջին աշտարակը կառուցողների լեզուները խառնելով, նրանց չար միաբանությունը խափանեց, իսկ Եկեղեցին կառուցելով՝ ցրված ազգերին հոգեւոր համաձայնության բերեց:

Տերը կործանեց Բարեկոնի աշտարակը, որպեսզի մարդիկ աղետի ժամին դրան չապավինեն, այլ արդարությանը, և իմանան, որ նախնիներին

իրենց անօրինությունների հեղեղը խորտակեց, իսկ նոյին արդարությունը փրկեց։ Բաբելոնյանի փոխարեն Տերը հաստատուն վեմերով ու հեղույսներով առաքելադավան սուրբ Հավատի վրա շինեց իր Մարմինը՝ որպես հզոր աշտարակ, որը ո'չ հողմերը կարող են սասանել, ո'չ հորդառատ անձրևները փլել։ Եվ դեռ ավելին՝ Եկեղեցու խորհուրդը վեր բարձրացնելով՝ հասցրեց երկնային գերագույն կամարին։

Աբրահամի խորանը, որտեղ Տերը միջօրեին տաղավարեց, երկու հրեշտակներով (տես Ծննդ. Ժ 1-15), ևս ունի Եկեղեցու խորհուրդը։ Սակայն այդ խորանը ժամանակվոր էր, իսկ Եկեղեցին հավիտենական է։ Այդ խորանը պանդուխտ էր քանանացիների երկրում, իսկ Եկեղեցին անշարժ հիմքի վրա է։ Այդ խորանում անսառուներ էին զոհաբերում, իսկ Եկեղեցում սուրբ Կույսի ծնած «Երինջը»։ Այնտեղ Աստված ինչպես մի անձանոթ երեաց Աբրահամին, երկու հրեշտակների ուղեկցությամբ, իսկ Եկեղեցի Տերը գալիս է երկնային զորքերով՝ անթիվ ու անհամար գնդերով, ծանոթ ու հարազատ իր հավատացյալներին։

Հին խորանում Աստված Աբրահամին խոստացավ զավակ պարգևել, իսկ Եկեղեցում Քրիստոս՝ օրհնության Զավակը, մեծամեծ պարգևներ է բաշխում Աբրահամի հավատացյալ որդիներին։ Հնում նահապետը հսահակին՝ իր միածին որդուն, ինչպես պատարագ, սիրով տվեց Աստծուն։ Իսկ Եկեղեցում երկնավոր Հայրը, ինչպես կենդանարար Պատարագ, տալիս է իր Միածին Որդուն՝ ծշմարիտ հսահակին, Ով իրեն խոյով չփոխարինեց, ինչպես հսահակի փոխարեն խոյը մորթվեց (տես Ծննդ. Խ 13), այլ Տերն ամենքի փոխարեն մորթվեց, որպեսզի իր մահով կյանք շնորհի ողջերին ու մեռածներին, և վերցնելով աշխարհի մեղքը՝ բոլորին սիրով իրեն միացնի։

Երկրի վրա հաստաված սանդուղքը, որ տեսավ Հակոբը, նույնպես Եկեղեցու օրինակն է, իսկ Հակոբի օծած քարը՝ Եկեղեցու սուրբ Սեղանի (տես Ծննդ. Խ 12, 18)։

Աստվածային հրով պայծառացած անկեզ մորենին (տես Ելք Գ 2), որը տեսավ Մովսեսը, ևս սուրբ Եկեղեցու խորհուրդն է, սակայն Եկեղեցին այնպես ահագնատեսիլ չէ, ինչպես անկեզ մորենին, այլ հեզ ու հանդարտ է տեսքով։

Եկեղեցու օրինակն էր նաև Սինա լեռը (տես Ելք Ժ 16)։ Այդտեղ Տիրոջ փառքը միգախառն ամպով, հրի տեսքով, փողի ու որոտման ձայների ահաբեկող հնչմամբ երեաց։ Իսկ Եկեղեցում Հոր անպարագրելի Խոսքը, Աստվածության փայլատակող ճառագայթը, թաքնվելով մարմնի ամպով և հնչեցնելով կենսաբեր Ավետարանի փողը՝ ամբողջ տիեզերքը հրավիրեց Հորը որդեգրության։

Երբ Մովսեսն իջավ Սինա լեռից՝ ուխտի երկու տախտակները ձեռքին, նրա գեմքը լույս էր ճառագում, Տիրոջ հետ խոսելու պատճառով։ Նրան չէին կարողանում նայել իսրայելի որդիները (տես Ելք ԼՂ 29), իսկ եկեղեցում բաց գեմքով տեսնում ենք Տիրոջ փառքը, ինչպես հայելու մեջ (տեսք Կորնթ. Գ 18)։ Այստեղ Աստվածագիր պատգամը քարեղեն տախտակով տրվեց, Մովսեսի միջոցով, իսկ այստեղ՝ փրկության Ավետարանը՝ ինքնախոսությամբ Աստծու Որդու, լուսավորում է ամեն մարդու, ով գալիս է աշխարհ։ Այստեղ տրվեց մարմնի թլիփատությունը (տես Ծննդ. Ժ 11), իսկ այստեղ՝ սրտի (տես Հռոմ. Բ 29):

Անապատում Աստված Իսրայելի որդիներին ցերեկն առաջնորդում էր ամպի, իսկ գիշերը՝ հրե սյան տեսքով (տես Ելք Ժ 22)։ Երկնքից մանանա էր տալիս ուտելու (տես Ելք Ժ 14,15) և նրանց հետ գնում էր մի վեմ, որից ջուր էր բխում ու հագեցնում նրանց ծարավը (տես Ելք Ժ 6)։ Այդ անապատը նույնպես Եկեղեցու օրինակն է, սակայն սուրբ Եկեղեցին երկնային անկոխ անապատ է ու անմերձենալի զովացնող ամպ, և սրանից ելնող կենդանի ու անմահցնող Կերակուրը կյանք է տալիս ամբողջ աշխարհին։ Եկեղեցուց բխում է Կենդանի Ջուրը, սակայն ոչ վեմից, ինչպես անապատում, այլ Կենարարի կողից, որի խորհուրդը մեկնեց առաքյալը. «Բոլորն էլ նույն հոգեւոր ըմպելիքը խմեցին այն հոգեւոր Վեմից, որ գնում էր նրանց հետ, և այն Վեմը Ինքը՝ Քրիստոս էր» (ԱԿորնթ. Ժ 4)։ Ինքը՝ Կյանքի Աղբյուրը, ձայնում է ասելով. «Եթե մեկը ծարավ է, թող ինձ մոտ գա և խմի» (Յովի. Է 37):

Եկեղեցի կառուցելու սկիզբը գրվեց Սինա անապատում՝ Մովսեսի կանգնեցրած Վկայության խորանով, որն Աստծու տունն էր, պատարագներ ու ընծաներ մատուցելու տեղը և ժողովրդի աղոթատեղին, քանի դեռ Օրենքը չէր փոխարինվել Շնորհով։ Մովսեսը, ըստ Տիրոջ հրամանի, իր կանգնեցրած խորանում դրեց Սրբությունների սրբությունը։ Սակայն դա տեղափոխվող խորան էր, քանզի այն ժամանակ ժողովուրդն այս ու այնտեղ պանդխտանում էր, և Տերն էլ, մխիթարելու համար, նրանց հետ էր պանդըխտանում։ Ինչպես Մովսեսը մի անգամ պատարագ մատուցեց և տվեց Ահարոնին ու նրա որդիներին, այդպես էլ Տերը Վերնատանը մի անգամ պատարագ մատուցեց և տվեց իր առաքյալներին, նրանք էլ՝ Քրիստոսի բոլոր հավատացյալներին, քանզի Քրիստոս մի անգամ խաչվեց։

Քահանայապետը տարին մի անգամ է մտնում սրբություն, և Քրիստոս, իր մարդեղությունից մինչև մյուս անգամ գալուստը, մի անգամ մտավ երկնային սրբություն՝ մեր մեղքերը սրբելով։ Հնում բազում պատարագներ էին մատուցվում, սակայն կատարյալ փրկությունը չէր գտնվում, քանզի այդ պատարագները ընդամենը ձշմարիտ պատարագի

օրինակներն էին: Խորանը ստվերն է, իսկ Եկեղեցին՝ ճշմարտությունն է: Ճշմարտության գալով օրինակը վերացափ, և Քրիստոս, մի անգամ պատարագ մատուցելով, տվեց հավիտենական փրկությունը:

Տապանակն Աստծու պատգամների տեղն է, որն առաքյալը կտակարանների արկղ անվանեց, և դա նույնպես Եկեղեցու խորհուրդն ունի: Տապանակում դրված երկու քարեղեն տախտակների փոխարեն Եկեղեցում Հին և Նոր Կտակարանները դրվեցին: Փոխանակ Տապանակում պահվող ուկյա սափորի, ինչի մեջ պահվում է մանանան, ուկեղեն ու անարատ Հոգին Եկեղեցում ամբարում է Աստվածային ու երկնային խորհուրդները: Իսկ Ահարոնի ծաղկած գավազանը ցույց է տալիս, որ քահանայությունը երկնային է ու հոգեոր (տես ԹՎԵր 8, 10): Ինչպես գավազանը, որ զրկված էր դալարությունից ու մեռած, կրկին գալարեց, ծաղկեց ու պտղաբերեց, այդպես էլ պետք է մեռնել աշխարհի համար, որպեսզի Պողոսի նման ասենք. «Կենդանի եմ այսուհետեւ. բայց ոչ թե ես, այլ իմ մեջ ապրում է Քրիստոս» (Գաղատ. Բ 19,20):

Օրենքը, որ Արնա լեռան վրա տրվեց, դադարեց և իր տեղը զիջեց հոգեոր օրենքներին, որոնք Եկեղեցուց ելան, ըստ մարդարեի խոսքի. «Սիոնից են դուրս գալիս օրենքները, և Տիրոջ խոսքը՝ Երուսաղեմից» (Սիրիա Դ 2): Հին օրենքները քարեղեն տախտակների վրա դրվեցին, իսկ Նոր օրենքը՝ սրտի մարմնեղեն տախտակների: Հին օրենքները ծառայության գիր էին, իսկ նորերը՝ ազատության: Հները միայն մի ազգի տրվեցին, իսկ նորերը՝ ամբողջ տիեզերքին: Հները Մովսեսը բերեց, իսկ նորերը՝ տասներկու առաքյալները:

Եկեղեցում հայտնվեցին բոլոր տնօրինական խորհուրդները, որոնք անհայտ էին սերունդներին ու ազգերին: Եկեղեցին ճշմարտապես սուրբ երկիր է, և Տիրոջ աչքը հարատեւ նրա վրա է:

Եկեղեցու ձև ուներ նաև Սողոմոնի տաճարը, և նրանում ամեն ինչ օրինակն էր Եկեղեցու, սակայն ճշմարիտ Եկեղեցու հայտնվելով այն ավերակ դարձափ: Աստծու հրամանով Մովսեսի կանգնեցրած Վկայության խորանը հայտնում է օրենքների փոփոխելի կարգը, իսկ Սողոմոնի հրաշագեղ տաճարը՝ Եկեղեցու սրբազն ու հաստատուն խորհուրդը: Սակայն նրանցում մատուցված պատարագներով ու առօրյա լվացումներով միայն մարմինն էր մաքրվում, իսկ Եկեղեցում Ավազանի մկրտությամբ մաքրվում են և՝ հոգին, և՝ մարմինը, իսկ պատարագներով խորհրդապես ճաշակում ենք Տիրոջ Մարմինը: Հնում անասունների արյունն էր սրսկում ժողովրդի վրա, իսկ այժմ Տիրոջ սուրբ Արյունը հեղվեց աշխարհի փրկության համար: Հնում զգալի գառները մորթվեցին, իսկ նորում հոգեոր Գառը պատարագվեց աշխարհին կյանք տալու համար:

Առաջինում անասուններն էին որպես պատարագ և զոհ մատուցվում, իսկ երկրորդում Աստծուն հաճելի և սուրբ անձիք իրենք իրենց են ընծայում: Առաջինում քահանայապետի ցուազը պտղաբերեց արքայական կաղին (տես Թօվեր 8), երկրորդում՝ Լույսի Խաչը՝ Քրիստոսին: Առաջինում դատաստանի, ճմարտության և հայտնության տախտակներն էին, երկրորդում՝ արքայության Ավետարանը:

Հնում քահանայապետը զգեստավորվում էր պճեղնավոր պատմուճանով (տես Ելք Ի՛Ը), որի քղանցքներին կարված էին ոսկե զանգակներ, որոնք խորհրդանշում են պայծառ քարոզությունը: Կրում էր նաև պատվական քարերով և ոսկե շղթայով զարդարված խույր և վակաս, իսկ Քրիստոս մեզ զգեստավորեց հավատով, սիրով ու սրբությամբ: Խույրը Սուրբ Հոգու շնորհներն է, իսկ Ահարոնի՝ պճեղնավոր պատմուճանով զգեստավորվելը խորհրդանշում է Քրիստոսի մարմնանալը և մեր չորեքնյութ բնության զարդարվելը շքեղաշուրք արդարությամբ: Զգեստների կապույտ թելով հյուսվածքը խորհրդանշում է երկնային առաքինությունները, կարմիր մանվածքը՝ անապական Արյան կցորդությունը, նրբահյուս բեհեղը՝ Աստվածության խառնվելը մեր բնության հետ, ծիրանին՝ անճառելի տնօրինության ծածկված խորհուրդը: Քահանայապետի լանջապանակի չորս շարքով կարգված տասներկու ակնաքարերը խորհրդանշում են տասներկու առաքյալներին, քանզի նրանք դարձան Քրիստոսի սիրտն ու կամքը:

Վերնատունը, ուր մեր Տերը լվաց իր աշակերտների ոտքերը և բաշխեց իր փրկական Մարմինն ու Արյունը, ունի Եկեղեցու խորհուրդը, քանզի Եկեղեցում է գտնվում Մկրտության ավագանը և այդտեղ է բաշխվում Տիրոջ Մարմինն ու Արյունը: Ինչպես Հարությունից հետո Տերը, փակ գուներով մտնելով Վերնատուն փչեց առաքյալների վրա և նրանց իշխանություն տվեց քահանայապորձելու (տես Յովի. Ի 23), այդպես էլ այսօր՝ Տերը Եկեղեցի մտնելով՝ հավատացյալներին պարզեներ է շնորհում, իսկ քահանաներին իշխանություն տալիս՝ մեղքերը կապելու և արձակելու: Վերնատանը Սուրբ Հոգին հրեղեն լեզուներով առաքյալների վրա իջավ և նրանց մխիթարեց, իսկ այսօր Սուրբ Հոգին Եկեղեցի է իջնում յոթնարփյա շնորհներով և առաքինության հրավիրում յուրաքանչյուրին:

Սուրբ Եկեղեցին, սկզբնավորված լինելով արարածների ստեղծվելուց առաջ Անսկզբի կողմից, Ով սկիզբն ու ամբողջացումն է Եկեղեցու, մեզ համար բյուրապատիկ բարիքների աղբյուր է ու ապավինության վայր, և ոչ միայն այժմ, այլև հանդերձյալ հավիտենականությունում, քանզի նաև հանդերձյալի խորհուրդն ունի:

Եկեղեցու խորանը արևելյան կողմում է, որովհետև արևելքից ենք ակնկալում երկնային Փեսայի գալուստը: Այդպես նաև՝ Եկեղեցին դեմ հանդիման է Դրախտին, որն արևելյան կողմում է, որպեսզի նրա բնակիչ-

ներին ցույց տա իր որդիներին, ովքեր Քրիստոսին խաչակցվելով՝ աջակողմյան ավազակի նման մտնելու են Դրախտ: Եկեղեցին քառակողմ է, ինչը ցույց է տալիս, որ տիեզերքի չորս անկյունները նույն հույսով և մի չոգով Քրիստոսին են միացած և մի Աստծու են ընծայում երկրպագությունը:

Ժամհարը, ով բոլորին հրավիրում է Աստծուն փառաբանելու, խորհրդանշում է Հրեշտակապետի փողի հնչումը, որը պիտի արթնացնի ամբողջ տիեզերքը մահահանգիստ քնից և հրավիրի ընդառաջ գնալ երկնավոր Արքային:

Վարագույրը խորհրդանշում է երկնքի անջրպետը երկինքների երկնքից, ուր Սուրբ Երրորդությունն է բնակվում: Դա նաև այն անջրպետն է, որ կա մեր և անմարմին էությունների միջև:

Տաճարում հավատացյալների ժողովվելը ցույց է տալիս մեր հավասարությունը Հրեշտակների հետ և Քրիստոսի առջև կանգնելը: Եկեղեցու դրսի մասը մեղավորների ժողովատեղն է, ովքեր դրսից տեսնելու են արժանավորների պատիվը: Վառվող լապտերները բացահայտում են իմաստուն կույսերի լուսավոր վարքն ու ողորմածությունը, ինչպես նաև ներկայացնում երկնքի լուսավորվածությունը: Իսկ լույսերի ամենօրյա վառելը ցույց է տալիս արդարների մշտալույս պայծառությունը:

Սուրբ Սեղանը խորհրդանշում է Սուրբ Երրորդության միասնականությունը: Սեղանը պատշաճ կտավներով ծածկելը Աստվածության ծածկված խորհուրդն է հայտնում:

Խորանի աջում և ձախում գտնվող խորհրդանոցները ցույց են տալիս Եկեղեցու սպասքների պատրաստությունը և աղքատներին անպակաս ողորմություն տալը: Խորանի անպակաս լինելը պատարագի մասից նշանակում է, որ Եկեղեցին միշտ ունի Քրիստոսի հաշտարար Մարմինը, որպեսզի չասեն՝ պակասեց կերակուրը ձեր Աստծու տանից: Եկեղեցի մտնելով երկրպագում ենք և խաչի նշանը դրոշմում մեր գեմքին՝ ասելով, որ Խաչյալի երկրպագությամբ և խոստովանությամբ ենք արժանանում մտնել Եկեղեցի:

Այսպիսով Եկեղեցին դուստրն է վերին Սիոնի ու քաղաքն Անմահ Արքայի: Այն երկնայինի օրինակով կառուցվեց երկրի վրա և կանգուն է ինչպես երկնայինների ճշմարիտ նմանություն երկրի բոլոր կողմերի համար: Այն սկիզբ առավ հնի մեջ, նորոգվեց նորում ու կամբողջանա հանդերձյալում: Եկեղեցին դեռ էլի բազում բարիքներ պիտի վայելի մինչև երկնավոր Փեսայի գալուստը, որից հետո Տերը պիտի պսակի իր Հարսին ու լասակարգի վերին զորքերի հետ:

ՏԱՊԱՆԱԿ

ՀԻՇԱՏԱԿ ՀԻԱ ՏԱՐՊԱՆԱԿԻ ԵՒ ՏՈՒ ԱՌՈՒ՝ ԱՌԻՒ ԵԿԵՂԵՑՈՒ

ՆԱՎԱԿԱՏԻՔ ՎԱՐԴԱՎԱՐԻ ՏՈՒԻ

Օրվա երեքսրբյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա' մեզ»: Երեկոյան ժամերգությանը քահանաները զգեստավորված, միաբան, խաչով, Ավետարանով ու բոլոր զարդերով ելնում են ատյան և երգում «Որ ի լերին այլակերպեալ» շարականը:

Զատկից հիսուն օր հետո Մովսեսը ստացավ Օրենքը և Տապանակը կառուցելու հրամանը: Այդ պատճառով առաջին հիսնյակին՝ Զատկից հիսուն օր հետո, Հոգեգալուստն ենք տոնում, իսկ երկրորդ հիսնյակին՝ Հոգեգալուստից հիսուն օր հետո, Տապանակի տոնը: Աստվածաշնչում ասվում է.

«Մովսեսը քառասուն օր, քառասուն գիշեր մնաց լեռան վրա, հայ չկերավ, ջուր չխմեց. Տեր Աստված նրան տվեց իր իսկ ձեռքով գրած քարե երկու տափտակներ» (Բ Օրենք Թ 9-10):

«Բեսելիելը Տապանակը կառուցեց կարծր փայտից. երկուսուկես կանգուն էր դրա երկարությունը, մեկուկես կանգուն՝ լայնությունը, մեկուկես կանգուն՝ բարձրությունը: Այն ներսից ու դրսից պատեց ոսկով, դրա վրա շուրջանակի ոսկե պսակ շինեց: Չորս ոսկե օղակներ ձուլեց դրա չորս կողմերի համար. երկու օղակներ՝ մի կողմից, և երկու օղակներ՝ մյուս կողմից: Դրանք հագցրեց լծակներին: Լծակները շինեց կարծր փայտից և դրանք պատեց ոսկով: Լծակները Տապանակի կողքերից մտցրին օղակների մեջ, որպեսզի դրանցով բարձրացնեն այն: Տապանակի կափարիչը պատրաստեցին մաքուր ոսկուց. երկուսուկես կանգուն էր դրա երկարությունը, մեկուկես կանգուն՝ դրա լայնությունը: Կափարիչի երկու ծայրերի երկու քերովքեները պատրաստեց ոսկուց. կատարյալ մի գործ շինեց դրանք: Մի քերովքեն դրված էր կափարիչի մի ծայրին, իսկ մյուս քերովքեն՝ կափարիչի մյուս ծայրին: Երկու քերովքեները միաձույլ էին կափարիչի երկու ծայրերի հետ: Քերովքեները դեպի վեր էին տարածել իրենց թևերը և իրենց թևերով հովանի էին անում կափարիչի վրա: Կափարիչի վրա քերովքեների դեմքերն իրար դեմ դիմաց էին» (Ելք Լէ 1-9):

Տերը Մովսեսին հրամայեց Տապանակը պատրաստել որպես օրինակ վերին աշխարհի, քանզի նախ վերինը գոյացավ, և ապա՝ նյութականն ու տեսանելին: Տապանակը խորհրդանշում է նաև Քրիստոսի անապական Մարմինը, ինչպես նաև՝ առաջին հայրապետներին, մարդարեներին ու առաքյալներին:

Նախ խոսենք Տապանակի չափերի մասին. Երկուսուկես կանգուն Տապանակի երկարությունն էր, մեկուկես կանգուն՝ լայնությունը, և մեկուկես կանգուն՝ բարձրությունը: Տապանակի չափերը խորհրդանշում են, որ ամեն ընտիր առարկա ունի չափ ու սահման, և նրա չափերի մեջ շփոթություն չկա: Տապանակը բազում խորհուրդներ ունի, սակայն հարմար է նախ հրեշտակների հետ համեմատել այն, քանզի նրանք բնությամբ անապական են ու անմահ:

Տապանակի բոլոր չափերը միասին ստացվում է հինգ ու կես կանգուն: Հինգը նշանակում է, որ հրեշտակները չորս տարրերից չեն արարված, այլ հինգերորդ հություն են՝ անմարմին, անփոփոխ ու անմահ, ինչը հատուկ չէ տարրերից գոյացածներին: Իսկ կեսը նշանակում է, որ Աստծու հետ համեմատած նրանք անկատար են, քանի որ եղական են և ոչ էից գոյանալով եկել են գոյության: Դա նաև նշանակում է, որ բանականների կեսը երկնքում է ստեղծված և կեսն էլ երկրի վրա է բնակվում:

Տապանակի ձեր հաստատուն է և խորանարդածե: Երկարությունը, որը երկուսուկես կանգուն է, խորհրդանշում է հրեշտակների անմահ կյանքը: Նրանք անմահ են և գերազանցում են ժամանակը, սակայն պակաս են, քան հավիտենական Աստված: Նրանք մեր հոգիների նման մշտնջենավոր են՝ ունեն սկիզբ և չունեն վախճան: Գիտությամբ առավել են, քան մարդիկ, ու պակաս՝ քան Աստված: Իսկ լայնությունը խորհրդանշում է, որ նրանք աճում են իմաստությամբ, իրենց հության մեջ:

Տապանակի ներսից ու դրսից ոսկով պատվելը նշանակում է, որ հրեշտակները աստվածատեսակ են ու մաքուր: Ներսից, որովհետև բնությամբ մաքուր են, իսկ դրսից՝ որովհետև օրըստօրե ավելանում է նրանց լուսափայլ իմաստությունը: Ծնոտը (պսակը), որը շրջապատում էր Տապանակը, նրանց իմանալի կերակուրն է խորհրդանշում, քանզի ծնոտը կերակրվելու համար է:

Տապանակի չորս օղերը և երկու լծակները նշանակում են, որ հրեշտակները քառանյութ աշխարհին են խնամածու, Աստծու երկու խնամածու գորությամբ՝ արարչական և արքունական, քանզի նրանք և՛ բարերար են, և՛ պատժող: Տապանակում պահպող տախտակները նշանակում են, որ հրեշտակները բարին են վկայում պատվիրանները պահողների մասին:

Տապանակը նաև սուրբ Աստվածածնին է խորհրդանշում: Նրա կարծր փայտը խորհրդանշում է Աստվածամոր անապական կուսությունը, ներսի ու դրսի ոսկին՝ հոգու և մարմնի մաքրությունը: Ներսի երկու տախտակները խորհրդանշում են հոգու և մարմնի միավորությունը խոսքով: Տապանակում պահպող մանանան Տիրոջ անապական Մարմինն է, գավա-

գանը՝ այն, ինչը բխեց Հեսսեի արմատից, իսկ բուրվառը՝ անուշաւնոտության կրակը:

Դարձյալ՝ Տապանակը մեր Տեր Հիսուս Քրիստոսն է, իսկ անփուտ փայտը՝ Նրա անապական Մարմինը: Ոսկին Աստվածությունն է խորհրդանշում, իսկ կարծը փայտը՝ Տիրոջ Մարմինը, որին մահը չկարողացավ ծամել: Եվ ինչպես Տապանակը կառուցվել էր ոսկուց ու փայտից և ամբողջական էր, այդպես էլ Խոսքը և Նրա անարատ Մարմինը մի Քրիստոս է՝ մի Տեր: Իսկ Տապանակի վրա դրված քավությունը հայտնում է, որ Տերը քավություն եղավ մեզ համար:

Տապանակը քառակուսի ձև ունի և անփուտ է, իսկ աստվածընկալ խաչը քառաթեք է ու անապական, և խաչով եղավ մեր քավությունը:

Դարձյալ՝ Տապանակը սուրբ Եկեղեցին է, որ մեղքերի գիշությունից չի փառում, այլ անապական վարքով ոսկեզարդված է երկու Կոտակարաններով: Իսկ քերովբեները խորհրդանշում են երկնավորների սպասավորությունը Եկեղեցում:

Չորս ոսկե օղակներ ձուլեց դրա չորս կողմերի համար – Չորս կողմերը նշանակում են, որ Քրիստոսի հավատը տարածվեց աշխարհի չորս կողմերում: Երկու լծակները երկու Կոտակարաններն են, ինչպես նաև օրենքներն ու մարդարեսությունները: Չորս քահանաները, ովքեր վերցնում էին Տապանակը՝ չորս ավետարանիչներն են, որ վերցրել էին Քրիստոսի մարդեղության խորհուրդը:

Լծակների ոսկով պատելը անբիծ հավատի խոստովանությունն է Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն՝ բոլոր պատվիրանների պահպանությամբ հանդերձ: Քավության սեղանը, որը Տապանակի վրա էր, խաչն է խորհրդանշում, որով Տերն ամենակատար քավությունը գործեց: Երկու քերովբեներն Աստծու երկու զորություններն են՝ արարչական և արքունական, իսկ մեկմեկու նայելը նշանակում է աշխարհի պատվելն ու պատուհասպելը:

Տապանակում պահպող ոսկյա սափորը՝ լի մանանայով, խորհրդանշում է Աստվածամորը, ով կուսությամբ կրեց երկնքից իշած կենաց Հացը: Այստեղ պահպում է նաև ծաղկած գավաղանը, որը խորհրդանշում է Քրիստոսական քահանայությունը: Երկու տախտակները խորհրդանշում են Հոգին ու մարմինը, որոնց վրա Սուրբ Հոգով գրված են Աստծու պատգամները, որոնցից հինգը մարմնի հինգ զգայարաններն են և հինգը՝ Հոգու զորությունները: Եվ գրված են ոչ թե թանաքով, այլ Հոգու շնորհով, սրտի վրա: Իսկ ոսկյա բուրվառը կանանց մեջ օրհնվածն է՝ Աստվածամայրը՝ լի Սուրբ Հոգով և Բարձրյալի զորությամբ: Ինչպես բուրվառն

իր անուշ հոտով, այդպես էլ Տապանակը խորհրդանշում է Քրիստոսի Մարմնով գալը և Եկեղեցու փառքի երկումը:

Տապանակը հույժ մեծարվեց Աստծու կողմից և բոլորի վրա մեծ ահ էր սփոռում: Քանզի ամպը, որը ցերեկը հովանի էր ժողովրդին, իսկ գիշերը սյունաձեւ բոց էր տալիս ու առաջնորդում նրանց, այնուհետև Տապանակի վրա էր նստում, որը դրված էր Սրբության սրբոցում:

Երբ ժողովուրդը անապատում տեղից տեղ էր գնում, նախ Տապանակն էր վերցվում, և Մովսեսն ասում էր. «Վե՛ր կաց, Տե՛ր, որ ցանուցիր լինեն Քո թշնամիները, փախուստի մատնվեն բոլոր Քեզ ատողները» (Թվեր Ժ 35), իսկ երբ ժողովուրդը իշխանում էր, նախ Տապանակն էր դադար առնում, և Մովսեսն ասում էր. «Տե՛ր, դարձի՛ր դեպի հազարավոր ու բյուրավոր իսրայելացիները» (Թվեր Ժ 36): Այդպես էր ասվում, որպեսզի մենք Քրիստոսի տնտեսությամբ և Եկեղեցու խորհրդով կանգնենք և գնանք: Երբ Տապանակն առջեկց էր գնում, վանում էր թշնամիներին, իսկ երբ դեպի ժողովուրդն էր դառնում, բանակատեղում աճեցնում էր աստվածայինը:

Հարց. – Ինչո՞ւ էր Տապանակը բանակի առջեկց ընթանում, իսկ վեմը՝ ետևից:

Պատասխան. – Տապանակը Քրիստոս էր, և նրանում էին գտնվում Օրենքի տախտակները. Վեմը նույնպես Քրիստոս էր, ըստ առաքյալի խոսքի. «Խմում էին հոգեւոր այն Վեմից, որ գնում էր նրանց հետ և այն Վեմն ինքը՝ Քրիստոս էր» (ԱԿորնթ. Ժ 4): Քանզի Քրիստոս է առաջինն ու վերջինը, այսինքն՝ Սկիզբն ու Վախճանը, և ոչ միայն Աստվածությամբ, այլև մարդկությամբ: Նաև՝ որպեսզի պահպանի առաջին և վերջին թշնամիներից, որը սատանան է և մեղքերը: Դարձյալ՝ որպեսզի առաջնորդի մեր մուտքն ու ելքն աշխարհ:

Տերը նախ Օրենքն է տալիս և ապա՝ ջուրը, նախ հանգըստությունն է տալիս և հետո՝ վայելչությունը, որպեսզի նախ Օրենքը կատարենք և հետո միխիթարվենք, դարձյալ՝ որպեսզի նախ հոգով խմենք և ապա՝ մարմնով: Առաջինները գործերով պիտի արդարանային, որը նշանակում էր Օրենքը, իսկ մենք՝ հավատով, որը խորհրդանշում էր վեմը: Տերը նախ օրինակն է տալիս, ապա՝ ճշմարտությունը:

Տապանակը և նրանում եղող ամեն ինչ խորհրդանշում էր նաև Քրիստոսի առաջին գալուստը, իսկ աղբյուր դարձած վեմը, որը նաև խորհրդանիշն է հավիտենական կյանքի, խորհրդանշում է Տիրող Երկրորդ գալուստը:

Իսրայելացիւների առօհումը Հորդաւանական

Երբ վախճանվեց Մովսեսը, և նրա փոխարեն առաջնորդ ընտրվեց Հեսուն, Տեղը հրամայեց Հեսուին տանել ժողովրդին դեպի Ավետյաց երկիր, որը խոստացել էր Աքարածամին: Եվ որովհետև Մովսեսը խնդրել էր Տիրոջը, որպեսզի հրեշտակի փոխարեն նա գնա իսրայելացիների հետ (որպեսզի հրեաները, Տիրոջը թողնելով, հրեշտակին չպաշտեին), այդ պատճառով էլ Աստված խոստացավ լինել Հեսուի հետ այնպես, ինչպես և Մովսեսի հետ եղավ: Հեսուն ու Քաղերն էին միայն մնացել այն վեց հարյուր հազար հրեաներից, ովքեր ելան եղիպտոսից և սրտի մտոք գնում էին Աստծու հետ, իսկ հանցավորներն այդ քառասուն տարիներում ընկել էին անապատում:

Հեսուն զորավոր էր իր մաքուր անձով և կույս մարմնով: Նա եղիազար քահանայի հետ առաջնորդում էր ժողովրդին և առավել երկյուղով ու պատվով էր վերաբերվում Տապանակին, ինչ պատճառով մոտ երկու հազար կանգուն հեռավորություն էր գոյանում Տապանակի և ժողովրդի միջև (տե՛ս Յեսու Գ 4), որը նշանակում էր, որ դեռևս հեռու էր Քրիստոսի գալստյան խորհուրդը:

Երբ Իսրայելի բանակը եկավ Հորդանանի եզրը և գետանցումից առաջ բանակատեղի գրեց, ժողովուրդը չհամարձակվեց անցնել գետը, մանավանդ հղի կանայք, քանի որ գետն այդ օրերին ջրառատ էր (տե՛ս Յեսու Գ): Դրա համար Հեսուի հրամանով ուխտի Տապանակը կրող քահանաները մտան Հորդանան գետը, և երբ նրանց ոտքերը խրվեցին ջրերի մեջ, վերևից իջնող ջրերը կանգ առան և ներքեւ ջրերից խստ հեռացան, իսկ ցած իջնող ջրերը թափվեցին Մեռյալ ծովը, մինչև որ իսպառ կտրվեցին, և ժողովուրդը կանգնեց երիքովի դիմաց: Տիրոջ ուխտի Տապանակը կրող քահանաները հաստատապես կանգնեցին Հորդանան գետի հունի մեջ, ցամաքի վրա, և բոլոր իսրայելացիներն անցան գետը ցամաքով, քանի որ Հեսուն օրինակն էր Քրիստոսի, իսկ նրա ժողովուրդը՝ նոր ժողովրդի, Տապանակն էլ՝ եկեղեցու, իսկ Հորդանանը՝ կուապաշտության, որը տեղի տվեց Աստծու Որդու հայտնվելով:

Հորդանանը նաև մեր բնությունն է, որը Դրախտից հոսելով գնում էր դեպի անդունդ՝ կործանվելու, և Քրիստոսով այն դարձավ դեպի իր նախկին տեղը: Ինչպես Մատթեոսն ազգաբանությունը վերևից ներքեւ թվարկելով հայտնում է մեր դեպի կործանում գնալը, իսկ Դուկասը ներքեւց վերև թվարկելով՝ ետ դառնալը:

Ջրերը, որոնք բնության օրենքին հակառակ դեպի վեր հոսեցին, օրինակն են նրանց, ովքեր ի Քրիստոս մկրտվեցին և երկինք բարձրացան:

Իսկ ջրերը, որոնք գետի Մեռյալ ծովը հոսեցին, օրինակն են նրանց, ովքեր դարձյալ գետի մեղքերը դարձան:

Տապանակն այդպես մնաց, մինչև ամբողջ ժողովուրդը գետով անցավ, իսկ երբ Տիրոջ ուխտի Տապանակը կրող քահանաները դուրս եկան Հորդանանից և ոտք դրեցին ցամաքի վրա, Հորդանանի ջրերը ետ՝ գետի իրենց տեղը դարձան և հոսեցին իրենց հունով, ինչպես նախորդ օրը: Այդ օրինակով և Եկեղեցին կա ու պիտի մնա, մինչև նոր ժողովրդի անցնելը կյանքի Հորձանուաներով:

Ապա իսրայելացիներն առնելով տասներկու քարեր Հորդանան գետի միջից (տես Յեսու Ղ՝ դրանք իրենց հետ տարան բանակատեղի և դրեցին այնտեղ: Հեսուն ուրիշ տասներկու քարեր դրեց Հորդանանի մեջ, այնտեղ, ուր ոտք էին դրել Տիրոջ ուխտի Տապանակը տանող քահանաները: Քահանաները կանգնած մնացին Հորդանան գետի մեջտեղում, մինչև որ այդ ամենը կատարվեց, և ապա ելան գետից:

Քարերը գետի մեջ դնելն օրինակն է անհավատության մեջ տասներկու ցեղերի խորասույզ լինելուն, իսկ Հորդանանի միջի քարերը դուրս հանելը՝ օրինակն է տասներկու առաքյալների, ովքեր ընտրվեցին իսրայելի սուզված ազգից:

Հեսուն Աստծու հրամանով գետից վերցված տասներկու քարերով սեղան շինեց, և յոթ օր Տապանակով շրջելով երիքովի շուրջը՝ կործանեց քաղաքի պարիսպները, որն օրինակն է Քրիստոսի ձեռքով դժոխքի կործանման:

Տապանակի միջի քարե տախտակները Տիրոջ մատով էին դրված, և Հիսուսի անունն էլ կար այդ Տապանակի վրա՝ ըստ այս խոսքի. «Քո Եղբայրների միջից քո Տեր Աստվածը ինձ նման մարդարե պիտի մեջտեղ հանի, Նրան կլսեք» (Բ Օրենք ԺԸ 15), այդ պատճառով էլ գետը պատկառեց և չթրջեց Տապանակը: Քանզի անունն ու օրինակն առանց էության ու ճշմարտության՝ հոգու և մարմնի, չէին կարող մկրտվել: Անունը ցամաքում պահպեց՝ առանց մկրտության, մինչև անվան Տերը՝ Քրիստոս, մարմին առնի ու հոգի ստանա և մկրտվի Հորդանանում:

Նաև քահանաներից ոչ ոք չթրջվեց, քանզի նրանք որդիները չէին Ավագանի ջրի, այլ թլփատության սրի:

Այդ տեղում Եղիան բաժանեց ջրերը և երկինք վերացավ: Եղիսեն նույնպես այդտեղ բաժանեց գետը, և այդտեղ վկայեց Հովհաննեսը Քրիստոսի մասին: Այդտեղ բացվեց Ավագանի արգանդը, և սրբվեց ջուրն Աստծու մկրտությամբ:

ՈՒԽՏԻ ՏԱՐՊԱՎԱԿԻ ԳԵՐԵՎԱՐՈՒՄ
(Ա ԹԱԳ. Դ-Զ)

Հեղիի ժամանակներում իսրայելացիները պատերազմեցին փղտացիների հետ և պարտվեցին: Տերը հաղթությունը տվեց փղտացիներին, քանզի կարող ու գորավոր է, և նրա հրամանները լսում են և' վերևում, և' ներքեւում: Եվ թագավորների սրտերն Աստծու ձեռքում են: Նա է սեր սերմանում և թույլ տալիս պատերազմները, նրա կամքը շտեմարան է պատերազմի ու խաղաղության: Թագավորը չի կարող նետ արձակել, եթե Տերը չլարի աղեղն ու չտա նրա ձեռքը: Հզոր բազուկը և սուրը չեն կարող հարվածել առանց Տիրոջ հրամանի: Թռչում է նետը, և ճարտար է արձակողը, սակայն դիպչելն Աստծուց է: Նրա կամքն արթնացնում է թագավորներին, և նա է տալիս նրանց քուն:

Իսրայելի որդիները, ովքեր հաղթեցին ամորհացիներին, հաղթվեցին փղտացիներից, որովհետև Տիրոջ աջը զորացրել էր տկար անթիվատներին: Երբ իսրայելի որդիները նեղվեցին, խորհեցին իրենց հետ վերցնել Տապանակը և հույսը դնել Աստծու խորհրդի վրա, որը Տապանակում է: Նրանք ասացին, որ դրանով են զորացել Հեսուն ու իրենց հայրերը, դրա վրա է եղել հույսն իրենց նախնիների: Այդպես ասելով՝ ծերերը մարդ առաքեցին և բերել տվեցին Տապանակը, որպեսզի այն իրենց պահպանի: Եվ Հեղիի որդիները, վերցնելով Տապանակը, Սելովից բերեցին երրայեցիների բանակը: Երբ Տապանակը բանակ մտավ, աղաղակեց ժողովուրդն օրհնության ձայներով ու ալելուիաներով, և փողեր հնչեցրին Աստծու Տապանակի առջև՝ «օվսաննա» գոչելով, և նրանց ձայնն ավելի բարձր հնչեց, քան ծովի ձայնը, ինչպես Տիրոջ՝ Երուսաղեմ մտնելիս աղաղակում էին մանուկներն «օվսաննա» ասելով:

Փղտացիները լսեցին ու զարհուրեցին, երրայեցիների ձայնը սրի պես խրվեց նրանց սիրտը: Նրանք ասացին. «Վայ մեզ», քանզի երրայեցիների Աստված եկել է օգնելու նրանց: Այդ ամենից զարհուրած փղտացիների թագավորը կանչեց խորհրդականներին և նրանց հարցրեց Տապանակի մասին: Նրանք էլ ասացին, որ դա այն Տապանակն է, որն իսրայելի որդիներին հանեց եղիպտոսից՝ հարվածելով եղիպտացիներին և հաղթանակներ տալով երրայեցիներին: Եվ այդպես կարգով պատմեցին թագավորին այն ամենի մասին, ինչ արեց Տերը Եղիպտոսի հետ, ինչպես պահեց հրեաներին անապատում և բնակեցրեց քանանացիների երկրում: Երբ փղտացի իշխանները լսեցին այդ ամենը, խիստ զարհուրեցին Տիրոջ անունից, չնայած որ չէին երկրագում նրան:

Այլազգիների զարհուրելը կանխասումն էր քրիստոնյա թագավորների երկյուղածության, և Տապանակի ահը պատմում էր Քրիստոսի խաչից

երկյուղ ունեցողների մասին։ Այդպիսով՝ խաչի սքանչելիքները և Տապանակի զորությունը հավասարապես համբավվում են ամբողջ տիեզերքում։ Տապանակը գովաբանվում է և՛ իսրայելացիների, և՛ նրանց ասողների կողմից, և Հրեաներից ու Հեթանոսներից վկայվում Հիսուսի խաչի զորությանը։ Տերը երբեք չի թողնում իր Անձն առանց վկայության, և երբեք աշխարհից չեն վերանում նրա սքանչելիքները, որպեսզի աշխարհն իմանա, որ նա է իրենց Թագավորը։ Երկու ազգերն էլ իմացան, որ Տապանակինն է Հաղթությունը, և ամբողջ աշխարհը ճանաչում է, որ խաչը մերժում է Հրեաներին և կանչում Հեթանոսներին։ Երբայեցիների ազգը գիտեր, որ Տիրոջով է փրկությունը, և ամբողջ աշխարհն իմացավ, որ Քրիստոսով է փրկությունը։

Մինչև պատերազմը երբայեցիները համոզված էին, որ Հաղթելու են, իսկ փղշտացիները՝ թե պարտվելու են։ Երկու կողմն էլ չգիտեր Աստծու խորհուրդը։ Պատերազմի մեջ Տերը խորտակեց թլփատված իսրայելացիների աղեղը, քանզի նրանց սիրտը թլփատված չէր։ Աստված չի խնայում իր սրբությունը, և նրա համար ցավալի չէ իր անվան նախատինքը։ Նա մատնում է իր մտերիմներին օտարների ձեռքը և սուրբ կոչվածներին՝ պիղծերի ձեռքը։ Քանդում է այն այգու ցանկապատը, որը հանել էր Եգիպտոսից, և տալիս տղմասեր խոզերին՝ ոտնակոխ անելու։ Նա չի ամաչում, որ իր վրա դնելու են տկարության և պարտության անունը, ինչպես և ասացին նրա մասին. «Թող այդ խաչից իջնի. և Դրան կհապտանք» (Մատթ. Խէ 42):

Դեռ ավելին, Հայրն ամոթի ու մահվան է մատնում նաև քահանաներին, ովքեր վերցրել էին Տապանակը, և Աստծու Որդին նույնպես առաքյալներին հանձնեց նախատինքի, ամոթի ու մահվան, իր խաչի «տկարության» պատճառով։ Հայրն ասաց այլազգիներին, թե՝ Հաղթեցեք իրեն և իր ժողովրդին, ինչպես և Որդին ասաց տկար Հրեաներին, թե Հաղթեք Առյուծի Կորյունին և ամոթով թողեք նրա հավատացյալներին։ Հայրն իր Որդուն, Ում վրա էր իր անունը, պարտության է մատնում իսրայելացիների ձեռքը, իսկ Որդին փախուստի է մատնում առաքյալներին, որոնց վրա կար իր անունը։ Հարար կանչեց Փեսային՝ իրեն փրկելու, և Փեսան գալով իր Անձն ամոթահար արեց ու մահվան մատնեց։ Աղաչեց աղախինը Տիկնոջն օգնել իրեն, իսկ նա իրեն մատնեց պարտության։

Այդպես նաև Կղեռվապան ասաց. «Մենք ակնկալում էինք, թե նա է, որ փրկելու է իսրայելը. սակայն, այս բոլորով Հանդերձ, այս երրորդ օրն է, որ այդ բաները կատարվեցին» (Ղուկ. ԽԴ 21)։ Տերը տկար ազգերին թույլ տվեց, որ Հաղթեն առյուծներին, ինչը խորհրդանշում էր Տիրոջ ձերբակալվելը, Պետրոսի սուրբ հանելն ու Մաղքոսի ականջը կտրելը (տես Յովհ. ԺԸ 10):

Պատրաստ էր Տերն առաքելու իր Ավետարանը հեթանոսների տունը, այդ պատճառով էլ նախապես առաքեց իր Տապանակը՝ իր կարապետին:

Տապանակը բազում խորհուրդներ ունի, և Ավետարանը լցված է բազում իմաստություններով: Այն ամենը, որ եղավ Եգիպտոսում, փղշտացիների մեջ և Բաբելոնում, նման են իրար, քանզի աշխարհի երեսին, ծովերում, հնոցում, առյուծների մեջ և փղշտացիների դաշտերում քարոզվեց Աստծու զորությունը, որովհետև տարածվելու էր խաչի լուրն ամբողջ տիեզերքում՝ մեծամեծ սքանչելիքներով: Փղշտացիները, լսելով Եգիպտոսի Հարվածների մասին, տեսան, որ նույն պատուհասը եկել է իրենց երկիրը: Աստված թույլ տվեց Տապանակին գնալու փղշտացիների մոտ, որոնց սրտերը խստացած ու ամրացված էին իրենց չաստվածների վրա, և նրանք չէին հավատում, թե կա Աստված և սքանչելիքներ է գործում:

Տերն այնպես արեց, որ օտարները սկսեն ավելի շատ պատմել իր մասին, քան մտերիմները, ինչպես կենսատու Ավետարանի խորհուրդը պատմվեց ամբողջ տիեզերքում: Ինչպես Հայրն անարդանք չհամարեց իր պնակիտները տալ փղշտացիների ձեռքը, այդպես էլ Որդին ծաղը ու նախատինք չհամարեց Ավետարանը տալ բոլոր ազգերին: Լսել էին փղշտացիները, թե Սիոնում Աստված կա, և այժմ իրենց աչքերով տեսան Նրա գործերն ու հավատացին: Լսել էին ազգերը, որ Աստված կա հսրայելի մեջ, և այսօր ճաշակում են Նրա Մարմինը:

Եթե Հայրը Տապանակը չտար փղշտացիներին, ապա Ավետարանի խորհուրդը չէր հայտնվի հեթանոսներին: Հայրն իր Անձը տկարացրեց և դրանով գրավեց նրանց ու թագավորեց նրանց վրա: Ուր կար զենք ու սուր, նա ելավ տկարությամբ, որպեսզի հայտնի, որ սրով և աղեղով չէ հաղթությունը, և նրա Միածինն աշխարհը չի փրկելու զենքով ու պատերազմելով, այլ խաչի տկարությամբ: Քանի որ քահանաներն արժանապես չպահեցին նրա սրահը սրբությամբ և իրեն մաքրությամբ չէին սպասավորում, նա թողեց նրանց ու հեռացավ նրանցից: Հպարտացել էին հրեաները, թե իրենք են միայն պատվում Տիրոջը, և Տերը նրանց ցույց տվեց, թե որքան առավել են իրեն պատվում այլազգիները: Որքան էլ ամուր լինի նավը, տգետ նախապետն այն կկործանի: Տապանակը հաղթող էր, սակայն հարբեցող էին քահանաները, այդ պատճառով էլ կերակուր դարձան թռչունների ու գագանների համար և կորցրեցին Տապանակը:

Երբ Հեսուն էր վերցրել Տապանակը, կործանվում էին քաղաքներն ու թագավորությունները, իսկ երբ այն վերցրեցին Հեղիի որդիները՝ որկրամոլ Օփնին ու Փենեհեսը, կործանեցին հսրայելը և իրենց անձերը, իսկ Տապանակը գերի տարվեց: Տապանակի վերցվելը Հեղիի որդիների կողմից

նշանակում է Աղամի ելնելը՝ Դրախտից, ինչպես նաև Հիսուսի փախուստը Եգիպտոս կամ էլ Քրիստոսի աշխարհ գալը:

Ոչ թե Տապանակի զորությունը տկարացավ, այլ քահանաներն էին տկար, ովքեր վերցրել էին այն: Ագաճ Օփնին նման չէր Հեսուսին, և ոչ էլ Փենեհեսն՝ արդար Քաղերին: Երբ մաքուրն է Տապանակը վերցնում, այն սրբում է նրան և նրանով սրբվում, իսկ երբ ագահն է վերցնում, այն ամոթահար է անում վերցնողին և ինքն ամոթահար լինում: Այդպես և Որդու քահանայությունն առան և՛ արժանիները, և՛ անարժանները, սակայն քահանայության շնորհը դրանից չպղծվեց: Վերցրել էր Գեեզին Եղիսեեի գավազանը, որը լի էր զորությամբ, բայց քանի որ վերցնողն անհավատ էր, չգործեց գավազանի զորությունը: Այդպիսին է Տապանակն ագահների համար, այդպիսին են Որդու բոլոր խորհուրդները՝ հավատով և գործերով տկարացածների համար:

Տկար բազուկն աղեղին ոչինչ չի կարող անել, ինչպես նաև հիվանդի ձեռքը՝ պողպատե սրին: Հոգու շնորհներն անարժան քահանաների վրա չեն ներգործում. քահանաների թուլությունը թուլացնում է Տապանակի ուժը և Տապանակը մատնում գերության: Տերը համարեց, որ ավելի լավ է Տապանակը գերվի ու անարգվի, և քահանաները սպանվեն, քան պատվով կենդանի մնան ու սպասավորեն իրեն: Հեղիի որդիները, ովքեր վերցրեցին Տապանակը և դրանով իրենց անձերը կործանեցին, խորհրդանշում են Աննային ու Կայիշափային, ովքեր պղծեցին Մովսեսի օրենքը և զրկվեցին քահանայությունից:

Ննջեց Տապանակում զորությունը, այն որ չէր ննջում ի սկզբանե, և պիղծերը Տապանակը տարան ու դրեցին իրենց կռատանը՝ Դագոնի տաճարում: Դագոնն ու Հերովդեսը նման են միմյանց իրենց սնոտիությամբ ու տկարությամբ: Եվ ինչպես Հայրը լոեց Դագոնի առաջ, այդպես էլ Որդին՝ Հերովդեսի: Ինչպես թագավորի ձեռագիրը թագավորի անձի փոխարեն է, այդպես էլ աստվածային պնակիտներն Աստծու փոխարեն էին: Նաև Տապանակն էր Աստծու փոխարեն և սոսկ փայտ չէր: Վկա են փղշտացիները, ովքեր ասացին. «Նրանց աստվածները եկել են բանակատեղի: Վա՛յ մեզ» (Ա Թագ. Դ 7): Անօրենների վկայությունը խոտան չէ, եթե տեղին է, այդպես և հրեաները վկայեցին Հիսուսի մասին՝ ասելով, որ իրեն Աստծու Որդի է անվանում:

Հոր համար նախատինք չեղավ Դագոնի տուն մտնելը, ինչպես և Որդու համար էլ նախատինք չեղավ Հերովդեսի մոտ տարվելը: Տապանակը կործանեց Դագոնին, իսկ Տերը՝ Հերովդեսի թագավորությունը: Փղշտացիները պատվելու համար մտցրեցին Տապանակը Դագոնի տունը, ինչպես նաբուքողնոսորը տաճարի սպասքները մտցրեց իր գանձատունը:

Վկայեցին փղտացիները, որ Աստված եկել է իրենց մոտ, և վկայեց Նաբուքողոնոսորը, որ սպասքներն Աստծունն են:

Վկայեցին հրեաները, որ Աստծուն Որդուն դրեցին գերեզմանի մեջ՝ կարգելով նրա վրա պահապաններ, քանի որ, եթե նրան մեռած գիտեին, ապա ինչո՞ւ էր պետք պահապանը: Փղտացիները հիշեցին Աստծու գործերը եղիպատոսում, իսկ հրեաները Որդու մասին ասացին. «Հիշեցինք, թե այն Մոլորեցնողը, քանի կենդանի էր, ասում էր, թե՝ երեք օրից հարություն պիտի առնեմ» (Սատթ. ԻՇ 63): Քանզի ինչպես Հայրը կործանեց փարավոնին իր զորքերով, այդպես էլ Որդին՝ հրեաների թագավորությունը: Սակայն Որդին Հորից բաժանված չէ: Որդով կործանվեց փարավոնը, նրանով ցավեցին փղտացիների փորերը, Որդով վերցվեց հրեաների թագավորությունն ու քահանայությունը և Տապանակով կործանվեց հրեաների քահանայությունը: Հեղիի ողնաշարի ջարդվելը և Օփնիի ու Փենեհեսի մահը կանխապես հայտնեցին հսրայելի թագավորության ու քահանայության անկումը: Եվ Փենեհեսի կինը (տեսԱ Թագ. Դ 19-22), ով այդ օրը ցավով ծննդաբերեց, խորհրդանշում է տաճարի վիշտը: Նորածինը Քաբոթ կոչվեց, որը թարգմանվում է «վա՛յ», այսինքն՝ «հսրայելի փառքը վերացավ»: Ծնված մանուկը քահանա չեղավ և ոչ էլ քահանայի հայր, այլ քահանայությունը տրվեց Սամվելին, ով նրանց ազգից չէր, նույնպես և քահանաներ չեղան Աննայի ու Կայիհափայի սերունդները, այլ քահանայությունը տրվեց հեթանոս ազգերին: Եվ Հեղիի տունը մնաց ավերակ, իսկ տաճարը՝ Աստծու շնորհից ու բնակչից թափուր:

Այլազգիները Տապանակը տարան Ազոտոս և դրեցին իրենց Դագոն չաստծու առջև, քանզի այն իրենց Դագոնի նման կարծեցին: Դագոն թարգմանվում է մուկ: Իսկ զորությունը, որ Տապանակում էր, Դագոնին քաշելով բերեց գուան սեմի մոտ և այնտեղ ջարդեց, որպեսզի սատանան ճանաչի Տիրոջ զորությունը: Դագոնի քրմերը կրկին կանգնեցրին արձանը և հաջորդ օրը գալով՝ տեսան այն դարձյալ ընկած և գլուխը, երկու սրունքներն ու դաստակները պոկված: Դագոնը սատանայի օրինակն էր: Ինչպես եթե մեկը բռնի չար գազանին, նրա ճիրաններն ու ժանիքները պոկի, ապա գազանն այլևս ոչ մեկին չի կարող վնասել, այդպես էլ Տերը վարվեց սատանայի հետ, թողնելով միայն նրա ողնաշարը: Դագոնի ողնաշարը մնաց, որպեսզի չասեն, թե դա Դագոնը չէ, կամ թե այն գողացել են, կամ էլ՝ այն թռել է ու գնացել: Եվ սատանայի ողնաշարն են կազմում բոլոր անդարձ հերետիկոսները:

Դագոնի կործանումից այլազգիներն իմացան, որ մեծ է երայեցիների Աստվածը, քան իրենցը, և Տիրոջ Եղիպատոս մտնելով իմացան Եղիպատացիները, որ մեծ Աստվածն է եկել իրենց մոտ և կործանել իրենց տկար

չաստվածներին: Այս դեք, որը բնակվում էր Դագոնի արձանում և ուժ պաշտում էին փղտացիները, փախչում է Տապանակի զորությունից, և նրա փախչելով ընկնում է նրա բնակավայրը՝ արձանը, ու խորտակվում: Քրմերը, երբ տեսան կատարվածը, լաց եղան, և որպեսզի ամբոխը ոչինչ չիմանա, ծածուկ վերանորոգեցին արձանը և իր տեղում կանգնեցրին: Իսկ մյուս անգամ գտան Դագոնին ամբողջովին ջարդված՝ Տապանակի փառքի փայլատակումից: Դա օրինակն է հեթանոս թագավորների, ովքեր առաքյալների քարոզությանը հակառակվելով՝ ջանք էին թափում ամրացնել իրենց պաշտելիքները զոհերով, սպանալիքներով ու սպանությամբ, մինչև որ ամբողջովին կործանվեցին Ավետարանով:

Մտավ Տապանակն օտարների երկիրը, և մեր Տերը, Հոգին ավանդելով, մտավ մեռելների երկիրը՝ դժոխք: Տապանակը քանդեց Դագոնի բագինը, իսկ մեր Տերը կործանեց դժոխքը: Կամավոր մտավ Տապանակը փղտացիների մեջ, իսկ մեր Տերը կամավոր դնաց գերեզման: Գիշերը կործանվեց Դագոնը, և Տերը գիշերն ավերեց դժոխքն ու ելավ գերեզմանից: Դագոնը կարծեց, թե ինքն է գերել Տապանակը, մինչև որ Տերն սպանեց իր գերողին: Կարծում էր մահը, թե ինքը տարավ մեր Տիրոջը գերեզման ու դժոխք, մինչև որ ելավ Տերը դժոխքից՝ նրա գերիներով, և մարմնով՝ գերեզմանից, սպանեց մահվան զորությունը և ոչնչացրեց դժոխքի խայթոցը:

Քահանաների մեղքերը թափվեցին փղտացիների վրա, իսկ Աղամի մեղքերը լցվեցին դժոխք: Բայց մեծ են քահանաների մեղքերն Աստծու առաջ, քան աշխարհականների, քանզի քահանաների պատճառով Տապանակը գերության մատնվեց, և քահանաների չարությունը դատեց Տիրոջը մեռնել խաչի վրա, որպեսզի չպակասի իրենց պատիվը, և նվերները՝ ժողովրդից: Մեղադրելի չէ Աստված, քանզի նախապես Սամվելի ձեռքով հայտնեց Հեղիի տան մեղքերը: Այդպես բազում նշաններով հայտնեց Աստված քահանաներին իրենց մեղքերը և մեղադրական խոսքերով հանդիմանեց նրանց, սակայն նրանք չզգուշացացան:

Տապանակը Հեսուի ձեռքում քանդեց երիքովի պարիսպները, սակայն Օփնիի ու Փենեհեսի ձեռքում արհամարհվեց անթլիատների կողմից: Ինչպես և Տերը, Ով ծովերը ստեղծեց, քահանաների չար նախանձի պատճառով թուք ընդունեց իր երեսին:

Անձամբ ու բնությամբ միավորված է Բանը մարմնի հետ, այդ պատճառով աշխարհը պարտվեց, ետ դարձավ իր մոլորություններից ու դարձավ Քրիստոսի սեփական ժողովուրդը, քանզի սպանվեց անիրավությամբ տիրակալող իշխանը:

Տապանակը խավարեցրեց փղտացիների սրտերը, իսկ մեր Տերը արեգակը խավարեցրեց իր մահվան օրը: Սարսեցին փղտացիները Տապանակի

երեսից առավել, քան հրեաներն Աստծու Որդու դեմքի փառքից: Եգիպտացիները կարծում էին, թե սքանչելիքները, որ կատարվում էին Եգիպտոսում, Մովսեսն էր անում, իսկ փղշտացիների մոտ չկային Մովսեսն ու Ահարոնը, և ոչ մի սպասավոր, քանզի քաշանաներին սպանեցին, սարկավագներին կոտորեցին, և Տապանակը մնաց առանց սպասավորի: Հայտնի է, որ Աստված երբ կամենում է, գործակցի կարիք չի ունենում, և առանց գործակցի այլազգիներին զանազան ցավերով հարվածեց: Կամեցան այլազգիները թաքցնել Տապանակը, սակայն չկարողացան ծածկել նրա գորությունը: Կամեցան և հրեաները թաքցնել կենսակիր Խաչը (և թաքցրին երեք հարյուր տարի), սակայն չկարողացան պաշել նրա փառքը, քանզի խաչը, թաքցված լինելով հանդերձ, սաստիկ հարվածեց նրանց և տիրասպան ազգին ցրեց ողջ աշխարհով մեկ:

Հովսեփը եղբայրների կողմից վաճառվեց ծառայության, և դա եղավ նրա թագավորության սկիզբը: Տապանակը գերվեց այլազգիների կողմից, և դա եղավ նրա փառքի պատճառը: Սպանվեց մեր Տերը՝ ծախվելով Հուդայից, և դա եղավ պատճառ, որպեսզի Երրորդության փառքը տարածվի ողջ տիեզերքում:

Հովսեփին վաճառելիս, Տապանակը գերելիս և մեր Տիրոջը մատնելիս ննջած և լուռ էր ամենակարող Աջը: Իսկ Հովսեփի թագավորելիս, Տապանակի գերությունից դառնալիս և Քրիստոսի՝ մեռելներից հարություն առնելիս արթնացավ Տերը քնից և արթնացրեց իր գորությունը, հայտնելով, որ Նա երբեք չի ննջել, այլ մարդիկ են ննջում տգիտությամբ՝ չիմանալով Աստծու դատաստանի խորությունները: Արթնանում է ոչ թե Աստված, այլ մարդիկ՝ իրենց տգիտության թմրությունից և Աստծու գործերից ճանաչում խորհուրդը:

Երբ քաղաքի բնակիչները լսում են Տապանակի գերության լուրը, աղաղակում են, որը խորհրդանշում է Տիրոջ աղաղակելը խաչի վրա: Իսկ Հեղիի ողնաշարի կոտրվելը (տես Ա Թագ. Դ 18) խորհրդանշում է Տիրոջ ձայնից վեմերի պատռվելը և վարագույրի կիսվելը:

Տևական Վերադարձը (Ա Թագ. Զ)

Տիրոջ Տապանակը յոթ ամիս մնաց այլազգիների երկրում: Նրանց երկրում Տերը բազմացրեց մկներին, որոնք սկսեցին վխատալ այնտեղ: Այլազգիներն իրենց քրմերին, գուշակներին և կախարդներին կանչեցին ու ասացին. «Ի՞նչ անենք Տիրոջ Տապանակը, մեզ խորհուրդ տվե՞ք, թե ինչպե՞ս այն իր տեղն ուղարկենք»: Նրանք ասացին. «Եթե իսրայելի Տեր Աստծու ուխտի Տապանակն ուղարկեք, այն դատարկ մի՛ ուղարկեք, այլ անպատճառ պատռհասի վերացման զոհաբերություն արե՛ք նրան: Այն ժամանակ

կրուժվեք, Տերը կների ձեզ, և գուցե թե Նրա պատժող ձեռքը վերանա ձեզանից: Այլազգիների իշխանների թվի համեմատ հետույքի ոսկե հինգ քանդակներ կերտեցե՛ք և ոսկե հինգ մկներ ձուլեցե՛ք, քանզի նույն այդ հարվածներն են իշել ձեզ, ձեր իշխանների ու ձեր ժողովրդի վրա: Արդ՝ կերտեցե՛ք ձեր հետույքների քանդակները, ձեր երկիրն ապականող մկների արձանիկները և փառավորեցե՛ք Տիրոջը, որ Նա վերացնի Իր ձեռքը ձեր, ձեր աստվածների ու ձեր երկրի վրայից: Արդ՝ տախտակ վերցրե՛ք և մի նոր սայլ պատրաստեցե՛ք: Բերե՛ք անդրանկածին երկու երինջ, որոնք դեռ ձագ չեն բերել: Երինջները սայլին լծեցե՛ք, իսկ ետևից եկող հորթերին գոմում փակեցե՛ք: Վերցրե՛ք Տիրոջ Տապանակը և այն դրե՛ք սայլի վրա, իսկ պատուհասի վերացման համար մատուցվող ոսկե ընծանները դրե՛ք քուրձե տոպրակի մեջ, դրա կողքին: Հրեցե՛ք սայլը և թողե՛ք, որ գնա: Հետևեցե՛ք և տեսե՛ք. եթե դեպի իր սահմանը՝ Բեթսամյուս է գնում, ուրեմն մեզ մեծամեծ չարիքներով պատժողը Տերն է, իսկ եթե՝ ոչ, իմացե՛ք, որ Տիրոջ ձեռքը չէ, որ մեզ պատուհասել է, այլ եղած պատիժները պատահական են»:

Այլազգիներն այդպես էլ արեցին, և երինջներն ուղիղ Բեթսամյուսի ճանապարհը բռնեցին. Նրանք ջանում էին առանց աջ ու ձախ խոտորվելու մի շավիղով գնալ: Այլազգիների իշխանները մինչև Բեթսամյուսի սահմանը գնում էին նրանց ետևից: Բեթսամյուսի բնակիչները հովիտներում ցորեն էին հնածում: Նրանք, իրենց հայացքը բարձրացնելով, տեսան Տիրոջ ուխտի Տապանակը և նրա համար ուրախացան: Սայլը մտավ բեթսամյուսի Օսեի դաշտը: Այնտեղ՝ սայլի կանգնած տեղում, մի մեծ քար կանգնեցրին, սայլի փայտերը կոտրեցին, իսկ երինջները Տիրոջը ողջակեզ մատուցեցին: Դետացիները վերցրին Տիրոջ ուխտի Տապանակը, քուրձե տոպրակն ու դրա միջի ոսկե քանդակները և դրեցին մեծ քարի վրա: Բեթսամյուսիցիներն այդ օրը ողջակեզներ ու զոհեր մատուցեցին Տիրոջը: Այլազգիների հինգ իշխաններն այս բանը տեսնելուց հետո նույն օրը վերադարձան Ակկարոն:

Հեքոնեի որդիները, սակայն, բեթսամյուսիցիների նման չուրախացան, որ տեսել են Տիրոջ ուխտի Տապանակը: Տերը նրանցից հիսուն հազար յոթանասուն մարդ կոտորեց: Ժողովուրդը սպի մեջ էր, քանզի Տերը ժողովրդին մեծամեծ հարվածներ էր հասցրել:

Բեթսամյուսիցի մարդիկ Կարիաթարիմի բնակիչների մոտ պատգամավորներ ուղարկեցին, որ նրանց ասեն. «Այլազգիները վերադարձրին Տիրոջ ուխտի Տապանակը, եկե՛ք և այն ձեզ մոտ տարե՛ք»: Կարիաթարիմցիները եկան, այնտեղից հանեցին Տիրոջ ուխտի Տապանակը և այն տարան Ամինադարի տունը: Նրա որդի Եղիազարին սրբագործեցին, որ պահպանի Տիրոջ ուխտի Տապանակը:

Այլազգիների կողմից Տապանակի գերեվարելը օրինակն է Ադամի՝ Դրախտից ելնելու, իսկ Տապանակի դարձը՝ Տիրոջ գթությամբ Ադամի ետ դառնալու։ Տապանակի գնալը փղտացիների մոտ օրինակն է Տիրոջ եգիպտոս փախչելու, իսկ Տապանակի դարձը մեր բնության դարձն է, և Տիրոջ գերադարձն Խրայելի երկիր, ինչպես նաև հեթանոսների ընթացքը Քրիստոսի հավատով, ովքեր թողեցին իրենց որդիներին ու ծնողներին, վերցրեցին խաչը՝ Քրիստոսի տնօրինության խորհուրդը, փոխանակ սայլի ու Տապանակի։ Ինչպես ոչ ոք չի կարող բացել Տիրոջ Տապանակում ծածկված խորհուրդները, նույնպես և ոչ ոք չի կարող մտքով իմանալ Աստծու խորհուրդները և ոչ էլ լեզվով ճառել։

Երբ հնագողները տեսնում են Տապանակը, ցնծում են, ինչպես առաքյալները ցնծացին, երբ տեսան Քրիստոսին հարություն առած և դժոխքն՝ ավերած։ Խրայելի որդիները երինջներին ողջակեզ են անում սայլի փայտերով, ինչը Քրիստոսի պատարագվելու օրինակն է խաչի վրա։ Անդրանկածին երկու երինջները, որոնք բերեցին Տիրոջ Տապանակը, խորհրդանշում են առաքյալներին, որոնց Տերը երկու-երկու ուղարկեց քարոզության, ովքեր կրում էին սուրբ Եկեղեցու խորհուրդները։ Բեթամամյուսի դաշտը հեթանոսների աշխարհն է խորհրդանշում, ուր դրվեցին հիմքերը Նոր Սիոնի, Աստծու փառքի համար։

Սայլի փայտերը, որի վրա բարձված էր Տապանակը, Տիրոջ խաչափայտի մասին է քարոզում, որը կրելով իր վրա բերում է Տիրոջ խորհուրդը։ Տապանակի հետ ուղարկված պարկը քրիստոնեական կրոնի վարքն է ստվերապես հայտնում, իսկ պարկի մեջ դրված մկների արձանիկներն ու այլազգի իշխանների հետույքների ուկյա քանդակները ցույց են տալիս հեթանոս ապականիչներին, ովքեր հեռանալով իրենց պղծությունից ուկետեսակ առաքինությամբ հաճոյացան Տիրոջը, կուսությամբ ու ողջախոհությամբ իրենց անձերը նվիրելով Արարչին։

Երինջները նաև քահանաների օրինակն են, որովհետև նրանք ծնում են երկիրը վարող եղներ։ Դարձյալ՝ երկու երինջները երկու Կտակարաններն են, որոնք կրում են Եկեղեցու խորհուրդը և միշտ ընծայվում են ու ընծայում Աստծու որդիներին։

ՈՒԽՏԻ ՏԱՐՊԱԿԱԾ ԵՐՈՒԱԶՈՒՄՈՒՄ

Տապանակը մնում է Ամինադարի տանը, մինչև որ Դավիթը, ով Տիրոջ չնորհ, էր գտել ցանկացավ Հակոբի Աստծու համար բնակատեղի գտնել (տես Սաղմ. 61Ս)։ Դավիթը՝ Տիրոջ հայրն ըստ մարմնի, ժառանգում է Տապանակը և այն ուրախությամբ տանում երուսաղեմ, որը խորհրդա-

նշում է Տիրոջ կողմից սուրբ Եկեղեցին ժառանգելը, ինչը Նրա ցանկալի բաժինն էր, և տանելն իր Հոր գավառը՝ Վերին Երուսաղեմ:

Երբ Տապանակը բերեցին Ամինադաբի կալը, Օզան, ով քշում էր Տապանակը տանող սայլը, իր ձեռքը գցեց Աստծու Տապանակին, որ այն բռնի, որովհետև լծկան զվարակն այն շարժել էր իր տեղից: Տերը բարկացավ Օզայի վրա նրա հանդգնության պատճառով ու հարվածեց նրան, և նա տեղնուտեղը մեռավ Տիրոջ Տապանակի մոտ՝ Աստծու առջև: Դավիթը տրտմեց, որ Տերը մահացու հարվածեց Օզային նրա մեծ հանդգնության պատճառով, և Տապանակը երեք ամիս մնաց գեթացի Աբեղադի տանը:

Տերը պատժում է Օզային, որովհետև նա քահանա չէր և ձեռք մեկնեց Տապանակին: Այդ պատճառով էլ Դավիթն ասաց քահանաներին, որ նրանք սրբվեն և վերցնեն Տապանակը, որպեսզի նրանց հետ էլ չլինի այնպես, ինչպես Օզայի հետ եղավ: Նաև՝ պետք էր (ըստ Աստծու հրամանի) ուսով վերցնել Տապանակը, իսկ նրանք սայլով էին բերում, այլազգիների նման:

Այնուհետև Դավիթը Տապանակը հանեց Աբեղադի տնից և հսրայելի ամբողջ տան հետ՝ մեծ ուրախությամբ, աղաղակ արձակելով ու փող հնչեցնելով, տարավ Երուսաղեմ: Տանողների հետ գնում էին պարողների յոթ խմբեր, և Դավիթը Տիրոջ առաջ տափիղ էր նվագում: Ապա Տիրոջ Տապանակը դրեցին վրանի մեջ, որը Դավիթն էր կանգնեցրել: Դավիթը Տապանակի առջև կանգնելու համար պատմուճանով էր զգեստավորվել, որը խորհրդանշում է Տիրոջ մարդեղությունը, իսկ Տապանակի առջև Դավիթի զվարթ սրտով պարելը պատմում է Զաքարիայի որդի Հովհաննեսի խայտալը Կույսի առջև:

Դավիթը Տիրոջ առջև ողջակեցներ ու խաղաղության զոհեր է մատուցում և զորությունների Տիրոջ անունից օրհնում ժողովրդին: Նա հսրայելի բոլոր բնակիչներին՝ Դանից մինչև Բերսաբե՛թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց, ամեն մեկին բաշխեց հացի մի բլիթ, կամկարայի վրա եփված արմագով խմորեղեն և չամչով կարկանդակ (տե՛ս Բ Թագ. 2):

Սավուղի գուստը Մեղքողը պարսավեց Դավիթին Տիրոջ առջև պարելու համար, ինչն օրինակն է Սավուղի որդիների նախանձի, ովքեր չզվարճացան Տիրոջ սուրբ Եկեղեցու փառքով, այլ ջանում էին արգելել նրա մանուկների ուրախությունը: Իսկ Դավիթի կերակրելը ժողովրդին հացի բլիթներով, խմորեղենով ու չամչով կարկանդակներով բացահայտում է Եկեղեցու ճգնած ու հոգեպես փարթամացած որդիների մեծաթվությունը, որոնց Տերը միշտ կերակրում է անսպառորեն, աշխարհի բոլոր ծայրերում, իր Մարմնով ու Արյամբ:

Տապանակն այդտեղ մնաց մինչև Սողոմոնը շինեց տաճարն ու կատարեց տաճարի նավակատիքը, որից հետո Տապանակը դրեցին տաճարում, Արքությունների սրբությունում, քերովենների թևերի ներքո՝ քավության սեղանի վրա:

Տապանակը տաճարում մնաց մինչև քաղղեացիների կողմից երուսաղեմի ավերումը և Գողողիայի սպանվելն իսմայելի կողմից (տես՞ Դ Թագ. ԻԵ 25): Հրեաները երեմիային ստիպեցին Տապանակը տանել Եգիպտոս, սակայն Երեմիան իր աշակերտների հետ Տապանակը տարավ և պահեց Արնա լեռան մեջ՝ մի այրում: Մարգարեի խնդրանքով Աստված բացեց լեռը և Տապանակն ապառաժի մեջ առնելով՝ փակեց: Պահված տեղը երեմիան կնքեց Աստծու անունով, ասելով, որ ոչ ոք սա չբացի, այլ միայն Մովսեսն ու Ահարոնը, իսկ ինքը գնաց Եգիպտոս: Ասում են, որ այդ տեղի վրա ամեն գիշեր հուր է երևում, իսկ ցերեկը՝ ամպ:

Նեռի ժամանակներում սրբերը պետք է այդ Տապանակի մոտ հավաքվեն, և այն պահպանելու է նրանց, և ոչ ոք չի կարողանալու բացել այդ այրը: Ասում են, որ այն բանից հետո, երբ հարյուր քառասունչորս հազար կույսերը Տիրոջ համար մարտիրոսանալու են նեռի ձեռքով, նեռը հանդգնելու է բացել այդ այրը, սակայն նրանից դուրս եկած հուրն այրելու ու սատկացնելու է նրան:

ՄԵՐ ՏԻՐՈՉ՝ ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՒ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՎԱՐԴԱՎԱՐ

Գիշերը կատարվում է հսկում, Սրբությունը դնում են սուրբ Սեղանին: Քահանա-
մերը զգեստավորված, միաբան, վառվոր մոմերը ձեռքներին, գալիս են ատյան և
սկսում «Որ ի լերին այլակերպեալ» շարականը: Օրվա երեսրբյանն է. «Սուրբ Աս-
տուած, սուրբ և հօգոր, սուրբ և անմահ, որ յայտնեցար ի Թարոր լերին, ողորմեա-
մեզ»: Ապա խաչով ու Ավետարանով թափոր են կազմում՝ ասելով «Տէր երկնիցը»: Այսօր ընթերցվում է սուրբ Եղիշե վարդապետի՝ Տիրոջ այլակերպության վերաբերյալ
ասված աղոթքը:

Այս տոնին սովորություն կա ժողովորի մեջ աղավնիներ թօցնելու և միմյանց վրա
շուր ցողելու, որը գալիս է նոյ նահապետի օրերից, ի հիշատակ ջրերի ետ քաշվելու:

**Երեկ տոնեցինք Տապանակի տոնը, որը Տիրոջ չնորհազարդ փառքի
անոթն է և որի գեղեցկությամբ զարդարվեց Եկեղեցին: Իսկ այսօր չնորհ-
ներով զարդարվելով՝ տոնում ենք Տիրոջ բարձրանալը Թարոր լեռան վրա:**

**Քրիստոնեական լուսավոր Քրքերից իմանում ենք, որ այս տոնն
օրենքներով ու մարգարենություններով չի նկարագրված, այլ հետագա-
յում՝ Քրիստոսի միջոցով երևաց, և դրա կատարումը հանդերձյալում է
լինելու, քանզի սա գալիք՝ ութերորդ անվախճան օրվա պատկերն է, որը
սկզբնավորվում է գատաստանի ատյանից:**

**Մյուս տոների պատճառները շոշափելի կերպով են երևում, ինչպես
օրինակ Ծննդյան, Հարության և այլն, որոնց մասին օրենքներում և մար-
դարենություններում ասվեցին, իսկ այսօրվա սքանչելիքների փոքր մասն
անգամ չկարողացան տեսնել աշակերտներն իրենց կիսաբաց աչքերով,
քանի որ թմրած ընկել էին իրենց երեսների վրա: Թարոր լեռան վրա Տերը
նրանց հանդերձյալ փառքը ցույց տվեց, սակայն նրանց ո'չ աչքը տեսավ,
և ո'չ ականջը լսեց: Աչա այդ պատճառով են բացակայում ընթերց-
վածներն օրենքներում և մարգարենություններում:**

**Հոգեգալուստից հիսուն օր անց, Սուրբը Հոգու հրամանով և առա-
քյալների հավանությամբ, Պետրոս առաքյալը Հակոբոս Տյառնեղբորը
ձեռնաղբեց երուսաղեմի առաջին եպիսկոպոս և քահանայապետ: Մինչ
այդ օրն առաքյալները չգիտեին նոր քահանայության մասին և հնով էին
վարում, իսկ այդ օրը Սուրբը Հոգուց հրաման ստացան փոխել ղետական
քահանայությունը քրիստոնեական քահանայությամբ, քանզի մինչ այդ
օրը Քրիստոսի Մարմինն ու Արյունը չէր պատարագվում:**

**Այդ օրը Եկեղեցու առաջին խորանը կանգնեցվեց. Հակոբոս Տյառնեղ-
բայրը և առաքյալները Վերնատանը սեղան կանգնեցրին, և Սուրբ Հոգու
հրամանով Հակոբոսն առաջին պատարագը մատուցեց, և առաքյալները**

տեսան, որ Սուրբ Հոգին աղավնակերպ իջնում է Հակոբոսի վրա: Այդ օրը սկիզբ եղավ Ուխտի և քրիստոնեական պատարագների, ինչպես նաև՝ սուրբ Սեղան կանգնեցնելու և աղ օրհնելու: Եվ այդ ամենն ինքը Քրիստոս էր կատարում քահանայի միջոցով:

Այսօր գիրը Հոգու շնորհների փոխվեց, իսկ մարմնի թլիփատությունը՝ սրտի թլիփատության, առօրյա լվացումները՝ Հոգեոր լվացումների, «ստվերի» տաղավարը՝ ճշմարտության առագաստի: Այսօր հավատացյալները սուրբ Սեղանի վրա տեսան Աստվածորդու կենարար Մարմնի և Արյան խորհուրդը:

Հարց. – Ինչո՞ւ ենք այս տոնը Վարդավառ կոչում:

Պատասխան. – Տիրողը վարդի հետ համեմատելու պատճառով: Ինչպես վարդը կոկոնի մեջ է ծածկված լինում՝ նախքան բացվելը, այդպես էլ Տերը նախքան իր պայծառակերպվելը պահում էր իր մեջ Աստվածության պայծառությունը: Եվ ինչպես վարդը բացվելով բոլորին հայտնապես երևում է, այդպես էլ մեր Տերն այսօր պայծառակերպվելով հայտնում է իր Աստվածությունը:

Վարդը փշերի մեջ է բուսնում, այդպես էլ մեր տերը հրեաների մեջ երևաց, ովքեր էլ խաչեցին նրան: Վարդն անուշահոտություն է բուրում, այդպես էլ մեր Տիրոջ պայծառակերպությունից անուշահոտություն բուրեց, որից աշակերտները թմրելով ընկան խոր քնի մեջ:

Իսկ նախնիներն այդ տոնը Վարդավառ անվանեցին, որովհետեւ վարդը քանի դեռ կոկոն է, ո՛չ իր գեղեցկությունը և ո՛չ էլ իր անուշահոտությունն է հայտնում, իսկ ժամանակի լրանալուն պես, քաղցրությունից շարժվելով, փթթում է և իր գույնով ու անուշահոտությամբ մարդկանց ուրախացնում: Այդպես էլ Քրիստոս կուսական արգանդում սնվեց ու զարգացավ ինչպես կոկոն և ապա ծնվելով՝ աստղերով ու հրեշտակներով հայտնվեց մոգերին ու հոգիվներին, իսկ հասնելով կատարյալ հասակին՝ հայտնվեց մարդկանց՝ նշաններով ու սքանչելիքներով:

Տերը, մարմնի վարագույրով ծածկվելով ինչպես կոկոն, այսօր բացվելով հայտնեց հայրենի փառքը, իսկ անուշահոտության բուրմունքով՝ Աստվածությունը:

Վարդն ունի երեք որակ. կարմրություն, սպիտակություն և անուշահոտություն, ինչը խորհրդանշում է Երրորդությունը: Իսկ Քրիստոսի տնտեսության խորհրդում կարմրությունը խաչի վրա թափված արյունն է, սպիտակությունը՝ անմեղությունը, իսկ անուշահոտությունը՝ Հոգին, որ փչեց առաքյալների վրա՝ ասելով. «Առե՛ք Սուրբ Հոգին»: Եվ դա ըստ այս խոսքի. «Իմ սիրեցյալը սպիտակ է և կարմիր, ընտրյալ է՝ տասը հազարից» (Երգ Ե 10):

Այսօր առաքյալները կարգվեցին ուսուցիչ ու վարդապետ ողջ աշխարհի համար, և Տերն այսօր համբերության ու աղքատության դաս տվեց աշակերտներին Մովսեսի ու Եղիայի միջոցով, որպեսզի աշակերտները նրանց նման լինեն:

Հարց. – Ինչո՞ւ ենք Վարդապառը տոնում Հարությունից ու Համբարձումից հետո, եթե Տերը խաչելությունից քառասուն օր առաջ պայծառակերպվեց:

Պատասխան. – Քանզի ինքն ասաց, որ իր մասին չպատմենք մինչև իր՝ մեռելներից հարություն առնելը (տես Մատթ. Ժ 9), այդ պատճառով Հարության տոնը կատարելուց հետո ենք Վարդապառը տոնում:

Իսկ երբ մեռելները հարություն առան, մտան քաղաք և շատերին հանդիպեցին, ժողովուրդը հավատաց, որ Վարդապետը բերել է Եղիային և Մովսեսին հարություն է տվել: Իսկ երբ տեսան կատարվածները՝ երկրաշարժը, արեգակի խավարումը, Տիրոջ Հարությունը և Սուրբ Հոգու գալուստը, հավատացին, որ Տերը պայծառակերպվել է:

Հարց. – Ինչո՞ւ այս տոնի համար Հակոբոս Տյառնեղբայրը և Կյուրեղ Երուսաղեմացի հայրապետը ընթերցվածներ չեն կարգել, ինչպես մյուս տոների համար արեցին:

Պատասխան. – Պատճառն այն է, որ մենք կարողանում ենք խորհրդաբար հաղորդվել Տիրոջ ծննդյանը, մահվանն ու հարությանը, իսկ Պայծառակերպությանը հանդերձյալում ենք հաղորդվելու:

Տիրոջ ծննդյամբ, մկրտությամբ, մահվամբ ու հարությամբ նորոգվեց մեր բնությունը, իսկ այլակերպությամբ՝ մեր բնության հանդերձը, քանզի Այլակերպության օրը Քրիստոս դեն գցեց մեր հնացած ձորձերը և մեր բնությունն զգեստավորեց հայրենի լուսեղեն պատմուճանով, որը հանդերձայլում ենք վայելելու, իսկ այստեղ ստանում ենք դրա հույսի առհավատչյան և այս տոնով նշում հանդերձյալի հիշատակը:

Ինչպես արքայության մասին ասվեց. «Ինչ որ աչքը չտեսավ, և ականջը չլսեց, և մարդու սիրտը չընկավ, Աստված այն պատրաստեց իր սիրելիների համար» (Ա Կորնթ. Բ 9), այդպես էլ աստվածային փառքի կերպարանքն է անտեսանելի մեր աչքերին, որը աշակերտներն անդամ կիսաբաց աչքերով տեսան: Այդ պատճառով էլ ոչ թե գրի տեսությամբ, այլ հավատով մեզ ավանդվեց:

Ճշգրիտ դասառիթուան
(Մատթ. Ժ 13-20, Մարտ. Հ 27-30, Ղուկ. Ժ 18-21)

«Հիսուս, Փիլիպպյան Կեսարիայի¹ կողմերը գնալով, հարցրեց աշակերտներին ու ասաց. «Մարդիկ Իմ մասին ի՞նչ են ասում, ո՞վ է Մարդու Որդին»: Աշակերտները պատախանեցին. «Մեկը, թե՝ Հովհաննես Մկրտիչը, և ուրիշներ՝ Եղիան, իսկ ոմանք, թե՝ Երեմիան կամ մարգարեներից մեկը»: Տերը կրկին հարցրեց. «Իսկ զո՞ւք Իմ մասին ինչ եք ասում»: Պետրոսն առաջ եկավ ու ասաց. «Դու ես Քրիստոս՝ Կենդանի Աստծու Որդին»: Մեր Տերը գովեց նրա գեղեցիկ վկայությունը և ասաց. «Երանի՛ է քեզ, Սիմոն, Հովհաննի՛ որդի, որովհետեւ մարմինը և արյունը չէ, որ հայտնեց քեզ, այլ Իմ Հայրը, որ երկնքում է»:

Ապա Տերը մորմոքալից խոսքեր է հնչեցնում աշակերտների լսելիքին, ինչից նրանք սարսուացին.

Մարդու Որդին պետք է շատ չարչարանքներ հանձն առնի, մեռնի ու երրորդ օրը հարություն առնի – Տերն, իր մահը հիշատակելով, հույժ տրտմեցնում է աշակերտներին, սակայն հարության ավետիսով մեծապես մխիթարում: Իսկ Պետրոսը նրա մոտալուտ մահվան լուրն առնելով տագնապում է և մոռանալով հարության ավետիսը՝ ասում:

Քավ լիցի Քեզ, Տե՛ր, այդ Քեզ չի լինի – Հայրը Պետրոսին Որդու ամբողջ Աստվածությունը հայտնեց, որ Տերն իր Աստվածությամբ և մարդեղությամբ չարչարվելու է ու հարություն է առնելու, և այդ լուրից բոլորն էլ պիտի ուղախանային և ոչ թե ձգտեին զրկել նրան երկուսից էլ՝ մահվանից ու հարությունից, ինչը փորձեց անել Պետրոսը:

Որտեղ որ Պետրոսն Աստծունը խոսեց, այնտեղ Տերը նրան երանի տվեց, իսկ որտեղ որ հին մարդու պես խորհեց, այնտեղ նրան հայտնապես սասաց.

Դե՞ն գնա, սատանա՛, որովհետեւ գու Աստծունը չես խորհում, այլ մարդկանցը – Մարդու խորհուրդները ծխի պես անպիտան են. արդ, Տերը սաստեց այդ ծուխը և նոր մարդու միջից այն անհետ կորցրեց, որպեսզի ինքնածագ Լույսն առանց ապականացու խորհրդի լինի: Սաստեց անգամ նրանց, ովքեր արքայության որդիներ էին կոչվելու, ու իրենից վանեց, որպեսզի իր Հոր կամքն առանց գայթակղության կատարի: Սովորեցրեց նրանց իրենց անձեռում չարչարանքներ կրել և հարության հույսով նրանց հաստատեց. և նույն այդ ժամին իր երկրորդ գալստյան օրինակն ակնարկեց՝ ասելով.

¹ Փիլիպպոսը, Յերովհեսը, Արքեղայոսը և Լյուսինեան Յերովհեսի որդիներն էին: Յերովհեսի մահից հետո հրոմեական Պապիս զրավարը, չցանկանալով, որ Յրեաստանը ունենա միահեծան իշխանություն, այն չորս մասի բաժանեց՝ Յերովհեսի չորս որդիների միջև: Արքեղայոսին տվեց Երևանադնը, Յերովհեսին՝ Գալիլիան, Լյուսինեային արիլինացիների կողմերը, իսկ Փիլիպպոսին՝ Պենադան, այդ պատճառով էլ ավետարանիչն այն Փիլիպպյան կոչեց:

Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այստեղ գտնվողների մեջ կան ոմանք, որոնք մահը չեն ճաշակի, մինչև որ չտեսնեն Մարդու Որդուն՝ եկած իր արքայությամբ (Մատթ. Ժ 28) – Տերը նախապես է ասում, որպեսզի աշակերտները արթուն լինեն և կարոտեն այդ տեսությանը: «Ճշմարիտ եմ ասում» խոսքը երդման փոխարեն է, և այդ երդումն աստվածային է, քանզի այլ ավելի մեծ երդում չկա: Ինչպես Աբրահամին ասաց. «Անձովս եմ երդում, քանի որ դու արեցիր այդ բանը, ինձ համար չխնայեցիր քո սիրելի որդուն, անչափ պիտի օրհնեմ քեզ» (ԾՅԱԴ. ԽԲ 16-17):

Մահը չեն ճաշակի, մինչև որ չտեսնեն Մարդու Որդուն՝ եկած իր արքայությամբ – Տերն ասում է, որ ոմանք չպիտի մահանան, մինչև որ տեսնեն արքայության օրինակը: Դա կամ մոտ ժամանակներին էր լինելու, կամ մյուս անգամ գալստյան մասին է ասում, երբ ոչ թե առաքյալները, այլ նրանց աշակերտները կենդանի պիտի լինեն: Տերը շատ անգամ է իրեն Մարդու Որդի անվանում, որպեսզի ոչ ոք չտարակուսի, թե մեր բնությունը չի խառնել Աստվածությանը կամ Աստվածությունը չմիացավ մարմնին: Եվ երբ էլ գա դատաստան անելու, նույն մարմնով է գալու:

Երկնքի արքայությունն է կոչում Քրիստոսի փառքը, որը երեք առաքյալները տեսան թաքրոր լեռան վրա: Առաջին հայրերը նույնպես Աստծուն լեռան վրա տեսան, ինչպես Աբրահամը, Մովսեսը, Եղիան, Սողոմոնը: Քանի որ Մովսեսին լեռան վրա տրվեց Հին օրենքը, հետևաբար՝ Նոր օրենքն առաքյալներին նույնպես պիտի լեռան վրա տար:

ՀԻՍՈՒԽԻ ՊԱՅԾԱՌՎԿԵՐՊՈՒԹԵԱՅՈՒՆ (Մատթ. ԺԷ 1-13, Մարկ. Թ 2-12, Ղուկ. Թ 28-36)

«Վեց օր հետո Հիսուս իր հետ վերցրեց Պետրոսին, Հակոբոսին և նրա եղբորը՝ Հովհաննեսին, և նրանց հանեց առանձին, մի բարձր լեռ և նրանց առաջ պայծառակերպվեց. և նրա գեղմքը փայլեց ինչպես արեգակը. և նրա զգեստները դարձան սպիտակ, ինչպես լույսը» (Մատթ. ԺԷ 1-2):

Այն այրերին, որոնց ասաց, որ մահ չեն ճաշակելու մինչև իր գալստյան նշանը տեսնելը, հանեց լեռան գագաթը և ցույց տվեց, թե ինչպես է ինքը գալու վերջին օրը՝ Աստվածության փառքով ու Մարմնով: Նրանց լեռը հանեց, որպեսզի ցույց տա, թե Ով է ինքը կամ՝ Ով է Որդին: Որովհետեւ մարդիկ նրա մասին ասում էին, թե Հովհաննես Մկրտիչն է, իսկ ուրիշները՝ Եղիան, ոմանք էլ թե՝ Երեմիան կամ մարգարեներից մեկը, այդ պատճառով էլ այսօր նրանց լեռը բարձրացրեց, որպեսզի ցույց տա նրանց, որ ինքը Եղիան չէ, այլ Եղիայի Աստվածը, և Երեմիան չէ, այլ նա, Ով սրբեց Երեմիային որովայնից (տես Երեմ. Ա 4): Եվ ոչ էլ մարգարեներից

մեկն է, այլ մարդարեների Տերը, Ով առաքեց նրանց: Եվ որպեսզի ցույց տա նրանց, որ ինքն է Արարիչը երկնքի ու երկրի և Տերը՝ ողջերի ու մեռելների: Ինքն է հավիտենականությունից առաջ Հորից ծնված Աստծու Որդին, այնպես, ինչպես ինքը գիտի, առանց սերմի ծնվելով և անապական պահելով իր ծնողի կուսությունը:

Լեռը տարափ, որպեսզի ցույց տա իր Աստվածության փառքը և ճանաչեցնի նրանց, թե ինքը նա է, Ով փրկելու է Խորայելը, ինչպես որ մարդարեների միջոցով էր հայտնել, որպեսզի աշակերտները չգայթակղղվեն՝ տեսնելով նրա կամավոր չարչարանքները, որն իր մարդեղությամբ կրելու էր մեր փրկության համար:

Աշակերտները նրան որպես մարդ էին ճանաչում և չգիտեին, որ նա Աստված է: Ճանաչում էին նրան որպես Մարիամի որդի, բայց Տերը նրանց հայտնեց, որ ինքն Աստծու Որդին է: Տեսնում էին նրան, որ ուտում է և ըմպում, հոգնում ու չարչարվում, տքնում ու ննջում, երկնչում ու քրտնում և խորհում էին, որ սա չի վայելում աստվածային բնությանը, այլ՝ մարդկային բնությանը: Այդ պատճառով էլ հանեց նրանց լեռան գագաթը, որպեսզի ցույց տա իր թագավորությունը մինչ իր մահանալը, որովհետեւ Հայրը ձայն պիտի տար Որդուն և հայտներ աշակերտներին իր փառքը, որ նա իր Որդին է ճշմարտությամբ ու Աստվածությամբ: Տերը ցույց տվեց նրանց իր զորությունն ու փառքը մինչ իր անարդվելը և իր պատիվը, նախքան նախատվելը, որպեսզի երբ հրեաների կողմից ձերքակալվի ու խաչվի, իմանան, որ իր տկարության պատճառով չխաչվեց, այլ կամովին և հաճությամբ, որպեսզի աշխարհը փրկի:

Հանեց նրանց լեռը, որպեսզի ցույց տա իր Աստվածային փառքը հարությունից առաջ, որպեսզի երբ մեռելներից հարություն առնի իր աստվածային փառքով, իմանան, որ իր վաստակների համար չառավ այս փառքը, այլ նա հավիտենականությունից առաջ Հոր հետ ուներ այն, ինչպես և ասաց կամավոր չարչարանքների գալուց առաջ. «Դու այժմ փառավորի՛ր Ինձ, Հա՛յր, Փեղ մոտ եղող այն փառքով, որ ունեի Փեղ մոտ՝ նախքան աշխարհի լինելը» (Յովի. ԺԵ 5): Այսինքն՝ նույն աստվածային փառքով, որն անտես ու ծածուկ է իր մարդեղության պատճառով, որը և ցույց տվեց առաքյալներին լեռան վրա:

Վեց օր հետո – Ավետարանագիրների այս խոսքերը ոմանց մի փոքր հակասական են թվում: Մատթեոսն ու Մարկոսն ասում են «վեց օր հետո», իսկ Ղուկասը՝ «ութ»: Պետք է ասել, որ այդ խոսքերը միմյանց հակառակ չեն, այլ Մատթեոսն ու Մարկոսն ուղղակի հաշվի չեն առնում առաջին և վերջին օրերը. այն օրերը, երբ ասաց և երբ կատարվեց և միայն միջանկյալ օրերն են հաշվել: Իսկ Ղուկասը հաշվել է նաև երկու կիրակիները. երբ

Պետրոսը դավանեց, և երբ Տերը պայծառակերպվեց: Այսինքն՝ խոստումը տալու և երեալու օրերը՝ նույնպես: Եվ այդ երկու օրերն էլ խորհրդական են: Վեցը, քանի որ վեցերորդ օրը ստեղծված Ադամը կորցրեց աստվածատուր փառքը, և վեցերորդ դարում մարդասեր Տերն իր մարդեղությամբ այն ետ դարձրեց, և դրա օրինակն այսօր ցույց տվեց: Իսկ Ղուկասը ցույց է տալիս խորհուրդն ութերորդի՝ Հավիտենականության, որի մեջ Աստված Հանգստացնելու է հոգնածներին իր արքայությունում յոթ շրջաններն անցնելուց հետո: Ղուկասն ութ օր է ասում, ինչը նշանակում է, որ երբ ելան թաքոր լեռը, կիրակի էր:

Դարձյալ՝ Մատթեոսն ասաց Քրիստոսի առաջին գալստյան մասին, որը եղավ վեցերորդ դարում, իսկ Ղուկասը երկրորդ գալուստն է ակնարկում, որն ութերորդ դարում է լինելու: Իսկ ինչպե՞ս է որ առաջին գալուստը վեցերորդ դարում եղավ, իսկ երկրորդը լինելու է ութերորդում: Որովհետեւ Աստված վեց օրում ստեղծեց արարածներին, յոթերորդում Հանգստացավ, իսկ ութերորդում նորոգելու է:

Մատթեոսն այլաբանորեն ցույց տվեց, որ Տերն իր գալստյամբ վերցրեց մեր մեղքերը, որ գործում ենք վեցյակի շարժմամբ, իսկ Ղուկասը վկայեց այն մասին, որ Տերը մաքրեց ութ խորհուրդները, որոնցով խորհում ենք մեր կատարելիք գործերը:

Հիսուս իր հետ վերցրեց Պետրոսին, Հակոբոսին և նրա եղբորը՝ Հովհաննեսին – Ավետարանիչը չի թաքցնում նրանց, ովքեր ուրիշներից բազում անգամ առավել պատվի արժանացան իրենց խոնարհության պատճառով: Որովհետեւ սրբերի գնդերը խոնարհությամբ էին ազատվում նախանձից ու սնապարծությունից: Տերը միայն նրանց վերցրեց, ովքեր ավելի ուշիմ էին ու ազնիվ: Որովհետեւ Պետրոսը մյուսներից առավել էր սիրում Քրիստոսին, Հովհաննեսը Հիսուսի սիրելի աշակերտն էր, իսկ Հակոբոսը հանձն առավ ըմպել Քրիստոսի չարչարանքների բաժակը (տեսՄատթ. 1:22): Գիտեր Տերը, որ Հակոբոսը բոլոր առաքյալներից ավելի է կամենում մեռնել նրա քարոզության համար, և այդ պատճառով նրանց ընտրեց:

Երկրորդ՝ նրանք առավել պայծառ էին իրենց տեսողությամբ, քան մյուսները, ինչպես մեր զգայարաններից միայն աչքն է տեսնող, և երբեմն մի աչքը մյուսից ավելի պայծառ է լինում: Այդ պատճառով էլ միայն նրանց պայծառ տեսողությանը ցույց տվեց իր աստվածային փառքը:

Երրորդ՝ որովհետեւ նրանց հետ էր Հուդան, ով արդեն օտարացել էր արքայությունից և արժանի չէր այդ տեսողությանը, իսկ նրան միայնակ թողնել չէր պատշաճի, որովհետեւ մարդիկ նրան կատարյալ էին կարծում, և նրա չարությունը դեռևս հայտնի չէր մարդկանց: Իսկ եթե բոլորին տաներ և Հուդային թողներ, ապա նրա կատարած մատնությունը կարդա-

բացվեր, քանի որ մարդիկ կասեին, թե չկարողացավ տանել արհամարհանքը և այդ պատճառով մատնիչ դարձավ: Այդ պատճառով էլ մյուս առաքյալներին Հուղայի վրա պահապան կարգեց՝ ինչպես չար գազանի: Որովհետեւ այն ոսքերը, որոնք թաթախվել էին Կայիափայի տան փոշու պղծությամբ, արժանի չէին կոխել սուրբ լեռը: Եվ այն լկտի աչքը, որը գրավված էր արծաթով, արժանի չէր տեսնելու աստվածային Հույսը:

Չորրորդ՝ որպեսզի կարգը պահպանվի. նախ առաջինները պետք է իմանային խորհուրդը, իսկ մյուսներն՝ ավելի ուշ:

Հինգերորդ՝ Տերն օրենք դրեց, որ երկու կամ երեք վկաների բերանով հաստատվում է ամեն ինչ, այդ պատճառով էլ պետք էր, որ իր հետ երեք վկաներ լինեին, որպեսզի հաստատեին Նրա Աստվածությունը:

Վեցերորդ՝ մեզ օրինակով ցույց տվեց, թե ինչպես պետք է մարդուն խորհրդակից դարձնել, որովհետեւ առանց ծերերին հայտնելու չի կարելի մանուկներին հայտնել մեծագույն խորհուրդները:

Յոթերորդ՝ պետք չէ փառքը հայտնել բազմության մեջ, այլ առանձին և այն էլ գիտուն և անթերի մարդկանց:

Ութերորդ՝ մյուս աշակերտներն արժանի չէին, բացի նրանցից, որոնց լեռը տարապ՝ ցույց տալու իր Աստվածության փառքը:

Իններորդ՝ խորհրդաբար ցույց տվեց իրեն տեսնողներին իր մյուս անգամ գալուստը, որովհետեւ Պետրոսին հարյուրավոր նշանակեց, քանի որ մեծահասակ էր, Հակոբոսին՝ վաթունավոր, քանի որ միջահասակ էր, իսկ Հովհաննեսին՝ երեսնավոր, քանի որ երեսնամյա երիտասարդ էր:

Եվ նրանց հանեց առանձին, մի բարձր լեռ – Պետրոսն ու մյուսներն արհամարհեցին աշխարհը և այդ պատճառով էլ Տիրոջ հետ բարձրացան լեռը: Աստված Նոր Կտակարանի պաշտոնյաներին հանում է լեռը (ինչպես հնում Մովսեսին), որպեսզի Օրենքը նրանց սրտերում գրի, և որպեսզի նրանք էլ ավանդեն Եկեղեցուն այնպես, ինչպես տեսան և լսեցին Հորից: Որպեսզի Պետրոսը ականջով լսի այն, ինչը վեց օր առաջ խոսեց լեզվով, և տեսնի աչքով այն՝ ինչին հավատաց սրտով: Հանեց լեռը՝ հաստատելու այն Քարը, որը դրեցին Սիոնի հիմքում՝ ինչպես անկյան գլուխ: Հովհաննեսը վկայում է. «Տեսանք Նրա փառքը, նման այն փառքի, որ Հայրն է տալիս Միաձնին՝ լի շնորհով ու ճշմարտությամբ» (Յովի. Ա 14): Իսկ Հակոբոսն իր արյամբ է վկայում: Այդ երեքն էլ Եկեղեցու սյուներն են, որոնց վրա հանդչում է Սուրբ երրորդությունը, և պատվելի է երեքի վկայությունն առավել, քան մեկի՝ Մովսեսի:

Նրանց առաջ պայծառակերպվեց – Այսօր Թաթորը ցնծաց և դարձավ արքայություն: Այդպիսի փառքի մասին ասաց Տերը. «Ով Ինձ տեսավ, տեսավ Հորը» (Յովի. ԺԴ 9), ցույց տալով, որ այդ տեսքով է միավորվում Հոր

Հետ և հավասարվում նրան: Քրիստոս այլակերպվեց, որպեսզի աշակերտներին ցույց տա խոստացած արքայությունը: Եթե միայն հույսով թողներ, ապա դա նրանց համար տրտմության կվերածվեր, իսկ ցույց տալով՝ նրանց ուրախությամբ լցրեց:

Երկրորդ՝ Տերը պայծառակերպվելով իրեն ավելի գեղեցիկ է ցույց տալիս, քան մարդկանց որդիներն էին, ըստ մարդարեի խոսքի, ով ասաց. «Տեսքով գեղեցիկ ես բոլոր մարդկանց որդիներից» (Սահմ. ԽԴ 3), որպեսզի երբ խաչի վրա նրա տեսքն առավել դժգույն լինի, քան մարդկանց որդիներինը, ըստ եսայու խոսքի. «Նրա տեսքն ավելի անարդ էր ու նսեմ, քան բոլոր մարդկանց որդիներինը» (Եսայի ԾԳ 3), առաքյալները չերկմտեն և իմանան, որ ստուգապես ինքն է և ոչ՝ այլ ոք:

Երրորդ՝ երբ Տերն ասաց, որ չարչարվելու է ու մահանալու, աշակերտները երկյուղեցին՝ կարծելով, թե մարդու նման է մահանալու: Այդ պատճառով էլ ցույց է տալիս իր Աստվածությունը, որպեսզի նրանք իմանան, որ թեպետ մահանալու է, սակայն Աստված լինելով՝ անմահ է մնալու: Տերը մինչ իր մահը ցույց տվեց աստվածահրաշ երեսումը, որպեսզի հայտնի, որ Աստված վեր է, քան չարչարանքները, որը կամավոր կրելու է իր արարածների փրկության համար:

Չորրորդ՝ Տիրոջ դեմքը պայծառանալով՝ փարատում է անդիտության ու կոապաշտության խավարը, և նա ցույց է տալիս, որ ինքն է հալածողը տգիտության ու անաստվածության:

Հինգերորդ՝ Պետրոսը մինչ այդ նրան Աստծու Որդի գավանեց, իսկ այժմ հայտնապես տեսնում ու լսում է Հոր վկայությունը:

Վեցերորդ՝ առաքյալները կամենում էին իմանալ, թե ինչպես և ինչ կերպարանքով է գալու Տերը դատաստանի օրը, այդ պատճառով Տերը լեռան վրա ցույց տվեց իր այն կերպարանքը, որն անտեսանելի էր մարմնավոր աչքերին: Խոստացավ Տերը, որ Մարդու Որդին գալու է Հոր փառքով, և այժմ ցույց է տալիս Հոր փառքը, որպեսզի իմանան, թե ինքն ինչպիսի կերպարանքով է գալու:

Յոթերորդ՝ պայծառակերպվեց, որպեսզի հայտնի իր նույնությունը Հոր և Սուրբ Հոգու հետ՝ ասելով՝ թեպետև մարմնի եմ միացել, սակայն Հայրը և Հոգին ինձանից ոչինչ առավել չունեն:

Ութերորդ՝ տարակուսում էին առաքյալները, թե ինչպիսի՞ն էր Աղամի փառքը, և Որդին պայծառացավ, որպեսզի ցույց տա, թե ինչպիսին էր այն, ինչը մեղքի պատճառով կորցրեց առաջին Աղամը:

Իններորդ՝ առաքյալները խորհում էին, թե այն լուսեղեն զգեստը, որը կորցրեց Աղամը, արդյո՞ք կրկին վերադարձվելու է իրենց, այդ պատճառով էլ Տերը պայծառակերպվեց և ցույց տվեց, որ ինքը Որդի եղավ Աղամի

բնությունից և վճարելով նրա պարտքը, մեր բնությունը վերստին զգեստավորեց լուսեղեն պատմուճանով, ինչպես անառակ որդու համար ասաց. «Անմիջապես հանեցե՛ք նրա նախկին պատմուճանը և հագցըն՛ք նրան» (Ղուկ. ժԵ 22):

Տասներորդ՝ հարությունից հետո արդարներն այդպիսի փառքով են նորոգվելու՝ ըստ այս խոսքի. «Այն ժամանակ արդարները Երկնքի արքայության մեջ կծագեն ինչպես արեգակը» (Մատթ. ԺԳ 43): Այժմ Տերը զգալի կերպով ցույց է տալիս արդարների փառքն իր նմանությամբ, քանի որ այնպես ենք լինելու, ինչպես տեսանք նրան Թարոր լեռան վրա: Քանզի մեր ապականացու մարմինը փոխվելու է և լինելու է անկիրք, անապական, արագաշարժ, թեթև, նուրբ, պայծառ ու մաքուր:

Տասնմեկերորդ՝ հարությունից հետո աշակերտները Տիրոջը նույն կերպարանքով պիտի տեսնեին, այդ պատճառով էլ այժմ պայծառակերպվեց, որպեսզի երբ հարությունից հետո տեսնեն, հաստատեն, որ նույնն է, ինչ տեսան նախկինում:

Տասներկուերորդ՝ պայծառակերպվեց, որպեսզի փակի Նեստորի և մյուս հերձվածողների բերանները, ովքեր ստում էին՝ ասելով, որ Տիրոջ Մարմինն ապականվեց մինչև խաչը և հարությունից հետո միայն փոփոխվեց և դարձավ անապական, փառավոր ու լուսավոր: Այդ պատճառով էլ խաչվելուց առաջ ցույց տվեց իր անապական Մարմինը և Հարությունից հետո ասաց. «Նույն ինքը ես եմ. շոշափեցե՛ք ինձ և տեսե՛ք» (Ղուկ. ԻԴ 39), այսինքն՝ նույն այն մարմինն է, որը Թարորի վրա տեսան, քանզի նրա Մարմինն ապականություն չտեսավ: Եվ այսօր երևաց այն ծաղիկը, որը տալու էր խաչի պտուղը:

«Նրա դեմքը փայլեց ինչպես արեգակը»:

Առաքյալն ասում է. «Իբրև ճրագ, որ լույս է տալիս մութ տեղում, մինչև որ լուսանա օրը, և արուսյակը ծագի ձեր սրտերում» (Բ Պետ. Ա 19): Ճրագ էր Մովսեսի օրենքը, որը գիշերը մի փոքր լուսավորում էր, իսկ արեգակն Ավետարանն է, որ ցերեկն է լուսավորում:

Աշակերտները երկու արեգակ էին տեսնում, մեկը՝ սովորականի պես երկնակամարում, որ կենագործում էր աշխարհը, իսկ մյուսը՝ Թարոր լեռան վրա, որն առավել պայծառ էր, քան արեգակը, և միայն նրանց էր երեսում: Նրա դեմքը արեգակի նման էր, իսկ հանդերձները՝ լույսի պես սպիտակ: Դրանով Տերը ցույց տվեց, որ իր ամբողջ Մարմնից բխում է Աստվածության փառքը, և բոլոր անդամներից ծագում է նրա լույսը: Ոչ այնպես, ինչպես Մովսեսի դեմքի լույսը, որ մարմնից դուրս ծագեց, այլ հենց իրենից էր բխում՝ համահավաքյալ և մեկտեղված,

թյան փառքի համար: Տերն այսօր իր ամբողջ փառքը միանգամից ցույց չտվեց, այլ միայն այնքան, որքան կարող էին ընկալել աշակերտները:

Իսկ թե ինչպե՞ս աշակերտները տեսան իմանալի Լույսը տեսանելի աչքով, ասենք, որ զորացավ նրանց տեսողությունը, ինչպես սուրբ Ստեփաննոսինը, ով տեսավ բացված երկինքը (տես Գործ. Է 55): Նաև Հովհաննես Մկրտիչն է Հորդանանում տեսնում երկինքը բացված (տես Սատր. Գ 16), իսկ Եղիսեն տեսնում է Եղիայի հրեղեն կառքերը (տես Դ Թագ. Բ 12): Այդպես և առաքյալները:

Նրա զգեստները դարձան սպիտակ, ինչպես լույսը – Ավետարանիչներն ասում են, որ երկրի վրա ոչ մի լվացք անող չի կարող զգեստն այդքան սպիտակեցնել: Իսկ ինչո՞ւ պայծառացան նաև հանդերձները, քանզի հարությունից հետո հանդերձներ չեն լինելու: Նախ՝ Քրիստոսի հանդերձն իր ժողովուրդն է, և երկրորդ՝ այդ հանդերձները մեր մարմինն է:

Դարձյալ՝ որպեսզի իմանան, որ նա, Ով փոխեց հանդերձները լույսի նմանության, կարող է նաև մարմինը փոխել, որը վեր է զգեստից: Հանդերձները նաև նշանակում են ավետարանական և առաքելական Գրքերը, որ լուսազարդ խոսքերով աստվածաբանում են մեր մտքերին: Տերը հանդերձներով ցույց տվեց նաև իր գալստյան փառքը, ինչի մասին ասում է, որ բոլորն իբրև հանդերձ այն պիտի հագնեն:

«Եվ ահա նրանց երեացին Մովսեսն ու Եղիան, որ խոսում էին Նրա Հետ»:

Այժմ տեսնենք, թե ինչո՞ւ Տերը մարգարեներից միայն Մովսեսին ու Եղիային բերեց: Նախ որ նրանք ավելի պատվական էին, քան մյուսները. մեկը՝ երեսի լուսավորության, իսկ մյուսը՝ հրեղեն կառքերով երկինք համբարձվելու պատճառով:

Երկրորդ՝ քանի որ ոմանք կարծում էին, թե Հիսուս Եղիան է՝ Օրենքի ու տաճարի նախանձախնդրության պատճառով (տես Հովհ. Բ 17), իսկ մի մասն էլ կարծում էր, թե Երեմիան է՝ իր սրբասեր մաքրության պատճառով: Բերեց Մովսեսին ու Եղիային, որպեսզի հայտնի լինի, որ ինքն է Օրենքի Տվողն ու մարգարեներին Առաքողը:

Երրորդ՝ Մովսեսին՝ մեռելների միջից, իսկ Եղիային ողջերից բերեց, որպեսզի իմանան, որ ինքն է մեռելներին հարություն Տվողը և ողջերին Ստեղծողը: Մեռածները Մովսեսի նման պիտի հարություն առնեն, իսկ ողջերն՝ առանց մեռնելու՝ թեթևանալով, ամպով ելնելու են Տիրոջն ընդառաջ, ըստ առաքյալի խոսքի. «Եթե մենք ողջ մնանք մինչև Տիրոջ գալուստը, չպիտի կանխենք ննջեցյալներին, որովհետև Տերն ինքը, աղդաբարության նշանով, հրեշտակապետի ձայնով և Աստծու շեփորով պիտի իջնի երկնքից, և Քրիստոսով մեռածներն առաջինը հարություն պիտի

առնեն. ապա և մենք, որ կենդանի մնացած պիտի լինենք, նրանց հետ միասին պիտի հափշտակվենք-տարվենք ամպերի վրայից Տիրոջ առաջ օդում և այդպես մշտապես Տիրոջ հետ պիտի լինենք» (տեսԱ Թես. Դ 14-16):

Չորրորդ՝ Մովսեսին երկրից հանեց, իսկ Եղիային երկնքից բերեց, որպեսզի ցույց տա, որ Ինքն է Աստվածը երկնքի ու երկրի:

Հինգերորդ՝ որպեսզի ցույց տա իր մեծությունը՝ թե հները, ովքեր պատվագոր են ու մեծ, Նրան են սպասավորում և երկրպագում:

Վեցերորդ՝ Տիրոջ մասին ասում էին, թե հակառակ է Մովսեսի օրենքներին, քանզի շաբաթը չի պահում և իրեն Աստծու Որդի է կոչում: Արդ՝ գալիս է Մովսեսը՝ օրենքներ տվողը, որպեսզի վկայի, որ Հիսուս Օրենսդիրն է և ոչ թե օրենքների քանդողը, և գալիս է Եղիան, ով նախանձախնդիր էր Աստծու փառքի համար, որպեսզի հայտնի լինի, որ նախանձից էին Նրան հայՀոյում:

Յոթերորդ՝ Նրանք երկուսն էլ հույժ փափագում էին Աստծուն տեսնել: Մովսեսն ասում էր. «Արդ՝ եթե ես Փո շնորհին եմ արժանացել, ինձ հայտնապես երևա» (Ելք ԼԳ 13): Իսկ Եղիան քառասուն օրվա ճանապարհ անցավ դեպի Քորեթ լեռը՝ Նրան տեսնելու հույսով: Երկուսն էլ լսեցին, որ անհնարին է Նրան տեսնել Աստվածությամբ, այդ պատճառով էլ այսօր Նրանց բերեց, որպեսզի կատարվի Նրանց բաղձանքը, քանի որ Տերը կատարում է Իրենից երկյուղածների կամքը:

Ութերորդ՝ այդ օրինակով սովորեցնում է աշակերտներին լինել հեզ, ինչպես Մովսեսն էր Աստծուն հեղությամբ ծառայում, և նախանձահույզ՝ ինչպես Եղիան, ով սրով և երաշտով տանջեց Օրենքի առջև հանցավորներին:

Իններորդ՝ որպեսզի առաքյալներին համարձակություն տա, քանի որ մարդարեներից մեկը ծանրալեզու էր և նրբածայն, իսկ մյուսը շինական էր ու անկիրթ, սակայն չնայած դրան՝ հաղթեցին իմաստուններին: Այդպես նաև առաքյալներն էին հաղթելու աշխարհի իմաստուններին:

Տասներորդ՝ որպեսզի առանց ստացվածքների լինեն, ինչպես Նրանք եղան: Քանզի Մովսեսը Եգիպտոսից դուրս գալիս միայն Հովսեփի ոսկորներն ուներ իր մախաղում, իսկ Եղիան բացի վերակուից ոչինչ չուներ, այդ պատճառով էլ սիրելի եղան ամբողջ աշխարհին և Տիրոջը:

Տասնմեկերորդ՝ որպեսզի չհուսահատվեն աղքատության և նյութական կարիքների պատճառով: Քանզի Մովսեսին կերակուր էր տալիս երկնքից, իսկ Եղիային՝ ագռավների միջոցով, որովհետեւ Նրա աշակերտներն էին ու կամքի կատարողները:

Տասներկուերորդ՝ որպեսզի առաքյալները չհուսահատվեն իրենց տկարության պատճառով, քանի որ ինչպես Մովսեսը տկար լինելով հաղ-

թեց փարավոնին, իսկ Եղիան՝ Աքաբին, այդպես էլ աշակերտները չպետք է երկնչեն, քանզի հաղթելու էին բոլոր բռնակալներին:

Տասներեքերորդ՝ մարգարեները սկզբից էին, իսկ առաքյալները՝ վերջից, ինչը ցույց է տալիս, որ և' առաջինները և' վերջիններն ակնկալում են Քրիստոսի փրկությունը:

Տասնչորսերորդ՝ Տերը մարգարեներին իշխանություն էր տվել տարերքի վրա: Այդ պատճառով էլ բերում է մարգարեներին, որպեսզի նրանք սովորեցնեն աշակերտներին, որոնց նույնպես տրված էր այդպիսի իշխանություն: Եվ ինչպես մարգարեներն են եղել՝ չար ու դառնացնող ազգի առաջնորդ ու հովիվել նրանց առանց երկյուղելու, այդպես էլ առաքյալները չպետք է երկնչեն նեղություններից, որովհետև ամբողջ աշխարհի առաջնորդն ու հովիվը պետք է լինեն:

Տասնհինգերորդ՝ Տերը Եղիային բերեց բարձունքներից և Մովսեսին՝ խորքերից, որպեսզի իմանա Պետրոսը, որ Տիրոջ մահվանն են սպասում երկրի վրա արդարները, իսկ երկնքում՝ Հրեշտակները:

Երկու մարգարեներ և երեք առաքյալներ վկա եղան Քրիստոսի Աստվածությանը, քանզի ըստ Օրենքի՝ երկու և երեք վկաներով հաստատվում է ամեն ինչ (տես՞ Օրենք ԺԹ 15):

Այստեղ էին Զեբեդիայի երկու կույս որդիները և կույս Եղիան, ինչպես նաև ողջախոհ Պետրոսն ու Մովսեսը: Քանզի Եկեղեցում կան և' կույսներ, և' ողջախոհներ. արքայություն մտնում են և' կույսերը, և' ողջախոհները:

Երեք դասեր ակնկալում էին Քրիստոսի փրկությունը. Երկնքի Հրեշտակները, երկրի մարդիկ և նրանք, ովքեր մարմնով մեռան, սակայն հոգով կենդանի մնացին: Եղիան Երկնքից իջավ, որպեսզի ավետարեր լինի Հրեշտակներին, Մովսեսը մեռելների միջից եկավ, որպեսզի ավետարեր լինի հոգիներին, իսկ առաքյալները երկրի մարդկանց պիտի ավետարանեին Քրիստոսի փրկությունը:

Իսկ ինչո՞ւ Հրեշտակների և հոգիների համար մեկական ավետարերներ եղան, իսկ մարդկանց համար՝ երեք: Քանի որ Հրեշտակները և հոգիներն անմարմին բնություններ են, խոսքի ու գործի անվրեալ տեսնողներ, և դյուրությամբ են հավատում ու շարժվում գեղի բարին, իսկ մարդիկ մարմինը ցանկություններ է ծնում, և մարդիկ դժվարությամբ են հավատում: Անմարմիններին մեկն էլ բավական է ավետարանելու համար, իսկ մարդիկ բազում վկաների կարիք ունեն:

Եկան Մովսեսն ու Եղիան, որպեսզի իմանան, որ Տերը հավատարիմ այլերին է վկաներ բերում:

Այժմ տեսնենք, թե ինչպե՞ս ճանաչեցին աշակերտները Մովսեսին ու Եղիային։ Նախ՝ ինչպես Հովհաննես Մկրտիչը Հոգու միջոցով ճանաչեց Տիրոջը բազմախառն ժողովրդի մեջ և վկայեց, որ նա է Քրիստոս, այդպես և առաքյալները Սուրբ Հոգով ճանաչեցին Եղիային ու Մովսեսին։

Երկրորդ՝ Մովսեսը քողով ծածկված դեմքով եկավ, քանզի առաքյալները նրա մասին այդպես էին լսել Օրենքից, իսկ Եղիան վերարկուով եկավ, ինչպես և գրված է նրա մասին։

Երրորդ՝ առաքյալները լսել էին Հին Կտակարանից, որ Մովսեսի երեսը լուսավորվել էր, և նա Տիրոջ մոտ այդպես էլ եկավ, որից և ճանաչեցին։ Իսկ Եղիան Հրեղեն կառքերով եկավ, քանի որ աշակերտները գիտեին, որ նա այդպես էր Երկինք փոխադրվել։

Չորրորդ՝ Մովսեսի ձեռքին երևացին Օրենքի քարե տախտակները, իսկ Եղիայի՝ վերարկուն։

Հինգերորդ՝ ոմանք ասում են, թե Հրեաներն ունեին նրանց պատկերները, և առաքյալները դրանք տեսել էին։

Վեցերորդ՝ առաքյալները մարդարեներից լսեցին նրանց անունները, երբ նրանք մեծարում էին մեկը մյուսին Քրիստոսին երկրպագելիս։ Նաև Քրիստոս տվեց մարդարեների անունները նրանց հետ խոսելիս։

Յոթերորդ՝ Մովսեսը հողոտ էր, քանի որ մեռելներից էր հարություն առել և գերեզմանից էր դուրս եկել։ Աշակերտները տեսան, որ Մովսեսի ծնոտը չի թորշոմել, ինչպես մյուս մեռելներինը, որից և ճանաչեցին նրան։ Իսկ Եղիայի դեմքը փայլում էր երկնքի նման, և իմացան, որ նա երկնքից է գալիս և ողջ է։

Իններորդ՝ ոմանք էլ ասում են, որ Մովսեսին կակազելուց ճանաչեցին, իսկ Եղիային՝ քանի որ թափամազ էր և մեջքին գոտի կար։

Սակայն ճշմարտությունը կայանում է նրանում, որ այդ տեսիլքը հանդերձյալի օրինակն է. ինչպես հանդերձյալում բոլորը ճանաչելու են մեկմեկու, այդպես էլ այս գեաքում ճանաչեցին։ Քանի որ Տիրոջ պայծառակերպության վայրը «արքայություն» կոչվեց, իսկ արքայությունում մարդկային մոռացություն չկա, այլ՝ անմոռաց հիշողություն։ Երբ արժանավոր մարդիկ գառնան արքայության զավակներ, այնժամ աստվածատուր չնորհով նրանց իմացություն կրաշնչվի։ Ինչ որ այժմ մտքով ենք իմանում, «Հայելու օրինակ» է անվանվում (տես Ա Կորնթ. ԺԲ 12), իսկ երբ մեզանից մարմնական քողը վերցվի, Աստվածությունը կտեսնենք դեմ հանդիման, այնպես, ինչպես որ կա։ Այժմամ կտեսնենք Հրեշտակների ամբողջ բնությունը և անծանոթներին, ինչպես ինքներս մեզ կճանաչենք, դրսից՝ արտաքինը, իսկ մտովի՝ արտաքինն ու ներքինը։ Քանի որ Պետրոսյանք դեռևս մարմնավոր էին, Տերը նրանց հոգիների մեջ իմացության

շնորհի նշույլ կաթեցրեց, որով և Մովսեսին ու Եղիային լիովին ճանաչեցին: Իսկ այն, որ այնտեղ վայրիվերո խոսեցին, արտաքին զգացողությունից էր: Մի այլ բանով ևս Աստված նրանց ողորմեց, դա այն է, որ նրանք Մովսեսին ու Եղիային հաստատապես ճանաչեցին, և որպեսզի նրանց մտքում կասկածի նշույլ չմնար, մարդարեները Տիրոջ հետ հայտնապես էին խոսում, իսկ առաքյալները նրանց ամեն մի խոսքն ուշադրությամբ էին լսում ու մտապահում:

Տեսնում էին մարդարեներն առաքյալներին, և առաքյալները՝ մարդարեներին: Տեսնում էին միմյանց հնի ու նորի առաջնորդները: Տեսավ Մովսեսը սուրբ Շմավոնին (Պետրոսին), Հոր տնտեսը տեսավ Որդու տնտեսին: Մեկը պատուեց ծովը՝ տանելով ժողովրդին ալիքների միջով, իսկ մյուսը շինեց Եկեղեցին:

Տեսավ հին կույսը նոր կույսին. Եղիան, ով հրեղեն կառքով երկինք ելավ, տեսավ Հովհաննեսին, նրան, ով լանջով մեկ ընկավ «Բոցի»՝ Հիսուսի վրա:

Այսօր լեռը Եկեղեցու օրինակը դարձավ, և այդտեղ միավորվեցին երկու Կոտակարանները, ինչը Եկեղեցին ընդունելով մեզ ծանոթացրեց, որ երկուսի շնորհողն էլ Տերն է: Մեկն ընդունեց նրա խորհուրդը, իսկ մյուսը հայտնեց նրա գործերի փառքը:

Հարց. – Ինչպե՞ս Մովսեսը մեռելներից մարմնով հարություն առավ ու Նաբավ լեռից մեր Տիրոջ մոտ եկավ (տեսք Օրենք ԼԲ 49): Եթե մարմնով հարություն առավ, ապա դա իր համար ճշմարիտ վիշտ պիտի լիներ: Նա, ով Աստծուն աղաչում էր նույնիսկ մի անգամ չմեռնել, արդյո՞ք կրկնակի մահը ճաշակեց: Մանավանդ որ տեսավ Եղիային անմահության մեջ, Տիրոջը՝ իր Հոր փառքով արքայության մեջ, իսկ ինքը կրկին դեպի հող պիտի դառնար:

Պատասխան. – Եղիան՝ մի, իսկ Եղիսեն երկու այդպիսի հարության օրինակ տվեցին: Սակայն նրանց ոչ ոք կրկնամահ չի անվանում, այլ մի կյանք ու մի մահ ունեցող: Մեր Տերն էլ երեք մեռելների հարություն տվեց, և նույնն էլ նրանց մասին է ասվում: Մովսեսն էլ կրկնամահ չի անվանում: Տերն ինքը Մովսեսին դեպի լեռը կանչեց ու ինքը՝ ինչպես Տեր, նրան առանց չարչարանքների գերեզմանին հանձնեց (տեսք Օրենք ԼՂ): Դա մահ չի կոչվում, այլ փոփոխություն: Դավիթը դա քուն է անվանել. «Ես ննջեցի ու քուն մտա. զարթնեցի, և Տերն իմ ապավենն է» (Սաղմ. Գ 6): Մերությունը Մովսեսի գեղեցկությունը չժոշնեցրեց: Իսկ այդ օրը Աստծու ձայնը կանչեց և իր սիրելի Մովսեսին շտապ իր մոտ բերեց: Ինչպես որ մեռ Տերն ինքն էր ասում է՝ «Ինչպես որ Հայրը հարություն է տալիս 31 – Տերունական տոներ ւամ է, նույնպես և Որդին կենդանացնում է՝ ում

կամենա» (Յովի. Ե 21): *Որ Մովսեսը մարմնով եկել է մեռելների միջից, իսկապես հավատում ենք, սակայն ինչպես է եկել՝ ինքն էլ չգիտե: Նրա հարության ինչպիսին լինելը Տիրոջն է միայն հայտնի:* Այն ամենը, ինչ մեր աչքին անհնար է թվում, Աստծու համար հնարավոր է:

Խոսում էին Նրա վախճանի մասին, որ տեղի պիտի ունենար Երուսաղեմում – Նրանք նախ բոլոր մարդարեների կողմից երկրպագություն էին մատուցում և խոսում այն գեղքերի մասին, որոնք կատարվելու էին, որպեսզի դա պատահական կատարված չնկատվի, այլ՝ նախապես մարդարեների կողմից ասված: Աղերսում էին մարդարեները Տիրոջը, որպեսզի Երուսաղեմում կատարվի փրկությունը: Ասում էին, թե ինչպես կատարվեցին մարդարեների խոսքերը Տիրոջ մարդեղության մասին, այդպես էլ թող կատարվի նաև մարդկանց փրկությունը՝ Տիրոջ մահվամբ:

Դեմի տունն առաքեց Մովսեսին, իսկ մարդարեների դասերը՝ Եղիային աղաչելու Տիրոջը, որպեսզի նա փութա գնել աշխարհն իր թանկագին Արյամբ:

Պետրոսը պատախան տվեց և ասաց – Ո՞ւմ տվեց պատասխան. Հայտնի է՝ մարդարեներին, ովքեր աղաչում էին Տիրոջը՝ գնալ Երուսաղեմ և խաչվել:

Տե՛ր, լավ է, որ մենք այստեղ ենք – Պետրոսը խորապես խոցվեց, երբ լսեց Տիրոջ մահվան մասին, և ցանկանում էր ծածկապես հակառակվել: Նա մի անգամ արդեն սաստվել էր, երբ բացահայտ ասաց. «Քա՛վ լիցի Քեզ, Տե՛ր, այդ Քեզ չի պատահի» (Սատթ. ԺԶ 22), և պատախան լսել, որ իր խոսքերը հակառակ են Աստծու կամքին: Արդ՝ և այժմ նույն մտքով, սակայն ձեւափոխված խոսքերով ասում է, որ ամենեին չի կամենում տեսնել Երուսաղեմը:

Հնարավոր է նաև, որ զմայլվել էին Աստծու ներկայությունից: Քանի որ լուսափայլ ամպի տակ պատսպարված լսում էին օդի քաղցր հնչյունը, զգում Սուրբ Հոգու անուշահոտ բուրմունքը և չէին կամենում հեռանալ այդ աստվածավայելուչ տեղից, ուր նրանց հոտոտելիքին բուրում էր Դրախտի անուշահոտությունը, և նրանք, փոխանակ սպասվելիք անարդանքների, տեսնում էին Տիրոջ փառքը:

Պետրոսն ասում էր, որ բարի է, որ իրենք այդտեղ միշտ տեսնեն Տիրոջ փառքը: Քանզի տեսավ, որ լեռը հեռու է հրեաների ամբոխից և դպիրների, փարիսեցիների, Աննայի ու Կայիափայի հակառակություններից, և նրան հաճելի էր այդտեղ բնակվել Մովսեսի ու Եղիայի հետ:

Պետրոսը չխորհեց այն մասին, որ եթե Տերն այդտեղ մնա, ապա ո՞վ պիտի կատարի մարդարեների խոսքերը և ո՞վ է ծակելու Նրա ձեռքերը և ոտքերը: Ո՞վ կբաժանի Նրա հանդերձները, և ո՞ւմ կվայելի Նրա պատմու-

Ճանի վրա վիճակ գցել: Ո՞վ կտա Նրան լեղի կերակուր, և Նրա ծարավը հագեցնելու համար ո՞վ կտա քացախ: Ո՞վ կազատի մեռելներին և Աղամի պարտամուրհակը ո՞վ կպատռի, նրա պարտքն ո՞վ կհատուցի և Նրա փառքի հանդերձներն ո՞վ կհագնի: Եվ ինչպես կհաստատվի Եկեղեցին, և ինչպես պիտի բացվեն արքայության դռները:

Ինչո՞ւ Պետրոսն ասաց. «Բարվոք է մեզ այստեղ լինել»: Քանի որ աշակերտները լեռան վրա ապահով էին հակառակորդ հրեաների կողմից հարուցված չարչարանքներից ու նեղություններից:

Երկրորդ՝ Տերը նախապես հայտնել էր Իր չարչարանքների մասին, և առաքյալները երկնչում էին քահանաներից և Տիրոջ խաչվելու ահից:

Երրորդ՝ տեղում աճած բույսերն ու ծաղիկներն աստվածային փառքից անուշահոտություն էին բուրում:

Չորրորդ՝ տեսան Մովսեսին ու Եղիային՝ որպես ընկերակիցներ իրենց վարդապետին, և ասում էին, թե բարի է, որ նրանք են մեզ հետ, և ո՛չ թե խաչ հանողները:

Հինգերորդ՝ քանզի Մովսեսը կարող է երկնքից մանանա բերել, իսկ Եղիան՝ անձրև, հետևաբար իրենք մեկ այլ տեղ չպետք է գնան: Նաև Տերն է այդտեղ, Ով հացն ու ձուկը բազմացրեց անապատում: Ամպը նրանց վրա հովանի էր, և տեղն էլ լեռան գագաթին էր ու բարեխառն:

Նաև՝ Քրիստոսին այդպես պայծառ տեսնելով լեռան վրա՝ կարծում էին, որ լեռից իջնելուց հետո, այլևս, այդպես պայծառ չեն տեսնելու Նրան: Քանզի, մինչ այդ Նրան միշտ պարզ հագնված ու բոկոտն էին տեսել: Իսկ երբ տեսան Նրան պայծառ տեսքով, ուրախացան Նրա փառքի համար:

Աշակերտները միշտ հաղորդվում էին այն ամենին, ինչ կատարվում էր Տիրոջ հետ՝ ինչպես մկրտության ժամանակ, սքանչելիքներ գործելիս և այժմ էլ, տեսնելով պայծառությունը, կամենում էին հաղորդվել Նրա պայծառության հետ:

Եթե կամենաս, երեք տաղավարներ շինենք, մեկը՝ Քեզ համար, մեկը՝ Մովսեսի, մեկն էլ՝ Եղիայի – Պետրոսը զարհուրել էր այն մահից, ինչից աշխարհին բոլոր բարիքներն էին հեղվելու: Երբ Պետրոսը տեսավ, որ մեռածներն ու ողջերը նույնն են քարոզում, և Տերն ինքն իր կամքով է գնում, էլ առավել համակվեց նախկին երկյուղով, քանզի հաստատ իմացավ, որ մեր Տերը մահվանից չի խուսափելու, և անհնար է, որ իրենք Նրան թողնեն ու փախչեն: Նաև քաջ գիտակցում էր, որ երբ Քրիստոս այդ լեռից իջնի, ուղիղ երուսաղեմ կգնա, ուր իրենց համար մահվան վտանգ կա: Իր այս խղճմտանքի պատճառով սկսեց Տիրոջն ասել, որ հրամայի նրանցից յուրաքանչյուրի համար տաղավարներ պատրաստել և Մովսեսին

ու եղիային այդտեղից չուղարկի: Կարծես թե մեկը նրանց ասում էր, թե այդ լեռան վրա մահն իշխանություն չունի, և որ մահն այդ լեռը վախենում է բարձրանալ, և հրեաներն էլ չեն հանդգնի այդտեղ ելնել: Իսկ եթե անգամ հրեաները հանդգնեն և գան, ապա Մովսեսն ամպով կծածկի լեռը կամ էլ կրացի երկինքն ու կանի այն, ինչ արեց, երբ կամեցան քարկոծել նրան: Իսկ երբ գան խաչ հանողները, ապա եղիան կրակ կիշեցնի ու կայրի նրանց, ինչպես երկու հիսնյակներին և հիսնապետերին:

Պետրոսը խորհում էր նաև, որ եթե անգամ նրանք երուսաղեմ գնան Մովսեսի ու եղիայի հետ, ապա քահանաները չեն համարձակվի իրենց նեղել, որովհետև տեղյակ են նրանց զորությանը: Քանզի Մովսեսը անապատում բազում հրեաների կոտորեց, և նրա հրամանով էր գետինը բացվել ու նրանց բանակները կուլ տվել: Եղիայի մասին էլ անտեղյակ չէին, գիտեին, որ, եթե նրա դեմ դուրյան-ինչ ապստամբեն, ապա նա երկինքը կկապի ու անձրկը նրանցից կկտրի: Իսկ եթե էլ ավելի հանդգնեն, երկնքից հուր կիշեցնի ու ճշմարտության թշնամիներին կայրի:

Գիտեին Եղիայի զորության մասին, և ոչ միայն հիշյալ քահանաները, այլև ուրացողները: Նրանք դեռևս չէին մոռացել իրենց ուժ հարյուր քրմերի սատակումը, որոնց Եղիան իր ձեռքով Կիշոնի հեղեղատում կոտորեց (տե՛ս Գ Թագ. ԺԸ 40): Եվ եթե Աքաաբ թագավորն էր նրանից երկնչում, ապա որքա՞ն առավել Աննան ու Կայիափան, ովքեր Աքաաբից շատ ավելի տկար էին:

Մոռացավ Պետրոսն այն խոսքերը, որով Տիրոջը Քրիստոս դավանեց, և երկնքի Տիրոջն ասաց, թե եկ ծառաների հետ տաղավարում բնակվիր, և դրանով Հիսուսին Մովսեսի ու Եղիայի հետ հավասարեցրեց: Մարկոսն ու Ղուկասը բացահայտում են այդ խոսքերի պատճառը.

Սակայն չգիտեր, թե ինչ էր խոսում, որովհետև զարհուրած էին (Սարկ. թ 5) – Աշակերտներն անկատար էին մինչև Տիրոջ խաչվելը, քանի որ դեռ Հոգին չէին ստացել: Այդ պատճառով ասվեց. «Հոգիս հոժար է, բայց մարմինս՝ տկար» (Սատթ. ԻԶ 41): Ասում է՝ «Հոգիս հոժար է», որովհետև մարգարեներն աղաչում էին մահանալ, իսկ՝ «Մարմինս տկար» ասելով՝ առաքյալներին նկատի ունի:

Առաքվել էին առաքյալները՝ երկրի վրա եկեղեցին հաստատելու, բայց ուղղում էին տաղավար կառուցել լեռան վրա: Եվ այդ ժամին Տերը ցույց տվեց, որ ինքը կարիք չունի տաղավարի, և որ ինքն է անապատում տաղավար պատրաստել նրանց հայրերի համար:

Հոգեոր իմաստով «երեք տաղավարները» նշանակում են. նախ՝ մեր Հոգին, մարմինը և միտքը. ապա՝ Հոգու մասերը՝ խոհեմությունը, արիությունը, արդարությունը և ողջախոհությունը: Նաև՝ բարոյական, տնտե-

սական և քաղաքական օրենքները: Երեսնավոր, վաթսունավոր և հարյուրավոր առաքինության պտուղները: Երեք հիսնյակները: Երեք ժամանակները՝ մանկությունը, երիտասարդությունը և ծերությունը: Նաև՝ հավատը, հույսը և սերը: Կուսությունը, ողջախոհությունը և ապաշխարությունը: Մարգարեական, առաքելական և վարդապահտական խոսքերը: Կյանքը, մահը և հանդերձյալը:

Եվ մինչ նա դեռ խոսում էր, ահա մի լուսավոր ամպ նրանց վրա հովանի եղավ –

Ամպը Տիրոջ Աստվածությունն է ցույց տալիս, ինչպես և լեռը, քանզի Աստված միշտ լեռան վրա ու ամպի մեջ է երևում՝ ինչպես Մովսեսին, Հոբին ու Եղիային: Եվ Դավիթն է ասում. «Ամպ և մեգ է շուրջը Նրա, իրավունքով ու արդարությամբ է հաստատված աթոռը Նրա» (Սաղմ. ՂԶ 2), ինչը ցույց է տալիս Աստծու անձառելիությունը: Մինչ Պետրոսն իմաստասիրում էր ձեռագործ տաղավարի մասին, Տերը հայտնում է անձեռագործ խորանի մասին՝ ցույց տալով, որ ձեռագործ հարկի կարիք չունի:

Լուսավոր ամպը Սուրբ Հոգուն է խորհրդանշում, քանի որ ցույց է տալիս Նրա Աստվածության փառքի լույսը: Այսօր Սուրբ Երրորդության փառքը ցույց տրվեց Թաթորի վրա, ինչպես դա եղավ Հորդանանում. Որդին՝ հայտնությամբ, Հոգին՝ ամպով, և Հայրը՝ ձայնով: Առաքյալների ու մարգարեների՝ ամպի տակ լինելը նշանակում է բոլոր սրբերի և արդարների ամպով գնալը Քրիստոսին ընդառաջ և միշտ Նրա հետ լինելը:

Լուսավոր ամպը տեսնելով՝ Պետրոսը տեսնում է տաղավար, որում չկա խավար: Տաղավարը փայլատակելով երևաց և աշակերտներին սքանչացրեց:

Հարց. – Իսկ ինչո՞ւ Աստված ամպի մեջ երևաց:

Պատասխան. – Որովհետև Աստված հաճախ էր այդպես երևում, ինչպես ասում է մարգարեն. «Ահավասիկ Տերը, բազմած թեթևասահ ամպերի վրա, գալու է Եղիպտոս» (Եսայի ԺԹ 1): Նաև՝ «Մինչ նրանք դեռ նայում էին, երկինք վերացավ, և ամպը նրան ծածկեց նրանց աչքերից» (Գործք Ա 9):

Ամպը լուսավոր էր, քանի որ խոստումը պարգևների մասին էր, ոչ ինչպես Մովսեսի դեպքում, ում խավարում և մեգի մեջ տվեց Տասնաբանյան:

Դարձյալ՝ Սուրբ Հոգին էր Լուսավոր ամպը: Այսպիսով՝ լեռան վրա Սուրբ Երրորդության ներկայությունը կար. Հայրը՝ վկայելով, Հոգին՝ երևալով և Որդին՝ պայծառանալով: Աշակերտների թիվը ևս Երրորդությունն էր խորհրդանշում, նաև՝ Մովսեսը, Եղիան և Տերը նրանց մեջ Երրորդության մասին հայտնեցին: Նմանապես և Պետրոսի խոսքերը, թե՝ Երեք տաղավարներ շինենք, Երրորդությունն է խորհրդանշում:

Ամպից մի ձայն եկավ. «Դա' է Իմ սիրելի Որդին, Որին հավանեցի, Դրա՞ն լսեցեք – Հիսուս չխոսեց և ոչ էլ Մովսեսն ու Եղիան, քանզի վերջիններս աներևույթ եղան՝ իրենց տեղերը գնալով, այլ հավատարիմ Վկան՝ Հայրը, բարձունքներից խոսեց՝ ասելով. «Դա' է Իմ սիրելի Որդին, Որին հավանեցի, Դրա՞ն լսեցեք»:

Որպեսզի աշակերտները Հորից սովորեն և ոչ թե մեկ ուրիշից: Քանի որ Պետրոսը չէր հավանում մարդարեների խոսքերը, ովքեր խոսում էին Տիրոջ մահվան մասին, և ոչ էլ Քրիստոսի խոսքերը, Ով միշտ ասում էր, թե եկել է որ մեռնի, այդ պատճառով ամպից է գալիս ձայնը, և ամպն Աստծու աթոռն է, ինչպես Եսային է ասում. «Ահավատիկ Տերը, բազմած թեթևասահ ամպերի վրա» (Եսայի ԺՇ 1): Ինչպես թագավորական ձին կամ արքունի տունը հայտնում են թագավորի ով լինելը, այդպես ամպն է Աստծու հայտնիչն ու նշանակը, որպեսզի իմանան, որ Աստծուց են գալիս խոսքերը:

Ոչ ոք այնպես չի սիրում որդուն, ինչպես ծնողը, և ոչ ոք հենց այնպես չի մատնի իր զավակին մահվան, քանի որ իր որդին է, և այն էլ սիրելի որդին: Եվ եթե Պետրոսն ուրիշին չէր լսում, գոնե Հորը պետք է լսեր և չտրտմեցներ: Ասում են, թե Աղամին Դրախտից հանելուց հետո Հայրն այլևս մարդկանց հետ չխոսեց, մինչև Հորդանանում և Թաքոր լեռան վրա խոսելը:

Հոր ձայնը լսելուն պես Մովսեսն ու Եղիան գնացին իրենց տեղերը, և Հիսուս մենակ մնաց: Հոր ձայնից փախչում են մարդարեները, և առաքյալները՝ գետին ընկնում, քանզի Հոր ձայնը նրանց համար չվկայեց, թե Դա է իր սիրելի Որդին:

Հայրը նրանց հայտնեց, որ կատարվել է Մովսեսի մարդարեությունը. «Քո եղբայրների միջից քո Տեր Աստվածն ինձ նման մարդարե պիտի մեջտեղ հանի, նրան կլսեք» (Բ Օրենք ԺՇ 15), և պետք էր Որդուն լսել: Մովսեսը ծառա էր, և ինչ որ լսեց և ինչ հրամայվեց նրան, այդ էլ վկայեց: Այդպես և բոլոր մարդարեները, մինչև եկավ նա, Ով գալու էր:

Ինչ Օրենքն առաքյալներին պատվիրեց, նույնը Հայրը հայտնեց, և այդ ձայնից առաքյալները գետին ընկան իրենց երեսի վրա, քանզի ձայնն ահեղ էր: Ինչպես Հոր ձայնը տապալեց նրանց, այդպես Որդու ձայնը, իր Աստվածության զորությամբ, նրանց բարձրացրեց:

Դրա՞ն լսեցեք – Այսինքն՝ եթե կամենում է խաչը բարձրանալ, մի՛ հակառակվեք, և ինչ էլ որ անի, Հոր կամքով է անում: Երբ աշակերտները լսում են այս խոսքերը, ընկնում են իրենց երեսների վրա:

Հարց. – Իսկ ինչո՞ւ աշակերտները ընկան, չէ որ նույն ձայնը լսեցին նաև Հորդանանում, բայց ոչ ոք նրանցից չթմրեց, այլ կարծեցին, թե որոտի ձայն էր, և չնեղվեցին:

Պատասխան. – Որովհետև անապատում էին, անկոխ տեղում և բարձր վայրում, իսկ Հորդանանում բազմության մեջ էին: Թաքորի վրա տագնապել էին, քանի որ լույսը սաստիկ էր, անխառն ու առավել, քան արեգակի լույսը, ամպը հովանի էր, Քրիստոս՝ այլափոխված, և այդպիսի փառքի երևումը վախեցնում էր նրանց:

Իսկ Ղուկասն ասում է, թե քնի ծանրության տակ էին: Ինչպես աչքն այլայլվում է լույսի ուժգնությունից, այդպես էլ նրանք էին լեռան վրա: Դա ցույց է տալիս, որ նրանք դեռևս պատրաստ չէին Աստվածության փառքի ու արքայության համար, ինչպես հրեաները չկարողացան նայել Մովսեսի դեմքից ճառագաղող լույսին և ոչ էլ կարողացան լսել Աստծու ձայնը: Աշակերտների թմրությունը անախորժ չէր, այլ ինչպես սերովբեների, քերովբեների և հրեշտակների աստվածային շնորհներին միանալը, Պողոսի երկինք գնալը, Ստեփաննոսի՝ երկինքը բաց տեսնելը՝ զմայլված, Հիացած և անճառելի միսիթարությամբ:

Հիսուս մոտենալով դիպավ նրանց ու ասաց. «Ոտքի' ելեք և մի' վախեցեք» – Հոր ձայնը գցեց, իսկ Որդու ձայնը և ձեռքերը կանգնեցրին, որպեսզի ապշության պատճառով նրանց մտքից տեսիլքը չկորչի: Ապա փարատեց նրանց երկյուղը, որպեսզի ահը չվանի պատահածի հիշատակը նրանց սրտից: Երբ առաքյալները բարձրացնում են իրենց աչքերը, տեսնում են միայն Հիսուսին: Այդպիսով իմանում են, որ Քրիստոսի համար էր այդ ձայնը և այդ խոսքերը մարդարեներից մեկին չասվեցին: Իսկ մարդարեները շտապեցին գնալ և ավետիս տալ Հոգիներին:

Մինչ իջնում էին լեռից, Տերը նրանց պատվիրեց, որ այդ տեսիլքը ոչ մեկին չպատմեն, մինչև Մարդու Որդին մեռելներից հարություն առնի, ինչպես և նախկին սքանչելագործությունների դեպքում, որպեսզի չգայթակղվեն: Քանզի Տերը գիտեր, որ նրանց մոլագար էին անվանելու, եթե նրանք պատմեին այն ամենը, ինչ տեսել էին:

Նաև՝ ժողովուրդն անկիրթ էր, և ինչքան շատ բան իմանային Քրիստոսի մասին, այդքան դժվար կլիներ նրանց համար՝ տեսնել նրան չարչարանքների ժամին խաչի վրա: Զէին հավատա, որ նրանք լսել են Աստծու ձայնը և արժանացել նրա Փառքի տեսությանը: Մարդիկ առաքյալներին կհարցնեին, թե գուք որտեղի՞ց գիտեք Եղիային ու Մովսեսին, երբ ոչ ոք չգտավ անգամ Մովսեսի գերեզմանը, և կհայՀոյեին նրանց:

Նրանք չէին կարող այդ ամենը պատմել, քանի որ նրանք, ում պատմելու էին, լսելու արժանի չէին: Ինչպես և Տերը նախապես սովորեցրեց առաքյալներին. «Մ'ի տվեք սրբությունը շներին և ձեր մարդարիտները խողերի առաջ մի' գցեք» (Սատթ. Է 6):

Տերը պատվիրեց, որ լուեն մինչև Հարությունը և Սուրբ Հոգու գալուստը, երբ կպատռվեն գերեզմանները, և հին ու նոր մեռելները գուրս կգան, այդժամ արդեն այդ բոլորը հավատալի կլինի: Քանզի նա, Ով դժոխքից ու գերեզմանից հանում է մեռելներին, կարող է նաև Եղիային ու Մովսեսին երկիր բերել: Ասում է նրանց՝ մնացե՛ք մինչև զորություն ստանաք, և երբ չհավատան, ապա գուշ մեռելներին հարություն կտաք իմ անունով՝ նրանց հավատացնելու համար: Քանզի գալու է ժամանակ, երբ ամեն ինչ հնագանդվելու է Որդուն:

Արդ՝ չկան ավելի երանելի առաքյալները, մանավանդ այդ երեքը, ովքեր արժանացան Տիրոջ հետ մի հարկի տակ լինելուն: Այդ երեքն էին տեսնելու Տիրոջ խոնարհաբար աղոթելն Ավագ ուրբաթի գիշերը, այդ պատճառով էլ այժմ տեսնում են նրա պայծառությունը, որպեսզի այնժամ չտկարանան:

Պետրոսը սրտով հավատաց, լեզվով դավանեց, և պետք էր, որ նաև աչքով տեսներ և ականջով լսեր, որպեսզի մեզ վկայեր: Նաև Հովհաննեսն է ասում. «Տեսանք նրա փառքը, նման այն փառքի, որ Հայրն է տալիս Միաձնին՝ լի շնորհով ու ճշմարտությամբ» (Յովհ. Ա 14), իսկ Հակոբոսն արյամբ վկայեց:

Մեր Տերը կամեցավ երկրի վրա հորինել երկնավորների կարգը, քանզի այնտեղ վերին դասերն անընդմիջաբար առնում են Աստծու լույս գիտությունը և տալիս միջիններին, իսկ նրանք էլ՝ ցածր դասերին: Այդպես՝ երեք աշակերտներն ականատես եղան Աստծու լույսին, Աստծուց սովորեցին և ըստ իրենց չափի՝ Աստծու խորությունների տեսնողներն դարձան. Պետրոսը՝ Եկեղեցու հիմքը, ինչպես աթոռները, Հակոբոսը՝ հանճարը, ինչպես քերովքեները, և Հովհաննեսը՝ սիրելի աշակերտը, ինչպես սերովքեները:

Այն մեծ խորհուրդը, որ կատարեց Քրիստոս Թաքոր լեռան վրա, մինչ այդ երբեք չէր եղել, քանզի բոլոր տեղերից այնտեղ հավաքվեցին. երկնքից երեաց Սուրբ Երրորդությունը՝ Հայրը՝ ձայնով, Սուրբ Հոգին՝ լուսավոր ամպով, իսկ Որդին՝ պայծառակերպված, դժոխքից եկավ Մովսեսը, իսկ Դրախտից՝ Եղիան: Եղիան նաև մարդկանց կողմից եկավ: Այդտեղ էին նաև Քրիստոսի աշակերտները, ովքեր դեռևս չունեին բավարար միտք:

Ամբողջ ժամանակ, որ մեր Տերն աշխարհում շրջեց, առավելապես ըստ մարդկային խոնարհության անցկացրեց, իսկ այդ լեռան վրա իր ահավորությամբ հրեշտակներին էլ գերազանցեց: Ոչ միայն, որ լուսեղեն փառքով երեաց, այլ նաև, որ խորտակեց մահվան դռներն ու իրականացրեց առաքյալներին տված իր խոստումները:

Այդտեղ ճշմարիտ արքայությունն էր, քանի որ այդտեղ միասնական երրորդությունը լիալիր էր: Աստված ինչ-որ վայրում չի լինում, սակայն երեաց մարմնավորներին՝ ինչպես տարածական: Եվ այն տեղը, ուր Աստված հայտնվեց, առանց վարանելու կարելի է արքայություն կոչել, քանի որ արքայությունը այն է, ուր Աստվածությունն է երեսում:

ՏՈՆ ՇՈՂԱԿԱԹԻ

ՆԱՎԱԿԱՏԻՔ ԱՍՏՎԱԾԱԾԱՒ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՒՐ

Քահանաները զգեստավորված գալիս են ատյան և ասում «Ուրախ լեր, սուրբ Եկեղեցի»: Օրվա երեսրբյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հօգոր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա' մեզ»:

Այս տոնը հիշատակն է սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքի, ըստ որի՝ Աստծու Միածին Որդին, ոսկե ուռը ձեռքին, իջավ Վաղարշապատ քաղաքը, և Նրա իջման տեղում (որը կոչվեց Էջմիածին) կաթեց աստվածեղեն շողը, և լուսեղեն տեսիլքով գծագրվեց Մայր Եկեղեցու շինության ձևը: Այդ պատճառով էլ այս տոնը կոչվում է Շողակաթ: Շողակաթ է կոչվում նաև Լուսավորչի կառուցած երեք տաճարներից այն մեկը, որի կառուցման տեղի վրա երևացել էր լույսի առաջին ծագումը, նախքան Մայր տաճարի տեղում լուսեղեն շինության գծագրումը:

Այս տոնը կատարվում է Աստվածածնի Վերափոխման տոնին նախորդող շաբաթ օրը և հանդիսանում է Վերափոխման նավակատիքը: Քանի որ Գրիստոսի շնորհական մայրը՝ սուրբ Եկեղեցին, ամեն օր ծնում է Գրիստոսին իր սրտում՝ սուրբ Սեղանի վրա, այդ պատճառով էլ սուրբ Գրիգորի կողմից Սուրբ Էջմիածնի տաճարի ավագ խորանն Աստվածածին է կոչվում: Դա է պատճառը, որ Աստվածածնի պատկերը դրվում է Եկեղեցիների սուրբ Սեղանների վրա:

Երբ նոյը ելնում է տապանից, իջնում է Արարատյան դաշտ և այնտեղ, ուր հետագայում Վաղարշապատ քաղաքն էր կառուցվելու, սեղան է պատրաստում և Աստծուն ողջակեզ մատուցում՝ որպես հաշտության պատարագ: Այնուհետև՝ նոյից շատ տարիներ անց, Աստված ծագեցնում է տիեզերքի արժիական լույսին՝ սուրբ Գրիգորին, ով ծաղկազարդելով պայծառացնում է մեր մարդկային հոգիները: Նա, ելնելով Վիրապից, գալիս է Վաղարշապատ, ուր նախ ամփոփում է Հոռիփսիմյանց սուրբ կույսերի նշխարները (ովքեր տակավին անժաղ էին մնացել), ապա ուղղաշավիդ վարդապետությամբ լուսավորում հավատացյալներին և մշտամաքուր սրտով ու հրեշտակային վարքով, հորդառատ ու մարգարեական խոսքերով ժողովրդին ուսուցանում աստվածային պատգամները՝ նրանց խավարամած կուապաշտությունից գեպի աստվածպաշտության լույսը տանելով և իր զվարթալույս խոսքերով նրանց փշոտ ու տատասկոտ ճանապարհներից հանելով՝ երկնքի ճանապարհին է մերձեցնում: Ինչպես հնում Մովսեսն արեց իսրայելի համար, այնպես էլ նորում Գրիգորն է անում՝ բոլորիս Արարչին մեզ հետ հաշտեցնելով և զարմացնելով երկնային

գորքերին: Նա ցերեկը վարդապետելով քարոզում էր, իսկ գիշերներն աղոթքով անցկացնում:

Վիրապից ելնելուց երեսուն օր անց տեսնում է հրաշալի ու սքանչելի, ահեղ ու զարմանալի մի տեսիլք, քանզի Տերը չէր կամենում անտեսել իր ճշմարիտ ծառային, ով իր անվան համար բազում չարչարանքներ կրեց:

Այդ տեսիլքի մասին Ազաթանգեղոսն այսպես է գրում.

«Գիշերվա կեսին համկարծակի սաստիկ ձայն եղավ, որոտման թնդյուն: Բացվեց երկնքի հաստատության խորանաշեն ծածկը և մի այր իշավ լույսի կերպարանքով, կանչեց իմ անունն ու ասաց. «Գրիգո՛ր»: Նայեցի, տեսա նրա կերպարանքը և զարհուրած դողալով գետին ընկա: Նա ասաց ինձ. «Դու վեր նայիր և տես հրաշքները, որ քեզ ցույց եմ տալու»: Եվ ես նայեցի ու տեսա երկնքի հաստատությունը բացված, և նրա վրայի ջրերը՝ ճեղքված և ձորերի ու լեռների կատարների նման այս ու այն կողմ բաժանված ու դիպված, աչքի տեսողության համար անբավ ու անկշռելի: Իսկ լույսը վերեկց ներքե հոսելով մինչև երկիր էր հասնում. և լույսի մեջ տեսա անչափ գորք, որոնք լուսեղեն էին, երկիւ և մարդկային կերպարանք ունեին և որոնց թևերը կրակի նման էին: Նրանք մանր փոշու հյուլեների նմանություն ունեին, որ արեգակնակեզ գարնան ժամանակ պատուհանների կամ երդիկների լուսնացույցի վրա չողերի մեջ խաղում է:

Տեսա մարդկային մի ահավոր կերպարանք, բարձր ու ահեղ, որն առջևից էր ընթանում, և վերևից մինչև ներքե վայրէջքի առաջապահն էր: Նա ձեռքին ուներ ոսկե մի մեծ մուրճ, և բոլորը Նրա ետևից էին գալիս: Ինքը գալիս էր ալանալով, խոյանալով արագաթև արծվի նմանությամբ ու իշավ հասավ մինչև երկրի հատակը, քաղաքի մեջտեղը, խփեց լայնատարած գետնին, որից մեծ ու անչափ թնդյուններ հնչեցին անդունդների սանդարձմետից: Ամբողջ երևացող երկիրը, աչքին տեսանելի լինելու չափ, հարթ հավասար դաշտածե տափակացավ: Եվ տեսա քաղաքի մեջ, արքունի ապարանքի մոտ, ճախարակածե ոսկե խարիսխ, խոշոր բլրի մեծությամբ և նրա վրա հույժ բարձր հրեղեն սյուն, իսկ վրան՝ ամպե խոյակ՝ լուսեղեն խաչով:

Նայեցի և տեսա երեք այլ խարիսխներ ևս. մեկն այն տեղում, ուր նահատակվեց սուրբ Գայանեն՝ երկու ընկերների հետ, մյուսն այն տեղում, ուր սուրբ Հոփիսիմեն նահատակվեց երեսուներկու ընկերների հետ և մեկն էլ՝ հնձանի տեղում: Այդ խարիսխները կարմիր էին արյան գույնով, սյուններն ամպեղեն էին, և խոյակները՝ հրեղեն: Երեք սյունների վրա կային լուսեղեն խաչեր՝ տերունական խաչի նմանությամբ, և այս սյունների խաչերը նման էին այն լուսեղեն սյունի խոյակին, որը նրանցից բարձր էր: Չորս սյունների խաչերի վրա զարմանատես կամարներ միմյանց կապվեցին և դրա վրա գմբեթածե խորանարդ ու աստվածակերտ, զարմանալի ամպեղեն

շինվածք տեսա: Խորանից ներքեւ կամարների վրա տեսա այս երեսունյոթ սուրբ վկաներին՝ սպիտակ հանդերձների լուսավոր կերպարանքով, որն անկարող եմ պատմել:

Եինվածքի կատարին տեսա զարմանալի, աստվածակերտ, սքանչելի, հրեղեն աթոռ, և նրա վրա կար տերունական խաչը: Համատարած լույսը նրան պարուրելով խառնվեց խաչի ճառագայթներին և կպչելով միաձուլվեց: Շողացող լույսը սյուն դառնալով ցայտեց խարիսխների ներքին սյուների մեջ:

Եվ հորդաբուխ աղբյուր բխեց, հոսեց ու ծավալվեց բոլոր դաշտերում և ամեն ինչ լցրեց, որչափ աչքը տեսնում էր: Եղավ լի ու կապտագույն ծով, և դաշտերն առհասարակ երկնագույն երևացին: Տեսա հրեղեն սեղաններ, անչափ բազմությամբ, և ամեն մի սեղանի վրա՝ մեկական սյուն՝ վրան մեկական խաչով, որոնք իբրև աստղերի բազմություն երևացին և անչափ փայլեցին:

Տեսա և սև գույնի այծերի անթիվ հոտեր, որոնք ջուրն անցնելով ոչխարներ դարձան, և նրանց գույնը սպիտակության փոխվեց: Ոչխարների լուսեղեն բուրդը փայլում էր, ու նրա ճառագայթները փայլատակում էին: Մինչդեռ նորից նայում էի, հոտերը հանկարծակի ծնվեցին ու բազմացան, ծնունդներն ամեն կողմ լցրին, և ծնված գառներն ամենքն էլ լուսագեղմ էին: Հանկարծ այլ ծնունդներ շատացան, բազմացան, և կեսն ընկնելով գետի մեջ, ջրի այն կողմը ելան: Գառները դառան թուխ դայլեր և գնացին հարձակվեցին հոտերի վրա, սկսեցին կոտորել, և արյան ճապաղիք եղավ: Մինչդեռ նայում էի, տեսա, որ հոտերին թևեր աճեցին և դարձան թևավորներ ու վերացան, խառնվեցին լուսեղեն զորքերին: Ապա հրեղեն հեղեղ բարձրացավ ու վերցրեց տարավ գայլերին»:

Հստ տեսիլքի՝ երկնքի հաստատաշեն խորանի բացվելը նշանակում է Աստծու մարդասիրության հայտնվելը ստորիններին: Մեծ թնդյունը նշանակում է, որ աստվածային ողորմության անձրեւ վերստին ցողվում է մարդկանց վրա: Իսկ բացված հաստատությունը և ջրերի բազմությունը, որ կուտակված կային այս և այն կողմում, ցույց է տալիս, որ մարդկանց համար բացվել է երկինք երնելու ճանապարհը: Լույսի սաստիկ հեղումը բարձունքից, որը լցնում է ամբողջ երկիրը, նշանակում է Լույսի քարոզությունը և Ավետարանի տարածումը ստորինների մեջ: Իսկ լուսեղեն զորքը, որ իջնում է լույսի հետ միասին, երևաց ի պատիվ վկանների, նաև մարդկանց խրախուսելու ու մեզ հետ լինելու համար:

Ահավոր ու շքեղ Այրը, Ով գնում էր լույսի առջելից և իր ձեռքի ոսկի մուրճով հարվածեց սանդարամետին, Դա Աստծու Միածին Որդին է, Ում հայացքից դղրդում է երկիրը և մոտենալուց ծխում են լեռները, և

անդունդներում սուզվում սատանայի մոլորագնդերը։ Երկրի հնչելը նշանակում է մարդկանց հնագանդությունը կենաց խոսքի քարոզությանը։

Սյունը, որի խարիսխը ոսկի է և ինքը՝ հրեղեն, խոյակն՝ ամպեղեն և վրան լուսեղեն խաչ, կաթողիկե եկեղեցին է, որն իր թեերի տակ հավաքում է բոլոր ժողովուրդներին հավատի մի միության մեջ։ Ոսկյա խարիսխը հաստատության անշարժ վեմն է։ Ամպեղեն խոյակը նշանակում է, որ արդարներն ամպով են վերանալու Քրիստոսին ընդառաջ, ինչպես ասում է առաքյալը (տես Ա Թեսաղ. Դ 16)։ Խոկ լուսեղեն խաչը մեծ քահանայապետությունն է ժողովրդի մեջ և օրինակն է Քրիստոսի մարմնացյալ պատկերի, Աստվածորդու քահանայապետության։ Այդ տեղում Աստծու տաճարն է, բոլոր հավատացյալների աղոթքի ու խնդրանքների տունը և քահանայապետության աթոռը։

Երեք խարիսխները, որոնք արնագույն կարմիր էին, նահատակների նեղությունների, չարչարանքների ու մահվան համբերությունն են խորհրդանշում, քանզի իրենց մահը հավատի ճշմարտության խարիսխ դարձրին՝ իրենց արյունը թափելով։ Ամպեղեն սյուները երևացին, որովհետեւ ամպը հարության, երկինք վերանալու թեթև արագություն ունի։ Հրեղեն խոյակը նշանակում է, որ նրանց բնակությունն աստվածային լույսի հրի մեջ է լինելու։ Խաչերը խորհրդանշում են նահատակների չարչարանքները, որոնք նման են Տիրոջ չարչարանքներին, քանի որ Աստծով ապրեցին և Քրիստոսի հետ խաչվեցին, և Քրիստոս կենդանի է նրանց սակորներում։ Քանզի նրանք իրենց մարմինը կախեցին տերունական խաչից. և ինչպես չարչարանակից եղան իրենց Տիրոջը, այդպես և հաղորդակից են լինելու նրա փառքին ու գորությանը։

Առաջին խաչը քահանայապետության պարծանքն է՝ Քրիստոսի խաչի փառավորությամբ, իսկ մյուս երեքը հայտնում են սրբերի հանգստարանների տեղերը։ Առաջին սյունը բարձր երևաց, քանի որ այն պատիվն է Կաթողիկե եկեղեցու, որը շինվեց Քրիստոսի Արյամբ, և մեծ է, քան բոլոր մեծությունները։ Իսկ կամարները, որոնք սյուները կապում են միմյանց, ցույց են տալիս եկեղեցու միասնությունը, որոնք շինվեցին տիեզերքի տարբեր ծայրերում նույնագավան խոստովանությամբ։ Իսկ վերին խորանը խորհրդանշում է վերին մայրաքաղաքը՝ Երկնքի արքայությունը, որում բնակվում են Աստծու վկաները։ Նրա վրա ցույց տրվեց Աստծու աթոռը, որը եկեղեցու գլուխն է։

Խաչին փարփած լույսն Աստծու Հոգին է, Ով փառավորում է Որդուն։ Այն խառնվեց ճառագայթին, քանզի նա Որդուց է վերցնում և պատմում իրեն սիրողներին։ Դրանք իրար միացան, քանզի մեկ է Աստվածության էությունը, մեկ է գիտությունը և դավանությունը, որը սովորեցինք

Որդուց և ընդունեցինք Հոգուց: Սյուների մեջ լույս ծագեց, որտեղից և հորդաբուխ աղբյուր բխեց, քանզի Կաթողիկե Եկեղեցուց են շնորհները, իսկ նահատակների ու քահանայության մեջ բխելու է մկրտության աղբյուրը՝ լվանալու համար Հոգու ախտը՝ մարմնականով հանդերձ: Իսկ այն, որ հորդեց և լցրեց շատ վայրեր, նշանակում է, որ մկրտությամբ բազմաթիվ ժողովուրդների փրկություն է լինելու: Դաշտերը երկնագույն երեացին, քանզի երկիրը երկնքի նման է լինելու, որպես հրեշտակների ու մարդկանց հավասարություն:

Հրեղեն սեղանների բազմությունն Աստծու սեղաններն են, որոնք քավություն կբաշխեն բոլորին: Հրեղեն են սեղանները, որպեսզի Հոգու պաշտամունքը փառքով լինի: Սեղանների վրայի մեկական սյուները քահանայական պաշտամունքներն են, իսկ վրայի խաչերը՝ Քրիստոսի անունն ամենուր փառավորելու նշանակներն են: Նրանք երկնքի աստղերի նման բազում էին, որովհետեւ սրբության պաշտամունքն աստղերի նման պիտի բազմանա:

Աև այծերի բազում հոտերը, որոնք ջուրը մտնելով դարձան սպիտակ ոչխարներ, նշանակում են, որ աստվածային շնորհների աջը քահանայության միջոցով է հասնելու, որի ձեռքը բխեցնելու է մկրտության աղբյուր՝ բազում մեղավորների թողության ու քավության համար: Մկրտության խորհրդով փոխվելու է ոչ թե մարդկանց բնությունը, այլ բարքերը և վարքը՝ դեպի լուսափայլ սպիտակություն: Մկրտվածները զգեստավորվելու են լույսով և արժանի են լինելու խոստացված արքայությանը: Իսկ որ հոտերը ծնեցին, բազմացան ու լցրեցին բոլոր տեղերը, դա նշանակում է, որ երկար ժամանակ աճելու է Ավետարանի քարոզությունը, և լինելու են նոր ծնունդներ, և բազմանալու է Քրիստոսի հոտը: Իսկ ոչխարների այն մասը, որ հետո դարձավ իր նախկին սեռությանը, նրանք են, ովքեր ետ դարձան աստվածային սրբությունից, դարձան գայլեր և Քրիստոսի հոտը կոտորողներ: Իսկ հոտի մնացած մասը, թերեր ստանալով, վերանալու է երկինք: Դրանք իրենց արյամբ վկայողներն են և նրանք, ովքեր ամեն օր արյուն թափելու չափ պատերազմում են ընդդեմ երեացող և աներևույթ հակառակորդի, որոնց ճգնաշան աշխատությամբ կառուցվեց Կաթողիկե Եկեղեցին:

Ապա Տերն ասում է Գրիգորին, որպեսզի նա լինի պինդ, քաջ և զգույշ, և հրամայում է իր ցույց տված տեղում կառուցել տաճար Աստծու անվան համար, ինչպես նաև սրբերի վկայարաններ՝ նրանց զոհվելու վայրերում, որպեսզի բժշկվեն զարկվածները, Ավետարանի քարոզությունն օրըստօրե առաջադիմի, և Քրիստոսի հավատի մեջ բոլորը չափահաս դառնան: Դրանով տեսիլքն ավարտվում է:

Տեսիլքից հետո Լուսավորիչը շարունակում է ուսուցանել ժողովրդին և ասում Տրդատ թագավորին, որպեսզի գան և կառուցեն լույսի սուրբ խորանը, ըստ տեսիլքի օրինակի: Եվ Հայաստանում այն տեղում, ուր Տերը հարվածեց ոսկյա մուրճով, կանգնեցվում է Կաթողիկե եկեղեցին: Այդ խորանով ուրախանում են և' երկնավորները, և' երկրավորները, և այդտեղ է լինում Աստվածորդու հարսանյաց խրախճանքը, ուր Հայրն առատ սեղան պատրաստեց և հրավիրեց ճանապարհի եզրերի բոլոր նստածներին ու գեերից տուժածներին (տես՝ Սատթ. ԻԲ 10) և այդտեղ արեց իր օթևանն իր Որդու և Սուրբ Հոգու հետ միասին, ըստ իր խոստման: Այդպիսով՝ փրկվում են Հայոց աշխարհի հոգիները ծովահեղձ սատակումից, քանզի Տերը, ախտերից սեացած մարդկանց մտցնելով իր հրախառն սենյակները, նրանց մաքրազարդեց իբրև լուսատեսիլ հրեշտակներ և լուսապաճույն գեղեցկությամբ զարդարելով՝ դարձրեց Վերին երուսաղեմի որդիներ:

Այդ եկեղեցին գերազանց է իր խորհրդով, քան նախկին Տապանակը, քանզի Տապանակով միայն Դագոնի կուռքը խորտակվեց, իսկ եկեղեցով՝ անգունդի խորքերում խորտակվեցին բագինների դիվանվեր պատերը՝ իրենց զոհասեղաններով ու պաշտամունքով հանդերձ: Այդտեղ Տերը փառավոր ու ճոխ իշխանական պերճությամբ երևաց, և այդ պատճառով դա տուն է փառավորության և ազատության: Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը գլուխն է Հայաստան աշխարհի եկեղեցիների, քանզի լուսո այս խորանով են պայծառանում հայոց եկեղեցիները, և Հայոց աշխարհը Միաձնաէջ այս սրբավայրով է լուսավորվում աստվածգիտության լույսով:

ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԸ

Գիշերը կատարվում է հսկում, Սրբությունը դնում են սուրբ Սեղամին: Թահանամերը զգեստավորված գալիս են ատյան և սկսում «Այսօր ժողովեալ սրբոցն» շարականը: Օրվա երեքսրբյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ եկիր ի փոխումն մօր Յօն և Կուսի, ողորեան մեզք: Ապա խաչով ու Ավետարամնվ թափոր են կազմում՝ ասելով «Այսօր ժողովեալ» շարականը: Խաղողօրինեքի ժամանակ ասվում է սուրբ Ներսես Շնորհալու աղոթքը:

Արարածների Արարիչը ստեղծեց մեծ ու փոքր լուսատուները՝ արեգակը, լուսինը, աստղերը, ջահերը, կանթեղներն ու մոմերը՝ խավարը փառատելու, մեր մաքերը լուսավորելու և սրտերն ուրախացնելու համար: Այդ օրինակով էլ, երբ տոնում ենք արքերի հիշատակը, պայծառանում է մեր միտքը՝ ըստ այս խոսքի. «Արդարների հիշատակով պայծառանում է ժողովուրդը»: Հետևաբար՝ որքան առավել պիտի պայծառանանք Աստվածամայր Կույսի հիշատակով, քանզի որքան արեգակը գերիվայր է ու պայծառ, քան երկնքի մյուս լուսատուները, այդքան գերահրաշ ու արփիափայլ է Աստվածածին Կույսի հիշատակը մյուս արդարների հիշատակից, և այդքան բերկում են հավատացյալները, երբ Տիրամոր ննջումն են տոնում: Որովհետեւ նա մեզ չի մերժում, այլ ըստ իր մարդասեր կամքի ու մեծ բարության ընդունում, բերկում և ուրախանում է մեղանով, ինչպես մայրն իր թոթովախոս մանուկներով, ինչպես վարդապետն իր դեռևս անկատար աշակերտների խոսքերով, քանզի նա իր համար փառք չի հայցում, այլ տոնողներիս օգուտն ու փրկությունն է կամենում իր փառավորումով: Երբ տոնում ենք Տիրամոր հիշատակը, ցնծում է երկինքը, զվարճանում է երկիրը, մեզ տոնակից են լինում երկնային գորքերը՝ Սուրբ Հոգու պարգևները սփովելով տարածվում են տոնասեր հավատացյալ անձերիս վրա, ամենասուրբ Կույսը բարեխոս է լինում տոնողներին համար, ջնջվում է մեր մեղքերի գիրը, ու փարատվում են մեր հոգու ու մարմնի բոլոր ցավերը:

Այս տոնը տոնում ենք կիրակի օրը և ո՛չ մեկ այլ օր, ինչպես առաքյալներինը, մարգարեներինն ու մարտիրոսներինը, և այս օրն առավելապես ենք պատվում, որովհետեւ մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի գալստյան խորհուրդն ունի, Ով բյուր հրեշտակներով ծածկաբար եկավ իր պատվական և սուրբ ծնողի մոտ, որպեսզի պատվի հանգուցյալի մարմինը, ինչպես որ պատվեց կենդանության օրոք:

Տերն ավելի վաղ նրա մոտ էր առաքել Գաբրիել Հրեշտակապետին, որպեսզի Կույսի հետ խոսի անձառելի էության մասին: Խսկ այսօր ոչ թե անքննելին է պատմվում, այլ նույն հնքն Անձառելին է երկում դեմ

Հանդիման, քանզի ծնվելիս հրեշտակներն էին սպասավորում Կույսին, իսկ փոխվելիս՝ Բանն Աստված՝ իր զորքերով:

Բոլոր եկեղեցիներն այս տոնը տոնում են օգոստոսի 15-ին, կամ մոտակա կիրակի օրը, որովհետև այսօր երկնքի և բոլոր արարածների թագուհին պատիվ է խնդրում իր Որդու արարածներից, քանզի Բանն Աստված բոլոր ազգերից, ժամանակներից և բոլոր արարածներից միայն նրան ընտրեց, նրանից ծնվելու և լինելու Միջնորդ աշխարհի հաշտության, և նա դարձավ անկարոտ Բնության սնուցող մայրը և երանելիորեն բարեբանվեց աշխարհի վրա բնակված բոլոր ազգերից:

Սուրբ Կույսի Վարքը

Սուրբ Տիրամայրն իր հրեշտակային տեսքով, անկողոպտելի կուտությամբ և դեմքի հրաշափառ գեղեցկությամբ հայտնապես ճանաչվում էր տեսնողների կողմից, որպես ճշմարիտ մայր Էմմանուելի, և վեր էր բոլոր կանանցից: Նա վայելուչ դիմագծերով անթառամ ու վարդագույն դեմք ուներ, որը կարծես գարնանային հովիտ լիներ՝ զանազան ու համասիյուռ ծաղիկներով զարդարված: Նրա մազերը խարտաշ էին, ուներ բարետեսիլ ու մեծ աչքեր, միջահասակ էր, բազուկներն ու մատները՝ երկարավուն, և ինքն էլ՝ լի աստվածային շնորհներով՝ ըստ այս խոսքի. «Ինչպես շուշանն է փշերի մեջ, այնպես էլ իմ սիրելին է դուստրերի մեջ» (Երգ. Բ 2): «Շատ դուստրեր հարստություն ձեռք բերին, շատերն էլ սիրագործություններ կատարեցին, բայց դու գերազանցեցիր նրանց և անցար բոլորից» (Առակ. ԼԱ 29):

Տիրոջ մկրտությունից հետո իր տանը՝ Նազարեթում, յոթանասուներկու տարեկան հասակում, վախճանվեց Հովսեփը: Դրանից հետո, Հովսեփի հանձնարարությամբ, Կույսին սպասավորում էր Հակոբոս Արդարը: Նա, այդ հեզ ու արդար մարդը, Հովսեփի կենդանության օրոք էլ էր ծառայքար հոգ տանում Տիրամոր համար, ինչպես նաև Հովսեփի, մինչև որ Քրիստոս Հովհաննեսին հանձնեց Կույսի խնամքը՝ իր խաչելության ժամին որդիկական գութով հոգ տանելով իր մոր համար, որով կատարվեց մարդարեռության խոսքը. «Նույն գիրը պիտի տան մի մարդու ձեռքը, որը տառեր չի ճանաչում, ու ասեն նրան՝ ընթերցի՛ր այդ, և նա պիտի ասի. «Զեմ կարող ընթերցել, որովհետև կարդալ չգիտեմ» (Եսայի Իթ 12): Այս մարդարեռությունը Զեբեդիայի որդի Հովհաննեսի մասին է, քանզի խաչի վրա փառքերի Տերը Տիրամորը հանձնեց Հովհաննեսին (Յովի. ԺԹ 26-27): Այդ ժամանակ Սրբուհին քառասունութ տարեկան էր: Նա Քրիստոսի

Համբարձումից հետո ապրեց ևս տասներկու տարի, և նրա ապրած ամբողջ կյանքը վաթսուն տարի տևեց:

Ընտրյալ կույսը, ով կրեց բոլորիս Տիրոջն իր բազուկների վրա, և ումից Տերը սնվեց անարատ կաթով, բազում նեղություններ, վիշտ, ցավ ու սուգ կրեց Տիրոջ չարչարանքների ու խաչելության ժամին: Եվ ո՞վ կարող է ըստ արժանվույն ներկայացնել մոր վիշտը և հորդառատ արտասուքները, որ թափվեցին խաչելության ժամին: Սրբուհին մեծապես վշտացավ, երբ տեսավ մեր Տիրոջը՝ անարգված անօրենների կողմից: Նրա աչքերից արտասուքներ հեղվեցին, նա ողբում էր, երբ պատանում էին Տիրոջը և դնում գերեզման: Նրա նեղություններն ու արտմություններն էլ ավելի շտացան, երբ պահապաններն արգելեցին նրան մոտենալ գերեզմանին: Եվ որքա՛ն նա արտասվեց, ողբաց ու տագնապեց, երբ տեսավ կնքված գերեզմանը: Վիշտը սրի պես անցնում էր նրա անձով, երբ տեսնում էր, որ զինվորները հսկում են իր Որդու Մարմինը: Նրա զարմանքն ու չիմանալը, թե ինչ է կատարվում, Սիմեոն Ծերունին սուր անվանեց (տե՛ս Ղուկ. Բ 35):

Տերը երրորդ օրը հարություն առնելուց հետո երևաց իր աշակերտներին և հաստատեց իր մոր սիրտը: Ապա, աշխարհում քառասուն օր շրջելուց հետո, իր մոր հետ, աշակերտներով հանդերձ, ելավ երուսաղեմի դիմացի Զիթենյաց լեռը և հայտնեց իր՝ Հոր մոտ վեր համբառնալու մասին: Իսկ կանանցից ամենաերջանիկը, նրա առջև կանգնելով, թախանձող ու մորմոքող սրտով ասաց նրան.

– Տե՛ր իմ և Աստվա՛ծ իմ, Արարի՛չ իմ և Որդի՛, ի՞նչ ես ինձ հրամայում Քո հայրենի փառքին վերադառնալուցդ առաջ, առանց այցելությա՞ն ես ինձ թողնում այս կյանքում: Քանի որ հեթանոսների մեջ ինձ հանգիստ չկա, իսկ հրեաների ապիկարությունը գիտես, Տե՛ր: Արդ՝ ո՞ւմ ապավինեմ: Եվ Տերն ասաց իր մորը և կույսին.

– Խաղաղություն քեզ, քաղցր մա՛յր իմ: Մի՛ արտմիր, քանի որ ես Հորս մոտ եմ բարձրանում և քեզ չեմ թողնի, մարգարի՛տ իմ, չեմ թողնի քեզ, տիեզերքի արեգա՛կ, անթառամ ծաղի՛կ, չեմ թողնի անարատ և աննենգ բնությունդ, ամբողջ աշխարհում ամենահավատարմիդ, իմ սրբության անքակտելի տապանակիդ, բոլոր արարածների գանձիդ: Առագա՛ստ իմ անճառելի մարդեղության և բանավոր խորա՛ն՝ իմ անհաս տնօրինության, չեմ անտեսելու քեզ արհամարհելով, այլ ինչպես որ քեզ հանձնեցի իմ հավատարիմ ու սիրելի աշակերտին, մի փոքր ժամանակ իմ ընտրյալ աշակերտների հետ եմ թողնում, որպեսզի քեզ տեսնելով սփոփիվեն: Եվ դու, տեսնելով այն նշաններն ու հրաշքները, որ իմ անունով կատարվելու են՝ հիացնելու համար ամբողջ աշխարհին, տեսնելու ես նաև Սուրբ Հոգու գորության ձեզ վրա իջնելը: Քանի որ սիրտդ թերահավատ եղավ, երբ

մարդկանց մեղքերի համար ինձ խաչի վրա տեսար, թող զորանա անձդ նշանների միջոցով, որ կատարվելու են իմ անունով։ Իսկ երբ հասնի ժամանակդ, ենելու այս մարմնից, ո՞չ հրեշտակ և ո՞չ էլ հրեշտակապետ կառաքեմ քեզ մոտ, այլ ես ինքս կդամ և պատվով ու հրաշալի փառքով կընդունեմ հոգիդ, որ պայծառ է, քան արեգակը։ Մի՛ երկնչիր, քանի որ քեզ հետ եմ, և դեռ ավելին՝ քեզ փոխադրելու եմ հրաշալի Դրախտը։

Եվ Կույսը մնաց Բանն Աստծու գալստյանը սպասելով, որպեսզի ազատվի այս կյանքի կապանքներից և հանգստանա ճգնակյաց բազում հոգնություններից։ Նրա երեսի տեսքը չփոխվեց ու չխաթարվեց, այլ ինչպես երբեմն էր Տիրոջ տաճարում, այդպես էլ մինչև վերջ պահպանվեց նրա դեմքի հրաշալի գույնը՝ անփոփոխ ու անթառամ և Սուրբ Հոգու շնորհներով զարդարված։ Զկնճռոտվեցին նրա ծնոտները, ինչպես Մովսեսինը, ու չփոխվեց նրա կուսության փառքը։

Իսկ երբ Քրիստոս համբարձվեց առ Հայր, և յուրաքանչյուր առաքյալ, ըստ Փրկչի հրամանի, գնաց իրեն վիճակված երկիրը, սուրբ Կույսը Հովհաննեսի հետ մնաց երուսաղեմում։ Երանելի Կույսն այդ ժամանակ բնակվում էր իր ծնողների տանը, և նրան սպասավորում էր Հովհաննես առաքյալը, ով միաժամանակ հրեաներին քարոզում էր Կենաց Խոսքը։

Տիրոջ համբարձումից հետո սրբուհին աշխարհում մնաց ևս տասներկու տարի, և նրանով միխթարպում էին առաքյալները։ Պետրոսը, Պողոսը և մյուսները շատ անգամ էին ենում երուսաղեմ՝ տեսնելու Տիրուհուն և այցելու տնօրինական վայրերը։ Սուրբ Կույսը զարհուրած էր այն հակառակորդներից, ովքեր ասում էին. «Քեզանից ծնվածը սոսկ մարդ է», և նրան Աստվածածին չէին խոստովանում, Քրիստոսին մեռած մարդ էին համարում և նրա հրաշքներն ու հարություննը երեք չէին հիշատակում, քանի որ չարից բռնված հոգիները միտքն էլ են կորցնում, ինչպես որ ասվում է. «Ճանաչեցինք նրանց ամբարիչտ գործերը, որ Աստծու դեմ էին կովում, որը և հաղթություն էին համարում իրենց անձերի համար» (հմնո. Երեմ. ԺԱ 18):

Սուրբ Կույսը, լի ճգնությամբ, անդադար աղոթքներով ու լոռությամբ, նստում էր տանը։ Նրա հետ էին նաև այն կույսերը, ովքեր Սրբուհու հետ ժուժկալությամբ ճգնում էին ու հոգեւոր սիրով նրան սպասավորում։ Իսկ հրեաները Կույսի մասին խորհում էին ու ասում. «Պետք չէ, որ նա ապրի գուցե Քրիստոսի աշակերտները նորից հավաքվեն և քարոզեն մեռածին որպես ամենազոր կենդանի Աստված, և հեթանոսներն այդ լսելով մեր դեմ մեծ խոռվություն բարձրացնեն։»

Հրեաները, նախանձի չարությամբ լցված, սկսեցին նախատինքների տարափ տեղալով տրտմեցնել Սրբուհուն՝ հուսալով, որ թերեւս փախչի այդ

երկրից կամ սաստիկ տրտմությունից մեռնի: Լսելով այդ ամենը՝ երանելի Սուրբ Կույսն անդրդվելի մնաց ամուր բերդաքաղաքի նման՝ հավատով ու Հույսով լցված առ Աստված: Նա բազում չարչարանքներ ու վշտեր կրեց Կայիշափայից և շատ անգամ հալածվեց հրեաների կողմից, քանի որ չէին թողնում նրան այցելել Փրկչի տնօրինական վայրերը՝ Տիրոջ սուրբ գերեզմանը կամ Գեթսեմանի պարտեզը, և այնտեղ աղոթել, և նա ծածկաբար էր դա անում:

Հակոբոսին՝ Հովհաննեսի եղբորը սպանելուց հետո հրեաները փորձեցին այրել այն տունը, ուր բնակվում էր սուրբ Կույսը, սակայն Հուրը այրեց նրանցից յոթ հոգու, իսկ Կայիշափա, Աննա և Ղեի քահանայապետերը կիսամեռ փախան, սակայն տունը չվնասվեց: Դրանից նրանք ահաբեկվեցին, ինչպես Քրիստոսի գերեզմանի պահապանները, և այս չէին համարձակվում մոտենալ սուրբ Կույսին:

Տիրոջ Մկրտության տոնի օրը, երբ սուրբ Կույսը Հովհաննեսի հետ Հորդանան գնաց, հրեաների խաժամուժ ամբոխը վրա հասավ՝ ցանկանալով բռնել նրան, սակայն զորությունների Տիրոջ Հրեշտակը Տիրամորը և առաքյալին անցկացրեց գետի մյուս ափը: Հրեաներն այդ տեսնելով հանդգնեցին իրենք ևս անցնել գետի մյուս ափը, և այդ օրը նրանցից քսան մարդ խեղդվեց ջրում:

Իսկ Տիրոջ համբարձման տոնին, երբ Տիրամայրն իր ուղեկիցների հետ բարձրացավ Զիթենյաց լեռը, ամբոխը կամենում էր քարկոծել սուրբ Կույսին և նրա հետ եղողներին, սակայն միմյանց քարկոծեցին և այդ օրը նրանցից հիսուն մարդ սպանվեց:

ԱԱՏՎԱԾՎԱՐՈՐ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԼՈՒՐԸ

Պե'տք է և արժա'ն է իմանալ այն ամենը, ինչ պատահեց հետագայում ամենաօղնյալ սուրբը Կույս Մարիամ Աստվածածնի հետ: Երբ Փրկչի համբարձումից անցավ տասներկու տարի և երբ սուրբ Կույսն արդեն պետք է փոխվեր այս մարմնավոր կյանքից, վերափոխումից երեսուն օր առաջ նրա մոտ եկավ Գաբրիել հրեշտակապետը՝ նա, ով հղության ավետիսն էր տվել նրան՝ այս անգամ տալով Կույսին երկրից երկինք փոխման ավետիսը:

Երբ սուրբը Կույսն աղոթում էր իր սենյակում, եկավ Գաբրիելը, ողջունեց ու կանչեց նրան Զիթենյաց լեռ, ուր սուրբը Կույսը սովորաբար գնում էր աղոթելու: Կույսը գնաց և ծնրադրելով աղոթեց այն տեղում, որտեղից Փրկիչը համբարձվեց, և լեռան վրա եղող բոլոր տունկերը խոնարհվեցին ու երկրագեցին նրան: Այդտեղ նրան դարձյալ երևաց հրեշտակն ու ողջունեց՝ ասելով. «Մա'յր սրբության և առագա'ստ երանության, տաճա'ր ինդության և քաղա'ք թագավորության, մարդկային ցեղի ճանապա'րհ

դեպի Քրիստոս, Հասել է քո ժամանակը՝ փոխվելու այս աշխարհից առ Աստված: Նա, քո Տերը՝ Միածին Որդին, Ով մարդկանցից քեզ ընտրեց իրեն մայր ամբողջ աշխարհի փրկանքը լինելու համար, այսօր հաճեց քեզ փառքով աշխարհից դեպի անքննելի փառքը փոխադրել»:

Ապա հայտնեց, որ լրացել է նրա երկրային պանդխտության ժամանակը, և այժմ պահն է գնալու դեպի իր հայրենի ժառանգությունը: Ասաց նաև, որ Տիրուհին չի մնալու մահվան գավառում, քանզի անմահ կյանքի արժանացավ, վերջացան նրա չարչարանքներն ու լրացան տառապանքները, անցնելու են տրտմությունները, ու մոտ է ուրախությունը: Հանգիստը պատրաստ է, լույսի խորանը՝ կազմված, փառքի աթոռը՝ հարդարված: Արդ՝ պետք է գնալ ու հանգստանալ բազում չարչարանքներից և վայելել այն փառքը, որ աշխարհի ստեղծումից առաջ կար:

Ապա, տասնչորս օր անց, կրկին եկավ Գաբրիել հրեշտակապետը և կրկին Տիրուհուն ավետեց Աստծու մոտ փոխվելու մասին, ինչից բերկրեց Մարիամը, և զվարճացավ նրա հոգին: Նա շրջում էր բոլոր տնօրինական վայրերում ու աղոթում: Ապա, ևս տասներկու օր անց, երրորդ անգամ եկավ Գաբրիելը և դարձյալ խորնարհվելով տիրածին Կույսի առջև՝ ասաց. «Ուրախացի՛ր, բերկրյալդ կանանց մեջ, քանզի քեզ կանչում է մեր Արարիչը, քո Միածին Որդին», և նրան տվեց բրաբրոնի մի պսակ, որը հյուսել և բերել էր Ագամի Դրախտից, և այն դրեց սուրբ Աստվածածնի գլխին, որպեսզի առաքյալները և իմաստուն սուրբ կույսերը դա տեսնելով օրհնեն Աստծուն:

Իսկ ամենասուրբ Կույս Մարիամը, երբ ստացավ իր երկինք փոխվելու ավետիսը և բրաբրոնի պսակը, գնաց Զիթենյաց լեռը՝ աղոթելու, և բոլոր բույսերն ու տնկիները կրկին խոնարհվելով՝ երկրպագեցին նրան: Իր աղոթքում Աստվածածինն այսպես էր ասում. «Դու իմ Տեր Հիսուս և Որդի, Քո Հոր՝ Աստծու և իմ՝ Քո աղախին մոր, Տեր իմ Միածին, Դու ինքդ խոստացար գալ ինձ մոտ, որպեսզի Քեզ ավանդեմ իմ հոգին»: Այդժամ երկնքից մի ձայն նրան պատասխանեց. «Չեմ թողելու քեզ, մայր իմ, Տիրուհի, այլ կգամ քեզ մոտ և կկատարեմ քո խնդրանքը»:

Երբ սուրբ Կույսը լսեց այդ խոսքը, անասելի բերկրանք ապրեց: Վերացավ նրա մարմնավոր տրտմությունը, ու հոգին լցվեց հոգեսոր խնդությամբ: Ապա դարձավ իր տուն, կանչեց իր բոլոր դրացիներին, ազգակիցներին և այն սուրբ կույսերին, ովքեր իր հետ ժուժկալությամբ ճգնում էին, ու նրանց հանձնարարեց, որպեսզի վառեն բոլոր ջահերը և իր հետ լինեն երեք օր, և այդ օրերին նրանց շատ բաներ էր պատմում Աստծու մեծամեծ գործերի մասին:

Երբ կույսերը լսեցին Աստվածածնի խոսքերը, թե փոխվելու է աշխարհից, սաստիկ խռովվեցին և արտասվելով մեկմեկու ասում էին. «Ո՛չ ոք մեզ չի լուսավորի, երբ զրկվենք այս պայծառ արեգակից, և երբ սպառվի այս անսպառ աղբյուրը, և մեր միջից վերցվի ամբողջ աշխարհի այս միաթարիչը, ո՞վ կմխիթարի մեզ: Երբ վերանում են բերդաքաղաքի պարիսպները, քաղաքացիներից ոչ ոք այլեւս չի ապրում այնտեղ»:

Մինչ Աստվածամայրը խոսում էր նրանց հետ, եկավ նրա հոգեւոր որդին՝ Հովհաննես ավետարանիչը, ով Քրիստոս էր քարոզում Երուսաղեմի մոտակա գյուղերում, և ողջունեց ու երկրագեց իր մորը՝ սուրբ Կույս Մարիամին: Կույսն, ընդունելով Հովհաննեսի ողջունը, ասաց. «Քարով եկար, որդիս, և սիրելին իմ Որդու»: Ապա Հովհաննեսը հարցրեց, թե ինչո՞ւ են մարդիկ տրտմության մեջ: Սրբուհին, զվարթ գեմքով և բերկրալի սրտով, նրան կարգով պատմեց հրեշտակի այցելության, իր փոխման մասին և մատնանշեց իր թաղման տեղը, որը լինելու էր Գեթսեմանիում: Երբ Հովհաննեսը լսեց այդ ամենը, սկսեց ողբալ, որ զրկվելու է իր հոգեւոր մորից:

Սուրբ Կույսը նրանց ասաց. «Աստծու Խոսքի ծառանե՛ր, լսե՛ք Տիրոջ աղախնուն, քանզի ողորմելով ողորմեց ինձ իմ Տերը և հույժ գթաց: Հասել է իմ ժամանակն այս աշխարհից փոխվելու նրա մոտ, Ում անձկալով ձգտում եմ, Ով նախկինում անմայր էր, սակայն իր գթությամբ ինձ իրեն մայր դարձրեց՝ առանց հոր: Արդ՝ դո՛ւք, դուստրե՛ր վերին Երուսաղեմի, լույսի՝ որդիներ և հավատի՛ ծնունդներ, քաջալերվե՛ք ձեր հույս Քրիստոսով, թոթափիվե՛ք ձեր կյանքում սատանայի պատրանքներից, որ ամեն օր մարտնչում է Աստծու ծառաների դեմ, մի՛ թուլացեք ձեր ամենօրյա աղոթքներում և Աստծու չնորհներով պահպանված կլինեք»: Ապա սուրբ Կույսն աղոթքով խնդրում է Տիրոջից տեսնել առաքյալներին, քանի որ նրանք գնացել էին աշխարհի տարբեր ծայրերը՝ փրկության Ավետարանը քարոզելու:

Այնուհետև Կույսը Հովհաննեսին խնդրեց մատուցել աստվածային պատարագ, որպեսզի հաղորդվի իր Միածին Որդու Մարմնին ու Արյանը: Այդժամ Հովհաննեսը Հիսուսի մայր Մարիամի և նրա ընկերակից կանանց հետ ելավ Վերնատուն և այնտեղ կատարեց Պատարագի սուրբ խորհուրդը: Մինչ նա մատուցում էր գոհության աղոթքը, հանկարծակի որոտ լսվեց և Հովհաննեսին սկսեցին ձայնակցել սուրբ առաքյալները, որոնց Սուրբ Հոգին նույն պահին ժողովեց աշխարհի տարբեր ծայրերից: Վերնատանը Սուրբ Հոգու կանչով, ամպով հափշտակվելով՝ համագումար միաբանությամբ հավաքվեցին սրբազն առաքյալների դասերը՝ հրաժեշտ տալու

Աստվածամորը, և նրանց հետ էլ յոթանասուներկուսը՝, յուրաքանչյուրն իրեն վիճակված վայրից:

Սուրբ հաղորդության ավարտին՝ սուրբ պատարագի արձակման պահին, առաքյալները երկրպագեցին Աստվածամորը և տվեցին Հիսուսի ավանդած ողջույնը: Ապա ողջունեցին միմյանց սրբության համբույրով և օրհնեցին Աստծուն իրենց այդ զարմանահրաշ հավաքի համար: Առաքյալներն ինչպես Տիրողը ճանապարհեցին, երբ նա համբարձվեց, այդպես էլ պետք է Տիրամորը ճանապարհեին երկինք, ուր և մեզ է առաջնորդելու Տերը՝ ելնելու ու ժառանգելու մեր հայրենիքը, որ պատրաստված է սրբերի համար:

Ապա առաքյալները մտան Աստվածամոր տունը, որը Վերնատան մոտ էր: Սուրբ Աստվածածինը նրանց ցույց տվեց այն բրաբիոնը, որը եղեմի Դրախտից իրեն էր բերել Գաբրիելը, և հայտնեց իր ննջման մասին ու մատնանշեց իր հանգստյան տեղը՝ Գեթսեմանի պարտեզում: Առաքյալները լսելով, որ Աստվածածինը պետք է հեռանա իրենցից, նույնպես սկսեցին ողբալ: Աստվածամայրը նրանց ասաց, որ պետք չէ ողբով մթագնել իր ուրախությունը և պետք չէ մարդկորեն մտածել, այլ խնդրեց առաքյալներին, որ նրանք աղոթքներով ուղեկցեն իրեն, որպեսզի խաղաղությամբ անցնի խավարի իշխանության միջով և հասնի երկնային նավահանգիստ:

ՏԻՐԱԶՈՐ ՊԱՏԿԵՐԻ ՃԱՄԱՆ

Երբ Աստվածամայրը հրավիրվեց փոխվել իր Միածին Որդու մոտ, Հովհաննես Ավետարանիչը, Աստծու կամքից ազգվելով, վերցրեց կիպարիսի մի փայտ և դրա վրա կերպաձևեց Տիրամոր պատկերը, որպեսզի նրա վերափոխումից հետո այդ սրբությունը մնա իրենց մոտ: Ապա առաքյալները որոշեցին աղաչել Տիրամորը, որպեսզի նա այդ փայտեղեն անոթն իր աստվածատիպ դեմքի վրա դնի, օրհնի և իր բարեխոսությամբ խնդրի Տիրոջը, որպեսզի նա այդ պատկերի միջոցով աշխարհին բարիքներ պարզեի, քանզի այդ օրերին բորոտության ախտը մոլեզնում էր Հրեաստանում, ու առավել ևս երուսաղեմում: Առաքյալները բոլոր ներկա հավատացյալների հետ միասին աղաչեցին Տիրամորը, իսկ Պողոսը մասնավորպես ասաց:

— Ամենաօրհնյալ Տիրամայր, Աստծու Խոսքի տաճար և առագաստ, ո՞վ Տիրածին Կույս, քանի որ գնալու ես դեպի քո ցանկալին՝ Միածին Որդին, աղաչում ենք քեզ, վերցրո՛ւ Հովհաննեսի՝ Տիրոջ սիրելիի ձեռքով նկարված այս փայտեղեն պատկերը քո սուրբ ձեռքերի մեջ, որոնցով վերցրել ես

բոլորիս Արարչին, օրհնիր այն ու տուր որպես նշան աշխարհի բժշկության, մանավանդ բորոտներին, որպեսզի նրանք, ովքեր կապավինեն քո բարեխոսությանը, գտնեն առողջություն իրենց անձերի համար, ինչպես նաև բժշկություն՝ իրենց ցավերից և ախտերից, քանզի քո փոխումը հույժ մեծ տրամություն է մեզ համար: Մենք մեր Տիրոջ՝ քո Որդու համբարձումից հետո քեզանով էինք միսիթարվում: Արդ՝ տուր մեզ քո պատկերի տիպը, որպեսզի քո վերափոխումից հետո դրանով միսիթարվենք, և աղաչի՛ր քո Որդուն ու մեր Աստծուն, որ այդ պատկերի միջոցով վերացնի բորոտությունն այն մարդկանց միջից, ովքեր քո բարեխոսությանն են ապավինում:

Իսկ երանելի կույսը պատասխանեց.

— Ինչո՞ւ եք ինձ՝ Տիրոջ աղախնուն, հարկադրում իմ անունով անել այն, ինչն արժան չէ ինձ: Դուք եք Արարիչ Քրիստոսի աշակերտները և ձեզ է շնորհված դևերին հալածելու, բոլոր ախտերը բժշկելու և աշխարհից կուապաշտությունը վերացնելու իշխանությունը: Ինչ որ դուք կամենում եք, խնդրեցե՞ք Տիրոջից և կստանաք: Քանզի եթե երկինքը փակելու և բանալու իշխանությունն ունեք և երկրի վրա իշխաններ եք կարգված, ու ի՞նքը՝ Տե՛րը, ձեզ իր բարեկամները կոչեց, և ձեր ձեռքով սքանչելի նշաններ են լինում, և ձեր միջոցով բոլորին շնորհ է տրվում, ուրեմն ձեզ համար ամեն ինչ հնարավոր է: Դուք ինձ ձեր աղոթքներով ճանապարհեք, սիրով ու խաղաղությամբ միաբանվելով ինձ հետ՝ հասցրեք ինձ դեպի նավահանգիստը՝ Քրիստոս:

Ապա երանելի Պողոսն ասաց.

— Սուրբ Կույս, մենք աշխարհի Արարչի անարժան ծառաներն ենք, իսկ դու արժանի եղար լինելու Աստվածամայր: Նա, Ով հաճեց քեզանից մարմնավորվել, Նրանից՝ քո Որդուց, և մեր Աստծուց ենք արժանացել մեր ունեցած այս առաքելական շնորհին: Դու մեր Տիրամայրն ես, իսկ մենք՝ աշխարհի հրովարտակները, եղի՛ր բարեխոս աշխարհի համար: Դու երրորդության հարսն ես, իսկ մենք՝ քո անձառ Ծնունդի հնչեցրած փողերն ամբողջ տիեզերքում: Աղաչում ենք քեզ, ինչպես քո Միածին Որդին իր մահվան փայտն աշխարհի համար դարձեց անմահության գանձ, դևերի հալածիչ, վիրավորների բժիշկ, հավատացյալների կյանքի նշխար, այդպես էլ դու դարձրո՛ւ այս պատկերն այնպիսին, որպեսզի քեզ փափագողները, երբ սա տեսնեն, իրենց խնդրվածքները ստանան:

Եվ ամենօր Հնյալ Սրբուհին, պատկերն իր սուրբ ձեռքերի մեջ վերցնելով, խաչակնքեց այն և դրեց իր դեմքին, ապա տարածելով իր աստվածընկալ բաղուկները դեպի երկինք՝ ասաց.

— Տե՛ր Աստված ամենակալ, Հա՛յր բարերար մեր Տիրոջ Հիսուսի Քրիստոսի, Դո՛ւ, որ Քո Միածին Որդուն աշխարհի փրկության համար առաքեցիր՝ մարմնանալու Քո անարժան աղախնու միջոցով, Ով կատարելով Օրենքում ու մարգարեներում գրվածները՝ դարձյալ համբարձվեց Քեզ մոտ՝ դեպի Քո Հայրական փառքը: Աղաչում և խնդրում ենք Քեզանից, բարերար Աստված, վերցրո՞ւ բորոտության ախտը մարդկանց միջից, Դո՛ւ, որ վերցրիր մեր մեղքերը Քո Միածնի ձեռքով: Կատարի՛ր խնդրվածքը Քո ընտրյալ այրերի, ովքեր Քո հրամանով առաքվեցին աշխարհի փրկության համար՝ ավետարանելու Քեզ, Քո Որդուն և Քո Սուրբ Հոգուն, որպեսզի Քեզ Հավիտյան փառք տանք:

Նույն ժամին լուսեղեն կամար իջավ սրբուհու վրա և լսելի եղավ մի ձայն, որ ասում էր. «Թողլ լինի այնպես, ինչպես կամենում ես, մա՛յր իմ»: Այնժամ ամպեղեն լույսը խաչանման կաթեց սուրբ պատկերի վրա, և սուրբ Կույսը հորդառատ արտասուք հեղեց Տիրոջ առջև և դրանով թրջեց պատկերը:

Ինչպես Տիրոջ ծննդյան ժամանակ Տիրամայրը վեր էր բնության օրենքից, այդպես և իր մահվան ժամանակ, քանզի ինչպես ծնունդը ցավով ու տրտմությամբ չէր, այդպես էլ մահը հիվանդությամբ չեղավ: Քանի որ մարդիկ ունեն երկու բնական հատկություն. առաջին՝ ցավով ծնել և երկրորդ՝ հիվանդությամբ մեռնել, իսկ նա ազատ էր դրանցից:

Աստվածայի Անօհաբ

Ապա սուրբ Աստվածամայրը նոր զգեստներ է հագնում՝ հները տալով իր մոտ եղող կույսերին, և հրամայում վառել ջահերն ու լապտերները, իսկ ինքն ընկղմվում սուրբ անկողնու մեջ: Սուրբ առաքյալները շրջանաձև նստում են նրա մահճի շուրջ: Պետրոսը նստում է մահճակալի գլխավերեւում, իսկ Հովհաննեսը՝ ոտքերի մոտ, իսկ Տիրամայրը ձեռքերը տարածում է դեպի արևելք և գոհանալով օրհնում Աստծուն:

Այդպիսով Տիրամայրը հասնում է իր վախճանին՝ գնալու համար երանության աշխարհը: Մահը հասնում է նաև Քրիստոսի մորը, որպեսզի նա ևս մահ ճաշակի: Տերը հրամայում է, որպեսզի իր առջևից ընթանան վերին զորքերն ու հրեղեն լեզենները, լուսեղենների դասերը, գնդերն ու բանակները, զվարթունների խմբերն ու բոցեղենների ժողովը, սրբազան սերովբեները՝ հրաձև թերով, հոգեղեն հրեշտակների լեզենները՝ երկնային զորքերով հանդերձ, և զարհուրելի քերովբեները, ովքեր լծված էին հրեղեն կառքերին, գունդ-գունդ իջնեն և բարձրածայն փառաբանություններ ու ալելուխաներ երգեն:

Այդ օրը հավաքվեցին բոլոր արդարները՝ նախահայրերը, աստվածաբան մարգարեների երամները, օրինապահ գատավորները, աստվածասեր թագավորները և բոլոր արյամբ վկայվածները, սաղմոսներ երգելով Աստվածամոր սուրբ, մաքուր ու անարատ մարմնի առջեւ: Տիրոջ առաքյալների հետ միասին գեղեցկազարդ Տիրուհուն եկան պատվելու նաև երեցները, քահանաներն ու ղետացիները:

Իսկ Գաբրիելի բանակը, որը բնությամբ կիզող հուր է, և Միքայելի գորքերը, որոնք երկելի են ու ահավոր, և ովքեր առավել ծանոթ էին տնօրինության խորհրդին՝ լինելով զրա սպասավորները, միաբան փառաբանության երգեր էին բարեառում, ցնծալով պարում ու ուրախանում Դավթի դստեր առջեւ: Նրա շուրջը կանգնելով՝ իմանալիներն ու զգալիները պար էին բռնել՝ ցնծությամբ հրճվելով և օրհնության ներբողյան էին տալիս սուրբ Կույսին:

Այդժամ երկինքն ու երկիրը լցվեցին երկնային գորքերի փառաբանությամբ, և նրանց երգերի ձայնից անուշահոտություն էր բուրում ու քաղցրություն ծորում: Ինչպես անուշահոտ խունկը կրակին հպվելով հորդում է իր բումունքը, այդպես էլ անուշահոտ Հոգին սուրբ Կույսի Որդու միջոցով օդը դարձեց այնպիսին, ինչպես արքայությունում է: Բարձր դասերից երկիր իջնելով՝ փախան դեերը և խավարի գորքերը, որոնց առաքյալն «օդի իշխան» է անվանում, տեղի տվեցին: Փախան դեերն անդամ չարագործների հոգիներից, և այդ օրն անդորրություն տիրեց մեղավորների տագնապած դասերում:

Այդ օրը լեռները, բլուրները, դաշտերն ու հովիտները զարդարվեցին՝ ծլարձակելով բազմերանգ ծաղիկներ, երգասաց թուչունների երամները երգեցին իրենց բնության քաղցրահունչ օրհնությունները, իսկ մեծատարած ծովերը և բոլոր ջրերը, ալիքներով և իրենց ծփանքներով, գովեցին Տիրամոր փառքը:

Եվ դա զարմանալի չէ, քանզի քաջ մանուկները (տես Դան. Գ 57) և Դավիթ մարգարեն բոլոր արարածներին հրամայում են օրհնել Աստծուն (տես Սաղմ. 6Բ 22): Դավիթն ու Եսային հրամայում են ցնծալ լեռներին, բլուրներին, ծառերին ու ծովերին: Այդ օրը մարգարեների ու նահապետների գերեզմանների վրա լույս ծագեց, քանզի Աստվածամայրը կամեցավ իջնել մահվան հողի մեջ:

Իսկ Տիրուհին ցանկանում էր, որպեսզի իր Միածինը բարձունքներից իջնի, այդ պատճառով էլ առավոտյան՝ արևի ծագման պահին, բարձրացրեց իր ձեռքերը դեպի վեր ու աղոթեց Աստծուն: Սուրբ առաքյալները գիշերային հսկումն ավարտելուց և առավոտյան պաշտամունքն անելուց հետո նստեցին սրբուհու մահճի շուրջը: Այդտեղ էին նաև Հակոբոս

Տյառնեղբայրը, ով իր ձեռքում ուներ մասունք՝ սուրբ Խաչի կենաց փայտից, Դիոնեսիոս Արիսպագին (տես Գործք Ժէ 34) ու Հռեթեոսը՝ Պողոսի աշակերտները:

Նույն ժամին որոտ, փայլատակում և սաստիկ շարժում եղավ, ապա քաղցր ձայն լսվեց, և հեղվեց երկնավոր դասերի երգը, ովքեր իջնում էին Բանն Աստծու հետ, և բայց առաքյալներից բոլոր ներկաները թմրեցին: Օրվա երրորդ ժամին երկնքից իջակ սուրբ Կույսի Որդին՝ երկնային բազում զորքերով, իր անճառելի փառքով ու որդիական հնագանդությամբ, և Գաբրիել ու Միքայել հրեշտակապետները նրա առջեռում էին: Այդժամ երկինքն ու երկիրը բուրեցին անուշահոտությամբ, և բոլոր արարածները լցվեցին Սուրբ Հոգու անուշ բուրմունքով՝ ի փառս Տիրամոր: Եվ Ամենասուրբ Հոգին անհուն գորովանքով ամենասուրբ Կույսին իր Միածին Որդու ողջույնը տվեց՝ ինչպես անուշահոտ խունկ:

Տիրամայրը, տեսնելով իր Միածին Որդուն, Հիսուսին, գոհանում էր Աստծուց և նրա անունը փառաբանում, քանի որ նա կատարեց իր խոստումը: Ապա Տիրամայրն իր պատկերը դրեց Աստվածորդու առջե, և նա իր աստվածային աջով տյառնագրեց այն: Աստվածամայրն այդ պատկերը տվեց առաքյալներին, և նրանք վերցնելով երկրպագեցին ու տեսան, որ Տիրուհու պատկերը նկարվել է տախտակի վրա:

Ապա ամենամաքուր Կույսը զվարթ գեմքով ավանդեց իր Հոգին իր Միածին Որդու և Արարչի՝ մեր Աստծու ձեռքը, և փառքերի Տերն աներեւոյթ եղավ: Սրբուհու հոգին ելավ ու խառնվեց լուսեղեն զորքին, իսկ մահճում մնացած մարմինը չայլակերպվեց ինչպես դիակը, այլ նրանից Սուրբ Հոգու շնորհն էր բուրում անուշահոտ խնկի պես:

Այդպես՝ քերովքեական կառքով՝ իբրև փայլակ, համբարձվում է սուրբ Կույսի ամենամաքուր Հոգին գերարփիախաղաց ճառագայթների յոթնաստեղյա խորանի հետ: Եվ ցնծում են երկնավորներն ու երկրավորները՝ փառաբանելով Տիրուհու վախճանը:

ԱՍՏՎԱԾԱԿՈՒՐ ՊԱՏԱՌԻՃԱ

Այն տեղում, ուր իջան հրեշտակները, փայլում էին աստվածային ճառագայթները, և մարդիկ շրջապատեցին Քրիստոսի փառավորյալ մորը: Ինչպես հնում Տերն իջավ ու պատանեց իր ծառա Մովսեսին, այդպես և այսօր, մյուս պատանողների հետ, նաև ինքը պատանեց իր մոր մարմինը:

Որդու Մարմինը պատանեց նիկողեմոսը, իսկ մոր մարմինը պատանեց պայծառ կույսը՝ Որոտման որդին: Հավաքվեցին հովվապետներն իրենց հոտերով, և պաշտոնյաներն իրենց բուրվառներով, և իրենց քնարներով փառաբանություն երգեցին և' բարձունքները, և' խորությունները:

Երբ Տիրամայրը ննջեց սուրբ փառքով, հավաքվեցին հավատացյալ կանայք ու սուրբ կույսերը, ովքեր նրա մոտ էին, և օրենքի համաձայն պատանեցին նրա մարմինը, որպեսզի տանեն Տիրող կողմից վաղօրոք նշված վայրը՝ Գեթսեմանի: Ապա մոտեցավ Հովհաննեսը՝ իբրև ճշմարտության տնտես, և մաքուր կտավներով պատանեց անարատ կույսի աստվածաբնակ մաքրափայլ մարմինը, դրեց դագաղի մեջ և դագաղի վրա դրեց բրաբեռնի պսակը:

Հովհաննեսը՝ ամաչկոտ կույս մանուկը, պատանում էր կույսին՝ իր մորը, ում խնամքը հանձն էր առել Փրկչից: Նայում էր Տերն իր մաքուր, գեղեցկատեսիլ ու փառափոր առաքյալին, ով լի է ամենայն սրբությամբ: Նա Որոտման որդին է, Աստծու Որդու սիրելի աշակերտը, ում Տերն ավանդել էր իր կույս մորը, որպեսզի նա լինի նրա որդին: Նա սպասավորում էր իր փառափոր մորը, ում խնամքն ստանձնել էր Տիրող հրամանով: Դա մեծ պարգև էր, որ հավատարիմն ընդունեց Ճշմարտությունից:

Զվարթությամբ, քաջությամբ ու սրբությամբ էր կույսը ծառայում սուրբ կույսին՝ նրան ընդունելով որպես մայր, սրբուհի և Թագավորի փառքի աթոռ: Հովհաննեսը կատարեց ու գործեց, պահեց ու լրացրեց այն ամենը, ինչը հրամայված էր իրեն: Իսկ երբ հասավ սուրբ կույսի այս աշխարհից հեռանալու ժամանակը, պատանեց, թաղեց ու ծածկեց աստվածընկալ մարմինը:

Ապա ծաղկազարդ վարդապետությամբ, հոգեշնորհ երգերով և սաղմոսասացություններով Մեծն Դիոնեսիոսը և սուրբ Հոեթեոսը, աստվածընկալ քահանայապետերի և սրբազան եղբայրների ընկերակցությամբ, պատվեցին աստվածընկալ կույսին, որից հետո քահանայապետերը, ըստ իրենց կարողության, օրհնաբանեցին անբավարար Աստվածապետությունը:

Հովհաննես Աստվածաբանից հետո օրհնաբանության մեջ հզորագույնը երևաց Հոեթեոսը, ով բոլորին զարմացրեց իր օրհնություններով: Բոլոր ներկաները նրան աստվածընկալ ու աստվային օրհնաբանող կոչեցին: Հոեթեոսը, կրթությամբ և մտքի մաքրությամբ, իր ժամանակ-ներում շատերից առավել էր:

ԱՍՏՎԱԾԱՄՈՒ ԹԱՐՈՒԱՅ

Այնուհետև երանելի սուրբ առաքյալներն իրենց ուսերի վրա են վերցնում Աստվածամոր սուրբ մարմինը և ջահերով, մոմերով, սաղմոսերգություններով ու օրհնություններով առաջնորդվում դեպի Գեթսեմանի: Հրեշտակների բանակներն էլ իջնելով դասակցում են նրանց, և սուրբ առաքյալները երկնավորների խմբերի հետ ողբածայն սաղմոսներ են ասում՝ քաղցր ու անուշ եղանակներով: Երուսաղեմը լցվում է նրանց հոգեսր

օրհնությունների հնչյուններով, և խառնիճաղանջ բազմություն էր հավաքվում նրանց շուրջ՝ տեսնելու այդ հրաշալիքը:

Այդ ժամանակ սատանան լցրեց հրեաներին մոլորության ոգով, և նրանք չար նախանձով դեմ ելան, որպեսզի խորտակեն դագաղը և գցեն սուրբ մարմինը գետին, սակայն կուրությամբ պատուհասվեցին: Մի քաջանա՝ Սոփոնիա անունով, մեկնեց իր ձեռքերը և ուժին հարվածեց սուրբ դագաղին՝ ցանկանալով այն գետին գցել, բայց նրա ձեռքերն արմունկներից հատվեցին, կախվեցին դագաղից, իսկ նա թափալուր ընկավ գետին: Սոփոնիան սկսեց իր անձին վայ տալ ու եղուկ ասել և աղաղակելով դիմել Պետրոսին՝ սուրբ Կույս Մարիամին Աստվածածին խոստովանելով: Նա աղաչում էր սուրբ առաքյալներին՝ ասելով.

— Ողորմեցե՛ք ինձ, Քրիստոսի' աշակերտներ:

Իսկ Պետրոսը՝ հավատի վեմը, հանդիմանեց հրեաների անմիտ մոլորությունները՝ ասելով.

— Ո՞վ մոլորյալ հրեաներ, ինչո՞ւ ձեր սրտերում չեք զղջում, այլ մնում եք անհնազանդ, ինչպես ձեր հայրը՝ սատանան:

Այդ պահին մեծ էր հրեաների լացուկոծը: Ապա Պողոսն ասաց.

— Տիրոջը դարձե՛ք և խոստովանեցե՛ք սուրբ Կույսին՝ Աստվածածին, որպեսզի դժոխած էն:

Ամբոխն աղաղակելով ասաց.

— Խոստովանում ենք Հայր Աստծու Որդի Քրիստոսին, Ով անձառապես մարմին առաջ սուրբ Կույսից, Ում մենք անդիտությամբ խաչեցինք՝ Աստծուն հակառակ կարծելով: միայն թե գիտա մեզ:

Դրանից հետո առաքյալները աղաչեցին սուրբ Աստվածածին և նրանից Ծնվածին՝ մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին, իսկ Պետրոսը, վերցնելով Սոփոնիայի հատված ձեռքերը, դրանք մոտեցրեց նրան, և ձեռքերն անմիջապես միացան մարմնին: Ապա տվեց նրան բրաբիոնի ոստերից, որպեսզի դնի հրեաների խավարած աչքերին, և ովքեր հավատում էին, նրանց աչքերը բացվում էին և գնում էին առաքյալների ետևից՝ փառավորելով սուրբ Կույս Մարիամին: Այդ օրը խավարյալները հավատալով լուսավորվեցին, և բացում հրեաներ ու հեթանոսներ Քրիստոսով մկրտվեցին:

Ապա առաքյալները, սաղմոսներով ու օրհնություններով, օրհնյալ մարմինը դրեցին գերեզման, ինչպես հարկն է ծածկեցին ու պահպանեցին երեք օր, ինչպես նրանց Տերն էր պատվիրել: Այդ օրերին անընդհատ հրեշտակների քաղցրաձայն փառաբանության երգեր էին լսվում: Երեք օր հետո, առավոտյան, անմարմինների բանակներն իջան գերեզմանի վրա: Ապա մեր Տերը լուսափայլ ամպով ու հրեշտակներով մոտեցավ սուրբ Կույսի գերեզմանին և կնքված գերեզմանից, առանց խախտելու կնիքը, վերցրեց

աստվածընկալ մարմինն ու վերացավ երկինք: Տերը, մարմինը տանելով, միավորեց հոգու հետ ու հանգչեցրեց փառքի աթոռին՝ իր աջ կողմում՝ ըստ սաղմոսերգուի խոսքի. «Թագուհին կանգնած է քո աջից» (Սաղմ. ԽԴ 10): Դրանից հետո առաքյալներն այլևս չլսեցին հրեշտակների ձայներ սուրբ Կույսի գերեզմանից, քանզի նա կատարելապես հարություն առավ:

Փառավորքեց Աստվածածին Կույսն իր փառավորյալ Որդուց՝ Աստծուց, և վերափոխվեց միշտ կույս Տիրամայրը, քանզի ճաշակեց անմաշության բաժակը: Եվ նա միշտ բարեխոսում է մեզ համար:

Բարթողութեառ պյառ

Առաքյալները Տիրամոր թաղումից հետո մի քանի օր ևս մնացին երուսաղեմում: Սակայն նրանցից մեկը՝ Բարթողոմեոսը, ներկա չէր Աստվածամոր ննջման և թաղման օրերին երուսաղեմում, քանզի դա էր Տիրոջ կամքը: Իսկ երբ նա եկավ ու իմացավ կատարվածը, խիստ վշտացավ, որ չի արժանացել Աստվածամոր տեսությանը և չի ընդունել վերջին օրհնությունը, ինչպես մյուս առաքյալները: Հետո սկսեց աղաչել Պետրոսին և մյուսներին, որ իրեն ցույց տան աստվածային գանձը՝ Աստվածածնի մարմինը:

Առաքյալները ահով ու դողով աղոթք արեցին ու հոժարելով կատարել իրենց եղբոր փափագը՝ բացեցին գերեզմանը, և այն դատարկ գտան: Այստեղ էին միայն Աստվածամոր պատանքները: Նրանք սկզբում խիստ զարմացան, սակայն հետո իմացան, որ հրեշտակների օրհներգությունների գաղարումից հետո, հրաբուն զորքերի միջոցով, Տիրուհին փոխադրվել է դեպի մեծ ու լուսապատիվ փառքը, որը միայն Աստված գիտի, և հիանալով փառք տվեցին Աստծուն:

Իմացան նաև, որ ընդամենը երեք օր մնաց սրբուհու մարմինը գերեզմանում, քանի որ չէր կարող աստվածընկալ մարմինը մնալ երկրում, այլ իրեն արժանի փառքով պետք է բարձրանար երկինք: Դրանից հետո առաքյալները երկնքից ձայն լսեցին, որն ասում էր, թե Աստվածամոր փայտյա պատկերը տան Բարթողոմեոսին, որպեսզի նա դրանով միսիթարվի և իր հետ տանի իրեն վիճակված երկիրը, և որ Աստվածամոր մարմնի համար չերկյուղեն, քանի որ այն փոխվեց իր Արարչի ու Որդու մոտ:

Այս լսելով առաքյալները գոհացան, փառավորեցին Աստվածամորը և կամենալով միսիթարել իրենց եղբորը, նրան տվեցին Տիրամոր պատկերը, որը Բարթողոմեոսը վերցնելով հույս ուրախացավ: Այդժամ Թովմասը մի երգ է ձոնում Աստվածամորը, որը մինչև այսօր երգում ենք եկեղեցում. «Փառավորյալ և օրհնյալ միշտ սուրբ Կույս Աստվածածին Մարիամ՝ մայր

Քրիստոսի, մատուցիր մեր աղաչանքները Քո Որդուն և մեր Աստծուն»:
Քանզի Աստվածամայրը միշտ կենդանի է Աստծու առջև:

Ապա առաքյալները քաղաքում գտնվող բորոտներին օծում են յուղով ու Տիրուհու պատկերով խաչակնքելով բժշկում, որից հետո բոլոր ախտածետները գալիս են սրբուհու գերեզմանին ու Քրիստոսի շնորհներով ապաքինվում, և նրանց բժշկվելու լուրը տարածվում էր ամբողջ Հրեաստանում:

Երբ Միածնի մայրը փոխվում էր երկրից դեպի յոթնաստեղյան լուսեղեն խորանը, հրեշտակների դասերը նրան ընդառաջ են ելնում և մեծ ուրախությամբ տոն կատարում: Հրեշտակները զանազան օրհնություններ ու բարեբանություններ են մատուցում նրան ու պատվում, ինչպես Աստծու խոսքի մոր ու ծնողի: Իսկ տասներորդ օրը Տիրամայրն ավելի վեր է ելնում, քան բոլոր դասերը, մտնում վարագույրի ներքին կողմը և նստում իր Միածնի աջ կողմում: Եվ ինչպես բոլոր դասերն օրհնություններ էին մատուցում սուրբ Կույսին, այդպես էլ Հայրը, Սուրբ Հոգու հետ, վերից ասում է. «Շատ գուստքեր հարստություն ձեռք բերին, շատերն էլ սիրագործություններ կատարեցին, բայց դու գերազանցեցիր նրանց և անցար բոլորից: Քո մեջ կանացի կեղծ բարեհաճություն չկա և ոչ էլ սին գեղեցկություն (Առակ. ԼԱ 29-30), արդ ե'կ և հանգստացի'ր գերարփի և անպատճեմ լուսաճեմ խորանում և վայելի'ր փառքը քո Միածին Որդու, որը պատրաստված էր քեզ համար աշխարհի սկզբից»:

Հայերս տոնում ենք ոչ թե Աստվածամոր ննջումը, այլ իր Միածին Որդու մոտ վերափոխումը: Այդ պատճառով միշտ կիրակի օրն է կատարվում Աստվածամոր վերափոխման տոնը, քանի որ Կույսը ծնվեց հինգշաբթի օրը, ինչպես իսահակն ու մեր Տերը, և ննջեց նույնպես հինգշաբթի օրը, իսկ կիրակի օրը հարություն առավ և փոխվեց իր Որդու մոտ:

Եվ ով խոստովանում է Տիրոջ մորն Աստվածածին, նա դրանով ձշմարիտ Աստված է խոստովանում նրանից Ծնվածին: Իսկ նա միշտ բարեխոսում է մեզ համար իր Միածին Որդու մոտ:

ԽԱՂՈՂՈՐՀՆԵՔ

Սուրբ պատարագից հետո կատարում են խաղողօրինության կարգը և ապա օրհնված ողկոյզները բաժանում ժողովրդին:

Արարչության առաջին օրն Աստված ստեղծեց երկինքն ու երկերը և երկիրը բնակեցրեց իմանալի բնակիչներով՝ հրեշտակների դասերով։ Իսկ արարչության մյուս օրերին, իր Խոսքով, զարդարեց երկիրը ծաղկազարդ բույսերով, տնկիներով, անուշահոտ ու գեղեցիկ բուրաստաններով և բնակեցրեց զգալի արարածներով։ Այդ օրերին Աստված ստեղծում է նաև Դրախտը՝ մարդու վայելքների համար՝ այնտեղ ծառեր տնկելով, բարությամբ լցնելով և իր խոսքով օրհնելով, որպեսզի մարդը չլինի աղքատ, այլ լինի լի ու առատ ամենայն բարությամբ։ Իսկ երբ մարդը չի պահում Աստծու պատվիրանները, Աստվածային օրհնությունը փոխվում է անեծքի։ Աստված սակայն մարդուն չի անտեսում, այլ երբ գալիս է ժամանակը, հայտնում է իր ծածկված սերը մարդկային ցեղին՝ առաքելով իր Միաձին Որդուն, Ով բխում է ինչպես Գավազան Հեսսեի արմատից և ելնում ինչպես վայելուչ ու անուշահոտ Ծաղիկ անարատ Կույս Մարիամից՝ լինելով կյանքի ու անմահության Պտուղ մեր մահկանացու բնության համար, որպեսզի նրանով օրհնվեն մարդկային ցեղը և ամբողջ տիեզերքը։

Քանի որ մարդը իշխան էր կարգված ամբողջ երկրի վրա, ուստի նրա անիծվելով՝ անիծվում է նաև նրա ամբողջ իշխանությունը, այսինքն՝ ամբողջ երկերը՝ իր կենդանիներով ու բույսերով հանդերձ։ Իսկ երբ, Միաձին Որդու գալստյամբ, կրկին օրհնվում է մարդկային բնությունը, ապա վերստին օրհնվում են նաև բոլոր զգալի արարածները։ Սակայն բոլոր պտուղներից առավել օրհնվում է խաղողի ողկույզը, քանի որ Տերը խաղողի որթը ամենազորավոր ծառերից ավելի վեր բարձրացրեց և պատվեց առավել, քան մյուս տնկիները՝ իրեն Խաղողի որթ անվանելով՝ ըստ այս խոսքի. «Ես եմ ճշմարիտ որթատունկը» (Յովի. ԺԵ 1): Իսկ Տիրոջը սիրով կապվածներին ճյուղեր անվանեց և Հորը՝ Մշակ, որպեսզի Հայրը էտելով որթատունկը՝ այն պտղաբեր անի արդարության գործում, իսկ էտված ճյուղերը հավիտենական կրակի նյութ դարձնի։ Այնուհետև գինին՝ խաղողի արյունը, Միաձին Որդին իր փրկական Արյան նյութն արեց և Վերնատանը իր ձեռքերի մեջ վերցնելով օրհնեց՝ ասելով. «Սա՛ է Նոր ուխտի Իմ Արյունը» (Սատթ. ԻԶ 28), որով մենք գնվեցինք ու ազատվեցինք մեղքերի ծառայությունից ու մահից։

Տերը նախապես մարդարեռությամբ հայտնել էր, որ գինին ուրախացնում է մարդուն և լուծարում նրա տրտմությունը (տես Սաղմ. 64 15): Այդ

մասին նաև Նոյի պատմությունից ենք իմանում. երբ նա տրամեց աշխարհի ապականության պատճառով, Տերը նրան գինին տվեց միսիթարվելու համար, ինչը զմայլեցրեց Նոյին (տես Ծննդ. Թ 21): Իսկ Մելքիսեդեկը, որպես օրինակ Տիրող Վերնատանը մատուցած պատարագի, հացն ու գինին պատարագեց՝ այն մատուցելով Աբրահամ նահապետին: Եվ երբ լրանում են ժամանակները, Տերը գալիս է Վերնատուն և տալիս իր կենարար Արյունը՝ որպես կրկնակի ուրախության բաժակ՝ մեղքերի քավության և Հոգու իմաստության համար:

Գինին թեպետ Տիրոջից տրվեց ինչպես բարի պարգև, սակայն այն անիմաստաբար գործածողների համար դարձավ առիթ չարության, ինչպես և շատ այլ բարիքներ դարձան չարության առիթ:

Այդպիսով խաղողը կրկնակի օրհնության արժանացավ՝ օրհնվելով և՝ առաջին արարչության ժամանակ, և՝ երկրորդ, որը և ամեն տարի որպես մեր հանդերի ու այդիների երախայրիք նվիրում ենք Աստծուն, ինչպես Հնում էր ընդունված, որպեսզի այդ մասնավոր ընծայով բոլոր պտուղներն օրհնություն ընդունեն:

Այդ պատճառով էլ սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնին՝ պատարագից հետո, կատարվում է Խաղողօրհնեքի արարողություն, որի ժամանակ սարկավագի քարոզով գոհանում ենք բարերար Աստծուց մեզ առատապես պարզեած՝ հանդերի ու այդիների բերքի համար և խնդրում, որպեսզի նա օրհնի տաճարին ընծայված խաղողի այս պտուղներն իր սկզբնական օրհնությամբ և շնորհի մեզ որպես գինի ուրախության և կերակուր առողջության՝ հոգու և մարմնի: Միաժամանակ գիմում ենք սուրբ Աստվածածնի բարեխոսությանը, Ում միջոցով մեզ տրվեց կյանքի և անմահության Պտուղը՝ Հիսուս Քրիստոս:

Ապա քահանան օրհնում է ժողովրդի կողմից ընծայված խաղողի ողկույզները՝ պտղին միացնելով Աստծու օրհնությունը, որպեսզի այդ պտուղների նյութական ճաշակմամբ մեր հոգում ընդունենք Աստծու իմանալի շնորհները՝ ստանալով մաքրություն, մեղքերի թողություն, և լինենք արժանի՝ ճաշակելու կենաց ծառից, որը հրամայված է պահպանել քերովբեական դասին, և անմահանալով՝ անմահ դասերի հետ մշտապես փառավորենք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն:

Քահանան խնդրում է Տիրոջից նաև օրհնել նվիրատուներին և փոխարենն այդ անցավոր պտղի, նրանց հատուցել անմահ կյանքի վայել-չությամբ: Խնդրում է նաև, որ Տերը օրհնի այն բոլոր որթատունկերը, որոնցից հատվել են այդ պտուղները, որպեսզի դրանք լինեն պտղատու, պարարտ, իսկ հանդերն ու անդաստաններն անփորձ մնան բոլոր պատուհասներից, որոնք լինում են մեր մեղքերի պատճառով՝ կարկուտից,

ցրտահարությունից, խորշակից, վնասատուներից և այլն: Խնդրում է նաև, որ այս աշխարհում Տիրոջ փառքի համար վայելենք այն նյութական բարիքներից, որն ինքը չնորհեց, իսկ հանդերձյալում արժանանանք ուտել և մաղել Տիրոջ հետ այն բերքերից, որ կան արքայության սեղանի վրա, ըստ Տիրոջ անսուտ խոստման:

ՍՈՒՐԲ ԿՈՒՅԱՒԻ ԾՆՈՒՆԴ

Սեպտեմբերի 8-ին սուրբ Կույսի ծննդյան տոնն է: Օրվա երեքսրբյանը՝ հավուր պատշաճի:

Աննայի՝ սուրբ Կույսի մոր հրաշափառ հղությունից յոթ ամիս և յոթ օր հետո ծնվեց օրհնյալ պտուղը՝ Դավիթ թագավորի դուստրը, և նրան անվանեցին Մարիամ, որը նշանակում է լուսավորյալ, և նրանով օրհնվեցին երկրի բոլոր ազգերը: Դրանով կատարվեց Աստծու խոստումը՝ տրված նահապետներին, ըստ որի՝ նրանց Զավակով պիտի օրհնվեն բոլոր ազգերը: Եվ այսօր նրանց արմատից բխեց սուրբ Կույսը, ով ծնեց Բանն Աստծուն՝ նախահոր մեղքերը վերցնողին: Նա, Ով անէությունից ստեղծեց ամբողջ աշխարհը, այսօր, մարդասիրաբար տնօրինելով, նոր աշխարհի հիմքը դրեց Աննայով՝ սուրբ Կույսի ծնողից: Այսօր Աննայից բուսնեց Անկեզ մորենին՝ Մարիամը, ով վառվեց աստվածային Հրով: Այսօր Հովակիմն ու Աննան մեզ տվեցին Գեղմն իմանալի, ումից հոսեց կյանքի Անձրել:

Աստվածամոր ծննդյան լուրը տարածվեց ամբողջ Հրեաստանում, և բոլոր լսողներն օրհնեցին Աստծուն, ինչպես մարդարեացել էր Եսային՝ սուրբ Կույսի և առաքյալների մասին. «Պիտի ճանաչվի նրանց զավակը ազգերի մեջ և նրանց սերունդները՝ ժողովուրդների մեջ. ամենքն էլ, երբ տեսնեն, պիտի ճանաչեն նրանց և ասեն, թե՝ «Սրանք Աստծու օրհնյալ զավակներն են», ու ցնծությամբ պիտի ուրախ լինեն ի Տեր» (Եսայի ԿԱ 9):

Եթե երեմիան ընտրվել էր մինչև իր ծնվելը՝ ըստ այս խոսքի. «Դեռ քեզ որովայնում չստեղծած՝ Ես ընտրեցի քեզ, և գեռ արգանդից դուրս չեկած՝ սրբացրի քեզ» (Երեմ. Ա 5), իսկ առաքյալները աշխարհի լինելուց առաջ ընտրվեցին՝ «Աստված... ընտրեց մեզ Քրիստոսի միջոցով նախքան աշխարհի արարումը, որպեսզի մենք սուրբ և անարատ լինենք Նրա առաջ սիրով» (Եփես. Ա 3-4), ապա որքան առավել սուրբ Կույսն է ընտրյալ, ով կոչվում է Դրախտ աստվածային և Արևելք իմանալի, և ում մասին ասում է Սոլոմոնը. «Ծատ դուստրեր Հարստություն ձեռք բերին, շատերն էլ սիրագործություններ կատարեցին, բայց դու գերազանցեցիր նրանց և անցար բոլորից: Քո մեջ կանացի կեղծ բարեհաճություն չկա և ոչ էլ սին գեղեցկություն» (Առակ. ԼԱ 29-30):

ԵԿԵՂԵՑՈՒ ՏՈՆԵՐ

Նազարատիք Սուրբ Խօսք

Խաչվերացի տոնին նախորդող շաբաթ օրը, տոնի նավակատիքին, ինչպես նաև Խաչվերացին հաջորդող երեքշաբթի, չորեքշաբթի և հիմնաշաբթի օրերին Սուրբ Եկեղեցու տոնն է: Այդ օրերի երեքշրբյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հօգոր, սուրբ և աննահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա' մեզ»:

Այսօր տոնն է սուրբ Եկեղեցու: Հին ուխտում յոթերորդ ամսի տասներորդ օրը կոչվում էր «Քավության օր», այն սահմանված էր որպես սուրբ օր, և այդ օրը հրեաները ոչ մի գործ չէին անում, այլ նախորդ օրվա երեկոյից իրենց մարմինը պահում էին զրկանքների մեջ և Տիրողը ողջակեզներ մատուցում, որպեսզի իրենց մեղքերը քավեն Աստծու առջև (տես՝ Ղև. ԻԳ 26-32):

Իսկ յոթերորդ ամսի տասնհինգերորդ օրը, երբ նրանք հավաքում էին արտերի բերքը և ծառերից անուշահամ պտուղներ քաղում, պոկում էին արմավենու, ուռենու, բարդու և այլ տերևախիտ ծառերից ճյուղեր, որպեսզի Տիրող առջև ուրախանան, և Տիրող պատվին յոթ օր տոնում Տաղավարահարաց տոնը: Այդ օրերին նրանք ապրում էին վրանների մեջ (տես՝ Ղև. ԻԳ 33-44):

Հնում՝ Քավության և Տաղավարահարաց տոները միասին էին տոնվում՝ թշրին ամսին, ի հիշատակ անապատում հորթապաշտության մեղքի քավության (տես Ելք ԼԲ 4-6) և Մինա անապատում քառասուն տարի վրաններում բնակվելու (տես՝ Ղև. ԻԳ 43), որպեսզի հրեաների սերունդները չմոռանան Աստծու երախտիքը: Մեր ժամանակներում Քավության տոնը համապատասխանում է Խաչի տոնին, իսկ Տաղավարահարացը՝ Եկեղեցու: Այս պատճառով մենք այդ տոները միասին ենք տոնում:

Երկրորդ՝ հրեաներն այդ տոնը տոնում էին այն ժամանակ, երբ դաշտերից հավաքում էին բերքը, իսկ մեր օրերում բերքը խաչով հավաքվեց Եկեղեցում, այսինքն՝ Տերը բազում ազգեր հավաքեց Եկեղեցում և իր սեփական ժողովուրդը դարձրեց:

Երրորդ՝ Խարայելի տասներկու ցեղերն անապատում իրենց քառանամյա երթի ժամանակ խաչաձև էին բանակ դնում, և դրա կենտրոնում կանգնեցվում էր սուրբ Խորանը: Արևելյան կողմում Հոռոդայի ցեղն էր բանակ հաստատում, նրա կողքին բանակ էին հաստատում Խաքարի ու Զաքուղոնի ցեղերը: Հարավային կողմում բանակ էր հաստատում Ռուբենի ցեղը՝ Շմավոնի ու Գագի ցեղի հետ միասին: Արևմտյան կողմում Եփրեմի

ցեղն էր բանակ հաստատում՝ Մանասի ու Բենիամինի ցեղերի հետ միասին, իսկ Հյուսիսային կողմում՝ Դանի ցեղը՝ Ասերի և Նեփթաղիմի ցեղերի հետ միասին (տես Թվեր Բ): Դա նշանակում է, որ Եկեղեցու խորանը խաչի խորհրդով քարոզվում է աշխարհի չորս կողմերում:

Չորրորդ՝ Մովսեսի խորանը նույնպես խաչաձև էր կանգնեցվում, ինչպես այսօր Եկեղեցին: Ղետացիներն իրենց բանակը հաստատում էին Վկայության խորանի շուրջ և պահպանում այն: Միայն նրանք իրավունք ունեին մոտենալու Խորանին: Ընդ որում՝ Գեթսոնի գունդը պահպանում էր Խորանի արևմտյան կողմը, Կահաթի գունդը՝ Հարավային, Մերարի գունդը՝ Հյուսիսային, իսկ արևելյան կողմը պահպանում էին Մովսեսն ու Ահարոնը (տես Թվեր Գ):

Հինգերորդ՝ սուրբ Եկեղեցին Քրիստոսի խաչով գնվեց և ազատվեց:

Վեցերորդ՝ այն խորհրդով, որով Քրիստոս պատարագվեց խաչի վրա, այժմ նույն խորհրդով պատարագվում է սուրբ Եկեղեցում՝ խաչ-սեղանի վրա:

Յոթերորդ՝ Եկեղեցու պսակը և փառքը Տիրոջ սուրբ խաչն է, որը դրված է Եկեղեցու գլխին:

Ութերորդ՝ Եկեղեցու բոլոր խորհուրդները խաչով են կատարվում:

Իններորդ՝ մարդու մարմինը խաչաձև, է և հավատացյալները խաչը մշտապես կրում են իրենց ներսում (տես Սատթ. Ժ 38) և խաչի լույսով ելնում Քրիստոսին ընդառաջ:

Տասներորդ՝ Հեղինե թագուհին Երուսաղեմում՝ Գողգոթայի վրա Առողբ Հարության տաճարը կառուցեց և այնտեղ կանգնեցրեց Փրկչի խաչափառը, և հայրապետները կարգ հաստատեցին՝ ամեն տարի սեպտեմբերի 14-ին խաչի նավակատիքի և Եկեղեցու տոները միասին կատարել ութ օր շարունակ:

Ինչպես մյուս տաղավար տոները, այդպես էլ Խաչվերացի տոնն ունի Եկեղեցու հայրերի կողմից սահմանված նախընթաց պահքի օրեր՝ Երկուշաբթիից ուրբաթ: Այն ունի նաև իր նավակատիքը, մեռելոցի օրը և հաջորդող յոթ տոնական օրերը:

ԽԱԶՎԵՐԱՅ

Գիշերը կատարվում է հսկում, Սրբությունը դնում են սուրբ Սեղանին: Թահանա-
ճերը զգեստավորված գալիս են ատոյան և երգում «Որ զանարատ բազուկս թո» շարա-
կանը: Օրվա երեքրորյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խա-
չեցար վասն մեր, ողորմեա' մեզ»: Ապա խաչով ու Ավետարանով թափոր են կազմում:

Խաչվերացի տոնը կատարվում է մեծ համբեսով: Երեկոյան նի ափսեի վրա բազ-
մեցնում են Կենաց փայտի մասունք պարունակող խաչը, այն զարդարում ռեհանով ու
բազմերանգ ծաղիկներով և վրան վարդաջուր ցողում: Ապա խաչը թափորով բերում են
եկեղեցու գավիր և դրանով տյառնագրում աշխարհի չորս կողմերը:

**Այսօր ուրախանում է երկինքը, ցնծում երկիրը, և պայծառանում մայր
եկեղեցին, քանզի քառաթև վայելչական պսակով զարդարեց իր գլուխը,
որը ցողված է Աստծու Որդու Արյամբ: Աստվածային նշանը՝ տիեզերքի
փրկագործ ու աշխարհակեցուցիչ Խաչը, կանգնեց տիեզերքի մեջ, ցոլացած
բարձրացավ սուրբ Գողգոթայի վրա, արփիափայլ ճառագայթներով
փայլեց Երուսաղեմում՝ ավելի պայծառ քան արեգակը, և տարածելով
բոցածանչն ճառագայթափայլ Հրանյութ թևերը՝ լցրեց տիեզերքի բոլոր
ոլորտները՝ իր ամենահաղթ ու պահապան զորությամբ ծածկելով բոլոր
Հեթանոսներին: Նրա գերահրաշ և սոսկալի փառքից դողալով
զարհուրեցին սանդարամետական զորքերի լեզեռնները, քանզի խաչի վրա
բազկատարած բեեռված տեսան անմահ ու անժամանակ Աստծու էակից
Որդուն՝ ծմբարիտ մարդեղությամբ:**

Հրեշտակների սուրբ բանակներն ահով հիացած զարմանում էին,
սերովբեները՝ սարսափում, գերագույն պետություններն ու վերին իշխա-
նությունները՝ սքանչանալով զարմանում: Արեգակը, տեսնելով իր Արար-
չի չարչարանքները, մթնեցրեց իր ոսկեճաճանչ ճառագայթները, լուսինը
քողի տակ ծածկեց իր տեսքը, և աստղերի Հրճվալի բազմությունն անհայ-
տացավ: Կարծր և անտաշ վեմերը ճեղքվելով պատռվեցին, երկիրը
դղրդաց, և աշխարհը ողբաց երբայական ազգի վրա, քանզի աստվա-
ծամարտ եղան և չանաչեցին Խորայելի փրկությունը:

Իսկ հավատացյալներին խաչով չնորհվեց զվարճատեսիլ տունկ և
նշան փրկության, ճյուղ՝ լի բողբոջած ծաղիկներով ու անթառամ տերե-
ներով, ծառ՝ հրաշափառ տեսքով և տունկ պարգևաբաշխ: Արմատ, որով
Աստվածային սիրո չնորհն աշխարհում տարածվելով աղբյուրացավ:

Ճյուղ երևաց Երուսաղեմում, որը խաչի վրա պատարագվեց, և
մարդկային քաղցած ցեղին հագեցրեց երկնքից իջած Հացով: Փրկության
նշան երևաց, որը նախաստեղծներին պճնելով զարդարեց: Ծառ երևաց, որ
փարթամացրեց մարդկային տնանկ ցեղը: Կենագործող շառափիղ երևաց,

քանզի խաչի միջոցով Աստծու հմաստության ծածկված գանձը արվեց մարդկային ցեղին:

Խաչը չորս տեսակի ծառերից կազմվեց, ինչպես ասում է Եսային. «Լիբանանի փառքը դեպի Քեզ է գալու՝ դափնիով, սոսիով, նոճիով ու մայրիով, որպեսզի լիապես փառավորեն Իմ սրբարանի տեղը, և Ես փառավորեմ Իմ ոտքերի տեղը» (Եսայի Կ 13):

Խաչը երկնքից իջած անմահացնող Հացի անպարտելի սեղանն է: Խաչը, Աստվածության անտանելի հուրն իր վրա կրելով, բացեց Դրախտի սերովբեափակ դուռը: Խաչը Եկեղեցու հիմքում հավատի վեմն է և տիեզերքի ամրության պարիսպը, որը քանդեց կուռքերի պաշտամունքը: Խաչին կաշկանդվելով կապվեց բանսարկուն, և ազատվեցին նրա կողմից բռնվածները: Խաչն է մեր պահապանը գիշեր ու ցերեկ և պահապանը՝ ողջերի և մեռելների:

Խաչը մեզ շնորհված չբթացող գենք է՝ սրված Տիրոջ անապական Արյամք, քանզի խաչն է հույսը և ապավենը մարդկային ցեղի, որով վերցվեց դատապարտության կնիքը, և որի մասին Դավիթն ասաց. «Երկյուղածներիդ նշան Դու տվիր, որ փրկություն գտնեն աղեղից» (Սաղմ. Ծթ 6): Ասաց նաև. «Թո երեսի լույսը ծագեց մեզ վրա, և ուրախություն տվիր մեր սրտերին, ցորենի, գինու, ձեթի բարիքով հագեցրիր նրանց» (Սաղմ. Դ 7-8), «Ինձ բարության նշան ցույց տուր. Թող ատելիներն իմ տեսնեն ու ամոթահար լինեն, որ Դու, Տե՛ր, օգնեցիր ու մխիթարեցիր ինձ» (Սաղմ. ԶԵ 17):

Խաչը հրեաների համար գայթակղություն է և հեթանոսների համար՝ հիմարություն, իսկ իրեն երկրպագողների համար՝ պարծանք: Եվ երևալու է արփիահրաշ ճառագայթներով՝ արևելյան կողմից, երկնքի ամպերի հետ՝ հաղթելով արեգակի ճառագայթները, անհավատներին գցելու է անշեղ հնոցը, իսկ իրեն երկրպագողներին վեր բարձրացնելով՝ տանելու է Վերին երուսաղեմ:

Խաչը նահապետների ցանկությունն է, մարգարեների կանխասացությունը, առաքյալների քարոզությունը և հայրապետների դավանությունը: Խաչը մարտիրոսների պսակն է և նահապետների հաղթանակը: Խաչը թագավորների թագն է և իշխանների իշխանությունը: Խաչը կույսերի սրբությունն է և ամուսնացածների ողջախոհությունը: Խաչն այրերի շնորհն է և կանանց բարեզարդությունը: Խաչը ծերերի ամրության ցուպն է և երիտասարդների իմաստության դավագանը: Խաչը կենաց ծառն է և անմահության պտուղը: Խաչն անմեղների խրատն է և մեղավորների քավիչը: Խաչը մոլորգածների ճանապարհն է և խափառածների ճառագայթը: Խաչը նավարկողների նավահանգիստն է և ճանապարհորդների օթևանը: Խաչն երկնավորների ցնծությունն է և երկրավորների զվարծությունը: Խաչը սանդարամետականների սարսափն է և երկրայիններին

սաստողը: Խաչը Քրիստոսի փառքն է և քրիստոնյաների պարծանքը: Խաչը հոգեսոր զենք է և չբթացող սուր: Խաչը դժոխքի ավերողն է և գերյալներին ազատողը: Խաչը գերեզմանների կնիքն է և կյանքի հարությունը: Խաչը Դրախտի բացողն է և արքայությունն որպես ժառանգություն տվողը: Խաչը Քրիստոսի կարապետն է և հարության հրավերը: Խաչն անհավատների կուրությունն է, հավատացյալների զորությունը, և իրեն երկրպագողներին պայծառացնելով՝ կանգնեցնում է մեր Քրիստոս Աստծու աջ՝ կողմում:

Խաչի չորս թևերը միմյանցից տարբեր ուղղություններով են ներգործում: Խաչի ներքեւի պատվանդանն ավերում է դժոխքը, վերևի գլուխը՝ Դրախտի դուռն է բացում, աջ՝ թեր՝ մարդկային ցեղին շնորհներ է բաշխում, իսկ ձախը՝ սաստում և պատուհասում դեերին:

Մարգարեները խաչը «Հեռվից» քարոզեցին, և երջանիկ առաքյալները խաչով երեացին ահավոր դեերին: Սուրբ վկաները խաչով հաղթեցին անօրեն բռնավորներին, և անապատաբնակները խաչով կրոնավորելով պահպանվեցին: Սուրբ և պարկեշտ կույսերը խաչով են զգաստանում, և քահանաները խաչով են կարգը կատարում:

Նախաստեղծն իր ձեռքը Գիտության ծառին ձգելով՝ մեզ համար մահ քաղեց, իսկ անճառելի Բանն Աստված իր աշխարհակեցուցիչ բազուկները տարածելով խաչի վրա՝ վերստին զգեստավորեց մերկացած մարդկային ցեղը՝ ըստ այս խոսքի. «Դուք բոլորդ, որ ի Քրիստոս մկրտվեցիք, Քրիստոսով զգեստավորվեցիք» զարդափայլ անկողոպտելի պատմուճանով (Գաղատ. Գ 27): Աղամը ճաշակելով Գիտության ծառից՝ հեռացավ Դրախտից, և սերովեն փակեց տենչալի կենաց ծառի ճանապարհը, իսկ հավատացյալները, ովքեր ճաշակում են խաչի վրա պատարագված կենաց Պտղից, առանց երկուղի մոտենում են ու հպվում տենչալի կենաց ծառին:

Հակոբ նահապետի տեսած սանդուղքը խաչի օրինակն էր, որի արմատը երկրի վրա էր ամրացված, իսկ գլուխը երկինք էր հասնում, Աստծու հրեշտակները դրանով ելնում էին ու իջնում, և Տերը կանգնած էր այդ սանդուղքի վրա (ԽԵՆ Ծննդ. ԻՇ 12-19): Տեսիլքն այդպես մնաց մինչև արեգակի ծագելը, և Հակոբն այդ վայրը Բեթել անվանեց, այսինքն՝ Աստծու տուն: Հակոբն այդտեղ արձան կանգնեցրեց ու յուղով օծեց, քանզի երկրի մեջ՝ Պողոթայի վրա կանգնեց խաչը, որտեղ Աղամի շիրիմն էր, և խաչի գլուխը մինչև երկինք հասավ և անժամանակն Աստված՝ պատվական Վեմը՝ անկյան Գլուխը, օծված Սուրբ Հոգով, խաչի վրա հեղույսներով բևեռվեց, և սուրբ հրեշտակները խաչի միջոցով իջան, և մարդիկ Տիրոջը երկրպագելով՝ հրեշտակացած բարձրացան մինչև անմահների զորքեղը: Ինչպես Հակոբի տեսիլքը մնաց մինչև արեգակի ծագելը, այդպես էլ խաչի

արձանը կանգնած է մնալու, որպես աշխարհի պահապան, մինչև Արդարության Արեգակի երեալը հայրական իշխանությամբ:

Մովսեսի գավազանը նույնպես խաչի օրինակն էր, որը տասը հարվածներով հանդիմանեց Եգիպտոսին և գառների արյամբ շաղախեց Իսրայելի որդիների տների դռները՝ սեմերը և շրջանակի վերին մասը՝ փրկելով ժողովրդին անդրանկասպան կոտորածից: Խաչը հարվածեց մահվան իշխանությանն ու գժոխքի պետությանը և իր վրա հոսած Աստծու Որդու անպական Արյամբ փրկեց մեզ գալիք բարկությունից, որը պահված է սատանայի և նրա գործակիցների համար՝ ըստ Աստծու արդար դատաստանի:

Մովսեսի գավազանը խաչի օրինակով բաժանեց Կարմիր ծովը, ճանապարհ բացեց երրայեցիների բանակի համար և խրոխտացած փարավոնին իր կառքերով ու զորքերով ջրասույզ արեց: Իսկ խաչը Հորդանանում բացեց Մկրտության ավազանը, փոխադրեց հավատացյալներին Վերին Երուսաղեմ, անմարմին փարավոնի՝ կամակոր վիշապի գլուխը ջախջախելով փշրեց իր լեգենով հանգերձ և տարտարոսում խորտակեց:

Խաչի օրինակն էր նաև Մեռայում դառնահամ ջրի աղբյուրի մեջ գցած Մովսեսի փայտը, որից ջուրը քաղցրահամ դարձավ (տե՛ս Ելք ԺԵ: Իսկ խաչից բիսած կողահոս ջրով մաքրվեցին բոլոր ջրերը, բացվեց արգանդը մկրտության սուրբ Ավազանի, և քաղցրացավ անիծված ծառի դառնությունը:

Խաչի օրինակն էր այն գավազանը, որով Մովսեսը հարվածեց ապառաժին և ջուր հոսեցրեց Իսրայելի որդիների համար: Իսկ խաչից բիսած կողահոս աղբյուրից ամբողջ տիեզերքը խմեց, ինչի մասին Պողոս առաքյալն ասում է. «Խմում էին հոգեւոր այն Վեմից, որ գնում էր նրանց հետ, և այն վեմն հնաքը՝ Քրիստոս էր» (Ա Կողմ. Ժ 4):

Ամաղեկի դեմ պատերազմելիս Մովսեսը, լեռան վրա ձեռքերը վեր բարձրացնելով, խաչի կերպարանքն ընդունեց, որը եղավ պահապան ու ապավեն Իսրայելի բանակին և որով կործանեցին հակառակորդին (տե՛ս Ելք ԺԵ 11): Իսկ Աստծու անսկիզբ Խոսքն իր ծշմարիտ մարդեղությամբ, Գողգոթայի սուրբ գագաթին իր անարատ և աշխարհակեցուցիչ բազուկները տարածելով, պատժեց անմարմին Ամաղեկին և ամբողջ տիեզերքը կանչեց փրկության:

Խաչի օրինակով Մովսեսը պղնձյա օձը պատրաստեց և դրեց ձողի վրա (տե՛ս Թվեր ԻԱ 9): Վերացնելու օձերի խայթոցները երրայեցիների բանակից, որպեսզի երբ օձերից խայթվածները նայեն պղնձե օձին, կենդանի մնան: Իսկ այսօր ուղիղ հավատով խաչին նայողները իրենց մտքի աչքով խաչի վրա տեսնում են Փրկագործին և դրանով ազատվում վիշապի դառնաշունչ թույնից: Այդ մասին էր գրել Մովսեսը. «Կտեսնեք ձեր կյանքը կախված փայտից» (հմնտ. Բ Օրենք ԻԸ 66):

Խաչի օրինակով ծաղկեց Ահարոնի գավազանը և ընկույզ տվեց (տես Թվեր ԺԵ 8): Ընկույզը յուղ է տալիս ճրագների համար: Իսկ խաչից բողբոշած ու ծաղկած գավազանը, բխած Հեսսեի արմատից, յուղով լուսավորեց խավարաբնակ հեթանոսներին:

Սողոմոնն ասում է խաչի մասին. «Նա Կենաց ծառ է բոլոր նրանց համար, ովքեր ապավինում են նրան և վստահությամբ հենվում նրա վրա, ինչպես Տիրոջ վրա» (Առակ. Գ 18): Ապա ավելացնում. «Օքնյալ է այն փայտը, որով արդարություն է լինում» (Ինաստ. ԺԴ 7):

Իսկ Եսային ասում է. «Մեզ համար Մանուկ ծնվեց, մի որդի տրվեց մեզ, որի Եշանությունն իր ուսերի վրա պիտի լինի. Նա պիտի կոչվի Մեծ Խորհրդի Հրեշտակ, Սքանչելի խորհրդակից, զզոր Աստված, Եշան, Հայր Հանդերձյալ աշխարհի» (Եսայի Թ 6): Քանզի հրեաները, երբ տանում էին բոլորիս Աստծուն Գողգոթա՝ խաչելու, Տերն ինքն էր տանում խաչափայտը իր ուսերի վրա, որի վրա բարձրված էր նաև մոլորված ոչխարը՝ մեր մարդկային բնությունը:

ԽԱՉԻ ՏՈՆԻ ԱՎՃԱՇԱՌԻԱԾ

Սուրբ խաչի գյուտից հետո Հեղինե թագուհին սուրբ Կոստանդիանոս կայսեր հրամանով Գողգոթայի վրա կառուցեց Սուրբ Հարության տաճարը¹ և այնտեղ կանգնեցրեց Տիրոջ խաչափայտը: Ապա նաև Բեթղեհեմում և այլ տնօրինական վայրերում տաճարներ և մատուռներ կառուցեց: Այնուհետև թագուհին հրամայեց մեծ հանդիսավորությամբ ութ օր տոնել սուրբ տաճարների նավակատիքը: Այդ օրվանից կարգ սահմանվեց ամեն տարի՝ սեպտեմբերի տասներեքին, տոնել Խաչի նավակատիքը և Եկեղեցու տոնը, իսկ սեպտեմբերի տասնչորսին՝ Խաչի տոնը: Այդ օրը Հակոբոս Տյառնեղբոր օրինակով քահանայապետը բարձրացնում էր Տիրոջ խաչափայտը հավատացյալների պահպանության համար, այդ պատճառով էլ տոնը կոչվեց «Խաչվերաց»:

ՀԱՅԿԱՅԱՋԱԿԱՐԻ ՃԵԿԱՌԱՅՈՒՆ (Իսաս. ԺԴ, Եշեկ. Թ 2-6)

Դավիթ արքան այդ տոնը պատվում է հետեւյալ խոսքերով.

Քո Երեսի Լույսը ծագեց մեզ վրա, և ուրախություն տվիր մեր սրտերին, ցորենի, գինու, ձեթի բարիքով հազեցրիր նրանց (Սաղմ. Դ 7-8) – Հոր

¹ Տաճարի կառուցումն ավարտվել է 335 թ.-ին: Տաճարն օծվել է սեպտեմբերի 13-ին, իսկ 14-ին, այդ ամիերով, աշխարհի բոլոր կողմերից ժամանած Եպիսկոպոսները ժողով են գումարում և որոշում ամեն տարի սեպտեմբերի 14-ին տոնել «Խաչի բարձրացման» տոնը: Յայ Եկեղեցին այն կատարում է սեպտեմբերի 11-ից մինչև 17-ը հանդիպող կիրակի օրը:

«Երեսը» Որդին է, և Նրա «Երեսի Լույսը»՝ Ամենասուրբ Հոգին, Ով խաչի նշանով եկավ առաքյալների դասերի վրա և նշան դրեց մեզ վրա: Եվ մենք խաչով հաղորդվում ենք Սուրբ Հոգու հետ: Տերը լուսավոր երեսով հանձն առավ խաչը և իր ուրախ սրտով ուրախացրեց մեր սրտերը:

Իսկ Սողոմոնը խաչի մասին ասում է.

«Եթե մեկը, նաև բարձրանալով, կամենում է ճանապարհորդել ամենի ալիքների վրայով» (Ինաստ. ԺԴ 1), այսինքն՝ աշխարհի փորձություններով, «Ապավինելով լաստանավին և ղեկավարվելով Քո ձեռքով, փրկվեց, որ աշխարհի վրա սերունդ լինի. քանզի օրհնյալ է այն փայտը, որով արդարություն է լինում» (Ինաստ. ԺԴ 6-7):

Այդ օրհնյալ փայտի նշանը Մեծ Քահանայապետը՝ Քրիստոս, Եղեկիել մարդարեի միջոցով հրամայում է դնել այն մարդկանց ճակատին, ովքեր հեծում են անօրինություն գործող քրիստոնուրաց հերձվածողների մեջ:

Ահա վեց մարդ էր գալիս դեպի հյուսիս նայող բարձր դռան ճանապարհով՝ յուրաքանչյուրի ձեռքին տապար (տես Եզեկ. Թ 2) – Հրաշատես Եղեկիելը՝ գերության որդին, Բարելոնում՝ Քոբար գետի ափին, աղոթում էր Աստծուն՝ գերությունից դարձնելու իր ժողովրդի որդիներին և ազատելու անգիտության չար ծառայությունից (տես Եզեկ. Ա 1): Իսկ նա, Ով չի անտեսում իր սիրելիների պաղատանքները, թեպետ ախորժում է նրա աղաչանքները, սակայն ցույց է տալիս մարդարեին իր դատաստանի իրավունքը: Քանի որ Աստծուց չէր իսրայելի թշվառ վիճակը, այլ ժողովուրդն իր ամբարշտության պատճառով էր մերժվել Աստծուց: Այդ պատճառով էլ Հոգին, վերցնելով մարդարեին, տանում է երուսաղեմ և ցույց տալիս մնացորդը բազմագունակ չարի. իսրայելի ծերերին, ովքեր արեգակին էին խնկարկում, և կանանց, ովքեր լալով թամուղ կուռքին էին զոհեր մատուցում: Յոթանասուն քահանաներ ծածուկ չարություն էին գործում, որոնց պատճառով էլ իրավացիորեն սահմանված էր պատուհասը (տես' Եզեկ. Թ 2-6): Ապա Տերը, ինչպես չարության գործը, այդպես էլ պատուհասն է հայտնում մարդարեին.

Եվ ահա գալիս են վեց այրեր դեպի հյուսիս նայող բարձր դռան ճանապարհով – Դրանք ամբարիշտներին սատկացնող հրեշտակներ էին՝ Տիրողից առաքված: Այնքան մեծ էր Տիրող խստությունը, որ վեց Հոգու ուղարկեց, այն դեպքում, երբ Եգիպտոսի անդրանիկներին կոտորելու համար միայն մեկ սատակից հրեշտակ բավական եղավ, ինչպես նաև մի սուսերավոր հրեշտակ երևաց Դավիթին հերուսացի Ոռնայի կալում՝ կոտորելու համար իսրայելի որդիներին (տես Բ Թագ. ԻՌ 16): Իսկ այս դեպքում վեց հրեշտակ է ուղարկվում, քանի որ մեղքերը բազմացել էին: Որովհետեւ մարդիկ իրենց շարժումների վեց ուղղություններով՝ վեր, վար, աջ, ձախ, ետ ու

առաջ, շարժեցին անշարժ Աստծու բարկությունը։ Այդ պատճառով էլ Աստված բարկությամբ, վեց եղանակներով շարժեց նրանց վրա՝ երկնքից ու երկրից, արևելքից ու արևմուտքից, հյուսիսից ու հարավից։ Երկնքից՝ երաշտով ու կարկուտով, երկրից՝ երկրաշարժով ու անպտղությամբ, արևելքից՝ հայոց ու պարսից թագավորներով, արևմուտքից՝ հույներով ու հոռմեացիներով, հյուսիսից՝ Բաբելոնով, և հարավից՝ Եգիպտոսով։

Իսկ խորհրդաբար վեց այրերի գալստյամբ մարդարեն վեց դարերն է ակնարկում։ Առաջին դարում Արելը եկավ՝ իր անպարտ արյամբ դատելու նրանց, ովքեր իր դարում ամբարշտացան, այսինքն՝ Կայենի տանը, որոնց սուսերով է հարվածելու։

Երկրորդ դարում Ենոքը եկավ իր փոխմամբ՝ դեպի անմահության վիճակ և իր արդարանալով՝ ասես տապարով հարվածելու է անդարձներին։

Երրորդում նոյն է գալիս, համակործան պատուհասից հետո։ Նա մի կատարյալ ու արդար այր է՝ իր անբասիր կամքով ու պատարագներով։ Նոյը վերստին հարվածելու է նրանց, ովքեր կյանքի ճանապարհներին ապականեցին իրենց բնությունը։

Չորրորդ դարում Արբահամն է գալիս՝ հավատի արդարության ժառանգավորը, և նա հարվածելու է իր ազգի և քանանացիների անհավատությանը, որոնց մեջ բնակվեցին ու ավետեցին Սահակն ու Հակոբը։

Հինգերորդ դարում գալիս է Դավիթը՝ սուրբ մարդարեն ու աստվածահայրը, ընտրված առաջին թագավորությունից, ով հարվածեց այլազգիներին և սատկացրեց Գողիաթին ու Հսկաներին։

Վեցերորդ դարում գալիս է ճշմարտասեր Զորոբաբելը, ով ժողովրդի դարձից հետո Դավիթի տան վրա թագավորեց Աստծուն հաճելի ձևով։ Այս վեցը Սուրբ Հոգու սուսերն էին ամբարիշտներին սատկացնելու համար։

Նաև Փրկիչի տասներկու աշակերտները եկան, ովքեր Տիրոջ կողմից երկու-երկու լծորդվելով, ինչպես ակոսածիդ եղներ, առաքվեցին Հերկելու մեր բնության անդաստանը, որն Աստված վեցերորդ օրն ստեղծեց՝ մեր մեջ սերմանելու համար կենաց սերմը։

Յուրաքանչյուրի ձեռքին տապար կար – Տապար ասելով ցույց է տալիս հարվածի խստությունը, որ հատի Հակոբի ազգի ոչ միայն ոստերն ու ճյուղերը, այլև արմատները, այսինքն՝ թագավորությունն ու քահանայությունը՝ տաճարի հրկիզմամբ, սուրբ սպասքների ավարառումով և ժողովրդին ցիրուցան անելով աշխարհի չորս կողմերում։

Դրանց մեջ էր նաև սքեմով մի մարդ՝ մեջքին շափյուղաներով ականակապ գոտի – իսկ յոթերորդը նրանց մեջ ձշմարիտ Քահանայապետն էր, ըստ Մելքիսեդեկի կարգի։ Աստված միանգամայն և մարդ կատարյալ, ինքը՝ Պատարագը և Կատարողը խորհրդական Պատարագի։ Հանգիստը մշտնջենավոր և տառապյալների Հանգստացնողը, Ում մարդարեն Արե-

մավոր է անվանում: Վարդապետների մի մասն ասում են, թե Նա Հրեշտակների Զորագլուխն էր, իսկ մյուսները, թե՝ Նա նույն հնքը՝ Մեծ Խորհրդի Հրեշտակն է: Որովհետև Նա անձառ միավորությամբ պետք է զգեստավորվեր մարդկությամբ և դրանով քահանայագործեր մեր փրկությունը: Բայց պետք է իմանալ, որ Նա նաև փրկության սպասավորն է, քանզի քահանայական պատմուճանը, որով Նա զգեստավորվել էր, քավիչի և ապաշխարության կանչողինն է: Նրան հրամայվեց նշան դնել անօրինությունների պատճառով հեծողների և հոգոց հանողների ճակատին, որպեսզի սատակիչ սուրը չապականի նրանց:

Սքեմավորը մեջքին ուներ շափյուղաներով ականակապ գոտի: Նա օրինակն է ծշմարիտ Քահանայապետի՝ Քրիստոսի, Ով իր պատմուճանով քավելու էր ժողովրդի մեղքերը: Նա Աստծու առջև էր կանգնած մեր Տիրոջ նման, քանզի նախ մեր մեղքերը բևեռեց խաչափայտին: Իսկ գոտին ծշմարտությամբ միավորում էր Քահանայապետի մարդկությունն ու Աստվածությունը:

Մտան, կանգնեցին պղնձե զոհասեղանի առաջ – Սեղանի մոտ կանգնեցին՝ ցույց տալու, որ Աստծու օրինավոր զոհի համար է կազմված սեղանը, իսկ ժողովուրդն իր ամբարշտությամբ այն դեմքի համար զոհասեղան արեց:

Եվ Խորայելի Աստծու փառքը, որ տաճարում էր, քերովքեներից վեր՝ օդ բարձրացավ – երբ Սողոմոնը Վկայության խորանի փոխարեն կառուցեց Աստծու տաճարը, Աստծու փառքն այստեղ լցվեց, և երկու քերովքեների միջից, որ կանգնած էին քավության սեղանի վրա, լսվում էր Աստծու ձայնը քահանայապետերի ականջին: Իսկ այդ օրն այլևս չկային Աստծու տեսիլքներն ու ներգործությունները, և այլևս չէր լինում հարց ու պատասխան: Այդ պատճառով վերացավ Աստծու փառքը նրանցից: Դա կատարվեց մեր Կենարարի վրա նրանց կատաղության ժամին, երբ պատովեց տաճարի վարագույրը:

Կանչեց այն մարդուն, որ սքեմ էր հագել ու մեջքին գոտի ուներ: Տերն ասաց նրան. «Անցի՛ր Երուսաղեմ քաղաքի միջով ու նշա՞ն դիր այն մարդկանց ճակատին, որ հեծում են ու հոգոց հանում այդ վայրերում կատարված անօրինությունների վրա»: Մյուսներին էլ ինձ լսելի ձևով ասաց. «Նրա հետևից քաղաք՝ գնացեք ու կոտորեցե՛ք: Գթասիրտ աչքով մի՛ նայեք. մի՛ խղճաք ծերին ու մանկան, կույսին ու երիտասարդին: Կանանց էլ կոտորեցե՛ք-ջնջեցե՛ք: Բայց ում վրա որ նշան կա, չմոտենա՛ք: Սկսեցե՛ք իմ սրբարանից» – Տերը փրկության նշանով բաժանեց հավատացյալներին կորսայան մատնվածներից՝ ինչպես Եգիպտոսում դռան սեմերին և շղանակի վերին մասում դրոշմած գառան արյամբ, որպեսզի սատակիչ Հրեշտակը չմտնի նրանց տուն: Քանզի առաջին նշանը, որ Տերը տվեց Աբ-

րահամին, այսինքն՝ թղփատությունը, բավական չեղավ նրանց հեռու պահելու հեթանոսների հետ խառնվելուց: Այդ պատճառով էլ այժմ նրանց ճակատին բացեիրաց դրոշմում է մի երևելի ու հզոր նշան, որպեսզի նրանք չկորչեն քաղաքի ամբարիշների հետ: Բայց այն ժամանակ դա ուրիշներին անհայտ և միայն երկնայիններին երևացող նշան էր: Քանզի դա Տիրոջ խաչի նշանի օրինակն էր, որ դրոշմվում է հավատացյալների դեմքին և նրանց բաժանում անհավատ ժողովրդից: Ինչպես Տիրոջ կամավոր չարչարանքներից հետո հրեաների միջի հավատացյալները բաժանվեցին իրենց անհավատ ազգակիցներից, որից հետո անհավատները պատուհասվեցին Տիտոսից ու Վեսպասիանոսից երկաթյա գավազանով: Իսկ նրանք, ովքեր իրենց դեմքին ունեին Տիրոջ նշանը, փրկվեցին Աստծու բարկությունից:

Այս մասին է խոսում Պողոս առաքյալը՝ դեմքի գնդի անպարտելի ախոյանը, երբ ասում է, որ խաչի քարոզությունը կորսույան մատնվածների համար հիմարություն է, իսկ փրկվածներիս համար՝ Աստծու զորություն: Նշան վնատրող հրեաների համար Քրիստոսի խաչը գայթակղություն է, իսկ իրենց իմաստուն կարծող հեթանոսների համար՝ հիմարություն. բայց նրանց համար, որ կանչված են՝ թե՛ հրեաներ, թե՛ հեթանոսներ, Քրիստոս Աստծու Զորությունն է ու Աստծու իմաստությունը: Իսկ մենք պարձենում ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով և քարոզում խաչված Քրիստոսին՝ ի գայթակղություն հրեաների և ի հիմարություն հեթանոսների (տե՛սԱ Կողմբ. Ա 18-24, Գաղատ. Զ 14):

Իսկ Հովհաննեսը վկայելով ասում է. «Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր Միաձին Որդուն տվեց» (Յովի. Գ 16): Տվեց Աստված իր Զորությունը մեզ համար խաչվելու, Ով էլ անասելի սիրուն պարտական լինելով ասաց. «Ինչպես որ Մովսեսն անապատում բարձրացրեց օձը, այնպես էլ Մարդու Որդին պետք է բարձրանա» (Յովի. Գ 14):

Աստծու իմաստությամբ գոյացանք ի սկզբանե, ապա փրկվեցինք մեղքի ու մահվան ծառայությունից և նրանով պիտի նորոգվենք աշխարհի վախճանին: Այդ մասին նաև Ավետարանն է վկայում. «Այդ օրերի նեղությունից անմիջապես հետո արեգակը պիտի խավարի, և լուսինն իր լույսը չպիտի տա, և աստղերը երկնքից պիտի ընկնեն, ու երկնքի զորությունները պիտի շարժվեն: Եվ ապա երկնքի վրա Մարդու Որդու նշանը պիտի երևա, ու այդ ժամանակ երկրի բոլոր ազգերը լացուկոծ պիտի անեն և պիտի տեսնեն Մարդու Որդուն, որ գալիս է երկնքի ամպերի վրայով՝ զորությամբ և բազում փառքով» (Մատթ. ԻԴ 29-30): Տերն իր խաչի նշանը կարապետ ու նախընթաց է ցույց տալիս իր ահեղասարսուռ գալստյան՝ աստվածային փառքով և հոգեղեն պաշտոնյաներով՝ հանդիմանելու համար անհավատներին:

ԽԱՉՎԵՐԱՑԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅ

Խաչվերացի տոնն իր վերջնական հաստատումն ստացավ հետագայում, երբ իր հզորության գագաթնակետին հասած Պարսկաստանի Խոսրով ամբարիշտ թագավորը 610 թվականին կամենում էր իրեն հպատակեցնել Հերակլ կայսերը և նամակով նրան առաջարկում է գալ, ընդունել իր գերազանցությունը և պաշտել իրեն: Նա, մեծ զորք տալով իր Խոռոչմ զորավարին, նրան ուղարկեց հունաց աշխարհ, և վերջինս սկսեց ավերել ու մեծ ավար վերցնել պաղեստինցիների աշխարհից:

Այդ օրերին Տիրոջ բարկությունը եկավ Երուսաղեմ սուրբ քաղաքի վրա, և Խոռոչմ զորավարը 614 թվականին, տասնինն օր շարունակ պաշարելով քաղաքը և փորելով քաղաքի հիմքերը, այն գրավեց: Դա թվով չորրորդ բարկությունն էր, որ եկավ Երուսաղեմի վրա: Առաջինը Նաբուքոդոնոսորի միջոցով էր, երկրորդը՝ Անտիոքոսի (տես Ա Սակաբ. Ա), երրորդը՝ Վեսպասիանոսի, և չորրորդը՝ վերը նշվածը, որն ամենածանրն էր ու ամենաչարը, ըստ Դանիելի տեսիլքի՝ չորրորդ գաղանի, որն ուտում էր, մանրում և մնացածն էլ ոտնատակ տալիս (տես Դան. Է 7):

Երբ պարսից զորքը մտավ քաղաք, որի քաղաքեց ողջ բնակչությունը: Կոտորվեց 57 000 մարդ և գերի վերցվեց 35 000-ը: Այդ թվում նաև Զաքարիա հայրապետը գերեվարվեց: Ապա պարսիկները մտան սուրբ Հարության տաճարը, բռնագրավեցին Աստվածընկալ սուրբ Խաչը և տաճարի ոսկյա ու արծաթյա սպասքները, իսկ քաղաքն այրեցին: Հետո զորավարը գերիներին հրամայեց քաղաքը վերստին կառուցել և բոլոր հրեաներին արտաքսել, իսկ ինքը պատվական Խաչը տարավ Պարսկաստան: Երբ զորքը մոտենում էր թագավորանիստ քաղաքին, Խոսրով թագավորն ընդառաջ ելավ՝ դիմավորելու Տերունական Խաչին, որից Քրիստոսի Խաչն ակամա փառավորվեց: Երբ Քրիստոսի Խաչն այդպիսի պատվով մտավ քաղաք, պարսից թագավորն այն մեծ պատվով պահեց իր գանձարանում և Խաչի առջև մի անշեղ կանթեղ էր մշտապես պահում:

Քրիստոնյաները, զրկվելով իրենց սրբությունից, հայտնվեցին այնպիսի անմիտիթար վիճակում, ինչպես ժամանակին հայտնվել էին հրեաները, երբ փղշտացիները գերեվարել էին Աստծու Ուխտի տապանակը: Սակայն Տիրոջ խաչը, հայտնվելով Պարսկաստանում, մեծ փառքի արժանացավ, ինչպես և Տապանակն Ազոտոսում (տես Ա Թագ. Ե): Տեղաբնակները Տիրոջ խաչին վերաբերվում էին մեծ երկուղածությամբ և ասում, որ Քրիստոնյաների Աստվածն է իրենց մոտ եկել: Դրանից նրանց սրտերն այնպիսի ահով էին տողորվում, որ հեթանոս լինելով հանդերձ՝ չէին համարձակվում վնասել խաչափայտը, և նույնիսկ վրան եղած թանկարժեք

զարդերին չէին դիպչում։ Շատերն էլ այդ ահից դիմում էին տեղաբնակ քրիստոնյաներին և նրանցից լսելով Ավետարանի խոսքը՝ քրիստոնեություն ընդունում։

Այնուհետև Հերակլ կայսրն օգնության կանչեց ճենաց Խական թագավորին։ Հերակլին իր ռազմական օճանդակությունն էր բերում նաև հայկական կողմը՝ զորավար Մժեծ Գնունու գլխավորությամբ, ում միացան նաև պարսկահպատակ հայերը։ Սակայն Խոսրով թագավորի հզոր բանակի ճնշման տակ ճենաց թագավորն անցավ Խոսրովի կողմը, և Հերակլ կայսրը մեծ պարտություն կրեց։ Այդ պարտությունից հետո նա քուրձ հագավ, հանեց իր թագն ու թագավորական ծիրանին և մոխրի վրա ընկնելով՝ երեք օր շարունակ աղոթեց՝ բարեխոս ունենալով Մարիամ Աստվածածնին։ Զորբորդ օրը նա ստացավ աղոթքի պտուղը. տեսիլքով նրան հայտնվեց, որ պետք է հաղթի այդ պատերազմում։ Եվ իսկապես, ճակատամարտում Հերակլը հաղթեց, Խոսրովը սպանվեց, իսկ նրա բանակի մնացորդը փախավ։ Հերակլ կայսրը մեծ զորքով գալիս է արևելք և պահանջում սուրբ Խաչը, որն անմիջապես տրվում է։

Սկզբում Խաչը Պարսկաստանից հանդիսավոր թափորով փոխադրվում է հայոց Կարին քաղաքը, ապա այնտեղից՝ Կոստանդնուպոլիս և հետո՝ Երուսաղեմ։ Խաչափայտն աննկարագրելիորեն միմիթարում ու ոգեսորում է բարեպաշտ հավատացյալներին։ Գերեղարձության ճանապարհին Խաչը գրեթե ամեն տեղ բարձրացվում է և ամենուր ցնծություն առաջացնում, որը կարծես վերապրումն էր Քրիստոսի հարության։ Այդ դեպքերն էլ պատճառ դարձան «Խաչվերացի» տոնի հաստատման համար։

Այդ առիթով է Կարնո գաշտի հարավարելյան կողմում բարձրացող լեռների մեծ գագաթը Խաչափայտ կոչվում։ Այդ լեռան սարահարթի վրա բխում է սառնորակ ջրի աղբյուր, որը ուխտատեղի է դարձել։ Տեղական ավանդությունը պատմում է, որ խաչը հանձնելուց հետո պարսիկները կրկին փորձում են այն ետ վերցնել։ Հայերը, խաչափայտն այնտեղ թողնելով, ետ են մզում պարսկական կողմի հարձակումը և երբ վերադառնում են խաչափայտը վերցնելու, տեսնում են, որ Խաչի դրված տեղից վճիռ աղբյուր է բխում։ Նույնանուն լեռների ստորոտում կա Խաչկա վանքը, ուր Խաչվերացի սքանչելի տոնի առիթով ժամանակին բազում ուխտավորներ էին այցելում։

ՏՈՆ ՎԱՐԱԳԱ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ

Խաչվերացի երրորդ կիրակին Վարագա սուրբ խաչի տոնն է: Քահանաները զգեստավորված գալիս են ատյան և ասում «Նշանաւ ամենայաղբ» օրինությունը: Օրվա երեքսրբյանն է: «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա' մեզ»:

Կլավդիոս կայսեր կինը՝ Պատրոնիկե թագուհին, ընդունելով Հակոբոս Տյառնեղբոր ձեռքից խաչափայտի սուրբ մասունքը, այն Հռոմ է տանում:
Որից հետո այդ սուրբ մասունքը, սերնդեսերունդ ժառանգաբար փոխանցվելով, հասավ սուրբ կույս Հռիփսիմեին, ով Կլավդիոս կայսեր և Պատրոնիկե թագուհու սերնդից էր: Սուրբ կույսն իր պարանոցից մշտապես կախած էր պահում այդ սուրբ մասունքը, որի վրա թափվել էր Տիրոջ Արյունը: Նա քրիստոնյա ծնողների զավակ էր և կրոնավորում էր Հռոմի Սուրբ Պողոս Հռչակավոր վանքի կուսանոցում, որի մայրապետն էր սուրբ Գայանեն, ով շուրջ երեք հարյուր կույսերի դաստիարակում էր Աստծու երկյուղով:

Այդ ժամանակներում էր, երբ Դիոկղետիանոս կայսրը կամեցավ կնության առնել սուրբ Հռիփսիմեին, բայց նա հրաժարվելով՝ յոթանասուն կույսերի հետ միասին, իրենց քահանաներով հանդերձ, փախավ Եղիպտոս, ապա՝ այնտեղից Երուսաղեմ, որտեղ նրանք այցելեցին Քրիստոսի տնօրինական վայրերը և սուրբ Աստվածամոր գերեզմանի վրա աղոթելիս հրաման ստացան գնալ Թաղենոս առաքյալի վիճակը: Հնագանդվելով հրամանին՝ նրանք գնացին Եղեսիա, ուր գտնվում էր Փրկչի պատկերը: Նրանցից շատերը մնացին Եղեսիայում, իսկ մյուսները շարունակեցին իրենց ճանապարհը գետի Արարատ: Ովքեր մնացին Եղեսիայում, հետագայում սպանվեցին Դիոկղետիանոսի հրամանով:

Սուրբ Գայանեի խումբը, շրջելով Հայաստանի գավառներում, սուրբ մասունքի միջոցով ամենուր մեծամեծ նշաններ էր գործում: Նրանք մաքրում էին ախտացյալ ջրերը, հալածում դեերին, բժշկում հիվանդներին: Սուրբ Գայանեն և իր խումբը մի որոշ ժամանակ հանգրվանեցին Հոդյաց վանքում, ուր գտնվում էր ամենօր Հնյալ սուրբ Կույսի պատկերը: Հետո գնացին Վարագա լեռը և հաստատվեցին այնտեղ: Լեռան գագաթին, որը կոչվում է Գալիլիա, ամփոփեցին սուրբ Նշանը, որպես մեծ պարզեցողնելով Հայաստան աշխարհին: Եվ դա իրենց կամքով չարեցին, այլ՝ Աստծու նախախնամությամբ: Նրանցից ոմանք մնացին լեռնագագաթին՝ սպասավորելու սուրբ Նշանը, իսկ սուրբ Գայանեն և սուրբ Հռիփսիմեն, երեք քահանաներով և քառասուն կույսերով, Սուրբ Հոգու առաջնորդության համար շապատ, որտեղ և նահատակվեցին: Իսկ նրանք,

ովքեր մնացին Վարագա լեռան վրա, և որոնցից երկուսը քահանաներ էին, քաջալերվելով սուրբ Գրիգորի՝ Վիրապից ելնելուց հետո իրենց կատարած այցելությունից, այդտեղ եկեղեցի հաստատեցին, որը հետագայում տեղի խստաշունչ եղանակի պատճառով անբնակ մնաց:

Հայոց աշխարհում գիտեին, որ Վարագա լեռան վրա է պահված սուրբ Նշանը, բայց մինչև իշխանաց իշխան մեծն Վարդ պատրիկ Ռշտունու և Ներսես Շինող կաթողիկոսի հայրապետության ժամանակները չէին կարողանում գտնել այն: 653 թ. Թողիկ անունով մի կրոնավոր, իր սրբասեր աշակերտի՝ Հովելի հետ միասին գնում է ճգնելու Վարագա լեռան վրա և հաստատվում այն վայրում, ուր բնակվել էին սուրբ կույսերը: Նրանց իղձն էր գտնել սուրբ մասունքը: Երկար ճգնությունից հետո ավելի է բորբոքվում նրանց սիրտը Քրիստոսի սիրով և սուրբ Նշանի փափագով: Եվ ճգնավորներն էլ ավելի են խստացնում իրենց ճգնությունը և տասներկու օր շարունակվող անսվաղ ծովապահությամբ հայցում Տիրոջից՝ տեսնել իրենց փափագածը: Եվ մարդասերն Աստված, Ով կատարում է իր երկյուղածների կամքը, լսում է նրանց և գիշերամիջին, երբ նրանք աղոթում էին, լեռան գագաթից, որտեղ պահված էր սուրբ Նշանը, ահավոր ձայնով նրանց նշան տալիս, ինչից զարմացած նրանք նայում են դեպի լեռան գագաթը և այնտեղ պայծառ լույս տեսնում: Լույսն իր չափով ու ձեռվ այնպիսին էր, ինչպիսին այդտեղ գտնվող մասունքը: Ճգնավորները շարունակում են զարմացած նայել լույսին, որն աստիճանաբար պայծառանում էր և լուսավորում ամբողջ լեռը, առավել քան արեգակի լույսը, որով սքանչանալով փառավորում են Աստծուն: Ապա տեսնում են լույսի տասներկու սյուներ, որոնք վեր էին խոյացել երկրից մինչև երկինք: Ամբողջ լեռը լցվում է անուշահոտությամբ ու հրեշտակների օրհնության երգերով:

Մինչ կրոնավորները վայելում էին այդ սքանչելիքը, որը տեսեց կեսպիշերից մինչև օրվա վեցերորդ ժամը, սուրբ մասունքն իր մասնատուփով հանդերձ ելնում է վեմից և լույսերի մեջ վեր բարձրանալով ու ցոլարձակելով՝ գալիս ու մտնում է եկեղեցի և վերաբերվում սուրբ Սեղանին՝ լույս ճառագայթելով վեցերորդ ժամից մինչև իններորդ ժամը: Մինչ ճգնավորները զարմանքի մեջ էին, խաչանից լույսից նրանց ձայն է հասնում, որն ասում է. «Քրիստոս հաճեց բնակվել սուրբ Նշանի մեջ՝ Հայոց աշխարհի պահպանության և փրկության համար»: Եվ նրանք առաջ գալով՝ մեծ ահօվ ու դողով տեսնում են սուրբ Նշանը՝ սուրբ Սեղանի վրա լույսով պարուրված: Ապա այն վերցնելով իրենց ձեռքը՝ արտասվալից համբուրում են ու գոհանում Տիրոջից:

Այդ սքանչելի տեսիլքը ոչ միայն նրանց էր երկում, այլև լեռան շրջակայքում բնակվող բոլոր մարդկանց, ովքեր ակներև տեսնում էին

լույսը, որը ծագեց Վարագա լեռան Գալիլիա կոչվող գագաթից։ Տասներկու օր շարունակ լույսի սյուները շրջապատում են լեռան գագաթը։ Ժողովուրդը եպիսկոպոսներով ու քահանաներով հանդերձ բարձրանում է լեռը, նրանց հետ նաև Վարդ իշխանն իր զորքով, և հարցնում ճգնավորներին տեսիլքի ու լուսեղեն սյուների մասին։ Նրանք էլ կարգով պատմում են ամեն ինչ, մեկ առ մեկ, և ցույց տալիս եկեղեցու Սեղանին վերաբերված սուրբ Նշանը, որին ժողովուրդը երկրպագում էր և փառք տալիս Աստծուն։ Իսկ անուշահոտության բուրումը դեռ երկար ժամանակ շարունակում էր բազմությանը զմայլել, ովքեր էլ հիացած օրհնում էին ու փառաբանում Աստծուն սուրբ Խաչի երկման համար։

Այս ամենից հետո Ներսես Գ Տայեցի (Շինող) հայրապետը կարգ է սահմանում՝ ամեն տարի այդ օրը տոնել «Վարագա սուրբ խաչի տոնը»՝ Քրիստոսի և Նրա սուրբ Խաչի փառքի համար։ Ապա տասներկու եկեղեցիներ են կառուցում՝ տասներկու լուսեղեն սյուների երկման տեղերում, իսկ այն եկեղեցին, ուր եկավ և հանգեց սուրբ Նշանը, ընդարձակելով նորոգում են և տեղում վանք հիմնում։

ՏՈՆ ԳՅՈՒՏ ԽԱԶԻ

Խաչվերացի յոթերորդ կիրակին Գյուտ խաչի տոնն է: Քահանաները զգեստավորված գալիս են ատյան և ասում «Յրաշակերտ և օրիեղ» օրինությունը: Օրվա երեքսրբյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և աննահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա' մեզ»:

Երբ մեր Տերն ամբողջացրեց իր փրկական տնօրինությունները և համբարձվեց երկինք, փրկական Խաչն անխնամ մնաց Գողգոթայում՝ իրեւ դատապարտության և մահվան գործիք: Եվ գարնանը, եղբ բույսերը ծաղկում են, ու մանուկներն իրենց սովորության համաձայն խաղում դալար խոտի վրա, մի կաղ մանուկ, իր ընկերների հետ խաղալիս, հանկարծ դիպչում է կենարար Խաչափայտին, ինչից ամրանում են նրա ոտքերը, և նա անմիջապես սկսում է վագել և օրհնել Աստծուն ու գոհանալ կենսակիր նշանից: Այդ դեպքն առիթ հանդիսացավ, որպեսզի Խաչի համբավը տարածվի, և կաղերը, կույրերը, բորոտներն ու առհասարակ բոլոր Հիվանդները բժշկվեն Խաչափայտի միջոցով: Դրանից հետո Հակոբոս Տյառնեղբայրը Խաչափայտը վերցնում է իր մոտ:

Սուրբ Խաչի գյուտով հավատացյալները ուրախացան, իսկ անհավատները հույժ տրտմեցին: Իսկ հրեաները, ովքեր կամովին իրենց հեռացրին ճշմարիտ Լույսից, գլխահակ դարձան, որոնց մասին է Եսային ասում. «Ո՞վ է կույրը, եթե ոչ Իմ ծառաները, ովքե՞՞ր են խուլերը, եթե ոչ այն մարդիկ, որ տիրում են նրանց» (Եսայի ԽԲ 19): Հրեաները, տեսնելով Խաչի սքանչելագործությունները, նախանձից այրվելով Հակոբոսից հափշտակեցին Խաչափայտը և դրեցին երուսաղեմի տաճարի Գեղեցիկ կոչվող դռան մոտ, որտեղ մի անդամալույծ էր մշտապես նստում ողորմություն խնդրելու համար:

Մի օր, երբ անդամալույծը երկար նստելուց նիրհում էր, Խաչի գորությունից հանկարծակի արթնանում է և ամբողջովին բժշկված՝ տեղից վեր թռնում՝ փառաբանելով Քրիստոսին: Ապա մի բորոտ է բժշկվում՝ ամբողջովին իր վրայից թափելով ապականված մորթը և գոհություն հայտնում աստվածընկալ Խաչին: Այդ տեսնելով՝ հրեաները Խաչը տանում են ու դնում Տիրոջ գերեզմանի մեջ և մի վեմով փակում: Սակայն վեմի ճեղքերից հրաշալի լույս է ելում ու բժշկում այն նեղյալներին, ովքեր այցելում էին Տիրոջ գերեզմանին: Այս անդամ հրեաները Ափրոդիտեի պատկերն են կանգնեցնում վեմի վրա, որպեսզի ժողովուրդը կարծի, թե Ափրոդիտեն է նրանց բժշկում:

Այդ օրերին սուրբ Պետրոս առաքյալի միջոցով հավատի է դալիս կլավդիոս կայսեր կինը՝ Պատրոնիկեն, ով մեծ հույսով իր որդիների ու

դուստրերի հետ Հռոմից գալիս է Երուսաղեմ՝ Երկրագելու տերունական վայրերին: Թագուհին այնտեղ շրջելուց հետո, Հակոբոս Տյառնեղբօր ընկերակցությամբ, այցելում է Տիրոջ գերեզմանին և այն մաքրելուց, բացելուց և կարգի բերելուց հետո, այդտեղ գտնում Տիրոջ Աստվածընկալ Խաչափայտը, դրված ավագակների խաչափայտերի հետ միասին: Այն պահին, երբ տիկինն ուրախացած մտնում է Տիրոջ Հարության վայրը, նրա դուստրերից մեկը հանկարծամահ է լինում: Սուրբ Հոգու ազդեցությամբ նրանք մահացածի վրա հաջորդաբար դնում են խաչափայտերն ու աղոթում:

Զախակողմյան ավագակի խաչափայտից ոչ մի օգուտ չի լինում, իսկ աջակողմյան ավագակի խաչափայտի ազդեցությամբ բացվում է միայն արքայադըստեր աջ աչքը: Իսկ երբ մահացածի վրա դնում են Տիրոջ Խաչափայտը, արքայադըստը անմիջապես կենդանանում է, և ներկաները, տեսնելով հրաշքը, խոնարհում են ու Երկրագելում կենարար խաչափայտը: Այսպիսով՝ երեք խաչափայտերից գտնվում է այն, որը պատկանում էր Տիրոջը: Ապա թագուհին խաչափայտը հանձնում է Հակոբոս Տյառնեղբօրը և փոխարենը կենարար փայտից մի մասունք խնդրում, որը գոհությամբ վերցնելով՝ գնում է Հռոմ:

Հակոբոս Տյառնեղբօրը Խաչափայտը պահում է եկեղեցում և Ծաղկագրդի տոնից սկսած մինչև սեպտեմբերի 14-ը, ամեն կիրակի՝ առավոտյան և երեկոյան, այն դուրս է բերում, բարձրացնում ու ասում. «Խաչի Քո Քրիստոս Երկիր պատանեմք...»: Որից հետո խաչափայտը դրվում էր եկեղեցու սրբարանում՝ մինչև հաջորդ Ծաղկագրդը:

Կլավդիոս կայսեր վախճանվելուց հետո իշխանությունն անցնում է Ներոնի ձեռքը, ով էլ հալածանքներ է սկսում Տիրոջ Եկեղեցու դեմ: Հրեաներն էլ, օգտվելով առիթից, սպանում են Հակոբոս Տյառնեղբօրը և Խաչափայտը թաղում Գողգոթայի վրա, մի խոր փոսի մեջ, և այդ տեղը վերածում աղբանոցի: Խաչափայտն այդտեղ մնում է շուրջ երեք հարյուր տարի՝ մինչև Կոստանդիանոս բարեպաշտ կայսեր ժամանակները, երբ Եկեղեցին խաղաղություն է գտնում:

ԽԱԶԻ ԿՐԿԵՐԻ ԱՅԼԻՏԸ

Երեք հարյուր տարի անց Հեղինե թագուհին՝ Կոստանդիանոս կայսեր մայրը, տեսիլքով Աստծուց հրաման է ստանում գնալ Երուսաղեմ, փնտրել ու գտնել Քրիստոսի Խաչափայտը և տնօրինական վայրերում տաճարներ կառուցել: Հեղինեն տեսիլքը պատմում է Կոստանդիանոսին և նրան Հայտնում Աստծու հրամանը: Կայսրը հոժարությամբ ու մեծ հավատով ընդունում է մոր խոսքերը, միջոցներ է տրամադրում այդ գործն իրա-

կանացնելու համար և թագուհուն՝ մեծ շքախմբով ու բազում օգնականներով, ճանապարհում դեպի Երուսաղեմ:

Թագուհին, գալով Երուսաղեմ, քաղաքը գտնում է ավերված ու թալանված, այնպես ինչպես մարդարեցել էր Եսային. «Զեր Երկիրն ավերակ է, ձեր քաղաքները՝ հրո ճարակ. թշնամի ցեղերից ավերված ու ամայացած ձեր հողի բարիքները ձեր իսկ աչքի առաջ օտարներն են ուտում: Սիոնի գուստը Երուսաղեմը պիտի մնա լքված, ինչպես տաղավարը՝ այգում, մրգապահների հյուղակ՝ սեխի պարտեզում, ինչպես պաշարման մեջ գտնվող քաղաքը» (Եսայի Ա 8): Երբ 70 թ. Հռոմեական զորքերն ավերեցին Երուսաղեմը և հիմնահատակ քանդեցին տաճարը, սովոր ու պատերազմներից մեկ միլիոնից ավելի հրեաներ կոտորվեցին, իսկ մնացածն էլ գերվեցին և ցրվեցին աշխարհով մեկ:

Այդ օրերին Երուսաղեմն արդեն չուներ իր նախկին փառքը: Բացի այդ 64 թվականից սկսած մինչև 313 թվականը՝ մինչև Կոստանդիանոս Մեծի գահակալության երկրորդ տարին, մեծ հալածանքների ենթարկվեց Քրիստոսի Եկեղեցին: Հրեաներն ու հեթանոսները, չհանդուրժելով քրիստոնյաների մատուցած պաշտամունքը Խաչյալին, ամեն կերպ ցանկանում էին աշխարհի երեսից վերացնել Տիրոջ փառքը հիշեցնող ամեն ինչ, որպեսզի դրանով իսպառ ջնջեն Նրա հիշատակը: Այդ պատճառով էլ նրանք թաքցրեցին Տիրոջ Խաչափայտը՝ պազակների երկու խաչափայտերի հետ միասին թաղելով այն հողում, և այդ տեղում կառուցեցին հեթանոսական կուսատուն:

Այդ օրերին Երուսաղեմում միայն Հուդա անունով մեկը գիտեր խաչի գտնվելու վայրը, տեղեկացած իր նախնիների գրավոր ավանդություններից: Սակայն նա չէր ցանկանում հայտնել և թագուհու խնդրանքներին ու հորդորներին անտարբեր էր վերաբերվում, մինչև որ թագուհին ճարահատյալ բանտարկում էնրան:

Հուդան վեց օր առանց հացի մնալով մի ցամաքած ջրհորի հատակում՝ ի վերջո հայտնում է Խաչափայտի տեղը, և թագուհին ձեռնարկում է Խաչափայտի որոնումները Գողգոթայի վրա: Խաչափայտը բավականին խորն էր թաղված հողի տակ, ինչը մեծ աշխատանք և շատ ժամանակ էր պահանջում որոնողներից: Սակայն Աստծու շնորհով թագուհին գտնում է¹ երեք խաչափայտներն էլ և անգամ՝ Պիղատոսի ձեռքով գրված եռալեզու տախտակը:

Թագուհին, գտնելով Խաչափայտը, տրտմում է, քանի որ չի կարողանում զանազանել, թե այդ երեք խաչափայտերից որն էր տերունականը: Սակայն Երուսաղեմի պատրիարք Մակարիոս եպիսկոպոսը հավատով

¹ Ենթադրվում է, որ խաչափայտը գտնվել է 327 թ.-ին:

լուծում է այդ խնդիրը և փարատում թագուհու տրտմությունը։ Նա աղոթքով Աստծուց նշան է խնդրում, որ Նա ցույց տա, թե որն է սուրբ Խաչը։ Եվ Հրաշքը չի ուշանում։ Մի կին երկարատև հիվանդությունից հետո մահամերձ վիճակում է լինում։ Մակարիս եպիսկոպոսը հավատում է, որ Տիրոջ խաչը, որի վրա թափվել է Նրա Արյունը, կառողջացնի այդ կնոջը, եթե նրան մոտեցնեն Խաչափայտին։

Առաջին երկու խաչերը, որոնք ավագակներինն էին, կնոջը ոչ մի օգուտ չեն տալիս, սակայն երբ նրան հպում են Տիրոջ Խաչին, կինը լիովին առողջանում է, ոտքի կանգնում և Աստծուն փառք տալիս։ Այնուհետև այդ խաչի միջոցով, որով Տերը հաղթեց մահին և ավերեց դժոխքը, հարություն առավ մի պատանի, և էլի բազում հրաշքներ կատարվեցին, ինչը տեսնելով՝ շատ հրեաներ դարձի եկան ու մկրտվեցին։ Հուդան էլ, ով ցույց էր տվել խաչափայտի գտնվելու տեղը, իր ցեղակիցների հետ մկրտվեց և անվանվեց Կյուրեղ², մեծ շնորհների արժանացավ ու հասավ եպիսկոպոսի աստիճանի։ Հետագայում նա Տիրոջ անվան համար նահատակվեց՝ արժանանալով մարտիրոսական պսակի։

² Սա այն Կյուրեղն է, ում հիշատակում ենք Մեծի պահոց Երկրորդ շաբաթ օրը, և տոն-նացույցուն նա անվանվում է «մյուս Կյուրեղ», որպեսզի չշփոթենք Կյուրեղ Երուսաղեմացու հետ։ Ըստ ավանդության՝ այդ Յուդա-Կյուրեղը սուրբ Ստեփանոս Նախավկայի ցեղից էր։

ՍՈՒՐԲ ԿՈՒՅԱԿԻ ԸՆԾԱՅՈՒՄԸ ՏԱճԱՐԻՆ

Նոյեմբերի 21-ին երեքամյա սուրբ Կույսին տաճարին ընծայելու տոնն է: Օրվա երեքսրբյանը՝ հավուր պատշաճի:

Մարիամի ծնողները ուխտել էին, որ իրենց զավակին ընծայելու են Տիրոջը: Երբ լրացավ Մարիամի առաջին տարին, ծնողները նրան նվերներով հանդերձ տարան տաճար՝ Աստծուն ընծայելու: Իսկ երբ լրացավ երրորդ տարին, ծնողները, կրկին վերցնելով իրենց հետ ընծաներ, տարան տաճար՝ և հանձնեցին նրան Զաքարիա քահանայապետին: Երբ երեքամյա Մարիամը մտավ տաճար, առանց օգնության բարձրացավ տաճարի տասնհինգ աստիճաններով, (որոնք տանում էին դեպի Մեծ սեղանը) և բոլորին զարմացրեց: Եվ ամեն տարի ծնողները Մարիամին տանում էին տաճար, մինչև լրացավ նրա յոթ տարին: Նրա մասին է երգել Սողոմոնը. «Արքան ինձ իր սենյակը տարապ!» (Երգ Ա 3): Մեծ Արքայի սենյակը անմեկնելի լույսերի խորանն է, որը կոչվում նաև «վարագույրի ներսի կողմ»: Դրա օրինակն է Սրբության սրբոցը, ուր տարին մեկ անգամ մտնում էր քահանայապետը, քավելու իր և ամբողջ ժողովրդի այդ տարում գործած մեղքերը:

Ինչպես Աբրահամը, երբ իր որդուն տանում էր ողջակիզման (տես Ծննդ. ԻԲ 1-4), երրորդ օրը տեսավ Մորիա լեռը, ուր պետք է զոհաբերվեր իսահակը (տես Ծննդ. ԻԲ 4), այդպես էլ այսօր սրբուհի Կույսը, իր կյանքի երրորդ տարում, տարվեց տաճար՝ տեսնելու այն տեղը, որտեղ զոհաբերվում էին գառներն ու ոչխարները, որոնք օրինակն էին Քրիստոսի՝ իր ապագա Զավակի՝ Աստծու Գառի:

Մտավ սուրբ Կույսը տաճար այնպես, ինչպես Ուխտի տապանակը մտավ Վկայության խորան: Սակայն այդ ժամանակ Ուխտի տապանակն արդեն խորանում չէր, քանզի վաղուց ի վեր երեմիան այն թաքցրել էր Արնա լեռան մեջ: Ուխտի տապանակը իսրայելի փառքն էր, և երբ՝ Հեղի քահանայապետի օրոք, այն գերվեց, ասացին. «Իսրայելի փառքը վերացավ» (Ա Թագ. Դ 22): Այսօր Տերը, կամենալով կրկին փառավորել իսրայելը, տաճար տարավ Աստվածածին Կույսին, որպեսզի այն փառավորվի Մարիամով՝ Խորհրդական տապանակով:

Մարիամը յոթ ամսական է ծնվել, և յոթ ամսականում դուրս եկան նրա առաջին ատամները: Յոթ ամսականում առաջին անգամ նա քայլեց՝ յոթ քայլ, և յոթ տարեկանից սկսեց ապրել տաճարում: Նա արժանապես ընդունեց Սուրբ Հոգու յոթնարկյա շնորհները՝ զարդարվելով յոթ

առաքինություններով: Ամենագով մանուկը բնակվեց տաճարում իրեւ անբիծ աղավնի, աճեց ու զարգացավ հասակով և իմաստությամբ: Եվ Հրեշտակներն աղավնակերպ իջնում էին տաճարի մեջ և Մարիամին կերակրում: Մարիամն իր առաքինի վարքով մնաց տաճարում յոթ տարի և ամեն օր հոգով կրթվում էր պարկեշտության մեջ:

Սուրբ Կույսի Հաւատության Հոգաւեփին

Երբ լրացավ Մարիամի տասնչորս տարին, քահանայապետը նրան Հրամայեց ամուսնանալ, ինչպես մյուս կույսերին, սակայն նա չհամաձայնեց՝ ասելով, որ իր ծնողներն իրեն նվիրել են տաճարին, և ինքն Աստծուն ուխտել է կույս մնալ: Քահանայապետերը սկսեցին վնատրել պարկեշտու Աստծու երկյուղն ունեցող, ամեն տեսակ չարությունից զերծ, բոլոր մարդկանցից վկայված մի այր մարդու, որպեսզի Կույսին նրա պահպանությանը հանձնեն, որպեսզի պահպանվի Բանն Աստծու բնակարանը, ըստ Եղեկիել մարդարեի տեսիլքի. «Տեսնում էի մի փակ ու կնքված դուռ, և ոչ ոք չէր մտնում և դուրս չէր գալիս նրանով, բայց միայն Խորայելի Տեր Աստվածը» (տես Եգեկ. ԽԴ 2):

Քահանաները զիմեցին Աստծուն, որ նա ինքը ցույց տա այդ մարդուն: Եվ երկնքից մի ձայն ասաց. «Հավաքի՛ր Խորայելի բարեպաշտ որդիների գավազանները և դրանք զիր խորանում և ում գավազանը որ կծաղկի, նրան էլ տուր այս կույսին»: Այդ ժամանակ քահանայապետը Հավաքեց գավազանները և դրանք դրեց խորանում: Մի որոշ ժամանակ անց Հովսեփի գավազանը ծաղկեց, և Հոգու շնորհը երևաց նրա վրա: Այն օրերին Հովսեփը քառասունմեկ տարեկան էր: Սակայն, քանի որ Հովսեփը հանձն չէր առնում ընդունել Մարիամին, քահանաները նրան ասացին. «Ո՞վ մարդ, Աստծուն մի՛ հակառակվիր, հիշիր Կորիսին ու Դադանին, քանզի Տիրոջից է, որ վիճակը քեզ է ընկել»:

Ապա քահանայապետն օրհնեց Կույսին և նրան հանձնեց Հովսեփին, ով էլ հնագանդորեն առնելով Մարիամին, այսինքն՝ ի պահպանության վերցնելով Բանն Աստծու տաճարը, տարավ նազարեթ՝ իր տունը, որը Գալիլիայի կողմերում է, և կարգեց իր գավակների հետ: Կույսը չորս ամիս նրա տանն ապրելուց հետո Հրեշտակից ընդունեց Հղության ավետիսը:

Հովսեփը նախկինում ամուսնական պարկեշտ կյանքով էր ապրել, բայց երկար ժամանակից ի վեր ամուրի էր: Նա իր առաջին ամուսնությունից չորս որդի ուներ՝ Հակոբոսը, Հովսեն, Սիմոնը և Հուդան, և երեք դուստր՝ Մարթան, Եսթերը և Սաղոմեն՝ Հովհաննեսի և Հակոբի մայրը՝ Զեբեդիայի կինը: Հովհաննեսը Քրիստոսի քրոջ որդի էր կոչվում, այնպես ինչպես Հովսեփի որդիները Քրիստոսի եղբայրներ էին ասկում,

իսկ դուստրերը՝ քույրեր: Հովսեփն ու Կղեռպասը եղբայրներ էին, և Կղեռպասի դուստր Մարիամը քույր է ասվում Աստվածածնին: Այդ պատճառով էլ Հովհաննես ավետարանիչն ասում է. «Խաչի մոտ կանգնած էին Նրա մայրը և մորաքույրը՝ Կղեռպասի Մարիամը» (Յովի. ժթ 25):

Եսային մարգարեացել էր Հովսեփի և անարատ Կույսի մասին՝ ասելով. «Նամակը պիտի տան գրագետ մարդու և ասեն նրան՝ ընթերցի՛ր: Իսկ նա պիտի ասի. «Ձեմ կարող ընթերցել, որովհետեւ կնքված է» (հմնտ. Եսայի հթ 11): Մարգարեն Հովսեփին գրագետ մարդ է անվանում, քանզի նա ամուսնական կյանքի փորձ ուներ: Իսկ «Կնքված գիր» ասելով Մարիամի անխախտելի կուսությունն է ակնարկում: Հովսեփը խոստովանեց, որ չի կարող ընթերցել նամակը, քանզի գիրը կնքված էր սերովբեների Արքայի համար: Մարիամի մասին, ով ընդունողն եղավ Աստծու անձառելի Խոսքի, նաև ասվում է. «Փակված պարտեզ և կնքված աղբյուր» (Երգ Դ 12):

Հովսեփը մեծ երկյուղով ծառայում էր Կույսին, մինչև մեր Կենարարի երեսունմեկ տարին լրանալը, և ապա փոխվեց այս աշխարհից յոթանասուներկու տարեկան հասակում:

ՍՈՒՐԲ ԿՈՒՅԱ ՄԱՐԻԱՄԻ ՀՂԱՑՄԱՆ ՏՈՆԸ

Դեկտեմբերի 9-ին սուրբ Կույսի հղացման տոնն է: Օրվա երեքսրբյանը՝ հավուր պատշաճի:

Քրիստոսի մայրը՝ ամենագովելի սուրբ Կույս Մարիամ Աստվածածինը ծնվել է ամուլ ծնողներից: Նա աստվածատուր է, որովայնից ընտրյալ զավակ, և նրա ծնունդը հրեշտակն է ավետել: Մարիամը սերում է քահանաների ու թագավորների տոհմից, քանզի նա, Ով նրանից պիտի ծնվեր, Քահանա է ու Թագավոր:

Մարիամի հայրը՝ Հովակիմը, Հուդայի թագավորական ցեղից էր, իսկ մայրը՝ Աննան՝ Ղեիի քահանայական ցեղից: Այդպիսով՝ Մարիամից Ծնվածը՝ Քրիստոս, և՝ թագավոր է, և՝ Քահանա՝ Համաձայն այս խոսքերի. «Դու հավիտյան Քահանան ես, ըստ Մելքիսեդեկի կարգի» (Եբր. Ե 6), և «Տեր Աստված Նրան կտա Նրա Հոր՝ Դավթի աթոռը, և Նա հավիտյան պիտի թագավորի Հակոբի տան վրա» (Ղուկ. Ա 32):

Մատթեոս ավետարանիչը գրում է.

«Աբրահամը ծնեց Իսահակին. Իսահակը՝ Հակոբին. Հակոբը ծնեց Հուդային և նրա եղբայրներին» (Մատթ. Ա 2):

Հակոբի անդրանիկը Ռուբենն էր, ում պատկանում էր թագավորությունը և քահանայությունը, սակայն երբ նա պղծեց իր Հոր անկողինը՝ գնաց ու պառկեց իր Հոր Հարծի՝ Բալլայի հետ (տես Ծննդ. ԼԵ 21), զրկվեց այս ամենից, որը և բաշխվեց նրա երեք եղբայրների միջև. Հուդային տրվեց թագավորությունը, Ղեիին՝ քահանայությունը, իսկ Հովսեփին՝ անդրանիկությունը:

Հուդան ծնեց Փարեսին և Զարային՝ Թամարից. Փարեսը ծնեց Եզրոնին. Եզրոնը ծնեց Արամին. Արամը ծնեց Ամինադարին (Մատթ. Ա 2-4):

Ամինադարը զորավար էր, Հուդայի ցեղից: Նա ծնեց Նաասոնին, ով իշխան կարգվեց բյուրավորների վրա: Երբ Հուդայի ցեղն անապատում էր, Ամինադարի դուստրը՝ Նաասոնի քույրը, դարձավ Տիրոջ քահանա Ահարոնի որդի Եղիազարի կինը: Նրանից ծնվեց Փենեհեղը, ով նախանձախնդիր լինելով՝ մեղմեց Աստծու բարկությունը: Ամինադարի դստեր միջոցով բիեց քահանայության օրհնությունը, իսկ թագավորությունը՝ Հուդայի ցեղից՝ Ամինադարի որդի Նաասոնի:

Հուդայի ցեղից Ամինադարի որդի Նաասոնը ծնեց Սաղմոնին: Երբ Հեռան իսրայելի տասներկու ցեղերի բանակներն անցկացրեց Հորդանանով և կործանեց Երիքովը, փրկվեց միայն Ռահաբը, ում և կնության առավ Սաղմոնը: Նա Հուդայի սահմաններում Բեթղեհեմ քաղաքը կառուցեց և

Իտահաբից ծնեց Բոռսին: Բոռսը կին առավ մովաբացի Հռութին, որպեսզի նրանով հաղորդ լինի արդարների օրհնությանը և ծնեց Օքեղին՝ Հռութից. Օքեղը ծնեց Հեսսեին. Հեսսեն ծնեց Դավիթ արքային:

Թեաբետե՝ ըստ Օքենքի՝ երկու ցեղերը չեն խառնվում միմյանց, բայց քանի որ դետացիները չունեին ժառանգություն ու բաժին, այդ պատճառով էլ երեմն խառնվում էին Հռուդայի թագավորական ազգի հետ:

Որպեսզի ոչ միայն հրեաների ցեղը մասնակից լինի Քրիստոսի մարդեղությանը, հեթանոսների անմաքուր կանայք՝ Թամարը (տես Ծննդ. ԼԸ 3), Իտահաբը (տես Յեսու Բ 1), Հռութը (տես Յոութ Ա 4), և Բերսաբեն (տես Բ Թագ. ԺԱ 3), Իսրայելի դուստրերից մաքրություն ընդունեցին, որպեսզի հեթանոսները ևս կարողանան պարծենալ՝ սրբուհի Կույսին նախամայր դառնալով: Ինչպես հրեաներն էին թագավորներով ու նահապետներով պարծենում, ովքեր սուրբ Կույսի նախահայրերն էին, այդպես էլ ուրախանում է սուրբ Եկեղեցին Թամարով, Հռութով, Իտահաբով և Բերսաբեով: Այսպես հեթանոս առաքինի կանանցից և իսրայելի թագավորների ու նահապետների ցեղից ծնված Սուրբ Կույսից ծագեց Անմուտ Արեգակն ու լուսավորեց ողջ տիեզերքը:

Սուրբ Կույսի մայրը՝ սրբուհի Աննան, Ղեիի ցեղից էր, Ահարոնի զարմերից՝ Մաթան քահանայի դուստրը: Մաթան քահանան երեք դուստր ուներ: Առաջինի անունը Մարիամ էր, Հովսեփի աստվածահոր որդիների մայրը, ով ծնեց Սաղոմեին, սուրբ Կույսի մանկաբարձուհուն, երկրորդը՝ Սովուեն էր, նա ծնեց Եղիսաբեթին՝ Հովհաննես Մկրտչի մորը, իսկ երրորդը՝ կրտսերը՝ Աննան էր, ով Գալիլիայում ամուսնացավ Հովակիմի հետ և ծնեց հրաշագեղ Մարիամին: Այս երեքը՝ Մարիամը, Եղիսաբեթը և Սաղոմեն երեք քույրերի դուստրեր էին:

Հովակիմն իսրայելի որդիների տոհմից էր, Հռուդայի ցեղից, Դավիթի թագավորական տնից: Նա բարեպաշտ, բոլորի կողմից սիրված, Աստծու երկյուղն ունեցող անձնավորություն էր, և սուրբ սրտով, անկեղծ մտքով ու հոժար կամքով ծառայում էր Աստծուն: Աննան ու Հովակիմը, լինելով պարկեշտ ամուսնության մեջ, երկար տարիներ զավակ չէին ունենում, քանզի Աննան ամուլ էր:

Սուրբ Աննան տրտմում էր, քանի որ զավակ չունենալը ամոթ էր իսրայելում: Հովակիմն ու Աննան արտասուրքով և աղաղակներով անընդհատ Տիրոջից զավակ էին խնդրում:

Հովակիմը հույժ հարուստ էր և Աստծուն կրկնակի ընծաներ էր մատուցում: Մի օր էլ, երբ իսրայելի որդիներն ընծաներ էին մատուցում Տիրոջը, և Հովակիմն էլ նրանց հետ էր, Խուփիմ քահանան նրան ասաց. «Դու իրավունք չունես առաջինը ընծաներ մատուցել Աստծուն, որովհետեւ

չունես զավակ հսրայելի մեջ»: Հովակիմը տիրեց և դուրս գալով Տիրոջ տաճարից՝ գնաց լեռները՝ հովիվների մոտ, որոշելով այլես տուն չկերագառնալ, չուտել ու չխմել, մինչև որ Աստված չողորմի իրեն: Նա աղոթքն իր համար կերակուր դարձրեց և իր արտասուրքը խմեց: Այդ իմանալով նրա կինը՝ Աննան, սպի հագուստներ հագավ և օր ու գիշեր արտասվում էր:

Մի օր, իններորդ ժամին, Աննան աղոթքի է կանգնում Տիրոջ առջև ու ասում. «Հիշի՛ր, Տեր, Քո աղախնու տառապանքները և օրհնիր ինձ, ինչպես օրհնեցիր Սառայի արգանդը, տալով նրա հսահակ որդուն»: Այդպես աղոթում էր և երկինք նայելով լալիս: Այդ ժամանակ Տիրոջ հրեշտակը երևաց նրան ու ասաց. «Աննա՛, Աննա՛, Աստված լսեց քո աղոթքը, և ահա դու պիտի հղանաս և մի գուստը պիտի ծնես, ում անունը տարածվելու է ամբողջ երկրում, և նրան պիտի նվիրես Տիրոջը՝ Աստծու տաճարին: Եվ ահա քո Հովակիմ ամուսինը գալիս է խոյերով, նոխազներով ու զվարակներով, քանզի Տերը լսել է նրա աղոթքները»:

Հովակիմը նույնպես Տիրոջ հրեշտակից ավետիս էր ընդունել, և վերցնելով ընտիր ու անարատ տասը ոչխար՝ Տիրոջն ընծայելու համար, տասներկու զվարակներ՝ քահանաների ու ծերերի համար, և հարյուր այծեր էլ՝ ժողովրդի համար, իջնում է սարից և ընծաները մատուցելուց հետո գնում իր տունը, և նրա կինը՝ Աննան, հղիանում է:

Հետագայում Աննան արժանանում է նաև իր Թոռան՝ Հիսուսի տեսությանը, սակայն այդ ժամանակ Հովակիմն արդեն մահացել էր:

ՄՐԲԵՐԻ ՏՈՆԵՐ

Սրբոց տոների երեքսրբյանն է. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա' մեզ»:

Սուրբ Հոգին սուրբ Եկեղեցու կարգավորիչն է և հոգաբարձուն: Նա Եկեղեցու շինության համար Մկրտության պատահած վերստին ծնված զավակներից ոմանց կարգեց առաքյալներ, ոմանց՝ մարգարեներ, ոմանց՝ հովիվներ, ոմանց՝ վարդապետներ և ոմանց էլ, ըստ արժանավորության, մինչև այսօր այլ կոչումներ է շնորհում՝ հաստատելու համար սրբերին աստվածապաշտության մեջ:

Հետեաբար սրբերը Սուրբ Հոգու կողմից կարգված են որպես Եկեղեցու պաշտոնյաներ՝ սպասավորներ, տեսուչներ ու բարեխոսներ, Քրիստոսի, այսինքն՝ Գլխի և մարմնի անդամների՝ հավատացյալների միջև: Նրանք աստվածային գանձերի ու զանազան շնորհների մատակարարն են և ունեն իշխանություն՝ փակելու և բացելու, կապելու և արձակելու:

Շարականագիրները Լուսավորչի մասին ասում են. «Թորգոմի որդիներին Հոգու անապական պարգևները բաշխող», իսկ Հոփիփսիմյանց կույսերի մասին՝ «Բաշխում են Հոգու և մարմնի բժշկություն և երկնավոր պարգևներ իրենց սիրողներին»: Մարտիրոսների մասին ասում են. «Սուրբ Հոգուց իշխանություն ունեն մեզ առաջնորդելու Վերին երուսաղեմ»: Վարդապետներն ասում են, որ սրբերն ունեն իշխանություն՝ բարեխոսելու մեզ համար, ինչի կարիքը մենք չատ ունենք: Երբ գիտակցում ենք մեր մեղքերի ծանրությունը, որոնց պատճառով այլևս չենք համարձակվում որևէ բան խնդրել Աստծու Ամենազոր Տերությունից, այդ ժամանակ դիմում ենք սրբերի միջնորդությանը՝ խնդրելով, որ բարեխոս լինեն մեզ համար:

Այդ պատճառով էլ Եկեղեցում կարգվեցին սրբերի տոներ, և յուրաքանչյուր սրբին տարվա մեջ հատուկ օր հատկացվեց: Նրանց պատվին երգեր ու զանազան խոսքեր նվիրվեցին, որպեսզի մենք՝ հետիններս ու կարոտյալներս, յուրաքանչյուր օր կարողանանք տոնել որևէ մի սրբի հիշատակ՝ նրան շնորհակալությամբ փառավորելով իր արած բարերարության համար, և աղաչել, որպեսզի նա այսուհետև ևս լինի բարերար, այսինքն՝ խաղաղության միջնորդ Աստծու մոտ՝ մեր առջեւ բացելու համար ողորմության գուռը: Լինի նաև մեր Հոգիների ու մարմինների պահապանը, մեզ առաջնորդի գեղի վերին՝ անդրանիկների Եկեղեցին ու մասնակից անի այն բազում բարիքներին, որոնք իրենք են վայելում: Այս գիտավորությամբ մենք տոնում ենք սրբերի հիշատակներն այնպես, կարծես թե Աստծու ողորմության բանալին այդ օրը հիշատակվող սրբի ձեռքում լինի:

Սրբերի տոնին հավաքվում են սուրբ Եկեղեցու մանուկները և քահանաների ու Եկեղեցու պաշտոնյաների հետ միասին հավատով, սուրբ սրտով ու ջերմեռանդ արտասուրբներով տոնում նրանց հիշատակը՝ մտաբերելով սրբերի նահատակությունը, և նրանց բարեխոսությամբ աղաչում Աստծուն, որպեսզի Տերը մեզ պահի չարից, ապրեցնի առաքինասեր վարքով և տա շնորհ՝ հաղթելու երևելի և աներևությամբ թշնամիներին: Եկեղեցու մանուկները սրբերի միջոցով են պայծառանում, լուսավորվում ու վայելչապես զարդարվում ոսկեհուռ հանդերձներով: Սրբերի բարեխոսությամբ խաղաղություն ենք խնդրում աշխարհի համար և Աստծուն երկրպագելով՝ փառաբանության պաշտոն մատուցում Սուրբ Երրորդությանը՝ օրհնություն առաքելով սրբերին Պատկողին, ինչպես այն սրբերը, ովքեր նահատակվեցին Աստծու փառքի համար:

Սուրբ վկաները՝ երկրային զինվորները, ընծայվելով երկնքի սուրբ Խորանին, երկնավոր Վարդապետի սիրույն ապրեցին ըստ Տիրոջ պատվիրանի՝ ընդդիմանալով կռապաշտական մոլորություններին: Նրանք, դավանելով Միասնական Սուրբ Երրորդությանը, իրենց անձերը զոհեցին՝ արյուն թափելով քրիստոնեական ճշմարիտ ու սուրբ հավատի համար, և փոխվեցին վերին զվարթունների զորքերի մեջ: Երբ հրեշտակների դասերի հետ, սրբերի արյան հեղած տեղում, ցնծությամբ տոնում ենք իրենց հիշատակը, նրանք բոլորը ցնծում են և տոնակից են լինում մեզ:

Երբ տոնում ենք սրբերի ճգնության սուրբ հիշատակը, նրանք համարձակություն են ստանում իրենց սուրբ և ընդունելի աղոթքներով մեզ համար բարեխոսել Քրիստոսի առաջ և նրանից ողորմություն հայցել՝ տոնողներիս մեղքերի թողության և այլեայլ պարգևների համար, և մեզ օգնական են լինում, որպեսզի Տերն ընդունի նաև մեր օրհնաբանությունները, որից բազում վարձք ենք ստանում: Այդպիսով՝ որովայնից ընտրված սրբերը՝ սքանչելագործ վկաները և մարդկային ցեղի պարծանքները, Քրիստոսի առջև բարեխոսում են տոնողներիս համար:

Երբ տոնում ենք սրբերի խաչակրոն սուրբ հիշատակը, Սուրբ Հոգու պարգևները սփռվելով տարածվում են տոնասեր հավատացյալ անձերիս վրա, ինչից ջնջում է մեղքերի գիրը ու փարատվում են մեր հոգու ու մարմնի բոլոր ցավերը, պայծառանում է մեր միտքը, և հրճվալից զգացողություն ենք ունենում՝ թռչելով՝ գեպի անմահություն՝ ըստ այս խոսքի. «Արդարների հիշատակով պայծառանում է ժողովուրդը»: Քանզի ցնծում է երկինքն, ու զվարճանում երկիրը, և մեզ տոնակից են լինում երկնային զորքերը և հայցում Քրիստոսի ճշմարիտ վկաներից, որպեսզի նրանք աղաչեն Աստծուն՝ շնորհելու մեզ անվախճան կյանք:

Սրբերը մեզ չեն մերժում, այլ՝ ըստ իրենց մարդասեր կամքի ու մեծ բարության, հարգանքով ընդունում են մեզ և մեղանով ուրախանում, քանզի նրանք իրենց համար փառք չեն հայցում, այլ իրենց փառավորումով տոնողներիս օգուտան են փնտրում։ Սրբերի կամքն է՝ իրենց բարեխոսությամբ ժողովրդին աստվածպաշտության հորդորել։

Նախ սրբվում ենք պահքով, ապա սրբերի միջնորդությանը դիմում՝ նրանց մեզ բարեխոս դարձնելով, որպեսզի նրանց, այսինքն՝ Թագավորի զինվորների բարեխոսությամբ ընդունելի լինեն մեր պահեցողություններն ու աղոթքները։ Եվ այդ օրվա տոնի տերերը նրանք են, ինչպես նաև բարեխոսները պահողների և հույսով տոնողների զորավիրն ու պահապանը՝ Քրիստոս Աստծու հրամաններով։ Նրանց բարեխոսությանն ենք դիմում, որպեսզի ինքը՝ Ամենաողորմածը, բարեգութ և մարդասերն Աստված, նայելով նրանց նահատակությանը, նրանց բարեխոսությամբ ընդունի մեր պահքը և աղաչանքները՝ թողություն շնորհելով մեր մեղքերին, և իր սրբերի հետ մասնակից դարձնի բոլոր հավատացյալներին։

Այդպես հույսով ու հավատով տոնում ենք սրբերի հիշատակը, ովքեր Տիրոջ անվան համար իրենց մարմինը, ինչպես անուշահոտ պատարագ, մատուցեցին երկրի վրա։ Եվ տոնելով հաղորդվում ենք սուրբ ժողովի հետ Ամենակալի փառքին, Ով նրանց հաղթող կարգեց չար բռնավորի վրա և փառավորեց երկրում ու երկնքում, ուր նրանք միշտ կան։ Ապա Աստծուն պաշտոն ենք մատուցում սաղմոսներով, օրհնություններով և հոգեսր երգերով՝ սուրբ սրտով գովելով անսկիզբ էությունը և անմենազոր Տերությունը, Ով մեզ արժանացրեց սրբերի ժառանգությանը։

Սրբերը երեք դասերի են կարգված։ Առաջին դասի սրբերի անունները հիշատակված են «Հայսմավուրք» կոչվող մատյանում՝ ի թիվս այլ սրբերի, երկրորդ դասի հիշատակը կատարվում է ժամերգությունների ժամանակ, և նրանք կոչվում են տոնելի սրբեր, իսկ երրորդ դասի հիշատակը տոնվում է նախատոնակով և սուրբ Պատարագով։ Ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Այլ է փառքը երկնավորների և այլ է փառքը երկրավորների, այլ է փառքն արեգակի, այլ է փառքը լուսնի և այլ է փառքն աստղերի. և մի աստղ փառքով առավել է, քան մի ուրիշ աստղ» (ԱԿորնթ. ԺԵ 40):

Սրբերը դասակարգվում են՝ հրեշտակների, կույսերի, նախահայրերի, մարդարեների, առաքյալների, վարդապետների, հայրապետների, առաքելագործ եպիսկոպոսների, երեցների, ուղղափառ սարկավագների, կրոնավորների, մարտիրոսների, ճգնավորների, մենակյացների և նրանց աշակերտների, բարեպաշտ թագավորների, աստվածասեր իշխանների և գորավարների։

ՀՐԵՇՏԱԿԱՆԵՐ

Եկեղեցին, տոնելով Գաբրիել ու Միքայել Հրեշտակապետների տոնը, հանձինս նրանց, տոնում է ամբողջ երկնային զորքի տոնը։ Այդ օրը երկրային Եկեղեցու քահանայապետությունը ցնծությամբ կատարում է երկնային քահանայապետության տոնը, և մենք՝ մարմնավորներս ու Հողեղեններս, անմարմին ու հրեղեն դասերի հետ միասին փառավորում ենք Տիրողը և խնդրում Գաբրիել ու Միքայել Հրեշտակապետներին և երկնային ամբողջ զորքին, որպեսզի նրանք անդադար բարեխոսներն են, գիտենք հետևյալ խոսքից։ «Պատասխանեց Հրեշտակը և ասաց. «Տե՛ր Ամենաակալ, մինչև ե՞րբ չես ողորմելու Երուսաղեմին և Հուդայի երկրի քաղաքներին» (Զաքար. Ա 12):

Հրեշտակապետները, Աստծուն անդադար փառաբանելով, ասում են. «Ողորմի՛ր Քո ստեղծածներին և մի՛ կորցրու, Քո ձեռքի գործերը մի՛ անտեսիր»։ Հրեշտակները քրիստոնեության աներևույթ պահապաններն են, ինչպես ասում է սաղմոսներգուն. «Իր Հրեշտակներին հրամայված է քո մասին, որ պահպանեն քեզ քո բոլոր ճանապարհներին» (Սաղմ. ՂԱ 11): Նրանք նաև մեր աղոթքներն են մատուցում Աստծուն, և մարդկանց չոգիները տանում Աստծու առջեւ:

ԿՈՒԺԱԵՐ

Պատվական է կուսությունն Աստծու առջեւ, քանի որ նրանց կյանքը նման է երկնայինների կյանքին, և կուսությունը երկնային կյանք է երկրի վրա։ Ինչպես երկնքում չկա ապականություն, այդպես էլ կույսերը իրենց Հոգիներն անապական պահեցին և իրենց մարմինները դաշտի շուշանի նման անուշահոտ դարձրեցին։ Սողոմոնը նրանց մասին ասում է. «Ինչպես շուշանն է փշերի մեջ, այնպես էլ իմ սիրելին է դուստրերի մեջ» (Երգ Բ 2):

Կույսերն Աստծու սիրո համար թողեցին աշխարհիկ վայելքները, քանզի ինչպես հուրբն ու Հուրը միասին չեն կարող լինել, այդպես էլ մարմնավոր և հոգեոր վայելքները միասին չեն լինում։ Կույսերն անառիկ են պահում իրենց տկար ամրոցը՝ մարմինը, զորավոր թշնամուց, այդ պատճառով էլ մյուսներից ավելի մեծ պսակի են արժանանում։ Ինչպես մորենին էր վառվում առանց այրվելու (տե՛ս Ելք Գ 2), այդպես էլ սուրբ կույսերը, որոնց գլուխն է Աստվածածինը, վառվում են մարմնական փորձություններով, սակայն չեն այրվում։

Նախահայրեր

Նախահայրեր են կոչվում Աբրահամը և նրա որդիները մինչև Քրիստոս: Սակայն ոչ թե ըստ մարմնի որդիները, այլ՝ ըստ հավատի: Ինչպես Քրիստոս ասաց Հրեաներին. «Եթե Աբրահամի որդիներ լինենք, Աբրահամի գործերը կգործենիք.... Դուք հոր կողմից սատանայի զավակներ եք, և ձեր հոր ցանկություններն եք ուզում կատարել» (Ղովի. Ը 39, 44): Քանզի Տերը որդի է կոչում հավատից ծնվածներին: Այդպես և նիկիայի սուրբ ժողովի հայրերը՝ ոչ թե ըստ մարմնի են մեր հայրերը, այլ՝ ըստ հավատի:

Աստված ասաց Աբրահամին. «Անչափ պիտի օրհնեմ քեզ և երկնքի աստղերի, ծովեզերքի ավագի չափ պիտի բազմացնեմ քո սերունդը» (Ծննդ. Եթ 17): Ովքեր օրհնության ծնունդ էին, ինչպես հսահակն ու Հակոբը, իրենց հավատով ու գործերով պայծառ աստղերի նմանվեցին, իսկ հսմայելի և Եսավի նմանները նվազեցին չար կռապաշտությամբ և նմանվեցին ծովեզերքի ավագին: Ինչպես աստղերը գիշերն են ծագում, իսկ ցերեկն արեգակի լույսից ծածկվում, այդպես և նախահայրերը կռապաշտության գիշերը ծագեցին և իմանալի Արեգակի ծագումով ծածկվեցին: Քանզի մարդարեները քրիստոնեությանը նախորդող ժամանակները գիշեր անվանեցին, ինչի մասին ասում է Դավիթը. «Կեսդիշերին ելնում էի գոհություն մատուցելու Փեզ Քո արդար դատաստանների համար» (Սաղմ. 6ԺԸ 62): Եվ ինչպես գիշերը ծովում նավարկողները կարոտ են աստղերի առաջնորդությանը, այդպես էլ կռապաշտության խավարում խարիսափողները կարոտ են բանական աստղերին:

Մարգարեւեր

Մարգարեները հին հսրայելի հովիվներն են, որոնց Տերը նախապես ընտրելով՝ առաքեց աշխարհ՝ ավետարաններու Աստծու Որդու գալուստը անթարգաննելի տնօրինությամբ, և նրանք Տիրող գալստյան խորհուրդը հայտնեցին բազում տեսիլքներով ու օրինակներով:

Քրիստոս մարդարեների մասին ասաց. «Օքենքն ու մարդարեները մինչև Հովհաննեսն էին» (Ղուկ. ԺԶ 16): Քանզի մարդարեները Քրիստոսի համար էին եկել և Քրիստոսի համար մարդարեացել: Նրանք «Հեռվից» տեսան Քրիստոսին, իսկ Հովհաննես Մկրտիչը տեսավ Տիրոջը և ճանապարհ պատրաստեց նրա համար: Աստված մարդարեներին առաքեց մութ գիշերով, որպեսզի մարդկանց պատմեն իմանալի Արեգակի գալստյան մասին: Այժմ նահապետների ու մարդարեների դասերը վերին գորքերի հետ միաձայն երգում են հոգեոր երգեր և տոնակից են մեզ:

Առաջալներ

Առաքյալները Ավետարանը տարածեցին աշխարհի չորս կողմերում: Նրանց միջոցով ծաղկեց ու պտղաբերեց Քրիստոսի հավատը և դրվեց սուրբ եկեղեցու հիմքը: Նրանք նախքան աշխարհի ստեղծվելը ընտրվեցին և նրանց մասին մարգարեները կանխասացին: Առաքյալներից ավելի երանելիները չկան, քանզի նրանք իրենց աչքերով տեսան Աստծու Որդուն:

Երբ տոնում ենք առաքյալների ճգնության սուրբ հիշատակը, ովքեր քաջությամբ հաղթեցին թշնամուն և մարդկանց հրեշտակների հետ դասեցին, ապա ցնծում են նրանց դասերը, հրեշտակները տոնակից են լինում մեզ՝ զգարձանալով բերկրում սրբերի հեղած արյան համար ու խնդրում, որպեսզի նրանց աղաչանքներով Քրիստոս մեզ խնայի:

Երբ Կարմիր ծովն անցնելուց հետո Մովսեսը ժողովրդին հանեց Սինա անապատ, նրանք սկսեցին տառապել սաստիկ ծարավից ու տրտնջալ: Իսկ երբ եղիմ հասան, այնտեղ տասներկու աղբյուրներ և յոթանասուներկու արմավենիներ տեսան (տես Ելք ԺԵ 22-27): Այս պատմության մեջ Մովսեսն օրինակն է Քրիստոսի, իսկ տասներկու աղբյուրները՝ տասներկու առաքյալների: Տասներկու աղբյուրներն սկզբում դառնահամ էին, իսկ երբ Մովսեսն Աստծու ցույց տված փայտը գցեց ջրի մեջ, դրանք քաղցրահամ դարձան, ինչպես և առաքյալներն էին սկզբում դառնահամ, իսկ հետո խաչով քաղցրացան: Ինչպես Ղեկ մաքսավորը դարձավ Մատթեոս առաքյալ, և Սողոս փարիսեցին, ով սկզբում հայցոյում էր ու հալածում եկեղեցին, դարձավ Պողոս առաքյալ: Առաքյալները քաղցրահամ դառնալով՝ Ավագանի մկրտությամբ և Տիրոջ տնից բխող կենդանի ջրով արբեցրին ամբողջ տիեզերքը:

Յոթանասուներկու արմավենիները շատ էին վեր խոյացել, սակայն Մովսեսի աղոթքներով դրանք ներքեւ խոնարհվեցին, որպեսզի ժողովուրդը կարողանա քաղել և ուտել դրանց պտուղներից: Յոթանասուներկու արմավենիները յոթանասուներկու առաքյալների օրինակն են, ովքեր բոլոր արարածներին կերակրեցին աստվածային քաղցրահամակ վարդապետությամբ, որն առավել է ամեն տեսակի անուշահամ կերակուրներից՝ ըստ մարգարեի խոսքի. «Որքա՞ն քաղցր են Քո խոսքերն իմ քիմքին, ավելի քաղցր, քան մեղրն՝ իմ բերանին» (Սաղմ. ճԺԸ 103):

Երբ ժողովուրդը հագեցավ քաղցրահամ ջրից ու ճաշակեց անուշահամ արմավենուց, գեղի բարձունք ճանապարհվեց, ուր նրանց հետ Աստված էր խոսելու: Նաև մենք՝ հավատացյալներս, երբ մկրտվեցինք, թողեցինք մոլոր ճանապարհները և գնացինք դեպի աստվածապաշտություն:

Առաքյալների օրինակով Աստված Մովսեսին հրամայեց իսրայելի տասներկու ցեղերից վերցնել յոթանասուներկու այրեր և նրանց տալ մար-

գարեության հոգի, որով բոլորը լցվեցին Հոգով ու իմաստությամբ: Այդպես և Քրիստոս, առաքյալների վրա փչելով, ասաց. «Առե՛ք Սուրբ Հոգին» (Յովի. Ի 22): Առաքյալները Քրիստոսից օրհնության շնորհն առնելով, այն տվեցին քահանաներին, իսկ նրանք՝ ժողովրդին: Սուրբ առաքյալները Քրիստոսից լուսավորվելով՝ ժողովրդի համար գարձան կյանքի առաջնորդ և լուսավորեցին ճշմարիտ հավատացյալներին: Նրանք կոչվեցին զորավարներ և հրամանատարներ:

Առաքյալները, Տիրոջից քաջալերված, իրենց հոգում ցնծացին ու ասացին. «Վստահ ենք, թե ո՛չ մահը, ո՛չ կյանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ իշխանությունները, ո՛չ այլ բաններ, որ այժմ կան, ո՛չ գալիքները և ո՛չ զորությունները, ո՛չ բարձրություն, ո՛չ խորություն և ո՛չ մի ուրիշ արարած չի կարող բաժանել մեզ Աստծու այդ սիրուց, որ կա մեր Տեր Քրիստոս Հիսուսով» (Յոն. Ը 38-39):

Վարդապետներ

Աստված Եկեղեցում կարգեց նախ՝ առաքյալներին, ապա՝ մարդարեներին, այնուհետև՝ վարդապետներին: Ինչպես սուրբ Եկեղեցին երկինք է երկրի վրա, այդպես էլ վարդապետները լուսատուներ են Եկեղեցու հաստատությունում: Ինչպես անթիվ են երկնքի աստղերը, այդպես անթիվ են վարդապետների դասերը: Ինչպես մի աստղը իր լույսով առավել է մյուսից, այդպես էլ մի վարդապետը իր իմաստությամբ առավել է մյուսից: Ինչպես տասներկու կենդանակերպերը երկնքում զանազանվում են մյուսներից, այդպես էլ տասներկու¹ վարդապետները՝ մյուսներից:

Վարդապետները կենաց Խոսքի քարոզիչներն են և ժողովրդի լուսավորության ժիր մշակները, նրանք գրավոր երկեր են թողել Եկեղեցու պայծառացման համար: Վարդապետները մոտեցան Երրորդության անձառելի լույսին, հավատով լուսավորեցին Եկեղեցու մանուկներին, իսկ իրենց վախճանից հետո հրեշտակների դասերի հետ կարգվեցին: Երբ տոնում ենք վարդապետների սուրբ հիշատակը, առաքյալների ու մարդարեների դասերը տոնակից են լինում մեզ, քանզի վարդապետները նրանց խորիմաստ խորհուրդները մեզ հայտնեցին:

¹ Տասներկու տիեզերական վարդապետներն են՝ Յոեթեսոս Աթենացին, Դիոնեսիոս Արիսպագացին, Սեղբեստրոս Յոօմեացին, Արանաս Ալեքսանդրացին, Կյուրեղ Երուսաղեմացին, Եփրեմ Ասորին, Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Սյուսացին, Գրիգոր Աստվածաբանը, Եափիքան Կիպրացին, Յովհաննես Ոսկեբերանը, Կյուրեղ Ալեքսանդրացին:

ՀՅՈՒՆ

Հայրեր են կոչվում Եկեղեցու այն հովիվները, ովքեր դաստիարակում են Եկեղեցու կրոնավորներին, միաբաններին ու ճգնավորներին։ Հայրերին կոչում են Հողանյութ մարմնով երկրի վրա շրջող հրեշտակներ, բանական ծաղիկ ու հիվանդներին ապաքինող դեղ։ Հայրերը հեռանում են մարդաշատ տեղերից դեպի անապատներ և խարազանազգեստ շրջելով՝ գնում նեղ ու անձուկ ճանապարհներով՝ կրելով իրենց խաչը։ Նրանք, չարչարանակից լինելով Քրիստոսին, գառների նման Հոժարությամբ մտնում էին գայլերի մեջ և աստվածային հրով փորձվելով՝ ընտիր գտնվում ինչպես ոսկին՝ դրանով արժանանալով առաքյալների աշակերտներ կոչվելուն։ Նրանք ուղղափառ դավանությամբ քարոզում են Քրիստոսի Ավետարանը և անպարտելի մնում աշխարհի գայթակղություններից։

Հայրերը կրթված են ուղիղ հավատով, ճշմարիտ դավանությամբ և ունեն սրատես միտք։ Նրանք իմաստուն են, առաքինի, Աստծուն հավատարիմ և օրինակ բոլորիս համար։ Մարդահաճո չեն, սակայն բոլորին հավասարապես սիրում են ու պատվում։ Գնում են հոտի առջեից, հոգում նրանց կարիքները, պետք եղածը տալիս և ավելորդն արգելում։ Հոտին առաջնորդում են բոլոր գործերում և հսկում զգաստությամբ ու արթնությամբ, որպեսզի հեռու պահեն հերձվածողներից և տանեն դեպի աստվածապաշտություն։ Նրանք խրոխտ են և ահարկու. ծույլերին խրատում են, անհազանդներին՝ սաստում, անզիղներին՝ հանդիմանում, անդարձներին՝ պատժում և հոտը միաբանում։ Մարդիկ, տեսնելով նրանց բարի վարքն ու գործերը, փառավորում են Աստծուն։

Մասնավոր իմաստով Եկեղեցու «սուրբ Հայր» կոչվել են այն վարդապետները, ովքեր շարադրել են ու բացատրել քրիստոնեական հավատի էությունը, որով մինչև օրս առաջնորդվում է Եկեղեցին։ Եկեղեցու Հայրերից առանձնանում են տիեզերական տասներկու վարդապետները, ովքեր առանձնահատուկ ծառայություն են մատուցել քրիստոնեական դավանանքի ձևակերպման, մեկնաբանման ու պահպանման գործում։

Քանի որ Եկեղեցին միշտ նույնն է և միշտ ունի նույն օրհնաբեր գորությունը, ապա նրանում, բոլոր ժամանակներում, կարող են Հայտնվել սուրբ Հայրերի շնորհներն ու զորությունները կրող անձիք, և Եկեղեցու կողմից Հայր ճանաչվել։ Զնայած որ Եկեղեցին չունի «Հայր» կոչումը շնորհելու գրավոր կանոն, սակայն հստակ է, որ Եկեղեցու Հայր կոչմանը արժանանալու համար անհրաժեշտ է լինել սուրբ (սրբացված Եկեղեցու կողմից) և գործել համաձայն Եկեղեցու դավանության ու վարդապետության։ Նրանք, ովքեր սրբացված չեն, սակայն ունեն երկասիրություններ,

կոչվում են Եկեղեցական Հեղինակներ, ինչպես՝ Կղեմես Ալեքսանդրացին, Որոգինեսը, Տերտուղիանոսը, Իրենեոսը և շատ ուրիշներ:

Հունական (Բյուզանդական) Եկեղեցում հայրերի շրջանը հասել է մինչև Հովհաննես Դամասկացին (754թ.): Արևմտյան Եկեղեցիներում մինչև Գրիգոր Մեծը (604թ.): Հռոմեական Եկեղեցում հայրերի շրջանը հասնում է մինչև 13-րդ դար, իսկ ըստ բողոքականների՝ մինչև 5-րդ դարի վերջը, իսկ Հետագա դարերում հայրեր են կոչվել կաթողիկոսները և այն հովիվները, ովքեր մեծ ավանդ ունեն դավանության պահպանման և Եկեղեցու բարենորոգման գործում: Առաքյալներին հաջորդող հայրերը կոչվել են առաքելական հայրեր:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Սուրբ հայրապետները Եկեղեցու պայծառությունը և բարեգարդությունը հսկող, ժողովրդին զանազան ազանդներից ու մոլորություններից ետ պահող և Եկեղեցական գործերը վարող հոգևոր հովիվներն են: Նրանք հավատի հիմքերը հաստատությամբ դրեցին առաքյալների ու մարդարեների հիման վրա և Աստծուց ընկալած շնորհներն առատապես բաշխեցին Եկեղեցուն:

ՄԱՐՏԻՐՈՍԱԿՐ

Երբ աստվածգիտության լույսը ծագեց հավատացյալ մարդկանց սրտում, նրանք լսեցին Տիրոջ ձայնը, որ ասաց. «Երանի՛ է ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն և Իմ պատճառով ձեր մասին ամեն տեսակ չար խոսք՝ սուտ ասեն: Ցնծացե՛ք և ուրախացե՛ք, որովհետև երկնքում ձեր վարձը շատ է, քանի որ այսպես հալածեցին մարդարեներին, որոնք ձեզնից առաջ են եղել» (Մատթ. Ե 11:12): Եկ Սիոնի նորածին որդիները խորհելով, որ իրենք բացի իրենց անձերից ուրիշ ոչինչ չունեն Աստծուն տալու՝ Նրա մեծ սիրո և շնորհած բարիքների դիմաց, Տիրոջ անվան համար կյանքից առավել նախընտրեցին մահը և արհամարհեցին աշխարհիկ կյանքը: Նրանք արհամարհեցին երկրային փառքը, անտեսեցին անցավոր հաճույքները և տուն ու բնակության վայր դարձան Սուրբ Երրորդության համար:

Մարտիրոսները փոքրաթիվ չեն, ինչպես առաքյալները, այլ ինչպես գարնանը գգալի արեգակի ջերմությունից ամենուրեք բազում վայելուչ ու գեղեցիկ ծաղիկներ են բուսնում, այդպես էլ մարտիրոսների դասերը, իմանալի Արեգակից հավատի ջերմություն ստանալով, նույն երկրից բուսնելով և ընդունելով պես-պես չարչարանքներ, տարբեր ժամանակներում

տարբեր ձևերով նահատակվեցին: Նրանցից ոմանք քարկոծվեցին, ինչպես Ստեփաննոսը, ոմանք սղոցվեցին, ինչպես Եսայի մարդարեն, ոմանք գլխատվեցին, ինչպես Հովհաննես Մկրտիչն ու Պողոսը, ոմանք խաչվեցին, ինչպես Պետրոսն ու Անդրեասը, ոմանք Հոշոտման մատնվեցին գազանների ճիրաններում, ինչպես Իգնատիոս Աստվածազգյաց հայրապետը, ոմանք էլ հրով այրվեցին, ինչպես Մատթեոսը:

Նրանք, Քրիստոսի համար ծով տանջանքներ կրելով, ելան այս աշխարհից, և նրանցից շատերն էլ մարդկանց անհայտ մնացին, և միայն Աստված գիտի նրանց մասին: Նրանց մասին է ասում Սողոմոնը. «Ո՞վ է սա, որ ելել գալիս է անապատից՝ բարձրանալով, ինչպես ծառացած ծուխ, ինչպես զմուռսի և կնդրուկի և ամեն տեսակ յուղերի փոշու սյուն» (Երգ Գ 6), քանզի սուրբ մարտիրոսները նահատակությամբ իրենց անուշահոտ բույրը երկինք բարձրացրին: Մարտիրոսների մասին նաև Եսային է ասում. «Ովքե՞ր են սրանք, որ թռել են ինչպես ամպ և ինչպես ձագերի հետ խառնված աղավնիներ՝ երամով գալիս են ինձ մոտ» (Եսայի Կ 8), քանզի մարտիրոսները երկիրից երկինք չվեցին:

Մարտիրոսը քաջ պատերազմողն է, քանզի մարտնչում է երևելի և աներևույթ թշնամիների դեմ: Երևելի թշնամիները մարդիկ են, ովքեր կարող են չարչարել ու սպանել մարմինը, իսկ աներևույթ թշնամին սատանան է, ով կորսույան է մատնում հոգին ու մարմինը: Մարտիրոսներն իրենց հեղած արյունը՝ որպես սուրբ պատարագ, մատուցեցին Տիրոջը: Նրանք սուրբ կրոնի համար նահատակվեցին և իրենց աղոթասեր հայցմամբ Աստծուց թողություն են խնդրում իրենց սպանողների համար:

Մարտիրոսների հիշատակը տոնախմբելու համար նիկիական ժողովում առանձնացվեց շաբաթ օրը, և որոշվեց այդ օրը պատարագ մատուցել: Ինչպես շաբաթ օրն Աստված հանգստացավ իր բոլոր գործերից, այդպես էլ այս օրը մարտիրոսներին հանգստացնում է իրենց բոլոր չարչարանքներից: Քանի որ ուրբաթ օրը նրանք չարչարանակից եղան Քրիստոսին, այդ պատճառով էլ շաբաթ օրը հանգստանում են Քրիստոսի հետ: Եվ ինչպես շաբաթը մոտ է կիրակին, այդպես էլ մարտիրոսները մոտ են Քրիստոսին: Եվ ինչպես շաբաթը հավիտյանս անբաժանելի է կիրակիից, այդպես էլ մարտիրոսների դասերն անբաժանելի են անձառելի Աստվածությունից:

Ինչպես թագավորի գալուստից առաջ նրա ծառաներն առջեից են գնում, այդպես էլ բոլոր սրբերի դասերը, ովքեր նահատակվեցին, հավաքվում են շաբաթ օրը և ընդառաջ ելնում երկնային Թագավորին, Ով գալու է կիրակի օրը: Ինչպես թագավորի առջեից գնացողները գարդարվում են զանազան հանդերձներով, այնպես էլ սրբերն են իրենց անձերը զարդարում զանազան զարդերով, որը մարտիրոսների չարչարանքներն են

ու նահատակությունները, ինչպես նաև նրանց պահեցողությունները, աղոթքները, հեղությունը, խոնարհությունը, սերը և ողորմածությունը, քանզի յուրաքանչյուր առաքինություն իր ուրույն գարդն ունի, որը միայն Աստծու ամենատես աչքն է տեսնում:

Սրբերի տոները սկսում ենք տոնել գիշերամիջին՝ Գիշերային ժամերգությանը, որովհետև նրանք խիստ կռապաշտության և անդիտության խավարում նահատակվեցին: Նրանց գովաբանում ենք, քանի որ թեպետև մեռան, սակայն նրանց հույսը լի է անմահությամբ:

ՃԳԱՎԱՊՐԱՆԵՐ

Ճգնավորներն աշխարհիկ ամեն վայելքից կամավոր հրաժարված և անապատական կյանք վարող անձերն են: Ճգնավորներ են ասում այն մարտիրոսներին, որոնց ճգնությունը իրենց կամքով ու հոժարությամբ է լինում: Երբ բազմանում են արհավիրքները ճգնավորների վրա, նրանց մարմինը սովից նվազում է ու ծածկվում վերքերով, սիրտը տրտմում է և հոգին զարհուրում, նրանք հանուն Տիրոջ շարունակում են համբերել և այդպիսով սատանայի դեմ պատերազմելով՝ հաղթում: Ճգնավորների մեջ հեղգ, ծույլ, մարմնասեր ու աշխարհասեր մարդիկ չեն լինում: Ճգնավորներն աշխարհի պարծանքն են և մեր բարեխոսները, որոնցով զվարճանում է սուրբ Եկեղեցին: Նրանք լցված են աստվածային շնորհներով, և նրանց արիությունը երկնքում ուրախացնում է հրեշտակներին, իսկ երկրում մարդկանց ցնծություն է պատճառում:

ԽՈԱՏՈՎԱՆՈՒՆԵՐ

Մարտիրոսների մեջ կան նաև այնպիսիք, ովքեր չարչարվել են ու տանջվել, բայց ողջ են մնացել, ինչպես օրինակ, սուրբ Գրիգոր Լուսավորիչը, Աբրահամ Խոստովանողը և ուրիշներ: Այդ պատճառով էլ նրանք կոչվում են կենդանի նահատակներ կամ խոստովանողներ:

ԺԱՎԱՎԱՊՐԱՆԵՐ

Տերը՝ երկնային թագավորը, որպես Իր թագավորության օրինակ, երկրի վրա հաստատեց բարեպաշտ թագավորների աթոռները, ովքեր Տիրոջ խաչի զորությամբ պատերազմելով հեթանոսների դեմ՝ նրանց խորտակեցին և զորացրին սուրբ Եկեղեցին: Բարեպաշտ արքաները, Տիրոջից իրավունք ստանալով, արդարությամբ դատեցին նրա ժողովրդին՝ ըստ իր սուրբ պատվիրանների:

ՏԱՐԵՄՈՒՏԸ

Սուրբ Պատարագից հետո կատարվում է Յայրապետական մաղթանք: Օրվա երեքսրբյանը՝ հավուր պատշաճի:

Տարեմուտը՝ Նոր տարին, այսօր տոնում են և՝ քրիստոնյաները, և՝ այլադաշները: Տարեմուտը զուտ տարին տարով փոխելու տոն չէ, այլ հոգեսոր խորհուրդ ունի: Նախկինում Տարեմուտը տոնվում էր նիսանի 1-ին՝ մարտի 22-ին՝ Աղամի ստեղծվելու օրը՝ ինչպես ամիսների սկիզբ: Այդ օրը մարդիկ միմյանց շնորհավորում էին և ընծաներ մատուցում, քանզի այդ օրը Աղամի ստեղծման օրն է, ումից և մենք սերվեցինք: Այդ պատճառով «նիսան»-ը թարգմանվում է կազմություն և լինելություն: Այդպես Տարեմուտն ավանդաբար տոնվել է մինչև Բաքելոնի աշտարակաշինությունը, որից հետո այն պահպանվեց միայն երերի ընտանիքում, ումից և ավանդվեց հրեաներին:

Մյուս ազգերը սկսեցին Տարեմուտը տոնել տարբեր օրերի: Լեզուների բաժանումից հետո 72 ազգերի նահապետները իրենց ընտանիքներն առաջնորդեցին դեպի իրենց վիճակված երկրները, և այն օրը, երբ տեղ հասան, Տարեմուտ հայտարարեցին իրենց ազգի համար, և տվյալ ամիսը՝ տարվա առաջին ամիս: Եվ ամեն տարի այդ օրը միմյանց շնորհավորում էին ու ասում. «Նոր օր, նոր տարի: Քանզի այսօր մենք մտանք մեր երկիրը, որը ժառանգեցինք»:

Հայերը Տարեմուտը տոնում էին ամռանը՝ օգոստոսի 11-ին, ըստ Հայկան օրացույցի՝ նավասարդի 1-ին: Հստ ավանդության, Հայկ նահապետը Հայոց ձոր գավառում օգոստոսի 11-ին է սպանել բոնակալ Բելին և ազատություն պարգևել իր տոհմին ու հետնորդներին: Այդ ժամանակից էլ Հայերը նոր տարին սկսել են տոնել օգոստոսի 11-ին: Ենթադրվում է, որ դա տեղի է ունեցել նախքան Քրիստոս 2492 թվականին: Եգիպտացիները, եթովպացիները, կապադովկիացիները, վրացիները և աղվանները տոնում էին Հայերից չորս օր հետո: Հույների ու ասորիների Տարեմուտն աշնանն էր՝ սեպտեմբերին, հոռոմեացիներինը՝ ձմռանը՝ հունվարին:

Երրայեցիների Տարեմուտը նիսանի 1-ին է, քանզի նրանք նիսան ամսին ազատվեցին Եգիպտոսի ստրկությունից և առաջնորդվեցին դեպի իրենց վիճակված երկիրը, ինչը Տիրոջ նախախնամությամբ համընկավ Աղամի արարման օրվա հետ: Տերն այդ օրը կարգեց հրեաների Տարեմուտը՝ ըստ այս խոսքի. «Այս ամիսը թող ձեզ համար ամիսների սկիզբը լինի. այն թող տարվա առաջին ամիսը լինի» (Ելք ԺԲ 2): Հնում հրեաները տոնում էին նաև բոլոր ամիսների ամսամուտները՝ ամսվա առաջին օրերը,

և այդ օրերի համար Մովսեսը հատուկ զոհեր էր սահմանել. «Ամսվա առաջին օրերին Տիրոջը ողջակեզ կմատուցեք... ողջակեզները պիտի մատուցեք յուրաքանչյուր ամսվա առաջին օրը, տարվա բոլոր ամիսներին» (Թվեր Ի՛ 11, 14): Աստված Մովսեսի միջոցով հրամայեց բոլոր ամսամուտներին և Տարեմուտներին փող հնչեցնել և բոլորին Աստծու տաճարում ժողովել, որպեսզի ցնծությամբ տոնեն ու երկրպագություն մատուցեն Աստծուն, Ով Արարիչն է ժամերի ու ժամանակների և իր կամքով շարժում է տարին և ամբողջացնում:

Այժմ բոլոր քրիստոնյա ազգերը Տարեմուտը տոնում են հունվարի 1-ին: Հունվար նշանակում է ծնունդ: Մինչև Քրիստոսի աշխարհ գալն ամբողջ մարդկությունը գերի էր դժոխքում՝ սատանայի ձեռքում՝ կաշկանդված հավիտենական մահվամբ, քանի որ բոլորն էլ մահանալոց հետո դժոխք էին գնում: Քրիստոս այդ ամսին ծնվելով՝ ավերեց դժոխքը, մեզ ազատեց հավիտենական մահից, և առաջնորդում է երկնքի արքայություն, այդ պատճառով էլ այդ ամսին մեզ համար դարձավ ամիսների սկիզբ: Ինչպես հին իսրայելը Մովսեսի միջոցով ազատվեց մարմնավոր և ժամանակավոր գերությունից ու հրաման ստացավ անբան գառների արյունը ցողել տան դռան սեմերին և Տարեմուտ տոնել, այդպես էլ նոր իսրայելը՝ եկեղեցին, Աստծու Միածին Որդու միջոցով ազատվեց հոգեոր և հավիտենական մահից ու հրաման ստացավ Աստծու անարատ Գառան Արյամբ ցողել հոգու և մարմնի սեմերը և ուրախությամբ բոլորին հայտնել, որ գերի էինք, և Աստված մեզ ազատեց:

Դա մեր Փրկչի ծննդյան թվականի առաջին առաջին օրն է, և այդ օրը եկեղեցիներում սուրբ Պատարագ է մատուցվում: Այդ օրը հավաքվում ենք միասին, տոնում Տարեմուտը և միմյանց ընծաներ մատուցում՝ ասելով՝ «Ծնորհավո՞ր նոր տարի»: Եվ գոհություն ու երկրպագություն ենք մատուցում Տիրոջը, որ անցնող տարին խաղաղությամբ անցկացրինք, և խնդրում, որպեսզի եկող տարում ևս մեզ խաղաղությամբ պահի:

Այս տոնը կոչվում է նաև Կաղանդ և Ամանոր: Կաղանդ նշանակում է ամսագլուխ, այսինքն՝ ամսվա առաջին օրը: Այսօր Կաղանդ է կոչվում տարվա առաջին օրը: Հայերս տարվա առաջին օրն անվանում ենք նաև Ամանոր, որը բուն հայկական բառ է, որտեղ «ամ» նշանակում է տարի, այսինքն՝ նոր տարի: Նավասարդը, որը զենդերեն բառ է, նույն իմաստն ունի. «նավ» նշանակում է նոր, իսկ «սարդ»՝ տարի:

Տասնութերորդ դարում, Սիմեոն Երևանցի կաթողիկոսի տոմարով, հունվարի 1-ն ընդունվեց որպես նոր տարվա սկիզբ հայերիս համար:

Ժողովրդի մեջ սովորություն կա ամանորյա տոների կապակցությամբ տոնածառ գարդարել, որը Դրախտի կենաց ծառի խորհուրդն ունի: Մեզ

մոտ ընդունված է եղենի գարդարել, որի մշտադալարությունը խորհրդանշում է Աստծու անսպառ բարիքները և անհատնում շնորհները:

Իսկ կեսզիշերին նվերներով մեզ հյուր եկող Զմեռ պապը, ըստ ավանդության, սուրբ Նիկողայոս Հայրապետն է՝ Զմյուռնա քաղաքի մետրոպոլիտը: Նա 325 թ. մասնակցել է Նիկիայի տիեզերական ժողովին և եղել 318 Հայրապետների թվում: Սուրբ Նիկողայոսը, ում եվրոպացիներն անվանում են «Սանտա Կլաուս», մեծ սքանչելագործ է եղել: Նա իր աղոթքներով օգնության է հասել բազում նեղյալների: Նրա աղոթքներով վերստին բխել են ցամաքած աղբյուրները, բազմացել է հացը, հալածվել են դեերը, սրբվել՝ ախտակիրները: Սուրբ Նիկողայոսի մահից հետո էլ մարդիկ շարունակել են դիմել նրա բարեխոսությանը և ստացել իրենց խնդրվածքները: Այդ պատճառով էլ ժողովրդի մեջ տարածվել է այդ ամենահաս սրբի համբավը և հասել մինչև մեր օրերը: Սուրբ Նիկողայոսի տոնը Հայ Եկեղեցին տոնում է Սուրբ Խաչի տոնի տասներորդ կիրակիին Հաջորդող շաբաթ օրը:

ՀԱՎԵԼՎԱԾ

Ստորև բերում ենք Սուրբ Գրոց, միջնադարյան հայկական և ժամանակակից ժամային համակարգերի համեմատական տախտակը:

Սուրբ Գրքում տրված ժամային համակարգ	Հայկական միջնադարյան ժամային համակարգ	Ժամանակակից ժամային համակարգ
Առաջին ժամ (ցերեկային)	Այգ	Ժամը 7-ը
Երկրորդ ժամ	Ցայգ	Ժամը 8-ը
Երրորդ ժամ	Չորացյալ	Ժամը 9-ը
Չորրորդ ժամ	ճառագայթյալ	Ժամը 10-ը
Դիմգերորդ ժամ	Շառավիղյալ	Ժամը 11-ը
Վեցերորդ ժամ	Երկրատես	Ժամը 12-ը
Յոթերորդ ժամ	Շանթակալ	Ժամը 13-ը
Ութերորդ ժամ	Դրակաք	Ժամը 14-ը
Իններորդ ժամ	Դութքափյալ	Ժամը 15-ը
Տասներորդ ժամ	Թաղանթյալ	Ժամը 16-ը
Տասնմեկերորդ ժամ	Արավարան	Ժամը 17-ը
Տասներկուերորդ ժամ	Արփողն	Ժամը 18-ը
Առաջին ժամ (գիշերային)	Խավարական	Ժամը 19-ը
Երկրորդ ժամ	Աղօամուղջ	Ժամը 20-ը
Երրորդ ժամ	Մթացյալ	Ժամը 21-ը
Չորրորդ ժամ	Շաղավոտ	Ժամը 22-ը
Դիմգերորդ ժամ	Կամավոտ	Ժամը 23-ը
Վեցերորդ ժամ	Բավական	Ժամը 24-ը
Յոթերորդ ժամ	Դավթափյալ	Ժամը 1-ը
Ութերորդ ժամ	Գիզակ	Ժամը 2-ը

Իններորդ ժամ	Լուսաճեմ	ժամը 3-ը
Տասներորդ ժամ	Առավոտ	ժամը 4-ը
Տասնմեկերորդ ժամ	Լուսափայլ	ժամը 5-ը
Տասներկուերորդ ժամ	Փայլածու	ժամը 6-ը

**ՀՐԵՎԱԿԱՆ ԵՒ ՄԻԶԱՆԱԴՈՒՅԱՆ ՀՎԱԿԱՎԱՆ ՂԱՄԱԽԱՌԱԿԱՆԵՐԻ
ՀԱՄԿԱՎԱՏՎԱԿԱՆ ՏԱԽՏԱԿԱՆ**

1	Նիսան	30օր	(Նեեմ. Բ 1)	մարտ 22-ապրիլ 20	Արեգ
2	Իւղ	30օր		ապրիլ 21-մայիս 20	Ահեկան
3	Սիվան	30օր	(Բարուր Ա 8)	մայիս 21-հունիս 19	Մարերի
4	Թամուլ	30օր		հունիս 20-հուլիս 19	Մարգաց
5	Ավ	30օր		հուլիս 20-օգոստոս 18	Յրոտից
6	Իյոն	30օր	(Նեեմ. Զ 15)	օգոստոս 19-սեպտեմբեր 17	Նավասարդ
7	Թշրին	30օր	(Ա Եզր Ե 47)	սեպտեմբեր 18-հոկտեմբեր 17	Յուղի
8	Մահշովան	30օր		հոկտեմբեր 18-նոյեմբեր 16	Մահմի
9	Քասու	30օր	(Նեեմ. Ա 1)	նոյեմբեր 17-դեկտեմբեր 16	Տրե
10	Տեբեք	30օր		դեկտեմբեր 17-հունվար 15	Քաղոց
11	Շքաք	30օր	(Ա Սակ. Ժ 14)	հունվար 16-փետրվար 14	Արաց
12	Արար	30օր	(Ա Եզր Է 5)	փետրվար 15-մարտ 16	Մեհեկան

Հոդաբեկան են երրայլական օրաՅոյի համար ՀԱՅԵԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿԱՆ

Առաջին սյունակն ամսվա օրերն են, իսկ առաջին տողը՝ տարվա ամիսները՝ ըստ Հռոմեական օրացույցի: Վերջին տողը երրայլական ամիսներն են:

	3	4	5	6	7	8	9	10	11	12	1	2	3
1		11	11	12	12	13	14	14	15	15	16	17	15
2		12	12	13	13	14	15	15	16	16	17	18	16
3		13	13	14	14	15	16	16	17	17	18	19	17
4		14	14	15	15	16	17	17	18	18	19	20	18
5		15	15	16	16	17	18	18	19	19	20	21	19
6		16	16	17	17	18	19	19	20	20	21	22	20
7		17	17	18	18	19	20	20	21	21	22	23	21
8		18	18	19	19	20	21	21	22	22	23	24	22
9		19	19	20	20	21	22	22	23	23	24	25	23
10		20	20	21	21	22	23	23	24	24	25	26	24
11		21	21	22	22	23	24	24	25	25	26	27	25
12		22	22	23	23	24	25	25	26	26	27	28	26
13		23	23	24	24	25	26	26	27	27	28	29	27
14		24	24	25	25	26	27	27	28	28	29	30	28
15		25	25	26	26	27	28	28	29	29	30	1	29
16		26	26	27	27	28	29	29	30	30	1	2	30
17	-	27	27	28	28	29	30	30	1	1	2	3	-
18	-	28	28	29	29	30	1	1	2	2	3	4	-
19	-	29	29	30	30	1	2	2	3	3	4	5	-
20	-	30	30	1	1	2	3	3	4	4	5	6	-
21	-	1	1	2	2	3	4	4	5	5	6	7	-
22	1	2	2	3	3	4	5	5	6	6	7	8	
23	2	3	3	4	4	5	6	6	7	7	8	9	
24	3	4	4	5	5	6	7	7	8	8	9	10	
25	4	5	5	6	6	7	8	8	9	9	10	11	
26	5	6	6	7	7	8	9	9	10	10	11	12	
27	6	7	7	8	8	9	10	10	11	11	12	13	
28	7	8	8	9	9	10	11	11	12	12	13	14	
29	8	9	9	10	10	11	12	12	13	13	14	-	
30	9	10	10	11	11	12	13	13	14	14	15	-	
31	10	-	11	-	12	13	-	14	-	15	16	-	
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	

ԱՆՁԱՎԱԴԱՆԱՐԻ ԺԱՆԿ

- Արգար, 240, 281
 Արեղադ, 465
 Արել, 42, 50, 102, 107, 134, 166,
 176, 204, 303, 350, 524
 Արեսաղոն, 265
 Արիարթար, 33
 Արքահամ, 37, 39, 42, 46, 50, 51,
 52, 53, 72, 73, 74, 86, 102, 107,
 114, 119, 130, 170, 176, 182,
 223, 226, 230, 231, 232, 247,
 248, 249, 252, 253, 272, 275,
 282, 291, 298, 324, 337, 342,
 354, 372, 381, 385, 416, 445,
 454, 471, 513, 524, 526, 536,
 539, 546, 552
 Արուսար, 176
 Ազաթանգելոս, 89, 286, 491
 Ազդիպաս, 33
 Աղամ, 9, 24, 27, 39, 40, 46, 50, 53,
 56, 58, 59, 60, 61, 65, 67, 70,
 71, 75, 76, 80, 81, 87, 91, 98,
 100, 102, 105, 107, 109, 110,
 113, 118, 127, 128, 129, 130,
 132, 134, 137, 140, 150, 152,
 154, 166, 170, 176, 178, 181,
 182, 185, 186, 187, 188, 189,
 191, 201, 202, 204, 205, 231,
 233, 242, 243, 249, 254, 255,
 256, 258, 259, 261, 264, 266,
 267, 270, 271, 272, 275, 279,
 282, 285, 286, 288, 289, 290,
 296, 297, 298, 301, 302, 303,
 304, 305, 307, 309, 310, 311,
 333, 337, 339, 346, 347, 348,
 350, 355, 356, 361, 368, 369,
 370, 371, 372, 380, 412, 413,
 414, 415, 416, 428, 438, 440,
 442, 459, 461, 464, 473, 475,
 476, 483, 486, 501, 520, 554
 Աղոնիս, 370
 Արանաս, 14
 Ալեքսանդր, 14, 282
 Ահարոն, 26, 63, 130, 347, 348, 364,
 435, 446, 447, 448, 462, 466,
 517, 522, 539, 540
 Ամաղեկ, 521
 Ամբակում, 171, 291
 Ամինադար, 463, 464, 465, 539
 Անոս, 134, 183, 273, 285, 303
 Անանիա, 93, 409, 414, 428
 Աննա, 15, 87, 88, 316, 459, 460,
 482, 484, 500, 515, 539, 540,
 541
 Անգե, 189
 Անդրեաս, 551
 Անտիօքոս, 214, 215, 216, 245, 431,
 527
 Անտոն, 13, 339
 Ասեր, 87, 517
 Ասլիկոս, 293, 294, 295
 Արամ, 539
 Արտեմոն, 54
 Արուսյակ, 37
 Արքելայոս, 241, 470
 Արաար, 484
 Արիտովիել, 276
 Բալար, 293, 295
 Բաղաամ, 43, 234
 Բարաբբա, 279
 Բարաքիա, 350
 Բարեհեսու, 216
 Բարթողոմեոս, 510
 Բարսեղ, 36, 63, 91, 99, 102, 548
 Բարտիմեոս, 179
 Բեեղզերուղ, 413
 Բենեղիկոս, 99
 Բենիամին, 68, 69, 517
 Բեսելիել, 450
 Բոնս, 30, 540
 Գաբրիել, 54, 56, 69, 232, 339, 340,
 341, 342, 345, 385, 393, 440,

- 496, 500, 501, 503, 506, 507,
545
- Գաղ, 516
Գաղան, 178
Գայանե, 491, 529
Գասպար, 46
Գետզի, 258, 459
Գեթսոն, 517
Գոգ, 43
Գողողիա, 466
Գողիաք, 524
Գրիգոր, 10, 14, 36, 79, 89, 100,
103, 115, 286, 326, 396, 416,
419, 432, 433, 434, 490, 494,
530, 548, 550, 552
Գյուլ, 14
Գնում, 528
- Դագոն, 459, 460, 461, 495
Դադան, 537
Դալիլա, 421
Դամարիս, 295
Դան, 465, 517
Դանիել, 34, 65, 93, 204, 214, 222,
239, 300, 335, 336, 527
Դավիթ, 31, 32, 33, 34, 38, 40, 41,
42, 50, 53, 54, 65, 91, 100, 108,
114, 117, 120, 121, 158, 175,
182, 191, 193, 195, 196, 199,
239, 249, 263, 265, 276, 284,
298, 301, 306, 307, 314, 331,
332, 335, 343, 347, 376, 386,
387, 399, 407, 409, 418, 421,
426, 432, 435, 464, 465, 481,
485, 506, 515, 519, 522, 524,
540, 546
Դեմետրա, 370
Դեմաս, 292
Դիմոկրատես, 293
Դիոկղետիանոս, 529
Դիոնեսիոս, 292, 293, 294, 295,
507, 508
- Եբեր, 554
Եզեկիա, 268, 297
- Եզեկիել, 33, 77, 164, 408, 425, 426,
427, 523, 537
Եզր, 13, 108
Եզրոն, 539
Եղիա, 17, 31, 32, 61, 63, 77, 93,
107, 112, 116, 126, 128, 147,
162, 221, 287, 331, 371, 374,
378, 379, 381, 382, 383, 384,
385, 425, 426, 455, 469, 470,
471, 472, 477, 478, 479, 480,
481, 482, 483, 484, 485, 486,
487, 488
Եղիազար, 82, 364, 454, 463, 539
Եղիսաբեր, 44, 55, 56, 88, 345, 347,
350, 540
Եղիսէ, 162, 221, 250, 258, 297,
331, 378, 379, 382, 383, 385,
409, 425, 426, 427, 455, 459,
477, 481
Ենուս, 134
Ենոք, 32, 53, 71, 102, 107, 134,
176, 202, 371, 378, 384, 524
Եպիփան, 99, 307
Եսայի, 20, 26, 39, 42, 45, 50, 52,
65, 82, 87, 95, 117, 120, 121,
132, 134, 138, 148, 164, 177,
180, 183, 188, 192, 193, 200,
211, 254, 255, 256, 273, 279,
281, 284, 297, 299, 301, 306,
307, 314, 329, 331, 339, 342,
348, 356, 363, 377, 381, 386,
389, 390, 420, 424, 432, 438,
439, 442, 443, 475, 485, 486,
497, 515, 519, 522, 532, 534,
538, 551
Եսավ, 92, 257, 258, 546
Եսթեր, 537
Եվա, 27, 39, 40, 50, 69, 88, 91, 98,
99, 118, 123, 130, 176, 185,
201, 205, 232, 264, 266 271,
282, 290, 337, 339, 341, 345,
346, 347, 348, 372, 416, 420,
442
Երեմիա, 48, 199, 281, 297, 350,
425, 426, 466, 470, 471, 472,
477, 515, 536

- Եփրեմ, 194, 516
 Եփրոն, 39
- Զաբուլոն, 516
 Զակրես, 235
 Զարա, 539
 Զաքարիա, 26, 44, 54, 55, 56, 65,
 75, 86, 167, 192, 193, 239, 243,
 292, 340, 345, 347, 349, 363,
 381, 465, 527, 536
 Զեբեղես, 162, 257, 266, 327
 Զեբեղիա, 317, 479, 497, 537
 Զորոբարել, 26, 108, 431, 524
- Էմմանուել, 39, 342, 348, 424, 497
 Թադես, 427, 529
 Թամար, 539, 540
 Թամուզ, 164, 523, 558
 Թեղողս, 105
 Թեւդաս, 213, 243
 Թողիկ, 530
 Թովմաս, 160, 332, 359, 360, 365,
 375, 427, 510
 Թորգոն, 542
- Իգնատիոս, 551
 Իսահակ, 39, 51, 57, 102, 107, 182,
 232, 247, 248, 281, 298, 381,
 445, 511, 536, 539, 541, 546
 Իսաքար, 516
 Իսնայել, 466, 546
- Լիա, 39
 Լուսավորիչ, 14, 103, 396, 432,
 433, 495, 552
- Խական, 528
 Խոռեմ, 527
 Խոսրով, 527, 528
- Կահար, 517
 Կարապետ, 75, 115, 433
 Կայեն, 166, 176, 208, 209, 252,
 257, 267, 524
 Կայիափա, 234, 269, 273, 274, 316,
 459, 460, 474, 482, 484, 500
- Կասմա, 176
 Կլավդիոս, 529, 532, 533
 Կղեմես, 54, 550
 Կղեղվաս, 285, 538, 317, 457
 Կյուրեղ, 14, 53, 104, 118, 127, 365,
 469, 535
 Կոստանդիանոս, 18, 103, 361, 365,
 432, 522, 533, 534
 Կոստանդին, 365
 Կորիս, 309, 537
- Հարեթ, 209
 Հազար, 218
 Հակոբ, 8, 13, 16, 17, 19, 31, 32, 33,
 37, 38, 39, 42, 43, 48, 49, 53,
 54, 68, 86, 100, 102, 105, 109,
 118, 121, 127, 182, 193, 213,
 237, 298, 299, 317, 318, 320,
 321, 337, 339, 340, 343, 360,
 375, 381, 386, 389, 445, 464,
 467, 469, 471, 473, 474, 488,
 497, 500, 506, 520, 522, 524,
 529, 532, 533, 537, 539, 546
 Հակոբոս, 13, 31, 32, 33, 53, 317,
 468, 473
 Հայրոս, 152, 158, 168, 266
 Հարեղ, 208
 Հերուս, 193
 Հեզարել, 379, 426
 Հեղի, 126, 456, 458, 459, 460, 461,
 462, 536
 Հեղինե, 361, 432, 517, 522, 533
 Հեսե, 32, 180, 188, 192, 339, 420,
 452, 512, 522, 540
 Հեսու, 13, 77, 108, 110, 114, 178,
 179, 256, 309, 324, 342, 364,
 372, 539, 540, 454, 455, 456,
 458, 459, 461
 Հերակլ, 527, 528
 Հերովդես, 33, 38, 39, 44, 45, 47,
 48, 49, 50, 68, 184, 241, 277,
 288, 317, 336, 349, 370, 459,
 470
 Հեփեստոս, 370
 Հեքոնե, 463

- Դիսուս, 6, 7, 13, 14, 15, 36, 38, 39, 42, 50, 51, 52, 53, 57, 58, 60, 65, 66, 67, 68, 71, 73, 75, 77, 78, 79, 81, 83, 87, 108, 111, 115, 124, 125, 137, 140, 146, 151, 152, 155, 156, 157, 158, 159, 160, 161, 162, 163, 164, 165, 167, 168, 169, 171, 173, 175, 177, 178, 179, 180, 181, 182, 183, 184, 186, 188, 193, 194, 195, 196, 197, 203, 204, 205, 206, 210, 212, 215, 217, 228, 229, 233, 234, 235, 236, 240, 241, 242, 244, 245, 246, 248, 250, 256, 257, 258, 259, 262, 265, 266, 267, 268, 269, 270, 272, 274, 275, 276, 277, 278, 279, 281, 282, 283, 285, 287, 288, 289, 290, 292, 295, 296, 302, 305, 309, 312, 315, 316, 317, 318, 319, 320, 321, 322, 323, 326, 327, 330, 331, 334, 335, 336, 338, 339, 340, 341, 342, 343, 348, 350, 353, 357, 358, 359, 367, 368, 372, 373, 374, 377, 378, 379, 380, 382, 383, 385, 386, 389, 393, 394, 406, 407, 416, 427, 429, 436, 438, 452, 455, 457, 459, 470, 471, 473, 477, 478, 481, 484, 486, 487, 496, 501, 502, 503, 505, 507, 509, 513, 526, 541, 548
- Դոք, 60, 153, 207, 246, 292, 297, 302, 324, 334, 384, 405, 485
- Դովակիմ, 515, 539, 540, 541
- Դովել, 148, 188, 288, 408, 412, 413, 530
- Դովիաննես, 14, 31, 32, 36, 47, 54, 57, 58, 59, 62, 63, 66, 67, 75, 80, 85, 86, 108, 109, 126, 158, 177, 179, 183, 188, 191, 199, 200, 213, 221, 235, 250, 257, 258, 269, 273, 275, 277, 296, 316, 317, 319, 320, 321, 322, 326, 328, 343, 348, 349, 350, 353, 355, 371, 407, 414, 416, 423, 425, 427, 428, 433, 455, 465, 470, 471, 473, 474, 477, 480, 481, 488, 497, 499, 500, 502, 503, 505, 508, 526, 537, 540, 546, 548, 550, 551
- Դովիաննա, 317
- Դովնան, 42, 43, 103, 261, 282, 303, 331, 384, 470
- Դովսե, 537
- Դովսեփ, 13, 32, 38, 40, 41, 47, 48, 50, 53, 75, 77, 78, 86, 102, 156, 238, 250, 295, 296, 297, 298, 299, 317, 318, 334, 339, 340, 344, 347, 348, 360, 370, 462, 478, 497, 537, 538, 539, 540
- Դոեթես, 295, 507, 508
- Դռութ, 30, 540
- Դռում, 32, 38, 68, 281, 308, 361, 365, 529, 533, 550, 559
- Դռիկսիմնե, 491, 529
- Դուղա, 30, 33, 38, 44, 69, 70, 140, 163, 193, 210, 213, 216, 232, 233, 234, 237, 238, 239, 240, 241, 242, 243, 244, 251, 252, 254, 257, 258, 265, 267, 268, 272, 275, 276, 307, 317, 336, 342, 379, 411, 414, 416, 431, 462, 473, 516, 534, 535, 537, 539, 540, 545
- Դուղաս, 213
- Ղազարոս, 70, 71, 82, 105, 107, 113, 118, 125, 151, 152, 153, 154, 155, 156, 157, 158, 159, 161, 165, 166, 167, 168, 169, 170, 171, 172, 173, 177, 179, 182, 188, 189, 191, 201, 223, 225, 235, 237, 317, 379
- Ղկի, 102, 482, 500, 539, 540, 547
- Ղովտ, 232, 325
- Ղուկաս, 55, 65, 104, 107, 121, 184, 212, 235, 317, 318, 319, 320, 321, 327, 332, 353, 356, 454, 472, 473, 484, 487

- Մագրադենացի, 238, 285, 299, 308, 317, 318, 319, 320, 321, 322
- Մաթան, 540
- Մակաբայեցի, 30, 216
- Մակարիոս, 535
- Մաղարիա, 65, 88, 435
- Մաղքոս, 268, 269, 457
- Մատաթիա, 360, 408, 416, 417
- Մարթա, 151, 153, 154, 155, 156, 160, 161, 162, 163, 164, 165, 168, 169, 171, 537
- Մարիամ, 15, 29, 38, 39, 40, 41, 46, 65, 69, 70, 77, 78, 79, 86, 87, 153, 154, 156, 160, 161, 163, 164, 165, 169, 171, 199, 201, 218, 232, 235, 236, 237, 285, 298, 299, 300, 308, 317, 318, 319, 320, 321, 322, 323, 324, 332, 334, 337, 338, 339, 340, 341, 342, 343, 344, 345, 346, 347, 348, 349, 350, 400, 472, 500, 501, 502, 509, 510, 512, 515, 528, 536, 537, 538, 539, 540
- Մարկոս, 212, 235, 237, 238, 251, 317, 318, 319, 320, 376, 472, 473, 484
- Մելքոն, 46, 47
- Մելքոնեղեկ, 82, 119, 130, 263, 298, 513, 524, 539
- Մեղքող, 465
- Մեռա, 521
- Մերար, 517
- Մժեժ, 528
- Նաասոն, 539
- Նաբավ, 481
- Նաբուրոնոսոր, 68, 109, 459, 460
- Նազարեթ, 40, 50, 57, 89, 339, 341, 497, 537
- Նավե, 178
- Նեեման, 61
- Նեեմիա, 258
- Նեստոր, 476
- Ներոն, 32, 533
- Ներսես, 14, 100, 273, 399, 496, 530, 531
- Նեփրադիմ, 517
- Նիկողեմոս, 238, 296, 507
- Նյուևացի, 419
- Նոյ, 25, 42, 52, 53, 92, 102, 107, 114, 117, 119, 123, 126, 130, 134, 157, 170, 176, 202, 208, 209, 219, 249, 252, 258, 261, 282, 338, 354, 362, 442, 443, 444, 445, 467, 490, 513, 524, 536
- Շապուհ, 105
- Շիղա, 413
- Շմավոն, 102, 481, 516
- Շողակաթ, 16, 431, 490
- Շուշան, 239
- Ոռնա, 523
- Ուկեբերան, 12, 224, 238, 399
- Պետրոս, 13, 30, 31, 32, 34, 35, 126, 172, 183, 210, 250, 254, 255, 257, 258, 265, 266, 268, 269, 273, 275, 292, 307, 316, 318, 319, 320, 321, 322, 324, 326, 327, 329, 330, 332, 348, 361, 362, 363, 364, 408, 409, 411, 412, 413, 414, 415, 419, 427, 428, 435, 444, 457, 467, 470, 471, 473, 474, 475, 479, 481, 482, 483, 484, 485, 486, 488, 499, 505, 509, 510, 532, 551
- Պիհատոս, 75, 242, 243, 273, 275, 276, 277, 278, 279, 280, 283, 284, 288, 289, 295, 296, 302, 336, 534
- Պող, 339
- Պողոս, 9, 13, 22, 31, 32, 34, 35, 36, 51, 54, 74, 96, 115, 125, 126, 128, 131, 170, 207, 210, 221, 226, 231, 232, 294, 295, 350, 362, 375, 377, 393, 395, 400,

- 403, 406, 413, 414, 416, 417, 419, 422, 435, 436, 438, 447, 487, 499, 503, 504, 507, 509, 521, 526, 529, 544, 547, 551
 Պոսեյդոն, 370
 Պտղոմեոս, 82
 Ոահար, 539, 540
 Ոարել, 48, 68, 340
 Ոեթեկա, 39
 Ոութեն, 516, 539
 Ոուփիա, 282
 Ոուփիմ, 540
 Սադայել, 334
 Սահակ, 14, 524
 Սահառ, 39
 Սալմոն, 408, 539
 Սալոմե, 317, 318, 537, 540
 Սամվել, 57, 113, 231, 247, 250, 274, 364, 425, 460, 461
 Սամփսոն, 181, 333, 334, 335, 421
 Սառա, 39, 231, 232, 541
 Սավուլ, 114, 250, 257, 274, 465
 Սարգիս, 105
 Սափիռա, 409
 Սեգոր, 232
 Սեղեկիա, 234
 Սեթ, 50, 71, 102, 170, 176, 208, 209
 Սեղբեստրոս, 103
 Սեմ, 40, 209
 Սենեքերիմ, 268
 Սերուք, 231
 Սեփորա, 340
 Սիմեոն, 14, 16, 57, 82, 83, 84, 85, 86, 87, 88, 373, 498, 555
 Սիմոն, 212, 216, 235, 236, 241, 252, 281, 317, 319, 429, 537
 Սիոն, 26, 86, 87, 140, 183, 192, 193, 194, 195, 211, 247, 288, 356, 361, 390, 394, 402, 403, 418, 432, 433, 436, 438, 447, 449, 458, 464, 474, 534, 550
 Սոկրատ, 292
 Սողոս, 414, 547
 Սողոմոն, 26, 30, 39, 112, 114, 182, 189, 191, 193, 253, 349, 350, 355, 361, 368, 390, 416, 420, 425, 431, 447, 466, 471, 515, 522, 523, 525, 536, 545, 551
 Սոմնաս, 297
 Սովուեն, 540
 Սովոնիա, 193, 509
 Սուեխանոս, 31, 32, 34, 67, 245, 377, 378, 428, 477, 487, 535, 551
 Վարդ, 13, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 27, 62, 89, 94, 98, 100, 102, 104, 108, 109, 122, 124, 163, 164, 177, 183, 205, 222, 233, 235, 236, 242, 244, 250, 252, 253, 254, 255, 256, 257, 261, 265, 267, 268, 286, 306, 309, 326, 333, 353, 371, 376, 416, 417, 420, 421, 429, 431, 450, 468, 469, 483, 525, 530, 531, 542, 543, 548
 Վեսպասիանոս, 215, 526, 527
 Վիրապ, 14, 433, 490, 491, 530
 Տարիքա, 409
 Տիբերիոս, 213, 281, 308
 Տիմ, 179
 Տիմոթեոս, 278, 363, 435
 Տիտոս, 212, 214, 215, 216, 526
 Տորիք, 387
 Տրդատ, 361, 432, 495
 Փարես, 539
 Փաղեղ, 216
 Փանուել, 87
 Փենեհեզ, 539
 Փենեհես, 458, 459, 460, 461
 Փիլիպպոս, 413, 427
 Փիլոդեոս, 33
 Քազա, 317
 Քաղեք, 454, 459
 Քամ, 178, 209
 Քանան, 243

Քետուրա, 46
 Քոբար, 523
 Քոբարքորե, 213, 214
 Քվակ, 178
 Օբե, 540
 Օբեղ, 540

Օգոստինոս, 39, 68
 Օզան, 465
 Օզիա, 348
 Օսե, 463
 Օսես, 342
 Օփնի, 458, 459, 460, 461

Տեղանունների ԺԱՎԱԿ

Ազուռոս, 460, 527
 Աթենք, 292, 293, 294, 295
 Ակկարոն, 463
 Անտիոք, 212
 Արարատ, 444, 529
 Արարատյան դաշտ, 433, 490
 Արիսպագոս, 293, 294
 Բաբելոն, 72, 108, 109, 150, 171,
 208, 247, 291, 297, 422, 444,
 445, 458, 523, 524, 554
 Բեթանիա, 151, 152, 153, 154, 156,
 160, 177, 181, 182, 197, 203,
 235, 250, 252, 379, 380
 Բեթել, 378, 520
 Բեթղեհեմ, 37, 38, 39, 40, 42, 44,
 46, 68, 76, 77, 80, 89, 282, 341,
 349, 522, 539
 Բեթսամյուս, 463, 464
 Բեթսայիղա, 427
 Բեթփագե, 181, 182
 Բերսաբե, 465, 540
 Գագար, 282
 Գազա, 333
 Գալիլիա, 40, 89, 213, 241, 265,
 277, 299, 317, 318, 319, 320,
 326, 332, 339, 406, 470, 529,
 531, 537, 540
 Գերսեմանի, 265, 272, 500, 502,
 503, 508
 Գողգոթա, 40, 150, 282, 325, 361,
 365, 407, 517, 518, 520, 521,
 522, 532, 533, 534
 Եգիպտոս, 13, 22, 47, 48, 50, 80,
 82, 89, 100, 123, 156, 231, 233,

249, 254, 258, 260, 272, 291,
 309, 333, 334, 338, 339, 340,
 341, 342, 365, 401, 418, 454,
 456, 457, 458, 459, 460, 462,
 464, 466, 478, 485, 521, 523,
 525, 529, 554
 Եղեմ, 436, 441, 503
 Եղեսիա, 240, 529
 Եղին, 360, 547
 Եղիքով, 129, 151, 178, 179, 192,
 241, 250, 378, 454, 455, 461,
 539
 Երուսաղեմ, 13, 15, 21, 26, 30, 31,
 34, 38, 42, 44, 45, 47, 48, 49,
 53, 54, 55, 68, 77, 79, 82, 88,
 89, 104, 112, 114, 118, 127,
 129, 147, 150, 151, 160, 173,
 176, 177, 178, 179, 181, 184,
 186, 188, 190, 192, 193, 194,
 195, 197, 202, 212, 213, 214,
 216, 234, 239, 240, 241, 244,
 250, 254, 256, 268, 277, 288,
 289, 290, 303, 325, 326, 331,
 338, 343, 349, 360, 361, 362,
 365, 367, 369, 379, 380, 381,
 382, 383, 385, 397, 398, 399,
 400, 403, 406, 407, 408, 410,
 411, 412, 414, 416, 418, 419,
 431, 432, 433, 447, 456, 464,
 465, 466, 467, 469, 470, 482,
 484, 495, 498, 499, 502, 503,
 508, 510, 517, 518, 519, 521,
 523, 525, 527, 528, 529, 532,
 533, 534, 535, 542, 545, 548
 Եփրաք, 38, 39, 40
 Եփրայիմ, 151

- Ենմավուս, 326, 332
Եջմիածին, 16, 361, 431, 490
- Թարոր, 21, 31, 158, 262, 266, 327, 384, 385, 467, 471, 473, 475, 476, 485, 486, 487, 488
- Իսրայել, 9, 12, 21, 26, 38, 41, 44, 45, 50, 55, 57, 61, 63, 77, 80, 82, 83, 85, 86, 92, 101, 112, 114, 126, 150, 177, 178, 191, 214, 218, 231, 234, 240, 243, 244, 245, 246, 247, 249, 250, 254, 257, 258, 259, 260, 272, 275, 276, 280, 284, 298, 301, 309, 310, 333, 338, 340, 342, 347, 348, 365, 382, 401, 404, 409, 417, 425, 431, 446, 454, 455, 456, 457, 458, 460, 462, 464, 465, 472, 490, 516, 518, 521, 523, 525, 536, 537, 539, 540, 546, 548, 555
- Լիբանան, 519
- Խաչկա վանք, 528
- Կարիաթարիմ, 463
Կարին, 528
Կափառնայում, 427
Կեդրոն, 194, 203
Կեսարիա, 241, 255, 261, 470
Կիշոնի հեղեղատ, 484
Կիպրոս, 172
Կիտվան, 172
Կոստանդնուպոլիս, 15, 528
- Ղայաստան, 14, 396, 433, 434, 495, 529
Ղոզյաց վանք, 529
Ղոսափատ, 268
Ղորդանան, 27, 57, 59, 60, 61, 63, 67, 68, 151, 178, 179, 192, 250, 253, 255, 256, 373, 378, 379, 386, 434, 454, 455, 477, 485, 486, 487, 500, 521, 539
Ղրեաստան, 38, 42, 44, 48, 57, 158, 193, 213, 215, 241, 277, 347, 361, 435, 470, 503, 511, 515
Ղունաստան, 283
- Զիթենյաց լեռ, 70, 181, 182, 183, 203, 212, 233, 247, 265, 326, 365, 379, 380, 381, 382, 384, 498, 500, 501
- Ղամբարների ձոր, 265
- Մակեդոնիա, 414
- Նիկիա, 14, 18, 22, 99, 105, 301, 546, 556
Նինվե, 42, 303
- Պաղեստին, 213
Պարսկաստան, 527, 528
Պոնտոս, 283
- Ռամա, 48, 68
- Սամարիա, 187
Սելով, 456
Սիլովան, 49
Սողոմ, 92, 102, 232, 252, 325
Վարագ, 529, 530, 531
Վաղարշապատ, 432, 434, 490, 530
Տիբերական ծով, 362
- Փառան, 82
Փիլիպպյան Կեսարիա, 241, 255, 261, 470
- Քաղկեդոն, 54
Քորեք, 112, 116, 310, 381, 385, 478

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Օգտագործված ձեռագրեր Մաշտոցի անվան մատենադարանի

- 174 Պետրոս Բերդումեան, «Քարոզգիրք»
- 946 Գրիգոր Աստուածաբան, «ճառք»
- 993 ճառընտիր
- 1388 Մատթեոս Զուլայեցի, «Յաւաքումն ի Ղուկասու գլխոյ»
- 1433 Ժողովածու, «Տեսութիւն վասն թաղման»
- 1851 Ժողովածու
- 1879 «Գիրք պատճառաց»
- 2039 Տօնապատճառ
- 2212 Սիմեոն Երևանցի, «Քարոզգիրք»
- 4133 Ժողովածու
- 4139 Տօնապատճառ
- 4853 ճառընտիր
- 4950 ճառընտիր («Վասն պահեցողութեան»)
- 7324 «Վասն հոգոցն, թէ ուր կան այժմ»
- 7898 «Վասն Աստուածընկալ գերեզմանին, հալուէին և զմռոյն»
- 8456 «Օրինութիւն մոմի և հրոյ, ոստոց, մոմի Տեառնընդառաջի»
- 9646 Աստուածաբանական հանրագիտարան
- 10080 «Բառգիրք Եկեղեցիական սպասուց և տօնից»
- 10185 «Յաղագս խորհրդոյ դռնբացութեան»

Օգտագործված տպագիր գրականություն

- «Աստուածաշունչ», 1860 թ., Վենետիկ
- «Աստուածաշունչ», 1994 թ., Ս. Էջմիածին
- «Ժամակարգութիւն Յայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ», 1915 թ., Երուսաղէմ
- «Զայնաքաղ Շարական», 1888 թ., Վաղարշապատ
- «Ճաշոց», 1872 թ., Վաղարշապատ
- «Յայսմաւութք», 1706 թ., Կոստանդնուպոլիս
- «Գիրք Մեծի Մաշտոց կոչեցեալ», 1807 թ., Կոստանդնուպոլիս
- «Տօնացոյց», 1906 թ., Վաղարշապատ
- Գրիգոր Լուսաւորիչ, «Յաճախապատում», 1737 թ., Կոստանդնուպոլիս
- Կիւրեղ Երուսաղեմացի, «Կոչումն ընծայութեան», 1727 թ.,
Կոստանդնուպոլիս

- Եղիշէ, «Մրբոյ հօրն մերոյ Եղիշէի Վարդապետի մատենագրութիւնք», 1859 թ.,
Վենետիկ
 «Գիրք Եւ ճառք Իոգեշահ», 1722 թ., Կոստանդնուպոլիս
 Յովհաննէս Մանդակունի, «ճառք», 1860 թ., Վենետիկ
 Գրիգոր Արշարունի, «Ընթերցուածոց մեկնութիւն», 1964 թ., Վենետիկ
 Ստեփաննոս Սիրնեցի, «Մեկնութիւն չորից աւետարանչացն», 1994 թ., Երևան
 Զաքարիա կաթողիկոս Զագեցի, «ճառք», 1995 թ., Վենետիկ
 Ստեփաննոս Օրբելեան, «Ճակաճառութիւն ընդդէմ Երկարնակաց», 1756 թ.,
Կոստանդնուպոլիս
 Դաւիթ Քահանայ, «Մատեան գիտութեան և հաւատոյ», 1997 թ., Երևան
 Ներսէս Լամբրոնացի, «Մեկնութիւն սրբոց Երկոտասան մարգարէից», 1825 թ.,
Կոստանդնուպոլիս
 Ներսէս Լամբրոնացի, «Խորհրդածութիւն ի կարգս Եկեղեցւոյ», 1847 թ.,
Վենետիկ
 Իգնատիոս Սեւլեռնեցի, «Մեկնութիւն սրբոյ Աւետարանին որ ըստ Ղուկասու»,
1735 թ. Կոստանդնուպոլիս
 Գրիգոր Տաթեւացի, «Գիրք հարցմանց», 1729 թ., Կոստանդնուպոլիս
 Գրիգոր Տաթեւացի, «Գիրք քարոզութեան, Զմերան հատոր», 1740 թ.,
Կոստանդնուպոլիս
 Գրիգոր Տաթեւացի, «Գիրք քարոզութեան, Ամառան հատոր», 1741 թ.,
Կոստանդնուպոլիս
 Վարդան Այգեկցի, «Գիրք հաստատութեան և Արմատ հաւատոյ», 1998 թ.,
Երևան
 Մխիթար Այրիվանեցի, «Պատմութիւն Յայոց», 1860 թ., Մոսկվա
 Սեբէոս, «Պատմութիւն», 1979 թ., Երևան
 Սոկրատ Սքոլաստիկոս, «Եկեղեցական պատմութիւն»
 Առաքել Սիմեոնի, «Ամենայն չար տանջելի», 1996 թ., Ս. Էջմիածին
 Յակոբ Ղրիմեցի, «Տոմարագիտական աշխատություններ», 1987 թ., Երևան
 Յովհաննէս Արծիշեցի, «Պատարագի մեկնութիւն», 1860 թ., Ս. Էջմիածին
 Սահակ քահ. Սարգսեան, «Քննական կրօնագիտութիւն», 1874 թ., Կոստանդ-
նուպոլիս
 Սարգսի Բարսեղեան Գնունի Վանեցի, «Քրիստոնեական վարդապետութիւն»,
1879 թ., Վաղարշապատ
 Բարկէն Կիլեսերեան, «Քրիստոնեական»
 Փեղեւանեան Խորեն, «Յամառօտ բացատրութիւն տօնից և ծեսից Յայա-
տանեայց Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ ի պէտս ազգային
նախակրթարանաց», 1898 թ., Կոստանդնուպոլիս

Փախալեան Մինաս, «Դամառօտ տեղեկութիւնք Դայաստանեայց Եկեղեցւոյ տօներուն վերայ», 1900 թ., Նոր Նախիջևան
Գիւտ քահ. Աղայեանց, «Կարգ Աստուածպաշտութեան», 1907 թ., Թիֆլիս
Թորգոն պատր. Գուշակեան, «Սուլրք և տօնք», 1957 թ., Երուսաղէմ
Արտակ արք. Մանուկեան, «Դայ Եկեղեցու տօները», 1969 թ., Թեհրան
Շնորհք արք. Գալուստեան, «Տաղաւար տօներ», 1976 թ., Երուսաղէմ
Նորայր արք. Պողարեան, «Ծիսագիտութիւն», 1990 թ., Եյու Յորք
Ա.Գ. Աբրահամյան, «Դայոց գիր և գրչություն», 1973 թ., Երևան
Լևոն Խաչիկյան, «Եղիշեի Արարածոց մեկնությունը», 1992 թ., Երևան
Մեսրոպ քահ. Արամեան, «Երգ Երգոցի մեկնութիւն», 1993 թ., Երևան
«Խորանների մեկնություններ», աշխատ. Վիգեն Ղազարյան, 1995 թ., Երևան
«Արարատ» ամսագիր, Յունիս, 1915 թ., Ա. Էջմիածին
«Դամասկոս» ամսագիր, Օգոստոս, 1928 թ., Կոստանդնուպոլիս
«Էջմիածին» ամսագիր, Ա, 1996 թ., Ա. Էջմիածին
«Գանձասար» հանդես, Ա, Բ, Չ, 1996 թ., Երևան

Գիրքը կազմված է ծաղկաքաղի սկզբունքով: Օգտվել ենք մեր Եկեղեցու հայրերի համապատասխան երկասիրություններից:
Յուրաքանչյուր զլիսի համար նշված են այն աղբյուրները,
որտեղից վերցվել են նյութերը և համադրվել:

Նախարան

Գրիգոր Լուսաւորիչ, «Յաճախապատում»
 Ներսէս Շնորհալի, «Մեկնութիւն խորանաց»
 Ստեփաննոս Օրբելեան, «Նաւակատիք»
 Յակոբ Ղրիմեցի, «Մեկնութիւն տունարի»
 Դաւիթ Քահանայ, «Մատեան գիտութեան եւ հաւատոյ»
 «Գիրք պատճառաց»
 Յովհաննէս Արծիշեցի, «Պատարագի մեկնութիւն»
 «Տօնացոյց»
 Սահակ քահ. Սարգսեան, «Քննական կրօնագիտութիւն»
 Սարգսի Բարսեղեան, «Քրիստոնեական վարդապետութիւն»
 Գիւտ քահ. Աղայեանց, «Կարգ Աստուածպաշտութեան»
 Նորայր արք. Պողարյան, «Ծիսագիտություն»
 «Հայ խօսնակ» ամսագիր, «Ժամակարգութեան անայլայլ դպրութիւն Հայ
 Սուրբ Եկեղեցոյ»
 «Արարատ» ամսագիր, Ստեփաննոս Սիլնեցի «Մեկնութիւն ժամակարգու-
 թեան»

Ծնունդ

Եփրեմ Ասորի, «Ներբողյան Քրիստոսի ծննդյան»
 Եպիփան Կիպրացի, «Աւետարանաց մեկնութիւն»
 Կիւրեղ Երուսաղէմացի, «Կոչումն ընծայութեան»
 Անթիպատրոս Բոստրացի, «Խօսք ի ծնունդն Քրիստոսի»
 Յակոբ Մծրնայ հայրապետ, «Յաղագս աստեղն և մոգուցն և մանկանցն
 Բեթղեհեմի»
 Զաքարիա Զագեցի, «Ճառք»
 Ներսէս Շնորհալի, «Մատթէոսի Աւետարանի Մեկնութիւն»
 Վարդան Արեւելցի, «Տօնապատճառ»
 Անանիա Սանահնեցի, «Մատթէի մեկնութիւնք»
 Յովհաննէս Երզնկացի, «Յաւուր ծննդեան եւ մկրտութեան Տեառն»
 Վարդան Այգեկցի, «Արմատ հաւատոյ»
 Գրիգոր Տաթեւացի, «Քարոզգիրք»
 Գրիգոր Տաթեւացի, «Գիրք հարցմանց»
 Մատթէոս Զուղայեցի, «Մեկնութիւն Ղուկասու»
 «Յայսմաւուրք»

Տեառնընդառաջ

Եփրեմ Ասորի, «Գալուստ Տեառն ի տաճարն քառասնօրեայ և ի ծերունի Սիմէօն»
 Բարսէղ Կեսարացի, «Տօնախօսական մեծի աւուր տեառնընդառաջին»
 Իգնատիոս Սեւլեռնեցի, «Ղուկասու Աւետարանի Մեկնութիւն»
 Վարդան Արեւելցի, «Տօնապատճառ»
 Գրիգոր Տաթեւացի, «Քարոզգիրք»
 Գրիգոր Տաթեւացի, «Գիրք հարցմանց»
 Մատթէոս Զուղայեցի, «Մեկնութիւն Ղուկասու»
 «Յայսմաւուրք»
 «Մաշտո», Օրինութիւն մոմի տեառնընդառաջի

Պահը

Յովիաննէս Մանդակունի, «Վասն պահոց»
 Գրիգոր Արշարունի, «Ընթերցուածոց Մեկնութիւն»
 Խոսրովիկ Թարգմանիչ, «Բան Վարդապետական յաղագս Քառասնորդաց»
 Վանական Վարդապետ, «Պատճառ վասն առաջաւորաց»
 Սամուէլ Կամրջաձորեցի, «Ընթերցուածոց Մեկնութիւն»
 Պողոս Տարօնացի, «Ընթերցուածոց Մեկնութիւն»
 Վարդան Արեւելցի, «Տօնապատճառ»
 Գրիգոր Տաթեւացի, «Քարոզգիրք»
 Գրիգոր Տաթեւացի, «Գիրք հարցմանց»
 Մատթէոս Զուղայեցի, «Վասն պահոց»
 Անանուն, «Վասն պահոց»
 Պետրոս Բերդումեան, «Քարոզգիրք»
 Յովիաննէս Ոսկեբերան ճառ, «Մեք որ կենդանիքս մնացեալ իցեմք...»

Ղազարոսի հարությունը

Մամբրէ Վերծանող, «ճառ ի յարութեան Ղազարու»
 Յակոբ Սրճեցի, «Ի յարութիւն Ղազարու»
 Վարդան Արեւելցի, «Տօնապատճառ»
 Գրիգոր Տաթեւացի, «Քարոզգիրք»
 «Յայսմաւուրք»

Ծաղկազարդ

Քերովբէ Վարդապետ, «Մարկոսի Աւետարանի Մեկնութիւն»
 Զաքարիա Զագեցի, «ճառը»
 Վարդան Արեւելցի, «Տօնապատճառ»

Գրիգոր Տաթեւացի, «Քարոզգիրք»
 Յովհաննես արք. Սեբաստացի, «Յաղագ խորիրդոյ դռնբացութեան»
 «Մաշտոց», Օրինութիւն ոստոց

Ավագ երկուշաբթի

Եղիշէ Վարդապետ, «Արարածոց Մեկնութիւն»
 Զաքարիա Զագեցի, «ճառք»
 Վարդան Արեւելցի, «Տօնապատճառ»
 Գրիգոր Տաթեւացի, «Քարոզգիրք»
 «Յայսմաւուրք»

Ավագ երեքշաբթի

Յակոբ Մօքնայ հայրահետ, «Զգօն գիրք»
 Եղիշէ Վարդապետ, «Արարածոց Մեկնութիւն»
 Զաքարիա Զագեցի, «ճառք»
 Վարդան Արեւելցի, «Տօնապատճառ»
 Գրիգոր Տաթեւացի, «Քարոզգիրք»
 «Յայսմաւուրք»

Ավագ չորեքշաբթի

Եղիշէ Վարդապետ, «Արարածոց Մեկնութիւն»
 Զաքարիա Զագեցի, «ճառք»
 Ներսէս Լամբրոնացի, «ԺԲ մարգարեից մեկնութիւն»
 Վարդան Արեւելցի, «Տօնապատճառ»
 Գրիգոր Տաթեւացի, «Քարոզգիրք»
 «Յայսմաւուրք»

Ավագ հինգշաբթի

Եղիշէ Վարդապետ, «Արարածոց Մեկնութիւն»
 Զաքարիա Զագեցի, «ճառք»
 Վարդան Արեւելցի, «Տօնապատճառ»
 Գրիգոր Տաթեւացի, «Քարոզգիրք»
 «Յայսմաւուրք»

Ավագ ուրբաթ

Եղիշէ Վարդապետ, «Արարածոց Մեկնութիւն»
 Զաքարիա Զագեցի, «ճառք»
 Վարդան Արեւելցի, «Տօնապատճառ»

Գրիգոր Տաթեւացի, «Քարոզգիրք»,, «Յոբայ Լուծմունք»
 «Յայսմաւուրք»
 Անանուն, «Վասն Աստուածընկալ գերեզմանին, հալուէին և զմռոյն»

Ավագ շաբաթ

Յակոբ Մօրնա հայրապետ, «Զգոն գիրք»
 Եղիշէ Վարդապետ, «Արարածոց Մեկնութիւն»
 Զաքարիա Զագեցի, «ճառք»
 Վարդան Արեւելցի, «Տօնապատճառ»
 Գրիգոր Տաթեւացի, «Քարոզգիրք»
 «Յայսմաւուրք»
 «Մաշտոց», Օրինութիւն մոմի և հրոյ

Զատիկ

Զաքարիա Զագեցի, «ճառք»
 Գրիգոր Վարդապետ, «Վասն սրբոյ Զատկի եւ կենսաբեր յարութեան»
 Վարդան Արեւելցի, «Տօնապատճառ»
 Գրիգոր Տաթեւացի, «Քարոզգիրք»
 Գրիգոր Տաթեւացի, «Գիրք հարցմանց»
 Յակոբ Ղրիմեցի, «Մեկնութիւն տունարի»
 «Յայսմաւուրք»

Դիմումք

Գրիգոր Աստուածաբան, «ճառք»
 Յովհաննէս Մանդակունի, «Վասն պահոց»
 Արիստակէս Լաստիվերցի, «Վասն Նոր կիւրակէի»
 Գրիգոր Տաթեւացի, «Քարոզգիրք»
 Գրիգոր Տաթեւացի, «Գիրք հարցմանց»
 Սիմէօն Երեւանցի, «Քարոզք»
 Պետրոս Բերդումեան, «Քարոզ տարեկան»
 Յակոբ Նալեան, «Քարոզք»
 Բարեկէն Կիւլեսերեան, «Քրիստոնեական»
 «Յայսմաւուրք»
 Յակոբ Ղրիմեցի, «Մեկնութիւն տունարի»

Դամբարձում

Զաքարիա Զագեցի, «ճառք»
 Վարդան Արեւելցի, «Տօնապատճառ»

Գրիգոր Տաթեւացի, «Քարոզգիրք»
 Գրիգոր Տաթեւացի, «Գիրք հարցմանց»
 Մատթեոս Զուղայեցի, «Մեկնութիւն Ղուկասու»
 «Յայսմաւուրք»

Դոգեզալուստ

Վարդան Արեւելցի, «Տօնապատճառ»
 Ներսէս Լամբրոնացի, «Ներբող ի գալուստ Ամենասուրբ Դոգւյն Աստուծոյ»
 Գէորգ Սկևորացի, «Գործք Առաքելոցի մեկնութիւն»
 Գրիգոր Տաթեւացի, «Քարոզգիրք», «Գիրք հարցմանց»
 Մատթեոս Զուղայեցի, «Գործք Առաքելոցի մեկնութիւն»

Եկեղեցի

Կիւրէղ Երուսաղէմացի, «Կոչումն ընծայութեան»
 Զաքարիա Զագեցի, «ճառք»
 Վարդան Արեւելցի, «Տօնապատճառ»
 Ներսէս Լամբրոնացի, «Խորհրդածութիւն ի կարգս Եկեղեցւոյ»
 Գրիգոր Տաթեւացի Գիրք քարոզութեան, «Զմերան» և «Ամառան» հատորներ

Տապանակ

Վարդան Արեւելցի, «Տօնապատճառ»
 Եղիշէ, «Մեկնութիւն Յեսուայ»
 Գրիգոր Տաթեւացի, «Քարոզգիրք»
 Գրիգոր Տաթեւացի, «Գիրք հարցմանց»
 Յակոպ Սրճեցի, «Ի խորհուրդ Տապանակին»
 Մովսէս Խորենացի, «Ի մեջի աւուր Տապանակին»

Վարդավառ

Եփրեմ, «Վասն այլակերպութեան Տեառն»
 Մովսէս Խորենացի, «Վասն խորհրդոյ Վարդավառին»
 Եղիշէ, «Վասն պայծառակերպութեան Տեառն»
 Վարդան Արեւելցի, «Տօնապատճառ»
 «Գիրք Պատճառաց»
 Գրիգոր Տաթեւացի, «Քարոզգիրք», «Գիրք հարցմանց»

Շողակար

Անանիա Սանահմեցի, «Ներբող Կաթողիկէ Եկեղեցւոյ»
 Վարդան Արեւելցի, «Տօնապատճառ»

Ազանթագեղոս, «Գիրք վիպասանութեան»

Աստվածամայր

Մովսես Քերոբի, «Վասն վերափոխման Աստուածածնի»
 Զաքարիա Չագեցի, «ճառը»
 Յակոբ Սրճեցի, «Ննջումն Սրբուհետյ Աստուածածնի»
 Անանիա Սամահմեցի, «Մատթէի մեկնութիւնք»
 Իգնատիոս Սեւլեռնեցի, «Ղուկասու Աւետարան Մեկնութիւն»
 Վարդան Արեւելցի, «Տօնապատճառ»
 Գրիգոր Տաթեւացի, «Քարոզգիրք»
 Գրիգոր Տաթեւացի, «Գիրք հարցմանց»
 Մատթէոս Զուղայեցի, «Մեկնութիւն Ղուկասու»
 Գրիգոր Խլաթեցի, «Մեկնութիւն Խորանաց»
 «Յայսմաւուրք»

Սուրբ Խաչ

Զաքարիա Չագեցի, «ճառը»
 Վարդան Արեւելցի, «Տօնապատճառ»
 Գրիգոր Տաթեւացի, «Քարոզգիրք»
 Գրիգոր Տաթեւացի, «Գիրք հարցմանց»
 «Յայսմաւուրք»
 Սոկրատ Աքոլաստիկոս, «Եկեղեցական պատմութիւն»
 Սեբէոս, «Պատմութիւն»

Տոն սրբոց

Գրիգոր Լուսավորիչ, «Դաճախապատում»
 Վարդան Արեւելցի, «Տօնապատճառ»
 Գրիգոր Տաթեւացի, «Քարոզգիրք»
 «Յայսմաւուրք»
 «Շարակնոց»

Տարեմուտ

Վարդան Արեւելցի, «Տօնապատճառ»
 Գրիգոր Տաթեւացի, «Քարոզգիրք»
 Սիմէօն Երեւանցի, «Քարոզք»
 «Յայսմաւուրք»

ԲՈՎԱՇԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	7
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	9
Տոների դասակարգումը	14
Ծարժական և անշարժ տոներ	18
Երեքսրբյան	20
Տաղավար տոներ	21
Նախատոնակ	22
Նավակատիք	24
ճրագալուց	28
Ննջեցյալների հիշատակը	29
ԱՎԱԳ ՏՈՆԵՐ	29
ՄԵՐ ՏԻՐՈՁ՝ ԶԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՍԴՅԱՆ	
ԵՎ ԱՍՏՎԱԾՅԱՅՑՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ	36
Աստվածայայտնություն	36
Ի՞նչ էին ասում մարգարեները Տիրոջ ծննդյան մասին	37
Հիսուսի ծնունդը	39
Հովհանների այցելությունը	40
Մոգերի այցելությունը	42
Փախուստ Եգիպտոս	47
Մանուկների կոտորածը	48
Վերադարձ Եգիպտոսից	50
Տիրոջ անճառելի ծնունդի մասին	50
Մարդեղության ժամանակի մասին	52
Հունվարի 6-ը որպես Քրիստոսի Ծննդյան և Հայտնության տոն	53
ՄԵՐ ՏԻՐՈՁ՝ ԶԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ	57
Զրօրինեք	63
ՏՈՆԱԿԱՆ ՕՐԵՐԻ ԽՈՐՃՈՒՐԴ ԵՎ ՊԱՏճԱՌՆԵՐԸ	65
ճրագալուց	65
Պատճառ առաջին օրվա տոնակատարության	66
Պատճառ երկրորդ օրվա տոնակատարության	67
Պատճառ երրորդ օրվա տոնակատարության	68
Պատճառ չորրորդ օրվա տոնակատարության	69
Պատճառ հինգերորդ օրվա տոնակատարության	69
Պատճառ վեցերորդ օրվա տոնակատարության	70
Պատճառ յոթերորդ օրվա տոնակատարության	71
ԱՆՎԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ	73
Պատճառ ութերորդ օրվա տոնակատարության	73
Տնօրինեք Սուլբ Ծննդյան	76

ՏՅԱՌՆԸՆԴՀԱՌԱՑ

Մեր Քրիստոս Աստծու քառասնօրյա գալուստը տաճար.....	77
Սիմեոն Ծերունու օրհնությունը	82
Քառասնօրյա մանկանց օրհնությունը.....	89

ՊԱՐՔ

Պահքի օրինադրումը	91
Պահքի կերակուրները.....	94
Պահքի բնույթը	94
Պահքի մասերը	95

ՕՐԱՊԱՐՔ..........98**ԾԱԲԱԹԱՊԱՐՔ.....**.....100**ԱՌԱՋԱՎՈՐԱՑ ՊԱՐՔ**.....102**ՄԵԾ ՊԱՐՔ**

Պահքի օրերը.....	107
Քառասնորդաց պահք	112
Ինչո՞ւ Քրիստոս քառասուն օր՝ գիշեր ու ցերեկ, պահեց.....	115
Պահքի առանձնահատկությունները	116
Պահքի ժամանակը.....	119
Պահքի օգուտը	122
Այն փորձությունների մասին, որին հանդիպում է մարդը պահոց օրերին.....	123
Յորդորակ.....	124

ՊԱՐՈՑ ԿԻՐԱԿԻՆԵՐԻ ԽՈՐՃՈՒՐՈՎ

ԲԱՐԵԿԵՆԴԱՍ	127
ԱՐՏԱՔՍՍԱՍ ԿԻՐԱԿԻ	129
ԱՆՍԱԿԻ ԿԻՐԱԿԻ	132
ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻ	139
ՂԱՏՎՈՐԻ ԿԻՐԱԿԻ	144
ԳԱԼՍՏՅԱՆ ԿԻՐԱԿԻ	147

ՉԻՇԱՏԱԿ ՂԱԶԱՐՈՒՄ ՉԱՐՈՒԹՅԱՆ151

ԱՎԵՏԱՐԱՆԻ մեկնությունը.....	153
-----------------------------	-----

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Տիրոջ մուտքը Երուսաղեմ	173
Արարչության առաջին օրը	174
Առաջին դարի պատկերը	176
Տիրոջ՝ Երուսաղեմ ավանակով գալու խորհուրդը.....	176
ԱՎԵՏԱՐԱՆԻ մեկնությունը.....	178

Ղոնքացեք	197
ԱՎԱԳ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ	
Արարչության երկրորդ օրը	201
Երկրորդ դարի խորհուրդը	202
Կանոն Ավագ Երկուշաբթիի	203
ԱՎԱԳ ԵՐԵՔԾԱԲԹԻ	
Արարչության երրորդ օրը	207
Երրորդ դարի պատկերը	208
Օրվա ընթերցվածների մեկնությունը	210
Մեկնություն Մատթեոսի ավետարանի	212
Տասը կույսերի առակը	220
Երեք ծառաների առակը	227
Վերջին դատաստանը	228
ԱՎԱԳ ՉՈՐԵՔԾԱԲԹԻ	
Չորրորդ դարի պատկերը	231
Ավագ Չորեքշաբթի օրվա խորհուրդը	232
Դավադրություն Յիսուսի դեմ	233
Օծում Բեթանիայում	235
Մեկնություն Զաքարիայի մարգարեության	243
ԱՎԱԳ ՅԻՆԳԾԱԲԹԻ	
Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի վերջին ընթրիքի հիշատակը	246
Ընթերցվածի մեկնությունը	247
Վերջին ընթրիքը	249
Ոտնլվա	252
Մատնություն	257
Յաղորդություն	259
Աղոթք Գեթսեմանիի պարտեզում	265
Պետրոսի ուրացումները	269
ԱՎԱԳ ՈՒՐԲԱԹ	
Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի չարչարանքների	
և խաչելության հիշատակը	270
Յիշատակ վեցերորդ օրվա արարչության	270
Վեցերորդ դարի պատկերը	272
Տիրոջ կենարար չարչարանքները	272
Խավարում	273
Յիսուս Կայիափայի առաջ	274
Յուղայի ինքնասպանությունը	275
Յիսուս Պիղատոսի առաջ	276
Յիսուսի խաչելությունը	281
Ամբակումի մարգարեությունը	291
Զաքարիայի մարգարեությունը	292

Դիոնեսիոսի դարձը	292
Յիսուսի թաղումը	295
ԱՎԱԳ ՇԱԲԱԺ	
Գերեզմանի պահպանումը	302
Տիրոջ էջքը դժոխք	306
Չու ներկելու սովորույթը	308
ՄԵՐ ՏԻՐՈՋ՝ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐ	
Զատիկ	309
Յարություն	312
Զինվորների վկայությունը	314
Յուղաբեր կանայք	317
Թափուր գերեզմանը	321
Յիսուս երևում է Մարիամ Մագդաղենացուն	322
Յանդիպում Յարուցյալ Տիրոջ հետ	326
Յիսուս երևում է աշակերտներին	326
Յարց Քրիստոսի Յարության վերաբերյալ	331
Սամփոտն օրինակ Քրիստոսի	333
Դանիելն օրինակ Քրիստոսի	335
Տնօրինեք սուրբ Զատկի	336
ԱՎԵՏՈՒՄ	
Աստվածամայր	337
Յիսուսի ծննդյան ավետումը	339
Մարիամի այցելությունը Եղիսաբեթին	347
Սուրբ Յոգու իշնելը Մարիամի վրա	360
ՅԻՆՈՒՆՔ	352
Կիրակի օրվա պատկերը	353
ՆՈՐ ԿԻՐԱԿԻ ԿԱՄ ԿՐԿՆԱՁԱՏԻԿ	355
Կրկնազատիկ	358
Թովմասի հաստատումը	359
ԱՇԽԱՐԴԱՄԱՏՐԱՆ ԿԱՄ ԿԱՆԱՇ ԿԻՐԱԿԻ	360
ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ	362
ՏՈՆ ԵՐԵՎՄԱՆ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ	364
ՅԱՄԲԱՌՈՒՄ	367
Յարությունից հետո որտե՞ղ էր լինում Քրիստոս մինչև երկինք համբառնալը	370
Ինչո՞ւ Քրիստոս հարությունից հետո անմիջապես երկինք չհամբարձվեց	371
Ինչո՞ւ Քրիստոս քառասուն օր հետո համբարձվեց	372
Ի՞նչ է նշանակում փոխվել, համբառնալ ու թռչել	374
Ինչո՞ւ համբարձվեց Քրիստոս	374

Նստեց Յոր աջ կողմը	376
Տիրոց համբարձման համեմատությունը Եղիայի երկինք վերանալու հետ	378
Յիսուսի համբարձումը	379
Տիրոց երկինք մտնելը	386
Յրեշտակները շատ բան սովորեցին Եկեղեցուց	392
ԵՐԿՐՈՌԴ ԾԱՂԿԱԶՄՈԴ	396
ՅՈԳԵԳԱԼՈՒՏ	399
Տնի պատճառները	401
Պենտեկոստեն	404
Սուրբ Յօգու իրաշափառ էջբն առաքյալների վրա	406
Մեկնություն Յովելի մարգարեության	413
Յարցեր Սուրբ Յօգու զալստյան վերաբերյալ	415
Սուրբ Յօգին մարգարենների և առաքյալների վրա	424
Սուրբ Յօգու ներգործությունը	427
ՏՈՆ ԿԱԹՈՂԻԿԵ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ	
Եկեղեցու տոնները	431
Սուրբ Էջմիածնի տոննը	433
Կաթողիկե Եկեղեցի	434
Եկեղեցու խորհուրդը	440
ՏՄՊԱՆԱԿ	
Յիշատակ իին Տապանակի և տոն նորի՝ Սուրբ Եկեղեցու	450
Խսրայելացիների անցումը Յորդանանով	454
Ուխտի Տապանակի գերեվարումը	456
Տապանակի Վերադարձը	462
Ուխտի Տապանակը՝ Երուսաղեմում	464
ՄԵՐ ՏԻՐՈՁ՝ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՅՍԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ	467
ճշմարիտ դավանությունը	470
Յիսուսի պայծառակերպությունը	471
ՏՈՆ ՇՈՂԱԿԱԹԻ	490
ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՍ ՏՈՆԸ	496
Սուրբ Կույսի վարքը	497
Աստվածամոր վերափոխման լուրը	500
Տիրամոր պատկերի մասին	503
Աստվածամոր ննջումը	505
Աստվածամոր պատանումը	507
Աստվածամոր թաղումը	508
Բարթողոմեոսի այցը	510
Խաղողօրինեք	512

ՍՈՒՐԲ ԿՈՒՅՍԻ ԾՆՈՒՆԴը	515
ԽԱՉՎԵՐԱՑ	518
Խաչի տոնի սահմանումը	522
Ընթերցվածների մեկնություն.....	522
Խաչվերացի հաստատումը.....	527
ՏՈՆ ՎԱՐՍԱԳԱ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ	529
ՏՈՆ ԳՅՈՒՏ ԽԱՉԻ.....	532
Խաչի երկրորդ գյուտը.....	533
ՍՈՒՐԲ ԿՈՒՅՍԻ ԸՆԾԱՅՈՒԾ ՏԱԲԱՐԻՆ	536
Սուրբ Կույսի հանձնումը Հովսեփին	537
ՍՈՒՐԲ ԿՈՒՅՍ ՄԱՐԻԱՄԻ ՀՂԱՑՄԱՆ ՏՈՆԸ.....	539
ՍՐԵՌՈՒ ՏՈՆԵՐ.....	542
Հրեշտակներ	545
Կույսեր	545
Նախահայրեր	546
Մարգարեներ	546
Առաքյալներ	547
Վարդապետներ	548
Հայրեր	549
Հայրապետներ	550
Մարտիրոսներ	550
ճգնավորներ	550
Խոստովանողներ	552
Թագավորներ	553
ՏԱՐԵՄՈՒՏԸ	554
ՂԱՎԵԼՎԱԾ	556
Աթօնանունների ցանկ	559
Տեղանունների ցանկ	565
Գրականության ցանկ	567

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՈՆԵՐԸ

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՏՈՆԵՐ

Աշխատասիրությամբ՝ Արամ Դիլանյանի

Ընդհանուր խմբագրությամբ *S. Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանի*
Խմբագիրներ՝ *Ղևոնդ քհն Մայիսյան,*
Ավետ Ավետիսյան,
Վարդան Դարիկյան
Անվանացանկերը կազմեց *Ղևոնդ քհն Մայիսյանը*
Դամակարգչային աշխատանքները՝ *Տիգրան Ապիկյանի*

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու
Քարոզչության Կենտրոն

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ - 2006

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Տպարան – 2006